ՀԱՅ ԳՊՂԹԱՍԻՏԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1

ՀԱՅ ԳԱՂԹԱԾԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Միջնադարից մինչև 1920 թ.)

9(47.925)
Ա-78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԳԱՂԹԱԾԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Միջնադարից մինչև 1920 թ.)

ԵՌՀԱՏՈՐՅԱԿ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Հատորը հրատարակության պատրաստեց և
խմբագրեց պատմական գիտությունների
դոկտոր պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Վարդգես Միքայելյանը

ԵՐԵՎԱՆ–2003

4669

Սոյն հատորը տպուած է Գահիրէի մէջ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գահիրէի Մասնաճիւղի Սաթենիկ ճանիկ Զագըր Հիմնադրամի միջոցներով:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ գաղթաշխարհի պատմության եռհատորյակը շարադրված է մի խումբ պատմաբանների ջանքերով՝ գաղութահայ պատմության ճանաչված մասնագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի ղեկավարությամբ:*

Եռհատորյակի առաջին հատորը ընդգրկում է սլավոնյան աշխարհի և Հյուսիսային Կովկասի շուրջ մեկ ու կես տասնյակ հայկական գաղութների պատմությունը՝ դրանց սկզբնավորումից մինչև տվյալ գաղութի գոյատևման վերջը, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 1920 թ.: Հատորում լուսաբանված է յուրաքանչյուր գաղութի ամբողջական պատմությունը՝ սկզբնավորումը, ներքին կյանքը՝ իր բոլոր կողմերով, գաղութահայ եկեղեցու դերը, մշակույթը, տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը Հայաստանի և հարակից երկրների հետ:

** Վարդգես Ալեքսանի Միքայելյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:*

Ծնվել է 1924 թ. Հայաստանի Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: 1952 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1988 թվականից հանդիսանում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայ գաղթավայրերի պատմության բաժնի վարիչ, միաժամանակ 1999 թվականից ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիրն է:

Վ. Ա. Միքայելյանի մենագրությունների թվում են՝ «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» , երկհատորյակ, Երևան (1964 և 1970 թթ.), «Հայ-իտալական առնչություններ (ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին)», Երևան, 1974, «Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով (Ղ. Մ. Արծաթագործյան)», Երևան, 1979, «Ղրիմահայոց պատմություն» (1989), «Լենինային Ղարաբաղը 1918-1923 թթ.» (ժողովածու, ռուսերեն, 1992), «Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը Թուրքիայում (1913-1919 թթ.). Կայզերական Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվի նյութերը» (ժողովածու, ռուսերեն) Երևան, 1995, և այլ աշխատություններ:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-8080-0440-3

ՀԱՅ ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Միջնադարից մինչև 1920 թ.)

ԵՌՀԱՏՈՐՅԱԿ

Հայ գաղթաշխարհի սույն եռահատոր պատմությունը շարադրված է տարածաշրջանային սկզբունքով՝ յուրաքանչյուր գաղութի պատմության ժամանակագրության խստիվ պահպանմամբ: Այդ սկզբունքի կիրառումը ընթերցողին հնարավորություն է տալիս ծանոթանալու տվյալ հատորում զետեղված յուրաքանչյուր գաղութի պատմությանը, սկզբից մինչև վերջ՝ տարածաշրջանի մյուս գաղթօջախների պատմությանը սերտորեն առընչված:

Ժամանակագրական առումով եռհատորյակը ներառում է հայկական արտագաղթերի և հայ գաղութների սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և եկեղեցական պատմության հիմնահարցերը միջնադարից մինչև 1920 թ.: Արդի հայ սփյուռքի պատմությունը, որը իր խնդիրներով որոշակիորեն առանձնանում է միջնադարյան և նոր շրջանի հայ գաղթաշխարհի պատմությունից, ուսումնասիրվում է գիտական առանձին օղակների կողմից:

Եռհատորյակում հայ գաղթաշխարհի պատմությունը ներկայացված է ըստ հետևյալ տարածաշրջանների. հատոր առաջին՝ Սլավոնական աշխարհ և Հյուսիսային Կովկաս, հատոր երկրորդ՝ Ասիա և Աֆրիկա, հատոր երրորդ՝ Եվրոպա և Ամերիկա:

Հայ գաղթաշխարհի պատմության սույն առաջին հատորը ներկայացնում է նշված տարածաշրջանների 15 հայկական գաղութների պատմությունը: Հատորում ըստ ամենայնի լուսաբանված է յուրաքանչյուր գաղթօջախի ամբողջական պատմությունը՝ սկզբնավորումը, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, եկեղեցական կյանքի հիմնահարցերը՝ սկսած տվյալ գաղութի հիմնադրումից մինչև նրա գոյության վերջին շրջանը:

Հատորի գլխավոր խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հատորը նախատեսված է մասնագետ պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

Առաջին հատորն ըստ բաժինների շարադրել են.

Վ. Ա. Միքայելյան («Առաջաբան», «Հայկական արտագաղթերը», «Ղրիմ», «Արմավիր»՝ Լ. Ա. Պողոսյանի հետ), Ջ. Հ. Գալստյան («Հին Ռուսիա»), Մ. Հովհաննիսյան («Արևմտյան Ուկրաինա, Լեհաստան»), Կ. Մինգոզյան («Բուլղարիա»), Ա. Հովակիմյան («Սերբիա, Խորվաթիա»), Վ. Ա. Խաչատրյան («Պովոլժիե», «Աստրախան», «Մոսկվա», «Պետերբուրգ», «Կովկասի սևծովյան առափնյա շրջան»), Լ. Ա. Պողոսյան («Հյուսիսային Կովկաս»), Վ. Բ. Բարխուդարյան («Նոր Նախիջևան»), Ժ. Հ. Անանյան («Գրիգորիոպոլ»):

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի պատմությունը, խորը միջնադարից սկսած, նաև գաղութահայ զանգվածների կամ հայ գաղթավայրերի պատմություն է:

Վերջին երեք տասնամյակներին այդ պատմության ուսումնասիրության բնագավառում ձեռք բերված շոշափելի արդյունքները, վերջապես, եկան հաստատելու իսկությունն այն իրողության, որ առանց հայ գաղթավայրերի պատմության ըստ ամենայնի լուսաբանման խոսք չի կարող լինել հայ ժողովրդի ամբողջական պատմության, նրա թողած մշակութային վիթխարի ժառանգության վերաբերյալ լիակատար աշխատությունների ստեղծման մասին: Այս իրողության գիտակցումը դեռևս 1959 թ. հանգեցրեց Հայաստանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կազմում հայ գաղթավայրերի պատմության առանձին բաժնի ստեղծմանը: Վերջինիս ձևավորմամբ պրոբլեմի ուսումնասիրման գործը աստիճանաբար դրվեց գիտակազմակերպական անհրաժեշտ մակարդակի վրա, և նրա խոր ու համակողմանի հետազոտումը կյանքի կոչեց պատմաբանների բազմանդամ մի խումբ, որը հետազոտական աշխատանքին հաղորդեց մասնագիտական մոտեցում: Այսպիսով, հայ գաղթաշխարհի պատմությունը, որը հանիրավի մոռացության էր մատնված, դարձավ հայագիտության կարևոր ճյուղերից մեկը:

Առավելաբար այդ բաժնի աշխատակիցների, մասամբ նաև բաժնից դուրս, բայց նրա հետ մշտապես համագործակցող այլ պատմաբանների ջանքերով անցած տասնամյակների ընթացքում ստեղծվեցին մենագրական և այլ բնույթի մեծ ու փոքր ծավալի շատ ու շատ աշխատություններ, որոնք, իրենցից, նշանավորելով լուրջ ներդրում գաղութահայ, ուրեմն և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման ասպարեզում, միաժամանակ հնարավոր դարձրին ձեռնարկելու հայ գաղթավայրերի եռահատոր պատմության ստեղծումը: Ստորև համառոտակի կանգ առնենք այդ աշխատությունների բնութագրման վրա:

***

Հայկական արտագաղթերի, գաղթավայրերի սկզբնավորման, կազմավորման և գոյատևման պայմանների, ինչպես նաև նրանց ներքին կյանքին առնչվող շատ հարցեր մտահոգել են դեռևս միջնադարի հայ պատմիչներին, որոնց գործերում այդ հարցերը այս կամ այն չափով գտել են արտացոլում՝ հետագա հետազոտողներին ժառանգելով փաստագրական հավաս-

տի տեղեկություններ: Նշված առումով աչքի են ընկնում մանավանդ Ղևոնդի, Սեբեոսի, Ասողիկի, Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու, Թովմա Արծրունու, Կիրակոս Գանձակեցու, Առաքել Դավրիժեցու, Գրիգոր Դարաևաղցու, Սիմեոն Լեհացու և այլոց գործերը[1]: Փաստական հարուստ նյութի պարունակման տեսակետից անհամեմատ առավել կարևոր նշանակություն ունեն հայերեն ձեռագիր հուշարձանները և հատկապես դրանց հիշատակարանները: Գաղութահայ պատմության լուսաբանման համար մանավանդ անգնահատելի են այն ձեռագրերի և դրանց հիշատակարանների տեղեկությունները, որոնք ստեղծվել են բուն գաղթաշխարհում՝ Ղրիմի, Լեհաստանի, Գալիցիայի, Պոդոլյեի, Մերձավոր և Միջին արևելքի և այլ վայրերի հայկական գրչօջախներում: Բնականաբար, դրանցում տվյալ գաղութի ներքին, հոգևոր-մշակութային և քաղաքական կյանքի մասին առավել առատ և հավաստի տեղեկություններ կան: Ասածը լիովին վերաբերում է նաև մանր ժամանակագրություններին: Ուստի՝ հիշատակարանների և մանր ժամանակագրությունների հրատարակմամբ Լ. Խաչիկյանը, Ա. Հովհաննիսյանը, Վ. Հակոբյանը և Ա. Մաթևոսյանը լուրջ ծառայություն են մատուցել նաև հայ գաղթավայրերի պատմության հետազոտմանը[2]:

Տակավին անցյալ դարում որոշ հայագետներ, կարևորելով Հայաստանից դուրս սփռված հայ բնակչության պատմության հետազոտման խնդիրները, հեղինակեցին մի շարք գործեր, որոնց արժեքը նախ և առաջ նրանում է, որ դրանց բովանդակած նյութի մի նկատելի մասը մեզ է հասել միայն այդ հեղինակների աշխատանքների շնորհիվ, հանգամանք, որը այլ արժանիքների հետ միասին շարունակ պահպանում է նրանց կատարած աշխատանքի կարևորությունը: Առաջին հերթին նկատի ունենք Մինաս

[1] **Ղևոնդ**, Պատմութիւն, ՍՊր., 1887: Պատմութիւն **Սեբեոսի**, եր., 1979: **Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, ՍՊր., 1885: Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, Եր., 1963: **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898: **Սամուէլ Անեցի**, Հաւամմուիճ ի գրոց պատմագրաց, Վաղպատ, 1893: **Թովմա Արծրունի**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917: **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, Եր., 1961: **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն, Վաղպատ, 1896: **Գրիգոր Դարաևաղցի**, ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915: Սիմէոն դպիր Լեհացւոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարան, ուսումնասիրեց Ն. Ակինյան, Վիեննա, 1936:

[2] **Թաչիկյան Լ.Ա.**, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, եր.,1950: **Նույնի**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա և Բ, Եր. 1955: **Ա. Հովհաննիսյան**, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.) հ.Ա., եր., 1974 և հ. Բ. (1621-1640 թթ.) եր., 1981, **Վ. Հակոբյան**, Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, եր., 1951, հ. 2, եր., 1956: **Մաթևոսյան Ա.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, եր., 1984: Ե-ԺՐ դար, եր., 1988:

Բժշկյանի, Սադոկ Բարոնչի, Ղևոնդ Ալիշանի և Ք. Քուշճերյանի ուսումնասիրությունները[1]:

Նորագույն շրջանում հայկական գաղթականության և գաղթօջախների պատմության ուսումնասիրողներից, անշուշտ, պիտի առանձնացնել Ա. Ալպոյաճյանին՝ սփյուռքում և պրոֆ. Ա. Աբրահամյանին՝ Հայաստանում: Երկու հեղինակներն էլ[2] աշխատել են տալ հայ գաղթաշխարհի պատմության քիչ թե շատ ընդհանուր պատկերն այն տարբերությամբ միայն, որ Ա.Ալպոյաճյանի գործերում առաջին պլան են մղված հայկական արտագաղթերի, դրանց պատճառների և ուղղությունների մոտավոր սահմանման հարցերը, իսկ պրոֆ. Ա. Աբրահամյանը իր երկհատորանոց գործում փորձել է ըստ ժամանակաշրջանների տալ հայկական առանձին գաղթավայրերի պատմության համառոտ ուրվագիծը:

Ա. Ալպոյաճյանը իր երեք գրքերում էլ փորձ չի արել լուսաբանելու հայկական գաղթավայրերի պատմությունը. նա սոսկ բավարարվել է առանձին գաղթավայրերի պատմության այս կամ այն հարցերի ու անցքերի վերաբերյալ փաստեր բերելով: Ընթերցողը նրա գրքերում չի գտնի որևէ գաղթօջախի պատմության ամփոփ շարադրանք: Բացի այդ, հեղինակի աշխատության մեջ տեղ գտած առաջին հայացքից հարուստ փաստական նյութերի գերակշիռ մասից հնարավոր չէ օգտվել առանց վերստուգման և ճշգրտման:

Կասկածից վեր է պրոֆ. Ա. Աբրահամյանի երկհատորանոց «Համառոտ ուրվագծի» կարևորությունը՝ որպես խնդրո առարկա պրոբլեմի հետազոտման առաջին փորձ: Նրա աշխատության շնորհիվ 60-ական թվականներին հայ ընթերցողը հնարավորություն ստացավ ընդհանուր գծերով պատկերացում կազմել շուրջ երեք տասնյակ հայ գաղթօջախների անցյալի մասին: Սակայն այն ժամանակ հայկական առանձին գաղութների, գոնե դրանցից ամենախոշորների պատմության ամենքչակ լինելու հետևանքով մի հետազոտող, բնականաբար, ի վիճակի չէր լիակատար և ընդգրկուն հատորներ ստեղծել մի քանի տասնյակի հասնող և տարբեր երկրներում ու տարբեր ժամանակներում գոյատևած հայկական գաղթավայրերի պատ-

[1] **Բժշկյան Միհաս**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց..., Վենետիկ, 1836: **Սադոկ Բարոնչ**, Ակնարկ հայոց պատմության, Տերնոպոլ, 1869 (լեհերեն): **Ալիշան Ղ.**, Կամենից, Վենետիկ, 1896: **Նույնի**, Հայ-Վենետ կամ յառնչութիւնք հայոց և վենետաց ի ԺԳ-Դ և ի ԺԵ-Զ դարս, Ս.Ղազար, 1896: **Քուշճերյան Ք.**, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց, Ս. Ղազար, 1895:

[2] **Ալպոյաճյան Ա.**, Պատմություն հայ գաղթականության, հ.1, 6-րդ դ. մ.թ.ա.-11-րդ դ. մ.թ., Կահիրե, 1941, հ.2, 11-15-րդ դդ. Կահիրե, 1955, հ. 3, 16-րդ դ. սկսած (անավարտ), Կահիրե, 1960: **Աբրահամյան Ա.** Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա., եր., 1964, հ. Բ., եր., 1967:

մության վերաբերյալ: Հարցն այն է, որ նույնիսկ որևէ մի գաղութի ամբողջական պատմության ուսումնասիրությունը իր մեջ ներառնում է բազմաթիվ պրոբլեմներ ու խնդիրներ, որոնք վերաբերում են թե սոցիալ-տնտեսական, թե քաղաքական ու իրավական և թե մշակութային պատմության բնագավառներին ու ուսումնասիրողից պահանջում են գիտելիքների լայն պաշար, բազմաթիվ լեզուների իմացություն, քաջատեղյակություն այն երկրի պատմության, որտեղ գոյատևել է հայկական տվյալ գաղութը: Այդ խնդիրները պահանջում են նաև տևական հետազոտական աշխատանք ոչ միայն Հայաստանի, այլև ուրիշ վայրերի արխիվներում ու գրադարաններում: Նշված պահանջները ավելի քան եռապատկվում են հայ գաղթավայրերի պատմության ամբողջական, ընդհանրացնող բնույթի գործեր ստեղծելու դեպքում: Ահա թե ինչու պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի «Ուրվագծերը» այսօր, հայ գաղթօջախների մասին մենագրական հետազոտությունների առկայության պարագայում և դրանց ֆոնի վրա, հետու են ներկայացվող պահանջները բավարարելուց:

1960-ական թվականներին և հետագա տարիներին, իրոք, ստեղծվեցին մենագրական և այլ բնույթի հետազոտական աշխատանքներ առանձին հայ գաղթավայրերի և առաջին հերթին Ղրիմի, սլավոնական տարբեր տարածաշրջանների՝ Հին Ռուսիայի, Ուկրաինայի, Լեհաստանի, Ռուսաստանի և Բուլղարիայի հայկական գաղութների պատմության վերաբերյալ:

Արևմտաուկրաինական և լեհական տարածքներում հարյուրամյակներ շարունակ գոյատևած մի քանի տասնյակ մեծ ու փոքր հայկական գաղութների պատմության ըստ ամենայնի հետազոտումը դարձավ մի խումբ հայ և ուկրաինացի պատմաբանների ուսումնասիրության առարկան և արտացոլում գտավ հայ-ուկրաինական գիտական չորս նստաշրջանների զեկուցումներում ու հաղորդումներում: Այդ նստաշրջաններից առաջին երեքի նյութերը հրապարակվել են առանձին գրքերով[1], իսկ չորրորդի նյութերը պատրաստ են հրապարակման: Ժողովածուներում տեղ գտած զեկուցումների և հաղորդումների հեղինակները հիմնականում Ուկրաինայի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների, մասամբ նաև Երևանի Մատենադարանի այն պատմաբաններն են, որոնք տարիների տևական աշխատանք են կատարել արևմտաուկրաինական հայկական գաղթավայրերի, հայ-ուկրաինական և հայ-լեհական քաղաքական, տնտեսական և մշակութային կապերի հետազոտման բնագավառում:

Ահա թե ինչու ժողովածուներում զետեղված նյութերը հագեցված են փաստական հարուստ տվյալներով, որոնք քաղված են Կիևի, Երևանի, Լվո-

[1] Исторические связи и дружба украинского и армянского нарадов. Сборник материалов первой научной сесии, Ер., 1961. Второй сесии, Киев, 1965. Третьей сессии, Ер., 1971.

վի, Ուժգորոդի և այլ քաղաքների արխիվներից: Այդ նյութերի խորը վերլուծությունը հեղինակներին հնարավորություն է տվել հանգելու մի շարք նոր հետևությունների, անելու կարևոր ընդհանրացումներ: Գիտական նստաշրջաններում կարդացված զեկուցումները աչքի են ընկնում ոչ միայն հարուստ և նոր փաստաթղթերի, այլև երկարատև ժամանակաշրջանի՝ խորը միջնադարից մինչև մեր օրերի պատմության ընդգրկմամբ:

Թեմատիկ առումով նստաշրջանների զեկուցումներն ու հաղորդումները աղերսվում են հայ-ուկրաինական-լեհական քաղաքական-տնտեսական և հոգևոր-մշակութային կապերին, հայկական գաղթօջախների ներքին կյանքի, տնտեսական և մշակութային զարգացման, տվյալ տարածաշրջանի կյանքում նրանց ունեցած դերի ու մասնակցության խնդիրներին: Զեկուցումներ և հաղորդումներ են լսվել այնպիսի թեմաներով, ինչպիսիք են, օրինակ, Ուկրաինայում հայկական գաղութների սկզբնավորման հարցը, Հին Ռուսիան և Ուկրաինան հայոց ճակատագրում, հայկական բնակավայրերը արևմտաուկրաինական տարածքներում, հայկական մշակույթի հուշարձանները Լվովում, հայերը Լվովի մշակութային կյանքում, արխիվային նյութեր Լվովի հայկական գաղութի վերաբերյալ, հայկական աղբյուրները Ուկրաինայի, ուկրաինացիների և ուկրաինական քաղաքների մասին, Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները, հայերի կյանքը Պոդոլյեում, ուկրաինական պատմագրության ներդրումը Ուկրաինայի հայ գաղթավայրերի պատմության հետազոտման գործում, հայերի պայքարը կաթոլիկ ուհիթոռների դեմ, հայերը ուկրաինական կազակային զորքում, Լվովի հայկական գաղութի դերը արհեստների և առևտրի զարգացման մեջ Արևմտյան Ուկրաինայում և Լեհաստանում, հայկական աղբյուրները Խերսոնեսի մասին, ղրիմահայ գաղութի սկզբնավորումը, արդարադատության իրականացումը Մերձկարպատների հայկական գաղթօջախներում, լվովահայ նկարիչները 16-18-րդ դդ., հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Ուկրաինայի համար մղված մարտերին 1941-1944 թթ. և պարտիզանական շարժումը Ուկրաինայում և շատ այլ թեմաներ:

Մի վերապահում. հայկական գաղթօջախների պատմության վերաբերյալ 60-80-ական թվականներին հրատարակված մենագրությունները, ինչպես կտեսնենք ստորև, ներառում են ոչ թե առանձին պրոբլեմներ, այլ հիմնականում տվյալ գաղութի պատմության ամբողջական հետազոտումը: Եվ դա ինքնին հասկանալի էր ու բացատրելի, թելադրվում էր տվյալ գաղութի ողջ պատմությունը առաջին անգամ ընթերցողին ներկայացնելու պահանջով: Եվ մի շարք գաղթօջախների ամբողջական պատմությունն ընդգրկող մենագրական բնույթի այդ գործերի, ինչպես նաև փաստաթղթերի ժողովածուների ու հավաքածուների հրատարակումից հետո է միայն, որ այժմ հնարավորություն է ստեղծվել ձեռնարկելու գաղութահայ պատմության ա-

ռանձին, հայ ժողովրդի անցյալի լուսաբանման համար առավել կարևորություն ներկայացնող խոշոր պրոբլեմների մշակման աշխատանքը, թեև պետք է ասել, որ մինչև այդ էլ այն ինչ-որ չափով կատարվում էր:

Գաղութահայ առանձին հատվածների պատմության լուսաբանման ուղղությամբ մեզանում հրապարակված առաջին մենագրությունը Վարդգես Միքայելյանի ղրիմահայոց պատմության՝ միջնադարյան շրջանին նվիրված ծավալուն գիրքն էր, որին հաջորդեցին հեղինակի երկրորդ մենագրությունը նույն գաղութի պատմության նոր շրջանի մասին, իսկ ավելի ուշ՝ գաղութի ամբողջական պատմության նոր տարբերակի հրատարակումը մեկ գրքով ու նաև՝ ռուսերեն, ինչպես նաև՝ փաստաթղթերի ժողովածուներ ու հավաքածուներ[1]:

Վ. Միքայելյանի աշխատությունները շարադրված են փաստական հարուստ նյութի քննական օգտագործման հիման վրա. գիտական շրջանառության մեջ են դրված ձեռագրական և արխիվային նյութեր, որոնց մի մասը քաղված է նաև օտար աղբյուրներից: Հեղինակի գործերում լայն լուսաբանություն են գտել ղրիմահայոց շուրջ 700-ամյա պատմության բոլոր հիմնական հարցերը, այն է՝ գաղութի սկզբնավորումը, հայ բնակչության տեղաբաշխումը թերակղզու վրա՝ ըստ պատմական տարբեր ժամանակաշրջանների, հայ բնակչության շարժի պատկերը, հայոց հիմնական զբաղմունքները, հայ եկեղեցին գաղութում, գաղութի ներքին կյանքը, հայերի դերը Ղրիմի տնտեսական և քաղաքական կյանքում, հայ-թաթարական և հայ-ջենովական հարաբերությունները, ղրիմահայերի կապերը Հայաստանի, հայաշատ վայրերի, Մերձավոր արևելքի և արևմուտքի հետ, ղրիմահայ մշակույթը և այլ խնդիրներ:

Ղրիմահայոց միջնադարյան մշակութային ժառանգության ուսումնասիրման գործում զգալի վաստակ ունեն Ա. Յակոբսոնը, Յու. Թամանյանը և Է. Կորխմազյանը: Առաջին երկուսի աշխատություններում պատշաճորեն ուսումնասիրված է ղրիմահայ միջնադարյան ճարտարապետությունը, իսկ Է. Կորխմազյանի գրքում՝ մանրանկարչությունը[2]:

1778 թ. Ղրիմից վերաբնակեցրած հայերը հաջորդ տարվա վերջին տեղափոխվեցին Դոնի շրջան և այնտեղ հիմնադրեցին Նոր Նախիջևան

[1] **Միքայելյան Վ.Ա.**, Ղրիմի հայկական գաղութի պատմություն (միջնադար) եր., 1964: **Նույնի**, Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801-1917), եր., 1970: Նույնի, На крымской земле. История армянских поселений в крыму. Ер., 1978. Նույնի, Ղրիմահայոց պատմություն, եր., 1989: Նույնի, Հայ-իտալական առնչություններ: Ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին, եր., 1974:

[2] Якобсон А.Л. Армянская средневековая архитектура в Крыму ("Византийский временник", VIII, 1956). Якобсон А.Л., Таманян Ю.А. Армянская архитектура в Крыму, Ер., 1990. Корхмазян Э.М. Армянская миниатюра Крыма, Ер., 1978.

քաղաքն ու հինգ հայկական գյուղերը: Այս նոր բնակավայրերում հաստատված նախկին ղրիմահայերի 140-ամյա պատմությունը լայն լուսաբանության արժանացավ Վլադիմիր Բարխուդարյանի մենագրական երկու ստվարածավալ գրքերում[1]: Գրված լինելով արխիվային տարատեսակ փաստաթղթերի ու նյութերի, ինչպես և առկա գրականության և մասամբ էլ մամուլի ընձեռած տվյալների հիման վրա, սույն մենագրություններում արտացոլում գտավ Ռուսաստանում նոր շրջանի ամենախոշոր հայկական գաղութի ամբողջական պատմությունն իր հիմնական դրսևորումների մեջ՝ գաղութի հիմնադրումը, ներքին կյանքը, իրավահարաբերությունները, տնտեսական զարգացումը, մասնակցությունը հայ-ռուսական կապերին, Ռուսաստանի հարավի տնտեսական վերելքին, Նախիջևանի հայերի մշակութային կյանքը, հասարակական քաղաքական և իրավական դրությունը և այլն:

Ինչպես ակնարկվեց, վերջին 30 տարիներին հայ և ուկրաինացի պատմաբանների մի ստվար խմբի լուրջ հետազոտության առարկան են դարձել Արևմտյան Ուկրաինայի և Լեհաստանի հայ գաղութների պատմությանն առնչվող հարցերը: Հատկապես նրանց ջանքերի հետևանքով ստեղծվեցին մենագրական և աղբյուրագիտական բնույթի մեծ ու փոքր ծավալի շատ գործեր, գիտական լուրջ արժեք ու հետաքրքրություն ներկայացնող հոդվածներ ու հրապարակումներ: Այդ պատմաբաններից էին. Ուկրաինայում՝ Ի. Պ. Կրիպյակևիչը, Վ. Վ. Գրաբովեցկին, Ն. Կ. Կրիվոնոսը, Յա. Դ. Իսաևիչը, Յա. Ռ. Դաշկևիչը, Ի.Գ. Շուլգան, Դ. Ի. Միշկոն, Յ.Պ. Կիսը, Ն. Ֆ. Վրադին, Պ. Խ. Պիրոժենկոն, Յ. Ս. Մելնիչուկը, Վ. Ս. Կուլչիցկին, Մ. Յու. Սիզոնենկոն և ուրիշներ, Հայաստանում՝ Վ. Ռ. Գրիգորյանը, Մ. Լ. Հովհաննիսյանը, Վ. Կ. Ոսկանյանը, Վ. Ա. Հակոբյանը, Վ. Ա. Միքայելյանը, Լ. Մ. Մելիքսեթ-բեկը, Ջ. Հ. Գալստյանը, Գ. Պ. Պինգիրյանը և ուրիշներ[2]: Նշենք, որ սրանցից շատերի մոտ խնդրո առարկա պրոբլեմները եղել և մնում են հիմնական հետազոտական առարկա:

Արևմտաուկրաինական հայկական գաղութների պատմության հետազոտման առումով հարկավորություն կա առանձնացնել առավել ծավալուն գործերը: Նկատի ունենք Մ. Լ. Հովհաննիսյանի, Վ. Ռ. Գրիգորյանի, Ջ. Հ. Գալստյանի, Հ. Անասյանի, Յա. Ռ. Դաշկևիչի գրքերը և Ն. Կ. Կրիվոնոսի թեկնածուական դիսերտացիան:

Պոդոլյեի հայկական բազմաթիվ գաղութների պատմության գիտական ուսումնասիրումը մեզանում առաջինը ձեռնարկեց Վարդան Գրիգորյա-

[1] **Բարխուդարյան Վ.Ռ.**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.) եր., 1967: **Նույնի**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.) եր., 1985:

[2] Թվարկված պատմաբանների ուսումնասիրությունները տե՛ս հայ-ուկրաինական պատմական կապերին և բարեկամությանը նվիրված նշված երեք ժողովածուներում:

ևը, որի արդյունավետ աշխատանքի արդյունքն են աղբյուրագիտական և մենագրական բնույթի նրա երկու աշխատությունները[1]:

Հրատարակելով միջնադարյան Արևելյան Եվրոպայի հայկական խոշոր գաղթավայրերից մեկի՝ Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները, Վ. Գրիգորյանը լուրջ ծառայություն է մատուցել հայագիտությանն առհասարակ: Մյուս կողմից՝ այդ արձանագրությունները, որոնք սկզբում պահպանվելիս են եղել Կամենեց-Պոդոլսկում, ապա փոխադրվել Կիևի Ս. Վլադիմիրի անվան արխիվ, իսկ ավելի ուշ՝ Ուկրաինայի պատմական արխիվ, ուշագրավ նյութեր են պարունակում Կամենեց-Պոդոլսկի հայերի իրավական, սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության մասին, նպաստում առհասարակ միջնադարում ուկրաինական այդ նշանավոր քաղաքի՝ Կամենեցի, իրավատնտեսական կյանքի պատկերը պարզելու, հայ-լեհական և հայ-ուկրաինական հարաբերություններն ուսումնասիրելու գործին: Վ. Գրիգորյանի մենագրության մեջ ամբողջացված է Պոդոլյեում տարբեր ժամանակներում գոյատևած հայկական տասնվեց գաղութների պատմությունը՝ ամբողջ միջնադարում, ընդհուպ մինչև 19-րդ դարը: Տարալեզու աղբյուրների ու գրականության օգտագործումը հեղինակին թույլ է տվել բացահայտելու այդ գաղթաշխարհի ներքին կյանքը, հայոց զբաղմունքները, նրանց տնտեսական, քաղաքական և մշակութային շփումներն ու մերձեցումը լեհերի և ուկրաինացիների հետ, մասնակցությունը ուկրաինական այդ նշանավոր երկրամասում արհեստագործության և առևտրի զարգացմանը:

Ամփոփիչ հետազոտություն է Մ. Լ. Հովհաննիսյանի աշխատությունը[2], որտեղ ընդհանուր գծերով շարադրված է Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթօջախների պատմությունը՝ դրանց սկզբնավորումից մինչև անկումը, ներառելով այնպիսի կարևոր հարցերի լուսաբանումը, ինչպիսիք են գաղութների սոցիալ-քաղաքական և տնտեսական կյանքը, դրանց դերն ու մասնակցությունը Լեհաստանի ռազմական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում:

Ամփոփիչ բնույթ է կրում Ջ. Հ. Գալստյանի աշխատանքը[3], որտեղ առկա գրականության հիման վրա ուրվագծված է Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի մշակութային կյանքի պատ-

[1] Գրիգորյան Վ. Ռ., Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, եր., 1963: Նույնի, История армянских колоний в Польше (армяне в Подолии), Ер., 1980.

[2] Հովհաննիսյան Մ.Լ., Ուրվագծեր Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմության, եր., 1977:

[3] Галустян Дж. О., Культурная жизнь армянских колоний средневековой Польши, Ер., 1981.

կերը. ընդհանուր գծերով բնութագրված են մշակույթի այնպիսի ճյուղեր, ինչպիսիք էին ճարտարապետությունը, կիրառական արվեստը, դպրոցը, գրքարվեստը, պատմագրությունը, փիլիսոփայությունը, իրավունքը, գրականությունը և այլն:

Աղբյուրագիտական առաջին աշխատությունը՝ ևվիրված խնդրո առարկա հարցին, Յա. Դաշկևիչի գիրքն էր, որտեղ հանգամանորեն քննարկված են Ուկրաինայի հայկական գաղութներին վերաբերող հիմնական աղբյուրներն ու գրականությունը[1]:

Արխիվային նորահայտ նյութի ընդգրկման տեսակետից հատուկ պիտի շեշտել Ն. Կ. Կրիվոնոսի թեկնածուական դիսերտացիան՝ ևվիրված Լվովահայ գաղութի պատմությանը 17-րդ դարի առաջին կեսին: Լվովահայոց տնտեսական գործունեությունը՝ արհեստների և առևտրի զարգացումը գաղութում, ինչպես և նրանց սոցիալական դրության լուսաբանումը հեղինակը հիմնականում կատարել է Լվովի կենտրոնական պատմական արխիվում՝ իր իսկ հայտնաբերած փաստաթղթերի հիման վրա[2]: Այս իրողությունն է, որ Ն. Կրիվոնոսի աշխատանքը շահեկանորեն տարբերում է ուկրաինահայության պատմության մասին գրված մի շարք աշխատություններից, որոնց փաստական հիմքը հիմնականում ժամանակին այլ հեղինակների հայտնաբերած նյութերն են կամ նրանց գրած աշխատությունները:

Հարուստ նյութեր են պարունակում է Հ. Անասյանի և Յա. Դաշկևիչի կազմած, ծանոթագրած և հրատարակած ժողովածուները[3]: Առաջինում, որի հեղինակը Հովհաննես Կամենեցացին է, տրված է քաղաքական մեծ նշանակություն ունեցած Խոթինի պատերազմի ճշմարտացի պատմությունը, իսկ երկրորդ ժողովածուի նյութերում արտացոլված են հայ-ուկրաինական կապերը 17-րդ դարում և հատկապես երկու ժողովուրդների տնտեսական և մշակութային առնչություններն ու համատեղ պայքարի դրվագներ: Նկատենք, որ ծանոթագրություններում և առաջաբանում Յա. Դաշկևիչի արտահայտած մի շարք մտքեր վիճահարույց են և անընդունելի:

Նկատելի են ձեռքբերումները Աստրախանի, Հյուսիսային Կովկասի և Մոսկվայի ու Պետերբուրգի հայկական գաղութների և հայ համայնքների պատմության ուսումնասիրման բնագավառում: Նախավերակառուցողական շրջանում, մանավանդ այսպես կոչված «լճացման» տարիներին, այս և առ-

[1] Я.Р.Дашкевич, Армянские колонии на Украине в источниках и литературе, Ер., 1962.

[2] Кривонос Н.К., Армянская колония во Львове в первой половине XVII в., Ер., 1965.(кандид.диссертация).

[3] Անասյան Հ., Պատմութիւն պատերազմին Խոթինու, եր., 1964. Дашкевич Я.Р., Украино-армянские связи в XVII в., Сборник документов, Киев, 1969.

հասարակ ռուսական կայսրության տարածքներում գոյություն ունեցած հայկական գաղթավայրերի ու հայ համայնքների պատմության հետազոտումը դյուրին էր երկու հանգամանքով՝ ա) Միության ցանկացած քաղաքում գործող արխիվից օգտվելու լայն հնարավորությամբ և բ) հետազոտական աշխատանքին տրամադրվող ֆինանսական առատ հատկացումներով, տրանսպորտային և հյուրանոցային ծախսերի չնչինությամբ: Այժմ, ավա՜ղ, գիտությունը անդառնալիորեն զրկվել է այդ հնարավորությունից:

Զգալի աշխատանք է կատարվել Աստրախանի հայկական գաղութի պատմության մշակման ուղղությամբ: Հարկ չկա հանգամանորեն բնութագրելու գիտական պատշաճ մակարդակով և աղբյուրագիտական կայուն հենքի վրա գրված տասնյակ ու տասնյակ այն հոդվածները, որոնք հեղինակել են Ա. Ի. Յուխտը, Վ. Ա. Խաչատրյանը և Ֆ. Գ. Պողոսյանը: Համառոտակի բնութագրենք, սակայն, առաջին երկուսի դիսերտացիաները և վերջինի աշխատանքը Աստրախանի հայոց դատաստանագրքի մասին[1]:

Ա. Յուխտի դիսերտացիան և հոդվածները նվիրված են գաղութի 18-րդ դարի առաջին կեսի սոցիալ-տնտեսական պատմությանը: Գաղութի սկզբնավորումը, հայ բնակչության շարժը, նրա սոցիալական կազմը, զբաղմունքները և նրա դերը քաղաքի արտադրական կյանքում, աստրախանահայոց իրավական վիճակը, հայկական ռատհաուզի գործունեությունը. ահա այն գլխավոր հարցերը, որոնք հեղինակը բարձրացրել և լուծել է հիմնականում արխիվային նոր նյութերի մեկնաբանմամբ: Իսկ Վ. Խաչատրյանի դիսերտացիան և հրապարակած գործերը ներառնում են նույն դարի երկրորդ կեսի պատմությունը, երբ Աստրախանի գաղութը հասել էր իր բարգավաճման գագաթնակետին: Հայերի առաջատար դերը քաղաքի տնտեսական կյանքում և նրա հիմնական ճյուղում՝ գործվածքային արտադրության մեջ, ռուսական արտաքին առևտրում, մասնակցությունը հայ ազգային-ազատագրական պայքարին, նրանց վարչահրավական դրությունը, հասարակական և մշակութային կյանքը, գլխավորապես հարցերի այս շրջանակը և դրան աղերսվող խնդիրներն են, որ դառնալով հեղինակի հետազոտման օբյեկտը, ստացել են գիտական պատշաճ և շատ դեպքերում համակողմանի լուսաբանում:

Աստրախանի, ինչպես և Հյուսիսային Կովկասի հայոց վարչահրավական կյանքի հետազոտման գործում լուրջ ներդրում է Ֆ. Պողոսյանի ջանքերով հրատարկված հայ իրավունքի եզակի հուշարձաններից մեկը՝ Աստրախանի հայոց դատաստանագիրքը՝ նրան առընթեր հեղինակի ընդարձակ հե-

[1] Юхт. А.И., Армянская колония в Астрахани в первой половине XVIII в., канд. диссерт., Ер., 1959., Хачатрян В.А. Армянская колония в Астрахани во второй половине XVIII в., канд. диссерт., Ер., 1965., **Պողոսյան Ֆ.Գ.**, Դատաստանագիրք Աստրախանի հայոց, եր., 1967:

տազոտական ուսումնասիրությամբ և ցանկերով հանդերձ: Մնայուն այս գործը շարունակ գտնվել է հայ պատմաբանների, մանավանդ Հյուսիսային Կովկասի հայկական գաղութների և Աստրախանի հայոց պատմությամբ զբաղվողների ուշադրության կենտրոնում, դարձել նրանց, ինչպես և հայ իրավունքի պատմությունը հետազոտողների սեղանի գիրքը:

18-19-րդ դդ. ռուսահայոց պատմության վիճահարույց մի շարք հարցերի ճիշտ մեկնաբանման խնդրում կարևոր ուղեցույց է Վ. Ա. Դիլոյանի գիրքը[1], որտեղ վերլուծված է Լազարյանների հասարակական քաղաքական գործունեությունը՝ սերտորեն շաղկապված Հայաստանի ազատագրության խնդիրների, ազատագրական ծրագրերի մշակման և ռուսահայ գաղթօջախների պատմության հետ:

18-19-րդ ռուսահայ գաղթօջախների պատմության մեջ յուրահատուկ դեր են խաղացել Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները՝ Ղզլարի, Մոզդոկի, Դերբենդի, Սուրբ Խաչի, Արմավիրի և այլ գաղթավայրերը, որոնց պատմությունը համակողմանի լուսաբանություն է գտել Լ. Ա. Պողոսյանի աշխատություններում: Երևանի, Մոսկվայի, Ս. Պետերբուրգի, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի տարբեր քաղաքների արխիվներում և գրադարաններում կատարած տևական աշխատանքի շնորհիվ հեղինակը ձեռք է բերել մեծաքանակ արխիվային և այլ կարգի նյութեր, որոնց քննական հետազոտմամբ պաշտպանել է նշված գաղութների պատմության մասին թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ, հրատարակել մենագրություն և մի շարք հոդվածներ[2]: Վեր հանելով նշված գաղութների ներքին կյանքի, տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային զարգացման հարցերը, Լ. Պողոսյանը դրանք անհրաժեշտաբար լուսաբանել է նաև հայ-ռուսական կապերի դիրքերից, կապեր, որոնց շնորհիվ էր նաև, որ սկզբնավորվեցին և հետագա զարգացում ապրեցին նշված գաղութները: Հենց նման մոտեցումն է օգնել հեղինակին բացահայտելու նաև հայ, ռուս և հյուսիս-կովկասյան ժողովուրդների պատմական անցյալի շատ հարցեր, դիտարկելու կովկասյան ժողովուրդների ազգամիջյան բարդ հարաբերությունների պատմական արմատները՝ նրանց զարգացման ընթացքի մեջ:

Արմավիրի հիմնադրման պատմության աղերսով կարևորություն են ստացել չերքեզահայերի անցյալի հարցերը: Այս առումով, վիճահարույց մի շարք կողմերով հանդերձ, ուշադրության արժանի գործ են կատարել Ֆ. Ա. Օչերբինան և Խ. Ա. Փորքշեյանը. առաջինը՝ դեռևս 1916թ. Արմավիրին

[1] Դիլոյան Վ.Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, եր., 1966:

[2] Погосян Л.А.,Армянская колония Армавира.Ер., 1981. Его же. Армянские поселения Северного Кавказа (начала XVIIIв.-1920г.), доктор. диссерт., Ер., 1990.

ևվիրված իր հատուկ մենագրությամբ, երկրորդը՝ երկու ծավալուն հոդվածներով[1]: Ռուսաստանի և Ուկրաինայի տարբեր շրջանների հայ գաղութների պատմության մշակման գործում իր որոշակի գիտակազմակերպական ավանդն է ներդրել Վ. Կ. Ոսկանյանը, որը ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի կազմում վերն արդեն հիշատակված գաղութահայ պատմության բաժնի ստեղծման նախաձեռնողներից էր և այդ բաժնի երկարամյա վարիչը: Լինելով հայ-ռուսական հարաբերությունների երկարամյա հետազոտողներից մեկը, Վ. Ոսկանյանը ուշագրավ գործ է կատարել նաև ռուսահայ գաղութների պատմության մշակման ուղղությամբ՝ հեղինակելով մի շարք գործեր Աստրախանի, Մոսկվայի և ռուսահայ համայնքների պատմության այլևայլ հարցերի շուրջ[2]:

Սլավոնական երկրների հայ գաղթավայրերի պատմությանը վերաբերող առաջին գործերից մեկը Ս. Վ. Հովնանյանի հայ-բուլղարական կապերի և 19-րդ դարի երկրորդ կեսի բուլղարահայ գաղութների պատմության ուսումնասիրությանը ևվիրված մենագրությունն էր, որտեղ արխիվային և մամուլի ըննեռած նյութերի հիման վրա հեղինակը հետազոտել է հայ-բուլղարական բազմակողմ կապերը, թուրքական դեսպոտիզմի դեմ մղած նրանց համատեղ պայքարի դրվագները, բացահայտել է բուլղարահայ գաղութների ներքին կյանքի պատկերը, բուլղար ժողովրդի օգնությունը հայ փախստականներին և այլն[3]: Բուլղարահայ գաղթօջախների 1896-1970 թթ. ժամանակաշրջանի պատմությանը հանգամանորեն անդրադարձել է Զ. Մ. Ղասաբյանը իր մենագրության մեջ, հենվելով ոչ միայն հայկական, այլ նաև բուլղարական արխիվներից իր իսկ հայտնաբերած փաստաթղթերի և նյութերի վրա[4]: 1960-ական թվականներից ձեռնարկվեց նաև Մոլդովայի, Վալաքիայի և Տրանսիլվանիայի հայ գաղութների պատմության ուսումնասիրությունը: Այս առումով պիտի առանձնացնել Ժ. Հ. Անանյանի և Ս. Քոլանջյանի աշխատանքները՝ առաջինը՝ Գրիգորիոպոլ հայաքաղաքի, երկրորդը՝ Տրանսիլվանիայի և ռումինական տարածքների հայկական գաղութ-

[1] **Փորչեյան Խ.Ա.**, Չերքեզահայերի ծագումը և Արմավիրի հիմնադրումը, «Լրաբեր հաս. գիտ.» 1971, թիվ 5: **Նույնի**, Երբ և որտեղից են հայերը գաղթել Չերքեզիա, «Պատմա-բանասիրական հանդես» 1959, թիվ 2-3: Ф. А. Щербина. История Армавира и черкесочаев. Екатеринодар, 1916.

[2] **Ոսկանյան Վ., Գրիգորյան Գ.**, Աստրախանի Ալաբարյան հայկական դպրոցի պատմությունից, «Սովետական մանկավարժ», 1956, թիվ 3: **Նույն հեղինակների**, Ռուսահայերի առաջին պարբերական հրատարակությունը՝ «Արևելյան ծանուցմունք», «Սովետական գրականություն», 1957, թիվ 3:

[3] Овнанян С.В. Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIXв., Ер., 1968.

[4] **Ղասաբյան Զ.Մ.**, Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության, եր., 1986:

ների պատմության վերաբերյալ: Ժ. Անանյանի մենագրության[1] մեջ հայ գաղութ-քաղաք Գրիգորիոպոլի պատմությունը քննարկված է Ռուսաստանի և Հայաստանի արտաքին քաղաքական և ներքին զարգացման ֆոնի վրա: Գաղութի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման հարցերի հստակ լուսաբանումը հեղինակը վարել է Հայաստանի և հայկական գաղթօջախների հետ նրա սերտ կապերի, հատկապես հայ ազգային ազատագրական շարժմանը գրիգորիոպոլցիների ցուցաբերած մասնակցության հետ շաղկապված: Ս. Քոլանջյանի թեկնածուական դիսերտացիայում հայկական և օտարալեզու աղբյուրների լայն օգտագործմամբ լուսաբանված է Տրանսիլվանիայի հայոց պատմությունը[2] իր բոլոր հիմնական ասպեկտներով: Հեղինակի գրչին են պատկանում մի շարք գիտական հոդվածներ, ինչպես նաև ծավալուն մի մենագրություն, որտեղ ամփոփված է ռումինահայոց ամբողջական պատմությունը: Մենագրությունը, սակայն, տակավին գտնվում է ձեռագիր վիճակում:

Միջին և Մերձավոր արևելքի երկրների հայ գաղթավայրերի պատմությունը լուսաբանություն է գտել Վ. Բայբուրթյանի, Հ. Մարտիրոսյանի և Հ. Թոփուզյանի մենագրություններում: Վ. Բայբուրթյանը հատուկ ուսումնասիրման թեմա է դարձրել Նոր Ջուղայի հայկական գաղութի 17-րդ դարի պատմությունը[3], մասնավորապես բացահայտելով Նոր Ջուղայի դերը իրանաեվրոպական քաղաքական ու տնտեսական կապերում, տեղի առևտրական դասի մղած պայքարը եվրոպական գաղութարարների՝ Իրան թափանցելու ձկրտումների դեմ: Հայերեն ձեռագրերի ըննեռած նյութի, օտարալեզու աղբյուրների և գրականության հետազոտման հիման վրա է շարադրված Հ. Հ. Մարտիրոսյանի՝ Իրանի հայկական գաղթօջախների 11-15-րդ դարերի պատմությունը[4]: Գրքում տրված են Արտազի, Պարսկահայքի, Շամբի, Ղարադաղի մարզերի և Թավրիզ, Մարաղա, Մարանդ, Սուլթանիե քաղաքների հայ բնակչության պատմության հիմնական փուլերը, հայոց տնտեսական կյանքն իր կարևոր դրսևորումների մեջ, հայ եկեղեցու դերը, հայկական եկեղեցական թեմի ձևավորման ընթացքը, հայերի պայքարը ազգապահպանման և գոյատևման համար սելջուկների, մոնղոլների և թուրքմենների տնտեսական և քաղաքական տիրապետության ծանր ու բարդ պայմաններում:

Եգիպտոսի և Սիրիա-Լիբանանի հայկական գաղթօջախների նոր և նորագույն շրջանի պատմության վերաբերյալ 1978 և 1986 թվականներին

[1] Ананян Ж. А. Армянская колония Григориополь, Ер., 1969.

[2] **Քոլանջյան Ս.Ե.**, Հայերը Տրանսիլվանիայում (10-18դդ.), եր., 1964:

[3] Байбуртян В. А Армянская колония Новой Джуги в XVIIв., Ер., 1969.

[4] Мартиросян А. У. Армянские поселения на территории Ирана в XI-XVвв., Ер., 1990.

4669

հրապարակվեցին Հ. Թոփուզյանի ծավալուն մենագրությունները[1], որոնցում նշված գաղութների պատմության հիմնական հարցերը քննարկված են՝ առնչված այդ երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական, հայ-արաբական հարաբերությունների պատմության հետ:

Ուսումնասիրողների ուշադրությունից ինչ-որ չափով չի վրիպել նաև ժամանակակից սփյուռքի խոշոր հատվածներից մեկի՝ հունահայ գաղութի պատմությունը: Նկատի ունենք Պ. Կոկինոսի՝ հունահայ գաղութի 1918-1927 թթ. պատմությանը նվիրված գիրքը[2], որտեղ տրված է հունահայության տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի պատկերը նշված տարիներին:

Նույնը պիտի ասել ամերիկահայ գաղութի պատմության (1618-1924 թթ.) հետազոտման ուղղությամբ կատարված աշխատանքի մասին[3]:

Վերը խիստ համառոտակի բնութագրվեց այն հիմնական գրականությունը, որն ստեղծվել է վերջին տարիներին խնդրո առարկա պրոբլեմի գծով: Անշուշտ, անհնարին էր այս սեղմ ակնարկում անխտիր բնութագրել բոլոր հոդվածներն ու աշխատանքները, բայց սույն համառոտ տեսությունից էլ ակնբախ են դառնում այն զգալի ձեռքբերումները, որոնք վկայում են պատմաբանների կատարած տևական և արդյունավետ աշխատանքը նշված բնագավառում:

***

Հենց վերը նշված ձեռքբերումները հնարավորություն տվեցին Հայաստանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայ գաղթավայրերի պատմության բաժնին 1992 թվականից ձեռնամուխ լինելու գաղութահայ պատմության եռհատորյակի ստեղծման գործին: Եռհատորյակը ստեղծվում է գաղթավայրերի պատմության տարածաշրջանային սկզբունքով՝ յուրաքանչյուր գաղութի պատմության շարադրանքի ժամանակագրության պահպանմամբ: Այս սկզբունքն ունի այն առավելությունը, որ ընթերցողին հնարավորություն է տալիս ծանոթանալու տվյալ հատորում զետեղված գաղութներից յուրաքանչյուրի ամբողջական պատմությանը՝ սկզբից մինչև վերջ: Այնինչ, ժամանակագրական կարգով շարադրելու դեպքում միևնույն գաղթօջախի

[1] **Թոփուզյան Հ.Խ.**, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, եր. 1978, Նույնի, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, եր., 1986:

[2] **Կոկինոս Պ.**, Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927), եր., 1965:

[3] **Ավագյան Ռ.**, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), եր., 2000:

պատմությունը հարկադրաբար պետք է ցրվեր տարբեր հատորների մեջ, քանի որ շատ գաղթօջախներ գոյատևել են միջնադարից մինչև նոր ժամանակաշրջանը ներառյալ: Դա առաջին: Տարածաշրջանային սկզբունքին նախապատվություն տալու երկրորդ առավելությունը մեր կարծիքով այն է, որ հարակից տարածքներում գոյատևած հայ գաղթավայրերի պատմությունն ունի ընդհանուր շատ կողմեր և գծեր, ուստի և դրանց պատմության լուսաբանումը միևնույն հատորում կուռ և միասնական է դարձնում պատմական նյութի շարադրանքը և հեշտացնում նրա ընկալումը ընթերցող լայն խավերի կողմից՝ թե մեզանում և թե սփյուռքում:

Սույն եռհատորյակը ժամանակագրական առումով ընդգրկում է հայ գաղթաշխարհի պատմությունը՝ սկսած միջնադարից ընդհուպ մինչև 1920 թ.: Խնդիրն այն է, որ 1920 թ. սկսվում է ժամանակակից հայ սփյուռքի պատմությունը, որը միջնադարյան և նոր շրջանի հայ գաղթաշխարհի պատմությունից առանձնանում է իր նոր խնդիրներով. այդ պատճառով էլ այն ուսումնասիրվում է առանձին՝ Պատմության ինստիտուտի մի խումբ գիտաշխատողների կողմից:

Ներկա եռհատորյակը ընդգրկում է հայ գաղթավայրերի պատմությունը ըստ հետևյալ տարածաշրջանների.

Հատոր առաջին. Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի գաղութներ:

Հատոր երկրորդ. Ասիայի և Աֆրիկայի գաղթօջախներ:

Հատոր երրորդ. Եվրոպայի և ԱՄՆ-ի գաղութներ:

Վարդգես Միքայելյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԵՐԸ[1]

Ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի վերաբնակումներն ու արտագաղթերը սահմանորոշվում են երկու գործոններով, որոնք կարելի է բնորոշել որպես շարժիչ և ուղղություն ցույց տվող ուժեր. մի դեպքում գործ ունենք արտագաղթի մղող, իսկ մյուսում՝ նրա ուղղությունը մատնանշող պատճառների հետ: Վերջիններս միմյանցից տարբեր են. կա պատճառների մի խումբ, որը տվյալ երկրի կամ մարզի բնիկներին ստիպում է թողնել հայրենի տարածքները, բայց կա պատճառների բոլորովին այլ խումբ, որը գաղթի դիմած բնակչությանը մղում է ընտրելու իր շարժընթացի հատկապես այս, բայց ոչ այլ ուղղությունը: Սակայն քիչ չեն նաև դեպքերը, երբ գաղթի ուղղությունը, այսինքն, այն տարածքը, ուր պետք է գնա, հանգրվանի գաղթականական հոսանքը, մարդկանց գոյատևման համար իր ունեցած քիչ թե շատ նպաստավոր պայմաններով, ինքն է դառնում արտագաղթը խթանող գործոն: Այլ կերպ ասած՝ որպես կանոն, արտագաղթի դիմած բնակչությունը ինչ-որ չափով նախապես գիտե նաև իր շարժի ուղղությունը: Սա, իհարկե, պարտադիր կանոն չէ:

Ժողովուրդների արտագաղթերն իրենց նպատակամիտվածությամբ լինում են խստիվ տարբեր: Միջնադարից հայտնի են ժողովուրդների գաղթերի շատ օրինակներ, որոնք ընթացել են այլ ժողովուրդներ կողոպտելու, նրանց տարածքները բռնագրավելու նպատակով: Որպես կանոն, նման բովանդակություն ունեին վաչկատուն ժողովուրդների տեղաշարժերը Ալթայից ու Միջին Ասիայից դեպի Փոքր Ասիա և առհասարակ Արևմուտք:

Իրենց բովանդակությամբ և դրդիչ ուժերով բոլորովին այլ պատկեր ունեին հայկական արտագաղթերը: Սրանց օբյեկտիվ պատճառները թաքնված էին ինչպես երկրի արտաքին քաղաքական դրության, այնպես էլ նրա ներքին, սոցիալ-տնտեսական զարգացման մեջ:

Հանդիսանալով հայ ժողովրդի պատմության յուրօրինակ կողմերից մեկը, նրան հաղորդելով բոլորովին այլ երանգ ու բովանդակություն՝ հայկական արտագաղթերն ու գաղթավայրերի առաջացումը, որպես համազգային ընդգրկման երևույթներ, հատկապես ուժգնորեն ծավալվեցին քրիստոնեության ընդունմանը հաջորդած դարերում, մանավանդ արաբական արշավանքներից ի վեր: Հավանաբար, արտագաղթի հիմնական պատճառներին զու-

[1] «Հայկական արտագաղթեր» բաժինը հրատարակվել է «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» ժողովածուում (Երևան, 1996թ.): Ելնելով նշված ժողովածուի սահմանափակ տպաքանակից, ինչպես նաև «Եռհատորյակի» թեմատիկ կարևորությունից, նպատակահարմար ենք համարել այն զետեղել նաև ներկա հատորում (Վ.Մ.):

դրնթաց, որոնք կնշվեն ստորև, կարևորվել է նաև այն հանգամանքը, որ դրան պիտած հայ զանգվածները իրենց հայացքը հառել են դեպի հարևան քրիստոնյա երկրները (Բյուզանդիա, Սլավոնական աշխարհ, Վրաստան)՝ որպես քիչ թե շատ ապահով հանգրվաններ:

Հայկական արտագաղթերի և գաղութների առաջացման իսկական պատմությունը սկսվում է, իրոք, քրիստոնեության ընդունումից հետո: Մի որևէ երկրում հայ գաղութի հիմնադրման, ամրոխման և գոյատևման նախապայմանը գաղափարաբանական ընդհանրությունն է, առանց նրա ցեմենտող ուժի ոչ մի ազգային ընդհանրություն երկար գոյատևել չի կարող: Գաղթահայ համայնքների համար այդ ուժը հանդիսանում էին քրիստոնեական ուսմունքը և եկեղեցին՝ որպես այդ ուսմունքը ջատագովող և պահպանող հաստատություն: Ահա թե ինչու մինչև քրիստոնեության ընդունումը Հայաստանից հեռացած բազմահազարանոց և ոչ մի գաղթականական հոսանք չստեղծեց հայկական գաղութ և կուլ գնաց օտար միջավայրին (տվյալ դեպքում՝ պարսից միջավայրին):

Մեր ասածի ապացույցն այն է, որ միջնադարյան և նոր շրջանի բոլոր քիչ թե շատ աչքի ընկնող հայ գաղութներն ունեին իրենց եկեղեցին՝ նրա բոլոր հաստատություններով, որոնք, ազգապահպանման խնդրին համեմատ, ազգային շունչ ու ոգի էին հաղորդում տվյալ գաղութին, իրականացնում նրա մշտատև կապը հայրենիքի հետ:

Հայկական արտագաղթերը խթանող հիմնական պատճառների մեջ առաջին հերթին պետք է առանձնացնել օտար նվաճողների՝ դեպի Հայաստան պարբերաբար կատարած արշավանքները (որոնք իրենց հերթին պայմանավորված էին Արևելքի ու Արևմուտքի միջև Հայաստանի գբաղեցրած բուֆերային աշխարհագրական դիրքով), ազգային պետականության կորուստը, երկրում օտարերկրյա անտանելի տիրապետության հաստատումը, ֆեոդալական երկպառակությունները, արտաքին աշխարհի հետ ունեցած առևտրատնտեսական սերտ կապերի առկայությունը, սոցիալական և դավանաբանական պայքարը, ինչ-որ չափով նաև՝ տարերային աղետները: Նշված պատճառներից յուրաքանչյուրն իր կապակցությունների մեջ բազմերանգ է և լայն քննարկման խնդիր, մանավանդ որ այդ պատճառները միշտ չէ և հաճախ չէ, որ դրսևորվել են միատեսակ:

Հայկական արտագաղթերը նկատելիորեն մեծ չափեր ընդունեցին արդեն արաբական արշավանքների և մանավանդ երկրում արաբների տիրապետության հաստատման շրջանում: Բյուզանդական շրջաններում, Բալկաններում, Հյուսիսային Կովկասում, Մերձավոր արևելքում և այլուր 7-11-րդ դարերում հայ բնակչության հայտնվելը և հայկական գաղթավայրերի առաջացումը առաջին հերթին միահյուսվում էին այդ դարերում Հայաստանում տեղի ունեցած ռազմաքաղաքական անցքերի՝ արաբների, բյուզանդացիների և սել-

ջուկների այստեղ ձեռնարկած արշավանքների ու վարած քաղաքականության հետ:

Բյուզանդիայի և Արաբական խալիֆաթի միջև գրեթե 300 տարի (7–11-րդ դարեր) Հայաստանի, Փոքր Ասիայի և Կիլիկիայի համար մղված պատերազմները և ապա Թուրք-սելջուկների արշավանքները անլուր կոտորածների և աննկարագրելի զրկանքների հետ միաժամանակ հայ ժողովրդին բերեցին իր հետագա հետևանքներով թերևս ավելի ծանր արհավիրք՝ զանգվածային արտագաղթերը, որոնք դրսևորվում էին բռնի կամ կամովին ձևերով: Սակայն կամովին բառը այստեղ զուտ պայմանական իմաստով է գործածական, քանի որ կամավոր գաղթող հայությունն էլ այդ քայլին դիմում էր ակամայից՝ օտար բռնակալի ճնշումից ու վայրագություններից հարկադրված:

Արաբական տիրապետությունը Հայաստանում երկրի բնակչության համար նշանակում էր տնտեսական ու մշակութային կյանքի փլուզում, դառը զրկանքներ, մարդկային անհամար զոհեր: Հայաստանի ամբողջ ունեցվածքը հայտարարվել էր խալիֆի սեփականություն: Հարկագրվել էր ողջ բնակչությունը, հարկագրվել էին անգամ մեռելները: «Եւ տիրէ ընդ նորա Աբդլայ (սա Աբասյան դինաստիայի առաջին խալիֆն էր–Վ. Մ.), և առաքէ զեղբայր իւր զմիւս Աբդլայ շրջել ընդ ամենայն աշխարհս իշխանութեան իւրոյ: Որ նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք և նեղութեամբք վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն: Եւ զամենայն բազմութիւն որոց և այրեաց չարալուկ տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս և զպաշտօնեայս աստուածային խորանին խոշտանգանօք և քքօք այպանութեան և գանիւք՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն և զընտանիս նոցուն: Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուգս արծաթոյ, և դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»[1]:

Անգամ մեռելների դիմաց հարկ պահանջող տիրակալներից փրկվելու համար բնակչությունը ստիպված հեռանում էր երկրից՝ ֆիզիկապես գլխովին վերանալու վտանգին դեմ-հանդիման, մանավանդ, որ արաբական տիրապետության դեմ ուղղված նրա պայքարը ըստ մեծի մասին անհաջող ավարտ էր ունենում՝ թշնամու զինական ուժի գերակշիռ լինելու և հայ նախարարների անմիաբանության հետևանքով:

Գաղթականական առաջին հոսանքները 7–11-րդ դարերում քայլ առ քայլ անցնում էին բյուզանդական շրջաններ, մասամբ նաև Վրաստան և Աղվանք: Սակայն, որպես կանոն, ավելի հոծ գաղթականություն տեղափոխվեց Բյուզանդիայի փոքրասիական և անգամ եվրոպական շրջաններ, քանի որ Վրաստան ու Աղվանք գնալը այնքան էլ նպատակահարմար չէր, որովհետև

[1] Ղևոնդեայ վարդապետի պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 127:

վրացիներն ու աղվանական ցեղերը՝ որպես արաբական «Արմենիա» փոխարքայության մեջ մտնող ժողովուրդներ, նույնպես ենթակա էին արաբական ճնշմանը: Ամենից հարմարը մնում էր Բյուզանդիան և հետագայում նրա վրայով նաև Բալկաններն ու սլավոնական երկրները: Սկիզբ առնելով 7-րդ դարից, հայերի տեղաշարժերը դեպի բյուզանդական շրջաններ այնուհետև դարառ դար ոչ միայն չեն նվազում, այլև ուժգնանում են, իսկ 10–11-րդ դարերին արդեն ընդունում են աննախընթաց մեծ ծավալ:

Արաբական արշավանքների արդեն իսկ սկզբնական շրջանում հայ գաղթականները սկսում են անցնել Բյուզանդիայի կայսրությանը ենթակա փոքրասիական շրջաններ և անգամ Կ. Պոլիս: Որպես կանոն, այս շրջանում նրանք այստեղ ըստ մեծի մասին տակավին չէին կարող հարատևել, և ընդունելով ուղղափառությունը՝ դառնում էին «Հայ-Հոռոմ»: Եվ այնուամենայնիվ, նույնիսկ 6–7-րդ դարերում ոչ քիչ թվով հայեր զերծ էին մնացել դավանափոխությունից: 6-րդ դարի կեսերից Կ. Պոլսում կար ամփոփ մի հայ գաղութ: Հավանաբար, սրանք այն հայերից էին, որոնց Հուստինիանոս կայսրը 6-րդ դարում Մելիտինեից բերել էր Կ. Պոլիս և մասամբ էլ տեղափոխել Թրակիա[1]: Սերեոսի հաղորդմամբ, Մորիկ կայսրը նույն դարում Թրակիական շրջաններ է բերում հոծ թվով հայ գաղթականներ և նրանցից կազմված գնդերով պատերազմում ավարների դեմ: «Ձրաման եւս դարձեալ ժողովել զամենայն այր և ձի ի Հայաստանեայց և զիշխանս նախարարացն, որք հմուտ էին և կարող զդէմ ունել, կռուել ռազմի ի նիզակամուխ ճակատի: Եւ հրաման եւս դարձեալ վերստին զաւր հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ, զամենեսեան կամով և ընտրով հասակի. կազմել գունդս զարդու և զինու վառեալ և անցուցանել զամենեսեան յաշխարհն Թրակացւոց ընդդէմ թշնամւոյն»[2]:

6-րդ դարում Մորիկ կայսրը գործարքի մեջ է մտնում իր հակառակորդ պարսից շահի հետ՝ Հայաստանը հայերից դատարկելու նենգ առաջարկությամբ: «Ցայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստանութեան վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց և զաւրաց իւրեանց. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ թշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի:

Միաբանեցան երկոքին: Եւ սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեսցեն զամենայն և ի Թրակէ գումարեսցեն. և սաստիկ տագնապէր՝ հրաման կատա-

[1] «Փորձ», 1877–1878 թթ. գիրք 4-րդ, էջ 167:

[2] Պատմութիւն Սերեոսի, աշխատասիրությամբ Գ.Վ.Աբգարյանի, եր., 1979, էջ 90:

բեր»: Սակայն հայերի մի մասը փախչում է Բյուզանդիայից և գալիս «ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր»[1]: Եվ չնայած դրան, ինչպես վերը տեսանք, Մորիկին, այնուամենայնիվ, հաջողվում է մեծ թվով հայերի բերել Թրակիա, որտեղ, մասամբ իրականանում է նրա իղձը, որովհետև ի վերջո հայոց մի մասը հեռավոր Դանուբի ափերին կնքում է իր մահկանացուն. «եւ բազմութիւն նախարարացն և զաւրացն Հայաստանեայց յաւուր յայնմիկ կործանեալ սատակեցան»[2]:

Եթե մինչև 8-րդ դարը Բյուզանդիա անցած հայերից շատերը դավանափոխ էին դառնում, ապա դրանից հետո պատկերը նկատելիորեն փոխվում է: Խնդիրն այն է, որ մինչև 7-րդ դարը Բյուզանդիա անցած հայերը համեմատաբար մեծ թիվ չեն կազմել և դժվարությամբ են դիմակայել հույն կղերին: Այնինչ, 7-րդ դարի վերջերից, երբ արաբական հալածանքները Բյուզանդիա են քշում հայ ժողովրդի ավելի մեծամեծ զանգվածներ, որոնք սկսում են զբաղեցնել ամբողջական շրջաններ և բնակավայրեր կայսրության մանավանդ փոքրասիական տարածքներում և գոյատևել որպես ինքնուրույն հայ համայնքներ, գաղթական հայությունը շատ տեղերում կարողանում է պահպանել իր կրոնն ու ազգային ինքնությունը: Դրան նպաստում է այն, որ սրանց կապերը հայրենիքի հետ ավելի կենդանի էին և շարունակական՝ մի կողմից հայկական շրջաններում բյուզանդական բանակաթեմերում հայ զինվորների նշանակալից թիվ կազմելու, իսկ մյուս կողմից՝ դեպի Բյուզանդիա եկող հայ բնակչության նորանոր խմբերի հետևանքով:

8-րդ դարի հենց սկզբներին հայ նախարարների մի մասը, նշանակալից չափով հպատակ ժողովրդով, գաղթեց Բյուզանդիա: Դա տեղի ունեցավ 706 թվականի հայտնի անցքերից հետո, երբ Դրշապետ դյուղի մոտ (Նախճավանի Վանանդ գավառ) հայ և բյուզանդական միացյալ ուժերը պարտվեցին արաբներից, և վերջիններս բազում հայ նախարարների ու ազատների այրեցին Նախճավանի և Խրամ ավանի եկեղեցիներում:

Արաբական տիրապետության սաստկացմանը համաքայլ աճում էր Բյուզանդիա քաշվող հայության թիվը՝ մանավանդ որ մինչև 10-րդ դարը բյուզանդական վարչակազմի վերաբերմունքը հայերի նկատմամբ դեռևս հանդուրժողական էր և տանելի: 8-րդ դարի 50-60-ական թվականներին Կոստանդին Կոպրոնիմոս կայսեր թուլությամբ, որը զորքով մտել էր Կարնո նահանգ, հազարավոր հայեր հատվածաբար տեղափոխվում են բյուզանդական շրջաններ: «Եւ նորա (Կոստանդին կայսրը –Վ. Մ) տուեալ հրաման, վաղվաղակի հանդերձեալ զաղիս իւրեանց՝ խաղացին յառաջ, ապաւինեալք ի զօրութիւն տէրունեան խաչին և ի փառս արքային. թողին զերկիր ծննդեան իւրեանց, և հատուածեալք անկան ի կողմն արքային»[1]:

Մի երկու տասնամյակ անց արտագաղթը դեպի Բյուզանդիա ավելի ծավալուն է դառնում, որն արդեն կապված էր արաբների դեմ 774-775 թթ. բարձրացած ապստամբության պարտության հետ: Այս արտագաղթը փաստորեն գլխավորում էին Մամիկոնյան, մասամբ էլ Բագրատունի ընտանիքները: Լքելով իրենց շատ կալվածքներ, նրանք նկատելի թվով հպատակ ժողովրդով հանդերձ, անցնում էին Բյուզանդիա, մասամբ էլ՝ ամուր լեռնային շրջաններ: 790 թվականին նույն քայլին են դիմում 12 հազար հայեր՝ Շապուհ Ամատունու գլխավորությամբ[2] : Առհասարակ 775թ. ապստամբության պարտությունը առաջ բերեց հայ նախարարական տների քայքայում, նախարարների մի մասը դերազասեց տեղափոխվել բյուզանդական շրջաններ, իսկ մի մասն էլ հարկադրված բռնեց արաբներին համակերպվելու ուղի: Երկու երևույթն էլ խթանում էին հայերի արտահոսքը:

Նշված ապստամբության պարագլուխներից մեկը՝ Արտավազդ Մամիկոնյանը, շուտով դառնում է Անատոլիկոն թեմի ստրատեգ և կառավարիչ: Առհասարակ բյուզանդական վարչակարգի քաղաքերիչ վերաբերմունքը հայ ավագանու նկատմամբ պակաս դեր չխաղաց հայերին արտագաղթի մղելու գործում: Ավելի ուշ, 18-րդ դարում, նույն երևույթը մենք տեսնում ենք այս անգամ արդեն հայերի՝ դեպի ռուսական շրջաններ տեղաշարժվելու շարժումներում: Բյուզանդիայի այդ քաղաքերիչ վերաբերմունքի և իրենց ձիրքի վրա հենվելով՝ հայ ավագանու (և ոչ միայն նրա) շատ ներկայացուցիչների հաջողվում է կայսրության մեջ հասնել քաղաքացիական և զինվորական բարձր պաշտոնների: «Բյուզանդիան,- գրում է նշանավոր բյուզանդագետ Շառլ Դիլը, - իր լավագույն զորահրամանատարներից, գերազանց վարչապետներից շատերին ստացել է Հայաստանից: Հայաստանից էին սերում նույնիսկ որոշ կայսրեր՝ Հարկլը՝ 8-րդ դարում, Լևոն Հայկը՝ 9-րդ դարում, Ռոման Լեկապինը և Հովհաննես Ցմշկիկը՝ 10-րդ դարում: Բյուզանդիան Հայաստանին պարտական էր իր հիանալի զինվորների համար, քանի որ հայկական զորաթոկատները 10-րդ դարում համարվում էին բյուզանդական բանակի լավագույն ստորաբաժանումները: Այդ պատճառով էլ հեշտ է հասկանալ, թե ինչու կայսերական կառավարությունը երազում էր ամբողջությամբ բյուզանդական ազդեցությամբ ներծծված այդ բնակչությանը վերածել իր հպատակների: Կայսերական դիվանագիտությունն այդ նպատակով դիմում էր ամենաբազմազան միջոցների՝ մերթ այս կամ այն հայ կառավարիչներին ստիպելով բյուզանդական որևէ բարձր տիտղոսի դիմաց զիջել իր տիրույթները, մերթ ձեռք

[1] Նույն տեղը, էջ 86-87:

[2] Նույն տեղը, էջ 91:

[1] Ղևոնդ, էջ 129:

[2] Նույն տեղը, էջ 169:

դցելով կտակ, որով հայ կառավարիչը իր իրավունքները փոխանցում էր կայսրությանը»[1]:

8-րդ դարում Բյուզանդիայի լավագույն զորահրամանատարներից էին Տաճատ Անձևացին, Վարազտիրոցը, Գրիգորիսը, որոնց հրամանատարության ներքո 778թ. բյուզանդական բանակները Գերմանիկեի մոտ փայլուն հաղթանակ տարան արաբների դեմ: Հենց այս հաղթանակից հետո էր, որ մեծ թվով հայերի Մարաշից տեղափոխեցին Թրակիա: Հավանաբար, սրանք պավլիկյաններ էին, որովհետև Գերմանիկեն նրանց կենտրոնն էր: Բալկաններ անցած պավլիկյանները սկսեցին այստեղ ևս տարածել իրենց ուսմունքը: 765թ. Թրակիայում կար հայկական մի զորամաս, որը կազմված էր Կոստանդին 5-րդի կողմից 755թ. Կարինից և Մելիտինեից տեղափոխած հայերից: Բյուզանդական ժամանակագիր Թեոփանեսի հաղորդմամբ, սրանք էին, որ սկսեցին տարածել պավլիկյան աղանդը[2]:

8-11-րդ դարերում Բյուզանդիայից հայ գաղթականական խմբերը անցնում են Բուլղարիա և մերձդանուբյան տարածքներ: Կրում (803-814) և Օմուրթաք (814-831) խանների նախաբուլղարական շրջանի մի արձանագրության վկայությամբ, նրանց մոտ Բյուզանդիայից Բուլղարիա էին եկել հայ զինվորականներ Վարդանը, Գարջույլը և Տրդատը[3]:

Այս շրջանում Բյուզանդիայից Բուլղարիա անցած հայերի մեջ ավելի ստվար թիվ էին կազմում մանավանդ արհեստավորները: Նույն խանների օրոք բուլղարական մայրաքաղաքներ Պլիսկայի և Պրեսլավայի պալատների ճարտարապետությունը նմանության ավելի շատ գծեր ուներ Դվինի, Արուճի և հայկական այլ վայրերի, քան Կոստանդնուպոլսի, պալատների հետ: «Բուլղարների անմիջական շփումները հայերի և սիրիացիների հետ, -նշում է Ա. Յակոբսոնը, - կարող էր տեղի ունենալ(և, անկասկած, տեղի է ունեցել) հենց բուլղարական մայրաքաղաք Պլիսկայում կատարվող բուռն շինարարական շրջանում: Այդ շինարարության մեջ հայ և սիրիացի ճարտարապետների մասնակցությունը ավելի քան հավանական է»[4]: Վասիլ Առաջին կայսեր օրոք, մանավանդ, Թրակիայում հայերի թիվը մեծ չափերի է հասնում և, հայազգի

[1] Диль Шарль. Основные проблемы византитской истории, Л., 1947, с. 140-141.

[2] ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1960, թիվ 7-8:

[3] Бартикян Р., О протоболгарских надписях ханов Крума (803-814) и Омуртага (814-831) и некоторые вопросы организации протоболгарского государства (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1981, թիվ 4, էջ 65-77).

[4] «Византитский временник», т.28, N 3, с. 244-250.

սուրբ Մարիամ նախավկայի վարքի համաձայն, նրանց մի մասն արդեն դարձել էր «Հայ-Հռոմ» այսինքն՝ հայ-քաղքեդոնիկ[1]:

9-րդ դարում Բագրատունյաց Հայաստանը ռազմական նշանակալից ուժ ուներ, և Առաջավոր Ասիայում այդ ուժը Բյուզանդիայի համար լուրջ հենաբան էր[2]: Հավանաբար, դա էր գլխավոր չարժառիթը, որը Բյուզանդիային մղել էր ակտիվորեն նպաստելու հայկական թագավորության վերականգնմանն ուղղված գործընթացներին[3]: Սակայն որքանով թուլանում էին արաբների դիրքերը, այնքանով Բյուզանդիայի նվաճողական նկրտումները ավելի սակավ էին ուղեկցվում սիրաշահող դիվանագիտությամբ: Ընդհակառակը, տասնամյակ առ տասնամյակ սաստկանում էր Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականությունը: Կայսրներ Հովհաննես Զմշկիկը (969-976) և Վասիլ 2-րդը (976-1025) հայկական շրջանների օկուպացումը ուղեկցում էին բնակչության տեղահանմամբ: Օգտագործելով հայ նախարարական տների երկպառակությունները ու կենտրոնախույս ձգտումները, նրանք հեշտությամբ իրականացնում էին հայ բնակչության տեղահանումը և նրա տեղափոխումը կայսրության արևմտյան շրջաններ: Հայաստանը դատարկելու և զինական ուժից զրկելու բյուզանդական քաղաքականությունը ի վերջո նպաստեց սելջուկների առաջխաղացմանը՝ դառնալով թե հայկական և թե բյուզանդական պետականության հիմքերի խարխլման պատճառներից մեկը: Որո՞նք էին Հայաստանի նկատմամբ բյուզանդական կայսրության վարած այսօրինակ քաղաքականության միտումները:

ա) Հայերին դավանափոխելու, հունադավան դարձնելու ձգտումը:

բ) Կայսրության շատ շրջանների և մանավանդ Եվրոպական մասի բնակեցման ու տնտեսական զարգացման անհրաժեշտությունը:

գ) Հայերի զինական ուժը Արևմուտքում կայսրության թշնամիների դեմ ուղղելը, մանավանդ, որ Արևելքում արաբներն այլևս նախկին վտանգը չէին ներկայացնում:

դ) Հայ ազնվական դասի չեզոքացումը և ի վերջո վերացումը՝ հակաբյուզանդական որևէ պայքար ղեկավարելու հնարավորությունից նրան զրկելու համար:

Տակավին 964-969 թթ. դեպի Արևելք ձեռնարկած արշավանքի ժամանակ Նիկեփորոս 2-րդը, օգտվելով Տարոնի իշխան Աշոտ Պատրիկի մահից, Տարոնը միացրեց կայսրությանը, իսկ նրա հաջորդ Հովհաննես Զմշկիկը մեծ

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1980, թիվ 3,էջ 244-250:

[2] **H.Gelzer**, Abriss der byzantinischen Kaisergeschirhte (Krumbacker K., Geschichte der byzautinischen Literatur, Münechen, 1897, s. 979, 981, 1010).

[3] **Диль Шарль**, նշվ. աշխ. էջ 140:

թվով հայեր, հիմնականում թոնդրակեցիներ, գաղթեցրեց Փիլիպոպոլ՝ նպատակ հետապնդելով թուլացնել դնալով հակաբյուզանդական ազգային ազատագրական պայքարի ընթացք ձեռք բերող այդ շարժումը և նրա մասնակիցներին օգտագործել բուլղարներից, ռուսներից և հունգարացիներից պաշտպանվելու համար: Գրիգոր Մագիստրոսի հաղորդման համաձայն, թոնդրակեցիները գործում էին կայսրության ողջ տարածքում, իսկ ըստ բյուզանդական որոշ աղբյուրների՝ հանդես էին գալիս Փունդագեցիների (Թափառական ժողովրդի) անվան տակ[1]: Սակայն հայազգի Զմշկիկը, ելնելով արաբին թշնամու դեմ մղվող պայքարում հայերին օգտագործելու խնդրից, «մուայլ մոլեռանդությամբ չէր վերաբերվում դեպի հայ համայնքները, ինչպես խստապահանջ օրթոդոքսները»[2]: Նա գաղթեցված հայերին օգտագործում է նաև մայրաքաղաք Կ. Պոլսի պաշտպանության համար:

Հայերին տեղահանելու գործում ամենից շատ ակտիվություն ցուցաբերեց Վասիլ 2-րդը: 1001 և 1021-1022 թթ. դեպի Արևելք ձեռնարկած իր արշավանքների ժամանակ Վասիլ 2-րդը շատ հայերի տեղահանեց հայրենի օջախներից և վերաբնակեցրեց Մակեդոնիայում: «Այլ յորժամ էր ի Բաղդատ թագաւորն Վարդ և խաղաղանայր թագաւորութիւն Վասլին՝ կամեցաւ յազգէն Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի չինեսցեն զերկիրն: Ուր և տարեալ բնակեցոյց զյոլովս յաշխարհն յայն»[3]:

Վասիլ 2-րդի ահաբեկմամբ, Բագրատունիների Հովհաննես Սմբատ թագավորը իր թագավորությունը կտակեց կայսրությանը, որը այնքան ճակատագրական եղավ Հայաստանի համար, մեծապես նպաստելով նաև արտագաղթի ուժեղացմանը: Վասիլ 2-րդի ժամանակ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը հարկադրված Բյուզանդիային թողեց իր աշխարհը՝ 72 բերդ, 4000 գյուղ և 8 քաղաք և, փոխարենը ստանալով Սեբաստիան, իրեն ենթակա բնակչությամբ տեղափոխվեց այնտեղ[4]: 1041 թվականին, Բագրատունյաց թագավորության վերացման նախօրեին, մի շարք բյուզանդամետ հայ իշխաններ լքում են հայրենի տիրույթները և անցնում Բյուզանդիա և «եղեն չինանիստ

[1] Бартикян Р. Движение тондрахидов в Византии («Լրաբեր», 1980, N 9, էջ 62):

[2] **Գելցեր Հ.**, Համառոտութիւն բիւզանդական կայսրների պատմութեան, Վաղարշապատ, 1901, էջ 334:

[3] **Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 201:

[4] **Սամուէլի Հահանայի Անեցւոյ** հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104:

աւանք՝ բնակութիւն գաղանաց, և անդաստանք նոցա՝ յարօտ երէից»[1]: Սրանք այն իշխաններն էին, որոնք Բագրատունիների թագավորության թուլացմանը ի տես՝ աճապարում էին ապահով ու հարմար վիճակ ձեռք բերել Բյուզանդիայում: Նրանց այդ քայլը Բագրատունիների թագավորության վերացման նախօրյակին էր. 1045 թ. Գագիկ 2-րդին նենգաբար Կոստանդնուպոլիս հրավիրելը եղավ այդ թագավորության վերջերգը:

Արևելքում արաբների թուլացմանը համաքայլ իրենց հաջողություններից արբած՝ բյուզանդական իշխանությունները կարծես թե չէին ուզում նկատել այն, որ քայքայելով հայկական և վրացական դիմադրողական ուժը, ողբերգական վիճակ են ստեղծում նաև բուն կայսրության համար: Հիմնական վտանգը տեսնելով կայսրության արևմտյան սահմաններում՝ Բյուզանդիան փաստորեն Արևելքում գարպասները բաց էր թողել ներխուժող վայրկատուն հորդաների առաջ:

Բագրատունյաց թագավորության վերացմանը չուտով հաջորդեց Թուրք-սելջուկների ներխուժումը Անդրկովկաս և Փոքր Ասիա: Սրանց հայատանն այլևս ի վիճակի չէր լրջորեն դիմադրել, քանի որ կորցրել էր պետականությունը, իսկ նրա մարտունակ ուժերը երկրից հեռու մարտնչում էին բյուզանդական սահմանների պաշտպանության կամ ընդլայնման համար: 1045 թվականի համար Ա. Լաստիվերտցին նկատում է, որ երկիրը մարդաթափ է դարձել, իսկ հայկական զորքերը թափառում են Վրաստանում, Պարսկաստանում և Բյուզանդիայում. «Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս, -բողոքում է պատմիչը: - Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ, մնչէն ուր և են իբրև զկորիւնս առիւծուց ի խշտիս իւրեանց: Արքունական ապարանքն աւերակ և անմարդի: Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչաց»[2]: Հայերին տեղահանելու և Հայաստանը պաշտպանական ուժից զրկելու հարցում բյուզանդացիներին տված իր գնահատականում ավելի խիստ է Մ. Ուռհայեցին: «Սակայն Հոռոմք, - գրում է նա, - յայն ջանս ջանացան, որ լուր (գուր) զպարիսպ ամրութեան տանս Հայոց քակեալ կործանեցին... և զպարսիկք (սելջուկ թուրքերը - Վ. Մ.) անտէր տեսին զամենայն արեվելք. և յայնժամ մեծաւ զօրութեամբ զօրացան այլազգիքն, որ ի մէկ տարւոյ հասան մինչ ի դուռն Կոստանդնուպօլսի և աւրին զամենայն աշխարհն Հոռոմոց»[3]:

Սելջուկները առաջին անգամ Հայաստան մտան 1048 թ.: Վասպուրականի վրայով անցնելով Բասեն՝ նրանք քարուքանդ արեցին 24 գավառ և ապա

[1] Պատմութիւն **Արիստակիսի Լաստիվերտցւոյ**, եր., 1963, էջ 55:

[2] **Լաստիվերտցի**, էջ 60:

[3] **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 135-136:

մեծ ավարով ու գերիներով ետ դարձան Պարսկաստան[1]: Երկրորդ արշավանքի ժամանակ (1048–1049 թթ.) սելջուկների ավերածությունները տարածվեցին մինչև Խաղտյաց գավառ՝ արևմուտքում, մինչև Սպեր և Տայք՝ հյուսիսում, մինչև Տարոն և Հաշտենից գավառ և Խորձայնի անտառ՝ հարավում: Այս երկրորդ արշավանքի ժամանակ մոխրակույտի է վերածվում Արծնը՝ կորցնելով 150.000 մարդ[2]:

1054 թ. Հայաստան է ներխուժում Տուղրիլը՝ «գազանն մահաշունչ աբիւնաբրուն և մարդախաշոշն» (Լաստիվերտցի): Կողոպտելով երկրի հյուսիսային և կենտրոնական շրջանները, Տուղրիլի զորքերը մեծաթիվ գերիներով և ավարով ետ քաշվեցին: Ամենաճակատագրականը, թերևս առավել սահմռկեցուցիչը, Ալփ-Արսլանի արշավանքն էր 1064 թվականին: Սելջուկները գրավեցին Անին և հիմնահատակ ավերեցին այն: «Անդ էր տեսանել զվիշտ և զտագնապս իւրաքանչիւր հասակի, – ասում է Ա. Լաստիվերտցին. – զի ի գրկաց մարցն յափշտակեալ լինէին մանկունք՝ անողորմաբար զքարի հարեալ, և մարքն արեամբ և արտասուօք զմանկունս իւրեանց թանային. զհայր և զորդի մի սուր խողխողէր... զի լցաւ քաղաքն լի ծայրիւ և ծայրիւ, և ճանապարհ էր մարմին սպանելոցն. զի ի բազմութենէ կոտորելոցն և յանթուելի դիակացն՝ վտակն մեծ, որ անցանէր առ քաղաքաւն, ներկանէր արեամբ, և գազանք վայրի և ընտանի՝ եղեն գերեզման դիականցն. վասն զի ոչ գոյր որ թաղէր և հարկաւոր հողովն ծածկէր զխողխողեալսն»[3]: Սելջուկյան արշավանքների հետևանքով առաջացած ծանր դրության հետևանքով հայերի՝ դեպի Բյուզանդիա կատարվող ավանդական գաղթը նոր չափերի է հասնում: Ս. Անեցու վկայությամբ, 1064 թ. Անիի և շրջակայքի կենդանի մնացած բնակիչները կամովին փախչում են դեպի Բյուզանդիա[4]: 1064 թ. Վասպուրականի Սենեքերիմ թագավորի օրինակին է դիմում Կարսի Գագիկ թագավորը, որը, բյուզանդական կայսր Դուկասին զիջելով իր թագավորությունը, փոխարենը ստանում է Ծմանդավը (Կիլիկյան Տավրոսում), Լաւիան, Ամասիան, Կոմնանը և հարյուր գյուղ, և իր ժողովրդով հանդերձ տեղափոխվում է այնտեղ[5]:

9–11-րդ դարերում Հայաստանից հեռացած բնակչության մի հատվածը աստիճանաբար անցավ Կիլիկիա և այնտեղ հաստատված իր ազգակիցների հետ հիմք դրեց հայկական պետականությանը: Գաղթական հայության սոսկալի հոսանքներ շարժվեցին Կ. Պոլիս, Բալկաններ, մերձդանուբյան

[1] Լաստիվերտցի, էջ 65:

[2] Ուռհայեցի, էջ 102–103:

[3] Լաստիվերտցի, էջ 136:

[4] Սամուէլ Անեցի, էջ 109:

[5] Հավաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի** լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 102:

տարածքներ, Պոնտոսի և Կովկասի վրայով՝ Ղրիմ, ինչպես նաև Պարսկաստան, Միջին Ասիա և անգամ Չինաստան: Նկատելի թիվ էին կազմում նաև այն հայերը, որոնց արաբները աստիճանաբար քշել էին Եգիպտոս, Պաղեստին և Ասորիք: Սրանց մի մասն էլ, 11-րդ դարից սկսած, կամովին, տնտեսական կապերի աղերսով, գաղթել էր վերին Եգիպտոս: Նշված շրջաններում 11-րդ դ. հայերի թիվն այնքան էր մեծացել, որ Գրիգոր Բ վկայասեր կաթողիկոսը անհրաժեշտ համարեց Պաղեստինի, Ասորիքի և Եգիպտոսի հայերի համար առանձին եպիսկոպոսություններ հիմնել[1]:

Սակայն բյուզանդական կղերը կայսրության տարածքներն անցած հայերի նկատմամբ ևս չարունակում էր ուղղափառություն պարտադրելու քաղաքականությունը: Թե կղերը և թե նրան կուրորեն անսացող պետական վարչակազմը կառչած էին մնացել ըստ էության իրենց նախկին քաղաքականությանը՝ նույնիսկ առաջացած խստիվս անբարենպաստ քաղաքական պայմաններում, երբ սելջուկները սկսել էին չարժվել կայսրության փոքրասիական տարածքների խորքերը: Այդ քաղաքականության կորստաբեր հետևանքները նաև հենց բուն կայսրության համար իրենց երկար սպասել չտվեցին և նպաստեցին սելջուկների առաջխաղացմանը: Հենվելով բյուզանդական իսկ աղբյուրների վրա՝ Հ. Գելցերը այս աղերսով նկատում է. «Յոթերորդ և հետագա դարերի բոլոր տխուր հետևանքները ոչ մի ազդեցություն չունեցան հույն հոգևորականության վրա, որը ոչինչ չէր սովորել և ոչինչ չէր մոռացել: Բնորոշ է, որ տակավին չարաբաստիկ Ռոման Դիոգենեսը (1067–1071) (Արևելք) իր կատարելիք արշավանքի նախօրյակին երդում տվեց վերադառնալուց հետո ոչնչացնել ամբողջ հայկական հավատը, և այդ պատճառով էլ բոլոր հայ վարդապետները աղերսագին աղոթում էին Աստծուն, որպեսզի կայսրը գլխովին ջախջախվի, ինչպես անհավատ Հուլիոսը, որին անիծել էր սուրբ Վասիլիոսը: Հայոց այդ հուսահատ վիճակը, որը գրգռվել էր հունական անմիտ կրոնական կառավարչության կողմից, մեզ հնարավորություն է տալիս հասկանալու սելջուկների հաջողությունների պատճառները»[2]:

1071 թ. Մանազկերտի ճակատամարտը փաստորեն բյուզանդական կայսրության կարապի երգը հանդիսացավ. «Թեև նրա (ճակատամարտի – Վ. Մ.) արդյունքները իրենց բոլոր սարսափներով դեռևս չէին զգացվում, սակայն Փոքր Ասիայի արևելյան մասերը կայսրության համար ընդմիշտ կորած էին, և թափառաշրջիկ թուրքը հին հռոմեական փառքի փլատակների վրա խփել էր իր վրանը»[3]:

[1] «Հայրենիք», 1926, մայիս, էջ 33, հուլիս, էջ 123:

[2] Gelzer, նշվ. աշխ., էջ 1004–1005:

[3] Նույն տեղը, էջ 1010:

Հայաստանից 7-11-րդ և նույնիսկ 12-13-րդ դարերին կատարված արտագաղթի առաջմղիչ ուժերից մեկը, թերևս, օտար ներխուժումներից ոչ պակաս զորությամբ, կրոնական հակամարտությունն էր հայ քաղքեդոնականների և հակաքաղքեդոնականների միջև: 8-9-րդ դարերում եղան պահեր, երբ դժվար էր կռահել, թե կողմերից ո՞րն է հաղթելու և իրեն հռչակելու համազգային կրոն, որովհետև երկուսն էլ հաղթանակի հասնելու համար օգտագործում էին բոլոր միջոցները, այդ թվում նաև օտար դավանակիցների՝ հույների, վրացիների և ասորիների աջակցությունը[1]: Սակայն աստիճանաբար հակաքաղքեդոնականությունը տեղական եկեղեցական ավանդույթների չնորհիվ հաղթեց և վերածվեց ազգային եկեղեցու: Ավելի ուշ հայ հակաքաղքեդոնական եկեղեցու ազգայնացման հետևանքով հայ քաղքեդոնականների մոտ գնալով զորանում է հակառակ երևույթը՝ ապազգայնացումը, որը հայ ժողովրդին մեծ հարված հասցրեց թե քանակական և թե բարոյական առումով: Հանուն իրենց դավանանքի հայ քաղքեդոնականները, հայ կղերի նեղմիտ հաշվածանքների և հետապնդումների հետևանքով, բռնում են գաղթի և ձուլման ուղին, դադարում իրենց հայ համարել[2]: Անջատվելով ազգակիցներից, նրանք շարժվում են երեք ուղղությամբ՝ Վրաստան, Բյուզանդիա և Ասորիք՝ իրենց դավանակիցների մոտ: Կորցնելով ոտքի տակ հայրենի հողը, հայ քաղքեդոնականները այս վերջիններից ելածների հետ տեղափոխվում էին նրանց նախընտրած շարժման վայրերը. վրացիների հետ՝ Բուլղարիա, հույների հետ՝ Պաղեստին, սիրիացիների հետ՝ Արևելք: Հայ քաղքեդոնականները նախընտրում էին անգամ Հռոմը, որովհետև քաղքեդոնականությունը կաթոլիկության հետ մերձեցման ավելի շատ աղերսներ էր տեսնում:

Երկրի ներսում իրենց իսկ ազգակիցների կողմից ապազգային դիտված քաղքեդոնիկ հայ մասսան զգալապես խթանեց արտագաղթը: Դեռ Անիի անկումից առաջ սրանք բռնել էին դեպի ռուսական շրջաններ, Վոլգա, Բուլղարիա, Միջին Ասիա ու Կիլիկիա տանող գաղթի ուղին:

Ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայերի արտագաղթերը հարուցվում էին ժողովրդահասարակական հոգեբանությամբ, որն այն ժամանակներում որոշվում էր կրոնական գործոնով և դավանաբանական իդեալների իրականացմանը զոհաբերվում էր ազգային բարօրությունը, կրոնական շահախնդրությունները վեր էին դասվում ազգային պատրիոտիկայից: Եթե դավանանքի պահանջները հայրենիքում ոտնահարվում էին, ապա կրոնական բարոյականությունը լիովին արտոնում էր թողնել այդպիսի հայրենիքը և

[1] Марр.Н. Аркаун-монгольское название христиан, СПб., 1905, с.5.

[2] Նույն տեղը, էջ 28:

մեկնել դավանակից կամ հանդուրժող երկրներ[1]: Կրոնաբարոյական այդ մտայնությունը լիովին արդարացնում էր արտագաղթի երևույթը նման պարագաներում, այն դարձնում էր հիմնավորված պահանջ՝ հանուն «իսկական» քրիստոնեական հավատի, ընդ որում «իսկականը» յուրաքանչյուր կողմ մեկնում էր յուրովի: Տակավին Ղազար Փարպեցին էր նման ոգով հանձնարարականներ տալիս. «Այնուհետև կա՛մ կեցմք, ծառայելով ճշմարիտ հավատոյն Քրիստոսի, յոր ծնաք աւազանին նորոգութեամբ ի ձեռն ամենասուրբ վարդապետութեան նահատակին Գրիգորի եւ նորին զաւակի, եւ կա՛մ թողեալ զաշխարհ՝ գնամք իւրաքանչիւր յօտարութիւն կնաւ եւ որդւոք, ապաւինեալք և հաստատեալք ի բան կենարարի Քրիստոսին, որ ասէ, թե «Ցորժամ հալածեսցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ փախչիք ի միւսն»[2] (Մաթ., ժ, 23):

Հայկական արտագաղթի ուղիները, որպես կանոն, համընկնում են առևտրական մեծ ճանապարհներին՝ Դերբենդի կիրճով դեպի հյուսիս՝ բուլղարների մոտ, դեպի Արևմուտք՝ Ազովի ծովի մոտ և նաև Արևելք՝ Չինաստան: Մոնղոլական շրջանում Ոսկե Հորդայով Չինաստան տեղափոխված քրիստոնյաների մեջ նկատելի թիվ էին կազմում հունադավան հայերը: Սրանք Միջին Ասիա և Չինաստան էին անցնում նաև Պարսկաստանի վրայով՝ թե մողոլների ժամանակ և թե մինչ այդ: Խնդիրն այն է, որ Պարսկաստանը չէր հանդուրժում հայ քաղքեդոնականներին իրեն ենթակա Հայաստանում՝ Բյուզանդիային սահմանակից լինելու հետևանքով, բայց նրանց լիովին ազատությամբ էր օժտում ոչ միայն իր տարածքով շարժվելու Միջին Ասիա ու Չինաստան, այլև հաստատվելու իր իսկ արևելյան շրջաններում: Այդ առթիվ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Ընդ որ նորա, և բազմօք ոմանք ընծայական օժտութեամբք գնա պատուասիրեալ տա նմա զմարզպանութիւն Վրկանայ: Իսկ Սմբատայ երթեալ հասեալ յաշխարհն յայն՝ գտանէ անդ զգերեալ ազգս ի Հայաստանեայց և բնակեցուցեալս ի Թուրքաստան կողմանէ մեծի անապատին, որ Սագաստան անուանի, զկեղու իւրեանց մոռացեալ և դպրութիւն նուազեալ յոյժ: Որոց և տեսեալ զՍմբատ յաւետ իմն խրախ լինէին, և ի հրամանէ նորուն դարձեալ աշակերտեալ ըստ հայերէն հագագաց սիղոբայիցն զկեղուն նորոգէին. և ուսեալ դպրութիւն հայերէն՝ հաստատէին ի հաւատս: Եւ ապա գերէցոմն ի նոցունց իսկ՝ Աբէլ անուն, եպիսկոպոս նոցա հրամայէ կացուցանել մեծի հայրապետին մերոյ Մովսեսի: Եւ այսպես վիճակի մեծի աթոռոյ Սրբոյն Գրիգորի ի հեռաստան երկրի զնոսա կազմէ մինչև ցայսօր ժամանակի»[3]:

[1] Նույն տեղը, էջ 47:

[2] Ղազար Փարպեցւոյ պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1904, էջ 50:

[3] Ցովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 69-70:

Ուրեմն, 10-րդ դարում Պարսից պետության հյուսիս-արևելյան շրջաններում գոյություն ուներ հայկական եկեղեցական թեմ, որը ենթարկվում էր ազգային եկեղեցուն: Այդ ժամանակների մոտերքը հայկական եկեղեցի կար Խորասանում[1]: Վրկանաց երկիր (Հյուսիսային Պարսկաստան) հայերն աքսորվել էին բյուզանդական սահմաններից ու ասորական երկրամասից, և նրանք բոլորը քաղքեդոնականներ էին, որոնց գոյությունը իր արևմտյան սահմաններում Պարսկաստանը համարում էր վտանգավոր[2]:

Հավանաբար, 9-11-րդ դարերում հայկական արտագաղթերի առաջնեկները հայ քաղքեդոնականներն էին, և քանի դեռ սրանք չէին կորցրել իրենց կապերը հայրենիքի հետ, նրանք շարունակում էին խաղալ միջնորդի դեր՝ իրենց հայրենակիցներին Չինաստանի հետ ծանոթացնելու գործում:

Հայկական արտագաղթերը չընդհատվեցին նաև սելջուկյան և մոնղոլական ներխուժումների միջև ընկած ժամանակաշրջաններում, 11-13-րդ դարերում: Այդ շրջանում կատարված արտագաղթերը նկատելիորեն պատճառաբանվում էին նաև առևտրատնտեսական նկատառումներով: Հայաստանից տարբեր երկրներ առևտրական ուղիներով ընթացող բնակչության տեղաժարժերի ուղեցույցը նաև հայ վաճառականության արտագնա գործունեությունն էր, երբ նրա ետևից, նրա բացած ուղիներով երկրից հեռանում էին նաև արհեստավոր ու երկրագործ դասերը և հաստատվում նրա իսկ ընտրած տեղերում՝ իրենց գործունեության կիրարկման առավել նպաստավոր պայմաններ գտնելու ակնկալությամբ:

13-րդ դարի 30-ական թվականները Հայաստանի համար բնորոշ են նաև հայկական նոր արտագաղթերով, որոնք իրենց ընդգրկմամբ և ծավալով գերազանցում էին բնակչության՝ անգամ սելջուկյան շրջանի արտահոսքին: Դա արդեն անմիջականորեն կապված էր Հայաստանում մոնղոլական արշավանքների հետ: Մոնղոլների աչխարհավեր և տարածածավալ հաղողության պատճառը ոչ այնքան նրանց ուժի մեջ էր, որքան նրանց նվաճած երկրների ներքին թուլության և մասնատվածության մեջ: Մոնղոլական զորաբանակը, Ջարմաղանի գլխավորությամբ բաժանելով մի քանի մասի, սկսեց Հայաստանի նվաճումը, որը նրանք իրականացրին 1236-1243 թվականների ընթացքում և այն էլ՝ ամենադաժան միջոցներով: «Անդ էր տեսանել զսուրս անխնայ կոտորել զարս և զկանայս, զերիտասարդս և զմանկունս, զծերս և զպառաւունս, զեպիսկոպոսունս և զերիցունս, զսարկաւագունս և զդպիրս: Մանկունք առնդիայք զքարի հարեալք, և կուսանք գեղեցիկ խայտառակեալք և գերեալք...

[1] Մառ.Ն., նշվ. աշխ., էջ 49:

[2] Նույն տեղը, էջ 50:

Լայն երկիրն ամենայն դիակամբք մեռելոց... երկիր թափուր մնաց ի բնակչաց իւրոց, և շրջէին ի նմա որդիք օտարաց», բողոքում է դեպքերին ականատես Կ. Գանձակեցին[1]:

Հարկադրման և ռազմական նկատառումներով 1254 թ. մոնղոլները Հայաստանում անցկացրին աչխարհագիր՝ զանազան հարկեր նշանակելով 16-60 տարեկան մարդկանց վրա, միաժամանակ երկրի ընդերքի ամբողջ հարստությունը վերցնելով իրենց ձեռքը:

Մոնղոլների ռազմական հարվածները, նրանց օրոք գնալով սաստկացող բռնություններն ու հարկերը, ֆիզիկական ոչնչացման վտանգը խթանեցին բնակչության փախուստն ու տեղաշարժը Հայաստանից: Միաժամանակ մոնղոլներն իրենք ևս իրականացնում էին հայ բնակչության արտագաղթեցում: Ոսկե Հորդայի խանները, օրինակ, Արևմտյան իլխանության դեմ մղած երկարատև պայքարում, որը շարունակվեց գրեթե մի ամբողջ հարյուրամյակ (1262-1350 թթ.), քանիցս կատարեցին հայերի բռնագաղթեցումներ և նրանց բնակեցում Ոսկե Հորդայում՝ տեղում արհեստների ու առևտրի զարգացումը խթանելու համար: Հայ բնակչության մի մասը հիմնավորվեց Վոլգայի ափերին, իսկ 13-րդ դարի վերջերին 14-րդ դարի սկզբներին հեռացավ այնտեղից՝ սկզբում անցնելով մերձազովյան շրջաններ, իսկ 14-րդ դարի 30-ական թվականներին՝ Ղրիմ: Հայաստանից հեռացած բնակչության մի մասն էլ ուղղություն վերցրեց դեպի գաղթի ավանդական երկրներ՝ Փոքր Ասիա, Բալկաններ, մերձավորարևելյան և հյուսիսկովկասյան շրջաններ, ինչպես նաև Էգեյան կղզիներ:

Նայած քաղաքական իրավիճակին և առևտրատնտեսական հանգամանքներին՝ հայերը արտագաղթում էին ոչ միայն բուն Հայաստանից, նրանք վերաբնակվում էին նաև իրենց կողմից խիտ բնակեցված մի վայրից մյուսը: 14-17-րդ դարերին ղրիմահայ գաղութը այն կապող օղակն էր, որի վրայով հայկական գաղթականական շատ համայնքներ անցնում էին Մոլդովա, արևմտաուկրաինական և լեհական, ինչպես նաև ռումինա-հունգարական տարածքներ: 14-րդ դարի երկրորդ կեսին, Կիլիկյան հայկական պետության անկման և լևանտյան առևտրի վերելքի կապակցությամբ, առևտուր, որն արդեն ընթանում էր սևծովյան նեղուցներով, պատկառելի թվով հայեր անցան միջերկրածովյան երկրներ, Ղրիմ, Իտալիա և այլուր:

Հայկական արտագաղթերին առիթ ու պատճառ են դարձել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք էին տարերային աղետները, հողագործության, արհեստների և առևտրական ձեռնարկության զարգացման համար ամենատարրական պայմանների վերացումը և այլն: Հատկապես այդ պատճառով էր նաև, որ արտագաղթն ընդգրկում էր բնակչության բոլոր խավերն անխտիր՝ երկրա-

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 239-240:

գործից մինչև խոշոր վաճառականը, որոնց առաջացած իրավիճակը դնում էր գրեթե միևնույն սոցիալական աստիճանի վրա՝ այնպիսի մարդկանց դրության մեջ, որոնք զրկվել էին գոյամիջոցներից:

17-րդ դարի սկզբներին Թուրքիան ու Հայաստանն ալեկոծած ջելալիների շարժումը և ծայր առած տևական ու մահաշունչ սովը ստիպեցին տասնյակ հազարավոր հայերի, մանավանդ Արևմտյան Հայաստանից, նորից դիմել օտարություն: Հայաստանի բազմաթիվ գավառներն ընդգրկած այս չրջանի արտագաղթերը հիմնականում ընթանում էին դեպի Արևմուտք՝ Արևմտյան Ուկրաինա, Լեհաստան, Ռումինիա, Մոլդովա, Ղրիմ, Պոնտոս և այլուր: Առաքել Դավրիժեցին այս առթիվ գրում է. «Արդ՝ եթէ յայսմ պատճառէ և կանխաւ պատմեալ մեծ սովին և Ջալալոց պատճառէն, ամենայն ազգն Հայոց ելեալ վտարանդիք եղեն իւրանքանչիւր տեղաց, ի հայրենի բնակութեանց և յաշխարհաց, և տարագէմ գնացեալ ընդդէմ երեսաց՝ ցիր և ցան եղեալ սփռեցան ընդ ամենայն յաշխարհն, ի Կիպրոս, ի Կոստանդնուպոլիս, ի քաղաքս, որք շուրջ են զնովաւ, յԱւռումէլի, ի Բուղդան, յերկիրն Իլախաց, ի կղզին Կաֆայու, ի ծովեզերան Պոնտոսի»[1]: Ջալալիների սարսափից փախած հայերի թիվը շատ մեծ էր մանավանդ Ղրիմում, ուր նրանք անցել էին Պոնտոսի և Պոլսի վրայով՝ 1605 թվականին[2]:

Թուրք-պարսկական պատերազմների չրջանում հայ բնակչության արտագաղթերը պարբերական բնույթ էին ընդունել, իսկ 17-րդ դարի սկզբին դրանց հետևանքով ուղղակի ամայացան մի շարք գավառներ: Շահ-Աբասի զորքերը բռնագաղթեցրին հարյուր հազարավոր հայերի և նրանց քչեցին Պարսկաստանի խորքերը: Դա մեծ սուրգյունի ժամանակաշրջանն էր: Բայց հենց այդ հայերն էին, որ չուտով հիմնեցին նշանավոր Նոր Ջուղան, մի քանի տասնյակ հայկական գյուղեր բուն Պարսկաստանում և Պարսկահայքում: Տասնամյակներ անց տնտեսապես զորացած պարսկահայ վաճառականության ծավալած գործունեության հետևանքով Հնդկաստան գաղթած հայերը սկզբնավորեցին և տնտեսական ու ազգային-մշակութային հզոր ազդակ հաղորդեցին հնդկահայ գաղթօջախներին:

18-րդ դարը ևս հայ ժողովրդի պատմության մեջ նշանավոր էր հայ բնակչության տեղաշարժերով, ընդ որում՝ ոչ միայն բուն Հայաստանից, այլև այլ երկրներից: Հատկապես աչքի է ընկնում հայ բնակչության ներհոսքը ռուսական կայսրության տարածքները՝ Հյուսիսային Կովկաս, Աստրախան, Մոսկվա, Պետերբուրգ, Նովոռոսիա: Ռուսաստան գաղթող այս հայության մի զգալի մասը գալիս էր պարսկական և թուրքական չրջաններից: Այս հարյուրամյակում հայ բնակչության արտագաղթը կապված էր ոչ միայն Արևելյան

[1] Պատմութիւն **Առաքելի վարդապետի Դաւրիժեցւոյ**, Վաղարշապատ, 1896, էջ 88:

[2] **Գրիգոր Դարաճաղցի**, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 51:

և Արևմտյան Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր դրության հետ. այն անմիջական աղերսներ ուներ նաև Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի արտաքին քաղաքական չահախնդրությունների, նրանց միջև տեղի ունեցած ռազմական հակամարտությունների հետ:

18-րդ դարի 30-40-ական թվականներին, նույն դարի 20-ական թվականների երկրորդ կեսից հայ ազատագրական շարժումների անկմանը զուգընթաց, թուրք-պարսկական ճնշման սաստկացման պայմաններում բազում հայ բնտանիքներ հարկադրված էին թողնել իրենց հայրենի օջախները և վերաբնակվել նորերս Ռուսաստանին անցած կովկասյան տարածքները: Դրան մեծապես նպաստում էր հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի կողմից վարվող հովանավորական քաղաքականությունը, որի սկիզբը դրել էր դեռ Ալեքսեյ Միխայլովիչ Ռոմանովը՝ 17-րդ դարում: Հայաստանից և Անդրկովկասից կատարված այդ գաղթականությունների հետևանքով Կովկասում սկզբնավորվեցին Կիզլյարի, Մոզդոկի, Սուրբ խաչի հայկական գաղութները:

Հայ բնակչության մեծ տեղաշարժ կատարվեց 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Որպես հետևանք պատերազմին հաջորդած այն դիվանագիտական պայքարի, որ մղվում էր Թուրքիայի և Ռուսաստանի միջև Ղրիմի թերակղզու համար, 1778 թ. հայերը դուրս բերվեցին Ղրիմից: 1779 թ. վերջին նրանք Դոնի ափերին հիմնադրեցին նշանավոր Նոր Նախիջևան քաղաքը՝ իր չրջակա գյուղերով: Շատ չանցած նույն բախտին արժանացան Բեսարաբիայի հայերը, այս անգամ արդեն 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Ռուսական կառավարության նյութական օգնությամբ նրանք հեռացան Թուրքիային ենթակա տարածքներից և 1792 թ. հիմնադրեցին Գրիգորիոպոլ հայկական գաղութ-քաղաքը:

Գրեթե ամբողջ 18-րդ դարում հայերը մեծ ու փոքր գաղթականական հոսանքներով Անդրկովկասից և Պարսկաստանից տեղափոխվում էին Աստրախան: Այդ վերաբնակումների հիմքում ընկած էր գլխավորապես առևտրատնտեսական գործունեության համար նպաստավոր պայմանների առկայությունը: Միաժամանակ նշված ժամանակաշրջանում հայերի թիվը գնալով չատանում էր Մոսկվայում և Պետերբուրգում:

Յուրաքանչյուր հարյուրամյակ հայկական արտագաղթերում մտցնում էր իր «չտկումներն ու կերպափոխությունները», երևույթի էությունը, սակայն, թողնելով նույնը՝ Հայաստան աշխարհի մարդաթափ դառնալը: Այս առումով բացառություն չկազմեց նաև 19-րդ դարը, թեև պիտի նշել, որ այս հարյուրամյակում եղան նաև պահեր, երբ կատարվեց հակառակ չարժընթացը՝ Հայաստան վերադարձան իր նախնի բնակիչները՝ պարսկահայերը, որը հետևանք էր 1827-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի: Նույնը չի կարելի ասել 1830 թ. արևմտահայերի՝ դեպի Արևելյան Հայաստան և Անդրկովկասի մի շարք չրջաններ կատարած գաղթի մասին, որովհետև այդ գաղթի պատճա-

ռով ամայանում էին արևմտահայկական շրջանները. արտաքուստ նույնական թվացյալ երևույթները իրենց էությամբ բոլորովին այլ հետևանքներ էին թողնում:

Խնդիրն այն է, որ այս հարյուրամյակում տեղի ունեցած ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմները անմիջական ազդեցություն էին գործում նաև հայ բնակչության տեղաշարժերի վրա՝ թե արտագաղթելու և երկրում մնալու և թե Հայաստանի մի հատվածից մյուսը վերաբնակվելու առումով: Այս հանգամանքը պայմանավորված էր նրանով, թե ռուսական զենքի և նրան նեցուկ դարձած հայ կամավորական ջոկատների հաղթանակը կամ ժամանակավոր անհաջողությունները քաղաքական ինչպիսի իրադրություն էին ստեղծում բուն Հայաստանում՝ առաջին հերթին ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովվածության, ապա նաև նրա գոյատևման տնտեսական միջոցների հնարավորության առումով: Եվ այսուհանդերձ՝ 19-րդ հարյուրամյակում Հայաստանից կատարված արտագաղթերի մեջ առանձնացնենք երկու երևույթ՝ **պանդխտությունը** և 1890-ական թվականների ջարդերի հետևանքով ծայր առած **փախստականությունը**:

Ինչպես և այսօր պանդխտությանը ծնունդ տվողն ու սնուցողը տնտեսական ծանր վիճակն էր: Սակայն այդ ընդհանուր պատճառը նույնական չէր Արևելյան և Արևմտյան Հայաստանի համար: Վերացական առումով վերցրած՝ նյութական ծանր պայմանները ստիպում էին հայ ժողովրդի թե մեկ և թե մյուս հատվածին դիմել պանդխտության՝ ընտանիքի գոյատևման համար միջոցներ որոնելու և երկիր վերադառնալու անհողդողդ վճռով: Բայց, որպես կանոն, այդ վճիռը, պարագաների հարկադրմամբ, մնում էր անկատար:

Արևմտահայկական գավառներում, տնտեսական ծանր պայմաններից առավել, պանդխտությունը կապված էր քաղաքական անապահով վիճակի, այն արհավիրքների ու կոտորածների հետ, որոնք դարձել էին արևմտահայ գյուղացիության կյանքի առօրյա ուղեկիցը: Այդ պատճառով էլ արևմտահայոց պանդխտությունը մեծ մասամբ ստանում էր փախուստի բնույթ՝ որպես թուրք հարկահաններից և քրդական ավազակային հարձակումներից փրկվելու միջոց: Այս իրողության մեջ էին թաքնված արևմտահայ պանդխտությունը արդարացնող պատճառները, որոնք, սակայն, ամենևին տարածելի չէին արևելահայոց պանդուխտների նկատմամբ, որտեղ, որպես պանդխտության շարժառիթ, մնում էին տնտեսական ծանր պայմանները, ինչպես նաև օտար ափերում նյութապես բարվոքվելու ձգտումը:

Սակայն երկու դեպքում էլ պանդխտությունը մնում էր իբրև երկրավեր մի շարժում, որն իր հարաճուն միտումների մեջ սպառնում էր ամայացնել հայկական ամբողջ գյուղեր ու գավառներ: Պանդխտությունը սկսվեց հիմնականում 19-րդ դարի 30-40-ական թվականներին՝ Ռուսաստանում և Թուրքիայում ապրանքադրամային հարաբերությունների զարգացմանը համաքայլ,

որը նրանց նշանավոր քաղաքներում առաջանում էր դրսեկ էժան ֆիզիկական աշխատանքի կիրառման պահանջ: Պանդխտությանը դիմած հայերը Կ. Պոլսում, Օդեսայում, Սևաստոպոլում, Բաքվում, Բաթումում, Մարսելում կատարում էին ամենածանր, սև ու չարքաշ աշխատանքներ՝ ինչ-որ չափով ապրուստի միջոցներ ճարելու հույսով, որը, որպես կանոն, ի դերև էր ելնում, և պանդուխտների մեծամասնությունը այլևս չէր վերադառնում հայրենիք, իսկ այնտեղ թողած նրանց ընտանիքները պարզապես քայքայվում էին: Հայրենիք վերադառնալու առթիվ Կ. Պոլսի պատրիարքի և այլոց հորդորները պարզապես մնում էին ձայն բարբառո հանապատի:

1877-1878 թվականներից հետո պանդխտությունը ավելի մեծ չափեր ընդունեց՝ ընդգրկելով Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի, Քարաբերդի, Բալուի, Ռշտի, Երզնկայի, Կարինի և այլ հայաբնակ շրջաններ: 1877 թ. միայն Վանից Կ. Պոլիս անցած հայերի թիվը հասնում էր 20 հազարի[1]: Տարիքային սանդղակով պանդուխտները բնակչության ամենաառողջ և աշխատունակ հատվածն էին կազմում՝ հիմնականում 20-25 տարեկան տղաներ, հազվագյուտ դեպքերում՝ 35 տարեկան:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսի մարզի ստեղծումով աննախընթաց չափեր է ընդունում արևմտահայ այլ շրջանների բնակչության ներհոսքը մարզ, ինչպես նաև նրա վրայով տեղաշարժը դեպի Արևելյան Հայաստան, Կովկաս և այլուր:

Շատ պանդուխտներ Բաթումի և Կ. Պոլսի վրայով անցնում էին Մարսել, իսկ այնտեղից էլ Ամերիկա: 20-րդ դարի սկզբներին Ամերիկա և Կանադա գաղթող հայերի մեջ սկսում են նկատելի թիվ կազմել նաև արևելահայերը: Այս շրջանում արդեն չկար հայկական որևէ գավառ, որը զերծ մնար պանդխտությունից. այն դարձել էր համազգային աղետ թե իր ընդգրկմամբ և թե մանավանդ վարակիչ հետևանքներով: Եթե Զանգեզուրից և Ղարաբաղից պանդուխտները հիմնականում մեկնում էին Բաքու, կովկասյան և միջինասիական այլ քաղաքներ, ապա Շիրակից 1908 թվականին սկսվեց բնակչության մեծ արտահոսք դեպի Ամերիկա, արտահոսք, որը շարունակվեց մինչև 1914 թ.: Դրա հետևանքով հազարավոր շիրակցիներ տեղափոխվեցին Ամերիկա: Նրանք Ամերիկա էին մեկնում մեծ գրկանքների գնով, հիմնականում Մերձքալիֆկայի վրայով. գնացքով հասնում էին մինչև Լիեպայա նավահանգիստը, իսկ այնտեղից մեկնում Ամերիկա:

Թուրքական կառավարությունը անցյալ դարի վերջերից միտում է հայ պանդխտությանը ծառայեցնել իր հակահայկական պլաններին. 1895-1896 թթ. կառավարությունը ջանում է յուրովի օգտագործել պանդխտությունը՝ Հայաստանը առանց հայերի թողնելու իր ծրագրերի կենսագործման համար:

[1] «Մշակ», 1877, թիվ 61:

1896 թ. սուլթանական կառավարությունը ընդունում է մի որոշում, ըստ որի, Թուրքիայից հեռանալ ցանկացող հայերը պարտադիր կարգով՝ երաշխավորով և պատրիարքարանի վավերացմամբ, պետք է ստորագրություն տային այլևս Թուրքիա չվերադառնալու պարտավորություն ստանձնելու մասին: Այդ ստորագիր փաստաթղթից երկու օրինակ հանձնվում էր իրավասու հանձնաժողովին: «Այս պայմանով գաղթելու արտոնացյալներուն տրվելու անձագրին մեջ բացորոշեն դրվելու է սա խոսքը, թե ետ այսօրիկ պիտի չվերադառնան օսմանյան երկիրները»: Միաժամանակ, Թուրքիայից հեռացող հայերը համապատասխան մարմիններին, այդ թվում նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին պարտավորագրեր էին տալիս թուրքական հպատակությունից հրաժարվելու մասին:

90-ական թվականների ջարդերը հարկադրեցին տասնյակ ու տասնյակ հազարավոր հայերի դառնալ փախստականներ: Սրանց մի զգալի մասը, մարդկային մեծ կորուստների գնով, հասավ Կովկաս, Բաթում և Սև ծովի հյուսիս-արևելյան եզերքները: Արևմտահայաստանից հայերի արտագաղթը չարունակվեց ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը և Մեծ եղեռնը: 1915-1920 թթ. հարյուր հազարավոր հայ փախստականներ, որոնց հաջողվել էր փրկվել կոտորածից, չարժվեցին երկու ուղղությամբ՝ Մերձավոր արևելք, արաբական երկրներ և Արևելյան Հայաստան ու Կովկաս՝ իսկ վերջինիս վրայով՝ ուկրաինական և ռուսական շրջաններ:

ՀԻՆ ՌՈՒՍԻԱ

Հայերի կապերը Հին Ռուսիայի և Հին Ռուսիայի կապերը հայերի հետ հավաստվում են վավերագրերով՝ սկսած 10-րդ դ. գրավոր աղբյուրներից: Սակայն փաստորեն դրանք սկիզբ են առել շատ ավելի վաղ՝ վաղնջական ժամանակներում և իրենց արտացոլումն են գտնում հնագիտական ու բանահյուսական (ֆոլկլորային) նյութերում, ճարտարապետական հուշարձաններում, տարեգրություններում և պատումներում, առասպելներում: Հիմքեր կան խոսելու հայերի հնագույն կապերի մասին՝ արևելյան սլավոնների և Կիևյան Ռուսիայի հետ, վերջինիս կազմավորման և զարգացման ժամանակաշրջանում: Այդ կապերը նկատվում են Ռուսիայի պատմության այսպես կոչված սկյութա-սարմատական ժամանակաշրջանից ի վեր, որը համընկնում է Հայաստանի ուրարտական շրջանի պատմության, ընդհուպ մինչև «նախարարական» ժամանակաշրջանը: Հին Ռուսիայի պատմության այսպես կոչված սկյութա-սարմատական դարաշրջանից մեզ հասած հնագույն ասքը երեք եղբայրների՝ Կուա-արի, Մելտեի և Խորեանի կողմից Կուարա քաղաքի հիմնադրման մասին առասպելն է, որ հիշատակում է հայ պատմիչ Զենոբ Գլակը (7-րդ դ. վերջ-8-րդ դ. սկիզբ)[1]: Այդ առասպելը նման է Ռուսիայում նույնպես երեք եղբայրների՝ Կիյի, Շչեկի և Խորիվի կողմից Կիև քաղաքը հիմնադրելու մասին առասպելին: Ակադեմիկոս Ն. Մառը ուշադրություն է դարձրել այդ առասպելների բովանդակության, հերոսների՝ եղբայրների, պատմական իրադրության և այլ հանգամանքների աչքեցուցիչ նմանության վրա: Կիև քաղաքը կառուցելու մասին ռուսական տարեգրության մեջ հիշատակվող ասքը իր զուգահեռն է գտնում «Հայաստանում՝ վանա լճի ափին 4-5-րդ դդ. արված պատմություններում»[2]: Երկու առասպելն էլ, մի դեպքում՝ Կի-և քաղաքի, մյուս դեպքում՝ Կու-արի կառուցելու մասին հիշատակելուց և երեք եղբայրների, մի կողմից՝ Կիյի, Շչեկի և Խորիվի, մյուս կողմից՝ Կուարի, Մելտեի և Խորի (Խորեանի) գործերից զատ, շոշափման այլ կետեր ևս ունեն, այն է՝ ցեղային այն միջավայրի մատնանշումը, որտեղ քաղաքաշինարարներն այսպես թե այնպես հարկադրված էին գործել: Դրանք, համաձայն ռուսական աղբյուրի, պոլյաններն են, իսկ հայկական աղբյուրի համաձայն, պալունները կամ պալունցիներն են, որոնց երկիրն է ներթափանցում Խորին կամ Խորեանը: Ընդ

[1] Տիրի պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոբ, Կ.Պոլիս, 1719:

[2] Марр.Н. Книжная легенда об основании Киева на Руси и Куара в Армении. Избранные работы, т.v. с. 44-64.

որում, այդ ցեղը ուրարտական համապատասխան ձևով հիշատակվում է նաև Սարդուրյան 8-րդ դ. սեպագիր արձանագրության մեջ:

Հայկական և ռուսական առասպելների այդ զուգահեռների վրա հանգամանորեն ծանրացել է նաև ակադեմիկոս Բ. Ա. Ռիբակովը: Կիյի ապրելու առավել հավանական ժամանակը ակադեմիկոս Բ. Ռիբակովը համարում է բյուզանդական կայսր Հուստինիանոս 1-ինի (527-565 թթ.) և նրա մերձավոր բազուկն հետնորդների ժամանակը, քանի որ հենց այդ ժամանակ է, որ սլավոնները առաջին անգամ առնչվել են կայսրության հետ: Մինչ այդ բյուզանդական աղբյուրներում ոչ մի հիշատակություն չկա սլավոնների մասին: Բ. Ա. Ռիբակովի պնդմամբ, հայկական գրառումը թույլ է տալիս Կիևի հիմնադրման տարեթիվը հետ տանել մինչև 7-8-րդ դարերին նախորդող դարաշրջանը: Հին ռուսական առասպելի և հայկական աղբյուրի միջև զուգահեռների առկայությունը կիևյան Ռուսիայի կազմավորումից առաջ հայ-սլավոնական կապերի գոյության մասին ամենավաղ վկայություններն են:

Հայ-սլավոնական կապերը նախնական փուլում դիպվածային բնույթ ունեին: Հայաստանի հեռու լինելը Հին Ռուսիայի սլավոնական ցեղերի երկրներից, անմիջական կապերի բացակայությունը այն իրողության պատճառն էին, որ հայերի և սլավոնների սկզբնական շփումները տեղի էին ունենում նրանց սահմանակից պետությունների տարածքներում: Այդպիսի պետություններից մեկն էր Բյուզանդիան, որի սլավոնական գաղութացումը չսահմանափակվեց սոսկ Բալկանյան երկրներով: Վերաբնակիչները ներթափանցում էին Բալկանյան թերակղզու հարավը, այնուհետև՝ Փոքր Ասիա, նույնիսկ Սիրիա և ավելի հեռուն: Միևնույն ժամանակ հայերը էական դեր էին խաղում Բյուզանդական կայսրության պատմության մեջ: Փոքր Ասիայում և Բյուզանդիայի այլ շրջաններում հաստատված սլավոնները ամենասերտ միջական շփումներ էին ունենում հայերի հետ: Այնպես որ հայ-սլավոնական կապերի սկիզբը հարկ է համարել ոչ թե կիևյան Ռուսիայի ժամանակաշրջանը, այլ շատ ավելի վաղ:

Հայերը, ինչպես և Կովկասի մյուս ժողովուրդները, հարաբերություններ էին հաստատում սլավոնների հետ Վոլգայի, Կասպից, Միջերկրական, Սև ծովերի, Դոնի, Ղրիմի վրայով: Մոտավորապես 8-րդ դ. կեսերից բալթիական հյուսիսի և Արևելքի միջև սկսված առևտրական աշխույժ փոխանակության մեջ միջնորդների գործուն դեր էին ստանձնել խազարները, վոլգյան բուլղարները և այլ ժողովուրդներ: Գոթլանդ կղզում, Լադոգայում, Նովգորոդում, Մոգիլյովում, կիևում գտնված բազմաթիվ դրամների մեջ կան 8-10-րդ դդ. Դիլինում հատած դրամներ, մի հանգամանք, որ վկայում է սլավոնների և հայերի միջև առևտրական փոխանակման մասին՝ «Վարյագներից դեպի Հունաստան» հայտնի գետային ճանապարհով:

Կիևի շրջանում գտել են գինդեր և այլ զարդեր, որոնք համանման են Հայաստանի մայրաքաղաք Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված ոսկերչական իրերին: Դրանք Կիև են բերվել Բագրատունիների ժամանակներում, երբ հայերը կապեր ունեին Ռուսիայի հետ: Այդ փաստերը հավաստում են Հայաստանի և Հին Ռուսիայի միջև առևտրական կապերի առկայությունը:

Սակայն հայերի կապերը սլավոնների հետ չէին սահմանափակվում առևտրով: Հայերը ռազմաքաղաքական կապեր էին հաստատում սլավոնների հետ: Այսպես, 852 թ. արաբների հետապնդումից փախած հայերը՝ օգնություն ստանալու ակնկալիքով դիմել են «սլավոնների միապետին»:

Մոտավորապես 9-10-րդ դդ. սկսած հայերի փոխառնչությունները ռուսների հետ ձեռք են բերում սիստեմատիկ բնույթ, որը պայմանավորված էր քաղաքական առավել բարենպաստ իրադրությամբ: 9-10-րդ դդ. սահմանապլխին տեղի ունեցավ Հայաստանի վերածնունդը ի դեմս Բագրատունիների թագավորության, որը գործուն մասնակցություն ուներ միջազգային առևտրին. ընդլայնվեցին առևտրական և մշակութային կապերը Արաբական խալիֆաթի, Բյուզանդական կայսրության, Առաջավոր Ասիայի և Կիևյան Ռուսիայի հետ: Վերջինս 10-րդ դ. մոտերքին դարձել էր ընդարձակ մի պետություն, որի սահմանները հարավում հասնում էին մինչև Ղրիմ, Դոնի գետաբերանը և Թամանի թերակղզին: 10-րդ դ. հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ նկարագրում է Կիևի իշխանների արշավանքները դեպի Աղվանքի (Առանի) մայրաքաղաք Պարտավ-Բարդա, որը նրանք գրավել են 943 թ.: Նա գրում է, որ հյուսիսից հանկարծ ասպատակեցին «ռուզիկները» կամ «ռուզերը»՝ ահարկու և օտար մի ժողովուրդ, որոնք, մրրիկի պես անցան Կասպից ծովը, հասան մինչև Աղվանքի մայրաքաղաքը: Այդ արշավանքը նկարագրված է նաև 10-րդ դ. արաբ պատմիչ Իբն-Միսքավայհի «Ազգերի փորձի մատյան» աշխատության մեջ: Նա հայտնում է, որ ռուզիկների (ռուսների) դեմ ելան արաբները (Առանի իշխողները), բայց չկարողացան դիմագրավել նրանց, քանզի «Նրանք անպարտելի էին իրենց հզորությամբ»[1]: Ռուզերի 943-944 թթ. արշավանքը վերաբերում է Հյուսիսի և Հարավի ժողովուրդների իրական փոխհարաբերությունների ոլորտին, Արաբական խալիֆաթի հետ մրցակցության զուգակցությամբ, որի լծի տակ հավասարապես հեծում էին ինչպես հայերը, այնպես էլ աղվանական ցեղերը: Հենց այդ նույն տարիներին ռուսները ջախջախեցին Խազարական թագավորությունը, և Թամանի թերակղզում կազմավորվեց Տմուտարականյան սլավոնական իշխանությունը, որտեղ բնակվում էին նաև հույներ և հայեր: Ռուսիան ավելի մերձեցավ Այսրկովկասի ժողովուրդներին:

[1] Восканян В., Древняя Русь и Армения. - Вестник общественных наук, 1983, N 1, с. 54.

10-րդ դարի երկրորդ կեսին սաստկանում է ռուսների և բյուզանդացիների պայքարը անկում ապրող արաբական բռնատիրության դեմ, մի պայքար, որտեղ նրանց կողքին մարտնչում էին նաև հայ ռազմիկները: 954 թ. հույներն ու հայերը ռուսների հետ միասին Սիցիլիայում շրջապատեցին Ալի-Հասանի արաբական զորքը: Հայերի կապերը ռուսների հետ անցնում էին Բյուզանդիայի վրայով, որն առևտրական հարաբերություններ ուներ Առաջավոր Ասիայի, Սիրիայի խոշոր քաղաքների՝ Հալեպի, Դամասկոսի, Անտիոքի, ինչպես նաև Տրապիզոնի և Հայաստանի հետ: Եվրոպայում Բյուզանդական կայսրությունը մշտական կապեր էր պահպանում բուլղարիայի հետ, Խերսոնեսի վրայով այն ներթափանցում էր խազարների և ռուսների երկիրը: 10-րդ դ. կայսրությունը առևտրական պայմանագրեր կնքեց Ռուսիայի, արաբների և վենետիկցիների հետ: Այդ հարաբերություններում նվազ կարևոր չէր ինչպես Բյուզանդիայում, այնպես էլ բուն Հայաստանում բնակվող հայերի դերը:

Ռուս-բյուզանդական մերձեցմանը նպաստում էր նաև Հայաստանը, քանի որ շահագրգռվածություն կար արաբների դեմ մղվող համատեղ պայքարում: Ռուսների, Բյուզանդիայի, Բուլղարիայի և Բալկանյան թերակղզում բնակվող հայերի հետ նրանց առնչությունների մասին տեղեկությունները իրենց արտացոլումն են գտել 10-րդ դ. -11-րդ դ. սկզբի հայ պատմիչ Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկի) «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ[1]: Նա գրում է նաև այնպիսի կարևոր իրողության մասին, որպիսին «Ռուսիայի մկրտությունն է» և կիևի իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչի ամուսնությունը կայսր Վասիլ 2-րդ-ի (ծագումով հայ) քրոջ՝ արքայադուստր Աննայի հետ:

Քրիստոնեության ընդունումը Ռուսիայում, Կիևյան Ռուսիայի մերձեցումը Բյուզանդիայի և Բալկանյան թերակղզու այլ պետությունների, Եվրոպայի, Այսրկովկասի հետ և դինաստիական կապերի հաստատումը հայերի ու վրացիների հետ նպաստեցին այդ երկրների տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը, դրանց մերձեցմանը, ինչպես նաև արաբական գերիշխանության դեմ մղվող համատեղ պայքարին: Բյուզանդիայի շահերը պահանջում էին հարաբերությունների ստեղծում ինչպես Կիևյան Ռուսիայի, այնպես էլ Այսրկովկասի հետ:

Ռուսական պատմագրության մեջ Հայաստանի մասին տեղեկություններ սկսել են հայտնվել նույնպես 10-րդ դ. վերջերից: Ռուսական նախագաղափար տարեգրության՝ «Անցած տարիների պատմության» մեջ արդեն հիշատակվում են «Մեծ Հայքը և Փոքր Հայքը», խոսվում է եպիսկոպոսներ նշանակելու, Քաղքեդոնի չորրորդ տիեզերական ժողովի որոշումների հետ հայերի անհամաձայնության մասին: Այդ տեղեկություններն արտագրվել են ավելի ուշ

[1] Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկաւ Պատմութիւն տիեզերական, ՍՊբ., 1885:

չրջանի տարեգրությունների ժողովածուներում: Ժամանակագրության մեջ պատմվում է հայերի մկրտության (դարձի), Գրիգոր Լուսավորչի վարքի և գործունեության մասին: Պատրիարքական կամ Նիկոնյան կոչվող ռուսական տարեգրային ժողովածուն 990 թվականի տակ պահպանել է ի թիվս այլ ազգաւանների՝ «հերետիկոսների», ուշագրավ հիշատակություն հայերի մասին: Հայերի՝ որպես հերձվածների մասին նման կարծիք կարող էր ներթափանցել Կիևյան Ռուսիա հարավ-սլավոնական աշխարհից՝ բոգոմիլների կապակցությամբ, որոնք բյուզանդական պավլիկյանների՝ 9-11-րդ դդ. հայ թոնդրակեցիների տարատեսակի մի ճյուղավորումն էին:

Հայերի մասին ռուսական պատմագրության մեջ և ռուսների մասին հայ պատմագրության մեջ հիշատակումների զուգադիպությունը ժամանակի առումով պատահական չէ. Հայաստանի մշակույթի ծաղկումը Բագրատունիների օրոք համընկնում է համանման երևույթների հետ՝ Կիևյան Ռուսիայում:

Ժամանակակիցներին հայտնի է եղել, որ 11-րդ դ. սկզբին (1009 թ.) հայերը կիևյան իշխանների հրավերով եկել են նրանց օգնության լեհ ավատատերերի դեմ մղվող պատերազմում, իսկ այնուհետև սփռվել են ողջ Ռուսիայով մեկ: Նրանք գործուն օգնություն են ցուցաբերել նվաճողներին կիևից վտարելու գործում և մնացել են այնտեղ ընդմիշտ բնակվելու: Այդ իրողությունը նույնքան բնական է, որքան և ռուսական զորքերի հայտնվելը, որոնք եկել էին այսրկովկասյան իշխողներին օգնության: 11-րդ դարի հայ պատմիչ Արիստակես Լաստիվերացին վկայում է, որ 1054 թ., երբ թուրք-սելջուկները հարձակվեցին Հայաստանի վրա, նրանց դիմակայելու ելավ վարանգների (այսինքն՝ վարյագների, այլ ոչ թե ֆրանկների) զորագունդը: Կ. Յուզբաշյանը ապացուցել է, որ «վրանգը» («վարյագը») հոմանիշ էր «ռուս» բառին, և որ հունական ու հայկական այն ժամանակվա աղբյուրներում դրանք օգտագործվել են որպես համարժեք տերմիններ: Այդ վրանգները՝ ռուսները, մասնակցել են Բագրատ 4-րդի (1027-1072) վրացական զորքի կազմում Սասիրեթփա-ճայում 1046-1047 թթ. տեղի ունեցած ճակատամարտին, Դավիթ Շինարարի (1089-1125՝) մահմեդական էմիրների դաշնության դեմ մղած պատերազմներին:

Բազում հայեր են բնակություն հաստատել Ռուսիայում 11-րդ դ. երկրորդ կեսին: 1062 թ. Գալիցիայի իշխան Ֆյոդոր Դմիտրիևիչը կոստիացի հայերին հրավեր է ուղարկել համատեղ պայքարելու համար[1]: Իշխանը նրանց հաստատել է բազում արտոնություններ, 3 տարով ազատություն հարկերից ու տուրքերից, որից հետո նրանք կարող էին մնալ կամ հեռանալ: Այդ հրովար-

[1] Թժչկեան Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց... Վենետիկ, 1830, էջ 84: Микаелян В. К вопросу о грамоте князя Федора Димитриевича. - Археографический ежегодник за 1964г., М.,1965.

տակը կամ արտոնագիրը իր ժամանակին ռուսերենից թարգմանվել է հայերեն, իսկ 1641 թ. հաստատվել է լեհ թագավոր Վլադիսլավ 4-րդի կողմից: Այդ հրովարտակում հիշատակություն կա այն մասին, որ հայերը կիևում բնակություն են հաստատել այդ ժամանակ:

Հայաստանում 10–11-րդ դդ. ստեղծվեց այնպիսի քաղաքական և տնտեսական իրավիճակ, որն առաջացրեց հայրենիքից բնակչության զանգվածային արտագաղթ և վերաբնակեցում այլ երկրներ: Հայերի արտագաղթը կապված է Արևելքում Բյուզանդիայի վարած հակահայ քաղաքականության, ինչպես նաև թուրք-սելջուկների արշավանքների հետ: Հայաստանի ամայացումը և հայ պետականության անկումը 11-րդ դարի երկրորդ կեսին սելջուկների արշավանքների հետևանքով հարկադրում էին բնակչությանը արտագաղթել հարազատ վայրերից: Այսպիսով, արտագաղթը հանդիսացավ տնտեսական անկման տրամաբանական շարունակությունը, որն իր գագաթնակետին հասավ անկախությունը կորցնելուց հետո:

Գալիցիայում և ընդհանրապես Ռուսաստանի հարավում հայերի հայտնվելու ժամանակը ճշտելու համար անհրաժեշտ է ամենից առաջ հնարավոր լիակատարությամբ օգտագործել հայերի մասին այն ժլատ տվյալները, որ գտնում ենք ռուսական գրական հուշարձաններում: Այս տեսակետից առանձնահատուկ ուշադրության է արժանի հին ռուսական դպրության այն հուշարձանը, որը հայտնի է հետևյալ խորագրով՝ «Մեր սուրբ հայր Ագապիտի՝ անվարձահատույց բժշկի վարքը, որն աղոթքով բուժում էր տկարներին, նրանց իր կերակրից դեղ տալով, և որը հայ բժշկին էլ փրկեց»: «Վարքն» ընդգրկված է այսպես կոչված «Կիևո-Պեչորյան վանքի Վարք սրբոց» ժողովածուի մեջ, որի հիմքում 11–12-րդ դդ. վերաբերյալ ասքերն են ընկել, և որը ստեղծվել է պատրաստի նյութերից 12-րդ դարի մոտերքին: Իսկ բուն «Վարքի» տվյալները չաղկապվում են Վսեվոլոդ Յարոսլավիչի (1077, 1078–1093) և հատկապես Վլադիմիր Վսեվոլոդովիչ Մոնոմախի (1113–1125) իշխանության ժամանակաշրջանի հետ:

«Վարքում» պատմվում է, որ Կիևում ապրել է Հայաստանից եկած «բուժման» մեջ հույժ հմուտ մի բժիշկ, որը բժշկության մեջ չափազանց փորձառու էր, որպիսին նրանից առաջ ընդհանրապես չի եղել: Բավական էր, որ նա մի հայացք նետեր հիվանդի վրա, որ որոշեր մահվան օրն ու ժամը, այնպես որ նրա խոսքը չէր փոխվում և այլևս բուժումը շարունակելու հարկ չկար: Հայ բժիշկը ախտորոշում էր, կանխագուշակում հիվանդության այս կամ այն ելքը: Բուժման ընթացքում նա շոշափում էր զարկերակը, օգտագործում էր Ալեքսանդրիայից բերված դեղաբույսեր, մի հանգամանք, որը վկայում է հայ բժշկության ներկայացուցչի կապերը արաբական աշխարհի հետ: Ընդ սմին, շատ կարևոր է այն, որ այդ բժիշկը կիևում մենակ չէր, նրա շուրջը խմբվել էին նրա որոշ հայրենակիցներ, որոնք «Վարքում» հիշատակվում են

որպես «դավանակիցներ» կամ պարզապես «յուրայիններ»: Նրա հեղակն այնքան մեծ էր, որ հայ բժիշկը հրավիրվեց Չերնիգով՝ ծանր ախտով հիվանդացած իշխան Վլադիմիր Մոնոմախի մոտ: Այդ «Վարքի» հիման վրա առավել կամ նվազ չափով ստույգ որոշվում է 11-րդ դ. երկրորդ կեսից սկսած կիևում հայկական գաղութի հանդես գալու տարեթիվը: Դրանից զատ, «Վարք սրբոցից» պարզվում է, որ կիևում հայերը բնակվել են առանձին փողոցում կամ առանձին թաղամասում և Ֆեոդեսի անվամբ մի վանական հաճախ այցելել է հայկական թաղամասը՝ դավանաբանության հարցի շուրջ հայերի հետ բանավիճելու համար: Ուրեմն, կիևում արդեն գոյություն է ունեցել միանգամայն ձևավորված հայկական գաղութ, որը տեղակայված էր առանձին թաղամասում:

Կիևի նախագահ եկեղեցում՝ 1037 թ. հիմնադրված սուրբ Սոֆիայի հռչակավոր տաճարում, առ այսօր պահպանվում է 11–12-րդ դդ. տեղադրված Յարոսլավ Իմաստունի (1019–1054) դամբարանի մարմարյա մեծ սարկոֆագը: Քարադագաղի զարդանախշերով պատած կափարիչի հյուսիսային կողմում կան տապանագրեր, այդ թվում նաև հայերեն: Տապանագրերի վատ պահպանվածությունը թույլ չի տալիս կարդալ դրա բովանդակությունը: Տեղ-տեղ հատակորեն տարբերակվում են հայերեն Ա. Գ. Ն. Պ. տառերը[1]:

Սարկոֆագի դեկորատիվ հարդարանքը հիշեցնում է Հայաստանի 4–7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանների զարդարանքը: Այսպես, խաչի չուրջբոլորը դրվագված զարդարանքը, որը պատկերում է խաղողի ոճավորված որթ՝ տերևներով և ողկույզով հանդերձ, կա Արշակունիների՝ Ախցում գտնվող հանգստարանում (4-րդ դ.), Ապարանի Քասախի բազիլիկայում (4-րդ դ.) և հատկապես լայնորեն է ներկայացված Զվարթնոցի տաճարում (7-րդ դ.): Նվազ տարածում չուներ խաչի ստորին ճյուղավորման երիզապատումը բուսական բնույթի նախշով, որին կարելի է հանդիպել սկսած 5-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը Հայաստանի ազատ խաչի կամ խաչքարի տեսակ հուշարձաններում: Սարկոֆագի կափարիչին և նրա հարավային կողմում զետեղված է տրամատված եզերքով ժապավեններից գործված մի հյուսվածք, որը նույնպես լայնորեն կիրառվում էր 10–13-րդ դդ. հայկական հուշարձանների հարդարանքում: Յարոսլավ Իմաստունի սարկոֆագի դեկորատիվ հարդարանքի եզանակների նմանությունը, սարկոֆագի կափարիչի վրա հայերեն տապանագրերի առկայությունը այն իրողության ապացույցն են, որ 11–12-րդ դդ. Կիևում ապրել են ճանաչված հայ արհեստագործներ, որոնք իրենց հետքն են թողել ճարտարապետության և կիրառական արվեստի հուշարձաններում:

---

[1] Հարությունյան Վ., Մի հայատառ մակագրության մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1956, թիվ 5, էջ 119:

Հին Վոլինի Գալիչ քաղաքի մերձակայքում, Կրիլոս գյուղում, կա 13-րդ դ. սկզբով թվագրվող սուրբ Պանտելեյմոնի եկեղեցին, որը պահպանել է հայկական ճարտարապետության բնորոշ հատկանիշների հետքեր: Նրա պատերի վրա կան հայերեն վիմագրություններ և պատկերներ՝ հայկական զարդանկարի համար ավանդական «Մաղկած խաչի» ուրվապատկերներ և տաճարների ուրվագծեր: Վերջիններիս թվում քարաշեն կառույցների ուրվապատկերների մեջ կա քառահարկ տաճարի ուրվապատկեր, որը հիշեցնում է ռուսական ավանդական փայտաշեն կառույց: «Մաղկած խաչը» երևում է նաև Կիևի Սոֆիայի տաճարի արտաքին որմնանկարների մեջ: «Մաղկած խաչի» մոտիվը լայնորեն օգտագործված է նաև Կիևի Կրիլյան եկեղեցու որմնանկարների մեջ[1]: Այս իրողությունները վառ կերպով արտացոլում են ռուս-հայկական կապերը ճարտարապետության և կիրառական արվեստի բնագավառում:

Ռուս-հայկական մշակութային կապերի և փոխազդեցությունների մասին կան նաև այլ վկայություններ: Ռուսական եկեղեցին պահպանել է Գրիգոր Լուսավորչի և 37 կույսերի (Հռիփսիմեի, Գայանեի և այլոց) պաշտամունքը: Ռուսական «Հայսմավուրքի» մեջ սեպտեմբեր ամսվա 30-րդ օրաթվի տակ նշվում է. «Սուրբ քահանա-նահատակ Գրիգորի՝ Մեծ Հայքի եպիսկոպոսի և նրա հետ երեքտասնյակ ու յոթն կույսերի վարքը և նահատակությունը»: Հին Ռուսիայում կային սուրբ Գրիգորին նվիրաբերած տաճարներ, ինչպես, օրինակ, Կիևի մերձակայքում, ընդամին Նովգորոդյան հուշակավոր Նեռեդիցան պահպանել էր (մինչև ֆաշիստների կողմից նրա բարբարոսաբար ավերումը), ի շարս այլոց, ոչ միայն սուրբ Գրիգորի, այլ սուրբ Հռիփսիմեի որմնանկարը՝ հավանաբար ոչ թե Կոստանդնուպոլսի, այլ ավելի շուտ Վրաստանի և Հայաստանի համանման հուշարձանների (Ախթալա, Բուճանիա, Ատենի, Անիում՝ Տիգրան Հոնենցի եկեղեցին և այլն) նմանությամբ: Ընդ որում, Գրիգոր Լուսավորիչը պատկերված է ոչ թե բյուզանդական կերպարանքով, այլ Հին Հայաստանի եկեղեցիների որմնանկարներին բնորոշ զգեստավորմամբ: Իսկ 15-րդ դ. Նովգորոդում նույնպես կառուցվել է եկեղեցի ի պատիվ Գրիգոր Լուսավորչի, եկեղեցի, որի ճարտարապետության մեջ նշմարվում են հին հայկական ճարտարապետության հետքեր:

Ռուսիայի և Հայաստանի միջև մշակութային կապերի գոյությունը վկայող պերճախոս վավերագիր է ռուս գրականության հնագույն հուշարձաններից մեկի՝ «Բորիսի և Գլեբի վարքի» հայերեն թարգմանությունը, որը կատարվել է 1173 թ.: Այնտեղ ասվում է, որ այն տաճարը, որտեղ պահվում են Բորիսի և Գլեբի մասունքները, վերականգնեցին՝ նրան մեծ բարեպաշտություն շնորհելով հայոց տոմարի 622+551=1173 թվականին, բայց մինչև 1249 թ.:

[1] Պատմա-բանասիրական հանդես», 1978, թիվ 3, էջ 209:

«Վարքի» այդ թարգմանությունը մտել է տեր Իսրայելի խմբագրած հայերեն «Հայսմավուրքի» մեջ: Խմբագրումը կատարվել է Վանական Վարդապետի հանձնարարությամբ և ավարտել է մինչև 1251 թ.: «Վարքի» թարգմանության մեջ կան հետևյալ տողերը. «Կան նաև սրբերի այլ հրաշագործություններ, որոնք նկարագրված են նրանց ընդարձակ պատմության մեջ, և ես այսօր դրանք կատարում են նշանակներ, որոնց մասին մեր երկրից եկած բազում վկաներ պատմում են մեզ»[1]: Այլ կերպ ասած, Հայաստանից («մեր երկրից եկած») շատերն էին լինում Կիևում և խմբագրին կամ թարգմանչին պատմում Բորիսի ու Գլեբի հրաշագործությունների մասին Կիևում լսած առասպելները:

Բորիսի և Գլեբի մասին ասքի հայերեն թարգմանության բուն իրողությունն իսկ վկայում է այն հետաքրքրության մասին, որ ցուցաբերում էին 12-13-րդ դդ. հայ գրիչները ռուսական կյանքի այս կամ այն կողմի նկատմամբ: Վերլուծելով Բորիսի և Գլեբի մասին ասքը, որտեղ նշվում է իշխան Յարոսլավ Վլադիմիրովիչի կողմից սրբեր Բորիսի և Գլեբի անվան հնգագմբեթ հոյակապ տաճարի կառուցումը, Լ. Մելիքսեթ-Բեկը առաջ է քաշում Ռուսիայում և Հայաստանում հնգագմբեթ եկեղեցիների կառուցվածքի ծագման պրոբլեմը: Ռուսիայում հնգագմբեթ տաճարները ուշ շրջանում ընդհանուր երևույթ էին, այնինչ Վրաստանում այդպիսիք բոլորովին չկային: Իսկ Հայաստանում այդ կառուցատեսակը հանդես է եկել բավականին ավելի վաղ շրջանում՝ Երևանի մերձակայքում Ավան գյուղի եկեղեցին, Առաքելոց եկեղեցին Անիում 10-րդ դ.[2] և այլ եկեղեցիներ: Հավանաբար կառույցներում ռուս վարպետների հետ մեկտեղ աշխատել են նաև հայ վարպետներ այնպես, ինչպես և Այսրկովկասում ռուս վարպետները աշխատել են տեղացի վարպետների հետ: Օրինակ, Բագրատունիների հայկական թագավորության մայրաքաղաք Անիի լավագույն եկեղեցիներից մեկի որմնանկարները իրականացվել են 1215 թ. ռուս գեղանկարիչ Ֆյորի անմիջական մասնակցությամբ, և այդ որմնանկարներից մեկը պատկերում էր Կիևի մեծ իշխան Վլադիմիր Մոնոմախի թագը:

12-րդ դ. հայերի կապերը Ռուսիայի հետ արտացոլվել են նաև կաթողիկոս Գրիգոր Տղայի՝ Հայաստանի նշանավոր եկեղեցական գործիչ Գրիգոր Տուտևորդու հետ 1170 թ. ունեցած նամակագրության մեջ: Նամակներից մեկում Տուտևորդին մեծ գովեստով է խոսում ռուսական եկեղեցու մասին: Նա խորհուրդ է տալիս կաթողիկոսին՝ Ռուսիայի հետ ուժերը միավորել ընդդեմ

[1] Хачикян Л. С., Армянские колонии на Украине в XVI-XVII вв.- «Великая дружба», Ер., 1954, с.196.

[2] Меликсет-Бек Л.М., Древняя Русь И Армяне,- Сборник трудов Института языка им. Марра АН Арм. ССР, т.1, 1946, с.97.

բյուզանդական հետապնդումների: Այնպես որ, չնայած հայ առաքելական և ռուս ուղղափառ դավանությունների դոգմաների ծիսական տարբերությանը, հայերը և ռուսները, ըստ երևույթին, երբեմն, երբ նրանց շահերը համընկնում էին, հանդես էին գալիս միասին:

12-րդ դ. նշանավոր գործիչ Ներսես Շնորհալին իր հանելուկ-շուտասելուկ քառյակներում «ռուս» բառի դիմաց գրել է. «ունի հազար դենկի խնդոպ»: «Դենգի» բառի առանց թարգմանության գործածումը հայկական հանելուկներում նշանակում է, որ այդ բառը արդեն ծանոթ էր հայերին, և որ այն, ինչպես և «Ռուսիա» բառը մտել են հայերենի բառապաշարը 12-րդ դ.:

12-րդ դ. երկրորդ կեսից Ռուսիայի հետ հայերի հարաբերություններում սկսվում է նոր փուլ, երբ տեղի է ունենում հայերի ավելի աշխույժ ու զանգվածային արտագաղթ դեպի Ռուսիա: Դա կապված էր հայերի ծանր կացության հետ, որոնք ընկել էին Հայաստանը զավթած թուրք-սելջուկների լծի տակ: Այդ ժամանակ քաղաքական և տնտեսական որոշակի տեղաշարժեր էին կատարվել նաև Արևելյան Եվրոպայում: Հինավուրց Ռուսիան՝ երբեմնի հզոր պետությունը, 11-րդ դ. ծավալվելով ավատատիրական երկպառակությունների, 12-րդ դ. երկրորդ կեսից մասնատվեց և բաժանվեց առանձին իշխանությունների և երկրների: «Վարյագներից դեպի հույները» նախկին առևտրական ուղին կորցրեց իր երբեմնի նշանակությունը, և նրա տեղը գրավեց առևտրական նոր ուղին, որը միացնում էր Սև ու Բալթիկ ծովերը՝ Վիսլայի, Արևմտյան Բուգի, Դնեստրի վրայով: Այդ ճանապարհների վրա երևան եկան և բարգավաճեցին նոր քաղաքներ, որոնք ունեին կարևոր նշանակություն՝ որպես առևտրաարդյունաբերական կենտրոններ. Աքերմանը՝ Դնեստրի գետաբերանում, Ռուսիան Մոլդովիայի և Հարավային Եվրոպայի երկրների հետ կապող Կամենեց-Պոդոլսկը, և հատկապես Լվովը, որը երկու կարևոր առևտրական ուղիներով (via nova i via antique) կապված էր Լեհաստանի և Կենտրոնական Եվրոպայի երկրների հետ: Կարևոր նշանակություն ձեռք բերեցին նաև այնպիսի քաղաքներ, որպիսիք են Լուցկը և Վլադիմիրը (հայկական աղբյուրներում՝ Օլատեմիրը), որի վրայով էր անցնում Լիտվայի, Հյուսիսային Լեհաստանի, Մագդեբուրգի և Հանզայի քաղաքների հետ կատարվող ապրանքաշրջանառությունը: Իրենց երկրից հեռացած հայերը արտագաղթում էին Հարավ-արևմտյան Ռուսիա, Գալիցիա, Լեհաստան, Պոլոժիե, Ղրիմ, որտեղ ավելի տանելի կենսապայմաններ էին գտնում: Այնտեղ նրանք հիմնադրում էին իրենց բնակավայրերը, եկեղեցիները: Պրոֆ. Ի. Ա. Լիպինչենկոյի խոսքերով ասած, Հարավային Ռուսիայի առավել կարևոր կենտրոնները՝ Լվովը, Լուցկը, Կամենեց-Պոդոլսկը, որտեղ բնակվում էին նաև հայ գաղթականները, իրենց հարստությամբ, փայլով ու շքեղությամբ մեծապես պարտական էին հայերին: Նրանց շնորհիվ Հարավային Ռուսիայի առևտրական կենտրոն-

ները միջնորդի դեր էին խաղում Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրում: Արևելյան ապրանքների առևտուրը Հարավային Ռուսիայում և Լեհաստանում գտնվում էր բացառապես հայերի ձեռքին, ուստի և մի ամբողջ շարք արևելյան ապրանքներ կրում էին «Հայկական ապրանք» անվանումը[1]:

Հայերի բնակության համար առավել հարմար վայր հանդիսացավ Լվով քաղաքը: Հայտնի է, որ Լվովում բնակություն հաստատած հայերը, տակավին քաղաքը հիմնադրելուց առաջ, 1183 թ. կառուցել են փայտաշեն եկեղեցի, որը հետագայում փոխարինել են քարաշեն եկեղեցիով: Լվովում կային հայկական տապանաքարեր, որոնք թվագրված էին 1130, 1183, 1184, 1200 և 1245 թվականներով:

Վաղեմի ժամանակներից հայերը գաղութ են հիմնադրել Վոլինի խոշոր քաղաք Լուցկում, որը 12-րդ դ. իշխանանիստ մայրաքաղաք Լուչեսկն էր: 17-րդ դ. հայ հեղինակ Սիմեոն Լեհացին իր «Ուղեգրության» մեջ հիշատակում է այն մասին, որ «անցյալում Լուցկ քաղաքն ունեցել է 800 տուն, չեներ, խուտորներ և շատ կալվածքներ, և այնտեղ է գտնվել առաջին աթոռը (եպիսկոպոսությունը)»: Սակայն Սիմեոնի օրոք հայկական գաղութից «մնացել էր սոսկ երկու տուն հայ»: Սիմեոնի խոսքերի համաձայն, Լվովից առաջ Լուցկում է գտնվել (14-րդ դ. առաջ) Ռուսիա գաղթած հայերի եպիսկոպոսական աթոռը:

12-րդ դ. Կիևը՝ հին ռուսական պետության մայրաքաղաքը, կորցնում է երբեմնի նշանակությունը և դադարում է ռուս իշխանների նստավայր լինել: Տեղեկություններ չեն պահպանվել Կիևում հայերի քանակության մասին: Սակայն հայտնի է, որ Կիևի և նրա մերձակայքի հայ ազգաբնակչության թիվը ժամանակին այնքան էր մեծացել, որ այնտեղ առանձին թեմ ստեղծելու անհրաժեշտություն է առաջացել: Այդ մասին մեզ հայտնում է 17-րդ դ. կաթոլիկ գործիչ Ալոիզ Պիդուլ «Լեհաստանի, Վալախիայի և մերձակա երկրների հայերի շրջանում առաքելական քարոզչության սկզբնավորման և տարածման մասին համառոտ տեղեկություններ» խորագիրը կրող հուշագրությունների գրքում. «Կիևը անցյալում եղել է հայերի արքեպիսկոպոսի աթոռանիստ քաղաքը, որտեղ պատրիարք էր կոչվում արքեպիսկոպոսը և ենթարկվում էր կաթողիկոսի իշխանությանը ... նա նույնիսկ եպիսկոպոս ձեռնադրելու իրավունք ուներ»[2]:

17-րդ դ. սկզբին Կիևում արդեն ապրում էր ընդամենը չորս հայ ընտանիք: Սակայն հայկական գաղութի երբեմնի բարօրության մասին հուշերը տա-

[1] Лященченко И. А., Черты из истории сословий в Юго-западной (Галицкой) Руси в XIV-XVвв., М., 1894, сс.219-220.նույնի, Общественная роль армян в прошлом Юго-западной Руси, Киев, 1895.

[2] Բանի միաբան Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմայ, ՍՊր., 1884, էջ 16:

կավին թարմ էին: Հայկական աղբյուրները, սկսած 15-րդ դ., Կիևի մասին Մանկերման անվանմամբ տեղեկություններ են պահպանել: Իսկ Սիմեոն Լեհացու «Ուղեգրություններում» կան ուշագրավ փաստեր Կիևի անցյալի մասին: «Եւ մեծն Մանքէրման ասին թէ յորժամ սկիթէր լինէր, հինգ հարիւր հոգի կելէր Հայոց ի պատերազմն... եւ այժմ չորս տուն հայի մնացել էր, բայց շատ խանութներ, վախքի տներ, ջաղացք, արտեր, պախչանի և այլք դեռ հայոց ձեռքն է»: Լվովի պարոնայք նշանակում են այստեղ, ինչպես նաև Լուցկում, քահանա, որին «վարձատրում են և պահպանում են եկեղեցիները բարեկարգ վիճակում»[1]:

Այդ տեղեկությունները լրացնում են մեր գիտելիքները Կիևում հայերի թվաքանակի, նրանց զբաղմունքների և իրենց երկրորդ հայրենիքը դարձած երկրի պաշտպանության գործում ներդրած ավանդի մասին: Եթե Կիևի հայերը գաղութի բարգավաճման ժամանակաշրջանում կարող էին իրենց շարքերից դուրս բերել 500 քաջարի և զորեղ ռազմիկներ քաղաքը պաշտպանելու համար, ուրեմն նրանց թվաքանակը պիտի լիներ ոչ նվազ քան երեք-չորս հազար մարդ: Լեհական աղբյուրները պահպանել են տեղեկություններ այն մասին, որ 1410 թ. Գրյունվալդի ճակատամարտում լեհական բանակի կազմում Տևտոնյան օրդենի ասպետների դեմ մարտնչել են նաև հայ ռազմիկներ, այդ թվում նաև Կիևից եկածներ:

Հարավային և Հարավ-արևմտյան Ռուսիայի հայկական համայնքները զգալի չափով համալրվեցին 13-րդ դ., երբ 1236 թ. Այսրկովկասի վրա հարձակվեցին թաթար-մոնղոլները և ամայացրին ու ավերեցին հայկական տարածքները: 13-րդ դ. ևս առաջացած հայկական առաջին գաղթավայր Պոդոլիայում՝ Կամենեց-Պոդոլսկի մերձակայքում, Սմոտրիչ գետի ափին կար Արմյանե Վելիկիե գյուղը:

14-րդ դ., երբ Գալիցյան իշխանության տարածքները գրավեցին լեհ ավատատերերը, Կիևը հայտնվեց Լիտվական Մեծ իշխանության տիրապետության ներքո (1362-1471 թթ.), իսկ այնուհետև, մինչև 1654 թ. Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորվելը, ուկրաինական այլ տարածքների հետ մեկտեղ այն գտնվում էր Լեհաստանի կազմում, լինելով Կիևի վոյեվոդության կենտրոնը: Հենց այդ ժամանակ, 14-րդ դարում, Կիլիկյան հայկական թագավորության անկումից հետո, տեղի ունեցավ հայերի՝ իր չափերով ամենամեծ արտագաղթը՝ սկզբում դեպի Ղրիմ, իսկ այնտեղից դեպի Գալիցիա և Պոդոլիա, որը համալրեց տեղի հայ համայնքները: Հենց այդ հայերն էլ մարտնչել են լիտվական մեծ իշխան Վիտովտի զորքերի կազմում՝ Գրյունվալդի (1410 թ.) պատմական, իսկ այնուհետև՝ Վառնայի (1444 թ.) մոտ տեղի ունեցած ճակատամարտերում:

Չնայած տնտեսական և քաղաքական այն ծանր պայմաններին, որոնցում գտնվում էր Կիևը նշված ժամանակաշրջանում, 14-րդ դ. վերջին Կիևի վրայով էր անցնում Լեհաստանը Մոսկվայի հետ կապող առևտրական ուղին: Կիևը 15-րդ դ. կարևոր կայան էր Մոսկվան Կաֆայի հետ կապող գլխավոր առևտրական ճանապարհի վրա: Այդ ճանապարհը ավելի հարմար էր, քան այն որն անցնում է Վոլգայի և Դոնի վրայով: Այդ ճանապարհով Մոսկվա, Պսկով, Նովգորոդ էին բերվում արևելյան ապրանքներ՝ թանկարժեք քարեր, մետաքս և մետաքսյա գործվածքներ, խունկ, համեմունքներ, այսինքն՝ այն ապրանքները, որոնք ստացել էին «Հայկական ապրանքներ» անվանումը: Կիևում հայերի այդ ժամանակվա պատմության մասին ավելի շատ տեղեկություններ են պահպանվել, քան նախորդ ժամանակաշրջանից: Հայտնի է, որ Կիևում բնակվող հայերն ունեին իրենց կազմակերպված համայնքը և ճանաչված էին պետության կողմից, ունեին իրենց ինքնավարության մարմինները , կնիքը: Կիևի հայկական համայնքն այդ ժամանակ բաղկացած էր 3000 մարդուց[1]: Լեհ հուշագիր Ստանիսլավ Սարնիցկին վկայում է, որ 16-րդ դ. վերջին Կիևում ապրում էին «նույնպես բավական շատ հայեր, ինչպես և Լվովում ու Կամենեցում»: Այդպիսի համայնքը լիովին կարող էր ոչ միայն տեղի ազգաբնակչության հետ միասին մասնակցել քաղաքի պաշտպանությանը, այլև ապահովել վոտանգաշատ ճանապարհներով, բոլոր ուղղություններով քարավաններով հրթիռկող հայ վաճառականների անվտանգությունը:

15-րդ դ. կեսերին Կիևի հայերին թույլատրվեց Պոդոլում Գլիննայա փողոցի վրա կառուցել «Աստվածածնի վերափոխման» փայտաշեն եկեղեցին: Հայերը Կիևի մերձակայքում ունեին արտեր, այգիներ և բանջարանոցներ, որոնց համար դեռևս 15-րդ դ. սկզբներին ստացել էին լիտվական մեծ իշխանների իշխանական շնորհագրերը: Լիտվական մեծ իշխան, այնուհետև լեհական թագավոր (մինչև 1492 թ.) կազեմիր 4-րդը 15-րդ դարի կեսերին Կիևի հայերին տվեց մի քանի շնորհագրեր, որոնցով նրանց թույլատրեց Կիևում ունենալ տներ, բանջարանոցներ, զբաղվել արհեստներով և առևտրով և օգտվել նույն իրավունքներից, ինչ և ունեին քաղաքի մյուս բնակիչները: Հիմնական թաղամասը, որտեղ հայերը ապրում էին Կիևում, Պոդոլն էր, Դնեպրի ափին: 15-րդ դ. վերջին լիտվական մեծ իշխան Ալեքսանդրը նույնպես հայ համայնքին Պոդոլի մերձակայքում հողից օգտվելու շնորհագրեր տվեց: Հայերին թույլատրվեց շնորհված հողերից օգտվել սեփականության իրավունքով: Թեև այդ շնորհագրերը չեն պահպանվել, սակայն դրանց մասին հիշատակվում է Կիևի

[1] **Սիմէոն դպրի Լեհահայոց** Ուղեգրութիւններ, ուսումնասիրեց և հրատարակեց Ն.Ակինեանը, Վիեննա, 1935, էջ 347-348:

[1] Թոյիկյան Լ. Ս., Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհի վրա, Բանբեր Մատենադարանի, հ. 13, եր., 1980, էջ 51:

հայերի 1622 թ. որոշման մեջ, որի համաձայն նրանք իրենց եկեղեցին հանձնում էին Լվովի հայ համայնքի հովանավորությանը[1]: Լիտվական արձանագրությունների մատյանը և այլ վավերագրեր վկայում են նաև այն մասին, որ հայերը Սիրեց, Կուրենևկա գետերի ափերին, Ժիտոմիրյան ճանապարհի երկայնքով ունեին դաշտեր, բանջարանոցներ, արհեստական լճակ, ամբարտակ, ջրաղաց, ագարակատուն: Ջրաղացից և լճակից ստացվող եկամուտները ծախսվում էին հայկական եկեղեցին պահպանելու համար: Հայերը սեփական հողեր ունեին նաև Կիևի շրջաններում՝ Շչեկավիցայում և Օբոլոնյայում, ինչպես նաև Կիևի գավառի որոշ գյուղերում: Սակայն հայերը հիմնականում բնակվում էին Կիևում, որտեղ ունեին իրենց տները: Հայերի հիմնական զանգվածը կազմում էին արհեստավորները, առևտրականները, արդյունահանող ձեռնարկությունների աշխատողները: Բնակվում էին նրանք Գնիլայա փոքրիկ գետակի ափին, որտեղ և գտնվում էին նրանց եկեղեցին, բնակելի տները, խանութները, արհեստանոցները, ցախանոցները: Այստեղ էր նրանց հիվանդանոցը, որը պահում էին համայնքի հաշվին: Ավելի ունևոր հայ վաճառականների տները գտնվում էին Ժիտնի տորգի մոտ, որտեղ միշտ աշխույժ առևտուր էր կատարվում: Մի քանի հարուստ հայեր շուկայում ունեին պանդոկներ, որտեղ վաճառում էին գարեջուր, մեղրախմիչք և այլ ըմպելիքներ: Տարեկան երկու անգամ՝ Մննդյան և Զատկի տոներին, նրանք պանդոկներում օղի վաճառելու իրավունք ունեին: Լեհ թագավոր Սիգիզմունդ Ավգուստը 1570 թ. հատուկ հրովարտակով թույլատրեց հայ վաճառականներին Կիևից մեկնել Ռուսաստան և այնտեղ ազատ առևտուր անել նույնիսկ Ռուսաստանի և Լեհաստանի միջև պատերազմի ժամանակաշրջանում: Այդ ժամանակ էլ հայ վաճառականներին թույլատրվեց մեծ քարավաններով Թուրքիայից Կիևի վրայով գնալ Ռուսաստան: Առևտրական գլխավոր ուղին Կիևից դեպի Մոսկվա անցնում էր Օստերի, Զերնիգովի, Պուտիվլիլի և այլ քաղաքների վրայով: Ունևոր հայեր Կիևում քիչ կային: 16-րդ դ. վերջին Պոդոլում բնակվում էին հիմնականում «ոչ այնքան ունևոր» հայ արհեստավորներ և քաղաքի բնակչության աշխատավոր մասը, որոնց թվում՝ մուշտակագործներ, կաշեգործներ, կոշկակարներ և այլն:

Հայերը զբաղվում էին նաև գյուղատնտեսությամբ. հողագործությամբ, բանջարաբուծությամբ և այգեգործությամբ: Հայտնի է, որ Շչեկավիցայում նրանք ունեին խաղողի մեծ այգի և գինեգործարան, որտեղ գինի էին պատրաստում: Եվ դա զարմանալի չէ: Խաղողագործության և գինեգործության բնագավառում լինելով մասնագետներ, նրանք խաղող աճեցնելու և մշակելու՝ սերնդից սերունդ փոխանցվող ունակությունները զարգացնում էին նաև Կիևում, դրանով իսկ զարգացնելով այնտեղ խաղողագործությունը: 1552 թ. Կիևի նկարագրության մեջ ասվում է, որ խաղողի մեծ այգի կար Վիշգորոդ սարի ստորոտում, որտեղ Լևոն Միլանը խաղող էր աճեցնում: Նա էլ ղեկավարում էր «Վիշգորոդի գինեգործարանը», որտեղ գինի էր պատրաստվում Կիևի դղյակի համար: Ինքն անձամբ ծառայում էր Կիևի դղյակում, իսկ ծառայության դիմաց հողամաս ուներ Պետրովցի գյուղում:

Կիևի հայերին վերցնում էին նաև ծառայության՝ լիտվական մեծ իշխան Սիգիզմունդը 1540 թ. բազմամյա ծառայության համար կիևցի հայ Ֆիլիպ Հային և նրա ընտանիքին շնորհեց առհավետ «Կիևի գավառի Բելգորոդյան յուցակի տասնյակում գտնվող Լիսանով գյուղը ... իսկ այդ գյուղից հեծելազորային ծառայության էին գնում»:

Կիևի հայ ազգաբնակչության շրջանում սոցիալ-տնտեսական անհավասարությունը դրսևորվել է նաև նրանց իրավական դրության մեջ: 15-րդ դ. վերջին լիտվական մեծ իշխան Ալեքսանդրը Կիևին շնորհել է մագդեբուրգյան իրավունք: Լիտվական պաշտոնյաների կողմից Կիևի դղյակի 1552 թ. նկարագրության մեջ ասվում է, որ հայերի մի մասը շատ վաղուց օգտվում էր մագդեբուրգյան իրավունքից: Քաղաքի բնակիչների ցուցակում աչքի էին բնկնում այն հայերը, որոնք օգտվում էին մագդեբուրգյան իրավունքից, այդպիսիք էին՝ Իլյա Օրմենինը (Հայը), Էլբեյ Օրմենինը, Մորոզին Օրմենինը, Կիրկոր Օգիրկովիչը և ուրիշներ: Սակայն դժվար է ստույգ ճշտել Կիևում բնակվող արտոնյալ հայերի թվաքանակը, քանի որ այդ ժամանակ շատ հայեր յուրացնում էին ռուսական անուններ և ազգանուններ: Հայտնի է միայն, որ մոտ տասը հայ արհեստավորներ և առևտրականներ օգտվում էին մագդեբուրգյան իրավունքից: Անտարակույս դրանք եղել են հարուստ քաղաքացիներ:

Չգալիորեն ավելի շատ հայեր ենթակա էին դղյակի վարչության իրավասությանը: Կիևի դղյակի 1442 թ. նկարագրության մեջ հիշատակվում են այն հայերի անունները, որոնք չէին օգտվում մագդեբուրգյան իրավունքից. Իվանիս հայի ընտանիքը, Կասպար հայը, հայ քահանայի ընտանիքը, Բոգդան Սեմովոյի հայ փեսան, Գրիշկո Մելնիկովի հայ ընտանիքը, Միշկո Արուսիենովը, Կրիկորը և ուրիշները[1]: Դրանք բոլորը «դղյակապատկան քաղքենիներ» էին: Այն հայերը, որոնք, չէին օգտվում մագդեբուրգյան իրավունքից, պարտավոր էին ենթարկվել դղյակի վարչությանը և դղյակի օգտին կատարել բոլոր իրենց պարհակները: Նրանք կարող էին զբաղվել միայն այն արհեստով, որը չէր արտոնված համքարային արհեստավորներին:

Ոչ արտոնյալ առևտրականների իրավունքները նույնպես սահմանափակ էին: Նրանք կարող էին միայն հացի, մսի, ձկնեղենի և այլ սննդամթերքի

[1] Мышко Д. И., О жизни армян в Киеве в XV в.-первой половине XV в.- Исторические связи и дружба украинского и армянского народов, Киев, 1965, с. 114-115.

[1] Мышко Д.И., նշվ. աշխ., էջ 117:

առևտրով զբաղվել, սակայն նրանց արգելվում էր արհեստագործական այն ապրանքները վաճառել, որոնք պատրաստվել էին ոչ համքարային արհեստավորների կողմից, արգելվում էր օտարերկրյա ապրանքների, ոգելից խմիչքների և այլնի առևտրով զբաղվելը:

Ղրիմից, Թուրքիայից, Մոլդովայից Կիև էին ժամանում հայ հարուստ վաճառականներ, որոնք մի քանի օր մնում էին քաղաքում և առևտուր անում տեղի չուկայում՝ Ժիտնի տորգում: Նրանք հիմնականում իջևանում էին տեղի հայերի տներում: Նրանց միջոցով Կիևի հայերը կապեր էին պահպանում Հայրենիքի, հարազատների և այլ քաղաքների հայ բնակիչների հետ:

Հայ վաճառականներից շատերը գիտեին օտար և արևելյան լեզուներ, տարբեր երկրների ժողովուրդների կենցաղը, վարք ու բարքը, նրանք կարողանում էին պետությունների միջև դիվանագիտական բանակցություններ վարել: Դրա շնորհիվ նրանք վայելում էին Կիևի վոյեվոդների և ավագների հարգանքը: Լիտվական մեծ իշխանների արքունիքում Ղրիմի խանների և Թուրքական սուլթանների դեսպանների հետ վարվող բանակցություններում որպես թարգմանիչներ հաճախ հանդես էին գալիս հայերը: Կիևում կար թարգմանների մի քանի տուն, որոնց տերերը մասնակցում էին Ղրիմ և Կոստանդնուպոլիս ուղարկվող լիտվական դիվանագետների դեսպանագնացությանը, Կիևից թաթար խաներին մեծ իշխանի նվերների ուղարկմանը: Այդ թարգմանների մեջ կային նաև հայեր:

Կիևում հայերի իրավիճակը նշանակալի չափով վատացավ 16-րդ դ. վերջին, 1569 թ. Լիտվական մեծ իշխանության և Լեհաստանի միջև կնքված Լյուբլինյան ունիայից հետո, երբ կազմավորվեց միասնական պետությունն՝ Ռեչ Պոսպոլիտան: Լեհական վարչապետությունը սկսեց Կիևում մտցնել այնպիսի կարգեր, որոնք համապատասխանում էին լեհ ազնվականության և ավագանու (մագնատների) շահերին:

Թագավորի պաշտոնյաները բռնագրավում էին քաղաքի բնակիչներին պատկանող հողատարածությունները և դրանք տալիս լեհ ազնվականներին, կաթոլիկ եկեղեցու սպասավորներին, զինվորականներին և այլոց: Հողեր, բանջարանոցներ, տներ, առևտրական խանութներ ունենալու իրավունք արտոնող շնորհագրերը, որ ժամանակին տրվել էին մեծ իշխանների կողմից, կորցրին իրենց նշանակությունը: Այդ ամենը հարուցեց Կիևի հայերի դժգոհությունը, որոնք մի քանի անգամ դիմել են լեհ թագավոր Ստեֆան Բատորիին՝ հողեր, արհեստանոցներ, խանութներ և այլն որպես սեփականություն ունենալու համար իրենց նոր շնորհագիր տալու խնդրանքով: Աղբյուրներում հիշատակություն կա այն մասին, որ թագավորական նման հրովարտակ նրանց շնորհվել է:

Էլ ավելի բարդացավ Կիևի հայերի իրավիճակը Բրեստի 1596 թ. եկեղեցական ունիան կնքելուց հետո: Այդ ունիայի համաձայն ուկրաինական ուղ-

դափառ եկեղեցին պիտի միավորվեր կաթոլիկականի հետ և անցներ Հռոմի պապի դերիշխանության ներքո: Ունիայի ընդունումից հետո Կիևի կաթոլիկ և ունիատական հոգևորականությունը սկսեց ուժեղ թափով հարձակվել հայերի վրա: Նրանց նպատակն էր հայկական եկեղեցին վերածել կաթոլիկականի, բռնագրավել նրա հողային տիրույթները, հարկադրել հայերին կաթոլիկ դավանանք ընդունել: Ըստ երևույթին, դա էր պատճառը, որ հայերը սկսեցին թողնել Կիևը և վերաբնակվել հարավ-արևելյան Եվրոպայի առևտրական այլ կենտրոններում:

17-րդ դ. սկզբին Լվովի հայ համայնքը սկսեց եռանդագին պաշտպանել Կիևի հայերի իրավունքները կաթոլիկների հետապնդումներից և նյութական չոչափելի օգնություն ցույց տալ Կիևի հայկական եկեղեցուն: 1622 թ. հոկտեմբերի 1-ին Կիևի հայերը որոշեցին կրոնական հարցերում ենթարկվել Լվովի հայկական մայր տաճարին, որ նրանից ստանան անհրաժեշտ պաշտպանություն, օգնություն և հովանավորություն: Այդ որոշմամբ Կիևի հայկական եկեղեցին սկսեց ենթարկվել Լվովի հայկական համայնքին: Եթե հաշվի առնենք, որ արդեն 17-րդ դարի առաջին քառորդին հայկական տների թվաքանակը Կիևում մեծ չէր, ապա հասկանալի կլինի, որ նրանք չէին կարող հաջողությամբ դիմակայել կաթոլիկ եկեղեցու, մագնատների (ավագանու) և ազնվականության հարձակմանը, որոնց աջակցում էին Կիևի վոյեվոդները և լեհ թագավորը:

Քանի տարուց ավելի տևեց դատական տարբեր ատյաններում հայերի և Կիևի կաթոլիկ եպիսկոպոսության միջև ծավալված պայքարը Օբոլնյայում գտնվող խոտհարքի համար, որը պատկանում էր հայերին տակավին 15-րդ դ. սկսած: Շնորհիվ Կիևի մեծ իշխանների շնորհագրերի՝ հայերը հաջողությամբ պաշտպանեցին իրենց տիրույթները:

Հայերի համար ավելի դժվարին էր Սիրեցում գտնվող իրենց կալվածքների պաշտպանությունը, որտեղ կային կաթոլիկ եպիսկոպոսության մեծ կալվածքներ, և քանի որ Սիրեցում գտնվող տարածքը Կիևի վոյեվոդայի տնօրինությանն էր ենթակա, որը կաթոլիկ էր և նշանակվել էր լեհ թագավորի կողմից, կաթոլիկ հոգևորականությունը բռնազավթեց Սիրեցում եղած հայկական բոլոր վարելահողերն ու անդաստանները: Հայերը նրանց դեմ բողոքեցին քաղաքի մագիստրատական դատարանին: Սակայն դատարանը, իշխանությունների ճնշման ներքո, դատավճիռ կայացրեց կաթոլիկ հոգևորականության օգտին:

Այսպիսով, հարյուրամյակներ գոյատևած Կիևի հայկական գաղութը 17-րդ դ. առաջին քառորդում սկսեց անկում ապրել, կորցնելով իր երբեմնի նշանակությունը հայ, ռուս և ուկրաինացի ժողովուրդների միջև տնտեսական ու մշակութային կապերն ամրապնդելու գործում:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱ, ԼԵՀԱՍՏԱՆ

Արևելյան Եվրոպայում աչքի էին ընկնում հատկապես Գալիցյան Ռուսիայի (Արևմտյան Ուկրաինա) և Լեհաստանի հայկական գաղթօջախները, որոնք գոյություն ունեցան ավելի քան կես հազարամյակ և իրենց անջնջելի հետքը թողեցին այդ երկրների պատմության մեջ: Նրանք թողեցին նաև բացառիկ հարուստ և անգնահատելի մշակութային ժառանգություն:

Այդ գաղթավայրերի պատմության հարցերը իրենց վրա են հրավիրել ուսումնասիրողների ուշադրությունը դեռևս անցյալ դարի կեսերից: Դա այն ժամանակ էր, երբ Լեհաստանի եռակի բաժանումից հետո նրա նախկին տարածքի մի փոքրիկ մասում, որը գտնվում էր Ավստրիայի և Ռուսաստանի տիրապետության տակ, դեռ պահպանվում էին երբեմնի խոշոր և բուռն զարգացող հայ գաղթօջախների արդեն անհետացող վերջին կղզյակները: Լվովում, Կամենեց-Պոդոլսկում, Ստանիսլավում (ներկայիս Ուկրաինայի Իվանո-Ֆրանկովսկ քաղաք), Լուցկում, Կուտիում և մի քանի այլ քաղաքներում դեռ ապրում էին հայ բնակչության վերջին սերունդները, որոնց մեծ մասը վաղուց կորցրել էր իր նախնիների ազգային նկարագիրը (լեզուն, սովորույթները, կրոնը և այլն):

Հայկական գաղթավայրերի գոյության մասին ներկայումս վկայում են միայն հնագույն ճեռագիր արձանագրությունները և նյութական մշակույթի հուշարձանները, որոնք սփռված են նշված տարածաշրջանի շատ քաղաքներում ու բնակավայրերում: Ճարտարապետական հուշարձանները հիմնականում եկեղեցական կառույցվածքներ են, որոնք հարազատ են մնացել հայ ազգային ճարտարապետության ավանդույթներին: Դրա վառ օրինակը դեռ մինչև այսօր կանգուն մնացած Լվովի հայկական եկեղեցին է, որի բակում, ի դեպ, կան նաև մի շարք չափազանց հետաքրքիր խաչքարեր: Քաղաքացիական շինությունների, հատկապես մեծահարուստ լեհահայերի տների վրա ազգային շինարարական ավանդույթների ազդեցությունը զգացվում է ավելի նավազ չափով: Այդ մասին են վկայում Լվովի Հայկական փողոցում գտնվող մի շարք տներ, որոնք ժամանակին կառուցվել են հայերի կողմից:

Անհամեմատ ավելի հարուստ ու բազմազան նյութերով է ներկայանում լեհահայերի հոգևոր մշակույթի ժառանգությունը, որը մեզ է հասել, մեծագույն փորձությունների ու կորուստների ենթարկվելով տարածաշրջանում տեղի ունեցած հաճախակի պատերազմական գործողությունների հետևանքով: Այդուհանդերձ պահպանվել են բավական մեծ քանակությամբ գրավոր արձանագրություններ, որոնք մեծ խնամքով պահվում են Լվովի պետական կենտրոնական պատմական արխիվում, Լվովի պետական գիտական գրադարանի ձեռագրապահոցում, Ուկրաինայի պետական կենտրոնական պատմական արխիվում (Կիև), Լեհաստանի մի շարք արխիվներում (Վարշավայի հին ակտերի գլխավոր արխիվ, Կրակովի Ջարտորիյսկիների գրադարան, Վրոցլավի «Ossolineum» և այլն): Դրանք Լեհաստանի հայոց ինքնավար հիմնարկությունների (հայկական դատարաններ, քաղաքապետարաններ և այլն) արձանագրություններն են, որոնք հաշվում են հարյուրավոր ստվար ճեռագիր մատյաններ:

Մինչև 17-րդ դ. կեսերը դրանք գրված են ողջ Լեհաստանում պաշտոնական գործածության մեջ գտնված լատիներեն լեզվով, իսկ հետո՝ լեհերեն: Հայերեն արձանագրություններ այնտեղ կամ բոլորովին չկան կամ էլ հանդիպում են շատ հազվադեպ: Բացառություն են կազմում միայն այն գաղթավայրերը, որոնց բնակչությունն այդտեղ է եկել Ղրիմից:

Հայկական գաղթավայրերի անցյալի մասին բավական հարուստ նյութեր են պարունակում բուն լեհական դատարանների (akta grodzkie i ziemskie), ինչպես նաև Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները[1]: Լեհական դատարանները հայկական դատարանների համար կատարում էին վճռաբեկ ատյանների դեր: Իրենց դատարանների որոշումներից ու վճիռներից դժգոհ մնացած հայերը գանգատներով դիմում էին դրանց: Այս դատարանների՝ հայերին վերաբերող արձանագրությունները որոշակի պատկերացում են տալիս լեհահայերի առևտրի, արհեստների, դրամական և ունեցվածքային հարաբերությունների, կենցաղի և շատ այլ հարցերի մասին:

Պատմական նյութերի մեջ պատկառելի տեղ են գրավում լեհահայ գաղթօջախների իրավական ու քաղաքական կյանքին վերաբերող պաշտոնական վավերագրերն ու փաստաթղթերը: Դրանք լեհ թագավորների ու իշխանների կողմից հայկական առանձին համայնքներին կամ անձանց տրված արտոնագրեր ու շնորհագրեր են, արքունի գրասենյակի կարգադրություններ, նամակներ և այլ բնույթի նյութեր:

Լեհահայ գաղթօջախի պատմության ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուրներ են 1519 թ. Սիգիզմունդ 1-ին թագավորի կողմից հաստատված Հայկական օրենսգիրքը, որը լեհահայերի իրավական միջավայրին հարմարեցված Մխիթար Գոշի դատաստանագիրքն էր, և 1604 թ. լեհահայոց դատարանավարական կանոնագիրքը: Դրանք՝ երկուսն էլ, ցավոք, մինչ այժմ ուսումնասիրված չեն հայոց իրավունքի մասնագետների կողմից: Բացի սրանցից, կան նաև բազմաթիվ այլ նյութեր, որոնց մեջ եզակի չեն ժամանակի հայ պատմիչների, ճանապարհորդների ստեղծագործությունները: Առանձնակի

[1] Լվովի պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 1-11 և 13-18: Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, եր. 1966:

տեղ են գրավում Առաքել Դավրիժեցու (16-րդ դ. վերջ-1670 թ.), Սիմեոն Դպիր Լեհացու (1584-մոտ 1635 թթ.), կաթոլիկ հոգևորական Ալոիզ Պիդուի /1638-1717 թթ.), 17-րդ դարի Անհայտ հեղինակի և Մինաս Բժշկյանցի (19-րդ դ. առաջին կես) աշխատությունները:

Առաքել Դավրիժեցին, երբեք Լեհաստանում չլինելով, չափազանց իրազեկ է եղել տեղի հայոց համայնքների անցուդարձին և հաղորդում է վերին աստիճանի հավաստի պատմական տեղեկություններ: Նկարագրելով լեհահայոց եկեղեցու բռնի միավորումը (ունիա) Հռոմի եկեղեցու հետ, նա զայրույթով դատապարտում է տեղի ճիզվիտ հոգևորականության կողմից իրականացված՝ հայերի կրոնական հալածանքները[1]:

Այդ նույն իրադարձությունները հակառակ դիրքերից են ներկայացնում դպքերի անմիջական մասնակիցներ և ունիան իրականացնողներ Ա. Պիդուն և Անհայտ հեղինակը: Պիդուն թեատինյան միաբանության գործիչ էր և մինչև Լվովում հայանվելը երկար տարիներ ծառայել էր բուն Հայաստանում՝ զբաղվելով հայերի մեջ կաթոլիկական հավատքի տարածմամբ: Նա լավ տիրապետում էր հայերենին, քաջածանոթ էր հայոց պատմությանը: Լվովում նա կազմակերպում է դպրոց՝ հայերից հայ կաթոլիկ եկեղեցու սպասավորներ պատրաստելու նպատակով: Պիդուն չէր ընդունում հայոց առաքելական եկեղեցին և նրա դավանանքը, որը նա համարում էր հերձվածք (սխիզմա), կաթոլիկ եկեղեցու դոգմաներից կատարված շեղում: Համառոտակի չարադրելով Լեհաստանի հայոց գաղթօջախների պատմությունը, նա հետաքրքիր, թեև ոչ միշտ անաչառ տեղեկություններ է հաղորդում լեհահայերի մասին, չափազանց մանրամասն նկարագրում եկեղեցական ունիայի հետ կապված իրադարձությունները: Նա անսքող կողմնակալությամբ է գրում ունիայի նկատմամբ հայոց ինքնավար մարմինների բացասական վերաբերմունքի մասին: «Մանաւանդ զի ջանացի ես ամենայն զօրութենէ իմմէ սանձել յապաւել զխրոխտութիւն դատաւորացն և զգուշանալ՝ զի մի ծագեսցի ապստամբութիւն»[2]:

Անհայտ հեղինակը գրեթե նույնությամբ կրկնում է Պիդուի աշխատությունում շոշափված շատ հարցեր, ինչպես նաև նկարագրում հենց Պիդուի անձնական մասնակցությունը ունիայի համար մղված պայքարին:

Ի տարբերություն Պիդուի, Անհայտ հեղինակը իր «Ընդարձակ տեղեկութիւնք» աշխատության մեջ ընդգրկել է նաև 1669-1676 թթ. ժամանակաշրջանը: Անհայտ հեղինակի աշխատության միջոցով հնարավոր է դառնում ստուգել Պիդուի և նույնիսկ Առաքել Դավրիժեցու հաղորդած տեղեկությունների իսկությունը: Միաժամանակ նրա աշխատությունը պարունակում է բա-

[1] Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1896:

[2] Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ, Ս.Պետերբուրգ, 1884, էջ 57-58:

վական մեծ քանակությամբ ինքնուրույն նյութեր, որոնց միջոցով կարելի է պատկերացում կազմել 17-րդ դարի կեսերի լեհահայ գաղթավայրերի վիճակի մասին: Պարզվում է, օրինակ, որ Միխայիլ Թագավորի օրոք, կաթոլիկացնելու նպատակով Ռեչ Պոսպոլիտայում կրճատել են հայերի քաղաքական, տնտեսական և այլ կարգի իրավունքները, անտեսել հայոց ինքնավար մարմինների միջնորդությունն ու խնդրանքները:



Լվովի հայկական մայր տաճարը (XIV դ. 60-ական թվականներ)

Լեհահայոց գաղթավայրերի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Լեհացին: Նա պատմում է լվովահայերի առևտրի ու արհեստների, եկեղեցիների, դպրոցների ու գրադարանների, հայ բնակչության բարեկեցության, հայերի իրավական դրության, հայոց դատարանի ու դատավորների և շատ այլ հարցերի մասին[1]: Սիմեոն Լեհացու նման Մինաս Բժշկյանցի աշխատությունը ևս կրում է ուղեգրության բնույթ: Բժշկյանցը հայ կաթոլիկ եկեղեցու գործիչ էր: 1820 թ. նա մեկնում է ճանապարհորդության և լինում նաև Լեհաստանի գրեթե բոլոր հայաբնակ քաղաքներում և հարուստ նյութեր հավաքում լեհահայոց գաղթավայրերի անցյալի, նրանց քաղաքական ու տնտեսական իրավունքների, տեղի հայոց եկեղեցու, դպրոցների և այլ հարցերի մասին[2]:

Վերը թվարկվածը ամենևին էլ չի սպառում այն պատմական նյութերը, որոնք վերաբերում են լեհահայ գաղթօջախների պատմությանը: Դրանք, իրոք, շատ են ու բազմազան: Միանգամայն բնական է, որ այդ վիթխարի քանակությամբ պատմական նյութերը պիտի իրենց վրա հրավիրեին ուսումնասիրողների ուշադրությունը: Առաջին ուսումնասիրողներից էին հայազգի լեհական պատմաբան Սադոկ Բարոնչը և ավստրիացի Ֆերդինանդ Բիշոֆը:

Բարոնչի հիմնական երախտիքն այն է, որ նա կարողացավ հարյուրամյակների փոշուց հանել և գիտական շրջանառության մեջ դնել լեհահայ գաղթավայրերի պատմության մասին պահպանված մեծ քանակությամբ պատմական նյութեր: Նրա գրչի տակից դուրս եկած տասնյակ մեծ ու փոքր աշխատությունների շարքում մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև «Լեհաստանի երևելի հայերի կենսագրությունը» (1858 թ.) գիրքը[3], որում տեղ են գտել 16–19-րդ դարերում Լեհաստանում ապրած բազմաթիվ նշանավոր հայերի մասին կենսագրական տեղեկություններ: Բարոնչի հրապարակած փաստերը վկայում են առևտրի, արհեստների, գիտության, գրականության, կերպարվեստի, բժշկագիտության, դիվանագիտության, ռազմական գործի, պետական կառավարման և կյանքի շատ ու շատ այլ բնագավառներում լեհահայերի խաղացած նշանակալի դերի մասին:

Ուշագրավ գործ է նաև Բարոնչի «Ակնարկ հայոց պատմության» գիրքը, որտեղ ժամանակագրական սկզբունքով փաստեր ու տեղեկություններ են հրապարակված լեհահայերի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի ամենատարբեր բնագավառների վերաբերյալ՝ սկսած 1062 թ. հայեր հրավիրելու մասին հրովարտակից մինչև 16–17-րդ դարերում հայկական առևտրի կարևոր ապրանքների մաքսամասն թվարկումը: Այս գրքում առաջին անգամ հրապարակվել է Հայկական օրենսգրքի (դատաստանագրքի) ուշ շրջանում արտագրված տարբերակներից մեկը:

Ֆ. Բիշոֆը, 1855–1865 թթ. աշխատելով Լվովի համալսարանում որպես ավստրիական իրավունքի մասնագետ, զգալի ավանդ է մուծել լեհահայերի իրավական կյանքի վերաբերյալ մոտ 500 մեծարժեք փաստաթղթերի գիտական մշակման և հրապարակման գործում: «Լեհահայոց հին իրավունքը»[1] աշխատության մեջ նա ուսումնասիրողների ուշադրությանը ներկայացրեց մի քանի տասնյակ արտոնագրեր ու չնորհագրեր, որոնք հայերը ստացել էին լեհ թագավորներից 14–17-րդ դդ: Դրանից հետո լույս տեսան «Հայերի հին իրավունքը Լվովում»[2] և «Արտոնագրեր Լվովի հայերի պատմության վերաբերյալ»[3] աշխատությունները, որտեղ հրապարակվեցին բազմաթիվ նոր փաստաթղթեր, որոնց թվում նաև 1516 թ. Սիգիզմունդ 1-ինի կողմից հաստատված Հայկական օրենսգրքի (դատաստանագրքի) ևս մեկ տարբերակ:

Լեհահայոց գաղթավայրերի պատմության գիտական ուսումնասիրության ասպարեզում բացառիկ մեծ է լեհական պատմագրության ավանդը: Այս ասպարեզում առավել խոշոր ներդրում ունեն լեհ ուսումնասիրողներ Տադեուշ Գրոմնիցկին, Վլադիսլավ Լոժինսկին, Ալեքսանդր Զոլովսկին, Լյուդվիկ Խարևիչովան, Օսավլդ Բալցերը, ինչպես նաև հին ավանդույթները շարունակող ժամանակակից հեղինակներ Բոգդան Բարանովսկին, Միրոսլավա Զակշևսկա-Դուբրաուսովան և շատ ուրիշներ: Դրանցից չի կարելի բաժանել նաև ուկրաինացիներ Իվան Լիննիչենկոյի, Իվան Կրիպյակևիչի, Յա. Դաշկևիչի և շատ ուրիշների անունները, որոնք նույնպես նշանակալից ծառայություններ ունեն նշված բնագավառում:

Խորհրդահայ պատմագրությունը այդ հարցերի ուսումնասիրմանը ձեռնամուխ եղավ միայն 1950-ական թվականների վերջից: 1959 թ. Երևանում, 1962 թ. Կիևում և Լվովում, 1966 և 1987 թթ. դարձյալ Երևանում կայացան հայ-ուկրաինական պատմական կապերին նվիրված գիտական նստաշրջաններ: Քննարկումների կենտրոնական թեման Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմության հարցերն էին: Այս քննարկումները ոչ միայն բավական նյութ տվեցին, այլև զգալիորեն խթանեցին այդ ուղղությամբ կատարվող գիտահետազոտական աշխատանքները: Ելնելով այդ ուղղությամբ կատարվող գիտահետազոտական աշխատանքների ընթացքից, թարմ ուժերի ներգրավումը թույլ տվեց պրոբլեմը քննարկել ժամանակակից գիտության բարձր պահանջներին համապատասխան և ավելի մեծ

[1] **Սիմէոն Դպրի Լեհացւոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանիք, Վիեննա, 1936:

[2] **Մինաս Բժշկեանց**, ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս..., Վենետիկ, 1830:

[3] **Baracz S.**, Zywcty slawnych Ormian w Polsce, Lwow, 1858.

[1] Bishoff F. Das alte Recht der Armenier in Polen, Wien, 1857.

[2] Bishoff F. Das alte Recht der Armenier in Lemberg, Wien, 1862.

[3] Bishoff F. Urkunden zur geschichte der Armenier in Lemberg, Wien, 1865.

մասշտաբներով: Նորովի և չափազանց հետաքրքիր ձևով բարձրացվեցին արտագնացության երևույթի բուն պատճառները[1]:

***

Սկսած 13-րդ դարից՝ միջազգային առևտրական հարաբերություններն ավելի ինտենսիվ զարձան Արևելյան Եվրոպայի, այդ թվում նաև Լեհաստանի քաղաքների տնտեսական արագ զարգացման կապակցությամբ: Մեծ նշանակություն ստացան Լեհաստանի, Հարավային Ռուսիայի և Սև ծովի վրայով դեպի արևելք ուղղվող առևտրական ճանապարհները:

14-րդ դ. կեսերին Գալիցյան Ռուսիան գրավելուց հետո Լեհաստանի կառավարողները նրա մայրաքաղաք Լվովը զարձրին տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն, որը հարավային Ռուսիայի վրայով արևելքից եկող այսպես կոչված «թաթարական ճանապարհը» կապում էր Գդանսկի և նրա միջոցով՝ Բալթիկ ծովի հետ: Ղրիմից մինչև Լվով այդ ամբողջ տարածաշրջանում (Հարավային Ռուսիա, Մոլդովա, Վալախիա, Պոդոլիե և այլն), սկսած 13-րդ դարից, առաջացան հայկական գաղթօջախներ, որոնք սերտ կապերի մեջ էին միմյանց հետ: Դա մի աշխույժ առևտրական շրջան էր, որի վրայով հակադիր ուղղություններով շարժվում էին ամենաբազմազան ապրանքներով բեռնված առևտրական քարավանները:

Ի. Լիննիչենկոն հետևյալ կերպ է բնութագրում այդ շրջանում հաստատված հայերի դերը ուկրաինական քաղաքների բարգավաճման և առևտրի զարգացման գործում. «Միջնադարյան հարավ-ռուսական քաղաքի պատմության մեջ բավական աչքի ընկնող տեղ է պատկանում հայերին: Առանց որևէ չափազանցության կարելի է պնդել, որ հարավային Ռուսիայի առավել մեծ առևտրական կենտրոնները, ինչպես Լվովը, Լուցկը, Կամենեց-Պոդոլսկը, իրենց հարստությամբ, փայլով ու նշանակությամբ զգալի չափով պարտական են առավելապես հայերին: Գերազանցապես այդ աշխույժ, ճարպիկ ու ձեռնարկ ժողովրդի չնորհիվ հարավ-ռուսական առևտրական կենտրոնները դարձան Արևելքի հետ Արևմուտքի առևտրի միջնորդներ: Մանոթ լինելով Արևելքի կյանքի պայմաններին, տիրապետելով արևելյան լեզուներին, լավ կողմնորոշված լինելով Արևելքի առևտրական ուղիներում, զուրկ չլինելով անձնական քաջություններից և զենքին տիրապետելու չնորհքից, հատկանիշներ, որոնք անհրաժեշտ էին ավազակաբարո ժողովուրդների հողերով դեպի Արևելք հանդուգն էքսկուրսիաներ կատարելու համար, հայերը չափազանց շուտ ձեռնա-

[1] Տե՛ս նաև սույն հատորի «Առաջաբանը»:

մուխ եղան Արևմուտքի հետ Արևելքի ցամաքային առևտրին, իսկ Ղրիմում իտալական գաղութների անկումից հետո իրենց հմուտ ձեռքն առան այն»[1]:



Լվով. Վիրմենսկայա (Հայկական) փողոցը

[1] Линниченко И. Черты из истории сословий в Юго-Западной (Галицкой) Руси 14-15-го вв., М., 1894, сс. 219-220.

Լեհաստանում և Արևմտյան Ուկրաինայում հայերը հայտնվել են դեռ 11–13-րդ դդ.: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Լեհաստանի, Չեխիայի, Սլովակիայի, Գալիցյան Ռուսիայի, Վոլինի, Պոդոլիեի ընդարձակ տարածություններում ապրում էր չափազանց փոքրաթիվ բնակչություն: Այդ երկրների ու երկրամասերի ֆեոդալական վերնախավը իր եկամուտներն ավելացնելու նպատակով տարբեր երկրներից շարունակ մշտական բնակության էր հրավիրում արհեստավորներ, առևտրականներ, գյուղացիներ, որոնց չնորհում էին տնտեսական ու քաղաքական բավական լայն իրավունքներ ու արտոնություններ: Օրինակ, այդ մասին վկայում է գալիցյան բոյար Դմիտրի Դյադկոյի 1341 թ. արտոնագիրը. «Հայտնում ենք բոլոր նրանց,– ասվում է այնտեղ,– ովքեր ցանկանում են գալ Ռուսական հողեր, որ մեր նախնիների [սահմանած] իրավունքների համաձայն, նրանք կարող են ազատորեն Լվով գալ իրենց ապրանքներով, չվախենալով ոչնչից: Իսկ եթե որևէ մեկը կամենա բնակվելու համար գալ այստեղ, մենք թույլ ենք տալիս և չնորհում ենք ժառանգելու իրավունք և այլ իրավունքներ»[1]:

12–14-րդ դդ. Չեխիայում, Լեհաստանում և Արևելյան Եվրոպայի այլ երկրներում բնակություն հաստատեցին մեծ թվով գերմանացիներ, հրեաներ, անգամ անգլիացիներ, շոտլանդացիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ, ինչպես նաև հայեր:

Բուն արևմտաուկրաինական հողերում հայերի հաստատման մասին ամենահին տեղեկությունները վերաբերում են 11-րդ դարին: Դրանցից մեկի համաձայն, 1062 թ. Գալիցիայի և Վոլինի իշխան Ցյոդոր Դմիտրիևիչը հրավիրում է հայերի մի մեծ խմբի՝ նրանց տրամադրելով զանազան իրավունքներ ու արտոնություններ[2]: Այդ նույն աղբյուրից պարզվում է նաև, որ նույն թվականին իշխան Իզյասլավի հրավերով կիև է ժամանում հայ ռազմիկների 20-հազարանոց մի ջոկատ՝ պոլովցիների դեմ կռվելու նպատակով: Հետագայում նրանց մեծ մասը հաստատվում է այնտեղ, զբաղվում առևտրով, արհեստներով ու երկրագործությամբ: Այլ աղբյուրների համաձայն, այդ նույն ժամանակ Կիևում եղել է հայկական գաղթօջախ:

Հետագա դարերին վերաբերող նույնպես կցկտուր աղբյուրները վկայում են, որ Կիևի հայկական գաղթօջախը ոչ միայն պահպանել է իր գոյությունը, այլև ժամանակի ընթացքում զգալիորեն աճել ու զարգացել: Հայերն ակտիվորեն մասնակցում էին Կիևի կյանքի գրեթե բոլոր բնագավառներին, հետաքրքրվում նրա մշակույթով:

Ուկրաինայի արևմտյան շրջաններում հայերի բնակվելու մասին պատմական տեղեկությունները վերաբերում են 13-րդ և հաջորդ դարերին: 15-րդ

[1] «Нарисы исторії Львівщини», Львов, 1956, էջ 29:

[2] **Zachariasiewicz Ks.**, Wiadomos´c´ o Ormianach w Polsca, Lwo´w,1842, էջ 10.

դարի լեհական ժամանակագիր Յան Ալպրեխը հայտնում է, որ իշխան Դանիիլ Գալիցկին, հիմնելով Լվով քաղաքը (13-րդ դ. 60-ական թվականներ), բնակվելու համար այնտեղ հրավիրեց նաև հայերի և նրանց հողեր տրամադրեց քաղաքի հյուսիսային մասում: Այլ աղբյուրներ վկայում են, որ հայերն այնտեղ ապրելիս են եղել դեռ այդ քաղաքը հիմնվելուց առաջ, իսկ 14-րդ դ. կեսերին նրանք այնտեղ ունեին երկու եկեղեցի (Ս. Հակոբի և Ս. Խաչի) և մեկ վանք[1]:

13-րդ դ. հայեր էին ապրում Կամենեց-Պոդոլսկից ոչ հեռու գտնվող երկու գյուղերում, որոնք կոչվում էին Օրմիանե և Օրմիանկի (Հայեր և Հայկիներ): 1250 թ. Կամենեց-Պոդոլսկում գործում էր հայկական եկեղեցի:

Հայերի հետագա հոսքի և հայ բնակչության թվի ավելացման հետևանքով նախկին փոքրիկ առևտրական ֆակտորիաներն աճեցին և դարձան խոշոր գաղթօջախներ: Առևտուրն այլևս նրանց միակ զբաղմունքը չէր, հանդես էին եկել արհեստավոր վարպետներ, որոնք ունեին իրենց սեփական արհեստանոցները:

14-րդ դ. կեսերին, երբ Լեհաստանը նվաճեց Պոդոլիեն, ապա և Գալիցյան Ռուսիան, արևելյան առևտուրը իրախուսելու նպատակով լեհական արքունիքը հայերի նկատմամբ սկսեց կիրառել հովանավորական քաղաքականություն: 1356 թ. Լեհաստանի թագավոր Կազիմիր 3-րդ Մեծը (1333–1370) մի արտոնագրով Լվով քաղաքին չնորհեց մագդեբուրգյան քաղաքային իրավունք, որով կառավարվում էին միջնադարյան լեհական քաղաքները: Այդ նույն արտոնագրով թագավորը քաղաքի հայոց համայնքին հայտնում էր, որ եթե նա չի կամենում ղեկավարվել մագդեբուրգյան իրավունքով, ապա կարող է իր ազգային իրավական նորմերի հիման վրա ստեղծել սեփական դատարան: 1367 թ. այդ նույն թագավորը հայոց Գրիգոր եպիսկոպոսին թույլատրեց հաստատվել Լվովում: Այդ պահից ի վեր, ընդհուպ մինչև Լեհաստանում հայկական գաղթավայրերի վերանալը, Լվով քաղաքը ոչ միայն Լեհաստանի, այլև համայն Արևելյան Եվրոպայի հայերի ճանաչված հոգևոր կենտրոնն էր:

Լվովահայ առաքելական եկեղեցու առաջնորդները նշանակվում կամ հաստատվում էին Էջմիածնի Մայր աթոռի կողմից: 1364 թ. Լվովի, Վլադիմիրի և Լուցկի հայերին ուղղված իր կոնդակում Էջմիածնի Մեսրոպ կաթողիկոսը հայտարարում է, որ նշված քաղաքների հոգևոր առաջնորդները մինչ այդ իրենց կողմից չեն հաստատվել և այդ բարձր պաշտոնները զբաղեցրել են անօրինական կերպով: Հրաժարվելով նրանց ճանաչել, կաթողիկոսը հայտնում է, որ ինքը որոշել է որպես լվովահայ եկեղեցու առաջնորդ ուղարկել Գրիգոր եպիսկոպոսին և խնդրում է հայերին հնազանդ լինել ու հարգել նոր եպիսկոպոսին: 1375 թ. Մեսրոպին հաջորդած Կոստանդին կաթողիկոսը նամակով

[1] Нарисы исторії Львова, Львів, 1956, էջ 27:

հայտնում է, որ ինքը ճանաչում է Գրիգոր եպիսկոպոսին և նրան հաստատում է Լվովի հայոց թեմի առաջնորդ: Իր հերթին Թեոդորոս կաթողիկոսը 1390 թ. կոնդակով դիմում է լեհահայերին և հայտնում, որ ինքը չի ճանաչում Գրիգորին՝ որպես արժանավոր եպիսկոպոս և նրան փոխարինելու համար ուղարկում է տեր Հովհաննեսին:

Լվովում հայոց թեմական առաջնորդարանի հիմնումը վիթխարի դեր խաղաց համայն Եվրոպայում ամենաստվար հայկական այդ գաղթօջախի և Հայաստանի միջև բազմակողմանի կապերի իրականացման, մայր հայրենիքի հոգևոր ազդեցության ուժեղացման գործում: Հայաստանից ուղարկվող հոգևոր և այլ գրականությունը նպաստում էր ազգային կրթական գործի զարգացմանը և վերջին հաշվով՝ հայապահպանությանը:

Ընդհուպ մինչև 17-րդ դարի վերջերը և դեռ դրանից հետո էլ լեհահայ գաղութը պարբերաբար համալրվում էր գաղթականների նորանոր խմբերով: 1375 թ. Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո զգալի թվով հայեր հեռացան այնտեղից, և նրանց մի մասն ուղղվեց դեպի Արևելյան Եվրոպա, այդ թվում նաև Բուլղարիա, Վալախիա և Լեհաստան: Դրանից ուղիղ հարյուր տարի անց, 1475 թ. թուրքերի կողմից Ղրիմը նվաճելուց հետո, նշանակալից թվով ղրիմահայեր գաղթեցին նաև ուկրաինական ու լեհական շրջաններ:

16-17-րդ դդ. հայկական համայնքներ գոյություն ունեին միջնադարյան Ռեչ Պոսպոլիտայի մի քանի տասնյակ քաղաքներում ու բնակավայրերում: 13-17-րդ դարերում Արևմտյան Ուկրաինայում հայ գաթողիկոսներ կային հետևյալ քաղաքներում՝ Լվովում, Կամենեց-Պոդոլսկում, Վոլինի Վլադիմիրում, Ստանիսլավում, Լուցկում, Զամոստյեում, Յարոսլավում, Մնյատինում, Յազլովեցում, Զոլոչեւում, Ռաշկովում և այլուր: Որոշ թվով հայեր հաստատվել էին նաև Պոզնանում, Կրակովում, Լյուբլինում և Վարշավայում:

Արևմտաուկրաինական շրջանների քաղաքներում հայ բնակչությունը առավել մեծ թիվ է կազմել 17-րդ դարի առաջին կեսին: Որոշ հայ հեղինակներ, լեհահայերի թիվը ուռճացնելով, հասցրել են հարյուր հազարների, անգամ կես միլիոնի: Օրինակ, պատմաբան Ս. Պալասանյանը այն հասցնում է երկու հարյուր հազարի: Սակայն այդպես կարող են վարվել միայն նրանք, ովքեր ստույգ պատկերացում չունեն միջնադարյան Եվրոպայի և հատկապես Արևելյան Եվրոպայի քաղաքների բնակչության թվակազմի մասին: Լեհական քաղաքները առավել ևս աչքի էին ընկնում փոքրաթիվ բնակչությամբ: Մինչև 17-րդ դարի կեսերը մայրաքաղաքի դեր կատարած Կրակովի, ինչպես նաև առավել խոշոր լեհական քաղաքների բնակչությունը չի գերացանցել 25-30 հազարից: Ըստ պահպանված տեղեկությունների, Լվովի բնակչությունը 17-րդ դարի սկզբին եղել է 16-18 հազար մարդ: Ստույգ հայտնի է, որ մի որոշակի շրջանում, լեհական թագավորների արտոնագրերի համաձայն, Լվովում հայերը կարող էին ունենալ միայն 73 տուն: Ավելի մեծաթիվ հայ բնակչություն այդ ժամանակ ունեցել է Կամենեց-Պոդոլսկը, ուր ապրում էր 1200 հայկական ընտանիք, որը, ըստ լեհական աղբյուրների, կազմում էր քաղաքի ամբողջ բնակչության մոտ կեսը: Մյուս քաղաքներում (Լուցկ, Վլադիմիր, Ստանիսլավ, Զամոստյե, Ռաշկով և այլն) ապրում էին ավելի նվազ թվով հայեր: Գյուղերում հայերը չեն բնակվել, եթե հաշվի չառնենք վերևում հիշատակված Օրմիանիե և Օրմիանկի գյուղերը:

Այսպիսով, լեհահայ գաղթավայրերի բնակչությունը ամենալավ ժամանակներում, հավանաբար, մի քանի տասնյակ հազարից չի գերազանցել: Սակայն անհամեմատ մեծ է նրանց կշիռը Լեհաստանի տնտեսական և հասարական կյանքում: Դրան մեծ չափով նպաստեց այն հանգամանքը, որ Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի առանձին քաղաքներում հայկական գաղթօջախների կազմավորումից անմիջապես հետո լեհական իշխանությունների կողմից դրանց տրվեցին ներքին ինքնավարության իրավունքներ, որոնց շրջանակներում էլ ձևավորվեցին առանձին քաղաքների հայկական ազգային ինքնավար համայնքներ:

Լեհահայ համայնքները աչքի էին ընկնում բարեկեցիկ կյանքով և բարձր կազմակերպվածությամբ: Լեհահայ համայնքի ուժը, անկասկած, հիմնված էր երեք հիմնական գործոնի վրա՝ տնտեսական հզորություն, ազգային ինքնավարություն և ազգային եկեղեցի: Գաղթօջախների զարթավոր կյանքը վկայում էր այն մասին, որ դրանցից որևէ մեկի բացակայությունը գաղթօջախի համար ունենում էր ծանր, եթե չասենք ճակատագրական հետևանքներ:

Ինքնավարության իրավունքը գաղութաբնակ հայերը ստացան գաղթօջախների ձևավորումից անմիջապես հետո: Դա հնարավոր դարձավ այն պատճառով, որ նրանք բնակվեցին ոչ թե քաղաքի մյուս բնակչության հետ խառը, այլ նրա որոշակի տարածքում, որը թույլ տվեց արագորեն համախմբվել: Նվյալ վայրում ապրող հայերի բոլոր ընդհանուր հարցերը որոշվում էին կոլեկտիվ կերպով, ներկայացուցչական ժողովում: Համայնքի ներսում նրանց համախմբմանը զգալիորեն նպաստում էր այն, որ նրանց մեծ մասն ընդգրկված էր առևտրի մեջ, հետևաբար ուներ ընդհանուր շահագրգռություններ: Նվյալ դեպքում խոսքն , իհարկե, այն մասին չէ, որ գաղթօջախի ներսում գոյություն են ունեցել տնտեսական մրցակցություն և սոցիալական հակասություններ: Երկուսն էլ, անկասկած, եղել են: Խոսքը վերաբերում է այն նպաստավոր հանգամանքներին, որոնք օտար միջավայրում ապահովում էին հայկական համայնքի՝ որպես առանձին էթնիկական միավորի, ներքին միասնությունը, առանց որի հայկական գաղութները չէին կարող երկար գոյություն ունենալ:

Մինչև իշխանություններից պաշտոնական արտոնագրերով ինքնավարության իրավունք ստանալը, հայկական համայնքներն իրենք ստեղծեցին ա-

վագների խորհրդի կամ ծերակույտի նման մարմիններ, որոնք լուծում էին ներքին ընդհանուր հարցերը և համայնքի անունից զանազան հարցերի առթիվ հանդես էին գալիս իշխանությունների առջև: Նման մարմնի կազմավորումը արժանացավ իշխանությունների բարեհաճ վերաբերմունքին, քանի որ այն չէր հակասում նրանց շահերին, և ինչ-որ չափով նաև խրախուսում էր հայերին էլ ավելի զարգացնելու և ընդլայնելու արևելյան առևտուրը, որից մեծ օգուտներ էին ստանում նաև իրենք՝ տեղական իշխանավորները: Այդ մարմինները զգալիորեն դյուրացնում էին հայերից հարկեր ու տուրքեր հավաքելու գործը, հարկ եղած դեպքում նպաստում աշխարհազորի գումարմանը և ռազմական նպատակներով բնակչությունից միջոցների հավաքմանը:

Գալիցյան Ռուսիայում, Վոլինում, Վլադիմիրում և ուկրաինական մյուս շրջաններում ինքնավարության այդ ինքնաբուխ մարմինները աստիճանաբար ձեռք բերեցին նաև դատական ֆունկցիաներ, որոնք նրանք իրականացնում էին անտարակույս հայկական ազգային իրավական ավանդույթների հիման վրա, իսկ 14-րդ դ. կեսերից՝ Հայաստանից բերված և տեղական ուրույն պայմաններին հարմարեցված Մխիթար Գոշի դատաստանագրքի հիման վրա:

Գալիցիայի և Վոլինի իշխանության գոյության վերջին շրջանում հայոց ինքնավար մարմնի դատական իրավասության մեջ էին մտնում բոլոր տեսակի գործերը: Այս ավանդույթը Լվովում պահպանվեց լեհական տիրապետության հաստատումից հետո ևս և վերացվեց լեհ թագավոր Կազիմիր Յագելոնչիկի 1476 թ. հրամանագրով: Ավելի ստույգ, նշված հրամանագիրը չորս կարգի քրեական գործեր հանեց հայոց դատարանի իրավասությունից և հանձնեց քաղաքի լեհական դատարանին (լավա), որը այդ գործերի դատական քննարկումը իրականացնում էր մագդեբուրգյան իրավունքի հիման վրա:

14-րդ դ. կեսերին, լեհ ֆեոդալների կողմից Գալիցյան Ռուսիան նվաճելուց հետո, ուկրաինական հողերում բնակեցվեցին լեհ և գերմանացի գաղութաբնակներ, որոնք շուտով այնտեղ դարձան տիրապետող էթնիկական տարր: Քաղաքական իրադրության փոփոխությունն իր ազդեցությունն ունեցավ նաև հայերի դրության վրա, որի մասին վկայում է Լվովի գաղթօջախի օրինակը: 1356 թ. հունիսի 17-ին Կազիմիր 3-րդ թագավորը ստորագրեց մի արտոնագիր, որ սահմանում էր այդ քաղաքի նոր իրավական վիճակը: Քաղաքի կառավարման բոլոր նախկին հիմնարկությունները և մինչ այդ գործող ռուսական իրավունքը վերացվեցին, քաղաքը մտցվեց թագավորական կամ պետական տիրույթների կազմի մեջ և ստացավ գերմանական կամ մագդեբուրգյան քաղաքային իրավունք: Քաղաքային ինքնավարությունը ազատվում էր պետական բարձր պաշտոնյաներին, այդ թվում՝ այսպես կոչված կաշտելյաններին և վոյեվոդներին ենթարկվելուց և դրվում էր արքունիքի անմիջական ենթակայության տակ:

Արտոնագիրը միաժամանակ որոշում էր քաղաքում բնակվող այլազգիների, այդ թվում նաև հայերի առանձնահատուկ իրավական վիճակը: «Թեև այդ ամբողջ քաղաքին,- ասվում էր այնտեղ,- և նրա բոլոր բնակիչներին ընձեռում ենք հիշյալ գերմանական իրավունքը, սակայն մեր հատուկ ողորմածությամբ կամենում ենք այդ քաղաքում ապրող մյուս ազգությունների, այսինքն՝ հայերի, ռուսների (ուկրաինացիների.- Մ.Հ.), սարացինների, հրեաների, թաթարների և մյուսների իրավունքները, յուրաքանչյուրի վիճակը և պրակտիկան պահպանել անխախտ, սակայն այնպիսի հնարավորությամբ հանդերձ, որ նրանք իրավունք ունենան ներկայացված դիմումի հիման վրա օգտվել նշված մագդեբուրգյան իրավունքից և պատասխանել վոյտի առջև բոլոր այն գործերի ու հարցերի առթիվ, որոնք կառաջանան ինչ-որ վեճերից ու հանցանքներից ինչպես իրենց իսկ միջև, այնպես էլ իրենց և ուրիշների միջև: Իսկ եթե հարաժարվեն մագդեբուրգյան իրավունքից, որի համաձայն պետք է քաղաքը կառավարվի, ապա նշված ազգերից յուրաքանչյուրը՝ հայերը, ռուսինները, սարացինները, թաթարներն ու հրեաները և բոլոր նրանք, ովքեր այնտեղ ապրում են, իրավունք ունեն սեփական գործերը քննել և դրանց վերաբերյալ վճիռներ կայացնել համաձայն իրենց ժողովրդի իրավունքի, բայց քաղաքի վոյտի գլխավորությամբ»[1]:

Այսպիսով, լեհ կառավարողները փաստորեն ճանաչեցին Լվովի հայոց համայնքում արդեն վաղուց ձևավորված իրավական հարաբերությունները: Ինչ է, համայնքի իրավունքները որոշ չափով սահմանափակվեցին, որովհետև ինքնավարության ղեկավարությունը, ինչպես երևում է վերոհիշյալ արտոնագրից, կախման մեջ ընկավ քաղաքի լեհական վոյտից (դատավորից): Ջնայած արտոնագրի ընձեռած իրավունքին, լվովահայ համայնքը չէր օգտվում այն բոլոր իրավունքներից ու արտոնություններից, որոնք ուներ քաղաքի գերմանա-լեհական համայնքը: Ավելին, արտոնագիրը լեհական վոյտին այնպիսի լայն իրավունքներ տրամադրեց, որ նա կարող էր ակտիվորեն միջամտել հայկական համայնքի գործերին, հաստատել կամ մերժել հայկական դատարանի կայացրած վճիռները և այլն:

Սակայն, ինչպես ցույց են տալիս չափազանց մեծ թվով դատական գործերի արձանագրություններ, հակառակ կազիմիր 3-րդի արտոնագրի, ավելի քան մեկ հարյուրամյակ (մինչև 1469 թ.), Լվովի հայոց ինքնավարությունը պլխավորում էր հայոց վոյտը: Այդ իրավիճակը կարծես de facto ընդունում էին նաև երկրի իշխանությունները: 14-15-րդ դդ. շատ լեհ թագավորներ իրենց արտոնագրերում ոչ միայն նրանց վրա որոշակի պարտականություններ են դնում, այլև, որ խիստ տարօրինակ է, նրանց ապահովում են որոշակի եկա-

[1] Լվովի կենտրոնական պետական պատմական արխիվ (ԼԿՊՊԱ), ֆ. 52, ց. 3, պ.մ. 614:

մուտներով: Այդ են վկայում 1380, 1387 թթ.՝ երկու և 1415, 1434, 1438, 1444, 1461 թթ. թագավորական արտոնագրերը:

Սակայն Լվովի քաղաքային հարուստ վերնախավը և նրա ձեռքում գտնվող իշխանությունները միշտ էլ խեթ աչքով էին նայում հայկական ինքնավար մարմինների գործունեությանը, քանի որ դրանք նպաստում էին առանց այն էլ տնտեսապես զորեղ հայկական համայնքի ազդեցության ուժեղացմանը քաղաքում: Անընդհատ բողոքներ ուղարկելով արքունիք՝ լեհ-գերմանական վերնախավը պահանջում էր վերացնել հայկական վոյտությունը և սահմանափակել հայերի ինքնավար իրավունքները: Վերջապես, Կազիմիր Յագելոնչիկի՝ 1469 թ. ապրիլի 10-ի հրամանագրով Լվովի հայոց վոյտությունը վերացվեց այն հիման վրա, որ հայոց համայնքը չուներ համապատասխան արտոնագիր, որը հաստատեր առանձին վոյտություն ունենալու օրինականությունը: Այժմ էլ հայերը սկսեցին երկար պայքար մղել վոյտության վերականգնման համար: Հաջորդ 50 տարիների ընթացքում այդ հարցի առթիվ հրապարակվեցին ևս յոթ թագավորական հրամանագրեր, սակայն բոլորն էլ ելնում էին Կազիմիր 3-րդի վերոհիշյալ արտոնագրից, որը լվովահայ ինքնավարության գլուխ էր կարգել քաղաքի լեհական վոյտին:

Դարձյալ քաղաքի լեհական հարուստ վերնախավի համառ պահանջներից հետո 1476 թ. նույն Կազիմիր Յագելոնչիկը հրապարակեց մի նոր հրամանագիր, որի համաձայն, հողային սեփականության և այլ անշարժ ունեցվածքի, հասարակական կարգի խախտման, սպանության, կողոպուտի, բռնաբարության վերաբերյալ դատական գործերը հանձնվում էին լեհական համաքաղաքային դատարանի տնօրինությանը:

Այսպիսով, Լվովի հայոց ինքնավարության դատական իրավունքներն, ըստ էության, զգալիորեն կրճատվեցին, որը չէր կարող մնալ անհետևանք: Իրենց իրավունքների պաշտպանության համար Լվովի հայերի մղած համառ պայքարի հետևանքով հայերի ինքնավար իրավունքների սահմանափակման հարցը երկար ժամանակ պարբերաբար քննարկվում էր լեհական արքունիքում: 1518 թ. հոկտեմբերի 19-ին Սիգիզմունդ I-ինը Լվովի հայոց ավագանուն հանձնարարում է թարգմանել լեհահայերի առանձնահատուկ պայմաններին հարմարեցված Մխիթար Գոշի դատաստանագիրքը, որը Լեհաստանում կոչվում էր Հայկական ստատուտ, և ներկայացնել իր հաստատմանը: 1519 թ. այն հաստատվեց լեհական սեյմի և թագավորի կողմից, ընդ որում Սիգիզմունդը հրամայեց հայերի հետ եղած համապատասխան դատական գործերում խստիվ հետևել ստատուտի նորմերին:

Սիգիզմունդ Ավգուստ թագավորի 1563 թ. հրամանագիրը սահմանում էր, որ Լվովի հայոց դատարանը պետք է կազմված լինի 12 երդվյալ դատավորներից (չհաշված այնտեղ նախագահող լեհ վոյտին), ընդ որում, յուրաքանչյուր տարի պետք է աշխատեին վեցը:

Հայ դատավորներն ընտրվում էին համայնքի առավել հարուստ վաճառականական վերնախավից: Դառնալով դատավոր՝ նրանք չէին դադարեցնում իրենց առևտրական գործունեությունը, մանավանդ որ դատարանում կատարած իրենց աշխատանքի համար առանձնապես մեծ վարձատրություն չէին ստանում: Վերոհիշյալ հրամանագրի համաձայն, յուրաքանչյուր դատավոր կարող էր մեկ տարի աշխատել դատարանում, իսկ հաջորդ տարին զբաղվել առևտրով: Այս սկզբունքը տարածվեց լեհահայ բոլոր գաղթօջախներում:

17-րդ դարի վերջին հայ դատավորների իրավունքները փոքր-ինչ ընդլայնվեցին: 1686 թ. փետրվարի 12-ին Յան Սոբեսկին հայ ավագներին (այդպես էին կոչվում հայ դատավորները) շնորհեց «հայ ժողովրդի դատավորներ» անունը, յուրաքանչյուր տվյալ տարում աշխատող վեց հայ դատավորներին ազատեց հարկերից (ի դեպ, հարկերից ազատվում էին լեհական բոլոր 12 դատավորները) և նրանցից մեկին թույլ տվեց մասնակցելու քաղաքի ֆինանսական հանձնաժողովի աշխատանքներին: Դա որոշակի նշանակություն ունեցավ նրանց հեղինակությունը բարձրացնելու համար:

Պահպանված պատմական նյութերը ցույց են տալիս, որ լեհահայ մյուս գաղթօջախներում դատարանակազմության մեջ փոփոխություններ չեն կատարվել: Ավելին, ի տարբերություն Լվովի հայոց ինքնավարության, մյուս գաղթօջախներում ինքնավարությունը գլխավորում էին միայն հայ վոյտերը կամ քաղաքապետները, որոնք օգտվում էին էլ ավելի լայն իրավունքներից, քան Լվովում:

Հայկական ինքնավարության վարչական և դատական կառուցվածքը հիմնված էր կազմակերպված ազգային համայնքի վրա: Համայնքների կենսունակության և ամրության համար բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ այն, որ համայնքների կազմավորմանը զուգահեռ այնտեղ սկսեցին գարգանալ ազգային հասարակական և մշակութային կյանքը, հայկական ազգային սովորույթներն ու ավանդույթները: Եկեղեցական արարողությունները կատարվում էին հայոց առաքելական եկեղեցու սահմանած կարգի համաձայն: Բոլոր եկեղեցիները գտնվում էին Էջմիածնի Մայր Աթոռի ենթակայության տակ, որը նպաստում էր հայրենիքի հետ հոգևոր կապերի ամրապնդմանը:

Համայնքի ներսում որպես ընդհանուր խոսակցական լեզու երկար ժամանակ չարունակում էր մնալ հայերենը: Հայկական գաղթօջախներում գարգանում էին ազգային արվեստը, ճարտարապետությունը, գեղարվեստական արհեստները, պոեզիան, պատմագրությունը, իրավագիտությունը և հոգևոր ու նյութական մշակույթի այլ ճյուղեր: Գաղթօջախների մշակույթի՝ մինչև մեր օրերը պահպանված առանձին հուշարձաններ լավագույն վկայությունն են այն բանի, որ մշակութային կյանքն այնտեղ զարգանում էր հայկական դատավոր ավանդույթների հիման վրա:

Այսպիսով, նոր միջավայրի պայմանները բավական նպաստավոր եղան համայնքներում ազգային հիմնարկների առաջացման և ընդհատված ազգային հասարակական կյանքի վերսկսման համար: Գալիցիայի և Վոլինի իշխանները, ապա և լեհ կառավարողները առանձնապես չէին միջամտում համայնքի ներքին կյանքին, չհաշված 1469 և 1476 թթ. Լվովի հայոց ինքնավարության որոշ սահմանափակումը: Հասկանալի է, որ հայոց գաղթօջախների բնակչությունը մյուս հպատակների հետ համահավասար պարտավոր էր պահպանել պետության օրենքները և սահմանված կարգը: Մյուս բոլոր հարցերում նա գրեթե լիովին ինքնուրույն էր:

Ներքին կյանքի կարևոր հարցերը քննարկվում էին համայնքի ներկայացուցիչների ընդհանուր ժողովներում: Նույնիսկ 16-17-րդ դդ., երբ վաղուց արդեն ձևավորվել էին ինքնավարության մարմինները, ընդհանուր ժողովները տակավին չէին կորցրել իրենց նշանակությունը գաղթավայրերի հասարակական կյանքում: Համայնքի ժողովներում քննարկվում էին կարևոր նպատակներով դրամական հանգանակությունների ու նվիրատվությունների կազմակերպման (եկեղեցիների, դպրոցների, հիվանդանոցների շինարարություն և վերանորոգում), հասարակական բարեգործության, արտաքին թշնամուց քաղաքը պաշտպանելու (աշխարհազորի կազմակերպում, զենքի հայթայթում և այլն), հարկերի, տուրքերի հավաքման և շատ ու շատ այլ հարցեր:

Համայնքների ժողովներում առաջադրվում էին ինքնավարության ղեկավար գործիչների թեկնածությունները, մշակվում համայնքի դիրքորոշումներն առանձին երևույթների և իրադարձությունների վերաբերյալ:

Հայկական համայնքներն ակտիվորեն մասնակցում էին քաղաքների հասարակական-քաղաքական կյանքին: Քանի որ հայերն ունեին խոշոր նյութական միջոցներ, բավական զգալի էր նաև նրանց բաժինը ընդհանուր քաղաքային դրամական ֆոնդի գոյացման մեջ: Այդ միջոցները սովորաբար օգտագործվում էին տվյալ քաղաքի բարեկարգման, մաքրության պահպանման, պաշտպանական ամրությունների կառուցման և այլ նպատակների համար: Այդ պատճառով էլ լեհական քաղաքային իշխանությունները ստիպված էին հաշվի նստել հայկական համայնքի հետ: Լվովի քաղաքապետարանը, օրինակ, 1662 թ. սահմանեց մի կարգ, ըստ որի, համաքաղաքային ժողովներում առաջին տեղն ու ձայնը պատկանում էր քաղաքային լավային (դատարանին), երկրորդը՝ հայոց համայնքի ներկայացուցիչներին («Հայ ժողովրդի ավագանուն»), մնացած տեղերն ու ձայները հաջորդաբար՝ վաճառականներին, արհեստավորներին, ռուսիններին և այլն[1]:

[1] Учреждения Западной Украинны до восстановления ее в едином Украинском Советском социалистическом государстве, Львов, 1955, с. 15.

1656 թ. Լվովի քաղաքապետարանի կազմած պաշտոնական ցուցակի համաձայն, քաղաքի շարժական և անշարժ ունեցվածքի արժեքը կազմել է 5 մլն 247 հազ. 479 զլոտի, որից 1 մլն 247 հազ. զլոտին կամ մոտ 24,5 տոկոսը կազմում էր հայերի բաժինը: 1648 թ. Լվովում հաշվվում էր ընդամենը 254 տուն, որից 164-ը պատկանում էր կաթոլիկներին, 70-ը՝ հայերին, 20-ը ուկրաինացիներին[1]: Այս տներում էին ապրում քաղաքի առավել հարուստ բնակիչները, որոնց ձեռքում գտնվում էին քաղաքի գրեթե ամբողջ էկոնոմիկան և կառավարչությունը:

Հայկական ինքնավարության մարմինների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ստեղծվել էին հիմնականում մագդեբուրգյան իրավունքի քաղաքային հիմնարկությունների օրինակով: Սակայն դրանց շատ տարբեր հիշեցնում էին միջնադարյան Հայաստանի քաղաքային վարչական ու դատական կառուցվածքներում օգտագործված օրինակներ: Հայկական ինքնավարության ղեկավար մարմնի կամ դատարանի անդամները կոչվում էին «հայոց ավագներ» կամ «հայոց ավագանի»: Հայոց քաղաքապետի կամ վոյտի տեղակալը կոչվում էր «երեսփոխան» և լեհերեն կազմված արձանագրությունների մեջ այդպես էլ օգտագործվում էր հայերեն, առանց թարգմանվելու: Այն սենյակը, որտեղ տեղի էին ունենում հայոց դատարանի նիստերը, կոչվում էր «խուց», չնայած այն գտնվում էր ոչ թե եկեղեցում, այլ քաղաքապետարանի շենքում:

Անիի և մյուս քաղաքների հայերը, գաղթելով, Արևմտյան Ուկրաինա և Լեհաստան, իրենց հետ այնտեղ տարան Հայաստանի միջնադարյան շատ դատական կառուցվածքներ ու իրավական հասկացություններ: Ստանիսլավ քաղաքի հայկական ինքնավարության կառուցվածքներին քաջատեղյակ լեհ պատմաբան Զեսլավ Խովանեցը այդ առթիվ գրում է. «Կառուցվածքի (ինքնավարության –Մ.Հ.) որոշակի արտաքին ձևեր, ինչպես վոյտը, լավնիկը, խորհուրդը, ավագները, (հայերը) փոխ էին առել մագդեբուրգյան իրավունքից: Բայց դա ստանիսլավյան նորամուծություն չէր, այլ հայկական իրավունքի սկզբունքների դարավոր հասարակական կյանքի արտահայտություն՝ մագդեբուրգյան քաղաքային հիմնարկությունների ֆոնի վրա, որոնց գոյության պայմաններում էլ կազմավորվեցին հայկական կազմակերպության հատուկ ձևերը, որոնք արտաքուստ հիշեցնում էին մագդեբուրգյան հիմնարկությունները, իսկ ներքուստ, հասկացություններով և նշանակմամբ, համապատասխանում էին հայկական իրավունքին»[2]:

[1] Кривонос Н., Грабовецкий В., Армянская колония во Львове в XIV-XVIII вв., Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, թիվ 12, էջ 6:

[2] Chowaniec Cz., Ormianie w Stanislawowie w XVII i XVIII wieku, Stanislawo'w, 1928 (էջերը չեն համարակալված):

Լեհ հեղինակը միանգամայն ճիշտ է հասկացել լեհահայոց ինքնավարության կառուցվածքների սերտ կապը հայկական քաղաքային իրավական ավանդույթների հետ:

Ինքնավարության ղեկավարը, ինչպես ասվեց, հայոց վոյտն էր կամ քաղաքապետը, որը ղեկավարում էր քաղաքապետարանի կամ դատարանի ամբողջ գործունեությունը և հանդիսանում էր հայոց համայնքի գլխավոր դատավորը: Նա, ինչպես և դատարանի մյուս անդամները, պարտավոր էր լավ իմանալ Հայկական սոատուտը (դատաստանագիրքը): Նրանք պարտավոր էին նաև խստությամբ պահպանել դարերի ընթացքում մշակված և օրենքի ուժ ստացած բոլոր սովորույթներն ու ավանդույթները: Երբ վոյտը բացակայում էր քաղաքից, իր պարտականությունները վաղօրոք դնում էր դատարանի որևէ անդամի վրա՝ նրան հանձնելով վոյտական նշանը:

Հայոց ինքնավարության մարմինները կազմվում էին ամենամյա ընտրությունների միջոցով: 1563 թ. պետրկովյան սեյմի որոշման համաձայն, Լվովի լեհական քաղաքապետարանը պարտավոր էր, ըստ թագավորական կարգադրության, օգնել հայկական ինքնավարության մարմինների ընտրությունների բնականոն անցկացմանը: Նույն սեյմը հաստատել է Լվովի հայերի վաղեմի իրավունքը 12 դատավոր ընտրելու մասին և սահմանել, որ այդ դատավորները կարող են ընտրված համարվել միայն թագավորին հավատարիմ ծառայելու մասին երդում տալուց հետո: 1576 թ. Ստեփան Բատորի թագավորը Կամենեց-Պոդոլսկի հայերի իրավունքներն ու արտոնությունները հաստատելու ժամանակ սահմանեց, որ հայերը պետք է ամեն տարի որոշակի ամիս ու օր հավաքվեն և համընդհանուր համաձայնությամբ ընտրեն իրենց վոյտին և երդվյալ դատավորներին: Նման «որոշումներ» կան նաև Ցան Զամոյսկու 1589 թ. արտոնագրում, որը վերաբերում էր Զամոստիեի հայկական համայնքի իրավունքների հաստատմանը:

Ընտրությունները տեղի էին ունենում հանդիսավոր պայմաններում: Այդ օրը հայկական համայնքում համարվում էր տոնական օր: Եկեղեցում տեղի ունեցած հանդիսավոր պատարագից հետո ընտրողները հավաքվում էին քաղաքապետարանում և լսում էին տվյալ տարում գործող հայոց քաղաքապետարանի կամ դատարանի հաշվետվությունը: Եկեղեցական միջոցների ծախսման ու եկամուտների մասին հաշիվ էր տալիս վոյտի տեղակալը: Այս հաշվետվությունների քննարկման ժամանակ ներկա էին լինում վոյեվոդության ստարոստայի կամ քաղաքատեր-ֆեոդալի ներկայացուցիչները (սուբդելեգատներ), որոնք որոշումներ ընդունելու ժամանակ ունեին վճռական ձայնի իրավունք: Հաշվետվությունները հաստատվելուց հետո սկսվում էին ընտրությունները, որոնք տեղի էին ունենում գաղտնի քվեարկությամբ: Բացի վոյտից, դատարանի կամ քաղաքապետարանի անդամներից, ընտրում էին

նաև գրագիր, որը կազմում էր արձանագրություններն ու փաստաթղթերը և կատարում հայոց իրավունքի մեկնաբանի դերը:

Ընտրությունների արդյունքները հաստատվում էին ստարոստայի կամ քաղաքատեր-ֆեոդալի կողմից: Բայց դա տեղի էր ունենում այն բանից հետո, երբ նորընտիր կազմը հավատարմության երդում էր տալիս: Երդման արարողությունը տեղի էր ունենում հետեւյալ կերպ. լեհական քաղաքապետարանի ընտրություններից հետո թագավորական ստարոստան քաղաքային երկու խորհրդականների հետ միասին ժամանում էին հայոց եկեղեցի, որտեղ նրանց սպասում էին նորընտիր հայ դատավորները: Վերջիններս հենց այդտեղ էլ երդում էին տալիս:

Ինքնավարության մարմինների ղեկավար պաշտոնները գտնվում էին հայ բնակչության առավել հարուստ ներկայացուցիչների ձեռքում: Ինչպես երևում է Զամոստիե քաղաքի հայոց քաղաքապետարանի մատյաններից, տեղի վոյտությունը 17-րդ դ. տասնյակ տարիներ գտնվել է միևնույն մեծահարուստ ընտանիքների (Կիրկորովիչների, Բալեյովիչների, Ալթունովիչների, Օվանիսովիչների, Բարտաշովիչների) ձեռքում:

Իրենց ձեռքում կենտրոնացնելով ինքնավարության իշխանությունը, նրանք հաճախ էին այն օգտագործում անձնական նպատակներով՝ ազատվում էին հարկերից ու պարհակներից, ձեռք բերում առևտրի ավելի նպաստավոր պայմաններ, հնարավորություն էին ստանում շփվելու լեհ խոշոր մագնատների, անգամ արքունիքի ու թագավորի հետ, օգտվում էին նրանց բացառիկ հովանավորությունից և այլն: Բացի այդ, ինքնավարության մարմիններում կատարած ծառայության համար նրանք լրացուցիչ վարձատրություն էին ստանում: Կազիմիր Յագելոնչիկ թագավորի 1469 թ. որոշման համաձայն, երբ Լվովի հայոց դատարանում քննարկվում էին տեղի հայերին վերաբերող գործեր, երկու կողմերի մուծած դատական ծախսերի գումարը ստանում էին հայ դատավորները, իսկ երբ քննարկվող գործը վերաբերում էր դրսից եկած հայերին, այսպես կոչված «հյուրերին», ապա այդ գումարը հասնում էր տեղի հայոց դատարանում նախագահող լեհ վոյտին: Լվովի հայոց դատարանի գրագիրը յուրաքանչյուր դատական գործի համար ստանում էր մեկ դրիվնա, իսկ յուրաքանչյուր դատավոր՝ երեք դրիվնա:

Քաղաքատեր-ֆեոդալներն առանձնացնում էին հատուկ անշարժ ունեցվածք (հողամաս, ալրաղաց, կրպակ, գարեջրատուն և այլն), որից ստացված եկամուտները տրամադրում էին հայ դատավորներին՝ դատարանում նրանց կատարած աշխատանքի համար:

Հայոց ինքնավարության մարմինների վերաբերյալ նյութերը վկայում են, որ նրանք, բացի դատականից, իրականացնում էին նաև այլ ֆունկցիաներ: Այդ մասին պերճախոս կերպով վկայում է 1572-1619 թթ. Լվովի դատա-

բանում գրագիր և քարտուղար աշխատած Մինաս Թոքատեցու բանաստեղծությունը: Ահա մի հատված նրանից.

Ի յայս աշխարհս Իլախի,
Լով կոչեալ այսմ քաղքի,
Յաբեթական տոհմէ ցեղի,
բնակեալ կան Հայոց ազգի:
Թագաւորայ հրամանաւ,
զազգս դատեն դատաստանաւ.
կաշառ չառնուն նոքա բընաւ,
ոչ երեսպաշտ կամ սուտն իրաւ.
եւ թէ բարձաւ թագաւորութիւն
հայոց ազգի իշխանութիւն...
Զհայոց ազգն դոքա դատան,
ուխտ և դաշինք կու հաստատեն,
Ջապրստամբեալսն խրատեն,
զկարգ եւ զսահմանքն կու պընդեն:
Երկոտասան դատաւորք են,
զծուռն զշիտակն դոքա քննեն,
Ջմեղապարտս վիրաւորեն,
եւ զուղիղսն ազատեն...[1]:

Լեհաստանի տարբեր քաղաքների հայկական ինքնավարության մարմինների գործունեության վերաբերյալ նյութերը որոշակիորեն ցույց են տալիս, որ հայկական դատարաններն իրականացնում էին հետևյալ չորս հիմնական գործառույթները.

1. դատական իշխանության իրականացում,

2. հայոց համայնքին կամ նրա առանձին անդամներին ու խմբերին լեհական իշխանությունների առջև ներկայացնելը,

3. առևտրաֆինանսական և քաղաքացիական գործերի միջնորդություն,

4. հայոց եկեղեցու և ազգային այլ հիմնարկների գործերի տնօրինություն:

Հայկական ինքնավարության մարմինների գործունեության մեջ, բնականաբար, մեծ տեղ էր գրավում դատական գործերի վարումը: 16-17-րդ դդ. այդ մարմինների դատական իշխանությունը տարածվում էր այն բոլոր հայե-

[1] Ակինեան Ն., Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 78:

րի վրա, որոնք մշտապես բնակվում էին Ռեչ Պոսպոլիտայի քաղաքներում: Բացառություն էին կազմում գյուղերի հայ բնակիչները և նրանք, ովքեր ընդունել էին կաթոլիկություն և օգտվում էին մագդեբուրգյան իրավունքից: Սակավաթիվ հայ գյուղացիների դատական հարցերը լուծում էր ֆեոդալ-կալվածատերը, իսկ էլ ավելի փոքրաթիվ հայ հողատերերի դատական հարցերը՝ այսպես կոչված զեմսկի դատարանը: Կաթոլիկ հայերի գործերը քննարկվում էին լեհական դատարանում՝ լավայում:

Ի՞նչ էր հայկական ստատուտը, որի հիման վրա քննարկվում էին լեհահայոց դատական գործերը: Թե ո՞վ և ե՞րբ է կազմել այդ դատաստանագիրքը, հայտնի չէ: Բայց հաստատապես կարելի է ասել, որ 14-րդ դ. կեսերին, երբ լեհ ֆեոդալները գրավեցին Գալիցիայի և Վոլինի տարածքները, այնտեղ գործող հայկական դատարաններն արդեն օգտվում էին հայկական ստատուտից: Այն պաշտոնապես հաստատվեց միայն 1519 թ. մարտի 5-ին լեհական սեյմի և Սիգիզմունդ 1-ինի կողմից: Ստատուտը կիրառվել է հայկական դատարաններում ընդհուպ մինչև Լեհաստանի բաժանումը և լեհահայոց ինքնավարության վերացումը (18-րդ դ. վերջերը):

Ստատուտը բաղկացած է երկու առանձին մասերից: Առաջին մասը պարունակում է 10 չհամարակալված հոդված: Առաջին և երկրորդ հոդվածներում նշվում է, որ ստատուտը հրապարակվել է անցյալում, Հայաստանի թագավորների կողմից: Մյուս հոդվածներում չարադրված է դատավարման կարգը՝ արդարադատության իրականացումը, մեղադրյալին արդարացնելու նպատակով երդում ընդունելը, վկաների կողմից ցուցմունքներ տալը և այլն: Երկրորդ մասը բաղկացած է համարակալված 124 հոդվածից: Այստեղ չարադրված են ունեցվածքային հարաբերությունների իրավական նորմերը, ընտանիքի և ամուսնության հարցերը, զանազան հանցանքների համար պատժաչափերը:

Հայկական ինքնավարության վերացումից հետո ստատուտը մոռացության մատնվեց: Միայն 19-րդ դ. կեսերին նրա ուսումնասիրությամբ սկսեցին զբաղվել լեհ, ավստրիացի ու գերմանացի գիտնականները: 1843 թ. լեհ հետազոտող Վ. Վոյչիցկին առաջին անգամ հրատարակեց նրա բնագիրը լեհերեն լեզվով: Բայց դա Սիգիզմունդ 1-ինի հաստատած բնագիրը չէր: Իսկական բնագիրը հայտնաբերվեց Լվովի արխիվում՝ վիեննացի պրոֆեսոր Ֆերդինանդ Բիշոֆի կողմից: Հետագայում ստատուտի և նրա աղբյուրների ուսումնասիրությամբ զբաղվեցին գերմանացի գիտնականներ Գ. Բրունսը և Ե. Սախաուն (համատեղ), Ի. Կոհլերը, Ի. Կարստը և ուրիշներ: Առավել խորությամբ այն հետազոտել է լեհական իրավունքի խոշոր պատմաբան Օ. Բալցերը, որը 1910 թ. հրատարակել է «Հայկական ստատուտ» խիստ արժեքավոր աշխատությունը:

Հայկական ինքնավարության մարմինները լեհական իշխանությունների առջև ներկայացնում էին իրենց համայնքներին: Այդ դերում նրանց կարելի

էր տեսնել նորընտիր լեհական թագավորների թագադրության ժամանակ, ուր նրանց ներկայացուցիչները մեկնում էին, որպեսզի նոր միապետին հավաստիացնեն, որ հայերը միշտ հավատարիմ են եղել Ռեչ Պոսպոլիտային և նրա թագավորներին և որ նույն ձևով նրանք ծառայելու են նաև նոր թագավորին: Այդտեղ էլ նոր միապետի հաստատմանն էին ներկայացնում իրենց բոլոր արտոնագրերը, որ նրանք ստացել էին նոր միապետի նախորդներից, ինչպես նաև խնդրում էին նոր արտոնություններ ու իրավունքներ: Օրինակ, 1633 թ. Վլադիսլավ 4-րդի թագադրությանը մասնակցեցին Լվովի հայոց համայնքի ներկայացուցիչներ Քչիշտոֆ Թումանովիչը և Դանիել Գոլուբովիչը: Մարտի 10-ին նրանք համայնքի անունից հավատարմության երդում տվեցին թագավորին և ստացան իրենց բոլոր իրավունքների ու արտոնությունների հաստատումը:

Քանի որ հայերի առևտրական շահերն առնչվում էին Լեհաստանի հարևան պետությունների հետ, ապա երբեմն նրանք ճոխ ընդունելություններ էին կազմակերպում այդ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաների և նույնիսկ ղեկավարների պատվին: Այսպես, 1497 թ. Լվովի հայոց ավագանին ընդունելություն կազմակերպեց ի պատիվ Խաչակիրների միաբանության մեծ մագիստրոս Իոհանի, որը՝ որպես Լեհաստանի վասալ, Լվովից պետք է մեկներ Թուրքերի դեմ մղվող պատերազմին մասնակցելու: 1572 թ. սեպտեմբերի 18-ին Կամենեց-Պոդոլսկի հայոց քաղաքապետարանի ղեկավարները նման ընդունելություն կազմակերպեցին Վալախիայի վոյեվոդ Բոգդանի պատվին, որն այդ ժամանակ հյուրընկալվում էր Պոդոլիեի ստարոստա իշխան Պոտոցկու մոտ:

Լեհական իշխանությունները սովորաբար հաշվի էին նստում հայկական համայնքի ներկայացուցիչների հետ: Այդ են վկայում բազմաթիվ փաստեր: Այսպես, 1678 թ. Լվովի քաղաքապետարանը սկսեց անօրինական հարկեր հավաքել հայերից: Եվ չնայած վերջիններս մուծեցին այդ գումարները, բայց քաղաքապետարանը երկար ժամանակ չէր ուզում ազատել մի քանի հայ ավագների, որոնց բանտարկել էին, հավանաբար, այդ կամայականության դեմ բողոքելու համար: Հայերը ստիպված էին դիմել թագավորի օգնությանը: Այդ գործը հետաքննելու համար Յան Սոբեսկին 1679 թ. ստեղծում է մի շատ հեղինակավոր հանձնաժողով, որն ուսումնասիրում է գործը և թագավորին զեկուցում քաղաքապետարանի գործողությունների անօրինականության մասին: Դրա հիման վրա Սոբեսկին հրամայում է մեկ ամիս ժամկետով բանտարկել Լվովի լեհական քաղաքապետին և քաղաքային խորհրդի անդամներին, ինչպես նաև նրանց հաշվին հազար դուկատ վճարել տուժածներին, իսկ հինգ հարյուր գրիվնա էլ քաղաքի պաշտպանության ֆոնդին: Միաժամանակ թագավորը

խստիվ նախազգուշացնում է, որ այսուհետև նրանք հարկեր չսահմանեն հայերի վրա, առանց վերջիններիս ավագանու իրազեկության[1]:

Հայոց ինքնավարության մարմինները, իհարկե, չէին փոխարինում պետական իշխանություններին: Ինքնավարության գոյության ամբողջ ժամանակաշրջանում հայերը ղեկավարվում էին լեհական պետության օրենքներով և ենթարկվում լեհական իշխանություններին: Հանդես գալով համայնքների ներկայացուցիչների և ղեկավարների դերում՝ ինքնավարության մարմինները կարգավորում էին համայնքի իրավական և այլ հարաբերությունները լեհական իշխանությունների հետ:

Ինքնավարության մարմինները կամ հայոց դատարաններն ու քաղաքապետարանները շատ հաճախ հանդես էին գալիս միջնորդական դերով, հաստատում կամ վավերացնում առք ու վաճառքի, կտակների վերաբերյալ ակտերը, ամուսնական կամ այլ կարգի պայմանագրերը, կազմում ու հաստատում պահպանվող տեղեկանքներ, հավատարմագրեր, լիազորագրեր և այլ փաստաթղթեր: Հայերի միջև կնքված պայմանագրերն ու գործարքները իրավական ուժ էին ստանում միայն այն ժամանակ, երբ գրանցվում էին քաղաքապետարանների կամ դատարանների արժանագրական մատյաններում և վավերացվում էին նրանց կնիքներով:

Արժանագրական մատյաններում հազարավոր գրանցումներ կան առևտրաիրավական գործարքների վերաբերյալ: Դրանց մեջ արտացոլվել են հայերի կողմից իրագործված առևտրական գործարքների ամենատարբեր ձևեր, սկսած վաճառված ապրանքի դիմաց գինը կանխիկ գումարով ստանալուց մինչև ապրանքն ապրանքի հետ համարժեք փոխանակումը կամ ապրանքների փոխադարձ մատակարարումը:

Պայմանագրերի վերաբերյալ վեճեր առաջանալու դեպքում դատարանը ոչ միայն հաստատում էր կնքված փաստաթղթի վավերականությունը և մեկնաբանում նրա մեջ պարունակվող պայմանները, այլև ծագած վեճը կարգավորելու նպատակով հանդես էր գալիս որպես միջնորդ:

Այսպիսով, դատական ֆունկցիաների հետ մեկտեղ իրականացնելով նաև միջնորդական ֆունկցիա, ինքնավարության մարմինները լայն հնարավորություններ էին ստանում ակտիվորեն ազդելու հայերի տնտեսական, իրավական և հասարակական հարաբերությունների վրա, դրանք կարգավորելու ազգային իրավական նորմերի ու ավանդական սովորույթների հիման վրա:

Հայկական ինքնավարության մարմինների գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը հայոց եկեղեցու ունեցվածքային և այլ հարցերի անօրինությունն էր:

---

[1] Լվովի Գիտական գրադարան, ձեռագրապահոց, ձեռ. N°1727, II, էջ 148:

Ի տարբերություն բուն Հայաստանի եկեղեցիների, որոնք ունեցվածքային հարցերում լրիվ ինքնուրույն էին, լեհահայ եկեղեցին այդպիսի ինքնուրույնություն չուներ և ամբողջապես գտնվում էր հայոց ինքնավարության մարմինների անմիջական վերահսկողության տակ: Մասնավորապես, եկեղեցին չէր կարող ինքնուրույն կերպով տնօրինել իր ունեցվածքը, քանի որ այն համարվում էր տեղի հայոց համայնքի սեփականությունը և գտնվում էր համայնքի աշխարհիկ իշխանությունների տնօրինության տակ: Վերջիններս տնօրինում էին նաև եկեղեցու այնպիսի գործեր, ինչպես թեմի առանձին եկեղեցիներում հոգևորականներ նշանակելը, եկեղեցու սպասավորների նկատմամբ արդարադատության իրականացումը, եկեղեցական շինարարությունը և այլն:

Համայնքի աշխարհիկ իշխանությունների և եկեղեցու փոխհարաբերությունների մասին բավական լավ պատկերացում է տալիս լվովահայ թեմի առաջնորդ ընտրվելու կապակցությամբ Խաչատուր եպիսկոպոսի 1467 թ. տված խոստումը. «Եվ ես նուաստ եպիսկոպոս Խաչատուր խոստացայ կատարել առաջի Աստծոյ. նախ՝ եկեղեցիներին և ընչիցն հրաման չանենք առանց տանուտերաց հրամանին: Երկրորդ, որ քահանայից մեջն ձեռնամուխ չի լինիմք. և ոչ՝ նոքա իմ մուտքաց, որպես առաջի հայրապետութեան ժամն էր: Երրորդ, որ զայս տեղացս իրլեցանուն զգատն ու դատաստան ի տեղս այնենք հետ տանուտիրացն և այլ տեղ չի ձեռնենք: Չորրորդ, որ զքահանայ կամ զսարկաւագ առանց տանուտիրաց հրամանին չի այնենք...Այլ և եկեղեցական և հայրապետ դնելու հրամանք չանենք առանց տանուտիրացն հրամանին: Եւ այլ ինչ բան որ լինայ կամ դատաստան, հոգևոր կամ մարմնաւոր, առանց տանուտիրացն չայնենք»[1]*:*

Ազգային ինքնավար մարմիններում կային հատուկ պաշտոնյաներ, որոնք նրանց անունից տնօրինում էին եկեղեցու, վանքերի և պաշտամունքի այլ հիմնարկների ունեցվածքը, զբաղվում եկեղեցական շինարարությամբ և վերանորոգմամբ, պահում էին երաժիշտների և երգիչների հատուկ խումբ՝ կրոնական տոների և ծեսերի համար: Նրանք կոչվում էին պրովիզորներ:

Լեհահայ եկեղեցու գործերի տնօրինման ասպարեզում ինքնավար մարմինների դերն ավելի մեծացավ հատկապես եկեղեցական ունիայի դեմ հայ բնակչության մղած պայքարի սկզբնական շրջանում (17-րդ դ. առաջին երեսնամյակ): Հենվելով հայ բնակչության լայն զանգվածների վրա՝ ինքնավարության ղեկավարները պայքարում էին ազգային եկեղեցու իրավունքների համար, ընդդեմ ճիզվիտների ու կաթոլիկական ռեակցիայի, որոնք փորձում

[1] Գ. Ա. Ա. (Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանց), Նիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն, «Ազբարատ», Վաղարշապատ, 1877:

էին կաթոլիկական դավանանքը բռնությամբ տարածել հայ բնակչության մեջ:

Ունիայի իրականացումից հետո դեռ որոշ ժամանակ հայկական ինքնավարության մարմինները տնօրինում էին եկեղեցու գործերը:

17-րդ դ. 70-80-ական թվականներին կաթոլիկ եկեղեցու ազդեցության ուժեղացման հետևանքով լեհահայոց ունիատական (կաթոլիկ) եկեղեցին դուրս բերվեց ինքնավար մարմինների ենթակայությունից: 1684 թ. Հռոմից Լվով ժամանած կաթոլիկ եպիսկոպոս Դեոդատ Ներսեսովիչը տեղի հայոց ավագանուն այլևս թույլ չտվեց զբաղվելու եկեղեցու գործերով, իսկ հաջորդ թվականին վերցրեց նաև եկեղեցու պահեստների բանալիները, որից հետո դրանք այլևս երբեք նրանց չվերադարձրին: Դա ուժեղ հարված էր հայկական ինքնավար հիմնարկությունների ազդեցությանը, որոնք առանց այն էլ կորցրել էին իրենց երբեմնի նշանակությունը տնտեսական և քաղաքական անկում ապրող Ռեչ Պոսպոլիտայից հայերի զանգվածաբար հեռանալու հետևանքով:

Ազգային ինքնավար մարմինների ազդեցությունից հայոց եկեղեցու դուրս գալը ծանր հետևանքներ ունեցավ Լեհաստանի հայկական գաղթավայրերի ճակատագրի վրա: Գրեթե լիովին դադարեցին այդ գաղթավայրերի և Հայաստանի միջև եղած դարավոր կապերը, աստիճանաբար ուժեղացավ կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը տեղի հայ բնակչության հասարակական-մշակութային կյանքի վրա:

***

Վերևում արդեն նշվեց այն վիթխարի դերը, որ կատարում էին Գալիցիայի ու Վոլինի, Պոդոլիեի, Մոլդովայի և Հարակից տարածաշրջանները Արևելքի ու Արևմուտքի միջև երկար դարերի ընթացքում կատարված ապրանք-փոխանակության մեջ: Դա մի խոշոր հանգույց էր, որը Եվրոպան կապում էր Արևելքի երկրների հետ:

Մյուս կողմից, այդ տարածաշրջանը բացառիկ կարևոր դեր խաղաց Արևմտյան Եվրոպան Ասիայից հաջորդաբար արշավող խառնիճաղանջ ցեղերի ասպատակություններից պաշտպանելու գործում՝ կատարելով հիրավի, հզոր բերդապարսպի դեր: Մոնղոլները, թաթարները, ղիփչաղները, թուրքերը մեծ բազմություններով արշավում էին դեպի արևմուտք և, ջարդուփշուր լինելով, իրենց գերեզմանն էին գտնում մոլդովական, ուկրաինական ու լեհական հողերում: Նման պայմաններում միայն հայերին էր վիճակված մահացու վտանգներով լի այդ տարածաշրջանում խիզախորեն առաջնորդել բեռներով բարձված իրենց քարավանները և իրականացնել ապրանքափոխանակությունը Արևելքի ու Արևմուտքի միջև: Գնահատելով հայերի խաղացած նշանակալի դերը լեհաստանի արևելյան առևտրում՝ լեհական իշխանությունները ոչ

միայն խրախուսում էին նրանց զանգվածաբար հաստատվելուն իրենց քաղաքներում, այլև շնորհում տարբեր իրավունքներ ու արտոնություններ, որոնք նպաստում էին նրանց տնտեսական զարգացմանը:

Սակայն ելնելով լեհ ֆեոդալների իշխանության ամրապնդման շահերից, լեհական թագավոր Կազիմիր III-ը 1356 թվականին արևմտաուկրաինական քաղաքներին շնորհեց մագդեբուրգյան իրավունք, որից օգտվում էին միայն կաթոլիկները, այսինքն՝ լեհերը և գերմանացիները, որոնք նորերս նվաճված այդ տարածքներում լեհական իշխանությունների հենարանն էին: Միաժամանակ, նա սահմանեց, որ մյուս ազգությունների ներկայացուցիչները (ուկրաինացիները, հայերը և ուրիշներ) կարող են առաջնորդվել իրենց ազգային իրավունքով, բայց միայն քաղաքի ընդհանուր վոյտի գլխավորությամբ: Ընդհանուր առմամբ, մինչև 17-րդ դարի 30-40-ական թվականները հայ համայնքները լեհաստանում գործունեության լայն հնարավորություն ունեին:



Կամենից-Պոդոլսկ. Հայկական Սբ. Նիկողայոս եկեղեցին (XIV դ.)

Հայերի համար կարևոր նշանակություն ուներ քաղաքում և հատկապես քաղաքի շուկայական հրապարակի մոտ բնակվելը: Քաղաքում բնակվելու հետ, բնականաբար, սերտորեն կապված էր տվյալ քաղաքի քաղաքացու իրավունքներ ու արտոնություններ ստանալու հարցը, որը լայն հնարավորություններ էր բացում առևտրական գործունեության և արհեստագործության համար:

16-րդ դ. վերջում և 17-րդ դարում հայերի բնակեցումը քաղաքներում տեղի էր ունենում թագավորի կամ առանձին քաղաքատեր-ֆեոդալների հատուկ արտոնագրերի հիման վրա: 1686-1687 թթ. մի խումբ հայեր ոմն Դանիել Մատուկևիչի գլխավորությամբ հաստատվեցին Զոլոչև քաղաքում, որը պատկանում էր Սոբեսկիներին: 1688 թ. հոկտեմբերի 19-ին նրանք ստացան Յան Սոբեսկու արտոնագիրը, որով նա իր համաձայնությունն էր տալիս քաղաքում հայերի բնակվելու համար: Թագավորը նրանց տրամադրեց նաև զանազան իրավունքներ՝ 20 տարով ազատելով հարկերից:

Մի այլ արտոնագրում, որը տվել էր իշխան Լյուբոմիրսկին 1571 թ. մարտի 19-ին, ասվում էր. «Որովհետև ամենայն քաղաքացն պայծառաշինութիւն լինի, աւելցնելով զբնակիչս նորին, և զժողովուրդս, ես ալ փափաքելով զշինութիւն և զպայծառութիւն իմ ժառանգաւոր քաղաքիս Ռաշքովայ, աւելնալով ամէն ցեղ ժողովրդովն, և մանաւանդ ազգաւն Հայոց Պազիրկանաց, վասն այնօրիկ այն հայազգ ժողովրդեան կուտամ զիմ Բրաւան, որ նոր իմ Բրաւայովն սիրտ և միտքն իւրենց հաստատվի դալ ի Ռաշքովն, տան շինութիւն և Պազիրկանութիւն անեն, տիւճ և համարձակ բնակելով»[1]:

Քաղաքում բնակվելու իրավունք ստանալով՝ հայերը այդուհանդերձ չէին դառնում լիիրավ քաղաքացիներ: Անցյալ դարի մի շարք լեհ պատմաբաններ (Տ. Գրոմնիցկի, Վ. Լոզինսկի և ուրիշներ) փորձում էին դա բացատրել այն բանով, որ հայերը, ինչպես և ուկրաինացիները (ռուսիններ) և մյուս ազգությունները իրը չէին ցանկանում կառավարվել գերմանական իրավունքով: Եթե հայերից որևէ մեկին հաջողվում էր ստանալ գերմանական իրավունքից օգտվելու արտոնություն, ապա դա կատարվում էր թագավորական հատուկ շնորհագրերի հիման վրա, որոնք տրվում էին պետությանը և տվյալ քաղաքին մատուցած բացառիկ ծառայությունների համար: Բայց գերմանական իրավունք ստանալն էլ նրանց իրավունք չէր վերապահում քաղաքում որևէ պաշտոն զբաղեցնելու համար. բացառություն էր կազմում միայն քաղաքի գլխավոր թարգմանչի (interpes, proxonata) պաշտոնը, որը Լվովում ավանդաբար զբաղեցնում էին հայերը, քանի որ նրանք տիրապետում էին արևելյան լեզուներին: Առևտրական և այլ նպատակներով ամեն օր քաղաք էին ժամանում թափառներ, թուրքեր, պարսիկներ, արաբներ, որոնց հետ բացատրվել կարող էին միայն հայերը:

---

[1] Թէշկեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 165:

Գլխավոր թարգմանչի պարտականությունները չէին սահմանափակվում միայն թարգմանչական գործով: 1698 թ. Լվովում կազմված մի փաստաթղթից երևում է, որ թարգմանիչը կատարել է քաղաք մտնող օտարերկրացիների նկատմամբ ոստիկանական հսկողություն իրականացնելու պարտականություն: Օտար վաճառականը, քաղաք ժամանելով, առաջին հերթին պետք է ներկայանար գլխավոր թարգմանչին և հայտներ իր ապրանքների բնույթի ու քանակի մասին, նաև այն մասին, թե այդ ապրանքներից որոնք և որքան է մտադիր վաճառել տվյալ քաղաքում: Բացի այդ, թարգմանիչը կատարում էր նաև առևտրական միջնորդի դեր:

17-րդ դ. կեսերից լեհահայերի համար սկսեցին մատչելի դառնալ նաև քաղաքային այլ պաշտոններ: Այդ ժամանակ Տրեմբովլի բերդապետի պաշտոնը զբաղեցնում էր Ալմաստ Թորոսովիչը: Նույն ժամանակ մի ուրիշ հայ գտնվում էր Լվովի քաղաքապետարանին առընթեր հատուկ հանձնաժողովի կազմում: 17-րդ դ. երկրորդ կեսին Լվովի հայերը մասնակցում էին քաղաքային գանձարկղների վարչության աշխատանքին, որի միջոցով իրականացվում էր քաղաքապետարանի ամբողջ ֆինանսական գործունեությունը: Իսկ 1678 թ. լվովցի հարուստ վաճառական Ավեդիկովիչը ընտրվում է քաղաքային խորհրդի անդամ:

Լեհաստանի հայերի իրավական վիճակի մեջ որոշ փոփոխություններ եղան Յան Սոբեսկու կառավարման (1674–1696 թթ.) ժամանակաշրջանում: 1686 թ. փետրվարի 13-ի նրա հրամանագրով հայերը մեկ տարով ազատվեցին հարկեր վճարելուց: Լվովի քաղաքային դատարանին արգելվեց նրանց դատել (բացառությամբ հայտնի 4 հոդվածներով): Նրա ցուցումով Լվովի քաղաքապետարանը պարտավորվեց առանց որևէ խոչընդոտ հարուցելու օտար երկրներից ժամանած հայերին թույլատրել բնակություն հաստատելու քաղաքում՝ հայոց իրավունքի հիման վրա: Բացի այդ, Լվովի քաղաքային իշխանություններին նա հրամայեց քաղաքային հիմնարկություններում հայերի մասնակցության համար ավելի լայն հնարավորություններ ստեղծել:

16–17-րդ դդ. լեհահայերն ակտիվ մասնակցություն են ունեցել լեհական պետության կյանքի ամենատարբեր բնագավառներին: Նրանք կատարում էին արքունիքի դիվանագիտական ու հետախուզական հանձնարարություններ, նյութական օգնություն ցույց տալիս երկրի պաշտպանության ամրապնդման գործին, մասնակցում նրա թշնամիների և հատկապես թուրքերի դեմ մղված պատերազմներին: Երբ թշնամու բանակները մոտենում էին Լեհաստանի սահմաններին, տեղի հայերը լեհերի և ուկրաինացիների հետ միասին կռվում էին զավթիչների դեմ: Լեհ պատմաբան Բ. Զիմորովիչը հաղորդում է, որ լեհահայերը լեհական զորքում կազմում էին առանձին ազգային զորամաս: Սահմանամերձ քաղաքների պաշարման ժամանակ հայ զինվորները հաճախ կատարում էին հետախուզական առաջադրանքներ: Հաղնելով թուրքական

բանակի համազգեստ՝ նրանք թափանցում էին թուրքական զորքերի դասավորության շրջան, հավաքում անհրաժեշտ տեղեկություններ թուրքական ուժերի թվի, սպառազինության, զորքերի տեղադրության, ռազմամթերքի ու պարենամթերքի պաշարների մասին, ապա հետ վերադառնալով, այդ տեղեկությունները հաղորդում էին լեհական հրամանատարությանը: Իսկ ռազմական գործողությունների ժամանակ ամբողջ հայ բնակչությունը ակտիվորեն մասնակցում էր մարտերին:

Յան Սոբեսկու վիեննական արշավանքի ժամանակ (1683 թ.) լեհական մի քանի տասնյակ հազարանոց բանակի կազմում կային հինգ հազար հայեր: 1605 թ. փետրվարի 24-ին Սիգիզմունդ 3-րդի հրամանագրով չլյախտիչի պատվի արժանացավ Կամենեց-Պոդոլսկի բնակիչ Յան Ավագը: 17-րդ դ. երկրորդ կեսին նման պատվի արժանացան նաև Յան Թորոսովիչը, Զախարիաշ Զապիկևիչը, Բեռնարդ Բեռնարդովիչը, Բոգդան Սեֆերովիչը և ուրիշներ: Երբ 1658 թ. սեյմը քննարկում էր Յան Թորոսովիչին շլյախտական իրավունքներ տալու հարցը, Յան Կազիմիր թագավորը անձամբ ելույթ ունեցավ և նշեց նրա մատուցած մեծ ծառայությունները երկրին[1]:

Հայկական համայնքների հեղինակության բարձրացումը բացասաբար էր ազդում լեհական քաղաքային վերնախավի տրամադրությունների վրա: Վերջինս տեսնում էր, որ դրա շնորհիվ հայերը նորանոր արտոնություններ ու իրավունքներ են ձեռք բերում առևտրի և արհեստագործության ասպարեզում: Այստեղից էլ ծայր էին առնում անընդհատ բողոքներն ու գանգատները, որոնց նպատակն էր ամեն կերպ վատթարացնել հայերի և պետական իշխանությունների հարաբերությունները:

17-րդ դ. երկրորդ կեսին Կամենեց-Պոդոլսկի լեհական քաղաքապետարանը, օրինակ, տեղի հայերին սկսեց մեղադրել այն բանում, թե իբր նրանք թուրքերի հետ հաստատել են կասկածելի կապեր, որոնք ուղղված են լեհական պետության դեմ: Այդ մասին նրանք հայտնեցին նաև կառավարությանը: 1672 թ. հունիսի 3-ին այդ առթիվ հրապարակվեց Յան Սոբեսկու ուղերձը, ուր նշվում էր, որ հայերը մի քանի հարյուրամյակ ծառայել են լեհական պետությանը, մարտնչել նրա անկախության պաշտպանության համար և երբեք գործարքի մեջ չեն մտել նրա թշնամիների հետ: Սոբեսկին կոնկրետ փաստեր էր բերում լեհ-թուրքական պատերազմում իր հրամանատարությամբ գործող բանակում հայերի լայն մասնակցության մասին[2]:

Հայերը աչքի ընկնող մասնակցություն ունեցան Լեհաստանի դիվանագիտության մեջ: Նրանք հիմնականում ներգրավված էին Լեհաստանի արևելյան դիվանագիտության մեջ, քանի որ լավ գիտեին արևելյան լեզուներն ու

---

[1] Bara,cz S., Zywoty.

[2] D-r Antoni, Zamieczki podolskie na kresach, Lwo'w, 1879, էջ 125:

սովորությունները և որպես հմուտ վաճառականներ լայն կապեր ունեին արևելյան երկրներում: Միջնադարյան Լեհաստանի դիվանագիտության մեջ հայերի մասնակցությունը լավ է բնութագրել Ի. Լիննիչենկոն: «Հայերից ավելի լավ, – գրում է նա, – ոչ ոք չգիտեր թաթարների, թուրքերի և արևելյան այլ ժողովուրդների սովորությունները, որոնց հետ ամեն օր կատարում էին առևտրական գործարքներ: Էլ ո՞ւմ, եթե ոչ հայերին, պետք է հանձնարարվեր այն ժամանակվա ճարպիկ դիվանագետների՝ Արևելքի մարդկանց հետ դիվանագիտական բանակցություններ վարելու վտանգավոր գործը, երբ սովորության փոքրիկ խախտումը, անխոհեմ արտահայտությունը, պարծենկոտ շշլախտիչի տեսակետից դատարկ ձևականության խախտումը կարող էին սկզբից ևեթ ձախողել դիվանագիտական կամպանիան Արևելքում: Այն ժամանակվա շշլախտիչներից, վերջապես, ո՞վ կարող էր պարծենալ նմանօրինակ լեզվագիտական ընդունակություններով, որոնցով օժտված էր յուրաքանչյուր սովորական հայ... Այդ իսկ պատճառով, եթե Արևելք մեկնող դիվանագիտական միսիաների գլուխ սովորաբար կանգնած էին շշլախտական ծագում ունեցող լեհեր, ինչ-որ երևելի մի մագնատ կամ հայտնի շշլախտական ընտանիքի մի երիտասարդ անդամ, որը սկսում էր իր դիվանագիտական կարիերան, բայցևայնպես դեսպան է հանդիսանում թարգմանչի համեստ դերում գտնվող հայ վաճառականը»[1]: 16–17-րդ դդ. Լեհաստանի հայերը դիվանագիտական հանձնարարություններ էին կատարում Կոստանդնուպոլսում, Սպահանում, Ղրիմում և այլուր: 16–17-րդ դդ. հայազգի դիվանագետների շարքում առավել աչքի ընկնող տեղ է գրավում Սուլեյման Կոստանդին կոմս դը Սիրին, որը մի շարք պատասխանատու հանձնարարություններ է կատարել Ավստրիայում, Կոստանդնուպոլսում, Պարսկաստանում, Ռուսաստանում և այլ երկրներում: Պատմական փաստաթղթերը հիշատակում են մի «արտակարգ անձնավորության»՝ Պյոտր Գրիգորովիչի անունը, որը, ըստ Վ. Լոպինսկու, լեհական արքունիքի խոշոր դիվանագիտական ու ֆինանսական գործակալն էր և ընդարձակ կապեր ուներ եվրոպական արքունիքների, ինչպես և Բ. Դոան հետ: 16-րդ դարի վերջին և 17-րդ դ. սկզբին լեհական արքունիքում էր ծառայում մի ուրիշ հայ դիվանագետ՝ լեհահայ շշլախտիչ Սևերին Մուրատովիչի որդի Սեֆեր Մուրատովիչը, որը տիրապետում էր մի շարք արևելյան լեզուների, այդ թվում նաև պարսկերենին, և կատարում էր Սիգիզմունդ 3-րդի դիվանագիտական հանձնարարությունները:

17-րդ դ. կեսերից հայերը դիվանագիտական հանձնարարություններով մեկնում էին նաև Ռուսաստան: 1645 թ. օգոստոսին Մոսկվա մեկնեց լեհ դեսպան Գավրիիլ Սոչելկոսկին: Նրա դեսպանության կազմում էր գտնվում նաև հայազգի Պյոտր Իվանովը: Դրանից երկու տարի անց, 1647 թ. Մոսկվա ժամանեց լեհական մի այլ դեսպանություն՝ Յուրի Գիչի գլխավորությամբ: Նրա կազմում էր նաև հայազգի Գասպար Շիմանսկին: Երբ դեսպանությունը Մոսկվայից մեկնում էր Իրան, ճանապարհին Գիչը մահացավ և դեսպանության գլուխ կանգնեց Շիմանսկին: Նա բանակցություններ վարեց շահի հետ: Լեհաստան վերադառնալուց հետո Յան Կազիմիր թագավորը դիվանագիտական հանձնարարությունները հաջողությամբ կատարելու համար Շիմանկուն ցմահ նշանակում է Լվովի գլխավոր թարգմանիչ: Լեհ պատմաբան Բոգդան Բարանովսկին հին Լեհաստանում Արևելքի ճանաչմանը նվիրված իր արժեքավոր աշխատության մեջ, նշելով լեհահայերի մեծ ավանդը Արևելքի հետ հին Լեհաստանի դիվանագիտական հարաբերությունների զարգացման ասպարեզում և բարձր գնահատելով նրանց ծառայությունները այդ գործում, բազմաթիվ փաստեր է բերում հայազգի լեհական դիվանագետների մասին: Դրանցից մեկն էր Ռոմաշկևիչը, որը սկսած 1634 թ. տարիներ շարունակ աշխատել էր թագավորական գրասենյակում: Յան Կազիմիրի օրոք նա գրեթե ամեն տարի մեկնում էր Կոստանդնուպոլիս կամ Բախչիսարայ և կատարում դիվանագիտական հանձնարարություններ: Բարանովսկին նրա մասին գրում է. «Նա ի դեպ տիպիկ հայ դիվանագետ էր, իր հայրենակիցներին հատուկ բոլոր թերություններով ու արժանիքներով հանդերձ: Ճարպիկ, Արևելքը լավ իմացող, նա միշտ կարողանում էր դուրս գալ ամենադժվարին իրադարձություններից»: Բախչիսարայում այնքան մեծ հեղինակություն էին վայելում հայազգի Պետրովիչ եղբայրները, որ Ղրիմի խան Մեհմեդ Գիրեյի միջնորդությամբ նրանց չնորհվում է շշլախտիչի կոչում: Նրանք ունեին արքայական թարգմանչի և «նորին արքայական մեծության» քարտուղարի պաշտոններ:

***

Լեհահայերի բոլոր զբաղմունքների մեջ, սակայն, ամենանշանակալին առևտուրն էր, որը լեհահայության բարեկեցության հիմնական աղբյուրն էր: Կապված լինելով հիմնականում արևելյան երկրների հետ՝ հայ վաճառականները Լեհաստան էին ներմուծում այդ երկրների արհեստագործական և գյուղատնտեսական ապրանքներ՝ կաշի և կաշվից պատրաստված զանազան իրեր (կոշիկ, գոտիներ, լծասարք և այլն), գորգեր, կերպաս, ներկեր, մեղրամոմ, մետաքս, չոր միրգ, ապխտած միս, համեմունքներ, գինի, թանկարժեք քարեր, ոսկուց և արծաթից պատրաստված զարդեր, զենք, զինամթերք, բրդյա գործվածքներ և այլն: Դրանք Լեհաստանում սովորաբար կոչվում էին հայկական ապրանքներ: Որոշ վաճառականներ էլ զբաղվում էին թուրք-թաթարական գերությունից քրիստոնյաների փրկագնմամբ:

Շատ հաճախ հայկական ապրանքների անուններն իրենք էին մատնացույց անում այն երկրները, որտեղից հայերը դրանք ձեռք էին բերում՝ պարսկական և թուրքական գորգեր, Բուրսայի կերպասներ, հունական և թուրքական օճառ, չինական գործվածք և այլն: Բ. Զիմորովիչը, որը 17-րդ դարում երկար ժամանակ եղել է Լվովի քաղաքագլուխ և քաջատեղյակ էր հայերի

[1] Линниченко И., Обществ. роль армян..., էջ 6-7:

առևտրական գործերին, գրում էր. «Այդ ժողովուրդը (լեհահայերը. -Մ.Հ.) գնում էր Կաֆա, Կոստանդնուպոլիս, Եգիպտոսում՝ Ալեքսանդրիա և Կահիրե, և մինչև Հնդկաստան. այդ երկրներից Լվով էր բերում ամենաուրբ ճաշակի ապրանքներ, որոնք հետո գերմանացիները, լեհերը, ռուսիններն տարածում էին ամբողջ թագավորությունով մեկ և հարևան երկրներում»[1]:

Հայ վաճառականները Լվովից դեպի արևմտաեվրոպական երկրներ շատ հազվադեպ էին մեկնում, դրա պատճառը, հավանաբար, այն էր, որ նրանք վատ էին տիրապետում արևմտաեվրոպական լեզուներին, բավարար պատկերացում չունեին նրանց չուկաների մասին և, որ ոչ պակաս կարևոր էր, այնտեղ չկային հայկական գաղթավայրեր:

16-17-րդ դդ. լեհական առևտրի կազմակերպման գործում, ինչպես հայելու մեջ, արտացոլվում էր այն անմխիթար վիճակը, որ գոյություն ուներ առհասարակ լեհական էկոնոմիկայում: Շլյախտայի ոչ ճիշտ մաքսային քաղաքականության հետևանքով երկրի սահմանները լայնորեն բացված էին օտար ապրանքների առջև, որը ծանր հարված էր հասցնում սեփական արդյունագործության և առևտրի զարգացմանը: Խոշոր առևտրականներն ու հարուստ արհեստավորները, անկարող լինելով դիմադրել քաղաքային էկոնոմիկայի բռնադատման՝ շլյախտայի վարած կործանարար քաղաքականությանը, իրենց դրամական միջոցները դուրս էին բերում առևտրի ու արդյունագործության ոլորտից և ներդնում հողային սեփականության մեջ, իրենք էլ այդպիսով դառնալով հողատեր: Այս ամենը նպաստում էր ֆեոդալական արտադրաեղանակի գոյության երկարացմանը և լրջորեն խոչընդոտում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը երկրում:

Մինչ Արևմտյան Եվրոպայում զարգանում էր ուժեղ և ազդեցիկ առևտրական բուրժուազիան, որը միավորված էր խոշոր առևտրական ընկերությունների մեջ, որոնք էլ իրենց մասնաճյուղերն ու գրասենյակներն ունեին շատ երկրներում, այդ նույն ժամանակ Լեհաստանի միայն մի քանի խոշոր քաղաքներում գոյություն ունեին այդպիսի ընկերություններ, որոնք կոչվում էին կոնֆրատերիաներ: 17-րդ դ. երկրորդ կեսին լեհական առևտրի համընդհանուր անկման հետևանքով այս ընկերությունների մեծ մասը քայքայվեց: Ինչ վերաբերում է լեհահայոց առևտրին, ապա նրա կազմակերպական գործը զգալիորեն հետ էր մնում նույնիսկ լեհական առևտրի կազմակերպման ոչ բարձր մակարդակից: Դրա պատճառը ոչ միայն լեհական առևտրի զարգացմանը խոչընդոտող՝ վերևում նկարագրված հանգամանքներն էին, այլև այն սահմանափակումները և անհավասար հնարավորությունները, որոնց պայմաններում էին ստիպված առևտուր անել ոչ կաթոլիկ վաճառականները միջնադարյան Լեհաստանում:

[1] **Zimorowicz B.**, Historya m. Lwowa, Kro'lestw Çalicji i Lodomerii stolicy, Lwo'w, 1935, էջ 308:

Լեհահայոց առևտրական կապիտալի զարգացումը չհասցրեց հայ վաճառականների միավորմանը ոչ ազգային, ոչ էլ լեհական ընկերություններում: Հայկական առևտրի մեջ հանդես էին գալիս կամ անհատ վաճառականներ, կամ էլ առանձին ընտանեկան, ազգակցական խմբեր: Ընտանեկան ֆիրմաներում մասնակցում էին հայրն ու որդիները կամ հարազատ եղբայրները: Խոշոր առևտրական գործարքների իրականացման ժամանակ ընտանեկան ֆիրման վարձում էր նաև օտար անձանց, որոնք կատարում էին գրագրի, առևտրական միջնորդի, հաշվապահի կամ վաճառողի պարտականություններ: Լատիներեն սրանց անվանում էին famili notarii:

Անհատ վաճառականները նույնպես վարձակալում էին ծառայողներ: Իրենց առևտրի ծավալով նրանք, իհարկե, չէին կարող համեմատվել ընտանեկան ֆիրմաների հետ և շատ հաճախ կախման մեջ էին ընկնում նրանցից: Լեհահայոց առևտուրը աչքի էր ընկնում իր պարզունակությամբ և կազմակերպական ձևերի թերզարգացմամբ, որը մանավանդ 17-18-րդ դարերի կապիտալիստական հարաբերությունների հարաճուն զարգացման պայմաններում այդ առևտուրը դարձնում էր նվազ մրցունակ և ի վերջո զրկում զարգացման հեռանկարից: Պատահական չէ, որ այդ առևտուրը մահացու հարված ստացավ և զգալիորեն կրճատվեց, հենց որ Լեհաստանում 17-րդ դարում երեվան եկան քաղաքների տնտեսական անկման առաջին նշանները: Սակայն մինչ այդ մի քանի դար շարունակ լեհահայոց առևտրի տեսակարար կշիռը եղել է բավական զգալի: Ցավոք, ընդհանուր տվյալներ չկան այդ մասին, բայց առանձին վաճառականների ու կապիտալների ծավալների մասին եղած տվյալները բավական պերճախոս են և մասնակի պատկերացում են տալիս այդ մասին: Այսպես, 1600 թ. Կոստանդնուպոլսից Լվով է ժամանում հայ վաճառականների՝ ապրանքներ փոխադրող մի խոշոր քարավան: Այդ ապրանքներից լվովահայ վաճառական Զախար Իվաշկևիչին բաժին էր ընկնում 740 դուկատի[1] չափրան, 340 դուկատի գոտիներ և 9777 դուկատի այլ ապրանքներ: Իսկ Նիկոլայ Բերնատովիչը միայն մեկ քարավանով Լվով է բերում 15 հազ. գրոշի[2] արժողությամբ ապրանքներ: Վերջինս իր առևտրական ներկայացուցիչներն ուներ Պինսկում, Լյուբլինում, Պոզնանում, Կրակովում, Վիլնյուսում, Մանդոմիրում և այլ քաղաքներում: Լվովում կային առանձին մեծահարուստ հայ վաճառականներ, որոնց օգնությանը դիմում էր նույնիսկ պետական գանձարանը: Օրինակ, ի պատասխան մի այդպիսի դիմումի, Քրիստոֆ Ավետիք Բերնատովիչը գանձարանին տրամադրել է 100 հազ. դուկատ:

[1] 16-17-րդ դդ. մեկ դուկատը պարունակում էր 9,5 գրամ ոսկի:

[2] Գրոշի 17-րդ դ. պարունակում էր մոտ մեկ գրամ ոսկի:

Հայ վաճառականների համար կարևոր նշանակություն ունեին առևտրի հարցերը կարգավորող օրենքներն ու օրենսդրական մյուս ակտերը, առանց որոնց հնարավոր չէր առևտրի բնականոն կազմակերպումը: Առևտրի զարգացմանը հատկապես խանգարում էին զանազան սահմանափակումները: Օրինակ, արևմտաուկրաինական հողերում լեհական տիրապետության հաստատման սկզբնական շրջանում հայ և ոչ կաթոլիկ այլ վաճառականների համար գոյություն ուներ լուրջ սահմանափակում. նրանք իրավունք ունեին առևտուր անել միայն Գալիցիայի ու Վոլինի նախկին իշխանապետության և Պոդոլիեի տարածքներում: Բուն լեհական հողերում նրանց առևտուրն արգելվում էր: Այդ սահմանափակումը վերացվեց 1402 թ. Վլադիսլավ Յագելլոյի հրամանագրով:

15-րդ դ. երկրորդ կեսից քաղաքային իշխանությունները և պատրիցիատը սկսեցին ավելի հաճախակի դիմել թագավորներին, պահանջելով սահմանափակել հայերի առևտրական իրավունքները: Այսպես, 1444 թ. Լվովի քաղաքային իշխանությունները հայերին արգելեցին միս վաճառել եղած երկու մսի կրպակներում: Այդ վաճառքից ստացված եկամուտները մասամբ տրվում էին հայ ավագանուն՝ իբրև հատուցում նրա կատարած աշխատանքի համար: Մի մասն էլ մուծվում էր պետական գանձարան: Հայերը գանգատվեցին արքունիքին. ընդառաջելով նրանց՝ թագավորը նույն թվականին հրամայեց նշված կրպակները վերադարձնել հայերին:

Չնայած արևմտաուկրաինական քաղաքների ինտենսիվ գաղութաբնակեցմանը լեհ և գերմանացի վաճառականներով, այնուամենայնիվ, արևելյան առևտրի հիմնական լծակները շարունակում էին մնալ հայերի ձեռքում: Լեհ վաճառականների շահերը պաշտպանելու համար կառավարությունը 1497 թ. հայերին արգելեց այնպիսի մաշտարներով առևտուր անել, որը կվնասեր կաթոլիկ վաճառականներին: Հայերի առևտրի նման սահմանափակումը, հավանաբար, վնասեց պետական գանձարանի եկամուտներին և այդ պատճառով հաջորդ, 1498 թ. հունվարի 2-ին թագավորը ստիպված էր վերստին անդրադառնալ հայերի առևտրական իրավունքների հարցին: Վերացնելով բոլոր տեսակի սահմանափակումները՝ նա հայերին թույլ է տալիս անարգել մասնակցել ամենամյա տոնավաճառներին, կտորեղենը վաճառել ոչ միայն հակերով (մեծածախ), այլև կանգուններով (մանրածախ):

Սրան հետևեցին ևս մի քանի չնորհագրեր, որոնք ավելի էին թեթևացնում հայերի առևտրի պայմանները: 1505 թ. մայիսի 6-ին Ալեքսանդր թագավորը մաքսատներին հրամայեց հայերից մաքսավճարներ չվերցնել այն ապրանքների համար, որոնք Լվով էին բերվում Վալախիայից, Հունգարիայից, Լիտվայից, Սիլեզիայից, Մոսկվայից, Ղրիմից, Թուրքիայից և այլ երկրներից: 1520 և 1524 թթ. արտոնագրերում Սիգիզմունդ 1-ինը ավելի հեռու գնաց. նա արգելեց Լեհաստանի մի շարք քաղաքների (Կրակով, Սանդոմիր, Լվով,

Լյուբլին և այլն) մաքսատներին մաքսավճար վերցնել հայ վաճառականներից: Թվարկված քաղաքների անունները ենթադրել են տալիս, որ Սիգիզմունդ 1-ին ձգտում էր նպաստել հայկական առևտրի զարգացմանը և ծավալմանը նաև բուն Լեհաստանում:

Այդ միջոցառումները զգալիորեն բարելավեցին հայկական առևտրի վիճակը. հայերը կարող էին Արևելքից բերած ապրանքները վաճառել ոչ թե Լվովի լեհ վաճառականներին, այլ Լեհաստանի կենտրոնական և արևելյան քաղաքներում: Դա հարվածեց լեհ վաճառականների շահերին, քանի որ նրանք զրկվեցին հայկական ապրանքների վերավաճառքից ստացող եկամուտներից: Հաճախ լեհ վաճառականները հայերի ապրանքներով բեռնված սայլերը երկար ժամանակ պահում էին քաղաքի դարպասների մոտ, թույլ չտալով քաղաք մտնել, և այդ առիթով Սիգիզմունդ Ավգուստի 1563 թ. հունվարի 18-ի արտոնագրով կատարած զգուշացումը տևական ազդեցություն չգործեց լեհ վաճառականների և քաղաքային իշխանությունների վրա: 16-րդ դ. 70-ական թվականներից նրանք ուժեղացրին իրենց պայքարը՝ հատուկ կրթուրթյամբ աշխատելով թույլ չտալ հայ վաճառականներին մասնակցելու տոնավաճառներին: Այդ նպատակով Կրակովի և այլ քաղաքների տոնավաճառների նախօրյակին նրանք արգելում էին ապրանքներով բեռնված հայկական սայլերը դուրս բերել քաղաքից: Տոնավաճառային ժամկետները ձեռքից բաց թողնելը խոշոր նյութական կորուստ էր պատճառում հայ վաճառականներին: Բացի այդ, քաղաքային իշխանությունները հայերին արգելում էին տներ կառուցել քաղաքի չուկայական հրապարակի մոտ , ամեն կերպ խոչընդոտում էին նրանց կողմից նոր կրպակներ և խանութներ ձեռք բերելուն, թույլ չէին տալիս հայերին վաճառելու թանկարժեք կերպասներ և առավել եկամտաբեր այլ ապրանքներ: Այս սահմանափակիչ միջոցառումները նրանք փորձում էին հիմնավորել նրանով, որ անցյալում հայերն իբր չեն ունեցել ազատ առևտրի իրավունք: Քաղաքային իշխանությունները բացահայտ կերպով չէին ցանկանում ճանաչել լեհական կառավարության բազմաթիվ արտոնագրերն ու շնորհագրերը հայ վաճառականների իրավունքների մասին: Այս բոլորը Լվովի հայոց ավագանուն ստիպեց նորից բողոքել Լեհաստանի թագավորին, այս անգամ Ստեփան Բատորիին (1576-1586 թթ.):

1578 թ. հայերի առևտրական իրավունքների հարցը նորից դարձավ արքունիքի քննարկման առարկա: Նույն թվականի հուլիսի 7-ին Ս. Բատորին հրապարակեց մի նոր արտոնագիր, որի համաձայն, առևտրի ասպարեզում հայերը պետք է հավասարապես օգտվեին այն բոլոր իրավունքներից, որոնցից օգտվում էին մյուս բոլոր քաղաքացիները: Նրանք այսուհետև կարող էին պրպտվել գինեգործությամբ, ալկոհոլի և գարեջրի, ինչպես նաև թանկարժեք կտորեղենի վաճառքով: Բացի այդ, նրանք իրավունք ստացան անարգել կերպով օգտվել առևտրական տներից և մանրածախ ապրանքներ վաճառել:

Բատորիի արտոնագիրը լավ հնարավորություններ էր ստեղծում հայկական առևտրի զարգացման համար: Առաջվա պես իշխող դիրք գրավելով արևելյան առևտրում, հայերը միաժամանակ զգալիորեն ընդարձակեցին իրենց առևտրական կապերը լեհական բոլոր հողերի, ինչպես նաև Պրուսիայի, Լիտվայի, Ռուսաստանի և այլ երկրների հետ: Լվովում, Կամենեց-Պոդոլսկում և մյուս քաղաքներում նրանք բացեցին նոր վաճառատներ, ձեռք բերեցին հողային սեփականություն և տներ, սկսեցին լայնորեն վարձակալել կալվածքներ:

Ս. Բատորիի մահից հետո լեհ-գերմանական հարուստ վերնախավը 10 հոգուց բաղկացած պատվիրակություն ուղարկեց նոր թագավոր Սիգիզմունդ 3-րդի մոտ և դանդաղեցրեց հայ վաճառականների «չափից ավելի լայն իրավունքների» դեմ: 1600 թ. ապրիլի 17-ին թագավորը հայտնեց, որ ինքը չի կարող վերացնել իր նախորդի արտոնագիրը, բայց քանի որ այն տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել, հայերի և քաղաքային իշխանությունների մեջ, ապա ինքը որոշել է պարզություն մտցնել արտոնագրի ըմբռնման գործում: Թագավորի մեկնաբանությունները հանգում էին հետևյալին.

1. Լեհական պետության բոլոր քաղաքներում թե կաթոլիկներին և թե հայերին հավասարապես թույլատրվում է ամեն տեսակի ապրանքներ վաճառել.

2. Բայց հայերին արգելվում է ոչ բարձր որակի կերպասների մանրածախ առևտուրը, այդպիսի կերպասները հայերը կարող են վաճառել թուխերով կամ հակերով (մեծածախ).

3. Լվովում հայերը կարող էին ունենալ միայն երկու առևտրական «պատուհան» (ամբողջ քաղաքում այդ ժամանակ կար 20 այդպիսի «պատուհան»).

4. Հայերին թույլատրվում էր գինի պատրաստել միայն երկու տներում, մեղրաջուր[1]- երեք տներում, իսկ գարեջուր կարող են վաճառել միայն չորս տներում: Բայց նրանց չէր թույլատրվում գարեջուր պատրաստել, նրանք այն կարող էին գնել միայն լեհերից ու գերմանացիներից: Թագավորի մի շարք մեկնաբանություններ վերաբերում էին արհեստագործության մեջ հայերի մասնակցությանը:

Այսպիսով, Ս. Բատորիի արտոնագրի համեմատությամբ, որը առևտրի ասպարեզում հայերին կաթոլիկների հետ հավասար իրավունքներ ու հնարավորություններ էր տրամադրել, Սիգիզմունդ 3-րդի մեկնաբանությունները հայ առևտրականներին դնում էին զգալիորեն աննպաստ դրության մեջ: Օրինակ, ինքնին հասկանալի է, որ կերպասների մանրածախ առևտուրը ավելի եկամտաբեր էր, քանի մեծածախը (թուխերով): Կամ ուրիշի պատրաստած գարեջուրը վաճառելը ավելի անշահութաբեր էր, քան սեփական արտադրության գարեջուրը:

17-րդ դ. առաջին կեսը նշանավորվեց, ինչպես արդեն ասվել է, Ռեչ Պոսպոլիտայի տնտեսական ու քաղաքական անկման գործընթացի սկզբնավորմամբ, որը կործանարար հետևանքներ ունեցավ նաև հայկական առևտրի, հետևապես նաև հայերի բարեկեցության համար: Հաճախակի կրկնվող պատերազմները, ներքին չուկան օտարերկրյա ապրանքներով հեղեղելու պատճառով լեհական դրամի չեզոտակի արժեզրկումը, դաժան մրցապայքարը լեհ և հրեա վաճառականների հետ, ինչպես և բունի եկեղեցական ունիան հասցրին այն բանին, որ հայերի տնտեսական կարողությունը քայքայվեց, և հայկական գաղութը սկսեց խոր ճգնաժամ ապրել: Դրա հետևանքով շատ հայ ընտանիքներ սկսեցին հեռանալ Լեհաստանից: Այդ գործընթացը կանխելու նպատակով Վլադիսլավ 4-րդ թագավորը 1633 և 1642 թթ. հրապարակեց երկու արտոնագիր, որոնք զգալիորեն թեթևացնում էին հայերի առևտրի պայմանները: Մասնավորապես երկրորդ արտոնագրով նրանք ազատվեցին այն մաքսերից, որոնք գանձվում էին վաճառականներից՝ օտարերկրյա ապրանքներ ներմուծելու և Լեհաստանից ապրանքներ ու դրամ արտահանելու համար:

Հայերի առևտրական իրավունքները ընդլայնելու քաղաքականությունը չարունակեց նաև հաջորդ՝ Յան Կազիմիր թագավորը: 1651 թ. նա գրեթե լիովին վերականգնեց այն բոլոր իրավունքները, որ հայերին տվել էր Ս. Բատորին: Բացի այդ, 1658 թ., հաշվի առնելով չվիդական և թուրք-թաթարական պավիչներից Լեհաստանի հարավային սահմանները պաշտպանելու գործում Կամենեց-Պոդոլսկի հայերի ունեցած ծառայությունները, թագավորը նրանց թույլ տվեց ազատորեն զբաղվել ամեն տեսակ խմիչքների արտադրությամբ ու առևտրով: Միաժամանակ զգալիորեն կրճատվեցին Կամենեցի հայերից գանձվող հարկերի չափերը: Սակայն դրանք արդեն ուշացած միջոցառումներ էին:

***

Լեհահայերի երկրորդ հիմնական զբաղմունքը արհեստագործությունն էր: Սակայն Լեհաստանի արհեստագործական արտադրության ընդհանուր հաշվեկշռում հայ արհեստավորները չխաղացին այնպիսի զգալի դեր, ինչպես հայ վաճառականներն առևտրում: Արտակարգ ծանր պայմանների և ամենից առաջ գանազան սահմանափակումների պատճառով, որոնք կիրառում էին լեհական քաղաքային իշխանությունները, տեղի հայերի համար գրեթե լիովին անմատչելի մնացին լեհական համքարությունները: Բացի այդ, ինչպես շատ այլ երկրներում, այնպես էլ միջնադարյան Լեհաստանում համքարությունները հանդիսանում էին կրոնական եղբայրություններ: Հենց միայն այդ հան-

[1] Լեհական ազգային ոգելից խմիչք:

գամանքը գրեթե լիովին բացառում էր հայերի՝ այդ «ախիզմատիկների» կամ հերձվածողների, մասնակցությունը կաթոլիկական համքարություններին: Լվովի ոսկերիչների համքարության 1600 թ. կազմված կանոնադրության մեջ, օրինակ, ուղղակի ասվում էր. «Մեր ոսկերչական արհեստի համար հարկավոր են բարեխիղճ մարդիկ, որոնք հավատարիմ են կաթոլիկական դավանանքին: Լվովի ոսկերիչները ոչ մի հերետիկոսի կամ հերձվածողի չեն կարող ընդունել և հանդուրժել իրենց շարքերում... Բացառություն կարող են կազմել այն ռուսինները և հայերը, ովքեր կընդունեն ունիան Հռոմի եկեղեցու հետ»[1]: Մի այլ փաստաթղթում, որը կազմված է 1671 թ., կարդում ենք. «Ուղղափառ հայերին և ռուսիններին համքարություններ ընդունվելն արգելվում է»[2]: Կաթոլիկ արհեստավորները հայերին և ուկրաինացիներին թույլ չէին տալիս աշխատել ոչ միայն իրենց համքարություններում, այլև առհասարակ զբաղվել արհեստներով: Դրա հետևանքով հայերը ստիպված էին կամ լրացնել համքարություններից դուրս աշխատող և նրանց կողմից մշտապես հալածվող, այսպես կոչված պարտաչների («partacz») շարքերը, կամ էլ, մեծ դժվարություններ հաղթահարելով, ստեղծել իրենց ազգային համքարությունները: Այդ նույն պատճառներով էլ նրանք չկարողացան աշխատել արհեստների շատ ճյուղերում և ստիպված էին սահմանափակվել հիմնականում կաշվի մշակությամբ և ոսկերչությամբ:

1620 թ. հայ կաշեգործ վարպետները Լվովում հիմնեցին իրենց ազգային համքարությունը, որի օրինակով նույնանման հայկական համքարություններ ստեղծվեցին նաև այլ հայաբնակ վայրերում:

Լվովի հայկական համքարությունն ուներ իր կանոնադրությունը, որը բաղկացած էր 11 հոդվածից: Ըստ կանոնադրության, հայ վարպետները կարող էին աշխատել ինչպես արհեստանոցում, այնպես էլ տանը: Վարպետներն ամեն տարի ընտրում էին իրենց ավագին, որը հետևում էր, որ վարպետները և մյուս բոլոր արհեստավորները աշխատեին կանոնադրության համաձայն: Համքարությունից դուրս ավագը հանդես էր գալիս որպես նրա ներկայացուցիչ: Ընտրվում էին նաև համքարության գանձապահներ կամ քարտուղարներ, որոնք վարում էին համքարության դրամարկղի և գրասենյակի գործերը:

Համքարություններն իրենք էին հումք և այլ նյութեր ու գործիքներ հայթայթում իրենց վարպետների համար: Համքարությունը, ինչպես և շատ երկրներում, սահմանում էր արտադրանքի չափերը, կշիռը, որակը և գինը: Կանոնադրության համաձայն, նոր աշակերտի ընդունելությունը տեղի էր ունենում հետևյալ կերպ. վարպետը նոր աշակերտին ներկայացնում էր ավագին:

[1] **Lozinski Wl.**, Ztotnictwo lwowskie w dawnich wikach, 1387-1640. Lwo'w, 1889, էջ 36:

[2] Լվովի ԿՊՊԱ., ֆ. 52, 8.3, հ. 46, էջ 1573:

Ապա աշակերտը խոստովանեցվում էր եկեղեցում և դրամարկղ մուծում մեկ դրիվնա: Երեք տարի նա արհեստ էր սովորում իր վարպետի մոտ՝ առանց վարձատրվելու: Նա կարող էր միայն իր մշակած յուրաքանչյուր կոպ (60 – հատ) կաշվից երկուսը իրեն վերցնել: Երեք տարին լրանալուց հետո աշակերտը դառնում էր ենթավարպետ (czeladnik), որոշ ժամանակ աշխատելով իր վարպետի հետ և իր աշխատանքի դիմաց ստանալով որոշ եկամուտ: Իր տարեկան եկամուտներից նա պարտավոր էր 20 դրիվնա տալ իր վարպետին: Մեկ տարի անց համքարության միջնորդությամբ նա իրավունք ուներ փոխել իր աշխատանքի վայրը համքարության շրջանակներում:

Հայկական կաշեգործական համքարության կանոնադրությունը հաստատվել է Յան Կազիմիրի կողմից:

Հայկական համքարությունները, որոնց թիվը խիստ սահմանափակ էր, հանդես եկան միայն ուշ միջնադարում, երբ լեհական քաղաքներում ավելի ու ավելի հաճախակի էին երևում տնտեսական անկման նախանշանները: Պետք է ենթադրել, որ հայկական համքարությունների ստեղծման իրավունքը, որը երկար ժամանակ հայերին չէր տրվում, այժմ ոչ միայն հնարավոր, այլև խիստ անհրաժեշտ դարձավ քաղաքները տնտեսական փլուզումից փրկելու նպատակով՝ մի քաղաքականություն, որ սկսեց ուշացած իրականացնել լեհական կառավարությունը 17-րդ դ. կեսերից:

Համեմատաբար ավելի շատ էին հայ պարտաչները (համքարություններից դուրս աշխատող արհեստավորները): Զրկվելով քաղաքացու իրավունքներից և չկարողանալով քաղաքի բնակիչ դառնալ, հայ պարտաչները ապրում ու աշխատում էին քաղաքների արվարձաններում՝ լավագույն դեպքում օգտվելով քաղաքատեր-ֆեոդալի կամ թագավորական ստարոստայի որոշ հովանավորությունից: Եթե քաղաքում ապրող հայ բնակչության գերակշռող մասը ներգրավված էր առևտրի մեջ, ապա արվարձաններում ապրող հայերի մեծ մասը պարտաչ արհեստավորներ էին:

Պարտաչների կյանքը շատ ծանր էր: Իրավազրկությունը, քաղաքային իշխանությունների ու համքարությունների մշտական հալածանքները հաճախ հասցնում էին այն բանին, որ նրանք ստիպված էին լինում զբաղվել պատահական վաստակով: 1634 թ. Լվովի հայ պարտաչները քաղաքապետարանում գանգատվում էին համքարությունների հալածանքներից, հայտարարելով, որ դրա հետևանքով իրենք դատապարտված են սովամահության: Հայ պարտաչների արտադրանքը իրացվում էր հիմնականում արվարձաններում կամ մերձակա գյուղերում: Նրանք պատրաստում կամ վերանորոգում էին գյուղատնտեսական գործիքներ, սայլեր, զբաղվում ասեղնագործությամբ, պատրաստում բրդյա գործվածքներ, կոշիկներ, գոտիներ և այլն:

Պարտաչները երբեմն գործիք էին դառնում լեհ ֆեոդալների ձեռքում քաղաքների տնտեսական և քաղաքական ազդեցության դեմ նրանց մղած ռեակցիոն պայքարում:

Պարտաչների համեմատությամբ բոլորովին այլ պայմաններում էին գտնվում այն սակավաթիվ կամ նույնիսկ եզակի հայ արհեստավորները, որոնք ձեռք էին բերել կաթոլիկական համքարություններում աշխատելու իրավունք: Այդպիսի հնարավորություն հայերը ստացան 17-րդ դ. կեսերից, երբ, ինչպես ասվեց, լեհական քաղաքային էկոնոմիկան դանվում էր աննախանձելի վիճակում: 1654 թ. հրապարակված թագավորական մի հրամանագրի համաձայն, Լվովում միայն չորս հայ վարպետներ կարող էին աշխատել լեհական համքարություններում, բայց իրավունք չունեին այնտեղ դեկավար դիրքեր ունենալ: 1678 թ. հակառակ այս արգելքի, հայազգի վարպետ Գրիգոր Լատինովիչը դառնում է Լվովի ոսկերչական համքարության ավագներից մեկը: Դրանից յոթ տարի անց, 1685 թ. նույն համքարության ավագ է ընտրվում մի այլ հայ վարպետ՝ Ներսես Մոյսեսովիչը: Լվովի քաղաքային իշխանությունները չկարողացան անտարբեր նայել այդ փաստին և չուտով դատական գործ հարուցեցին ոսկերչական համքարության դեմ: Դատարան ներկայանալով, համքարության ներկայացուցիչները քաղաքի մեծահարուստ ավագանուն հասկացնել տվեցին, որ հայազգի վարպետին համքարության ավագ են ընտրել «խոշոր պարոնների» համաձայնությամբ: Բայց դա չօգնեց, և թագավորական հրամանագիրը խախտելու համար քաղաքապետարանը հարկադրեց համքարությանը 60 գրիվնա տուգանք վճարել և նոր ավագ ընտրել:

Այդ որոշումը բողոքի գայրույթ առաջացրեց հայ արհեստավորների մեջ, որոնք սկսեցին պահանջել, որ իրենց իրավունքները հավասարեցվեն կաթոլիկ արհեստավորների իրավունքներին: 1685 թ. ապրիլի 6-ին Յան Սոբեսկին այդ հարցի առթիվ ստորագրեց մի դեկրետ, որտեղ ասված էր. «Մենք Լվով քաղաքի համար օգտակար, ինչպես և անհրաժեշտ ենք համարում, որպեսզի in genece հայոց ազգին, որը Ռեչ Պոսպոլիտայի հանդեպ մի քանի հարյուրամյակ հանդես է բերել մեծ բարյացակամություն [իսկ այժմ էլ] հավատարիմ է կաթոլիկական coordinat-ին, թույլ տրվի հավասարության հիման վրա օգտվելու Լվովի բոլոր իրավունքներից ու արտոնություններից, այնպես որ հայ ոսկերիչները in specie չենթարվեն որևէ սահմանափակման և ritus romani ազգի հետ համահավասար օգտվեն շնորհված իրավունքներից և ազատություններից»[1]: Դեկրետում հատուկ նշվում էր, որ հայ արհեստավորները

[1] Lozinski Wl. Նշվ. աշխ., էջ 141:

կարող են համքարություններում նաև դեկավար պաշտոն զբաղեցնել, մասնավորապես ավագներ ընտրվել:

Լեհական համքարություններում աշխատելու հնարավորություն էին ստանում միայն այն հայ վարպետները, ովքեր աչքի էին ընկնում ոչ միայն իրենց գործի բարձր որակով, այլև հարստությամբ և բարձրաստիճան չլյախտիչների ու մագնատների հետ ունեցած կապերով: 17-րդ դարի երկրորդ կեսին, օրինակ, Լվովի հայ խոշոր վարպետներին մեծ աջակցություն էին ցույց տալիս Յան Սոբեսկին, լեհական թագի մեծ հետման (սպարապետ) Ստանիսլավ Ժոլկովսկին, արքունի պալատականներ և իշխաններ Ստանիսլավ Բելզեցկին, Յերեղր Զերնիխովսկին, Զամոյսկիները և ուրիշներ:

Կատարելապես տիրապետելով իրենց արհեստին և աչքի ընկնելով թագավորական կամ մի այլ պատվեր կատարելու ժամանակ, նշանավոր հայ վարպետներից ոմանք օգտվում էին թագավորի տրամադրած հատուկ արտոնություններից: Նրանք աշխատում էին ինքնուրույն կամ թագավորի անձնական արհեստանոցներում: Նրանցից մի քանիսը նույնիսկ կրում էին թագավորական քարտուղարի մեծադղորդ անունը, որը ընդհանուր ոչինչ չուներ արքունիքի գրասենյակային ծառայության հետ և տրվում էր լոկ ի նշան այն բանի, որ տվյալ վարպետը օգտվում էր թագավորի հովանավորությունից: Դրանց թվին էին պատկանում Հարություն Դադուրովիչը, Բեդրոս Մարդերիսովիչը, Թորոս Սեֆերովիչը և ուրիշներ (17-րդ դ. երկրորդ կես):

Արհեստավորների այս արտոնյալ և ունևոր մասը չնչին թիվ էր կազմում և նա չէր, որ որոշում էր հայ արհեստավորության ընդհանուր դեմքը: Գերակշռող մասը աշակերտները, ենթավարպետներն ու պարտաչներն էին, որոնք նույն խավին պատկանող լեհ և ուկրաինացի իրավազուրկ արհեստավորների հետ միասին բաժանում էին չարքաշ կյանքի դառնությունը և հանդես գալիս ընդդեմ կեղեքման ու իրավազրկման:

***

17-րդ դ. գրեթե սկզբից լեհական քաղաքներում ծայր առավ տնտեսական փլուզումը, որն ընդգրկեց առևտուրը, արհեստները, ողջ դրամաֆինանսական համակարգը: Գերմանական պետություններից, Անգլիայից, Ծրանսիայից, Նիդերլանդներից և մյուս երկրներից մեծ քանակությամբ Լեհաստան էին ներմուծվում ավելի էժան ու որակյալ ապրանքներ, որոնց հետ լեհական արհեստագործական արտադրանքը չէր կարող մրցել: Նման պայմաններում սիրող դասակարգերն ու կառավարությունը, չլյախտան ու մագնատները ոչ միայն որևէ արգելակող կամ գոնե սահմանափակող միջոցառումներ չէին իրականացնում օտար ապրանքների հեղեղը կասեցնելու և սեփական արտադրությունն ու առևտուրը հովանավորելու համար, այլև շատ դեպքերում իրենք

էին խրախուսում օտարերկրյա առևտրի զարգացումը սեփական երկրում: Այս բոլորի հետևանքով ղլոտին այնքան էր կորցրել իր արժեքը, որ առևտրական և դրամաֆինանսական գործարքների մեծ մասը կատարվում էր օտարերկրյա տարադրամով:

Այդ ժամանակ Լեհաստանն ամեն տարի արտահանող ապրանքների համար ստանում էր միջին հաշվով 35 մլն ղլոտի և ներմուծվող օտարերկրյա ապրանքների համար վճարում 45 մլն ղլոտի: 1659 թ. Լեհաստանում չրջանառության մեջ մտցվեցին չելենգներ և ղլոտուվկաներ (տինֆեր), որոնց մեջ արծաթի պարունակությունը առաջվա 8,15 գրամի փոխարեն կազմում էր ընդամենը 3,36 գրամ:

Ինքնին հասկանալի է, որ այս ամենը կործանարար ազդեցություն ունեցավ տեղական առևտրականների ու արհեստավորների տնտեսական դրության վրա. սկսվեց սրանց զանգվածային սնանկացումը: Այդ ահավոր աղետից փրկվելու համար շատ դրամատերեր աշխատում էին հող կամ այլ անշարժ գույք գնել կամ պարզապես հեռանալ երկրից: 17-րդ դ. կեսերին լեհական երբեմնի խոշոր քաղաքների (Կրակով, Գդանսկ, Պոզնան և այլն) բնակչությունը հաշվվում էր ընդամենը մի քանի հազար մարդ: Այդ նույն երևույթը տեղի էր ունենում նաև Լեհաստանի արևմտաուկրաինական քաղաքներում (Լվով, Վլադիմիր, Լուցկ, Կամենեց-Պոդոլսկ և այլն), ուր հիմնականում կենտրոնացած էին լեհահայ գաղթօջախները: Եթե Վարշավայում 1654 թ. ապրում էր 10 հազ. մարդ, ապա 1660 թ. այնտեղ մնացել էր ընդամենը 4 հազ. մարդ, իսկ Պոզնանի բնակչությունը 30 հազարից իջել էր 3-4 հազարի: Այսօրինակ տեղաշարժերը համընկան կաթոլիկ եկեղեցու կողմից քրիստոնեական մյուս դավանանքներին պատկանող ազգային փոքրամասնությունների դեմ կիրառված հալածանքներին, որոնք ծայր առան 16-րդ դարի վերջերից: 16-րդ դարում ծանր պայքարից հետո հաղթահարելով ռեֆորմացիոն (արիանոսների) շարժումը և դավանանքի ասպարեզում դառնալով դրության տերը, կաթոլիկ եկեղեցին և հատկապես նրա ծայրահեղական ուժերը, որոնք անհանդուրժողականությամբ էին վերաբերվում քրիստոնեական մյուս դավանանքների նկատմամբ, արշավանք ծավալեցին քրիստոնյա ազգային փոքրամասնությունների եկեղեցիների դեմ: 1595-96 թթ. նրանց հաջողվեց Բրեստում կնքված ունիայի միջոցով Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ միավորել արևմտաուկրաինական եկեղեցին:

Դրանից քիչ անց հերթը հասավ տեղի հայոց եկեղեցուն: Սակայն շատ շուտով պարզվեց, որ հայկական եկեղեցու ունիան իրականացնելը այնքան էլ հեշտ բան չէ, ինչպես կարող էր թվալ կաթոլիկ հոգևորականությանը սկզբնապես: Ապրելով հայրենիքից հեռու՝ հայ բնակչությունը սերտորեն համախմբվել էր իր ազգային եկեղեցու շուրջը, որը ոչ միայն նրա ազգային ինքնությունը պահպանելու կարևոր երաշխիքն էր, այլև հոգևոր առաջնորդը:

Կաթոլիկ եկեղեցուն, որը հայերին դավանափոխ անելու համար օգտագործում էր իր հարուստ զինանոցի բազմազան միջոցները, սկսած սպառնալիքներից ու կաշառքից մինչև հայ ժողովրդի անկաշառ «բարեկամ» ձևանալը, երկար ժամանակ չէր հաջողվում կոտրել հայոց դիմադրությունը, որը տևեց ավելի քան կես դար:

Երբ 1623 թ. մահացավ լեհահայոց թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսը, ծայր առան սուր վեճեր նոր եպիսկոպոսի ընտրության շուրջ: Այդ պահին էլ Լվով ժամանեց պարտքերի պատճառով պարսից իշխանությունների կողմից հալածված հայոց կաթողիկոս Մելքիսեդեկը: Ոմն Նիկոլ աբեղա նրա մոտ է ուղարկում բարեխոսներ ու միջնորդներ, որոնք, ոսկեղեն ու այլ թանկարժեք նվերներ մատուցելով, կաթողիկոսին հորդորում են եպիսկոպոս ձեռնադրել 22-ամյա Նիկոլին: Քահանաներն ու քաղաքի հայ բնակչությունը, մեծով ու փոքրով, լավ իմանալով Նիկոլի անբարոյական վարքը, կաթողիկոսին խնդրում են չձեռնադրել նրան: Սակայն ժողովրդի կամքը հաշվի չառնելով, կաթողիկոսը Նիկոլի հետ գաղտնի մեկնեց քաղաքից դուրս գտնվող Հաճկատար Աստվածածին վանքը և գիշերը նրան ձեռնադրեց եպիսկոպոս: Երբ այդ լուրը հասավ քաղաք, ժողովուրդը աղմուկ-աղաղակով շարժվեց դեպի այդ վանքը և նորից խնդրեց կաթողիկոսին հրաժարվել իր մտադրությունից: «Եւ կաթողիկոսն նստեալ ի վերայ աթոռոյ օրհներ զՆիկոլ աբեղայն եպիսկոպոս, և խաչիւն որ ի ձեռին էր՝ սատեր ժողովրդեանն և զբանս տգեղս, զոր ոչ է պարտ յիշել՝ ասեր նոցա: Եւ թէպետ ողորմելի ժողովուրդն ամբոխեալ՝ յոգնակի աղաղակեցին, ոչ լուաւ նոցա կաթողիկոսն, այլ օրհնեաց զՆիկոլն եպիսկոպոս»[1]:

Մի քանի օր անց կաթողիկոսը Կամենեց-Պոդոլսկ մեկնելուց առաջ Նիկոլին մի կոնդակ տվեց՝ ուղղված Լվովի հայ բնակչությանը, որով սպառնում էր բանադրանքի ենթարկել բոլոր նրանց, ովքեր կհրաժարվեն հնազանդվել Նիկոլին: Կաթողիկոսը Կամենեցում հիվանդացավ և 1626 թ. մահացավ ու այնտեղ էլ թաղվեց:

Կամենեցում Նիկոլը, խախտելով հայոց եկեղեցական կանոնները, ոմն հույն սարկավագի ձեռնադրում է աբեղա՝ անունը դնելով Օնուփրիոս: Սրա դեմ վճռականորեն բողոքում է էջմիածնի կաթողիկոսի անունից Կամենեց ժամանած կեսարացի Գրիգոր վարդապետը: Ի պատասխան՝ Նիկոլը փակում է քաղաքի երկու եկեղեցիները և բանալիները վերցնում իր մոտ: Ապա քաղաքի լեհական վոյտ Լուկաչին խնդրում է, որպեսզի վարդապետին չթողնի Լվով գնալ և վտարի Լեհաստանից: Վոյտը այդպես էլ վարվում է: Գրիգոր վարդապետը էջմիածին վերադառնալով, ամեն ինչ պատմում է կաթողիկոսին, որը դրա հիման վրա շուտով բանադրանքի է ենթարկում Նիկոլին:

---

[1] Պատմութիւն **Առաքելի վարդապետի Դավրիժեցւոյ**, Վաղարշապատ, 1896:

Լվովահայերը Նիկոլից պահանջում են մեկնել Կեսարիա և ներողություն խնդրել Գրիգոր վարդապետից: Կեսարիա գնալիս Նիկոլը Բուրսայում հանդիպում է խարբերդցի Արիստակես վարդապետին, որը նախանձի հողի վրա թշնամական հարաբերությունների մեջ էր գտնվում Գրիգոր վարդապետի հետ: Նա Նիկոլին խորհուրդ է տալիս Կեսարիա գնալու փոխարեն մի նամակ ուղարկել Գրիգորին և ներողություն խնդրել, հայտնելով, որ Կեսարիայի ճանապարհին հիվանդացել է: Նիկոլը վարդապետին խնդրում է միջնորդել բանադրանքն իր վրայից հանելու համար և մի նամակ էլ գրում է Լվովի ժողովրդին, որպեսզի վերջինս հնազանդվի իրեն: Գրիգորը կարծելով, թե եպիսկոպոսը անկեղծորեն է իրեն դիմում, ներում է նրան, վերացնում բանադրանքը և օրհնության խոսք գրում Լվովի հայ բնակչությանը: Նիկոլն այդ նամակով վերադառնում է Լվով և ամեն ինչ հարթում: Սակայն շուտով Գրիգոր Կեսարացուն հայտնի է դառնում Նիկոլի խարդախությունը: Նա մի նոր նամակով դիմում է Լվովի հայությանը, նզովում եպիսկոպոսին և բանադրանքն ուժի մեջ թողնում:

1630 թ. Գրիգոր վարդապետը Լվով է ուղարկում Խաչատուր վարդապետին, որը փորձում է հորդորանքների միջոցով դարձի բերել Նիկոլին: Բայց ապարդյուն: Խաչատուր վարդապետը մի օր եկեղեցում դիմում է հավատացյալ ժողովրդին, ասելով. «Այն մարդն անիծեալ լինի, որ սորա յետևն զծուներ դնէ»: Երբ ժողովուրդը դուրս է գալիս եկեղեցուց, հայոց դատավորներն այն կողպում են և որոշում Խաչատուր վարդապետի մասնակցությամբ Նիկոլին դատել անօրինականությունների և կամայականությունների համար: Նիկոլը դատավորների դեմ քաղաքական չանտաժի է դիմում և խուսափում է դատից: Դրանից հետո ճիզվիտ հոգևորականները խորտակում են հայոց եկեղեցու դռները և Նիկոլին հանձնում այն՝ իր բոլոր չարժական և անշարժ գույքով հանդերձ: Հայերը երկար ժամանակ հրաժարվում էին եկեղեցի մտնել: Իր թիկունքում զգալով կաթոլիկ եկեղեցու պաշտպանությունը, Նիկոլն ավելի սանձարձակ է դառնում: «Քանզի կարի զօրութեամբ զօրացավ Նիկոլ եպիսկոպոսն և բռնացաւ ի վերայ ժողովրդեանն Հայոց, կալնոյր զերիցունս, առ ոմ ոք և գտանէր սուղ ի վնաս և արկանէր ի բանէ և առնոյր ի նոցանէ զտուգանս զերիս հարիւր և չորս հարիւր դուռուշս. սոյնպէս և զիշխանս որք և դատաւորք էին կարգեալք կալեալ տուգանէր»: Այսպես, մեռել թաղելու համար մինչև իրեն չվճարեին, թույլ չէր տալիս թաղել, նույնը և գերեզմանի վրա տապանաքար դնելու, պսակի, մկրտության ժամանակ: Մեռելներին թաղում էին ուրիշ քաղաքներում, պսակվում և մկրտվում էին նույնպես այլ վայրերում: «Եւ բազում տղայք մեռանէին առանց մկրտութէան, եւ բազում տղայք կային անմկրտեալք հնգետասան և վեցտասանամեայ, բազում հիւանդք առանց հաղորդութեան մեռանէին և բազում մեռեալք մնային անթաղք յամս բազումս... Եւ բովանդակ եօթն խորհուրդ եկեղեցւոյ և ամենայն ժամակարգութիւն խափանեցաւ եւ մնացին ողորմելի ժողովուրդքն ի մէջ անհնար նեղութեանց առաւել քան զոր ի ժամանակս կռապաշտութեանն»:

Լվովահայերը էջմիածնի Մովսես կաթողիկոսի մոտ ուղարկեցին իրենց ներկայացուցչին՝ խնդրելով օգնել իրենց: Կաթողիկոսը նամակով դիմեց Լեհաստանի թագավորին, Հռոմի պապին և Լվովի կաթոլիկ արքեպիսկոպոսին և խնդրեց օգնել եկեղեցին ժողովրդին վերադարձնելու համար: Վլադիսլավ 4-րդ թագավորը հրամայեց անմիջապես եկեղեցին հանձնել հայերին, բայց ճիզվիտները դիմադրեցին, հայտարարելով, թե թագավորն աշխարհիկ իշխանավոր է, իսկ եկեղեցին վերաբերում է պապի իրավասությանը: Դրանից հետո թագավորը խնդրեց հարգել հայերի պահանջը, բայց ճիզվիտները և նրանց հետ միասին Նիկոլը մնացին անդրդվելի: Այս անգամ թագավորն անձամբ գնաց հայոց եկեղեցի, որպեսզի այն հանձնի ժողովրդին: Այս անգամ էլ նրա դեմ դուրս եկավ հանդիսավոր զգեստավորված Նիկոլ եպիսկոպոսը: Թագավորը նրան տեսնելուց հետո թողեց ու ձեռնունայն հեռացավ[1]: Փիլիպոս կաթողիկոսը մի անգամ Երուսաղեմից վերադառնալիս ժամանում է Կոստանդնուպոլիս, ուր մեղայականով ներկայանում է նաև Նիկոլը: Կաթողիկոսը խոստանում է բանադրանքը հանել, եթե Նիկոլը գրավոր պարտավորություն ստանձնի լուսավորչական կրոնին վերադառնալու մասին: Սակայն Լվով դալուց հետո Նիկոլը շարունակում է իր պառակտիչ գործունեությունը:

Լվովի հայ բնակչությունը բազմաթիվ զրկանքների և մեծ զոհողությունների գնով տակուռնորեն դիմադրում էր կաթոլիկական ռեակցիային և հայազգի դավաճաններին՝ պաշտպանելով իր ազգային կրոնական ավանդույթները: Հռոմի եկեղեցին համոզվելով, որ, լեհահայոց եկեղեցուն միությունն պարտադրելը հեշտ գործ չէ, Լվով է ուղարկում կաթոլիկական փորձված քարոզիչ Կղեմես Գալանոսին, որը մինչ այդ երկար տարիներ գործել էր Հայաստանում, քաջատեղյակ էր հայոց պատմությանը, հայերի կրոնական ավանդույթներին և գերազանց տիրապետում էր հայերենին: Նրա ղեկավարությամբ Լվովում կազմակերպվում է հայ երեխաների կրթությունն ու դաստիարակությունը: Դպրանոցի աշակերտներից նա նույնիսկ կազմակերպում է թատերական խմբակ, որը ներկայացումներ էր տալիս հայոց պատմության առանձին թեմաներով: Նա փորձում էր երեխաների մեջ պատվաստել այն գաղափարը, թե իբր հայոց եկեղեցին միշտ էլ հակված է եղել դեպի կաթոլիկական դոգմաները:

Հակառևիթոռական պայքարի տարիներին լեհահայ գաղթավայրերի բնակչությունը գնալով նոսրանում էր: Շատերը հեռանում էին՝ չցանկանալով դավանափոխ լինել: Այդուհանդերձ արտագնացության հիմնական պատճառը մնում էր լեհական քաղաքների օրըստօրե վատացող տնտեսական դրությունը,

[1] Մինաս Բժշկեանց, նշվ. աշխ., էջ 114:

որը արհեստներն ու առևտուրը դարձնում էր անեկամտաբեր զբաղմունք: Սիմեոն Լեհացին, լինելով այդ տխուր վիճակի ականատեսը, ցավով նշում էր, որ Լեհաստանի երբեմնի հայաշատ քաղաքներում մնացել են շատ քիչ հայեր: Ըստ նրա, Լուցկում առաջ կար 800 հայկական տուն, իսկ 17-րդ դ. երկրորդ կեսին մնացել էին միայն երկուսը[1]: Նույնպիսի տվյալներ է նա բերում նաև Յազլովեցի, Զամոստիեի և մյուս քաղաքների մասին: Կամենեց-Պոդոլսկի հայկական համայնքը խիստ տուժեց 1672 թ. լեհ-թուրքական պատերազմի պատճառով: Ըստ լեհ հետազոտող դոկտոր Անտոնիի, 1614 թ. այնտեղ բնակվում էր մոտ 1200 հայկական ընտանիք[2]: 1820 թ. լինելով այնտեղ, Մինաս Բժշկյանցը հաշվել է ընդամենը 70 ընտանիք[3]: Սադոկ Բարոնչը գտնում էր, որ 1600 թ. արվարձանների հետ միասին Լվով քաղաքում բնակվում էր 1000 հայկական ընտանիք: 1784 թ. այնտեղ մնացել էր ընդամենը 212 հայ[4]: Տ. Գրոմնիցկին հաղորդում է, որ 1664 թ. այլևս ոչ մի հայ չէր ապրում ոչ Գալիչում, ոչ էլ Վլադիմիրում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Լեհաստանում մնացած փոքրաթիվ հայերն անզոր էին շարունակելու պայքարը հանուն ազգային դավանանքի: Ուժերը չափից դուրս անհավասար էին: Ավելի քան կես դար կանգնած լինելով լեհահայ թեմի գլուխ՝ Նիկոլ Թորոսովիչը ոչ մի միջոցից չխորշեց լեհահայերին դավանափոխելու համար: Երկերեսանությունը, ուխտադրժությունն ու երդմնազանցությունը, ստախոսությունն ու խաբեբայությունը նա զուգորդում էր ահաբեկումներով ու սպառնալիքներով, որոնց միակ նպատակն էր հնազանդեցնել հայերին: Մի քանի անգամ նա անեծքի ու բանադրանքի ենթարկվեց, բայց չհրաժարվեց իր հակաազգային գործունեությունից: 1681 թ. նա մահացավ: Նրան փոխարինեց մի այլ ուրացող՝ Վարդան Հունանյանը, որը վերջնականապես ավարտեց Հռոմի եկեղեցու հետ Լվովի հայոց եկեղեցու միությունը: Դրա հետևանքով խզվեցին լեհահայ եկեղեցու, հետևապես և լեհահայերի հոգևոր կապերը Հայաստանի հետ, մի բան, որը որոշ չափով արագացրեց մինչ այդ էլ արդեն ուծման ուղին բռնած հայերի ձուլման ընթացքը[5]:

[1] **Սիմեոն Լեհացի**, նշվ. աշխ., էջ 143:

[2] **D-r Antoni**, Nowe opowiadanie his historierne, Lwo'w, 1883, էջ 165-166:

[3] **Մինաս Բժշկեանց**, նշվ. աշխ., էջ 129:

[4] Լվովի ԿՊՊԱ, ֆ. 52, ց. 1, պմ. 128:

[5] Ունիթորների դեմ լեհահայոց մղած պայքարի մասին մանրամասն տե՛ս **Մինաս Բժշկեանց**, նշվ. աշխ. էջ 111-118:

***

Մի քանի դար ապրելով հայրենի ափերից հեռու, լեհահայերը պահպանեցին ազգային մշակույթի ավանդույթները և նոր պայմաններում դրանց հիման վրա ստեղծեցին հարուստ ու հետաքրքիր հոգևոր արժեքներ: Լվովում, Կամենեց-Պոդոլսկում և ուրիշ հայաբնակ քաղաքներում զարգանում էին մատենագրությունը, պատմագրությունը, թարգմանչական գործը: Այս ասպարեզի առավել աչքի ընկնող դեմքերից են Սիմեոն Լեհացին, Հովհաննես Կամենեցացին, Ստեփանոս Ռոշքան, Ստեփանոս Լեհացին, Հովհաննես Ավագեցը և ուրիշներ: Բանաստեղծներից ու առակագիրներից հայտնի են Մինաս Թոքատեցին, Հակոբ Թոքատեցին, Պարսամ Տրապիզոնցին:

Գաղթավայրերում հիմնվել և երկար ժամանակ գործում էին դպրոցներ, դպրատարաններ, նույնիսկ տպարան և այլ մշակութային օջախներ ու հաստատություններ: Դպրոցներում դասավանդվում էին քերականություն, առոգաբանություն, թվաբանություն, հռետորական և թարգմանչական արվեստ: 16-17-րդ դդ. Լվովում գոյություն է ունեցել նաև հայկական ազգային հիվանդանոց, որը պահվել է տեղի հայ համայնքի կատարած հանգանակությունների, նվիրատվությունների և կտակած գումարների հաշվին:

1616 թ. Լվովում Հովհաննես Քարմատանենցը հիմնում է տպարան, որը, սակայն, գործում է շատ կարճ ժամանակ: Եկեղեցիներում, դպրոցներում և շատ լեհահայերի տներում կային գրադարաններ և այլ լեզուներով գրքեր ու ձեռագիր մատյաններ:

Գաղթօջախների մեծ մասում կառուցվել էին եկեղեցիներ, վանքեր, մատուռներ և կրոնական այլ շինություններ, որոնց մինչև այժմ պահպանված նմուշները պերճախոս կերպով վկայում են ազգային հինավուրց ավանդույթների պահպանման մասին: Դրա վառ օրինակներից մեկն է Լվովի հայոց տաճարը, որը իր հիմնումից (1363 թ.) ի վեր մի քանի անգամ վերակառուցվելուց հետո էլ ամենևին չի կորցրել նախնական ազգային դեմքը: Տաճարի բակում եղած խաչքարերը և տապանաքարերը ցույց են տալիս, որ այնտեղ զարգացել է նաև գեղարվեստական քանդակագործության այդ յուրահատուկ ճյուղը: Շատ քաղաքներում զարգանում էին կերպարվեստը, գեղարվեստական ոսկերչությունը, ասեղնագործությունը:

Լեհահայ նկարիչների արվեստի մասին կարելի է պատկերացում կազմել ոչ միայն եկեղեցիների որմնանկարներից ու ձեռագիր մատյանների մանրանկարներից, այլև առանձին նկարիչների կտավներից: 16-րդ դ. վերջին և 17-րդ դ. առաջին կեսին իրենց ստեղծագործություններով աչքի են ընկել նկարիչներ Պավել Բոգուշը, նրա որդիներ Սիմեոնը և Յանը: Սիմեոն Բոգուշի «Կեղծ Դմիտրի և Մարինա Մնիշեկի թագադրությունը Մոսկվայում» մեծարժեք կտավը չափազանց ուշագրավ է նաև այն տեսակետից, որ ստույգ պատ-

կերացում է տալիս Կեղծ Դմիտրիի շրջապատի մի շարք ռուս և լեհ պատմական անձանց մասին:

Գեղարվեստական բարձր մակարդակի էր հասել հայ ոսկերիչների արվեստը: Սրանք սովորաբար կատարում էին մեծատոհմիկ ազնվականների և նույնիսկ լեհ թագավորների (օրինակ, Յան Սոբեսկու) անհատական պատվերները: Բարձրարժեք էր նաև կաշեգործ վարպետների, ասեղնագործողների արտադրանքը: Հայ արհեստավորների պատրաստած կոշիկները, գեղեցիկ տնային մաշիկները, գոտիները, ոսկեթելով ու թանկարժեք քարերով զարդանախշված հագուստը, զենքը, ձիերի լծասարքը արժանացել էին լայն ընդունելության:

Լեհաստանում և Արևմտյան Ուկրաինայում իրենց հինգհարյուրամյա գոյատևման ընթացքում հայ գաղթօջախներն անցան դժվարին ու բարդ ուղի: Գտնվելով սոցիալ-տնտեսական, հասարակական, ազգային ու կրոնական օտար միջավայրում, որն իր զորեղ ազդեցությունն էր գործում նրանց կյանքի պայմանների վրա, լեհահայերը, այնուամենայնիվ, երկար ժամանակ պահպանել էին իրենց ազգային դեմքը (լեզուն, կրոնը, մշակույթը): Դա առաջին հերթին բացատրվում էր լեհահայերի տնտեսական բավական անկախ ու ապահով վիճակով, երբ լեհական իշխանությունները, ելնելով իրենց երկրի տնտեսական զարգացման շահերից, հովանավորում և խրախուսում էին հայոց առևտրաարհեստագործական գործունեությունը: Իրենց ազգային դեմքը պահպանելուն ուղղված՝ լեհահայերի համառ ջանքերը բավարար չգտնվեցին այն հզոր օրինաչափությունների հանդեպ, որոնք գործում են հայրենիքից հեռու օտար էթնիկական միջավայրում, և հենց այդ օրինաչափությունների և գլխավորապես բարձր մշակութային միջավայրի տևական ազդեցության պատճառով լեհահայերը դարձան ձուլման զորեղ ուժի զոհը: Պատմականորեն դա բացատրելի երևույթ էր:

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Հայերի մասսայական գաղթը դեպի Բալկաններ և Բուլղարիա մեծ չափերի է հասնում 7–11-րդ դարերում, երբ Հայաստանում ծավալվում են նախ պավլիկյան, ապա նաև թոնդրակյան աղանդավորական շարժումները: 752 թ. Բյուզանդիայի Կոնստանդին 5-րդ կայսրը Թեոդոսուպոլիսը (Կարին, Էրզրում) և Մելիտինեն արաբներից գրավելուց հետո այստեղ ապրող ու գործող հայ և ասորի աղանդավորներին տեղափոխում է Թրակիա, մասնավորապես Ֆիլիպոպոլիս (այժմ՝ Պլովդիվ, Բուլղարիա) քաղաքի շրջակայքը, ու ռազմական ծառայություններից օգտվելով՝ նրանց տալիս է կացարաններ և հողաբաժիններ[1]: Հետագայում, 9–10-րդ դարերում նույնպես բյուզանդական կայսրերը հազարավոր հայերի, այս անգամ արդեն աղանդավորների, գերեվարում են Թրակիա և բնակեցնում հիմնականում Ֆիլիպոպոլսին մերձակա շրջաններում և Մակեդոնիայում: Նկատելի թիվ էին կազմում «կամովին» արտագաղթողները, որոնք արաբական գերիշխանությունից ազատվելու համար սովար խմբերով անցնում էին Բուլղարիայի պատմական տարածքները: Հայերի այս տեղաշարժերի հետևանքով Բալկաններում և առանձնապես Բուլղարիայի երբեմնի սահմաններում առաջանում են Ֆիլիպոպոլսի, Նիկիայի, Մգլենի, Դևելի, Սրեդեցի (այժմ՝ Սոֆիա), Բիտոլիայի, Թըռնովոյի, Ադրիանապոլսի և այլ քաղաքների ու գյուղական վայրերի հայկական գաղթօջախները: Մեծ թվով հայերի՝ պարբերաբար Թրակիա տեղափոխելու հետևանքով Բալկաններում համախմբվել էր գաղթական հայերի տասնյակ հազարների հետնյալ մի հոծ բազմություն: Բյուզանդական պատմիչ Աննա Կոմնենեի (1083–1148) վկայությամբ, Ֆիլիպոպոլիս քաղաքի վրա «հայերը, այսպես կոչված բոգոմիլները, ինչպես նաև ամենաանաստված պավլիկյանները ... համատեղ տիրություն էին անում»[2]:

Միջնադարյան հայ-բուլղարական հարաբերություններում եղել են նաև դեպքեր, երբ բուլղարների դեմ կռվելու համար Բալկաններ տեղափոխված հայերը հրաժարվել են բյուզանդական կայսրերին ծառայելու հարկադրանքից և անցել բուլղարների կողմը, մասնակցել բախտակից ժողովրդի ազատագրական պայքարին: Այդպիսիներից էին, օրինակ, Սամուել Կոմսաճագը և նրա եղբայրը, որոնք երկար տարիներ գլխավորեցին բուլղարների պայքարը բյու-

[1] Բարթիկյան Հր., Պավլիկյանների առասպելական ծագումը, ՀՍՍՌ, ԳԱ «Տեղեկագիր», 1957, թիվ 1, էջ 86:

[2] Հայ ժողովրդի պատմության էքստրամատիա, հ.1, եր., 1981, էջ 803–806:

զանդացիների դեմ: Սամուելը 997 թ. հռչակվեց Բուլղարիայի թագավոր և իշխեց մինչև 1014 թ.:

Հայկական համայնքները կայուն տեղ էին գրավել միջնադարյան Բուլղարիայի բնակչության շրջաններում և հաճախ որոշակի դեր կատարել երկրի ներքին և արտաքին կյանքի տարբեր ոլորտներում: Հայ և բուլղար աղանդավորական շարժումները, որոնք նկրտում էին սասանել իրենց երկրներում գերիշխող պաշտոնական եկեղեցիների հիմքերը, ուղղված էին նաև Հայաստանում և Բուլղարիայում Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության դեմ: Պատահական չէ, որ բուլղար թագավորներից ոմանք (Կրումը, Սիմեոնը, Սամուելը, Կալոյան, Իվան Ասենը և ուրիշներ) հմտորեն օգտվել են հայ և բուլղար աղանդավորների հակաբյուզանդական տրամադրություններից, «հանդուրժող» քաղաքականություն վարել նրանց նկատմամբ և նրանց ռազմունակ ուժերն օգտագործել Բուլղարիա ներխուժած օտար նվաճողների դեմ:

Բոգոմիլների մղած սոցիալական ու քաղաքական պայքարում նրանց ամենահուսալի համախոհն ու զինակիցները եղել են հայ պավլիկյանները: Ըստ Պետրոս Սիկիլիացու, որը Վասիլ Ա կայսեր հանձնարարությամբ 869-ին ժամանել էր Հայաստանում պավլիկյանների կենտրոնատեղի Տիվրիկ քաղաք-ամրոցը, պավլիկյաններն այստեղ ծրագրել էին Բուլղարիայի տարբեր շրջանները գործուղել իրենց մարդկանց՝ ուղղափառներին դարձի բերելու և պարզամիտներին իրենց «պիղծ աղանդի կողմը քաշելու համար»[1]:

Բուլղարիայի տարբեր շրջաններում հաստատված պավլիկյան հայերը, բացի ռազմական գործից, զբաղվում էին նաև երկրագործությամբ, առևտրով և արհեստներով: Նրանք առևտրական սերտ կապեր ունեին Հունգարիայի, Իտալիայի, Հարավային Ֆրանսիայի ու եվրոպական այլ երկրների հետ:

Բյուզանդական կայսրերի, ապա նաև բուլղար կառավարող շրջանների ու պաշտոնական եկեղեցու հետևողական հալածանքների ու ճնշումների հետևանքով Բուլղարիայում պավլիկյան և բոգոմիլյան ընդվզումները հետզհետե կորցնում են իրենց նախկին ազդեցությունը և անկում ապրում: Հայերի զգալի մասը ժամանակի ընթացքում ձուլվում է բուլղարների մեջ, մի որոշ մասը ընդունում է կաթոլիկություն, իսկ շատերը արտագաղթում են Արևմուտք՝ Իտալիա, Հարավային Ֆրանսիա և այլուր, որտեղ նույնպես ծնունդ են տալիս համանման աղանդների: Եվ, այդուամենայնիվ, Բուլղարիայում բնակավորված հայ պավլիկյան համայնքները երկար հարատևեցին՝ իրենց հետքը թողնելով պահպանված տեղանուններում, ինչպես, օրինակ, Պավլիկենի, Գորնո Պավլիկենի, Դոլնո Պավլիկենի, Թորոս, Կալինիկ, Արմենոխոր, Պավլիկյանսկա մահալա և այլն: Բուլղարիայի պատմական տարածքներում պահպանվել են հայ-

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության ըրեստոմատիա, հ.1. Բյուզանդական աղբյուրները պավլիկյան շարժման մասին, թարգմ. հունարեն բնագրից և ծանոթագրությունները Հ.Մ.Բարթիկյանի, Եր., 1981, էջ 745-746:

կական մեծ կամ փոքր համայնքների առկայությունը հուշող նաև այլ տեղանուններ՝ Արմենիցա, Արմենիտե, Էրմենլի, Էրմենակո (վերջին երկուսը արդեն օսմանյան տիրապետության շրջանում) և այլն:

Մինչև ուշ միջնադար Բուլղարիայում ապրել ու գոյատևել են նաև բաղքեդոնական հայեր՝ իրենց եկեղեցիներով, վանքերով և հոգևոր մշակույթի այլ և այլ հաստատություններով: 11-րդ դարում Ֆիլիպոպոլսի շրջակայքում ապրում էին քաղքեդոնական դավանանքին հարող հայեր, որոնք քաղաքից ոչ հեռու հիմնել էին իրենց հոգևոր կենտրոնը՝ Պետրիցիոնի (այժմ՝ Բաչկովոյի) վանքը: 1083 թ. կամ 1084 թ. այն կառուցել էին նշանավոր ռազմական ու պետական գործիչներ հայազգի Գրիգոր և Աբաս Բակուրյան եղբայրները: Վանքի բացառապես հայ և վրացի միաբանները դավանաբանական դործուն քարոզչություն էին ծավալել պավլիկյան և բոգոմիլյան ուսմունքին հետևողների դեմ:

Միջնադարյան Բուլղարիայի տարբեր քաղաքներում՝ Օխրիդում, Սարամիցայում, Սրեդեցում, Դևոլում, Վելիկո-Թրնովոյում և այլուր գոյություն են ունեցել նաև լուսավորչական հայերի ոչ մեծ համայնքներ: 12-րդ դարում Ֆիլիպոպոլսում գործում էր հայկական վանք՝ Հովհաննես Ութմանի վանահայրությամբ: Այս ժամանակներում էր գործում, օրինակ, Ֆիլիպոպոլսի հոգևոր առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը, որը հույն և լատին լեզուների իմացության համար մեծ համարում ուներ Գրիգոր Տղա կաթողիկոսի մոտ: Վերջինս նրան նշանակել էր որպես հայ լուսավորչական եկեղեցու պաշտոնական բանագնաց:

Հայ ժողովրդի առանձին հատվածների երկարատև շփումը բուլղար ժողովրդի հետ իր արտացոլումն էր գտել նաև հոգևոր մշակույթի բնագավառներում, մանավանդ առավել աշխարհիկ բովանդակությամբ ու մատչելի լեզվով հորինված գրավոր կամ բանավոր ստեղծագործություններում: Քրոնիկների, վիպակների, պատմահերոսական և քարոյախոսական լեգենդների ու զրույցների հետ միասին ընթերցող և ունկնդրող հասարակության մեջ լայն ժողովրդականություն էին վայելում այսպես կոչված պարականոնները: Պաշտոնական եկեղեցու կողմից «մերժված, արգելված ու անվավեր» համարված այս պատմությունների սիրալիր ընդունելությունը բացատրվում է նաև նրանով, որ ինչպես պավլիկյան հայերը, այնպես էլ բոգոմիլները դրանց մեջ ներարկել էին իրենց աշխարհիկ ըմբռնումները, ավետարանական քարոզների յուրովի մեկնաբանությունները, ինչպես նաև իրենց հակաֆեոդալական տրամադրությունները: Հայաստանում ևս դեռ շատ վաղուց տարածված է եղել այդ ժանրի գրականությունը՝ ապոկրիֆները, որոնք գրկաբաց էին ընդունվում հատկապես աղանդավորական միջավայրում, սիրվում էին որպես նրանց ուսմունքին մոտեցող գաղափարախոսություն[1]:

[1] Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, հ. Ա, եր., 1944, էջ 12:

Բուլղարիայի մի շարք շրջաններում, որտեղ ժամանակին ապրել ու գոյատևել են գաղթական հայերի հոծ զանգվածներ, բուլղարական ճարտարապետական որոշ հուշարձաններ, ինչպես Բաչկովոյի վանքը, Պերուշտիցայի «Կարմիր եկեղեցին» և կրոնական այլ շինություններ, իրենց վրա են կրել հայկական միջնադարյան ճարտարապետության անկհայտ ազդեցությունը:

***

14-րդ դարի երկրորդ կեսին օսմանյան թուրքերը ներխուժում են Բուլղարիա և հետզհետե նվաճում երկրի առավել նշանավոր քաղաքները. 1396 թ. բուլղարական երկրորդ թագավորության մայրաքաղաք Թըռնովոյի անկմամբ ամբողջ երկիրն ընկնում է օսմանյան դավիճիչների բռնատիրության տակ:

Որպես քրիստոնյա ռայաներ, Բուլղարիայում ապրող հայերը ևս բուլղարներին հավասար բաժանում են օսմանյան հինգդարյա լուծը: Ձգտելով օսմանյան կայսրության բալկանյան տարածքներն ամրապնդել մահմեդական տարրերով, թուրք կառավարողները բուլղարների հետ միասին տեղահան են անում նաև մի շարք վայրերի հայերին և նրանց տեղափոխում այլ շրջաններ: Սակայն Բուլղարիայի հայ գաղթօջախների մնացորդները չարունակում են գոյատևել հատկապես այն վայրերում, որոնք ընկած էին Բուլղարիայից դեպի արտաքսարհ տանող բանուկ ճանապարհների վրա, և որտեղ քիչ թե շատ զարգացած էին առևտուրը, արհեստներն ու հողագործությունը:

Սակայն Բուլղարիայի հայ համայնքների պատմությունը արձանագրել է այլ բնույթի իրողություն ևս՝ թուրքերի նվաճած երկրներից հայերի գերեվարումը դեպի Բուլղարիա: Այսպես, 1484 թ. Մոլդովան գրավելուց հետո, հատկապես Աքերմանի հայությունը տեղափոխվում է Բուլղարիա: 1549 թ. գաղթական հայերի նորանոր հոսանքներ են հայտնվում Բուլղարիայում: 1606-1607 թվականներին Բուլղարիա են տեղափոխվել Շահ Աբասի կողմից տեղահանված գաղթական հայերից: 1673 թ. սուլթան Մուհամեդ 3-րդի կողմից լեհերից գրավված Կամենեց քաղաքի բազմաթիվ հայեր երկար թափառումներից հետո հասնում են Բուլղարիայի սևծովյան ափերը և հետզհետե տեղափոխվում երկրի ներքին տարածքները: Թուրք-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով Հայաստանի տարբեր վայրերից գաղթի դիմած հայերի նոր խմբեր են հայտնվում Բուլղարիայում: Մինչ այդ էլ, 13-14-րդ դարերում, մոնղոլական արշավանքներից, Անիի երկրաշարժից (1336) և Կիլիկյան Հայաստանի անկումից (1375) հետո պարբերաբար Բուլղարիա էին գաղթել հարյուրավոր ու հազարավոր հայ ընտանիքներ, որի հետևանքով Բուլղարիայում նվազող հայկական հին գաղթավայրերը նոր համալրումներ էին ստանում: Վերակազմվում են մի շարք նոր բնակավայրեր, ինչպես Ռուսչուկի (այժմ՝ Ռուսե), Վառնայի, Բուրգազի, Շումենի, Պրովադիայի, Ռազգրադի, Այտոսի, Սլիվենի, Սիլիստրայի և այլ հայկական համայնքները:

Բուլղարահայերի սոցիալական-ընկերային կյանքի թելադրանքով առավել աշխույժ գաղթօջախներում ստեղծվում են հոգևոր մշակույթի կենտրոններ, եկեղեցիներ, վանքեր, միաբանություններ, թեմական առաջնորդարան և այլն: Մինչև 15-րդ դարը Ֆիլիպոպոլիսը համարվում էր Բուլղարիայում ապրող հայերի թեմական առաջնորդի նստավայրը, որտեղ ծառայել են հոգևոր ու աշխարհիկ նշանավոր դեմքեր: Հովհ. Ութմանից և Գրիգոր եպիսկոպոսից հետո ոչ պակաս հեղինակություն է վայելել նաև Ֆիլիպոպոլիսի հոգևոր առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսը, որը հետագայում ընտրվել է Կ. Պոլսի պատրիարք:

Բուլղարիայի հայ գաղթավայրերն աչքի են ընկել նաև հայկական դպրության օջախներով, որտեղ գրվել կամ ընդօրինակվել են մի քանի տասնյակ հայերեն ձեռագրեր: Բուլղարիայում պահպանված միջնադարյան և ավելի ուշ շրջանի հայերեն ձեռագրերի որոշ մասը ստեղծվել է Ֆիլիպոպոլսում, Ադրիանապոլսում, Սոֆիայում, Բուրգազում և բուլղարահայ գրչության այլ օջախներում: Սակայն այդ ձեռագրերի գերակշիռ մասը ստեղծվել է պատմական Հայաստանի, Փոքր Ասիայի, Կ. Պոլսի և այլ վայրերի հայոց հոգևոր մշակույթի կենտրոններում:

Մինչև մեր դարասկիզբը Բուլղարիայում պահպանված շուրջ 200 հայերեն ձեռագրեր ինչ-ինչ ճանապարհներով «արտագաղթել» են երկրից: Դրանց մի մասն այսօր գտնվում է Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների գրապահոցներում, մի որոշ մասն էլ նվիրաբերվել է Էջմիածնի մատենադարանին[1]: Սակայն այժմ էլ Բուլղարիայում կան մի քանի տասնյակ հայերեն ձեռագրեր:

Բուլղարահայ գաղթօջախների հավաքական կյանքի առհավատչյան են նաև երբեմնի հայաբնակ վայրերում հայտնաբերված քարակերտ հուշարձանները՝ եկեղեցիները, եկեղեցական շինությունները, ինչպես նաև անցած-գնացած փառքի վկաները՝ բազմաթիվ հայախոս տապանաքարերը: Միջնադարյան Բուլղարիայում, մասնավորապես հայ և բուլղար աղանդավորական շարժումներով երբեմնի աշխույժ բնակավայրերում, ի հայտ են եկել հնաբույր, անխաչ տապանաքարեր. դա վկայում է, որ դրանք պատկանել են պավլիկյան հայերին կամ բուլղար բոգոմիլներին[2]: Հետագայում հայկական տապանաքարերն

[1] Տե՛ս Գաս ապ յան Ն., Անցյալի մեջ բուլղարահայերու պատկանող, այժմ անհայտ կամ պրոտեստանտական գտնվող ձեռագրերը, Հանդես ամսօրյա, 1945, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 98-99:

[2] Մես թոպ Գ., Հայկարան, Սոֆիա, 1931, էջ 45:

առանձնանում են իրենց հայատառ արձանագրություններով ու զարդանախշերով:

Բուլղարիայի հայ գաղթօջախներից հնագույններից մեկը Ֆիլիպոպոլսի հայկական համայնքն էր: Օսմանյան տիրապետության օրերին այն մեկ նոսրացել, մեկ էլ ստվարացել է, սակայն համայնքը միշտ էլ գոյատևել է:

Ճանապարհորդ Սիմեոն դպիր Լեհացին, 1608 թ. անցնելով Բալկանյան երկրներով, այցելել է նաև Բուլղարիայի մի շարք հայաբնակ վայրեր և արձանագրել, որ «Եվ թե հաչուէս ի Պուղտանու (իմա՝ Մոլդովա –Կ. Ճ.) մինչև Ստամբուլ, պուխուն Ուռումելին մինչև մեծ Վանատիկ, նա չկա քաղաք, գեղ կամ չֆտլիկ, որ հայ չկենայ, որ վանն ծովացեալ մեզաց մերոց ցիրուցան եղեալ իմք ի վերայ երկրի որպէս զփոշի»[1]:

Սիմեոն Լեհացին կարճատև դադարով երկու անգամ եղել է նաև Հուլուպայում, այն է՝ Ֆիլիպոպոլսում, և պարզել, որ Մարիցա գետին բազմած այս մեծ քաղաքում ապրում են 100 հայ ընտանիքներ, որոնք ունեն նաև իրենց քահանան: Սա, ինչպես երևում է, Ֆիլիպոպոլսի հայ բնակչության տեղատվության շրջանն էր: Մի քանի տասնամյակ անց Ֆիլիպոպոլիսը կրկին աշխուժանում է գաղթական հայերի նոր հոսանքով: Ֆիլիպոպոլսի հայ համայնքն առանձնապես կենդանացել է 1670-ական թվականներին, երբ Լեհաստանի Կամենեց քաղաքից այստեղ են ժամանում թուրքերի կողմից բռնագաղթված բազմաթիվ հայեր: Հետագայում նրանց ցանկությամբ և բարերար Ապրո Զելեպու աջակցությամբ հայերը ձեռք են բերում մինչ այդ հույներին պատկանող, բայց արդեն չգործող եկեղեցին և այն օծում «Սուրբ Գևորգ» անունով, որը մինչև օրս էլ գործում է: Եկեղեցու վերանորոգման նպատակով կազմակերպված հանգանակությանը մասնակցել են քաղաքում ապրող չոռոթցիները, էրզրումցիները, ուռուտցիները, անկյուրացիները, ջորոցիները, կարսեցիները և այլք: Ուրեմն, Ֆիլիպոպոլսի հայ գաղութը կազմված էր Հայաստանի տարբեր շրջաններից և տարբեր ժամանակներում գաղթի դիմած հայերից[2]:

Ֆիլիպոպոլսի հայ գաղութն աչքի է ընկնում նաև հնագույն տապանաքարերի հարուստ «հավաքածուով»: Այժմ էլ Ս. Գևորգ եկեղեցու բակում գտնվող մարմարյա շիրմաքարերը որոշակի պատկերացում են տալիս այս քաղաքի երբեմնի հայ բնակիչների մասին: Այդ դամբանաքարերի մի զգալի մասը կրում է 1697, 1751, 1802, 1806, 1813, 1828, 1831 և հետագա տարիների թվագրություններ:

[1] Սիմեոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, Հանդէս ամսօրեայ, 1932, թիվ 7-9, էջ 468-469:

[2] Գյուրտճյան Հ., Վավերագրություն մը, Բազմավեպ, 1930, թիվ 4, էջ 165:

Հին տապանաքարերով «հարուստ» է նաև Հյուսիսային Բուլղարիայում Դանուբի առափնյա Ռուսչուկ (այժմ՝ Ռուսե) քաղաքի հայկական համայնքը: Հայոց եկեղեցում մինչև օրս պահպանվել են շուրջ 40 շիրմաքարեր, որոնք վերաբերում են 1777-1856 թվականներին: Սակայն այս գաղթօջախը գոյության է ունեցել դեռ շատ վաղ ժամանակներից: 1640 թ., օրինակ, Ռուսչուկում ապրում էր 200 հայ ընտանիք, շուրջ 1000 մարդ, որոնք ապաստանել էին «պահանահարկ տներում և բոլորն էլ առևտրականներ» էին: 1768-ին Ռուսչուկի «սանճաք»-ում ապրում էին արդեն 200 հայեր, որոնց զգալի մասը՝ բուն Ռուսչուկում: Մինաս Բժշկյանցի վկայությամբ, 1813 թ. քաղաքի հայ բնակչությունը իր առաջին այցից հետո զգալիորեն ավելացել էր. այդ ժամանակ Ռուսչուկում կար 150 տուն հայ, գաղութն ուներ Ս. Աստվածածնի անվամբ եկեղեցի[1]: 1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո այն վերանորոգվել էր, սակայն գետնափոր էր, քանի որ թուրքերը թույլ չէին տալիս այն ավելի բարձր կառուցել: Ինչպես պարզվում է Ռուսչուկի հայկական տապանաքարերի արձանագրություններից, քաղաքի հայ բնակչության հիմնական մասը այստեղ էր եկել 17-րդ դարում՝ թուրք-պարսկական պատերազմների հետևանքով՝ Երևանից, Նախիջևանից, Ղափանից և Շոռոթից:

Օսմանյան տիրապետության ժամանակներում գոյատևած հնագույն գաղթօջախներից էր նաև Այտոսի հայկական համայնքը, որը սկզբնավորվել է 17-րդ դարի առաջին կեսերին: Այտոսի հայկական հին գերեզմանատունը մինչև 20-րդ դարի սկզբները պահպանվում էին ավելի քան 200 հայկական հին շիրմաքարեր՝ մարմարից և տեղական կանաչավուն քարից: Հայ համայնքն այստեղ ուներ նաև եկեղեցի: Նրա հիմնական զբաղմունքներն էին արհեստները, երկրագործությունը և առևտուրը:

Հայկական հին գերեզմանաքարերով աչքի է ընկնում նաև Բուլղարիայի Շումեն, անցյալում նաև Շումլա կոչված քաղաքը, որը Բալկաններում առևտրական ճանապարհների գլխավոր հանգույցներից մեկն էր: Շումենում ապրում էին զգալի թվով հայեր, որոնք ունեին նաև իրենց եկեղեցին ու քահանան: Շումենի հայոց եկեղեցում առայսօր կան բազմաթիվ տապանաքարեր, որոնք հիմնականում վերաբերում են 18-19-րդ դարերին: Մինաս Բժշկյանցը 1808 թ. Շումեն այցելելիս հաշվել է 200 տուն հայ ընտանիք: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում այստեղ հիվանդացել և վախճանվել է ռուսական բանակի հայազգի զորավար Վալերիան (Ռոստոմ) Մադաթովը: «Նրա մարմինը,- գրում է Րաֆֆին,- հանդիսավոր կերպով տարվեցավ նույն բերդը, թաղվեցավ սուրբ Գևորգ զորավարի եկեղեցու գավթում»[2]:

[1] Բժշկեանց Մինաս, նշվ. աշխ., էջ 210:

[2] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ.9, եր., 1987, էջ 600:

Բուլղարիայում մինչ այսօր հարատևող գաղթօջախներից են նաև Սոֆիայի, Վառնայի, Բուրգազի և այլ հայկական համայնքները: Սոֆիան Բուլղարիայի հնօրյա քաղաքներից է: Այն հիմնադրվել է մեր թվարկության առաջին դարում՝ հռոմեացիների կողմից, Սերդիկա անվամբ: Օտար աղբյուրներում Սոֆիայում ապրող հայերի մասին գրավոր հիշատակությունները վերաբերում են՝ 1533 (Հանս Դարնչվամ), 1559 (Վոլֆգան), 1605 (Յոհան Վիլդ), 1640 (Պետր Բոգդան), 1659 (Քիատոման) և այլն: Ըստ թուրքական աղբյուրների՝ 17-րդ դարում Սոֆիայի հայերն ունեին իրենց կազմակերպված համայնքը («Էրմենի թայֆասը վե էմաաթը»): Ըստ Պետր Բոգդանի՝ 1640-ին Սոֆիայում ապրում էր շուրջ 200 հայ ընտանիք՝ 1600 անդամով, որոնք դավանական հիմքի վրա բաժանվել էին երկու ընդդիմադիր հատվածների՝ միմյանց կոչելով աղանդավորներ:

Սոֆիայի հայ գաղթականները հիմնականում եկել էին Արևելյան Հայաստանից (Նախիջևանից) և Ղրիմի Կաֆա քաղաքից: Անվանի վաճառական և բարերար Ապրո Զելեպին 1673 թ. այստեղ կառուցել է տվել հայկական եկեղեցի: Մարտիրոս Ղրիմեցին 1673-1674-ին այստեղով անցնելիս նույնպես հավաստում է, որ Սոֆիայում կար հայկական համայնք՝ իր եկեղեցիներով ու քահանայով: Նա իր «Սոֆիայի տէր Յունանին վերա...» չափածո պամֆլետում հայ քահանայի ծուլության ու անբանության հետ պատկերում է թուրք զավթիչների ձեռքով անապատ դարձած Սոֆիայի, բնական է, նաև համայնքի ու նրա եկեղեցու ողբալի վիճակը[1]: Մինաս Բժշկյանցի ասելով՝ այս վաճառաշահ ու երբեմնի հռչակավոր քաղաքի «հայ բնակիչք ցրուեալ կան յայլևայլ կողմանս»: Հետագայում, սակայն, սոֆիահայերի մի զգալի մասը համախմբվում է քաղաքի մի որոշ շրջանում, որը մինչև օրս հիշատակվում է որպես «Հայկական փողոց»: Անցյալում սոֆիահայերից շատերը զբաղվել են արհեստներով՝ ոսկերիչներ էին, երկաթագործներ, ձուլողներ, հացթուխներ, կոշկակարներ, դերձակներ:

Բուլղարահայ հին համայնքներից է Վառնայի հայ գաղութը, որը սկզբնավորել են Ղրիմից այստեղ տեղափոխված հայ առևտրականները՝ 1436 թվականին: Հետագայում Վառնայի հայերը ձեռք են բերում մի գեղնափոր եկեղեցի-աղոթատեղի, հավատացյալների համար գաղտնի հետնամուտքով՝ մոլեռանդ թուրքերի հայացքից աննկատ մնալու համար[2]: Թուրք ճանապարհորդ Էվլիա Զելեպին 1656-ին վերաբերող իր ուղեգրություններում հիշատակում է Վառնայում գոյություն ունեցող «Հայոց թաղի» մասին: 1808 թ. Վառնայում հայերի թիվը կազմում էր շուրջ 150 ընտանիք: Բուլղարական

[1] Մար տի րոս յան Ա. Ա., Մարտիրոս Ղրիմեցի, եր., 1958, էջ 89:

[2] Տե՛ս Քյուրտ յան Հ., Հայերը Պուլկարիո մեջ սկզբեն մինչև 1700 թթ., «Բազմավեպ», 1927, թիվ 2, էջ 332:

աղբյուրները ևս վկայում են, որ 19-րդ դարի կեսերին Վառնայում ապրում էին ավելի քան 170 հայ ընտանիքներ:

Բուլղարիայում հայկական գաղութներ կային նաև Բուրգազում, Թաթար Բազարջիքում, Սլիվենում, Սիլիստրայում, Յամբոլում, Խասկովոյում. այդ գաղթօջախները դեռ այսօր էլ շարունակում են գոյատևել և ունեն իրենց հոգևոր, հայրենասիրական ու մշակութային հաստատությունները: Հեռու ու մոտիկ անցյալում Բուլղարիայում գոյություն են ունեցել նաև այնպիսի բազմանդամ հայկական համայնքներ, ինչպես Թըռնովոյի, Ռազգրադի, Պրովդիայի, Այտոսի հայկական գաղթօջախները: Միջնադարից ի վեր նշված վայրերի հայերը, թեև ունեին իրենց հավաքական կյանքը, սակայն, հետագայում հետզհետե նոսրանալով, կամ ձուլվում էին բուլղարների մեջ և կամ էլ քաղաքական ու տնտեսական հանգամանքների բերումով արտագաղթում այլ երկրներ, Բուլղարիայի առավել հայաշատ քաղաքներ, և ի վերջո, որպես ա՛ռանձին գաղթօջախներ անհետանում: Երբեմնի այս հայաբնակ վայրերում մինչև այսօր պահպանվել են հայկական տեղանուններ, հայատառ տապանաքարեր և այլ հիշարժան վկայություններ:

Օսմանյան լծից Բուլղարիայի ազատագրության նախօրեին նրա տարբեր քաղաքներում ու գյուղերում ապրում էին հազարավոր հայ գաղթականներ: Սակայն այսօր դժվար է ճշգրիտ որոշել նրանց թվական կազմը, քանզի ժամանակին թուրքական իշխանությունները առաջին հերթին իրենց բանակը համալրելու համար հաշվառում էին միայն արական սեռին պատկանող հպատակներին: Այնուամենայնիվ, մոտավոր պատկերացում կազմելու համար դիմենք մի քանի տվյալների: Ըստ Մ. Բժշկյանցի, 19-րդ դարասկզբին Բուլղարիայի մի շարք քաղաքներում կար շուրջ 10 հազար հայ բնակչություն: Սակայն հայ ճանապարհորդի տվյալները չենք կարող ամբողջական համարել, քանի որ Մ. Բժշկյանցը և մյուս հայ ճանապարհորդները այցելել են հիմնականում այն համայնքները, որոնք գտնվում էին Բուլղարիայի նավահանգստային կետերում կամ երկրի առավել բանուկ ճանապարհների վրա, իսկ գյուղերը, որտեղ դեռ շարունակում էին ապրել զգալի թվով հայեր և զբաղվում հողագործությամբ, դուրս են մնացել նրանց ուշադրությունից:

19-րդ դարի ռուս աշխարհագետ և քարտեզագիր Վ. Տեպլյակովի տվյալներով, 19-րդ դարի երրորդ քառորդին Բուլղարիայի պատմական տարածքներում (ներառյալ Թրակիան և Մակեդոնիան) ապրում էին 141.822 դպրեցի հայեր: 1863 թ. Վառնայում, ռուսական փոխ-հյուպատոս Ա. Ա. Օլխինի զեկուցագրերի համաձայն, Օսմանյան կայսրության միայն դանուբյան վիլայեթում, այդ թվում՝ Դանուբի ստորին հոսանքի մի քանի քաղաքներում, կար 1943 հայազգի ընտանիք՝ իրենց 13 եկեղեցիներով և նույնքան դպրոցներով: Ըստ Ղ. Ալիշանի՝ անցյալ դարակեսին Բուլղարիայի Ռուսչուկ, Վառնա և Շումեն քաղաքներից յուրաքանչյուրում ապրում էին 150-ական

հայ ընտանիք, գործում էին ոչ միայն եկեղեցիներ, այլև հայկական վարժարաններ:

19-րդ դարի երկրորդ կեսերից եվրոպական և բալկանյան մի շարք երկրներում ծավալվող ազգային-ազատագրական շարժումների գաղափարական խմորումների ազդեցությամբ բուլղար ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքը թևակոխում է նոր շրջափուլ: Երկրում բուռն վերելք ապրող ազգային-ազատագրական պայքարն իր ոլորտն է ներքաշում հասարակական համարյա բոլոր խավերին: Բուլղարիայում ապրող հայերը ևս անմասն չեն մնում այս համընդհանուր մթնոլորտից: Եվ դա հասկանալի էր: Երկու ժողովուրդների պատմական ճակատագրերի ընդհանրությունը, օսմանյան դարավոր լծի դեմ հայերի և բուլղարների ազատագրական մաքառումները, գրականության և հրապարակագրության առջև ծառացած հասարակական-քաղաքական հարցադրումների համանմանությունը և, վերջապես, ռուս-թուրքական պատերազմների օբյեկտիվ հետևանքները մեծապես նպաստում են ազգային-ազատագրական պայքարի ուղին բռնած երկու ժողովուրդների հեղափոխական գործիչների գաղափարական մերձեցմանն ու համերաշխությանը: Պատահական չէ, որ 1862թ. Զեյթունի հերոսական պաշտպանությանը, Վանի, Մուշի, Զարսանճաքի զինված ելույթներին, ապա նաև Զեյթունի ապստամբությանը Բուլղարիայում զուգորդում են հայդուկային-չետայական ու հեղափոխական շարժումները, իսկ 1876թ. բռնկվում է Ապրիլյան ապստամբությունը:

Բուլղարիայում ծավալված հասարակական-քաղաքական բուռն պայքարի ասպարեզում հայտնվում է նաև հայազգի լուսամիտ, ազգասեր մարդկանց մի ամբողջ համաստեղություն, մարդիկ, որոնք, արհամարհելով վերահաս վտանգը, խոսքով ու գործով հանդես են գալիս բախտակից ժողովրդի պատմական իրավունքների պաշտպանությամբ: Այդ փոթորկուն օրերին, երբ բուլղար ժողովուրդը ձգտում էր ազատության, բուլղարահայության առավել ցայտուն ներկայացուցիչները մոտիկ էին կանգնած այդ իրադարձություններին և սերտորեն համագործակցում էին բուլղար հեղափոխական գործիչների հետ: Նրանցից էր, օրինակ, Շումենի բնակիչ Հովհաննես Ալաջաջյանը, որը գործի դնելով իր հեղինակությունը, ստույգ մահից փրկում է թուրքական իշխանությունների կողմից կրնկակոխ հետապնդվող բուլղարական ազգային ազատագրական շարժման ամենաակարկառուն դեմքերից մեկի՝ բոցաշունչ բանաստեղծ և հրապարակախոս Գեորգի Սավա Ռակովսկու կյանքը[1]:

Բուլղարիայի ազատագրության գործում իր նշանակալի ավանդն ունի նաև վառնացի Երանոս Երանոսյանը (1844–1877): Իր ժամանակի համար

[1] Архив на вчзраждането, т. I, София, 1908, с. 168.

«չափազանց քաղաքավարի ու կրթված», մի քանի լեզուների գիտակ, եվրոպական լուսավորության առաջավոր գաղափարներով տոգորված այս մարդուն վստահված էր սևծովյան Բալչիկ քաղաքի փոստ-հեռագրատան պետի պաշտոնը: Նա սերտ կապերի մեջ էր ազատագրության համար մարտնչող բուլղար հեղափոխականների հետ: Տեղեկանալով, որ թուրք բաշիբոզուկները պատրաստում են մոտակա Կավառնա քաղաքի քրիստոնյա բնակչության կոտորածը, Երանոսյանը անմիջապես հայտնում է բուլղար հեղափոխականներին՝ վերահաս վտանգը դիմագրավելու համար, և ինքը ևս զենքը ձեռքին մասնակցում քաղաքի քրիստոնյա ժողովրդի ինքնապաշտպանական կռիվներին: Բաշիբոզուկների դեմ մղվող մարտերից մեկում 1877 թ. հուլիսի 19-ին հերոսի մահով ընկնում է նաև Երանոսյանը: Մինչև օրս Կավառնայի կենտրոնական փողոցներից մեկը կրում է այս խիզախ հայի անունը:

Ապրիլյան ապստամբության արյունալի օրերին մահվան դատապարտված բուլղար հեղափոխականների կյանքը փրկելու գործում աչքի ընկնող ծառայություններ ունեցավ նաև քիչնևցի, հետագայում Պլովդիվում հաստատված մեծահարուստ հայ վաճառական Արթին Գիդիկովը (1813–1896), որը հայտնի էր նաև «Մոսկով Արթին» կամ «Մոլա Արթին» հորջորջումով: Ռուսական դիվանագիտական շրջաններին մոտիկ կանգնած և Բուլղարիայում, Կ. Պոլսում և Ադրիանապոլսում մեծ հեղինակություն վայելող այս անձնավորությունը բուլղար լուսավորիչ և բանաստեղծ, մի որոշ ժամանակ Պլովդիվի ռուսական դիվանագիտական հյուպատոս Նայդեն Գերովի «անձնական բարեկամն» էր: Սրեդնա-Գորայի ապստամբության ջախջախումից հետո ապստամբների մի մեծ խումբ ձերբակալվում և թուրքական իշխանությունների կողմից դատապարտվում է մահվան: Ա. Գիդիկովը, օգտագործելով իր հեղինակությունն ու միջոցները, կարողանում է թուրք դահիճների ճիրաններից փրկել 52 բուլղար ապստամբների կյանքը:

Պետերբուրգի գեղարվեստական ակադեմիայի սան, բուլղար տաղանդավոր նկարիչ Ստանիսլավ Դոսպևսկին (1823–1878) ևս իր կյանքով պարտական է բուլղար ժողովրդի այս մեծ բարեկամին: Թուրք դահիճների ձեռքն ընկած Դոսպևսկին մեղադրվում էր Ապրիլյան ապստամբությանը մասնակցելու համար, և միայն Ա. Գիդիկովի համառ ջանքերի շնորհիվ նրան հաջողվում է խուսափել անխուսափելի դատաստանից: Չնայած հետագայում Դոսպևսկին կրկին ձերբակալվում է և տանջամահ արվում Ստամբուլի բանտերից մեկում, այնուամենայնիվ, բուլղար նկարչին մինչ այդ հաջողվել էր կտավի վրա անմահացնել իր հայ բարերարի՝ Արթին Գիդիկովի պատկերը: Այդ դիմանկարը մինչև օրս իր տեղն ունի Պլովդիվի պետական պատկերասրահում և արժանանում է այցելուների հետաքրքրությանը: Երախտագետ բուլղար ժողովուրդն իր հայազգի մեծ բարերարի անունը հավերժացրել է նաև նրանով, որ Պլովդի-

վի փողոցներից մեկը, որտեղ դեռ կանգուն է Գիդիկովի փառահեղ տունը, կոչվել է նրա անունով:

Բուլղարիայի ազատագրության նախօրյակին, 1877 թ. վերջին, երբ ռուսական բանակը մոտենում էր Պազարջիկ քաղաքին, թուրքերը պատրաստվում են նահանջել և ըստ իրենց սովորության՝ բնակչությանը քշում են քաղաքից դուրս և սպասում վերադասի հրամանին՝ բոլորին կոտորելու և քաղաքը հրի մատնելու մասին: 1878 թ. հունվարի 2-ի գիշերը, երբ քաղաքի փոստ-հեռագրատանը հերթապահում էր հայազգի Հովհաննես Սվաճյանը, ստացվում է թուրքական զորքերի հրամանատար Սուլեյման փաշայի հրամանը՝ «Պազարջիկը այրել, բնակչությանը կոտորել»: Այդ պահին Սվաճյանի գլխավերևում կանգնած էր հրամանին սպասող թուրք սպան: Սվաճյանը իրեն չի կորցնում. նա անմիջապես կողմնորոշվում է և մահվան գնով հեռագիրը վերծանում հակառակ իմաստով՝ «Պազարջիկը պահպանել, բնակչությանը չկոտորել»: Թուրքերը խուճապահար թողնում են քաղաքը և նահանջում: Հաջորդ օրը Պազարջիկ են մտնում ռուսական ազատարար զորքերը: Երախտապարտ բուլղարները քաղաքի փողոցներից մեկը հավերժացնում են իրենց փրկարարի անունով և այդտեղ էլ կանգնեցնում նրա կիսանդրին: Իսկ Սուլեյման փաշայի հեռագրի ժապավենը, որպես թուրքական բարբարոսությունների կենդանի վկա, մինչև օրս պահպանվում է Պազարջիկի քաղաքային թանգարանում:

Հայ և բուլղար ժողովուրդների եղբայրության ու համերաշխության ամրապնդման գործում նշանակալի ավանդ ունեն նաև Բուլղարիայից հեռու կամ մոտիկ վայրերում ապրող շատ հայազգի գործիչներ: Մինչև Բուլղարիայի ազատագրությունը մի քանի տասնամյակ շարունակ, ժողովրդի հայրենասիրական զգացմունքները բորբոքելու նպատակով, բուլղար առաջադեմ մտավորականությունը հրատարակչական լայն գործունեություն էր ծավալել: Սակայն իրենց տպարանների անբավարար վիճակի հետևանքով հայերնասերները դիմում էին հայազգի տպագրիչների ու հրատարակիչների անմիջական օգնությանը: Կ. Պոլսի հայկական տպարանները (Թ. Տիվիթճյան, Հ. Գավաճյան, Ա. Բոյաջյան, Հ. Մինասյան, Հ. Փափազյան, Ճ. Արամյան և ուրիշներ) ոչ պատահականորեն հագեցված էին նաև բուլղարերեն տպագրատառերով: Հայ տպագրիչները, այդ թվում նաև Վիեննայի Մխիթարյանները, սրտամոտ ընդունելով բուլղար ժողովրդի ազգային-լուսավորական ձգտումները, սիրով ընդառաջում էին բուլղար հայրենասերների ազգանվեր գործունեությանը, 1840-1878 թթ. հայկական տպարաններում լույս են ընծայում մի քանի հարյուր անուն բուլղարական գրքեր և ավելի քան տասն անուն հանդեսներ: Միայն Թ. Տիվիթճյանի տպարանում հրատարակվել են ավելի քան 70 անուն բուլղարերեն հայենասիրական գրքեր, որոնք առանձին հրավերով Տիվիթճյանը տանում էր Բուլղարիա և անճամբ տարածում բուլղար բնակչության մեջ:

Սկսած 1848-ից՝ Տիվիթճյանի տպարանը դարձել էր Կ. Պոլսում գործող բուլղար լուսավորիչ-մտավորականության հավաքատեղին: «Պուլկարերեն բոլոր տառերը գառաջինն ինքն եղած է ձուլող, որոնցմով տպագրած է հետո բազմաթիվ գրքեր, այդպիսով մտավորական անուն ջամբելով ամբողջ Պուլկարիո բնակիչներուն, - գրում է Թեոդիկը և ավելացնում. -Երախտապարտ պուլկարներ տարին անգամ մը սովորություն ունին Սոֆիայի մայր եկեղեցին հոգհանգիստ կատարելու իրենց հին ու նոր բարերարաց համար, որոնց հետ կհիշատակեն նաև Տիվիթճյանը»[1]:

1860-70-ական թվականների՝ բուլղարների ազգային-ազատագրական չարժումների պատմության մեջ առանձնակի տեղ է գրավում ազգային եկեղեցու ինքնուրույնության համար մղված համաժողովրդական պայքարը, որն իր սուր ծայրով ուղղված էր բուլղարների հոգևոր կյանքի, եկեղեցու ու կրթական օջախների վրա հույն հոգևորականության գերիշխանության դեմ: Տասնամյակներ տևող ընդդիմության ամենավճռական փուլում հայ հասարակայնության առաջադեմ ներկայացուցիչներ Մ. Խրիմյանը, Հ. Սվաճյանը, Մերենցը, Մ. Մամուրյանը, Կ. Ուֆուճյանը, Գ. Արծրունին և ուրիշներ հրապարակորեն հանդես եկան բուլղար ժողովրդի պատմական իրավունքների պաշտպանությամբ: Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Խրիմյանը առաջինը ողջունեց բուլղարների նորընտիր էկզարխին և ճանաչեց բուլղարական եկեղեցու ազգային ինքնուրույնությունը[2]:

Բուլղարների հասարակական-քաղաքական պայքարի հանդեպ ջերմ չնչով տոգորված հոդվածներ տպագրեցին «Մեղուն» և «Մասիսը»: Դրանք աննկատ չմնացին բուլղարների կողմից: Բուլղար նշանավոր գրող, լուսավորիչ ու հրապարակախոս, Կ. Պոլսում լույս տեսնող «Մակեդոնիա» թերթի խմբագրապետ Պետկո Ռ. Սլավեյկովը (1828-1895), որն իր պարբերականով գլխավորում էր իր ազգակիցների եկեղեցական չարժումը, ջերմորեն անդրադարձավ հայոց վերաբերմունքին: 1872 թ. «Մեղուի» և «Մասիսի» համարներում թարգմանաբար տպագրվեց «Մակեդոնիա» թերթում Սլավեյկովի հրապարակած հոդվածը, որտեղ բուլղար հեղինակը սրտաբուխ խոսքեր էր հղում հայ ժողովրդին՝ եկեղեցական պայքարի ամենաթեժ օրերին բուլղարներին նեցուկ կանգնելու համար:

Դաժանորեն ճնշելով Բուլղարիայում բռնկվող ապստամբությունները, թուրք չարագարարները անասելի բռնությամբ հաշվեհարդար էին տեսնում հայրենասերների նկատմամբ՝ ոմանց կախում, ոմանց տանջամահ էին անում, իսկ չատերին աքսորում կայսրության հեռավոր վայրերը, հիմնականում Անատոլիայի խորքերը: Մինչև Բուլղարիայի ազատագրությու-

[1] Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ.Պոլիս, 1912, էջ 85:

[2] Արարս, Սոֆիա, 1929, թիվ 110:

նը, Էրզրումի, Դիարբեքիրի, Արգանա-Մարդենի, Ջոթահիայի, Մերզինի, Ադքիայի, նույնիսկ Կիպրոսի բանտերը լեփլեցուն էին բուլղար կալանավորներով[1]: Արևմտյան Հայաստանի այդ վայրերի հայերը մարդասիրական ջերմ վերաբերմունք էին ցուցաբերում բուլղար տարագիրների նկատմամբ, շատերին երաշխավորությամբ ազատում բանտերից և վերցնում իրենց հովանավորության տակ, իսկ որոշ դեպքերում նաև օգնում ոմանց՝ դիմելու փախուստի:

1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակը բուլղար ժողովրդի հետ միասին ազատություն բերեց նաև այնտեղ բնակվող հայ փոքրամասնությանը: Բուլղարիան թևակոխեց քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների շրջան:

Բուլղարիայում ռուսական ժամանակավոր կառավարության դեմոկրատական ձեռնարկումների, ինչպես նաև 1879 թ. փետրվարին Վելիկո-Թըռնովոյում ընդունված բուլղարիայի նոր սահմանադրության ընձեռած ազատությունների շնորհիվ ապահովվում էին նաև բուլղարահայերի քաղաքացիական իրավունքները: 1885 թ. Հյուսիսային և Հարավային Բուլղարիայի վերամիավորումից հետո երկրով մեկ հաստատվեց բուլղարական ազգային կառավարչություն, և երաշխավորվեցին բնիկ ժողովրդի և ազգային փոքրամասնությունների կյանքի ու գույքի, աշխատանքի ու խղճի ազատության լայն իրավունքներ:

Բուլղարիայում ստեղծվող նպաստավոր պայմանների հետևանքով Արևվելյան Թրակիայից, Մակեդոնիայից և թուրքերից ազատագրված այլ վայրերից Բուլղարիա են գաղթում շուրջ 8-10.000 հայեր, որոնք հիմնականում հաստատվում են երկրի արդյունաբերական և առևտրական զարգացման հեռանկարներ ունեցող Պլովդիվ, Սոֆիա, Վառնա, Շումեն, Սլիվեն, Բուրգաս և այլ քաղաքներում, Այսպիսով, Միացյալ Բուլղարիայի հայ բնակչության թիվը, որը մինչ այդ թուրքերի բռնությունների հետևանքով խիստ նվազել էր, 1890-ական թվականներին հասնում է մոտ 13.000-ի[2]:

Նոր սահմանադրությամբ Բուլղարիայի հայ բնակչությանը ևս իրավունք էր վերապահվում ընդունել բուլղարական քաղաքացիություն, ընտրել և ընտրվել պետական օրգաններում, երիտասարդությունը սիրահոժար կարող էր մտնել զինվորական ծառայության մեջ: Համահավասար իրավունքներով հայերին թույլատրվում էր պաշտոնավարել երկրի ղեկավար մարմիններում, ստեղծել ազգային համայնքների խորհուրդներ, կազմակերպել զանազան ընկերություններ, միություններ, հրատարակել թերթեր: Վերականգնվում են

[1] Ըստ վիճակագրության, միայն 1860-1870-ական թվականներին Փոքր Ասիայի վերոհիշյալ վայրերը ամսոլված էին շուրջ 40 հազար բուլղար հայրենասերներ, որոնցից միայն 12 հազարին բախտ վիճակվեց կենդանի մնալ և վերադառնալ հայրենիք:

[2] Բյուզանդիոն, Կ.Պոլիս, 1897, թիվ 116:

բայքայման եզրի հասած հայկական դպրոցներն ու եկեղեցիները, իրավունք է տրվում ինքնուրույն կերպով վերահսկել դավանական, եկեղեցական ու դաստիարակչական գործերը:

1880-1890-ական թվականներին բուլղարահայերի լուսավորական ու հասարակական-քաղաքական կյանքը թևակոխում է ազգային զարթոնքի նոր շրջափուլ: Բուլղարիայի հայաշատ քաղաքներում սկսում են երևալ հասուկենտ պարբերականներ, որոնցից անդրանիկները հրատարկվում էին կամ յատիներեն հայերենով («Huis»-«Հույս», խմբ՝ Անդրանիկ Յոհաննեսկու, Վառնա, 1884), կամ մասամբ հայատառ թուրքերենով ու ֆրանսերենով («Իրավունք», խմբ.՝ Թագվոր Փափազյան և Հակոբ Մավյան, Վառնա, 1885), («Դանուբ» շաբաթաթերթը, խմբ.՝ Մ. Թյուֆյունճյան, Ռուսչուկ, 1891-1892), որոնք, սակայն, կարճատև կյանք են ունենում:

1890-ական թվականներին Բուլղարիայի հայ գաղթօջախների հայրենասիրական տրամադրությունների զարթոնքի արդյունքը լինում է նաև այն իրողությունը, որ հոգևոր մի շարք առաջադեմ գործիչների և առաջին հերթին նորընտիր կաթողիկոս Մ. Խրիմյանի հորդորով գաղութի հոգևոր ու աշխարհիկ կյանքը հետզհետե ավելի ու ավելի է հարում դեպի էջմիածինը, որը հզոր ազդակ էր բուլղարահայերին համազգային խնդիրների ոլորտը ներգրավելու գործում:

Դարավերջում Բուլղարիայի հայ գաղթօջախների հասարակական կյանքում նկատելի է դառնում ազգային հայրենասիրական տրամադրությունների բուռն վերելք: Հայաշատ քաղաքներում ստեղծվում են լուսավորական, կրթական և մշակութային նոր օջախներ, հայրենասիրական միություններ, զանազան ընկերություններ: Այս և նման կազմակերպությունների հիմնական նպատակն էր համայնքներում պահպանել ազգային հիշողությունը, ավանդույթներն ու սովորույթները, երիտասարդությանը դաստիարակել հայրենասիրական ոգով: Մտավոր այս շարժումը խթան հանդիսացավ առավել մեծ քաղաքներում ազգային կուսակցությունների սաղմնավորմանը:

Ահա այսպիսին էր Բուլղարիայի հայկական համայնքների սոցիալական ու հասարակական-քաղաքական իրավիճակը, երբ 1894-1895 թվականներին Արևմտահայաստանում, Կ. Պոլսում և Թուրքիայի այլ վայրերում սանձազերծվեցին հայկական կոտորածները: Արյունալի յաթաղանից փրկված շուրջ 50 հազար հայեր գաղթում են Բուլղարիա: Նրանցից 30 հազարը շարունակում են իրենց ոդիսականը դեպի ավելի հեռավոր երկրներ, իսկ 20 հազարը համալրում է տեղի հայկական գաղթօջախները: Այս տարագիրների զգալի մասը պոլսեցիներ էին, մշեցիներ, վանեցիներ և սասունցիներ:

Չնայած սուլթանի սպառնալիքներին, բուլղարական կառավարությունը և ժողովուրդը գրկաբաց ընդունեցին վտարանդի հայերին: Բ. Դուռը պահանջում էր տեղ չտալ հայ գաղթականներին, առավել ևս նրանց չտեղավորել

Թուրքիային սահմանամերձ գոտիներում: Բուլղարական իշխանությունները, սակայն, մերժում են սուլթանի պահանջը և հայտարարում. «Մենք ազատագրվել ենք այն մարդկանց մարդասիրական զգացմունքների շնորհիվ, որոնք վշտակցում էին մեր տառապանքներին, այդ իսկ պատճառով մենք չենք կարող մերժել մեր հյուրընկալությունը այնպիսի մարդկանց, որոնք փախչում են ձեր յաթաղաններից, ձեր կոտորածներից և ապավեն փնտրում մեզ մոտ: Մենք մեր պարտքն ենք համարում նրանց տալ ապաստան և հյուրընկալություն: Մեր երկրում ապաստան տալ մի տարագրյալի, նշանակում է հավատարիմ մնալ մեր մարդասիրական բարձր կոչմանը, որ ունենք որպես ազատագրված ժողովուրդ»[1]:

Բարոյաքաղաքական և նյութական օժանդակությունից բացի, բուլղարական իշխանությունները կազմակերպում են գաղթական հայերի ընդունման ու տեղավորման գործը: Տարագիր հայերի մեծ մասը հաստատվում է երկրի առավել խոշոր կենտրոններում, իսկ Արևմտահայաստանի գյուղական վայրերից գաղթած հայերը բնակեցվում են երկրի հյուսիս-արևելյան գյուղատնտեսական շրջաններում: Չնայած տեղացի հայերի և բուլղարական իշխանությունների ցույց տված զգալի օգնությանը, տարագիր հայերի նշանակալից մասը սկզբնական շրջանում ապրում էր անասելի ծանր պայմաններում: Եվ դա հասկանալի էր. օսմանյան դարավոր լծից նոր ազատագրված Բուլղարիան դեռևս չէր հասցրել վերականգնել երկրի տնտեսությունն ու արտադրողական ուժերը, և նրա ժողովուրդը ևս տարուբերվում էր անցման շրջանի հակասությունների ու դժվարությունների ոլորտում: Այսուհանդերձ. «Հայերն ամենուրեք ընդունվեցին որպես մեծ տառապյալներ, -գրել է բուլղար նշանավոր գրող Սոիլիյան Զիլինկիրովը, -որոնց հանդեպ պետք էր տեղ անել ոչ միայն երկրով մեկ, այլև յուրաքանչյուր բուլղարի հոգում: Իրավամբ համեստ էր մեր օգնությունը, բայց թե ուզենայինք էլ ի վիճակի չէինք ավելին անելու: Չէինք կարող ունևորի հարստությունը վերադարձնել, քանզի ինքներս աղքատ էինք, չէինք կարող չունևորին բարիքներ մատուցել, քանզի ինքներս տենչում էինք բարվոք օրերի: Բայց հաց տվեցինք բոլորին: Եվ ամենուրեք, ուր անհրաժեշտ էր աշխատանք ճարել, բուլղարը զիջեց իր տեղը տարաբախտ հային»:

Բուլղար մեծ բանաստեղծ Պերո Յավորովը ևս ականատես եղավ պանդուխտ հայերի թշվառ վիճակին և անմիջական տպավորությունների ազդեցության ներքո հորինեց իր նշանավոր «Հայեր» բանաստեղծությունը, որն իրավամբ համարվեց ոչ միայն ազգային, այլ համաշխարհային գրականության լավագույն նմուշներից մեկը:

90-ական թվականների հայկական կոտորածների առաջին իսկ օրերից ինչպես հայ, այնպես էլ բուլղարական մամուլը լայնորեն լուսաբանում էր ար-

[1] Sb'u Правда, 1942, N°1015-1017:

յունոտ իրադարձությունները: «Սոցիալիստ», «Դեն», «Նովո վրեմե», «Օսվոբոժդենիե», «Միսլ», «Գլաս Մակեդոնսկի» և այլ պարբերականներ կրքոտ, ցասումնալի հոդվածներով ու հրապարակումներով դատապարտում էին համիդյան հայահալած քաղաքականությունը, անարգանքի սյունին գամում եվրոպական մեծ տերությունների երկդիմի վերաբերմունքը: Պաշտպան կանգնելով տարագիր հայերի և առհասարակ հայ ժողովրդի պատմական իրավունքներին, «Սոցիալիստ» թերթի քաղաքական մեկնաբանը գրում էր. «Հայաստանում տեղի ունեցող սարսափներն ու գազանությունները իրենց նմանը չունեն պատմության մեջ: Այնտեղ սպանում են ոչ թե հարյուրներով, այլ տասնյակ և հարյուր հազարներով՝ առանց տարիքի ու սեռի խտրության: Այնտեղ այրվում են ոչ թե մեկ կամ երկու գյուղ, այլ հարյուրավոր գյուղեր ու տասնյակ քաղաքներ: Ամբողջ երկիրը վերածված է ավերակների ու մոխրակույտերի: Սասունը, Սլվազը, Դիարբեքրիրը բազում անգամ գերազանցեցին մեր Բաթաքը, Պերուշտիցան և Պանագյուրիշտեն»[1]:

Թուրքական վայրագությունները ավելի ու ավելի էին բորբոքում բուլղար ժողովրդի և նրա առաջավոր մտավորականության զայրույթն ու բողոքը: Ի տես Բուլղարիան ողողած տարագիր հայերի անասելի ծանր վիճակին, բուլղարական հասարակական-քաղաքական միտքն ավելի ու ավելի էր սատար կանգնում Հայկական հարցին, համաշխարհային կարծիքը բևեռում ինչպես Արևմտահայաստանում և Կ. Պոլսում տեղի ունեցող արյունալի դեպքերի, այնպես էլ Բուլղարիայում ապաստան որոնող հազարավոր գաղթական հայերի ծայրահեղ թշվառության վրա: 1896-ին լույս է տեսնում բուլղար անվանի հրապարակախոս Դիմիտր Սպիրովի «Հայերը և սուլթան Աբդուլ Համիդը» խորագրով գրքույկը, որը նվիրված էր արևմտահայերի և, մասնավորապես, Կ. Պոլսի հայ բնակչության կոտորածներին:

1912-1913 թթ. Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը և Չերնոգորիան պատերազմ հայտարարեցին Թուրքիային, որը ձգտում էր կրկին վերականգնել իր սասանված դիրքերը Բալկաններում և, մասնավորապես, Մակեդոնիայում ու Հարավ-արևելյան Թրակիայում: Պատերազմի թատերաբեմում հայտնվում ու հարավ-արևելյան Թրակիայում: Պատերազմի թատերաբեմում հայտնվող հայ բնակչությունը, տագնապելով իր անապահով վիճակից, արտագաղթում է Բուլղարիա: Այս տեղաշարժը շարունակվում է նաև Առաջին համաշխարհային պատերազմի և հետագա տարիների ընթացքում:

Բալկանյան առաջին պատերազմի նախօրեին բուլղարական ծառայող հայազգի սպաների, ինչպես նաև Անդրանիկ Օզանյանի, Գարեգին Նժդեհի և հայ ազգային կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ որոշվում է հայկական կամավորական ջոկատ կազմակերպել՝ նպաստելու համար բուլղարների ու նրանց դաշնակիցների հաղթանակին: Բուլղարահա-

[1] Социалист, София, 1897, N 27.

յության շրջաններում մեծ ոգևորություն առաջացնող այս նախաձեռնությունը համապատասխանում էր հայ ժողովրդի ազգային իղձերին: Դրանով է բացատրվում շուրջ 273 կամավորներից բաղկացած հայկական վաշտի արագ կազմավորումը: Կռիվներին մասնակից բուլղարական բանակում ևս ծառայում էին հայազգի զինվորներ, սպաներ, բժիշկներ: Հայկական վաշտը կատաղի մարտեր մղեց կրկին անգամ Բուլղարիա և Հունաստան ներխուժելու փորձ անող թուրքական բանակի գերակշռող ուժերի դեմ: 1912 թ. նոյեմբերին Բալկան Թորեսի և Մերհամլիի մոտ մղվող հերոսական մարտերում հայկական վաշտը պաշարեց և գերի վերցրեց Յավեր փաշային ու նրան վատահված զորամասերին[1]:

Հայկական վաշտի զինվորների անօրինակ սխրանքները բարձր գնահատվեցին բուլղարական բանակի հրամանատարության կողմից, որը վաշտի կամավորներին ու նրանց հրամանատարներին պարգևատրեց զինվորական բարձրագույն պարգևներով:

Բուլղարահայերն իրենց մասնակցությունն են բերել նաև սերբ-բուլղարական պատերազմին (1885 թ.), Մակեդոնիայի ազատագրության համար մղվող մարտերին, ինչպես նաև Առաջին աշխարհամարտին: Նրանցից չատերը հասան զինվորական բարձր կոչումների և խիզախության համար արժանացան բարձր պարգևների:

1915–1922 թվականներին, երբ Թուրքիայում տեղի էր ունենում հայ բնակչության ցեղասպանությունը, սկսվեց հայ վտարանդիների մի նոր հոսանք դեպի Բուլղարիա: Այս հյուրընկալ երկիրը կրկին իր դռները մարդասիրաբար բացեց շուրջ 20.000 հայ տարագիրների առջև: Այս օրերին Բուլղարիայի հայկական համայնքն արդեն հաշվվում է 47–50 հազար մարդ:

Գաղթականներին ընդունելու և տեղավորելու հարցով, բացի բուլղար կառավարության ստեղծած օգնության հանձնաժողովներից, զբաղվում են նաև արդեն տեղայնացած հայերի կազմակերպած «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովը» և նրա մասնաճյուղերը: Կազմակերպվում է նաև «Գաղթականական ֆոնդ», որին օգնության է հասնում ոչ միայն տեղի, այլև հարևան ու եվրոպական մի շարք երկրների հայ ազգաբնակչությունը: Տարագիրներին օգնության և աշխատանքի տեղավորման գործը մասամբ հեշտանում է նրանով, որ նախկին գաղթականների զգալի մասն արդեն իսկ ապահովել էր ապրուստի թեկուզև նվազագույն մակարդակ և հնարավորություն ուներ քիչ թե շատ օգնության ձեռք մեկնելու բախտակից եղբայրներին:

1896–1922 թվականներին Բուլղարիայում հանգրվան գտած մի քանի տասնյակ հազարների հասնող հայ գաղթականությունը իր հարուցած դժվարությունների հետ նոր, աննախադեպ աշխուժություն հաղորդեց բուլղարահայ

[1] «Վիթոշ-Արարատ», Պուլկարահայ տարեգիրք, Պլովդիվ, 1935, էջ 195–197:

գաղութի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին: Դրան մեծապես նպաստում է ոչ միայն հետագատագրական Բուլղարիայի տնտեսական կյանքի վերելքը, այլև այն, որ տարբեր ժամանակներում Բուլղարիա էին գաղթել Արևմտյան Հայաստանի քաղաքներից, Կ. Պոլսից և Արևելյան Թրակիայի, այն է՝ Թուրքիայի եվրոպական տարածքի մեծ ու փոքր քաղաքներից ու բնակավայրերից հայ մտավորականության շատ ներկայացուցիչներ՝ ուսուցիչներ, բժիշկներ, գրողներ, խմբագիրներ, տպագիրչներ, ինչպես նաև առևտրականներ և տարբեր մասնագիտությունների տեր գործիմաց ու ձեռներեց մարդիկ:

Բուլղարիայում կապիտալիստական հարաբերությունների հարաբերական կայունացման պայմաններում երկրի առավել մեծ քաղաքներում սկսում են գործել հայ վաճառականների առևտրական տներ, որոնք, շնորհիվ իրենց ձեռներեցության, չուկան որոշ չափով հագեցնում են Եվրոպայից ներմուծված թեթև արդյունաբերական ապրանքներով՝ մասնակիորեն բավարարելով ժողովրդի կենսական պահանջները: Հետագայում հայ առևտրականներից ոմանք իրենց կապիտալները ներդրեցին Բուլղարիայում խիստ պահանջարկ ունեցող ապրանքների արտադրության այնպիսի ճյուղերում, ինչպիսիք էին գորգագործությունը, կաշեգործությունը, ծխախոտագործությունը, շերամապահությունը, մետաքսագործությունը և այլ ասպարեզներ: Այս և նման ապրանքներ արտադրող գործարաններում, ֆաբրիկաներում և տնայնագործական ձեռնարկություններում աշխատում էին հազարավոր հայ տարագիրներ, որոնք այս կամ այն չափով ապահովում էին իրենց ապրուստը:

Վերոհիշյալ արդյունաբերական որոշ ճյուղերի հիմնադիրներն ու առաջին գործարկողները հայազգի արդյունահանողներ էին, որոնց ավանդը երկրի տնտեսական զարգացման գործում բարձր է գնահատվել բուլղարական իշխանությունների կողմից:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Բուլղարիայում տնտեսական ճգնաժամի դժվարությունները հաղթահարելու և մանր տնտեսատերերին, ծառայողներին ու քայքայվող առևտրականներին նեցուկ կանգնելու նպատակով հայաշատ քաղաքներում հիմնադրվում են խնայողական և փոխօգնության ընկերություններ, փոխառության դրամարկղներ, բանվորական, սպառողական կոոպերացիաներ, ծառայողների և առևտրականների հայկական բանկեր և նմանօրինակ այլ կազմակերպություններ: Բուլղարիայում կոոպերատիվ շարժման և կոոպերատիվ վարկային բանկերի ստեղծման գործում անգնահատելի ավանդ ուներ հայ անվանի տնտեսագետ Վահան Տոտոմյանցը:

Արևմտահայաստանի և Թուրքիայի տարբեր վայրերից հայ գաղթականների հոսանքների ժամանմանը զուգահեռ բուլղարահայ գաղթօջախներում սկսում են գործել բազմաթիվ հայրենակցական միություններ (չատինգարահի-

սարցիների, բութանիացիների, աղրիանապոլսեցիների, կոստանդնուպոլսեցիների, կովկասահայերի, մշեցիների, ենիջեցիների, ջերախցիների, էսկիշեհիրցիների, մալգարացիների, ռոդոստոցիների, դարանաղցիների և այլն), որոնց հիմնական նպատակն էր նյութական օգնություն ցույց տալ կարիքավոր համերկրացիներին, որոնել-գտնել գաղթի ճանապարհներին կորած հարազատներին: Հայրենակցական միությունները ծավալում են նաև մշակութային-հայրենասիրական գործունեություն, ձգտում համերկրացիների մեջ վառ պահել ազգային, հայրենի ավանդությունները, բարքերն ու սովորույթները: Համաքաղաքացիներին օգնելուց բացի, հայրենակցական միությունները գործուն մասնակցություն ունեին բուլղարահայերի հասարակական-քաղաքական կյանքում:

Արևմտահայաստանում ծավալվող ազգային-ազատագրական շարժումների ազդեցությամբ Բուլղարիայի մի շարք քաղաքներում՝ Վառնայում, Ռուսչուկում, Պլովդիվում, Սիլիստրայում և այլուր ստեղծվում են հայրենասիրական միություններ, որոնք հզոր խթան հանդիսացան Բուլղարիայի հայ գաղթօջախներում ազգային հայրենասիրական ու ազատասիրական տրամադրությունների աշխուժացման համար:

Ի տես հազարավոր հայ գաղթականների աղետալի թշվառության, բուլղարահայ համայնքներում ևս զգացվում է որբերին հովանավորելու և օգնության ձեռք մեկնելու կենսական անհրաժեշտությունը: Բուլղարիայի Ծովափնյա և մյուս հայաշատ քաղաքներում կազմակերպվում են որբախնամ ընկերություններ, «Կարմիր խաչի» մասնաճյուղեր, «Հայուհիների որբախնամ միությունը», «Տիկնանց խնամակալությունը», «Գաղթականական հանճնախմբեր», աղքատախնամ մարմիններ և այլ մարդասիրական ու բարեգործական կազմակերպություններ: Հոգատարությամբ են շրջապատվում նաև այրի կանայք, որոնց համար ապաստան ու աշխատանք էր ապահովվում: Նշված ընկերություններն ու կազմակերպությունները իրենց հանգանակած գումարներից բաժին են հանում նաև Հայաստանի որբերին:

Դարասկզբից Բուլղարիայում լայն ծավալ է ստանում նաև հայ մատաղ սերնդի դաստիարակության գործը: Այս ասպարեզում նախ կանխվում են կաթոլիկ և բողոքական միսիոներների նկրտումները՝ հայ տարագիր որբուկներին հավաքագրելու, դավանափոխելու և իրենց երկրները տեղափոխելու ուղղությամբ:

Դարասկզբից վերակառուցվեցին հայոց եկեղեցիներին կից գործող նախկին «տեր-Թոդիկյան» տիպի վարժարանները, հիմնադրվեցին նորերը: Կատարելագործվեցին դասավանդման մեթոդիկան ու բովանդակությունը, աշակերտների կրթության ու դաստիարակության գործին հաղորդվեց ազգային-հայրենասիրական բնույթ: Այս շրջանի դպրոցների անունների հիշատակումն իսկ խոսուն վկան է այդ իրողության. «Վարդանանց-Վարվառյան»,

«Զորյան», «Հայկազյան» (Պլովդիվ), «Արծրունյաց» և «Սիսական» (Վառնա), «Մեսրոպյան» (Ռուսչուկ), «Սուրբ Լուսավորիչ» (Սլիվեն), «Խորենյան» (Պազարջիկ), «Արամյան» (Սոֆիա) և այլն: Ազգային վարժարաններ սկսեցին հաճախել ավելի մեծ թվով աղջիկներ: Հայկական դպրոցներում մեծ տեղ է հատկացվում նաև հյուրընկալ ժողովրդի լեզվի ու գրականության, պատմության ու մշակույթի ուսուցմանը: 1912-1915 թվականներին Բուլղարիայի հայաշատ քաղաքներում արդեն գործում էին շուրջ 13 հայկական դպրոցներ, որտեղ սովորում էին 1000-ից ավելի երկսեռ պատանիներ: 1923 թվականի պանգվածային գաղթից հետո Բուլղարիայում հայկական դպրոցների թիվը հասնում է 16-ի, ավելանում է նաև աշակերտների և ուսուցիչների թիվը: Ազգային վարժարաններին կից ստեղծվում են գրադարան-ընթերցարաններ, որոնք, գրքային ֆոնդը հարստացնելով, լուսավորական և մշակութային լայն գործունեություն են ծավալում ոչ միայն աշակերտության, այլև հայ ազգաբնակչության լայն շրջաններում: Այս տեսակետից հիշատակելի է հատկապես 1883 թվականին Պլովդիվում հիմնադրված «Գրասիրաց եղբայրությունը», որը մինչև օրս շարունակում է իր ազգանվեր գործունեությունը: Հետագայում նրա օրինակով գրադարան-ընթերցարաններ բացվեցին նաև Ռուսչուկում, Բուրգազում, Սոֆիայում և մյուս քաղաքներում:

Դարասկզբում բուլղարահայերի մշակութային կյանքի պատմության մեջ առանձնակի տեղ են գրավում թատերական ներկայացումները: Նախ՝ դպրոցներին կից աշակերտական ուժերով, ապա նաև՝ հայրենակցական-հայրենասիրական միությունների և ընկերությունների աջակցությամբ կազմակերպվում են սիրողական կամ կիսապրոֆեսիոնալ թատերախմբեր, ինչպես «Վասպուր», «Նադեժդա», «Ժիրայր» և այլ խմբեր, որոնք տեղական կամ եկվոր դերասանների օգնությամբ բեմադրում են առավելապես ազգային-հայրենասիրական և պատմահերոսական դրամներ ու ողբերգություններ, թարգմանական պիեսներ և մելոդրամներ: Այսուհանդերձ, բուլղարահայերի թատերասիրական առավել լայն հետաքրքրությունները բավարարում են Կ. Պոլսից, Կովկասից և այլ վայրերից ժամանած թատերախմբերի հյուրախաղերը, որոնց կազմում հանդես էին գալիս հայ թատրոնի անվանի դերասաններ, ինչպես՝ Թովմաս և Պայծառ Ֆասուլյաճյանները, Տ. Գալեմճյանը, Ս. Պենկլյանը, Սևումյանը, Սիրանույշը, Սաթենիկը, Վ. Փափազյանը, Մ. Երեմյանը, Տ. Նշանյանը և ուրիշներ:

Բուլղարիայի ազատագրությունից հետո երկրում ծավալված բուրժուա-դեմոկրատական բարեփոխումները նպաստավոր դարձան հայ իրականության մեջ ազգային քաղաքական կուսակցությունների աշխուժացման համար: Ռուսաստանից, Կովկասից, Արևմտահայաստանից և Կ. Պոլսից առաջադիմական մամուլի և հայ քաղաքական գործիչների ներթափանցումը Բուլղարիա շարժման մեջ դրեցին հայ գաղթօջախների մտավոր-գաղափարական կյանքը: Մ.

Փորթուգալյանի եւ արմենականների հայրենասիրական որոշ գործունեությունից հետո բուլղարահայերի հասարակական կյանքում երևան եկան Հայ սոցիալ-դեմոկրատական, Հնչակյան և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունների խմբակներն ու կազմակերպությունները:

1890-ական թվականներին հնչակյան մի շարք գործիչներ, անցնելով Բուլղարիա, կազմակերպեցին կուսակցական խմբակցություններ, որոնք Ռուսչուկում հրատարակվող իրենց «Իրավունք» օրգանում մերկացնում էին թուրք ջարդարարների հայահալած քաղաքականությունը, հայ ժողովրդին կոչ անում համախմբվել հնչակյան կազմակերպությունների շուրջը և զենքի ուժով ազատագրել Արևմտյան Հայաստանը: Կուսակցության կենտկոմի անդամ Ավետիս Նազարբեկյանի խմբագրությամբ Ռուսչուկում սկսում է լույս տեսնել «Վերածնունդ» շաբաթաթերթը, որը լայն գործունեություն է ծավալում Բուլղարիայում և հեռավոր Կովկասում սոցիալ-դեմոկրատական և ազգային ու սոցիալական ազատագրության գաղափարների տարածման ուղղությամբ: Բալկանյան պատերազմի սկզբնական օրերին հնչակյանները լայն պրոպագանդ են ծավալում հայկական վաշտի կամավորական ջոկատների համալրման համար:

1894-95 թվականներին ժնևում հրատարակվող «Դրոշակ» թերթի գաղափարական ազդեցությամբ և Գարեգին Խաժակի գործուն նախաձեռնությամբ Բուլղարիայի Յամբոլ, Սլիվեն, Վառնա, Ռուսե քաղաքներում ստեղծվում են Դաշնակցության անդրանիկ խմբակները: Հետագայում դաշնակցական կազմակերպությունների աշխուժացմանը մեծապես նպաստում են կուսակցության ականավոր գործիչներ Վարդոյի (Վարդ Պատրիկյանի), Ռոստոմ Զորյանի, Վահան Մանվելյանի, Ա. Վռամյանի, Քրիստափոր Միքայելյանի, Գարեգին Նժդեհի, Ռուբեն Դարբինյանի, Սիմոն Վրացյանի, Ալեքսանդր Խատիսյանի, Ամատունու և այլոց կարճատև կամ երկարատև այցելությունները բուլղարահայ գաղթօջախները: Նրանք իրենց պրոպագանդով ու հրապարակային ելույթներով համակուսակիցներին խրախուսում են իշխող դիրքեր գրավել բուլղարահայերի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Հետագա տարիներին բուլղարահայերի հասարակական-քաղաքական կյանքում հանդես են գալիս նաև Ռամկավար ազատական կուսակցության մեծ կամ փոքր կազմակերպությունները: Չնայած իրենց ազգային-հայրենասիրական ուրույն ծրագրերին, ռամկավարները հաճախ համագործակցում էին հակադաշնակցական ճակատի խմբավորումների, հնչակյանների, սոցիալ-դեմոկրատների և կոմունիստների հետ:

Դարասկզբից Բուլղարիայում կապիտալիստական հարաբերությունների արմատավորման հետևանքով սրվում են նաև սոցիալական հակասությունները: Բուլղարիայում աշխուժանում է Բուլղարական բանվորական կուսակ-

ցության գործունեությունը: Դասակարգային պայքարի բևեռացման պայմաններում հանդես են գալիս նաև բուլղարահայ հասարակական-քաղաքական պայքարի նորանոր գործիչներ: Հայ և բուլղար աշխատավորական շրջաններում կուսակցության ամրապնդման և սոցիալիստական գաղափարների տարածման գործում աչքի են ընկնում Ստ. Շահբազյանը, Տ. Իսմիյանը, Ա. Հակոբյանը, Ա. Ալանյանը, Գ. Թյուֆյուճյանը, Հ. Մելքոնյանը, Ստ. Հինդլյանը, Հ. Հայրապետյանը, Ա. Մուրադյանը և ուրիշներ: Հիշյալ գործիչները սերտորեն համագործակցում էին Բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարության հետ և պահանջում, որպեսզի բուլղարական կառավարությունը դիմի առավել կտրուկ միջոցների՝ Արևմտահայաստանում հայ բնակչության նկատմամբ թուրքերի սանձազերծած վայրագություններին վերջ տալու համար:

Բուլղարիայի հայ գաղթօջախներում ընկերվարական գաղափարների տարածման համար Պլովդիվում ստեղծվում է նաև «Հայ բանվորական կոմունիստական ինքնազարգացման միությունը», ապա կազմակերպվում է «Մամուլի կոմիտե»[1]:

Բուլղարիայի հայ գաղթօջախներում ծավալվող միջկուսակցական համագործությունները թեև մի կողմից ջլատում էին գաղութի հավաքական ուժերը, մյուս կողմից, մասսաներին համախմբելով իրենց դավանած գաղափարների շուրջը, ազգային-հայրենասիրական յուրովի պրոպագանդով նպաստում էին նրանց հայեցի դաստիարակությանն ու հասարակական մտքի աշխուժացմանը: Բուլղարահայ քաղաքական կուսակցությունների ու խմբավորումների հակընդդեմ պայքարն իր անդրադարձումը գտավ գաղութի հասարակական-ընկերային կյանքի համարյա բոլոր բնագավառներում: Այն իր արտացոլումը գտավ նաև բուլղարահայ պարբերական մամուլի էջերում:

Բուլղարիայում առաջին հայկական տպարանները սկսել են գործել 1884-1885 թվականներից՝ Վառնա, Պլովդիվ և Ռուսչուկ քաղաքներում, որտեղ և լույս են տեսել բուլղարահայ անդրանիկ պարբերականներն ու գրքերը: Տպարանների թիվն առանձնապես ավելանում է Կ. Պոլսից, Արևմտահայաստանից և այլ վայրերից զանգվածային գաղթականական հոսանքների գալուն զուգընթաց: Եկվոր տպագրիչներից ու հրատարակիչներից ոմանք, ըստ հնարավորության, իրենց հետ բերել են հայերեն տպագրատառեր ձուլելու և տպագրական այլ պարագաներ: Բուլղարիայի ազատագրումից հետո մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը Բուլղարիայի տարբեր քաղաքներում գործել են երկու տասնյակից ավելի հայկական տպարաններ: Հա-

[1] Բուլղարիայում հայ ազգային կուսակցությունների սկզբնավորման ու նրանց հետագա գործունեության մասին տե՛ս **Ջ.Մ.Ղասապյանի** «Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության» աշխատությունը, Եր., 1986:

յերեն պարբերականների մի մասն էլ տպագրվել է բուլղարական տպարաններում, որոնք հագեցված էին նաև հայերեն տպագրատառերով:

Բուլղարիայում այդ տարիներին լույս տեսած հայերեն պարբերականների զգալի մասը քաղաքական բնույթի էր և այս կամ այն կուսակցության պաշտոնական օրգանն էր կամ նրա դավանած սկզբունքների խոսափողը: Արմենականներին է ծառայել, օրինակ, Ռուսչուկում լույս տեսնող «Դանուբը» (1891–1892, խմբ.՝ Մ. Թյուֆյունճյան): Դաշնակցականների հրատարակած պարբերականներն էին՝ Վառնայում տպագրվող «Շարժումը» (1898–1907, խմբ.՝ Գամեր Արշավիր և Ե. Սրմաքեչխանլյան, հետագայում՝ Վարդո-Վարդ Պատրիկյան), Պլովդիվի «Ռազմիկը»՝ որպես Հ. Հ. Դաշնակցության կենտրոնի օրգան (1905–1909, խմբ.՝ Ռ. Զարդարյան և Մ. Օվանեսով), Սոֆիայում և Պլովդիվում լույս տեսնող «Հայաստանը» (1915–1925, խմբ.՝ Մ. Թերզյան, Տ. Խաչիկյան, Հ. Տեեճյան, Օ. Վարդանյան և ուրիշներ): Հնչակյան սոց.-դեմ. կուսակցության պարբերականներն էին Ռուսչուկի «Վերածնունդը» (1903–1904, խմբ. կոլեգիա՝ Պ. Գալճայանի գլխավորությամբ), «Ապագան» (1905, Ռուսչուկ-Փարիզ, խմբ.՝ Ստ. Տերտերյան), «Պալքանյան մամուլը» (1915–1922, Ռուսչուկ-Սոֆիա, խմբ.՝ Էդ. Զոփուրյան, Միրզախանյան, Հ. Պողոսյան): Բուլղարիայում հրատարակվել են նաև սոցիալ-դեմոկրատական թեքումով այլ պարբերականներ, ինչպես՝ «Խուզակը», «Հրազդանը» և այլն: Համակավար ազատական կուսակցությունը ևս հրատարակում էր մի շարք պարբերականներ, ինչպես՝ «Լուսարձակը» (Վառնա, 1920–1924, խմբ.՝ Ս. Պենչյան, Տ. Մարտիրոսյան), հետագայում՝ «Փարոսը» (Սոֆիա-Պլովդիվ, 1929–1945, խմբ.՝ Տ. Մարտիրոսյան):

Որոշ ուշացումով Պլովդիվում սկսել է հրատարակվել բուլղարահայ կոմունիստների օրգան «Կարմիր լուրեր», ամսաթերթը (1920): 1922-ից այն վերանվանվել է «Նոր աշխարհ» և հարատևել մինչև 1923 թ. Բուլղարիայում բռնկված Սեպտեմբերյան ապստամբությունը: Թերթը հրատարակվել է «Մամուլի կոմիտեի» խմբագրությամբ և Ստ. Շահբազյանի գլխավորությամբ: Վերջինս գնդակահարվել է Բուլղարիայում 1923 թվականի ֆաշիստական հեղաշրջման օրերին:

Մինչև դարասկզբի 20-ական թվականները Բուլղարիայի տարբեր քաղաքներում լույս են տեսել նաև «Չեզոք» գիտական, առողջապահական, գրական, զավեշտական, ուսուցչական, մանկական և այլ բնույթի պարբերականներ ու հանդեսներ, ինչպես՝ «Իրավունք», «Հայելի», «Տավրոս», «Շավիղ», «Վիպաթերթ», «Ռահվիրա», «Գարուն» և այլ պարբերականներ:

Բուլղարահայերի լուսավորական-կրթական, նրանց հասարակական-քաղաքական մտքի ու գեղարվեստական ճաշակի զարգացման գործում նկատելի ավանդ ունի հայկական տպարաններում հրատարակվող բազմապիսի գրականությունը: 19-րդ դարավերջից մինչև 20-ական թվականները Բուլղարիայում լույս է տեսել գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական, լուսավորական-կրթական ու հոգևոր բովանդակությամբ հարուստ գրականություն: Բուլղարիայում տպագրված գեղարվեստական գրականության մեջ պատշաճ տեղ ունեն նաև բուլղար, ռուս և համաշխարհային գրականության դասականների գործերից կատարված թարգմանությունները: Ընթերցող հասարակության և աշակերտության բարոյակրթական, ուսումնադաստիարակչական, հոգևոր-կրոնական, առողջապահական և այլ բնույթի պահանջները բավարարելու նպատակով հրատարակվում էին նաև բազմաթիվ ձեռնարկներ, դասագրքեր, բառարաններ, երգարաններ, հայրենասիրական բանաստեղծությունների ու երգերի ժողովածուներ:

ՍԵՐԲԻԱ, ԽՈՐՎԱԹԻԱ

Հարավսլավական երկրներում հայերի գտնվելու և հայկական բնակավայրերի գոյության մասին առաջին՝ խիստ կցկտուր և ժլատ տեղեկությունները վերաբերում են 12–13-րդ դարերին: Այսպես, 12-րդ դ. կեսերին Բուլղարիայից և Մակեդոնիայից Սերբիա սկսեց ներթափանցել բոգոմիլյան աղանդը, որի կրողներն էին այն ժամանակ արդեն հիմնականում սլավոնները: Այդուհանդերձ որոշ անուղղակի տվյալների հիման վրա կարելի է պնդել, որ նրանց մեջ քիչ չեն եղել հայ-պավլիկյանները, որոնց ներկայության հետքերը դրոշմվել են ժողովրդական որոշ նախապաշարմունքներում ու լեզվում: Ինչպես Հյուսիսային Հունաստանի, Մակեդոնիայի և Թրակիայի քաղաքներում ու գյուղերում, այնպես էլ հարավային և հարավ-արևելյան Սերբիայում ընդհուպ մինչև մեր օրերը «Հայուհի» («Երմենկա») էթնոնիմը նշանակում է նաև «չար ոգի», «դև», որից ծննդկանները պիտի պաշտպանվեին երիցուկի միջոցով:

13-րդ դ. առաջին կեսին հերետիկոսների դեմ մղված պայքարում վերջնական հաղթանակի հասավ առաջին սերբ արքեպիսկոպոս, սերբական ինքնակա եկեղեցու հիմնադիր Սբ. Սավվան, որը երուսաղեմից վերադառնալիս այցելեց Փոքր Հայք՝ այնտեղ «սրբերի մասունքներ գտնելու» նպատակով[1]: Սբ. Սավվան Սերբիա հրավիրեց հայ ճարտարապետներ և վարպետներ, որոնք մասնակցելու էին սերբական եկեղեցիների և վանքերի շինարարությանը. այդ հանգամանքը իր հետքը թողեց այն ժամանակվա սերբական պաշտամունքային ճարտարապետության վրա[2]: Սերբ արքեպիսկոպոսն այդ միջոցով ջանում էր դիմակայել պավլիկյաններին և բոգոմիլներին, նրանց հակադրելով հայազգի սրբերի պաշտամունքը: 14–15-րդ դդ. սերբական եկեղեցական համարյա բոլոր կարևորագույն կենտրոններում կարելի է հայտնաբերել, օրինակ, Հայ Լուսավորիչ Սբ. Գրիգորի պատկերումը՝ Ստարի Նագորիչանում գտնվող Սբ. Գեորգիի եկեղեցում (1316–1318 թթ.), Գրաչանիցա վանքում (1320 թ.), Դեչանի վանքում (1346–1347 թթ.), Մարկոսյան վանքում (1376–1377 թթ.), Մանասիայի վանքում (մինչ 1418 թ.): 13–14-րդ դդ. հայերը առաջին անգամ հիշատակվում են սերբական գրչության հուշարձաններում:

13-րդ դ. սկզբին սերբական երկրներում հայերի ներկայությունը հավաստող հնագույն հուշարձանն է 1218 թ. երկվեզու հայ-սլավոնական վիմա-

[1] Доментијан. Живот Светога Саве и Живот Светога Симеона. Београд, 1988, с. 218.

[2] **Millet G.** L'Ancien Art Serbe. Les eglises. Paris, 1919, p. 45.

դիր արձանագրությունը Վիտովնիցա վանքում, որը գտնվում է Հյուսիս-արևելյան Սերբիայում՝ Բրանիչևո մարզում: Քարն արձանագրությամբ հանդերձ պահպանված է Հյուսիսային պատուհանի տակ, տաճարի մուտքի ձախ կողմում: Արձանագրությունը բաղկացած է յոթ տողից, վերին երեք տողը գրված է հին սլավոներենի բուլղարական տարբերակով, ներքևի չորս տողը գրված է գրաբար. «(ՅԱՆ) ՈՒՆ ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴՈՑ ԵՒ ՍԲ ՀՈԳՈՑՆ (sic!) ԵՍ ԼԱՏՈՆ ՊԱ(ՊՈՒԿԱ)Յ ՈՐԴԻՆ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻ ՅԱՆՈՒՆ ՍԲ ԱԿՈԲԱՑ ՀԱՅՐ (ԱՊԵՏ) ԵՒ ՍԲ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ՇՆՈՂԱՑ Ի(ՄՈՑ): ՍԲ ԵԿԵ(ՂԵ)ՑԻՍ Ի ԹՈՒԱԿԱՆԻ ... ՀԱՅՈՑ Ի: ՈՀԷ: ...»[1]:

Առանձին հետազոտողներ գտնում են, որ արձանագրությունը վերաբերում է Հարևան Օրեչկովիցա գյուղում գտնվող սուրբ առաքյալներ Հակոբի և Պետրոսի եկեղեցուն, որը ժողովուրդը «Հայկական եկեղեցի» է կոչում:

Որոշ հեղինակներ Բրանիչևոյում հայկական բնակավայրի առաջացումը կապում են Բալկաններում, մասնավորապես Բուլղարիայում և Մակեդոնիայում այլ հայկական գաղութների առկայության հետ: Հնարավոր է, որ Բալկանյան թերակղզու հարավային մարզերից հայազգի Լադոն իր հայրենակիցների հետ վերաբնակվել է Բրանիչևոյում, որտեղ էլ կառուցել է Սուրբ Հակոբի և Պետրոսի եկեղեցին: Ըստ հետազոտողների մի այլ վարկածի, Լադոն այն բազմաթիվ հայ վարպետներից մեկն էր, որոնք հրավիրվել էին սերբական և բուլղարական եկեղեցիներ կառուցելու համար:

1389 թ. հունիսի 15(28)-ին սերբական բանակը մարտի բռնվեց թուրքական գերակշիռ ուժերի հետ: Սերբերի պարտությունը թուրքերի ճանապարհը բացեց ամբողջ Բալկանյան թերակղզին նվաճելու համար: Հենց Կոսովոյի ճակատամարտի հետ է կապված հարավ-արևելյան Սերբիայում գտնվող մի այլ «հայկական» վանքի՝ երմենչիչի մասին ժողովրդական հին ավանդապատումը: Սերբիայի միտրոպոլիտ Միխայիլի օրագրերում պահպանված (19-րդ դ. երկրորդ կես, պահվում է Զաեչար քաղաքի արխիվում) ժողովրդական ավանդությունը ավետում է, որ վանքը կառուցվել է 1392 թ. մոտերքը, և այն տեղի բնակիչների շրջանում հայտնի է որպես Հայկական վանք: Հայերը, որպես թուրքական վասալական զորք, 5000 հեծյալով պիտի մասնակցեին Կոսովոյի դաշտի նշանավոր ճակատամարտին: Իմանալով այն մասին, որ իրենք պիտի մարտնչեն քրիստոնյաների՝ սերբերի դեմ, նրանք լքում են թուրքական զորաճամբարը հենց մարտից առաջ, և Իբար ու Մորավա գետերի հովտով հասնում Սերբիայի տակավին ազատ մասը՝ մինչև Օգրեն լեռը: Այստեղ, հուսալի և անմատչելի վայրում, ի նշան երախտագիտության Փրկչին, նրանք կառուցում են վանք և այն նվիրաբերում սուրբ հրեշտակապետեր Գաբրիելին և Միքայելին:

[1] Թարթիկյան Հ.Մ., Հայերեն երկու վիմագիր արձականագրություն Հարավսլավիայի տարածքում.– Պատմա-բանասիրական հանդես, 1990, N°3, էջ 127–128:

Եվ թեև ժամանակի հոլովույթում հայերի հետքերը իսպառ անհետացել են, առ այսօր ժողովրդական հիշողության մեջ պահպանվել է «երմենչիչ» անվանումը: Վանքը այսօր էլ պաշտոնապես կոչվում է՝ Սբ. Հրեշտակապետեր Գաբրիելի և Միքայելի սերբական ուղղափառ վանք՝ Երմենչիչ: Դեռ ավելին, վանքի երմենչիչ անվանումով են կոչում Օզրեն լեռան հյուսիս-արևմտյան լանջի ողջ հսկայական տարածքը:

Բացի անվանումից, ոչ բուն եկեղեցում, ոչ էլ դրա մերձակայքում չի պահպանվել հայության ոչ մի հետք: Ժամանակի ընթացքում նրանք կամ ձուլվել են կամ վերաբնակվել Բալկանյան թերակղզու ավելի անվտանգ մարզեր: Մասնավորապես, Պաշտրովիչի տոհմի չերնոգորյան ցեղերից մեկը (բնակվում են Կոտորյան ծովածոցից հարավ-արևելք ընկած Չերնոգորյան ծովափին) կոչվում է Արմենկո (Արմենկովիչ) կամ Երմենկո: Այդ ցեղի նախնիները Կոսովոյի ճակատամարտից հետո արևելյան Սերբիայից գաղթել են Չերնոգորիա:

Թուրքական տիրապետության ժամանակաշրջանում հայերի արտագաղթերը դեպի Բալկանյան թերակղզի մեծ թափ են ստանում: Առաջին հերթին այստեղ էին գաղթում առևտրականները և արհեստավորները, ընդ որում, արտագաղթերի ուղղությունը հիմնականում համընկնում էր Արքայական (կամ Կոստանդնուպոլսյան)՝ Կոստանդնուպոլիս-Սոֆիա-Բելգրադ-Վիեննա ճանապարհի հետ: Առանձին հայ առևտրականները հասնում և բնակություն էին հաստատում Բոսնիայում և Հերցեգովինայում: Այսպես, Ֆրանսիացի ճանապարհորդ Պիեռ Լեսկալոպյեն 1571 թ. հանդիպել է հայ առևտրականների՝ Տրեբինյեյում:

Հայկական գաղութները, որպես այդպիսիք, Սերբիայում սկզբնավորվել են 17-րդ դ., երբ ըստ Գրիգոր Դարանաղցու, 1604-1605 թթ. հայերի երկու խոշոր խումբ «ցրուեցան յԱնատոլ և յՈւռումէլս՝ յամենայն քաղաքս, մինչ ի Պէլգրատ, մինչ Պուդտանաց աշխարհն և Լեհաց»[1]: Այդ խմբերից մեկը լքում է Հայաստանի արևելյան սահմանները ջալալիների վայրագությունների և թուրք-պարսկական պատերազմների տարիներին, երկրորդը Բուլղարիայի վրայով Սերբիա է գաղթում Կաֆայից, Ղրիմում տիրող եռամյա երաշտի և սովի հետևանքով: Գաղթածների մեջ մեծամասնություն էին կազմում Նախիջևանի մարզի Շոռոթի, Երևանի և Կարինի (Էրզրումի) բնակիչները, ինչպես նաև ղրիմահայերը:

Հայերն առաջին անգամ հիշատակվում են Բելգրադում 1573 թ., գերմանացի միսիոներ և ճանապարհորդ Ստեֆան Գերլախի օրագրում, որն այստեղ հանդիպել է մի քանի առևտրականների: Հարյուր տարի անց (1658 թ.)

[1] Ժամանակագրություն **Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ** կամ **Դարանաղցւոյ**, Երուսաղեմ, 1915, էջ 69: Տե՛ս նաև էջ 18, 95-96, 322-323:

ականատես Ֆրանսիացի Կիկլեն վկայում է, որ հայերը Բելգրադում ունեն իրենց եկեղեցին ու խանութները և միակն են, որ առևտուր են անում Գերմանիայի և Վիեննայի հետ, սովորաբար Դանուբի վրայով: Նույն տարում Բելգրադ է այցելել ևս մի ֆրանսիացի՝ Ա. Պուլեն, որն իր ուղեգրությունների մի քանի էջեր նվիրել է բելգրադյան հայերի և հույների եկեղեցական արարողություններին: Նրա նոթերի համաձայն, հայերի մեծամասնությունը պատկանել է հայ առաքելական եկեղեցուն, թեև արդեն այն ժամանակ կային կաթոլիկություն դավանող մի քանի ընտանիքներ: Անգլիացի բժիշկ և ճանապարհորդ Էդուարդ Բրաունը, որը 1669 թ. եղել է Բելգրադում, իջևանել է մի հայ հարուստ առևտրականի տանը, այցելել հայերի բազում այլ գեղեցիկ տներ, որոնցից մեկում տեսել է չատրվան, հոյակապ բաղնիք և վառարաններ. հայերն առատորեն հյուրասիրել են անգլիացիներին սուրճով, օշարակով և գերազանց գինով: Հայերը Բելգրադում, վկայում է Բրաունը, ունեին եկեղեցի: Նա խորհուրդ էր տալիս, թե ավելի լավ է հայերից գնել ապրանքներ, քան հրեաներից կամ հույներից, քանի որ հայերն ավելի անկեղծ ու ազնիվ են[1]:

Բելգրադում է ծնվել և երկար ժամանակ ապրել նշանավոր առևտրական և ժողովրդական բարերար Աբրո (Աբրահամ) Զելեբին, որի քարտուղարը և բերխանների դաստիարակն է եղել (Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո) երեմիա Զելեբի Քյոմուրջյանը: 1550 թ. Աբրահամի պապը՝ Մահտեսի Ալպիաբը (Արփիարը) թուրք-պարսկական պատերազմների պատճառով լքում է Կարինը և ամբողջ ընտանիքով ու եղբայրներով գաղթում Բելգրադ[2]: Ալպիաբի (Արփիարի) որդին՝ Մուրատխանը, ըստ Քյոմուրջյանի, բազմապատկել է ընտանիքի հարստությունը, իսկ 1634 թ. ուխտագնացություն է կատարել Երուսաղեմ:

Մանկությունից Աբրո Զելեբին հոր և պապի հետ առևտրական գործերով ճանապարհորդել է Վենետիկ, իսկ 1644 թ. նա դառնում է կրետեի փաշայի դրամափոխը (սառաֆը): Բելգրադի առանձին հարուստ հայեր վարկավորում էին տեղացի առևտրականներին: Այսպես, օրինակ, դուբրովնիկցի առևտրական Մարտոլիցա Ցրնևիչը 130 թալեր պարտք էր վերցրել հայերից Բելգրադում՝ պարտավորվելով պարտքը վերադարձնել Դուբրովնիկում մի ոմն հայի:

Տակավին 13-րդ դ. Դուբրովնիկը (Ռագուզան) առևտուր էր անում Կիլիկյան Հայաստանի հետ, իսկ 1430 թ. այստեղ է ժամանել Հռոմ ուղևորվող հայազգի եպիսկոպոսը: 16-րդ դ. երկրորդ կեսին հայերը առևտրական աշ-

[1] "Английски пътеписи за Балканите (края на XVI-30-е год на XIX в.)". София, 1987, с.174-175.

[2] **Երեմիա Քէօմիւրճեան**, Ապրոյանց ազգաբանութիւնը: Տե՛ս **Ակինեան Ն.**, Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, կեանքն եւ գրական գործունէութիւնը, Վիեննա, 1933, էջ 241:

խույժ կապեր ունեին Դուբրովնիկի և դալմաթական ծովափի մյուս քաղաքների հետ[1]:

17-րդ դ. սկզբին հայերը հայտնվում են նաև Սկոպլեում և Սարաևոյում: 1611 թ. այդ քաղաքներում է գտնվել Սիմեոն Լեհացին, որը Սկոպլեում հանդիպել է հայ այգեգործների երեք ընտանիքի, իսկ Սարաևոյում՝ չորս հայ վաճառականների[2]:

Օսմանյան կայսրության հարավսլավական երկրներ էին գալիս ոչ միայն առևտրականներ: 1634 թ. Բելգրադում է գտնվել Մինաս Գրիչը, որն իր տպավորությունները քաղաքի մասին գրի է առել չափածո ձևով.

Մտաք դղեակ գիւղ ասանի,
Զոր Պէլկրատ նա որ ասի:
Խիստ մխիթար տեսաք զսա,
Որ մոռացուց վիշտս մեր սա,
Ցամեն բարեաց լցւեալ էր սա,
Առատութեամբ ծուկն, որ ի սմա[3]:

1688 թ. մարտին Առաքել Դպիր Սկութարացին Բելգրադում գրել է «Տաղարան» Խոջա Փանոսի համար: 1690 թ. Վարդապետ Մովսես Երևանցին ավստրիական կայսր Լեոպոլդի թուլլտվությամբ սկսել է Բելգրադում հայկական եկեղեցու շինարարությունը[4]: 17-րդ դ. վերջերին և հատկապես Բելգրադի ավստրիական առաջին նվաճման ժամանակաշրջանում (1688-1690 թթ.) հայ կաթոլիկների թիվն այստեղ այնքան էր մեծացել, որ անհրաժեշտ էր դարձել նրանց համար առանձին եկեղեցի կառուցել: Սակայն 1690 թ. աշնանը թուրքերի հարձակումը և նրանց կողմից Բելգրադի գրավումը ժամանակավորապես հետաձգեց այդ ծրագրերը:

Ավստրիայի և Թուրքիայի միջև 1699 թ. հաստատված հաշտությունից հետո Հաբսբուրգների միապետության մեջ աճեց հետաքրքրությունը Թուրքիայի հետ առևտրի և թուրքական ապրանքների նկատմամբ: Ավստրիացի մանուֆակտուրայի սեփականատերերի համար Թուրքիան անհրաժեշտ էր որպես հումքի աղբյուր և որպես պատրաստի արտադրանքի իրացման չուկա: 18-րդ դ. սկզբներից ավստրիական տոնավաճառներում սկսում են

[1] Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարընչութիւնք Հայոց և Վենետաց, Վենետիկ, 1896, էջ 172-173, 278-281, 450-451, 456, 461-463:

[2] Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 46-47:

[3] Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւն (16-17-րդ դդ.), հ.2, Եր., 1987, էջ 311:

[4] Ալիշան Ղ., Կամենից, Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Թումենիոյ, Վենետիկ, 1896, էջ 144-145:

հայտնվել այսպես կոչված «թուրքական» առևտրականներ. այդ հորջորջմամբ նկատի ունեին սերբերին, հույներին, հայերին և հրեաներին: Այդ առևտրականների մեծամասնությունն Ավստրիա էր մուտք գործում սահմանակից մարզերից՝ Բելգրադից և Սրեմից, նրանցից շատերը բնակություն էին հաստատում Հաբսբուրգների կայսրության հարավային մարզերում կամ Ավստրիային հարող թուրքական շրջաններում: Գործնականապես Բելգրադ-Վիեննա ողջ առևտուրը գտնվում էր սերբերի, հայերի և հույների ձեռքին: Առևտրական գործառույթները դյուրացնելու համար նույնիսկ ստեղծվել էր երկու խմբից բաղկացած հատուկ կազմակերպություն: Առաջին խմբի մեջ մտնում էին թուրքահպատակ այն սերբերը, հայերը և հույները, որոնք Վիեննայում արևելյան ապրանքներ վաճառող խանութներ ունեին: Երկրորդ խմբում ընդգրկված էին ավստրիական հպատակություն ընդունած նույն ժողովուրդների ներկայացուցիչները: Նրանք ավստրիական ապրանքները արտահանում էին Բելգրադ և այնուհետև Թուրքիա: Տակավին 1671 թ. ավստրիական արքունի ռազմական խորհուրդը արձանագրել է, որ վերջին տարիներին մեծացել է Բելգրադից եկած թուրքահպատակ հայերի, սերբերի և հույների թիվը Ավստրիայում, որպիսիք նախկինում չկային Վիեննայում:

Վիեննայի հայերը սերտ կապեր ունեին Բելգրադում գտնվող իրենց հայրենակիցների հետ և նրանց հայտնում էին Ավստրիայում ընթացող իրադարձությունների մասին, մի հանգամանք, որ առաջացրել է ավստրիական իշխանությունների դժգոհությունը և կասկածը:

17-րդ դ. վերջի և 18-րդ դ. սկզբի ավստրիական մաքսատների արձանագրություններում կան Բելգրադից, Նիշից և Պետրովարադինից եկած հայ առևտրականների բազում անուններ: Բայալի մաքսատան 1699 թ. արձանագրությունում, օրինակ, հիշատակված են Պետրովարադինից եկած Շահինը, Բելգրադից ժամանած Ազնավուրը, Մարկոսը, Շահինը, Մկրտիչը, Գրիգորը, Դավիթը, իսկ 1700 թ. արձանագրության մեջ հիշատակված են Ավետիքը, Աստվածատուրը, Խաչին, Գիքոն և ուրիշներ: Նույն արձանագրություններից համաձայն, 18-րդ դ. հենց սկզբին հայերը եղել են նաև Օսիեկ քաղաքում: Օսիեկի բնակչության 1702 թ. առաջին մարդահամարում հիշատակվում են հայազգի Քրիստոփորը (Christoph), Յանկոն (Yanzky-հավանաբար Հովհաննեսը) և Շայոն (Shajo): 1718 թ. հեռավոր Նախիջևանից այստեղ է հաստատվում Հովհաննես Մանուկը, որը տարեվերջին ընդունել է ավստրիական հպատակություն և խորվաթական այդ քաղաքի պատմության մեջ բացել է առաջին սրճարանը:

Տաննյոթամյա զինադադարից հետո 1717 թ. ավստրիական զորքերը վերստին մտան Բելգրադ, և Պոժարևացի հաշտության պայմանագիրը, որով

ավարտվեց այդ պատերազմը, հնարավորություն ընձեռեց Բ. Դուան հետ առևտրական շահավետ համաձայնագիր կնքել: Հաբսբուրգների հպատակները, ցածր մաքս վճարելով, ազատ առևտրի իրավունք էին ստանում Օսմանյան կայսրության բոլոր տիրույթներում: Արդյունքում ընդլայնվեցին ավստրիական վաճառականների, նրանց թվում, բազում հայ, հույն և սերբ առևտրականների կապերը: Այդ կապերն ամենից առաջ անցնում էին Սերբիայի վրայով: Հյուսիսային Սերբիայի ռազմակալման ընթացքում Հաբսբուրգները ձգտում էին աշխուժացնել արհեստագործությունը և առևտուրը, նրանք սկսեցին արդյունահանել երկահաթանք: Այդ ժամանակ արագ աճում և զարգանում էին Բելգրադը և սերբական մյուս քաղաքները, որոնց վրայով անցնում էր Հաբսբուրգյան տիրույթներից դեպի բալկանյան երկրներ անցնող առևտրական ուղին: Միաժամանակ աճում էր «թուրքական» առևտրականների թվաքանակը Ավստրիայում: 1717 թ. նոյեմբերին Դանուբյան Բելգրադի 459 ընտանիքից 29-ը հայկական էր[1]: 1718 թ. սեպտեմբերի 17-ին անցկացվեց Դանուբյան կամ Գերմանական Բելգրադի ազգաբնակչության նոր մարդահամար, որտեղ հիշատակվում էին մոտ երկու տասնյակ հայեր: Դրանց թվում էր Մարտին Աղաբեկը, որն ապրում էր Բելգրադի հայ քահանայի տանը: 1706 թ. Մարտին Աղաբեկը այլ հայերի հետ փորձեց ծածուկ մեկնել Բելգրադից, սակայն թուրք կապիտան Պերկազին հրամայեց ուժ գործադրելով վերադարձնել նրանց, կալանելով 17 երեխաների, որոնց հայրերը հայազգի էին, իսկ մայրերը՝ ավելի քան տասը տարի առաջ սուրբ մկրտություն ընդունած թրքուհիներ[2]:

18-րդ դ. սկզբին Բելգրադում շարունակում էր իր գոյությունը հայկական եկեղեցին՝ քահանայով հանդերձ: Բելգրադի բնակչության 1718 թ. մարդահամարում հիշատակվում է հայազգի քահանա տեր Պողոսը: Բելգրադի հայերի մեծամասնությունը պատկանում էր հայ առաքելական եկեղեցուն, իսկ կաթոլիկները սակավաթիվ էին: Սակայն 18-րդ դ. սկզբներից իրադրությունը սկսեց փոխվել: Կոստանդնուպոլսում և Ադրիանապոլսում հայ կաթոլիկների դեմ ձեռնարկված հալածանքներից հետո նրանցից շատերը հարկադրաբար գաղթեցին Բալկաններ, այդ թվում նաև Սերբիա, որտեղ Կոստանդնուպոլսի հայ պատրիարքության դիրքերն այնքան էլ ամուր չէին: Սերբիայի ավստրիական ռազմակալումը հանգեցրեց հայ կաթոլիկների՝ կաթոլիկ միապետի պաշտպանության ներքո Կոստանդնուպոլսից Բելգրադ վերաբնակության հաստատելուն: Վիեննայի արքունի ռազմական խորհրդի 1720 թ. նոյեմբերի

[1] Виловски Т. Податцн за историjу Београда: Од 1717-1739 године, по архивским и другим изворима. Нова Искра, Београд, 1906, с.166.

[2] Поповиħ Д. J. Београд кроз векове. Београд, 1964, с. 158.

արձանագրություններից մեկը վկայում է, որ «Կոստանդնուպոլսի կաթոլիկ հայերից շատերը ցանկանում են հաստատվել Սերբիայում»:

Ավստրիացիների հետ Տրանսիլվանիայից Բելգրադ է ժամանել «Փոքր Թաթարստանում» (այսինքն, Ղրիմում) գտնվող Կաֆայի արքեպիսկոպոսը:

Հավատի պրոպագանդային ուղղված 1719 թ. հունվարի վերջերին գրած իր նամակներում նա նշում է, որ ինքը հրավիրվել է տեղի հայերի (թվով մոտ 70 մարդ) կողմից՝ հայկական եկեղեցում կրոնական արարողություններ կատարելու համար: Այստեղի հայկական եկեղեցին ստորգետնյա մի քարանձավ էր, որի վրա դրվել էր փայտաշեն ծածկ. այն գտնվում էր Բելգրադի պարսպի մոտակայքում: Հովհաննես Գևորգ արքեպիսկոպոսը սկսեց նկատել, որ հավատացյալները բացեիբաց աղոթում են հանուն իրենց պատրիարքի, փոխանակ աղոթեն Հռոմի պապի համար: Իր անհաջողություններից սրտնեղած՝ Հովհաննես Գևորգը գնաց կապուցիններին վանքում ապրելու, որոնց եկեղեցում նա ամեն օր պատարագ էր կատարում հայերի՝ «ճշմարիտ կաթոլիկների» փոքր խմբի համար:

Հայրենի եկեղեցուն հավատարիմ հայերն իրենց համար Սոֆիայից հրավիրեցին քահանա Հարությունին: Նրանք Հարությունին ներկայացրին Բելգրադի ճիզվիտական ուխտի պետին՝ որպես ջերմեռանդ կաթոլիկի, և ճիզվիտները թույլատրեցին հայերին շարունակել եկեղեցական արարողությունները քարանձավային եկեղեցում: Կասկածներից զերծ մնալու և ճիզվիտների աջակցությունն ապահովելու համար հայ քահանան երբեմն աղոթում էր Պապի համար և ջրի հետ գինի խառնում, ինչպես այդ անում են կաթոլիկները: Հարությունը վայելում էր ճիզվիտների այնքան մեծ վստահությունը, որ վերջիններս պատժում էին յուրաքանչյուրին, ով համարձակվում էր չհնազանդվել նրան: Այդ բոլոր հանգամանքները անհանգստություն էին պատճառում «Կաֆայից եկած արքեպիսկոպոսին»: Պրոպագանդային հասցեագրված նամակում նա մեղադրում էր ճիզվիտներին այն բանում, որ նրանք, հայերեն չհասկանալով, հավատացել են «հերձվածող քահանայի» կեղծ հավաստիացումներին: Միաժամանակ նա խնդրում էր պրոպագանդային՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Բելգրադի հայերի մոտ քարոզիչ ուղարկելու համար[1]:

Հովհաննես Գևորգի առաջարկությունն ընդունվեց, և 1719 թ. հունիսին Տրանսիլվանիայի վրայով Բելգրադ ժամանեցին Խաչատուր Առաքել և Ղազար Դեմետրի քահանաները՝ Վենետիկի հայ կաթոլիկական միաբանությունից: Տեր Խաչատուրին հրավիրեցին տեղաբնակ հայերը՝ իրենց եկեղեցում քարոզելու համար, սակայն նա չհայտնաբերեց այն մռայլ պատկերը, որ նկարագրում էին իրենց զեկուցագրերում իր նախորդները: Վերադառնալով Վենետիկ, Խա-

[1] Премроу М. У арменска колониjа у Београду: Историанска скица с документима. - Споменик LXVI. Београд, 1926, с. 213-224.

չատուրն առաջարկեց պրոպագանդային՝ Բելգրադի հայերի համար նշանակել մշտական քարոզիչ (միսիոներ): Այսպիսով, 1719 թ. վերջերից կաթոլիկությունը սկսեց գերակշռել Բելգրադի հայերի շրջանում, որն առաջին հերթին բացատրվում է Թուրքիայից և այլ վայրերից՝ Սերբիա նորեկ կաթոլիկ հայերի ժամանումով:

1720 թ. ողջ ընթացքում քարոզչական պարտականությունները կատարում էր «Կաֆայից եկած վերոհիշյալ արքեպիսկոպոսը»: Նույն տարվա նոյեմբերին Բելգրադի հայերի համար ուղարկվեց մի ուրիշ քարոզիչ՝ Վենետիկի միաբանության անդամ յոզղաթցի հայր Ստեփանոս Ադեոդատոն (Աստվածատուրը): Ստափանոսի խնդրանքով, պրոպագանդան նրան Բելգրադից Լիվորնո տեղափոխեց և նրա փոխարեն նշանակեց հայր Բարթողոմեոս Գասպար Վեհրադին: Վերջինս, սակայն, իր պաշտոնին անցավ միայն մեկ տարի անց՝ 1722 թ. սեպտեմբերի 15-ին: Կաֆայից եկած արքեպիսկոպոսի հասցեին արված մեղադրանքներով առլեցուն իր զեկուցագրում նա գրում էր, որ Բելգրադում մնացել է ընդամենը 80 հայ, որոնցից տասը առևտրականներ են, իսկ մնացյալները՝ արհեստավորներ, որոնք շատ աղքատ են և իրենց արհեստով զբաղվելու հնարավորություն չունեն: Այնինչ, առաջ Բելգրադում կար 200 հարուստ հայ ընտանիք, սակայն նրանց մեծ մասը վերադարձել է Թուրքիա: Թեև Բելգրադի հայերի շրջանում կաթոլիկությունն արդեն հիմնականում հաղթանակել էր, այնուամենայնիվ, հայր Բարթողոմեոսը հարկադրված եղավ ոչ նվազ ջանքեր գործադրել՝ նրանց «լուսավորելու» համար: Նրա զեկուցագրի կեսից ավելին Հովհաննես Գևորգի հասցեին ուղղված մերկացումներ ու մեղադրանքներ էին, որի պատճառով, իբր, Բելգրադի հայերն անտարբեր են դարձել եկեղեցու նկատմամբ: Սակայն բանն այն է, որ հայր Հովհաննես Գևորգն ինքն էր հավակնում հայ կաթոլիկների հոգևոր հովվի դերին և այդ կապակցությամբ դիմում էր այլևայլ բազում ատյաններ[1]: 1724 թ. սկսած Բելգրադի իշխանությունները նրան վճարում էին կենսաթոշակ 150 ֆլորինի չափով՝ օրինակելի վարքի և մատուցած ծառայությունների դիմաց, իսկ 1730 թ. նրան միջոցներ հատկացվեցին՝ տուն կառուցելու համար: Վերջին անգամ «Կաֆայից եկած արքեպիսկոպոսը» հիշատակվում է արքունի ռազմական խորհրդի արձանագրություններում, 1734 թվականին:

1723 թ. հուլիսին ավստրիական վարչակազմը, ընդառաջելով Բելգրադում բնակվող հայերին, նրանց տրամադրեց մզկիթ՝ ժամերգություն կատարելու համար: Այդ նույն որոշմամբ Բելգրադի հայերին, սերբերին և հրեաներին կարգադրվում էր բնակություն հաստատել առանձին՝ քաղաքի գերմանական թաղամասից դուրս: Նշված մզկիթը հետագայում մաքրվեց, օծվեց և վերածվեց կաթոլիկական եկեղեցու, և այնտեղ, «ազգային ծեսով ավելի լավ էին արարո-

[1] Премроу, նշվ. աշխ., էջ 219, 220:

դությունները կատարվում, քան Լիվորնոյի հայկական եկեղեցում»[1]: Միաժամանակ հայ համայնքին եկեղեցու մոտ հատկացվեց երկու տուն ընդարձակ այգով հանդերձ՝ քարոզիչների և Բելգրադի վրայով ուղևորվող հայ քահանաների բնակության համար:

1728 թ. անցկացվեց Բելգրադի ազգաբնակչության նոր մարդահամար: Ըստ տների և դրանց տերերի ցուցակների, հայերին այդ ժամանակ պատկանել է ավելի քան 40 տուն, իսկ նրանց ընդհանուր թվաքանակը կազմել է 200 մարդուց ավելի: Նրանց մեծամասնությունը բնակվում էր Դանուբյան Բելգրադում, ընդ որում էթնիկական այլ խմբերից առանձնացած: Հայկական թաղամասը («Հայկական մահալը») գտնվում էր ուղղափառ և կաթոլիկական թաղամասերի միջև: Հայերին էր պատկանում քաղաքի լավագույն թուրքական բաղնիքը («Համամը»), որը նրանք 1725 թ. հանձնեցին քաղաքի վարչապետությանը՝ այն «քրիստոնեական ձևով» վերակառուցելու համար: Նույն տարում հայերը կարճ ժամանակամիջոցում կառուցեցին սեփական սպանդանոց: Ցուցակներում հիշատակվող հայերի մեծ մասը եղել են առևտրականներ և արհեստավորներ, կային խանութպաններ (նպարավաճառ Մանվելը, մսագործ Ալեքսանդր Արութինը, ծխախոտավաճառ Հովսեփ Ղազարը և ուրիշներ), իսկ «Թաթարստանից» (Ղրիմից) եկած Խաչատուրը սրճարան ուներ: Ըստ երևույթին, 1728 թ. մոտերքը հայերի մի մասը՝ կաթոլիկական դավանանք չընդունած, լքել էր Բելգրադը և վերադարձել Թուրքիա, քանի որ հայերի գերակշիռ մեծամասնությունը ցուցակներում հիշատակվում է որպես կաթոլիկներ, այն ժամանակ, երբ վերջին «հին կաթոլիկներ» Պողոս Աստուրը և Հովսեփը, «Հերձվածող» Քրիստոֆ Դինոն 1726 թ. վաճառում են իրենց տները:

Իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ միանգամայն բարյացակամ էր: Մյուս կողմից, իրենք՝ հայերը, ներփակ համայնք չէին, այլ ամուսնանում էին գերմանուհիների, հունգարուհիների, սերբուհիների և խորվաթուհիների հետ: Վերջին հանգամանքը տակավին 1706 թ. առաջ էր բերել երուսաղեմի ուղղափառ պատրիարք Դոսիթեոսի զայրույթը, որը Բելգրադի քահանաներին հասցեագրված նամակում պահանջում էր արգելել «հերետիկոսների» հետ ամուսնությունները:

Հայր Գասպար Բարթողոմեոսը մնաց Բելգրադում գրեթե տասը տարի, մինչև 1731 թ.: Սակայն սպասավորության վերջին տարիներին Բելգրադի հայերի այդ «միսիոները» տարվեց գինով և անառակությամբ, ուստի և Բելգրադից ստացվեց թախանձագին խնդրանք Բելգրադ ուղարկել մի ուրիշ քարոզիչ[2]: 1732 թ. մայիսին Բելգրադի հայերի համար քարոզիչ նշանակվեց Վենե-

[1] Նույն տեղը:

[2] Նույն տեղը, էջ 221:

տիկի Մխիթարյան միաբանության անդամ եղիա վարդապետ Կոստանդնուպոլսեցին:

Բելգրադում հայկական առաքելության և հայ գաղութի պատմության այդ ժամանակաշրջանի մասին զգալի թվով վավերագրեր են պահպանվել Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների գրադարաններում և դիվաններում: Դրանց մի մասը (միսիոներների նամակները) հրապարակվել է 1930 թ.[1]:

Վիեննայի Մխիթարյանների դիվանում պահպանվում է Բելգրադի և Նովի Սադի հայերի պատմության վերաբերյալ վավերագրերի զգալի քանակություն, այդ թվում նաև ձեռագիր «Մատրիկուլը»՝ «մկրտված, պսակադրված և ննջեցյալ հայերի մասին» գիրքը (Մաթրիքուլայ, այսինքն՝ գիրք մկրտելոց, պսակելոց եւ ննջեցելոց Պէլըղատտու եւ Փեթրովարատինու Շանցին, որ է Նայսաց»[2], որը տալիս է առավել լիակատար պատկերացում Սերբիայի հայերի պատմության մասին:

Հայր Եղիայի՝ Բելգրադ ժամանելու մոտերքը Բելգրադում կար 35 տուն հայ, ինչպես նաև 25 ամուրիներ, այսինքն՝ ընդհանուր թվով մոտ 200 անձ, ընդ որում նրանց մեծ մասը սերում էին Պարսկաստանից («աղեմ» էին): Իր սպասավորության առաջին իսկ ամիսներին հայր Եղիան բախվեց իր հոտի կրոնական հայացքների անորոշության հետ. «Ի ներքոյ արեգական ոչ գոյ սոցին նման, զի կարի տարբերք են ի հայական կացութենէ: Համանգամայն հայ են եւ համանգամայն փոանկք, համանգամայն ուղղափառ են և համանգամայն արտուղի»[3]: Նշվածը վկայում է Բելգրադի հայերի շրջանում կաթոլիկության չարմատավորման մասին, և հայր Եղիան ստիպված ոչ նվազ ջանքեր գործադրեց նրանց բոլոր «արատները» հաղթահարելու համար: 1733 թ. աշնանը Բելգրադում սկսվեց հայկական նոր եկեղեցու շինարարությունը կամ թե հին եկեղեցու ամբողջական վերակառուցումը: Գործը մեծ դժվարությամբ էր առաջ ընթանում՝ չէին բավարարում դրամական միջոցները: Միջոցների հիմնական մասը հատկացրեցին չորեքցի «աղեմները»՝ հարուստ առևտրականներ Հովնանը, Կյոզալը (Կիւլեազը) և Ջանազիզը (Ճան ազիզը), իսկ մնացյալները, ըստ հայր Եղիայի խոսքերի, չքավոր էին և չէին կարող օգնել: Միսիոները օգնություն ստանալու համար դիմում էր վանահայր Մխիթարին. «զի դու այդ գրիցես առ Սուրբ ժողովն, զի նոքա գրիցեն առ կայսրն եւ կամ առ այլ ոք, զի ինքեանք ևս օգնիցեն վասն շինման եկեղեցւոյս մերոյ, շնորհելով գիրս նուիրեցէնս»[1]:

1735 թ. հունիսին հայր Եղիան հիվանդության պատճառով թողեց իր պաշտոնը: Նրան փոխարինեց Հակոբ Բուզայանը՝ Մխիթար Սեբաստացու սիրելի աներից մեկը, որը նրա հետ անցել էր Կոստանդնուպոլսից մինչև Վենետիկ ողջ ճանապարհը: Սակայն 1737 թ. մայիսին նա ծանր հիվանդացավ և նույն տարվա հոկտեմբերին վախճանվեց Բելգրադում «և թաղեցաւ ի մէջ եկեղեցւոյն հայոց»: Նոյեմբերի սկզբներին նրան փոխարինեց հայր Միքայել վարդապետ Սեբաստացի Վարդերեսյանը:

1736 թ. սկսվեց ռուս-թուրքական պատերազմը: Ավստրիան որպես Ռուսաստանի դաշնակից մտավ պատերազմի մեջ: 1737 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թուրքիան ծանր պարտության մատնեց ավստրիացիներին Նիշի մոտ. դա շատ բանով կանխորոշեց պատերազմի վերջնական ավարտը: 1738 թ. Ավստրիան կրում էր պարտություն պարտության հետևից, և 1739 թ. ամռան մոտերքին Բելգրադի ամրոցի անկումն արդեն անխուսափելի էր: Քանի որ Սերբիայի քրիստոնյա ազգաբնակչությունը պատերազմի ամբողջ ընթացքում աջակցում էր ավստրիական զորքերին, հետևաբար նրան էլ սպառնում էր թուրքական ահավոր վրեժը, ուստի և ավստրիացիների հետ մեկտեղ հարազատ վայրերը լքեցին բոլոր քրիստոնյաները՝ վերաբնակվելով ավստրիական տիրույթներում: Նման ծանր պայմաններում էլ ընթանում էր հայր Միքայել Սեբաստացու գործունեությունը Բելգրադում: Ապրելով պատերազմի, թանկության, ժանտախտի անհավատալի ծանր պայմաններում, քարոզիչը չնում էր թեթևացնել իր հոտի վիճակը: Բելգրադի հայերի ընկճող վիճակն իր արտացոլումն է գտել տեր Միքայելի՝ 1737 թ. դեկտեմբերի 7-ի թվակիր նամակում: Նա, մասնավորապես, գրել է. «Նաեւ ահա աստ են ոմանք խեղճ եւ ողորմելի հայք, աստի եւ անտի մազապուրծ փախստեայք անկեալք աստ, ոմանք յառաջ եւ ոմանք այժմ, են ուխտաւորք գնալ ի Հռոմ, են չգաւորք, մերթ վասն միոյն եւ մերթ վասն միւսոյն ծանուցմանն առնեմ յեկեղեցւոջ: Ոչ ունին զրնակութիւն, այսպէս եւ ծերունի ոմն ազքերմանցի ի ցրտութենէ կալեալ, փունթո եղեալ, չունելով զտեղի եւ զապրուստ, թէպէտ զոմանս աւուրս ես դարմանեցի, բայց մեռաւ: Ուխտաւորաց միոյն է մարզուանեցի, սա երկու ամիս յառաջ եկեալ է աստի գնալ ի Հռոմ, զկնի երից եւ չորից աւուրց ճանապարհի, ասպատակօղք մերկացուցեալ են զինքն, որ իբրու Զժ ոսկի ունեալ իցէ վասն ապրուստի իւրոյ, վերստին դարձեալ այսր, զի աչխատութեամբ գոնեայ չահեսցի ինչ, որով կարիցէ գալ այդր կողմ»[2]:

[1] Հ. Տայեան Ղ., Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկոյ ի Ս. Ղազար (1707-1773), Վենետիկ, 1930:

[2] Տե՛ս, ծուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հ. Գ: կազմեց Հ.Օգոստինոս Վ.Սեմուելեան, Վիեննա, 1983, էջ 37-44 (ձեռագիր N°1338):

[3] Հ.Տայեան, Մայր Դիւան, էջ 50:

[1] Նույն տեղում, էջ 51:

[2] Հ.Տայեան, Մայր Դիւան, էջ 73:

Այդ պայմաններում հայերից շատերն աճապարանքով լքում էին Բելգրադը՝ անցնելով ավելի հուսալի վայրեր: Այսպես, 1738 թ. ապրիլին 5-6 ընտանիք մեկնեց Բուդիմ, իսկ ամռան մոտերքը քաղաքում մնաց հայերի թվաքանակի կեսից ոչ ավելին: Աչնանը Բելգրադի տարաբախտ բնակիչներին բաժին ընկավ ևս մեկ այլ ահավոր դժբախտություն՝ ժանտախտը: Այն չխնայեց նաև հայերին, 13 ամսվա ընթացքում տեր Միքայելը թաղեց 41 մարդ[1]: Ի դեպ, 1738 թ. փետրվարին Բելգրադում վախճանվեց նաև «արքեպիսկոպոս» Հովհաննես Գևորգ Կաֆայեցին, որն այստեղ ապրեց 20 տարի:

1739 թ. ամռանն ակնհայտ դարձավ, որ Բելգրադի ամրոցը թուրքերի ճնշման տակ երկար չի դիմանա: Հուլիսին ավստրիացիները թուրքերից զինադադար խնդրեցին, և անմիջապես սկսվեցին հաշտության բանակցությունները: Քաղաքում խուճապ էր տիրում, և քրիստոնյա ողջ ազգաբնակչությունը ձգտում էր Բելգրադից տեղափոխվել ավստրիական տարածք: Հուլիսի 21-ին տանջահար տեր Միքայելին Վենետիկից փոխարինելու եկավ տեր Հակոբ վարդապետ Կարնեցին: Տեր Հակոբին բախտ վիճակվեց լինել վերջին հայ քարոզիչը Բելգրադում: 1739 թ. օգոստոսի 10-ին քաղաքում մնացած հայերի հետ միասին նա ևս նավ բարձրացավ և մեծ դժվարություններով Սավայի վրայով հասավ ավստրիական տարածք՝ Զեմուն: Այնտեղից բազում հայեր մեկնեցին Տեմիշվար, ոմանք՝ Բուդիմ, սակայն նրանց մեծ մասը հաստատվեց Պետրովարադինում[2]:

Ավստրիական Պետրովարադին (կամ Վարադին) ամրոցը Դանուբի ափին հուսալի պատվար էր թուրքական արշավանքների դեմ: Ավստրո-թուրքական անհաջող երկու պատերազմներից հետո հենց այստեղ՝ Պետրովարադինի պարիսպների մոտ, Դանուբի հանդիպակաց ափում սկսեց կուտակվել հարազատ վայրերից վտարված Սերբիայի քրիստոնյա ազգաբնակչությունը: Արդեն 1698 թ. այդ բնակավայրը սկսեց կոչվել Սերբական քաղաք կամ Պետրովարադինյան Շանց (երբեմն՝ պարզապես Շանց): Տակավին 17-րդ Պետրովարադինի ներքին քաղաքամասում հիշատակվում էին հայ առևտրականներ: 1739 թ. օգոստոսին Բելգրադից Պետրովարադին և Պետրովարադինյան Շանց եկավ հայ փախստականների մի մեծ խումբ՝ տեր Հակոբ էրզրումցու գլխավորությամբ, որն առաջին իսկ օրերին եկեղեցական արարողություն կատարեց կապուցինների եկեղեցում: Հոկտեմբերի 27-ին և 28-ին նա մկրտեց Պետրովարադինյան Շանցում ծնված առաջին հայ մանուկներին՝ Պետրոսի և Կատարինեի որդի Սիմոնին և իր անվանակից Հակոբ էրզրումցու դուստր Մարիամին:

Կես տարի անց հայերը Վարադինում նկատելի չափով տնավորվել էին, և թեև Բելգրադի փաշան կոչ էր անում բոլոր հայերին աներկյուղ վերադառնալ Բելգրադ ու խոստանում էր նրանց վերադարձնել բոլոր տները, խաղողի այգիներն ու գույքը, նրանք գերադասեցին «լինել ազատ, գտնվել անվտանգության մեջ և աներկյուղ պաշտել իրենց Աստծուն»[1]: Վարադինի հայերի՝ կաթոլիկական պրոպագանդային հասցեագրված նամակից պարզվում է, որ Բելգրադից այստեղ էր տեղափոխվել ավելի քան 150 մարդ: Պետրովարադինի գերմանացի կաթոլիկների համայնքի առաջնորդը խոստացավ հայերին շնորհել իր եկեղեցին, հենց որ իրենք ավարտեն նոր եկեղեցու շինարարությունը: Պետրովարադինի հայ համայնքի պատմության առաջին տարիների մասին ուշագրավ տեղեկություններ կան Կալոչա (Կլուժ) քաղաքի արքեպիսկոպոսական դիվանում պահպանվող հիշատակարանում, որը հայերեն մի կորած բնագրից կատարված թարգմանություն է: Այնտեղ ասվում է. «Տերունական 1739 թվականի օգոստոս ամսին, երբ թուրքերն արդեն նվաճել էին Բելգրադը, մենք՝ հայերս, լքեցինք Բելգրադը և բարբարոսների զորքից փախանք մեր քարոզիչ՝ Վենետիկի հայկական վանքի վանական Հակոբ Էրզրումցու հետ միասին, և գալով այստեղ, բնակվեցինք Նեոպլանտում (Նովի Սադի լատինական անվանումը-Ա. Հ.), Պետրովարադինի դիմաց: Մեր վերաբնակության առաջին տարիներին մեր քարոզիչ և հոգևոր հայր Հակոբը ապրում էր լատինակաթոլիկական վանատանը, և մենք վճարում էինք նրա բնակվարձը, իսկ արբորոշությունը մենք կատարում էինք կաթոլիկական եկեղեցում: Քանի որ նման իրավիճակը մեզ հարմար չէր, մենք 1743 թ. հոկտեմբերին հավաքվեցինք և որոշեցինք մեզ համար առանձին եկեղեցի կառուցել, դրա համար մենք ուղարկեցինք մեր քարոզիչ տեր Հակոբին Կալոչա արքեպիսկոպոս Գաբրիելի մոտ, որ նա թույլատրի մեզ եկեղեցի կառուցել: Երբ մենք այդ թույլատվությունը ստացանք, վանատան համար գնեցինք հողամաս՝ հին տնով հանդերձ, 200 ֆորինտով, այն գումարից, որ մենք հավաքել էինք եկեղեցի կառուցելու համար: Այդին մենք ցանկապատեցինք, ծառեր տնկեցինք, որը մեզ վրա 400 ֆորինտ նստեց»[2]:

1744 թ. ամռանը պրոպագանդան Պետրովարադին է ուղարկում Ելիզավետոպոլից (Գեղա) տեր Թեոդորոս Մեսիաշեցի Հովհաննիսյանին, որը «լատիներեն, գերմաներեն, բուլղարերեն և հայերեն հմուտ գիտակ էր»:

1746 թ. հայերը տեր Թեոդորոսի հետ միասին հավաքվեցին խորհրդակցության և համատեղ որոշեցին եկեղեցի կառուցել նախկինում գնած չինանյութով: Մայիսի 4-ին նրանք սկսեցին շինարարությունը, և նոյեմբերի 17-ին նոր տաճարն արդեն օրհնվեց: «Ննջեցյալների մատյանում» պահպանվել է հետևյալ հիշատակագիրը. «Ցամի Տեառն 1746, հոկտեմբերի 26, ես Հ. Թէո-

[1] Նույն տեղում, էջ 296:

[2] Նույն տեղում, էջ 84-86:

[1] Премроу, նշվ. աշխ. էջ 222:

[2] Ердујхель и Мелхиор. Историја Новога Сада, Нови Сад, 1894, с.230.

դորոս Մէտիաչցի, թաղեցի զտղայն կոչեցեալ Հռիփսիմէ, զդուստրն Սարգսին Ճէնազիզեան փեսին ի նորաշէն եկեղեցւոջ մերում մերձ Խորանի Սուրբ Խաչին»:

Ուրեմն, հայկական եկեղեցու շինարարությունը արդեն հոկտեմբերին ավարտվել էր: 1747 թ. ապրիլի 4-ին նոր եկեղեցում կատարվել է առաջին մկրտությունը. «Ցամի Տեառն 1747, ապրիլի 4-ին, ես՝ Հ. Թէոդորոս վարդապետս, մկրտեցի զտղայն յաւուր 3 Ապրիլի ծնեալն ի Յակոբայ Էրզրումեցւոյ, եւ յԱննայէ օրինաւոր ամուսնոց, որում եղաւ անուն ի մկրտութեան Ամբրոսիոս: Կնքամայրը սորա եղեւ Պարօ(ն) Եոզեֆին կինն Պիգայ Մարիայն: Եւ այս եղեւ առաջին մկրտութիւնն ի նոր եկեղեցին մեր, եւ ի նոր աւազանն»:

1756 թ. հուլիսին Նովի Սադի հայերի քարոզիչ վարդապետ Հովհաննես Լազյան Տրապիզոնցին եկեղեցու շինարարության և այնտեղ գտնվող վիմագրությունների մասին հաղորդում է հետևյալը. «Զվէմն մարմարոնեայ երկաթագիր տառիւք չքնաղս քանդակեալ, եւ զքանդակն սեւափայլ դեղովք լցեալ՝ եղաք ի ճակատ եկեղեցւոյս ի յիշատակ յաւիտենական առ յապայ եկեղոցն: Այլ ի լրումն պատմութեանս եւ զվիրգիլեանն բանահիւսութիւն զի նմա քանդակեալն աստէն տողեցից. «Եկեղեցիս փոքրակառոյց՝ Լուսաւորչին հոգւոց մերոց, յիշատակ է ազգիս Հայոց, յիւրեանց արդեանց եւ ստացուածոց, Պէլըղատու հատուածական ի նայիսօց պանդխտելոց. 1746»[1]:

Նովի Սադի հայկական եկեղեցու շինարարության համար ամենամեծ գումարը հատկացրել էր հայ խոշոր առևտրական Հովհաննես Ջանազիզյանը, որը վախճանվել է 1751 թ. և թաղվել եկեղեցու ներսում՝ «ի ներքոյ ջահին»: Առ այսօր պահպանվել է նաև նրա տապանագիրը:

1748 թ. Հովհաննես Ջանազիզյանն այն առաջին հայերից էր, որոնք ստացան Նովի Սադի քաղաքացիություն: Նրա հետ մեկտեղ Նովի Սադի քաղաքացիներ դարձան Սիմեոն Մինասը, Հովհաննես Ալեքսանդրը, Ադամ Հովհաննեսը և Դավիթ Զաքարյանը: Դա կապված էր այն իրողության հետ, որ Պետրովարադինյան Շանցի բնակիչները 1748 թ. գնեցին իրենց քաղաքը Նովի Սադ անվանումով ազատ թագավորական քաղաք հռչակելու արտոնագիրը: Միջոցների հանգանակությանը, գերմանացիների, հունգարների, սերբերի և հույների հետ մեկտեղ, գործուն մասնակցություն են ունենում նաև հայ առևտրականները:

Հայերը Նովի Սադի ամենաուշևոր առևտրականներից էին: Թուրքական ապրանքներ վաճառելու իրավունք ձեռք բերած կաթոլիկ դավանանքին պատկանող առևտրականների կեսը հայեր էին: 1758 թ. առևտրականներ Հովսեփ Մինասը, Սարգիս Ջանազիզը (Հովհաննես Ջանազիզի որդին), Հովհաննես

[1] Հ. Տայեան, նշվ. աշխ., էջ 321:

Մարգարը, Բարթողոմեոս Փիրին և Հայրապետ Ավետիքը մագիստրատից գնեցին մշակելի հսկայական հողատարածք[1]:

Հայերը, ինչպես նաև այլ ազգության «թուրքական» առևտրականներ, հաճախ ստիպված էին լինում օրենքը խախտել և մաքսանենգությամբ զբաղվել, որը հարուցում էր ավստրիական զինվորական և մաքսային իշխանությունների գանգատներն ու բողոքները: 1745 թ. գեներալ Գվադանյին նույնիսկ առաջարկեց արքունի ռազմական խորհրդին Սրեմից և Սլավոնիայից վտարել բոլոր սերբ, հայ և հույն առևտրականներին: Թուրքիայից Ավստրիա մաքսանենգությամբ ապրանքներ ներմուծելու համար հայերը և հույները սաստիկ պատժվեցին ավստրիական սահմանապահ իշխանությունների կողմից:

18-րդ դ. 60-70-ական թվականներին այսպես կոչված «թուրքական առևտրականները» սկսեցին ներթափանցել ավստրիական տարածքի խորքերը, գործնականում հայտնվելով Հաբսբուրգյան կայսրության հարավսլավական բոլոր երկրներում՝ Սրեմում, Սլավոնիայում, Խորվաթիայում:

18-րդ դ. կեսերին հայերը հայտնվում են նաև Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում: Զագրեբի մագիստրատի արձանագրություններից մեկի համաձայն, այստեղ սկսել էին հայտնվել հույներ և հայեր, որոնք, իրենց ընտանիքները թողնելով Թուրքիայում, ճանապարհորդում էին այստեղ-այնտեղ և վաճառում արևելատարածքային և մանուֆակտուրային զանազան ապրանքներ, գնում մեղրամոմ, գայլի մորթի, այնուհետև դրանք վերավաճառում ավելի թանկ գնով: Վարադինի գեներալիտետը 1765-1766 թթ. իր տարածքում մեղրի առևտուրը թույլատրել է բացառապես հայերին, հույներին և սերբերին:

1781-82 թթ. ավստրիական արքունիքը կազմակերպեց հողի և կալվածքների վաճառքի մի քանի աճուրդ Բանատում, ընդ որում գնորդներին չնորհվում էին հունգարական ազնվականական տիտղոսներ: Հատկանշական է, որ աճուրդի հիմնական գնորդները դարձան կաթոլիկացած հայ և հույն հարուստ առևտրականները: Տրանսիլվանացի երեք հայ առևտրականներ Ադեոդատ (Աստվածատուր) Կարաչոնյին, Իսահակ Կիչը և Լուկաչ Լազարը գնեցին մոտ երեսուն կալվածք, որ զբաղեցնում էր Բանատի հսկայական տարածքը: Այդ տարածքների մեծ մասը ներկայումս գտնվում է Սերբիայի կազմում, իսկ փոքր մասը՝ Ռումինիայում: Իսահակ Կիչին պատկանում էին Արադաց, Էլեմիր, Դեսպոտովաց, Իտեբեյ, Ռավնի Տոպոլովաց, Սենջուրաջ, Սենմիխալ և Տորակ կալվածքները, Կարաչոնյիին՝ Ակաչը, Բեոդրան, Բիկաչը, Նովո Սելոն, Տոպոլան, Լուկաչ Լազարին՝ Էչկան, Յանկով Մոստը, Կլեկը: Ուշագրավ է, որ երեք կալվածք իրենց անվանումը ստացել էին հայ կալվածատեր

[1] Стајћ. В. Привреда Новог Сада, 1748-1880, Нови Сад, 1941, с.158.

Լուկաչ Լազարի անունով, և այն պահպանել մինչև մեր օրերը. Լազարֆելդ (այժմ՝ Լազարևո), Լուկաչֆալվա (այժմ Լուկինո Սելո) և Ժիգմոնդֆալա (այժմ՝ Լուկիչևո գյուղ)[1]:

Բանատը թուրքերից ազատագրելուց անմիջապես հետո 1716 թ. Տրանսիլվանիայից այստեղ վերաբնակեցվեցին մի քանի հայ ընտանիք (մոտ 200 մարդ), որոնք հաստատվեցին Պանչևոյից մինչև Բեչկերեկ ընկած տարածքում և որոնց ծառայությունից, որպես հմուտ անասնավաճառների, օգտվում էին ավատրիացիները: Հնարավոր է, որ այստեղից է սերում սլավոնա-ռումինացված Արմենուլիչ ազգանունը կամ Բանատում հանդիպող Արմենկիչ ազգանունը:

18-րդ դարի 70-ական թվականներին այդ ընտանիքներից, որոնք հարստացել էին անասնավաճառությամբ, աչքի ընկան Կիչ, Լազար և Կարաչոնյի ընտանիքները: Հենց այս երեք ընտանիքին էր շնորհվել Բաչկո-Բոդրոչյան գավառում (Ժուպանիայում) ոգելից խմիչքներ վաճառելու բացառիկ արտոնությունը, որը դարձավ «արքունապատկան գինետների հայ կապալառուների» դեմ բազմաթիվ գանգատների, բողոքների և խռովությունների պատճառ: Նոր կալվածատերերի դեմ սերբ և ռումինացի գյուղացիների էլ ավելի հզոր ելույթներ տեղի ունեցան 1782-1783 թթ., երբ նրանք ձեռք բերեցին իրենց կալվածքները: Այսպես, Իտեբեյի չինականները չէին ուզում Իսահակ Կիչին ճանաչել որպես իրենց կալվածատիրոջ, և միայն Իոսիֆ 2-րդ կայսրի ուղարկած զինվորական հատուկ ջոկատը սանձեց ժողովրդական ցասումը: 19-րդ դ. կեսերին կալվածքների տերերն ընկան խոշոր պարտքերի տակ, իսկ 1848-1849 թթ. հեղափոխությունից հետո նրանց ունեցվածքն ազգայնացվեց: Ազգային առումով «հայ կապալառուները» այդ ժամանակ լրիվ ուծացման էին ենթարկվել, թեև տակավին 18-րդ դ. 80-ական թվականներին, որոշ վավերագրերի համաձայն, նրանց ընտանիքներում խոսում էին հայերեն: Նշենք, որ Բանատի հայ կալվածատերերը սերտ կապեր ունեին Նովի Սադի հայերի հետ: Օրինակ, 1814 թ. Մարիա Կիչը հայկական եկեղեցուն կտակել է 1000 ֆորինտ: 1763 թ. Նովի Սադի հայկական գաղութը բաղկացած էր 36, 1767 թ.՝ 45, 1798 թ.՝ 102, 1806 թ.՝ 74, 1810 թ.՝ 75 և 1813 թ.՝ 71 մարդուց[2]: Առաջին երկու ցուցանիշը որոշ չափով նվազեցված է և, հավանաբար, արտահայտում է ոչ թե հայերի ընդհանուր, այլ ընտանիքների թվաքանակը:

[1] Хегедиш А. Аграрни односи у Торонталској Жупанији у Банату. 1779-1848. Нови Сад, 1987, с. 187-189.

[2] Ердујхель и Мелхиор. Նշվ. աշխ., էջ 232:

19-րդ դ. սկզբներին Նովի Սադում[1] կար 100-ից ոչ պակաս հայ: 1808 թ. Նովի Սադ այցելած Մինաս Բժշկյանցը գրել է. «Ցառաջագոյն բազում էին Հայք ի քաղաքիս եւ երեւելի վաճառականք, չատք ի Պէլըդատէ փոխադրեալք այսր, այլ այժմ իբր 30 տունք Հայոց մնացին, որք ունին փառաւոր եկեղեցի քարաշէն յանուն սրբոյ Լուսաւորչին, եւ առ նմին քարաշէն բնակարան ժողովրդապետին հանդերձ պարտիզաւ, որ ժամանէ մինչեւ ցգետն Դունա»[2]:

Մինչև 1848-1849 թթ. հեղափոխությունը եկեղեցական գործունեությունը Նովի Սադում իրականացնում էին Վենետիկի Մխիթարյանները: Նրանց թվում առանձնապես աչքի էր ընկնում տեր Սիմեոն Բերամենցը, որը բնիկ Նովի Սադից էր և ավելի քան երեսուն տարի (1777-1808 թթ.) եղել է հայկական եկեղեցու հոգևոր հովիվը: Տեր Սիմեոնը մի քանի անգամ փորձել է ընդարձակել եկեղեցին, կառուցել նոր զանգակատուն, սակայն նրա բոլոր դիմումները մագիստրատին որևէ արդյունք չտվեցին:

1816-1818 թթ. գաղութում տեղի ունեցավ պառակտում նոր հոգևոր հովիվ հայր Մատթեոս Մաղաքյան Կոստանդնուպոլսեցու գործունեության հետևանքով, որը Վենետիկի Մխիթարյան միաբանության կարիքները հոգալու համար ծախեց Նովի Սադի հայկական համայնքին պատկանող մի քանի այգի. դա վրդովմունք առաջացրեց հայերի մի մասի շրջանում, որի հետևանքով հոգևորականը հետ կանչվեց: 1824-1842 թթ. գաղութի հոգևոր առաջնորդն էր Հովսեփյան Վանեցին՝ աստղագետ-գիտնականը՝ աստղագիտության բնագավառում մի շարք նշանակալի աշխատությունների հեղինակը: Նա բարեկամական կապերի մեջ էր չեխական ազգային վերածնդի ականավոր գործիչ Պավել Յոզեֆ Շաֆարիկի հետ, որն այդ տարիներին Նովի Սադի գիմնազիայում ուսուցիչ էր:

Նովի Սադում ամենանշանավոր հայ ընտանիքը Ջանազիզներն էին, որոնք իրենց տոհմանունը փոխեցին Զենագիի: Հովհաննես Ջանազիզը՝ հայկական եկեղեցու հիմնական երեցփոխը, 1751 թ., մահվանից քիչ առաջ, ընտրվեց քաղաքային սենատի պատգամավոր: Նրա ժառանգորդ Սարգիսը զբաղեցնում էր հոր տեղը սենատում 1753 թ.: Սարգսի որդին՝ Սիմեոն Զենագին, ամուսնանալով բարոնուհի Տոմանովիչի հետ, ստացավ ազնվականի տիտղոս, իր անվանն ավելացնելով «Մելիք» (Սիմեոն Մելիք) հորջորջումը: Ըստ որոշ անուղղակի տվյալների, Ջանազիզյանները սերում էին Սյունիքից կամ Արցախից: Սիմեոն Մելիքը 18-րդ դ. վերջին Նովի Սադի ամենահարուստ անձանցից մեկն էր, որը երևում է 1796 թ. ստորագրած նրա կտակից: Ժառանգություն ստա-

[1] Հայերեն տառադարձությամբ Նովի Սադի անվանումը հաճախ գրվում է «Նայսաց» ըստ բաղարի գերմաներեն «Neusatz» անվանման:

[2] Բժշկեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի Հայկազեանց սերելոց ի նախնեաց Անի բաղաքին: Վենետիկ, 1830, էջ 202:

նալով 5000 ֆորինտ, նա կրկնապատկեց այդ գումարը, ընդ որում նրա հարստության զգալի մասը իր մահվանից հետո պիտի տրվեր հայկական եկեղեցուն: Սիմեոն Մելիք Զենազին երկար ժամանակ Տեմերինի փոստատան կառավարիչն էր, նրան էին պատկանում Բիխարի գավառում Ցարակ և Էլեչդ կալվածքները: 1778 թ. Զենազի ընտանիքին պատկանող տներից մեկը վարձակալվեց կաթոլիկական դպրոցի համար, որտեղ հավանաբար նաև հայ մանուկներ էին սովորում:

1772 թ. Պետրովարադինի մաքսատանը կալանվեցին հայոց լեզվի քերականության դասագրքերը, որոնք ուղարկվել էին Վենետիկից Նովի Սադի հայկական գաղութի հոգևոր առաջնորդ Կարապետ Մարտիրոսյանին: 18-րդ դ. 70-ական թվականներին Նովի Սադում Մխիթարյանների մոտ հայերեն է սովորել խոշոր հայ բարեգործ, Պադուա քաղաքում Մուրադյան վարժարանի հիմնադիր Սամվել Մուրադը (1760–1816):

Սամվել Մուրադը, հավանաբար, ազգակցական կապեր է ունեցել Նովի Սադի մի այլ նշանավոր հայկական ընտանիքի՝ Աղամալների հետ: Առաջին անգամ այդ ազգանունը հիշատակվում է Նովի Սադի մագիստրատի արձանագրություններում, 1778 թ.: «Մատրիկուլից» մենք տեղեկանում ենք, որ Աղամալը սերում էր Շուռթից: Ռաֆայել Աղամալը երկու որդիների հետ միասին, փրկվելով թուրքական լծից, զրկվել է իր միջոցների կեսից: Սակայն արդեն տասը տարի անց նա հիմնում է պանդոկ և հացի խանութ ու ստանում է Դանուբի ափին հող վարձակալելու իրավունք: Նրա որդին՝ Օգոստինոս Աղամալը, 1789 թ. ընտրվել է քաղաքի սենատի պատգամավոր և նշանակվել քաղաքի տնտեսվարի պաշտոնում: Սակայն երկու տարի հետո զինվորական իշխանությունները նրան տեղափոխեցին Զեմուն՝ որպես արևելյան լեզուների թարգմանիչ, գլխավոր հրամանատարության տնօրինության տակ: Նրա եղբայրը՝ Ալեքսանդր Աղամալը, 1804 թ. մագիստրատից ստանում է վկայական առ այն, որ Բելգրադի ամրոցի պաշարման ժամանակ նա զորքին պարեն է մատակարարել, կամավոր իր խնամքի տակ է վերցրել վիրավոր զինվորներին և հոգ տարել նրանց մասին, անվճար սնունդ է մատակարարել հիվանդանոցին և մշտապես առաջարկել է իր ծառայությունները: Աղամալների ընտանիքի հետ է կապված նաև նրանց «հնդկական» ժառանգության հարցը: Աղամալները մի ինչ-որ ազգական ունեին Հնդկաստանում՝ Հաջի Ղազար դի Գրիգորիո անունով, որը նրանց ժառանգություն էր թողել: Այն ստանալու համար Լոնդոն է մեկնել Օգոստինոս Աղամալը, սակայն, դատելով ըստ վավերագրերի, Աղամալները ժառանգությունն այդպես էլ չստացան:

Նովի Սադի մի այլ հայկական նշանավոր ընտանիք՝ Ավետիքյանների գերդաստանը (հետագայում իրենց անվանեցին Ավեդիք), առաջին անգամ հիշատակվում է 1757 թ., այդ գերդաստանի նախահայր՝ Շոռոթցի Խաչուկի որդի Հայրապետի՝ Նովի Սադ գալու կապակցությամբ: Նրա որդի Ստեփանոսը շատ

հարուստ առևտրական է եղել: Նա Խորվաթիայից բերում էր գինի և օղի ու դրանք վաճառում Նովի Սադում: Ավետիքյանների բազմաթիվ հետնորդներից, թերևս, ամենանշանավորը եղել է Կարլը, որին 1857 թ. սենատոր են ընտրել, իսկ քսան տարի անց՝ Նովի Սադի արհեստագործների միության նախագահ: Հունգարական հեղափոխությանը նախորդող տարիներին հայկական կաթոլիկական համայնքից տարբեր ժամանակներում սենատորներ են ընտրվել Իգնատիոս, Պետրոս և Մատթեոս Մինասները (Մինասյանները), ինչպես նաև Կարլոս Իսեկուցը (Իսեկուցյանը):

Հայերն իրենց լուման են ներդրել Նովի Սադի մշակութային պատմության մեջ: Քաղաքի լավագույն ուսուցիչներից մեկը համարվում էր Հովսեփ Մեսրոպյանը (Յոսիֆ Միստրովովիչը, մահացել է 1779 թ.), որը վարպետության կոչում է ստացել Բուդիմի արհեստանոցում: 1838 թ. Նովի Սադի մի խումբ քաղաքացիներ, այդ թվում Մարիա Կերբերը, ծննդյամբ Վրծարյանը, քաղաքի իշխանություններին կոչ արեցին հիմնադրել թատրոն և փողոցային լուսավորություն կիրառել: Այն փողոցը, որտեղ գտնվում էր հայկական եկեղեցին, կոչվում էր Հայկական փողոց: 1826 թ. հայկական եկեղեցուց մինչև Դանուբի ափը կառուցվեց հողապատնեշ, որն անվանվեց Հայկական թումբ:

1848–49 թթ. հեղափոխությունն ըստ էության վերջ դրեց Նովի Սադի փոքր, բայց խիստ գործուն հայկական գաղութի գոյությանը: Հրկիզվեց հայկական եկեղեցին, իսկ հայերի մեծամասնությունը վերաբնակվեց Բուդիմում, Վիեննայում և Տրանսիլվանիայում: Հեղափոխությունից հետո քաղաքում մնացել էին ընդամենը 30 (այլ աղբյուրների համաձայն՝ 40) հայ: 1850 թ. առաքելական դերը Նովի Սադում վենետիկյան Մխիթարյաններից փոխանցվում է Վիեննայի Մխիթարյաններին, սակայն միայն 1857 թ. Վիեննայից այստեղ ժամանում է տեր Սիմեոն Նեմի-Անտոնյան Սուչավացին: Տեր Սիմեոնը անմիջապես սկսեց միջոցներ հանգանակել եկեղեցին վերականգնելու համար, սակայն միայն 1872 թ., ուղղափառ սերբուհի և բարերարուհի Մարիա Տրանդաֆիլի օգնության շնորհիվ եկեղեցին վերականգնվեց ճարտարապետ Գեորգ Մոլնարի նախագծով: Եկեղեցու ներքին հարդարանքն ավարտվեց միայն 1891 թ., իսկ 1910 թ. կառուցվեց Հայկական կրոնական համայնքի հոյակերտ շենքը (ներկայումս՝ Նովի Սադի դրամատուն), թեև արդեն 1894 թ. քաղաքում ընդամենը վեց հայ էր մնացել: 1877 թ. Նովի Սադով անցել է Ա. Ալթունյանը, որը Նովի Սադի հայերի մասին թողել է հետևյալ համառոտ նկարագրությունը. «Առաջներն 40 տուն հայ կայ եղեր հոս, ամենքն ալ խիստ հարուստ եւ վաճառական, իսկ այսօր 20 տուն չեն: Ս. Լուսավորիչ անուամբ փառավոր եկեղեցի մ'ունին իր կալուածներովն ու ժողովրդապետի առաջնորդարանովը: Այս ալ Լատինաց ձեռքն անցած է այսօր»[1]:

[1] Ալթունյան Ա.Մ., Տեղեկագրութիւն Հայոց գաղթականութեան, որ ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիա և ի Լեհաստան, Փոշտա, 1877, էջ 102:

1913 թ. Նովի Սադ ժամանեց որպես առաքելական քարոզիչ հայ գիտնական-բանասեր, Վիեննայի Մխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղար Հայր Գաբրիել Մենևիշյանը, որը Նովի Սադում մնաց առանց հոտի մինչև 1931 թ. և այստեղ էլ թաղված է: Հենց այստեղ է Մենևիշյանն աշխատել իր «Հայերէնի ստուգաբանական բառարանի» վրա: 19-րդ դ. վերջին առանձին հայկական ընտանիքներ բնակվում էին Զեմունում, իսկ Բաչկա Պալանկայում բնակվում է Ջերքեզյանների ընտանիքը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Նովի Սադում հայեր չկային, բացի հայկական եկեղեցու հոգևոր հովվից: 1963 թ. քաղաքի կենտրոնի վերակառուցման կապակցությամբ, քաղաքի իշխանությունների որոշմամբ, հայկական եկեղեցին քանդվեց:

Բելգրադի, իսկ այնուհետև Նովի Սադի հայկական գաղութի երկուհարյուրամյա (1717-1913) պատմության ընթացքում այստեղ միմյանց փոխարինել են քսան միսիոներ (17-ը՝ Վենետիկից, 3-ը՝ Վիեննայից): Վերը հիշատակված «Մատրիկուլի» տվյալների համաձայն, այստեղ կատարվել են 105 պսակադրություն, 270 մկրտություն, և 312 թաղում: Նովի Սադի նախկին հայկական եկեղեցու տեղում այժմ պահպանվել են միայն Սիմեոն Մելիք Ջանազիզյանի գերդաստանի մահարձանները:

***

Թեև 1739 թ. Բելգրադը կրկին թուրքերի իշխանության ներքո անցնելուց հետո Բելգրադի հայերը լքեցին քաղաքը և վերաբնակվեցին Նովի Սադում, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում օսմանյան կայսրության այլ մարզերից հայերը վերստին սկսում են վերաբնակվել Սերբիայում, և 19-րդ դ. սկզբին նրանք քանիցս հիշատակվում են այլևայլ վավերագրերում: Այսպես, Միշարի 1806 թ. օգոստոսի 13-ի նշանավոր ճակատամարտում, որտեղ սերբական ապստամբները Կարագեորգիի գլխավորությամբ ջախջախեցին ութ անգամ իրենց գերազանցող թուրքական բանակը, հերոսի մահով զոհվեց հայազգի Մանոն: Արդեն ազատ, ինքնավար սերբական իշխանության մեջ 1826 թ. հիշատակվում են Կարագյոզ և Ապոստոլ (հավանաբար՝ Առաքել) անունով հայերը, իսկ մեկ տարի անց՝ վարսավիր Կաղիօղլու Հովհաննեսը: 1829 թ. սերբ իշխան Միլոշ Օբրենովիչին հասցեագրված նամակով հայազգի Կարապետ Ագուբովիչը (Հակոբյան) և Գրիգոր Մանուկը խնդրում են թուլլատրել իրենց վարսավիրանոց բացել և «քրիստոնյաների էանաֆին» անդամագրվել, չցանկանալով թուրքերի հետ այլևս նույն միության մեջ մնալ: 1830-ական թվականների վերջերին Սերբիայում աշխատել է նաև հայազգի Գեորգի Պ. Մարկովիչը, որը զբաղվում էր սառը զենքի նորոգմամբ՝ սերբ իշխանի արքունիքում, իսկ 1837 թ. նա նույնիսկ իր միջոցներով հրատարակեց սերբ կրոնական գրող Վիկենտի Ռակիչի գիրքը: 1856 թ. Մարկովիչը սերբական կառավարությանը առաջարկում է հիմնել սրեր արտադրելու ձեռնարկություն: Այսպիսով, 19-րդ դ. առաջին կեսին մի քանի հայկական ընտանիքներ էին բնակվում Սերբիայում, գլխավորապես, առևտրականներ և արհեստագործներ:

90-ական թվականներին Կոստանդնուպոլսից հայ առևտրականները սկսում են աշխուժորեն Սերբիա ներթափանցել: Դա երևում է բազմաթիվ հավաստագրերից և առևտրական պայմանագրերի պատճեններից: Այդ առևտրականներից շատերն իրենց խանութներն ու սրճարանները բացեցին Բելգրադում, Նիշում, Պիրոտում: Նրանք այնուհետև այստեղ էին տեղափոխում իրենց ընտանիքները: 90-ական թվականների կեսերին Թուրքիայում հայկական կոտորածներից հետո բազում հայեր Բուլղարիայի վրայով փախչում են Սերբիա: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանությունից և հատկապես 1922 թ. կոտորածից հետո միայն, երբ փախստականների ալիքները Սալոնիկի վրայով շարժվեցին դեպի սերբական երկրները, կարելի է խոսել Բելգրադի հայկական գաղութի վերականգնման մասին:

ՂՐԻՄ

Ա. Միջնադար

Տավրիկյան թերակղզու վրա մշտական հայ բնակչության հաստատվելը սկսվել է այնտեղ թաթարների գալուց առնվազն մեկ և կես դար առաջ, այսինքն՝ 11-րդ դարի վերջերից և 12-րդ դարում: Հայերը Ղրիմ էին գաղթում տարբեր պատճառներով և տարբեր ուղղություններով: Սակայն ղրիմահայ գաղթօջախների առաջացումը պատմականորեն աղերսվում է 7-11-րդ դարերում Հայաստանում տիրած ռազմաքաղաքական անցքերի՝ արաբների, բյուզանդացիների և թուրք-սելջուկների ռազմարշավների և տիրակալության ծանր հետևանքների հետ: Նշված դարերում հայերը Ղրիմ էին անցնում կրոնական ու քաղաքական հետապնդումների, առևտրատնտեսական, զինվորական ծառայության և այլ առնչությունների բերումով:

Դեպի Փոքր Ասիայի խորքերը թուրք-սելջուկների առաջխաղացման հետևանքով բյուզանդական տարածքներում հավաքված և կայսրության ռազմաքաղաքական ու տնտեսամշակութային ոլորտներում մխրճված հայերին Ղրիմը՝ կայսրությանը պատկանող այդ տարածքը, ձգում էր նաև առևտրին հարմար իր դիրքով: Հաստատվելով այստեղ՝ հայ առևտրական դասը հնարավորություն էր ստանում լայն և շահաբեր գործարքներ իրականացնել Արևմուտքի և Արևելքի միջև: Եվ այդ էր պատճառը, որ 12-13-րդ դարերում ղրիմահայոց զբաղմունքների մեջ առևտուրը առավել մեծ տեղ էր բռնում: Առևտրական դասին հետևում էին այլ զբաղմունքի հայ գաղթականները՝ երկրագործներն ու արհեստավորները:

11-րդ դարից սկսած, մանավանդ 12-13-րդ դարերում, հայերը Ղրիմ էին անցնում Սև ծովի կովկասյան ափերով, Կ. Պոլիս-Դանուբ գծով, Տրապիզոն-Ղրիմ ծովուղիով: 13-րդ դարի երկրորդ կեսից միջազգային առևտրատնտեսական գործարքներում Կաֆայի (Թեոդոսիայի) դերի աննախընթաց բարձրացումն էր, որ այնտեղ խթանեց միջնադարի, անկասկած, ամենախոշոր հայկական գաղութ-քաղաքի բարգավաճումը՝ իր մի քանի տասնյակ հազարի հասնող հայ բնակչությամբ: Նույն ժամանակ (13-րդ դ.) աչքի ընկնող հայկական գաղութ կար նաև Սուդակում, Խերսոնեսում, նրա շրջակա Կիր-Կորում և այլ տեղերում: 13-րդ դարում Ղրիմի հարավ-արևելյան ծովափնյա քաղաքներում հայերի դերը արդեն այնքան էր մեծացել, որ նրանք սկսել էին հանդես գալ ջենովացիներին վարկավորողների դերում[1]:

[1] Actes des notaires Genois de Pera et de Caffa de la fin de treizie'me sie'cle (1281-1290). Bucurest, 1927 (այսուհետև՝ Actes des notaires), p. 174, 244, 255.

14-րդ դարի 30-ական թվականներին ղրիմահայ գաղթականության շարքերը խտիվս ստվարանում են: Ոսկե Հորդայից այստեղ են անցնում անհամեմատ ավելի մեծ թվով հայեր, քան հաշվվում էին իրենք՝ ղրիմահայերը: Հայերի՝ Ղրիմ կատարած այս ներհոսքը նշանավորեց նոր փուլ տեղի հայության տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքի զարգացման պատմության մեջ: Այս նոր գաղթը միջնորդավորված կերպով առնչվում էր Հայաստանում մոնղոլական արշավանքների հետ, երբ Անիի անկումից հետո «բազումք թողլով զոսկեզօծ պալատս և ծաղկաւետ դաշտս, զվանորայս և զեկեղեցիս աւեր, չուեալ եկին որպես փախստական ի յԱխսարայ, որ է ի մէջ Հաշտերխանա և Ղազանու, ոմանք գնացին ի Ճուղայ, ոմանք ի Վան և այլք ի Սիս»[1]:

Հայերի հայտնվելը Ոսկե Հորդայում պայմանավորված էր սկզբնական շրջանում նաև այստեղ նրանց առևտրաարհեստավորական գործունեության համար առկա նպաստավոր պայմաններով՝ մանավանդ որ թաթարները դեռ չէին ընդունել մահմեդականություն, իսկ խաներն ու թաթար ավագանին մեծապես զգում էին ձեռներեց առևտրականների և հմուտ արհեստավորների կարիքը: Սակայն որքան մահմեդականությունը խոր արմատներ էր գցում թաթարների մեջ, այնքան հայերի նկատմամբ նրանց բացասական վերաբերմունքը սաստկանում էր: Բայց հայերի՝ Ոսկե Հորդայից հեռանալու խնդրում կարևոր դեր խաղացին նաև միջազգային ապրանքափոխանակության մեջ Ղրիմի տնտեսական դերի կտրուկ բարձրացումը և այնտեղ տեղացի հայերի ծավալած ժրաջան գործունեությունը: 1299 թ. Հորդայի հայերը դեսպան են ուղարկում Կաֆայի ջենովական հյուպատոսի մոտ և համաձայնություն ստանում Ղրիմ տեղափոխվելու մասին: Նույն թվականին զենքի ուժով կոտրելով թաթարների դիմադրությունը՝ Ոսկե Հորդայի հայերը թողնում են Վոլգայի ափերը և մերձազովյան շրջաններում երկարատև դեգերումներից հետո վերջապես 1330 թ. հասնում են Ղրիմ՝ բնակություն հաստատելով «ի Թեոտոսիա, ի Կազարաթ և ի Սուրխաթ և ի կողմանս սոցա. այս եղև ՉՀԹ (1330) թուին»[2]:

Ոսկե Հորդայից հեռացած հայ գաղթականության թիվը հասնում էր մի քանի տասնյակ հազարի. մեծաթիվ լինելը նրանց հնարավորություն տվեց միանգամից տարածվել թերակղզու հարավ-արևելյան շրջաններում, միաժամանակ հաստատվել «ի Թեոտոսիա, ի Կազարաթ և ի կողմանս սոցա», հիմնել «գիւղս և գաւառս», Ղարասուբազարից (Ղարասուից, Բելոգորսկից) մինչև Թեոդոսիա «ի լերինս և ի դաշտս լի» անել «վանօրէիւք և եկեղեցեօք»[3]:

[1] Մատենադարան, ձեռ. N°7442, թ. 281:

[2] Նույն տեղը:

[3] Նույն տեղը:

Ղրիմահայոց թիվը շարունակ ավելանում էր Հայաստանից և հայկական գաղթօջախներից եկող հայության հաշվին: Փոքր և մեծ խմբերով, տարբեր շարժառիթներով, որոնց մեջ սակավ դեր չէին խաղում նաև տնտեսական ազդակներն ու արհեստների կիրարկման նպաստավոր ոլորտ գտնելու պահանջը, հայ գաղթականները 15-րդ և հետագա դարերում ևս ստվարացնում էին ղրիմահայոց շարքերը: 17-րդ դարի սկզբներում երկարատև սովի և ջալալիների երկրավեր շարժման հետևանքով Հայաստանից ծայր առած բնակչության մեծ արտահոսքի ժամանակ գաղթի դիմած հայության մի նկատելի մասը տեղափոխվեց նաև Ղրիմ: Այս շրջանում հայերը Ղրիմ են տեղափոխվում Հայաստանի տարբեր շրջաններից՝ Կարինից, Թոխատից, Սիսից, Մարաշից, Գողթնից և այլ տեղերից:

Ջալալիների ավերածությունների պատճառով բազում հայեր, հեռանալով Հայաստանից, գալիս են Թեոդոսիա, Ղարասուբազար, Բախչիսարայ, Կեոզլով (Կեոզլեվե, Եվպատորիա): Առաքել Դավրիժեցին ևս հաղորդում է, որ ջալալիների հարվածներից ցիրուցան եղած հայերի մի մասը տեղափոխվել է Կաֆա[1]:



Ղրիմի հայկական Սբ. Խաչ վանքը (1358 թ.): Գմբեթը

[1] Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 88:

Ղրիմի հայկական գաղթօջախները մշտական համալրում էին ստանում նաև առևտրատնտեսական ու մշակութային այն աշխույժ կապերի հետևանքով, որ նրանք ամբողջ միջնադարի ընթացքում պահպանում էին Հայաստանի, Հայկական Կիլիկիայի և Արևելյան Եվրոպայի հետ:

Սկսած 13-րդ դարից ընդհուպ մինչև 18-րդ դարը ղրիմահայ գաղթօջախները գտնվել են թաթարական, իսկ 1475-1783 թթ.՝ թուրք-թաթարական տիրապետության ենթակայության տակ: 1260-ական թվականներից մինչև 1475 թ. Ղրիմի թերակղզու հարավ-արևելյան ծովափնյա շերտի (Կաֆայի, Սուդակի և այլն) հայ գաղթօջախները միաժամանակ ենթարկվում էին Ջենովայի հանրապետության՝ այստեղ կառավարող գաղութային իշխանություններին, որոնք թերակղզու այս հատվածում հաստատվել էին Ոսկե Հորդայի թաթար խաների՝ Ղրիմի կուսակալ կառավարողներից ստացած հարկատվության պայմանով: Ղրիմահայոց հասարակական, տնտեսական ու մշակութային կյանքի զարգացումը շատ կողմերով կախված էր մահմեդական ու քրիստոնյա այս կառավարողների շահախնդրություններից:

Մինչև 16-րդ դարի գրեթե վերջերը թաթարները ըստ մեծի մասին Ղրիմում վարում էին քոչվոր անասնապահական կյանք: Անարտադրողական կյանքից թելադրվող տնտեսական ճեղքվածքը նրանք գոցում էին մյուս ժողովուրդներին կողոպտելու միջոցով, և ավարառուական ու գերեվարական արշավանքները, որ պարբերաբար ձեռնարկում էին Ղրիմի թաթարները իրենց ավագանու գլխավորությամբ սլավոնական, մոլդովական և հյուսիս-կովկասյան տարածաշրջաններում, նրանց համար դարձել էին ապրուստի և գոյապահպանման կարևոր միջոց:

Թաթարական ավարառությունները ծանր հետևանքներ էին թողնում նաև թերակղզու քրիստոնյա, այդ թվում նաև հայերի բնակավայրերում: Սակայն թաթարների վերաբերմունքը այս կամ այն քրիստոնյա ժողովրդի հանդեպ ունեցել է նաև իր տարբերիչ կողմերը, որոնք պայմանավորված էին քրիստոնյա տվյալ ժողովրդի հետ նրանց ունեցած ավանդական շփումներով, նրանից ակնկալվող շահերով: Հայերի կապերը թաթարների հետ Ղրիմում ավելի տանելի էին ու հանդուրժողական, քան թաթարների վերաբերմունքը ջենովացիների կամ թերակղզու մյուս քրիստոնյա բնակչության՝ հույների նկատմամբ: Պատմականորեն դա միանգամայն բացատրելի էր: Հայերը, որպես արևելյան ժողովուրդ, ավելի շուտ էին չփվել թաթարների հետ, տիրապետում էին նրանց լեզվին, ծանոթ էին նրանց նիստ ու կացին, բարքերին: Սրանք առավելություններ էին, որոնք գնալով խորանում էին առևտրաարհեստավորական և երկրագործական այն ընդարձակ գործունեության շնորհիվ, որ ծավալել էին հայերը թերակղզով մեկ: Հայը թաթարի համար և՛ արհեստավոր էր, և՛ համարձակ վաճառական, և՛ բժշկապետ, և թե՛ սրտառուչ զրուցակից: Այս սերտ կապերով էր բացատրվում նաև այն, որ մահմեդական

հոգևորականության քթի տակ, նրա իսկ հանդուրժողականությամբ, նույնիսկ Բախչիսարայում, գործում էին նաև հայկական եկեղեցիներ:

Հայ գաղթօջախները տեղաբաշխված էին միջնադարյան Ղրիմի գրեթե բոլոր նշանավոր կենտրոններում: 13-18-րդ դարերում ղրիմահայերը նշանակալից զանգվածներով ապրում էին հետևյալ վայրերում՝ Կաֆայում, Սուրխաթում (Հին Ղրիմ, Էսկի Ղրիմ), Սուդակում (Սուդդեա, Սուրոժ), Կեոզլևեում (Եվպատորիա), Ղարասուբազարում, Աքմեչեթում (Սիմֆերոպոլ), Բախչիսարայում, Բալակլավայում, Օրաբազարում (Արմյանսկի Բազար, Արմյանսկ), Պերեկոպում, Ինկերմանում, Կազարաթում և բազմաթիվ գուտ հայկական գյուղերում: Նշված դարերի տարբեր ժամանակահատվածներում այս վայրերում գոյատևում էին հայկական մեծ ու փոքր գաղթօջախներ: Սրանց մի մասում հայ գաղթօջախներ կային ի սկզբանե՝ 13-14-րդ դարերից մինչև 18-րդ դարի 70-ական թվականների վերջերը:

Բոլոր ուղղակի և անուղղակի տվյալները վկայում են, որ միջնադարյան Ղրիմում իրենց թվաքանակով հայերը թաթարներից հետո բռնում էին երկրորդ տեղը և, հավանաբար, այդ թվաքանակը տատանվել է 140-150 հազարի միջև, հանգամանք, որը հաստատվում է նաև թերակղզու վրա մի քանի տասնյակ հայկական եկեղեցիների և հայ եպիսկոպոսական երկու վիճակների միաժամանակյա գոյությամբ, չհաշված կաթոլիկ հայերի պաշտամունքային օբյեկտները:

Ղրիմի հայկական գաղթօջախների մի տեսակ ոչ պաշտոնական կենտրոնը մեծահռչակ Կաֆան էր, որը 14-15-րդ դդ. ուներ 70 հազար բնակիչ: Այդ 70 հազարի 2/3-ը, այսինքն՝ 46 հազարը, հայեր էին[1]: Հայերի տները, զբաղեցնելով քաղաքի նշանակալի մասը, ձգվում էին մինչև հարավային կողմի լեռը: Քաղաքի պաշտպանական կառույցների մեջ աչքի էր ընկնում Հայկական պարիսպը: Միջազգային առևտրի այս խոշոր կենտրոնին կյանք ու եռանդ հաղորդողը հայերն էին, որոնք այստեղ ունեին ավելի քան 30 եկեղեցիներ:

Միջնադարյան ղրիմահայ մեծ գաղթօջախներից էր Սուրխաթը: 14-15-րդ դարերում քաղաքն իրեն մերձակա հայկական Սուրբ Խաչ վանքով հայ բնակչության քանակով շատ քիչ էր զիջում Կաֆային: Քաղաքն այդ անունը ստացել էր մերձակա լեռանը տրված հայերեն Սուրբ Խաչ անվան՝ ջենովացիների աղավաղված սուր-ղաթ ձևից: Սուրխաթը մահմեդական աշխարհի (և ոչ միայն մահմեդական) հետ կատարվող ցամաքային առևտրի նշանավոր կենտրոններից էր Ղրիմում, մինչև Ղրիմի խանության ստեղծումը (1428 թ.)՝ Ոսկե

[1] Atti della Societa Ligure di storia patria (այսուհետև՝ Atti), VII, II, 1879, p. 435. **Միքայելյան Վ.Ա.**, Հայ-իտալական առնչություններ. ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին, եր., 1974, էջ 29:

Հորդայի խանների փոխանորդների նստավայրը: Սա արհեստաառևտրական և երկրագործական մի քաղաք էր, և նրա անտեսական կյանքը գտնվում էր քաղաքի հիմնական բնակիչների՝ հայերի ձեռքում:

13-րդ դարից ի վեր հայկական խոշոր գաղութ կար Սուդակում, որտեղ հայերն ունեին իրենց թաղամասը, եկեղեցին և քաղաքի բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում: Քաղաքին մերձակա կար Սբ. Աստվածածին անունով հայկական ավան: Սուդակում հայերի մեծաթիվ լինելը օտարերկրացիներին առիթ էր տվել քաղաքին ու նրա մերձակա տարածքներին տալ «Ծովային Հայաստան» («Armenia Maritima») կամ «Մեծ Հայաստան» անունը[1]:

14-18-րդ դարերում հայ բնակչության ստվարաթիվ քանակով աչքի էր ընկնում խանության երկրագործական և առևտրաարհեստավորական նշանավոր կենտրոն Ղարասուբազար քաղաքը: 15-րդ դարի վերջերից սկսած, Սուրխաթի դերի նվազմանը զուգընթաց, բարձրանում է Ղարասուբազարի նշանակությունը՝ որպես առևտրի ու արհեստների աչքի ընկնող կենտրոնի: Քաղաքում հայ բնակչության քանակի մեծացման մեջ լուրջ դեր էր խաղացել հենց այս հանգամանքը: Հայ լուսավորչական և կաթոլիկ համայնքները այստեղ ունեին իրենց թաղերը, եկեղեցիները, արհեստանոցները, առևտրական կետերը, տասնյակ ու տասնյակ ջրաղացները: Բնակչության մեջ նշանակալից թիվ էին կազմում հայ երկրագործ գերդաստանները:

Ջուտ հայկական բերդապահ ավան էր Կազարաթը՝ Սբ. Խաչ վանքին գրեթե կից և Սուրխաթից 3-4 կմ հեռավորության վրա: Ավանն իր զինական ուժով կոչված էր Կաֆան պաշտպանելու թաթարական պարբերաբար կրկնվող հարձակումներից: Մի ժամանակ հայկական այս ամրոց-քաղաքը գլխավորում էր Մուղալյանց հայ իշխանը: Գտնվելով Սբ. Խաչ վանքի մոտ՝ Կազարաթը համարվում էր նրա ծուխը: 1475 թ. հետո Կազարաթը դադարեց գոյություն ունենալ. Կաֆայի վրա հարձակվող թուրք-թաթարական հրոսակները հողին հավասարեցրին հայկական այս ամրոց-բնակավայրը, որը չարունակ պատնեշում էր նրանց թափանցումը դեպի Կաֆա:

Հայկական գաղթօջախ կար նույնիսկ խանության մայրաքաղաք Բախչիսարայում: Հայոց թաղը այստեղ ամփոփված էր ձորամիջին, քաղաքի հյուսիսային կողմում: Հայերի տներն ու եկեղեցին ժայռակոփ էին: Եկեղեցին չորս խորանանոց էր՝ «ի վիմապատ ձորամիջիս»[2]: Խանության շրջանում Բախչիսարայում կար 300 հայ ընտանիք:

[1] П. Кеппен, Крымский сборник, СПб., 1837, с.318.

[2] «Մատենադարան» ձեռ. N°6204, թ. 287:



Ցալթայի հայկական եկեղեցին

18-րդ դարի առաջին տասնամյակներին, երբ հյուսիսի հետ ցամաքային առևտուրը վերելք էր ապրում, Թերակղզու հյուսիսային պարանոցում հիմնադրվում է հայկական մի նոր բնակավայր՝ Արմյանսկի Բազարը կամ Օրաբազարը, հետագայում՝ Արմյանսկը: Նրա կառուցողները Օր Կապուի կամ Պերեկոպի հայերն էին, որոնք 1736 թ. Մինիխի գլխավորությամբ ռուսական զոր-

քերի ձեռնարկած արշավանքից տուժած Պերեկոպից 4-5 կմ հեռավորության վրա հիմնադրեցին այս նոր առևտրական հենակետը, որը շուտով Եվրոպայի ճանապարհորդներին զարմացրեց իր հյուրանոցներով, խոհանոցներով և պահեստաշենքերով:

Հայկական գաղթօջախներ կային Աքմեչեթում, Խերսոնեսում, Ջուփաթկալեում, Զեմբալոյում (Բալակլավայում), Ցալթայում, Կերչում, Ինկերմանում, Կեզլևեում, Թերակղզու ծովափնյա ու տափաստանային մյուս շրջաններում:

Ղրիմում զգալի թիվ էր կազմում հայ գյուղական բնակչությունը՝ թե՛ մինչթուրքական շրջանում (մինչև 1475 թ.) և թե՛ դրանից հետո: Հայերը գյուղերով բնակվում էին Հին Ղրիմի և Թեոդոսիայի, Հին Ղրիմի և Աքմեչեթի, Սուդակի և Թեոդոսիայի միջև ընկած տարածքներում, Բելբեկ գետի վերին շրջաններում: Հայկական գյուղական բնակչության հանդես գալը, ակներևաբար, կապված էր նաև հայերի՝ 1330 թ. Ղրիմ կատարած գաղթի հետ. «Յայնժամ զօրացաք մեք և բազմացաք՝ և չինեցաք զգիւղս և զգաւառս», հաստատում է ղրիմահայոց գրավոր հուշարձանը[1]: Ղրիմի հայկական գյուղերից էին Խայալը, Բախչելին, Օրթալանկը, Սալան (Սուլթան Սալան) Թուփտին, Խամշլին, Կեոքթեփեն, Նախիջևանը (Քոնինչիկա), Ղշլավը, Սովուք-Սուն, Շահինշահը, Խոզը, Բախչելին: Այս գյուղերի մի մասը հիմնադրվել էր 14-րդ դարում:

***

Ղրիմահայոց հիմնական զբաղմունքները 13-18-րդ դարերում դրսևորվում էին միջնադարի արտադրատնտեսական կյանքին բնորոշ ձևերում՝ երկրագործություն, առևտուր և արհեստագործություն:

Մինչև 14-րդ դարի 30-ական թվականները ղրիմահայոց կյանքում առաջատար նշանակություն ուներ առևտուրը, սակայն 14-18-րդ դարերում այն կորցնում է իր երբեմնի մենաշնորհ դերը, որովհետև նրա կողքին կարևորություն են ստանում արհեստագործությունն ու երկրագործությունը՝ դառնալով նրանց կենսապայմանների ապահովման կարևոր միջոց:

Ղրիմահայ գաղթօջախներում առևտրի զարգացումը պայմանավորված էր ամենից առաջ միջազգային ապրանքաշրջանառության մեջ Ղրիմի խաղացած դերով, որը 13-րդ դարի երկրորդ կեսից աննախընթաց բարձրանում է՝ կապված եգիպտական մամլյուկների կողմից սիրիական ափի գրավման և այդ պատճառով Եվրոպայի և Արևելքի միջև առևտրական կապերի զարգացման

[1] Նույն տեղը, ձեռ. N°7442, p. 281:

մեջ Կոստանդնուպոլիս–Կաֆա–Տանա (Ազովի ծովի ափին) ուղու ձեռք բերած առաջնային նշանակության հետ:

13–րդ դարի կեսերից մինչև 15–րդ դարի վերջին քառորդը Ղրիմի առևտուրը գտնվում էր Ջենովացի և հայ, իսկ 14–18–րդ դարերում՝ հայ, հույն և ռուս վաճառականների ձեռքում: 1260 թ. ձեռք բերելով Սև ծովում նավարկելու և առևտուր անելու ազատություն և հարկատվության պայմանով թաթարներից ստանալով թերակղզու հարավ–արևելյան ծովափնյա շրջանը, Ջենովացիներն այստեղ հիմնում են իրենց գաղութային իշխանությունը, որը տևում է մինչև 1475 թ.: Սակայն եվրոպական ապրանքներ Արևելք արտածող և արևելյան ապրանքներ Եվրոպա տեղափոխող Ջենովացիներն իրենց առևտրական գործարքները իրականացնում էին հիմնականում ղրիմահայերի միջոցով, որովհետև հայերը կազմում էին Սև ծովում Ջենովական գաղթակետերի կենտրոն Կաֆայի բնակչության գերակշիռ մասը և, բացի այդ, նրանք էին միջնորդող օղակը Արևմուտքի և համայն Ղփչաղի ու Արևելքի միջև: Թուրքերի կողմից Ղրիմը գրավելուց հետո էլ հայերի դերը թերակղզու տնտեսական կյանքում չնվազեց:

Սևծովյան իր գաղթակետերում իրավական և տնտեսական կյանքը կարգավորելու համար Ջենովայի հանրապետությունն այստեղ ստեղծել էր հատուկ վարչակարգ, որը կառավարում էր կանոնադրություններով ու օրենքներով: Հարկավ, Կաֆայում և Ջենովացիներին ենթակա ծովափնյա մյուս տեղերում ապրող հայերը ենթարկվում էին Ջենովական իշխանություններին: Օրենքներից ամենակարևորը 1449 թ. «Սև ծովի Ջենովական գաղութների կանոնադրությունն էր»: Սակայն միաժամանակ իրենց եկեղեցական, կուլտուրկրթական, գաղութի ներքին կյանքի և նույնիսկ տնտեսական գործունեության չատ հարցերում հայերը օգտվում էին լիակատար ինքնավարությունից: Ջենովացիներից հետո էլ ղրիմահայերը չարունակում էին պահպանել իրավական այդօրինակ արտոնությունը, որը նրանք կենսագործում էին 1519 թ. թաթարերենի թարգմանված Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» և սովրույթային իրավունքի միջոցով:

Մինչև 1475 թ. հայերը Ղրիմում ունեին իրենց զինված ուժերը: Հայկական կազարաթե–բերդապահ ավանը Կաֆան պաշտպանում էր թաթարական հարձակումներից: Կաֆայի հյուպատոսը Մուղալենց հայ իշխանին նշանակել էր կազարաթի կուսակալ: Հայերը զինված ուժեր ունեին նաև բուն Կաֆայում, և այդ ուժերն էին, որ 1475 թ. հինգ օր համառ դիմադրեցին թուրք–թաթարական համատեղ զորհներին:

Կաֆայից բացի, ղրիմահայոց համար առևտրական լուրջ կենտրոններ էին Սուդակը, Սուրխաթը, Ղարասուբազարը, Կեզլևը, Արմյանսկի Բազարը:

Ղրիմ էին ներմուծվում գործվածքներ, գորգեր, մետաքս, գինի, մրգեր, պերճանքի առարկաներ, համեմունքներ: Սրանց մի մասը սպառվում էր տե-

ղում, իսկ մյուս մասը, որպես տարանցիկ առևտրի ապրանքներ, տեղափոխվում էր այլ երկրներ: Ղրիմից արտահանվում էին նաև ձուկ, հաց, աղ, կաշի, մորթեղեն, մոմ: Նշված ապրանքների մի մասը հարակից շրջաններից բերվում էր Ղրիմ և նրա վրայով արտահանվում: Ամենից չահաբերը, սակայն, մարդապրանքի առուծախն էր, որի մատակարարը թաթարներն էին, որոնք իրենց արշավանքների ժամանակ բերած գերիներին վաճառում էին Եվրոպայի, հատկապես Ջենովացի վաճառականներին, իսկ սրանք էլ այդ «ապրանքը» տեղափոխում էին Կ. Պոլսի և Ալեքսանդրիայի մարդավաճառության չուկաները:

Ղրիմում հայերը առևտուր էին անում թե՛ որպես առանձին վաճառականներ և թե՛ անդամակցելով առևտրական միավորումների: Կաֆայի առևտրական միավորումներում հայ վաճառականները չատ հաճախ հանդես էին գալիս նաև դրամատեր–վարկավորողների դերում:

Սկսած 13–րդ դարի վերջերից ընդուպ մինչև 18–րդ դարի 70–ական թվականները Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրատնտեսական կապերի ծանրության մի հայտնի բաժինը ընկած էր հայ, այդ թվում նաև ղրիմահայ վաճառականության ուսերին: Պատմական իրադարձությունների բերումով իրեն վերապահված այդ պարտավորությունը նա կարողանում էր գլուխ բերել Եվրոպայի և Ասիայի մի չարք երկրների ու տարածաշրջանների՝ Լեհաստանի, Հունգարիայի, Վենետիկի, Ջենովայի, Սիրիայի, Կիլիկիայի, Թուրքիայի, Կովկասի, Ոսկե Հորդայի և Ռուսաստանի հետ հաստատած գործուն և փոխադարձ արդյունավետ կապերի չնորհիվ միայն և նաև՝ լեզուների, Արևելքի ժողովուրդների բարքերի իմացության և առևտրի ասպարեզում ունեցած այն հմտության ու ձեռներեցության չնորհիվ, որոնք հայ վաճառականության անվիճարկելի առանձնաչնորհը հանդիսանալով, նրան չարունակ ապահովում էին առաջատար դեկ Եվրոպա–Արևելք ապրանքափոխանակության մեջ՝ վերջինիս գրեթե բոլոր դրսևորումներում:

Ղրիմահայ առևտրական դասը ժրաջան գործունեություն էր ծավալել Սև ծովի փոքրասիական ափերում, մանավանդ Տրապիզոն–Սինոպ քաղաքներում: Առաջավոր Ասիայի, Ռուսիայի և Պոլովցիների տափաստանների հետ կատարված առևտրի կապող օղակը Տրապիզոնն էր, որտեղ բերված ապրանքները նախ տեղափոխվում էին Ղրիմ և ապա հյուսիս ու Արևմուտք: Հայերը 13–14–րդ դարերում Կաֆայից Տրապիզոն էին բերում ձուկ, արծաթ, գործվածքներ, հացահատիկ, կորեկ: Ղրիմից այստեղ բերված հացահատիկի մի մասը ցամաքով առաքվում էր Կիլիկիա[1]:

Ղրիմահայ վաճառականները լայն մասնակցություն ունեին Կովկասի և մանավանդ Հայաստանի ու նրա վրայով Պարսկաստանի հետ կատարվող

[1] Записки Одесского общества любителей истории и древностей (այսուհետև՝ ЗООИД), т. V, Одесса, 1863, с. 796-801, Actes des notaires, p.174.

առևտրին: Միաժամանակ Հայաստանի և Պարսկաստանի հայ վաճառականները Ղրիմի մշտական հյուրերն էին. նրանք թերակղզու վրայով իրենց ապրանքը տեղափոխում էին Լվով, իսկ այնտեղից էլ՝ գերմանական քաղաքներ: Գողթնեցի վաճառականները Կաֆայում 18-րդ դարում առանձին հյուրանոց-քարվանսարաներ էին զբաղեցնում: Ղրիմահայոց ձեռքում էր գտնվում Ջերքեզիայի հետ կատարվող առևտրի մենաշնորհը, ուր եվրոպացի վաճառականները չէին կարող թափանցել: Առևտրական այս կապերի հետևանքով 14-16-րդ դարերում Ջերքեզիա անցած ղրիմահայերից մի հատված այնտեղ մշտական բնակություն հաստատեց:

Սերտ էին ղրիմահայերի առևտրական կապերը Կիլիկիայի և Սիրիայի հետ: Սիրիա-Ղրիմ առևտրական ուղին նախ անցնում էր Կիլիկիայի վրայով, ապա ցամաքով՝ Կեսարիայով և Սվասի վրայով հասնում Սինոպ, իսկ այնտեղից՝ Կաֆա, Սուդակ և ծովափնյա այլ քաղաքներ:

Ղրիմահայ վաճառականության առևտրական գործարքները մեծ չափերի էին հասնում Կ. Պոլսում, Զմյուռնիայում և Վենետիկում: Ժամանակի ընթացքում հենց այդ պատճառով նշված վայրերում առաջացան ղրիմահայոց գաղթականական ճյուղերը: Նշված վայրերում ղրիմահայ վաճառականները ոչ միայն աչքի էին ընկնում իրենց ժրաջան առևտրական գործունեությամբ, այլև առևտրական գործի կազմակերպմանը ցուցաբերած ակտիվ մասնակցությամբ: Շոշափելի էր նրանց դերը մանավանդ առևտուրը վարկավորելու գործում:

Ղրիմի և ղրիմահայ գաղթօջախների տնտեսական կյանքում, մանավանդ 15-րդ դարի երկրորդ կեսից սկսած, առանձնակի նշանակություն է ստանում հյուսիսի և առաջին հերթին սլավոնական երկրների հետ կատարվող առևտուրը: Առևտրական կապերն էին, որոնց շնորհիվ հաճախ սկզբնավորվում և զարգանում էին հարաբերությունների մյուս ձևերը: Սլավոնական երկրների հետ ղրիմահայ առևտրի զարգացման համար կային նպաստավոր պայմաններ: Նախ, վերջիններս Արևմուտքին անհրաժեշտ մի շարք ապրանքների և առաջին հերթին՝ հացի, մորթեղենի և ձկնեղենի առատ աղբյուր էին: Բացի այդ, Ղրիմի վրայով էր անցնում արևելյան ապրանքների՝ դեպի Եվրոպա և արևմտյան ապրանքների՝ դեպի Արևելք տեղափոխող ցամաքային տարանցիկ ճանապարհը, որը կտրում էր ուկրաինական տարածքները, մտնում Լվով, իսկ այնտեղից՝ Եվրոպայի վաճառաշահ քաղաքները: Լվովը, այդ պատճառով էլ, ղրիմահայերի հաճախակի երթևեկի կայանն էր, այն հենակետը, որտեղ նրանք մնում էին երկար ժամանակով և գլուխ բերում արևմտաուկրաինական, լեհական, լիտվական ու գերմանական շրջաններում իրենց նախաձեռնած գործարքները: Կաֆայի վաճառականական կապիտալի ներկայացուցիչների համար Լվովն այնքան կարևորություն էր ստացել, որ նրանք իրենց ջանքերով և դրամով 1363 թ. կառուցեցին տեղի հայկական մայր տաճարը: Լվովում և Գալիցիայի այլ վայրերում, տարանցիկ առևտրի պահանջներից ելնելով, ղրիմահայ առավել մեծահարուստ վաճառականները պահում էին իրենց մշտական գործակալները[1]: Եվ Ղրիմում և թե Լեհաստանում ղրիմահայ նշանավոր վաճառականները համագործակցում էին կառավարող շրջանների հետ՝ երկուստեք շահախնդրություններին համեմատ:

Կ. Պոլսի և Կաֆայի անկումից հետո, երբ նեղուցները ժամանակավորապես փակվելուց հետո և նեղուցներով երթևեկելու դեմ թուրքերի հարուցած խոչընդոտների պատճառով Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող ցամաքային առևտրի դերը ավելի է բարձրանում, ղրիմահայ առևտրական դասի, հատկապես միջին և խոշոր վաճառականության գործունեությունը Լվովում և նրա վրայով Արևմուտքի հետ մանավանդ 17-18-րդ դարերում անհամեմատ ավելի մեծ չափերի է հասնում: Ղրիմի հայերը և Ղրիմի վրայով առևտուր անող արևելահայ և արևմտահայ վաճառականները գլխավորում էին քաղաքային առևտրի երթևեկը, կազմակերպում արևելյան ապրանքների վաճառք՝ դրան մասնակից դարձնելով Լվովի, Կրակովի, Գդանսկի, Քյոլնի, Նյուրնբերգի և այլ վայրերի առևտրականներին[2]: Առևտրական պայմանագրեր կամ նման բնույթի փաստաթղթերը վավերացնելիս նրանք ունեին իրենց կնիքները, որոնց վրա հայ վաճառականների անունների սկզբնատառերը փորագրված էին հայերեն, լատիներեն և ռուսերեն տառերով, այսինքն՝ այն ժողովուրդներին ընթեռնելի տառերով, որոնց երկրներում հայ վաճառականները ամենից հաճախ էին լինում[3]:

Շատ բեղուն էր ղրիմահայ առևտրական դասի ներկայացուցիչների գործունեությունը Մոսկվայում, Մոսկովյան իշխանության և ապա՝ ռուսական միասնական պետության տարածքներում: Մոսկվայի հետ ղրիմահայերի առևտրական կապերը սկիզբ էին առել դեռևս 14-րդ դարից, երբ Մոսկվայում ապրում էր Ղրիմից եկած վաճառականների մի հոծ խումբ՝ «սուրոժցի հյուրերը», որոնք քաղաքում զբաղեցնում էին մի առանձին թաղ: Այս «հյուրերից» էր հայ վաճառական Աբրահամը, որի տնից 1390 թ. Մոսկվայում տարածվում է հրդեհ: Սուրոժցի հյուրերը իրենց այդ անունը ստացել էին 13-14-րդ դդ. Ղրիմի ծովափնյա վաճառաշահ քաղաք Սուրոժից (Սուդակ, Սուդդեա): Բայց ժամանակի ընթացքում այդ անունը սկսում են գործածել առհասարակ Ղրիմից Մոսկվա ժամանած վաճառականների համար:

Սուրոժցի հյուր առևտրականները իրենց կազմով հիմնականում հայեր էին, որովհետև Սուրոժում և նրան հարակից շրջաններում՝ «Մովային Հայաս-

---

[1] Մատենադարան, արխիվ, անհատ. անձ. ֆոնդ, թղթ. 137, վ. 68, թ. 2։։

[2] Հայրենիք, 1929, թիվ 9, էջ 151:

[3] Մատենադարան, արխիվ, ֆ. կաթ. դիվան, վ. 1, թղթ. 43:

տանում», նրանք 14–15-րդ դարերում գերակշիռ թիվ էին կազմում և իրենց ձեռքում էին պահում թերակղզու առևտրատնտեսական առաջնությունը: Սուրոժցի հյուրերից էին Դմիտրի Դոնսկոյին Կուլիկովոյի ճակատամարտում զինվորական և դիվանագիտական ծառայություն մատուցած տասը հայերը[1]*:*

16-րդ դարում, երբ ջենովական առևտրական գաղթակետերը Սև ծովում և Ղրիմում արդեն վաղուց գոյություն չունեին, Ղրիմ-մոսկովյան առևտուրը բավական աշխույժ ընթացք ուներ, որի մեջ նշանակալից էր հայ և ռուս վաճառականների դերը: 1516 թ. Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Վասիլի Անդրեևը Մոսկվա վերադառնալիս իր հետ էր բերել շատ ղրիմահայ վաճառականների: Ղրիմից և Թուրքիայից Ռուսաստան անցած և Ռուսաստանից թուրքական տարածքներ եկած վաճառականների անարգել գործունեության ապահովման նպատակով սուլթան Սելիմը հատուկ հրովարտակ էր ընդունել, որը 1516 թ. փետրվարին թուրքական դեսպան Իսյակ Թարխանը բերում է Մոսկվա: Այդ հրովարտակով թուրքահպատակ և ռուսահպատակ վաճառականներին իրավունք էր տրվում առանց որևէ արգելքի և վիրավորանքի ազատ առևտուր անել թուրքական և ռուսական շրջաններում: Ռուս և հայ վաճառականների առևտրական կապերը այնքան սերտաճել էին, որ նրանք առևտրական համատեղ քարավաններ էին կազմում: Այդպիսիներից էր, օրինակ, 1524 թ. Մոսկվայից Ղրիմ եկած հայ և ռուս վաճառականների քարավանը՝ կազմված 300 հոգուց:

16–18-րդ դարերում ղրիմահայ և մյուս վաճառականները ռուսական տերության տարածքը ներմուծում էին մասնավորապես հում մետաքս, մետաքսյա, բամբակյա և բրդյա գործվածքներ, նուշ, ընկույզ, չաքար, սաներ, գլխաշորեր, զարդարանքի իրեր, ինչպես նաև զանազան համեմունքներ: Ղրիմը տարանցիկ առևտրի ճանաչված հենակետ էր, և ղրիմահայ վաճառականության ու առհասարակ առևտրական դասի երևելի ու գործիմաց ներկայացուցիչները Արևելքից և Վալաքիայից բերված նշված ապրանքները թերակղզու վրայով առաքում էին Ռուսաստան՝ այնտեղից դուրս տանելով տարբեր տեսակի մորթեղեն և մուշտակեղեն, ձուկ, ձկան յուղ: Սրանց մի մասը վաճառքի էր հանվում Ղրիմում, իսկ մյուսը արտահանվում էր Մերձավոր արևելքի երկրներ: Չնայած 17–18-րդ դարերում Ռուսաստանի առևտուրը Պարսկաստանի հետ Վոլգյան մայրուղով և Կասպից ծովով վերելք է ապրում, սակայն Ղրիմի միջոցով առևտուրը Մերձավոր արևելքի հետ շարունակում է պահպանել իր նշանակությունը:

17-րդ դարի 60-ական թվականներին, ունենալով ռուսական իշխանությունների հովանավորությունը, ռուսական շրջաններում առևտրական լայն գործունեություն էին ծավալել, օրինակ, ղրիմահայ վաճառականներ

[1] Բանբեր Մատենադարանի, թիվ 13, էջ 69, 71 (Լ. Խաչիկյանի հոդվածը):

Աջիբոլը, Յակովլևը, Ֆեոդոր Իվանովը, Վասիլ Մերկուրևը, Մանսուրովը, Բազդասարովը և ուրիշներ: Որպես կանոն, նրանք գերադասում էին Ռուսաստան ներմուծած իրենց ապրանքների (այդ թվում նաև թաթարներից իրենց փրկագնած ռուս գերիների դիմաց) ստանալ մորթեղեն, քանի որ այն թե՛ բուն Ղրիմում, և թե՛ արտասահմանում կայուն պահանջարկ ունեցող ապրանք էր:

18-րդ դարում հյուսիսի հետ առևտրական կապերի վերելքի պահանջներին ընդառաջելով՝ ղրիմահայերը թերակղզու հյուսիսային պարանոցում հիմնադրեցին Արմյանսկի Բազարը: Սրա հիմնադրմանը զուգընթաց, 18-րդ դարի 20–30-ական թվականներին ռուսական կայսրության տարածքներում ղրիմահայ վաճառականության գործարքների ծավալման պահանջներից ելնելով, Ղրիմի խանության ռուսական սահմանամերձ գոտու Նեժին քաղաքում առաջանում է մի նոր առևտրական հենակետ: Նրա ստեղծողը ղրիմահայ վաճառական կարապետն էր: Առևտրական այս ֆակտորիան օժտված էր ժամանակի տարանցիկ առևտրի կարիքներին ծառայող բոլոր հարմարություններով՝ պահեստաշենքերով, իջևանատներով, խոհանոց-ճաշարանով: Առևտրական այս համալիրը դարձնելով տարանցիկ առևտրի միջնակետ և ապավինելով ռուսական իշխանությունների հետ մերձեցած առանձին ղրիմահայերի միջնորդությանն ու օգնությանը՝ Ղրիմից, Մերձավոր արևելքից և Թուրքիայից եկած հայ վաճառականները ուկրաինական և ռուսական քաղաքներում աշխույժ առևտուր էին կատարում: Կարապետը՝ ֆակտորիայի տերն ու տնօրենը, Ղրիմի կեղծլով քաղաքից էր: Ամուսնանալով ռուս կնոջ հետ՝ նա 20-ական թվականներին հաստատվել էր Նեժինում: Ռուսական իշխանությունների մոտ վայելած վստահությունը և ծանոթակցական կապերն օգտագործելով՝ նա կարողանում է այլևայլ վայրերից եկած հայ և այլազգի վաճառականներին պաշտոնական միջնորդի ծառայություն մատուցել, օգնել նրանց անցնել ռուսական սահմանը, իսկ այնտեղից վերադառնալ Ղրիմ և արտասահման: Կարապետի ֆակտորիան Նեժինը դարձրել էր նաև մեծածախ ու փոխանակային առևտրի նշանավոր կենտրոն, ուր բերված ապրանքները կուտակվում էին և սպա նոր բաց թողնվում վաճառքի՝ թե՛ տեղում, թե՛ Կիևում, թե՛ Մոսկվայում և այլուր[1]*: Իր ստանձնած ու կատարած նման դերով Նեժինը դարձել էր ժամանակի հայ-ռուսական տնտեսական առնչությունների կարևոր օղակներից մեկը:*

Այսպիսով, 15-րդ դարի վերջին քառորդից սկսած մինչև Ղրիմի միացումը Ռուսաստանին (1783 թ.) տավրիկյան հայերը առաջատար դեր էին խա-

[1] Архив внешней политики России, Ф. Сношения России с Арменией, оп. 100/1, 1736-1738 гг., д.6, л. 1-31, См. также Микаелян В. и Мартиросян В. Материалы по истории армянского купечества в России (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր, 1978, թիվ 4, էջ 79-99):

ղում սլավոնական աշխարհի, մասնավորապես Լեհաստանի ու Ռուսաստանի հետ եղած տնտեսական կապերում:

***

Առևտրական լայն գործունեություն ունեցած ղրիմահայ նշանավոր շատ վաճառականներ 15–18-րդ դարերում աչքի են ընկնում նաև դիվանագիտական քաղաքական գործունեության ասպարեզում: 15-րդ դարի երկրորդ կեսից, երբ Իվան 3-րդի օրոք Ղրիմ-մոսկովյան հարաբերությունները ինչ-որ չափով աշխուժանում են, ղրիմահայերը գործուն մասնակցություն են ցուցաբերում այդ կապերին՝ քանի որ դա լիովին համապատասխանում էր նրանց տնտեսական ու քաղաքական շահախնդրություններին և դեպի հյուսիսի քրիստոնյա պետությունը նրանց տածած անսքող համակրանքին:

Մայր առնելով 15-րդ դարի 70-ական թվականներից՝ դիվանագիտական բարվոք հարաբերությունները Ղրիմի խանության և Մոսկվայի միջև տևեցին երեք տասնամյակ: Այդ հարաբերություններին աչքի ընկած մասնակցություն ունեցողներից էր ղրիմահայ մեծահարուստ Պողոսը: Իվան 3-րդը խանության հետ դիվանագիտական կապեր էր իրականացնում Կաֆայի իր հայ գործակալ Կակոսի և Թամանի իշխան Զախարիայի միջոցով: Իր հերթին այս վերջինը Իվան 3-րդի հանձնարարականները կարգավորում էր ղրիմահայ Աստվածատուրի (Բոգդանի) չանքերով: Միաժամանակ, Իվան 3-րդն ինքը Կակոսի հետ կապված էր դիվանագիտական և մասնավոր առևտրական գործերով: Կակոսը ազդեցիկ անձ էր Կաֆայում և Բախչիսարայում և Իվան 3-րդին գլխավորապես թանկարժեք քարեր էր մատակարարում, որոնց նկատմամբ ռուսական մեծ իշխանը թուլություն էր տածում[1]:

1488 թ. Մոսկվա ժամանած Աստվածատուրի միջոցով Իվան 3-րդը ի-ջեցնում է երկու հրովարտակ՝ մեկը Մենգլի-Գիրեյ խանին, մյուսը՝ իշխան Դմիտրի Շեինի անունով: Խանը իր մարդկանց միջոցով պիտի ապահովեր Զախարիայի անվնաս ուղևորումը մինչև ռուսական սահմանները, իսկ ռուս իշխանը նրան պիտի հասցներ Մոսկվա[2]:

16-րդ դարի սկզբներից, երբ Ռուսաստանը և լեհ-լիտվական կողմը ջանում էին Ղրիմի թաթարներին ուղղել միմյանց դեմ*, ղրիմահայ վաճառականները դարձյալ մասնակից են դառնում դիվանագիտական հարաբերություններին, դառնում պաշտոնական դրագրությունների նշանակետ: 1508 թ. Մոսկվայի և Ղրիմի միջև դիվանագիտական հանձնարարություններ էին կատարում ղրիմահայեր Սարգիսն ու Բաբեկը: Վասիլի 3-րդին ուղղված՝ ղրիմահայ Ավետիքին ու Գրիգորին վերաբերող հրովարտակներում Մենգլի-Գիրեյը խնդրում էր ազատ արձակել Մոսկվայում ձերբակալված Ավետիքին և Սարգսի ու Բաբեկի հետ ուղարկել իր մոտ՝ Ղրիմ: Գրիգորի առիթով խանը հիշեցնում էր, որ իշխան Միխայլո Լվովիչը նրանից 6 հազար ալթինի կզաքսի մորթի է բռնագրավել և խնդրում էր մորթեղենը իշխանից վերցնել և հանձնել Սարգսին ու Բաբա-Կադիրին, որոնց տրված է խանական յարլիկ՝ այն ստանալու համար[1]:

17-րդ դարի կեսերին Ղրիմ-մոսկովյան հարաբերություններում ճանաչված մարդկանցից էր ղրիմահայ Մուրադը՝ խանի «դեսպանական անձը», որն օգտվում էր դիվանագիտական անձեռնմխելիությունից, և նույնիսկ Ա-լեքսեյ Միխայլովիչ թագավորի հասցեին անարգանքի խոսքեր և հիշոցներ ա-նելուց հետո էլ նրան չեն պատժում և մեկ ու կես տարի Մոսկվայում պահե-լուց հետո ազատում են և ուղարկում Ղրիմ[2]:

17-րդ դարի 60-ական թվականներին դիվանագիտական հանձնարա-րություններ կատարելիս աչքի է ընկնում ղրիմահայ Նիկողայոս Մանսուրո-վը: 1669 թ. իր հայազգի ընկերներ Յագյա Բաղդասարովի և Սեմյոն Իվանովի հետ նա ժամանում է Մոսկվա՝ հանձնարարական ունենալով Ազովի փաշայից՝ բողոքելու կազակային հարձակումների դեմ և կանխելու դրանք: Մինչ այդ նույն հանձկնարարականով Ազովի փաշան Մոսկվա էր ուղարկել ղրիմահայ Այդինին: Մանսուրովը, անշուշտ, որոշակի դիվանագիտական ձիրքով օժտված անձ էր, որին հանձնարարված էր ռուսական իշխանությունների հետ բանակ-ցություններ վարել ժամանակի մի այնպիսի կարևոր հարցի վերաբերյալ, ինչ-պիսին կազակային հարձակումների դեմ կանխարգելիչ միջոցների ձեռնար-կումն էր[3]:

Հզորացող Ռուսաստանը պետք է թաթարների ավարառուական հարձա-կումների դեմն առներ: Եվ կողոպտչական անպատիժ կյանքի սովոր թաթար-ները 17-րդ դարի 20-30-ական թվականներից անսպասելիորեն հայտնվեցին ռուսական կողմի հակազդեցության առաջ և խնդրում էին ազդել կազակների վրա, թեպետև դարձյալ շարունակում էին ասպատակությունները, ռուսական կողմից «նվերներ» պահանջելն ու գերեվարված ռուսների վաճառքը: Այսօրի-

---

[1] Известия Таврической ученой архивной комиссии (այսուհետև՝ ИТУАК). т. 1-2, Симферополь, 1887, с. 282.

[2] Сборник Русского исторического общества. т.41, СПб. 1884, с. 72-73.

* Դա Քրիստոնյա կառավարողներին անվայել մի արարք էր, որից նրանք երկար ժամանակ չէին ձերբազատվում:

[1] Նույն տեղը. т.95, 1895, с. 76-77.

[2] Центральный государств. архив древних актов (ЦГАДА), ф. 123, 1656-1657, д. 15, л. 1-37.

[3] Նույն տեղը, 1669-1671 թթ., գ. 12, թ 1-23:

նակ իրադրության մեջ թաթարական կողմը բանակցելու էր ուղարկում նաև հայերին, հույս ունենալով, որ դրանով իր առաջարկությունները ավելի արժանահավատ կդառնան:

Թաթար-ռուսական առնչություններում 16-18-րդ դարերում հույժ կարևորություն էր ստացել ռուս գերիների փրկագնման խնդիրը, որին ղրիմահայ վաճառականները մասնակցում էին տարբեր չահախնդրություններից ելնելով: Նախ նշենք, որ Ղրիմում թաթարների մոտ մշտապես մեծ թիվ կազմող ռուս և առհասարակ սլավոն գերիների նշանակալից մասը գերեվարվել էր ոչ թե պատերազմական գործողությունների ժամանակ, այլ ռուս-սլավոնական շրջանները թաթարների ձեռնարկած ասպատակություններու հետևանքով: Թուրք հեղինակի վկայությամբ, նույնիսկ 18-րդ դարում կաֆայի հայերը «զբաղված էին ստրուկների փրկագնմամբ և նրանց Ռուսաստան ու Լեհաստան տեղափոխելով»[1]: 1670 թ. Ղրիմի խանության և ռուսական պետության միջև գերիների փրկագնման մասին ստորագրված պայմանագիրը պահանջում էր «հույներին ու հայերին, որոնք սովոր են գերիներ փրկագնել, հենց այդ պատճառով էլ նրանց հայտնել գերիների վերաբերյալ կնքված պայմանագրի մասին, որպեսզի դա իմանալով՝ նրանք Ղրիմում և ուլուսներում գերիների փրկագնման մասին հայտարարություններ չանեն»[2]:

Թաթարների մոտ եղած ռուս գերիների փրկագնումը, որպես խիստ անհրաժեշտ խնդիր, արդեն 16-րդ դարում Մոսկովյան պետության մեջ կյանքի էր կոչել հատուկ օրենք «գերիներին եռգնելու մասին», մտցվել էր արորի հարկ, և նրանից առաջացած եկամուտը ծախսվում էր գերիների փրկագնման վրա: Ալեքսեյ Միխայլովիչ ցարն այդ հարկը փոխարինեց ծխահարկով, և դրանից տարեկան ստացվող 150 հազար ռուբլին դեսպանական առյանը տրամադրում էր գերիների փրկագնմանը: «Փրկագնման արարողությունները» կատարվում էին Ղրիմի խանության և ռուսական պետության սահմանագլխում՝ խանության հիմնած փոխանակման կետերում: Բայց գերիների մի մասին, մանավանդ գերի նշանավոր անձանց հայ և հույն վաճառականները փրկագնում էին և ուղղակի բերում Ռուսաստան: 1670 թ., օրինակ, ղրիմահայ վաճառականներ Աջիբոյն ու Յակուբ Յակովլևը փրկագնում և Մոսկվա են բերում մի շարք ազնվական ծագում ունեցող գերիների, որոնց թվում կալվածատեր Անդրեյ Տյուչկովին, Սեմյոն Կոժինին, Սեմյոն Կիրիլովին, Տիմոշկա Կիդոշին և այլոց: Անդրեյ Տյուչկովն, օրինակ, դեսպանական առյանում ցուցմունք տվեց, որ գերի է ընկել 1669 թ., Ղրիմում իրեն տվել են ղալգա-սուլթանին, իսկ վերջինս իր 300 ռուբ. պարտքի դիմաց իրեն հանձնել է հայ Աջիբոյին: Այդ գումարի մասին ինքը հային տվել է նամակ-պարտավորություն և

[1] Брун Ф., Крымский полуостров около половины XVIII столетия, Феодосия, 1867, с. 6.

[2] ЦГАДА, ф. 123, 1670г., д.14, л. 4-5.

նրա վարձած ձիով, նրա հետ իսկ, վերադարձել Մոսկվա: Նկատելի է, որ խանության պաշտոնական սանդուղքում երկրորդ անձը հանդիսացող ղալգա-սուլթանն անգամ եղել է հայ վաճառականի պարտքատերերի թվում:

Որպես կանոն, բոլոր փրկագնված գերիները նշում էին հայ վաճառականների մարդասիրական վերաբերմունքը գերության տանջանքներից իրենց ազատելու գործում, մանավանդ, որ փրկագնման դիմաց վաճառականը կոնկրետ օգուտ չէր ստանում: Սովորաբար, և դա նշված է այս առթիվ դեսպանական առյանի գրեթե բոլոր գործերում, հայ վաճառականները փրկագնված գերու դիմաց, նրան հայրենիք բերելուց հետո, ստանում էին միայն այն գումարը, որը նրանք գերու ներկայությամբ և համաձայնությամբ վճարել էին նրա թաթար տիրոջը: Ռուս գերիներին փրկագնելու հիմնական նկատառումներից մեկը ռուսական իշխանությունների վստահությանն ու առանձնաշնորհումներին արժանանալն էր: Դրանց կարիքը հայ վաճառականական դասը խստիվ զգում էր Ռուսաստանում իր առևտրատնտեսական գործարքները կատարելիս: Եվ ինքնին պարզ է դառնում, թե ինչու փրկագնված անձինք հիմնականում բարձր դասի ներկայացուցիչներ էին:

Դեպքից դեպք էլ փրկագնված գերու դիմաց վճարված գումարի ստանալը տեղիք էր տալիս վեճերի, և երբեմն փրկագնող հայ կամ հույն վաճառականը նյութապես նույնիսկ տուժում էր: Նմանօրինակ վեճերը կարգավորելու համար 1670 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարը և բոյարները սահմանում են հատուկ կարգ. ըստ այդ կարգի, գանձարանի հաշվին փրկագինը փոխհատուցելուց առաջ պետք է ավետարանի վրա վաճառականն ու փրկագնված անձը խոստովանեին վճարված դրամի իսկական չափի մասին, եթե փրկագնված մարդու դիմաց փրկագնողի տված գումարը պետական սահմանվածից ցածր էր, ապա այն իսկույն վճարվում էր, իսկ եթե բարձր էր, ապա վճարվում էր ըստ պետական սակագնի: Երբ գերի ընկած մարդկանց համար վաճառականը նրա ազգականների հետ պայմանավորվել էր ստանալ պետական սահմանվածից ավելի բարձր գումար, ապա այդ տարբերությունը պետք է վճարեին փրկագնվածի բարեկամները: Կառավարությունը օգնության էր գալիս այն փրկագնված անձանց, որոնց հարազատները անկարող էին վճարել նշված տարբերությունը: Նման դեպքերում նրանց տրվում էր հարկահավաքման թերթիկ՝ գյուղերից հարկ հավաքելու իրավազորությամբ:

18-րդ դարի երկրորդ կեսից ի վեր ռուսական շրջաններում ղրիմահայ վաճառականների գործունեությունը գնալով միախառնվում էր այն ջանքերին, որով 17-րդ դ. վերջին – 18-րդ դ. սկզբներին հայ վաճառականության քաղաքականապես առավել հասուն ներկայացուցիչները միտում էին ստատար կանգնել Ի.Օրու և մյուսների սկսած գործին՝ Ռուսաստանի օգնությամբ մահմեդական տիրակալների լծից հայ ժողովրդի ազատագրման ծրագրի իրականացմանը: Տակավին 1723 թ., երբ գեներալ մայոր Մ. Ա. Մատյուշկինի հրա-

մանատարության տակ գործող ռուսական զորքերը նախապատրաստվում էին գրոհել Բաքվի վրա, ղրիմահայ մի վաճառական Մինաս վարդապետի միջոցով ռուսական ծովակալության պրեզիդենտ, գեներալ ծովակալ Ֆ. Մ. Ապրակսինին կարևոր ռազմական նշանակության տեղեկություններ է հաղորդում թուրքական բանակի զորաշարժերի մասին: Ըստ այդմ՝ թուրքական Խարցու փաշան, բոլոր բեկերի հետ, անցել էր Պարսկաստանի սահմանը, ավերել սահմանամերձ գյուղերը, ավարառություն կատարել, իսկ Կ. Պոլսից Տրապիզոն էին ժամանել 13 ռազմանավեր՝ ռազմամթերքով և հրետանիով: Տրապիզոնից յոթ փաշաներ զորքով ուղարկվել էին Պարսկաստան, իսկ հրետանին ու զինամթերքները բեռնաթափվել և տեղափոխվել էին Էրզրում: Այս տեղեկություններըը ռուս-պարսկական և ռուս-թուրքական առճակատման ժամանակներում հույժ կարևոր նշանակություն ունեին, և դրա համար էլ դրանք անմիջապես հասցվում են Պետերբուրգ[1]:

18-րդ դարի 20-ական թվականների Սյունիքի և Արցախի հայոց ազատագրական պայքարին իրազեկ ղրիմահայերը, ռազմական ջոկատներ կազմելով, Թեոդոսիայի ավագ քահանա Բարդուղիմեոսի և Եվպատորիայի ավագ քահանա Մարկոսի գլխավորությամբ, գալիս են Ղափան՝ իրենց հայրենակիցներին օգնելու համար: Գալով Տրապիզոն՝ 285 ղրիմահայերը, լազերի զգեստ հագած, բաժանվում են խմբերի և ապա Մուշի, Կարսի ու Անիի վրայով 1722 թ. հասնում Դավիթ-բեկի մոտ, ակտիվորեն մասնակցում ազատագրական կռիվներին և միայն 1729 թ. նոր վերադառնում են Ղրիմ՝ վերքեր կրած, իսկ մի մասն էլ խեղանդամ դարձած[2]:

Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը մահմեդական տիրակալների լծից ազատագրելու ծրագրերը յուրովի արձագանք էին գտնում նաև ղրիմահայ գաղութներում: 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և դրան հաջորդած տասնամյակում ղրիմահայերը թե մարտի դաշտում և թե դիվանագիտական և այլ բնագավառներում բոլոր ուժերով նպաստում են թերակղզին Ռուսաստանին միացնելու ուղղությամբ ռուսական կառավարության ձեռնարկած քայլերին: Հայերն ու հույները ռուսների հետ միասին կռվում էին թուրք-թաթարական ուժերի դեմ: Նշանակալից թվով հայեր մտել էին ռուսական գործող բանակի շարքերը: Հայերի օգնությամբ ռուսներին հաջողվեց գրավել Օր (Պերեկոպ) անառիկ ամրոցը: Ռուսական բանակին և դիվանագիտությանը մատուցած իրենց ծառայությամբ աչքի ընկան ղրիմահայեր Կարապետ Մերզինը, Իվանեսը, Մարկոս Կյումուշչին և ուրիշներ: Այս վերջինը (ապագա ծովակալ Լ. Մ. Սերեբրյակովի հայրը) մեծ դեր խաղաց Ղրիմը Ռուսաստանին միացնելու իրադարձությունների ժամանակ՝ «բոլոր մուրզաներին դարձնելով Ռուսաստանի կողմը»[1]:

Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու հեռանկարը ոգեշնչել էր նաև ղրիմահայ համայնքներին և հանդիսացել Ղրիմը գրավելու և սևծովյան ափերը դուրս գալու համար Ռուսաստանի վարած ռազմական և քաղաքական գործողություններին հենարան դառնալու նրանց դիրքորոշման հիմնական պատճառներից մեկը:

***

Ղրիմահայ գաղթօջախների կյանքում, 14-րդ դարի 30-ական թվականներից սկսած, առաջնակարգ նշանակություն է ստացել արհեստագործությունը՝ գյուղատնտեսական զբաղմունքների հետ միասին դառնալով գաղութահայ գանգվածների կենսապայմանների ապահովման հիմնական միջոցը: Միայն Սուրխաթում կային արհեստների ավելի քան երկու տասնյակ տեսակներ: Եվ այն էլ դեռ 14-րդ դարի կեսերին: Ղրիմահայ նշանավոր գրիչ Նատերի՝ 1347 թ. արտագրած «Ճառընտիրի» հիշատակարանից երևում է, որ հայկական այդ նշանավոր քաղաքում զարգացում էին ապրում հետևյալ արհեստները՝ ներկարարությունը, կոշկակարությունը, ոսկերչությունը, դանկրարությունը, ջուլհակությունը, կտավագործությունը, քաթանագործությունը, դարբնությունը, հյուսնությունը, այգեպանությունը, սանրագործությունը, գինեգործությունը և այլն:

Արհեստագործությունը շատ ավելի զարգացած էր Կաֆայում, որը ղրիմահայոց ոչ պաշտոնական մայրաքաղաքն էր, միջազգային առևտրի շատ նշանավոր նավահանգիստ: Արհեստների զարգացումը Կաֆայում կապված էր քաղաքի բնակչության մեծաթիվ լինելու, առևտրի, շինարարության և նավագնացության պահանջների բավարարման հետ:

Միջնադարյան Ղրիմի գրեթե բոլոր քիչ թե շատ նշանավոր բնակավայրերում հայկական քաղաքացիական և հոգևոր կառույցների առկայությունը, տեղական արհեստագործության և արվեստագործության վրա հայկականի թողած ազդեցությունը վկայում են տեղացի հայերի մոտ արհեստների լայն ու բազմակողմանի զարգացած լինելու մասին: Հայ քարագործ վարպետների համուտ և ստեղծագործ աշխատանքի առհավատչյան էին այն բազմաքանակ հուշարձանները, որոնցից մի քանիսը պահպանվել են առ այսօր:

---

[1] Центральный гос. ист. архив Военно-морского флота (ЦГАВМФ), ф. 233, оп. 1, д. 222а, л. 124.

[2] Մատենադարան, ձեռագ. N°8815, թ. 25-39:

[1] Присоединение Крыма к России. Рескрипты, письма, реляции и донесения. т.I, Спб., 1887, с. 103.

Կաֆայում հայ արհեստավորները, ըստ տվյալ արհեստի, ունեին իրենց համքարությունները: 1449 թ. կանոնագրությունը ճոպանագործներից, խծուծողներից և որմնադիրներից պահանջում էր այդ արհեստներից ամեն մեկի համար ունենալ գլխավոր վարպետ, որը պարտավոր էր գրանցել տվյալ ճյուղի արհեստավորներին: Քանի որ բուն Կաֆայում արհեստների նկատմամբ անհամեմատ մեծ պահանջարկ կար, ապա հիշյալ կանոնագրությամբ արհեստավորներին խստիվ արգելվում էր առանց հյուպատոսի թուլլատվության Կաֆայից այլ վայր մեկնել աշխատանքի: Կանոնագրական այս կարգը խախտելու դեպքում գլխավոր վարպետը պարտավոր էր զեկուցել իշխանություններին, եթե չէր կամենում կարգը խախտողի փոխարեն տուգանքապատիժը կրել:

Համքարությունները Կաֆայում գոյություն ունեին ոչ միայն ջննովացիների ժամանակ, այլ նաև հետագայում՝ 16–18-րդ դարերում: 1621 թ., օրինակ, Կաֆայում կոչկակարներն ունեին իրենց համքարությունը՝ մեծ վարպետ Պարոնքայի գլխավորությամբ:

Արհեստների մի մասը կյանքի էր կոչվել հատկապես նավաշինության կամ նավանորոգման պահանջներով: Այդպիսի արհեստներից էին, օրինակ, ճոպանագործությունն ու քաթանագործությունը: Նավը կառուցող կապալառուն վարձում էր վարպետին և արհեստավորներին՝ հանդես գալով արտադրությունը կազմակերպող կապիտալիստի, իսկ վարձվողները՝ իրենց աշխատուժը վաճառողի դերում: Սա ինքնին վկայում էր կապիտալիստական արտադրության երկու կարևոր տարրերի առկայության մասին. այս հանգամանքը խոսում է այն մասին, որ առևտրական կապիտալի ոլորտը մտած Ջենովայի հանրապետությունը սևծովյան իր գաղութներն էր բերել նաև բուն հանրապետությունում տիրող հարաբերությունները: 1449 թ. կանոնագրությունն իր հոդվածների բովանդակությամբ, բոլոր պաշտոնների ընտրությամբ և մանավանդ ընտրության դեմոկրատական սկզբունքներով բուրժուական իրավունքի մի հուշարձան էր:

Հայ շինարար վարպետները հայտնի էին ամբողջ Ղրիմով մեկ, նույնիսկ խանության կենտրոն Բախչիսարայում:

Առևտրի պահանջներին համաքայլ՝ հայերի մոտ լայն զարգացում ունեին մորթեգործությունն ու մուշտակագործությունը: Ռուսական շրջաններից ներմուծվող առատ հումքը խթանում էր արհեստների այդ տեսակների զարգացումը, մանավանդ որ դրանց արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկ կար նաև արտաքին շուկայում: Այս արհեստատեսակներով զբաղվողների թիվը Կաֆայում այնքան մեծ էր, որ քաղաքում նրանք մի առանձին փողոց էին զբաղեցնում: Ժամանակի ընթացքում վարպետները, դառնալով լուրջ կարողության տեր, ըստ այդմ ձեռք էին բերում նաև լայն ու ճանաչված հեղինակություն: Դրանցից էր, օրինակ, մորթեգործ Հակոբջանը, որը հայ նշանավոր հոգևորականների և վերնախավի ներկայացուցիչների ստորագրությունների

կողքին իր ստորագրությունն էր դրել 1438 թ. Կաֆայից Ջլորենցիայի տիեզերաժողովին ուղարկելու առթիվ քաղաքի ջենովական հյուպատոսի հետ կնքված պայմանագրի՝ «Գիր հրամանի դեսպանաց հայոց»-ի տակ: Մորթեգործությունը և մուշտակագործությունը առհասարակ ղրիմահայերի նախասիրած զբաղմունքներից էին: Արհեստավորների մեջ նրանք նկատելի էին նաև 1778 թ. Ղրիմից հայերին արտագաղթեցնելու ժամանակ:

Հումքի առատության հետ էին կապված նաև կաշեմշակությունը և կոշկակարությունը: Անասնապահ և կիսաքոչվոր կյանքով զբաղված թաթարները հաճույքով հումք էին տրամադրում հայերին և հույներին՝ այդ արհեստներով զբաղվելու համար: Կաշեմշակման զարգացմանը խթանում էր այդ ապրանքատեսակի նկատմամբ արտաքին շուկայում եղած մեծ պահանջարկը: Եվ հայ վաճառականների արտահանած ապրանքների մեջ կոշկեղենը ամբողջ միջնադարում մնում էր առաջինը պահանջարկ ունեցող ապրանքների մեջ:

Ղրիմահայ գաղութում, սկսած 13-րդ դարից, լայն զարգացում և կիրառում ունեին կավագործական արհեստները: Արտադրվում էին և՛ սովորական ամանեղեն և թե՛ կապարային վերնիճով (ջնարակված) նախշածածկ ամանեղեն: Կաֆայի ջնարակված խեցեղենը խստիվ հայկականի ազդեցության տակ էր, որովհետև այն հիմնականում արտադրում էին հայ վարպետները: Կաֆայի ջնարակված կերամիկային բնորոշ էին թփերի, ճյուղերի, բույսերի ոճավոր պատկերավորումները, որոնք առկա էին նաև Ս. Խաչ վանքի դռների նախշերում[1]:

1779 թ. Դոնի շրջան տեղափոխվելուց առաջ էլ արտագաղթեցվողների մեջ արհեստավորները շարունակում էին նշանակալի թիվ կազմել: «Մեր հասարակության մեջ հողատերերը 300 հոգուց ավելի չեն, – գրում էին արտագաղթողները Գ. Պոտյոմկինին 1779 թ. հուլիս 15-ին, – մնացած բոլորը արհեստավորներ են և վաճառականներ»[2]:

***

Ղրիմահայության նկատելի մասը կազմում էր գյուղաբնակ ազգաբնակչությունը: Հայկական գյուղերը հիմնականում տեղաբաշխված էին Հին Ղրիմի և Աքմեչեթի միջև ընկած տարածքներում, ինչպես նաև Թեոդոսիայի և Սուդակի արանքի ծովափնյա շերտում: Սակայն գյուղատնտեսությամբ զբաղվում էր ոչ միայն գյուղական բնակչությունը: Կաֆայի, Հին Ղրիմի, Ղարա-

[1] Гольдшмидт И., Некоторые данные о ремесленном производстве в Каффе в 13-15 вв. (« Средние века». Сб. вып. 10, М., 1957).

[2] Присоединение Крыма к России. т.III, Спб., 1887, с. 1257-258.

սուբազարի և Սուդակի քաղաքաբնակ հայերի զբաղմունքների մեջ նույնպես այն աչքի ընկնող տեղ էր բռնում: Զգիտի մոռանալ այն կարևոր հանգամանքը, որ Ղրիմի թերակղզին իր բնակլիմայական հիանալի պայմաններով լայն հնարավորություններ էր տալիս թե՛ այգեգործության ու դաշտավարության և թե՛ անասնապահության զարգացման համար:

Այգեգործությունից ու բանջարագործությունից ղրիմահայերը այնքան մեծ բերք էին ստանում, որ 16-րդ դարում, իրենց պահանջները բավարարելուց բացի, նրանք պտուղներ և սոխ էին արտահանում, իսկ հացահատիկների մշակությանը թաթարները ընտելացան չնորհիվ հայերի և հույների, այն էլ՝ 16-րդ դարի կեսերից:

Խաղողագործությունը և որպես նրա զարգացման անմիջական հետևանք գինեգործությունը հայերի մոտ այնքան լավ մակարդակի վրա էին գտնվում, որ գրավել էին օտարերկրացի ճանապարհորդների ուշադրությունը: Մինչև հայերին ու հույներին թերակղզուց դուրս բերելը (1778 թ.) Ղրիմում այգեգործությունը շարունակում է մնալ երկրամասի տնտեսության եկամտաբեր ճյուղերից մեկը, մինչդեռ նրանց հեռանալով այն անկում ապրեց, քանի որ թաթարները նրանց այգիները միացրին իրենց հողերին և բոլոր այգիները ոչնչացրին: Ահա թե ինչու 19-րդ դարի սկզբին Ղրիմի գործերին քաջատեղյակ ծովակալ Ն. Ս. Մորդվինովը կառավարությանը ներկայացրած իր «Կարծիքում» գրում էր, թե թերակղզու «լեռնային և այգեգործական մասը չպետք է բնակեցվի թաթարներով... Ղրիմը անկում ապրեց այն պահից, երբ լեռնային մասից դուրս եկան քրիստոնյաները, և թաթարները մտան նրանց այգիներն ու տեղերը»[1]:

Կաֆայի հայությունը ևս մշակում էր հիանալի այգիներ: Խաղողագործությանը քաղաքում շատ կարևոր նշանակություն էր տրվում. 1449 թ. կանոնադրությունը հատուկ հոդվածով արգելում էր այգեկութի ժամանակ, սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը, դատական նիստեր գումարել:

Դաշտավարությունը, այգեգործությունը և անասնապահությունը մինչև 18-րդ դարի վերջերը Ղարասուբազարի և Հին Ղրիմի հայկական գաղթօջախների հիմնական զբաղմունքներն էին, նրանց ապրուստի հայթայթման կարևոր աղբյուրը: Յորենի առատ բերքով էր բացատրվում այն, որ Ղարասուբում 17-րդ դարում հայերն ունեին 50 ջրաղաց:

Այսպիսով, Ղրիմի թերակղզու գրեթե բոլոր հատվածներում հաստատված հայկական գաղթօջախները միօրինակ չեն եղել իրենց զբաղմունքների մեջ: Արհեստագործությունն ու գյուղատնտեսությունը, սկսած 14-րդ դարի 30-ական թվականներից, առաջնակարգ նշանակություն են ձեռք բերել նրանց

[1] Записки общ-ва сельского хозяйства Южной России. Книга 6, 1873, с. 364.

զբաղմունքներում և առևտրի հետ միասին բավարարել գաղութահայ զանգվածների կենսական պահանջները:

***

Իրենց մի հատվածով ապրելով թաթարական տիրապետության ոլորտում, որտեղ իշխում էին արևելյան տիպի ֆեոդալական հարաբերությունները՝ կիսաքոչվոր կացութաճևով, իսկ մյուսում՝ ջննովական ազդեցության գոտիներում՝ կապիտալի նախասկզբնական կուտակման հասուն շրջանին բնորոշ հարաբերություններով, ղրիմահայերը իրենց սոցիալական շերտավորմամբ կախյալ էին նշված քաղաքական իրավիճակներից:

Միջին հողատերերի դաս, հողատեր եկեղեցի, ռամիկ երկրագործ ազատներ, խոշոր վաճառականներ, միջին ու մանրածախ առևտրականներ, դրամատեր բանկիրներ, վաշխառուներ, ուռճացած վարպետ արհեստավորներ, քայքայված արհեստավորներ և քաղաքային բանվորներ՝ սա էր ղրիմահայության սոցիալական բաժանվածության մոտավոր պատկերը, սակայն նշված խմբերն էլ իրենց ներսում միատարը չէին: Կաֆայում սոցիալական սանդուղքի վերևում գտնվում էին ջննովացիները (cives) և ապա քաղաքացիները (burgenses): Սրանք ունևոր խավերն էին, բայց նյութական ու իրավական ոչ հավասար զորությամբ: Քաղաքի բնակչության ստորին խավերը (habitatores) կազմում էին ոչ հարուստ արհեստավորները, առևտրականները, սեւագործ բանվորները: Քաղաքի հիմնական բնակչության՝ կաֆացիների մեջ, գերակշիռ թիվ էին կազմում հայերը: Ղրիմահայության հարուստ դասի ներկայացուցիչները հանդես էին գալիս խոջաների, պարոնների, էմիրների, բեգերի անվանումների տակ: Ըստ 1744 թ. կազմված մի խնդրագիր-համախոսականի, ղրիմահայ ժողովուրդը բաղկացած էր «գլխավորներից» և «հասարակ» ժողովրդից: Խնդրագիրը իրենց 73 կնիքներով հաստատել էին Կաֆայի, Աքմեչեթի, Ղարասուբազարի, Հին Ղրիմի և այլ վայրերի հայ համայնքների հարուստ ներկայացուցիչները, որոնք իրենց ներսում չերտավորված էին: Կաֆայում, սակայն, հասարակական սանդուղքի ստորին հատվածը զբաղեցնում էին ստրուկները՝ թաթարների բերած գերիները, որոնց մի մասը վաճառվում էր, իսկ մյուսը՝ ենթարկվում տաժանակիր աշխատանքի: Երբեմն այս գերիների մեջ պատահում էին նաև հայեր՝ գերեվարված լեհական կամ մոլդովական տարածքներից: Որպես կանոն՝ տեղացի հայերը նրանց իսկույն փրկագնում էին:

Ղրիմահայերը ենթակա էին երկակի հարկատվության՝ ջննովական և թուրք թաթարական վարչակարգերին: Արդեն 13-րդ դարի վերջերին Ղրիմի քրիստոնյաները՝ հայերն ու հույները, հարկեր ու տուրքեր էին վճարում Ոսկե

Հորդային, որի ուլուսներից մեկն էլ Ղրիմն էր մինչև 1428 թվականը, այսինքն՝ մինչև Ղրիմի առանձին խանության ստեղծումը: Հայերն ու հույները, ինչպես նաև կարաիմները Ղրիմի խանին վճարում էին ուշուր (տասնորդ), զեքիաթ (անասուններից և թռչուններից՝ եկամտի 1/5-ի չափով), հոգևոր հարկ՝ պետիր, գլխահարկ: Բախչիսարայում այս վերջին հարկը 18-րդ դարի սկզբներին հավասար էր 1-1,25 գրաունի, հավանաբար, յուրաքանչյուր անձից: Յուրաքանչյուր ոչխարի դիմաց վճարում էին 2 փարա, խոշոր եղջերավոր անասունի դիմաց՝ 6 փարա, մի օրավար հողի համար՝ 340 ակչե: Հայերից և հույներից գանձվող հարկերի չնորհիվ էին պահվում թաթար պաշտոնյաները:

Հարկային լծի ծանրության պատճառներից մեկը գանձման կապալառուական կարգն էր: Խանական գանձարանը պիտի ստանար հարկերի իր բաժինը, իսկ կապալառուն՝ իրենը, և այդ պատճառով էլ վերջինս ավելի շատ ու կամայական գանձումներ էր կատարում:

Ջափ ու սահման չունեին պարհակները, որոնք դարձյալ ծանրացած էին քրիստոնյա հայերի ու հույների ուսերին: Անհրաժեշտության դեպքում թաթար ավագանին, գյուղերից հավաքելով հարյուրավոր հայերի ու հույների, նրանց ստիպում էր ձրի աշխատել: «Աչլամա» խանական պալատը, օրինակ, կառուցելու նպատակով ամեն օր նրա շինարարության վրա Ղրիմ-Գիրեյ խանը աշխատեցնում է 200-300 հայերի:

Մանր էին մաքսատուրքերը, որոնց հավաքումը թաթարական պաշտոնյաների մենաշնորհն էր: Մաքսային համակարգն էր, որ ապահովում էր թաթարների շահագրգիռ վերաբերմունքը առևտրի նկատմամբ: Կայմակամների վիճակագրական տվյալների համաձայն՝ մաքսերի գանձումը ևս տրվում էր կապալով:

Թուրքական տիրապետության հաստատումից սկսած (1475 թ.) հայերն ու հույները հարկատու դարձան նաև սուլթանական գանձատանը: Կաֆայի հայկական եկեղեցիները, օրինակ, 18-րդ դարում տարեկան սուլթանական գանձարանն էին ուղարկում հետևյալ մուծումները՝ Սբ. Սարգսի եկեղեցին՝ 19 ոսկի,, Սբ. Հրեշտակապետը՝ 8 ոսկի, Սբ. Նիկողայոսը՝ 8 ոսկի, Սբ. Հաբրությունը՝ 10 ոսկի, Սան Փետրոն՝ 1 ոսկի , Սբ. Աստվածածինը՝ 5 ոսկի, Սբ. Օգսենտը՝ 4 ոսկի 1 ղրշ., Սբ. Ահարոն՝ 1 ֆլորի, Սբ. Նիկողայոս՝ 3 ոսկի կես ղրշ., Սբ. Ահարոն՝ 1 ֆլորի, Սբ. Մինասովը՝ 9 ոսկի, Սբ. Օհաննեսը՝ 10 ֆլորի, Սբ. Ստեփանոսը՝ 5 ֆլորի, Սբ. Օվաննեսը՝ 4 ֆլորի Ա ղրշ., Սբ. Համբարձումը՝ 5 ֆլորի Ա ղրշ., Քաշոտի Սբ. Աննան՝ 6 ֆլորի, Սբ. Առաքելը՝ 8 ֆլորի, Սբ. Ուրբաթը՝ 4 ֆլորի, Սբ. Երրորդությունը՝ 4 ֆլորի, Կոլի Աստվածածինը՝ 6 ֆլորի[1]:

[1] Մատենադարան, ձ. N°2939, թ. 471:

Կաֆայում հայերի ու հույների նյութական դրությունը ժամանակին այնքան է վատթարանում, որ նրանք թուրքական իշխանություններին ենթակա այդ վայրերից փախչում էին Ղարասուբազար և այլուր: Այս էլ առիթ է տալիս սուլթանին հրամաններ արձակել Ղարասուբազարը կործանելու մասին, որովհետև քրիստոնյաները ընտանիքներով փախչում էին այնտեղ, և «այսպիսով կորչում էր հարկը»[1]:

Հարկերն ու տուրքերը թուրք-թաթարական ասպատակությունների կամ պատերազմների նախօրյակին վերածվում էին ուղղակի բռնագրավումների, հաճախ քրիստոնյա ընտանիքներին զրկելով գրեթե ողջ ունեցվածքից:

Հայերը հարկեր ու մաքսեր էին տալիս նաև ջենովական գաղութային իշխանություններին. դրանց թվում էին հողային, աղի և սննդամթերքի հարկերը, գլխահարկը, շինարարության հարկը: Գոյություն ունեին տարատեսակ մաքսեր՝ առևտրի դիմաց: Կաֆայում ամենից բարձր գլխահարկը վճարում էին հայերը: 1351 թ. օրինակ, հույնի 749 սոմոյի դիմաց հայը պիտի վճարեր 999 սոմո գլխահարկ: Շուկայում ապրանք վաճառելու համար վերցվող մաքսերի թիվը հասնում էր 15-ի, որոնք ստորաբաժանված էին ըստ շուկա բերված բանջարեղենի և մրգի քանակի ու տեսակի:

***

Ղրիմահայերը պարբերաբար ենթարկվում էին կրոնական հետապնդումների՝ կաթոլիկ և մահմեդական հոգևորականության կողմից: Որքանով մահմեդականությունը խորանում էր թաթարների մեջ, որքանով նրանք դառնում էին Մահմեդի ուսմունքի ավելի մոլեռանդ երկրպագուներ, այնքանով սաստկանում էին հետապնդումները քրիստոնյաների նկատմամբ: Նույնիսկ ջենովացիների մոտ Կաֆայում դաստիարակություն ստացած Մենգլի-Գիրեյ խանը 15-րդ դարում առիթը բաց չթողեց և կոտորեց հայերի ու հույների մի մասին, իսկ մի մասին տեղափոխեց բնակության տափաստանային Ղրիմ՝ միաժամանակ խթանելով թաթարների վերաբնակեցմանը հարավ-արևելյան և լեռնային շրջաններում: Դրա հետևանքով ժամանակին տեղի ունեցավ հույների մի մասի ձուլման պրոցես թաթարների մեջ, և հենց դրանով է բացատրվում այն, որ Ղրիմի հարավային շրջանի թաթարները դիմագծերով տարբերվում էին մոնղոլոիդներից:

Մահմեդական հոգևորական կոչով ոտքի ելած մոլեռանդ ամբոխի զոհեր են դառնում նաև առանձին ղրիմահայեր, չնայած որ թաթարների վերաբերմունքը հայերի հանդեպ, ինչպես նշել ենք, շատ ավելի հանդուրժողական էր,

[1] ЗООИД. т. V, 1863, с. 120.

քան թե դեպի Թերակղզու մյուս քրիստոնյաները: Մահմեդական ամբոխի զոհն էին դառնում այն մարդիկ, որոնք դիմակայում էին իրենց պարտադրվող կրոնափոխությանը: Պահպանված վկայաբանությունները Ղրիմում հիշատակում են, օրինակ, նահատակներ Պարոն-Լույսին (1567 թ.), Սահակին (1715 թ.) և Փռանգուլին (1757 թ.):

14-րդ դարում ղրիմահայերից ոչ մեծ մի հատված ընկրկեց կաթոլիկական պրոպագանդայի առաջ: Սակայն հայոց այդ զիջումը իրենց ազգակից ունևոր քարոզիչներին սահմանափակվում էր սոսկ Հռոմի պապի գերիշխանության ճանաչմամբ՝ ազգային եկեղեցու ծեսը, կարգն ու կանոնը պահպանելու անհողդողդ վերապահությամբ:

Թաթարական շրջաններում, առհասարակ Ոսկե Հորդայում և նրանից արևելք ընկած մոնղոլական տարածքներում, քրիստոնեության տարածման նպատակով 1318 թ. Իոհան 22-րդ պապը Կաֆայում ստեղծում է հատուկ եպիսկոպոսություն, իսկ 1333 թ. այստեղ իրենց վանքն են հիմնում հայ դոմինիկյանները: Վերջիններիս թվում էին եպիսկոպոս Թադեոսը, Ֆրա Անդրեասը, Ֆրա Հակոբը, Ֆրա Հովսեփ Ապարանցին և այլք, որոնք լատիներենից հայերեն թարգմանեցին մի շարք գրքեր, իսկ նրանցից Ֆրա Հակոբը արտագրում է «գգիրս, որ է փիլիսոփայական արուեստին, որ և Սահմանք Դաւիթ Անհաղթ փիլիսոփին ընդ նմա լինին»[1]:

Կրկին ընդգծենք, որ վերը նշված կրոնական երկու հաստատությունների հիմնական նպատակը արևելքում քրիստոնեության տարածման պապական առաջադրանքի անշեղ կատարումն էր. Կաֆա ժամանած քարոզիչները 2-3 տարի սովորում էին արևելյան լեզուներ և թևի տակ՝ ավետարանը, իսկ ձեռքին՝ խաչը մեկնում էին մոնղոլական հեռավոր երկրներ՝ Քրիստոսի ուսմունքը տարածելու առաջադրանքով: Եղան ժամանակներ, երբ Ոսկե Հորդայի խաները (դեռևս 14-րդ դարի երկրորդ կեսին) տատանվում էին Քրիստոսի և Մահմեդի հավատքներին իրենց վերջնական համաձայնությունը տալու մեջ: Սակայն ի վերջո քրիստոնյա քարոզիչների ջանքերը իզուր անցան:

Ղրիմում հայերի մեծաթիվ լինելը և նրանց քաղաքական ու տնտեսական ազդեցիկ վիճակն էր պատճառը, որ 1438 թ. Ֆլորենցիայի տիեզերաժողովին հայոց եկեղեցին ներկայացնելու իրավունքը վերապահվել էր նրանց պատվիրակությանը՝ Կաֆայի աթոռակալ Սարգիս վարդապետի գլխավորությամբ, որը քրիստոնյա այլ երկրների պատվիրակությունների հետ իր ստորագրությունն է դնում տիեզերաժողովի ընդունած եկեղեցիների «Միության» դաշինքի տակ: Միությունը չէր նշանակում, թե հայերի, հույների, ռուսների և այլոց եկեղեցիները շրջվել էին դեպի կաթոլիկություն: Միությունը զուտ քաղաքական նպատակներով էր թելադրված, միտում էր դրանով ապավինել

[1] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, եր., 1950, էջ 371:

թուրքերի դեմ արևմուտքի օգնությանը՝ միավորելով քրիստոնյա պետությունների ջանքերը:

Հայերի կողմից կաթոլիկության ընդունումը Ղրիմում փաստորեն ձևական բնույթ էր կրում, և քարոզիչները ձգտում էին գոնե այդ վիճակը պահպանել, «որովհետև հայերը շատ են կապված իրենց սովորություններին ու ծեսերին, – ասված էր միսիոներներին տրված հրահանգում,– կաթոլիկական կրոնի հաջողության համար պետք է բավականանալ միայն նրանով, որ հայերը միայն ճանաչեն հռոմեական եկեղեցու դավանանքը, իսկ հայ եկեղեցական ծեսերն ու ավանդությունները պետք է թողնել անվթար»[1]:

Կաֆայի հռոմեական եպիսկոպոսները միշտ չէ, որ հետևում էին նշված խորհրդին և ոտնձգություններ էին կատարում միջամտելու հայերի եկեղեցական գործերին: Դա առաջ էր բերում հայերի դիմադրությունը և տագնապ առաջացնում նաև քաղաքի չենովական պաշտոնյաների շրջանում ևս: Ընդառաջելով Ֆլորենցիայի տիեզերաժողով եկած Սարգիս վարդապետի բողոքին՝ Եվգենիոս 4-րդ պապը հատուկ կոնդակ է իջեցնում Կաֆայի հռոմեական եպիսկոպոսի անունով՝ նրան արգելելով միջամտելու հայոց եկեղեցական գործերին, պարտավորեցնելով չխանգարել հայերին ազգային ծեսերով կատարելու իրենց եկեղեցական արարողությունները:

14-15-րդ դարերում Կաֆայի հայության մեջ կաթոլիկ քարոզիչների հաջողությունները թվական առումով չոչափելի էին: Որքանով չենովացիների դիրքերը Ղրիմում թուլանում էին, այնքանով կաթոլիկությունը այստեղ կորցնում է իր ոտքի տակի հողը, և 1475 թ. Թերակղզու վրա չենովական գաղթավայրերի վերացմամբ վերջ դրվեց նաև կաթոլիկական պրոպագանդին: Եվ եթե 18-19-րդ դարերում ղրիմահայության մեջ, այնուամենայնիվ, կային կաթոլիկներ, ապա նրանք ոչ թե 14-15-րդ դարերում կաթոլիկությանը մերձացած հայերի հաջորդներն էին, այլ 17-18-րդ դարերում Թերակղզու վրա ծագած հայերի հաջորդներն էին, այլ 17-18-րդ դարերում Թերակղզու վրա ծագած հայերի հաջորդներն էին, որոնք սուր պայքար էին մղում միմյանց դեմ: Մի կողմում չենովական վարչակարգի հետ սերտաճած հայ առևտրավաշխառուական վերնախավի տնտեսապես զորեղ ներկայացուցիչներն էին, մյուսում՝ աշխատավոր ժողովուրդը: Շարժման առիթը հայ ե-

[1] Հայրենիք, 1933, թիվ 4, էջ 114:

պիսկոպոսական աթոռի թեկնածուի հարցն էր, բայց պայքարի էությունը ազգային էր, որովհետև քաղաքի հայ աշխատավորները չէին ուզում այդ աթոռի վրա տեսնել ջենովացիներին մերձացած հարուստների կամակատարին, և տևական այդ պայքարում արտահայտում էին իրենց դժգոհությունը սեփական և ջենովական վերնախավի դեմ:

Քաղաքի հարուստները, ի դեմս հայտնի հայ բանկիր Խութուլ-բեյի որդի Կայարեսի, հենվելով վերջինիս դրամական ուժի վրա, ուզում էր եպիսկոպոս դարձնել վերջինիս ազգական տեր Կարապետին, մինչդեռ ժողովրդի հոծ մեծամասնությունը պաշտպանում էր իր վստահությունը վայելող տեր Հովհաննեսին: Վերահաս թուրքական վտանգի պայմաններում ջենովական հյուպատոս Կաբելան կանգնել էր ժողովրդի կողմը: «Ժողովրդի մեծամասնությունը Դերոնանեսի (տեր Հովհաննեսի) կողմն է, – հայտնում էր նա Ջենովա, – և հարուստների ու անհանգիստների ընդամենը ինչ-որ մի խմբակ է պաշտպանում երկրորդին»[1]:

Երկարատև պայքարը ընթանում էր փոփոխակի հաջողություններով՝ մեկ աթոռը հանձնում էին տեր Հովհաննեսին, մեկ՝ տեր Կարապետին: Կ. Պոլսի հայոց պատրիարքը պաշտպանում էր առաջինի թեկնածությունը, սակայն պատրիարքի մահից հետո, նրան փոխարինողը պաշտպանում էր տեր Կարապետին: Նրա նվիրակները 1474 թ. գահընկեց են անում տեր Հովհաննեսին և կրկին աթոռը հանձնում տեր Կարապետին: Նորից ծայր են առնում հուզումներ ու հակամարտություններ, «քշնամական ելույթներ, խռովություններ, եկեղեցիները փակելու սպառնալիքներ և ցասումնալից անկարգություններ, որոնք առաջ բերեցին չարաղետ բախումներ ժողովրդի և իշխանությունների հարաբերություններում»,- 1474 թ. հայտնում էր հյուպատոսը Ջենովա[2]:

Ջենովայից կարգադրություն է իջեցվում չմիջամտել այդ գործին: Հյուպատոս Կաբելան, Կաֆայից վտարելու սպառնալիքով, հրամայում է պատրիարքական նվիրակներին ձեռնապահ մնալ միջամտությունից և հաստատում է ժամանակավոր խաղաղություն: «Սակայն դրան երաշխիք չեմ տալիս, – գրում է Կաբելան, – որովհետև ինձ դիմում են համառ խնդրանքներով, որպեսզի ես թույլ տամ երկու պատվիրակներին օգտվելու իրենց պատրիարքական իրավունքից, բայց ինձ թվում է՝ արդարացի կլիներ բավարարել բնակչության մեծ մասին»[3]:

Մթնոլորտը չիկացնում էին բարձրաստիճան մյուս պաշտոնյաները՝ մասնավորապես Օբերտո Սկվարչիաֆիկոն, Ֆրանչեսկո Ֆիեսկոն և կամպանիայի մարզի* կառավարիչ Նիկոլո Տորիլիոն, որոնք բոլորն էլ կաշառված էին Կայարեսի կողմից: Կաֆայի դրամատան վարիչը նույնպես հայտնում էր Ջենովա, որ բոլոր արարքները կատարվել են փողի և կաշառքների միջոցով, որոնցից էլ՝ «երկպառակություններ առաջացնող բոլոր կռիվները»: Սա Կաֆայի այն պաշտոնյաներից էր, որ Ջենովայում նստած իր գլխավորներին զգուշացնում էր հայերի հետ վատ վարվելու ողբերգական հետևանքների մասին: «Դուք ունեք հայ ժողովուրդ, որը այս քաղաքի բնակիչների երկու երրորդ մասն է կազմում, ժողովուրդ, որը ամեն ինչով ամենաերախտագետն է և ամենահնազանդը Ձեր իրավակարգի հանդեպ: Նրանք (հայերը) այնքան են կեղեքվել կաշառակերների կողմից, որ բացեիբաց ասում են, թե այս լատինները, մեր հյուպատոսները, մեզ և մեր գույքը կողոպտում են»[1]:

1475 թ. փետրվարից սկսած ավելի են սրվում հակասությունները, և բանը հասնում է նույնիսկ բացահայտ բախումների դիմադիր երկու կողմերի միջև: Քաղաքում տեղի է ունենում մեծ խմորում, որը ավարտվում է բախմամբ՝ եկեղեցու մեջ, ուր հավաքվել էին երկու կուսակցությունների 300 ներկայացուցիչներ: 1475 թ. մայիսին Ջենովայից Կաֆայի հյուպատոսի անունով կարգադրություն է ստացվում, որտեղ առաջարկվում էր քաղաքում ապրող բարձր աստիճանավորների, եկեղեցիների գլխավորների, հայերի ավագների և ամեն մի հայկական ծխական համայնքից մեկական ներկայացուցչի մասնակցությամբ տեղնուտեղը մի երրորդ անձի ընտրել եպիսկոպոս, որը, սակայն, պետք է ծննդյամբ լիներ կաֆացի:

Ջենովացիներին այդպես էլ չհաջողվեց հաշտեցնել կողմերին, և վեճը չարունակվեց ընդհուպ մինչև քաղաքի գրավումը թուրքերի կողմից:

1475 թ. հունիսի 5-ին (հին տոմարով) հինգօրյա պաշարումից և հրետանային ուժեղ ռմբակոծումից հետո թուրք-թաթարական միացյալ ուժերը գրավեցին Ջենովայի հանրապետության սևծովյան գաղթավայրերի վարչական կենտրոն, միջազգային առևտրի հռչակված հանգրուանակետ Կաֆա քաղաքը: Նրա անկումը պայմանավորված էր ներքին ու արտաքին մի շարք պատճառներով:

15-րդ դարի 50-ական թվականներից Կաֆայում ստեղծվում է տնտեսական ճգնաժամային վիճակ, որը օրըստօրե գնալով խորանում էր, միաժամանակ մեծ չափերի էր հասնում քաղաքի բնակչության դժգոհությունը՝ թե՛ սոցիալական և թե՛ ազգային երանգավորումներով: Ջենովայի հանրապետության և հատկապես Կաֆայի համար շարունակ անբարենպաստ էր դառնում արտաքին քաղաքական դրությունը: Դա պայմանավորված էր ժամանա-

---

[1] ИТУАК. №54-55., 1918, с. 164.

[2] Atti, VII, II, p. 117-124.

[3] Նույն տեղը:

---

* Կամպանիայի մարզ էր կոչվում Ղրիմի ջենովացիներին ենթակա հարավ-արևելյան ծովափնյա շերտը:

[1] Հայ-իտալական առնչություններ, էջ 150:

կի միջազգային հարաբերությունների զարգացման ողջ ընթացքով և հատկապես թուրքական նվաճումների հետևանքով առաջացած ծանր կացությամբ: 1428 թ. Ղրիմում ինքնուրույն խանության ստեղծումը և 1453 թ. թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավումը անխուսափ ու անհեռանկար էին դարձնում ջենովական սևծովյան առևտրական գաղթակետերի գոյությունը:

1454 թ. Մահմեդ 2-րդի և Ղրիմի խան Հաջի-Գիրեյի միջև կնքվում է պայմանագիր՝ ուղղված Կաֆայի դեմ. խանը քաղաքը պետք է պաշարեր ցամաքից, իսկ սուլթանը նրան պիտի հարվածեր ծովից: Նույն թվականի ամռանը թուրքական զորքերը 500 գալերներով մոտենում են Կաֆային, իսկ նրա պաբիսպների տակ հայտնվում են Հաջի-Գիրեյի զորքերը: Այս անգամ բանն ավարտվում է պայմանագրով, ըստ որի, կաֆացիները պարտավորվում են թաթար խանին տարեկան վճարել 600 սոնմ, թուրքերին տալ պատանդներ և ամեն տարի 4000-8000 չերվոնեց[1]:

Ջենովայի հանրապետությունը և Սբ. Գևորգ բանկի կառավարչությունը, որին 1450-ական թվականներից անցել էր սևծովյան գաղթավայրերի տնօրինությունը, ի վիճակի չէին լուրջ ռազմական օգնության հասնել Կաֆային, քանի որ թշնամությունը Վենետիկի և Իսպանիայի հետ ծայրաստիճան թուլացրել էր հանրապետության ռազմատնտեսական հզորությունը:

Նեղուցների փակմանը հետևեց ոչ միայն տնտեսական սուր ճգնաժամը, այլև դասակարգային ու ազգային հարաբերությունների գերլարումը, որովհետև առևտրական վերնախավն ու ջենովական պաշտոնյաները ձգտում էին իրենց կորուստները փոխհատուցել տեղացիների վրա հարկերի ու մաքսերի բարձրացմամբ: Դեռ ավելին, ծաղկում էր կաշառակերությունը: Այս բոլորը առաջ էր բերել հայերի ու հույների արդարացի դժգոհությունը ջենովացի իշխողներից: Վերջիններիս իշխանության հիմքերը խարխլում էին Կաֆայի թաթար բնակիչները, որոնք դրսի իրենց ազգակիցներին մշտապես տեղյակ էին պահում քաղաքի պաշտպանական գաղտնիքներին:

Շատ վատ էր կազմակերպված քաղաքի պաշտպանությունը: Չկար հրետանի: Ջենովացիները իրենց հույսերը կապել էին դրսից բերված չատ փոքրաթիվ վարձկանների և նաև՝ Մենգլի-Գիրեյ խանի բարյացակամ վերաբերմունքի հետ, որի հետ դեռ 1468 թ. մտել էին պայմանագրային հարաբերությունների մեջ: Սակայն խանի բազմաթիվ եղբայրները և նրանց կուսակիցները թշնամական դիրք էին բռնել թե՛ ջենովացիների և թե՛ Մենգլի-Գիրեյի հանդեպ: Քաղաքի թիկունքը դրսից բացահայտ թշնամական էր:

Թուրք-թաթարական ուժերի համախմբումը արագացրեց Կաֆայի ջենովական ապաշնորհ կառավարությունը, որը 1474 թ. կամպանիայի մարզի օրինական պրեֆեկտ (տուդուն) էմինեկին հեռացրեց այդ պաշտոնից և նրա փո-

[1] ЗООИД, т. 8, 1872, с. 114.

խարեն նշանակեց Սայֆադին: Այդ գործում վճռական դեր էր խաղացել վերջինիս մայրը՝ փառասեր Ագրիպինան, որը կաշառել էր Կաֆայի գրեթե բոլոր պաշտոնյաներին՝ հյուպատոսին, նրա երկու օգնականներին և այլոց:

Վիրավորված էմինեկը դիմում է վճռական քայլերի: Ջենովացի Անդրեա Յատինանտիի օգնությամբ նա փախչում է Կաֆայից և, մյուս թաթարների հետ դաշնակցած, համաձայնության է գալիս թուրքերի հետ Կաֆայի վրա համատեղ հարձակվելու մասին:

1475 թ. մայիսի վերջին թուրքական նավատորմը Կեդիկ Ահմեդ փաշայի հրամանատարության տակ մոտենում է Կաֆային: Թուրքերին օգնության ձեռք են մեկնում թաթարները և նույնիսկ անգրալեցիացիները (լեհերն ու գերմանացիները): Կաֆայից ոչ հեռու գտնվող Պասիդինա նավահանգստում մայիսի 31-ին թուրքերի ու թաթարների միջև կնքվում է Կաֆայի վրա համատեղ հարձակվելու պայմանագիր, և հաջորդ օրը՝ հունիսի 1-ին, Կաֆան ցամաքից ու ծովից լիակատար պաշարման է ենթարկվում: Քաղաքին մոտեցել էին 480 ռազմանավեր, որոնք զինված էին հրետանիով: Քաղաքի բնակիչները, զրկված հրետանուց և դրսի օգնությունից, ապավինել էին միայն իրենց անհամեմատ թույլ ուժերին: Քաղաքը զուրկ էր զինամթերքից, երկարատև պաշարմանը դիմանալու համար անհրաժեշտ պարենից: Ցամաքից Կաֆան շրջապատել էին 60.000 թաթարներ: Մենգլի-Գիրեյն ինքը հայտնվեց անօգնական վիճակում և 1500 հեծյալներով ճողոպրեց Կաֆա:

Հինգ օր չարունակ քաղաքի բնակիչները դիմադրում էին Թշնամուն: Կռվողները հիմնականում հայերն էին և հույները: Հինգերորդ օրը՝ հունիսի 5-ին (հին տոմարով) նրանք հայտնում են Կաֆայի իշխանություններին, որ այլևս դիմադրել չեն կարող, քանի որ Թշնամին, ամբակոծելով քաղաքը, այն զրկել էր պարենից և նույնիսկ խմելու ջրից: Թուրքերին հանձնվելը ստիպողական մի քայլ էր: Քաղաքի պաշարման ժամանակ իրենց գլուխը կորցրած ջենովացիները զորքերի հրամանատարությունը հանձնում են հայի: Քաղաքը հանձնելու մասին որոշումն ընդունվում է այն բանից հետո, երբ հակառակորդի հրետանին քաղաքի պարիսպներում բազմաթիվ ճեղքեր էր բացել, ջենովացիների բերած աննշան թվով վարձկանները լիովին բարոյալքվել էին, իսկ նրանց հրամանատարը փախուստի էր դիմել:

Չնայած տված խոստմանը, թուրք-թաթարական ուժերը քաղաքը գրավելուց հետո նրա բնակչությանը անխնա կոտորում են: Մեծ չափեր են ընդունում գերեվարությունն ու հարկերը: Թուրքական հրամանատարությունը նախ կատարում է գույքագրում և բնակչության հաչվառում՝ փոքրից մինչև մեծը: Կեդիկ Ահմեդը սկզբում հայտարարում է, թե ինքը հրամայել է կազմել քաղաքացիների ունեցվածքի ստույգ ցուցակ՝ իբր թե հարկերը «արդարացի» և ճիշտ բաշխելու համար: Մինչդեռ դա արվում էր «զամեն ի քաղքէն» ժողովե-

լու և «զամենն» կողոպտելու համար[1]: Օտարերկրյա վաճառականները պետք է վճարեին 20–25 հազար դուկատ, իսկ ջենովացիները մի գումար, որը հավասար էր նրանց ունեցվածքի արժեքի կեսին[2]: Դեպքերին ականատես տաղասաց Ներսես Կաֆայեցին հաղորդում է, թե՝

Տունն ու այգին գին բռնեցին,
զերեք բաժինն կու ուզէին,
Աղաչանօք զկէսն առին:
Խիստ նեղութիւն կայր քաղաքին,
Ամենն ի լաց հառաչէին
Ճափայ չիքար որ փախչէին[3]:

Թուրքերը կաֆացիներից վերցնում են 1011 կաշե տոպրակ դրամ, յուրաքանչյուր տոպրակում՝ 600 դուկատ: Հայ և օտար աղբյուրների տեղեկություններով՝ թուրքերի վերցրածը կազմում էր քաղաքի բնակչության գույքի արժեքի կեսը: Նրանք նաև մեծաթիվ գերիներ վերցրին Կաֆայից, որոնց տեղափոխեցին Կ. Պոլիս:

Հենց Կաֆայի անկման այս շրջանում թաթարները ավերում և հիմն ի վեր կործանում են հայկական բերդապահ գյուղաքաղաք Կազարաթը, որը, որպես ամուր մի պատնեշ, Կաֆան չարունակ պաշտպանում էր հյուսիսից սպառնացող թաթարական հարձակումներից:

***

Թուրքական տիրակալության սկզբնական շրջանը ողբերգական եղավ մանավանդ Կաֆայի հայության համար: Սակայն Կաֆայի թուրքական իշխանությունները շատ շուտով զգացին հայերի տնտեսական գործունեության անհրաժեշտությունը նաև հենց իրենց համար: Եվ Կաֆայում նստած թուրքական փաշան սկսեց սիրաշահել հայերին. մեկը մյուսի հետևից նրանց վերադարձվեցին իրենց եկեղեցիները ու վանքերը: 16–18-րդ դարերում հայերը նորից ակտիվ դեր էին խաղում թերակղզու տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում:

Նշված դարերում ղրիմահայոց կապերը Հայաստանի և հայկական գաղթօջախների հետ, բացի տնտեսականից, արտահայտվել են նաև կրոնամշակու-

[1] Մատենադարան, ձեռ. 7709, թ. 58:

[2] «Сын отечества», 1848, թիվ 10, էջ 68:

[3] Մատենադարան, ձեռ. 7709, թ. 59:

թային բնագավառներում: 1336 թ., օրինակ, ընկերների հետ ունեցած անմիաբանության պատճառով Ղրիմ է գալիս գրիչ Տերտեր Երևանցին: 1344 թ. Կաֆայում է հաստատվում «բնական բաբերդցի» Մկրտիչ քահանան՝ ավետարան պատվիրելու հոգսով: 1359 թ. Սուխաթում գրչությամբ էր զբաղված Ասլան Էրզրումեցին: Նույն դարի 40-ական թվականներին Բաբերդից Ղրիմ է տեղափոխվում «մեծանուն և բազմարդիւն» գրիչ Նատերը իր չորս որդիների՝ նշանավոր գրիչների և ծաղկողների հետ միասին:

Ղրիմահայ գաղթօջախները «ըստ սովորութեան նախնեաց մերոց» հայաստանյան եկեղեցու ներկայացուցիչների մշտական այցելատեղին էին, որ պայմանավորված էր նաև այստեղի հայության համեմատաբար ավելի բարվոք տնտեսական վիճակով: 1368 թ. «աթոռակալ այցելութեան Հիւսուսիսային աշխարհի» Ղրիմ է գալիս ոմն տեր Հովհաննես, իսկ 1477 թ.՝ նշանավոր տաղերգու Մկրտիչ Նաղաշը: Հայ եկեղեցու նյութական կարիքները հոգալու առաջադրանքով շատ ու շատ նվիրակներ էին գալիս էջմիածնից և այլ տեղերից: Նրանցից էին, օրինակ, տեր կարապետը (1429 թ.), Մարտիրոսը (1449 թ.), Հովհաննես և Սարգիս եպիսկոպոսներն ու Դավիթ աբեղան (1506 թ.):

17-րդ դարի սկզբներին, երբ էջմիածնի Մայր աթոռը ընկել էր նյութական ծանր վիճակի մեջ, նվիրակային այցելությունները ավելի հաճախակի են դառնում: 1605 թ. Ղրիմ է գալիս Գրիգոր Կամախեցին կամ Դարանաղցին՝ ուղեկիցներ ունենալով տեր Սիմոնին և տեր Մինասին: 1629–1639 թթ. Ղրիմում նվիրակություն էր կատարում Խաչատուր վարդապետը, որը հանգանակության հավաքումը վեր է ածում կատարյալ հարկապահանջության: 1650 թ. Կաֆայում, Ղարասուում, Կեզլևում և հայկական գյուղերում նվիրակություն էր կատարում էջմիածնից եկած Գաբրիել վարդապետը: 1732 թ. Ղրիմում նվիրակություն է անում էջմիածնից ժամանած փառակեցի Միքայել վարդապետը, իսկ 1744 թ. նույն նպատակով Ղրիմ եկած Դանիել աստվածաբան եպիսկոպոսին ղրիմահայ մեծավորներն առաջարկում են դառնալ իրենց թեմակալը: Անկախ նվիրակությունների նպատակներից՝ դրանք նպաստում էին գաղթօջախների և Հայրենիքի միջև մշտական կապերի պահպանմանը, փոխադարձ հաղորդակցմանը:

Ղրիմահայությունը 14–17-րդ դարերում շատ սերտ կապերի մեջ է եղել Լվովի և առհասարակ արևմտաուկրաինական ու լեհական հայկական գաղթների հետ: Լեհահայերն էին, որ 16-րդ դարում ղրիմահայոց համար թարգմանել տվեցին Մ. Գոչի «Դատաստանագիրքը»: 1363 թ. կաֆահայերը կառուցեցին Լվովի հայկական նշանավոր եկեղեցին: Լվովից, Կամենեցից և այլ վայրերից հայ հոգևորականները՝ որպես նվիրակներ, հաճախ այցելում էին ղրիմահայերին: Լվովում ունիթոռների բացած հայկական դպրոցում սովորելու էին գնում նաև ղրիմահայ կաթոլիկների երեխաները:

Ղրիմահայերը մշակութային-եկեղեցական մշտական շփումներ ունեին Կ. Պոլսի և Հայկական Կիլիկիայի հետ: Կ. Պոլսի պատրիարքը մի ժամանակ տնօրինում էր ղրիմահայերի հոգևոր գործերը: 1391 թ. կաֆահայ վաճառականների ծախսերով Կ. Պոլսում կառուցվեց Սբ. Լուսավորիչ եկեղեցին: Կիլիկիայի հայոց կաթողիկոսը Կաֆայում պահում էր իր փոխանորդին, որպիսին էր, օրինակ, Սարգիս վարդապետը՝ 1428-1448 թթ.: 1430-1437 թթ. Ղրիմի հայկական եկեղեցու առաջնորդությունը վարում էր Սսի կաթողիկոսի նվիրակ կարապետը: Դեռևս 14-րդ դարի 20-ական թվականներին Կաֆայում էր գործում Ստեփանոս Սեբաստացի եպիսկոպոսը: Նույն դարի ղրիմահայ գրիչները իրենց ձեռագրերի հիշատակարաններում, ի ճանաչումն հոգևոր և աշխարհիկ իշխանությունների, մշտապես նշում էին Կիլիկիայի հայոց թագավորների և կաթողիկոսների անունները: Կապերը մանավանդ նկատելի էին մանրանկարչության բնագավառում, ղրիմահայ մանրանկարիչների մոտ զգալի էր Կիլիկյան դպրոցի ազդեցությունը:

Տնտեսական գրեթե չընդհատվող առնչակցությունների հետ միասին հոգևոր-կրոնական և մշակութային կապերը Հայաստանի, Հայկական Կիլիկիայի, Լվովի, Կ. Պոլսի և այլ վայրերի հայության հետ ստեղծում էին համազգային կյանքի ու իրադարձությունների իրազեկության մթնոլորտ, ուրեմն և, թեև հայրենիքից հեռու, բայց նրա հոգսերով ու կարիքներով ապրելու, ըստ կարելույն միմյանց օգնության հասնելու կարևորության գիտակցում:

***

Հայաստանից և Հայկական Կիլիկիայից դուրս միջնադարում հայ մշակույթը իր բոլոր դրսևորումներով ոչ մի տեղ այնպիսի արգասաբեր զարգացում չի ունեցել, ինչպես ղրիմահայ գաղթօջախներում: Ասածը անվերապահորեն կիրառելի է և՛ ճարտարապետության ու չինարարական արվեստի, և՛ գրչության ու կրթական գործի, և՛ մանրանկարչության, և՛ հայոց լեզվի զարգացման, և՛ գիտական աշխատությունների ստեղծման և՛ այլ բնագավառների նկատմամբ: Անշուշտ, մշակույթի զարգացումը առաջին հերթին պայմանավորված էր ղրիմահայ գաղթօջախների տնտեսական կացությամբ, ինչպես նաև Հայաստանի, Հայկական Կիլիկիայի և Արևմտյան ու Արևելյան Եվրոպայի հետ նրանց ունեցած բազմաբնույթ կապերով: Հայ մշակույթի զարգացումը Ղրիմում, որը տարբեր ազգերի մի բնակատեղի էր՝ սկսած թաթարներից ընդհուպ մինչև հուդները, ջենովացիներն ու կարաիմները, չէր կարող մեկուսի ընթանալ և չկրել օտար ազդեցություններ կամ էլ՝ չթողնել իր ազդեցությունը օտարների վրա: Եվ սակայն, փոխազդեցություններով հանդերձ, ղրիմահայոց միջնադարյան վեցդարյա մշակույթը տարբեր ազգերի այդ խառնարանում պահպանեց իր ազգային բովանդակությունն ու դիմագծերը, որովհետև

Ղրիմն ինքը, ավելի շուտ՝ նրա հարավ-արևելյան հատվածը, վերածվել էր մի նոր Հայաստանի՝ «Armenia maritima» կամ «Մեծ Հայաստան»:

Թուրք-թաթարական թոհուբոհի պատճառով ղրիմահայ մշակույթի շատ կոթողներ ժամանակին հրի ու սրի ճարակ են դարձել, ոչնչացել: Եվ այդուհանդերձ, այն, ինչ հասել է մեզ ղրիմահայ միջնադարյան մշակույթից, պատկառազդու մի գանձ է, որով կարող է հպարտանալ ցանկացած կուլտուրական ազգ: Հարյուրավոր բազմաբնույթ ձեռագրեր, մանրանկարչական ինքնատիպ գործեր, աշխարհիկ ու հոգևոր գրականության հիանալի ստեղծագործություններ, ճարտարապետական երևելի հուշարձաններ և այլն, – ահա հիմնականում այն ուղղությունները, որոնցով ընթացել է ղրիմահայ մշակույթի զարգացումը 13-18-րդ դարերում:

Ղրիմահայ գրչության և մանրանկարչության կենտրոնները. – Հայ գրիչները ղրիմահայ տարբեր գաղթօջախներում բեղուն գործունեություն են ունեցել: Թեև թուրք-թաթարական «դողման և երերման» պահերին ձեռագրերի մի մասը ևս հրկիզվող եկեղեցիների հետ միասին մոխրի են վերածվել, բայց այդուհանդերձ, մեզ են հասել 14-18-րդ դարերում թերակղզու հայաշատ տարբեր կենտրոններում գրված ավելի քան 300 ձեռագրեր:

Ամենանշանավոր գրչօջախը Կաֆան էր, ուր և ստեղծել է ձեռագրերի պատկառելի մասը: Եվ դա բնական էր, քանի որ այստեղ էին գործում մի քանի տասնյակ հայկական եկեղեցիներ, վանքեր, դպրատներ, ղրիմահայոց մեջ Կաֆահայերը գտնվում էին թե՛ նյութական և թե՛ մշակութային ավելի բարձր մակարդակի վրա, նրանց կապերը անհամեմատ սերտ ու մշտական բնույթ էին կրում ոչ միայն հայկական, այլև եվրոպական կուլտուրական կենտրոնների հետ: Կաֆան առանձնանում է որպես հայ գրչության առանձին դպրոց: Քաղաքում շատ արդյունավետ է եղել Սբ. Սարգիս, Սբ. Երրորդություն, Սբ. Աստուածածին եկեղեցիներում և վանքերում աշխատած գրիչների թողած ժառանգությունը:

Գրչության կարևոր կենտրոններից էր Սուրխաթը: Քաղաքին մերձակա ղրիմահայոց Սբ. Խաչ վանքում, ինչպես նաև Սբ. Աստվածածին, Սբ. Լուսավորիչ և այլ եկեղեցիներում արտագրվել, կազմվել և ծաղկվել են մի քանի տասնյակ ձեռագրեր, որոնց նկատելի մասը պահպանվել է:

Գրչության գործը տարածված էր նաև Ղարասուբազարում, Օրաբազարում, Սուդակում, Բախչիսարայում և այլ տեղերում:

Ղրիմը տվել է մի շարք նշանավոր գրիչներ և ծաղկողներ: Նրանցից էր 14-րդ դարի կեսերի «մեծանուն և բազմարդիւն» գրիչ «քնիկ բաբերդցի» Նաատերը: Նրա հռչակն այնքան հարատև էր, որ 18-րդ դարի ղրիմահայ մի գրիչ Ղրիմը անվանում էր «քնակարան հինն Նաատերանց և իմաստնացեալ գրչաց»: Նաատերից պահպանվել են 10 ձեռագրեր, որոնց մի մասի ծաղկողը նրա որդի Ավետիսն էր: Նաատերն, իրոք, «իմաստնացեալ» գրիչ էր: Նրա հե-

ղինակած հիշատակարանները շատ բովանդակալից տեղեկություններ են պարունակում ժամանակի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի վերաբերյալ: Նատերի գործը առաջ էին տանում նրա չորս որդիները՝ Ավետիսը, Ստեփանոսը, Հովհաննեսը և Գրիգորը: Ամենաբազմաբեղուննը Ավետիսն էր, որը նաև անվանի մանրանկարիչ էր: Ավետիսը շատ հետամուտ է եղել ժամանակի քաղաքական անցքերին և դեռևս 1365 թ., Կուլիկովոյի ճակատամարտից 15 տարի առաջ, հաղորդել է Մամայի գլխավորությամբ Ղրիմում կատարված ասպատակությունների մասին:

Արգասաբեր գործունեություն է ունեցել Գրիգոր Սուքիասանցը Սուրխաթում, ուր նա 20 տարի (1332-1352 թթ.) իրեն նվիրել էր ձեռագրերի ստեղծմանն ու ծաղկմանը: Նրան ժամանակակիցը էր Հովհաննես գրիչը, որը ձեռագրեր էր արտագրում «առ ստորոտով Խրիմ մայրաքաղաքիս», ասել է թե՝ Սբ. Խաչ վանքում կամ էլ Կազարաթում:

Հաջորդ, 15-րդ դարը ևս բեղմնավոր էր ղրիմահայ գրիչների համար: Դարի 20-40-ական թվականներին ձեռագրական արվեստի մեջ աչքի են ընկնում Քրիստոսատուրը, Թադեոս Ավրամենցը և Օգսենտը: Քրիստոսատուրը, որի ընդօրինակած մատյաններից 7-ը պահպանվել են առ այսօր, միաժամանակ Կաֆայի Սբ. Անտոն վանքի առաջնորդն էր: Նրա ընդօրինակած ձեռագրերի թվում է Ներսես Շնորհալու բանաստեղծությունների ժողովածուն:

Սբ. Անտոնի վանքում այս նույն ժամանակ ուշագրավ գործունեություն էր ծավալել Թադեոսը, որն ունի նաև ինքնուրույն գործեր: Օրինակ, «Հաբանից վարքը», որը նա կազմում է «զլաւագոյնն ընտրելով և զճշմարտագոյնսն խազելով և համառոտն թողեալ՝ զկատարեալ պատմութեան հետևելով»[1]:

Կաֆայի անկումից հետո ղրիմահայ մշակույթի հետ միասին ընդհանուր անկում է ապրում նաև գրչությունը: Եվ միայն 16-րդ դարի կեսերից գրչությունը սկսում է կրկին վերընթաց ապրել: Միայն Երևանի Մատենադարանում պահպանվող ղրիմահայ 238 ձեռագրերից 170-ը ստեղծվել են 17-18-րդ դարերում: Այս շրջանում Կաֆայի կողքին, որպես գրչության օջախ, առաջնակարգ դեր է ստանձնում նաև Ղարասուբազարը: 17-րդ դարի Կաֆայի նշանավոր գրիչներից էին Նիկողայոս Մելանավորը (նկարիչը), որից պահպանվել է 20 ձեռագիր, Զաքարիան՝ 13 ձեռագիր, Հովակիմը՝ 6 ձեռագիր, Խասպիկ Երեցը՝ 15 ձեռագիր: 18-րդ դարի կաֆահայ գրիչներից պահպանվել են Դավիթ Երեցից՝ 10, Գրիգոր Երեցից և Քրիստոսատուրից՝ 11-ական ձեռագրեր և այլն:

Ղրիմահայ տաղասացները. Տաղասաց-տաղերգուների ստեղծագործությունը մայրենի գեղարվեստական խոսքի ամենատարածված ժանրն էր

[1] Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա., էջ 400:

միջնադարում, որը 15-18-րդ դարերում Ղրիմի գաղթօջախներում ևս բավական բարձրարժեք դրսևորումներ ունեցավ:

Տաղերգուները, թեև գրեթե բոլորը հոգևոր դասից էին, բայց նրանց ստեղծագործության մեջ աշխարհիկ թեմատիկան իր արժանի տեղն է գրավել: Պանդխտության, մարդկային և բնության սիրո երգերը մի քանի տաղերգուների մոտ գեղարվեստական բարձր կատարելության են հասցված: Առևտրաարհեստավորական և գյուղական ռամիկ խավերից կազմված ղրիմահայ գաղթօջախների համայնքները աշխարհիկ կյանքով էին ապրում, և նրանց դիվարճասեր ու աշխատասեր, բայց նաև վշտալի նիստ ու կացը չէր կարող իր ազդեցությունը չթողնել տաղերգուների ստեղծագործության վրա: Տաղերգուները արտացոլում էին այն ցավերն ու զգացմունքները, որոնք սրտամոտ էին լայն զանգվածներին:

Ղրիմում ևս հայ գրականության աշխարհականացումը սկսվեց 17-րդ դարում: Դրա փայլուն դրսևորումն էին Ներսես Կաֆայեցու (15-րդ դար) Խասպեկ երեցի (1610-1686), Սիմոն Կաֆայեցու (17-րդ դ. 2-րդ կես), Ստեփանոս Կաֆայեցու (17-րդ դ. 2-րդ կես), Մարտիրոս Ղրիմեցու (մահացել է 1683 թ.) և այլոց ստեղծագործությունները:

Տաղասացների ստեղծագործություններից պարզ երևում է, որ դրանք հորինված են ժողովրդին հասկանալի լեզվով, և Ղրիմում ևս 17-րդ դարից սկսած կատարվել է հայոց լեզվի ժողովրդականացում, հանգամանք, որը իր հաստատումն է գտել այնտեղ գրված տաղերի պարզ ու անպաճույճ լեզվում: Հայերենը գաղութի սկզբնավորումից ի վեր, ավելի քան վեցհարյուրամյա երկար ու ձիդ տարիներին, Ղրիմում պահպանեց իր գոյությունը, այն հարատևեց նաև ղրիմահայության նոր բնակավայրում՝ Նոր Նախիջևանում:

Հայոց լեզվի հարցերը առհասարակ միշտ մտահոգել են ղրիմահայ մտավորականությանը: Դեռ 14-րդ դարում, թաթար-ջենովական շրջապատման պայմաններում, ուսումնասերներին գրագետ դարձնելը այստեղ համարվում էր կարևոր խնդիր: 1357 թ. Կաֆայում նշանավոր գրիչ և մտածող Ստեփանոսը հենց այդ նպատակով արտագրում է Վարդան Կիլիկեցու քերականությունը: Ձեռագրի հիշատակարանում նա բացատրում է քերականության նշանակությունը, խստիվ խարազանում մեծամիտ տգետների «բրտավզությունը» այսինքն՝ պնդաճակատությունը: Այս աղերսով Ստեփանոսը գրել է «Սա է քանոն և գաղափար ամենայն արհեստից, ևս առաւել որք, փութան ձեռնարկել յարեստս գրչութեան: Զի որպէս անհնար է թռչնոց ի լուծ լծել և ակաւս պատառել ... նոյնպէս առանց աշխատելոյ ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին գրչութեան. և որ յանդգնի համարձակել՝ ոչ կարէ գրել զճշմարիտն, այլ եղծանէ զարուեստն և աղաւաղէ զգրելին»: Եվ ապա, կարծես

կանխատեսելով նաև նրանց, ովքեր արհամարում են մայրենի լեզվի կանոնները, Ստեփանոսը ավելացնում է. «Բայց են ոմանք, որ ծաղր առնեն զգիրս զայս, որպէս և է մեր ազգիս հպարտութիւն և բրտաւզութիւն: Զի որպէս մարգարիտ ի քիթս խոզի, մանաւանդ ոսկի ի պարանոց իշոյ, այնպէս է սա ի ձեռն անիմաստ և անմիտ առնն, այլ որ արբի սիրոյ սորին, նա միայն գիտէ զճաշակ քաղցրութեան դորա»[1]:

Կաֆահայերը ստեղծել էին նաև ինքնուրույն քերականական աշխատություններ: Մեզ է հասել, օրինակ, «Ժողովածու քերականական նիւթերի» ձեռագիրը, որն արժանացել է Թովմա Մեծոփեցու ուշադրությանը:

Գիտությունը: Միջնադարին բնորոշ գիտության առանձին ճյուղեր ղրիմահայ գաղթօջախներում եղել են մշտական ուշադրության առարկա: Դրանց թվում էին աստվածաբանությունը, փիլիսոփայությունը, հռետորական արվեստը, բժշկագիտությունը, տոմարագիտությունը, պատմագիտությունը: Գիտության զարգացման ամենանշանավոր կենտրոններից էին Ղրիմի Սբ. Խաչ և Կաֆայի Սբ. Անտոնի վանքերը:

Ուշադրության կենտրոնում էին աստվածաբանական-փիլիսոփայական հարցերը: Կաֆացի Ֆրա Հակորը, օրինակ, 1348 թ. գրում է. «Իմաստասիրութիւնք» վերնագրով մի աշխատանք՝ ներառնելով Դ. Անհաղթի փիլիսոփայությունը: Նույնն է անում Մաղաքիան 1371 թ.: Ղրիմահայ գրիչների և իմաստասերների հետաքրքրությունների կենտրոնում էին Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Նարեկացու, ինչպես և հույն մտածողների աշխատությունները:

Տոմարագիտության բնագավառում ևս ղրիմահայերը ունեին իրենց աչքի ընկած ներկայացուցիչները: Հայտնի տոմարագետ էր Հակոբ Ղրիմեցին: Քանի որ շատ տոմարատետրեր «յետ և յառաջ շարագրեալ էին», Հակոբ Ղրիմեցին հարկադրված է եղել 1416 թ. համեմատել և կազմել նորը՝ «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը: Նույն դարի 40-ական թվականներին տոմարագիտության ասպարեզում իր ներդրումն է կատարում կաֆացի հայտնի գրիչ Օգսենտը՝ 1445 թ. կազմելով իր «Տոմարատետրը»: Տոմարագիտության ասպարեզում շարունակելով իր նախորդներին՝ հետաքրքիր քայլ է կատարում տաղասաց Վարդան Կաֆայեցին: 1676 թ. Կաֆայում նա կազմում է չափածո տոմարական մի ձեռնարկ, որը ընդգրկում էր տոմարական բոլոր հաշվարկները:

Հայերը Ղրիմում ճանաչված էին որպես հմուտ բժշկագետներ, նրանց էր խանը վստահում իր հիվանդությունների բուժումը, հանգամանք, որ վկայում է նրանց մոտ բժշկագիտության զարգացման որոշակի մակարդակի մասին: Հակոբ Ղրիմեցու գրչին էր պատկանում, օրինակ, «Լուծմունս

[1] Մատենադարան, ձ. N°2371, թ. 292 ա, թ:

մարդակազմութեան» աշխատությունը: Ղրիմահայ մի շարք ձեռագրերի հիշատակարաններ տեղեկություններ են հաղորդում բժշկագիտության ասպարեզում տեղի հայերի կատարած գործերի մասին, որոնք, ցավոք, մեզ չեն հասել:

Պատմագիտական բնույթի գործեր: Այս բնագավառում առանձնակի նշանակություն ունեն ղրիմահայ ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև զուտ պատմական բնույթի գործերը: Հիշատակարանների հեղինակ գրիչները դեպքերի և անցքերի սոսկական նկարագրողները չեն, նրանք շատ հաճախ նաև դրանց մեկնաբաններն են: Թաթարական ասպատակություններ, դրանց կազակների տված պատասխան հարվածներ, Ղրիմ եկած հայ գաղթականական նոր հոսանքներ, հայերի կրած նյութական և բարոյական անկուր զրկանքներ, եկեղեցական շինարարություն, կրոնական և դավանաբանական հակամարտություններ, հայ-թաթարական և հայ-ջենովական հարաբերություններ և շատ ու շատ այլ հարցեր մտահոգել են հիշատակարանների ու տարեգրությունների հեղինակներին, որոնք դրանց մասին իրենց հաղորդած տեղեկություններով դառնում են ժամանակի անցքերի պատմաբանը: Բազմարդյուն Ավետիսը (1365 թ.), օրինակ, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ղրիմում Մամայի գլխավորած երկպառակտչական գժտությունների, իսկ Հովհաննեան ու Մկրտիչը (1384 թ.)՝ տեղի ջենովական իշխանությունների հետ ունեցած հարաբերությունների մասին: Գրիչ Ստեփանոսի հաղորդմամբ (1363 թ.) Սուրխաթի քաղաքապետ թաթար իշխանը, քաղաքը փոսով շրջապատելու պատճառով, բազմաթիվ տներ հիմն ի վեր ավերել էր, իսկ թաթարական ավագանու հակամետ ուժերը (1371 թ.) «ի գումարի գոլով... զմիմեանս սատակէն», և «գերեալք և վայրատեալք» հայերը «ի վայրս նժդեհութեան» կրկին կողոպտվում են: Գրիչ Սիմեոնի հաղորդմամբ, Ոսկե Հորդայի խան Ճալալատինը 1412 թ. գալիս, գրավում է Սուրխաթը, իսկ հաջորդ տարի թաթարները պաշարում են Կաֆան «և յամէն աւր աստուածաստաստ բարկութիւն ու կռիւ ու արիւնահեղութիւն էր ի վերայ քրիստոնէիցն»: Հույժ ուշագրավ է կաֆացի գրչի՝ Ավետիքի 1456 թվականի տեղեկությունը, ըստ որի, Թուրքական Մահմեդ 2-րդ սուլթանը պաշտոնանկ էր արել Հաճի Գիրեյ խանին՝ հուրախություն սուրխաթցիների:

Ավելի ընդարձակ տեղեկություններ, պատմական անցքերի լայն ու մանրամասն նկարագրությամբ ու լուսաբանմամբ, պարունակում են 17-րդ դարի հիշատակարանները (հատկապես Ստեփանոս Թոխատեցունը) և մանավանդ Խաչատուր Կաֆայեցու (Խաչգռուզի) «Տարեգրությունը», Դավիթ գրիչի հիշատակարանը, որը փաստորեն ղրիմահայոց պատմության չարագրանքն է, Մարտիրոս Ղրիմեցու գրած ղրիմահայոց չափածո պատմությունը և այլ գործեր:

1690 թ. Ղրիմում արտագրած «Ճայսմաւուրքի» մեծադիր յոթ էջերում[1] Դավիթ գրիչը փորձել է տալ ղրիմահայոց պատմությունը 11-րդ դարից մինչև իր օրերը: Քննական մոտեցմամբ, իտալական և հայկական աղբյուրների տեղեկությունների հետ համեմատելու լույսի տակ, Դավթի պատմություն-հիշատակարանը իր հիմնական հատվածներում ճշմարտապատում է և հույժ արժեքավոր: Դավթից 18 տարի առաջ նույն բանն է արել Մարտիրոս Ղրիմեցին իր «Պատմութիւն Ղրիմայ յերկրի» տաղում[2]: Մ. Ղրիմեցու ասելով՝ նրա պատմության համար հիմք են ծառայել բանավոր զրույցները: Բայց իրողությունն այլ է. ինչպես Դավիթ գրչի պարագայում, Մ. Ղրիմեցուն ևս հասու չեն եղել իտալական և հայկական աղբյուրներում սփռված նյութերը, որոնք, սակայն, ժամանակին դարձել են բանավոր զրույցների առարկա և դրանց միջոցով մտել նրանց գործերը:

Ճարտարապետությունը. Ղրիմահայերը ճարտարապետական հոդևոր ու աշխարհիկ տասնյակ ու տասնյակ հուշարձաններ են կառուցել Կաֆայում, Սուրխաթում, Աքմեչեթում, Սուդակում, Արմյանսկի Բազարում, գյուղական մի շարք վայրերում և այլուր: Դրանցից մեզ են հասել համեմատաբար քչերը՝ մեկ տասնյակից մի փոքր ավելի հուշարձաններ:

Ղրիմահայոց հուշարձանների մեջ ամենանշանավորը, անշուշտ, Սուրբ Խաչ (Հնում նաև Սուրբ Նշան) վանքն է՝ իր եկեղեցով: Կառույցը գտնվում է Հին Ղրիմ (Սուրխաթ) քաղաքից 4 կմ հեռավորության վրա, անտառապատ ձորալանջին: Տաճարը կառուցվել է 1358 թ.՝ սատարությամբ Հովհաննես կրոնավորի «եւ հարազատ եղբարց նորին», – հաղորդում է շենքի գմբեթը գոտող չինարարական արձանագրությունը: Կառույցն ունի գավիթ և կից կամարակապ երկու շենք: Հուշարձանի ճարտարապետությունը հարազատ է մնացել Հայաստանի համանման կառույցների ձևին ու ոճին:

Թեոդոսիայի երբեմնի արդելանոցում կանգուն վիճակում են գտնվում չորս հայկական եկեղեցիներ: Դրանցից մեկը Հովհաննես Մկրտչի եկեղեցին է, որը կառուցվել է 1348 թ.: Իր կառուցողական համալիրով այն հարազատ է 13–14-րդ դարերի հայկական ճարտարապետությանը: Եկեղեցին հատկապես հայտնի է իր բարձրաքանդակներով՝ բեմի կիսաշրջանաձև ելուստի կողմից: Դա 12 սրբեր պատկերող մի անսամբլ է, որոնց մեջտեղում Քրիստոսն է: 1970–1980 թթ. եկեղեցու հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել են խաչքարերով և քանդակներով զարդարված սալաքարեր, որոնցից ամենամեծը (210×62 սմ) ժամանակին զարդարել է եկեղեցու հյուսիսային մուտքը: Այդ սալաքարի վրա քանդակված են բուսական զարդերով պատված 15 խաչքարեր:

[1] Մատենադարան, ձ. 7442, թ. 280 ա– 283 ա:

[2] **Մարտիրոսյան Ա.Ա.**, Մարտիրոս Ղրիմեցի, Եր., 1958, էջ 142–152:

Թեոդոսիայի պարիսպների ներսում՝ ջենովական միջնաբերդի տարածքում է գտնվում Գաբրիել և Միքայել հրեշտակապետերի եկեղեցին, որը կառուցվել է 1408 թ.: Զնայած եկեղեցին պատկանել է հայ կաթոլիկական համայնքին, որի համար էլ թույլ է տրվել այն այստեղ կառուցել, բայց իր ճարտարապետությամբ լիովին հայկական է, խոր արմատներով կապված նրա հետ: Ուրեմն, կաթոլիկությանը հարած հայերը վերջինիս զիջումներ չէին անում ոչ միայն ծեսի ու եկեղեցական գրականության, այլև ճարտարապետության հարցերում:

Կաֆայի և առհասարակ ղրիմահայ պահպանված ամենահին հուշարձանը, թերևս, Սբ. Սարգիս եկեղեցին է: Պատմահամեմատական նյութերը աներկբա վկայում են, որ այն կառուցվել է 13-րդ դարի կեսերից, այսինքն, ջենովացիների՝ այստեղ հաստատվելուց շատ առաջ, քաղաքի միջնաբերդի տարածքում, որտեղ, ըստ 1316 թ. կանոնադրության, «Հնուց ի վեր գտնվում էին հույների, հայերի և ռուսների եկեղեցիները և այդ եկեղեցիների վանքերը»[1]: Հայտնի է, որ ջենովացիների՝ Կաֆայում հաստատվելուց հետո (13-րդ դ. 60-ական թվականներ) միջնաբերդի տարածքում (Գրենկ հիսարում) այլազգիներին թույլ չի տրվել կառույցներ կառուցել: Դժվար չէ նկատել, որ «Հնուց ի վեր» նշանակում է 1260-ական թվականներից շատ առաջ: Հարկավ, եկեղեցին շատ փոփոխությունների է ենթարկվել, վերջին փոփոխությունները կատարվել են 1965–1966 թթ.՝ կառույցի պահպանությունը հուսալի դարձնելու համար:

Թեոդոսիայի արդելանոցի եկեղեցիներից է նաև Սբ. Ստեփանոսը: Դա բարձրադիր և կամարշեն, ոչ մեծ չափսերի մի շինություն է՝ 1491 թ. կառուցված աղբյուր-հուշարձանով: Բուն եկեղեցին, շատ հավանական է, կառուցվել է 14-րդ դարի երկրորդ կեսին:

Հայկական նկարագրված և մյուս եկեղեցիները, ծավալաճարտարապետական տարբերությունների հետ միասին, ունեն նաև շատ ընդհանրություններ. որպես կանոն՝ եկեղեցին բաժանված է երկու մասի՝ խորանին մոտ ընկած բուն տաճար և դրանից անջատ գավիթ, որտեղ հավաքված ծխականները միայն դռներից կարող էին դիտել արարողությունները: Նշենք նաև, որ Ղրիմը Ռուսաստանին միացնելու տարում՝ 1783 թ., միայն Կաֆայում կար 22, իսկ հայ տաղաչափ Հավաստի տվյալներով՝ ավելին. նա անվանապես նշում է 24 հայկական եկեղեցիներ և քաղաքում դրանց գտնվելու վայրը.

Քէֆէ, կասեն, մեծ քաղաք է.
Թագաւորած հաստատած է,
Քսանչորս եկեղեցի է.

[1] Monumenta historiae patriae, Impositio officii Gazariae, t. II, 1838, p. 407-408.

Քարերն ամեն սրբատաշ է.
ՔէՖէ քաղաք ծուահայեաց.
եկեղեցիքըն զարդարած[1]:

Հայկական ճարտարապետական մի գեղեցիկ կոթող է Բախչելի (այժմ՝ Բոգատոյե) գյուղին մերձակա գտնվող Սբ. Փրկիչ վանքի կառույցը, որը քարաշեն, կամարակապ, երեք դռնանի տաճար է, ունի Աստվածամոր պատկերով զարդարված խորան: Տաճարը 14-րդ դարի կառույց է: Ոչ մեծ ծավալի մի եկեղեցի էլ պահպանվել է երբեմնի հայկական Թոփլի (այժմ՝ Տոպոլևկա) գյուղին մերձակա բլրի վրա. այն ևս, հավանաբար, կառուցվել է 14-րդ դարի երկրորդ կեսին:

Ղրիմահայերի շինարարական գործունեությունը ընդգրկել է նաև պաշտպանական կառույցներ, որոնց մեջ ամենանշանավորը Կաֆայի հայկական պարիսպն էր՝ Հայոց բերդը: 14-րդ դ. Կաֆա եկած հայ բնակչությունը հաստատվում է քաղաքի արվարձաններում, ջենովական պարսպից դուրս: Հայերն իրենց պարսպի շինարարությունը սկսել են 14-րդ դարում, ապա ընդհատումներով չարունակել և ավարտել միայն 15-րդ դարում: Հայոց բերդը գտնվորում էր ջենովացիների Ֆրենկհիսար թաղամասը և, սկսվելով հարավային ծովածոցից, հասնում էր մինչև քաղաքի հյուսիսային կողմը: Հայկական պարիսպը կառուցվել է ամբողջ համայնքի ուժերով՝ ըստ յուրաքանչյուրի կարողության: Պարիսպը չարված է չափածո քարերից, այն ունի մեկը մյուսից 20, 40 և 60 կանգուն հեռավորության վրա գտնվող գոթական աշտարակներ: Պարիսպը գոտում էր 25 քայլ լայնությամբ խրամը: ԵՒս այսօր պարսպից պահպանվել են առանձին հատվածներ:

Հարավ-արևելյան Ղրիմում, որտեղ խմելու ջրի մատակարարումը հնուց մինչև օրս լուրջ խնդիր է եղել, հայերը ջրաշինարարական լայն գործունեություն են ունեցել: 1316 թ. ջենովական կանոնադրության «Հայերի եպիսկոպոսի ջրմուղի ջրի ուղղությունը չչեղելու մասին» հոդվածից երևում է, որ այդ ջրմուղի ջուրը օգտագործվել է միայն Կաֆայում և նրան հնթակա վայրերում: Կանոնադրությունը սպառնում էր 3000 բալիքատ տուգանքի հնթարկել նրանց, ովքեր կհանդգնեին փոխել հայոց անցկացրած ջրմուղի ջրի ուղղությունը:

15-րդ դարում հայերը մի ջրմուղ էլ կառուցել են Կաֆայից 12 կմ հեռավորության վրա գտնվող Դվույակորնի ծովածոցում՝ խնդիր ունենալով տեղի վանքը մատակարարել խմելու ջրով: Նրանք ջրմուղներ են կառուցել նաև թերակղզու այլ մասերում: Ջրմուղները կառուցվել են շինարարական մեծ հմտությամբ՝ սարալանջերի տարբեր տեղերից խմելու ջրի բարակ շիթերը հիմ-

[1] Մատենադարան, ձ. N°2939, թ. 468-470:

նական մայրուղու մեջ հավաքելու և ապա հավաքված ջուրը ջրամբար մղելու սկզբունքով:

Ղրիմահայոց հինարար վարպետները, հարազատ մնալով հայրենի ավանդույթներին, թերակղզու հայաբնակ վայրերում կառուցել են բազմաթիվ աղբյուր-հուշարձաններ, կանգնեցրել խաչքարեր:

Կրթօջախները. *սրանք գործում էին վանքերին, մասամբ էլ եկեղեցիներին առընթեր: Դրանցում գիտելիքներ էին տրվում կրոնագիտությունից, աստվածաբանությունից, քերականությունից, տոմարից, համարողական արվեստից (թվաբանությունից), ճարտասանությունից, գրչությունից, մանրանկարչությունից, փիլիսոփայությունից՝ նայած թե ովյալ պահին կրթօջախը ինչ դասավանդողներ ուներ:*

Փիլիսոփայության ուսումնասիրման կարևոր դպրոց էր Կաֆայի Սբ. Անտոն վանքը, որը գործել է 1425-1475 թթ.: Այստեղ փիլիսոփայությունը ուսումնասիրում էին նշանավոր Սարգիս վարդապետի գլխավորությամբ: 1428 թ. ունկնդիրները լսում էին նրա դասախոսությունները Արիստոտելի և Պորփյուրի փիլիսոփայության վերաբերյալ, իսկ հաջորդ տարում ուսումնասիրում են Դավիթ Անհաղթի, Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու հայացքները:

Սբ. Անտոնի դպրատանը առանում էին նաև գիտելիքներ երաժշտությունից, կազմում խազտետրեր:

Իսկական դպրատուն էր Սուրբ Խաչ վանքը: 14-18-րդ դարերում այստեղ գրչություն, մանրանկարչություն, թվաբանություն, տոմարագիտություն և այլ առարկաներ էին ուսուցանում ղրիմահայ և Հայաստանից եկած կրթյալ վարդապետները: Դպրատներ կային նաև Կաֆայի, Սուրխաթի, Ղարասուբազարի և այլ վայրերի վանքերում և եկեղեցիներում:

Բ. Նոր շրջան (1800–1917 թթ.)

18-րդ դարի 70-ական թվականների վերջերին միջնադարի ղրիմահայ գաղթօջախները, 600-ամյա գոյատևումից հետո, հեռացան պատմության թատերաբեմից: 1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո անկախ հռչակված Ղրիմը ռուսական կայսրությանը միացնելու համար եկատերինա 2-րդի կառավարությունը մի ամբողջ տասնամյակ (1774–1783 թթ.) դիվանագիտական և ռազմական միջոցներով դիմակայեց Թուրքիայի ոտնձգություններին: Հենց այդ պատճառով 1777 թ. ռուսական զորքերը կրկին մտան Ղրիմ: Ղրիմը Ռուսաստանին միացնելու միջոցառումների շարքում ռուսական արքունիքը կարևոր նշանակություն տվեց քրիստոնյա բնակչությանը թերակղզուց դուրս հանելու խնդրին, մի խնդիր, որի իրականացմամբ Ղրիմի խանը, զրկվելով իր հարկատու հիմնական դասերից, ընկնում էր ֆինանսական կախման մեջ ռուսական արքունիքից և դառնում վերջինիս կամակատարը: 1778 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին խանի համաձայնությամբ և ռուսական կառավարության ծախսերով Ղրիմից դուրս բերվեցին նրա հնամենի բնակիչները՝ հույները և հայերը, թվով ավելի քան 31 հազար մարդ: Ղրիմի 15 քաղաքներից և գյուղերից արտագաղթեցված հայերի թիվը հավասար էր 12598 հոգու: Այս հայերն էին, որ մեկ և կես տարի դեգերումներից հետո, 1779 թ. վերջերին տեղափոխվեցին Դոնի շրջան և հիմնադրեցին Նոր Նախիջևան քաղաքը և նրան մերձակա հինգ հայկական գյուղերը:

Սակայն Ղրիմը Ռուսաստանին միացնելուց (1783 թ.) հետո ռուսական կառավարությունը ստիպված էր ուղղել իր սխալը և միջոցներ ձեռնարկել թերակղզին կրկին քրիստոնյաներով բնակեցնելու համար: Թեոդոսիան հայտարարվեց պորտո-ֆրանկո, հողատարածություններ հատկացվեցին Զերնիգովի և Վորոնեժի նահանգներից եկած վերաբնակիչներին, իսկ Ղրիմը օտարերկրացիներով բնակեցնելու մասին 1798 թ. ընդունված մանիֆեստը նրանց իրավունք վերապահեց գալ Ղրիմ և հաստատվել թերակղզու ցանկացած տեղում, բացի Սևաստոպոլից:

Նման պայմաններում թե՛ արևմտահայերը և թե՛ նախկին ղրիմահայերը ևս ձգտում են հաստատվել Ղրիմում, մանավանդ, որ նրանց համար նեցուկ էին այն երկու հազար հայերը, որոնց, այնուամենայնիվ, հաջողվել էր տարբեր պատճառներով և առիթներով խուսափել 1778 թ. արտագաղթեցումից և մնալ Ղրիմում:

Ղրիմահայ գաղութի վերստեղծման առաջնությունը պատկանում էր հայ կաթոլիկական համայնքին, 1779 թ. Ղրիմից արտագաղթեցված այս համայնքը, սակայն, չտեղափոխվեց Դոնի շրջան և մնաց Եկատերինոսլավ 1-ի-

նում (հետագայում Նովոմոսկովսկ): 1787 թ. համայնքի ներկայացուցիչները դիմում են Գ. Ա. Պոտյոմկինին՝ Ղրիմ (Ղարասուբազար) վերադառնալու խնդրանքով: Նրանց խնդրանքը կապված չէր տնտեսական և վարչական կարգի դժվարությունների հետ և համահնչյուն էր Ղրիմը բնակեցնելու կառավարական նոր կուրսին: Հայ կաթոլիկական համայնքի հետ Ղրիմ էին վերադառնում նաև այդ համայնքի դատարանի իրավասության տակ գտնվող լուսավորչական հայերը և հույները: Ընդհանուր հաշվումներով՝ 1790 թ. Ղրիմ վերադարձավ 1000 հոգի, մինչև 1800 թվականը համայնքը համալրվեց ևս 253 հոգով:

Ղրիմում հայերի վերահաստատմանը 1790-ական թվականներին մեծապես աջակցում է ռուսահայ թեմի առաջնորդ Հ. Արղությանը: Այս առիթով ռուսական բարձրագույն իշխանություններին նրա քանիցս արած դիմումները վերջապես արտահայտություն են գտնում 1799 թ. հոկտեմբերի 28-ի կայսերական հրովարտակում. ըստ այդմ, առաջին՝ հայերին թույլ էր տրվում հաստատվել Հին Ղրիմ քաղաքում: Երկրորդ՝ Թեոդոսիայում հավաքված հայերին էին տրվում մի շարք հայկական եկեղեցիներ: Երրորդ՝ Սուրբ խաչ վանքին էին հատկացվում նրան մերձակա հողերը: Չորրորդ՝ հայերին շնորհվում էր դասականքի ազատություն, հոգևոր գործերով նրանք ենթարկվելու էին Էջմիածնի Մայր աթոռին և Ռուսաստանում նրա ներկայացուցչին: Հինգերորդ՝ Հին Ղրիմ քաղաքը հայերի կողմից բնակեցնելուց և քաղաքին 12 հազ. դեսյատին հող հատկացնելուց հետո քաղաքում հիմնվելու էր հայկական դատարան (ռատուշա), որտեղ արտոնվում էր հայերեն լեզվով և հայկական օրենքներով լսել դատական, հայցային և այլ բնույթի գործեր: Վեցերորդ՝ հայերը դասվում էին պետական բնակիչների շարքը և ստանում տնտեսական զարգացման լայն հնարավորություններ. 10 տարի ժամանակով ազատվում էին հարկերից ու տուրքերից, որից հետո վաճառականները տարեկան 1 տոկոս վճարելու էին գրամադլխից, քաղաքաբնակներն ու արհեստավորները՝ ծախարկ՝ 2 ռուբլի, իսկ գյուղացիները, որոնցից յուրաքանչյուրին տրվում էր 30 դես. հող, յուրաքանչյուր դեսյատինի դիմաց վճարելու էին 5 կոպ.: Հայերն ազատվում էին զինակոչից և օթևանահարկից: Յոթերորդ՝ հայերն ստանում էին առևտրով և արհեստներով զբաղվելու լիակատար ազատություն, կարող էին հիմնել ֆաբրիկաններ, պաղատու այգիներ, թորել գինի և ֆրանսիական օղի: Ութերորդ՝ հոդվածը երաշխավորում էր հրովարտակի կատարումը. զինվորական ու քաղաքացիական իշխանություններին այն հանձնարարում էր օժանդակել Հին Ղրիմի հայերին՝ օգտվելու հրովարտակով շնորհվող արտոնություններից:

1805 թ. կազմվում է Հին Ղրիմ (երբեմնի հայկական Սուրբխաթ) հայկական քաղաքի հատակագիծը, քանի որ այստեղ պետք է հավաքվեին Ղրիմ եկած ու եկող բոլոր հայերը: 1808 թ. քաղաքում հայկական ռատուշայի (քա-

զաքապետարանի) բացվելուց հետո նրա բնակեցումը հայերով գնալով կանոնավորվում է: 1810 թ. այնտեղ արդեն ապրում էին 1307 հայեր և հայկական ռատուշային ենթակա 333 այլազգիներ: Հայերը քաղաքում արդեն կառուցել էին 165 տուն, 4 իջևանատուն, 95 կրպակ, 6 սրճարան և այլն[1]*:*

Որքան Հին Ղրիմը առաջադիմում էր, այնքան ավելի էր զորանում ղրիմահայոց ճգտումը տեղափոխվելու այնտեղ: 1810–1820-ական թվականներին թերակղզու տարբեր քաղաքներից և հատկապես Ղարասուբազարից հայերը զանգվածաբար դիմում էին քաղաքի հայկական ռատուշային՝ այնտեղ տեղափոխվելու և նրա իրավասության տակ մտնելու խնդրանքով: 19-րդ դարի առաջին կեսին Հին Ղրիմ քաղաքի և առհասարակ Տավրիկյան նահանգի հայ բնակչության շարքերը համալրում էին ոչ միայն նորնախիջևանցիները, այլև Թուրքիայից, Մոլդովիայից և Կովկասից Ղրիմ անցած հայ գաղթականական զանգվածները:

Հովհաննես Այվազովսկու հուշարձանը Թեոդոսիայի իր պատկերասրահի մոտ

[1] Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 8, л. 2, д. 95, л. 24.

Նոր շրջանի ղրիմահայոց մեջ նկատելի թիվ էին կազմում Նոր Նախիջևանից և նրա գյուղերից այլևայլ ուղիներով և առիթներով ու պատրվակներով Ղրիմ վերադարձած հայերը: Սրանց հարցով շուրջ 25 տարի զբաղվում էին Տավրիկիայի և Եկատերինոսլավի նահանգական ու տեղական իշխանությունները, Նախիջևանի քաղաքային մագիստրատն ու Հին Ղրիմի հայկական ռատուշան, Նովոռոսիայի գեներալ նահանգապետն ու կառավարիչ սենատը: Խնդիրն այն է, որ զգալի թվով նորնախիջևանցիներ Ղրիմ էին փախչում, հատկապես, տնտեսական ազդակների հետևանքով, քանի որ Դոնի շրջանը, մանավանդ սկզբնական շրջանում, տնտեսական զարգացման հնարավորություններով շատ էր գիշում Ղրիմին: Սկսած 1790 թ. մինչև 1814 թ. Եկատերինոսլավի կառավարչությունն ու Նոր Նախիջևանի մագիստրատը, ելնելով հարկերը գանձելու և պետական ծախսերը մարելու խնդրից, անընդհատ պահանջում էին փախստականներին հետ վերադարձնել, մինչդեռ տավրիկյան իշխանություններն աշխատում էին պատճառաբանություններ գտնել փախստական նախիջևանցիներին Ղրիմում գրանցելու համար:

Վերջապես, 1814 թ. օգոստոսին կառավարիչ սենատի որոշումը հանձնարարում էր Հին Ղրիմ քաղաքում թողնել 234 նորնախիջևանցի հայ ընտանիքներ, այսինքն՝ մոտավորապես 1200 մարդ, պարտավորեցնելով Ղրիմ անցած մյուս նորնախիջևանցիներին հետ ուղարկել: Սակայն այս վերջինները, վայելելով Ղրիմի իշխանությունների աջակցությունը, չէին էլ մտածում վերադառնալ Նոր Նախիջևան, և հենց նրանք էին, որ մյուս բնիկ ղրիմահայերի՝ հայ կաթոլիկների և մյուս թուլլտվություն ստացածների հետ միասին դրեցին նոր շրջանի ղրիմահայ գաղթօջախների հիմքերը:

Ղրիմահայության մեջ 19–20-րդ դարերում նկատելի թիվ էին կազմում արևմտահայերը, որոնք Ղրիմ էին տեղափոխվում Թուրքիայում գոյություն ունեցող անտանելի պայմանների հետևանքով: Մյուս կողմից՝ արևմտահայերի շարժը դեպի Ղրիմ կապված էր այն բարենպաստ վիճակի հետ, որից օգտվում էին նրանց հայրենակիցները ռուսական կայսրության մեջ: Արևմտահայերին հրապուրում էին մանավանդ առևտրի, արհեստագործության, այգեգործության ու շերամապահության զարգացման համար թերակղզու վրա առկա նյութական հնարավորությունները: Արդեն 1790-ական թվականների կեսերին Ղարասուբազարում հանդիպվան էին գտել 200 հայ ընտանիքներ: Ամբողջ 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին տասնամյակներին արևմտահայերը մեծ ու փոքր խմբերով գաղթում էին Թեոդոսիա, Հին Ղրիմ, Ղարասուբազար, Սիմֆերոպոլ և այլ քաղաքներ: Նրանց մի մասը, ընդունելով ռուսահպատակություն, դառնում էր Ղրիմում մշտաբնակ, իսկ մի մասն էլ, թեև պաշտոնապես դիմումներ չէր անում ռուսահպատակություն ընդունելու մասին, սակայն չէր էլ մտածում հեռանալ թերակղզուց և փաստորեն նույնպես մշտաբնակ էր: 1897 թ. համառուսական առաջին մարդահամարի տվյալներով, Տավրիկյան

նահանգում ապրում էին 8933 հայեր: Սակայն նշված տվյալը չի արտացոլում ղրիմահայոց թվաքանակի իրական պատկերը, քանի որ ղրանից դուրս են մնացել ռուսահպատակության վերաբերյալ դիմումներ չարած, բայց Ղրիմում մշտապես բնակվող հայերը, որոնք այստեղ առևտրաարդյունաբերական և գյուղատնտեսական հաջող գործունեություն էին ծավալել և չէին էլ մտածում թերակղզուց երբևէ հեռանալու մասին: Այդպիսիները, թերևս, կազմում էին ղրիմահայոց գոնե 1/4-ը: Այսպես հաշվարկելով՝ կարող ենք փաստարկել, որ 1840-ական թվականներին ղրիմահայոց թիվը 7000 էր, 1870-ական թվականներին՝ 9000-10000, 1890-ական թվականներին՝ 12-13 հազար, իսկ 1910 թվականին՝ 18-20 հազար:

Ղրիմահայությունը նոր շրջանում ևս բնակվում էր միջնադարում թերակղզու երբեմնի հայաշատ բնակավայրերում: Հայության խոշոր կենտրոններ էին Հին Ղրիմը, Թեոդոսիան և Ղարասուբազարը, մի փոքր ավելի ուշ՝ նաև Սիմֆերոպոլը:

Ղրիմահայերը իրավական առումով գտնվում էին նահանգական և տեղական իշխանությունների իրավասության տակ: Բայց մինչև 1870 թվականը երկու հայ համայնքներ՝ Հին Ղրիմի հայ լուսավորչական և Ղարասուբազարի հայ կաթոլիկական համայնքները, օգտվում էին ներքին ինքնավարությունից:

1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտակի հիման վրա բացված Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշան շուրջ 60 տարի վարում էր իրեն ենթակա հայ համայնքի տնտեսական, վարչական և դատական գործերը: Ռատուշան շաբաթը 2-3 անգամ գումարում էր նիստեր, որոնց ժամանակ քննարկվում և վճռվում էին խնդրո առարկա հարցերը: Այն ընտրովի մարմին էր. նրա ընտրությունները կատարվում էին երեք տարին մեկ, գաղտնի քվեարկությամբ, պարզ մեծամասնության սկզբունքով: Բացի ռատուշայի երեք անդամից, համայնքը ընտրում էր նաև քաղաքագլուխ և ավագ: Ընտրողներն ու ընտրվածները քաղաքի հայկական եկեղեցում, քահանայի ներկայությամբ ավետարանի վրա երդվում էին լինել անաչառ և անկողմնակալ և ստորագրում երդման տեքստի տակ, որը բոլոր տարիների համար անփոփոխ էր:

Վերը նշված կարգով էին տեղի ունենում նաև Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանի ընտրությունները: Դատարանը գործեց 80 տարի՝ 1790-ից մինչև 1870 թ.: Նրա կազմի մեջ մտնում էին քաղաքագլուխը և երեք առենակալներ (սրանցից մեկը դատարանի նախագահն էր): Դատարանի պահպանման ծախսերը կատարվում էին պետության հաշվին: Դատարանի գործունեությունը խարխլված է 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի վրա:

Հին Ղրիմի հայկական ռատուշան և Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանը ունեին միևնույն իրավունքներն ու փունկցիաները: Նրանց վարույթի տակ եղած գործերը բնույթով հայցային էին, քրեական, խնամակալական: Այս մարմիններն էին զբաղվում ընտրությունների, հարկերի դանձման, վաճառականների ցուցակագրման, առևտրի արտոնման և վերահսկման, մաքսերի գանձման և այլ հարցերով:

1779 թ. և 1799 թ. հրովարտակների ընձեռած առանձնաշնորհումներից օգտվում էին միայն վերը նշված երկու համայնքներում ցուցակագրված հայերը: Մինչդեռ ղրիմահայության մեծ մասի վրա այդ արտոնությունները չէին տարածվում:

Ղրիմահայոց կյանքում ուրույն դեր ուներ եկեղեցին, որը, կրոնական գործերից բացի, մասնակցում էր նաև նրանց հասարակական գործերին (հոգային, ժառանգավորական խնդիրներ, դպրոցներ և այլն): Մինչև 1803 թ. ղրիմահայ եկեղեցին ենթարկվում էր Նոր Նախիջևանի հոգևոր կառավարությանը: 1803 թ. սկսվում է Ղրիմի հոգևոր կառավարության գործունեությունը: Ղարասուբազարում նստած այս հոգևոր կառավարությանը գուպահեն մինչև 19-րդ դարի կեսերը էջմիածինը Ղրիմում պահում էր նաև կաթողիկոսական հայրդղ: 1840-ական թվականների կեսերից այս պաշտոնը փոխարինվում է Ղրիմի հայկական եկեղեցիների և վանքերի հոգաբարձուի պաշտոնով: Գլխավոր հոգաբարձուն հետևում էր, որպեսզի ղրիմահայ եկեղեցիների երեսփոխանները և մյուս պաշտոնյաները բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, մանավանդ դրամական գանձումներ և մուծումներ իրականացնելիս: Աչխարհիկ այս պաշտոնը ստեղծվեց Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ, և այն զբաղեցնողը պարտավոր էր եկեղեցական գումարները պահպանել վատնումներից և աննպատակահարմար ծախսումներից:

***

Ղրիմահայոց տնտեսական կյանքում նոր շրջանում ևս չարունակում էին առաջատար դեր խաղալ առևտուրը, արհեստներն ու արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը: 19-րդ դարի երկրորդ կեսից ղրիմահայ կապիտալը թափանցում է նաև կապիտալիստական արտադրության ոլորտը:

Արդեն 19-րդ դարի առաջին կեսին Տավրիկիայի նահանգի տնտեսական զարգացման մեջ աչքի ընկնող մասնակցություն ունեին հայ առևտրական դասի ներկայացուցիչները: Սերտ կապերը ռուսական ներքին շուկայի և Մերձավոր արևելքի, մանավանդ Թուրքիայի առևտրաարհեստավորական միջավայրի հետ ղրիմահայերին հնարավորություն էր տալիս շոշափելի դեր խաղալ նահանգի ներքին և արտաքին ապրանքափոխանակման մեջ, հաճախ հանդես գալ առևտրական զանազան գործարքների կազմակերպչի դերում: Հայերի առևտրական գործունեությունը ներառում էր և՛ մանրածախ, և՛ մեծածախ առևտուրը, թե՛ մանր առևտրականին և թե՛ գիլդիաներում ընդգրկված հայ վաճառականներին: Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի և Ղարասուբազարի հայ կաթոլիկական համայնքները, մնալով իրենց չնորհված

արտոնություններում, ազատված էին գիլդիաների մեջ մտնելուց. սակայն ովքեր ցանկանում էին, կարող էին նաև անդամակցել գիլդիաներին:

Գիլդիաները բաժանվում էին երեք կարգի, ընդ որում՝ առաջին գիլդիայի մեջ մտնելու համար վաճառականի դրամագլուխը պիտի լիներ 10 հազար ռուբլի, երկրորդի համար՝ 1000-ից մինչև 10000, իսկ երրորդինը՝ 500-1000 ռուբլի:

Մովսես Լազար Մարկոսի Սերեբրյակով
(Ղազար Մարկոսի Արծաթագործյան) (1792–1862)

19-րդ դարի առաջին տասնամյակներին հայերը չարունակում էին իրենց ձեռքում պահել Կովկասի և հատկապես Ջերքեզիայի հետ կատարվող առևտուրը: Նրանք Ջերքեզիայում պահում էին իրենց առևտրական գործակալները: Նրանց թույլ էր տրվել առանց մաքս վճարելու առևտուր անել Ջերքեզիայի և Աբխազիայի հետ: Այսօրինակ արտոնությունը անպայման կապված էր Կովկասում Թուրքիայի հետ ունեցած հակամարտություններում հա-

յերի ծառայությունից օգտվելու հանգամանքի հետ: Նման պարտականություններ էին հանձն առել, օրինակ, Թամանում, Անապայում, Ջերքեզիայում 1827 թ. առևտուր անող ղրիմահայ վաճառականներ Դանիել Պետրոսովը, Յուսուֆը, Հովակիմ Սարկիզովը, Եգոր Ջերնեկովը և ուրիշներ[1]:

19-րդ դարի առաջին կեսում առևտրի ապրանքների մեջ գերակշռում էին պարենամթերքները և հագուստեղենը: Ղրիմ և Ղրիմի վրայով Ռուսաստան էին ներմուծվում մետաքսյա և բամբակյա գործվածքներ, հագուստեղեն, մանվածք, սեկ, պղինձ, մետաղ, կավե ամանեղեն, ձյութ, բրինձ, գինի, մեղրամոմ, շաքար, ձեթ, չորացած մրգեր, սուրճ, խունկ և այլն: Ղրիմից և Ղրիմի վրայով Ռուսաստանից արտահանվում էին բուրդ, կաշի, մշակված կաշվեղեն, ալյուր, հացահատիկ, վարսակ, ձկնեղեն, աղյուս, ծխախոտ և այլն:

Մինչև 1870 թ. հայերի մասնակցությունը նահանգի առևտրին չատ ցայտուն դրսևորվում էր Հին Ղրիմ, Ղարասուբազար և Թեոդոսիա քաղաքներում: Հին Ղրիմի և Ղարասուբազարի հայ համայնքների անդամներին վաճառականությամբ և մանրածախ առևտրով զբաղվելու թույլտվություն տալու համար ռատուշան և դատարանը ստանում ու բաշխում էին առևտուր արտոնող համապատասխան փաստաթղթերը: Նրանք էին տալիս նաև այն անձնագրերը, որոնք այդ համայնքների անդամներին թույլ էին տալիս մեկ կամ կես տարով բացակայել և Ռուսաստանի այլ քաղաքներում առևտուր անել: 1812 թ. օրինակ, Հին Ղրիմի ռատուշան նման անձագրեր էր տվել 103 մարդու, հանգամանք, որն անշուշտ վկայում է հին ղրիմցիների առևտրական լայն կապերը Ռուսաստանի այլ շրջանների հետ:

1820 թ. ապրիլի 10-ին Ալեքսանդր 1-ինի կարգադրությամբ Հին Ղրիմի հայ համայնքին բաց է թողնվում 30 հազար ռուբլի վարկ: Այդ վարկավորումը նպատակ ուներ ինչ-որ չափով փոխհատուցել հողերի այն պակասը, որն առաջացել էր 1799 թ. հրովարտակով Հին Ղրիմի հայերին 12.000 դեսյատին հող հատկացնելու կապակցությամբ: Միաժամանակ, այդ քայլով կառավարությունը ջանում էր օգնել քաղաքի հայ առևտրական դասի կարող շերտին՝ ընդլայնելու և ամրապնդելու իր գործունեությունը: Վարկ ստանալը պետք է երաշխավորվեր ունեցվածքային ցենզով:

Հետեւեփորյան առաջին տարիներին ևս տակավին ծավալուն էին հին ղրիմցիների առևտրական գործարքները: «Հին Ղրիմի առևտրի և արդյունաբերական ձեռնարկությունների գլխավոր ստուգման մատյանի» համաձայն՝ 1870 թ. գավառական ոչ մեծ այս հայաքաղաքում գործում էին 11 առևտրական կրպակներ, գինու 4 նկուղ, 5 գինետուն, 2 ասիական սրճարան, 2 հացի փուռ և 1 բաղնիք: Առևտրական կետերը հիմնականում վաճառում էին բրդյա

[1] Архив внешней политики России (АВПР), ф. Главный архив, V -Бз., д.232, 1824г., лл. 242-262, д. 256, л. 77.

և բամբակյա գործվածքներ, ծխախոտ, հաց, ոգելից խմիչքներ, շինանյութ և այլ ապրանքներ:

Առևտրի մեջ Սիմֆերոպոլի, Եվպատորիայի, Պերեկոպի ու Թեոդոսիայի դերի բարձրացմամբ գնալով անչքանում էին Հին Ղրիմի հայոց առևտրական կյանքն ու նրանց բուն իսկ քաղաքը: Հին Ղրիմի հայերի՝ թերակղզու այլ քաղաքներ տեղափոխվելու հետևանքով 1902 թ. այնտեղ մնացել էին ընդամենը 410 հայեր[1]:

Զգալի էր հայերի մասնակցությունը թերակղզու ցամաքային առևտրի նշանավոր կենտրոն Ղարասուբազարի առևտրի մեջ, որտեղ անցյալ դարասկզբին լավագույն վաճառականները համարվում էին կաթոլիկադավան հայերը: Սրանց մեջ նկատելի էին մեծ դրամագլուխ ունեցողները, որոնցից չուրջ 25 մարդ ամեն տարի անդամագրվում էին 3-րդ, իսկ հետագայում՝ նաև առաջին վաճառականական գիլդիաներին: 1855 թվականին, օրինակ, դատարանի գերատեսչության գծով 3-րդ գիլդիայում ընդգրկվածների թիվը հավասար էր 98 հոգու: Այդ գիլդիայում գրանցված էին նաև քաղաքի 25 հայ լուսավորչական վաճառականներ[2]: Ուրեմն, այդ տարի 3-րդ գիլդիայում գրանցված էին քաղաքի 123 հայ վաճառականներ: Դա նշանակում էր, որ քաղաքի հայերը միայն գիլդիայի միջոցով առևտրի մեջ ներգրել էին առնվազն 100 հազար ռուբլի:

Թե՛ Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանի և թե՛ Հին Ղրիմի հայկական ռատուշայի ամբողջ գոյության ընթացքում նրանց անդամների համար գիլդիաներին մասնակցելը պարտադիր չէր, և նրանք գիլդիաներին անդամակցում էին միայն այն ժամանակ, երբ դա մանրածախ առևտրի համեմատ ավելի շահավետ էր: 1863 թ. 3-րդ գիլդիայի վերացումից հետո հայերը անդամակցում էին 2-րդ գիլդիային, որի համար մի քանի անգամ ավելի դրամ էին դնում շրջանառության մեջ:

Հին Ղրիմի նման Ղարասուբազարի առևտրի մեջ ևս շատ ավելի մեծ էր գիլդիաներից դուրս առևտուր անող հայերի թիվը: Օրինակ, ըստ 1861 թ. տուգման մատյանի՝ միայն դատարանին ենթակա 70 հայեր քաղաքում պահում էին առևտրական տարբեր տեսակի ձեռնարկներ, որոնք համարվում էին վկայականներով և տոմսերով առևտուր անող հայ քաղաքաբնակների սեփականությունը: Մինչդեռ քաղաքում շատ ավելի էին այն լուսավորչական հայերը, որոնք նման կարգի առևտուր էին անում, բայց որոնց կատարած առևտուրը, բնականաբար, արտացոլված չէր «Ղարասուբազար քաղաքի հայ կաթոլիկական դատարանի գերատեսչության գծով եղած առևտրական և արդյունաբերական ձեռնարկների տուգման 1861 թ. մատյանում»:

[1] Լույս, հանդես, 1905, էջ 164:

[2] Крымоблархив, ф. 179, д. 333, л.3, д. 226, л. 39.

1850-ական թվականների վերջերին Տավրիկիայի քաղաքացիական պատասը փորձում է սահմանափակել Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանի կողմից հավատարմագրեր և լիազորագրեր հաստատելու կարգը: Դա հարվածում էր տեղի հայ համայնքի և առևտրական դասի շահերին: Վերջիններս բողոքում են կառավարիչ սենատին, որի հանձնարարությամբ Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետը 1861 թ. ի վերջո հարգում է հայերի խնդրանքը և ուժի մեջ թողնում դատարանի իրավունքները:

Ղրիմում նկատելի ծավալ էր ընդգրկում նաև այնտեղ հաստատված, բայց թուրքահպատակություն պահպանած հայերի կողմից կատարվող առևտուրը: 1882 թ. , օրինակ, միայն Ղարասուբազարում առևտրի մեջ նրանց ներդրած գումարը կազմում էր 113.500 ռուբլի, չհաշված մեծահարուստ առևտրական Պողոսին, որը քաղաքում ուներ 16 կրպակ[1]: Թուրքահպատակ հայերի առևտուրը կրում էր առավել մասնագիտացված բնույթ՝ հիմնականում ընդգրկելով զանազան կտորեղենների, գործվածքների, բարձրորակ մանուֆակտուրայի վաճառքը:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին երկրագործության, արհեստների և արդյունաբերության հետ միասին առևտուրը շարունակում էր նշանակալից տեղ բռնել ղրիմահայոց տնտեսական գործունեության մեջ՝ հարմարվելով հետևեֆորյան շրջանի կապիտալիստական տնտեսության ձևերին ու պահանջներին: Սիմֆերոպոլը, Կերչը, Եվպատորիան, Թեոդոսիան և Ղարասուբազարը դառնում են Ռուսաստանի առևտրի նշանավոր կենտրոններ:

Այս շրջանում ղրիմահայ առևտրական դասի գործունեությունն առավել մեծ չափեր է ընդգրկում: Ղրիմի պատերազմի ժամանակ նա իր վրա էր վերցրել Սևաստոպոլի պատերազմական կարիքների մատակարարման մի մասը, իսկ 60-70-ական թվականներին չահագրգիռ մասնակցություն ցուցաբերեց երկաթուղու շինարարությանը:

Ղրիմահայ գաղութը իր ներկայացուցիչներն ուներ թերակղզու վրա կատարվող քիչ թե շատ խոշոր ձեռնարկումներում: 1887 թ. մայիսի 30-ին Թեոդոսիայի քաղաքային դումայի նիստում Հ. Այվազովսկին քաղաքը ջրով ապահովելու համար իրեն պատկանող Սուբաշի լճից նվիրաբերում է օրական 50 հազար դույլ ջուր և այդ մասին արած իր հանդիսավոր հայտարարությունը ամրապնդում պայմանագրով: Դրա շնորհիվ անցկացվում է 30 կմ երկարությամբ ջրմուղ, և 1888 թ. քաղաքն արդեն ապահովված էր խմելու ջրով[2]:

[1] Նույն տեղը, ֆ. 169, ց. 1, գ. 96, թթ. 8-12:

[2] «Крым» (газета), 1889, №39.

Սպենդիարյանների շիրմատունը Սիմֆերոպոլի հայկական գերեզմանոցում

Սիմֆերոպոլի՝ որպես նահանգական կենտրոնի, դերի բարձրացմամբ այստեղ է կենտրոնանում նաև ղրիմահայ առևտրականների նկատելի մասի գործունեությունը: Միաժամանակ հայերի առևտուրը նշանակալից էր Թեոդոսիայում, Արմյանսկի Բազարում, Ղարասուբազարում, Եվպատորիայում, Կերչում: 1895 թ. միայն Սիմֆերոպոլի գիլդիաներում ընդգրկված էին ավելի քան 70 հայ վաճառականներ: Սրանք առևտուրը վարում էին կապիտալիստական տնտեսությանը վայել ձևերով՝ պահում էին մասնագիտացված ֆիրմաներ, խանութներ, կրպակներ, օգտագործում էին գովազդի միջոցները: Դարավերջին Ղրիմի գիլդիաներում ընդգրկված 4936 վաճառականներից 523-ը, այսինքն՝ 10,6 տոկոսը, հայեր էին: Եթե նկատի ունենանք, որ նրանց մեծամասնությունը այդ շրջանում անդամակցում էր գլխավորապես առաջին գիլդիային, որտեղ յուրաքանչյուր վաճառականի հայտարարած կապիտալը պետք է լիներ 10.000 ռուբլուց ոչ պակաս, ապա ստացվում է, որ նահանգի միայն առևտրի այս ձևի մեջ եղած հայ առևտրական կապիտալը հավասար էր առնվազն 5 միլիոն ռուբլու: Դրան պետք է ավելացնել դարձյալ գիլդիաներից դուրս առևտուր արած հայերի կապիտալը, որը առաջինից անհամեմատ մեծ էր և ճշգրիտ հաշվառման ենթակա չէր: Այդ երկուսի համակցմամբ պարզվում է նահանգի առևտրի մեջ հայերի մասնակցության ամբողջական պատկերը և վկայվում նրանում ղրիմահայ կապիտալի գրաված կարևոր դիրքերը:

***

Ղրիմահայ մի շարք գաղթօջախների հիմնական զբաղմունքներից էին այգեգործությունը, ծխախոտագործությունը, բանջարաբուծությունը, անասնապահությունը, մասամբ նաև չերամապահությունը: Հողի նկատմամբ բոլոր ղրիմահայերը օգտվում էին հավասար իրավունքներից: Սակայն, չնայած դրան, կային խոշոր հողատերեր և դրանց կողքին միջակ ու սակավահող գյուղացիներ:

Բացի հայկական գյուղերից, գյուղատնտեսությամբ զբաղվում էին Ղարասուբազարի և Հին Ղրիմի հայերը: Եվ թեև Հին Ղրիմը հողերի նրան տրված քանակը (12 հազ. դեսյատին) լրիվ չստացավ, բայց հայ համայնքի տրամադրության տակ եղած հողն էլ լիովին բավարար էր գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների մշակման համար:

Ըստ Հին Ղրիմի քաղաքային կանոնադրության՝ քաղաքում հաստատված հույներն ու ռուսները հողերի դիմաց մուծում էին բոլոր այն հարկերը, որպիսիք տալիս էին հայերը: Մինչդեռ թաթարները քաղաքի հայ համայնքի հանդեպ դրված էին այն նույն վիճակում, որի մեջ գտնվում էին կալվածատիրական հողերի վրա ապրող թաթար գյուղացիները: Նրանք պարտավոր էին քաղաքի հայ համայնքին վճարել բերքի 10-րդ մասը և տարեկան 5-8 օր աշ-

խատել հօգուտ նրա: Իրավական տեսակետից հողատերը հայ համայնքն էր, և նա թաթարների հանդեպ հանդես էր գալիս կալվածատիրոջ դերում: Ինդիրն այն է, որ այլ կերպ վարվելու դեպքում մյուս թաթարները կփախչեին իրենց կալվածատերերի հողերից, իսկ դա ձեռնտու չէր կառավարությանը մի ժամանակաշրջանում, երբ թաթարների մոտ կար Թուրքիա քաշվելու զանգվածային ձգտում:

Հայերը Ղրիմում չերամապահության հիմնադիրներից էին: 1800 թ. փետրվարի 24-ին ընդունած իր որոշմամբ կառավարիչ սենատը հատուկ ուշադրություն էր դարձրել Հին Ղրիմում չերամապահության զարգացմանը: 1808 թ. քաղաքում նոր բացված հայկական ռատուշայի որոշմամբ Ղզլարից բերվում է 8 ֆունտ թթենու սերմ: Ռատուշան քաղաքում պահում էր հատուկ վերակացու, որը հսկում էր թթենիների պահպանությանն ու չերամապահության զարգացմանը:

Զարգացման կապիտալիստական ուղու վրա կանգնած հայ ունևոր ձեռնարկատերերն ու առևտրականները իրենց կապիտալը ներդնում էին նաև գյուղատնտեսության մեջ և դառնում խոշոր հողատերեր: Ղրիմում հարյուրավոր և հազարավոր դեսյատին հողեր ունեցող հայերից էին Ս. Թումանովը, ծովակալ Լ. Սերեբրյակովը, Նալբանդովները, Սպենդիարովները, Մուրզաևները, Սեֆերովները, Թոփալովները, Ցիգոևները, Ստեփանովները, Քուշնարյանները, Այվազյանները, Բենկլիևները և շատ ուրիշներ:

Խոշոր հողատերերի թիվը փոփոխվում էր, բայց որպես կանոն՝ ավելանալու միտումով. ոմանք ձեռք էին բերում նոր հողեր, իսկ մյուսները՝ այս կամ այն պատճառով վաճառում ունեցածը: Այսպես, օրինակ, 1906 թ. վաճառվեց Սպենդիարովների կալվածքի մի մասը՝ 3937 դեսյատինը, որը կազմում էր Լեոնիդ Սպենդիարովի՝ կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի հորեղբորորդու բաժինը[1]: Հավանաբար, ականավոր երկրաբաններին պարգևատրելու համար Լեոնիդ Սպենդիարյանի անվան մրցանակի հիմնադրումը հենց կազմել է այս վաճառքից ստացված գումարը:

Որպես հիմնական զբաղմունք ունենալով առևտրական կամ արդյունաբերական գործարքները՝ խոշոր հողատերերը իրենց հողերը մշակում էին կիսարարության կամ բերքի նախնական վաճառքի սկզբունքով, բայց հիմնականում կապալառուի միջոցով՝ վարձու աշխատանքի օգտագործմամբ:

Ղրիմում խոշոր հողատեր էր հայ եկեղեցին: Չնայած նահանգական և տեղական իշխանությունների հետ երկարատև խճճված հողային վեճերին, որոնց լուծման համար 1812-1825 թթ. էջմիածինը որպես կաթողիկոսական հաջորդ Ղրիմում պահում էր Մանվել վարդապետ Գյումուշխանեցուն, այդուհանդերձ, ղրիմահայ եկեղեցին այստեղ պահպանել էր զգալի քանակով հողեր և անտառներ. Հին Ղրիմի շրջանում՝ 1215 դեսյատին, Պերեկոպի գավառում՝ 2767 դեսյատին (Ադի-Ղայդաչ անունով), 18 դեսյատին այգի՝ Սուդակի մոտ, 2-5 դեսյատինի հասնող մի շարք այգիներ՝ հայկական տարբեր եկեղեցիներին և վանքերին կից և այլն:

Հողերից ստացված եկամուտների մի մասը ծախսվում էր հոգևորականների պահպանման և այլ կարիքների վրա, իսկ մյուս մասը՝ ուղարկվում էր Նախիջևան, Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդարան, որից իր բաժինն էր ստանում նաև Մայր աթոռը:

Եկեղեցական հողերը հիմնականում տրվում էին կապալով: Ղրիմի տնտեսության զարգացմանը զուգահեռ բարձրանում էր նաև հողերի կապալագինը: Գ. Այվազովսկու օրոք (1860-ական թվականներ) Պերեկոպի նշված կալվածքի դիմաց Սրբ. Խաչ վանքը տարեկան ստանում էր 1650 ռուբլի: Առհասարակ, 19-րդ դարի կեսերին վանքը հողերից տարեկան ստանում էր 5000 ռուբլի եկամուտ: 1906 թ. «Ադի-Ղայդաչը» տրվել էր կապալով, 6 տարի ժամանակով, տարեկան 10.000 ռուբլով: 1918 թ. նշված առաջնորդարանը Սիմֆերոպոլ է գործուղում Մուշե վարդապետին՝ հողերը աճուրդի միջոցով կապալով տալու և կապալառուներից 12.500 ռուբ. կապալավճարը ստանալու հանձնարարականով[1]:

Անշարժ ու չարժական բավական խոշոր գույքատիրոջ վիճակը ղրիմահայ եկեղեցուն թույլ էր տալիս մասնակցելու զանազան հողային և առևտրական գործարքների, ղրիմահայ գաղթօջախների հասարակական կրթական կյանքին:

***

Ղրիմը Ռուսաստանին միացնելու հաջորդ հարյուրամյակի առաջին կեսում նահանգում վերամշակող արդյունաբերությունը դեռ գտնվում էր զարգացման ողորմելի վիճակում, և այդ պատճառով էլ արհեստագործությունը պահպանել էր իր կարևոր նշանակությունը: Մինչդարերի նման այժմ ևս հայերը ճանաչում գտած արհեստավորներ էին թերակղզու գրեթե բոլոր քաղաքներում:

Հին Ղրիմի հայկական ռատուշան արհեստավորների անխափան գործունեության համար նրանց ինչ-որ չափով ապահովում էր պարենամթերքով, որպեսզի «նրանք հարկադրված չլինեն բացակայել և չընդհատեն իրենց աշ-

[1] Крымоблархив, Ф. 27, оп. 1, д. 9796, л. 1-5:

[1] Մատենադարանի արխիվ, ֆ.կաթ. դիվան, թղթ. 239, վ. 46:

խատանքը»: Այստեղ հայերը հմուտ անվագործներ էին, դարբիններ, քարտաշներ, ջուլհակներ, կոշկակարներ, հացթուխներ և այլն:

Տավրիկյան նահանգում մեծ թիվ էին կազմում արևմտահայ պանդուխտ արհեստավորները: Միայն Ղարասուբազարում 1832 թ. կային 89 գրանցված թուրքահպատակ արհեստավոր հայեր: Այստեղ հայ արհեստավորները հիմնականում զբաղված էին հացաբուլկեղենի արտադրությամբ, ոսկերչությամբ, արծաթագործությամբ, դերձակությամբ, վարսավիրությամբ, կոշկակարությամբ և այլն: Նրանք աչքի էին ընկել մանավանդ բամբակի մշակության, մետաքսաթելի և արծաթաթելի արտադրության ճյուղերում, ամբողջ Ղրիմի համար նրանք էին արտադրում սուլթուխ և բաստուրմա: Ղրիմահայերը համբավ էին վաստակել նաև որպես հմուտ որմնադիր վարպետներ և գինեգործներ:

Ղրիմահայ տնտեսապես զորեղ ընտանիքների առանձին ներկայացուցիչներ մասնակից են դառնում թերակղզու վրա սկիզբ առնող գործարանային արտադրությանը, դառնալով ձկնորսարանների, կաշեմշակման, պահածոների, կղմինդրի, մոմի և այլ ձեռնարկությունների տերեր: 1820–1830-ական թվականներին Թեոդոսիայի երկու ձկնորսարանն էլ պատկանում էին Աբակում Հարությունյանին:

Հին Ղրիմում հայերը հիմնել էին կղմինդրի արտադրության երկու գործարան, ինչպես նաև կաշվի վերամշակման և կրի գործարաններ: Օճառի, մոմի, կաշվի արտադրության ձեռնարկություններ ունեին Ղարասուբազարի և Սիմֆերոպոլի մեծահարուստ հայեր Բ. Մոմջյանը, Գ. Ռաֆայելյանը և այլք: 20-րդ դարի սկզբներին Սևաստոպոլում հայտնի ֆաբրիկանտ Գ. Գևորկովը ստեղծել էր շոգեմեքենայի միջոցով աշխատող մակարոնի ֆաբրիկա: Տավրիկիայում, Եկատերինոսլավի նահանգում և Կովկասում լայն սպառում ունեին Սիմֆերոպոլում Ս. Սրապիոնյանի արհեստանոց-ֆաբրիկայի արտադրած կոշիկները: Նկատելի էր հայերի մասնակցությունը աղի արտադրության մեջ, որի գլխավոր հավաքատեղին Արմյանսկ քաղաքն էր:

Հայերն ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում նահանգի կարևոր տնտեսական ձեռնարկումներին՝ երկաթուղու շինարարությանը, ջրմուղների անցկացմանը և այլն: «Էլեկտրիչեստվո» կամպանիայի մեխանիկ Ն. Շահվերդյանի նախագծով Սիմֆերոպոլի կենտրոնական մասը 1901 թ. առաջին անգամ ստացավ արտաքին էլեկրական լուսավորություն:

Նոր շրջանի ղրիմահայ գաղթօջախների բնակչությանը հատուկ էր սոցիալական շերտավորումը, թեև իրավական առումով բոլոր հայերը հավասար էին: Գաղթօջախների հարուստ դասը ներկայացնում էին դրամատեր վաճառականները, խոշոր հողատերերը, ֆաբրիկատերերն ու ձեռնարկատերերը, միջին դասը՝ միջին կարողության տեր անձինք, իսկ ստորին դասը՝ ունեզուրկ

կամ գրեթե ունեզուրկ քաղաքաբնակ արհեստավորներն ու գյուղացիները, որոնք իրենց ընտանիքի ապրուստը հոգում էին ֆիզիկական աշատանքով:

Ղրիմահայերը որոշակի հարկեր և տուրքեր էին վճարում պետությանն ու եկեղեցուն: 1836 թ. մայիսի 31-ին կառավարիչ սենատին տրված հրամանով փաստորեն վերացվում էին 1779 և 1799 թվականների հրովարտակներով, ինչպես նաև այլ շնորհագրերով Ռուսաստանում հայերին տրված արտոնությունները, և նրանք պարտավոր էին կայսրության մյուս քաղաքացիներին հավասար շնչահարկեր ու տուրքեր վճարել, կրել բոլոր տեսակի զեմստվային և պինվորական պարտուլթյունները: Խոսքը միայն նշված հրովարտակներից օգտվող հայ համայնքների մասին էր: Տվյալ դեպքում Ղրիմում այդ հրամանից ուժժում էին միայն Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի և Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանի իրավասության տակ գտնվող հայերը: Իսկ թերակղզու վրա և անգամ այդ նույն քաղաքներում ապրող մյուս հայ բնակչությանը, որը կազմում էր ղրիմահայերի գերակշիռ մեծամասնությունը և որի վրա այդ հրովարտակները չէին տարածվում, այն ամենևին չէր վերաբերում, որովհետև մինչև այդ հրամանագիրն էլ նրանք կայսրության մյուս քաղաքացիներին համահավասար շնչահարկեր և տուրքեր էին վճարում և պարհակները կատարում: Նույնպիսի երկակի վիճակ էր տիրում նաև Ռուսաստանի այլ վայրերում ապրող հայերի մոտ: Արտոնություններից օգտվող հայ համայնքների բողոքներին ընդառաջելով՝ պետական խորհուրդը 1840 թ. նոյեմբերի 25-ին ընդունում է համապատասխան որոշում՝ նրանց թողնելով իրենց նախկին արտոնություններում: Եվ մինչև 1870 թ., մինչև ռատուշայի և դատաստանի փակվելը, Հին Ղրիմի և Ղարասուբազարի նշված հայ համայնքները շարունակում էին օգտվել առանձնաշնորհումներից, սակայն միաժամանակ կրելով հասարակական բնույթի զանազան պարհակներ, զեմստվային, պինվորական և այլ պարտուլթյուններ ու տուրքեր:

Նկատելի չափերի էին այն հարկերը, տուրքերը և մուծումները, որոնք դանձվում էին հօգուտ ղրիմահայ եկեղեցու: Դրանք սահմանված էին 1807 և 1821 թթ. կանոններով և դանձվում էին էջմիածնի, թեմական առաջնորդարանի, Ղարասուբազարի հոգևոր կառավարչության և շարքային հոգևորականության օգտին: 1807 թ. Ղարասուբազարի հոգևոր կառավարության ընդունած կարգը դանձումները սահմանում էր՝ ելնելով ծխականների ունեցվածքային դրությունից, ըստ երեք խմբերի՝ «առաջինին, երկրորդին և երրորդին»: 1821 թ. նրա իսկ ընդունած «կանոնական բարեկարգությունը» նույնպես պահպանեց «սոցիալական արդարություն» հետամտող այդ կարգը. դանձվում էին «կողոպուտ աստիճանավորաց», պսակադրամ, սրբագրամ, մեռելաթաղի դրամ և այլ տուրքեր: 1821 թ. «կանոնական բարեկարգությունը», պահելով հին տուրքերը, սահմանում էր նաև նորերը և դրանց չափն ու վճարման եղանակը: «Բարեկարգությունը» հարկային մի օրենսդրություն էր և նրա 20

հոդվածներից 13-ը վերաբերում էին եկեղեցական տուրքերին ու գանձումներին: Կանոնադրությամբ Ղրիմի հայոցրդի, հոգևոր կառավարության, ռուս և հայ գրագիրների ծախսերը դրվում էին ղրիմահայ եկեղեցիների ծուխը կազմող հայ համայնքների վրա, սահմանվում էին քահանաներին հասանելիք «կողոպուտի» չափն ու վճարման եղանակը, ինչպես նաև էջմիածնի ու Թեմի առաջնորդի եկամուտները. առաջինին տրվում էր «յատուկ արդիւնք» որն էր՝ «չաբաթական յատկացեալ գանձանակքն», խոստմունք, կտակք, հոգեբաժինք և նուիրակութիւնք երեք տարին մի անգամ», իսկ երկրորդին՝ «չնչադրամ պաղին, դիւազարքն, պսակի, նշանքի թէսկէրից (ամուսնության համար գրավոր իրավունք տալուց-Վ. Մ.) գոյացեալքն. ննջեցելոց անբիծքի թէսկէրեից առեցեալքն, կտակի և հոգեբաժնից մասունքն և տաղավարաց արդիւնքն»[1]: Կատարյալ հարկադրություն էին պաղին, որը պարտավոր էին տալ նաև «ոչ միայն ի Ղրիմ տամբ և ամուսնացելով բնակեալքն, այլև երթ և եկ մշտակայ առևտուր անօղքն յայդ երկիր»[2], ինչպես նաև նվիրակությունները, որ կատարվում էին երեք տարին մեկ՝ էջմիածնից ուղարկված նվիրակների կողմից: Ամեն մի նվիրակության ժամանակ մեծ գումարներ էին հավաքվում: «Իւրաքանչիւր նուիրակութիւն յիսունական հազար ռուպլիէն 255.000 ռուպլի յուննելի արդեանցն ղրկեցաւ՝ որպէս տեսանեմք ի հաշիւս սաղիմայ նուիրակացն»[3], -1825 թ. գրում էր Մանվել վարդապետ Գյումուշխանեցին Նախիջևան-Բեսարաբիայի Թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցուն, նաև դժգոհելով, որ հաճախ նվիրակության արդյունքը էջմիածին չի հասնում:

Եկեղեցական տուրքերն ու գանձումները, որոնք վերցվում էին ղրիմահայերից, գրեթե նույնությամբ պահպանվեցին մինչև 1920 թվականը՝ մինչև Թերակղզու խորհրդայնացումը:

***

Ուրույն հասարակական-մշակութային կյանք ապրեցին ղրիմահայերը 19-20-րդ դարերում: Նրանց կյանքի այս բնագավառի շատ հարցեր ունեին համազգային և նույնիսկ համառուսական հնչեղություն, որի պատճառը Ռուսաստանի արտաքին ու ներքին խնդիրներում Ղրիմի խաղացած դերն էր և նաև՝ արևելահայ ու արևմտահայ իրականության հետ տավրիկյան հայ գաղթօջախների ունեցած այլազան առնչությունները: Եկեղեցական հակամարտությունների, դպրոցական գործերի, արտոնությունների համար մղված

[1] Մատենադարանի արխիվ, ֆ. կար. դիվան, թղթ. 38, վավ. 195, թ. 3 ա:

[2] Նույն տեղը, թ. 3բ:

[3] Նույն տեղը, թ. 1ա:

պայքարի, կուսակցությունների հանդեպ դրսևորած վերաբերմունքի և «զուտ ղրիմահայ» այլ հարցերի շուրջ ծագած պայքարն ու վեճերը հաճախ իրենց մեջ էին ներքաշում նաև արևելյան ու արևմտահայ տարբեր դիրքորոշման գործիչների՝ վկայելով վիճահարույց խնդիրների համազգային իմաստն ու կարևորությունը:

Արդեն 18-րդ դարի վերջերից սկսած մինչև հաջորդ դարի կեսերը ղրիմահայերը պայքարում էին կաթոլիկ քարոզիչների դեմ, որոնք փորձում էին ղրիմահայերին կաթոլիկացնելու միջոցով ևս ամրապնդել Հռոմի եկեղեցու ազդեցությունը քրիստոնյա աշխարհում: 1821 թ. նրանց «խռովահույզ ապրամանց» դեմ Ղրիմում իր բողոքի ձայնն է բարձրացնում Մանվել վրդ. Գյումուշխանեցին: 1846 թ. կաթոլիկ քարոզիչներին Ղրիմից արտաքսելու խնդրանքով կառավարությանն ու Ն. Աշտարակեցուն է դիմում Հովհաննես Այվազովսկին:

Հռոմը, սակայն, հանգիստ չէր տալիս նաև հայ կաթոլիկներին, քանի որ թե՛ հնում և թե՛ այժմ կաթոլիկությանը հարած հայերը լիովին պահպանում էին ազգային եկեղեցական ծեսերը, բոլոր արարողությունները, մայրենի լեզուն և կազմում էին Հռոմից անջատ համայնք: Հռոմը հարկադրված էր հանդուրժել նրանց ազատությունը, բայց հարմար պահերին առիթը բաց չէր թողնում հարձակվելու նրանց այդ ազգային կրոնական ազատությունների վրա: Եվ ստացվում էր այնպես, որ հայ կաթոլիկները Հռոմի դեմ պայքարում էին փաստորեն ազգային եկեղեցու կարգ ու կանոնի պահպանման համար: Այդպիսի համառ պայքար ծավալեցին Հռոմի դեմ Թեոդոսիայի հայ կաթոլիկները 1909 մինչև 1916 թթ., երբ Հռոմի դրածո հոգևորականները նրանցից պահանջում էին եկեղեցուց դուրս հանել ազգային ծեսը և մտցնել լատինականը:

Անցյալ դարի 50-60-ական թվականներին ղրիմահայ կյանքի երկու կարևոր հարցեր՝ Խալիբյան ուսումնարանի հիմնադրումը և Նախիջևան-Բեսարաբիայի Թեմի առաջնորդարանը Քիշնևից Թեոդոսիա փոխադրելը, դուրս են գալիս գաղութի չրջանակներից և ստանում համազգային կարևորություն: Երկու հարցերն էլ կապված էին Գաբրիել վրդ. Այվազովսկու գործունեության և, առաջին հերթին, Ռուսաստանի հարավում հայերի համար կրթական լուրջ օջախ ստեղծելու նրա ծրագրի հետ:

Հռոմի հակահայկական դիրքորոշման դեմ մղած պայքարը երեք վարդապետների՝ Գ. Այվազովսկուն, Ս. Թեոդորյանին և Ա. Գալֆայանին ի վերջո հարկադրում է թողնել Փարիզի Մուրադյան վարժարանը և 1856 թ. Ն. Աշտարակեցուն ուղղված դիմումով վերադառնալ ազգային եկեղեցու գիրկը:



Աննա Թավչյանի հուշարձանը Սիմֆերոպոլի հայկական գերեզմանոցում

Ռուսաստանում կրթօջախ ստեղծելու հարցով Գ. Այվազովսկու հայցը լիուլի արժանանում է ռուսական կառավարության հորդորին ու խրախուսանքին, քանի որ վերջինս հնարավորություն էր ստանում ձեռք բերելու կարևորմի հենարան Արևելքում և հատկապես Թուրքահայ շրջաններում իր ազդեցության տարածման համար: Գ. Այվազովսկին ստանում է կառավարության համաձայնությունը երեք հիմնական կետերում՝ ա) ուսումնարանում պահպանվում էր հավատի և հայերեն դասավանդման լիակատար ազատություն, բ) կառավարությունը հովանավորում էր ուսումնարանի շրջանավարտներին և գ) ուսումնարանը կրթական գծով անկախ հաստատություն էր:

1857 թ. հունիսին ռուսական կառավարության համաձայնությամբ և Կ.Պոլսի Հայոց գերագույն ժողովի միաբան հավանությամբ Գ. Այվազովսկին գալիս է Ղրիմ և ապա տեղի հինգ քաղաքների հայ համայնքների՝ ներքին գործերի մինիստրին ուղղված համախոսականները ձեռքին՝ սեպտեմբերին ժամանում է Պետերբուրգ, ուր նրան են հանձնում կառավարության հրամանը՝ Նախիջևանի և Բեսարաբիայի հայկական թեմի առաջնորդ նշանակելու մասին: Այդ խնդրում չահագրգիռ մասնակցություն էին ունեցել Լազարյաններըը, Մոսկվայի և Պետերբուրգի մեծանուն այլ հայեր և անգամ՝ Ստ. Նազարյանցը:

Գ. Այվազովսկու առաջին քայլերից մեկը եղավ թեմի առաջնորդարանը Քիշնևից Թեոդոսիա տեղափոխելը՝ Կովկասին, Աստրախանին, Նոր Նախիջևանին և Արևմտահայաստանին մոտիկ գտնվելու համար: Դա հետագայում դարձավ Գ. Այվազովսկու դեմ ուղղված անտեղի մեղադրանքներից մեկը:

Գ. Այվազովսկին սկզբից ևեթ մեծ կարևորություն տվեց եկեղեցական գումարների շուրջը վաղուց ի վեր ծավալված վեճի լուծմանը: Եկեղեցական գումարներից էր կախված բացվելիք ուսումնարանի բախտը գոնե նրա գոյության սկզբնական շրջանում: Վեճի էությունը համառոտակի հետևյալն էր. 1842 թ. Ն. Աչտարակեցու հանձնարարությամբ Հ. Խալիբյանը ստանձնել էր Նոր Նախիջևանի եկեղեցիների գումարների հավաքման և դրանց պահպանման պարտականությունը: Նման հանձնարարություն նա տվել էր նաև Դ. Դելվեթյանին՝ Ղրիմում և Ավետովին՝ Քիշնևում: Ինչպես նշվեց, աշխարհիկ անձանց նման հանձնարարական էր տրվում այն նպատակով, որպեսզի եկեղեցական գումարները զերծ պահվեն հոգևորականության առանձին ներկայացուցիչների կողմից փոշիացնելուց և անիմաստ ծախսելուց:

1858 թ. Գ. Այվազովսկին գալիս է Նոր Նախիջևան և լսելով դեռևս թեմակալ Մատթեոսի օրոք կազմած հանձնաժողովի (գլխավոր՝ Կ. Հայրապետով) և Հ. Խալիբյանի հաշվետվությունները, կարծես թե լուծում է վեճը: Նախիջևանի 41 երևելիներից գումարված ժողովը բավարարվում է Հ. Խալիբովի ներկայացրած հաշվետվությամբ՝ 83.981 ռ. գումարով, և այն համարում է արդարացի: Այդ առթիվ կնքվում է հաշտագիր, իսկ Խալիբյանն էլ իր հերթին, ի

նչան կայացած խաղաղության, պարտավորվում է մի որոշ գումար, որպես նվեր կամ ընծա, տալ քաղաքի եկեղեցիներին:

Սակայն հաշտությունը երկար չտևեց: Վերը նշված հաշտագրի ոգով 1860 և 1861 թ. թ. կայացած խաղաղությունները ևս տեսական չէին: Գ. Այվազովսկին, պաշտպանելով Հ. Խալիբյանին, իր վրա էր վերցնում նրա դեմ տարբիները շարունակ Կ. Հայրապետովի խմբակցության մոտ կուտակված ատելությունը: Գ. Այվազովսկին գիտեր դա՝ 1860 թ. նոյեմբերին գրելով, թե իրենց անձնական ամբաստանությունը Հ. Խալիբյանի դեմ հայրապետականները «տեղափոխել են իմ և հավասարապես այն ամենի վրա, որ կատարում եմ ես այստեղի ժողովրդի լուսավորության օգտին և պատրաստ են բոլոր միջոցներով խոչընդոտել իմ ձեռնարկումները»[1]:

Գ. Այվազովսկին Հ. Խալիբյանին պաշտպանում էր՝ ելնելով երկու հանգամանքից. ա) Հ. Խալիբյանը ազնվորեն և ճշտորեն պահպանել էր եկեղեցական գումարները և թեև դրանք նրան ի պահ էին տրվել առանց տոկոսներ պահանջելու, ինքը վերադարձնում էր նաև 24.050 ռ. տոկոսադրամ և բ) Հ. Խալիբյանը դարձել էր Թեոդոսիայի Խալիբյան ուսումնարանի հիմնադրման և գոյատևման նեցուկ: Կ. Հայրապետովը, Մ. Նալբանդյանը և Հ. Խալիբյանի մյուս հակառակորդները չատ լավ գիտեին այդ իրողությունները, բայց հարվածելով վերջինիս՝ նրանք անխնա խփում էին նաև Գ. Այվազովսկուն: Լիբերալ հոսանքի պարագլուխ Կ. Հայրապետովը թայֆայական մղումով չէր կարող ներել մեծահարուստ Հ. Խալիբյանին: Քավության նոխազ էր դարձել, սակայն, ազգային կրթական լուրջ ծրագրերով Ռուսաստան վերադարձած Գ. Այվազովսկին:

Գ. Այվազովսկու կեա-նպատակը ազգային ուսումնարանն էր, և նրան քիչ էին հետաքրքրում նորնախիջևանցիների խմբակցական, շատ դեպքերում անսկզբունքային բախումները: Պատասխանելով Մ. Էմինի մոլապատիր հրահրմամբ Խ. Լազարյանի անտեղի կշտամբանքին, թե ինչու է ինքը համաձայնվել Թեոդոսիայի ուսումնարանը կոչելու Հ. Խալիբյանի անունով, նա գրում էր. «Ձեզ հայտնի է, որ Ռուսաստան փոխադրվելիս իմ մտադրությունն ու նպատակը այն էր, որպեսզի այստեղ՝ Ռուսաստանի հարավում, և Արևելքի մոտ ուսումնարան հիմնեմ մեր ժողովրդի զանգվածի լուսավորության համար, որը մինչև այսօր քարացել է տգիտության մեջ: Ռուսական լուսավորյալ կառավարության կողմից ես հանդիպեցի լիակատար պաշտպանության՝ օգնելու ինձ իմ մտադրության իրագործման համար, բայց դրա համար, բացի այդ, անհրաժեշտ էին նաև նյութական միջոցներ, որոնք կառավարությունը պարտավոր չէր և չէր կարող ինձ տալ: Ես հանդիպեցի մի մարդու (Հ. Խալիբյա-

[1] Центральный гос. исторический архив СССР (ЦГИА СССР), ф.821, оп. 140, д. 24/3136, ч.1, л.1.

նին-Վ. Մ.), որը պատրաստակամություն հայտնեց իմ կողմից նախատեսվող հիմնարկության համար զոհաբերելու 200 հազ. ռուբլի, բայց այն պայմանով, որպեսզի գլխավոր ուսումնարանը, որ ես կբացեմ, կրի նրա անունը: Միթե ես կարող էի չընդունել այդպիսի նշանակալից զոհաբերությունը այն հիման վրա միայն, որպեսզի չբավարարեմ նրա, թեկուզև փառասեր, թեկուզև անարդարացի ցանկությունը»[1]:

Գ. Այվազովսկին ստիպված էր հանդուրժել կաթողիկոս Մատթեոսի թշնամական վերաբերմունքը, որի հիմքում ընկած էին Գ. Այվազովսկուն կաթողիկոս դարձնելու լուրերը: Վերջինս, ինչպես և Գ.Այվազովսկու մյուս ընդդիմախոսներից ոմանք, Գ. Այվազովսկուն ամբաստանում էին թեմական կենտրոնը Քիշնևից Թեոդոսիա տեղափոխելու, կրթական և աշխարհիկ գործերով զբաղվելու, աղջիկների համար դպրոց բացելու, չնայած կաթողիկոսի արգելքին՝ ուսումնարանում նաև բողոքական ու կաթոլիկ դավանանքի հայ երեխաներ ընդունելու, «լսարան կենցաղ-օգուտ գիտելեացը» բացելու, աշխարհիկ բովանդակությամբ հանդես հրատարակելու և այլ «մեղքերի» համար: Հայոց հին ու նոր կաթողիկոսների մեջ դժվար էր գտնել մեկ ուրիշը, որն այսպես դեմ գնար ազգային կրթության ու լուսավորության գործին: Սակայն պարմանալին այն է, որ այս խնդրում նրան հրահրում և պաշտպանում էին Կ. Հայրապետովը և Մ. Նալբանդյանը: Մինչդեռ Գ. Այվազովսկու կարծիքով՝ «իր հոտը լուսավորելու մեջ էին հենց կայանում յուրաքանչյուր հոտի առաջնորդի կարևորագույն պարտականությունները»[2]: Ուսումնարանում սաներ ընդունելիս Գ. Այվազովսկին չէր դնում դավանանքի տարբերություն. դրանով նա փաստորեն դավանանքը չէր համարում ազգային պատկանելության հատկանիշ, ուրեմն և՝ ուներ ավելի լայն ազգային-քաղաքական մտահորիզոն, քան նրա վերադաս կաթողիկոսը և ախոյաններից չատերը, որոնք պահանջում էին դպրոց ընդունել միայն հայ լուսավորչական երեխաներ:

Բոլոր «մեղադրանքները» հանգում էին մի կետի՝ որ Գ. Այվազովսկին Խալիբյան ուսումնարանի հիմնման և պահպանման վրա ծախսում էր նաև եկեղեցական գումարները, թեև նա լիազորված էր դա կատարել, և ժամանակին այդ գումարները վերադարձվելու էին եկեղեցուն: Այս աղերսով նա 1865 թ. Խաչատուր Լազարյանին գրած նամակում նկատում էր. «Միթե բոլոր լուսավորյալ երկրներում չեն լսվում հանդիմանություններ հոգևորականության հասցեին հենց այն բանի համար, որ նա չի ուզում եկեղեցական ունեցվածքն ու եկամուտները օգտագործել ժողովրդական լուսավորության օգտին: Իսկ ինձ անհրաժեշտ են գտել մեղադրել նրանում, որ ամենուրեք ես եկեղեցական դրամները կրճատում եմ ժողովրդական կրթության համար: Չէ որ ես չեմ

[1] Նույն տեղը, ֆ. 880, ց. 5, գ. 33, թ. 199թ:

[2] Նույն տեղը, ֆ.821, ց.140, գ.24/3136, մ.1, թ.3:

ծախսում, այդ դրամները չեմ օգտագործում սեփական օգուտիս, իմ քմահաճույքների համար»: Եվ ապա՝ «ես անձամբ ոչ միայն չեմ օգտվում եկեղեցական գումարներից, այլև որպես թեմական առաջնորդի, օրենքով ինձ հասանելիք... եկամուտները ամբողջությամբ տալիս եմ Խալիբյան ուսումնարանի պահպանմանը»[1]: «Ես ոչ միայն կառավարում եմ (ուսումնարանը – Վ. Մ.), – հայտնում էր նա նույն ժամանակ ներքին գործերի մինիստրությանը, – այլև ինքս մի քանի առարկա եմ դասավանդում՝ լավ դաստատուներ և նրանց հրավիրելու միջոցներ չլինելու պատճառով: Ուսումնարանը կառավարելու և դասավանդման համար ես ոչ մի վարձատրություն չեմ ստացել: Որպեսզի Խալիբյան ուսումնարանը պահեմ կարգին վիճակում, ես անձամբ ինձ այն աստիճանի եմ նյութապես նեղել, որ ապրում եմ կառավարությունից տրվող 2200 ռուբլով, բնակվում եմ իմ ազգականների տանը, չունեմ հովվապետական կարգին տուն: Ասեմ առանց ավելորդ համեստության՝ իսկ ով է մեր հովվապետներից իմ նման ապրում»[2]:

Նշված խոչընդոտները, որոնք կային արդեն 1857–1958 թթ., չկանգնեցրին Գ. Այվազովսկուն, եկեղեցական գումարների օգտագործմամբ ու Հ. Խալիբյանի դրամական զորեղ օգնությամբ, 1858 թ. հոկտեմբերին բացելու ուսումնարանը:

19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբներին դպրոցների և հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես ռուսահայ մյուս գաղութներում, ղրիմահայ գաղթօջախներում ևս, կազմակերպվում և հաջող գործունեություն են ծավալում հոգաբարձությունները, որոնց հիմնական նպատակը կրթական և աղքատախնամ գործեր իրականացնելն էր: Հոգևոր դասը այս խնդրում հոժարակամ գործակցում էր գաղթահայ երևելիների հետ, մանավանդ, որ հոգաբարձությունները գործում էին եկեղեցիներին առընթեր և նրանց ազդեցության շրջանակներում:

Հոգաբարձությունները 20-րդ դարի առաջին մեկ ու կես տասնամյակում նկատելի աշխատանք կատարեցին ղրիմահայ գաղթօջախներում աղքատներին օգնելու և կրթական գործի կազմակերպման բնագավառներում: Հոգաբարձություններ կային Թեոդոսիայի, Ղարասուբազարի, Արմյանսկի Բազարի, Կերչի և Եվպատորիայի գաղթօջախներում: Դրանք բոլորն ունեին իրենց կանոնադրությունները, որոնք կազմված էին միևնույն ձևով և սկզբունքներով՝ 1) Հոգաբարձությունը կազմված էր 7 անձից, որոնցից 5-ը ընտրովի էին, իսկ մնացած երկուսից մեկը տեղի երեցփոխանն էր, մյուսը՝ թեմակալի նշանակած անձը: 2) Հոգաբարձության ընտրովի անդամները հաստատվում էին թեմակալի կողմից և իրենց միջից ընտրում էին նախագահին: 3) Հարցերը լուծվում էին մեծամասնության սկզբունքով, ձայների հավասարության դեպքում վճռական էր նախագահի ձայնը: 4) Հոգաբարձության հիմնական պարտականությունների մեջ մտնում էին՝ աղքատներին օգնելը, միջոցների որոնումը՝ ավյալ եկեղեցուն կից դպրոց, աղքատանոց և աստվածահաճո այլ հիմնարկների ստեղծման համար: Հոգաբարձության դրամական և նյութական միջոցների ստեղծման համար որպես աղբյուր ծառայում էին՝ ա) ավյալ եկեղեցու դրամագլխից աղքատներին օգնելու նպատակով մասնահանված գումարը, բ) բարեգործական կտակները և գ) կամավոր նվիրատվությունները: 5) Հոգաբարձությունները գտնվում էին հոգևոր և քաղաքացիական իշխանությունների վերահսկողության տակ, օգտվում էին նրանց հովանավորությունից և տարեվերջին ավյալ եկեղեցու ծխականների ժողովին հաշվետվություն էին տալիս իրենց տնօրինած գույքի և գումարների մասին: Հաշվետվությունը հաստատվում էր ժողովի կողմից և ներկայացվում թեմական իշխանությանը, Տավրիկիայի նահանգապետին և ներքին գործերի մինիստրին[1]*: Սիմֆերոպոլի հայոց հոգաբարձությունը, օրինակ, 1905–1906 թթ. սկսած հիմնականում պահվում էր Սպենդիարյանների, Միսիրյանի, Թուփալյանի, Լուսեղենովի, Վ. Թումանովի, ինչպես նաև ծխականների նվիրած գումարներով*[2]*:*

1903 թ. ղրիմահայ հասարակական կյանքը նույնպես ալեկոծեց հայկական եկեղեցական գույքի բռնագրավման և ծխական դպրոցների փակման մասին հունիսի 12-ի տխրահռչակ օրենքը: Այն առաջին հերթին հարվածում էր աղքատ ընտանիքներին, որոնց երեխաները, ծխական դպրոցների փակման պատճառով, զրկվում էին նախնական կրթություն ստանալու հնարավորությունից: Միաժամանակ, այդ օրենքը պարարտ հող ստեղծեց հակացարական տրամադրությունների և ազգային-դեմոկրատական մտայնության զարթոնքի համար:

Ղրիմում սոցիալ-դեմոկրատական շարժմանը գործուն մասնակցություն են ցուցաբերում նաև առանձին հայեր: Նրանցից էր Արմեն Բահաթրյանը՝ 1918–1920 թթ. Ղրիմում հանրաճանաչ հեղափոխական գործիչ Լաուրայի (Վարդանուշի) ավագ եղբայրը: Գործելով «Ավեր» մականվամբ՝ նա 1907 թ. փորձեր է անում Ղրիմում վերականգնել սոցիալ-դեմոկրատական աշխատանքը: Օդեսայի և Տավրիկիայի ժանդարմական վարչությունները նրա նկատմամբ գործակալի միջոցով գաղտնի հսկողություն էին սահմանել և նրան համարում էին Ղրիմում «սոցիալ-դեմոկրատների կուսակցության պարագլուխ»[3]*:*

[1] Նույն տեղը, ֆ.880, ց.5, գ.33, թ.226:

[2] Նույն տեղը, թ. 229:

[1] Նույն տեղը, ֆ.821, ց.140, գ.60, մ.11, թ.172–173:

[2] Նույն տեղը, մ. 5, թ. 17–25:

[3] Крымоблархив, ф. 706, оп. 1, д. 203, л. 22-26.

1912–1913 թթ. Բալկանյան պատերազմների շրջանում Ղրիմում խիստ աշխուժանում է Հնչակյան կուսակցության գործունեությունը: Դեռևս 1909 թ. սկսած՝ Կովկասից և Թուրքիայից Ղրիմ էին գալիս այդ կուսակցության գործիչները՝ պրոպագանդիստական աշխատանք տանելու և ազատագրական պայքարի կազմակերպմանն անհրաժեշտ դրամական միջոցներ հայթայթելու համար: 1912–1913 թթ. Հնչակները Սյունիքի գլխավորությամբ լայն գործունեություն են ծավալում Սիմֆերոպոլում, Սուդակում և Եվպատորիայում: «Հնչակ» կուսակցության օգտին դրամ հավաքելու համար ոստիկանությունը խուզարկում է մի շարք հայերի տներ:

Ղրիմահայ մի շարք մեծահարուստներ չեն համակրում Հնչակյանների գործունեությանը. դեռ ավելին, նրանցից ոմանք մատնում են հնչակյաններին: Առանձին հայ մեծահարուստների նման վարքագիծը միայն զգուշավորության հետևանք չէր: Այն ավելի շուտ նրանց ապազգայնացած բնույթի արդյունքն էր: Տարված մշտական շահույթի ապահովման մտայնությամբ՝ գաղութահայ բուրժուազիայի մի նկատելի հատվածը լիովին դարձել էր կոսմոպոլիտական և հավատ չէր տածում ապագա Հայաստանի ստեղծման ծրագրի հանդեպ:

Մի շարք հնչակյաններ, որոնց թվում նաև Հովսեփ Դեյիրմենջին՝ նույն ինքը Սյունիքը, 1913 թ. ամռանը Տավրիկիայի ժանդարմական վարչության պետ Ֆոն Պլատոյի հրամանով ձերբակալվում են: Խնդիրն այն է, որ ցարիզմը դեռևս հետապնդում էր հայ ազգային կուսակցությունների գործունեությունը, և հնչակյանների ձերբակալումը համահնչյուն էր նրա այդօրյա քաղաքական կուրսին: Սյունքի հետ 1911–1914 թթ. ղրիմահայոց շրջանում աշխատանք էին տանում նաև այլ հնչակյաններ՝ Կովկասից վտարված Գևորգ Թոփչյանը, Բաթումից եկած Ռուբեն Կարապետյանը և այլք:

Համազգային նշանակության հարցերն ու երևույթները շարունակ գտնվում էին ղրիմահայերի ուշադրության կենտրոնում: Նրանց ևս ծանր վիշտ պատճառեց հայոց Մեծ եղեռնը: Տեղի հայ գաղթօջախներն ամեն ինչ անում էին եղեռնից տուժածներին օգնելու համար: Այդ գործը դրվել էր կազմակերպված հիմքի վրա. թերակղզու հայաշատ վայրերում ամենուրեք ստեղծվել էին հայկական կոմիտեներ և հանձնաժողովներ, որոնց պարտականությունն էր դրամական և նյութական միջոցներ հավաքել փախստականների օգտին: Արդեն 1915 թ. առ 1-ը հունիսի Էջմիածնի սինոդին ուղարկվեց 16.160ռ.: Օգնությունը շարունակվեց հետագա ամիսներին և 1916–1918 թթ.: Տիկին Յու. Ի. Սպենդիարյանի գլխավորած՝ Սիմֆերոպոլի հայ կանանց կոմիտեն, Ղրիմի մյուս հայկական կոմիտեների աջակցությամբ, 1915 թ. որոշում է Սիմֆերոպոլում բացել գաղթական հայ երեխաների որբանոց: Քանի որ որբեր ստանալ չի հաջողվում, հավաքված դրամը տրամադրվում է գաղթական հայերի համար սերմացու գնելու նպատակին: Դրամական օգնությանը զուգահեռ՝

ղրիմահայերը պատսպարում, բնակարանով ու սննդով ապահովում էին Ղրիմ անցած մեծաթիվ արևմտահայ փախստականների: 1915–1920 թթ. Ղրիմում ապաստան գտած հայ գաղթականները զգալի տեղաշարժ մտցրին ղրիմահայության քանակական կազմում, որը նկատելիորեն մեծացավ:

***

Ղրիմահայ մշակութային կյանքը բնորոշվում էր ծխական դպրոցների առկայությամբ, որոնք գործում էին եկեղեցիներին առընթեր՝ ուսյալ հոգևորականների գլխավորությամբ: Այդ դպրոցներից առաջինը հիմնվեց Ղարասուբազարում 1816 թ.՝ կաթողիկոսի հաջորդ Մանվել վարդապետի ջանքերով: Այն պահվում էր ծխականների ծախսերով և եկեղեցական գումարներով: Դպրոցը մանկավարժական կադրերով ապահովելու համար նրա շրջանավարտներից ուղարկում էին Լազարյան ճեմարան ուսանելու՝ այն ավարտելուց հետո Ղարասուբազար վերադառնալու և այնտեղի դպրոցում աշխատելու պայմանով:

Հայկական ծխական դպրոցներ կային թերակղզու բոլոր հայաշատ վայրերում: Ըստ 1861 թ. օտարագավառների հոգևոր դեպարտամենտ Գ. Այվազովսկու ուղարկած տեղեկանքի՝ Ղրիմի հայկական ծխական դպրոցներում այդ ժամանակ սովորում էին 225 աշակերտ, որոնցից 35-ը՝ Սիմֆերոպոլում, 56-ը՝ Ղարասուբազարում, 25-ը՝ Հին Ղրիմում, 38-ը՝ Թեոդոսիայում, 10-ը՝ Կերչում, 26-ը՝ Նողայսկում, 26-ը՝ Պերեկոպում և 10-ը՝ Եվպատորիայում: Դպրոցներում դասավանդում էին կրոն, հայոց լեզու, թվաբանություն, ռուսաց լեզու: Համապատասխան մանկավարժներ ունենալու դեպքում դասավանդվում էին նաև բարոյագիտություն, քերականություն, ազգային և ընդհանուր պատմություն, աշխարհագրություն և կրկնատումար վաճառականություն:

1868 թ. Էջմիածնի Սբ. աթոռի ուսումնական հանձնաժողովի իջեցրած կանոնների համաձայն, ծխական դպրոցները, մնալով եկեղեցիների տնօրինության տակ, կառավարվում էին ընտրովի հոգաբարձուների կողմից: Հայկական «անջատողական» ձգտումները խափանելու համար 19-րդ դարի 60-ական թվականներից Ռուսաստանի լուսավորության մինիստրությունը քանիցս փորձեր է անում հայկական ծխական դպրոցները ենթարկել իրեն: Սակայն մինիստրության այդ ձգտումը հայկական շրջանների դիմադրության և արտաքին քաղաքական նկատառումների պատճառով չէր իրականացվում: Միայն 1897 թ. մայիսի 3-ին պետական խորհրդի ընդունած որոշմամբ հայկական ծխական դպրոցները այսուհետև հանձնվեցին լուսավորության մինիստրության տնօրինությանը: Հայ հոգևորականությանը միայն իրավունք էր վերապահվում վերահսկելու աշակերտների կրոնական դաստիարակությա-

նը: Բացի կրոնի ուսուցչից, մնացած մանկավարժներին նշանակում էին իշխանությունները: Թեմական առաջնորդարանները զրկվում էին ուսումնական գործերին միջամտելուց, թեև հայկական եկեղեցուն էր դարձյալ մնում ծխական դպրոցների նյութատնտեսական հոգսը:

1905 թ. դրությամբ՝ Ղրիմի յոթ հայկական ծխական դպրոցներում սովորում էին 251 աշակերտ: Դպրոցները երկսեռ էին: Աղջիկների համար, բացի ծխական դպրոցներից, 900-ական թվականներին Սիմֆերոպոլում, Ղարասուբազարում և այլ տեղերում գործում էին նաև կար ու ձևի դասընթացներ: Ղրիմում վարժարաններ ունեին նաև կաթոլիկ հայերը: Նրանց վարժարանները նույնպես երկսեռ էին:

Ծխական դպրոցների նյութական բազայի համար նկատելի օգնություն էին նվիրատվություններն ու կտակները: Մեծ գումարներ էին կազմում Հովհ. Այվազովսկու, Մոմջյանի, Թուխալյանի, Կարամուրզայանի, Սպենդիարյաններ-ի և այլոց կտակները: Թեոդոսիայի Սբ. Սարգիս եկեղեցուն 1899 թ. աշխարհահռչակ նկարչի կտակը, օրինակ, կազմեց 50 հազար ռուբլի, որի տոկոսները ծախսվում էին տվյալ եկեղեցու և նրան կից ծխական դպրոցի վրա:

Ուսուցման դրվածքով և մակարդակով ղրիմահայ կրթական հաստատությունների մեջ առանձնանում էր Խալիբյան ուսումնարանը: Նրա հիմնադրման հիմքում ընկած էր Գ. Այվազովսկու ներկայացրած նախագիծը, որը գրեթե անփոփոխ կերպով 1858 թ. հուլիսի 4-ին հաստատեց Ալեքսանդր 2-րդը՝ «Կանոններ հայկազյան ուսումնարանի, որն հաստատվում է Տավրիկյան նահանգի Թեոդոսիա քաղաքում» անվամբ: Ըստ այդմ՝ ուսումնարանում սովորողների մի մասը վարձու էր, մի մասը՝ կիսավարձու, իսկ մի մասն էլ՝ ձրիավարժ: Նախագծի երկրորդ բաժնում ասված էր. «Քանի որ խիստ ցանկալի է, որպեզի նախատեսվող ուսումնարանում դաստիարակություն ստանան ոչ միայն այն երիտասարդները, որոնք միջոցներ ունեն լրիվ վճարելու վարձը, այլև նրանք որոնք վճարել կարող են լոկ դրա կեսը, հավասարապես նաև աղքատ ծնողների երեխաները՝ հարկավոր կլինի ուսումնարանի հիմնադրման և պահպանման վրա ծախսել Նովոռոսիայի երկրամասի եկեղեցական գումարների մի մասը, համաձայն այն խնդրագրերի, որ տվել են նորին բարձր գերազանցության ներքին գործերի պարոն մինիստրին Տավրիկյան նահանգի հինգ քաղաքների հայերը»[1]:

Ուսումնարանը մասնավոր հաստատություն էր, որտեղ սովորել կարող էին անխտիր բոլոր հայ երեխաները՝ անկախ ծագումից, հայրենիքից և դավանանքից: Կաթոլիկ և բողոքական հայ երեխաներին չէր պարտադրվում ունկնդրել կրոնագիտության դասերը՝ ըստ հայ լուսավորչական եկեղեցու կանոնների: Ուսումնարանի վարչությունն էր նշանակում ուսուցիչներին, կատարում դասագրքերի և դասավանդման ընտրությունն: Ուսումնարանին կից հիմնվում էր տպարան, հրատարակվում հանդես: Ուսումնարանում դասավանդվում էին բոլոր այն գիտությունները, որոնք մտնում էին ընդհանուր դիմնազիական կրթության մեջ կամ անհրաժեշտ էին առևտրին նվիրվել ցանկացողների համար:

Ուսման դասընթացը բաժանվում էր վեց դասարանի, ուսուցումը կատարվում էր հայերեն, բացառությամբ ռուսաց լեզվի, ռուսաց պատմության և ֆրանսերեն լեզվի, որոնցից, առաջին երկուսը դասավանդվում էին ռուսերեն, իսկ վերջինը՝ ֆրանսերեն:

Ուսումնարանի ուսումնական մասը ղեկավարում էին վերատեսուչը և նրա նշանակած ուսուցիչներից կազմված խորհուրդը, իսկ տնտեսական մասը՝ վարչությունը, որը բաղկացած էր վեց անդամից և նույնպես գործում էր վերատեսչի նախագահության տակ: Ուսումնարանի վերատեսուչը Գ. Այվազովսկին էր:

Առաջ քաշելով և հաստատել տալով ուսումնարանի՝ որպես մասնավոր հաստատության կարգավիճակը, Գ. Այվազովսկին դրանով պահպանում էր նրա ազգային կրթական ուղղությունը: Միաժամանակ, ուսումնարանի վերատեսուչը պետք է տարեկան տեղեկագիր ներկայացներ Օդեսայի ուսումնական շրջանի կառավարչին՝ ուսուցիչների ու աշակերտների քանակի և ուսուցման ընթացքի վերաբերյալ: Գ. Այվազովսկուն թույլատրվում էր ուսումնարանի պահպանման վրա ծախսել Նախիջևան-Բեսարաբիայի հայկական վիճակի եկեղեցական եկամուտների մի մասը՝ ուսումնարանը տնտեսապես ոտքի կանգնելուց հետո ծախսված գումարները վերադարձնելու պարտավորությամբ:

Ուսումնարանի նյութական հիմքը կազմում էին՝ ա) ուսումնական շենքի վրա Խալիբյանի ներդրած 152 հազար ռուբլին (շենքը, որ բաղկացած էր 100 սենյակից, շահագործման հանձնվեց 1862 թ.), բ) Խալիբյանի կտակած 7000 դեսյատին հողամասը և երկու տուն Տագանրոգում, որոնք միասին տարեկան բերելու էին 3600 ռ. եկամուտ, գ) սկսած 1861 թ. Խալիբյանի կանոնավոր մուծումները, դ) եկեղեցական գումարները և ե) սաների վճարումները:

Գ. Այվազովսկու վերատեսչության տարիներին (1858-1865 թթ.) ուսումնարանում սովորող աշակերտների քանակը ուներ հետևյալ պատկերը.

[1] ЦГИА СССР, ф. 821, д. 55/3166, ч. 1, л. 63-64

Աշակերտների թանակը Խալիբյան ուսումնարանում 1858–1864 թթ.

Ուսումնական տարին	Աշակերտների թիվը	Նրանցից՝ վճարովի	Օտարահպատակներ
1858-59	89	42	5
1859-60	127	85	12
1860-61	139	93	
1861-62	117	75	8
1862-64	92	53	7

Ուսումնարանն աշակերտներին հաղորդում էր բոլոր այն գիտելիքները, որոնք կազմում էին ժամանակի միջնակարգ կրթության հիմունքները: Ըստ այդմ, ավանդվում էին հետևյալ առարկաները՝ հայոց, ռուսաց, ֆրանսերեն և թուրքերեն լեզուները (ռուսերենը պարտադիր էր ռուսահպատակ, իսկ թուրքերենը՝ թուրքահպատակ երեխաների համար), թվաբանություն, կրոն, նկարչություն, գեղագրություն, երկրաչափություն, պատմություն, աշխարհագրություն, մարմնամարզություն, ֆիզիկա, քիմիա և այլ առարկաներ:

Գ. Այվազովսկու նախաձեռնությունը իրագործվում էր մի ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանում հայերի համար կրթական լուրջ օջախները մատների վրա էին հաշվվում: Ուսումնարանի սաների մեջ նշանակալից թիվ էին կազմում աղքատ ու որբ ձրիավարժ երեխաները՝ 35–40 տոկոսը:

Գաբրիել վարդապետ Այվազովսկու ուսումնարանում առաջին իսկ ուսումնական տարում աշխատող 10 մանկավարժներից 8-ը աշխարհիկ կրթություն ստացած անձինք էին, նրանցից 6-ը՝ բարձրագույն կրթությամբ, որն ստացել էին Ռուսաստանում և Փարիզում: Հետագայում դասատուների թիվը նկատելիորեն ավելանում է: Կրթության հարցում վարդապետի առաջադիմական հայացքների վկայությունն էին նաև նրա կողմից աղջիկների համար դպրոց բացելը, պարուսուցումը և այլն:

1865 թ. սկսած Խալիբյան ուսումնարանը, եկեղեցական գումարներից զրկվելու պատճառով, աստիճանաբար վայրէջք է ապրում, թեև գոյատևում է ևս 6 տարի: Եկեղեցական գումարները ուսումնարանին չտրամադրելու կապակցությամբ այն պահպանելու շուրջը մինիստրությունների, Խալիբյանի և կաթողիկոսի միջև տեղի ունեցած բանակցությունները, հանձնաժողովներն ու նրանց հանձնարարական առաջարկները ուսումնարանը չեն փրկում փակման վտանգից, և 13 ամյա գոյությունից հետո 1870 թ. դեկտեմբերին այն փակվում է, նրա ուսումնական շենքը տարիներ շարունակ տրվում էր վարձով:

Խալիբյան ուսումնարանն ուներ իր տպարանը՝ Ղրիմում հայկական առաջին տպարանը: Այն ևս պահվում էր եկեղեցական գումարներով: Նրա տպագրած գրականության մեջ գերակշռում էին դասագրքերը: Տպագրվում էին նաև տարեգրքեր՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, գեղարվեստական և պատմական երկեր, թարգմանական և եկեղեցական գրականություն: Ուսումնարանի փակվելուն հետևեց նաև տպարանի փակումը:

***

*Ղրիմահայ գաղութը Ռուսաստանի այն եզակի հայ գաղթավայրերից էր, որի մշակութային զարթոնքը վկայվեց նաև մամուլի սեփական օրգանների առեղծմամբ: Անցյալ դարի 60–70-ական թվականներին Ղրիմում հրատարակվում էին «Մասյաց աղավնի» («Միաձան») և «Դաստիարակ պարբերականներ»: «Մասյաց աղավնին», որը 1855 թվականից լույս էր տեսնում Փարիզում, Գ. Այվազովսկու Ղրիմ գալուց հետո իր հրատարակությունը 1860 թվականից շարունակեց Թեոդոսիայում: Գլխավոր խմբագիր Գ. Այվազովսկին պահպանել էր հանդեսի ուղղությունը՝ նրա էջերից պարզելով ազգային միասնության դրոշը՝ որպես հայ ժողովրդի ազգային բարօրությանը հասնելու պայման: Ազգային կրոնի վրա հիմնված այդ միությունը հանդեսի խմբագիրը պարտադիր էր համարում հայ ժողովրդի բոլոր խավերին հավասարապես, պահանջելով «ամեն բանէ առաջ **մեկ միտք** ունենալ որչափ որ կարելի է՝ ազգային խնդրոց մեջ, ազատ պահելով ամեն մարդ յուր **կարծիքը. մեկ հասարակաց** լեզու բանեցնել ... մեկ օրենք պաշտպանել, այսինքն Քրիստոսի մերոյ սուրբ ավետարանը»[1]: Այս հավատամքի մեկնակետից պարբերականը իրեն դուրս էր դնում որևէ կուսակցությունից և ձգտում էր հանուն ազգային միության հասնել կուսակցությունների վերացման կամ քչացման:*

«Մասյաց աղավնին» լույս էր տեսնում աշխարհաբար հայերենով: Գրաբարի հանդեպ ունեցած սերը Գ. Այվազովսկուն չէր խանգարում պաշտպանելու աշխարհաբարի գոյության իրավունքները: Նա գրական նոր հայերենի ստեղծման կողմնակից էր անկախ նրանից, թե որ բարբառն էր ընկնելու նրա հիմքում: Նրա ուղեծիրն էր՝ «աշխարհաբարին պարզությունը պահել և միանգամայն կամաց-կամաց խորթությունները դուրս գցելով՝ գրաբարին մոտացնել»[2]: Նա կողմնակից էր թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ աշխարհաբարին, պահանջելով «երկուքին ալ պակասությունները ուղղել և կատարելա-

[1] «Մասյաց աղավնի», 1861, էջ 8:

[2] Նույն տեղը, 1856, էջ 33:

գործել, իրենց մորը կամ աղբյուրին, այսինքն գրոց լեզվին նմանեցնելով»[1]: Գրաբարի և աշխարհաբարի մերձեցումը պիտի կատարվեր աստիճանաբար և ոչ թե «ինքնահաճո և ինքնահնար» լեզու ժողովրդին պարտադրելով:

«Մասյաց աղավնու» էջերում արծարծվում էին արտաքին քաղաքական լուրեր և տեսություններ, բելետրիստիկա, բանասիրություն, պատմական և կրթական խնդիրներ, տեղեկություններ ազգային կյանքից, տնտեսական գիտելիքներ, լեզվաբանություն, գիտելիքներ բնական գիտություններից, հոդվածներ նշանավոր անձանց մասին և այլն:

1873–1874 թթ. խմբագիր-հրատարակիչ Գ. Տեոլվեթյանը հրատարակում է «Դաստիարակ» հանդեսը, նպատակ ունենալով օգտավետ դաստիարակ լինել հայ ազգին: Պարբերականը իր նպատակից դուրս էր համարում կրոնական վիճաբանությունները կամ կառավարությունների մասին խորհրդածություններ անելը: Այն հոդվածներ էր տպագրում գյուղատնտեսության, վաճառականության, մանկավարժության, առողջապահության մասին, հաղորդում էր աշխարհագրական և պատմական տեղեկություններ, ներառում բանասիրական նյութեր, «հետաքրքրական և զվարճալի վիպասանություններ» և այլն: 1874 թ. միջոցների սղության պատճառով հանդեսի հրատարակումը դադարեց:

***

19–20-րդ դարերում համեմատաբար կարճ ժամանակում ղրիմահայ գաղթօջախները, իրենց երկարատև և տանջալից կազմավորմանը զուգահեռ, ունեցան նաև նկատելի ճարտարապետական-շինարարական գործունեություն: Այս շրջանի ուշագրավ հուշարձանը Ցալթայի հայկական եկեղեցին էր, որը կառուցվել է հայ դասական ճարտարապետության ոճով 1909–1916 թթ. ընթացքում՝ ճարտարապետ Տեր-Միքելովի (Միքայելյանի) նախագծով, մեծահարուստ Տեր-Ղազարյանի ծախսերով: Գեղեցիկ կոթող է Հ. Այվազովսկու պատկերասրահը Թեոդոսիայում, որը կառուցվեց նկարչի նախաձեռնությամբ և միջոցներով՝ 1880-ական թվականներին: Երկարամյա ձգձգումից հետո անցյալ դարի կեսերին վերջապես ավարտվեց Եվպատորիայի հայկական Սբ. Նիկողայոս եկեղեցու շինարարությունը: Հայերը եկեղեցիներ են կառուցել Հին Ղրիմում, Արմյանսկի Բազարում, Սիմֆերոպոլում: Ժամանակին Թեոդոսիայի ամենահիշարժան քաղաքացիական կառույցը Խալիբյան ուսումնարանի շենքն էր, որը, ցավոք, վերջին պատերազմի ժամանակ ռմբակոծությունից հիմնիվեր ավերվեց: Ղրիմի տարբեր քաղաքներում քաղաքացիական շատ շենքեր էին կառուցել Սպենդիարյանները, Թոփալյանները, Սեֆերովները և ուրիշ մեծատուն հայեր:

19-րդ դարի 60–70-ական թվականներից սկսած, երբ Ղրիմում ևս լայն ասպարեզ բացվեց ազատ ձեռներեցության առաջ, ղրիմահայերը առաջիններից մեկը սկսեցին հարմարվել կապիտալիզմի զարգացման ընթացքին, և դա էր, որ նրանց հնարավորություն տվեց հասարակական և մշակութային զարգացման ընթացքում տալ գործիչների մի հիանալի համաստեղություն, որոնց անունները ստացան համազգային, համառուսական և նույնիսկ համաշխարհային ճանաչում, և որոնցով կարող է պարծենալ ցանկացած կուլտուրական ժողովուրդ: Եվ իրոք, փոքրաթիվ ղրիմահայության ծոցից դուրս եկան ռազմական գործի, գեղանկարչության և երաժշտության բնագավառի այնպիսի կարկառուն դեմքեր, ինչպիսիք էին ծովակալ Լ. Մ. Սերեբրյակովը (Արծաթագործյան, 1792–1862), աշխարհահռչակ Հովհ. Այվազովսկին (1817–1900), ասպետնդավոր ծովանկարիչ Է. Մահաեսյանը (1857–1908), ականավոր կոմպոզիտորներ Ա. Սպենդիարյանը (1870–1928) և Ք. Կարա-Մուրզան (1853–1908), կոմպոզիտոր-դիրիժոր Ա. Քաղցածյանը (1809–1856), միջազգային ճանաչման արժանացած ջութակահար, Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր Հովհ. Նալբանդյանը (1871–1942) և ուրիշներ: Ղրիմում մանկավարժական և գիտական երկարամյա գործունեություն էին ծավալել հայտնի հայագետներ Ռ. Քուշներյանը, Մ. Բժշկյանը, Հ. Տեր-Աբրահամյանը, Խ. Ստեփաննն և ուրիշներ:

[1] Նույն տեղը, 1860, էջ 5:

ՊՈՎՈԼԺԻԵ

Պովոլժիեն հայերին ծանոթ էր հնագույն ժամանակներից: Առանձին գրավոր աղբյուրները և հնագիտական գտածոները վկայում են, որ տակավին մեր թվագրությունից առաջ առաջին դարերում հայ վաճառականները արևելյան ապրանքներ էին բերում Ստորին Պովոլժիեի շրջանները՝ օգտվելով դրա համար, հավանաբար, ինչպես Կովկասի վրայով անցնող ճանապարհներից, այնպես էլ Վոլգա–կասպիական ջրային ուղուց:

Հետագա դարերում տնտեսական այդ կապերը մեծ չափեր են ստանում: Հայաստանում քրիստոնեության հաստատվելուց և հայ առաքելական եկեղեցու կառույցները ձևավորվելուց հետո հայ քարոզիչները ծավալեցին աշխույժ գործունեություն Հյուսիսային Կովկասում, որի՝ հիմնականում ալաններով բնակեցված արևելյան մասը պատկանում էր Խազարական պետությանը: Հայ քարոզիչների գործունեությունը տարածվում էր նաև այդ պետության կենտրոնական շրջանների վրա, որոնք ընդգրկում էին հիմնականում Թուրքալեզու խազարներով բնակեցված Ստորին Պովոլժիեն:

Անանիա Շիրակացու (7–րդ դ.) «Աշխարհացույց»–ում կան իր ժամանակի համար զարմանալիորեն ստույգ տվյալներ խազարների պետության մասին, տվյալներ, որոնք հենվում են հայկական աղբյուրների վրա. նշված է, որ այն գտնվում է Վոլգա գետի վրա (հիշատակվում է դրա Թյուրքական «Աթիլ», այսինքն՝ Իթիլ անվանումը), որը գետաբերանում բաժանվում է չատ բազուկների և թափվում է Կասպից ծովը[1]:

Նախքան 16–րդ դ. կեսերին Պովոլժիեն Ռուսաստանին միակցելը այդ տարածքին հաջորդաբար տիրում էին տարբեր պետություններ՝ խազարականը (7–10–րդ դդ.), պոլովցիներինը (Ստորին Պովոլժիեում, 10–13–րդ դդ.) բուլղարականը (Միջին Պովոլժիեում, 10–15–րդ դդ.), Ոսկե Հորդան (13–15–րդ դդ.), Կազանի և Աստրախանի խանությունները (15–16–րդ դդ.): Թեև այդ պետությունները տարբեր դեր են ունեցել իրենց դարաշրջանում և պատմության մեջ միանման տեղ չեն գրավել, այնուամենայնիվ, դրանց հատուկ են եղել նաև ընդհանուր բնորոշ գծեր: Նախ, դրանք թյուրքալեզու ժողովուրդների պետություններ էին և, չնայած կրոնների տարբերությանը, նախորդ և հաջորդ պետությունների բնակչությունը փոխադարձաբար ձուլվում էր՝ պոլովցի–ղիփչաղները ձուլեցին խազարների հիմնական մասին, թաթար–մոնղոլները

[1] **Թաչիկյան Լ.Ս.**, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, Բանբեր Մատենադարանի, N°13, Եր., 1980, էջ 7–107:

բավականին յուրացրին ղիփչաղների լեզուն և մշակույթը, իսկ Կազանի թաթարները իրենց համարում են կամա–վոլգյան բուլղարների հետնորդները: Երկրորդ, այդ պետությունների բնակչության մեծ մասը վաչկատուն (քոչվոր) էր, իսկ իշխող ավագանին՝ խոշորագույն անասնատերեր: Արդյունքը. նրանց ստեղծած պետությունները նվազ կայուն կազմավորումներ էին, որոնք չունեին պարզորոշ սահմաններ և պահպանվում էին բռնությամբ ու նվաճողական արշավանքների շնորհիվ: Նշված պետություններից յուրաքանչյուրում ընդամենը մի քանի քաղաք կար: Այդ պետությունների զարգացումը պայմանավորված էր ոչ այնքան արտադրողական ուժերի աճմամբ, որքան կողոպտչական արշավանքներով և նվաճված երկրներից տուրք գանձելով:

Հայերի բնակվելու և նույնիսկ առավել կամ նվազ մեծությամբ հայկական բնակավայրերի հետքեր կան միջնադարյան Պովոլժիեի քաղաքական և տնտեսական բոլոր կենտրոններում. խազարական Իթիլում, Մեծ Բուլղարում, ոսկեհորդյան Բաթու–Սարայում և Բերկե–Սարայում, խանական Կազանում և Աստրախանում: Նրանք իրենց առևտրական ու արհեստագործական գործունեությամբ հանդիսանում էին այդ տարածաշրջանի տնտեսության սակավաթիվ տարրը: Առևտուրը մերձվոլգյան պետությունների իշխողների եկամտի աղբյուրն էր: Այսպես, Խազարստանի մայրաքաղաք Իթիլի վրայով անցնող ապրանքներից գանձվող մաքսերի հաշվին խազարների թագավորը պահում էր զորեղ վարձու զորք, որտեղ ծառայում էին Միջին Ասիայից եկած մահմեդականները և քրիստոնյա–սլավոնները: Իթիլից առաքվող ապրանքները վաճառվում էին Հայաստանի, ամբողջ Այսրկովկասի, Իրանի, Բյուզանդիայի շուկաներում: Իթիլ էին բերվում արևելյան ապրանքներ՝ գործվածքեղեն, թանկարժեք իրեր, իսկ Խազարստանից արտահանվում էին հյուսիսից բերված մեղրը, մեղրամոմը, մորթեղենը, սաթը:

Կիևի իշխան Սվյատոսլավի՝ 965 թ. արշավանքի հետևանքով խազարների մայրաքաղաք Իթիլը ավերածության ենթարկվեց, որից հետո այն այլևս չկարողացավ շտկվել և շուտով դադարեց գոյություն ունենալ: Նրա փոխարեն մեծ կարևորություն ձեռք բերեց Սաքսին քաղաքը, որը նույնպես դարձել էր միջազգային առևտրի կենտրոն: Դրա տեղադրությունն, ինչպես և Իթիլինը չի որոշված: Ենթադրում են, որ այն առաջացել է Իթիլի տեղում, Վոլգայի գետաբերանի մերձակայքում: Համենայն դեպս, այն գտնվում էր ծովափին մոտ, որովհետև նրան մոտենում էին ծովային նավեր: Վոլգայի և Դոնի միջև գտնվող խազարական Սարկել ամրոցի պեղումների ժամանակ հայտնաբերված իրերը հար և նման են Հայաստանի տարածքում գտնված իրերին:

10–րդ դ. վերջին Պովոլժիե են ներխուժում պոլովցի–ղիփչաղները, որոնք վերջնականապես ջախջախում են խազարներին: Հյուսիսային մերձևեժովյան, մերձդոնյան և Պովոլժիեի լայնածավալ տարածքներում, որոնք ժողովուրդն

այդպես էլ պոլովցիների տափաստաններ («Դեշտ-ի-Ղիփչաղ») էր անվանում, տեղից տեղ փոխադրվող պոլովցիները ցեղային միությունների էին ստորաբաժանված, որոնք այդպես էլ մեկ միասնական պետության մեջ չմիավորվեցին: Սակայն նրանք հսկանում էին իրենց տիրույթներով անցնող միջազգային ուղիների նշանակությունը և առևտրական կապեր ունեին այլ երկրների հետ, օգտվում էին օտարերկրյա վաճառականների, այդ թվում նաև նրանց ծառայություններից, ովքեր մշտապես բնակվում էին խազարական նախկին կենտրոններում կամ խանական վաչկատուն կայաններում:

1193 թ. հայազգի Աւյուծի որդի Աղբարիկը Ղիփչաղում ձեռք էր բերել հայերեն «Ավետարան», որն արտագրվել էր մեկ դար առաջ, Ալեքսանդրիայում: Հատկանշական է, որ որպես ձեռքբերման վայր մատնանշվում է պարզապես երկրի անվանումը՝ Ղիփչաղ: Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ ձեռագիրը կտրել-անցել է Ալեքսանդրիայից մինչև ղիփչաղական տափաստանները ձգվող ուղին, մի հանգամանք, որը ցույց է տալիս հայ վաճառականների առևտրական գործարքների լայնածավալ աշխարհագրությունը:

Խազարական թագավորության անկումը հանգեցրեց այդ ժամանակ Միջին Պովոլժիեում առաջացած կամա-վոլգյան բուլղարների թագավորության դերի ուժեղացմանը և բարձրացմանը: Բուլղարները վերահսկում էին նաև Վոլգայով և Կամայով անցնող առևտրական ուղիները, իսկ դրանից զատ, նրանց տիրույթներից դեպի Ուրալ և Միջին Ասիա էր ձգվում ցամաքային ուղին: Այդ հաղորդակցություններում գործուն դեր ունեին հայ առևտրականները:

10-րդ դ. սկզբին (922 թ.) է վերաբերում բուլղարների թագավորի վաչկավրանն այցելած արաբ ճանապարհորդ Իբն Ֆալդունի վկայությունն այն մասին, որ վրանի հատակին փռված էին հայկական գորգեր: Բուլղարների մայրաքաղաքը հիմնադրվել է Կաման Վոլգայի մեջ թափվելու տեղի մոտակայքում և տարբեր աղբյուրներում տարբեր անվանումներով է հիշատակվում. Բոլղար, Բոլղարներ, Բուլղար, Բուլղարներ, Մեծ Բոլղար, Մեծ Բուլղարներ, Մեծ Բոլղարներ:

Հնագիտական տվյալները վկայում են, որ հայ նորաբնակները ապրել են Մեծ Բուլղարներ քաղաքում արդեն 9-րդ դարում: Այն ժամանակվա ավանդույթների համաձայն, օտարերկրացիների թաղամասերը տեղաբաշխվում էին քաղաքի ամրությունններից դուրս: Հայկական թաղամասը գտնվում էր քաղաքից դեպի արևմուտք, անմիջապես ամրոցի պատնեշի հետևում, Մեծ Բուլղարների հիմնական մասի և Վոլգայի ափի միջև[1]: Սկզբնապես այն ոչ մեծ

[1] Смирнов А. П. Армянская колония города Болгара. - Материалы и исследования по археологии СССР. N°61,1958, с.330-359.

առևտրական ֆակտորիա էր, սակայն հետագայում նկատելիորեն մեծացավ և դարձավ կայուն համայնք:

Մեծ Բուլղարներ քաղաքի հայկական բնակավայրն ապրել է վերելքի երկու ժամանակաշրջան, որոնք համապատասխանում են Հայաստանից ծայր առած գաղթականական երկու հոսանքներին: Առաջինը կապված էր 11-րդ դարում սելջուկների՝ Հայաստան ներխուժելու, իսկ երկրորդը՝ 13-րդ դարում թաթար-մոնղոլական արշավանքների հետ: Առաջին փուլը համընկնում է Վոլգյան Բուլղարիայի հզորացման և բարգավաճման ժամանակաշրջանին, և թեև բուլղարական թագավորության քաղաքական կենտրոնը 11-րդ դ. վերջին տեղափոխվեց Բիլյար քաղաքը, Մեծ Բուլղարներ քաղաքը շարունակում էր մնալ միջազգային նշանակության առևտրական կարևոր կենտրոն:

11-րդ դ. Մեծ Բուլղարների ծաղկման սկզբին է պատկանում հայկական մատուռի, իսկ հետագայում՝ եկեղեցու և հայկական թաղամասի քարակերտ այլ շենքերի կառուցումը: Երբ 18-րդ դ. առաջին քառորդին Պյոտր 1-ինի հրամանով սկսվեց Մեծ Բուլղարներ քաղաքի ավերակների հնագիտական ուսումնասիրությունը, հետազոտողներն ուշադրություն դարձրին քրիստոնեական տաճարի մնացորդների և քաղաքի արևմտյան մասում գտնվող գերեզմանների (թաղումների) վրա: Քաղաքի կենտրոնի կառույցներն իսլամական մշակույթի հուշարձաններ են, իսկ ռուսական գաղութը գտնվում էր քաղաքի մի այլ մասում: Ուրեմն, արևմտյան մասում բնակություն էին հաստատում այլ ազգության պատկանող քրիստոնյաներ, և այս շրջանի այդ ուրույն կառույցի պատճառով այն ստացել էր «Հունական ապարանք» պայմանական անվանումը: Եվ թեև շուտով պարզվեց որ այդ կառույցը ներկայացնում է հայկական եկեղեցու ավերակներ, հնագիտական և գավառագիտական գրականության մեջ առաջվա պես հիշատակվում է վերը նշված անվանումով: Կառույցն ունի բազիլիկ տիպի հայկական եկեղեցու բոլոր հատկանիշները, որ բնորոշ է այդ դարաշրջանի հայկական ճարտարապետությանը: Որոշ շինությունների և տեխնիկական հնարքների կիրառումը ապացուցում է, որ այդ թաղամասի եկեղեցին և մյուս շենքերը կառուցել են հայ շինարարները: Ընդ որում, նկատելի է հայկական ճարտարապետության ազդեցություն վոլգաբուլղարական ճարտարապետության զարգացման վրա:

Քրիստոնեական գերեզմանատան թաղումների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պահպանված գանգերի մեծ մասը պատկանում է արմենոիդ տիպին, իսկ հագուստի և այլ հարդարանքի մնացորդները նմանություն ունեն Հայաստանի տարածքում գտնվող գերեզմաններից հայտաբերած համանման գտածոների հետ: Ուրեմն, 11-15-րդ դարերում Մեծ Բուլղարներ քաղաքում գոյություն է ունեցել հայկական կայուն համայնք, որ պահպանել էր իր ազգային և կրոնական կենցաղային ավանդույթները:

Հայ վաճառականները արևելյան այլ վաճառականների հետ մեկտեղ մեծ դեր էին խաղում Մեծ Բուլղարների առևտրական կապերի մեջ: Այդ քաղաքը կարևորագույն հանգուցակետ էր Արևմուտքի և Արևելքի միջև ձգվող առևտրական ուղիների հատման վայրում: Այստեղ էին առաքվում ապրանքներ Արևմտյան Եվրոպայից, Մերձավոր և Հեռավոր արևելքից: Հայաստանից բերվում էին գորգեր, գործվածքներ, հանքային և բուսական ներկեր, գենքեր: Այս ամենը փոխանակվում էր մորթեղենի՝ սամույրի, կզաքիսի և սկյուռի մորթիների հետ:

Հայ բնակչության նոր գաղթը Վոլգա-Կամյան Բուլղարիա տեղի ունեցավ 13-րդ դ. կեսերին, մոնղոլների՝ Հայաստան ներխուժելու հետևանքով: Թեև Մեծ Բուլղարները նույնպես 1236 թ. ենթարկվեցին ավերածության թաթար-մոնղոլների կողմից, և ինչ-որ ժամանակ այստեղ ընդհատվեց քաղաքակիրթ կյանքը, սակայն որոշ ժամանակ անց Ոսկե Հորդայի խանները, որոնք շահագրգռված էին արտադրողական ուժերի վերելքով, սկսեցին նպաստել քաղաքի՝ որպես տնտեսական կարևոր կենտրոնի, վերականգնմանը: 13-րդ դարի վերջը և 14-րդ դ. համարվում են նրա տնտեսական առավել բարգավաճման ժամանակաշրջանը: Դրան նպաստել է Միջին Պովոլժիեով անցնող առևտրական այն ուղիների նշանակության մեծացումը, որոնք կապում էին Արևելքը և Արևմուտքը:

Այդ ժամանակաշրջանում է ծաղկում ապրում Մեծ Բուլղարներ քաղաքում գտնվող հայ գաղթավայրը: Կովկասի և Մերձավոր արևելքի հետ ավանդական կապերից զատ, հայ վաճառականները այդ ժամանակ գեռային և ցամաքային կապեր են հաստատում Մոսկվայի հետ: Հայտնաբերված հայկական խաչքարերը և արձանագրությունները վկայում են, որ հայերի բնակվելու հետքեր կան նաև Կամա գետի հունին զուգընթաց: Հայերն աշխույժ առևտուր էին անում Ուրալի բնակչության հետ: Օր գետի ավազանում գտնված Հայաստանից բերված իրերը վկայում են, որ հայ վաճառականները առևտրական կապեր էին հաստատել Արևմտյան Սիբիրի և ծայր Հյուսիսի որսորդ և եղջերվապահ բնակչության հետ: Հենց այդ ժամանակաշրջանում է տեղի ունենում Մեծ Բուլղարների հայկական թաղամասի ընդարձակումը մինչև Վոլգայի ափերը և այնտեղ շատ շինությունների կառուցումը: Այդ ժամանակին է վերաբերում Մեծ Բուլղարներում հայտնաբերված քարե հայերեն արձանագրությունների մեծ մասը[1]: Առանձին արձանագրություններ հայտնաբերվել են Վոլգա և Կամա գետերի հոսանքի երկայնքով մեկ: Հայերեն արձանագրություններով երկու այդպիսի քար այժմ տեղակայված է Կազանի համալսա-

[1] **Ջանփոլադյան Հ.Մ.**, Վոլգայի ափին հայտնաբերված հայկական արձանագրությունները., Բանբեր Մատենադարանի, N°11, Եր., 1973, էջ 211-222:

րանի գլխավոր միջանցքում: Արձանագրությունները վկայում են, որ հայկական համայնքի բնակչությունը հիմնականում բաղկացած էր առևտրականներից և արհեստավորներից: Սիմբիրսկի շրջանում կա մի բարձունք, որն ընդհուպ մինչև 19-րդ դ. կոչվում էր Հայկական գառիթափ լեռ: Ավանդության համաձայն, հայերը միջին դարերում այնտեղ կառուցել են 500 սաժեն պարապիծ ունեցած ամրություն:

Մեծ Բուլղարների տնտեսական վերելքի երկրորդ ժամանակաշրջանը (13-րդ դ. վերջ - 14-րդ դ.) վերաբերում է թաթար-մոնղոլական տիրապետության դարաշրջանին, թեև նվաճողները պահպանել էին վոլգյան բուլղարների թագավորների պետականությունը: Ոսկե Հորդայի թուլացմանը զուգընթաց Բուլղարական թագավորությանը սկսեց սպառնալ հզորացող Մոսկովյան իշխանությունը: 1431 թ. մոսկովյան իշխան Վասիլի 2-րդ Տյոմնին արշավեց դեպի Մեծ Բուլղարներ և, գրավելով քաղաքը, այն ավերածության ենթարկեց, որից հետո քաղաքն այլևս չվերականգնվեց: Այդ ժամանակ էլ դադարեց գոյություն ունենալ Մեծ Բուլղարների հայկական գաղթավայրը, որի բնակչության հիմնական մասը գաղթեց Կազան:

Հայտնի է, որ Ոսկե Հորդայի կենտրոնական շրջանները գտնվում էին Վոլգայի ստորին հոսանքներում, այդտեղ էին տեղակայված նաև այդ տերության մայրաքաղաքները՝ Հին և Նոր Սարայը: 1236-1240 թթ., գրավելով Արևելյան Եվրոպայի և Այսրկովկասի երկրները, Բաթիյ (Բաթու) խանը Վոլգայի գետաբերանում հիմնադրեց իր նոր պետության մայրաքաղաքը: Քաղաքը կառուցապատվեց 13-ի դ. 40-ական թվականներին և ստացավ Աստվածապահ Սարայ (արաբական աղբյուրներում՝ Սարայ-ալ-Մահրուսա) կամ Հին Սարայ անվանումը: Պահպանվել է նաև Բաթու-Սարայ (այսինքն՝ «Բաթուի Սարայ») անվանումը: Սարայը խոշոր և գեղեցիկ քաղաք էր: Ոսկե Հորդայի մայրաքաղաքներն առևտրի և արհեստագործության կարևոր կենտրոններ էին: Դրան նպաստում էր այդ քաղաքների տեղադրությունը միջազգային առևտրական վերականգնված ուղիներում:

Հորդայի առաջին մայրաքաղաք դարձած Բաթու-Սարայի ծաղկումը համընկնում է 13-ի կեսերից մինչև 14-րդ դարի կեսերն ընդգրկող ժամանակաշրջանին: Այդ ժամանակ էլ այնտեղ գոյանում է հայկական համայնքը: Այն այնչափ նշանակալի էր, որ այնտեղ կառուցվեցին երկու եկեղեցիներ՝ Սուրբ Աստվածածինը և Սուրբ Նշանը: Գանձասարի (Արևելյաց կողմանց) կաթողիկոսը Սարայում թեմ է հիմնում, որի հովվության տակ էին Ոսկե Հորդայի (Մերձվոլգյան՝ Բաթու-Սարայի, Բերկե-Սարայի, Մեծ Բուլղարների և մյուս քաղաքների), ինչպես նաև Հյուսիս-արևելյան Ռուսիայի այն քաղաքների հայկական համայնքները, որտեղ դրանք այդ ժամանակ արդեն սկիզբ էին առել: Պահպանվել է մի ավետարան, որը, ինչպես նշված է նրա հիշատակարա-

նում, արտագրվել է 1319 թ. Սարայ մայրաքաղաքում՝ Կասպից ծովի մերձակայքում:

Սարայներում եղել են ոչ միայն հայ առևտրականներ, այլև քաղաքական գործիչներ (Սմբատ Սպարապետը, Խաչենի իշխան Հասան-Ջալալյանը և ուրիշներ), մի հանգամանք, որը սատարում էր հայկական համայնքներում ազգային կյանքը: Բաթու-Սարայում հայտնաբերվել են հայ վարպետների դրոշմանշանը կրող կավե անոթներ: Հայ ազգաբնակչության մեջ, առևտրականներից բացի, կային զգալի թվով արհեստագործներ:

14-րդ դ. առաջին կեսին սկսվեց Բաթու-Սարայի անկումը: Գլխավոր պատճառներից մեկը Ոսկե Հորդայի («Ջուչիի ուլուսի») և Մերձավոր արևելքում ու Այսրկովկասում առաջացած Ջինգիզյանների մի այլ՝ իշխանների պետության միջև պայքարի սաստկացումն էր: Այդ իրադրության մեջ սկսում է առաջնությունը ստանձնել Նոր Սարայը (Սարայ-ալ-Ջադիդը), որը կառուցել էր Բերկե խանը 13-րդ դ. երկրորդ կեսին Բաթու-Սարայից բավականին հյուսիս: Այդ քաղաքը հանդես է գալիս նաև Բերկե-Սարայ անվանմամբ: 14-րդ դ. 30-ական թվականներին Ուզբեկ խանի օրոք Բերկե-Սարայը կամ Նոր Սարայը դարձավ Ոսկե Հորդայի մայրաքաղաք:

Սարայի բնակչության մեջ նկատելի թիվ էր կազմում հայկական համայնքը, որն առանձնապես մեծացավ Բաթու-Սարայի հայ ազգաբնակչության հիմնական մասի այստեղ վերաբնակվելուց հետո: Դա հավաստում են հնագիտական գտածոները՝ դարձյալ հայ վարպետների դրոշմանշաններ ունեցող անոթները, ինչպես նաև հայերեն արձանագիր քարերը: 1370-ական թվականներին Նոր Սարայում կար հայկական եկեղեցի և այնտեղ ապրում էր հայ եպիսկոպոս, որն ինչպես և Հին Սարայում, կատարում էր Ոսկե Հորդայի հայկական համայնքների թեմի կառավարչի պարտականությունները: Պահպանվել է կաթողիկոսի (Հավանաբար Մխիթար Գոշեցու) 14-րդ դ. կեսերին պատկանող կոնդակը, որը տեղեկություններ է պարունակում Ոսկե Հորդայի տարածքում «էթիլ գետի շուրջը» բնակված հայերի մասին: Այնտեղ հիշատակվում է նաև Սարայ քաղաքի հայկական համայնքը[1]: Ուշագրավ է հայերի հիշատակումը 14-րդ դ. ռուսական տարեգրության մեջ՝ սաստիկ համաճարակի կապակցությամբ, որը 1346 թ. ոչնչացրել է Պովոլժիեի բնակչությանը. «Եվ Խազտորխանում և Սարայում, և Բեզդեժում ու նրանց երկրների մյուս քաղաքներում ժանտ մահտարաժամ էր տարածվել անհավատների և թաթարների, և հայերի (օրմեններին), և աբազների, և ջհուդների, և ֆրյազների, և չերքեզ-

[1] Թաչիկյան Լ.Ս., նշվ. աշխ. էջ 16:

ների, և այնտեղ բոլոր բնակվողների շրջանում այնպես, որ նույնիսկ թաղող չկար»[1]:

Մոսկովյան զորքերի հաջող գործողությունների և մոնղոլ խաների ներքին երկպառակությունների հետևանքով Պովոլժիեի տնտեսական ու քաղաքական հին կենտրոնների անկումը հանգեցրեց 14-րդ դ. վերջին - 15-րդ դ. սկզբին Ոսկե Հորդայի կազմալուծմանը և քաղաքային բնակչության համակենտրոնացմանը նոր կենտրոններում՝ Կազանում և Աստրախանում, որոնք 15-րդ դ. կեսերին դառնում են ինքնուրույն խանությունների կենտրոններ: Այդ խանությունների մոտ մեկ դար գոյատևությունը նպաստեց դրանց մայրաքաղաքների բարգավաճմանը և համապատասխանաբար՝ դրանցում առաջացած հայկական համայնքների ամրապնդմանը, վերջիններիս տնտեսական նշանակության բարձրացմանը:

Կազանում հայկական համայնքի կազմավորումը, հավանաբար, տեղի է ունեցել 15-րդ դ. կեսերին: Կազանի հայկական բնակավայրի սկիզբը դրեցին Մեծ Բուլղարների հայերը, որոնք լքեցին այդ քաղաքը 1431 թվականին, այն մոսկովյան իշխան Վասիլի 2-րդի զորքերի կողմից ավերելուց հետո: 1445 թ. Կազան քաղաքը դարձավ ինքնուրույն խանության մայրաքաղաք: Այդ նույն ժամանակ մեծանում է Կազանի՝ որպես Արևելքի երկրների հետ կատարվող առևտրի հանգուցային կետի դերը, առավել ևս, որ Ոսկե Հորդայի քայքայման հետևանքով հերթական անգամ խախտվել էին Ստորին Պովոլժիեի վրայով անցնող առևտրական ավանդական ուղիները: Քաղաքային նոր կենտրոններ տեղափոխված և դեպի առևտրական ու արհեստավորական գործունեության նոր ուղղություններ կողմնորոշված հայ ազգաբնակչությունն աստիճանաբար ձևավորում և ամրապնդում է իր համայնքները նոր վայրերում: 15-րդ դ. առաջին կեսին Կազանում կար հայկական բազմամարդ արվարձան: Այդ ժամանակաշրջանին է վերագրվում նաև բուն Կազանում հայտնաբերված քարե արձանագրությունը: Այն դտնվել է Մահուդի հին թաղամասում, մի հանգամանք, որը մատնանշում է Կազանի հայազգի բնակիչների մի մասի պատկանելությունը արհեստավորների այդ կարգին: Այդ նույն շրջանում էին գտնվում Հայկական երկու փողոց՝ Հինը և Նորը, ինչպես նաև հայկական եկեղեցին: Հայկական նախկին գերեզմանատան տարածքում պահպանվել են քարե մեծ ժամացույցի մնացորդները[2]:

[1] Полное Собрание Русских Летописей (ПСРЛ), т.XXV, Московский летописный свод конца XV века. М.-Л., 1949, с.175.

[2] Ոսկանյան Վ., Գրիգորյան Վ., Հայ գաղթավայրերում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտությունների, 1958, N°9:

Կազանի հայկական համայնքի բնակչության զգալի մասը զբաղվում էր առևտրական գործունեությամբ, որին նպաստում էր Կազանի խանության՝ որպես Ռուսական պետության և արևելյան երկրների միջև կապող օղակի դերը: Ամեն տարի գարնանը Կազանի ծայրամասում՝ Կազանկա գետի մեջտեղում գտնվող կղզու վրա, որ ստացել էր Առևտրականների կղզի անվանումը, կազմակերպվում էր մեծ տոնավաճառ, որին մասնակցում էին արևելյան, ռուս և եվրոպացի վաճառականները: Ռուսաստանից Միջին Վոլգա, ապա դեպի արևելք արտահանվող ապրանքներն էին՝ աղը, հագուստեղենը, երկաթե իրերը, եվրոպական մահուդը: Արևելքից Կազանի վրայով Ռուսաստան էին ներմուծվում ճուկ, յուֆտ-կաշի, արևելյան գործվածքներ: Հայ վաճառականները, որոնք բնակավայրեր ունեին ոչ միայն Կազանում, այլև Մոսկվայում, Նովգորոդում, Նիժնի Նովգորոդում և առևտրական հանգուցային այլ վայրերում, այդ ապրանքաշրջանառության մեջ զգալի դեր ունեին: Կազանի կարևոր դերը առևտրի մեջ հավաստվում է այն իրողությամբ, որ 1552 թ. աշնանը ռուսական զորքերի կողմից քաղաքը պաշարելու պահին այնտեղ էին գտնվում հինգ հազար օտարերկրացի վաճառականներ՝ «...բուխարացիներ և չամախեցիներ, և թուրքեր, և հայեր, և ուրիշներ...»: Թեև հայերը հիշատակված են բնագրում առանձին, բայց նրանք, դրանից զատ, կարող էին լինել նաև չամախեցի կոչվածների և այլոց, նույնիսկ «թուրքերի» թվում:

Կազանի պաշարման պահին հայեր կային նաև խանական զորքի հրետանավորների մեջ: Այդ մի կողմից վկայում է ևս մեկ մասնագիտության մասին, որով զբաղվում էին Կազանի հայ արհեստավորները, մյուս կողմից, այստեղ առաջացել էր նաև քաղաքական հայեցակետ: Թաթար զորահրամանատարները հասկանում էին, որ հայերը (ինչպես նաև գործի մեջ ներքաշված քրիստոնյա մասնագետները) համակրանքով էին վերաբերվում ռուս պաշարողներին, ուստի և, նրանց փոխարինելու հնարավորություն չունենալով, նրանց գամել էին թնդանոթներին, հրամայելով կրակ տեղալ հարձակվողների վրա[1]:

Աստրախանն ավելի վաղ է հիմնադրվել, քան Կազանը, Աղբյուրներում այն հիշատակվում է սկսած 14-րդ դարից: Ավանդության համաձայն այդ չենը հիմնադրել է մի ուխտավոր, որը եղել է Մեքքայում («Հաջի») և դրա համար ստացել հարկերից ազատվելու («Թարխանություն») պաշտոնական թույ-

[1] «Կազանի տարեգրությունը» վկայում է, որ հայերը «միտումով և վատ էին կրակում և չէին կարգավորում, ասես թե չէին կարողանում կրակել, և արկերը սլանում էին բոլորի վրայից կամ չէին հասնում նշանակետին, գրեթե ոչ ոի չէին սպանում»: Տե՛ս «Казанская история», М.-Л., 1954, с.130.

յատրություն: Այստեղից էլ ծագում է Հաջի-Թարխան անվանումը[1]: Այդ չենի մեծանալը բացատրվում է 14-րդ դարի առաջին կեսին Հին Սարայի անկումով: Դրա բնակչության զգալի մասը տեղափոխվել է նոր մայրաքաղաք՝ Բերկե-Սարայ, բայց քաղաքի որոշ բնակիչներ նախընտրեցին մերձակայքում գտնվող Հաջի-Թարխանը (Ցիտրոխանը, Աստրախանը, հայերեն՝ Հաշտարխանը): 14-րդ դ. կեսերին այստեղ արդեն կար հայկական համայնք:

1395 թ. վերջին Աստրախանը աստիճակ ավերածության ենթարկեցին Թեմուրի զորքերը, որի հրամանով քաղաքի արտադրող բնակչությունը, այդ թվում նաև հայ արհեստավորները և առևտրականները, բռնությամբ գաղթեցվեցին Սամարղանդ: Այդուհանդերձ, 15-րդ դարում Աստրախանը նորից վերաշինվեց և վերապրեց նոր ծաղկում, կարևոր դեր խաղալով որպես իր տարածաշրջանի տնտեսական, ապա և քաղաքական կենտրոն: Դրան նպաստեց Ոսկե Հորդայի քայքայումը: 1450 թ. կազմավորվեց Աստրախանի խանությունը, որը գոյատևեց հարյուր տարուց փոքր-ինչ ավելի:

Աստրախանն, ինչպես և Կազանը, կարևոր դեր էր խաղում ռուսական պետության, Եվրոպայի և արևելյան երկրների (Այսրկովկասի, Միջին Ասիայի, Մերձավոր արևելքի) հետ տնտեսական կապերում: Այդ կապերում նկատելի տեղ ունեին նաև հայ առևտրականները: Վոլգյան ջրային ուղիով Աստրախանի վրայով առևտրականները, այդ թվում նաև հայերը, Իրան և Միջին Ասիա էին տանում կաշվեղեն, մորթեղեն, մետաղյա իրեր, զենք, հագուստեղեն, փայտե իրեր, մեղրամոմ, փայլատ, յուղ, ճարպ, եվրոպական մահուդ, ապակեղեն: Հակառակ ուղղությամբ Իրանից առաքվում էին մետաքսե և բամբակյա գործվածքներ, պատրաստի հագուստեղեն (գլխաշորեր, գոտիներ, կապաններ), գորգեր, հում մետաքս, բամբակ, սեկ, թանկարժեք քարեր, ոսկերչական իրեր և արևելյան այլ ապրանքներ: Միջին Ասիայի հետ, համանման ապրանքներից զատ, ներկերի, ձիու սարքերի և այլնի առևտուր էին անում:

15-րդ դարում Աստրախան այցելած եվրոպական ճանապարհորդները (Գերբերշտայնը, Կոնտարինին), նկարագրելով քաղաքի առևտրական աշխույժ կապերը, նշում են այդ առևտրական գործարքներում հայ վաճառականների մասնակցությունը: 1520 թ. Աստրախան այցելած պապի պատվիրակ Պավել Հորուսը (Իովիուսը) գրել է, որ «դրա (Վոլգայի -Վ. Խ.) գետաբերանի մոտ գտնվում է թաթարական Ցիտրոխան քաղաքը, ուր փառավոր տոնավաճառի են գալիս մեդացի, հայ և պարսիկ վաճառականները»:

Ռուսական պետությանը Կազանի (1552 թ.) և Աստրախանի (1556 թ.) միակցմամբ Ռուսաստանի գերիշխանության ներքո անցավ Վոլգայի ամբողջ մայրուղին:

[1] Бартольд В.Б. Соч. т. III, М., 1963, с. 336.

Հայ առևտրականները և արհեստավորները վաղուց ի վեր բնակություն էին հաստատել նաև վերին Պովոլժիեի՝ ռուսական պետության կազմը մտած շրջաններում: Հայտնի է, օրինակ, Նովգորոդյան ավազակների՝ «ուշկույկավորների» («գետահեննների» – Վ. Խ.) Նիժնի Նովգորոդում գտնվող արևելյան վաճառականների, այդ թվում նաև հայերի վրա, 1368 թ. հարձակման հետ կապված միջադեպը: Դա վկայում է Ռուսաստանի՝ ռազմավարական և տնտեսական այդ կարևոր հանգուցակետում հայերի՝ արդեն 14-րդ դ. ներկայության մասին: Մոսկվայի իշխան Վասիլի 3-րդի կողմից Կազանի տոնավաճառին ռուս վաճառականների մասնակցությունը 1524 թ. արգելելուց հետո, ի հակակշիռ Կազանին, Մակարիև գյուղում՝ Նիժնի Նովգորոդի մոտ, հիմնադրվեց նոր տոնավաճառ, որը ժամանակի ընթացքում հռչակավոր դարձավ: Կազանի անկումից հետո էլ ավելի մեծացավ Նիժնի Նովգորոդի նշանակությունը, որ դարձավ Ռուսաստանի առևտրական կարևորագույն կենտրոն և որը վիթխարի դեր խաղաց համառուսական շուկայի ձևավորման գործում: Հետագայում Նիժնի Նովգորոդ տեղափոխվեց նաև Մակարիևյան տոնավաճառը, որին մշտապես մասնակցում էին հայ առևտրականները և այնտեղ ունեին իրենց հաստատուն տաղավարաշարքերը:

Հայ առևտրականները կանոնավորապես այցելում էին նաև Մեծ Նովգորոդ: Տակավին 14–15-րդ դդ. այնտեղ կար ղրիմցի վաճառականներին – սուրոժցիներին (որոնց մեջ շատ հայեր կային) պատկանող իջևանատուն: Հայտնի է Ֆյոդոր Իվանովիչ ցարի 1586 թ. հրամանագիրը Նովգորոդում գտնվելու և բերված ապրանքների դիմաց մաքս գանձելու մասին, որի համաձայն, «թուրքերից, հայերից և այլ օտարերկրացիներից, բացի գերմանացիներից, յուրաքանչյուր շնչից ներկա գտնվելու դիմաց 2-ական ալթին պիտի գանձվեր»:

Հայկական բնակավայրերի հետքեր են պահպանվել նաև Ռուսաստանին միակցված Պովոլժիեի շրջաններում, թեև Կազանի հայ ազգաբնակչությունը 17-րդ դ. հետո փաստորեն վերանում է՝ այնտեղ մոլեգնած համաճարակի հետևանքով: Իսկ Աստրախանի հայկական համայնքը, որը գոյություն ուներ այնտեղ տակավին Ոսկե Հորդայի և Աստրախանի խաների ժամանակվանից, պահպանվեց քաղաքը Ռուսաստանին միակցելուց և այն Վոլգայի ձախ ափը տեղափոխելուց (1558 թ.) հետո, որտեղ առաջացավ նոր քաղաքը: Ռուսական Աստրախանի հայկական առևտրական փոքր ֆակտորիան չուտով դարձավ բազմամարդ համայնք և ժամանակի ընթացքում վերածվեց Ռուսաստանի խոշոր ազգային ու կարևորագույն հայկական գաղութի:

Այսպիսով, Պովոլժիեի քաղաքական և տնտեսական բոլոր կարևոր կենտրոններում նախամոնղոլական ժամանակաշրջաններում գոյություն են ունեցել մշտաբնակ հայկական համայնքներ, որոնք բավական կարևոր դեր էին խաղում տարածաշրջանի տնտեսական կյանքում:

ԱՍՏՐԱԽԱՆ

Ներկայիս Աստրախանը ավելի քան չորս հարյուր տարվա պատմություն ունի: Քաղաքը, որ հիմնադրեցին ռուսները 1558 թ. Վոլգայի ձախ ափին, երկրամասը Ռուսաստանին անմիջապես միակցելուց հետո, ուներ իր հարուստ նախապատմությունը: 13–16-րդ դդ. Վոլգայի աջ ափին էր գտնվում թաթարական Աստրախանը, որի պատմության մեջ նույնպես նշմարվում են հայ բնակչության գոյության հետքեր[1]:

Վոլգայի ամբողջ հունը 16-րդ դ. կեսերին Ռուսաստանի գերիշխանության ներքո անցնելը, Ռուսաստանի դուրս գալը դեպի Կասպից ծով և արևելյան Նախակովկաս, անմիջական շփումների հաստատումն Այսրկովկասի, Իրանի և Միջին Ասիայի հետ. այս ամենը ստեղծեց տնտեսական և քաղաքական բարենպաստ նախադրյալներ՝ երկրամասում տնտեսական կյանքն աշխուժացնելու, Վոլգայի գետաբերանը առևտրական և ստրատեգիական կարևոր ուղիների հանգույց դարձնելու և այդտեղ ինչպես Ռուսաստանի ներքին շրջաններից, այնպես էլ Արևելքի հարակից երկրներից գործունյա ազգաբնակչությանը ներգրավելու համար:

Ստեղծված իրադրության մեջ ոչ նվազ կարևոր դեր ունեին նաև հայերը, որոնք ձեռք բերեցին գործունեության ոլորտները ընդլայնելու և իրենց վիճակը բարելավելու նոր հնարավորություններ: Իրանի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Հայաստանի և այլ վայրերի բնակչությունը օտարի լծի տակից դուրս գալու նոր ուղի ձեռք բերեց: Այսպիսով, զգալի թվով հայ բնակչության համար Աստրախանում բնակություն հաստատելու բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին:

Հայ ազգաբնակչություն կար Աստրախանում արդեն 16-րդ դ. երկրորդ կեսից ի վեր, այսինքն, գործնականում ռուսական Աստրախանի գոյության առաջին իսկ տարիներից: 1672–1673 թթ. ռուսական արքունիքի հետ բանակցություններ վարած Նոր Ջուղայի առևտրական ընկերության ականավոր ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովը հավաստում էր, որ հայերը հարյուր տարուց ավելի է, ինչ բնակվում են Աստրախանում[2]:

Շահի սուրհանդակ Խոջա Մուրթազի խնդրագրում (1616 թ.) նշված է, որ «Բուխարացիների և գիլանցիների իջևանատներում բնակվում են հայեր ի-

---

[1] Տե՛ս ներկա հատորի «Պովոլժիե» բաժինը:

[2] Центральный государственный архив древних актов (ЦГАДА), ф.100, 1672, д.1, л.340-341.

բենց կանանց և երեխաների հետ, առանց մեկնելու երեսուն և ավելի տարիներ ի վեր»[1]: Մշտական հայ բնակչություն էր ապրում ռուսական Աստրախանում արդեն 16-րդ դ. 70-80-ական թվականներին: Հայ ազգաբնակչության կորիզը կազմեցին այն հայերը, որոնք քաղաքը Վոլգայի աջ ափից ձախ ափը տեղափոխելու ժամանակ վերաբնակվել էին այնտեղ: Պովոլժիեի անցումը ավելի հզոր, ընդ որում, քրիստոնյա պետության գերիշխանության ներքո, կայուն տնտեսական կյանք հաստատելու հեռանկարները խթանում էին հայ բնակչության հաստատմանը Աստրախանում՝ Այսրկովկասից և Իրանից այստեղ հայերի նորանոր խմբեր ներգրավելով:

Եթե հայերը սկզբնապես խմբվում էին գիլանցիների իջևանատանը, այնտեղ ունեին առևտրական և պահեստային շինություններ, կառուցում և ձեռք էին բերում սեփական տներ, ապա ժամանակի ընթացքում նրանք սկսեցին առավելապես բնակություն հաստատել Աստրախանի կրեմլից դեպի արևելք, ինչպես նաև արվարձանից դուրս, այսպես կոչված Բելի քաղաքի պարիսպներից այն կողմ: Հենց այդտեղ, Սադովոյ բլրի վրա էլ սկսեց ձևավորվել ռուսական Աստրախանի հայկական առաջին թաղամասը:

Այդ ժամանակաշրջանի (16-րդ դարի վերջ – 17-րդ դ. սկիզբ) հայկական բնակավայրերը ավելի շատ առևտրական ֆակտորիաների էին նման, քան թե գաղութի, այդ բառի բուն իմաստով: 1620-ական թվականների վավերագրերում հիշատակվում են միայն գիլանցիների և բուխարացիների իջևանատները, այն դեպքում, երբ հայկականը հիշատակվում է սոսկ 1630-ական թվականների վերջից, իսկ հնդկականը՝ ևս մեկ տասնամյակ ավելի ուշ:

17-րդ դ. երկրորդ-երրորդ տասնամյակները Աստրախանի հայ բնակչության ավելացման կարևոր հանգրվաններ դարձան, քանզի այդ ժամանակ, Ռուսաստանի ներքին քաղաքական իրադրության ամրապնդման շնորհիվ, այնտեղ հայերին ներգրավելու պայմանները բարելավվեցին: Այստեղ հայկական համայնքների մեծացման բարենպաստ նախադրյալների վրա ավելացավ այնպիսի կարևոր գործոն, որպիսին էր ռուսական կառավարության՝ օտարերկրացի առևտրականների և արհեստավորների նկատմամբ կիրառած հովանավորական քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը հետագայում դարձավ հայերին դեպի Ռուսաստան ներգրավելու և այնտեղ հայկական գաղթավայրեր կազմավորելու որոշիչ գործոն:

Կասպիական առևտուրը 17-րդ դ. առաջատար տեղ էր գրավում Ռուսաստանի արտաքին առևտրում, իսկ Արխանգելսկի վրայով կատարվող գործարքների զուգադրությամբ Արևելքի հետ եվրոպայի առևտրական փոխանա-

[1] Веселовский Н.И. Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией, т.III, СПб., 1898, с.61, 123.

կության կարևոր օղակ էր: Ընդ սմին, գանձարանին մեծ եկամուտ էր բերում արևելյան վաճառականների տարանցիկ առևտուրը: Եթե տարանցիկ առևտուր անելու մասին ռուսական կառավարությանը հասցեագրված իրենց դիմումներին ի պատասխան եվրոպական վաճառականները մշտապես մերժում էին ստանում, ապա արևելյան վաճառականների նկատմամբ բացառություն էր արվում: Առևտրի մասին 1667 թ. նոր կանոնադրությունը արգելում էր օտարերկրացի վաճառականներին Ռուսաստանի ներսում առևտուր անելը, սակայն արևելյան վաճառականներին թույլատրվում էր երկրի ներսում երթևեկելը: Փոքր էին նաև արևելյան, մասնավորապես, հայ վաճառականներից գանձվող մաքսային տուրքերը:

Նմանօրինակ մեղմացումներն իրենց արտացոլումն են գտել նաև 1667 թ. Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության հետ կնքված պայմանագրում: Պայմանագրի համաձայն, պարսկական մետաքսի մենաշնորհ առևտուրը ստանձնելով՝ հայ վաճառականներն երկրի ներսում երթևեկելու իրավունք էին ստանում: Հինգ տոկոսանոց մաքսը նույնիսկ Աստրախանում չվաճառված մետաքսի գինը դեպի Մոսկվա և Արխանգելսկ ուղարկելիս բարձրացնելու դեպքում էլ վերջին հաշվով ավելի էժան էր ստացվում, քան առևտրի մասին նոր կանոնադրությամբ սահմանված 10 տոկոսանոց մաքսը[1]:

Այսպիսով, Նոր Ջուղայի առևտրական ընկերության գործարքների գլխավոր տեղը դառնում էր Աստրախանը: Քաղաքի հայ ազգաբնակչության տնտեսական կյանքը համապատասխանաբար կենտրոնանում էր Իրանից և Այսրկովկասից ժամանած վաճառականների և նրանց առևտրական գործարքների շուրջը: Նկատելիորեն մեծացավ հայկական քարվանսարայի առևտրի ծավալը, ավելի հաճախակի դարձան Նոր Ջուղայի ընկերության ծառայողների այցերը Աստրախան, որոնց մի մասը դառնում էին քաղաքի մշտական բնակիչներ: Ընկերության գործունեությանը մասնակից էին դառնում նաև տեղաբնակ հայերը: Գործարարության աշխուժացումը ներգրավում էր Այսրկովկասից և Իրանից եկած հայազգի նոր վերաբնակիչների. դա հանգեցրեց Աստրախանի հայ բնակչության թվաքանակի հետագա մեծացմանը:

Արևելյան առևտրականների գործունեությունը առաջ էր բերում ռուս վաճառականության առարկությունը, որը գտնում էր ավելի փորձառու և տարածաշրջանին ծանոթ օտարերկրացիների մրցակցությունը: Դա կառավարությանը հարկադրում էր ժամանակ առ ժամանակ սահմանափակել օտարերկրացիների իրավունքները: Դրանով իսկ սկիզբ առավ Աստրախանի ռուս բնակչության վերնախավերի՝ գրեթե երկու դար տևած պայքարը արևելյան վերաբնակիչների դեմ՝ Աստրախանի բնակչության այս կամ այն խմբին այլևայլ

[1] Армяно-русские отношения в XVIIв. Сборник документов, Ер., 1953, с.8.

բնույթի իրավունքներ և արտոնություններ տալու, պահպանելու կամ վերացնելու համար:

Քաղաքի հայ ազգաբնակչության թվաքանակի աճը նպաստեց Աստրախանում հայկական եկեղեցու շենք կառուցելու հարցի լուծմանը: 1660 թ. Մոսկվա ժամանած ջուղայեցի վաճառական Զաքար Սահրադյանը, որն Ալեքսեյ Միխայլովիչ ցարին հռչակավոր ադամանդակուռ գահն էր նվեր բերել (ցարդ պահպանվում է Մոսկվայի Կրեմլի Զինապալատում), դիմեց Աստրախանում եկեղեցի կառուցելու թույլատրություն ստանալու խնդրանքով: Թույլատրությունը տրվեց:

1681 թ. ցար Ֆեոդոր Ալեքսեևիչի հրամանագրով թույլատրվեց օտարերկրացիներին, այդ թվում նաև հայերին, առանց ռուսական հպատակություն ստանալու բնակվել Աստրախանում: Դրանից հետո, բնականաբար, էլ ավելի մեծացավ հայերի ներհոսքը Աստրախան: Կորնելիուս դը Բրուինը 1703 թ. ամռանն Աստրախան կատարած իր առաջին այցելության ժամանակ քաղաքում հայերի թվաքանակը հաշվում էր մոտ 40 գերդաստան կամ 200 շունչ: Նկարագրելով հայկական իշևանատունը՝ դը Բրուինը նշել է, որ «այդ տեղը բավականին ընդարձակ է, շրջապատված է քառանկյուն քարաշեն պարսպով, որը մի քանի դարպաս ունի: Երկու գլխավոր դարպասների մոտ մշտական պահակություն կա, և երեկոյան որոշակի ժամերին այդ դարպասները փակվում են: Ժամանող և մեկնող հայ վաճառականներն այստեղ իրենց համար բնակատեղ են վարձում ... Կան նաև այնպիսի հայեր, որոնք մշտապես ապրում են այստեղ և ունեն իրենց կրպակները»:

1706 թ. ջուղայեցի հայազգի Բոգդան Բոգդանովը խնդրագիր է ներկայացնում Աստրախանում «իր միջոցներով» քարաշեն եկեղեցի կառուցելու վերաբերյալ, դա պատճառաբանելով այն իրողությամբ, որ փայտաշեն նախկին եկեղեցին խարխլվել է, իսկ հայերի թվաքանակը Աստրախանում նկատելիորեն մեծացել է: Հենց նույն տարում ստացվեց Պյոտր 1-ի թույլատրությունը, սակայն քարաշեն եկեղեցու շինարարությունը ձգձգվեց մինչև 1730-ական թվականները:

Հայ ազգաբնակչության հետագա մեծացման կապակցությամբ առաջացավ ևս մեկ նոր եկեղեցի կառուցելու հարցը: Հայերի խնդրանքին միացավ Աստրախանում տարագրության մեջ ապրող վրաց արքա Վախթանգ 6-ը, որի շրջապատում բազում հայեր կային: 1736 թ. ապրիլին Աստրախանի ավագ պարետի կարգադրությամբ Սբ. Գրիգորի անվան փայտաշեն եկեղեցի կառուցելու համար տեղ հատկացվեց հայկական նորաշեն արվարձանի հետևում: Նկատի էր առնվել քաղաքի ջրանցքից այն կողմը գտնվող հարավային մասը, որտեղ 18-րդ դ. առաջին կեսին ձևավորվեց հայկական նոր արվարձանը: Նոր

եկեղեցու կողքին հայ եպիսկոպոսն «ինքնակամ» կառուցեց նաև փայտաշեն մատուռ:

Հայ տնատերերի թվաքանակը նկատելիորեն մեծացավ 18-րդ դ. առաջին տասնամյակում, հատկապես 1707 թ. հետո, երբ Աստրախանի ստրելեցյան ապստամբությունը ճնշելու հետևանքով չատ ստրելեցներ ապստամբությանը մասնակցելու համար կալանավորվեցին կամ ուղարկվեցին չվեդների դեմ պատերազմելու: Նրանց մեջ կային նաև համեմատաբար ունևորներ, որոնք Աստրախանում տներ ունեին, որոնց մի մասը գնեցին հայերը: Դրանով քաղաքի կենտրոնից դեպի հարավ արդեն հիշատակված հայկական արվարձանի սկիզբը դրվեց: 1657 թ. վավերագրերից մեկի համաձայն, Աստրախանի միջնաբերդում գոյություն է ունեցել հայկական փողոց, որտեղ տնատերերը հիմնականում հայերն էին[1]:

Ռուսաստանի հայ գաղթավայրերի կյանքի և զարգացման վրա միանգամայն դրականորեն ազդեց Պյոտր 1-ինի բարեփոխիչ գործունեությունը: Առևտրի և արդյունաբերության՝ Պյոտրի կողմից խրախուսվող զարգացումը նպաստեց Աստրախանի ռազմական, քաղաքական և տնտեսական նշանակության բարձրացմանը և այնտեղ օտարերկրացի առևտրականներ և արհեստավորներ ներգրավելուն: Այդ ժամանակաշրջանում ձևավորվեցին տնտեսական և քաղաքական հատկապես նպաստավոր պայմաններ հայկական համայնքի նշանակալիորեն մեծանալու համար: Այդ պայմաններին հարկ է վերագրել Արևելքում Ռուսաստանի ռազմական և քաղաքական հզորացման աճը և, դրա հետ կապված, կասպիական առևտրի զարգացումն ու հայ ազգաբնակչության տեսակարար կշռի մեծացումն Աստրախանի տնտեսական կյանքում:

Առաջին մարդահամարի տվյալներով, 1724 թ. Աստրախանի արական սեռի հայ բնակչության թվաքանակը 500 մարդ էր, իսկ ընդհանուր թվաքանակը՝ 700-800 շնչից ոչ պակաս, այսինքն՝ 3-4 անգամ ավելի, քան դարի սկզբին, և դա գերազանցում էր քաղաքի բոլոր մնացյալ օտարերկրացիների արվարձանների բնակչությանը միասին վերցրած:

Աստրախանի ռուս վաճառականությունը, անհանգստացած հայ ազգաբնակչության բացարձակ և հարաբերական աճով, հանդես եկավ հայերի արտոնությունների սահմանափակման կամ վերացման պահանջով՝ ինչպես առևտրաարդյունաբերական գործունեության բնագավառում, այնպես էլ պետական տուրքերի և պարտույթների առումով:

Օտարերկրացիների արվարձաններն ազատված էին գլխահարկից և պինվորական (նորակոչիկներ տալու) պարտույթից, թեև նրանք ունեին իրենց

[1] Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сборник документов, т. III, Ереван, 1978, с.154, 160-161.

պարտավորությունները՝ կրպակներից և առևտրի տեղերից գանձվող հատուկ տուրք, քաղաքում բնակվելու իրավունքի դիմաց «ապրելու» տուրքագրում, փոխադրամիջոց, այսինքն, սայլ տրամադրելու և օթևան՝ զորքը տեղաբաշխելու պարտուլթներ: Այնուամենայնիվ, ռուս վաճառականությունը պահանջում էր օտարերկրացիներին տուրքագրել նաև «պետական հարկերով»՝ հարկադրելով նրանց ցուցակագրվելու ռուս արվարձանաբնակների նման:

Հայ վաճառականները նախազգուշացնում էին, որ իրենց իրավական կարգավիճակի փոփոխման դեպքում իրենք ստիպված կլինեն լքել Աստրախանը: Ռուս վաճառականության պահանջները հանդիպեցին Աստրախանի այն ժամանակվա նահանգապետ, ականավոր պետական գործիչ և գիտնական-պատմաբան Վ.Ն. Տատիշչևի հակահարվածին, որն ըստ ամենայնի սատարում էր հայերի տնտեսական գործունեությունը: Նրա առաջարկով Սենատը 1744 թ. ապրիլի 13-ի հրամանագրով թուլլատրում էր օտարերկրացիներին «ժամանակավոր հպատակի» կարգավիճակ տալ: Առանձնապես ուշագրավ էր հրամանագրի այն կետը, որտեղ առաջին անգամ ռուսական օրենսդրության մեջ Աստրախանի արևելյան վերաբնակիչներին ներքին ինքնավարություն և ինքնավար դատավարություն ունենալու իրավունք էր վերապահվում: Իր վերջնական դրսևորումն այն գտավ երկու տարի անց, 1746 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագրում և հայերի կողմից 1747 թ. իրենց դատավարչական մարմինն ստեղծելու մեջ: 1746 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագիրը նշում էր. «Նրանց (օտարերկրացիներին – Վ. Խ.) ոչ մի ծառայության չվերցնել և այլ պարտուլթներ, ծայրահեղ կարիքի դեպքից զատ, չտուրքագրել»: Օտարերկրացիների տներն ազատվում էին օթևան տալու պարտականությունից, իսկ օթևան տրամադրելու պարտուլթի դիմաց նրանցից դրամ էին վերցնում: Հրամանագիրը օտարերկրացիներին նաև թուլլատրում էր Աստրախանում ֆաբրիկաներ և մանուֆակտուրաներ հիմնադրել:

Այդ փաստաթուղթը սահմանում էր օտարերկրացի, ամենից առաջ հայ, ազգաբնակչության իրավական կարգավիճակը: Նման կարգավիճակը տակավին չուներ իր նախադեպը Ռուսաստանի հայերի պատմության մեջ: Հրամանագիրը սահմանում էր Աստրախանի հայ ազգաբնակչության կարգավիճակը շատ տասնամյակների համար: Այդ առումով 1746 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագիրը իրավական հիմնարար փաստաթուղթ էր: Հրամանագիրն արգելում էր օտարերկրացիներին, նրանց ցանկությանը հակառակ, Աստրախանի վաճառականության շարքերը գրանցել, ազատում էր նրանց վաճառականական ամեն տեսակի տուրքերից և պարտուլթներից, հավաստում էր առևտրի և արհեստագործության համար արտոնյալ մաքս մուծելու օտարերկրացիների իրավունքը: Հրամանագիրը սահմանում էր աստրախանաբնակ օտարերկրացիների, այսինքն՝ հայերի, ինչպես նաև բուխարացիների, գիլանցիների և «ապրիժանսիների»՝ Աստրախանում ապրող թաթարուհիների հետ ամուսնացած հնդիկների հետնորդների դատավարության և ինքնավարության հիմունքները:

Հայկական դատարանը կամ ռատհաուզը, ինչպես այն կոչվել էր 18-րդ դ. ռուսական վարչակարգում տարածում ստացած գերմաններեն տերմինների պատճառով, սկսեց գործել 1747 թ. հունվարից: Նրա պարտականությունները բուլթյան, այլև ներքին ինքնավարության մարմին էր: Դրանով իսկ ավարտին հասավ Աստրախանի հայկական գաղութի կազմավորման գործընթացը:

Աստրախանի հայերի արտոնյալ կարգավիճակի ձևավորումը հանգեցրեց հայ բնակչության թվաքանակի արագ աճին: Երկրորդ մարդահամարի (1747 թ.) տվյալներով, Աստրախանում մշտապես բնակվում էր իգական և արական սեռի պատկանող 1512 հայ, բացի դրանից, այնտեղ ժամանակավորապես որոշակի թվով հայեր էին բնակվում: Հայկական գաղութը դարձավ Աստրախանի օտարերկրացիների ամենախոշոր և ազդեցիկ արվարձանը: Ռուսական Աստրախանի առաջին վերաբնակիչ հայերը զբաղվում էին գլխավորապես առևտրով: Աստրախանի հայ վաճառականների մեծ մասը եկել էր Պարսկաստանից (Շամախուց և Կասպիականի առափնյա այլ քաղաքներից), քանի որ առևտրով զբաղված հայ բնակչության հիմնական զանգվածը բնակվում էր իրանական պետության կազմը մտած քաղաքներում և բնակավայրերում: Իրանից արտահանվող ապրանքներն էին՝ մետաքսյա և բամբակյա գործվածքեղենը, մանածագործական պատրաստի արտադրանքը (կապաներ, գլխաշորեր, գոտիներ, կերչական իրերը, թանկարժեք քարերը և այլն:

17-րդ դ. առաջին քառորդում աստրախանյան առևտուրը սկսեց կանոնավոր բնույթ ստանալ և ձեռք բերեց միջազգային և ներքին պատշաճ նշանակություն: Առևտրական ուղիների հատման վայրում գտնվող Աստրախանը էական դեր էր խաղում համառուսական շուկայի կազմավորման և Ռուսաստանում նախասկզբնական կապիտալի կուտակման պրոցեսի մեջ: Հենց Աստրախանում էր ընթանում վաճառականական և վաշխառուական կապիտալի ուժգին կազմավորումը, իսկ հետագայում նաև նրա՝ արդյունաբերական կապիտալի վերաճելու գործընթացը:

17-րդ դարի արևելյան առևտրի ծավալի մասին տվյալները կցկտուր են և վերաբերում են տարբեր տասնամյակների: Այսպես, 1650-ական թվականների սկզբին Աստրախան էին բերում ամեն տարի մինչև 900 փութ հում մետաքս՝ 40.500 ռ. արժողությամբ, այսինքն՝ փութը 45 ռուբլի գնով[1]: Իրանից մշակված մետաքսի ներմուծումը 1663–1665 թթ. կազմում էր տարեկան մոտա-

[1] Курц В. Г. Состояние России в 1650-1653 гг. по донесению Родеса, М., 1914, с.15.

վորապես 1500 գրվանքա, 1666–1670 թվականներին՝ 2250 գրվանքա, 1670–1672 թվականներին, չնայած գյուղացիական պատերազմին, մեծացավ ու հասավ տարեկան մինչև 2316 գրվանքայի, այն դեպքում, երբ 1674–1675 թթ. նվազեց մինչև 1850 գրվանքա: Մետաքսի միջին գինը հավասար էր գրվանքան մոտ մեկուկես ռուբլու կամ մեկ փութը՝ 60 ռուբլու[1]:

Աստրախանից դեպի Կովկաս և արևելյան երկրներ էին արտահանվում ռուսական աճող արդյունաբերության արտադրանքները՝ դարբնոցային և մետաղյա այլ իրեր, փայտից, կաշվից պատրաստված առարկաներ, վուշե գործվածքներ: Էլ ավելի մեծ ծավալ ունեին տարանցիկ առևտրի եվրոպական ապրանքները՝ պատրաստի հագուստեղենը, ժանյակները, օծանելիքները և այլն:

Հայերը գործուն մասնակցություն ունեին ինչպես ներմուծման, այնպես էլ Ռուսաստանից արտածման հետ կապված տարբեր ուղղություններով կատարվող առևտրական գործարքներին: Վավերագրերը վկայում են, որ որոշ հայեր զբաղվում էին վարկային և վաշխառուական գործարքներով: Տեղացի հայերին որպես թարգմանիչներ ընդունում էին աշխատանքի մաքսատանը, որտեղ օգտակար էր արևելյան լեզուների և ապրանքների նրանց իմացությունը: Հայտնի է նաև հայազգի Սերգեյին հարկահավաքի պաշտոնին նշանակելու դեպքը, որ վկայում է նրա՝ որպես տեղաբնակի նկատմամբ իշխանությունների տածած վստահության մասին:

Առևտրի մասին նոր կանոնադրությունը Մոսկովյան պետության արտաքին առևտրում հովանավորության քաղաքականություն էր սահմանում, ընդ սմին, ձգտելով պաշտպանել և՛ պետական գանձարանի, և՛ երկրի առևտրաարդյունաբերական խավերի շահերը: Ընդ որում այդ քաղաքականությունը հիմնականում ուղղված էր եվրոպական վաճառականների դեմ, որոնք միտում էին վերահսկողություն սահմանել ռուսական չուկայի և Ռուսաստանի վրայով կատարվող տարանցիկ առևտրի վրա: Այդ նույն ժամանակ արևելյան առևտուրը տուրքագրվում էր զգալիորեն ավելի ցածր մաքսերով, քանզի արևելցի վաճառականները այդպես վտանգավոր չէին ռուսական չուկայի և ռուսական պետական շահերի համար:

Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության գործունեությունը Ռուսաստանում ընթանում էր Աստրախանի հայ բնակչության հետ սերտ շփումներով և համագործակցությամբ[2]: Աստրախանը ռուս և արևելցի վաճառականների միջև կատարվող ապրանքափոխանակության գլխավոր վայրն էր, և, բնականաբար, ռուս–իրանական առևտրի ամեն մի աշխուժացում նպաստում էր Աստրախանի հայերի տնտեսական գործունեության ակտիվացմանը:

Իրանի հետ կատարվող Ռուսաստանի առևտրին մասնակցում էին նաև Աստրախանի հայերը: Պահպանվել է Աստրախանի մաքսատան գրառումից քաղվածքը՝ մաքսեր գանձելու և «ծովից այն կողմ» աստրախանցի հայազգի Գրիգորին և նրա ապրանքները՝ հարյուր արշինից ավելի մահուդ, այսինքն՝ ռուսական արդյունաբերության արտադրանքը, բաց թողնելու մասին:

1697 թ. Թերեքի վոեվոդին տրված հրահանգում աստրախանաբնակ հայերը, ի տարբերություն եկվորների, դասվում էին ռուս մարդկանց կարգը, որոնց ազատորեն թույլատրվում էր առևտրի համար մեկնել Մոսկվա և այլ քաղաքներ: Եկվոր առևտրականների համար պահպանված սահմանափակումները վերջիններիս հարկադրում էին գործարքի մեջ մտնել Աստրախանում բնակվող իրենց հայրենակիցների հետ, որոնք գնում կամ իրենց անվամբ էին ձևակերպում արտասահմանից բերված ապրանքը: Օտարերկրացիների արվարձաններում արտասահմանից եկած հայրենակիցներին իրենց տները վարձով տալուց, որի համար պետական գանձարան էին մուծում ընդամենը երկուական գրիվնա՝ յուրաքանչյուր շնչի դիմաց:

Օգավելով Ռուսաստանի խորքերում առևտուր անելու իրավունքից, աստրախանաբնակ հայերը հանդես էին գալիս որպես միջնորդներ՝ ռուս վաճառականներից ապրանքներ գնելու և օտարերկրացի վաճառականներին դրանք ծովից այն կողմը արտահանելու համար վերավաճառելու ժամանակ: Ավելի հարուստ հայ առևտրականներն օգտվում էին այստեղ նաև ռուս առևտրականների՝ վարկ ստանալու մշտական պահանջից: Վարկային գործարքներին հայ առևտրականների մասնակցության հետքեր նշմարվում են վավերագրերում՝ սկսած 17-րդ դարի կեսերից[1]:

18-րդ դ. առաջին տասնամյակներում Աստրախանի հայերի տնտեսական գործունեության համար առանձնապես բարենպաստ պայմաններ ստեղծվեցին: Ռուսաստանի արևելյան քաղաքականության աշխուժացումը, Պյոտր 1-ինի կասպիական արշավանքները հանգեցրին Կովկասում և Մերձկասպյան շրջաններում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման, հայ–ռուսական քաղաքական կապերի ընդլայնման: Ընդլայնվեցին Ռուսաստանի տնտեսական և առևտրական կապերը Այսրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Իրանի և Միջին Ասիայի հետ:

---

[1] Шпаковский А.Н. Торговля Московской Руси с Персией, в XVI-XVIIIвв., Киев, 1915, с.45.

[2] Восканян В.К. Новоторговый устав и договор с армянской торговой компанией в 1667 г.- «Изв. АН Арм. ССР», общ. науки, 1947, N°6.

[1] Տես՝ **Ա. Ղանալյան ժ., Թաչատրյան Վ.**, Հայ վաճառականական կապիտալը Ռուսաստանում 17–18-րդ դդ., «Հայաստանի ժող. տնտեսություն», 1989, N°8:

1667 թ. պայմանագրի բազմաթիվ խախտումների՝ մաքսերի կրկնակի գանձման (Աստրախանում, Մոսկվայում և Արխանգելսկում), ապրանքներ փոխադրելու սահմանափակումների, օթևանելու և ապրանքներ պահելու համար թանկ չինուհյուններ վարձելու հարկադրանքի և այլնի առթիվ հայերի արած գանգատները կյանքի կոչեցին կառավարող սենատի՝ 1711 թ. մայիսի 14-ի որոշումը, որով հավաստվում էր 1667 թ. հրամանագիրը անշեղորեն կատարելու և Հայկական առևտրական ընկերության արտոնությունները պահպանելու անհրաժեշտությունը[1]: Նոր Ջուղայի առևտրական ընկերության նկատմամբ Ռուսաստանի խրախուսիչ քաղաքականությունը դրականորեն էր անդրադառնում ընկերության հետ կապված աստրախանաբնակ հայերի տնտեսական կացության և ընդհանրապես Աստրախանի զարգացման վրա: Նոր Ջուղայի առևտրական ընկերության անդամներից Աստրախանի մշտական բնակիչների կարգն աստիճանաբար անցնելու մասին է վկայում նաև այն փաստը, որ առանձին հայեր (օրինակ, Թաթոս Միքայելովը, Դավիթ Գրիգորևը) միևնույն ժամանակ որոշ վավերագրերում անվանվում են «Հայկական առևտրական ընկերության հայեր», իսկ ուրիշ վավերագրերում՝ «աստրախանաբնակ քաղքենիներ»:

Ռեշտի 1732 թ. պայմանագրով ռուսաստանյան վաճառականներին թույլատրվում էր անմաքս առևտուր անել Իրանում: Պայմանագիրը տարածվում էր նաև ռուսահպատակ հայերի վրա: Այդ բոլոր հանգամանքները խթանեցին Ռուսաստանի արևելյան առևտրի ծավալի աճը և դրանում աստրախանաբնակ հայերի մասնակցության բաժնի մեծացումը: 1724 թ. աստրախանաբնակ հայերի բաժինը կազմեց Աստրախանի նավահանգստի շրջանառության ընդհանուր գումարի 8%-ը: Ներքին առևտրում նրանց շրջանառությունը կազմեց 18,3 հազար ռուբլի, 163,2 հազար ընդհանուր գումարի դիմաց, կամ մոտ 11%-ը: 1725 թվականին այն կազմեց մոտ 3 տոկոս (1486 ռ. 51.233 ռուբլի ընդհանուր գումարից), իսկ 1726 թ.՝ մոտ 1%: Այդ նույն ժամանակ աստրախանցի հայերն արտասահման էին արտահանել ընդամենը 2,1 հազար ռուբլու արժողությամբ ապրանք, որը չորս անգամ պակաս էր արտասահմանցի հայ վաճառականների արտահանության ծավալից: 1733 թ. Աստրախանի հայ վաճառականները Վոլգան ի վեր 10,7 հազար ռուբլի կազմող գումարի ապրանքներ են արտահանել (133,2 հազար ռուբլի ընդհանուր գումարից), իսկ 1735 թ.՝ 10,4 հազար ռուբլու (159,1 հազար ռուբլու ընդհանուր արտահանությունից)[2]: Այսպիսով, նրանց բաժինը համապատասխանաբար կազմում էր դեպի

[1] Армяно-русские отношения в первой трети XVIII в сб. документов, ч. I. Ер., 1964, сс. 42-43.

[2] ЦГАДА. ф. 1361, оп. 1 д. 6.

կենտրոնական Ռուսաստանի շրջանները կատարվող ընդհանուր արտածման 8,0 և 6,5%-ը: Հաջորդ տասնամյակի կեսերին (1747 թ.) այն կազմեց 11,4% (178,6 հազարից 20,4 հազար ռուբլի): Հյուսիսային Կովկասի շենների և քաղաքների հետ կատարվող Աստրախանի առևտրում աստրախանաբնակ հայերը առաջատար տեղ էին գրավում հատկապես 18-րդ դ. 20-ական թվականներին:

Վոլգայով Աստրախանից հայերի արտահանած ապրանքների տեսակային բաղկացած էր հիմնականում արևելյան ապրանքներից (մետաքս, մետաքսյա և բամբակյա գործվածքներ ու դրանցից պատրաստված իրեր), նույնպես արևելյան ծագում ունեցող աննդամթերքներից՝ բրինձ, գինի, չոր մրգեր, ինչպես նաև տեղական արդյունահանության և արդյունաբերության մթերքներից (ձուկ, աղ): Դա մոտավորապես համապատասխանում էր Իրանից Աստրախան բերվող ապրանքների տեսականուն:

Եթե 18-րդ դ. 20-30-ական թվականներին աստրախանցի հայերն ավելի շատ զբաղվում էին ներքին, քան թե արտաքին առևտրով, ապա 40-ական թվականների մոտերքը մեծանում է նրանց բաժինը Աստրախանից կատարվող արտաքին առևտրում: 1733 թ. աստրախանաբնակ հայերը արտահանել են 3,2 հազար ռուբլու ապրանք, իսկ 1735 թ.՝ 11,4 հազ. ռուբլու կամ, համապատասխանաբար, ընդհանուր արտահանության 14,8 և 48,1%-ը: Ընդ որում, ռուսահպատակ հայերի զգալի մասը տակավին հարկադրված էր Իրանում մաքսային տուրքադրումից խուսափելու նպատակով իրենց ապրանքները դրանցել ռուս վաճառականների ապրանքների թվում: Աստրախանաբնակ հայերի բաժինը Իրանից կատարվող մետաքսի ներմուծության մեջ կազմում էր 1733 թ. 3,1% (1960 ռ.), 1735 թ.՝ 10,9% (25,1 հազ. ռուբլի), իսկ 1744 թ.՝ 11,2%[1]:

40-ական թվականների վերջերին ռուսաստանահպատակ հայերի բաժինը Ռուսաստանի վրայով կատարվող մետաքսի տարանցիկ առևտրում կտրուկ աճում է. 1747 թ.՝ մինչև 61,6% (109,7 հազ. ռուբլի) և 1748 թ.՝ 70,4% (121,1 հազ. ռուբլի): Հյուսիսից դեպի հարավ տարվող ապրանքների տարանցիկ առևտրի մեջ ռուսաստանցի հայերի բաժինը աճել է 1744-1746 թթ. 9,4-ից

[1] Юхт А.И. Торговые связи России со странами Востока в 20-40-х годах XVIIIв. В. кн. «Историческая география России, XVIIIв., ч I, М., 1981, с.92, 122. РГАДА, ф.1361 (Астраханская портовая таможня), оп.1, д.14, л.127-129.

մինչև 30,4%-ն, իսկ 1750 թ. նույնիսկ մինչև 43,0%-ի (237,1 հազար ռուբլով)[1]:

Հետագայում ռուսաստանահպատակ հայերի բաժինն էլ ավելի մեծացավ՝ 1753-1755 թվականներին հասնելով 72-77%-ի, իսկ 1760 թ.՝ 69%-ի: Դա մեծ չափով կապված էր ռուս-իրանական առևտրի և Ռուսաստանի վրայով Իրանի և Եվրոպայի միջև կատարվող առևտրի ծավալի մեծացման հետ, որի պատճառը թուրք-իրանական հարաբերությունների սրումն ու Փոքր Ասիայի վրայով կատարվող տարանցիկ առևտրի խափանումն էր:

Աստրախանի առևտրում հայերի տեսակարար կշռի մեծացման մեջ վճռական դեր էր խաղում խոշոր վաճառականությունը: 18-րդ դարի կեսերին նրա նկատելի աճը բացատրվում է Աստրախանի հայերի տնտեսական և իրավական իրավիճակի բարելավմամբ: 18-րդ դ. 30-40-ական թվականներին սրվեց հայերի պայքարը ռուսական արվարձանի վերնախավի դեմ, որը պահանջում էր սահմանափակել ռուսական հպատակություն չընդունած և արվարձանում, այսինքն՝ համառուսական (քաղքենիների, վաճառականների) դասերում չգրանցված հայերի տնտեսական գործունեությունը:

Աստրախանաբնակ օտարերկրացիների տնտեսական շահերի դեմ կատարվող հարձակումը միևնույն ժամանակ սրում էր նրանց պայքարը հանուն իրենց իրավունքների և արտոնությունների: Աստրախանաբնակ հայերի այդ պայքարի հաջող ավարտը և 1746 թ. առանձնահատուկ իրավական կարգավիճակի նվաճումը ամրապնդեց նրանց վիճակը և բարձրացրեց նրանց նշանակությունը Աստրախանի տնտեսական կյանքում և Ռուսաստանի արևելյան ու ներքին առևտրի մեջ:

18-րդ դ. առաջին կեսին տեղի է ունենում արհեստագործության նկատելի աճ Աստրախանում: Առևտրի մեջ տեղի ունեցած ընդհատումները դրդում էին ռուսական կառավարությանը ներմուծվող արտադրանքի նկատմամբ պահանջարկը բավարարող միջոցներ ձեռնարկել. դա առաջ բերեց համապատասխան արհեստների և գործարանային արտադրության զարգացում: Դեռևս 1710 թ. հայազգի վաճառական Սաֆար Վասիլևին թույլատրվել էր Թերեքի շրջանում զբաղվել չերամաբուծությամբ: Երկար տարիներ Ռուսաստանում առևտրով զբաղված Ջուղայեցի Սաֆար Վասիլևը հաստատվեց այդ երկրում՝ աստրախանյան հայկական Վասիլև-Մակարով-Խաստատով հայտնի տոհմի սկիզբը դնելով:

[1] Государственный архив Астраханской области, (ГААО), ф. 681 (Астраханская портавая таможня), оп.1, д.д.4,5,8.

1724 թ. մարդահամարի տվյալների համաձայն, Աստրախանում կային 22 հայազգի արհեստագործներ, այդ թվում՝ 6 սափրիչ, 4-ական կոշկակար և ճոն, 3-ական դերձակ և ներկարար: Սակայն այդ տվյալները թերի են թվում, քանի որ, օրինակ, չեն հիշատակվում ջուլհակները, թեև դրանց թվաքանակը զգալի էր: 1747 թ. տվյալներով, այդ ժամանակաշրջանում Աստրախանում կար 148 հայազգի արհեստավոր, այդ թվում՝ 48 ջուլհակ, 20 ոսկերիչ, 17 դերձակ, 16 կոշկակար, 14 ճոն, 8 ներկարար, 2-ական փականագործ և հացթուխ, մեկական պղնձագործ, դարբին, ատաղձագործ, կազմարար և ներկարար[1]: Ինչպես տեսնում ենք, ամենամեծ խումբը կազմում էին ջուլհակները, որն արտացոլում էր այդ տարիներին Աստրախանի մանածագործական արդյունաբերության արագ զարգացումը: Արդյունաբերության այդ ճյուղի հետ էին կապված նաև ներկարարները:

18-րդ դ. կեսերին Աստրախանի մանածագործական արդյունաբերությունն ուներ մոտ երկու հարյուր դազգահ: Եթե 1741 թ. աստրախանցի ջուլհակները տվել էին 6077 ռ. արտադրանք, ապա արդեն 1747 թ. արտադրվել էր 26.952 ռուբլու գործվածքեղեն: Մոսկվայի, Նիժնի Նովգորոդի և այլ քաղաքների չուկաներում աստրախանյան ոչ մեծ ֆաբրիկաների մրցունակության երաշխիքը դրանց արտադրած գործվածքեղենի արևելյան տեսականի և համեմատաբար էժան լինելն էր: Դա, ամենից առաջ, երկգույն կտավն էր, կումաչը (կարմիր գույնի գործվածք), չիթը, գլխաշորը, դիպակը և այլն: Այդ արտադրանքն ինչպես Աստրախանում, այնպես էլ Ռուսաստանի և Եվրոպայի այլ քաղաքներում մեծ պահանջարկ ուներ:

18-րդ դ. երկրորդ կեսին շարունակում էին պահպանվել այն հիմնական գործոնները, որոնք նպաստում էին հայերի՝ դեպի Ռուսաստան, մասնավորապես, Աստրախան ներհոսքին. դրանք, մի կողմից, պարսիկների և թուրքերի լծի տակ գտնվելու անտանելի պայմաններն էին, իսկ մյուս կողմից, հայերի նկատմամբ ռուսական կառավարության հովանավորչական քաղաքականությունը:

Այդ ժամանակաշրջանում հրապարակվեցին ռուսական կառավարության մի շարք օրենսդրական որոշումներ (ակտեր), որոնք հաստատում էին հայ վերաբնակիչների արտոնյալ կարգավիճակը: 1762 թ. օգոստոսի 10-ին առևտրի ասպարեզում վերացվեցին արգելքները նրանց համար, ովքեր առևտրական ընկերությունների մեջ չէին գրանցված: 1763 թ. հուլիսի 22-ին հետևեց «Ժամանած օտարերկրացիների մասին» հրովարտակը, որտեղ նորից հաստատվում էին Ռուսաստանում նրանց իրավունքները և արտոնությունները:

[1] Юхт А.И. Армянские ремесленники Астрахани в первой половине XVIII века- «Изв. АН Арм. ССР», общ. науки, 1958, №1, с.38.

Հրովարտակի պատճեններն աստրախանաբնակ հայերն ուղարկեցին Իրան՝ «իրենց հուսալի բարեկամներին», և այդ պատճենների հիման վրա «բավական մեծ թվով հայեր ներգաղթեցին»: 1763 թ. վերացվեց Ռուսաստանում հայկական եկեղեցիներ կառուցելու մասին սահմանափակումը:

Հայերի արտոնությունները վավերացվում են նաև կառավարական այլ որոշումներում: 1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի կապակցությամբ վաճառականներից, ֆաբրիկանտներից և գործարանատերերից լրացուցիչ տուրք գանձելու մասին որոշումը կիրառելիս Սենատի 1771 թ. հատուկ հրամանագրով վերապահություն էր արված այն մասին, որպեսզի աստրախանաբնակ հայերը և թաթարները ոչ մի այլ հարկով չտուրքագրվեն, բացի «այժմ նրանց կողմից վճարվող հարկերից»:

Դրանից ավելի առաջ (1769 թ.) հայերին թույլատրվեց Կասպից ծովով ապրանքներ փոխադրելու համար ծովային նավեր կառուցել: 1779 թ. վերացվեց մանուֆակտուր-կոլեգիան, որը խիստ կանոնարկում և կաշկանդում էր մանածագործական մանուֆակտուրաների գործունեությունը: 1764 թ. Աստրախանում հիմնադրվեց առևտրական բանկ՝ առևտրով զբաղվող վաճառականությանը վարկ տրամադրելու համար, իսկ 1779 թ. Աստրախանում հայերի համար նույնիսկ հատուկ բանկ ստեղծելու որոշում ընդունվեց:

Այդ ամենը վկայում էր հայերին և մյուս օտարերկրացիներին ներգրավելու ուղղությամբ ռուսական կառավարության ձեռնարկած լուրջ միջոցառումների մասին և խթանում դեպի Ռուսաստան նրանց ներգաղթը: Եթե 18-րդ դ. առաջին կեսին հայերի թվաքանակը ութ անգամ մեծացավ և անցավ 1500 շնչից, կազմելով 200-ից ավելի ծուխ, ապա 1763 թ. հայկական նոր եկեղեցի կառուցելու մասին խնդրագրում նշված էր արդեն 500 հայկական ծուխ: Ռուսիկանության տեղակագրում (1783 թ.) Աստրախանում բնակվող հայերի թվաքանակը կազմում էր 3980 շունչ (2200 արական և 1780 իգական սեռի): Այդ թվաքանակը հարկ է ավելացնել 197 շունչ աստրախանաբնակ կաթոլիկներին (նրանք հիմնականում հայեր էին), այնպես որ հայերի ընդհանուր թվաքանակը գերազանցում էր 4 հազարից: Աստրախանի ընդհանուր բնակչության քանակը այն ժամանակ կազմում էր 27,8 հազար շունչ: Քաղաքում եղած տների ընդհանուր թվից հայերին էր պատկանում 576 տուն[1]:

Այսպիսով, հայերը կազմում էին քաղաքի բնակչության 1/7 մասը, և նրա տների 1/7 մասը պատկանում էր նրանց: 18-րդ դ. վերջերին Աստրախանում կար 5 հազարից ավելի հայ, որոնց պատկանում էր քաղաքի բոլոր տների 20%-ը, այդ թվում՝ քարաշեն տների կեսից ավելին:

[1] ГААО, ф.394, оп.1, д.6098, л.3с об.

Այդ ժամանակաշրջանում հայերը բնակվում էին Աստրախանի երկու հիմնական շրջաններում՝ այսպես կոչված Հին և Նոր արվարձաններում կամ «մահալներում»: Հին արվարձանը ընկած էր քաղաքի կենտրոնական մասից դեպի արևելք, այն վայրի մոտակայքում, որտեղ քաղաքի ջրանցքը բաժանվում էր Կուտում գետից: Այնտեղ էր գտնվում նաև 18-րդ դ. առաջին տասնամյակներին կառուցված Աստվածածնի վերափոխման եկեղեցին: «Նոր մասը» գտնվում էր կենտրոնից հարավ, ջրանցքից այն կողմ: 1760-ական և 1770-ական թվականներին այդ շրջանում կառուցվեց Սբ. Պետրոսի և Պողոսի հայկական եկեղեցին: Այդտեղ էլ շարունակում էին հայերը տներ գնել: 18-րդ դ. վերջերին այնտեղ էր բնակվում քաղաքի հայ բնակչության գերակշիռ մեծամասնությունը:

Առևտրական շինությունների մեծ մասը տեղավորված էր Հայկական իջևանատունը, որը գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում, Կրեմլին անմիջականորեն հարող այսպես կոչված Միջնաբերդում: Կրպակների թվաքանակով (78) Հայկական իջևանատունը խոշորագույնն էր քաղաքում: Հայերը կրպակներ ունեին նաև ռուսական չուկայում և քաղաքի որոշ այլ մասերում:

Աստրախանի հայ բնակչության մեծ մասն ուղղակի կամ անուղղակի կերպով զբաղված էր առևտրի ոլորտում: Հայ առևտրականները կազմում էին բնակչության նշանակալի հատվածը: «Աստրախանի նահանգի 1789 թ. տնեղ-բնակչության նշանակալի հատվածը: «Աստրախանի նահանգի 1789 թ. տնեղբ

լի ընդհանուր կապիտալով հանդերձ[1]: Տվյալները վկայում են Աստրախանի հայ առևտրականների ունեցվածքային տարբերության մասին: Առաջին գիլդիային պատկանող 11 վաճառականներ ունեին գրեթե նույնքան կապիտալ, որքան երրորդ գիլդիայի 172 վաճառականները, ընդ որում, այդ գումարը կազմում էր հայ վաճառականության հայտարարած գումարի համարյա 40%-ը: Իսկ հայ առևտրականների հայտարարած ամբողջ կապիտալը կազմում էր Աստրախանի գիլդիական կապիտալի 35%-ը, ընդ որում, բազում հայեր (ի տարբերություն ռուսների) ռուսահայ մյուս գաղութների նման Աստրախանում ևս չէին գրանցվել գիլդիական վաճառականության շարքերում, և նրանց կապիտալը չի արտացոլվել բերված տվյալներում:

18-րդ դ. երկրորդ կեսին հայ առևտրականներն էին գրեթե լրիվ իրականացնում մետաքսի ներմուծումը, որը կազմում էր Իրանից կատարվող ռուսաստանյան ներմուծման 60-70%-ը: Ներմուծվում էր ինչպես հում (անմշակ), այնպես էլ եփած (մշակված), ինչպես նաև մանված, ներկված և ոլորած մետաքս, ընդ որում, հում (անմշակ) մետաքսի ներմուծումը մաքսով չէր տուրքագրվում: 18-րդ դ. կեսերին տարեկան ներմուծվում էր 1,5 մինչև 2,7 հազար փութ մետաքս, 60-70-ական թվականներին այն հասավ 3-6 հազարի, իսկ 19-րդ դ. սկզբներին արդեն գերազանցում էր 12 հազար փութը[2]:

Աստրախանի վրայով կատարվող ռուսական ներմուծման կարևոր հոդվածն էր նաև բամբակը և բամբակյա մանվածքը: 1758-1760 թթ. Իրանից և Թուրքիայից Ռուսաստան էր բերվում տարեկան միջին հաշվով 20 հազ. ռուբլու բամբակյա արտադրանք (նույն քանակի էլ մետաքս), 1777-1781 թթ.՝ 24 հազ. ռուբլու, իսկ 1792 թ.՝ 120 հազար ռուբլու ընդհանուր գումարի բամբակյա և մետաքսյա արտադրանք[3]: Բամբակը հիմնականում ներմուծվում էր Միջին Ասիայից, և հայերի բաժինը դրա ներմուծման մեջ այնքան մեծ չէր (մոտ 10-20%), որքան մետաքսի, թեև այն մեծ նշանակություն ուներ աստրախանցի հայերի համար, որոնցից շատերը զբաղվում էին բամբակյա գործվածքեղենի արտադրությամբ:

Հայերը մասնակցում էին նաև այլ ապրանքների առևտրին՝ Ռուսաստան ներկեր, թանկարժեք քարեր, բրինձ, չիր ներմուծելու և Ռուսաստանից պատրաստի արտադրանք (տնտեսական սպասքեղեն, հայելիներ), ինչպես նաև եվրոպական ապրանքներ՝ մահուդ, շաքար, ներկեր, պերճանքի առարկաներ արտահանելու գործին:

Աստրախանաբնակ հայերն առևտուր էին անում նաև կաբարդինցիների և կալմիկների հետ: Հյուսիսային ուղղությամբ նրանք արևելյան արտադրանքի իրեր էին տանում Մակարիևյան տոնավաճառ, Մոսկվա, Պետերբուրգ և ռուսական որոշ այլ քաղաքներ, իսկ արևմտյան ուղղությամբ՝ դեպի Չերկասկ և Դոնի այլ շրջաններ: Վոլգայով և Դոնով անցնող գետային ուղիներից դատ, նրանք սայլերով և սահնակներով ապրանքներ էին փոխադրում նաև ցամաքային ճանապարհներով:

Առևտրի զարգացման վրա նկատելիորեն ազդում էր առևտրական ընկերություններ ստեղծելու քաղաքականությունը: 1754 թ. դեկտեմբերին ռուսաստանցի յոթ վաճառական (նրանց թվում՝ Սաֆար Վասիլևի Թոռը, մոսկվացի վաճառական, ծագումով աստրախանցի հայ Վասիլի Խաստատովը) դիմեցին Սենատ՝ Պարսկաստանի հետ առևտուր անելու առևտրական բաժնետիրական ընկերություն ստեղծելու թույլատվության համար: Նրանց առաջարկության շուրջ ծավալվեց պայքար, իսկ այդ ընթացքում կառավարությունը հանդես եկավ «Կոստանդնուպոլսում ռուսաստանյան առևտրական ընկերություն» ստեղծելու նախաձեռնությամբ: 1756 թ. աշնանն այդ ընկերությունը ստեղծելու համաձայնություն տվեցին երեք վաճառական, որոնք, ի դեպ, դիմել էին Պարսկաստանի հետ առևտուր անելու ընկերություն ստեղծելու առթիվ, բայց քանի որ այդ ընկերությունը ստեղծելու վերաբերյալ այնպես էլ որոշում չկայացվեց, նրանք սատարեցին կառավարության նախաձեռնությանը, իսկ Վ. Խաստատովը նույնիսկ նշանակվեց Կոստանդնուպոլսի հետ առևտրային ընկերության ավագ-տնօրեն, ընկերության, որը երբեմն կոչվում էր Խաստատովյան, իսկ ավելի հաճախ՝ Թեմերնիկովյան ընկերություն, քանի որ ռուս-թուրքական առևտուրն այդ տարիներին հիմնականում ընթանում էր Դոնի գետաբերանում գտնվող Թեմերնիկ նավահանգստով: Պարսկաստանի հետ առևտրի ընկերություն ունենալու իրավունքը 1758 թ. տրվեց հայազգի վաճառականներ Մանվել Իսախանովին և նրա եղբայրներին: Ընկերությունը ստացավ «Աստրախանի և Ղզլարի նավահանգիստներից արվող պարսկական առևտրի ընկերություն» անվանումը: Նրա ղեկավարության մեջ առաջատար դեր էին խաղում աստրախանաբնակ հայերը՝ Իսախանովները: Առևտրական ընկերություններում գործուն դեր էին խաղում ռուս վաճառականները, և կառավարությունը, սատարելով ընկերությունները, միտում էր բարձրացնել նրանց շահույթները: Վերոհիշյալ ընկերության ավագ տնօրեն նշանակվեց Մանվել Իսախանովը, իսկ վարչության կազմը մտան նրա եղբայրները՝ Արտեմը, Բոգդանը և Նիկիտան: Ընկերությունը ենթարկվում էր Սենատին: Դրա

---

[1] Ցուխտ Ա., Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը 18-րդ դարի առաջին կեսին, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1957, N°7, էջ 57-58:

[2] Небольсин Г. Статистические записки о внешней торговле России, СПб., 1835, с.155.

[3] Любомиров П. Г., Очерки по истории русской промышленности. М., 1947, с.640.

գլխավոր դրասենյակը գտնվում էր Աստրախանում, իսկ մնացյալ դրասենյակները՝ Ղզլարում, Մոսկվայում և Պետերբուրգում:

Իսախանովների ընկերությունը, սակայն, չարդարացրեց իր վրա դրված հույսերը, և Պարսկաստանի հետ առևտրի ընկերության մենաշնորհը Պյոտր 3-րդի մարտի 28-ի հրամանագրով, իսկ վերջնականապես՝ եկատերինա 2-րդի 1762 թ. հուլիսի 31-ի հրամանագրով վերացվեց[1]:

Առևտրի չափերի և բովանդակության վրա մեծապես ազդում էր նաև մաքսային քաղաքականությունը: Մաքսային մի շարք արտոնություններ տարածվում էին նաև աստրախանաբնակ հայերի վրա: Մեծ դեր էր խաղում մետաքսի անմաքս ներմուծման մասին Նոր Ջուղայի առևտրական ընկերության հետ կնքած պայմանագիրը: Հայերի համար բարենպաստ էին նաև Ռեշտի 1732 թ. պայմանագրի հոդվածները, որի համաձայն, ռուս վաճառականներին թույլատրվում էր Իրանի հետ անմաքս առևտուր անել: Այն փաստորեն տարածվեց նաև աստրախանցի հայերի վրա:

1757 թ. մշակվեց մաքսային նոր սակացուցակ (տարիֆ), որը պիտի ազդեր արևելյան առևտրի և մաքսային եկամուտների աճի վրա: 19-րդ դ. վերջին արդեն մաքսային եկամուտները 5-7 անգամ ավելի բարձր էին, քան 18-րդ դարի կեսերին:

Առևտրի ոլորտի հետ սերտորեն կապված՝ Աստրախանի հայ բնակչությունը գործուն մասնակցություն էր ունենում մաքսային մարմինների աշխատանքին: Մաքսատունը երկար ժամանակ միակ պետական հաստատությունն էր, ուր տակավին 18-րդ դարում ծառայության էին ընդունում աստրախանաբնակ հայերին: Այսպես, 18-րդ դ. 80-ական թվականներին մաքսատան տնօրենի պաշտոնը զբաղեցնում էր հայազգի Իվան Խոջամալովը, մաքսային տուրքեր գանձողի պաշտոնը՝ ենթապարուչիկ հայազգի Նիկիտա Բոգդանովը, իսկ կշեռքավարի պաշտոնը՝ Գրիգոր Ասլանովը: Հայկական դատարանն ամեն տարի ընտրում էր երկու երդվյալ մակլեր (առևտրական միջնորդ):

18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբին երկար տարիների ընթացքում Աստրախանի մաքսատան տնօրենն էր հայազգի Սեմյոն Սերգեյիչ Իվանովը՝ աստրախանցի խոշոր վաճառականի և մանուֆակտուրայի տիրոջ, հայկական «Դատաստանագրքի» կազմողներից մեկի՝ Սերգեյ Իվանովի (Սարգիս Օհանյանի) որդին և հռչակավոր Լազարյան գերդաստանի ազգականը: Այսրկովկաս Ռուսաստանին միակցելուց հետո նրան ներգրավեցին նաև Բաքվում և Վրաստանում մաքսատներ կազմակերպելու գործի մեջ:

[1] Армяно-русские отношения в XVIII века. Сб. документов, т. IV.(1760-1800), Ер., 1990, с. 32.

Հայկական առևտրական կապիտալը կապված էր նաև վաշխառության և վարկի խնդիրների հետ: 1764 թ. բացվեց Աստրախանի բանկը՝ Մոսկվայից և Պետերբուրգից դուրս ստեղծված Ռուսաստանի առաջին բանկը, հանգամանք, որը հավաստում է 18-րդ դ. Աստրախանի կարևոր դերը Ռուսաստանի տնտեսական կյանքում: Նրա վարկատուների թվում էին նաև հայազգի վաճառական-ֆաբրիկանտներ Գալուստ Բունիաթովը, Մինաս Դելյանչևը և այլք: Հայերին վարկ տրամադրելն ուղեկցվում էր բարդ ձևականություններով, և 1779 թ. կառավարությունը հարկադրված եղավ Աստրախանում հիմնադրել «այնտեղ բնակվող հայերի վիճակը բարելավելու համար փոխատվական հատուկ բանկ»[1]: Հիմնադրամի համար տրամադրվեց 50.000 ռուբլի:

Աստրախանի և Ռուսաստանի մյուս քաղաքների հայ վաճառականության գործուն մասնակցությունը վարկավորման գործողություններին վկայում է, որ կապիտալիստական տնտեսավարման առաջավոր ձևերը, որոնք դժվարությամբ իրենց համար ճանապարհ էին հարթում Ռուսաստանի ավատատիրական պայմաններում, ավելի արագ էին ընկալվում և լայն կիրառություն էին գտնում հայկական գաղութներում, որոնցում հասարակական-տնտեսական նոր կացութաձևի զարգացման պրոցեսները համեմատաբար վաղ էին սկսվել:

Աստրախանի սոցիալ-տնտեսական կյանքում հայերի դերը բնորոշվում էր նաև 18-րդ դ. կեսերից քաղաքում զարգացող արդյունաբերության և արհեստագործության մեջ նրանց ունեցած մասնակցությամբ:

18-րդ դ. երկրորդ կեսին նկատվում է Ռուսաստանում մետաքսյա և բամբակյա գործվածքեղենի նկատմամբ պահանջարկի մեծացում: Դա խթանում էր մանածագործական ֆաբրիկաների զարգացմանը, ընդ որում, երկրի մանածագործական կենտրոններից մեկը դարձավ Աստրախանը: Քաղաքի աշխարհագրական դիրքը նպաստում էր Արևելքից հումքի՝ մետաքսի, բամբակի և ներկանյութերի լայն ներկրմանը:

Առաջին մետաքսագործական մանուֆակտուրան Աստրախանում ստեղծվել էր տակավին 1734 թ. Հովսեփ Իզբիլև և Ստեփան Տիգրյանսկի հայրդիների կողմից: 1740-ական թվականներին Աստրախանում ֆաբրիկա հիմնադրեց պետերբուրգցի վաճառական, հայազգի Լուկա Շիրվանովը: 1750 թ. գրանցվեց հայազգի Իվան և Գալուստ Բունիաթովների ֆաբրիկան, որ նրանք գնել էին Իզբիլևից: Այն արտադրում էր տարբեր գույնի մետաքսյա գործ-

[1] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV., с. 138.

վածքներ, ինչպես նաև հատուկի իրեր (գլխաշորեր, գոտիներ): Այդպիսին էր նաև Վարազ Իվանեսովի ֆաբրիկայի տեսականին:

Հայերից խոշոր ֆաբրիկատերեր դարձան Պետրոս Վարդանովը, Ռևազ Զալիևը, Սերգեյ Իվանովը: 1769 թ. Աստրախանում արդեն կար ինը մետաքսագործական ֆաբրիկա (Ռուսաստանի ֆաբրիկանների մեկ քառորդը), որոնցից հինգը պատկանում էր հայերին: Սերգեյ Իվանովի ֆաբրիկայում կար 55 հաստոց (դազգահ), Ռևազ Զալիևի ֆաբրիկայում՝ 19, Պետրոս Վարդանովի ֆաբրիկայում՝ 17: Հայերին էր պատկանում Աստրախանի ֆաբրիկանների դազգահների երեք քառորդը (153-ից՝ 113-ը): 1787 թ. տվյալներով, հայերին էր պատկանում քաղաքի մետաքսագործական 38 ֆաբրիկաներից 32-ը, և դազգահների 298 ընդհանուր քանակից՝ 268-ը: Այսպիսով, Աստրախանի մետաքսագործական արդյունաբերության ծաղկման ժամանակաշրջանում այն գրեթե ամբողջապես գտնվում էր հայերի ձեռքում:

Համանման պատկեր էր ներկայացնում Աստրախանի բամբակեղենի արդյունաբերությունը, որի ձեռնարկությունների մեծ մասը նույնպես պատկանում էր հայերին: 1787 թ. ամփոփագիրը տեղեկություններ է պարունակում 670 դազգահ ունեցող բամբակագործական 85 ֆաբրիկաների մասին, որոնցից հայերի սեփականությունն էր 81 ֆաբրիկա՝ 645 դազգահով հանդերձ: 18-րդ դարի վերջին տարիներին նկատվում է, ինչպես և մետաքսագործական արդյունաբերության մեջ, բամբակագործական մանուֆակտուրաների թվաքանակի կրճատում: Այդուհանդերձ, 19-րդ դ. սկզբին բամբակագործական ֆաբրիկաների թվաքանակով Աստրախանի տեքստիլ արդյունաբերությանն էր պատկանում Ռուսաստանի ֆաբրիկաների 80%-ից ավելին:

Սեկի միակ ֆաբրիկան Աստրախանում պատկանում էր հայերին՝ Իվան և Դավիթ Թահմազով եղբայրներին: Բացի այդ ֆաբրիկայից, Ռուսաստանում 18-րդ դ. երկրորդ կեսին կար ընդամենը սեկի ևս մեկ ֆաբրիկա Մոսկվայում, որը նույնպես պատկանում էր հայազգի Պողոս Ամինյին և մոտավորապես ուներ նույն հզորությունն, ինչ և Աստրախանի ֆաբրիկան, որը տարեկան արտադրում էր մոտ հազար հատ սեկ: 18-րդ դ. վերջերին սեկի ֆաբրիկաների թիվը Աստրախանում որոշ չափով մեծացավ:

Աստրախանում և հարակից շրջաններում ճորտային աշխատանքի բացակայությունը նպաստեց կապիտալիստական ուղիով մանածագործական արդյունաբերության զարգացմանը: Այնտեղ 18-րդ դ. տարածում ստացած վարձու աշխատանքի սիստեմը կիրառվում էր գրեթե բացառապես Աստրախանում:

Շարունակում էր բարձր մնալ նաև հայազգի արհեստագործների տեսակարար կշիռը: Փաստորեն շատ մանուֆակտուրներ արհեստանոցներ էին: Այնտեղ շատ հաճախ աշխատում էին արհեստանոցի տիրոջ ընտանիքի անդամները: Մանածագործական ֆաբրիկաների հետ կապված էին շատ արհեստագործներ, որոնք ֆաբրիկատիրոջ պատվերով տանն էին աշխատանքը կատարում: Տանը շատ պատվերներ կատարում էին կանայք: Հայ կանանց շրջանում շատ կային նաև ձեռագործությամբ զբաղվողներ, հատկապես ասեղնագործողներ, վերմակների տրեգները, քուղերը կարողներ, թասակներ, գուլպաներ, ձեռնոցներ գործողներ:

1760 թ. Կառավարիչ սենատը հայազգի Սիլվեստր (Սիխբեստրոս) Գեբասիմովին նշանակեց Աստրախանի բոլոր արհեստագործների տնօրեն: Նրան տրված հրահանգը համքարային կառուցվածքին բնորոշ սահմանափակումների հավաքածու էր: Արհեստագործներին արգելվում էր երկու արհեստով զբաղվելը: Տնօրենը հետևում էր արտադրանքի որակին: Արհեստագործներն ընտրում էին իրենց ավագներին: Վաճառականներին արգելվում էր «չդրոշմված» (այսինքն՝ չատուցված) չափեր և կշեռքներ գործածելը: Ս. Գեբասիմովը դարձավ բավականին ազդեցիկ դեմք ոչ միայն հայկական համայնքի, այլև Աստրախանի տնտեսական ամբողջ կյանքի առումով: Նա շարունակ պայքարում էր վաճառականների և արհեստավորների վերնախավի մաքսանենգության և այլ չարաշահումների դեմ և ստացել էր «արդյունաբերական պարեհ» մականունը:

1782 թ. տնօրենի պաշտոնը վերացնելուց հետո Հայկական դատարանը ստանձնեց արհեստավորներին և նրանց պատրաստած ապրանքների որակը վերահսկելու պարտականությունը, այսինքն՝ իրենով փոխարինեց հայերի համքարային կազմակերպությունը[1]:

1785 թ. արհեստների մասին կանոնադրությունը (Քաղաքների մասին կանոնադրության մի բաժինը) և 1799 թ. արհեստների մասին կանոնադրությունը բոլոր արհեստագործներին պարտավորեցնում էին գրանցվել համքարությունների կամ արհեստավորների վարչություններում, սակայն Աստրախանի հայերի համար Պավել 1-ի հրամանագրի հիման վրա վերապահություն էր արվում՝ համքարություններում խիստ կամավոր կերպով գրանցվելու և հայազգի արհեստագործներին Հայկական դատարանի տնօրինության ներքո թողնելու մասին, քանի որ նրանք գաղութի բնակչության զգալի մասն էին կազմում:

Հայկական դատարանը, կամ ռատհաուզը, սկսեց գործել 1747 թ. հունվարից: Այն ինքնավարության և դատավարության մարմին էր հայերի և կաթոլիկների համար (աստրախանաբնակ կաթոլիկների ճնշող մեծամասնությունը հայեր էին): Նրա գործունեությամբ էր թելադրված հատուկ օրենսգիրք կամ

[1] Юхт А.И. Социальная борьба в Астраханской армянской колонии (середина XVIIIв).- «Вестник общ. наук АН Арм. ССР», 1979, №6.

դատաստանագիրք ստեղծելու անհրաժեշտությունը: Դատաստանագիրք ստեղծելու աշխատանքը սկսվեց դատարան հիմնելուց անմիջապես հետո: Այն կազմելուն ձեռնամուխ եղան Աստրախանի հայկական համայնքի նշանավոր ներկայացուցիչներ Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր Կամպանյանը (Կամպանովը) և Սարգիս Օհանյանը (Սերգեյ Իվանովը): Իրենց բազմամյա աշխատությունը նրանք ավարտեցին 1765 թ.: «Աստրախանի հայերի Դատաստանագիրքը» հայ իրավաբանական մտքի արժեքավոր հուշարձաններից էր[1]:

Մշակված դատակազմության համապատասխան՝ դատարանի հաստիքը բաղկացած էր ինն անձից. երեք դատավոր (որոնցից մեկը համարվում էր առաջինը), քարտուղար, ավագ, գրագիր, թարգմանիչ, դատարանի պահակ և բանտապետ: 1746 թ. հրամանագրի համաձայն, Աստրախանի հայ ազգաբնակչությունը բաժանվում էր երեք խմբի («հոդվածի»), առևտրի և արհեստագործության մեջ համայնքի անդամների ունեցած դերին և դիրքին համապատասխան (խոշոր, միջին և մանր առևտրականներ և արհեստավորներ): Յուրաքանչյուր խումբ («հոդված») ընտրում էր դատարանի կազմում իր ներկայացուցչին (ուակից և՝ երեք դատավոր): Պահանջվում էր նաև, որ դատավորներից երկուսը լինեն հայ առաքելական եկեղեցու հավատացյալներ, իսկ երրորդը՝ կաթոլիկ:

1763 թ. հունվարի 13-ի Սենատի հրամանագիրը վճռական փոփոխություններ էր մտցնում Աստրախանի օտարերկրացիների ինքնավարության մարմինների իրավասության մեջ: Աստրախանի հայ և մահմեդական ազգաբնակչության վարչաիրավական մարմինները միավորվում էին աստրախանաբնակ ասիացիների մեկ ընդհանուր դատարանում, սակայն հայազգի և թաթար դատավորները նիստեր էին գումարում տարբեր շենքերում, թեպետ և պարտավոր էին մեկ շենքի մեջ տեղավորվել: Դատարաններից մեկը կոչվում էր հայ-ասիական, իսկ մյուսը՝ ասիական-մահմեդական: Մտցվում էր դատարանի գործունեությունը վերահսկող վերակացուի պաշտոն, որը զբաղեցնում էր ռուս սպան: Հրապարակային վերակացուները խիստ ակտիվ էին գործում դատարաններում, հարուցելով բնակչության բազմաթիվ դժգոհություններ:

Ռուսաստանի հայկական համայնքների իրավական դրության մեջ մեծ դեր խաղաց 1785 թ. քաղաքային ռեֆորմը: Քաղաքների մասին 1785 թ. ապրիլի 21-ին հրապարակված կանոնադրության տարբերիչ հատկանիշը «քաղաքաբնակների» կազմն ընդլայնելն ու արվարձանային համայնքի նեղ դասայնության քայքայելն էր: Աստրախանաբնակ հայերը, որոնք նախքան 1785 թ. բարեփոխումը չէին մտնում քաղաքի հասարակության կազմի մեջ, Քաղաքային կանոնադրությամբ պետք է գրանցվեին նորաստեղծ քաղաքային կարգե-

[1] Դատաստանագիրք Աստրախանի հայոց, աշխատասիրությամբ Ֆ.Ֆ.Պողոսյանի, եր., 1967:

րից (դասերից) որևէ մեկում, հանգամանք, ինչը պահանջում էր արվարձանի (պոսադի) ռուս վերնախավը տակավին 1740-ական թվականներից: Բայց քանի դեռ արևելյան առևտրի և Աստրախանի մանածագործական արդյունաբերության զարգացմամբ Ռուսաստանը ամբողջապես կախված էր հայերից, կառավարությունը վերջին հաշվով հայերի կողմն էր պահում: Սակայն 18-րդ դ. վերջին տանտիրություն, ավատատիրության քայքայմանը զուգընթաց, ռուսաստանյան վաճառականական կապիտալը գնալով էլ ավելի էր իր համար հանդուրժելի հարթում, և կառավարությունն ավելի հաճախ էր հակվում դեպի ռուս վաճառականների պահանջները խրախուսելու և բավարարելու ուղին:

Նոր կանոնադրության համաձայն, առևտրով զբաղվող ամբողջ բնակչությունը պարտավոր էր գրանցվել գիլդիաների մեջ՝ հայտարարված դրամագլխի գումարին համապատասխան, առաջին գիլդիայում 10-ից մինչև 50 հազար ռուբլի, երկրորդ գիլդիայում՝ 5-ից մինչև 10 հազար ռուբլի, երրորդ գիլդիայում՝ 1-ից մինչև 5 հազար ռուբլի: Վաճառականական գիլդիաներում գրանցվելը բավականին մեծ առավելություններ էր տալիս (անդրծովյան առևտրի և այլնի իրավունք), բայց ուղեկցվում էր պարտականությունների (պարհակների) կարգագրմամբ, որոնցից նախկինում հայ ազգաբնակչությունը ազատված էր: Ընդ որում՝ գիլդիական վաճառականությանը տրամադրվող իրավունքները վերաբերում էին միայն 1-ին գիլդիային, որտեղ գրանցվելու համար անհրաժեշտ էր ունենալ 10 հազար ռուբլուց ոչ պակաս, իսկ այդպիսի դրամագլուխ ունեին Աստրախանի հայ վաճառականներից միայն առանձին անհատներ:

Շատ վաճառականներ, որոնց դրամագլուխը մեկ հազար ռուբլուց պակաս էր, հայտնվում էին քաղքաբնակների (մեշչանների) դասում: Իսկ քաղքաբնակների և 3-րդ գիլդիայի վաճառականների առևտուր անելու իրավունքները խիստ սահմանափակ էին: Ուստի և մանր առևտրականների մեծամասնությունը չհագեցված չէր գիլդիաներում գրանցվելու մեջ: Հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը ձգտում էր քաղաքային նոր դասերից դուրս մնալ: Բարեփոխման տարում Աստրախանում առկա 865 հայկական ծխից 1787 թ. (երկու և կես տարի անց) գրանցվել էր սոսկ 244 ծուխը, իսկ մոտ 620 ծուխ (70%-ից ավելին) ըստ ամենայնի խուսափում էր գրանցվելուց: Դրա հետևանքով Աստրախանի հայ բնակչությունը վարչաիրավական առումով բաժանվեց երկու մասի: Կովկասի գեներալ նահանգապետ գեներալ-պորուչիկ Պ. Ս. Պոտյոմկինի՝ կայսրուհուն ներկայացրած առաջարկություններին հետևեց 1788 թ. հունվարի 26-ի Անվանական հրամանագիրը, որի համաձայն հայերը և մյուս «ասիացիները», որոնք չէին ցանկացել վաճառականների կամ քաղաքաբնակների դասում գրանցվել, մնում էին նախկին կարգավիճակի մեջ: Քաղաքային կանոնադրությամբ չգրանցված հայերին կառավարե-

լու համար ստեղծվեց ատյան: Հայկական նոր ատյանն ուներ նույն կառուցվածքը և իրավասություններ, որպիսիք ուներ Հայկական-ասիական դատարանը:

Թեև պաշտոնապես պահպանվեցին Հայկական ատյանի տնօրինությանը ենթակա հայերի նախկին արտոնությունները, սակայն իրականում նրանց վրա բարդվեց ավելի մեծ, քան նախկինում եղած պարտավորությունները: 1746 թ. հրամանագրով զորքերին օթևան տրամադրելուց ազատվում էին այն տները, որոնցում բնակվում էին իրենք՝ հայերը և կարգադրված էր օթևանի փոխարեն դրամ գանձել, դրանով օթևանելու համար տներ վարձակալել կամ էլ տներ չլինելու դեպքում կառուցել զորանոցներ: 1788 թ. աստրախանաբնակ հայերն իրենց հաշվին պահում էին 14 զորանոց զինվորների համար, որոնց կառուցումը և քաղաքի այլ կարիքների համար դրանք գանձելը հայկական հասարակության տրոհումից հետո դարձել էին ծանր բեռ[1]: Հայերի համար ծանր բեռ էր նաև ընտրովի պաշտոնյա անձանց պահելը: Դյուրին չէր նաև այն հայերի վիճակը, որոնք գրանցվել էին քաղաքային դասերի (կարգերի) մեջ: Մեծ մասամբ դրանք սակավ ունևոր խավերի ներկայացուցիչներ էին: Միայն 1797 թ. մագիստրատի տնօրինությանը ենթակա 3-րդ գիլդիայի 157 հայազգի վաճառականներ, այսինքն՝ մեծամասնությունը, այդ կարգին (դասին) համապատասխան դրամագլուխ չհայտարարելու համար վտարվեցին գիլդիայից և փոխադրվեցին քաղքենիների կարգը[2]:

1785 թ. Քաղաքային ռեֆորմը հարուցեց աստրախանաբնակ հայերի բոլոր խավերի դժգոհությունը, քանզի այն վատթարացնում էր նրանց տնտեսական և իրավական վիճակը: Եկատերինա 2-րդի անակնկալ մահը արագացրեց պրոբլեմի լուծումը՝ հայերի համար բարենպաստ առումով: Պավել 1-ը բացասաբար էր վերաբերվում իր մոր օրինադրություններին և վերացրեց դրանցից շատերը: Պավելի 1797 թ. մարտի 1-ի հրամանագրով կարգադրվում էր Աստրախանի հայկական հասարակությանը վերադարձնել նրա նախկին իրավունքները, այն է՝ ժամանակավոր հպատակություն ընդունելը, հարկագրաբար գիլդիաներում չգրանցելը, հայերին՝ զորքերին օթևան տալու պարտականությունից ազատելը և այլն: Այդ նույն հրամանագրով ստեղծվեց Աստրախանում առևտուր անող Ախալցիների ընդհանուր դատարան: Այլ կերպ ասած, վերականգնվում էին մինչև 1785 թվականը գոյություն ունեցող շատ իրավունքներ, մի բան, որին ձգտում էին հասնել հայերը:

[1] Государственный исторический архив России (ГИАР), ф.1374, д.2.

[2] ГААО, ф. 1, д. 27, лл. 61-62.

Սենատի՝ 1800 թվականի նոյեմբերի 19-ի հրամանագրով Աստրախանում գոյություն ունեցող Ախալցիների ընդհանուր դատարանը վերստին բաժանվեց երկու մասի՝ Հայկական դատարանի և Թաթարական դատարանի:

Այդ հրամանագրերով հիմնականում բավարարվեցին Քաղաքային կանոնադրության դեմ հանդես եկող հայերի պահանջները, իսկ Աստրախանի հայկական գաղութը վարչական առումով նորից մխանական դարձավ: Հաջորդ տասնամյակներում Աստրախանի հայկական դատարանի կարգավիճակը չարունակում էր հիմնականում անփոփոխ մնալ:

***

Աստրախանի հայկական գաղութի հասարակական կյանքում կարևոր տեղ էր գրավում նրա բնակչության գործուն մասնակցությունն օտար զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին:

Աստրախանի հետ են կապված հայ ազատագրական շարժման այնպիսի ականավոր գործիչների անուններ, ինչպիսիք էին՝ Իսրայել Օրին, Լազարյանների գերդաստանը, Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Հովսեփ Արդության-Երկայնաբազուկը և ուրիշներ: 18-րդ դ. կեսերին Աստրախանում էր գտնվում հայկական և վրացական հեծելազաշտերի հրամանատարությունը: Աստրախանը Ռուսաստանի բոլոր հայերի թեմի կենտրոնն էր: Աստրախանաբնակ հայերի կապը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի հետ խիստ սերտ էր ու բազմաբնույթ՝ հայրենիքն ազատագրելու նախագիծը կազմելուց ընդհուպ մինչև օտար կեղեքիչների դեմ մղած պայքարին անձամբ մասնակցելը:

Տակավին Պյոտր 1-ինի՝ Կասպիական արշավանքի (1722-1723 թթ.) ժամանակներից ի վեր Աստրախանում կազմավորվեցին և հանդերձավորվեցին ռուսաստանաբնակ հայերից զորական ստորաբաժանումներ, որոնք ուղարկվեցին Իրանում և Այսրկովկասում ռազմական գործողություններին մասնակցելու համար: Մարտական ուժից զատ, հայկական գաղութը ռուսական զորքերին տրամադրում էր որակյալ արհեստագործներ, թարգմանիչներ, ուղեցույցներ և հետախույզներ: 1722 թ. Աստրախանում կազմավորվեց հայ կամավորների ջոկատը՝ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Պետրոս դի Սարգիս Դիլանեցու և Իսրայել Օրու զինակից Մինաս Վարդապետի գլխավորությամբ: Ռուսաստանում կազմավորված հայկական զորական ստորաբաժա-

նումները հետագայում կազմեցին հայկական հեծելավաշտեր, որոնք գործում էին ռուսական բանակի հրամանատարության կարգադրությամբ: Հայկական և հայ-վրացական հեծելավաշտերը գոյատևեցին մինչև 1769 թ. և տեղակայված էին Ղզլարում և Աստրախանում: 1736 թ. Աստրախանի կայազորում ծառայող փոխգնդապետ Զինովևը (հայկական աղբյուրներում՝ Զիննենցը) ռազմական կոլեգիային զեկուցում էր, որ «Աստրախանում կարող է հավաքագրել այնպիսի անձանց, որոնք հանձն կառնեին գործուղվել հակառակորդի երկիրը՝ այնտեղ արժանահավատ և ստույգ տեղեկություններ ժողովելու և դրանք վաճառականական թղթակցության միջոցով իրենց գլխավոր հրամանատարներին առաքելու համար»[1]:

Աստրախանաբնակ հայերի՝ իրենց ժողովրդի ազատագրական պայքարին սրտամոտ վերաբերմունք ունենալու վառ ցուցանիշ եղավ հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ Հովսեփ Էմինի 1762–1763 թթ. այցը Աստրախան: Աստրախանում Էմինը զինվորագրեց 20 մարդ: 1763 թ. հայ վաճառականության ներկայացուցիչները Էմինին թանկարժեք ընծաներ նվիրեցին, մի հանգամանք, որը վկայում էր Էմինի առաքելության ժողովրդականության մասին հայ գաղութի բնակչության շրջանում: 1769 թ. Աստրախանում ծնունդ առավ Հայաստանը ազատագրելու նախագծերից մեկը: Նախագիծը հեղինակել էր աստրախանաբնակ խոշոր վաճառական Մովսես Սարաֆյանը, բայց ինքն անձամբ վկայակոչում է նաև ռուսաստանաբնակ մի շարք ազդեցիկ հայերի, այդ թվում աստրախանցի Գրիգոր Կամպանովին և իշխան Միքայել Նազարովին: Նախագիծն արտացոլում էր Աստրախանի և Ռուսաստանի մյուս քաղաքների հայերի ունևոր շրջանների՝ Հայաստանում միապետությունը վերականգնելու ձգտումը՝ կալվածատիրական հողատիրության պահպանմամբ հանդերձ: Այն բովանդակում էր նաև հայ ապստամբական շարժում կազմակերպելու կոնկրետ առաջարկություններ: Կարևոր դեր էր հատկացվում Աստրախանի հայ վաճառականությանը՝ ռազմական գործողությունների ֆինանսական և տնտեսական ապահովման առումով:

Աստրախանաբնակ հայերի չփումները ռուսական հրամանատարության հետ առանձնապես ուժգին դարձան Ա. Վ. Սուվորովի Աստրախան ժամանելուց հետո, որը 1780–1782 թթ. զբաղեցնում էր այդ երկրամասում տեղակայված ռուսական զորքերի հրամանատարի պաշտոնը և մշակում ռազմական արշավանքի ծրագրեր դեպի Իրան՝ Կասպից ծովում և Այսրկովկասում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դիրքերն ամրապնդելու նպատակով: Ա. Վ. Սուվորովը Գ. Ա. Պոտյոմկինին տարածաշրջանի իրադրության

[1] Армянское войско в XVIII веке. Подготовил и издал А. Н. Хачатрян. Ер., 1968, с.122.

մասին պարբերաբար զեկուցագրեր ուղարկելիս հաճախ վկայակոչում էր աստրախանցի հայ վաճառականների տեղեկությունները: Ռազմական գործողությունները նախապատրաստելու մեջ կարևոր տեղ էին գրավում նաև առնչությունները Արցախի մելիքների հետ: Մելիքների հետ Սուվորովի թղթակցության խնդրում կարևոր դեր է խաղում ծագումով Արցախի, այդ ժամանակ արդեն Աստրախանի բնակիչ դարձած Սարգիս (Սերգեյ) Մելիքովը: Ա. Վ. Սուվորովի մերձավորների շրջանում էին աստրախանաբնակ հայեր Բոգդան և Ակիմ Խաստատով եղբայրները, որոնք սերում էին վաճառականական հայտնի Վասիլև-Խաստատով գերդաստանից: Նրանք Սուվորովի աջակցությամբ զինվորական ու պետական կարիերա նվաճեցին, ծառայում էին Մոսկվայում և Պետերբուրգում և նույնիսկ դարձան Մ. Յու. Լերմոնտովին մերձավոր ազգականներ:

Հայ ազգաբնակչության արագ աճը Ռուսաստանում անհրաժեշտ դարձրեց Ռուսաստանում բնակվող հայերի համար թեմական առաջնորդ նշանակելը: 1717 թ. էջմիածնի կաթողիկոսը Ստեփանոս Գագաթեցուն նշանակեց ռուսաստանաբնակ հայերի թեմական առաջնորդ, որի նստավայրն Աստրախանն էր լինելու: Այդ նույն ժամանակ Գանձասարում գահակալող Աղվանից կաթողիկոս Եսային նույնպես անհրաժեշտ համարեց Ռուսաստանում ունենալ իր թեմական առաջնորդը և այդ պաշտոնին նշանակեց Մինաս վարդապետին՝ նրան եպիսկոպոս ձեռնադրելով: Մինասը ընդհուպ մինչև իր մահը (1740 թ.) բնակվում էր Մոսկվայում կամ Պետերբուրգում և փաստորեն չէր կատարում թեմական առաջնորդի պարտականություններ:

Միևնույն ժամանակ, Ռուսաստանում հայերի իրավական կարգավիճակի կայունացմանը և 1740-ական թվականներին Աստրախանում դատավարչական մարմին ստեղծելուն զուգընթաց, հավանաբար, ռուսաստանաբնակ հայերի առաջնորդները հղացան իրենց եկեղեցական իրավիճակը իշխանությունների հետ համաձայնեցնելու անհրաժեշտության գիտակցումը: Հայկական համայնքների մեծացումը, օտարերկրացիների մուտքը Ռուսաստան խրախուսող 1762–1763 թթ. հրովարտակները, հայկական նոր եկեղեցիների շինարարության արտոնումը, հայերի արտոնությունների ամրապնդումը ամրապնդեցին նաև ռուսաստանաբնակ հայերի կարգավիճակը: Դրան համապատասխան Ամենայն հայոց կաթողիկոսները (1763 թ. նոր կաթողիկոս ընտրվեց Սիմեոն Երևանցին) վերանայեցին էջմիածնի դերը հայ-ռուսական հարաբերությունների զարգացման և հայ ժողովրդի քաղաքական շահերի ամրապնդման մեջ:

Աստրախանաբնակ հայերը ճիշտ ընկալեցին Սիմեոն կաթողիկոսի քաղաքականության նոր գծերը և ընդունեցին էջմիածնի գերակայությունն Աստրախանի թեմի նկատմամբ, որն իր հավաստումը գտավ 1767 թ. հունվարի

3-ին Սիմեոն կաթողիկոսին հասցեագրված աստրախանաբնակ հայերի նամակում:

1768 թ. հրապարակվեց Եկատերինա 2-րդի հրովարտակը, որը ճանաչում էր էջմիածնի գահի հոգևոր իշխանությունը ռուսական կայսրությունում բնակվող հայերի նկատմամբ և նրանց համար եպիսկոպոսներ և այլ հոգևորականներ ուղարկելու նրա իրավունքը: 1773 թ. կաթողիկոսը ռուսաստանաբնակ հայերի հոգևոր առաջնորդի պաշտոնում նշանակեց երիտասարդ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը երկայնաբազուկին: Ապագան հաստատեց, թե որքան հաջող էր կատարված այդ անձի ընտրությունը: Հենց Հովսեփ Արղությանի անվան հետ էր առնչվում ռուսահպատակ հայերին վերաբերող բազում խնդիրների լուծումը:

Բուն Աստրախանում Արղությանի անվան հետ էր կապված հայկական հոգևոր դատարանի, հայկական հոգևոր վարչության (կոնսիստորիայի), հատուկ հոգևոր «սահմանյալ» օրենսդրության մշակումը, հայկական տպարանի կազմակերպումը: Այս ամենը նպաստեց Աստրախանի հայկական գաղութի դերի բարձրացմանը հայ ժողովրդի քաղաքական և հասարակական կյանքում:

19-րդ դ. 30-40-ական թվականներին Ռուսաստանում սկսվեց արդյունաբերական հեղաշրջումը: Զարգանում է ներքին և արտաքին առևտուրը, կատարելագործվում են հաղորդակցության ճանապարհները, երևան է գալիս չոգենավագնացությունը, սկսվում է երկաթուղիների շինարարությունը: Առևտրի զարգացմանը համաքայլ իրենց կարևոր դերն են շարունակում պահպանել Վոլգայի և Աստրախանի նավահանգստի վրայով անցնող հաղորդակցության ուղիները: Աստրախանի դերի ամրապնդմանը նպաստում են նաև Ռուսաստանի ռազմական և քաղաքական հաջողությունները Կովկասում:

Աստրախանի քաղաքական և տնտեսական դերի փոփոխմանը զուգընթաց փոփոխվեց նաև այնտեղ ապրող հայերի դերը: Արխիվային և հրապարակված տարբեր տվյալների համաձայն, 19-րդ դ. սկզբներին Աստրախանում բնակվում էր 5 հազարից ավելի հայ[1]: Նրանք կազմում էին քաղաքի բնակչության մեկ քառորդը և թվաքանակով (ռուսներից հետո) բնակչության երկրորդ ազգային խումբն էին:

Այդ ժամանակաշրջանում (1824 թ.) հայերին որպես սեփականություն պատկանում էին 53 քարաշեն և 649 փայտաշեն տուն: Իսկ 1823 թ. Աստրախանի բնակելի ֆոնդի ընդհանուր թվաքանակը բաղկացած էր 187 քարաշեն և 3857 փայտաշեն տներից, ընդ որում, քարաշեն տների տոկոսը տնատեր հայերի շրջանում կրկնակի անգամ բարձր էր , քան բնակչության այլ

[1] Рындзюнский П. Г. Городское гражданство дореформенной России. М., 1958, с. 102.

խմբերի շրջանում: 1861-1862 թթ. քաղաքում հայերին էր պատկանում 473 տուն, այն դեպքում, երբ Աստրախանի բնակելի ընդհանուր ֆոնդը այդ ժամանակ բաղկացած էր 3980 տնից: Հայերի թվաքանակն այդ նույն ժամանակ հավասար էր 5230 մարդու[1]: Իսկ բուն Աստրախանի բնակչությունն այդ ժամանակահատվածում մեծացել էր մինչև 45 հազար մարդու, որն առաջացրեց հայ բնակչության տոկոսի հարաբերական կրճատում, մոտավորապես մինչև 12%-ով:

19-րդ դ. առաջին կեսին հայ բնակչությունն առաջվա պես հիմնականում զբաղվում էր առևտրով և արհեստագործությամբ: Դրա հետ մեկտեղ հայերի մեջ մեծանում էր կրթված անձանց, ինչպես նաև պետական և զինվորական ծառայության ընդունվողների քանակը: Եվրոպական ապրանքների ներմուծման մեծացման կապակցությամբ աճում է Ռուսաստանի ակտիվությունն արևելյան ուղղությամբ: Ռուսական արտահանության գլխավոր տարածաշրջաններն են դառնում Մերձավոր և Միջին Արևելքը, Միջին Ասիան, Հեռավոր Արևելքը: Այդ նույն տարածաշրջաններից ավանդական ներմուծությունն իրականացվում էր նույնպես Վոլգա-Կասպյան ուղիով:

19-րդ դ. առաջին տասնամյակներին Այսրկովկասը Ռուսաստանին միակցելու շնորհիվ այդ տարածաշրջանի հետ կատարվող առևտուրը, որը կազմում էր աստրախանյան առևտրի կարևոր մասը, անցնում է արդեն ներքին առևտրի ոլորտը: Դոնի և Կուբանի շրջանների վրայով անցնող ճանապարհների շինարարության զարգացումը վերացրեց Աստրախանի մենաշնորհ դիրքը Կովկասի հետ Ռուսաստանին կապող ռազմական և տնտեսական ուղիների վրա: Սակայն ջրային ճանապարհների վրա պահպանվեց Աստրախանի կարևոր դերը, իսկ չոգենավագնացության զարգացմանը զուգընթաց այդ դերը նույնիսկ մեծացավ: Աշխույժ առևտուր էր կատարվում նաև մերձվոլգյան քաղաքների, մասնավորապես Նիժնի Նովգորոդի հետ, որտեղ ամեն տարի մեծ տոնավաճառներ էին կազմակերպվում:

Աստրախանի վրայով էր ընթանում նաև Այսրկովկասից բերվող ապրանքների (մետաքսի, բամբակե գործվածքեղենի, չոր մրգերի, համեմունքների, գինու) առևտուրը, որոնք նախատեսվում էին Նիժնինովգորոդյան տոնավաճառում իրացնելու համար, որտեղից դրանք թափանցում էին Ռուսաստանի և Եվրոպայի այլ քաղաքներ: Գինի և օղի բերում էին նաև Ղզլարից:

Իրանի հետ արտաքին առևտուրն իրականացվում էր ծովի վրայով Կասպից ծովի հարավում գտնվող նավահանգիստների հետ՝ կա՛մ Կասպից ծովի արևմտյան ափով անցնող ցամաքային ճանապարհով, կա՛մ էլ փոխնիփոխ՝ մա-

[1] Статистическая таблица Астраханской губернии за 1862 год. Астрахань, 1862.

սամբ ցամաքով, մասամբ ծովով: Դեպի Իրան կատարվող արտահանության հոդվածներն էին երկաթը, պղինձը և պատրաստի իրերը (սպասք, թուղթ, բամբակե գործվածքներ, մետաղյա իրեր): Իսկ Իրանից ներմուծվում էին մետաքս, անմշակ բամբակ, բամբակե մանվածք, քնջութ, մրգեր:

Աստրախանաբնակ հայերի տեսակարար կշիռն Աստրախանի առևտրական շրջանառություններում նախկինի պես բարձր էր[1]:

Առևտուրը 1812-1821 թթ.	Ներմուծում (հազար ռուբլ.)	տոկոս	Արտահանում (հազար ռուբլ.)	տոկոս
Ռուսաստանի վաճառականներ	892,454	2,5	678,349	2,2
Հայեր	9. 018,816	23,5	4. 839,804	12,1
Պարսիկներ	23. 027,303	60,0	22. 689,379	63,1
Խիվացիներ, բուխարացիներ, թաթարներ	5. 317,757	13,9	8. 238,421	22,9

Ինչպես տեսնում ենք, այդ ժամանակաշրջանում արտաքին առևտրում գլխավորող դիրք էին գրավում պարսիկ վաճառականները, որոնց մեջ, հավանաբար, ներառնում էին Իրանի բոլոր հպատակներին, այդ թվում նաև հայերին: Սակայն հայերի մասնակցությունն արտաքին առևտրին աստիճանաբար նվազում էր:

Ռուսաստանի արտաքին առևտրում աստրախանցի հայերի դերի նվազման հիմնական պատճառը նրանց իրավական արտոնյալ կարգավիճակի փոփոխումն էր: Հայերին ռուս հարկատու բնակչության հետ հավասարեցնելու փորձերը, ինչպես վերը նշեցինք, ձեռնարկվում էին տակավին 1785 թ. ի վեր: Հայերի (կամ նրանց զգալի մասի) մշտական դիմադրության շնորհիվ հաջողվում էր ինչ-որ ժամանակի ընթացքում պահպանել իրենց արտոնությունները, սակայն 19-րդ դ. կեսերին դրանք հիմնականում ի չիք դարձրին: Արտաքին առևտրում հայերի դերի թուլացման մի այլ պատճառը ընդհանրապես արտաքին առևտրի մեջ Աստրախանի նշանակության անկումն էր: Այդ բացատրվում է, մի կողմից, եվրոպական առևտրի նշանակության առաջադիմող աճով, իսկ մյուս կողմից, Ռուսաստանին Այսրկովկասի (հետագայում նաև անդրկասպիական տարածքների) միակցմամբ, որի հետևանքով պետական սահմանը զգալիորեն հեռացավ Աստրախանից:

[1] Журнал «Северный архив», ч.29, СПб., 1827, с.93.

Ավելի աչխույժ դարձավ հայերի մասնակցությունը ներռուսաստանյան առևտրին, Նիժնի Նովգորոդի ամենամյա ամիսներ տևող տոնավաճառներին, որոնք վոլգյան առևտրի կարևոր մասն էին կազմում: Նիժնինովգորոդյան տոնավաճառին, օրինակ, 1844 թ. տվյալներով, եղել են 14.420 եկվոր վաճառական, այդ թվում՝ ռուսներ 12. 311 անձ, հայեր՝ 1478, եվրոպացիներ՝ 420, պարսիկներ՝ 120, բուխարացիներ՝ 68, խիվացիներ՝ 15, տաշքենդցիներ՝ 8 մարդ[1]: Այսպիսով, հայերը կազմում էին տոնավաճառի մասնակիցների ստույգ 10%-ը՝ ամենաբազմաթիվ ազգային խմբավորումը ռուսներից հետո (ոչ ռուս բոլոր առևտրականների երկու երրորդը): Հայազգի առևտրականների հիմնական մասը Աստրախանի բնակիչներն էին: 19-րդ դ. կեսերից տոնավաճառում գոյություն ուներ հայկական եկեղեցի, որտեղ պաշտոնավարում էր աստրախանաբնակ հայ քահանաներից մեկը: Աստրախանի հայկական դատարանի գործերում պահպանվել են տարբեր տարիներին հայկական դատարանի կողմից տեղացի հայ բնակիչներին տված անձնագրերի ցուցակները՝ «բոլոր ռուստաց երկրները և եարմանկեքը վաճառականության գործոյն»[2] համար:

Տոնավաճառից կամ այլ քաղաքներից բերած ապրանքներն աստրախանցի հայերը վաճառում էին սեփական կամ էլ վարձակալած կրպակներում: Տակավին 17-րդ դ. իշ վեր Աստրախանի կենտրոնում կար Հայկական իջևանատուն, ուր տեղավորվում էին եկվոր հայազգի վաճառականները (գերազանցապես ջուղայեցիները): 19-րդ դ. սկզբներին այդ իջևանատունը մարդաթափ եղավ և տրվեց կապալով:

18-րդ դ. վերջին Աստրախանի կենտրոնում՝ Մոսկովյան փողոցում, հայազգի վաճառական Դիլյանչևը կառուցեց առևտրի նոր տուն, որի շինություններն կապալով էին տրվում տարբեր առևտրականների: Որոշ հայեր կրպակներ էին վարձակալում Ռուսական իջևանատանը, որտեղ վարձակալության գինը ավելի էժան էր, քան մյուսներում (տարեկան 20-ից մինչև 40 ռուբլի): Տեղացի շատ առևտրականներ (գուցե և մեծամասնությունը) առևտրի շինություններ և պահեստներ էին սարքավորում իրենց տներում:

[1] Мельников П. Нижегородская ярмарка в 1843, 1844 и 1845гг. Н.-Новгород, 1846, с.286.

[2] ՀՀԿՊՊԱ., ֆ. 383, ց. 4, գ. 611,631, 632, 646 և այլն:

Որոշ հայ առևտրականներ ձգտում էին ձեռք բերել սեփական փոխադրական միջոցներ՝ գետային և ծովային նավեր: Հայ վաճառականները նավեր ունեին տակավին 18-րդ դ.: Դրանք հիմնականում «չկոուտ» տիպի ծովային (հարթ հատակով և ոչ խորը նստվածքով) նավեր էին: Առաջին գիլդիայի հայ վաճառականներից ոմանք մի քանի նավ ունեին: Այդ նավերի արժեքը մոտավորապես 5 հազար ռուբլի էր: 1843 թ. Աստրախանի նավահանգստում գտնվող 48 չկոուտից վեցը հայերին էր պատկանում[1]:

19-րդ դ. 20-ական թվականներին Վոլգայի վրա հայտնվեցին առաջին շոգենավերը: Մինչև 1842 թ. Վոլգա գետով երթևեկող չորս շոգենավերից երկուսը պատկանում էին աստրախանաբնակ հայեր Հալաբովին և Յարալովին, ընդ որում Յարալովի նավը մի ժամանակ համարվում էր վոլգյան շոգենավերից ամենահզորը. Նրա չարժիչի հզորությունը հավասար էր 42 ձիաուժի: 1859 թ. Վոլգայով արդեն լողում էին 34 շոգենավ, որից հինգը պատկանում էին աստրախանցի հայերին:

Այսպիսով, աստրախանաբնակ ձեռներեց հայերի առևտրական գործարքների ընդգրկումները խիստ ընդարձակ էին և կազմում էին ռուսաստանյան տնտեսական մեխանիզմի գործուն և լիարյուն տարրը:

19-րդ դ. հայերը մեծ դեր էին խաղում Աստրախանում արդյունաբերության և արհեստագործության զարգացման մեջ: 1832 թ. տվյալները վկայում են, որ հայերը կազմում էին աստրախանցի ֆաբրիկանտների և գործարանատերերի մեծամասնությունը: Նրանց էին պատկանում մետաքսի, օճառի և մոմի բոլոր ֆաբրիկները, կաշվի գործարանների և ներկատների մեծ մասը: Հայկական դատարանի տվյալների համաձայն, 19-րդ դ. սկզբներին հայերը քաղաքում ունեին բամբակե գործվածքեղենի 52 ֆաբրիկա (567 դազգահով հանդերձ) և 30 մետաքսագործական ֆաբրիկա՝ 118 դազգահով հանդերձ: Այդ ժամանակ քաղաքում այդ արդյունաբերությունն ամբողջապես հայերի ձեռքին էր: Ամենամեծը Օհան Իգնատոսյանի (38 դազգահ) և Հարություն Փարսադանյանի (30 դազգահ) ֆաբրիկաներն էին: Մետաքսե գործվածքեղենի ֆաբրիկաներից խոշորագույնն էին Գրիգոր Զուրեքովի (24 դազգահ) և Դավիթ Սողոմոնյանի (14 դազգահ) ֆաբրիկանները: Մնացածները 10 դազգահից ավելի չունեին[2]: Այդ հաստատությունների հիմնական մասը մանր արհեստանոցներ էին և հասարակ մանուֆակտուրայի չրջանակներից այն կողմ չէին անցնում: Էլ ավելի մանր էին աստրախանցի հայերի մետաքսագործական ձեռնարկությունները: Դեռ ավելին, 19-րդ դ. ա-

[1] Журн. «Москвитянин», 1844, №8, с.270.

[2] ՀՀԿՊՊԱ., ֆ. 387, ց. 1, գ. 350, թ. 1-3:

ռաջին տասնամյակի վերջին դրանցից չատերում աշխատանքը դադարեցվեց՝ «մետաքսի թանկության պատճառով»: Աստրախանի մետաքսագործական արդյունաբերության ճգնաժամն ամենից առաջ բացատրվում էր կենտրոնական Ռուսաստանի տեխնիկապես ավելի լավ հագեցված և տնտեսապես ավելի հզոր ֆաբրիկանների մրցակցությամբ: Պատճառներից մեկն էլ աստրախանյան չուկայում արևելյան երկրների վաճառականների հետ ունեցած մրցակցությունն էր, որոնք պատրաստի կտորեղեն և գործվածքեղեն էին ներմուծում:

Այդ նույն պատճառներով աստիճանաբար կրճատվում էր նաև Աստրախանի բամբակե գործվածքեղենի արդյունաբերությունը: Այդպիսի ֆաբրիկաների զգալի մասը նույնպես տարիներ չարունակ անգործության էր մատնված: Նկատելիորեն նվազեց նաև դրանց հզորությունը: 1832 թ. տվյալները վկայում են Աստրախանում բամբակեղենի միայն 15 ֆաբրիկաների առկայությունը, որոնցից հայերին էր պատկանում երեքը:

Բամբակեղենի և մետաքսագործական արդյունաբերության հետ սերտորեն կապված էին ներկարարական ֆաբրիկները, որտեղ նույնպես մեծ դեր ունեին աստրախանաբնակ հայերը: 1827 թ. Աստրախանում կար 18 ներկարարական հաստատություն, որոնցից հայերին էին պատկանում 11-ը կամ 61 տոկոսը: Արտադրանքի մեծ մասը կարմիր ներկված մանած բամբակեղենն էր: Հայերին պատկանող այդ ֆաբրիկաների աշխատողների թիվը հավասար էր 123-ի (ընդհանուր 179 թվաքանակից) կամ 69%, իսկ արտադրանքը կազմում էր 6100 փութ՝ ընդհանուր 7726 փթի դիմաց, այսինքն՝ 79 տոկոսը [1]:

Հայերը նկատելի դեր ունեին կաշվի արդյունաբերության մեջ. նրանք մասնագիտացել էին կաշվի արևելյան տեսակների՝ ամենից առաջ սեկի մշակման մեջ: Սակայն նաև այս ճյուղն էլ աստիճանաբար կորցնում է իր երբեմնի նշանակությունը Աստրախանում: 1804-1806 թթ. գործում էր կաշվի 15 գործարան: 1820 թ. դրանց թիվը իննն էր, իսկ հայերին էին պատկանում հինգը: Հայերին պատկանող գործարաններում արտադրվում էր կարմիր և սև սեկ: Խոշորագույնն էին Մակար Ավճալովի, Սահակ Փանոսովի, Հովսեփ Կուբաթովի ձեռնարկությունները:

19-րդ դ. հայերը նկատելի մասնակցություն ունեին Աստրախանի նաև ճարպահալ (մոմագործության), օճառի և ծխախոտի արդյունաբերության մեջ: Ի տարբերություն մանածագործության և արևելյան տեսակների մեջ մասնագիտացած մյուս ճյուղերի, այդ ճյուղերի աշխատանքը, թեև աչքի չէր ընկնում ձեռնարկությունների թվաքանակով, սակայն ավելի կայուն էր: Հայերին էր պատկանում ճարպամոմագործական ձեռնարկությունների մոտ կեսից ա-

[1] ГААО, ф. 1, уоп. 5, д. 27:

վելին և օճառի գործարանների մեծ մասը (դրանք ընդամենը երեք-չորսն էին): 1849 թ. Աստրախանում հիմնադրված ծխախոտի միակ գործարանի տերը հայազգի Արտեմ Բեգլյարովն էր:

19-րդ դ. առաջին կեսի՝ Աստրախանի արդյունաբերական ձեռնարկություններից չատերի մեջ չկար հստակ տարբերություն արտադրության արհեստագործական և արդյունաբերական բնույթի միջև: Հայազգի վարպետների և աշխատողների միջև փոխհարաբերությունները կարգավորում էր Հայկական դատարանը: Հայազգի վարպետները կազմում էին համքարություններ, որոնք ունեին Հայկական դատարանի կողմից հաստատված իրենց կանոնադրությունը: Պահպանվել է հայազգի դերձակների՝ իրենց կողմից ընտրված համքարության ավագ Դավիթ Ամիրովին 1811 թ. տրված հրահանգը, որը փաստորեն Աստրախանի հայազգի դերձակների համքարության կանոնադրությունն էր:

Աստրախանի քաղաքային համքարային վարչությունը նահանգային գրասենյակի միջոցով պահանջում էր, որ քաղաքի բոլոր համքարություններն իրեն ենթարկվեն: 1813 թ. հայազգի արհեստավորները հարկադրված եղան միաժամանակ գրանցվելու քաղաքի արհեստագործության վարչության մեջ: Սակայն նրանք ձգտում էին ստեղծել Հայկական դատարանի տնօրինությանը ենթակա սեփական վարչությունը: Աստրախանի նահանգային վարչությունը 1823 թ. դեկտեմբերի 3-ի հրամանագրով համաձայնվեց ստեղծել հայազգի մուշտակագործների առանձին վարչություն, սակայն ոչ թե Հայկական դատարանի, այլ քաղաքի մագիստրատի տնօրինության ենթակայությամբ:

Ամբողջական առումով հայերը 19-րդ դ. կեսին Աստրախանում պահպանեցին իրենց առաջատար կամ ազդեցիկ դերը արտադրության ավանդական ճյուղերում:

***

19-րդ դ. առաջին կեսին աստրախանաբնակ հայերի վարչաիրավական կարգավիճակը խարսխվում էր 1799 թ. հոկտեմբերի 28-ին Պավել 1-ի չնորհած հրովարտակի վրա, որը, մի կողմից հաստատում և ձևակերպում էր 18-րդ դ. ընթացքում ռուսաստանյան հայերի ստացած արտոնությունները, մյուս կողմից՝ սահմանում էր Աստրախանի (ինչպես նաև Ղզլարի և Մոզդոկի) հայերի իրավունքներն ու պարհակները 19-րդ դ. առաջին տասնամյակների համար: Հրովարտակով, ինչպես և ավելի վաղ տարիների հրամանագրերով, հայերին թույլատրվում էր ոչ թե մշտական, այլ ժամանակավոր ռուսահպատակություն ընդունել: Արգելվում էր վաճառականական գիլդիաներում կամ քաղաքաբնակների դասում հայերին հարկադրաբար գրանցելը: Աստրախանաբնակ հա-

յերին թույլատրվում էր Ռուսաստանի ներսում կատարել տարբեր ապրանքների անմաքս առևտուր (իսկ մաքս վճարելով՝ նաև արտաքին առևտուր), ինչպես նաև ազատորեն զբաղվել ցանկացած արդյունագործությամբ կամ արհեստով:

Որպես դատավարչական սեփական մարմին, հայերին թույլատրվում էր ունենալ իրենց դատարանները, որոնք բաղկացած էին ամեն տարի վերընտրվող երեք դատավորից և գրասենյակի հաստիքից, որը պահվում էր հայ հասարակության հաշվին: Դատարանի գործունեությունը սատարելու համար ամեն տարի ծախսվում էր 3874 ռուբլի: Դրանցից զատ, հայերն ամեն տարի ընտրում էին հասարակական երեք հոգաբարձու՝ պարհակների գանձումը վերահսկելու համար, մի քանի ավագներ, որոնք ծառայում էին որպես միջնորդներ վարչական հարցերը լուծելիս, ինչպես նաև գնահատող գույքը ցուցակագրելու համար գրագիր և բնակարանային հանձնաժողովի պատգամավոր:

Հայկական դատարանն ուներ նաև վարչական պարտականություններ, այն է՝ զեմստվային պարհակների գանձումը (պետական հարկ, որի չափը հայերի շրջանում այդ ժամանակաշրջանում կազմում էր տարեկան մեկ շնչին 7 ռուբլուց ավելի), ջրային և ցամաքային հաղորդակցության ճանապարհների համար գլխահարկի գանձումը (յուրաքանչյուրից 5 ռ. 30 կոպ.), հայազգի բնակչության մարդահամարի անցկացումը, այլ քաղաքներ և արտասահման գնալու համար հայերին անձնագիր տալը, դատարանի գրասենյակը պահելու համար գումարի բաշխումն ու գանձումը և այլն: Դրանից բացի, աստրախանաբնակ հայերը պարտավոր էին պահել մի քանի հարյուր զինվորի համար երեք զորանոց, որոնք պիտի լրիվ ապահովված լինեին վառելիքով և տնտեսական գույքով (ապասքեղեն, լամպեր, գործիքներ և այլն):

Տնատերերը վճարում էին նաև հատուկ «հողային», իսկ կրպակի տերերը՝ «կրպակային» պարտիք, որը կազմում էր 100-ից մինչև 1000 ռ. արժեք ունեցող ապրանքի դիմաց 25 ռուբլի, իսկ 1000 ռ. ավելի արժեք ունեցող ապրանքի դիմաց՝ 100 ռ., ընդ որում, այդ պարհակը կրում էին միայն հայերը: Դրանից բացի, առևտրով զբաղվող անձինք վճարում էին մեկ տոկոսանոց հարկ՝ քաղաք ներմուծված ապրանքների դիմաց:

Հասակ առնող ռուս վաճառականությունը քանիցս հանդես էր գալիս աստրախանաբնակ հայերի առանձնահատուկ կարգավիճակի դեմ:

1831 թ. հունիսի 2-ին Նիկոլայ Առաջինը հաստատեց Մինիստրների Կոմիտեի կանոնադրությունը, որի համաձայն, 1799 թ. հրովարտակով սահմանված արտոնությունները պահպանվում էին աստրախանաբնակ միայն 390 հայերի համար, որոնք տեղ էին գտել 1795 թ. մարդահամարում: Մնացյալ բոլոր հայերին առաջարկվեց կամ վեց ամսվա ընթացքում ընդունել մշտական

ռուսաստանյան հպատակություն (համառուսաստանյան դասերում գրանցվելով հանդերձ), կա՛մ էլ անցնել առևտրով զբաղվող օտարերկրացիների կարգավիճակին:

1831 թ. կանոնադրությունն, ինչպես ցույց է տալիս աղբյուրների վերլուծությունը, խարսխվում էր երկու կեղծ նախադրյալի վրա: Նախ, Պավել 1-ինի չնորհած հրովարտակը ճանաչվեց որպես կանոնադրություն միայն այն հայերի համար, որոնք բնակություն էին հաստատել Աստրախանում (և մյուս գաղութներում) մինչև 1799 թ., թեև բուն հրովարտակը նման բացառում չէր անում: Երկրորդ, «արտոնյալ» հայերի թվաքանակը որոշելիս առաջնորդվում էին 1795 թ. մարդահամարով, որն անցկացվել էր սոսկ նրանց շրջանում, որոնք Քաղաքաբնակների մասին կանոնադրության համաձայն, գրանցվել էին վաճառականների և քաղաքաբնակների դասերում և կազմում էին Աստրախանի հայազգի բնակչության 20%-ից ոչ ավելին: Ընդ որում, 1831 թվականին հիշյալ 390 հայերի սերունդներից քաղաքում էին մնացել միայն 139 մարդ: Այնուամենայնիվ, այդ կանոնադրությունը կիրառվեց:

1831 թ. կանոնադրության և դրա վրա խարսխված օրենսդրական հաջորդ ակտերի չնորհիվ հասակ առնող ռուս առևտրաարդյունաբերական դասին հաջողվեց իրականացնել այն, ինչին նա ձգտում էր հասնել կառավարական շրջանների օգնությամբ մեկ դարի ընթացքում: Ռուսական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի դիրքերի ամրապնդումը 19-րդ դ. 30-ական թվականների սկզբին նրան թույլ տվեց հաղթող դուրս գալ երկրի հարավային շրջանների արտոնությունից օգտվող բնակչության հետ վարած իր բազմամյա մրցակցությունից:

Ռուսական քաղաքների հայ համայնքների բնակչության բազմաթիվ բողոքներն այս անգամ հանգեցրին հայերին համառուսաստանյան դասերին հավասարեցնելը սոսկ ժամանակավորապես (մինչև 1847 թ.) հետաձգելուն:

1831 թ. կանոնադրության իրականացման ընթացքում դրվեց նաև Աստրախանի հայկական դատարանի վերացման հարցը: Չնայած տարիներ տևած համառ պայքարին, աստրախանաբնակ հայերին չհաջողվեց պահպանել իրենց ազգային դատավարչական մարմինը: 1840 թ. մարտի 27-ին հետևեց ցարի հրամանագիրը սենատին, որով վերջնականապես վերացվում էր հայկական դատարանների գործունեությունն Աստրախանում, Ղզլարում և Մոզդոկում: Քաղաքի հայերն անցնում էին համառուսաստանյան պետական և դատական հաստատությունների վարչական ենթակայության տակ: Նրանց համար վերապահվում էր միայն իրենց ներքին գործերը իրենց շրջապատից ընտրված մի քանի երդմնակալների օգնությամբ քննարկելու իրավունքը:

Հետագայում աստրախանաբնակ հայերին, այնուամենայնիվ, հաջողվեց վերականգնել իրենց երբեմնի արտոնությունների ինչ-որ մասը: Պետական

խորհրդի որոշմամբ, որը հաստատվել էր ցարի կողմից 1848 թ. ապրիլի 5-ին, սահմանվեց, որ հարկերի բաշխման մեջ արվող որոշ մեղմացումը հատուցվում է այն ավանդով, որ հայերը ներդնում են երկրամասի տնտեսական զարգացման մեջ: Արդյունքը եղավ այն, որ հայազգի բնակչության մեծամասնության համար (բացառությամբ նրանց, որոնց նախնիները բնակություն էին հաստատել Աստրախանում արդեն 1799 թ. հետո) սահմանվեցին պետական պարհակները վճարելու արտոնություններ (50%-անոց զեղչ): Դրանից զատ, աստրախանաբնակ բոլոր հայերի համար զինապարտությունը փոխարինվեց դրամական վճարումով: Այդ արտոնությունները սահմանվում էին անսահմանափակ ժամկետով: Տակավին 1871 թ. իրեն «արտոնյալ» էր համարում Աստրախանի հայության 95 տոկոսը[1]:

***

Աստրախանաբնակ հայերի գործուն մասնակցությունը քաղաքի տնտեսական-հասարակական կյանքի տարբեր բնագավառներին պահանջում էր ունենալ պատշաճ կրթություն: Միաժամանակ, հայերի հետ կամ նրանց միջնորդությամբ կատարվող առևտուրը ռուս վաճառականներից պահանջում էր հայերենի իմացություն: Արտաքին գործոց կոլեգիայի և պետգրասենյակի՝ տակավին 1753 թ. հրամանագրերով կարգադրված էր Աստրախանում թուրքերեն, պարսկերեն և հայերեն սովորելու համար ընդունել վեց աշակերտ և պահել համապատասխան ուսուցիչներ:

Հայերենի դասավանդումը մտցվեց նաև 1780 թ. բացված Աստրախանի ժողովրդական գլխավոր ուսումնարանում, որը 1806 թ. վերափոխվեց գիմնազիայի: 1795 թ. ուսումնարանին առընթեր բացվեց կալմիկերենի, թաթարերենի, թուրքերենի, պարսկերենի և հայերենի հատուկ դասարան՝ տղաների և պինվորների երեխաների համար: Ուսումնարանում հայերենի դասատու դարձավ վաճառական Արտեմ Դելյանովը (Դիլանչյանը): Հայերը գործուն կերպով նպաստում էին ուսումնարանի շինարարությանն ու կազմակերպմանը, դասագրքերի ձեռքբերմանը: 1793-1795 թթ. հայ վաճառական Մակար Առաքելովը կառուցեց ուսումնարանի նոր շենք:

Սակայն անհրաժեշտ դարձավ հայերի համար իրենց ուսումնական հաստատության կազմակերպումը: 19-րդ դ. սկզբին հայկական ուսումնարան հիմնադրելու նախաձեռնությամբ հանդես եկավ խոշոր վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը (Աղաբաբովը): Իր վախճանված եղբայրներից ժառանգելով

[1] ГИАР, ф.1284, оп. 67, д.285, л. 29.

30 հազար ռուբլի, որոնք այդ դրամը կտակել էին բարեգործական նպատակների համար, Ն. Աղաբաբյանը դրան ավելացրեց ևս 20 հազար ռուբլի: 1804 թ. նոյեմբերին Աղաբաբյանը դիմեց ցարին՝ ուսումնարան բացելու խնդրանքով, շարադրելով նաև նրա ծրագիրը: Նրա նպատակն էր ստեղծել արդիական դպրոց, որի ծրագիրը սերտորեն չաղկապված լիներ Աստրախանի հայ ազգաբնակչության առևտրական և ձեռնարկուական շրջանների գործնական խնդիրների հետ: Հատկացված 50 հազար ռուբլուց նա 46.250 ռուբլով գնեց քարաշեն իջևանատուն՝ նպատակ ունենալով ուսումնարանը մշտական եկամուտով ապահովելու համար իջևանատան շինությունները տալ վարձակալության: Աղաբաբյանը կառուցեց փայտաշեն հատուկ շենք բուն ուսումնարանի համար: Նա պարտավորվեց նաև իջևանատնից ստացվող եկամուտների հաշվին պահել չքավոր ընտանիքներից սերող 12 սան և նրանց օթևանելու համար քարաշեն հատուկ կողաշենք կառուցեց[1]:

Ուսումնարանի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1810 թ. դեկտեմբերի 12-ին, սակայն ինքը՝ Ն. Աղաբաբյանը, դրանից մի քանի ամիս առաջ վախճանվել էր, և ուսումնարանի վերակացու (տեսուչ) նշանակվեց նրա որդին՝ Հովհաննեսը: Հայերենի ավագ ուսուցիչ նշանակվեց հայտնի մանկավարժ Սերովբե Պատկանյանը, որը հրավիրվել էր Կոստանդնուպոլսից և արդեն մի քանի տարի աշխատում էր Նոր Նախիջևանի հայկական դպրոցում: Աղաբաբյան դպրոցն ավարտեցին, իսկ հետո այնտեղ դասավանդեցին 19-րդ դ. հայ լուսավորական գործիչներ՝ Հարություն Ալամդարյանը և Գաբրիել Պատկանյանը:

Աշակերտների թվաքանակը տարբեր տարիներին տատանվում էր հիսունից հարյուր հիսունի միջև: Դպրոցում հիմնականում սովորում էին հայ ազգաբնակչության միջին խավերից սերող երեխաները: Դպրոցի ծրագիրը հաշվի էր առնում վարչատնտեսական այնպիսի կարևոր կենտրոնի գործնական պահանջմունքները, որպիսին էր Աստրախանը 19-րդ դ. սկզբին: Լեզուներից, պատմությունից և կրոնից բացի, դպրոցում դասավանդում էին տրամաբանություն, ճարտասանություն, աշխարհագրություն, գծագրություն, նավագնացություն, մուրհակագիտություն (մուրհակային իրավունք):

Սակայն 1821 թ. Հովհաննես Աղաբաբյանի մահանալուց հետո ուսումնարանը նյութական լուրջ դժվարությունների հանդիպեց: 1822 թ. ուսումնարանը հանձնվեց պետական տնօրինության, թեև այն պահպանելու աղբյուրները մնում էին նախկինները, այսինքն՝ իջևանատունը վարձով տալուց ստացված գումարները:

[1] ЦГА Татарстана, ф. 92, оп. 1, д. 342, л. 31-32.

1830-ական թվականների կեսերին դպրոցի դրությունը որոշ չափով բարելավվեց: Դպրոցին սկսեցին ամեն տարի տալ (ի լրացումն իջևանատնից ստացած եկամուտների) 2800 ռուբլի քաղաքային գիմնազիայի բյուջեից: Եվս 600 ռուբլի դպրոցին տալիս էր պատվավոր բարեգործը, որպիսին 1836 թ. դարձավ աստրախանաբնակ հայազգի խոշոր վաճառական Դանիել Սերգեևը: Այդ ժամանակ էլ նա դպրոցին նվիրեց քարաշեն տուն: 1843 թ. հայազգի վաճառական Սերգեյ Մակարովն ուսումնարանի գրադարանին նվիրեց 300 անվամբ 2 հազար գիրք: 1847 թ. հրդեհի հետևանքով այրվեցին ուսումնարանի շենքը և ուսուցիչների ու սանների բնակելի տունը: Պատվավոր բարեգործ Դ.Սերգեևը դպրոցի համար նոր շենք վարձակալեց, միաժամանակ հայ ազգաբնակչության շրջանում անցկացված հանգանակության շնորհիվ ժողովվեց 1300 ռ. ավելի[1]:

Աղաբաբյան ուսումնարանում սովորում էր Աստրախանի հայ երեխաների մեծամասնությունը: Սակայն 19-րդ դ. քաղաքում կային նաև այլ հայկական ուսումնական հաստատություններ: 1817 թ. բացվեց հայկական հոգևոր ուսումնարանը, որտեղ դասավանդում էին հայերեն և ռուսերեն, թվաբանություն, աշխարհագրություն, հայոց պատմություն: Ուսումնարանում տասը տարի հայերեն է դասավանդել երիտասարդ Գաբրիել Պատկանյանը: Այդտեղ էր աշխատում նաև հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչ Գևորգ Խուբուվը: 1838 թ. Աստրախանում բացվեց նաև թեմական ուսումնարան, որտեղ սովորում էին 30-35 աշակերտներ: Որոշ ժամանակ անց միջոցներ չունենալու պատճառով այն փակվեց: 1851 թ. հաջողվեց բացել ծխական դպրոց, որի առաջին դասարանում ընդունեցին 22 աշակերտ, իսկ 1870 թ. սկսեց գործել իգական տարրական ուսումնարանը:

19-րդ դ. Աստրախանում բացվել էին մի քանի մասնավոր դպրոցներ: Հատկապես հայտնի էին հայազգի Գ. Բախրովի, Մ. Մխիթարովի, Ս. Նիկիտինի (Մկրտչյանի) և այլոց դպրոցները: Տասնյակ հայազգի աշակերտներ սովորում էին Աստրախանի գիմնազիայում:

1789 թ. Խալդարյանի մահից հետո Հ. Արղությանի ջանքերով դնվեց Խալդարյանի տպարանը՝ որպես թեմի սեփականություն: Տպարանը սկզբում փոխադրվեց Նոր Նախիջևան, իսկ 1795 թ. վերջին՝ Աստրախան:

1796 թ. Աստրախանում տպագրվեց առաջին հայերեն գիրքը՝ «Աստեննաբանությիւնը»-ը՝ արքեպիսկոպոս Հովսեփի՝ 1797 թ. ապրիլի 5-ին ռուս հրամանատար գեներալ Գուդովիչի ներկայությամբ Ղզլարի հայ բնակչության առջև արտասանած ճառը: 1797 թ. ավարտվեց երկու գրքերի՝ «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» և «Էֆիմերտեի» («Եփրեմվերդու») տպագրությունը:

[1] ՀՀ ԿՊՊԱ, ֆ.52, ց.5, գ. 39, թ.2-23, գ.58, թ.34-36.

Աստրախանի հայկական տպարանի մշակութային դերը արտահայտվում էր նաև այն բանում, որ հրատարակված գրքերը ուղարկվում էին հայկական մյուս գաղութները և բուն Հայաստան:

1800 թ. տպարանի գործնական դեկավար Թադևոս վարդապետ Մարուկյանի մահից հետո տպարանի գործունեությունը դադարեց: Սակայն 1810 թվականից ամբողջ սրությամբ վերսին ծառացավ տպարանի գործունեությունը վերականգնելու հարցը: Աստրախանում հայերեն գրատպությունը վերսկսելու նախաձեռնողը եղավ տեղի գիմնազիայի գերմաներենի ուսուցիչ, ծնունդով տիրոլցի Իոզիֆ Յոն Վայսքհոֆենը: 1811 թ. սկզբներին Աստրախան գալով, նա չուտով դիմեց իշխանություններին՝ Աստրախանում չաթաթներ հրատարակելու թույլատրություն ստանալու հայցով: Քաղաքի տնտեսական և հասարակական կյանքում աստրախանաբնակ հայերի դերն անմիջապես ընկալելով, նա միանգամից դրեց լրագիրը երկու լեզվով՝ ռուսերեն և հայերեն հրատարակելու հարցը: Ընդամին այդ հարցով նա դիմեց Աստրախանի հռոմեակաթոլիկական եկեղեցու ավագ, հայազգի Կղեմես Շահվերդովի ծառայությանը:

Յոն Վայսքհոֆենի հիմնադրած աստրախանյան «Արևելյան ծանուցմունք» («Վոստոչնիե իզվեստիա») լրագիրը սկզբնապես (1813-1815 թթ.) լույս էր տեսնում միայն ռուսերեն լեզվով: Բայց նրա նյութերում մեծ ուշադրություն էր հատկացվում այն թեմաներին, որոնք հետաքրքրում էին նաև Աստրախանում ապրող հայ և ոչ ռուս մյուս բնակչությանը:

«Հայդարյան» տպարանը ձեռք բերելու փորձերն այնպես էլ չպսակվեցին հաջողությամբ, և Վայսքհոֆենն ու նրան սատարող հայերը որոշեցին նոր տպարան հիմնել: Աստրախանցի վարպետ Կոնստանտին Սերեբրյակյանի ջանքերով ձուլվեցին հայերեն տպատառերը: Այսպես առաջին անգամ կազմակերպվեց հայկական տպարան, որի սարքերը ստեղծվեցին տեղում:

Տպարանի գործունեության երախայրիքը դարձավ 1815 թ. հրատարակված «Ռուսաց և հայոց այբբենական տետրակը», որը կազմել էր Կ. Շահվերդովը՝ ժամանակակից ռուսերեն այբբենարանի հիման վրա:

1816 թ. հունվարից սկսեց լույս տեսնել երկլեզու «Արևելյան ծանուցմունք» լրագիրը: Ցուրաքանչյուր էջի մի կողմը տպագրվում էր ռուսերեն, իսկ մյուս կողմը՝ հայերեն, ընդ որում՝ միևնույն բովանդակությամբ: Հայերեն լրագրի հրատարակումը մեծ իրադարձություն էր ինչպես աստրախանաբնակ, այնպես էլ ռուսաստանաբնակ բոլոր հայերի հասարակական և մշակութային կյանքում: Այն Աստրախանի տնտեսական և հասարակական կյանքի վրա հայկական գաղութի չթուլացող ազդեցության ցուցանիշն էր:

«Արևելյան ծանուցմունքը» հայերեն առաջին պարբերական հրատարակությունն էր Ռուսաստանում և ընդհանրապես (սկսած 1794 թ.) հայերեն

պարբերական հրատարակություններից առաջիններից մեկը: Ընդամենը լույս է տեսել լրագրի 27 համար (1816 թ. հունվարի 5-ից մինչև հուլիսի 5-ը), որից հետո Վայսքհոֆենի մահվան կապակցությամբ լրագրի հրատարակությունը դադարեցվեց: Բայց գլխավոր պատճառը, հավանաբար, նյութական հարաճուն դժվարություններն էին:

1818 թ. իր գործունեությունը վերսկսեց թեմին պատկանող հին տպարանը: Աստրախանում նորից սկսեցին հայերեն գրքեր տպագրել: Մոտավորապես քսան տարվա ընթացքում (մինչև 1837 թ.) լույս տեսան 11 հայերեն գիրք: Դրանք հիմնականում կամ ժամասացության գրքեր էին, կամ դասագրքեր[1]: Տպարանի գործունեությունը դադարեց 1837 թ. և այս անգամ արդեն առմիշտ:

***

19-րդ դ. երկրորդ կեսին - 20-րդ դարի սկզբին Աստրախանի հայկական համայնքի դերի և զարգացման համար վճռորոշ դարձան բուն քաղաքի տնտեսական և ժողովրդագրական կերպարի կտրուկ զարգացումն ու փոփոխումը: Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, արդյունաբերության նոր ճյուղերի հանդես գալը, կենտրոնական և արևմտյան շրջաններում երկաթուղիների շինարարությունը սկզբնական շրջանում ամբողջ երկրի մասշտաբով թուլացրին Աստրախանի տնտեսական դերը: Սակայն Վոլգայի և Կասպից ծովի վրա կատարվող ձկնորսության և Աստրախանում ձկնարդյունաբերության զարգացումը, Վոլգա-կասպիական նավագնացության անցումը շոգեքարշության, նավթի և նավթամթերքների փոխադրումների ուժեղացումը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին առաջացրին Աստրախանի տնտեսական զարգացման մեջ նոր թռիչք: Անդրկասպիայի միակցումը Ռուսաստանին և Իրանի հետ կապերի զարգացումը պահպանում էին Աստրախանի նշանակալի դերը ռուսաստանյան արևելյան առևտրում:

Աստրախանի տնտեսական և ստրատեգիական դերի փոփոխման հետ կապված փոխվում էին նաև նրա հայ ազգաբնակչության զբաղմունքների շրջանակը, հայկական համայնքի դերն ու տեղը քաղաքի կյանքում, հայ իրականության մեջ:

Ռուսաստանում կապիտալիստական զարգացման արագացումը հանգեցրեց քաղաքային ազգաբնակչության աճին: Եթե գյուղացիների ազատագրմանը նախորդած կես դարի ընթացքում Աստրախանի բնակչությունն ավելա-

[1] **Թաչատրյան Վ.Ա.** Հայ տպագրությունը Աստրախանում, «Գիտություն և Տեխնիկա», 1988, N1:

ցավ և 37,8 հազարից հասավ մինչև 42,8 հազարի, ապա 1914 թ. մոտերքին, այսինքն՝ ևս կես դար հետո, այն ավելացավ 3,5 անգամ և հասավ 154,5 հազար մարդու: Մոտավորապես նույնպիսի օրինաչափություններ էին նկատվում նաև Աստրախանի հայ բնակչության աճի մեջ, թեև քաղաքի բնակչության թվաքանակի բարձր աճը հանգեցնում էր հայկական համայնքի տեսակարար կշռի հարաբերական նվազեցմանը: 19-րդ դարի համարյա ողջ ընթացքում Աստրախանի հայերի թվաքանակը կազմում էր միջին հաշվով 5 հազար մարդ, որը հավասար էր քաղաքի բնակչության 1/8-ից մինչև 1/6 մասին: 1892 թ. վերաբերող տվյալները նշում են քաղաքում 6,5 հազար երկու սեռի հայ բնակիչ, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեի տվյալները՝ 7,8 հազար[1]:

19-րդ դ. ընթացքում հայազգի բնակչության զբաղմունքների բնույթի փոփոխությունները դրսևորվեցին արտաքին առևտրից նրանց հեռանալու և մանածագործական արդյունաբերությունը կրճատելու մեջ: Գերակշռող են դառնում բուն Աստրախանում հատավաճառային առևտուրը և ոչ մեծ ծավալով առևտուրը մերձակա շրջանների քոչվորների՝ ղազախների, ղալմուխների հետ, իսկ արտադրության մեջ՝ ներկարարական, մոմագործական և կաշվեգործական սակավաթիվ ձեռնարկությունները :

Աստրախանից Մոսկվա և Պետերբուրգ ժամանած վաճառականները երկաթեղենի, կաշվե իրերի, մանուֆակտուրայի, մորթեղենի, պատրաստի հագուստի, ոսկերչական իրերի, արդուզարդի, մահուդի առևտուր էին անում: Հատկապես հաճախ էին Մոսկվայում առևտուր անում հայազգի վաճառականներ Օհանովը, Սողոմոնովը, Թավրիզովը, Պոպով եղբայրները, Ծաբրիկանտովը, Գոստինցևը, Միքանդրոնցևը, Լիանոզովը, Գրանիլշչիկով եղբայրները և այլք:

1898 թ. Աստրախանում և գավառում կար 114 գիլդիական խանութ: Դրանցից 21-ը պատկանում էր հայերին: Հայերի բոլոր խանութների և կրպակների տարեկան շրջանառությունը կազմում էր 475 հազար ռուբլի կամ Աստրախանի գիլդիական բոլոր ձեռնարկությունների տարեկան շրջանառության 8%-ից փոքր ինչ ավելին, իսկ ընդհանուր շահույթը՝ 52,9 հազար ռուբլի կամ քաղաքի բոլոր ձեռնարկությունների շահույթի մոտ 11%-ը[2]:

1904 թ. Աստրախանում կար 1230 ձեռնարկություն, որից հայերին էր պատկանում 195-ը, այսինքն՝ 15%-ից ավելին: Հայերն ունեին ձկան 27 խանութ կամ քաղաքի ձկան խանութների մեկ հինգերորդը: Մեծ էր հայերի տոկոսը պարսկական մրգերի (40%-ից ավելի), աղի (11-ից՝ 5-ը) կոշկեղենի (26-ից 8-ը), գինու մառան ունեցողների (64-ից՝ 16-ը), նավթավաճառների, ծխախոտ վաճառողների շրջանում: Ոմանք ունեին մի քանի ձեռնարկություն (հաստատություն):

Քաղաքի արհեստավորների թվաքանակում հատկապես նկատելի էր հայերի մասնակցությունը կոշկակարության և կաշեգործության, ոսկերչության, դերձակության և ներկարարության մեջ:

Կապիտալ ունեցող հայերը ձգտում էին այն ներդնել արդյունաբերության նոր ճյուղեր զարգացնելու և արդիական կապիտալիստական ձեռնարկություններ կազմակերպելու մեջ: Ռուսաստանյան խոշորագույն կապիտալիստներից մեկը դարձավ աստրախանցի հայազգի Ստեփան Մարտինովիչ Լիանոզովը: Կապիտալը ներդնելով ժամանակակից արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման մեջ՝ Ս. Մ. Լիանոզովն արժանացավ Աստրախանի պատվավոր քաղաքացու կոչմանը: 1891 թ. Փարիզում կայացած համաշխարհային ցուցահանդեսում աչքի ընկնելու համար նա ստացավ առևտրական խորհրդականի կոչում: 1894 թ. Փարիզյան ցուցահանդեսում գերազանցության արժանացավ նաև աստրախանաբնակ մի այլ հայ՝ Ալեքսանդր Մելիքենցևը:

Մանր աղ արտադրող ֆաբրիկայի տեր Ս. Լիանոզովը ստեղծեց ձկնարդյունաբերական «Լիանոզով և որդիք» ֆիրման: Հետագայում Լիանոզովները միջոցներ ներդրեցին Բաքվի նավթարդյունաբերության մեջ, և նրանց ֆիրման դարձավ ձկնարդյունաբերական և նավթարդյունաբերական: Մոնոպոլիստական միավորումներից հարկ է հիշատակել Աստրախանում գործող «Տեր – Ակոպովայի նավթային և առևտրական ընկերությունը», «Ա. Ի. Մելիքով և Ընկ.» և այլն: Ժամանակի ընթացքում դրանք բոլորը կապվեցին անգլո-ֆրանսիական «Ռոչն Ջեներալ Օյլ Կորպորեյշն Լիմիտըդ» բաժնետիրական ընկերության կապիտալի հետ:

Աստրախանի հայ բնակչության՝ արտադրության հետ կապված հիմնական զանգվածը մնում էր մանր ձեռնարկություններում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին վերստին բարձրացավ այնպիսի ճյուղերի նշանակությունը, որպիսիք էին սննդի և տեքստիլ արդյունաբերությունը, որտեղ հայերի դերը ավանդաբար նշանակալի էր:

*
**

1840 թ. հայկական դատարանի վերացումից հետո աստրախանցի հայերը գումարում էին հասարակության ժողովներ, որտեղ լուծում էին իրենց ներքին խնդիրները: Կատարվում էին, օրինակ, բանավոր դատարանի անդամների և այլ պաշտոնյա անձանց ընտրություններ (հասարակական հիմունքներով):

[1] Տարազ (Թիֆլիս), 1892, հ.9, էջ 147, РГИА, ф.821, оп.7, д.232, л.19 об.

[2] ГИАР, ф .20, оп. 12, д. 366, л. 37-146.

Ընտրված ավագը մի քանի օգնականների հետ միասին (արական սեռի յուրաքանչյուր հազար շնչի դիմաց մեկական օգնական) ծառայում էր որպես միջնորդ հայ հասարակության և քաղաքային իշխանությունների միջև վարչական հարցեր լուծելիս:

Հասարակությունը քննարկում էր այնպիսի հարցեր, որպիսիք էին հարկերի և պարհակների դանձման կարգավորումը, զանազան տեղեկությունների ներկայացումը, իրենց կազմից քաղաքից մեկնածների հեռացումը, նոր անդամների ընդունումը և այլն: Ժողովներում քննարկվում էին նաև հայ ազգաբնակչության շրջանում կատարվող բարեգործական հարցեր՝ հոգաբարձուների ընտրություն, նրանց հաշվետվությունների ունկնդրում, Աստրախանի գիմնազիաներում սովորող հայ թոշակառուներին և երեք հայկական ծխական դպրոց պահելու միջոցների հայթայթում:

Իշխանություններն ըստ ամենայնի ջանում էին աստրախանաբնակ հայերին վերջնականապես համահավասարեցնել իրավունքների առումով քաղաքի մնացյալ բնակչության հետ: 1870 թ. քաղաքային բարեփոխումից հետո, որը նպատակամղված էր դասային ամեն մի մոտեցումը վերացնելուն, հասարակության բաժանումը «արտոնյալների» և «ոչ արտոնյալների» պայմանապես վերացվեց, թեև աննշան արտոնություններ ինչ-որ ժամանակ պահպանվեցին: Դրանց թվին էր պատկանում, մասնավորապես, ավագի պաշտոնը (մինչև 1887 թ.):

Հայկական համայնքի ազգային կյանքի նոր ձևեր դարձան հասարակական կազմակերպությունները՝ ծխական (համայնքի) ժողովները, բարեգործական ընկերությունները, գրական խմբակները, իսկ ժամանակի ընթացքում՝ քաղաքական կուսակցությունների տեղական կազմակերպությունները և ազգային-մշակութային ինքնավարության այլ ձևեր: Աստրախանի հայկական համայնքն ապրում էր ոչ միայն աչխույժ տնտեսական կյանքով, այլև իրեն մասնակից էր զգում այն ամենին, ինչ տեղի էր ունենում Աստրախան քաղաքում, ինչպես նաև հարազատ Հայաստանում և ողջ Ռուսաստանում:

Տակավին 1841 թ. Աստրախանի մի քանի վաճառականներ (Մկրտիչ Սուրաբեկյանը և ուրիշներ) հիմնադրեցին Թադեոս և Բարղուդիմեոս Առաքյալների անվան բարեգործական ընկերությունը: Ընկերության նպատակն էր կրթություն ստանալու համար կարիքավոր երեխաներին օգնելը: Նվիրատվությունների բաշխումը և իրականացումը տնօրինում էր հայկական հոգևոր ուսումնարանների հոգաբարձությունը:

Նվիրատվությունները կատարվում էին ամենատարբեր ձևերով՝ կանխիկ, պարտատոմսերով, վարձակալության վճարից ստացվող եկամտի փոխանցումով, իրեղեն նվերներով: 1870 թ., օրինակ, Հովհաննես Սարգսյանը մուծեց

100 արծաթե ռուբլի: 1867 թ. կարապետ Գալստյանը ծխական դպրոցի կարիքները հոգալու համար նվիրեց 5 տոկոսանոց բանկնոտ (պարտատոմս) 1000 ռ. արժողությամբ: Մովսես Գուրջանյանը հոգևոր դպրոցին ի տիրություն տվեց 200 քառակուսի սաժենի տարածաչափ ունեցող հողամաս: Մկրտիչ Սուրաբեկյանը առաջիկայում բացվող թեմական ուսումնարանի օգտին մուծեց 5 հազար ռուբլի, իսկ վաճառական Մկրտիչ Ուղլյանը իր երկհարկանի տունը 1871 թ. վարձակալության տվեց տեղի թատրոնի տնօրինությանը՝ պայմանով, որ եկամուտը հատկացվի ծխական իգական ուսումնարանի կարիքները հոգալու համար[1]: 1880 թ. Աստրախանի հայկական հոգևոր դպրոցների հոգաբարձության ընդհանուր եկամուտը կազմեց 7213 ռ. 75 կոպ.:

1875 թ. քաղաքում բացվեց 25 տեղանոց աղքատախնամ ապաստարանը: 1877 թ. հունվարին սկսեց գործել արհեստագործական դպրոցը: Դպրոցին առընթեր կար 12 հոգու համար հանրակացարան, ուր տեղավորում էին առավել կարիքավոր աշակերտներին (առաջին հերթին՝ որբերին), որոնց ապահովում էին աննդով, հագուստով, ուսումնական ձեռնարկներով: Դպրոցը հավասարեցված էր ռուսական ծխական չորրորդ կարգի դպրոցների ծրագրերին: Բացի ընդհանուր առարկաներից՝ հայերենից և ռուսերենից, թվաբանությունից և այլն, աշակերտներին ուսուցանում էին հյուսնություն և կոշկակարություն:

1891 թ. Աստրախանում կազմակերպվեց «Հայուհյաց» հոգաբարձական ընկերությունը: Հաստատվեց նրա կանոնադրությունը, որի համաձայն ընկերության նպատակն էր հռչակվում Աստրախանում հայ կանանց կրթության գործին նպաստելը, իգական ուսումնարանին, առանձին չքավոր աշակերտուհիներին նյութապես սատարելը, կարուձևի, ձեռագործության, տնավարության դասավանդման կազմակերպումը: Ընկերության առաջին նախագահ ընտրվեց Մարիամ Էլդարյանը: Երկար տարիներ նախագահ է եղել նաև Ս. Մելիքենցյանը:

1898 թ. կազմակերպվեց կար ու ձևի հատուկ դպրոց, որտեղ միաժամանակ սովորում էին 20–25 աշակերտուհի: Կանանց ընկերության եկամուտների աղբյուրներից մեկը բարեգործական ներկայացումներին, գրական կամ երաժշտական երեկույթներին (ցերեկույթներին) կատարվող հանգանակություններն էին: 1901 թ. հայ կանանց բարեգործական ընկերության ուժերով Աստրախանում բացվեց որբանոց:

Աստրախանի հայ հասարակայնության բարեգործությունը կատարվում էր ոչ միայն իրենց համայնքի կարիքները հոգալու, այլև այլ քաղաքների հայ ազգաբնակչության կամ էլ բուն Հայաստանի օգտին: Այսպես, օրինակ, 1875

[1] «Արարատ» ամսագիր, 1870, ԺԲ, էջ 303, 1871, Է, էջ 109, ԺԱ, էջ 348, 1873, Է, էջ 305, 320, 1874, Բ, էջ 66:

թ. Աստրախանում հանգանակվեց 1147 ռ. 65 կոպեկ՝ Արևմտյան Հայաստանում սովյալ հայրենակիցների կարիքները հոգալու, իսկ 1880 թ.՝ 1100 ռ. Վան քաղաքի կարիքավոր հայերին օգնելու համար: 1894 թ. ժողովեցին 2 հազար ռուբլի՝ Կարսի մարզի սովյալների օգտին: Այդ նույն նպատակներով կազմակերպվեցին բարեգործական ներկայացումներ, որոնցից մեկը՝ Աստրախանի ռուս բնակչության նախաձեռնությամբ: 1895 թ. հայ և ռուս բնակչությունը ժողովեց 3000 ռ. Արևմտյան Հայաստանում իրականացված ցեղասպանությունից մազապուրծ դարձած փախստականների կարիքները հոգալու համար:

1914 թ. Աստրախանում ստեղծվեց Հայկական հատուկ կոմիտե՝ ականավոր հասարակական գործիչ և մանկավարժ Կարապետ Սոբոլյանի (Գերասիմ Սոբոլյանի) գլխավորությամբ, որը կազմակերպում էր Կովկասյան ճակատում մարտնչող զորքերին և կամավորներին, ինչպես նաև Արևմտյան Հայաստանից փախստականներին օժանդակությունը: Արդեն պատերազմի առաջին ամիսներին ժողովվեց 30 հազար ռուբլի, իսկ 1915 թ. առաջին կեսին՝ ավելի քան 48 հազար ռուբլի:

Բարեգործական գործունեությանն ակտիվորեն մասնակցում էր հայ եկեղեցին, մանավանդ որ Աստրախանը մեծ թեմի կենտրոն էր: Բուն Աստրախանում կար չորս հայկական եկեղեցի, որոնք հիմնադրվել էին տակավին 18-րդ դարում՝ Աստվածածնի վերափոխման մայր տաճարը, Պողոս և Պետրոս առաքյալների տաճարը, Կատարինե նահատակի եկեղեցին և գերեզմանատան սուրբ Հարության եկեղեցին: 1841 թ. հիմնադրվեց ևս մեկ՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին: Եկեղեցիներն ունեին զգալի եկամուտ, հատկապես առաջին երկու տաճարը, որոնց պատկանում էր քաղաքի եկեղեցական հիմնական դրամագլուխը: 1900 թ., օրինակ, դրանք կազմում էին 158.316 ռուբլի[1]: Եկեղեցիներն ունեին նաև զգալի անշարժ գույք՝ շենքեր, հողամասեր, ինչպես նաև կապալով տրվող կրպակներ:

1874 թ. հիմնադրվեց Աստրախանի չքավոր հայերի եկեղեցական հատուկ հոգաբարձություն, որն իր կանոնադրության համաձայն պարտավոր էր հոգալ Աստրախանում հայկական ծխական դպրոցներ, անկելանոցներ, չքավորներին նպաստներ տալու մասին: Այդ ծրագրերի համար միջոցների աղբյուր էին նկատվում ինչպես հայկական եկեղեցիների արդեն ունեցած դրամագլուխը, այնպես էլ հետագա նվիրատվություններն ու կտակները: Հենց այդ հոգաբարձությունն էլ Աստրախանում կազմակերպեց վերը հիշատակված աղքատախնամ անկելանոցը (1875 թ.) և արհեստագործական դպրոցը (1877 թ.):

[1] Մշակ, 1902, N239:

1912 թ. աստրախանաբնակ հայերի եկեղեցական հոգաբարձության հիմնադրամը կազմում էր 470 հազար ռուբլի: Դրամագլխից ստացված տոկոսներն օգտագործվում էին անկելանոցներում և հիվանդանոցներում գտնվող չքավորներին, արհեստագործական դպրոցի աշակերտներին օգնելու, բարձրագույն ուսումնական հաստատությունների աստրախանցի 12 հայ ուսանողներին և միջնակարգ ուսումնական հաստատությունների 24 հայազգի աշակերտներին թոշակներ տալու համար:

1870 թ. ծխական դպրոցներ բացվեցին Վերափոխման, Պետրոսի և Պողոսի, Սբ. Կատարինեի եկեղեցիներին առընթեր, որտեղ սովորում էր 109 աշակերտ: Հենց այդ ժամանակ էլ ծխական դպրոցներից մեկը դարձավ իգական, որն Աստրախանում հայուհիների կրթությունը կազմակերպելու վաղեմի խնդրի իրականացումը եղավ: 1876 թ. արական ծխական դպրոցներում կար 150 աշակերտ, իսկ իգականում՝ 87[1]:

Զգալի թվաքանակով հայ աշակերտներ էին սովորում Աստրախանի ռուսական ուսումնական հաստատություններում: 19-րդ դ. վերջին ուսուցման տարբեր ձևերում Աստրախանում ընդգրկված էր 400-ից ավելի հայազգի աշակերտ, մոտ հարյուրը՝ Աղաբաբյան ուսումնարանում, մոտ երկու հարյուրը՝ ծխական դպրոցներում և 130-140 աշակերտ՝ ռուսական ուսումնական հաստատություններում:

Աստրախանում հայկական կրթության պատմության մեջ հատուկ տեղ է գրավում այնտեղ թեմական ուսումնարան բացելու հարցը: Աստրախանում թեմական ուսումնարան բացելու փորձ արվել էր ավելի վաղ, սակայն այն ժամանակ ուսումնարանը գոյատևեց կարճ ժամանակով (1838-1848 թթ.) և փակվեց միջոցների սղության պատճառով: 19-րդ դ. վերջին հոգևոր դպրանոց բացելու խնդիրը նոր երանգ ստացավ: 1895 թ. նույնիսկ հայտարարվեց դպրանոցի եռահարկ շենքի նախագիծ կազմելու մրցանակաբաշխություն: Նախագծի պայմաններից երևում էր, որ նախատեսվում էր լիակատար միջնակարգ ուսումնական հաստատություն բացել մոտ հինգ հարյուր աշակերտի համար: Բնապատմական կաբինետ, ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներ կազմակերպելու ծրագիրը վկայում է, որ հոգևոր դպրանոցի պատրվակով հայ հասարակությունը մտադրվում էր ստեղծել լիարժեք ուսումնական հաստատություն: Հնարավոր է, որ հենց այդ պարագան հարուցեց իշխանությունների զգուշավոր վերաբերմունքը հոգևոր դպրանոց ստեղծելու գաղափարի նկատմամբ, և այդ խնդրի շուրջ Էջմիածնի սինոդի միջնորդությանը նույնպես ՆԳՄ-ի կողմից բավարարություն չտրվեց: Ուսումնարան բացելու թույլտվությունը ստացվեց միայն 1906 թ. հունիսին: Թեմական ուսումնարա-

[1] Փորձ, 1877, Դ, էջ 156:

նի (սեմինարիայի) հանդիսավոր բացումը տեղի ունեցավ նույն տարվա սեպտեմբերի 8-ին: Սակայն սեմինարիայի համար մղված պայքարը դրանով տակավին չավարտվեց: Բացվեցին դրա երկու նախապատրաստական տարրական դասարանները միայն: Մնացյալ դասարանները բացելու հապաղումը պատճառաբանվում էր այն հանգամանքով, որ էջմիածնի սինոդը կառավարության հաստատմանը չէր ներկայացրել սեմինարիայի կանոնները: Սեմինարիայի կանոնադրության նախագծի ներկայացումը ձգձգվեց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի մահվան և նոր կաթողիկոս ընտրելու պատճառով: Այնուհետև իշխանությունները պատրվակեցին այն պարագան, թե իբր հայ հասարակայնությունը չի հանգել միասնական կարծիքի՝ թեմական ուսումնարանի գտնվելու վայրի խնդրի շուրջ: Թեև դրա համար հատուկ շենք էր կառուցվել, սակայն ուսումնարանը բացելու մասին որոշումն այնպես էլ չընդունվեց ընդհուպ մինչև հեղափոխությունը:

Փետրվարյան հեղափոխությունը ոչնչացրեց բյուրոկրատական խոչընդոտները, որոնք խանգարում էին Ատրպատականի և այլ վայրերի հայկական համայնքների ազգային կրթությունը զարգացնելու ծրագրերի իրականացմանը: 1917 թ. մայիսի 20-ին Ատրպատականի հայերի հոգաբարձական խորհուրդը որոշեց Աղաբաբյան ուսումնարանը (որը շարունակում էր մնալ քաղաքի հայկական կրթության հիմնական օջախը) վերափոխել Ատրպատականի Աղաբաբյան հայկական գիմնազիայի: Երեք ամիս անց գիմնազիայի կանոնադրությունը հաստատվեց ժամանակավոր կառավարության կողմից:

Գիմնազիայի ծրագիրը համապատասխանում էր դասական գիմնազիայի ծրագրին՝ հայոց լեզվի և գրականության, հայոց հավատի, հայոց պատմության, մշակույթի դասավանդման ավելացմամբ: Այս բոլոր առարկաները դասավանդվում էին հայերեն: Սովետական իշխանություն հաստատելուց հետո գիմնազիան 1918 թ. վերածվեց սովետական դպրոցի, և մեկուկես-երկու տասնամյակի ընթացքում հայ աշակերտների համար պահպանվեց հայոց լեզվի և գրականության դասավանդումը:

Ատրպատականի հայ ազգաբնակչության լուսավորության խնդրում մեծ դեր էին խաղում մասնավոր ուսումնական հաստատությունները: Մասնավորապես, մեծ ճանաչում էին վայելում Շահվերդովայի իգական մասնավոր գիմնազիան և Սոբոլևի ռեալական ուսումնարանը:

19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին ազգային հասարակական կյանքի վերելքն ամբողջ սրությամբ վերստին դրեց Ատրպատականում հայկական տպարան և սեփական պարբերական օրգան ստեղծելու անհրաժեշտության հարցը: Անցավ ևս մոտ տասը տարի, մինչև որ Ատրպատականում սկսեց կանոնավոր կերպով գործել հայկական տպարանը: Այն սկզբնապես իրականացվում էր Ս. Կ. Սեմյոնովի ռուսական տպարանի սարքավորանքով: 1907-1908 թթ.

այնտեղ տպագրվող «Վոլգա» ռուսերեն լրագրում ստեղծվեց «Հայկական բաժին»-ը, որի մի շարք համարներ լույս էին տեսնում հայերեն:

1908 թ. ապրիլի 27-ին լույս տեսավ Ատրպատականահայոց «Լրաբեր» թերթի առաջին համարը: «Լրաբերը», որի խմբագիր-հրատարակիչը Կարապետ Խաչատրյանն էր, լույս տեսավ մեկուկես տարի՝ 1908 թ. ապրիլից մինչև 1909 թ. հոկտեմբերը: Թերթը սկզբում տպագրվում էր Ս. Սեմյոնովի տպարանում, իսկ 1909 թ.՝ Աբել Ալրեսյանի հայկական նոր տպարանում: Լրագիրն արտահայտում էր բնակչության բավական լայն շրջանների շահերը: Հրապարակվում էին ինֆորմացիա տեղի հայկական համայնքի կյանքից, նորություններ Ատրպատականի կյանքից, Հայաստանից և մյուս հայկական համայնքներից հաղորդագրություններ, ռուսական լրագրերից պաշտոնական նյութերի թարգմանություններ: Լրագիրն ուներ սեփական թղթակիցներ Բաքվում և Թիֆլիսում:

1910 թ. հոկտեմբերին Ատրպատականում լույս տեսավ «Մեր կյանքը» լրագրի առաջին համարը, բայց հաջորդ համարը լույս տեսավ միայն 1911 թ. ապրիլին: Կանոնավոր կերպով լրագիրը սկսեց լույս տեսնել սոսկ 1912 թ. մարտից, որից հետո հինգ ամսվա ընթացքում հաջողվեց լույս ընծայել 22 համեմատաբար հաճախ համարներ: Լրագրի խմբագիրն էր Աբել Ալրեսյանը, որը նաև «Ա. Ալրեսյան և Ա. Օկուր» տպարանի համատերն էր: Լրագրի բովանդակությունը մոտավորապես նույնն էր, ինչ և 1908-1909 թթ. լույս տեսած «Լրաբերինը»: Նրա էջերում մեծ տեղ էր հատկացվում հայկական մշակութային կյանքի իրադարձություններին:

1915 թ. Ատրպատականում ձեռնարկվեց հայկական լրագիր վերաստեղծելու ևս մի փորձ: «Բանբեր» լրագիրն էր, որը լույս տեսավ 1915 թ. ամռանը: Որպես խմբագիր-հրատարակիչ հաստատվեց Ղուկասյանը, իսկ լրագիրը տպագրվում էր Ալրեսյանի և Օկուրի նույն տպարանում, որն այժմ կոչվում էր «Պեչատնոյե դելո» («Տպագրական գործ»): Լրագրի բովանդակությունը էր նույնն էր, ինչ և նախորդներինը, բայց հատուկ տեղ էին զբաղեցնում համաշխարհային պատերազմի իրադարձություններին վերաբերող նյութերը:

Վերջապես, արդեն խորհրդային ժամանակաշրջանում, 1919 թ. Ատրպատականում լույս էր տեսնում «Կարմիր բանվոր» լրագիրը՝ ՌԿԿ(բ) տեղի կոմիտեի հայկական բաժանմունքի օրգանը: Լրագրի խմբագիրներն էին հայ հայտնի բոլշևիկներ Աչոտ Խումարյանը և Հայկ Գյուլիքևխյանը: Լույս ընծայվեց ընդամենը 20 համար:

19-րդ դ. երկրորդ կեսից սկսված Ատրպատականի հայկական գաղութի ազգային մշակույթը բնորոշվում է նաև թատերական կյանքի զարգացմամբ: Թատերական բեմադրությունները հանդիսականների լայն զանգվածին հա-

ղորդակից էին դարձնում հայկական և համաշխարհային թատերագրության խաղացանկին:

1810 թ. ի վեր Աստրախանում գործում էր ռուսական թատրոն, իսկ 19-րդ դ. կեսերից կազմակերպվում էին նաև հայկական սիրողական թատերական խմբակներ: Աստրախանում հայկական պրոֆեսիոնալ թատրոնի սկզբնավորումը կապված է նշանավոր հայ դերասան Թովմաս Ֆաստուլյաճյանի անվան հետ: Նրա ստեղծագործական գործունեությունը սկսվել էր Կոստանդնուպոլսում: 1860-ական թվականների երկրորդ կեսին նա մի խումբ դերասանների հետ մեկնում է Ռուսաստան, որտեղ զբաղվում է հայերով բնակեցված քաղաքներում թատերախմբեր կազմակերպելով: Հայկական առաջին բեմադրությունն Աստրախանում տեղի ունեցավ 1868 թ. հունվարի 28-ին, իսկ 1868 թ. մայիսից սկսվեց աշխատանքը Թ. Ֆաստուլյաճյանի անմիջական ղեկավարությամբ, որը օգտվեց այնտեղ արդեն գոյություն ունեցող թատերախմբից՝ պրոֆեսիոնալ կոլեկտիվ կազմակերպելու համար: Տեղի սիրողներից ոմանք, ինչպես օրինակ, Սերեբրակյանը, Մ. Բուրջալյանը, հետագայում դարձան հայտնի դերասաններ:

Դրսեկ դերասանները և թատերական կոլեկտիվի կազմավորումը հանդիսացան աստրախանաբնակ հայերի թատերական կյանքի կարևոր իրադարձությունը: Խանդավառությամբ նախապատրաստվեցին չորս ներկայացում. ֆրանսիացի հեղինակներ Օ. Ունիս-Բուրժուայի և Հ. Դենիերի «Կույրի որդին», «Կատարինե Գոլարդը» (նույնպես թարգմանված ֆրանսերենից), Գոլդինյանի «Շուշանիկ» պատմական դրաման և այսպես կոչված դիվերտիսմենտը՝ տեսարաններ տարբեր պիեսներից:

Աստրախանի հայկական թատերախմբի հաջորդ ղեկավարը դարձավ Նոր Նախիջևանից եկած ուսուցիչ Հովսեփ Հալաբյանը, որը Թ. Ֆաստուլյաճյանի թատերախմբում էր փորձառություն ձեռք բերել: Հ. Հալաբյանի անվան հետ է կապված Աստրախանի հայկական թատրոնի պատմության մի երկար ժամանակաշրջան (1870-1890-ական թվականներ): Այդ տարիների խաղացանկը նույնպես աչքի էր ընկնում բազմազանությամբ և բաղկացած էր ազգային և թարգմանական, դասական և ժամանակակից պիեսներից: Հ. Հալաբյանը մինչև 1892 թվականը շարունակեց գլխավորել թատերախումբը:

Աստրախանի հայերի ազգային կյանքում վառ իրադարձություն էին 1884 թ. ամռանը քաղաքում հայ մեծ ողբերգակ Պետրոս Ադամյանի հյուրախաղերը: Հետագայում Աստրախան հյուրախաղերի ժամանեցին Սիրանույշը, Վրույրը, Հովհաննես Աբելյանը և հայկական բեմի մյուս ականավոր վարպետները: Այդ հյուրախաղերը հայկական համայնքների բնակիչներին հաղորդակից էին դարձնում թատերագրության գլուխ-գործոցներին, զարգացնում էին ճաշակ, հետաքրքրություն էին արթնացնում մայրենի լեզվի և ազգային մշակույթի նկատմամբ:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Աստրախանում ստեղծվեց արվեստասերների հայկական խմբակ, որը հետագայում փոխանցվեց բանվորական ակումբին: Չնայած քաղաքացիական պատերազմի և հետագա տարիների զրկանքին, խմբակի մասնակիցներն աշխատում էին մեծ խանդավառությամբ: Շարունակվում էին նաև ազգային թատրոնի վարպետների (Օլգա Մայսուրյանի, Հովհաննես Աբելյանի, Պահարեի և այլոց) հյուրախաղերը: Ժամանակի ընթացքում հայկական ազգային մշակութային օջախը սատարելու ուղղությամբ ակտիվիստների ջանքերը գնալով նյութական և բարոյական ավելի մեծ դժվարությունների էին հանդիպում, որի հետևանքով հայկական համայնքի ազգային կյանքն այդ տարիներին ի չիք դարձավ:

Երաժշտական տաղանդներով ևս հարուստ էր հայկական համայնքը: Առավել մեծ հռչակ նվաճեցին Պետերբուրգի և Փարիզի օպերաների մենակատարուհի Նադեժդա Պապայանը և Հայաստանի ժողովրդական դերասան Ալեքսանդր Կարատովը (Կարապետովը):

Հայկական համայնքի մշակութային կյանքի կարևոր դրսևորումներից էր 1908 թ. գրական-գեղարվեստական ընկերության ստեղծումը, որի նպատակն էր հայ գրականության, երաժշտության, թատրոնի, արվեստի ուսումնասիրությունը: Կանոնադրության համաձայն, ընկերության անդամները պարտավորվում էին պարբերաբար հանդես գալ հայ գրականության և արվեստի պրոբլեմների շուրջ զեկուցումներով և ռեֆերատներով[1]: 1908-1914 թթ. ընթացքում ընկերությունը կազմակերպեց Խ. Աբովյանին, Մ. Նալբանդյանին, Պ. Պռոշյանին, Րաֆֆուն, Գ. Սունդուկյանին և Ա. Շիրվանզադեին նվիրված հոբելյանական և թեմատիկ երեկոներ: Աստրախանի հայ հասարակայնության հետ հանդիպումներին անձամբ ներկա են գտնվել Ալեքսանդր Շատուրյանը և Վահան Տերյանը: Ամբողջ հայ ազգաբնակչության, աշակերտության և ռուս հասարակայնության մասնակցությամբ լայնորեն նշվեցին հայկական գրերի գյուտի 1500-ամյակը և տպագրության 400-ամյակը, հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրու մահվան 200-ամյակը: Այդ հանդիսությունների նյութերը հետագայում հրապարակվեցին:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և առաջացած նյութական բարենպաստ պայմանները խթանում էին հասարակական-մշակութային կյանքի վերելքը, հասարակական, զինվորական և մշակութային ականավոր գործիչների մի ամբողջ համաստեղության հանդես գալը: Տակավին

[1] Կանոնագրություն Աստրախանի հայոց գրական-գեղարվեստական ընկերության, Աստրախան, 1908 թ.:

18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբին հայտնի էին աստրախանցի խաստատովի, Դելյանովի, Ախշարումովի անունները, որոնք ռուսական բանակում զինվորական լուրջ աստիճան էին նվաճել: Գեներալ Դ. Ա. Դելյանովի որդին՝ Իվան Դավթի Դելյանովը 1880-ական թվականներին զբաղեցրեց Ռուսաստանի ժողովրդական կրթության մինիստրի պաշտոնը: Գեներալ Ախշարումովի որդին՝ Դմիտրի Դմիտրևիչ Ախշարումովը, որը հայտնի դարձավ որպես պետրուշևականների հեղափոխական խմբակի անդամ, նշանավոր բժիշկ էր, իսկ նրա եղբայր Նիկողայոսը (Նիկոլայը) ճանաչված գրող էր: Հայկական դատարանի երբեմնի քարտուղար Արտեմի Կոտելնիկովի՝ Աստրախանում ծնված թոռը՝ Արտեմի Նազարի Կոտելնիկովը իր կյանքի մեծ մասն անցկացրեց Պետերբուրգում: Նա ճանաչված վիճակագրագետ էր, վիճակագրության և 1897 թ. մարդահամարի կազմակերպման վերաբերյալ մի շարք գրքույկների հեղինակ: Նա Պետերբուրգում «Նաչա ժիզն» առաջադեմ լրագրի խմբագիրներից մեկն էր, ինչպես նաև նույն անունը կրող հրատարակչության և խանութի տնօրենը, այլ թերթերի և ամսագրերի հրատարակիչը: Մասնավորապես, կարևոր դեր խաղաց Ա. Ն. Կոտելնիկովի հիմնադրած (1910 թ.) «Ժիզն Կավկազա» թերթը, որն ըստ էության կովկասյան հայրենակցական ընկերությունների օրգանն էր Պետերբուրգում:

20-րդ դ. սկզբներին Աստրախանում հանրաճանաչ էին իրավաբաններ Կարապետ Հալաջյանը և Ռոմանոս Աստվածատրյանը: Աստրախանցիների շրջանում մեծ հեղինակություն էր վայելում բժիշկ Մարգար Առուստամովը: Ծնունդով արցախցի, նա Աստրախանի հետ կապեց իր կյանքի վերջին շրջանը (1889-1901 թթ.): Առուստամովի ունակությունները հատկապես դրսևորվեցին Պովոլժիեում (1892 թ.) խոլերայի համաճարակի ժամանակ: Նրա գործունեությունն արժանացավ ականավոր ռուս գրող Վ. Գ. Կորոլենկոյի հիացմունքին, որը Մ. Առուստամովին է նվիրել իր «Կարանտինն ինը ոտնաչափ խարսխակայանում» ակնարկը: Նշանավոր բժիշկներ էին աստրախանցի հայեր Ի. Քուրդովը, Տ. Ֆարմանյանցը, Ա. Աղաբաբովը և ուրիշներ:

Ականավոր գիտնականներ էին Մելքում և Պետրոս Տուրպայան (Տուրպաև) եղբայրները: Նրանք կրթություն էին ստացել արտասահմանում: Մելքումը քիմիկոս էր, իսկ Պետրոսը՝ ինժեներ-էլեկտրատեխնիկ: Պ. Տուրպայանի նախագծով Աստրախանում կառուցվեց քաղաքի էլեկտրակայանը: Խոշոր գիտնական դարձավ Մելքումի որդին՝ Տիգրան Տուրպաևը՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամը, որը երկար տարիներ Մոսկվայում գլխավորում էր Զարգացման կենսաբանության ինստիտուտը: Այսպիսով, Աստրախանի հայկական գաղութի մշակութային մթնոլորտը նպաստում էր որակյալ մտավորականության ձևավորմանը, որը շատ օգտակար գործեր է

արել իր քաղաքի համար և որը սերտորեն կապված էր հարազատ ժողովրդի հետ:

19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին ինչպես ռուս, այնպես էլ հայ իրականության մեջ գերիշխող քաղաքական բուռն իրադարձությունները չէին կարող շրջանցել նաև Աստրախանի հայկական համայնքը: Ընդ որում այն ներգրավված էր ինչպես ռուս, այնպես էլ հայ հասարակական կյանքի հորձանուտը: Աստրախանաբնակ հայերի շրջանում հանդես եկան ինչպես ռուս, այնպես էլ հայ քաղաքական հոսանքների հետևորդներ: Հայկական կուսակցությունները այստեղ ստեղծում էին, որպես կանոն, իրենց ոչ մեծ կազմակերպությունները: Իսկ ռուսական կուսակցությունների կազմակերպությունները համաքաղաքային մասշտաբով էին, և դրանց մեջ հայերը մտնում էին մյուս քաղաքացիների հետ հավասար իրավունքներով:

1883-1889 թթ. Աստրախանում ապրեց Ն. Գ. Չեռնիշևսկին: Հասարակական բարձր գիտակցության և պարզապես մարդկայնության դրսևորում էին աստրախանաբնակ հայերից շատերի բարեկամական, ընկերական և վստահության ներշնչող առնչություններն աքսորյալ Ն. Գ. Չեռնիշևսկու հետ:

Շնորհիվ Աստրախանի հայազգի բնակչության տնտեսական և քաղաքական ակտիվության, տեղի հայկական գաղութը իր գոյության չորս դարերի ընթացքում պատկառելի դեր խաղաց ինչպես քաղաքի ու երկրամասի, այնպես էլ հայ ժողովրդի տնտեսական և հասարակական կյանքում:

ՄՈՍԿՎԱ

Մոսկվայում հայ համայնքի սկզբնավորումը համընկնում է 13-րդ դարի կեսերին թաթար-մոնղոլական արշավանքի հետևանքով առաջացած ավերածությունից և քայքայումից հետո ռուսական հողում քաղաքային կյանքի և տնտեսական կապերի աստիճանական աշխուժացման ժամանակաշրջանին: Պետք է անցնեին երկար ու ձիգ տասնամյակներ, որպեսզի Հորդայի տիրապետության պայմաններում ռուսական քաղաքներում նորից սկսեին զարգանալ արհեստագործությունը և առևտուրը: Վերածնվում է Վոլգայան առևտրական ուղին, որով հաստատվում է ռուսական շրջանների առևտուրը Արևելքի երկրների հետ: Այդ առևտրում գործուն մասնակցություն են ունենում հայ վաճառականները: Բուն Հայաստանում, որը նույնպես գտնվում էր մոնղոլական լծի տակ, պայմանները քիչ էին նպաստում տնտեսության աճին: Այնպես որ ռուսական քաղաքներում զգալի թիվ էին կազմում առևտրական հայերը՝ Մերձկասպիայից և Վոլգայի վրայի թաթարական քաղաքներից՝ Հին և Նոր Սարայից, Աստրախանից, Կազանից գաղթածները: Պարսկական, հնդկական և արևելյան այլ ապրանքներով նրանք ուղևորվում էին Վոլգայով դեպի վեր՝ Նիժնի Նովգորոդ, Յարասլավլ, Տվեր, ընդհուպ մինչև Մեծ Նովգորոդ: Մյուս կողմից, 14-րդ դ. առաջին կեսին, պատմաաշխարհագրական նպաստավոր պատճառների շնորհիվ (բանուկ ճանապարհներից որոշ չափով հեռու գտնվելը, անտառային խիտ զանգվածներով պաշտպանվածությունը, Հորդայի արշավանքներից և տուրքերից համեմատաբար նվազ քայքայված և ավերված լինելը) տեղի է ունենում Մոսկովյան իշխանության ամրապնդումը և ընդարձակումը:

Մեծանում է Մոսկվա և Օկա գետերով կամ ցամաքով մինչև Յարոսլավլ, իսկ այնուհետև Վոլգայով ընթացող նավարկելի ճանապարհի նշանակությունը: Այն նպաստում էր իշխանության և նրա մայրաքաղաքի՝ այլ երկրների հետ առևտրական կապերի ոլորտը ներգրավվելուն: Կար նաև դեպի Դոնի վերին հոսանքները, իսկ այնտեղից Դոնով դեպի Ազովի ծով տանող ուղի: Այդ կապերին մասնակցող հայ առևտրականները մշտապես (և գնալով ավելի հաճախակի) այցելում էին հզորացող Մոսկովյան իշխանության մայրաքաղաքը:

Մոսկվայում հայերի բնակվելու մասին առաջին անվիճելի վկայությունը ռուսական տարեգրություններից մեկի՝ 1390 թ. վերագրվող այն հիշատակությունն է, համաձայն որի, Հայազգի Աբրահամի տնից սկսված Հրդեհից կրակով բռնկվել է քաղաքի արվարձանը և մեծ քանակությամբ չենքեր են

հրկիզվել[1]: Այն ժամանակ քաղաքամերձ արվարձան էր համարվում Նեգլինայա գետից այն կողմ ընկած Կիտայ-գորոդի շրջանը: Հրդեհի մասին վկայությունը մատնանշում է, որ հայերը այդ ժամանակ արդեն քաղաքի մշտական բնակիչներից էին, այնտեղ ունեին տներ. ժամանակի առումով դա համընկնում էր Կուլիկովյան ճակատամարտում ռուսների տարած հաղթանակի և Մոսկովյան իշխանության հետագա ուժեղացման հետ, որն էլ ավելի էր խթանում հայերի ներգաղթը դեպի Մոսկվա:

Կիտայ-գորոդը, որպես առևտրաարհեստագործական արվարձան, հայերի բնակության հաստատելու հիմնական վայրն էր: Աղբյուրների տվյալներով, հենց այնտեղ, մոտավորապես Վարվարկա փողոցի վերջում (արվարձանի ամենաաշխույժ ճանապարհահատվածում) բնակություն էին հաստատում հայերը և հույները: Այնտեղ առևտրական խանութաշարքերի մեջ կար նաև «Հայկական շարք», որ հիշատակվում է 1599 թ. վավերագրում. սակայն շարքը գոյություն է ունեցել, ըստ երևույթին, արդեն մի քանի տասնամյակ դրանից առաջ:

Հայ առևտրականները և արհեստագործները Մոսկվայում բնակվում էին նաև այլ համայնքների շրջանում: Առևտրի մեջ այնտեղ մեծ դեր էին խաղում այսպես կոչված «սուրոժցի-հյուրերը». այդպես էին անվանում Ռուսիայում Ղրիմից, նրա ջենովական գաղութներից ժամանած առևտրականներին, բնդ որում ոչ միայն հայերին, իտալացիներին կամ հույներին և ոչ միայն Սուրոժից (Սուդակից), այլև Կաֆայից (Թեոդոսիայից) ու այլ քաղաքներից նկածներին: Ղրիմ-սևծովյան ուղղությունը Ռուսաստանի առևտրական կապերի մեջ առավել առաջնայիններից մեկն էր: Առևտրականների մեջ զգալի թիվ էին կազմում վաճառական-հայերը, որոնք ժամանակի ընթացքում հաստատվում են Մոսկվայում: Սուրոժցի վաճառականներին լայն արտոնություններ էին տրվում (հարկերից և մաքսային տուրքերից ազատում և այլն): Հայ որոշ առևտրականներ և արհեստավորներ (Ղրիմից, Պովոլժիեից, Կովկասից, Իրանից եկածները) Մոսկվայում արդեն ունեին իրենց տները: Նրանց շրջանում կային նույնիսկ իշխանական արքունիքի մատակարարներ:

Հայկական արվարձանը Մոսկվայում ձևավորվել է 15-րդ դարում[2]: Այն, ըստ երևույթին, կազմված էր մի քանի տասնյակ ընտանիքից, որոնք բնակվում էին միևնույն շրջանում և զբաղվում էին առևտրով կամ արհեստագործությամբ:

---

[1] ПСРЛ, XIV, М., 1949, с.218.

[2] Тихомиров М. Н. Древняя Москва. М., 1947, с. 142-143.

Հայ համայնքի ձևավորման ավարտը տեղի է ունեցել մոտավորապես 16-րդ դ. մոտերքին. տեղեկություններ կան այդ ժամանակ հայկական եկեղեցու գոյության մասին: Հայկական եկեղեցի կար նաև Կիտայ-գորոդում, Ի-լինկայի և Նիկոլսկայա փողոցի միջև ընկած ինչ-որ տեղում: Այնտեղ էլ, Լուբյանկայի շրջանում, 16-րդ դ. վերջին գոյություն ուներ նաև «Հայկական առևտրական տուն»: Հայկական խանութաշարքից և Հայկական առևտրական տնից զատ, շատ հայեր առևտուր էին անում նաև և պարսկական, և սուրաժյան մետաքսի և այլ խանութաշարքերում:

Մոսկվայի հայ համայնքի առանձնահատկությունը պատմության ամբողջ ընթացքում նրա մշտական աճն ու անընդմեջ գոյությունն է: Ի տարբերություն հայկական այլ հին բնակավայրերի (Աստրախանի, Կիևի, Պոդոլիայի և այլոց), այն չի ունեցել անկումների կամ ընդհատումների ժամանակաշրջաններ:

Մոսկվայում մշտապես կամ ժամանակավորապես բնակվող հայերի շրջանում, առևտրականներից բացի, կային նաև այլ մասնագիտությունների ներկայացուցիչներ, որոնց թվում՝ թարգմանիչներ և դիվանագետներ. սրանք ուղեկցում էին ինչպես մոսկովյան, այնպես էլ օտարերկրյա դեսպանություններին: Համեմատաբար ավելի հաճախ էին հայեր հանդիպում հորդայական և ղրիմյան դեսպանությունների կազմում: Այսպես, 1495 թ. վավերագրում խոսվում է երեք հայի մասին, որոնք ուղարկվել էին Ղրիմի դեսպանության կազմում: Նույն տեղում էլ հիշատակվում են Մոսկվայում բնակվող կաֆացի ևս երեք հայ: 1516 թ. մի խումբ հայեր Կոստանդնուպոլսից մեկնել են Մոսկվա՝ ռուսական դեսպանության կազմում: Հայերը օգտվում էին տարբեր առիթներից Մոսկվա ուղևորվելու համար, որտեղ նրանք հաճախ անցնում էին ռուսական ծառայության կամ մնում էին մշտապես բնակվելու:

Ռուսական հասարակության մեջ հայկական տարրի աճող ազդեցության վկայությունն է նաև այն իրողությունը, որ Կազանը գրավելու առթիվ Կարմիր հրապարակում կառուցված Վասիլի Երանելու ինը գմբեթանոց տաճարի ընթերասեղաններից մեկը նվիրված է Գրիգոր Հային. այսպես է անվանվում Գրիգոր Լուսավորիչը ռուսական ուղղափառ վարքագրության մեջ: Այդ բացատրվում է նաև Կազանի վրա գրոհելու ռուսական զորքերին հայերի ցույց տված օգնությունը նշելու ցանկությամբ:

Կազանի և Աստրախանի գրավումից և Պոլոժիեի միակցումից հետո Ռուսաստանը դուրս եկավ Կասպիականի ափեր և արևելյան Նախակովկաս, որը արմատապես փոխեց ռազմավարական իրավիճակը և ուժերի տեղաբաշխումը ինչպես բուն տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ Արևելյան Եվրոպայում: Այդ իրավիճակը ավելի բարձրացրեց Մոսկվայի դերը Հայաստանի և հայ ժողովրդի կյանքում:

16-րդ դ. երկրորդ կեսից ամրապնդվում են ռուսական արքունիքի անմիջական կապերը Իրանի, Վրաստանի, Թուրքիայի և Ղրիմի հետ: Այդ երկրների հետ Մոսկվայի հաստատած կապերին գործուն մասնակցություն էին ունենում նաև հայ առևտրականները, դիվանագետները, թարգմանիչները:

Հայերի թիվը Մոսկվայում հատկապես աճում է 17-րդ դարից: Դրան ավելի է նպաստում Ռուսաստանում խառնակ ժամանակների ավարտը, լեհ-չվեդական ինտերվենցիային դիմագրավելը, կենտրոնական իշխանության ամրապնդումն ի դեմս գահակալած Ռոմանովների տան: Առևտրականներն Իրանից և Կովկասից Աստրախանով, Վոլգայով հասնում էին մինչև Մոսկվա, որտեղից չատերը գետերով ուղևորվում էին դեպի Արխանգելսկ և այնուհետև՝ Եվրոպա:

1626 թ. հրդեհը ոչնչացրեց մոսկովյան հաստատությունների փաստաթղթերը, և միայն այդ տարվանից է սկսվում արխիվային փաստաթղթերի պահպանված զանգվածը: Եվ արդեն հենց այդ տարում հանդիպում են հիշատակություններ հայ վաճառականների Մոսկվա ժամանման մասին:



Մոսկվա. Լազարյան ճեմարանի շենքը

1626 թ. մարտին Մաքսային պրիկազում հայտարարվել են հայազգի Իդիլ Իրիգժանովի, հայազգի Ժորապ-Վրացու (իմա՝ վրաստանցի –Վ. Խ.), ինչպես նաև հայեր Ղազար Գալյուստովի և Իվան Գրիգորևի բերած «ղզլբաշական» (այսինքն՝ պարսկական) ապրանքների մասին՝ 2500 ռուբլուց ավելի ընդհանուր գումարով:

Այն պատճառները, որոնք հարկադրում էին բազում հայերի լքել հայրենի վայրերը և ապաստան փնտրել Մոսկվայում, պատկերավոր կերպով արտացոլված են 1632 թ. Կոստանդնուպոլսից գաղթած հայազգի Սարգիս Ավանեսովի խնդրագրի մեջ. «Նա՝ Սարգիսկոն, իբրև թե իր հորից հետո նույնպես ծառայել է սուլթանին՝ որպես ճախրուկակիր և որպես թե տարեկան նրա ռոճիկն է եղել 15 ռուբլի, նաև մեկ կտոր մահուդ և որպես օրապահիկ սնունդ երկուական ալտին և երեք դենգա՝ օրական: Նա ունեցել է նաև երեք գյուղ՝ որպես կալվածք, որտեղ եղել են հարյուր հիսուն չինական և իբրև թե ունեցել է խաղողի մեծ այգիներ: Երբ սկսել են թուրքերը նեղել նրան հավատի համար և ուզեցել են նրան մահմեդական հավատի բերել և այդ պատճառով էլ մեծ բռնություններ ենթարկել, լսելով Ռուսիայում ուղղափառ քրիստոնեական հավատի և օտարերկրացիների նկատմամբ միապետի ողորմածության ու շնորհի մասին, վերցնելով իր կնոջը, մեկնել է Ղրիմ, իսկ Ղրիմից էլ միապետի անունը տալով մեկնել է Մոսկվա»[1]: Սարգիս Ավանեսովն ընդունվում է ծառայության դեսպանական պրիկազում:

Կես դարից ավելի ռուսական դիվանագիտական ծառայության մեջ գտնված հայազգի Վասիլի Դաուդովը երիտասարդության տարիներին եղել է պարսից շահ Աբասի պալատականը, ռուսական դեսպանության հետ ծածուկ լքել է Իրանը, որից հետո ծառայել է Մոսկվայում, անցնելով թարգմանչից մինչև դեսպան ընկած ուղին: Դիվանագիտական հանձնարարություններ (որպես դեսպանորդներ, թարգմանիչներ և պարզապես սուրհանդակներ) կատարում էին նաև բազում այլ հայեր:

17-րդ դարի երկրորդ կեսին հայերի այցելությունը Մոսկվա էլ ավելի հաճախակի դարձավ: Դա կապված էր Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության գործունեության հետ, ընկերություն, որը ստեղծվել էր Իրանի մայրաքաղաք Սպահանում և իր ձեռքում էր կենտրոնացրել պարսկական մետաքսի ողջ առևտուրը: Մետաքսի առևտուրը Պարսից ծոցով կամ Թուրքիայի վրայով հղի էր տարբեր բարդություններով (ամենից առաջ ցամաքում կամ ծովում ավազակային հարձակումների սպառնալիքով), և ընկերության ղեկավարությունը նպատակադրվեց յուրացնել Ռուսաստանի վրայով անցնող ուղին:

[1] Армяно-русские отношения в XVII в. Сб. документов, Ер., 1953, с.7.

1660 թ. ապրիլին Մոսկվա ժամանեց Ջուղայի ընկերության ներկայացուցիչ խոջա Զաքար Սահրադյանը (Շերիմանյանը), որը Մոսկվայի արքունիք բերեց զանազան բազում ապրանքներ, հատկապես թանկագին զարդեր: Ամենախոշոր իրը՝ թանկարժեք քարերով ընդելուզված գահը, որպես ընծա մատուցվեց Ալեքսեյ Միխայլովիչ ցարին: Դրանով իսկ ընկերության ղեկավարները ցուցադրեցին Ռուսաստանի հովանավորությունը ընկերության գործունեությանը, նրա իշխանությունների աջակցությունը չահելու իրենց ցանկությունը: Ջուղայի հայերի ընծայած «աղամանդյա գահը» ցարդ մոսկովյան Կրեմլի Զինապալատի գլխավոր դիտարժան իրերից մեկն է: Ռուսաստանն իր հերթին չահագրգռված էր, որ պարսկական առևտուրն անցնի իր տարածքով՝ դրանից տնտեսական և քաղաքական օգուտներ քաղելու և միաժամանակ Թուրքիայի տարանցիկ դերը թուլացնելու համար:

Փոխադարձ չահագրգռվածությունը հանգեցրեց Հայկական ընկերության հետ Ռուսաստանի 1667 թ. առևտրական պայմանագրի կնքմանը, որի համաձայն հայ վաճառականները մեծ արտոնություններ էին ստանում և ամենից առաջ՝ Ռուսաստանի վրայով Եվրոպայի հետ տարանցիկ առևտրի դիմաց միասնական 5 տոկոսանոց մաքս վճարելու արտոնությունը: Պայմանագիրը խթանեց Ռուսաստան, մասնավորապես, Մոսկվա հայ վաճառականների հետագա ներգաղթը:

Հայ առևտրականները նախկինի պես Մոսկվայում հանգրվանում էին ոչակի թաղամասերում կամ շրջաններում: Դեսպանական պրիկազի 1675 թ. նոյեմբերի 24-ի հուշագրով «հրամայվում է հայազգի Իվան Մակարովին ընկերներով հանդերձ և այսուհետև այն հայերին, որոնք Մոսկվա կգան ապրանքներով, հին իշևանատանը լավագույն տեղերում չտեմարաններ և կրպակներ տալ ապրանքները պահեստավորելու և առևտուր անելու համար»: Շատ հայեր տեղավորվում էին Պոկրովկայում գտնվող Դավիդովյան իշևանատանը: Ցարի՝ նույն թվականի դեկտեմբերի 28-ի հրամանագրով կարգադրվում էր այդ հայերին օթևան տրամադրել Նիժնիե Սադովնիկի թաղամասում, և այնտեղ «ուրիշ ոչ ոքի օթևան չտալ, քանզի նրանք նրա՝ մեծ միապետի, օգտագործման համար ուտեստեղենի ամեն տեսակի պաշարներ են պատրաստում և միապետի գործերով մշտապես նրան են այցելում»: Մոսկվայի 1597 թ. հատակագծում («Մեծ գծագրում») Պոկրովկայի հյուսիսային կողմում նշված է հայ վաճառականների իշևանատունը, իսկ 1661 թ. հատակագծում «հայկական իշևանատունը» նշված է Իլինսկի դարպասների մոտակայքում[1]: 1676 թ. պարսկահպատակ հայազգի եղուկ Բողոսովը խնդրագիր տվեց, որ իրեն

[1] Амирханян А.Т. Тайны дома Лазаревых, фрагменты истории московской армянской общины XIV-XX века. М., 1993, с.16.

առևտրի համար ավելի մարդաշատ տեղ հատկացնեն, քան այն կրպակը, որտեղ նա առևտուր էր անում. այդ առթիվ հետևեց ցար Ֆեոդոր Ալեքսեևիչի հրամանագիրը. «Շահի մեծության հպատակ եղուպ Բողոսովին հատկացնել հին իջևանատանը աչքի ընկնող տեղում լավ կրպակ, այլ ոչ թե հետնամասում, քանզի նրանք՝ հայերն, իրենց ապրանքներով հանդերձ Մոսկվա են մեկնել նորին միապետի չնորհած հրովարտակով և պայմանագրով, այլ ոչ թե ինքնակամ»:

Մոսկվայի հաճախակի հյուրերն էին հայազգի վաճառականներ Կարապետ Մատվեևը, Սերգեյ Սերգեևը, եղուպ Գրիգորևը և ուրիշներ: Երկու տարի և ավելի ժամանակով Մոսկվայում էին ապրում հայազգի վաճառականներ Մատվեյ Գրիգորևը, Իվան Իվանովը, Իլյա Սերգեևը, Սաֆար Դավիդովը: Մոսկվա այցելած հայերի թվում 1688 թ. վավերագրում հանդիպում է Սաֆար Վասիլևի՝ Ջուղայից գաղթած վաճառականի անվան հիշատակությունը: Հետագայում նա քանիցս գտնվել է Մոսկվայում և առաջինն էր հայ վաճառականներից, որ Պետերբուրգի վրայով (1707 թ.) առևտրական ճանապարհորդություն ձեռնարկեց: 1710 թ. Սաֆար Վասիլևը Թերեք գետի ափին հիմնագրեց Ռուսաստանում առաջին մետաքսի գործարանը: Սաֆարը 18-րդ դ. Ռուսաստանում բավականին ճանաչված հայ վաճառականներ և պետական ծառայողներ Վասիլևներ-Մակարովներ-Խոստատովներ գերդաստանի նախահայրն էր: Նրանցից ոմանք հիմնավորվեցին Մոսկվայում:

Հայերը, գտնվելով Մոսկվայում, ըստ իրենց վկայության, առևտուր էին անում Հին իջևանատանը (հավանաբար, Պոկրովկայում): Նրանք բերում էին հում մետաքս, թանկագին քարեր, արևելյան նմուշի մետաքսյա և բամբակյա գործվածքներ:

Հայերի մեջ, առևտրականներից զատ, կային նաև այլ մասնագիտությունների ներկայացուցիչներ: Այսպես, 14-15-րդ դդ. Մոսկվայում սուրբժցի վաճառականների՝ քարաշեն կամարակապ ծածկերով շենքերը, որոնք տարբերվում էին իրենց ժամանակակից շրջակա կառույցներից, կառուցվում էին հայ ճարտարապետների և վարպետների կողմից:

17-րդ դ. Մոսկվայում ծավալվեց հայազգի նկարիչների գործունեությունը: 1660 թ. խոջա Զաքարի և նրա ընկերների՝ ցար Ալեքսեյ Միխայլովիչին բերած նվերների հետ կար նաև Նոր Ջուղայի բնակիչ հայազգի նկարիչ Բոգդան Սալթանովի (Աստվածատուր Սուլթանյանի) ստեղծած նկարը (պղնձի վրա արված փորագրությունը): Նկարը պատշաճ տպավորություն գործեց և ցարը խնդրեց նրա հեղինակին ուղարկել իր արքունիք: Շուտով Բոգդան Սալթանովը ժամանեց Մոսկվա: 1667 թ. ցարը նշանակեց նրան Զինապալատի գեղանկարիչ, սահմանեց պատկառելի ռոճիկ և օրապահիկ, ինչպես նաև հանձնարարեց «իր արվեստն ուսուցանել ռուս մարդկանցից վերցված աշակերտներին առաջիկայում իր՝ միապետի գեղանկարչական գործերի համար»: Բ. Սալթանովը մեծ ավանդ է ներդրել Զինապալատի ձևավորման մեջ, ինչպես նաև ուսուցանել և նախապատրաստել է բազում չնորհալի գեղանկարիչներ: Նրա հետ մեկտեղ Մոսկվայում ստեղծագործում էին հայազգի նկարիչներ՝ եղբայրներ Բոգդանովները, Մորչկա Օստաֆևը, ինչպես նաև շատ հմուտ մի գեղանկարիչ, որ վավերագրերում (հավանաբար, աղավաղված ձևով) անվանվում է «Պեակուցիրա»: Նրա սաների մեջ աչքի էր ընկնում հայազգի նկարիչ Լազար Բելսկին՝ հայ գեղանկարիչներ Բելսկիների ամբողջ տոհմի նախահայրը:

Պետրոս 1-ինի բարենորոգիչ քաղաքականությունը հանգեցրեց հայ-ռուսական հարաբերությունների նոր աչխուժացմանը, հայ ժողովրդի ներկայացուցիչների շփումների ամրապնդմանը ռուսական կառավարող շրջանների հետ: Այդ քաղաքականությունը դրականապես ազդեց ոչ միայն հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ուժեղացման վրա, այլև ամրապնդեց Ռուսաստանում բնակվող հայերի տնտեսական և իրավական կարգավիճակը: Ռուսաստանի քաղաքականությունն իր արտացոլումն է գտել Պետրոսի հրամանագրի հանրահայտ խոսքերում. «Հայերին, որքան հնարավոր է, փաղաքշել և դյուրին դարձնել ամեն պատշաճ պարագայում, որպեսզի նրանք ավելի չատ գալու ցանկություն ունենան»[1]:

Թեև Ռուսաստանի մայրաքաղաքը 1712 թ. փոխադրվեց Պետերբուրգ, սակայն Մոսկվան, որպես կարևոր քաղաքական և տնտեսական կենտրոն, շարունակում էր հայ վերաբնակիչների և առևտրականների համար պահպանել իր գրավիչ դերը: Ջուղայի ընկերության հետ 1667 և 1673 թթ. կնքված պայմանագրերի համաձայն, Մոսկվան հանդիսանում էր Իրանից Ռուսաստանի վրայով դեպի Եվրոպա գնացող տարանցիկ առևտրական ուղու հանգուցային կետերից մեկը: Արխիվներում շատ հաճախ են հանդիպում Մոսկվա հայ վաճառականների այցի մասին 18-րդ դ. առաջին կեսին պատկանող փաստաթղթեր, մաքսատներում արված քաղվածքներ կամ ապրանքներով հանդերձ Աստրախան, Արխանգելսկ և այլ քաղաքներ մեկնելու մասին թույլտվություն ստանալու խնդրագրեր: Նախկինի պես նրանք բերում էին հում մետաքս, մետաքսյա և բամբակյա գործվածքներ (գլխաշորեր, լայն գոտիներ, քողեր և այլն), կաշվե ապրանքներ (սեկ, յուխտ, ոչխարի մորթի և այլն):

18-րդ դ. սկզբին ընկերության ներկայացուցիչ հայերի բնակվելու տեղը Մոսկվարում, որպես կանոն, Բոգոյավլենսկի (Սուրբ Հայտնության)

[1] Армяно-русские отношения в первой трети XVIII в., Сборник документов, т. 2, часть первая, Ер., 1964, с.42.

վանքում գտնվող չինուհյուններն («ապրանքներն») էին Կիտայ-գորոդում, որի մոտ էլ նրանք տեղակայում էին իրենց կրպակները: Ընկերության որոշ առևտրականներ գործնականում դառնում էին արդեն Մոսկվայի մշտական բնակիչներ, իսկ ոմանք բնակվելու անհատական թույլտվություն էին ստանում:

Մոսկվայում բնակվելու ցարի թույլատրության մասին հայտարարել է 1712 թ. Հոլանդիայից ընտանիքով և որոշ ընկերների հետ մեկնած Մերկուլ Աղազարովը: 1716 թ. հայ վաճառականների մի խումբ խնդրագիր է մատուցել առ այն, որ «իրենք եկել են Թուրքական և Պարսկական երկրների տարբեր քաղաքներից՝ քրիստոնյա երկրում ապրելու համար... իսկ Մոսկվայում նրանք ամուսնացել են և այստեղ բնակվում են տարբեր վայրերում և կրպակներում մանրածախ առևտրով են զբաղվում՝ այստեղ իրենց ապրուստը հայթայթելու համար, քանի որ իրենց այնտեղի երկրներում նեղում էին անօրենները»[1]:

Հայ համայնքի աճն անհրաժեշտ է դարձնում Մոսկվայում հայկական եկեղեցու կառուցումը: Հայկական եկեղեցի կար Կիտայ-գորոդի շրջանում արդեն 16-րդ դ. երկրորդ կեսին – 18-րդ դ. սկզբին: Սակայն պահպանվել է հայազգի քառասուն վաճառականների 1666 թ. խնդրագիրը՝ Մոսկվայի տաճարներում իրենց խոստովանելու և հաղորդվելու թույլտվություն տալու և հայերի համար (իրենց տաճարը չունենալու պատճառով) առաջացած բարդությունների մասին: Ուրեմն, նշված պահին Մոսկվայում հայկական եկեղեցին չէր գործում:

18-րդ դ. սկզբին Կիտայ-գորոդում հայկական փոքր եկեղեցին վերակսում է իր գործունեությունը: Եկեղեցին գտնվում էր Դեսպանական հաստատության բակում, «Հայ ազգին պատկանող մարդկանց Ռուսաստան ժամանելու սկզբից ի վեր», այսինքն, դա եկեղեցու հին շենքն էր, որը, հավանաբար, կանոնավոր կերպով չէր գործում: 18-րդ դ. սկզբին այդ եկեղեցում արարողություններ է կատարել Ռուսաստանում գտնված հայ ազատագրական շարժման նշանավոր ներկայացուցիչ, Իսրայել Օրու զինակից՝ Մինաս վարդապետ Տիգրանյանը: Սակայն շուտով, հայ ժամասացության տեղի հետ կապված, այլևայլ չար պատահարներ տեղի ունեցան: Նախ, դեսպանական ծառայության բակը այնտեղ գտնվող եկեղեցով հանդերձ տրվեց մետաքսի ֆաբրիկային: Հայ համայնքի որոշմամբ հենց նույն վայրում, Կիտայ-գորոդում, կապալով վերցվեց ազնվական Վոլկովի բակը, ուր էլ «տեղափոխվեց» հայկական եկեղեցին:

[1] Նույն տեղում, էջ 99:

Տաճարի նմանօրինակ իրավիճակը չէր բավարարում Մոսկվայի աճող հայ համայնքին, և հայերը փորձում են ելք գտնել այդ կացությունից: 1731 թ. Մոսկվայում բնակվող վրաց Վախթանգ 6-րդ թագավորը, որի շքախմբի հետ բազում հայեր էին ժամանել, թույլատրեց Պրեսնյայում գտնվող Վրացական արվարձանում հողատարածքներ հատկացնել հայերին՝ կառուցապատելու համար: Երբ ազնվական Վոլկովը, որի բակում հայկական եկեղեցու համար շինություն էր վարձակալվել, վաճառեց իր բակը, հայերը եկեղեցին տեղափոխեցին և զետեղեցին Պրեսնյա գետից այն կողմը գտնվող փայտաշեն շինության մեջ՝ Վախթանգ 6-րդի կողմից հայերի բնակության համար հատկացված տեղում: Ընդ որում այդ շինությունը կառուցվել էր «առանց եկեղեցու նմանության և հատկանիշի», հավանաբար, ժամանակ շահելու համար: Այդ ժամանակվանից էլ այնտեղ հայկական գերեզմանատուն հաստատվեց: Սակայն կայսրուհի Ելիզավետայի՝ 1742 թ. հունվարի 16-ի հայկական եկեղեցիներ կառուցելը արգելելու և երկրում բոլոր հայկական եկեղեցիները փակելու (բացի Աստրախանում գտնվող մեկից) մասին տխրահռչակ հրամանագրից հետո այդ շինության վրա կնիք դրվեց: Շուտով այն քանդվեց («խարխուլ լինելու պատճառով»), և նրա տեղը կառուցեցին «քարաշեն մենաստան» (նույնպես «առանց եկեղեցու որևէ հատկանիշի»), սակայն 1746 թ. Մոսկվայի հոգևոր կոնսիստորիայի որոշմամբ այն ևս կնքվեց: Ձբավարարվեց նաև Կիտայ-գորոդում քարաշեն եկեղեցին վերականգնելու կամ նույն Կիտայ-գորոդում բնակվող վաճառական Վասիլի Մակարովի տանը ժամասացություն կատարելու մասին խնդրագիրը:

Ռուսաստանում հայկական եկեղեցիներ կառուցելու արգելքը վերացնելուց հետո միայն 1760-ական թվականներին Գեորգևյան (ներկայիս Բոլշայա Գրուզինսկայա) փողոցի վրա կառուցվեց Աստվածածնի վերափոխման եկեղեցին (և էլի մի քանի շենքեր եկեղեցուն առընթեր), որը կանգուն մնաց մինչև 1932 թվականը: Քանի որ նախքան այդ շենքի կառուցումը եկեղեցին գործում էր այլ շինություններում, իսկ մինչ այդ «տեղափոխվել էր» Կիտայ-գորոդից, ապա, ըստ երևույթին, նրան փոխանցվել էր նաև Մոսկվայի ամենահաուջին հայկական եկեղեցու՝ տակավին 16-րդ դ. կառուցված Աստվածածնի վերափոխման անվանումը:

18-րդ դ. առաջին կեսին Մոսկվայի հայ ազգաբնակչության շրջանում աչքի էին ընկնում մի քանի նշանավոր գործիչներ: Հանրահայտ դեմք էր արդեն հիշատակված Մինաս վարդապետը՝ հայ ազատագրական շարժման գործիչը, որը 1711 թ. հետո հիմնականում ապրում էր Ռուսաստանում և համարվում էր հայ ժողովրդի ներկայացուցիչը ռուսական իշխանությունների մոտ: Նա բնակվում էր մերթ Մոսկվայում, մերթ Պետերբուրգում, կատարում

էր եկեղեցական ժամասացություն[1]: Հետագայում նա ձեռնադրվեց եպիսկոպոս:

Առավել աչքի ընկնող դիրք էին գրավում Ռուսաստանում հաստատված ունևոր վաճառականները, Ջուղայի հայկական ընկերության գործիչները: 18-րդ դ. առաջին տասնամյակներից ի վեր Մոսկվայում էր հիմնավորվել Սաֆար Վասիլևը, որն այցելում էր Մոսկվա 1686 թ. սկսած և հետագայում էլ ուղևորություններ էր կատարում դեպի Աստրախան, Իրան, Եվրոպա: Առևտրից զատ, Ս. Վասիլևը զբաղվում էր ձեռնարկատիրությամբ: Տնտեսական խոշոր գործունեությամբ էին զբաղվում նաև նրա հետնորդները՝ Մակարովները և Խաստատովները:

1710 թ. Մոսկվայում բնակություն է հաստատում Ջուղայեցի նշանավոր վաճառական Լուկա Շերվանովը (Լուկա Իլյինը, Ղուկաս Շերվանենցը): Նա ամուսնացած էր Սաֆար Վասիլևի որդու այրու հետ: 18-րդ դ. երկրորդ կեսի մոսկվացի խոշոր վաճառական Վասիլի Մակարովը Սաֆար Վասիլևի թոռն էր և Լուկա Շերվանովի խորթ որդին: Լուկա Շերվանովը ծառայում էր որպես թարգմանիչ Ռուսաստան ժամանած հայ գործիչների հետ կարծիքներ փոխանակելիս: 1723 թ. նա բնակություն հաստատեց Սանկտ-Պետերբուրգում, որտեղ դարձավ արտաքին գործերի կոլեգիայի թարգմանիչ և Պետերբուրգի հայ համայնքի ղեկավարներից մեկը: Միաժամանակ նա մանուֆակտուրաներ ուներ Մոսկվայում, Պետերբուրգում, Աստրախանում, նավեր՝ Կասպից ծովում:

Այդ նույն ժամանակաշրջանում Մոսկվայում բնակություն հաստատեց Իգնատիոս Ջրանցևը, որը նույնպես սերում էր Նոր Ջուղայի Շերիմանյանների խոշոր տոհմից: Նրա նախնիներից մեկն էր խոջա Զաքարը: Իգնատիոս Շերիմանյանի անունը հանդիպում է վավերագրերում՝ սկսած 1712 թվականից: Նա Մոսկվայի վրայով զանազան ապրանքներ էր փոխադրում, ինչպես նաև մետաքս էր մատակարարում պետական առաջին ֆաբրիկային: Որոշ ժամանակ նա Լ. Շերվանովի հետ միասին հանդես էր գալիս որպես թարգմանիչ Մոսկվա եկած հայ գործիչների հետ վարվող բանակցություններում: Ունենալով դրամագլուխ՝ Ի. Ջ. Շերիմանյանը (Շերիման) փայատիրական հիմունքներով բարոն Շաֆիրովի և կոմս Ապրակսինի հետ չուոֆի ֆաբրիկա ուներ Մոսկվայում, իսկ 1733 թ. Բոգորոդսկի գավառի Ջրյանովո գյուղում հիմնադրեց մետաքսի ֆաբրիկա: Նա մի քանի տան տեր էր Պոկրովկայի չրջանում: Ընդ որում նա քաղաքի հողատարածքներ էր գնում Մոսկվայի խոշոր ավագանու ներկայացուցիչներ՝ բոյարներ Մատվեևներից, իշխաններ Յուսուպովներից և ուրիշներից: 1725-1728 թթ. ընթացքում Շերիմանյանը մի քանի

[1] Историческая записка об армянских церквах Петербурга и Москвы, М., 1875.

հողամասեր ձեռք բերեց Ստոլպովի նրբանցքում: Ստացված տարածքում նա կառուցեց քարաշեն տուն: 1752 թ. Իգնատիոս Շերիմանյանի մահվանից հետո նրա ձեռնարկությունները և տները ժառանգեց նրա որդի Զաքարը[+]:

18-րդ դ. կեսին՝ 1749 թ. Մոսկվայում բնակություն է հաստատում Ջուղայեցի ևս մեկ խոշոր վաճառական՝ Աղազար Եղիազարյանը (Լազարյանը) իր որդիներով հանդերձ: Նա դարձավ Ռուսաստանում Լազարյանների՝ հանրահանաչ առևտրականների, արդյունաբերողների, բարեգործների տոհմի նախահայրը: 1758 թ. Աղազարը (Լազարը) ձեռք է բերում Զաքար Շերիմանյանի Ստոլպով նրբանցքում գտնվող տները և մի քանի տարի անց գնում է որոշ հողամասեր և առանձնատներ այդ նրբանցքի մյուս կողմում, ինչպես նաև հարևան թաղամասերում՝ Սրետենկայում, Ֆրոլովկայում (Մյասնիցկայա), Կրիվոկոլեննի և Կոլպաչնի նրբանցքներում: Մյասնիցկայա փողոցում գտնվող Լազարյանների չինքերից մեկը 1782 թ. վարձակալությամբ տրվեց Մոսկվայի փոստատանը: Հատկանշական է, որ Մոսկվայի գլխավոր փոստատունը մինչև այժմ գտնվում է մոտավորապես նույն տեղում:

Որպես խոշոր առևտրական բուժուազիայի տիպիկ ներկայացուցիչներ՝ Լազարյանները ձգտում էին իրենց դրամագլուխը ներդնել արդյունաբերության զարգացման մեջ: Հենց նույն՝ 1758 թ. նրանք գնեցին (նույն Զ. Շերիմանյանից) մետաքսի ֆաբրիկա մերձմոսկովյան Ջրյանովոյում, որը դարձրին Ռուսաստանի մետաքսի լավագույն ֆաբրիկան[1]: Հետագայում նրանք գնեցին և կառուցեցին մի քանի հանքագործարանային ձեռնարկություններ Ուրալում:

Լազարյանները հռչակվեցին նաև մեծ բարեգործությամբ, այդ թվում հայ համայնքների՝ և Մոսկվայի, և Պետերբուրգի, որտեղ բնակություն հաստատեց Աղազարի ավագ որդին՝ Հովհաննեսը, և Նոր Նախիջևանի ու այլ վայրերի հայ բնակչության համար արված բարեգործությամբ: Իրենց գլխավոր խնդիրներից մեկը Լազարյանները համարում էին երկու մայրաքաղաքներում հայկական եկեղեցիներ կառուցելու անհրաժեշտությունը: 1742 թ. Ռուսաստանում հայկական եկեղեցիների գործունեությունն ու կառուցումը արգելելու

[+] Որոշ հետազոտողներ գտնում են, որ հարուստ հողատերեր և ֆաբրիկանտներ Շերիմանյանները 18-րդ դ. կեսերի Մոսկվայի հայ համայնքի փաստական ղեկավարներն ու ներկայացուցիչներն էին, ինչպիսին այդ տարիներին Լուկա Շերվանովն էր Պետերբուրգի հայերի համար կամ ինչպիսին 18-րդ դ. երկրորդ կեսին դարձան Պետերբուրգում և Մոսկվայում՝ Լազարյանները: Սակայն, չնայած Շերիմանյանների անվիճելի ազդեցիկ դիրքին, հայ համայնքի շահերը ներկայացնելու խնդրում նրանց խանգարում էր հռոմեադավան (կաթոլիկ) լինելը: Այդ հանգամանքը 18-րդ դ. ուներ կարևոր դեր:

[1] Դիլոյան Վ.Ա. Լազարյանների հասարակական-բարեսիրական գործունեության պատմությունից, Եր., 1966, էջ 49:

պահին Մոսկվայում հայկական եկեղեցի կար միայն գերեզմանատանն առնթեր Պրեսնյա գետից այն կողմը, ընդ որում, այն գտնվում էր եկեղեցու համար նվազ հարմարեցված շենքում: Իսկ Պետերբուրգում դադարեցվեց մայրաքաղաքում առաջին հայկական եկեղեցու շինարարությունը, որը ձեռնարկվել էր Լ. Շիրվանովի միջոցներով և նրա իսկ տնատիրության տարածքում:

Մոսկվա. Հայկական Սուրբ Խաչ եկեղեցին (XIX դ.)

1770 թ. Հովհաննես Լազարյանը ստացավ երկու մայրաքաղաքներում իր միջոցներով հայկական եկեղեցիներ կառուցելու թույլատրություն: Մոսկվայում եկեղեցի կառուցելու համար տեղ հատկացվեց Ստոլպովի նրբանցքում գտնվող, Լազարյաններին պատկանող հողամասերից մեկում: Բանն այն է, որ մոսկովյան հայերի հոծ բնակության հին թաղամասերից զատ (Կիտայ-գորոդում և Պրեսնյայում) 18-րդ դ. առաջին կեսից սկսվում է հայերի կողմից հատկապես յուրացվել Պոկրովկայի և Զիստիյե պրուդի շրջանը: Այդ շրջանի տնատերերի թվում, բացի Լազարյաններից, հայտնի էին Աբամելիքովների, Ասլաքելովների, Դելյանովների, Միրզախանովների, Սումբաթովների և այլոց անունները: Նրանցից շատերը խոշոր ձեռնարկատերեր էին, զինվորական կամ պետական ծառայության մեջ հաջողությունների հասած գործիչներ: Հանդես են գալիս կրթված հայերից առաջին մասնագետները: 18-րդ դ. վերջին, օրինակ, Մոսկվայում էր բնակվում հանրահայտ բժիշկ Պետրոս Քալանթարյանը (բժշկագիտության նրա դասագիրքը 1793 թ. հրատարակվեց Նոր Նախիջևանում)[1]: Հայկական շատ տոհմեր ստացան ազնվականության կոչում, ոմանց կոմսության (Դելյանովներին, Լազարյաններին) կամ իշխանության տիտղոս շնորհվեց (Աբամելիքներին):

Ուստի և այս շրջանում տաճարի կառուցումը միանգամայն հասկանալի էր: Որոշ տեղեկությունների համաձայն, Մոսկվայում (ինչպես նաև Պետերբուրգում) հայկական եկեղեցիների շինարարությունը պատվիրվել է ականավոր ճարտարապետ Յուրի Ֆելտենին: Համենայն դեպս, 1770-ական թվականներին Մոսկվայում կառուցված հայկական եկեղեցին (1886 թ. դրան կից կառուցվեց նաև զանգակատուն) 18-րդ դ. ճարտարապետության նշանավոր հուշարձան էր: Եկեղեցու շինարարության մեջ մեծ միջոցներ ներդրեց և նրա կառուցման գեկավարությունն անմիջականորեն իրականացրեց Հովհաննես Լազարյանի կրտսեր եղբայրը՝ Խաչատուրը: Եկեղեցին հանդիսավոր կերպով օծվեց 1779 թ. և ստացավ Սուրբ Խաչ անվանումը: Եկեղեցու շինարարությունն ավարտելուց հետո այդ շրջանն ասես թե դարձավ մոսկովյան հայ համայնքի կենտրոնը, իսկ Ստոլպովի նրբանցքն այդ ժամանակվանից ի վեր պաշտոնապես կոչվեց Արմյանսկի (հայկական) նրբանցք: Բուն Սուրբ Խաչ եկեղեցին չի պահպանվել մինչև մեր օրերը. այն քանդեցին 1932 թվականին:

Լազարյանների նախաձեռնությամբ և միջոցներով եկեղեցիներ կառուցվեցին նաև Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գերեզմանատներում: 18-րդ դ. առաջին կեսին Պրեսնյայում գտնվող հայկական գերեզմանատնից բացի (որտեղ 1760-ական թվականներին, վերջապես, կառուցվեց Աստվածածնի վերափոխման եկեղեցին) Լազարյանների ջանքերով հայերի համար ա-

[1] Собрание актов, т.III, с. 129.

ռանձնացվեց նաև Վագանկովյան գերեզմանատան մի մասը: 18-րդ դ. վերջին հենց այն տեղակայվեց հայկական Սուրբ Հարության եկեղեցու շինարարությունը, որն ավարտվեց 1815 թվականին: Այսօրվա դրությամբ այն Մոսկվայի պահպանված հայկական միակ եկեղեցին է:

Հովհաննես Լազարյան (1735–1801)

Տնատիրական և ձեռնարկատիրական խոշոր գնումներ կատարելով, իրենց միջոցներով եկեղեցիներ և բնակելի շենքեր կառուցելով, Մոսկվայի քաղաքային կյանքում և դրա հետ մեկտեղ հայ ժողովրդի հասարակական կյանքում գործուն դեր ունենալով՝ Լազարյաններն իրենց հարստությամբ,

հեղինակությամբ և ազդեցությամբ 18-րդ դ. երկրորդ կեսին դարձել էին մոսկովյան հայ համայնքի ղեկավարները:

Սակայն Լազարյանների բազմակողմանի գործունեության գլխավոր հուշարձանը դարձավ նրանց հիմնադրած հայկական ուսումնական հաստատությունը՝ հայտնի Լազարյան ճեմարանը:

Հայ ժողովրդի զարգացումը օրակարգի հարց էր դարձրել հայկական ազգային դպրոցի ստեղծումը: Հովհաննես Լազարյանը տակավին 1780-ական թվականներին փայփայում էր հայկական պատկառելի ուսումնական հաստատություն ստեղծելու գաղափարը: Սակայն դրա համար պահանջվում էին ավելի մեծ միջոցներ, որը ժամանակի խնդիր էր: 1800 թվականին Հովհաննես Լազարյանը կտակ թողեց, որի համաձայն, երիտասարդ հասակում իր միակ որդու՝ Հարությունի մահվան հետևանքով, իրեն ժառանգորդ նշանակեց իր կրտսեր եղբորը՝ Հովակիմին: Կտակում նա կարգադրում էր Հովակիմին խնամակալական խորհուրդ ներմուծել 200 հազար ռուբլի, որպեսզի այդ գումարից ստացվող տոկոսների հաշվին «ժամանակի ընթացքում կառուցվի արժանավայել շենք հայազգի չքավոր երեխաների դաստիարակության և ուսուցման համար»:

Հովհաննես Լազարյանը վախճանվեց 1801 թ., և նոր հաստատության շինարարության (իսկ հետագայում նաև ֆինանսավորման) բոլոր հոգսերը կրում էր նրա եղբայր Հովակիմը, սակայն Հովհաննես Լազարյանը, որպես գաղափարի նախաձեռնող և հիմնական գումարի կտակող, իրավամբ համարվում է ուսումնարանի գլխավոր հիմնադիրը: Ընտանեկան խորհրդում նախատեսվող կրթօջախի գտնվելու վայրի հարցի համակողմանի քննարկումից և հայ հասարակական մյուս գործիչների հետ խորհրդակցելուց հետո որոշվեց հայկական ուսումնական նոր հաստատությունը հիմնադրել Մոսկվայում: Թեև Մոսկվան գտնվում էր Կովկասից և Ռուսաստանի հայկական սփյուռքի հիմնական զանգվածից մեծ հեռավորության վրա, տվյալ դեպքում ուշադրություն էր դարձվել երկու կարևոր նկատառումների վրա: Նախ այն, որ 19-րդ դարի սկզբին Հայաստանը տակավին չէր մտնում Ռուսաստանի կազմի մեջ: Այդ կապակցությամբ նկատի էր առնվել Մոսկվայում համեմատաբար մեծ (և բավականին ազդեցիկ) հայ համայնքի գոյությունը, ինչպես նաև ռուսական առաջին համալսարանի առկայությունը և բարձրագույն ուսումնական նոր հաստատություններ բացելու հեռանկարը՝ իրենց արդիական ձեռնարկներով և ուսումնական պրոցեսի լավագույն կազմակերպմամբ հանդերձ: Հավանաբար, նվազ դեր չունեցավ նաև այնպիսի գործոնը, որպիսին էր Լազարյանների՝ հիմնականում Մոսկվայում բնակվելու հանգամանքը, որը դյուրին էր դարձնում ուսումնարանի շինարարության և հետագայում նրա գործունեության անմիջական ղեկավարումը:

Նախատեսվող հաստատության շինարարության համար տեղ ընտրվեց Արմյանսկի նրբանցքը, որը գտնվում էր Մոսկվայի հայ ազգաբնակչության գլխավոր մասի բնակության շրջանում: Բացի այդ, Լազարյաններն այստեղ որպես սեփականություն ունեին մի քանի հողամասեր, որոնցից մեկի վրա էլ սկսվեց ուսումնական համալիրի շինարարությունը: Նախագիծը կազմվել էր 1810 թ., սակայն Հայրենական պատերազմը ընդհատեց աշխատանքը, և շինարարական հիմնական աշխատանքները ծավալվեցին 1813 թ. սկզբից մինչև 1815 թ. սկիզբը: Համալիրի հեղինակներն էին ճարտարապետներ Իվան Պոդյաչևը և Տիմոֆեյ Պրոտակովը: Վերականգնողական աշխատանքների ընթացքում 1980-ական թվականներին հայտնաբերվեց, որ ինստիտուտի գլխավոր շենքը կառուցվել է 17-րդ դ. «մոսկովյան ապարանքների» համար բնորոշ ավելի վաղ կառույցի հատվածամասերի օգտագործմամբ: Հավանաբար, այն պահպանվել էր այն ժամանակներից ի վեր, երբ քաղաքի տարածքի այդ հատվածը պատկանել էր բոյար Արտամոն Մատվեևին: Արմյանսկի նրբանցքում գտնվող հայկական ուսումնական հաստատության շենքերի համալիրը մինչև օրս էլ 19-րդ դ. սկզբների մոսկովյան ճարտարապետության հոյակապ հուշարձաններից է:

Լազարյանները սկզբնապես նախատեսում էին կազմակերպել երեքդասյա ծրագրով ուսումնարան, սակայն շուտով առաջ քաշվեց ուսուցիչներ և պետական ծառայության համար թարգմանիչներ պատրաստելու նպատակներով արևելյան լեզուների դասավանդմամբ գիմնազիա ստեղծելու նախագիծը: Կազմակերպվեց հայերենի, պարսկերենի, թուրքերենի, արաբերենի դասավանդումը, չհաշված եվրոպական լեզուները և գիմնազիական այլ առարկաներ: 1828 թ. մայիսին հաստատությանը շնորհվեց Արևելյան լեզուների Հայկական Լազարյան ինստիտուտ անվանումը:

1841 թ. գործում էր հոգևոր բաժանմունքը հայ եկեղեցու սպասավորներ և հոգևոր ուսումնարանի դասատուներ պատրաստելու համար, որը պահվում էր Նախիջևանի և Բեսարաբիայի հայկական թեմի միջոցներով: 1848 թ. ինստիտուտի հատուկ դասատուները (որոնք ունեին թարգմանիչների և պետական ծառայության այլ աստիճանավորների որակավորում) հավասարվեցին բարձրագույն ուսումնական հաստատության կարգին: Ինստիտուտում սովորողների թվաքանակը 19-րդ դ. երկրորդ կեսին հասնում էր 100-150 մարդու: Լազարյանները Մոսկվայի պայմաններում իրենց ուսումնարանի համար զգալի արտոնություններ ձեռք բերեցին՝ տնատիրությունը փոստային գանձումից, օթևան տալու պարտույթից և այլ հարկերից ազատելը, ինչպես նաև արտասահմանից գրքեր և ուսումնական սարքեր անմաքս ներմուծելը:

Մոսկվայում հայկական ուսումնական հաստատության կազմակերպելու մասին հրամանագրում և դրա կանոնադրության մեջ սահմանվում էր, որ ինս-

տիտուտի հոգաբարձուներն են Լազարյան գերդաստանի ներկայացուցիչները: Ինստիտուտի գոյության հարյուր տարիների ընթացքում նրա հոգաբարձուներն են եղել Հովակիմ (Եկիմ Լազարևիչ), Հովհաննես (Իվան Եկիմիչ) և Խաչատուր (Խրիստոֆոր Եկիմիչ) Լազարյանները: Լազարյանների արական գծի ընդհատումից և նրանց տոհմանունը իշխաններ Աբամելիքների ազգանվան հետ (բոլոր պարտականությունները և արտոնությունները փոխանցելով հանդերձ) զուգակցելուց հետո հոգաբարձուներ եղան Սեմյոն Դավիդովիչ և Սեմյոն Սեմյոնովիչ Աբամելիք-Լազարյանները:

Շնորհիվ ուսումնական ծրագրի, դասատուների կազմի (որտեղ ներկայացված էին հայտնի լուսավորիչներ և գիտնական-հայագետներ Հարությունն Ալամդարյանը, Ստեփանոս Նազարյանցը, Միքայել Նալբանդյանը, Սմբատ Շահազիզը, Մսեր Մսերյանցը, Մկրտիչ Էմինը և ուրիշներ), հայ սովորողների բարձր տոկոսի, Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը ավելի քան հարյուր տարի հայագիտության, հայկական լուսավորության, ուսուցչական կադրերի և ազգային մտավորականության դաստիարակության, ուսումնական գրականության մշակման և հրատարակության կարևորագույն օջախ էր:

Ճեմարանի սաներից էին մշակույթի, գիտության և գրականության այնպիսի ականավոր գործիչներ, որպիսիք էին՝ բանաստեղծներ Ռափայել Պատկանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Վահան Տերյանը, գեղանկարիչներ Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը, դերասան Ռուբեն Սիմոնովը, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը և այլք: Ճեմարանում սովորում էին ոչ միայն հայերը, այլև ռուս ու այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Այն ավարտել են գրողներ Յուրի Վեսելովսկին և Վլադիմիր Լիդինը, գրականագետ Դմիտրի Բլագոյը, բեմի ականավոր վարպետ Կ. Ս. Ստանիսլավսկին: Ճեմարանին առընթեր գիմնազիական դասարաններում է սովորել ռուս մեծ գրող Ի. Ս. Տուրգենևը:

Լազարյան ճեմարանը եղել է նաև ռուսաստանյան արևելագիտության հիմնական կենտրոններից մեկը: Ճեմարանի շրջանավարտներից էին ականավոր արևելագետներ Վ. Ա. Գորդլևսկին, Ֆ. Ե. Կորշը, Ա. Ե. Կրիմսկին, Վ. Ֆ. Միլլերը, Վ. Ֆ. Մինորսկին և այլք:

Լազարյանները ճեմարանին առընթեր հիմնել էին տպարան: 1829 թ. նրանք ձեռք բերեցին Հովսեփ Հովհաննիսյանի Պետերբուրգի տպարանից եռիք դազգահ, իսկ այնուհետև սարքավորանք գնեցին արտասահմանում: Մինչ այդ Մոսկվայում հայկական տպարան ստեղծելու փորձ էր կատարել Ավգուստ Սեմենը 1818 թ.: 1821 թ. Մոսկվայում լույս տեսավ Հարությունն Ալամդարյանի կազմած «Ռուս-հայերեն բառարանը»: Կարևոր հրատարակություններից էին վարդապետ Միքայել Սալլանթյանի «Քերականութիւն գրաբար լեզուի հայոց» և սարկավագ Աբրահամ Վաղարշապատցու «Համա-

ռօտ քերականութիւն ի ռուսաց լեզուի» ձեռնարկները: Լազարյանների տպարանը գործելու ժամանակվանից Մոսկվայում հայերեն գրքերի հրատարակությունն առավել զգալի թափ ստացավ:

Հիմնարար աշխատությունների հրատարակության համար պահանջվում էին մեծ միջոցներ, որոնք ևս հիմնականում տրամադրում էին Լազարյաններըը: 1838 թ. Հովհաննես Հովակիմովիչ և Խաչատուր Հովակիմովիչ Լազարյանների ջանքերով հրատարակվեց Ալեքսանդր Խուդաբաշյանի երկհատորյա «Հայ-ռուսերեն բառարանը»: 1833-1838 թվականների ընթացքում ռուսերեն լեզվով լույս տեսան «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» ժողովածուի երեք հատորները: Պատմական կարևոր վավերագրերի այդ ժողովածուն ցայսօր Հայաստանի պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրների արժեքավոր հավաքածու է:

Հայերեն և ռուսերեն տպատառերից բացի, Լազարյան ճեմարանի տպարանում կային 20-ից ավելի եվրոպական և ասիական լեզուներով տպագրության համար տպատառեր[1]:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հանգեցրեց Մոսկվայի հայ համայնքի մեծացմանը և նրա կազմի փոփոխմանը: Դյուրին գործառնական գործերով հայերի ուղևորությունները, ընդ որում ոչ միայն մերձկասպյան շրջաններից, այլև ամբողջ Այսրկովկասից և Պարսկաստանից: Մեծացավ նաև հայ սովորողների թվաքանակը, ընդ որում ոչ միայն Լազարյան ճեմարանում, այլև ռուսական ուսումնական հաստատություններում: Սովորողների շրջանում նույնպես, Ռուսաստանի հայկական գաղութներից սերվածներից զատ, գնալով ավելի մեծ տոկոս էին կազմում բուն Հայաստանի և Այսրկովկասի բնակիչները: Կազմավորվեց ռուսական պետական և զինվորական ծառայության մեջ գտնվող հայերի մի խավ, որոնց թվաքանակը նախկինում աննշան էր:

Մոսկվայի համայնքի ժողովրդագրական կառուցվածքի փոփոխությունը, նրա հասարակական գործուն դերը, գրագետ և կրթված հայ բնակչության տեսակարար կշռի բարձրացումը՝ այդ ամենն օրակարգի հարց է դարձնում Մոսկվայում հայերեն պարբերական հրատարակությունների կազմակերպման խնդիրը, որոնց կարիքը զգում էին նաև մյուս հայ համայնքները:

Մոսկվայում ամենաառաջին հայերեն պարբերական հրատարակությունը (և Ռուսաստանում հայերեն առաջին հանդեսը) դարձավ «Հյուսիսափայլը»՝ 19-րդ դ. հայ մամուլի պատմության մեջ առաջադիմական և ժողովրդավարական հանդեսներից մեկը: Մոսկվայում այդ հանդեսի հրատարակումը

[1] Базиянц А. П. Лазаревский институт в истории отечественного востоковедения. М., 1983, с.38.

վկայում էր քաղաքի բնակչության շրջանում դեմոկրատական տարրերի զգալի ազդեցության մասին: «Հյուսիսափայլը» լույս էր տեսնում ամեն ամիս 1858-1862 և 1864 թվականներին: Հանդեսի խմբագիր-հրատարակիչն էր Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանցը: Հանդեսի հրատարակմանը գործուն մասնակցություն է ունեցել անվանի բանաստեղծ, հրապարակախոս, հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Հանդեսի շուրջը համախմբվել էին Մոսկվայի հայ առաջադեմ մտավորականությունը և ուսանողությունը:

«Հյուսիսափայլը» լուսաբանում էր հայ ազգային կյանքի, ժողովրդական կրթության զարգացման, աշխարհաբարի արմատավորման (որով, ի դեպ, լույս էր տեսնում հանդեսը) հարցերը: Հանդեսում տպագրվում էին նաև հայ գրողների նոր ստեղծագործություններ, հրատարակվում ռուս և եվրոպական դրամատուրգիայի դասականների թարգմանություններ, զետեղվում էին հաղորդումներ գիտության նվաճումների մասին: Հանդեսին համագործակցում էին նաև ականավոր գրականագետներ, գրողներ և գիտնականներ՝ Ռափայել Պատկանյանը, Րաֆֆին, Սմբատ Շահազիզը և ուրիշներ:

Գրեթե «Հյուսիսափայլի» հետ միաժամանակ Մոսկվայում սկսեց լույս տեսնել «Ճռաքաղ» ամսագիրը: Ամսագրի խմբագիր-հրատարակիչն էին նույնպես Լազարյան ճեմարանի դասախոսներ Մսեր և Զայրմայր Մսերյանցները: Լինելով խոշոր հայագետներ և ազգային լուսավորության նշանավոր գործիչներ՝ նրանք իրենց ամսագիրը դարձրին հայ պահպանողական հայացքների արտահայտիչ: Ի տարբերություն «Հյուսիսափայլի», «Ճռաքաղը» հրատարակվում էր ոչ թե աշխարհաբարով, այլ գրաբարով: Հանդեսում շատ տեղ էր հատկացվում կրոնական տեքստերին, եկեղեցական կյանքի իրադարձություններին, ինչպես նաև պաշտոնական նյութերին՝ ելնելով հայ ընթերցողին ռուսական կառավարության պաշտոնական կարգադրություններին կանոնավորապես իրազեկ դարձնելու անհրաժեշտությունից: 1861 թ. սկսած Մսերյանցները սկսեցին հրատարակել «Համբավաբեր Ռուսիոյ» պատկերազարդ լրագիրը, որը լույս էր տեսնում ամիսը երկու անգամ: Պաշտոնական նյութերից զատ, լրագիրը հայ ընթերցողին ծանոթացնում էր ռուս գրականության ստեղծագործությունների թարգմանություններին: «Համբավաբեր Ռուսիոն» լույս տեսավ երեք տարի (մինչև 1864 թ. ներառյալ): Նրա լույս ընծայումը դադարացնելուց հետո Մոսկվայում հայերեն լեզվով նոր հրատարակություն կազմակերպելու համար պահանջվեց ութ տարի: Դրա նախաձեռնողները դարձան վերստին հայր և որդի Մսերյանցները: Ավելի քան երկու տասնամյակի ընթացքում (այդ թվում «Հյուսիսափայլի» լույս ընծայումը դադարեցնելուց հետո 17 տարի շարունակ) Մսերյանցները փոփոխական հաջողությամբ սատարում էին մոսկովյան հայ համայնքում ազգային տպագրական օրգանի գո-

յութիւնը[1]: Նրանց հաջորդ երկու հրատարակութիւնները՝ «Փարոս» տարեգիրքը (1872–1876) և «Փարոս Հայաստանի» ամսագիրը (1879–1881) լույս էին տեսնում արդեն աշխարհաբար: Նրանք հրատարակումներում հիմնական տեղը հատկացնում էին գեղարվեստական և գրականագիտական նյութերին: Զետեղվում էին հայաբնակ վայրերից ստացված թղթակցություններ և ճանաչողական բնույթի զանազան նյութեր: Իրենց գաղափարական ուղղվածությունից անկախ՝ այդ հրատարակությունները կարևոր ներդրում էին հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ:

Մոսկվայում հաջորդ պարբերական հրատարակությունն արդեն վերաբերում է 1886 թվականին և կապված է Մոսկվայում հայ քաղաքական կազմակերպությունների առաջացման հետ: Այդ կազմակերպություններն առավելապես ստեղծվում էին Մոսկվայի համալսարանում, Պետրովսկի-Ռազումովյան գյուղատնտեսական ակադեմիայում և ուսումնական մյուս հաստատություններում սովորող երիտասարդության նախաձեռնությամբ: 1880-ական թվականներին կար հայ ուսանողների երեք այդպիսի կազմակերպություն՝ 1881 թ. հիմնադրված անլեգալ «Հայրենասերների միությունը», կիսալեգալ հայրենասիրական «Ժողով» միավորումը, ինչպես նաև առավելապես հրատարակչական և լուսավորական գործունեությամբ զբաղվող «Մոսկվայի հայ ուսանողների գրական ընկերությունը»[2]: Այդ կազմակերպություններից առաջինը՝ «Հայրենասերների միությունն» էլ 1886 թ. նախաձեռնեց «Ազատության ավետաբեր» լրագրի հրատարակությունը: Լրագիրը լույս էր տեսնում անլեգալ (խմբագիր-հրատարակիչ՝ Ներսես Աբելյան) և հրատարակում էր հայրենասիրական նյութեր, կոչ անելով նպաստել Հայաստանի ազատագրության գործին: Լույս ընծայվեց ընդամենը մի քանի համար:

Հայ մամուլի, գիտական և գրական կյանքի պատմության մեջ կարևոր տեղ են գրավում 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին հրատարակվող «Հանդես գրականական և պատմական» և «Էմինյան ազգագրական ժողովածու» տարեգրքերը: Դրանցից առաջինը, որը լույս էր տեսնում 1888–1890 և 1894–1896 թթ.՝ Մկրտիչ Բարխուդարյանի խմբագրությամբ, հրապարակում էր հայ գրողների և բանաստեղծների՝ Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Պարոնյանի, Հ. Հովհաննիսյանի, Ա. Շատուրյանի, Գ. Պռոշյանի, Լեոյի, Րաֆֆու և մյուսների ստեղծագործությունները, ինչպես նաև ռուս և եվրոպացի հեղինակների ստեղծագործությունների թարգմանությունները:

«Էմինյան ազգագրական ժողովածուն» հրատարակվում էր Լազարյան ճեմարանի միջոցներով, որ կտակել էր ճեմարանի պրոֆեսոր, ականավոր հա-

[1] **Արշարունի Ա. Մ.**, Մոսկվայի հայ մամուլը, եր., 1971, էջ 78:

[2] **Արշարունի Ա. Մ.**, Մոսկվայի համալսարանի հայ ուսանողությունը, եր., 1955:

յագետ Մկրտիչ Էմինը: 1901 թվից մինչև 1913 թ. ներառյալ լույս տեսան ինը գիրք: Տարեգրքում առաջին անգամ տպագրվեցին հայ բանահյուսության բազում սքանչելի ստեղծագործություններ, ինչպես նաև ազգագրությանը և բանասիրությանը վերաբերող գիտական կարևոր հետազոտություններ:

Ուշագրավ է, որ «Էմինյան ժողովածուի» խմբագիր, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցը գիմնազիայի դասատու Կարապետ Կուսիկյանի հետ մեկտեղ տակավին 1880-ական թվականներին փորձ էին արել Մոսկվայում հիմնադրել հայերեն «Ժամանակ» ամսագրի հրատարակությունը, սակայն ստացել էին իշխանությունների մերժումը: Հենց այդ ժամանակ էլ (1886 թ.) մերժվել էր ուսանող Ստեփան Մամիկոնյանի՝ Մոսկվայում հայերեն լեզվով «Հասարակական կյանքի և գրականության տեսության» հանդեսի հրատարակության հայցը:

Հայկական ինքնավարության գաղափարի դեմ պայքարում կառավարական գրաքննությունը ճգտում էր որքան հնարավոր է սահմանափակել հայ պարբերական հրատարակությունների թվաքանակը և բծախնդրորեն էր վերաբերվում դրանց ծրագրերին: Եվս մեկ արգելք լինում է 1902 թ., երբ մերժվեց ուսանող Համազասպ Համբարձումյանի՝ ապագա խոշոր բանասերի և հռչակավոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի հոր հայցը, Մոսկվայում ուսանողական, հայերեն լեզվով ամսագիր հիմնադրելու վերաբերյալ:

Մոսկվայում կազմակերպվում էին նաև հայերեն թատերական բեմադրություններ: Առաջին թատերական խումբը ստեղծվեց 1859 թ. հունվարին՝ Լազարյան ճեմարանի ուսանողների և դասախոսների նախաձեռնությամբ և շուտով դարձավ մշտական: Լազարյան ճեմարանի այդ թատրոնը, որը գոյատևեց փաստորեն մինչև 1921 թ., մեծ դեր խաղաց ճեմարանի սովորողներին և Մոսկվայի հայ բնակչությանը հայ, ռուս և եվրոպական դասական երկերին, հայ ժողովրդի պատմությանը և գրական հայերենին հաղորդակից դարձնելու գործում: Նույնպիսի դեր էին խաղում նաև թատերական մյուս խմբերը, ինչպես նաև հայ բեմի ականավոր վարպետների՝ Պետրոս Ադամյանի, Սիրանույշի, Հովհաննես Աբելյանի և մյուսների հյուրախաղերը, որոնք տոնի էին վերածվում ամբողջ հայ համայնքի համար:

Հայկական ծագում ունեցող մի շարք դերասաններ դարձան ռուսական բեմի նշանավոր վարպետներ: Փոքր թատրոնի հռչակավոր դերասան Ալեքսանդր Սումբատով-Յուժինը, գնդապետ Գրիգոր Ստեփանովի՝ 18-րդ դ. Ղզլարում տեղակայված հայկական հեծելազորի հրամանատարներից մեկի ուղղակի հետնորդն էր: Բեմի նշանավոր վարպետ, Մոսկվայում իր անվան թատրոնի հիմնադիր Եվգենի Վախթանգովը սերում էր Վլադիկավկազի հայ համայնքից: Մոսկվայում հայտնի դերասաններ էին Գեորգի Բուրջալովը

(բնիկ աստրախանցի), Ռուբեն Զինարովը (Հայագետ պրոֆեսոր Զայրմայր Մսերյանցի որդին), Քրիստափոր Պետրոսյանը և այլք:

Թատրոնի սիրահարներ՝ հայազգի Նիկիտա Բալիևը և Նիկոլայ Տարասովը նշանավոր դերասան Վասիլի Կաչալովի հետ միասին Մոսկվայի գեղարվեստական թատրոնին առընթեր ստեղծեցին նաև «Ներքին» թատրոն (այլևայլ երգիծական հանդեսների և բուն դերասանների առջև հանդես գալու համար), որը կոչվեց «Զղջիկ»:

Մոսկվայի հայ ազգաբնակչության զգալի մասը զբաղվում էր առևտրաձեռնարկուական գործունեությամբ: Սիստեմատիկաբար Մոսկվայում էին գտնվում (և հետագայում հաճախ բնակություն հաստատում) հայ ազգաբնակչություն ունեցող այլ վայրերից եկած հայ առևտրականներ: 19-րդ դարի երկրորդ կեսին Կովկասի, Ղրիմի, Պովոլժիեի և այլ վայրերի բազում հայ վաճառականներ խանութներ և առևտրական գրասենյակներ ունեին Բոլշոյ Զերկասկի և Զարյադեի փողոցներում, հենց բուն այն կիտայ-գորոդում, որտեղ տակավին միջին դարերում առաջացել էր Մոսկվայում առաջին հայ բնակավայրը: Հանրահայտ էին հայ վաճառականներ Թամանցևների, Կարամուրզաևների, Պոպովների, Բոյաջիևների, Միսկինովների, Ֆաբրիկատերներ Մելիքենցևի, Լիանոզովի անունները: Ի դեպ, Լիանոզովները՝ բաքվեցի խոշոր նավթարդյունաբերողները, ժամանակի ընթացքում տեղափոխվեցին բնակության Մոսկվայում և Պետերբուրգում[1]: Նրանց անվամբ էր կոչվում մերձմոսկովյան գյուղերից մեկը, որի տեղում այժմ նույն անվանումով (Լիանոզովո) վեր է խոյացել բնակելի նոր զանգված ռուսաստանյան մայրաքաղաքի հյուսիսում:

Մոսկվայի հայ համայնքը չուներ իր ինքնավարությունը և զուրկ էր այն արտոնություններից, որպիսիք 18-րդ դ. կեսերին և 19-րդ դ. առաջին կեսին շնորհվել էին Ռուսաստանի հարավում գտնվող հայ որոշ գաղթավայրերի: Գործնականում շատ հարցեր համայնքում լուծում էին հարուստ, ազդեցիկ գերդաստանները: 18-րդ դ. երկրորդ կեսից Մոսկվայում այդպիսի դեր ուներ Լազարյան գերդաստանը, որը տակավին 1774 թ. ստացել էր ռուսական ազնվականության աստիճան, իսկ ևս մի քանի տարի անց բարձրացվել էր կոմսության տիտղոսի: Բացի Լազարյաններից, Մոսկվայում էր ընթանում նաև մյուս հայ հայտնի գերդաստանների՝ իշխաններ Աբամելիքների և Արղությանների, կոմս Լորիս-Մելիքովների, բազում արդյունաբերողների, վաճառականների, բժիշկների, զինվորականների, իրավաբանների ակտիվ գործնական կյանքը: Աննա Դավիդովնա Աբամելիքը (Աբամելեքը) հռչակվեց ոչ միայն նրանով, որ նրան բանաստեղծություններ էին ձոնում Պուշկինը, Լերմոնտովը, Վյազեմսկին և որ նա բանաստեղծ Բարատինսկու եղբոր կինն էր, այլև նրանով, որ նա՝ ինքը տաղանդավոր թարգմանչուհի էր: Նրա եղբայրը՝ Սեմյոն Դավիդովիչ Աբամելիքը, ամուսնանալով իր մորաքրոջ աղջկա՝ Ելիզավետա Քրիստափորովնա Լազարևայի հետ, դարձավ (Լազարյանների տոհմի արական գծի խզումից հետո) իշխաններ Աբամելիք-Լազարյաններ միացյալ տոհմի հիմնադիրը:

Մոսկովյան համայնքի գործերը ղեկավարելու մեջ Լազարյանների գերդաստանի առաջնությունը հաստատվում էր նաև նրանց բարեգործական գործունեությամբ: 18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբին նրանց միջոցներով կառուցվեցին Մոսկվայի երկու հայկական հիմնական եկեղեցիները՝ Սուրբ Խաչը և Սուրբ Հարությունը: Նրանց գերդաստանի ներկայացուցիչները երկու եկեղեցիների ժառանգական հոգաբարձուներն էին, որ հաստատագրվել էր 1804 և 1841 թվականների ցարական հրամանագրերով: Նրանք նաև Լազարյան ճեմարանի, որը 1815 թ. բացվել էր նրանց միջոցներով, անփոփոխ հոգաբարձուներն էին:

Մոսկվայի հայ եկեղեցու ղեկավարությունը, բնականաբար, հարկադրված էր ստանձնել Մոսկվայի հայ բնակչության կյանքի այլևայլ կողմերը կարգավորելու հասարակական պարտականություններ զգալի մասը: 1883 թ. ցարը հաստատեց Ռուսաստանի ՆԳՄ օտարերկրյա դավանությունների հոգևոր գործերի վարչությունում (դեպարտամենտում) նախապատրաստած՝ Սանկտ-Պետերբուրգում և Մոսկվայում հայ առաքելական եկեղեցիների գույքը տնօրինելու վերաբերյալ նոր կանոնադրության նախագիծը: Կանոնադրության համաձայն, Մոսկվայում և Պետերբուրգում եկեղեցիների գույքը տնօրինելու համար ստեղծվում էին խորհուրդներ, որոնք ընտրվում էին ծխականների կողմից՝ երեք տարի ժամկետով: Խորհուրդների անդամներն ընտրվում էին բուն ծխականների շրջանից, իսկ նախագահ պիտի լիներ (երկու քաղաքներում էլ) Աբամելիք-Լազարյաններ իշխանական տոհմի ավագ ներկայացուցիչը: Մինչև 1888 թ. այդ պարտականությունները կատարում էր իշխան Սեմյոն Դավիդովիչը, իսկ 1888 թ. մինչ 1916 թ. ներառյալ՝ նրա որդի Սեմյոն Սեմյոնովիչ Աբամելիք-Լազարյանը:

Մայրաքաղաքների հայկական եկեղեցիների գույքը տնօրինելու վերաբերյալ նոր կանոնադրության համաձայն, 1884 թ. մարտի 18-ին կայացավ Մոսկվայի հայկական եկեղեցիների խորհրդի անդամների առաջին ընտրությունը: Խորհրդի անդամներ ընտրվեցին Մոսկվայի հայ հասարակայնության նշանավոր ներկայացուցիչները՝ Ն. Ներսիսյանը, Ի. Ս. Անանյանը, Ի. Ժամհարյանը, Զ. Մսերյանցը, Մ. Շահնազարյանցը, Ս. Ջանումյանը: Խորհրդի անդամության թեկնածուներ ընտրվեցին՝ պրոֆեսոր Մ. Էմինը և նավթարդյունաբերող Գ. Լիանոզովը: Հաջորդ ընտրություններին (1885 թ.

[1] Тер-Габриэлянц Г. Армянские колонии в Москве и Санкт-Петербурге. М., 1888.

մայիսի 12) Գ. Լիանոզովն ընտրվեց խորհրդի անդամ, իսկ որպես թեկնածուներ ընտրվեցին պրոֆեսորներ Գ. Քանանյանը և Գ. Սուլթան-Շահը: Մ. Փանիյանն ընտրվեց եկեղեցական երեցփոխ:

Թեև Մոսկվայի և Պետերբուրգի եկեղեցական խորհուրդները ներքին ինքնավարության մարմիններ չէին, բայց և նրանց գործունեությունը չէր սահմանափակվում սոսկ եկեղեցական գույքի հարցերով: Իրենց կազմում ունենալով նշանավոր ձեռնարկատերեր, մեկենասներ, հասարակական գործիչներ, դրանք կոորդինացնում էին երկու մայրաքաղաքների համայնքների անդամների տնտեսական, մշակութային, հասարակական, բարեգործական գործունեությունը, ճանաչված կենտրոններ էին, որոնց շուրջ համախմբվում էր հայ բնակչությունը:

Լազարյաններից բացի, բարեխնամ գործունեությամբ էին զբաղվում նաև Մոսկվայի հայ համայնքի մյուս ներկայացուցիչները: Մոսկվայում հանրահայտ էին վաճառական բարեգործներ Ջանումովի, Անանովի, Գասպարովի, Տարասովի (Թորոսյանի) անունները: Ջանումովները Աստրախանի հայերից էին և Մոսկվայում բարեխնամ գործունեությունից զատ, մեծ միջոցներ էին նվիրաբերում Աստրախանի հայերի, ինչպես նաև էջմիածնի սինոդի կարիքների օգտին:

Արմյանսկի նրբանցքում եկեղեցուն առընթեր հիմնադրվեց Կասպերովյան ապաստարան. այն կրում էր իր բարերարի անունը, որը մեծ գումար էր կտակել մոսկովյան կարիքավոր հայերին օգնություն կազմակերպելու համար: Ստեղծվեց հիմնադրամի խորհուրդ, որի կազմի մեջ էին մտնում մոսկովյան նշանավոր հայ ձեռնարկատերեր Գ. Լիանոզովը, Ս. Ջանումովը, Ի. Ասարբեկովը և ուրիշներ, որոնք հիմնադրամ էին մուծում նաև իրենց դրամները: 1889 թ., օրինակ, կտակատարների և մյուս բարեգործների ավանդը կազմեց մոտ 47 հազար ռուբլի և եռակիորեն գերազանցեց 16 հազարանոց գումարը, որ կտակել էր ապաստարանի հիմնադիրը: Հիմնադրամ մուծումներ էին կատարում նաև Մոսկվայի հայկական եկեղեցիների ծխականները: Հիմնադրամի հիմնական ծախսը կատարվում էր համայնքի չքավոր կամ անբուժելի հիվանդ անդամներին պահելու համար, որոնք ամեն բանով ապահովված ապրում էին ապաստարանում՝ առանց վճարի: Բացի այդ, ապաստարանի խորհուրդը դրամ էր հատկացնում մյուս կարիքավոր այրիներին, ուսանողներին և այլոց նպաստ տալու համար:

Խոշոր բարեգործական արարք էր նշանավոր հասարակական գործիչ, իրավունքի թեկնածու Գրիգոր Ջանչիևի 1897–1898 թթ. ձեռնարկած «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի հրատարակությունը, որին մասնակցեցին հայ և ռուս ականավոր գրողներ և հասարակական գործիչներ:

Մոսկվայում ազգային կազմակերպությունների և հայ հասարակական կյանքի նկատելի աշխուժացում է տեղի ունենում ռուսական առաջին հեղափոխությունից հետո և, հատկապես, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Նախապատերազմյան տարիներին Մոսկվայում հրատարակվում են երկու հայկական լրագիր՝ «Գարուն» և «Մարտ»: «Գարունը» գրական-գեղարվեստական տարեգիրք էր, որը լույս է տեսել 1910–1912 թթ. (լույս է ընծայվել երեք համար): Տարեգիրքը հրապարակում էր ժամանակակից հայ գրողների գեղարվեստական ստեղծագործությունները, գրականագետների քննադատական նյութերը: Հանդեսի խմբագիրների և աշխատակիցների կազմը (Պողոս Մակինցյան, Վահան Տերյան, Ալեքսանդր Մարտունի-Մյասնիկյան) վկայում է նրանում սոցիալ-դեմոկրատական ուղղության ուժեղ ազդեցության մասին:

Գրական և հասարակական-քաղաքական «Մարտ» թերթը լույս էր տեսնում Մոսկվայում հայերեն՝ 1914–1916 թթ., տարբեր պարբերականությամբ (տարեկան 6-ից մինչև 24 համար), Արշակ Թումանյան-Կայծունու խմբագրությամբ: Լրագիրը նյութեր էր զետեղում Հայաստանի և Ռուսաստանի ներքին կյանքի, հայ հասարակական և մշակութային կյանքի իրադարձությունների մասին, տպագրում էր նաև գեղարվեստական գործեր:

Իրենց քաղաքի, երկրի և հարազատ Հայաստանի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքով ապրող Մոսկվայի հայերը միաժամանակ ներգրավվում էին ինչպես ռուսաստանյան, այնպես էլ հայ հասարակական-քաղաքական կյանքի, հայկական և ռուսաստանյան հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների մեջ:

1913 թ. Մոսկվայում ապրող հայ գրողները և քննադատները՝ Պ. Մակինցյանը, Ա. Մյասնիկյանը, Վ. Տերյանը, Ա. Մատուրյանը, Յ. Խանզադյանը, որոնք մինչ այդ համախմբված էին «Գարուն» տարեգրքի շուրջը, կազմակերպեցին Մոսկվայի հայ գրական խմբակը:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո, 1914 թ. աշնանը, Մոսկվայում ստեղծվեց Մոսկվայի հայկական կոմիտե, որի նպատակն էր հայ կամավորներին և մարտերում վիրավորվածներին, ինչպես նաև Արևմտյան Հայաստանից և թուրքական զորքերի կողմից զավթված շրջաններից փախստականներին օգնություն ցուցաբերելը: Կոմիտեի նախագահ ընտրվեց հրապարակախոս և հասարակական գործիչ Ստեփան Մամիկոնյանը: Կոմիտեի գործունեությանը ակտիվ մասնակցում էին պրոֆեսոր Ջիվելեգովը, բանաստեղծ Ա. Մատուրյանը և մյուսները: 1916 թ. այդ կոմիտեի միջոցներով հրապարակվեց «Հայաստանի պոեզիա» անթոլոգիան՝ Վալերի Բրյուսովի խմբագրությամբ: 1916–1918 թ թ. կոմիտեն ռուսերեն լեզվով հրատարակում էր իր «Արմյանսկի վեստնիկ» տպագիր օրգանը: Փաստորեն հրատարակության

խմբագիրը և դեկավարն էր հայ ականավոր հասարակական գործիչ, գիտնական-պատմաբան և արվեստագետ Ալեքսեյ Ջիվելեգովը: Լրագիրը, որ լույս էր տեսնում ամեն ամիս, հիմնադրվել էր ռուս ընթերցողին հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին, Հայաստանի պատմությանը, հայկական հարցին ծանոթացնելու նպատակով: Հայ գործիչներից զատ, հանդեսին համագործակցում էին նաև նշանավոր ռուս գրողներ Վալերի Բրյուսովը, Ալեքսեյ և Յուրի Վեսելովսկիները, Վասիլի Նեմիրովիչ-Դանչենկոն և ուրիշներ:

Հայկական կոմիտեի գործունեությանը և փախստականներին օգնելու գործին ակտիվորեն մասնակցում էին հայ ուսանողները, Նրանք օգնում էին վիրավորների համար հիվանդանոցներ կազմակերպելու գործին, ստանձնում էին հայ փախստականների երեխաներին գրաճանաչություն սովորեցնելու պարտականությունը:

Փետրվարյան հեղափոխությունը, իսկ այնուհետև նաև հոկտեմբերյան հեղաշրջումը առաջացրին հայ ազգային կյանքի բուռն ալեկոծություն: Այդ ամիսներին Մոսկվայում կարևոր իրադարձություն դարձավ 1917 թ. ապրիլին «Արմյանսկի վեստնիկի» խմբագիր-հրատարակիչ Հովհաննես Ամիրյանի նախաձեռնությամբ «Մոսկվայի հայկական հրատարակչություն» բաժնետիրական ընկերության ստեղծումը: Այն իր խնդիրն էր համարում հայերենով գեղարվեստական, գիտական և հանրամատչելի գրքերի, ինչպես նաև ռուս և հայ հեղինակների ուշագրավ ստեղծագործությունների թարգմանությունների հրատարակումը: Նախատեսվում էր նաև հայ հեղինակների գործերի թարգմանությունների հրատարակությունը ռուսերեն: Նմանօրինակ հրատարակություն Մոսկվայում, այլ ոչ թե մայրաքաղաք Պետերբուրգում կամ բազմաթիվ հայ բնակչություն ունեցող որևէ այլ քաղաքում հիմնադրելու բուն իրողությունը վկայում էր Մոսկվայի հայ համայնքի ազդեցիկ դերը:

Նախատեսվում էր, որ ժամանակի ընթացքում հրատարակչությանն առընթեր կլինեն գրապահեստ, գրախանութ, գրադարան, տպարան: Կազմակերպվեց հայ իրականության արդիական հարցերի շուրջ Վ. Տոտոմյանցի «Հայաստանի տնտեսական վերածնունդը», Ա. Ջիվելեգովի «Եվրոպան և հայկական հարցը» և Ի. Անանովի «Ազգային տարածքային (տերիտորիալ) ինքնավարություն» երեք բրոշյուրների հրատարակությունը: Նախատեսվում էր ևս մի քանի գրքերի հրատարակությունը, սակայն 1917 թ. վերջին հրատարակչության գործունեությունը դադարեց:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Մոսկվայի հայ համայնքի ազգային, հասարակական և մշակութային կյանքին ուղղություն էր տալիս Մոսկվայի հայկական կոմիտեն, որը ստանձնել էր համայնքի դեկավար կենտրոնի դերը: Սակայն այդ կոմիտեն, ինչպես և եկեղեցական խոր-

հուրդը և Ռուսաստանի մյուս քաղաքների ազգային խորհուրդները խորհրդային իշխանության կողմից դիտվում էին որպես հայ աշխատավոր զանգվածների վրա բուրժուական ազդեցության տարածողներ: Ռուսաստանյան հայերի ազգային կյանքի դեկավարությունը ստանձնեց Հայկական գործերի կոմիսարիատը, որը ստեղծվել էր Ազգությունների գործերի ժողկոմին կից: Հայկական գործերի կոմիսարիատի նախագահն էր Վաուլամ Ավանեսովը, իսկ աշխատակիցների թվում էին նշանավոր գործիչներ Վահան Տերյանը, Պողոս Մակինցյանը, Աշոտ Հովհաննիսյանը և ուրիշներ: 1918 թ. գարնանը, Պետրոգրադային կառավարության Մոսկվա տեղափոխվելուց հետո Մոսկվայի հայ համայնքը դարձավ նոր իշխանության այդ մարմնի գործունեության մերձավորագույն օբյեկտը: Ռուսաստանի հայ բնակչության շրջանում խորհրդային քաղաքականության անցկացումը համարելով իր գլխավոր խնդիրը, կոմիտեն շատ բան արեց ռուսաստանյան հայերի շրջանում կուլտուր-լուսավորական աշխատանք կազմակերպելու և կարիքավորներին, գլխավորապես Արևմտյան Հայաստանից և Ադրբեջանից փախածներին, որոնց զգալի մասը գտնվում էր Մոսկվայում, նյութական օգնություն բաշխելու գործում:

Հայ բնակչությանը քաղաքական որոշումներին ծանոթացնելու և Հայաստանում ու ամբողջ աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին ինֆորմացիա տալու համար կոմիտեն հրատարակում էր հայերեն լեզվով «Կոմունիստ» (1918 թ.՝ Վահան Տերյանի խմբագրությամբ) և «Կարմիր դրոշակ» (1919 թ., խմբագիր՝ Ա. Կարինյան) լրագրերը: Այդ թերթերը, բնականաբար, ամենից առաջ պաշտպանում և պրոպագանդում էին բոլշևիկյան կուսակցության և խորհրդային կառավարության քաղաքականությունը, դատափետում՝ Հայաստանի առաջին հանրապետության դեկավարության գործունեությունը, սուր բանավեճ էին մղում հայ քաղաքական մյուս կուսակցությունների դեմ հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական զարգացման հարցերի շուրջ: Չնայած այդօրինակ ուղղվածությանը, այդ թերթերը նույնպես որոշակի դրական դեր խաղացին Մոսկվայի հայ համայնքի ազգային կյանքում:

Հայկական գործերի կոմիսարիատը գոյատևեց մինչև 1921 թ., սակայն մինչ այդ վերացվել էին համայնքի նաև մյուս մարմինները: Տակավին 1918 թ. վերացվեց Մոսկվայի հայկական կոմիտեն: Փաստորեն դադարեց գործելուց եկեղեցական խորհուրդը, ծագեց Լազարյան ճեմարանի ապագայի հարցը: 1916 թ. վերջին ժառանգական հոգաբարձուի՝ իշխան Ս. Ս. Աբամելիք-Լազարյանի մահվանից հետո, որի պատճառով վերստին խզվեց այդ տոհմի արական գիծը, ճեմարանի գործերը տնօրինում էր ընտրովի հասարակական կոմիտեն: Խորհրդային իշխանություն հաստատելուց հետո առաջացան նոր պրոբ-

լեմներ: Դրանցից գլխավորն էր Լազարյաններին պատկանող ձեռնարկություններից ստացվող եկամուտների դադարացումը և Լազարյան հիմնադրամի փաստացի վերացումը: Կարևոր պատճառներ էին նաև դրամի արժեզրկումը և վառելիքապարենային ճգնաժամը: Ավելացան հիվանդանալու դեպքերը սաների շրջանում: Նրանցից չատերը հեռացան սկսված քաղաքացիական պատերազմի, երկիրը հակամարտ ճամբարների բաժանվելու, անկախ Հայաստանի և այլ ազգային պետությունների առաջացման պատճառով: Այդ բոլորի հետևանքով 1918 թ. մարտին ճեմարանում պարապմունքները դադարեցվեցին:

Հայկական գործերի կոմիսարիատը 1918 թ. հունիսին նշանակեց ճեմարանում կառավարության կոմիսար, որը դարձավ ճեմարանի նախկին սան Պողոս Մակինցյանը: Նա ըմբռնումով էր ընկալում ճեմարանի առջև ծառացած խնդիրները: Կոմիսարը նախապատրաստեց, և 1919 թ. մարտին ստորագրվեց ժողկոմխորհի դեկրետը՝ հաստատությունը որպես հայկական ինստիտուտ վերակազմելու մասին, որը բաղկացած էր դպրոցական և բուհական (պատմաբանասիրական և սոցիալ-տնտեսական ֆակուլտետներով) բաժիններից՝ հայերեն և ռուսերեն դասավանդմամբ: Սակայն այդ որոշումը չիրականացվեց՝ միջոցների և սովորողների թվակազմի անբավարարության պատճառով: Հետագայում ընդունվեց այլ որոշում. ճեմարանի շենքը հանձնվեց Խորհրդային Հայաստանի կառավարությանը և այնտեղ տեղակայվեց նրա մշտական ներկայացուցչությունը, Հայաստանի մշակույթի տունը: Մի ժամանակ այնտեղ էր գտնվում հայկական տարրական դպրոցը, բայց այն գոյատևեց ընդամենը մի քանի տարի: Հայաստանի մշակույթի տունն ուներ թատերական և երաժշտական ստուդիաներ, որոնցում իրականացվում էր Հայաստանի և այլ վայրերի հայ համայնքների համար դերասանական և երաժշտական կադրերի նախապատրաստումը:

Թատերական ստուդիան ստեղծվել էր խորհրդային կարգերի օրոք՝ տակավին 1919 թվականին, 1921 թվականից այն գործում էր Հայաստանի մշակույթի տանն առընթեր: Ստուդիան գլխավորում էր Սուրեն Խաչատրյանը, իսկ 30-ական թվականներին այն ղեկավարում էր Ռուբեն Սիմոնովը: Ստուդիայի սովորողներին դասավանդում էին Մոսկվայի թատերական արվեստի նշանավոր գործիչներ: Ստուդիայի գոյության առաջին տարիներին պարապմունքներին մասնակցում էր մեծ դերասան Եվգենի Վախթանգովը: Հետագայում աշխատանքներին մասնակից դարձավ բեմի նշանավոր մյուս վարպետը՝ Լազարյան ճեմարանի սան Կոնստանտին Ստանիսլավսկին: 1920-1930-ական թվականներին Մոսկվայում կար նաև հայկական թատերական խումբ՝ ազգային փոքրամասնությունների թատրոնի կազմում: Իրականացվեց հայերեն լեզվով մի քանի բեմադրություն:

1922 թ. Հայաստանի մշակույթի տանն առընթեր կազմակերպվեց Մոսկվայի հայկական երաժշտական կոլեկտիվը՝ Գևորգ Բուդաղյանի ղեկավարությամբ: 1925 թ. այն վերակազմվեց Մոսկվայի հայ երաժշտական խմբակցության և նախատեսվում էր Մոսկվայում բնակվող հայ տաղանդավոր երիտասարդության երաժշտական կրթության կազմակերպմանը նպաստելու և հայ երաժշտությունը պրոպագանդելու համար: Սիստեմատիկաբար կազմակերպվում էին ինչպես Մոսկվայի երաժիշտների, այնպես էլ Հայաստանից ժամանած արվեստի վարպետների համերգները: Լույս ընծայվեց (1924 թ. նոյեմբերին) «Կյանք և երաժշտություն» հանդեսի մեկ համարը: Մշակույթի տանն առընթեր մի ժամանակ հրատարակվում էր նաև «Մշակութային ճակատ» լրագիրը հայերեն լեզվով: Մշակույթի տանն էր գետեղված նաև երիտասարդ նկարիչների արվեստանոցը:

Մոսկվայում Հայաստանի մշակույթի տան ստուդիաների սովորողներ են եղել արվեստի չատ հայ գործիչներ: Այստեղ կազմակերպվում էին դասախոսություններ և զեկուցումներ, հայ և ռուս դերասանների համերգներ, գեղարվեստական գրքերի ցուցահանդեսներ, երաժշտական և գրական երեկոներ, հանդիպումներ Հայաստանի քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների հետ:

Մոսկվայի տարածքային, ժողովրդագրական, տնտեսական բուռն աճը և, որպես միլիթենական մայրաքաղաք, նրա վարչատնտեսական դերի մեծացումը հանգեցրին Մոսկվայի հայ համայնքի թվաքանակի կտրուկ աճին, որը հասել էր տասնյակ հազարավոր մարդու: Մոսկվայում համախմբվեցին հայ մտավորականության բազում տաղանդավոր ներկայացուցիչներ՝ գիտնականներ, կոնստրուկտորներ, բժիշկներ, դերասաններ, զորահրամանատարներ, պետական գործիչներ, գիտական աշխատողներ, ուսանողներ և ստաժորներ՝ ինտելեկտուալ վիթխարի մի ներուժ: Սակայն խորհրդային իրավակարգի ամբողջատիրական կողմերի սաստկացումը հանգեցրեց Մոսկվայում հայ ազգային կյանքի մարման: 1931 թ. փակվեց հայկական տպարանը, որը հիմնադրվել էր դրանից հարյուր տարի առաջ Լազարյան ճեմարանում: 1930-ական թվականներին դադարեց ազգային փոքրամասնությունների թատրոնի և Մոսկվայի հայ երաժշտական կոլեկտիվի գործունեությունը: Ավերվեցին Սուրբ Խաչ և Ատոված ծնի վերափոխման հայկական եկեղեցիները, իսկ Վագանկովյան գերեզմանատունը գտնվող եկեղեցում տեղակայվեց գրանիտ հղկող արհեստանոցը: Հայաստանի մշակույթի տունը գոյատևեց մինչև 1953 թ.:

Դրա հետ մեկտեղ, չնայած Ռուսաստանի հայ համայնքներում ազգային կյանքի ընդհանուր անկմանը և ընկճմանը, Մոսկվան այդուհանդերձ այդ առումով որոշ բացառություն էր կազմում: Մոսկվայի հայ համայնքը չարունակ

աճում էր և Ռուսաստանի խոշորագույն քաղաքային համայնքն էր: ԽՍՀՄ կազմավորումից հետո տասնամյակների ընթացքում Մոսկվայում են բնակություն հաստատել հայ մտավորականության ականավոր բազում ներկայացուցիչներ: Քաղաքական, գիտական և մշակութային գործունեության որևէ ոլորտ չի եղել, որտեղ հայ ժողովրդի ներկայացուցիչները չզբաղեցնեին առաջատար տեղեր:

Մոսկվայի հայ համայնքը, որը գոյություն ունի ավելի քան վեց դար, շարունակում է մնալ որպես Ռուսաստանի հայերի քաղաքային խոշորագույն բնակավայր և քաղաքական, տնտեսական ու մշակութային կարևոր դեր կատարել ամբողջ հայ ժողովրդի կյանքում:

ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Պյոտր 1-ինի արտաքին և ներքին ակտիվ քաղաքականությունը հայ-ռուսական հարաբերությունների նոր փուլի սկիզբ դրեց: Այն հանգեցրեց Ռուսաստանի հետ հայ գործիչների շփումների ընդլայնմանը, ամրապնդեց հայ ազատագրական շարժման ռուսական դիրքորոշումը: Դրա հետ մեկտեղ այդ քաղաքականությունը դրական ազդեցություն ունեցավ Ռուսաստանում բնակվող հայերի տնտեսական և իրավական կարգավիճակի վրա: Հայ ժողովրդի ներկայացուցիչները գտնվում էին Պյոտրի շրջապատում նրա վերափոխիչ գործունեության բոլոր փուլերի ընթացքում: Ուստի և պատահական չէր, որ հայերը հայտնվեցին Պյոտրի նոր մայրաքաղաքում իրապես քաղաքը հիմնադրելու հետ միաժամանակ:

Տակավին 1702 թ. աշնանը, երբ ռուսական զորքերը Նևայի գետաբերանից հեռացրին շվեդներին, և Պյոտրի դաշտային ճամբարը հաստատվեց մոտավորապես այն վայրում, որտեղ կես տարի անց սկսեց երևան գալ նոր քաղաքը, այնտեղ ժամանեց հայ ժողովրդի պատվիրակ Նազար Օրեխովիչը (Օրուխենցը), որը ռուսական ցարին մատուցեց հայ մելիքների ուղերձը: Քաղաքի հիմնադրման սկզբից ևեթ այնտեղ արդեն սիստեմատիկաբար հայտնվում են հայ հասարակայնության ներկայացուցիչները, նրանց թվում՝ վաճառականներ և ձեռնարկատերեր: Նրանցից շատերը բնակություն հաստատեցին Պետերբուրգում:

Ինչպես հայտնի է, դեպի Բալթիկ ծով դուրս գալու համար Պյոտր 1-ինի պայքարի հիմնական պատճառներից մեկը Եվրոպայի հետ ուղղակի տնտեսական կապեր հաստատելն էր: Առաջիններից, ովքեր գնահատեցին այդ ուղու առավելությունը, հայ վաճառականներն էին: Արդեն 1707 թ. դեկտեմբերին, նոր քաղաքի գոյության հինգերորդ տարում և Հյուսիսային պատերազմի թեժ շրջանում, Ջուղայի հայկական առևտրական ընկերության հայտնի գործիչ Սաֆար Վասիլևը (Վասիլևներ – Մակարովներ – Խաստատովներ տոհմի հիմնադիրը, որը ակնառու դեր խաղաց հայ-ռուսական հասարակական և տնտեսական առնչություններում) դիմել էր Պյոտր 1-ինին՝ «Գերմանական երկրների» հետ անմիջական առևտուր անելու հայցով, քանզի Արխանգելսկով անցնող ճանապարհը շատ ավելի երկար էր ու թանկ: Ի պատասխան դրան ցարը մակագրում է՝ «Հայ վաճառականներին թուլյատրել

մեկնել Մոսկվայից և Մոսկվայից Ռուգոդևով (այսինքն՝ Նարվայով – Վ. Խ.) և Սանկտ-Պետերբուրգով, ծովով, և ինչպիսի նավերով էլ նրանք կամենան»[1]:

Ցարի մի այլ հրամանագրով հայ վաճառականներին թույլատրվում էր «Սանկտ-Պետերբուրգում և այլ քաղաքներում ազատ ապրել...»: Պետերբուրգում արդեն 1710 թ. կային «հայկական գրասենյակներ»: Այդպես էին այդ ժամանակ Ռուսաստանում կոչվում հայրենակցական սկզբունքով ստեղծված կազմակերպությունները, որտեղ այս կամ այն վայրից եկած առևտրականները կարգավորում էին իրենց գործնական և պրակտիկ խնդիրները, ուսումնասիրում իրավիճակը, կնքում գործարքներ, վերցնում վարկեր, պահ էին տալիս փողը և այլն:

Հայկական գրասենյակի (կամ հնարավոր է, մի քանի գրասենյակների) առկայությունը վկայում է, որ արդեն 18-րդ դ. առաջին տասնամյակի վերջին (թող թե ոչ մշտապես բնակվող) հայերի թվաքանակը Պետերբուրգում բավականին նկատելի էր:

Նոր մայրաքաղաքում առավել կամ նվազ չափով մշտապես գտնվող հայերի ոչ փոքր թվաքանակի մասին է վկայում Իսրայել Օրու զինակից Մինաս վարդապետի 1714 թ. այստեղ հայկական եկեղեցի կառուցելու փորձը: Ընդ որում Մինաս վարդապետը իր դիմումի մեջ ընդգծում էր, որ «Նորին Մեծության ամենաողորմած բարեհաճությամբ արդեն թույլատրված է եղել կառուցել» այդ եկեղեցին: Այն կրկնվում է նաև Արտաքին գործերի կոլեգիային հասցեագրված՝ Մինաս վարդապետի 1722 թ. զեկուցագրում, ուր ասված էր որ «արդեն համարյա տասը տարի է անցել, ինչ իր խնդրագրին ի պատասխան Նորին կայսերական Մեծությունը բարեհաճել է հրամայել Սանկտ-Պետերբուրգում հայկական եկեղեցու և թաղամասի համար տեղ հատկացնել, սակայն մինչև հիմա այն չի իրականացվել»: Մինաս վարդապետը խնդրում էր Պետերբուրգում հայերին 50 ծախ, եկեղեցու և գերեզմանատան համար տեղ հատկացնել: Թեև, ինչպես երևում է , Պյոտր 1-ինը, չնայած նախնական ինչ-որ համաձայնությանը, Մինաս վարդապետի պաշտոնական դիմումին դրական պատասխան չի տվել, այնուամենայնիվ, փաստը վկայում է արդեն այդ ժամանակ քաղաքում հայկական գաղութի առկայության մասին: Կրկնակի խնդրագրին ի պատասխան՝ Սինոդը 1725 թ. թույլատրեց հայերին Սանկտ-Պետերբուրգում աղոթատուն ունենալ: Շուտով մայրաքաղաքում բնակություն հաստատեց քահանա Հովհաննես Շերխտանյանը, որի գործունեությունը Սանկտ-Պետերբուրգում տևեց գրեթե վեց տասնամյակ՝ մինչև 1787 թվականը:

[1] Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник документов, т.2, часть 1, Ер., 1964, с.30.

Հայ առևտրականները նոր մայրաքաղաքն էին մեկնում Մոսկվայից, Աստրախանից, Այսրկովկասից, Իրանից, Թուրքիայից: Առևտրականներից զատ Պետերբուրգում հայտնվում են նաև արհեստագործները: Պահպանվել է իշխան Ա. Դ. Մենշիկովի 1716 թ. կարգադրությունը. «Թուրքական բաղնիքների վարպետ հայազգի Օսիպ Դավիդովին անհապաղ Սանկտ-Պետերբուրգ ուղարկել, քանզի նա՝ այդ հայը, այնտեղ՝ պալատներում շատ գործ ունի»: Հասկանալի է, որ Օսիպ Դավիդովն արդեն հայտնի վարպետ էր, և նրա համբավը հասել էր բարձր շրջաններին, որոնք մտադրվել էին նրա օգնությամբ իրենց պալատները հարդարել:

Գրող Սերգեյ Գլինկայի խոստովանությամբ, «Նևայի ափերին սահմանագատվում էին հայկական հողամասերը»: 1730-ական թվականների տեղեկատուի տվյալներով, Ս.-Պետերբուրգում եղել է Արմյանսկայա փողոց: Թեև հայ համայնքի՝ այն ժամանակվա բազում նշանավոր ներկայացուցիչներ ապրում էին առավելապես Վասիլևյան կղզու վրա, ենթադրվում է, որ Արմյանսկայա փողոցը գտնվել է Պետրոպավլովյան ամրոցին հարող թաղամասերում, քանի որ հենց Պետրոպավլովյան ամրոցի (քաղաքի կառուցապատման ձևավորման համակենտրոններից մեկի) շուրջն էին այն տարիներին բնակություն հաստատում արհեստավորներն ու մանր առևտրականները:

18-րդ դ. առաջին կեսին Պետերբուրգի հայ համայնքում ամենանշանավոր դեմքը վաճառական, արդյունաբերող և հասարակական գործիչ Լուկա Շիրվանովը (Ղուկաս Շիրվանենցը, Լուկա Իլյինն) էր: Ըստ իր ցուցմունքների, նա ծնվել է 1685 թ. և, ինչպես այն ժամանակվա ռուսաստահայան բազում հայեր, սերում էր Նոր Ջուղայից: Ռուսաստան իր վերաբնակվելու ժամանակը նա համարում է 1710 թ.: Սկսած 1723 թ.՝ նրա ազգանունը հոլովվում է արտաքին գործոց կոլեգիայի շատ վավերագրերում. նրան ներգրավում էին ռուսական քաղաքական գործիչների հետ հայ ժողովրդի ներկայացուցիչների վարած բանակցություններում՝ որպես թարգմանիչ: Նա ամուսնացած էր Սաֆար Վասիլևի որդու այրու հետ, որի շնորհիվ ազգակցական կապ ձեռք բերեց ռուսաստանյան հայերի այդ նշանավոր տոհմի հետ: Իսկ արդեն հիշատակված Իվան Շերխտանովը, որը երկար տարիներ Պետերբուրգի հայ քահանան էր, Լ. Շիրվանովի զարմիկն էր:

Արդեն 1723-1724 թվականներից սկսած՝ Լուկա Շիրվանովը հավանաբար մշտապես Սանկտ-Պետերբուրգում էր բնակվում: Նրա, ինչպես և հայ ազատագրական շարժման մյուս մասնակիցների՝ Ռուսաստանում վերջնականապես հաստատվելու պատճառները, ըստ երևույթին, քաղաքական էին. նրանք Պյոտր 1-ինի կասպիական արշավանքներից հետո հարկադրված էին լքել Իրանի այսրկովկասյան տիրույթները: Իր խնդրագրերից մեկում Լ. Շիրվանովն ինքը նշել է. «քանզի ինձ իմ հայրենիք՝ Պարսկաստան, վերադառնալ չի կա-

րելի»[1]: Առավել ևս, որ նա քաղաքական նշանավոր գործիչ Իվան Կարապետի եղբայրն էր: Ի դեպ, Շիրվանովը Իվան Կարապետի, որը հետագայում ևս շարունակում էր ինչպես ռուս, այնպես էլ հայ քաղաքական գործիչների պատասխանատու հանձնարարությունները կատարել, բազում ուղերձների և զեկուցագրերի թարգմանիչն էր:

Արտաքին գործերի կոլեգիայի թարգմանչի պարտականությունները, դատելով վավերագրերից, Լ. Շիրվանովը կանոնավորապես կատարել է մինչև 1727 թվականը: Իսկ նրա հիմնական զբաղմունքը Ս.-Պետերբուրգում և Ռուսաստանի այլ քաղաքներում եղել է առևտրաարդյունաբերական գործունեությունը, ինչպես նաև մայրաքաղաքի հայ համայնքի ղեկավարումը: Շիրվանովը Պետերբուրգում կառուցել է մետաքսյա և բամբակյա գործվածքներ արտադրող ֆաբրիկաներ: Նա Պետերբուրգում ուներ առևտրական նավեր շինելու թույլատրություն: Նա նավեր ուներ նաև Կասպից ծովում, մասնակցում էր Ռուսաստանի և Իրանի միջև կատարվող առևտրական գործառնություններին: Լ. Շիրվանովը տուն ուներ նաև Աստրախանում և մետաքսի ֆաբրիկաներ՝ Աստրախանում ու Ղզլարում: 1738 թ. նա գրանցվեց Սանկտ-Պետերբուրգի քաղքաբնակների դասում:

Սանկտ-Պետերբուրգում Լուկա Շիրվանովը բնակվում էր Վասիլևյան կղզում, Երրորդ գծի և Մալի պողոտայի անկյունում: Նրա այդ տունը 18-րդ դ. 30-40-ական թվականներին դառնում է, ասես, Պետերբուրգի հայ համայնքի կենտրոնը:

Լ. Շիրվանովի տունը և դրան հարակից հողատարածքը ազատված էին օթևանատուրք տալու պարտավորությունից: Այդ արտոնության համար հիմք էր ծառայում այն իրողությունը, որ նրա տանն էին հանգրվանում «բարձրագույն արքունիք ուղարկված երևելի հայերը»: Այստեղ էր գտնվում նաև հայ քահանա Իվան Շերիստանովի տունը: Որոշ վավերագրերում այդ թաղամասը և դրա կառույցներն անվանվում են «Հայ վաճառականների տուն» կամ «Հայկական տուն»: Ամբողջ թաղամասի սեփականատեր էր համարվում Լուկա Շիրվանովը: Դուցե դա բացատրվում էր այն իրողությամբ, որ 18-րդ դ. Պետերբուրգում տնատերերին արգելվում էր իրենց հողատարածքները մանրացնել, և ձևականորեն նրանք շարունակում էին մնալ որպես դրանց տերեր: Հնարավոր է նաև, որ Լ. Շիրվանովն իր տնատիրության տարածքը պարզապես տրամադրել է հայ համայնքի և մայրաքաղաք ժամանող հայերի կարիքները հոգալու նպատակին:

1740 թ. հունվարին Լ. Շիրվանովը կայսրուհի Աննա Իոանովնայի հրամանագրով իր տան մոտ գտնվող, իրեն պատկանող տարածքում հայկական ոչ

[1] ЦГАДА, ф. 1252, оп. 1, д. 19.

մեծ եկեղեցի կառուցելու թույլտվություն է ստանում: Այդ փաստն ավելորդ անգամ ապացուցում է, որ Շիրվանովը մայրաքաղաքի հայ համայնքի ամենահեղինակավոր ներկայացուցիչը և փաստական ղեկավարն էր: Իսկ եկեղեցու կառուցումն էլ ավելի էր ամրապնդում նրա տան և դաստակերտի դերը՝ որպես Պետերբուրգի հայկական գաղութի կենտրոնի:

Սակայն չուտով նոր կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի 1742 թ. հունվարի 16-ի հրամանագրով արգելվեց հայկական (և ընդհանրապես «այլադավան») եկեղեցիների կառուցումը, իսկ Մոսկվայում և Աստրախանում գոյություն ունեցող հայկական եկեղեցիները (բացի Աստրախանում եղած քարաշեն մեկ եկեղեցուց) փակվեցին: Վասիլևյան կղզում Լ. Շիրվանովի կողմից ձեռնարկված եկեղեցու շինարարությունը, որը կիսով չափ արդեն կատարված էր, նույնպես կասեցվեց: Շինարարությունը վերսկսելու մասին Լ. Շիրվանովի հետագա, քանիցս արած դիմումները մերժվում են: Հետագայում Պետերբուրգում հայկական եկեղեցիներ կառուցվեցին արդեն այլ վայրերում, իսկ Շիրվանովի հողատարածքում սկսված կառույցը, ըստ երևույթին, քանդվել կամ վերափոխվել է: Անճամբ Լուկա Շիրվանովի մասին վավերագրերում վերջին անգամ հիշատակումը վերաբերում է 1760 թվականին:

18-րդ դ. կեսերին Պետերբուրգի հայ համայնքը շարունակում էր աճել: Հայ վաճառականներն ու արդյունաբերողները մայրաքաղաքում ձեռք էին բերում նկատելի ազդեցություն: Վասիլևյան կղզու վրա էին գտնվում հայազգի Լուկա (այնուհետև նրա որդու՝ Պետրոս) Շիրվանովի, Բոգդան Հախվերդովի, Մանուլյովի մետաքսի ֆաբրիկաները: Քաղաքի հարավային մասում էր գտնվում մետաքսյա գուլպաներ և ձեռնոցներ արտադրող եղբայրներ Մանուչարովների ֆաբրիկան: Այդ ֆաբրիկաները դրեցին քաղաքի մետաքսագործական արդյունաբերության հիմքերը: Դրանց տեսականին բաղկացած էր մետաքսյա և կիսամետաքսյա գործվածքներից ու արևելյան բնույթի կերպասներից՝ երփներանգ դիպակներից, կիսամետաքսյա գործվածքներից (բուխարական զոլավոր գործվածք՝ կուտնյայից), պարսկական խալաթներից, թավիշից և այլն: Նմանօրինակ տեսականին բնորոշ էր նաև Մոսկվայի և Աստրախանի հայ ֆաբրիկատերերի հաստատություններին: Ի դեպ, Պետերբուրգում հայկական առաջին գործարկված ֆաբրիկայի սարքավորումը բերվել էր Մոսկվայից՝ հայազգի Ստեփան Ֆիտոնովի ֆաբրիկայից: Հայերի ֆաբրիկաներն աստիճանաբար անցան նաև եվրոպական նմուշի իրերի պատրաստմանը՝ դիմակայելով ներմուծվող ապրանքների մրցակցությանը:

Մետաքսի արտադրությունից զատ, հայ ձեռնարկատերերը զբաղվում էին նաև կաշվի և սեկի արտադրությամբ:

Աստիճանաբար հայ տնատերեր են հայտնվում նաև Պետերբուրգի կենտրոնում: Այսպես, հայազգի վաճառական Արտեմի Շերիմանը, որը եկել էր

Հնդկաստանից, Ռուսաստանի մայրաքաղաքում տուն ուներ Վասիլևյան կղզու 1-ին գծի և Մալի պողոտայի անկյունում (Լուկա Շիրվանովի տան մոտակայքում), որտեղ նա բացեց Պետերբուրգում առաջիններից մեկը հանդիսացող խաղող, չրեր և հարավային համեմունքներ վաճառելու խանութ: Դրանից բացի, նա հետագայում տուն է ձեռք բերում Ձմեռային պալատի մոտ՝ Մալայա միլիոննայա փողոցի վրա (ներկայիս Դվորցովայա հրապարակի տեղում): Դրա համար նա ստացավ հատուկ թույլատրություն, որը վկայում էր հայ վաճառականի ազդեցիկ դիրքի մասին: Մի այլ հայազգի վաճառական՝ Իվան Իզմայլովը, տուն ուներ Դվորյանսկայա փողոցում:

18-րդ դ. կեսերին Սանկտ-Պետերբուրգի քաղքաբնակների դասում գրանցվեցին եղբայրներ Մանվել, Բոդգան (Աստվածատուր), Արտեմ և Նիկիտա Իսախանովները, որոնք 1757 թ. հանդես եկան Պարսկաստանի հետ ձիավաճառության ընկերություն կազմակերպելու նախաձեռնությամբ: Մերժում ստանալով՝ նրանք, ըմբռնելով կառավարության շահագրգռվածությունը մեծաչորհային առևտուր կազմակերպելու մեջ, հաջորդ տարի նորից առաջարկեցին ստեղծել արդեն ավելի ընդհանուր «պարսկական առևտրի ընկերություն»: Այս անգամ թույլատրությունը տրվեց, և Իսախանովների կազմակերպած ընկերությունը դարձավ առաջիններից մեկը ռուսաստանյան առևտրական ընկերությունների պատմության մեջ: Ընկերության գրասենյակներ կազմակերպվեցին Սանկտ-Պետերբուրգում, Մոսկվայում, Աստրախանում և Ղզլարում: Ընկերությունը գոյատևեց մինչև 1762 թվականը:

18-րդ դ. կեսերին Պետերբուրգում բնակություն հաստատեց վաճառական և արդյունաբերող Հովհաննես Լազարյանը: Լինելով բնիկ Նորջուղայեցի՝ նա բազում այլ հայ առևտրականների նման հայտնվեց Ռուսաստանում, տրորված երթուղիով՝ Նոր Ջուղա-Աստրախան-Մոսկվա-Պետերբուրգ: Գերդաստանի մեծ մասն Աղազար Լազարյանի գլխավորությամբ բնակություն հաստատեց Մոսկվայում, իսկ Աղազարի (Լազարի) ավագ որդին՝ Հովհաննեսը (Իվան Լազարևիչը)՝ Պետերբուրգում: Մի քանի տարի անց նա ստացավ արքունի ոսկերչի կոչում, իսկ 1774 թ. Լազարյանների գերդաստանին շնորհվեց ժառանգական ազնվականության տիտղոս: Հետագայում Լազարյաններն արժանացան նաև կոմսության տիտղոսին: Բացի այդ, Հովհաննես Լազարյանն ուներ իսկական պետական խորհրդականի աստիճան, իսկ 1788 թ. նրան ավստրիական կայսրը շնորհեց Հռոմեական սրբազան կայսրության բարոնի տիտղոս:

Լազարյանների վերապրած էվոլյուցիան, որը նրանց Ջուղայեցի վաճառականներից ռուսաստանյան կոմսեր դարձրեց, այն հնարավորությունների դրսևորումը հանդիսացավ, որ բացվում էին Իրանը լքած հայազգի հարուստ

առևտրականների առջև, որոնք իրենց հիմնադրամը գործադրելու հնարավորություններ էին փնտրում:

Հայ առևտրական բուրժուազիայի առանձին ներկայացուցիչների մոտ կապիտալի կուտակումն այնպիսի բարձր աստիճանի է հասնում, որ նրանք ջանում են այն արդյունաբերության մեջ ներդնել: Հովհաննես Լազարյանը ուրալյան արդյունաբերող Ստրոգանովներից գնեց դոմնային և պղնձաձուլական գործարաններ, ինչպես նաև ձեռնարկեց Կիզելի (նույնպես Ուրալում) գործարանի կառուցումը:

Հովհաննես Լազարյանը միաժամանակ սերտ կապեր էր պահպանում Հայաստանի, հայ ազատագրական շարժման գործիչների, հայ եկեղեցու ղեկավարության հետ: Նա մասնակցել է արևելյան բռնապետությունների գերիշխանությունից Հայաստանն ազատագրելու նախագիծը կազմելու, Ղրիմից հայերի վերաբնակեցումը կազմակերպելու և Նոր Նախիջևանի գաղութը հիմնադրելու, հայ ժողովրդի լուսավորությանն օժանդակելու և շատ այլ գործերի:

Հովհաննես Լազարյանի միջոցների հաշվին հայկական դպրոցներ էին պահվում Նոր Նախիջևանում և Թիֆլիսում, նա միջոցներ նվիրաբերեց 1784 թ. Սոֆիայում՝ Պետերբուրգի արվարձան Յարսկոյե սելոյի շրջաններից մեկում, գյուղացիների երեխաների համար ժողովրդական դպրոց բացելու նպատակով. այդ դպրոցում սովորում էին 50 աղջիկ ու տղա: Նա երկար ժամանակ փայփայում էր Ռուսաստանում լիարժեք հայկական ուսումնական հաստատություն ստեղծելու գաղափարը, որն իր մարմնավորումը գտավ հետագայում Մոսկվայում Լազարյան ճեմարանի կազմակերպման մեջ:

Հովհաննես Լազարյանի տնտեսական, հասարակական և մշակութային ակտիվ գործունեությունն իրավամբ նրան դարձրեց Պետերբուրգի հայ համայնքի փաստացի ղեկավարը 18-րդ դ. երկրորդ կեսին, նման այն դերին, որպիսին ստանձնել էր Լուկա Շիրվանովը մի քանի տասնամյակ առաջ:

Հաստատվելով մայրաքաղաքում՝ Հովհաննես Լազարյանը սկզբնապես տուն գնեց Միլիոննայա փողոցի վրա, Ձմեռային պալատի մոտակայքում, այսինքն, դարձյալ հատուկ արտոնյալ շրջանում: Այդ տեղից հեռու չէր նաև Լազարյանի մյուս տունը՝ Մալայա մորսկայա փողոցում, որտեղ նա բնակվեց մինչև 1773 թ., երբ այն վաճառեց հայազգի վաճառական և արդյունաբերող Մակար Մանուչարովին: Իսկ Լազարյանները այդ ժամանակվանից սկսած բնակվում էին Նևսկի պողոտայի վրա, իրենց իսկ հիմնադրած հայկական եկեղեցու մոտ:

Հայկական եկեղեցիների կառուցումը Լազարյանների կարևորագույն ավանդն է ինչպես Պետերբուրգի և Մոսկվայի հայ համայնքների ամրապնդման, այնպես էլ Սանկտ-Պետերբուրգի կենտրոնական մայրուղու հարդարման

գործում: Հենց Հովհաննես Լազարյանին հաջողվեց ի չիք դարձնել Ռուսաստանում հայկական եկեղեցիները փակելու մասին 1742 թ. հրամանագրի արգելքը: Ի պատասխան կայսրուհուն հասցեագրված նրա դիմումի (1770 թ. ապրիլ) Պետերբուրգում և Մոսկվայում իր միջոցներով հայկական եկեղեցիներ կառուցելու թույլտվության մասին (որը պատճառաբանվում էր երկու մայրաքաղաքների հայ համայնքների թվաքանակի և նշանակության մեծացմամբ) հետևեց եկատերինա 2-րդի 1770 թ. մայիսի 2-ի համապատասխան հրամանագիրը: Այդ հրամանագրից երեք շաբաթ անց Պետերբուրգի գլխավոր ոստիկանապետ Ն. Ի. Զիչերինը կարգադրեց Պետերբուրգում՝ Նևսկի պողոտայում գտնվող իշխանատան դիմաց եկեղեցի կառուցելու համար հողատարածք հատկացնել[1]: Եկեղեցու շինարարությունը հանձն առավ մայրաքաղաքի այն ժամանակվա առաջատար ճարտարապետ, հոչակավոր Յու. Մ. Ֆելտենը: Քաղաքի հենց կենտրոնում նրա կառուցած Սբ. Եկատերինայի եկեղեցին հանդիսավորությամբ օծեց 1780 թ. ռուսաստանյան հայերի թեմական առաջնորդ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը: Այդ շենքը ցայսօր քաղաքի մայրուղու հոյակապ անսամբլի լավագույն կոթողներից է:

Քաղաքի հայկական ճարտարապետական հուշարձաններն են նաև Սմոլենսկի և Ալեքսանդր Նևսկու մայրավանքի գերեզմանատներում գտնվող հոյակերտ մահարձանները:

Յու. Ֆելտենի կառուցած շենքերի անսամբլի բաղկացուցիչ մասն են կազմում նաև այն երկու տները (եկեղեցական շինության երկու կողմերում), որոնք պահպանվել են ցարդ և մինչև 1920-ական թվականները կոչվում էին «Հայկական եկեղեցու տներ»: Այդ տները բուն եկեղեցու հետ միասին դարձել էին Պետերբուրգի հայկական գաղութի հասարակական կենտրոն: 1770-ական թվականների կեսերից դրանցից մեկում (N°40) բնակվում էր Հովհաննես Լազարյանի ընտանիքը, և տեղակայված էր նրա գրասենյակը: Շինության մի մասը զբաղեցնում էին տարբեր գործերով մայրաքաղաք եկող հայերը: Ինչպես ազգային գործիչները, որոնք մեկնում էին Պետերբուրգ՝ Հայաստանն ազատագրելու ծրագրերը քննարկելու և Ռուսաստանի ռազմադիվանագիտական միջոցառումներին աջակցելու համար, այնպես էլ հայկական գաղութների մյուս ներկայացուցիչները, որոնք երկրի բարձրագույն իշխանություններից հայցում էին համայնքային կամ անձնական ինչ-որ հարցերի լուծում, նրանք՝ բոլորը, որպես կանոն, կանգ էին առնում մայրաքաղաքի հայկական այդ օթևանում:

[1] Армяно-русские отношения в XVIII в. 1760-1800, Сб. документов, т.IV, с.99-101.

19-րդ դ. առաջին կեսին այդ տների առաջին հարկերը սկսեցին վարձով տալ առևտրականներին և ձեռնարկատերերին, այդ թվում՝ հրուշակագործ գերմանացիներին, որոնց ձեռնարկություններից ժամանակի ընթացքում առաջացավ Պետերբուրգի հռչակավոր «Նորդ» հրուշակարանը:



Պետերբուրգ. Ս. Եկատերինայի հայկական եկեղեցին (XVIII դ.)

Հայկական եկեղեցու բացումը նպաստեց Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքի համախմբմանն ու աճին: 1790 թ. ստացվեց մայրաքաղաքում ևս մեկ հայկական եկեղեցի կառուցելու (նույնպես Հովհաննես Լազարյանի նախաձեռնությամբ և միջոցներով) թույլատրությունը: Այն սկսեցին կառուցել Վասիլևյան կղզու վրա, բայց ոչ այնտեղ, որտեղ եկեղեցու շինարարությունը սկսել էր Լուկա Շիրվանովը, այլ մի քանի թաղամաս հեռու՝ Սմոլենկա գետից այն կողմ, արդեն այդ ժամանակ գոյություն ունեցող հայկական գերեզմանատանը: Նոր եկեղեցին ստացավ Սուրբ Հարության անվանումը: Դրա օծումը տեղի ունեցավ 1797 թվականին:

Ի. Գեորգիի տվյալներով, որը կազմել է «Ռուսական պետության մեջ ապրող բոլոր ժողովուրդների նկարագրությունը», 18-րդ դ. վերջին Սանկտ-Պետերբուրգում հաշվվում էր ընդամենը հարյուր հայ ընտանիք, սակայն նա նկատի էր ունեցել միայն տնատերերին, մինչդեռ եկեղեցական ծխականների զգալի մասը կազմում էին եկվոր հայ առևտրականները, մյուս հայկական գաղութների ներկայացուցիչները, հետագայում նաև՝ ուսանողները:

1801 թ. Հովհաննես Լազարյանը վախճանվեց և, համաձայն նրա կտակի, Սուրբ Եկատերինա հայկական եկեղեցու շրջակա հողատարածքը, ինչպես նաև տներից մեկը (N°42) դարձավ հայկական եկեղեցու սեփականությունը: Այդ տները հետագայում ևս, ավելի քան մեկ հարյուրամյակ, Պետերբուրգի հայ ազգային կյանքի կենտրոնն էին:

Նևսկի պողոտայի վրա գտնվող տներից զատ, Հովհաննես Լազարյանին էին պատկանում ևս երկու տուն նույն թաղամասում, բայց պողոտային զուգահեռ Իտալյանսկայա փողոցի կողմից: Պետերբուրգի մերձակայքում Լազարյանն ուներ կալվածք (դաստակերտ) Շլիսելբուրգյան ուղու վրա, մայրաքաղաքից 8 վերստ հեռավորությամբ: Այստեղ նա գնեց նաև թղթի ֆաբրիկա, որն արտադրում էր պատկերազարդումների համար օգտագործվող բարձրորակ թուղթ: Լազարյանի այլ՝ Ռոպշա դաստակերտում էին հանգրվանում ռուս ինքնակալներն ու նրանց օգոստոսափառ հյուրերը:

Ռուսաստանում Լազարյանների և մյուս հայ ձեռնարկատերերի հարստությունը նպաստեց նրանց գործուն դերին այն միջոցառումներում, որոնք օգնեցին հայ ժողովրդի արևելյան հատվածի ազատագրմանը: Դրան նպաստեց Ռուսաստանի այն ժամանակվա արևելյան քաղաքականությունը, որը միտված էր Կովկասի և նրան շրջապատող ծովերի վրա գերիշխանություն հաստատելուն և որը դրսևորվեց մի շարք պատերազմների նախապատրաստմամբ և իրականացմամբ: 1769 թ. Հերթական ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց հետո Ռուսաստանում հայ վաճառականական կապիտալի նշանավոր ներկայացուցիչները ռուսական կառավարությանը ներկայացրին Հայաստանն ազատագրելու ծրագիր: Մրագիրը ներկայացվեց այդ ժամանակ Պետերբուր-

գում բնակություն հաստատած աստրախանցի արդյունաբերող Մովսես Սառաֆովի (Բունիաթյանի) անվամբ, որը վերապահություն էր արել, որ իր հետ համաձայն են Սանկտ-Պետերբուրգում բնակվող մյուս, «ազգությամբ դարձյալ հայ, անվանի մարդիկ»: Նա հիշատակում է արդեն մի քանի տասնամյակ մայրաքաղաքում բնակվող քահանա Հովհաննես Շերիստանովին, արքունի ոսկերիչ Հովհաննես Լազարյանին, արդյունաբերող Մակար Մանուչարյանին, ինչպես նաև Աստրախանից տեղափոխված իշխան Միքայել Նազարովին և նշանավոր ձեռնարկատեր և հասարակական գործիչ, «Աստրախանի հայերի դատաստանագրքի» հեղինակներից մեկին՝ Գրիգոր Կամպանովին: Աստրախանի հայկական գաղութի մի շարք նշանավոր գործիչների Պետերբուրգ փոխադրվելը վկայում է Պետերբուրգի և նրա հայ համայնքի դերի բարձրացումը ռուսաստանյան հայերի տնտեսական և ազգային կյանքում:

1780-ական թվականների սկզբին Հովհաննես Լազարյանը և Հովսեփ Արղությանը բանակցություններ էին վարում ռուսական կառավարության և Կովկասում զորքերի հրամանատար նշանակված Ա. Վ. Սուվորովի հետ հայ պետականությունը վերականգնելու շուրջ:

Գիտակցելով ժողովրդի համար լուսավորության նշանակությունը՝ ռուսաստանյան հայերի ղեկավարները շատ բան էին անում Ռուսաստանի հայ համայնքներում ազգային մշակույթը զարգացնելու համար:

Լազարյանների գերդաստանի և արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի ջանքերի շնորհիվ Պետերբուրգը դառնում է ռուսաստանյան հայերի կարևոր կենտրոն: 1780-ական թվականների սկզբին Լոնդոնից այստեղ բերվեց Գրիգոր Խալդարյանի տպարանը, որը դարձավ առաջին հայկական տպարանը Ռուսաստանում: 1781-1788 թթ. ընթացքում այնտեղ տպագրվեցին մի քանի հայերեն գրքեր: Դրանց թվում էին հայերեն «Այբուբենը», 12-րդ դ. հայ գրող Ներսես Շնորհալու երկերի առավել նոր հրատարակությունը, 5-րդ դարի հայ պատմիչ Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» աշխատությունը: Ինքը՝ Գ. Խալդարյանը, կազմեց և տպագրեց առաջին հայ-ռուսերեն բառարանը («Գիրք, որ կոչի շաւիղ լեզուագիտութեան»): 1788 թ. տպարանը հրատարակեց ևս մեկ բառարան, որը կազմել էր Կլեոպատրա (Մարիամ) Սառաճյանը, և պատանիների համար նախատեսված «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» գիրքը, որը բովանդակում էր իմացության բանալի, այբուբեն, բառարան և բարոյագիտական որոշ կանոններ: Ինչպես երևում է խորագրից, Սառաֆյանի գիրքը սոսկ բառարան չէր, այլ արժեքավոր դասագիրք և ձեռնարկ, որն օգտակար էր Ռուսաստանում բնակվող հայ ազգաբնակչության տարբեր խավերի համար: Ստեղծելով տպարան՝ հայ գործիչները նպատակ էին հետապնդում ստարել հայերի շրջանում ռուսալեզվի և ռուսական սովորույթների տարածմանը, հայկական գաղութներում հայրենասիրական ոգու

և ազգային արժեքների պահպանմանը: Խալդարյանի տպարանում տպագրվող գրքերը տարածվում էին ոչ միայն Պետերբուրգում և Նախիջևանում, այլ մյուս հայ համայնքներում, ուղարկվում էին նաև բուն Հայաստան:

Ռուսաստանյան հայերի ղեկավարները գիտակցում էին նաև ռուս հասարակայնությանը հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին ծանոթացնելու կարևորությունը: Ձեռնարկվում են հայ ազգային մշակույթի գլուխգործոց կարևորագույն հուշարձանների թարգմանությունները: Այս ասպարեզում 18-րդ դարի վերջին մեծ դեր խաղաց մայրաքաղաքի հեծելազորային գվարդիական գնդի սպա Վառլամ Վահանովը: 1786 թ. Պետերբուրգում նրա թարգմանությամբ լույս է տեսնում «Ողբ Հայաստանի մասին» գիրքը, որը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» եզրափակիչ մասն էր: Խորենացու աշխատության բուն վերջաբանի թարգմանությունը և հրատարակությունը, որը պատմում է 5-րդ դարում հայ Արշակունիների թագավորության անկման մասին և հայ հին գրականության փայլուն հուշարձանն է, համահնչուն էին ժամանակի հայ ազատագրական շարժման գործիչների տրամադրություններին: Այդ գրքույկի հրատարակության նկատմամբ Հովհաննես Լազարյանի ցուցաբերած հովանավորության մասին է վկայում այն, որ թարգմանիչը գիրքը ձոնել էր Հովհաննես Լազարյանի դուստր եկատերինային: Իր երկրորդ թարգմանությունը՝ Շահամիր Շահամիրյանի՝ Հնդկաստանում լույս ընծայած «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» գրքի 5-6-րդ գլուխները, որոնք ընդգրկում են հայոց պատմությունը և Հայաստանի աշխարհագրությունը, Վ. Վահանովը ձոնում է իշխան Գ. Ա. Պոտյոմկինին՝ հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ ռուսական արքունիքի հետաքրքրությունն առաջ բերելու միտումով:

1809 թ. Պետերբուրգում լույս տեսավ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ռուսերեն արդեն լրիվ թարգմանությունը, իսկ 1811 թվականին՝ Ռուսաստանում հայ լուսավորության նշանավոր գործիչ Գևորգ Խուբովի (Պռոշյանի) հատկապես ռուս ընթերցողի համար գրված «Հայաստանում հիշարժան իրադարձությունների նկարագրությունը» գիրքը, 1813 թ. Պետերբուրգում լույս տեսավ նաև «Հարություն Արարատյանի կյանքը» գիրքը, որը առաջինն էր, որ ռուս ընթերցողին ծանոթացնում էր արդեն ոչ միայն հայ ժողովրդի հեռավոր անցյալին, այլև 18-րդ դ. վերջի հայ իրականությանը:

1787 թ. Գրիգոր Խալդարյանի մահվանից հետո Հովսեփ Արղությանը ձեռք բերեց նրա տպարանը՝ որպես Ռուսաստանի հայոց թեմի սեփականություն: 1789 թ. տպարանը տեղափոխվեց Նոր Նախիջևան, իսկ այնտեղից (արդեն 1795 թ.՝ Աստրախան: Հայերեն գրքերի տպագրությունը Սանկտ-Պետերբուրգում վերականգնվեց 1811թ., երբ այնտեղ հիմնադրվեց հայկական նոր տպարան: Նրա հիմնադրման նախաձեռնությունը պատկանում էր ավագ սարկավագ Հովսեփ Հովհաննիսյանին: Այդ տպարանն, ինչպես և նախորդը,

տեղադրված էր Նևսկի պողոտայի վրա գտնվող հայկական եկեղեցու շենքում: Հետագա տարիների ընթացքում Հովհաննիսյանի տպարանում տպագրվեցին մի քանի հայերեն գրքեր՝ հիմնականում կրոնական բովանդակության: Պետերբուրգում հայկական տպարանների գործունեության մեջ մեծ դեր է խաղացել նաև նշանավոր հասարակական գործիչ, գրող և թարգմանիչ Մակար Խոչենց Երևանցին, որն իր կյանքի շատ տարիներ անց է կացրել Պետերբուրգում:

19-րդ դարի առաջին երեսնամյակում Այսրկովկասի, այդ թվում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին առաջ բերեց սկզբունքային փոփոխություններ Պետերբուրգի հայ համայնքի խաղացած դերում, հայ ժողովրդի հասարակական շարժումներում, Հայաստանի և հայ ազգային գործիչների՝ ռուսական կառավարության հետ ունեցած փոխհարաբերություններում: Միաժամանակ մայրաքաղաքի հայ համայնքը և նրա ղեկավարները շարունակում էին երկրի հայ բնակչության յուրատեսակ մշտական ներկայացուցիչների դերը կատարել կառավարական տարբեր ատյանների առջև: Սակայն փոխվել էր առաջացող խնդիրների բովանդակությունը: Գործնականում քաղաքական նախագծերը դադարեցին քննարկման նյութ լինել: Երևանի, Էջմիածնի, Թիֆլիսի և Այսրկովկասի այլ քաղաքների ու վայրերի ռուսահպատակ դարձած հայերի չփումները Պետերբուրգի և Ռուսաստանի այլ քաղաքների հետ ընդունել էին անհամեմատ բազմազան բնույթ: Առևտրականներից և ձեռնարկատերերից զատ, մայրաքաղաք էին ժամանում և այնտեղ բնակվում նաև հայ պաշտոնյաներ, զինծառայողներ, մասնագետներ, սովորողներ:

Ի տարբերություն Ռուսաստանի մյուս հայ համայնքների՝ Պետերբուրգում հայկական ուսումնական հաստատություններ չկային: Սակայն 19-րդ դ. կեսերից Պետերբուրգի համալսարանում մտցվեց հայագիտության դասավանդում: 1845 թ. այստեղ հիմնադրվեց հայոց լեզվի ամբիոն: Ինչպես վրացերեն և թաթարերեն լեզուների ամբիոնների կազմակերպումը, դա ևս արվեց Կովկասում ապագա ծառայության ռուսաստանյան աստիճանավորների պատրաստումը բարելավելու համար: Այդ ամբիոնների ուսանողների հիմնական մասը կազմում էին հայերը:

Հայոց լեզվի ամբիոնի վարիչն ու սկզբնական շրջանում նաև միակ դասախոսը նշանավոր մանկավարժ, թարգմանիչ և լեզվաբան Մկրտիչ Բեռոյանն էր: Բնիկ աստրախանցի լինելով, նա 1822 թ. բնակվում էր Պետերբուրգում, որտեղ 1826 թ. ավարտեց արտաքին գործերի մինիստրությանն առընթեր ուսումնական հաստատության արևելյան լեզուների բաժինը: Դասախոսական աշխատանքին ձեռնամուխ լինելով՝ նա միաժամանակ զբաղվեց համապատասխան դասագրքեր պատրաստելով: Նա կազմեց և հրատարակեց (հիմնականում

իր միջոցներով) «Հայկազյան լեզվի տարրական հիմունքները» գիրքը և ռուս-հայերեն-ֆրանսերեն եռահատոր բառարանը:

Մի քանի տասնամյակ անց Պետերբուրգը դարձավ հայագիտության կարևորագույն կենտրոններից մեկը: Այստեղ աշխատում և ստեղծագործում էին այնպիսի ականավոր հայագետներ, որպիսիք էին Քերովբե Պատկանյանը, Կարապետ Եզյանը, Նիկողայոս Ադոնցը, Նիկողայոս Մառը: Տակավին 19-րդ դարում Պետերբուրգի հայագիտական դպրոցն են անցել ակադեմիկոսներ Ստեփանոս Մալխասյանցը, Հակոբ Մանանդյանը, Հովսեփ Օրբելին և ուրիշներ:

Հայ երիտասարդության շատ ներկայացուցիչներ բարձրագույն կրթություն էին ստանում Պետերբուրգի համալսարանի և քաղաքի մյուս ուսումնական հաստատությունների տարբեր ֆակուլտետներում: Պետերբուրգյան ուսանողներ են եղել հայ մշակույթի տաղանդավոր բազմաթիվ գործիչներ, նշանավոր մասնագետներ, հայ մտավորականության ներկայացուցիչներ, որպիսիք էին բանաստեղծ և հասարակական գործիչ Ռափայել Պատկանյանը, նկարիչներ Հովհաննես Այվազովսկին և Գևորգ Բաշինջաղյանը, կոմպոզիտորներ Մակար Եկմալյանը և Ալեքսանդր Սպենդիարյանը, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, որոնցից յուրաքանչյուրը դասական է իր ստեղծագործության ոլորտում:

Ռուսաստանի կազմում Այսրկովկասի մանելը, Թիֆլիսում և հայերով բնակեցված այլ շրջաններում լուսավորության և տպագրության կենտրոնների ստեղծումը, ինչպես նաև հաղորդակցության կատարելագործումը մեծացրին Պետերբուրգում ստացվող հայերեն գրքերի քանակը:

19-րդ դ. ընթացքում Պետերբուրգում ժամանակ առ ժամանակ բացվում էին հայկական տպարաններ: Օրակարգի հարց դարձավ նաև Ռուսաստանի մայրաքաղաքում հայերեն պարբերական հրատարակություններ լույս ընծայելու խնդիրը:

Դեռևս 1859 թվականին Մովսես Բուդաղովը փորձեց հայերենով «Քաղաքական և գրական թերթ» հրատարակել (ցավոք, փաստաթղթերում պահպանվել է միայն դրա ռուսերեն անվանումը), որը մայրենի լեզվով իրազեկ կդարձներ Պետերբուրգի հայերին Ռուսաստանում և հայրենիքում կատարվող քաղաքական և մշակութային իրադարձություններին: Սակայն իշխանություններն այն հրատարակելու թույլատրություն չտվեցին: Ցարական գրաքննությունը ջանում էր ըստ հնարավորության սահմանափակել ազգային հրատարակությունների լույս ընծայումը:

Սանկտ-Պետերբուրգում հրատարակված հայերեն առաջին լրագիրը «Հյուսիս» շաբաթաթերթն էր, որը լույս տեսավ 1863 թ.: Նրա խմբագիր-հրատարակիչն էր երիտասարդ Ռափայել Պատկանյանը, այն ժամանակ տակավին համալսարանի ուսանող: Պետերբուրգի գրաքննչական կոմիտեի ներկայացված ծրագրում նա նշում էր, որ լրագրի առաջին բաժինում նախատեսվում է ցարի հրովարտակների, հրամանագրերի, կառավարության կարգադրությունների և պաշտոնական այլ նյութերի (գլխավորապես, ռուսերեն թերթերից արված թարգմանությունների) տպագրումը: Երկրորդ բաժինը պիտի բովանդակեր պատմական, աշխարհագրական, տնտեսական բնույթի՝ Ռուսաստանին և այլ երկրներին վերաբերող տեղեկություններ, ինչպես թարգմանություններ, այնպես էլ հայերեն լեզվով երկեր: Երրորդ բաժնում նախատեսվում էր կենցաղային թեմաներով պիեսների, անեկդոտների և ակնարկների (հայկական և ռուսական կյանքից), ինչպես նաև հայտարարությունների հրապարակում:

Կից նամակում Ռափայել Պատկանյանը բացատրում էր, որ հրատարակության գլխավոր նպատակն է ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս բնակվող հայերին ծանոթացնել այն բարիքներն, որոնցից օգտվում են հայերը Ռուսաստանում: «Ամենագլխավոր խնդիրն է տվյալ դեպքում, -ընդգծում էր նա, -իմ հայրենակիցներին՝ հայերին, և դա հատկապես նրանց, որոնք Ռուսաստանում չեն բնակվում, որ եթե երբևէ նրանք ցանկանում են ըմբռնչնել խաղաղությամբ ընծեռած անդորրը, և այն երջանկությունը, որը իր սեփականությունից ազատորեն օգտվելն է, կրոնական ազատությունն է, իշխող ժողովրդի հետ իրավահավասարությունն է, բոլոր տեսակի ծառայության մատչելիությունն է, չբացառելով նաև կայսրության մեջ բարձրագույն աստիճանները, քրիստոնեության զգացմունքով և ոգով թեկլադրված օրենքներն են, բարձրագույն իշխանությունների հայրական խնամքն է ստորիններին նկատմամբ, դեպի վեհացումը, հարստացումը, մտքի կրթությունը տանող միջոցներն են, մարդկային կյանքի բոլոր այդ բարիքները նրանց չնորհում է միայն Ռուսաստանը»[1]:

«Հյուսիս» լրագիրը լույս տեսավ մոտավորապես մեկ տարի: Նրա աշխատակիցների թվում էին Գաբրիել և Քերովբե Պատկանյանները:

Ռուսաստանի մայրաքաղաքում հաջորդ հայերեն պարբերական հրատարակությունը հաջողվեց ձեռնարկել միայն ավելի քան երկու տասնամյակ անց: Դա պատկերազարդ գրական-գեղարվեստական «Արաքս» տարեգիրքն էր: Նրա խմբագիրը Սիմեոն Գյուլամիրյանն էր: Հրատարակությունում հիմնական ուշադրությունը հատկացվում էր Հայաստանի պատմությանը, ազգագրությանը, պատմական Հայաստանի առանձին տարածաշրջանների աշխարհագրական նկարագրությանը, առանձին թագավորների, քաղաքական և եկեղեցական գործիչների կենսագրություններին: Հարուստ էր վիպագրության բաժինը, ուր մեծ մասամբ տեղ էին գտնում ռուս և եվրոպական դա-

[1] Арешян С.Г. Армянская печать и царская цензура. Ер., 1957, с. 446-448.

սականների գործերի թարգմանությունները, քանի որ խմբագրությունը նպատակ էր դրել ռուս և համաշխարհային գրականության ստեղծագործություններին ծանոթացնել հայ ընթերցողին: Կարևոր տեղ էին գրավում նաև գրական քննադատությունը, հուշագրությունը և այլն: «Արաքս» տարեգիրքը լույս տեսավ Պետերբուրգում 12 տարիների ընթացքում (1887–1898 թթ.):

19–20-րդ դարերի սահմանագլխին մայրաքաղաքում հայերեն լրագիր հրատարակելու թույլատրություն ստանալու համար դիմում էին հայ հասարակայնության տարբեր ներկայացուցիչներ: 1900–1901 թթ. Ն. Բերբերովի նախաձեռնությամբ նախատեսվում էր «Կյանք» ամսագրի հրատարակությունը, իսկ 1902 թ. բժիշկ Համբարձում Քեչեկյանն առաջարկում էր հրատարակել «Գիտություն» ամսագիրը, սակայն այդ առաջարկությունները իշխանությունների կողմից մերժվեցին:

1903 և 1904 թթ. լույս տեսան «Բանբեր հայ գրականության և արվեստի» գրական-գեղարվեստական ամսագրի երկու համար (տարեկան մեկական համար), որի խմբագիրը պատմաբան Նիկողայոս Ադոնցն էր: Ամսագիրը հրատարակում էր ժամանակակից հայ գրողների՝ Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Սիամանթոյի, Վրթանես Փափազյանի և այլոց ստեղծագործությունները: Ամսագիրը նպաստում էր հայ գրականության, արվեստի, գրական լեզվի պրոպագանդմանը: Զետեղվում էին նյութեր Հայաստանում տիրող իրավիճակի, հասարակական-քաղաքական հոսանքների և հայ իրականության մասին:

Ռուսական առաջին հեղափոխությունը սկսվելուն պես ազգային հրատարակությունների հնարավորություններն ընդլայնելու հույսեր ծագեցին: Ճիշտ է, Տիգրան Հարությունյանի՝ 1905 թ. Պետերբուրգում «Միածան» ամսագիր հրատարակելու փորձը կանխվեց, բայց 1906 թ. սկսած հաջողվեց մայրաքաղաքում իրականացնել ամենամայա երգիծական «Մափրիչ» լրագրի հրատարակությունը: Լրագիրը լույս էր տեսնում մինչև 1908 թ.՝ Դավիթ Օքրոյանի խմբագրությամբ: Պետերբուրգում նախահեղափոխական ժամանակաշրջանի վերջին հայերեն հրատարակությունը Գ. Մեսեյանի խմբագրությամբ 1913 թ. լույս տեսնող գրական-գեղարվեստական, քննադատական «Շողեր» ժողովածուն էր:

Հայ հեղինակները ջանում էին համագործակցել նաև ռուս պարբերական հրատարակությունների հետ: Առանձնահատուկ նախաձեռնություն է ցուցաբերում պետերբուրգցի հրատարակիչ և լրագրող Արտեմի Կոտելնիկովը (Հարություն Կոտելնիկյանցը), որը ձեռնարկեց լրագրի հրատարակում հատկապես Պետերբուրգում բնակվող ուսանողների և կովկասցի այլ եկվորների համար: Բնիկ աստրախանցի լինելով՝ Ա. Ն. Կոտելնիկովը կյանքի մեծ մասն անցկացրեց Պետերբուրգում, որտեղ էլ ծավալվեց նրա ստեղծագործական և

կազմակերպչական գործունեությունը: Կրթությամբ վիճակագիր լինելով (նրա գրչին են պատկանում մի քանի բրոշյուր 1897 թ. մարդահամարի մասին), նա հիմնականում նվիրվեց հրատարակչական գործունեությանը: Նա կազմակերպեց «Նաշա ժիզն» հրատարակչությունը, որը 1906–1908 թթ. լույս էր ընծայում նույն անվամբ լրագիր, որին համագործակցում էին Մ. Գորկին, Լ. Անդրեևը, Ա. Կուպրինը, Ա. Գրինը և այլ հեղինակներ:

1910 թ. Ա. Ն.Կոտելնիկովը ձեռնամուխ եղավ մայրաքաղաքում ամսօրյա «Ժիզն Կավկազա» լրագրի հրատարակությանը, որը լուսաբանում էր Այսրկովկասի և Հյուսիսային Կովկասի հատկապես հայ համայնքների հասարակական և քաղաքական կյանքը: Այդ աղերսով լրագիրը բավարարում էր նաև Պետերբուրգի կովկասյան հայրենակցական միությունների պահանջարկը: Լրագրում զետեղվում էին քաղաքական տեսություններ և գիտական հոդվածներ: Լրագրի առաջատար աշխատակիցներից էր նշանավոր տնտեսագետ Վահան Տոտոմյանցը: Սակայն լրագրի հրատարակությունը տևեց ընդամենը մի քանի ամիս և այն դադարեցվեց խմբագիր-հրատարակիչ Ա. Ն. Կոտելնիկովի հանկարծահաս մահվան պատճառով:

1860-ական թվականների սկզբին Պետերբուրգում երևան է գալիս հայկական ուսանողական թատրոն, որը Ռուսաստանում առաջին հայկական թատրոններից մեկն էր: Հայկական հայրենակցական միությանն առընթեր հատուկ թատերական հանձնակազմը հետևում էր սիրող-դերասանների ընտրությանը, նախանշում բեմադրության համար պիեսներ: Քաղաքային իշխանությունների հետ պայմանավորվածության համաձայն տարեկան մեկ ներկայացում էր կազմակերպվում՝ որպես կանոն, տարեմուտին: Բեմադրությունների թվում էին Գաբրիել Սունդուկյանի «Խաթաբալան», «Պեպո», «Քանդած օջախը», ինչպես նաև Շեքսպիրի «Համլետը»: Ներկայացումների համար կապալով վարձվում էր քաղաքի ակումբներից մեկի շենքը: Բեմադրության օրը միշտ էլ փափագելի և բերկրալի էր, քանի որ ի մի էին հավաքվում և հանդիպում Պետերբուրգի բազում հայեր: Հայկական ազգային կյանքում խոշոր իրարաղարձություն էին այլ քաղաքներից ժամանած հայ բեմի ականավոր վարպետների հյուրախաղերը: 1884 թ. իր հյուրախաղերի ժամանակ ականավոր ողբերգակ Պետրոս Ադամյանը մասնակցեց նաև տեղի հայկական թատերախմբի՝ Զակոմետտիի «Հանցագործի ընտանիքը» պիեսի բեմադրությանը:

Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքը չուներ այն արտոնությունները, որպիսիք ունեին 18-րդ դ. երկրորդ – 19-րդ դ. առաջին կեսին Ռուսաստանի հարավում գտնվող հայկական որոշ գաղութներ: Ուստի և Պետերբուրգի հայերը չունեին իրենց ինքնավարությունը և սեփական դատավարությունը: Համայնքում կային հեղինակավոր գործիչներ, հանձինս առավել հարուստ, երևելի և ազդեցիկ ներկայացուցիչների, որոնք գործուն դեր էին խաղում ազ-

գային և հասարակական կյանքում, կատարելով համայնքի փաստական ղեկավարների պարտականությունները, ինչպես այդ 18-րդ դ. անում էին Լուկա Շիրվանովը և Հովհաննես Լազարյանը: Ազգային կենտրոնների կարևոր դեր էին խաղում նաև հայկական եկեղեցին և հասարակական տարբեր կազմակերպությունները, որոնք սկսեցին երևան գալ 19-րդ դ. երկրորդ կեսից՝ Հովհաննես Լազարյանի կտակին համապատասխան և 1804 և 1841 թվականների հրամանագրերի համաձայն: Երկու մայրաքաղաքների հայկական եկեղեցիների գույքը տնօրինում էին հոգաբարձական խորհուրդները, որոնք գլխավորում էին Լազարյան տոհմի ներկայացուցիչները:

1883 թ. Ռուսաստանի ՆԳՄ օտար դավանանքի հոգևոր գործերի վարչությունում նախապատրաստվեց Սանկտ-Պետերբուրգի և Մոսկվայի հայ առաքելական եկեղեցիների գույքը տնօրինելու վերաբերյալ նոր կանոնների նախագիծ: Նախագիծը մինիստրների կոմիտե քննարկման էր ներկայացրել ներքին գործերի մինիստր Դ. Տոլստոյը, և 1883 թ. նոյեմբերի 18-ին այն արժանացավ կայսր Ալեքսանդր 3-րդի հաստատմանը[1]:

Համաձայն Կանոնների, Պետերբուրգի և Մոսկվայի հայկական եկեղեցիների գույքը և եկեղեցիներին վերաբերող գործերը տնօրինելու համար այդ քաղաքներից յուրաքանչյուրում ստեղծվում էր հատուկ խորհուրդ, որն ընտրվում էր եկեղեցիների ծխականների կողմից, երեք տարի ժամկետով: Խորհրդի անդամներ և անդամության թեկնածուներ էին ընտրվում ծխականների շրջանից, իսկ խորհուրդների նախագահ երկու քաղաքում էլ պիտի լիներ ըստ ավանդույթի Աբամելիք-Լազարյան իշխանական տոհմի ավագ ներկայացուցիչը: Բանն այն է, որ 1871 թ. Խաչատուր Լազարյանի մահվանից հետո ընդհատվեց Լազարյանների արական գիծը, և նրանց սեփականության նկատմամբ ժառանգական իրավունքները պահպանելու նպատակով Խաչատուր Լազարյանի դստեր՝ Ելիզավետայի ամուսնուն՝ իշխան Սեմեոն Դավիդովիչ Աբամելիքին պաշտոնապես թույլատրվեց լինել Լազարյան տոհմի սեփականությունների, իրավունքների և արտոնությունների ժառանգորդ և դառնալ իշխաններ Աբամելիք-Լազարյանների միացյալ տոհմի գլխավորը: Ս. Դ. Աբամելիք-Լազարյանը նույնպես հանդիսանում էր Պետերբուրգի և Մոսկվայի հայկական եկեղեցիների ժառանգական հոգաբարձուն: Այժմ նա դառնում էր նաև մայրաքաղաքային եկեղեցիների գույքը տնօրինող նորաստեղծ երկու խորհուրդների նախագահ: Նրա մահվանից հետո 1888 թ. այդ իրավունքներն անցան նրա որդուն՝ իշխան Սեմեոն Սեմեոնովիչ Աբամելիք-Լազարյանին:

Մայրաքաղաքային հայկական եկեղեցիների գույքը տնօրինելու վերաբերյալ նոր կանոնադրության համաձայն, 1884 թ. մարտի 25-ին կայացան

[1] ՀՀ ԿՊՊԱ, ֆ56, ց. 18,84, թ.2

Սանկտ-Պետերբուրգի հայկական եկեղեցիների գույքը տնօրինող խորհրդի անդամների ընտրությունները: Ընտրություններին նախագահում էր պրոֆեսոր Ռերովբե Պատկանյանը: Խորհրդի անդամներ ընտրվեցին պետերբուրգցի նշանավոր հայեր՝ Գրիգորովը, Յաղուբյանը, Լ. Մազիրովը, Ն. Սանասարյանը, Կ. Եզյանը, Ափեմյանը, թեկնածու ընտրվեց Քալանթարովը:

Ընտրություններն անցնում էին բավականին դեմոկրատական մթնոլորտում, և խորհրդի անդամներ էին ընտրվում հայ համայնքի հանրաճանաչ հեղինակավոր և ունևոր անդամները՝ ձեռնարկատերեր, մասնագետներ, պետական պաշտոնյաներ: Նորընտիր խորհուրդը հանդիսանում էր Պետերբուրգի հայերի ազգային և հասարակական կյանքի հեղինակավոր ղեկավարը:

Միանգամայն բնական էր, որ եկեղեցական գործերից զատ, խորհուրդը քննարկում էր քաղաքի հայ բնակչությանը վերաբերող այլ կարևոր հարցեր ևս, կազմակերպում էր բարեգործական միջոցառումներ՝ ուսանողների կամ Հայաստանի՝ տարերային աղետներից տուժած բնակիչների, Արևմտյան Հայաստանից փախստականների և այլոց օգտին:

Պետերբուրգի հայերը գործուն մասնակցություն էին ունենում ինչպես ռուսաստանյան, այնպես էլ հայ հասարակական կյանքին, հանդիսանում էին և՛ համազգային, և՛ իրենց իսկ ստեղծած ինչպես քաղաքական, այնպես էլ հասարակական, մշակութային, բարեգործական և այլ կազմակերպությունների անդամներ: Այսպես, 1870-1880 թթ. Սանկտ-Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետին առընթեր գործում էր Սանկտ-Պետերբուրգի հայ ուսանողների կազմակերպությունը, որը փաստորեն կատարում էր հայ ուսանողական համաքաղաքային հայրենակցական միության դեր: Բացի բարեգործական (փոխօգնության գանձարկղ և այլն) նպատակներից, կազմակերպությունն օժանդակում էր նաև հայերեն լեզվով հանրամատչելի գրականության հրատարակությանը: Պետերբուրգի հայկական տպարաններում տպագրվեցին հայերեն մի շարք գեղարվեստական ստեղծագործություններ և մանկական գրքեր:

Գնալով հասարակական կյանքում ավելի մեծ տեղ էր գրավում քաղաքական պայքարը, որի մեջ ընդգրկվում էր նաև Պետերբուրգի հայազգի բնակչությունը, հատկապես ուսանողությունը: Հայ երիտասարդության բազում ներկայացուցիչներ դարձան հեղափոխական (և հայկական, և ռուսաստանյան) տարբեր կազմակերպությունների գործուն անդամներ: Տակավին 19-րդ դ. կեսերին պետրաշևականների հեղափոխական խմբակի անդամ էր ուսանող-բժիշկ Դմիտրի Ախշարումովը: 1862-1865 թթ. Սանկտ-Պետերբուրգում (Պետրոպավլովյան ամրոցում կալանքի տակ) էր գտնվում հայ ականավոր բանաստեղծ և հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Բանտարկությունից հետո, աքսորավայր ուղարկվելուց առաջ, նա էլի մի քանի ամիս

ապրեց Պետերբուրգում: Պետրոգրադում տեղի ունեցած հեղափոխական իրադարձություններին ակտիվ մասնակցություն ունեցան Բոգդան Կնունյանցը, Վառլամ Ավանեսովը, Վահան Տերյանը և ուրիշները, ինչպես նաև ռուսատանյան և հայ քաղաքական կուսակցությունների հայազգի այլ գործիչներ: Հայ ազգային և նարոդնիկական կազմակերպություններին մասնակցություն ունենալու համար դատական պատասխանատվության ենթարկվեցին հայազգի ուսանողներ Ա. Դաստակովը, Թամար Ադամյանը, Վարվառա և Օլգա Սաֆարովա քույրերը, նրանց եղբայր Արշակը և ուրիշներ:

Մայրաքաղաքի հայ բնակչության շրջանում մեծ դեր էին խաղում արհեստակրատիայի, առևտրաարդյունաբերական բուրժուազիայի, մտավորականության նշանավոր ներկայացուցիչները: Ամենաերևելի հայ գերդաստանը նախկինի պես շարունակում էին մնալ Լազարյանները, որոնք 1871 թ. իշխաններ Աբամելիքների հետ վերը հիշատակված ազգակցական կապը հաստատելուց հետո կազմեցին Աբամելիք-Լազարյան իշխանական միաանական տոհմը: Մի լիոնայա փողոցի վրա՝ քաղաքի կենտրոնում, Ձմեռային պալատի մոտ գտնվող նրանց առանձնատունը շարունակում էր մնալ մայրաքաղաքի հայ ազգային կյանքի ճանաչված կենտրոններից մեկը:

Շատ հայեր, պետական կամ զինվորական ծառայության մեջ հաջողությունների հասնելով, ժամանակի ընթացքում հաստատվում էին Սանկտ-Պետերբուրգում, գրավելով կարևոր պաշտոններ մայրաքաղաքի հաստատություններում: Տակավին 18-րդ դ. 30-ական թվականներին Պետերբուրգի կայազորում ծառայում էին 18 հայ սպաներ, որոնց տեղափոխել էին Ղզլարում տեղակայված հայկական հեծելավաշտից: 18-րդ դ. վերջին – 19-րդ դ. սկզբին Պետերբուրգում էր բնակվում գեներալ Հովակիմ Խաստատովը, որտեղ և կնքեց իր մահկանացուն: Գեներալ Հ. Խաստատովը Լուկա Շիրվանովի ազգականն էր և ժամանակի ռուսաստանյան հայերի շրջանում հռչակ հանած Վասիլև-Խաստատով տոհմի ներկայացուցիչը[1]: 19-րդ դ. սկզբին մայրաքաղաքում էր ծառայում գեներալ Դմիտրի Ախշարումովը (պետրաշևականի հայրը)՝ 1812 թ. Հայրենական պատերազմի մասնակիցը, իսկ հետագայում նաև նրա առաջին պատմաբանը: Նրա աշխատությունն այդ պատերազմի մասին լույս տեսավ 1819 թ. Սանկտ-Պետերբուրգում: Պետական կարևոր պաշտոններ էր զբաղեցնում, իսկ ժամանակի ընթացքում՝ Ալեքսանդր 2-րդ ցարի օրոք ամենազդեցիկ դիրքի հասավ կոմս Միքայել Լորիս-Մելիքովը: Ալեքսանդր 3-րդի գահակալության տարիներին հայտնի գործիչ էր ժողովրդական լուսավորության մինիստր կոմս Իվան Դելյանովը (Դիլանչենցը):

[1] Գրիգորյան Գ., Վիմագրական տեղեկություններ XVIII-XIX դդ. հայ-ռուսական հարաբերությունների մասին (Լենինգրադի և Մոսկվայի ցյութեր) , ԼՀԳ, 1983, N°8, էջ 58:

Մայրաքաղաքի առևտրաճեռնարկուական գործունեության մեջ հայտնի էին խոշոր խանութների և ճեռնարկությունների տերեր՝ հայազգի Սանասարովների, Խոջա-Էյնաթովների, Տեր-Դավիդովների, Մակարովների ազգանունները[1]: Պետերբուրգում հայերի ձեռքում էր կենտրոնացված կովկասյան գինիների և արևելյան այլ ապրանքների առևտուրը: Նրանց էին պատկանում ինչպես արդյունաբերական ճեռնարկություններ, այնպես էլ խանութներ, մասնավորապես, Գոստինի և Ապրակսինի իլևանատներում և քաղաքի կենտրոնի այլ տեղերում:

Բացի հայագետ-գիտնականներից, մայրաքաղաքի հայերի մեջ կային նաև այլ խոշոր մասնագետներ՝ բժիշկներ, ինժեներներ, իրավաբաններ և այլ մասնագետներ, որոնք կրթություն էին ստացել Ռուսաստանի և Եվրոպայի ուսումնական լավագույն հաստատություններում: Պետերբուրգում է սկսել իր շինարարական և ստեղծագործական գործունեությունը ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, երկար տարիներ այստեղ է բնակվել պատկերները Հեռավորության վրա հաղորդելու և գունավոր հեռուստատեսության գյուտի հեղինակ, ինժեներ Հովհաննես Ադամյանը և հայ մտավորականության նշանավոր այլ ներկայացուցիչներ:

1897 թ. տվյալներով, Սանկտ-Պետերբուրգում կար 550 հայ՝ հայկական եկեղեցիների ծխականներ[2]: Իսկ այդ ժամանակ քաղաքում բնակվող հայերի փաստական թվաքանակը պիտի որ զգալիորեն ավելի մեծ լիներ, քանի որ քաղաքում կային շատ ժամանակավոր բնակվողներ, որոնք գրանցված չէին եկեղեցական ծխերում: Կային նաև ոչ սակավ թվով հայեր, որոնք պարզապես չէին այցելում հայկական եկեղեցի:

1917 թ. հոկտեմբերից հետո հայկական ազգային կազմակերպությունները և եկեղեցական գույքը տնօրինող խորհուրդը, հայրենակցական ու ուսանողական միությունները աստիճանաբար դադարեցնում են իրենց գործունեությունը կամ էլ արգելվում: 1920-ական թվականների վերջերին դադարեցին ժամասացությունները հայկական եկեղեցիներում, իսկ դրանց շինությունները բռնագրավվեցին: Գերեզմանատանն առնվեր եկեղեցում գտեղվել էր քանդակագործական արվեստանոց, իսկ Նևսկի պողոտայի վրա գտնվող եկեղեցում՝ թատերական դեկորացիաների պահեստը: Ավերվեց հայկական գերեզմանատան մի մասը, որից տուժեցին հայ ժողովրդի ականավոր բազում գործիչների դամբարանաքարերը:

[1] Тер-Габриэлян Г., Армянские колонии в Москве и Санкт-Петербурге, М., 1888.

[2] ՀՀ ԿՊՊԱ., ֆ.56, ց.18, գ.321, թ.47-48:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Հյուսիսային Կովկասում հայկական գաղթավայրերի հիմնադրման և զարգացման պատմությունը որոշակի տեղ է գրավում ռուսահայ գաղթավայրերի բազմադարյան պատմության մեջ: Ավելի քան երկու հարյուրհինգամյա գոյության ընթացքում Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերը զգալի դեր են խաղացել հայ, ռուս և հյուսիսկովկասյան ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում, նպաստել այդ ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը:

Հյուսիսային Կովկասում, մասնավորապես Հյուսիս-արևելյան Կովկասում, համահավաք հայկական գաղթավայրերի առաջացումը վերաբերում է 18-րդ դարի 20-ական թվականներին և անմիջականորեն կապվում Պյոտր 1-ինի պարսկական արշավանքի հետ: Դեռևս 17-րդ դարի մի շարք փաստաթղթերում հանդիպում ենք հայերի մասին հիշատակությունների, որոնք հիմնականում առևտրական նպատակով եղել են Թերքի քաղաք-ամրոցում, որը ռազմաստրատեգիական կարևոր դեր էր ստանձնել Ռուսաստանի հարավ-արևելյան սահմանագլխին և նշանակալի ներդրում ունեցել ռուս-հյուսիսկովկասյան ժողովուրդների քաղաքական և տնտեսական հարաբերություններում: 17-րդ դարի սկզբներին քաղաքում հիմնվել են առևտրաշաբաթներ, հյուրանոցներ, որտեղ կանգ են առել ռուս, կովկասցի, ինչպես նաև Իրանից, Հնդկաստանից և Անդրկովկասից ժամանած վաճառականները:

17-րդ դարում հայկական մնայուն գաղթօջախի հաստատումը Աստրախանում, հայ վաճառականների մշտական այցելությունները Դերբենդ և Թերևս փոքր հայ համայնքի գոյությունը այնտեղ պայմաններ են ստեղծում հայ առևտրականների՝ նաև Թերքի փոխադրման համար: Աղբյուրներում հիշատակություն կա այն մասին, որ Թերքին նախկինում (17-րդ դարում) բնակեցված էր կումիկներով, հայ վաճառականներով, ոչ մեծ թվով մոսկովյան ստրելեցիներով և այլն[1]: Սակայն 17-րդ դարում, ինչպես նաև 18-րդ դարի սկզբներին Թերքիում հայ համայնքի կամ գաղթավայրի ձևավորման մասին ուղղակի տեղեկություններ փաստաթղթերում չկան: Աղբյուրներից ոչ մեկում հայկական առանձին համայնքի վերաբերյալ տվյալներ գոյություն չունեն: Հավանաբար, հայ վաճառականները միայն ժամանակավոր բնակություն են

[1] Гриценко Н.П. Города Севера-восточного Кавказа, Ростов н/Д, 1984, с.35.

հաստատել Թերքիում, իսկ առևտրական գործարքներն ավարտելուց հետո հետ են վերադարձել: Սակայն պատմական իրողությունն այն է, որ առևտրական ճանապարհը դեպի Թերքի քաղաք-ամրոցը անցնում էր Թերեք գետի վրայով, այսպես կոչված «Ղզլարի անցարանով կամ փոխադրաշրջանով»: Եվ բնական է, որ հայ առևտրականներ կամ նրանց առանձին խմբեր կարող էին լինել նաև Ղզլար ավանում դեռևս 17-րդ դարում: Բացի այդ, 17-րդ դարի պատմական դեպքերի զարգացմանը հետևելիս դեպի Հյուսիսային Կովկաս հայերի մասսայական արտագաղթի կամ վերաբնակեցման կոնկրետ փաստեր նույնպես չեն հանդիպում: Գերեվարության հետևանքով Հյուսիսային Կովկասում հայտնված հայերը մեծաթիվ չեն եղել, ցրված ապրել են կումիկական տարբեր բնակավայրերում (ինչպես, օրինակ՝ Էնդերի ստրկավաճառական կենտրոնում և այլն), և, բնական է, նրանք անկարող էին նպաստել մնայուն հայկական համայնքների ձևավորմանը:

18-րդ դարի սկզբներին արդեն Թերեքի ավազանում հայերի բնակեցման վերաբերյալ կան մի շարք ուշագրավ փաստեր: 1710 թ. մարտի 13-ին Թերեքի շրջանում մետաքսի գործարան հիմնելու խնդրանքով հայ վաճառական Սաֆար Վասիլևը դիմում է Պյոտր 1-ինին: Թերեքի մետաքսամշակման գործարանին կից եղած Թերևս փոքրաթիվ հայ համայնքի մասին է վկայում այն փաստը, որ Մինաս վարդապետը 1719 թ. ռուսական կառավարությանն ուղղված խնդրագրերից մեկում անհրաժեշտ էր համարում նշել նաև Թերեքի շրջանում հայկական եկեղեցի ունենալու հանգամանքը[1]:

Այսուհանդերձ, Հյուսիսային Կովկասում համահավաք հայկական գաղթօջախների հիմնադրումը անմիջականորեն առնչվել է այն հանգամանքի հետ, որ Պյոտր 1-ինը արտաքին քաղաքական շահերից ելնելով՝ ոչ միայն նախաձեռնել և խթանել է հայերի գաղթը նվաճած երկրամաս, այլև հանդես է եկել նորահաստատ հայ համայնքների հովանավորողի և պաշտպանի դերում:

Ռուսական կառավարող շրջաններում տեղյակ էին, որ մերձկասպյան տարածքներում, Դերբենդից մինչև Բաքու, բնակվում են մեծ թվով հայեր, որոնք հակված են անցնելու Ռուսաստանի հովանու տակ: Զգալի թվով հայ բնակչություն էր կենտրոնացված Շամախիում և շրջակա հայաբնակ գյուղերում, որոնք քաղաքական խառն իրադրության պայմաններում պարզորոշ գիտակցում էին, որ միայն ռուսական զենքի հաղթանակով կարող են ձեռք բերել ազատություն և խաղաղ գոյավիճակ:

[1] Эзов Г.А. Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, с.330; см. так же: Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сб. документов, под ред. А.Г.Иоаннисяна, т.2, ч.1, Ер., 1964, док.159.

Մերձկասպյան շրջանները հայերով բնակեցնելու ծրագիրը, որը նախքան իրանական արշավանքը արծարծվում էր ռուսական կառավարող շրջաններում, առավել հրատապ է դառնում Իրանում և Անդրկովկասում ստեղծված ռազմաքաղաքական իրադրության հետևանքով: 18-րդ դարի 20-ական թվականների կեսերի վավերագրերում բազմիցս հիշատակվում է Մարտիրոս եպիսկոպոսի անունը, որը զգալի դեր է խաղացել հայ-ռուսական հարաբերություններում, նպաստել Մերձկասպիայում (Սուրբ Խաչ, Դերբենդ և այլն) հայ համայնքների ձևավորմանը:

Արշավանքի նախօրյակին և հետո ռուսական իշխանությունները հովանավորում էին անդրկովկասյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, հաշվի առնելով այդ պայքարի կարևորությունը ռուսական զորքերի իրանական արշավանքի ժամանակ թուրքերի հարձակումը որոշ չափով հետ մղելու գործում: Միաժամանակ, հայ ազատագրական շարժման գործիչները, ամեն կերպ նպաստելով ռուսական զորքերի առաջխաղացմանը դեպի Այրարատյան դաշտ, ջրանում տեսնում էին թուրքական ագրեսիայի կանխման և իրենց պայքարի հաջողության միակ գրավականը: Սակայն չուտով պարզ դարձավ, որ Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը (սկզբում ամրանալ Մերձկասպիայում, իսկ այնուհետև շարժվել Անդրկովկաս) անիրագործելի են: Զինված օգնության փոխարեն ռուսական կառավարությունը Արցախի սղնախների բնակչությանը առաջարկում էր գաղթել Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող մերձկասպյան երկրամասի նորակառույց քաղաք-ամրոցներն ու գյուղական բնակավայրերը՝ խոստանալով անձի ապահովություն և բազմաթիվ արտոնություններ: Ռուսաստանի օգնությանը ապավինած իրանահայերի և կովկասահայերի մի մասն աստիճանաբար հակվում է Մերձկասպիայի ռուսական սահմանները գաղթելու գաղափարին:

Մերձկասպյան շրջաններում հայերի վերաբնակեցումը պաշտոնական հիմքերի վրա դնելու նպատակով 1724 թ. նոյեմբերի 10-ին հետևում է կայսերական հրովարտակը՝ ուղղված հայ ժողովրդին: Ստանալով կայսերական հրամանը, Մերձկասպիայի զինվորական իշխանությունները միջոցներ են ձեռնարկում հայերին ռուսական շրջաններում բնակեցնելու և նրանց տնտեսական վիճակը բարելավելու համար: Դարի 20-ական թվականների կեսերին Դերբենդում արդեն զգալի թվով հայ բնակչության կենտրոնացման մասին էր վկայում այն փաստը, որ օրակարգում դրված էր տեղում հայկական եկեղեցի ունենալու հարցը: Դերբենդը և Սուրբ Խաչը, որտեղ ռուսական կայազորներ կային, ապահով հանգրվաններ էին գերությունից փրկված բազմաթիվ հայերի համար:

Կասպիական արշավանքի առաջին իսկ օրից Պյոտր 1-ինը մեծ ուշադրություն է դարձրել մերձկասպյան շրջանները հատկապես հայ առևտրական-

ներով և արհեստավորներով բնակեցնելուն, հետապնդելով տնտեսական որոշակի շահախնդրություններ:

Պահպանված հատուկենտ վավերագրերի վկայությամբ, 18-րդ դարի 20-ական թվականների վերջերին Սուրբ Խաչ ամրոցում բնակվել են կազակային հրամանատարական վերնախավը և զինվորները, իսկ ամրոցի պարիսպներից դուրս՝ ռուս և հայ վաճառականները, լեռնցիները, կումիկները և ուրիշներ[1]: Սուրբ Խաչում մեծաթիվ էին Իրանի տարբեր շրջաններից գաղթած նաև հայ արհեստավորները, որոնք հայ և ռուս վաճառականների հետ միասին քաղաքի թեկուզև կարճատև գոյության ընթացքում տնտեսական աշխուժություն են հաղորդել երկրամասում արտադրողական ուժերի սկզբնավորմանն ու զարգացմանը:

Սակայն հայերի գաղթը մերձկասպյան և Թերեքի շրջաններ մեծ չափերի հասավ Հայաստանում ազատագրական պայքարի ճնշումից հետո: Սկզբնական շրջանում Ղարաբաղի հայկական սղնախների ղեկավարները հրաժարվեցին գաղթի ծրագրից: Բայց դարի երկրորդ քառորդի վերջերին, ազգային ազատագրական պայքարի ճնշումից հետո, նրանց մի մասը ստիպված էր գաղթել Մերձկասպիայի ռուսական սահմանները: Ապստամբ հայերի մի մասը, թուրքական և պարսկական զավթիչների դաժան հետապնդումներից փրկվելու համար, Ղարաբաղից և Զանգեզուրից գաղթում է Արևելյան Կովկաս: Բազմաթիվ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ հայ գաղթականների հիմնական մասը հաստատվում է Դերբենդում, շրջակա հայկական գյուղերում, Սուրբ Խաչում և Մերձկասպիայի այլ բնակավայրերում: Շարունակ համալրվում և ավելի բազմամարդ էր դառնում Դերբենդի հայ համայնքը: Այսպիսով, 18-րդ դարի 20-ական թվականների կեսերից Սուրբ Խաչում, Դերբենդում և Մերձկասպիայի ռուսական ազդեցության այլ շրջաններում հաստատվեցին Անդրկովկասից, Իրանից, և Թուրքիայի հայաբնակ շրջաններից գաղթած հայեր, այդ թվում՝ ռուսական բանակում ծառայության մեջ գտնվող հայ զինվորականներ, հոգևոր և աշխարհիկ, հատկապես առևտրական դասի ներկայացուցիչներ և արհեստագործներ, գերությունից փրկված հայեր, որոնց մի մասը զինվորագրվում էր, իսկ մյուս մասը՝ լրացնում երկրագործների շարքերը:

18-րդ դարի 30-ական թվականների կեսերին զգալի տեղաշարժ կատարվեց Ռուսաստանի կովկասյան քաղաքականության մեջ: Սևծովյան շրջանում պատրաստվելով Թուրքիայի դեմ պատերազմի՝ Ռուսաստանը միտում էր հանձին Իրանի ձեռք բերել դաշնակից: 1735 թ. Ռուսաստանի և Իրանի միջև Գանձակի պայմանագրի կնքումից հետո ռուսները ստիպված էին թողնել Կասպից ծովի արևմտյան ափերը՝ Գիլանից մինչև Սուրբ Խաչ: Ռուսական

[1] Гриценко Н. Նշվ. աշխ., էջ 35, 80:

զորքերի հետ Սուրբ Խաչ է փոխադրվում Բաքվի, Դերբենդի և Մերձկասպիական այլ նահանգներում բնակություն հաստատած հայերի զգալի մասը: Սակայն Հյուսիս-արևելյան Կովկասում ռուսների վերջին հենակետ Սուրբ Խաչը 1735 թ. աշնանը թողնելուց հետո տեղի բնակչությունը, այդ թվում և հայերը, փոխադրվում են Ղզլարի նորակառույց ամրոցը: Թերեքի ձախափնյա շրջանում Ռուսաստանի ռազմաքաղաքական հենակետը լինելուց բացի՝ նոր բերդավանը դառնում էր երկրամասի տնտեսական զարգացման կենտրոնը: Ղզլարի բերդին զուգահեռ աճում և ձևավորվում էր երկրամասի առևտրաարտադրական կենտրոնի դեր ստանձնող նոր քաղաքը, մշտական հանգրվան դառնալով նաև ապահովություն փնտրող հայ գաղթականների համար: Ղզլարի հիմնադրման մասին ժամանակի փաստաթղթերից մեկում ասված էր. «Ղզլարը (նկատի ունի բերդը – Լ. Գ.) կառուցվել է 1735 թ. գեներալ Վ. Լևաշովի ցուցումով... Սուլակ գետի ափին գտնվող Սուրբ Խաչ ամրոցը վերացնելուց հետո նրա բնակիչները՝ ռուսներ, վրացիներ, հայեր, նույնպես կանոնավոր և ոչ կանոնավոր (էսկադրոնների – Լ. Գ.) ծառայողները փոխադրվել են Ղզլար, իսկ հետագայում վրացիներ, հայեր և թաթարներ են վերաբնակեցվել Իրանից, Վրաստանից, Կովկասյան լեռներից»[1]:

Ղզլարի հիմնադրման առաջին իսկ օրից հատուկ ուշադրություն է դարձվել սահմանամերձ բերդաքաղաքը նաև նորեկ հայ գաղթականներով բնակեցնելու գործին: Ռուսական իշխանությունները, նկատի ունենալով Ղզլարը հայերով բնակեցնելու նաև տնտեսական շահախնդրություններ, հայերին հրավիրում են Թերեքի ռուսական սահմանները՝ խոստանալով ազատել հարկերից, տալ առևտրի ազատության թույլտվություն և այլն: Օգտվելով ռուսական կառավարող շրջանների հովանավորությունից՝ Հյուսիսային Կովկաս գաղթած հայերից և վրացիներից շատերը մտանոնշում էին հենց Ղզլարում բնակվելու նպատակահարմարությունը, խոստանալով տերությանը շահավետ տնտեսական գործունեությամբ նպաստել թե զորամասերի տեղում ապահովմանը և թե նորանոր գաղթականների հետագա վերաբնակեցմանը:

Մերձկասպյան շրջաններից ռուսական զորքերի հեռանալուց հետո հայկական և հայ-վրացական էսկադրոնները առժամանակ լուծարքի են ենթարկվում: Պահպանված տեղեկությունների համաձայն, հայ զինվորականների մի մասը, հատկապես հրամանատարները, հայրենիք չվերադարձան, այլ մնացին Ռուսաստանում և դիմեցին իշխանություններին կրկին ծառայության

[1] Центральный государственный военно-исторический архив России (ЦГВИА), ф. ВУА, д. 18570, ч.1, 1785, ч.82 об. 83.

անցնելու խնդրանքով, միաժամանակ պահանջելով տարեկան աշխատավարձ, Ղզլարում և Աստրախանում բնակություն հաստատելու թույլտվություն[1]:

Սուրբ Խաչից Ղզլար է փոխադրվում հայկական և հայ-վրացական էսկադրոնների զինվորականների մեծ մասը: 1736 թ. Ռազմական կոլեգիայի ներկայացրած ցուցակի համաձայն, այդ զինվորականներից 18-ը տեղափոխվել էին Աստրախան, 91-ը հաստատվել Ղզլարում: Պետերբուրգ մեկնած և կրկին ծառայության անցնելու թույլտվություն ստացած 18 հայ զինվորականներ, Լ. Խրիստոֆորովի գլխավորությամբ, նույնպես բնակեցվում են Ղզլարում[2]: Այդ էսկադրոնների զինվորականները, փաստորեն, ընդհուպ մինչև 1764 թվականին լուծարքի ենթարկվելը, ազատված էին փաստացի զինվորական ծառայությունից, իսկ անհրաժեշտության դեպքում զինվորական իշխանությունների ցուցումով ուղարկվում էին Դաղստան, Ղրիմ, Կուբան և այլ վայրեր՝ հետախուզական և դիվանագիտական հանձնարարականներով:

Ղզլարի առաջին բնակիչների թվում էին նաև Վ. Լևաշովի ցուցումով Սուրբ Խաչից գաղթած իրանահայ առևտրաարհեստավորներն ու երկրագործները: Զգալի թիվ էին կազմում նաև այն իրանահայերը, որոնք առևտրական գործարքները շարունակելու պատրվակով կրկին վերադարձել էին Թերեքի շրջան և մշտական բնակություն հաստատել Ղզլարի նորահաստատ ամրոցում: 18-րդ դարի առաջին կեսի փաստաթղթերում վիճակագրական հավաստի տվյալների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում ճշտելու Ղզլար փոխադրված հայերի թվաքանակը: Մոտավոր հաշվումներով Ղզլարը բնակեցման առաջին տարում (1735–1736 թթ.) ունեցել է մոտ 400, գուցե և ավելի հայ բնակչություն, որը հավաստվում է ավելի ուշ շրջանի փաստաթղթերով: Հետագայում Ղզլարի հայ բնակչության թիվը աճում է Իրանի տարբեր շրջաններից և Անդրկովկասից գաղթած նորաբնակների հաշվին: Հայ բնակչության համալրման մյուս աղբյուրը գերությունից փախած հայերի բնակեցումն էր Ղզլարում: Թերեքի շրջանի Կարգինակի, Զերվչենի, Նովոգլադկովսկի ռուսական առաջապահ զորքերի հրամանատարների՝ Ղզլարի պարետին ներկայացրած (տարբեր թվականների) բազմաթիվ զեկուցագրերում և հարցաքննությունների արձանագրություններում հիշատակվում են թաթարական գերությունից փախած հարյուրավոր հայեր (հիմնականում վրաստանցի, չամախսեցի և դարաբաղցի), որոնց մի մասը ցանկություն էր հայտնել հաստատվել Ղզլարում, Սարաֆաննիկովո գյուղում, իսկ մյուսները, համաձայն իրենց

[1] Ставропольские губернские ведомости за 1854 г. №50, см. так же: Савинский И. Астраханская епархия (1602-1902 гг.) вып.2, Астрахань, 1905, с.94.

[2] Известия кавказского отделения русского географического общества, т.4, №1-5, с.93.

խնդրանքի, վերադարձել էին հայրենիք[1]: Արտագաղթերի, կովկասյան տարբեր բնակավայրերից՝ Մեծ և Փոքր Կաբարդայից, Անդրեևո, Աքսայ գյուղերից և այլ տեղերից Ղզլարում հայերի բնակեցման հետևանքով հայկական գաղթօջախն ավելի համահավաք ու բազմամարդ է դառնում: Ղզլարի քաղաքացիական գրասենյակի՝ 1762 թ. Աստրախանի նահանգային գրասենյակ ներկայացրած տեղեկագրում հիշատակվում են Ղզլարում բնակվող 486 հայեր (երկու սեռի) և նրանց պատկանող 146 տուն: 1775 թվականի «Աստրախանի նահանգի ցուցակում» նշվում են Ղզլարում բնակվող 1.222 հայեր (63,5%) և 470 վրացիներ (24,4%), այն դեպքում, երբ քաղաքն ուներ ընդամենը 1.924 բնակչություն: Ընդ որում ներկայացվում էր միայն հարկատու բնակչությունը և, բնականաբար, մեծ թվով հայեր դուրս էին մնացել ցուցակից[2]:

18-րդ դարի 70-ական թվականներին Ղզլար ժամանած Գիլդենշտեդը բավական ուշագրավ տեղեկություններ է թողել Ղզլարի և ղզլարահայերի մասին: Քաղաքի թաղամասերից առաջինը նա հիշատակում է «Հայկականը»[3], որը, ըստ երևույթին, եղել է ամենից շատ բնակեցվածը: Ղզլարի հնագույն շինություններից էր հայկական փայտաշեն եկեղեցին, որը կառուցվել էր 1754 թ.՝ ավելի ուշ, քան ռուսականն ու վրացականը: Տարիներ անց, հայ համայնքի մեծացման հետ պահանջ է զգացվել ունենալ նաև երկրորդ եկեղեցին, որը կառուցվել է 1772 թ.:

Իրանի զավթողական նկրտումներին հուսալի պատնեշ հանդիսացող Ղզլար բերդաքաղաքը, այդուհանդերձ, հեռու էր գտնվում օսեթական և կաբարդական տիրույթներից, որոնք, պաշտոնապես չեզոք համարվելով, մշտապես ընդգրկված էին Թուրքիայի և նրա դրածոների կողոպտչական պլաններում: 1762 թ. հոկտեմբերի 9-ին հետևում է Սենատի՝ կայսրուհուն ուղղված եզրակացությունը. «Թույլատրել բնակավայր հիմնադրել Մոզդոկում և բնակեցնել այն միայն քրիստոնեություն ընդունած կաբարդինցիներով, օսերով, ինգուշներով, հայ, վրացի և այլ քրիստոնյա ժողովուրդներով, իսկ մահմեդականներ չբնակեցնել»[4]:

---

[1] Центральный государственный архив Дагестанской АССР (далее - ЦГА Даг. АССР), ф. 379, оп.11, д.451, л.8, 12, 18, 23, 53, 72, 78.

[2] Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIIIв. Тб., 1968, с.44, 51.

[3] Гильденштадт Н.А. Географическое и статистическое описание Грузии и Кавказа. СПб., 1809, с.21.

[4] Кабардино-русские отношения в XVI-XVIII вв., т. II, М., 1957, док. 190.

Քաղաքական նկրտումներից բացի, այն է՝ բերդի կառուցումով ապահովել Ղզլարի մարզի հետագա ուժեղացումը, ռուսական իշխանությունները հետամուտ էին քրիստոնյա հայերին և վրացիներին Մոզդոկում վերաբնակեցնելով նպաստել առևտրի, մետաքսամշակման և արտադրական տարբեր ճյուղերի զարգացմանը տեղում և պատրաստ էին վերջիններիս խոստանալ մի շարք արտոնություններ: 1763 թ. նոյեմբերի 6-ին «ի լուր համայն ժողովրդեան» Ղզլարում հրապարակվում է կայսերական թույլտվությունը. «Մոզդոկ կոչված տեղանքում վերաբնակվողները ապահով հանգրվան գտնելու հետ մեկտեղ ստանում են այնպիսի արտոնություններ, ինչպիսիք ունեն Դոնի և Յասիի կազակները իրենց բնակավայրերում»: Վերաբնակիչներին թույլատրվում էր տեղական ապրանքներով մեկնել և անմաքս առևտուր անել կաբարդական, կումիկական և լեռնցիների տարբեր բնակավայրերում: Մոզդոկում հաստատված ազգություններին իրավունք էր վերապահվում ունենալ սեփական դատարան[1]: Բամբակագործությամբ, մետաքսամշակությամբ և խաղողագործությամբ զբաղվելու նպատակով անսահմանափակ քանակությամբ հողեր էին հատկացվում նորաբնակներին, իսկ նրանց տնտեսությունները ազատվում էին հարկադրումից: Սա հիմնականում վերաբերում էր առավել հեռավոր վայրերից փոխադրվող հայերին և վրացիներին: Եվ պատահական չէր, որ Մոզդոկի առաջին բնակիչները դարձան Ղզլարից գաղթած հայ երկրագործները, արհեստավորներն ու առևտրականները:

Մոզդոկի հիմնադրման առաջին իսկ օրից կառավարող շրջաններում կարևոր միջոցառումներ են մշակվում գաղթականներին վերաբնակեցնելու և ապահովելու, հարևան լեռնցիների հետ հայերի առևտուրը կազմակերպելու և վարչատնտեսական այլ հարցերի մասին: Մոզդոկի բնակեցման առաջին տարիներին կաբարդացիների, օսերի, վրացիների հետ մեկտեղ այնտեղ հայ բնակչություն է փոխադրվում Ղզլարից, Մեծ և Փոքր Կաբարդայից, կումիկական տարբեր բնակավայրերից, Սարաֆաննիկովո գյուղից, ինչպես նաև Ղրիմից, Աստրախանից և այլ վայրերից: Ղզլարի պարետի՝ կառավարությանն ուղղված զեկուցագրերը հավաստում են, որ Մոզդոկում վերաբնակվողների մեջ հայերը զգալի թիվ են կազմել: Կովկասահայերի անընդհատ ներհոսքի հետևանքով, 1760-ական թվականների վերջերին Մոզդոկն արդեն ուներ 300 և ավելի հայ բնակչություն: Մոզդոկի հիմնադրումից հետո ևս այն նոր գաղթականներով, հատկապես հայ վաճառականներով համալրելու, նրանց սիրաշահելու և չհագրգռելու քաղաքականությունը եղել է կառավարող շրջանների ուշադրության կենտրոնում: 1767 թ. դեկտեմբերի 31-ին Ղզլարի պարետին

---

[1] Архив внешней политики России (АВПР), ф. Кизлярские и Моздокские дела, 1762-1772 гг., д.1, л.139.

ուղղված Արտաքին գործերի պետական կոլեգիայի հրամանում հատկապես ընդգծվում էր նորաբնակների արտոնյալ գոյավիճակի ապահովումը՝ անմաքս առևտուր, վարելահողերի, արոտավայրերի և այգիների՝ ըստ ազգությունների հատկացում, ժողովրդական սովորույթներով առաջնորդվող ազգային դատարանների հաստատում և այլն:

Այսպիսով, 18-րդ դարի 60-ական թվականների կեսերից ևս մեկ հայկական համահավաք գաղթօջախ է ձևավորվում Թերեքի ավազանի երկրորդ խոշոր բնակավայրում՝ Մոզդոկում:

18-րդ դարի երկրորդ կեսին Մոզդոկը, ըստ նրանում բնակությունն հաստատած ժողովուրդների, բաժանված էր 3 թաղամասերի՝ հայկական, վրացական և օսական: Եվ առավել բնակեցվածը հայկական թաղամասն էր: Այստեղ 1778 թ. կառուցվել է հայկական առաջին եկեղեցին, իսկ մեկ տարի անց, հայ բնակչության թվի մեծացման հետևանքով, անհրաժեշտ է դառնում կառուցել նաև երկրորդ եկեղեցին[1]:

19-րդ դարի սկզբներին, Մոզդոկը, որը ընկած էր Մոսկվա-Ստավրոպոլ-Անդրկովկաս առևտրական կարևոր ճանապարհի վրա, բնակչության բնական աճի և նոր վերաբնակեցման հետևանքով նկատելի առաջընթաց է ապրում: Թե Մոզդոկում և թե Ղզլարում հայ բնակչության թվական աճի ընդհանուր պրոցեսը ոչ միայն չի ընդհատվել, այլև հետագա զարգացում է ապրել հատկապես 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին՝ Հայաստանից, Իրանի հայաշատ շրջաններից, ինչպես նաև Դերբենդից և շրջակա հայկական գյուղերից հայերի մասսայական նոր գաղթի և Հյուսիսային Կովկասում վերաբնակվելու հետևանքով: Շատերը բնակություն են հաստատում Ղզլարում և Մոզդոկում. միաժամանակ հիմնադրվում են նոր բնակավայրեր Ղզլարի, Մոզդոկի, Գեորգիևսկի և ուրիշ շրջաններում:

Դարավերջին հայ գաղթականության նոր հոսք է սկսվում դեպի Հյուսիսային Կովկասի արդեն ծանոթ հայաշատ վայրերը, մասնավորապես Ղզլար և Մոզդոկ: Պահպանված վավերագրերի վկայությամբ, հայերի գաղթը Դերբենդից և Մակուրի շրջաններից սկսվել է 1797 թ. գարնանը և շարունակվել մի քանի փուլերով: Դեռևս 1798 թ. հունվարին, Ղզլարից հյուսիս, Բեքթեթա և Պրորվա գետերի շրջանում բնակատեղի հիմնադրելու խնդրանքով ռուսական կայսրին է դիմում դերբենդահայերի հավատարմատար Գասպար Կոստանդինովը: Այս անգամ ռուսական իշխանությունները նկատի ունեին Հին Մաշառ կոչված վայրում, նորագաղթ իրանահայերին բնակեցնելով, հիմնել առևտրաարհեստավորական քաղաք և ծաղկեցնել այն:

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 18570, л.98 об., 99 об.

Ուշագրավ են Հ. Արղությանի փաստարկները՝ հայ գաղթականներին Ռուսաստանում բնակեցնելու և նրանց տնտեսական վիճակը բարելավելու կապակցությամբ: Առաջին հերթին նա չեշտը դնում էր հարցի քաղաքական կողմի վրա՝ ընդգծելով այն հանգամանքը, որ Ռուսաստանում բնակվող հայերի վիճակի բարելավումը կնպաստի այն բանին, որ նրանց հայրենակիցներից շատերը ցանկություն կհայտնեն հարևան երկրներից տեղափոխվել և բնակվել Ռուսաստանում: Նույն փաստարկներն էին ընդգծում իրենց խնդրագրերում նաև իրանահայ գաղթականները: Նորեկ ռուսահայ հպատակների համար նույնատիպ արտոնությունների սահմանումը, ինչպիսիք արդեն ունեն Ռուսաստանում բնակվող նրանց հայրենակիցները, գրում էին դերբենդահայերն իրենց խնդրագրերից մեկում, կնպաստի, որ ոչ միայն հայերը, այլև քրիստոնյա այլ ազգեր հարևան ասիական երկրներից գաղթեն Ռուսաստան: Ռուսահայերի տնտեսական վիճակի բարելավման հարցերը սերտորեն զուգակցելով Ռուսաստանի տնտեսական շահերին և քանիցս կանխանշելով երկրամասի տնտեսական զարգացման հեռանկարները՝ Արղությանը ռուսական պաշտոնյաներին իրազեկում էր, որ «մետաքսի, հացահատիկային կուլտուրաների, խաղողի այգիների մշակումը և զարգացումը երկրամասում միայն օգուտ կբերեն պետությանը: Այդ վայրերը փոխադրվելու ցանկություն ունեցող հայերի համար և նրանց խրախուսելու նպատակով ցանկալի կլինի հայերին տրամադրել բավականաչափ հողեր, ազատ առևտրի թույլտվություն տալ և այլ արտոնություններ...»[1]:

Ռուսական կառավարող շրջանները, առաջին հերթին նկատի ունենալով տերության շահերը և լավագույնս պատկերացնելով երկրամասի բնակեցման և տնտեսական յուրացման հեռանկարները, ընդառաջ գնացին նորեկ հայ գաղթականներին: Շուտով 1799 թ. ապրիլի 15-ին հետևում է Պավել 1-ինի հրամանը կառավարող Սենատին՝ նախատեսված հողատարածության կրկնապատիկը հայ գաղթականներին հատկացնելու և բնակարանների կառուցման համար անհրաժեշտ փայտանյութ տրամադրելու մասին, իսկ նրանց, ովքեր կցանկանային բնակվել քաղաքում, թույլատրվում էր Հին Մաշառ կոչված վայրում հիմնել քաղաք և վերանվանել Սուրբ Խաչ: Կրոնի, դատավարության, առևտրի և այլ հարցերում նրանց չնորհվում էին նույնպիսի արտոնություններ, ինչպիսիք ունեին Ռուսաստանում բնակվող նրանց հայրենակիցները[2]:

[1] Центральный государственный исторический архив России (ЦГИА), ф. 1374, оп.2, д.1815, л.22 об.

[2] ПСЗРИ, т. XXV, № 18935, 1799 г.,с. 619.

Սակայն իշխանությունների սպասվելիք հույսերը առժամանակ չարդարացան: Իրանահայերի աննշան մասը միայն փոխադրվեց Սուրբ Խաչ: Սուրբ Խաչի հայկական գաղթօջախը ձևավորվեց ավելի ուշ, 19-րդ դարի 40-ական թվականներին, որը հետևանք էր ռուսական կառավարող շրջանների քաղաքական և տնտեսական մի շարք պլանների փոփոխման և հայ զանգվածների նոր և մասսայական վերաբնակեցման: Իրանահայ արհեստավորների մի մասը փոխադրվեց Աստրախան, մյուսները գերադասեցին բնակություն հաստատել այդ ժամանակ արդեն որոշակի արտոնություններից օգտվող Ղզլար քաղաքում՝ համալրելով տեղի հայ գաղթօջախը: Ղզլարում հաստատվեցին նաև դերբենդահայ հարուստ ընտանիքները և սկսեցին զբաղվել առևտրով: Դերբենդի և Մսկուրի շրջաններից գաղթած հայ երկրագործների մեծամասնությունը հաստատվեց Թերեքի ավազանում: Ղզլարից հյուսիս նրանք հիմնադրվեցին Դերբենդսկոյե, Մոլախալիլ և Ղարաջալիլ, իսկ Մոզդոկի շրջանում՝ Կասաևո-Յամա (հետագայում՝ Եգեսիա) հայկական գյուղերը: 40-ական թվականների սկզբներին, Ղզլարի օկրուգից Սուրբ Խաչ հայերի մասսայական գաղթի հետևանքով, գրեթե լիովին դատարկվեցին իրանահայերի հիմնադրած 3 հայկական գյուղերը: Միայն Ղարաջալիլը, որը թե տարածքով և թե բնակչության թվով ամենամեծն էր, չդադարեցրեց իր գոյությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին Սուրբ Խաչը Պյատիգորսկի օկրուգի հայաշատ քաղաքներից մեկն էր՝ հայկական եկեղեցիներով, հարուստ տոնավաճառներով և ծաղկուն այգիներով: Քաղաքի հայ բնակչությունը հետագայում ևս համալրվեց Դաղստանից, Անդրկովկասից և Իրանից վերաբնակվողների շնորհիվ: Դարի 70-ական թվականների կեսերից նաև ռուս բնակչություն է փոխադրվում Սուրբ Խաչ՝ Ռյազանի, Վորոնեժի և Ստավրոպոլի նահանգներից[1]:

1907 թ. Սուրբ Խաչ քաղաքում կար հայերին պատկանող 369 տուն և 1.962 երկսեռ հայ բնակչություն[2]:

Մոզդոկի գավառում (Մոզդոկից 85 կմ հեռավորության վրա) Կասաևո-Յամա բնակավայրում հայկական գաղթօջախի ձևավորումը, ինչպես նշվեց, հետևանք էր 18-րդ դարի վերջին իրանահայերի՝ դեպի Ռուսաստան կատարած վերաբնակեցման: 1799 թ. հոկտեմբերի 28-ի կայսերական հրովարտակը տարածվում էր նաև Կասաևո-Յամայի հայերի վրա՝ վերջիններիս հարկերի

[1] Ставропольская губерния в стастистическом, географическом, историческом, сельскохозяйственном отношениях, Ставрополь, 1897 г.

[2] ՀՊՊԿԱ, ֆ.52, ց.1, գ.5500, թ. 2-35:

վճարման, գավանանքի, հողային և այլ հարցերում տալով նույնատիպ իրավունքներ և արտոնություններ:

19-րդ դարի 30-ական թվականներին չերքեզահայերը Հյուսիսային Կովկասում հիմնադրեցին Արմավիրի հայկական գաղթօջախը, ևս մեկ հայաբնակ քաղաք երկրամասում, որին վիճակված էր զգալի դեր խաղալ թե Կովկասի տնտեսական կյանքում և թե հայ-ռուսական հարաբերություններում [+]:

19-րդ դարի սկզբներից հայ համայնքներ են ձևավորվում Հյուսիսային Կովկասի նորակառույց գրեթե բոլոր քաղաք-ամրոցներում և գյուղական բնակավայրերում: Արդեն փոխվել էին հայ գաղթօջախների առաջացման քաղաքական և տնտեսական դրդապատճառները: Ռուսական բնակավայրերում հայ համայնքների հաստատումը ոչ թե տերության կողմից նախատեսված և կազմակերպված գաղթի արդյունք էր, այլ կովկասահայերի՝ տնտեսական շարժառիթներով թելադրված և պարբերաբար կրկնվող տեղաշարժի հետևանք: Սրանք արդեն ոչ թե տերության կողմից հայերի համար նախատեսված կամ հիմնադրված հայկական բնակավայրեր էին, ինչպես Նոր Նախիջևանը, Գրիգորիոպոլը, Արմավիրը, այլ տնտեսական կայուն պոտենցիալ ունեցող հայ համայնքներ, որոնք նույնպես կարևոր դեր խաղացին երկրամասի արտադրատնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում:

Այդուհանդերձ, ռուսական իշխանությունները 19-րդ դարի սկզբներից կրկին հետամուտ էին նաև հայերի վերաբնակեցմանը՝ դրանում տեսնելով երկրամասի բնակեցման և տնտեսական յուրացման փաստացի հնարավորություններից լավագույնը, այն է՝ նորահաստատ ռուսական բնակավայրերում հայ բնակչության կենտրոնացումով վերջիններիս օգնությամբ իրականացնել երկրամասի բնակեցման դժվարին և հրատապ խնդիրները՝ հայերին ներգրավելով երկրամասի առևտրատնտեսական կյանքի ոլորտը, նպաստել անմշակ հողերի յուրացմանը, տնտեսության մի շարք ճյուղերի, մանավանդ առևտրի և արհեստագործության աշխուժացմանն ու զարգացմանը: Թեկուզև աննշան և ժամանակավոր շնորհված արտոնությունները, ռուսական իշխանությունների կարծիքով, ոչ միայն պետք է խթանեին հայերի առևտրատնտեսական գործունեությանը, այլև նպաստեին նորանոր գաղթականների ներհոսքին: Սակայն Հյուսիսային Կովկասի գրեթե ամբողջ տարածքով հայ համայնքների սկզբնավորման և համալրման հիմնական աղբյուրը հյուսիսկովկասյան հնագույն և խոշոր հայկական գաղթավայրերն էին՝ Ղզլարն ու Մոզդոկը: Նորաստեղծ վարչատնտեսական կենտրոնները՝ եկատերինոդարը, Ստավրոպոլը, Վլադիկավկազը և մյուսները նույնպես տնտեսական գործունեության լայն հեռանկարներ էին խոստանում հայ վաճառականներին: Պա-

[+] Արմավիրին վերաբերող հատվածը տե՛ս սույն բաժնի վերջում՝ առանձին:

տահական չէ, որ վերոհիշյալ քաղաքների առաջին բնակիչների թվում էին նաև հայ վաճառականները, որոնց մի մասը ժամանակավոր, իսկ շատերն արդեն մշտական բնակություն էին հաստատել: Երկրամասում ազատ ու աննմշակ հողերի առկայությունը, ճորտատիրական իրավունքի թույլ դրսևորման ձևերը, նորաբնակներին որոշ արտոնությունների շնորհումը գայթակղիչ էին Անդրկովկասից և Արևմտյան Հայաստանից եկած աղքատ հայ գյուղացիության համար: Նրանցից շատերը, լավագույն ապագայի ակնկալությամբ, վերաբնակվում էին Հյուսիսային Կովկասում: Տնտեսական շարժառիթներով ոգևորված՝ Հյուսիսային Կովկաս էին գաղթում նաև Ռուսաստանի հայաբնակ վայրերից, այդ թվում՝ նույնիսկ Նոր Նախիջևանից: Հյուսիսկովկասյան քաղաքների մի մասում հայ համայնքների վերջնական ձևավորումը, ազգային, կրոնական և հայ գաղթօջախներին բնորոշ այլ հատկանիշների համակցությամբ, տեղի է ունեցել 19-րդ դարի կեսերին, երբ Ղզլարի, Մոզդոկի և մյուս հնագույն ռուսահայ գաղթօջախներն արդեն զրկվել էին նախկինում շնորհված կայսերական արտոնություններից՝ սովորույթի ուժով միայն պահպանելով ինքնավարության, դավանանքի և տնտեսական մասնակի արտոնություններ: Ինչևէ, 19-րդ դարի երկրորդ կեսին արդեն Հյուսիսային Կովկասի վարչատնտեսական կարևոր կենտրոններում կային հաստատված համահավաք և ազգային կյանքով ապրող հայ համայնքներ:

19-րդ դարի առաջին տասնամյակներին հայ գաղթականության նոր խմբերի վերաբնակեցման հետևանքով համալրվում և բազմամարդ է դառնում Եկատերինոդարի հայ համայնքը: Վերջիններիս մեջ զգալի թիվ են կազմել նաև չերքեզահայերը: Դարի 80-ական թվականներին հայերը, որոնց թիվը միայն քաղաքում ավելի քան 300 տուն էր, նոր, կապիտալիստական արտադրահարաբերությունների արմատավորման պայմաններում զգալիորեն խթանեցին առևտրաարդյունագործության զարգացումը:

Կուբանի մարզի Մայկոպ քաղաքում հայկական գաղթօջախ է ձևավորվում 19-րդ դարի 60-ական թվականներին: Շահութաբեր առևտրից, ինչպես նաև Մայկոպի շրջակա ազատ և բարեբեր հողերից օգտվելու ձգտումով հայեր են վերաբնակվել այստեղ Նոր Նախիջևանից, Երևանից, Թիֆլիսից, Նախիջևանից և Կովկասի զանազան քաղաքներից: Դարավերջին Մայկոպը մեծ թվով հայ գաղթականներ է ընդունել Արևմտյան Հայաստանից: Դարի 80-ական թվականներին Մայկոպն ուներ 50 տուն հայ բնակչություն, որոնք մեծ մասամբ վաճառականությամբ էին զբաղվում[1]:

1777 թ. Ստավրոպոլի բերդի կառուցումից հետո հայ առանձին հատվածներ սկսում են վերաբնակվել այստեղ: Առաջին վերաբնակիչների թվում

[1] «Նոր դար», 1888, հ. 169, էջ 2-3:

կրկին առանձնանում էին Նորնախիջևանցի հայ վաճառականներն ու երկրագործները, որոնք աչքի առաջ ունեին ապագա առևտրաշահ քաղաքի հնարավորություններն ու շրջակա բարեբեր հողերի առկայությունը: 19-րդ դարի առաջին տասնամյակների վավերագրերն արդեն նշում են Ստավրոպոլում հայ համայնքի գոյության, հայկական աղոթատան և նրանում հայ քահանայի ներկայության փաստը:

Վլադիկավկազի նորակառույց բերդաքաղաքը ևս հանգրվանեց հայ գաղթականներ Կովկասի և Անդրկովկասի հայաշատ տարբեր շրջաններից: Կարճ ժամանակում տեղում ձևավորվեց փոքրիկ, բայց համահավաք հայկական գաղթօջախը, որը 19-րդ դարի 30-ական թվականների կեսերին ուներ իր եկեղեցին[1]:

19-րդ դարի առաջին կեսում հայկական փոքրիկ գաղթօջախ ձևավորվեց նաև Թերեքի մարզի Գրոզնի ամրոցում, որտեղ հայերը սկսել են բնակվել հիմնադրման առաջին իսկ օրից: Նրանք հիմնականում Գրոզնիում տեղակայված զինվորական գնդերի հայազգի զինծառայողներն էին, ինչպես նաև վաճառականներ: 19-րդ դարի 40-ական թվականների վերջին Գրոզնի ամրոցում արդեն հաստատվել էր փոքրիկ հայ համայնք: Հետագայում Գրոզնու հայերի թիվը զգալիորեն աճեց Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի տարբեր շրջաններից հայերի վերաբնակեցման հետևանքով: Վավերագրերի վկայությամբ, նրանց մեջ գերակշռել են մոզդոկցի հայերը և ղզլարահայերը: Հայեր են գաղթել այստեղ նաև Թիֆլիսից, Նախիջևանից, Թելավից և այլ տեղերից: Եվ 1913 թ. Գրոզնու հայ համայնքն արդեն ուներ 1200 անդամ:

Գեորգիևսկը և Կովկասյան գծի մյուս բերդաքաղաքների հարուստ տոնավաճառները չուտով դառնում են հայ վաճառականների կենտրոնացման կարևոր հենակետը: Կովկասի առաջին փոխարքա Պ. Պոտյոմկինի օրոք Նոր Նախիջևանից Գեորգիևսկ են հրավիրվում հայ վաճառականներ, որոնք, կապ հաստատելով չերքեզահայ վաճառականների հետ, աշխույժ առևտուր են սկսում լեռնականների հետ: 1783 թ. Գեորգիևսկում արդեն կար հայկական գաղութ, ուր հայերն ունեին իրենց առևտրական խանութաշարքը: Գեորգիևսկի հայ համայնքը հետագայում ևս համալրվում է Անդրկովկասից և ռուսահայ գաղթավայրերից եկած հայերով, սակայն նրանց մի մասն էր միայն այնտեղ մշտական բնակություն հաստատում: Ժամանակին Գեորգիևսկի հայերի հիմնական գաղթը ուղղվում է դեպի օրեցօր աճող, բուժավայրի համբավ հանած և տնտեսական աշխույժ կյանքով ապրող Պյատիգորսկ քաղաքը: 19-րդ դարի կեսերին զգալի թվով չերքեզահայեր Անդրկուբանից, իսկ հետագայում նաև Արմավիրից նույնպես փոխադրվում են Պյատիգորսկ: 19-րդ դարի 90-ա-

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, բդր. 88, վավ. 169:

կան թվականներին Պյատիգորսկում կար ձևավորված հայ գաղթօջախ՝ բաղկացած 90 տուն հայերից, որոնց մեծ մասը վաճառականներ էին, իսկ մնացածը՝ արհեստավորներ:

20-րդ դարի սկզբներին արդեն փոքրիկ հայ համայնքներ կային Ժելեզնովոդսկում, Բեշտաու և Մինեռալնիե-Վոդի ավաններում: Կիսլովոդսկի համալրված հայ գաղութն ուներ արդեն իր սեփական քահանան: Դարասկզբին, արևմտահայ նոր գաղթականության հետևանքով, կովկասյան հանքային ջրերի շրջանում հաստատված հայ համայնքները առավել բազմամարդ են դառնում: Նշված համայնքների թվում էր նաև Թեմիր Խան Շուրայի հայ համայնքը, որը կազմավորվել էր 19-րդ դարի 40-ական թվականների կեսերին: Նրա հիմնադրումը անմիջականորեն կապված էր հայազգի իշխան, գեներալ Բարսեղ Բեհբութովի անվան ու գործունեության հետ: Թ. Խ. Շուրայում 60-ական թվականների սկզբներին Մովսես Արղության երկայնաբազուկի հոգածությամբ կառուցվում է հայկական եկեղեցի: 19-րդ դարի 60-ական թվականների կեսերին Թ. Խ. Շուրայի հայ համայնքը բաղկացած էր 60 ծխից՝ 300-ից ավելի հայ բնակչությամբ: Սրանք տարբեր ժամանակներում գաղթել էին Ղզլարից, Մոզդոկից, Շամախուց, Արցախից և Թիֆլիսից: Նրանք մեծ մասամբ վաճառականներ էին, արհեստավորներ և զինվորականներ: 19-րդ դարի կեսերին է վերաբերում հայ համայնքի ձևավորումը Կասպից ծովի ափի նորակառույց Պետրովսկ նավահանգստում: Դարի 80-ական թվականների սկզբներին Պորտ-Պետրովսկը ուներ 40 տուն հայ բնակչություն, որոնք հիմնականում զբաղվում էին վաճառականությամբ և այգեգործությամբ: Դարավերջին Պետրովսկը հայ գաղթականների նոր խմբեր է ընդունում Անդրկովկասից, Իրանից և կովկասահայ գաղթավայրերից, որի հետևանքով տեղի հայ գաղթօջախը համալրվում և բազմամարդ է դառնում:

18-րդ դարի վերջերին կասպիական ափերից ռուսական զորքերի ետքաշվելու և վերջիններիս ուղեկցությամբ Դերբենդի և Մախուրի շրջաններից հայերի կատարած մասսայական գաղթի հետևանքով երբեմնի հայաշատ բնակավայրերը զգալիորեն թուլացան: Դերբենդի հայ բնակչության զգալի մասը, ինչպես արդեն նշվեց, Ղզլարի շրջակա գյուղերից բացի, հիմնականում հաստատվել էր Ղզլարում: Սակայն 19-րդ դարի սկզբներին երկրամասում ռազմաքաղաքական նոր իրադարձությունների հետևանքով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Դերբենդում հայ գաղթօջախի վերականգնման համար: Ռուսաստանի հետ միավորումը բախտորոշ նշանակություն ունեցավ թե առևտրաշատ քաղաքի և թե նրանում մնայուն հայ գաղթօջախի ձևավորման համար: Ավագի առկայությունը Դերբենդի հայ համայնքում, իսկ մի քանի տարի անց վերջինիս ներկայացուցչի ներկայությունը քաղաքային դատարանում պերճախոս վկայություն են Դերբենդում ձևավորված համահավաք հայ-

կական գաղթօջախի գոյության: 1824 թ. Դերբենդի պարետ, մայոր Ֆոն Աչերբերգի կողմից անցկացված մարդահամարի տվյալներով քաղաքի 11.060 բնակչից 239-ը հայեր էին:

19-րդ դարի կեսերից դեպի Դերբենդ հայ գաղթականության նկատելի հոսք է սկսվում Ղզլարից, Աստրախանից, Ղարաբաղից, Շամախուց, Թիֆլիսից, Իրանի հայաշատ տարբեր շրջաններից: 1890 թ. Դաղստանով ճանապարհորդելիս Դերբենդ է այցելում Ս. Բարխուդարյանցը, որը տեղի հայ գաղութի մասին գրել է. «Աստ ծովեզերքին բնակվում են հայերն ու ռուսները, այստեղ են վաճառանոցները ... Դերբենդում կա 150 ծուխ հայ, որից 310 արական և 314 իգական: Հայերը գաղթել են մեծ մասամբ Արցախից, Շամախուց և Ղզլարից»[1]:

***

Ռուսական կառավարությունը փաստորեն կազմակերպեց հայերի գաղթերը Թերեքի ավազան՝ հետապնդելով քաղաքական ու տնտեսական որոշակի շահախնդրություններ: Մեծամեծ խոստումների և սիրաշահելու միջոցով գաղթը իրականացնելիս ռուսական իշխանությունները, անշուշտ, հետամուտ էին նաև տերության ռազմաքաղաքական շահերին:

Հայ հատվածները կամովին և սիրահոժար լծվեցին Ռուսաստանի քաղաքականությանը՝ անձնական ազատություն և ապահովություն, հողեր ձեռք բերելու և բազմաթիվ այլ արտոնություններ ստանալու ակնկալությամբ: Ղզլարահայերի տարբեր վավերագրերում հաճախ էր նշվում, որ Սուրբ Խաչը (ուր կամովին, զանազան վայրերից հայեր էին փոխադրվել վաճառականության նպատակով) ռուսների կողմից լքելուց հետո և նրա փոխարեն Ղզլարի ամրոցը կառուցելու ժամանակ հայերը մտադրվել են վերադառնալ նախկին բնակատեղիները: Սակայն գեներալ Լևաշովը հայերին համոզել և բնակության է հրավիրել Ղզլարի նորակառույց բերդում, հուսադրել կայսերական ողորմածությամբ, թե նրանք ընդմիշտ, և ի տարբերություն ռուսական մյուս քաղաքների, ազատ կլինեն ամեն տեսակի հարկեր վճարելուց: Այսուհանդերձ, ռուսական կառավարության որոշակի հետաքրքրությունները Թերեքի ավազանի բնակեցման, տնտեսական յուրացման և այլ հարցերում զգալի չափով կանխորոշում էին նորաստեղծ հայ համայնքի ինքնավարության, իրավունքների և պարտականությունների շրջանակները: Ղզլարը հիմնադրվեց որպես ռուսական քաղաք-ամրոց և ոչ որպես հայաքաղաք կամ, ասենք, քաղաք հա-

[1] Բարխուդարյանց Ս., Աղվանից աշխարհ և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 110, 120:

յերի համար, ինչպիսիք էին 18-րդ դարի երկրորդ կեսին հիմնադրված Նոր Նախիջևանն ու Գրիգորիոպոլը: Այլ հարց է, որ պատմական անցքերի բերումով քաղաքի առաջին հիմնադիրների ու բնակիչների թվում գերակշռողը հայերն էին, որն էլ կանխորոշեց նրանց առաջատար դերը քաղաքի հետագա զարգացման բոլոր բնագավառներում: Ղզլարում հայկական գաղթավայրի ձևավորումը, փաստորեն, տեղի չի ունեցել տարերայնորեն, այլ կազմակերպվել է ռուսական կառավարության կողմից:

Ղզլարահայ, իսկ քիչ ավելի ուշ նաև մոզդոկահայ համայնքներին որոշակի արտոնյալ դոյավիճակով օժտելը բխում էր ժամանակի պահանջներից: Կառավարության կողմից հայ համայնքների համար մշակվող առանձին արտոնություններն ու իրավունքները և այդ շրջանակներում նախատեսվող տնտեսական ձեռնարկումները ոչ միայն կապահովեին նորագաղթ հայերի նյութական բարեկեցությունը, կշահագրգռեին նորանոր վերաբնակիչների գալը, այլև կդառնային պետական գանձարանը հարստացնելու հուսալի աղբյուր:

Սակայն արդեն 18-րդ դարում, առավել ևս հետագայում, ոչ միայն կառավարող վերադաս մարմինների, այլև տեղական իշխանությունների կողմից ոչ մեկ անգամ փորձեր են արվում սահմանափակելու կամ լիովին վերացնելու Ղզլարի հայ համայնքի հողային, իրավական և այլ արտոնությունները: Դրանց ընդդիմացել են ոչ միայն համայնականները, այլև իշխանությունների առավել հեռատես ներկայացուցիչները և շատ հաճախ հիմնավոր փաստարկումներով ապացուցել այս կամ այն որոշման ժամանակավրեպ կամ սխալ լինելը:

Օգտվելով որոշակի արտոնյալ դոյավիճակից՝ ղզլարահայերը չինարարական և առևտրատնտեսական լայն գործունեություն են ծավալում՝ Ղզլարի շրջակա ճահճուտները վերածելով ծաղկուն և մրգառատ այգիների: Հայ առևտրականները և արհեստավորները քաղաքում հիմնել էին բազմաթիվ առևտրական կրպակներ, ամբարներ, պահեստներ, որոնց համար նրանք հողատուրք չէին վճարում: Ընդհանրապես հայ համայնքը, թեև ոչ պաշտոնապես, այդուհանդերձ, ազատված էր պետական մի շարք հարկերից ու տուրքերից:

1763 թ. հրապարակված կայսերական մանիֆեստը ապահով հանգրվան էր խոստանում Մոզդոկ բնակավայր փոխադրվողներին՝ նախատեսելով Դոնի կազակներին համահավասար արտոնություններ, այն է, անմաքս և ազատ առևտրի իրավունք, ազգային սովորույթներով առաջնորդվող դատարանի հիմնում և այլն[1]:

[1] АВПР, ф. Кизл. и Мозд. дела, 1762-1772 , д.1, л.139.

Ղզլարի և Մոզդոկի հայ համայնքները, թեև կայսերական հատուկ արտոնագրեր չստացան, սակայն կառավարությունը, հաշվի առնելով բնակավայրերի սահմանամերձ, ռազմական գծի վրա գտնվելու հանգամանքը, ինչպես նաև երկրամասի արագ և ուժգին բնակեցման և տեղերում առևտրատնտեսական կյանքի աշխուժացման անհրաժեշտությունը, պարբերաբար, բայց որոշակի շրջանակներում առանձին արտոնություններ և իրավունքներ էր վերապահում նորաստեղծ համայնքներին: Թեև դրանք ընդհանուր էին և վերաբերում էին քաղաքներում հաստատված տարազգի համայնքներին, սակայն առանձնակի ընդգծվում և շեշտվում էին կոնկրետ հայ համայնքներին ընձեռված առանձնաշնորհումների շրջանակները:

18-րդ դարի 80-ական թվականների կեսերին կովկասյան իշխանություններին ուղղված կայսերական մի շարք հրովարտակները, սահմանագծելով և որոշելով ռուսահպատակ օտարերկրացիներին, այդ թվում և հայերին շնորհվելիք արտոնությունների շրջանակները, միաժամանակ դնում էին պարտադիր մի պայման՝ դրանք ամենևին չպիտի հակասեին համապետական գործող օրենքներին և ձեռնարկումներին: 1783 և 1784 թթ. Գր. Պոտյոմկինին ուղղված կայսերական հրովարտակների, հայկական մագիստրատի և դատարանի հաստատման թույլտվությանը զուգահեռ ընդգծվում էին հայ համայնքների իրավական նորմերն ու դրանցից օգտվելու պայմանները:

Հայ գաղթականներին Ռուսաստանի հովանու տակ ներգրավելն ու արտոնություններով ապահովելը բոլոր ժամանակների համար էլ եղել է կարևոր քաղաքական և դիվանագիտական քայլ: Կովկասը վերջնականապես նվաճելու, իսկ այնուհետև Անդրկովկաս ներթափանցելու ձգտումով տարված Ռուսաստանը կովկասյան ժողովուրդների, մասնավորապես հայերի մեջ համակիրներ և աջակիցներ գտնելու միտում ուներ: Խոստումներով և զիջումներով սիրաշահվում էր մի ամբողջ ժողովուրդ , որը, ապավինած հյուսիսի հզոր հարևանին, նրա հետ էր կապում օտարի լծից ազատագրվելու հույսը: Եվ երբ 18-րդ դարի վերջին Ղուկաս կաթողիկոսը Արղությանի միջոցով շնորհավորական նամակ հղեց Պավել 1-ինին՝ կայսերական գահին բազմելու կապակցությամբ և հայերի արտոնությունները պահպանելու ու շարունակելու խնդրանքով, կայսրը չհապաղեց հայոց կաթողիկոսին ուղարկել 1799 թ. հոկտեմբերի 28-ի իր բարձրագույն հրովարտակը:

Նախկինում հաստատված հայկական գաղթավայրերը իրենց հասարակական-քաղաքական և առևտրատնտեսական գործունեությամբ բազմիցս հաստատել էին արտոնյալ պայմաններում ապրելու և գործելու նպատակահարմարությունը: Բազմաթիվ պաշտոնական գրություններում, խնդրագրերում հայ համայնքների ներկայացուցիչները հաճախ ընդգծում էին այն պարզ ճշմարտությունը, որ արտոնյալ պայմաններից օգտվելը անհրաժեշտ էր ոչ

միայն հիմնադրման տարիներին, երբ նորեկ հայ գաղթականները տնավորվելու առաջին քայլերն էին անում ամայի, անմարդաբնակ և անծանոթ երկրամասում, այլև հետագայում համայնականների համար հուսալի և բարեկեցիկ կյանք ապահովելու նպատակով: Նոր հրովարտակը Ատրպախանի հետ միասին տարածվում էր նաև Ղզլարի ու Մոզդոկի հայ համայնքների վրա, պաշտոնապես հաստատելով նախկինում նրանց համար խոստացված, բայց մասամբ միայն իրագործված արտոնությունները:

Բարձրագույն թույլտվությամբ Ատրպախանում, Ղզլարում և Մոզդոկում բնակվող հայերը համարվում էին կայսրության ժամանակավոր հպատակներ: Հրամայվում էր՝ ազգային սովորույթների և իրավական նորմերի համաձայն դատ ու դատաստան վարել Ատրպախանում հիմնված ասիական ընդհանուր դատարանի սկզբունքով և հայ համայնքից ընտրված անդամների միջոցով: Հայ վաճառականները ազատվում էին ռուսական վաճառականական գիլդիաներում գրանցվելուց: Մետաքսամշակությամբ զբաղվող հայերը և նրանց տները ազատվում էին զորքին օթևանելու պարտականությունից, քանի դեռ նրանք զբաղվելու են արդյունագործության այդ ճյուղով: Փոխարենը նախատեսվում էր դրամ գանձել նրանցից և հատուկ օթևաններ վարձել զորքի համար: Հրովարտակը Ղզլարի հայերին իրավունք էր վերապահում հողատուրք վճարելու պայմանով վարձակալել Ղզլարի շուրջ գտնվող հողերը: Նույն պայմանով թույլատրվում էր օգտվել նաև ձկնորսավայրերից: Ատրպախանի, Ղզլարի և Մոզդոկի հայերին թույլատրվում էր կատարել ազատ և անմաքս առևտուր՝ թույլատրված բոլոր ապրանքներով և սեփական մանուֆակտուրային արտադրանքով՝ ինչպես Ռուսաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, այս վերջին դեպքում արդեն վճարելով առևտրական կանոնադրությամբ նախատեսված մաքսը: Խրախուսվում էր զարգացնել ամեն տեսակի արդյունագործություն և արդյունաբերություն՝ սեփական ցանկություններին և ունակություններին համապատասխան: Ընդհանուր սկզբունքներով և հիմնական հարցերում արտոնագիրը արտահայտում էր Մոզդոկի և Ղզլարի հայ համայնքների շահերը: Նկատելի էր նաև տակավին 18-րդ դարի կեսերից ղզլարահայերի և մոզդոկհայերի բազմաթիվ խնդրանքների, առաջարկությունների և առաջադրած պայմանների որոշակի արտացոլումը:

Ղզլարի և Մոզդոկի հայ համայնքները նույնպես այդ նույն հրովարտակով ազատվում էին պետական հարկերից և տուրքերից, այն տարբերությամբ միայն, որ նրանց համար ժամկետ չէր սահմանվում: Այդ էր պատճառը, որ արտոնագրի ժամկետը լրանալուց հետո էլ նրանք ոչ մի տեսակի հարկադրման չենթարկվեցին: Այս հանգամանքը հայ համայնքների կողմից դիտվում և ներկայացվում էր որպես արդարացում իրենց արտոնյալ գոյավի-

ճակի, մինչդեռ իշխանություններն այն համարում էին ժամանակին թույլ տրված վրիպում՝ արժանի ճշտման ու վերանայման:

Արտոնագիրը տնտեսական զարգացման ազատ ուղի էր հարթում տակավին 18-րդ դարի վերջերից համայնքների ներսում ձևավորվող առևտրաարդյունաբերական շերտերի համար և որոշակի պաշտպանում նրանց շահերը: Արտոնագիրը չանտեսեց նաև հայ հոգևորականությանը՝ վերջինիս համար ապահովելով արտոնյալ վիճակ, ընձեռելով նրանց լայն հնարավորություններ և իրավունքներ: Կայսերական հրովարտակը հայոց կաթողիկոսին ճանաչում էր Ռուսաստանում բնակվող հայերի հոգևոր պետ, իսկ նրա ներկայացուցիչ Հովսեփ Արղությանին թույլատրում էր վանքեր ու եկեղեցիներ կառուցել, Ատրպախանում ունենալ հայոց հոգևոր կոնսիստորիա և ընդհանրապես ազատորեն դավանել հայոց կրոնը:

Կայսերական հրովարտակում տեղ գտած արտոնությունների հիման վրա և դրանց շրջանակներում ձևավորվեց Ղզլարի և Մոզդոկի հայկական գաղթավայրերի ինքնավարությունը: Ընդհուպ մինչև 19-րդ դարի սկզբները, այսինքն, մինչև հայկական դատարանների հիմնումը Ղզլարում և Մոզդոկում, հայ համայնքների ներսում դատ ու դատաստանը իրականացվել են համայնքի ավագի կամ ծերերի կողմից, որոնք բանավոր, վիճող կողմերին համոզելու եղանակով հաշտեցրել են նրանց և համապատասխան որոշում կայացրել: Հայ համայնքների գույքային, մուրհակային և այլ հարցերը քննվել են Ատրպախանի հայկական-ասիական դատարանում, իսկ քրեական գործերը՝ 1793 թ. Մոզդոկում բացված վերին սահմանապահ դատարանում, որի կազմում ընդգրկված էին նաև հայ և վրաց համայնքներից 2-ական անդամներ. 1802 թվականից վերջիններս մտան նաև գավառային դատարանի կազմը[1]:

1799 թ. կայսերական արտոնագրի թույլտվությամբ 1800 թվականին Ղզլարում և Մոզդոկում միաժամանակ հիմնվում են հայկական դատարաններ, որոնք 19-րդ դարի սկզբների վավերագրերի մի մասում հիշատակվում են նաև որպես ռատհաուզներ[2]:

Սկզբնական շրջանում հայկական դատարանը, որպես համայնքի ինքնավարության օրգան, իր ձեռքում էր կենտրոնացրել ավելի մեծ իրավունքներ, քան նախատեսված էր արտոնագրով: Ղզլարի հայկական դատարանը, դատական գործերից բացի, տնօրինում էր նաև համայնքի առօրյա կյանքն ու աշխատանքները, հետևում հարկերը ժամանակին հավաքելուն, զբաղվում հա-

[1] Ларина В., Бежанов И. Моздок, Орджоникидзе, 1970, с.24.

[2] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 16:

մայնքի իրավական ու վարչատնտեսական գրեթե բոլոր գործերով: Մինչև 1838 թ. հայ համայնքի ներսում վաճառականական անձնագրեր տալը և դրան առնչվող այլևայլ հարցերի կարգավորումը նույնպես հայկական դատարանի իրավասությանն էին պատկանում: Դատավարությունը, ինչպես նաև ամբողջ գործավարությունը ընդհուպ մինչև 19-րդ դարի 40-ական թվականները կատարվել են հայերեն լեզվով, Աստրախանի հայոց դատաստանագրքի հիման վրա, որը և գալիորեն հատկանշել է հայկական դատարանի անկախ և ինքնուրույն լինելու հանգամանքը: Դատավարության հիմքում գրավոր օրենքների կիրառումը հայկական դատարանի համար կենսական պահանջ էր. առանց դրա ազգաբնակչությունը մատնված կլիներ դատավորների կամայականությանը: Բացի այդ, ձեռքի տակ չունենալով դատաստանագիրք՝ հենց իրենք՝ դատավորները, կդժվարանային լուծել վիճելի հարցերը:

Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի հայկական դատարաններին հատուկ ազգային սովորույթներին և ավանդույթներին խարսխված ու դրանց օգնությամբ դատ ու դատաստանը իրականացնելու հատկանիշներն էին, որ բնորոշեցին համայնքների ազգային պատկերը, ընդգծեցին նրանց ինքնուրույն գոյությունը:

Ավելի ուշ շրջանի վավերագրերից տեղեկանում ենք, որ թեև ոստիկանական մասը Ղզլարում հանձնված էր քաղաքի ոստիկանական վարչությանը, այդուհանդերձ, հայկական դատարանը ձգտել է ղզլարահայերին վերաբերող քաղաքացիական զանազան գործերի քննությունը վերցնել ոստիկանական վարչությունից և ենթարկել հայկական դատարանի իրավասությանը:

Ղզլարի, Մոզդոկի, ինչպես նաև Աստրախանի հայկական դատարանները գործեցին մինչև 1841 թվականը, ի տարբերություն Նոր Նախիջևանի հայկական դատարանի, որը պահպանվեց ընդհուպ մինչև դարի 60-ական թվականների վերջերը: Անկասկած, առաջինների համար հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ նրանք ոչ թե միատարր և ամփոփ հայաբնակ քաղաքներ են, ինչպես օրինակ, Նոր Նախիջևանը, այլ բազմազգ, տարալեզու և տարբեր կրոն դավանող ժողովուրդների բնակավայրեր: Դրանց համար համընդհանուր կառավարման մարմինների և օրենքների հաստատումը անհրաժեշտ էր և հրատապ: Ղզլարի հայկական դատարանին էր ենթարկվում տակավին Ղզլարի շուրջը հաստատված Դերբենդի, Մոլախալիլ և Ղարաջալիլ հայկական գյուղերի բնակչությունը, թեև վերջիններս, 1799 թ. կայսերական չնորհագրով սեփական դատարան ունենալու իրավունք էին ստացել:

Աշխարհիկ դատարանից բացի, Ղզլարի և Մոզդոկի հայկական գաղթավայրերում գործել են նաև համայնքների հոգևոր կառավարչությունները: Հոգևոր կառավարչությունը տնօրինել է հայ համայնքի հոգևոր կյանքի զանազան հարցերը, սահմանել եկեղեցու աստիճանավորների պարտակա-

նությունները և իրավասության շրջանակները, համայնքից գանձվող հասույթների չափը և տնօրինման եղանակները: Հոգևոր կառավարչության միջոցով իրականացվել է կապը Էջմիածնի Մայր աթոռի հետ:

Ձևավորվելով օտար միջավայրում՝ Հյուսիսային Կովկասի հայ համայնքները ոչ միայն չձուլվեցին տարազգ և տարալեզու այդ խառնարանում, այլ ազգային սովորույթների և բարքերի անխոնջ հետևողությամբ պահպանեցին ազգի դիմապատկերը: Հայկական գաղթավայրերի ինքնավար գոյությունը այդ ամենը ապահովող վճռորոշ լծակն էր, իսկ առանձնաշնորհումների համար հարատև պայքարն ուղղված էր համայնքների ինքնուրույնությունը և անկախությունը պահպանելուն: Առանձին համայնքներով հաստատվելու հանգամանքը հայ համայնքներին ձերբազատում էր դրսի օտարամուտ միջամտություններից:

Եկեղեցու, դպրոցի, ազգային և հասարակական զանազան կազմակերպությունների շուրջը համախմբված կովկասահայերը հնուդայում ևս կարողացան պահպանել ազգային ինքնատիպությունը, կենցաղավարության, վարքի և բարքի և նիստուկացի մեջ վաղեմի սովորույթներով առաջնորդվելու ձգտումը:

Արտոնություններից զատ, հայկական գաղթավայրերի բնակչությունն ուներ մի շարք պարտավորություններ և պարտականություններ, որոնց բազմազանությունը և կատարման դժվարությունները երբեմն զանցառում էին արտոնագրի առանձնաշնորհումները: Առաջին հայացքից աննշան թվացող այդ պարտավորությունները, որոնք հիմնականում ծանրացած էին աշխատավոր մասսաների ուսերին, շատ հաճախ չարաշահվում էին իշխանությունների կողմից: Հայկական գաղթավայրերի բնակչությունը քանիցս լրացուցիչ հարկադրումների է ենթարկվել տեղական իշխանությունների կողմից: Վերջիններս, անտեսելով համայնքների առանձնաշնորհումները, շատ հաճախ անժամանակ որոշումներ էին կայացնում, անհարկի տուրքերով ծանրաբեռնում հայերին: Դա առաջացնում էր վերջիններիս արդարացի բողոքը, երբեմն էլ վերաճելով բացահայտ անհնազանդության:

Աշխարհիկ հարկերից զատ, հոգևոր իշխանություններին ևս զգալի միջոցներ էին տրվում: Եկեղեցու հասույթները, որոնք գոյանում էին զանազան ծիսակատարություններից և արարողություններից, նվիրաբերություններից, եկեղեցապատկան հողատարածքից, գործարաններից և շինություններից, մասամբ օգտագործվում էին Էջմիածնին և Աստրախանի թեմին հասանելիք գումարի հատուցման, մասամբ էլ՝ եկեղեցական շինությունների, հոգևոր դպրոցների և հոգևոր դասի ապահովման նպատակով:

***

Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները տնտեսական ուրույն զարգացում ապրեցին: Ղզլարը հիմնադրվել էր շատ սահմանափակ հողատարածքի վրա: Բերդավանի մոտակա հարևանները կազակային ստանիցաներն էին, որոնց բնակիչները, ծանրաբեռնված զինվորական ծառայությամբ, մասամբ նաև զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Նման պայմաններում հայ վերաբնակիչները ստիպված էին ինքնուրույն սկսելու իրենց տնտեսական կյանքը: Երկրագործության համար բավարար և անհրաժեշտ հողերի բացակայությունը զգալիորեն սահմանափակեց դաշտավարության՝ հացահատիկային կուլտուրաների մշակության հնարավորությունը: Այդուհանդերձ, Ղզլարի հայ զանգվածը, բնակչության առաջնահերթ պահանջները բավարարելու նպատակով, թեև սուղ պայմաններում, բայց ձեռնամուխ եղավ նաև հացահատիկային կուլտուրաների մշակությանը: Սակայն Ղզլարի շրջակայքում աճեցվող հացահատիկը մասամբ էր միայն բավարարում բնակչության պահանջները, պահանջարկի մնացած մասը ձեռք էր բերվում Մոզդոկի շրջանից:

Առաջին պլան էր մղված եկամտաբեր և մեծ պահանջարկ ունեցող կուլտուրաների՝ բրնձի, խաղողի, բամբակի, քունջութի, տորոնի մշակումը, մանավանդ որ դրանց անհրաժեշտությունը նախատեսվել էր նաև պաշտոնապես՝ կառավարության կողմից:

Անասնապահությունը նույնպես, հանգամանքների բերումով, տարածում չստացավ ղզլարահայերի մեջ: Հիմնականում զբաղված լինելով առավել եկամտաբեր այգեգործությամբ, մեղաքսամշակությամբ և դրանցից ստացվող արտադրանքի վաճառքով, ղզլարահայերը բավարարվել են հարևան կիսաքոչվոր նողայներից գնված անասուններով և անասնապահական մթերքներով: Այսուհանդերձ, ղզլարահայերը անկարող էին լիովին անտեսել անասնապահությունը, քանի որ անասնապահական մթերքներից բացի, անհրաժեշտ էր ունենալ նաև արհեստագործական (իսկ հետագայում նաև արդյունաբերական) հումք և փոխադրամիջոց:

Երկրագործությամբ և այգեգործությամբ զբաղվելու նպատակով հողեր էին հատկացվել նաև Մոզդոկում հաստատված հայերին: Սակայն երկրագործության, մասնավորապես դաշտավարության համար անհարմար բնահողի առկայությունը Մոզդոկի շրջակայքում, անկախ հայ երկրագործների գործադրած ջանքերից, ցանկալի արդյունքի հասցնել չէր կարող: Այդ իսկ նկատառումներով, մոզդոկաբնակների մի մասը, այդ թվում և հայերը, դերադասեցին ագարակներ հիմնել քաղաքից դուրս, առավել ընդարձակ և նպաստավոր հողատարածքում:

Գյուղատնտեսական կուլտուրաների մշակությամբ առավելապես զբաղվում էր երկրամասի գյուղական վայրերի հայ բնակչությունը: Այսպես, եթե Ղզլարին շրջակա 3 հայկական գյուղերի բնակչությունը, տեղական բնակլիմայական պայմաններից ելնելով, պարապում էր հիմնականում այգեգործությամբ և խաղողագործությամբ, ապա Մոզդոկի մոտ գտնվող Կասաևո-Յամա հայաբնակ գյուղի բնակչությունը, հարմարավետ հողատարածքի պայմաններում՝ նաև դաշտավարությամբ և անասնապահությամբ: Եդեսիայի (նախկինում՝ Կասաևո-Յամա) հայերը աճեցնում էին հիմնականում ցորեն և կորեկ, քիչ քանակությամբ նաև վարսակ և աշորայի հացահատիկ: 19-րդ դարի կեսերից սկսեցին մշակել նաև կտավատ: Հայերը զբաղվում էին նաև այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Աճեցնում էին նաև խաղող: Ունեին թթենու պլանտացիաներ, զբաղվում էին մետաքսի մշակությամբ, իսկ արտադրանքը, տեղում սպառելուց բացի, վաճառքի էին հանում: Եդեսիաբնակ հայերի մի մասը, հատկապես ագարակ ունեցողները, զբաղվում էին նաև անասնապահությամբ:

Հացահատիկի պակասը Ղզլարի շրջանում լրացվում էր բրնձի (սորոչինյան հացահատիկ) ցանքսերի ավելացմամբ, որի հիմնական ներմուծողներն ու մշակողները Այսրկովկասից գաղթած հայ գյուղացիներն էին: Ղզլարի շրջակայքում բրձնի մշակումը սկսվել է 1749 թվականից: Սորոչինյան կոչվող հացահատիկի մշակությունը չեչեններն ընդօրինակել են հայերից: 1826 թ. պաշտոնական տեղեկագրի համաձայն, Ղզլարում բրնձի մշակությամբ զբաղվում էին բացառապես հայերը: Նրանցից 6-ը ազնվականներ և զինվորականներ էին, իսկ 78-ը՝ Ղզլարի քաղաքացիներ[1]: 1835 թ. մեկ այլ պաշտոնական տեղեկագրի համաձայն, Ղզլարի շրջանում բրնձի մշակությամբ զբաղվել են 53 ղզլարցիներ, որոնց մեծամասնությունը (ըստ ներկայացված անվանական ցուցակի՝ 98 տոկոսը) հայեր էին:

18-րդ դարի կեսերից ղզլարահայերը զբաղվում էին նաև քունջութի, բամբակի, տորոնի, իսկ ավելի ուշ՝ նաև դեղձանների և կապարի մշակությամբ , որոնք եկամտաբեր էին և լայն պահանջարկ ունեին ռուսական շուկաներում: Քունջութի և բամբակի մշակությունը Ղզլարի շրջանում շարունակվեց մինչև 19-րդ դարի 30-ական թվականների կեսերը, բայց հետագայում գրեթե լիովին անտեսվեց հայ երկրագործների կողմից: 18-րդ դարի կեսերից լայն տարածում է ստանում ներկատու բույսերի մշակությունը, որոնց նպատակահարմարությունը և աճեցման հնարավորությունները դեռևս 1766 թ. նկատել էր Ք. Լիդենը՝ նահանգապետին ներկայացված զեկուցագրում: Տո-

[1] Чекменов С.А. Социально-экономическое развитие Ставрополя и Кубани в конце XVIII в. и в первой половине XIX в., Пятигорск, 1967,с.150.

րոնը, դեղնաներկը, ինչպես նաև կապարի թուփը գրեթե ամբողջությամբ վաճառքի են հանվել Աստրախանում, Նիժնի Նովգորոդում, Նոր Նախիջևանում և այլուր: Ղզլարի շրջանում աճեցվող տորոնը (որդան կարմիր) բարձր էր գնահատվում Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս: Ղզլարի վաճառականները (այդ թվում և հայերը) այն փոխադրում էին Աստրախան, իսկ այնտեղից էլ կայսրության տարբեր քաղաքներ: Թերեքի ավազանում աճեցվում էր նաև տզկանեփ (գերչակ): Նրա մշակությամբ զբաղվում էին մի քանի ստանցիաներում, ինչպես նաև Ղզլարի և Մոզդոկի հայերը, բայց ոչ ձիթհանման, այլ այգիների և բանջարանոցների արտաքին տեսքի գեղեցկացման նպատակով[1]:

Արևելյան Կովկասում առաջինը հայերը նախաձեռնեցին չաքարեղեգնի մշակումը: 1835 թ. ղզլարահայ Ե. Մանվելովը Լենքորանից Ղզլար փոխադրեց և աճեցրեց չաքարեղեգնի արմատներ:

Որոշակի էր հայերի ներդրումը երկրամասում այգեգործության, բանջարաբոստանային կուլտուրաների մշակության գործում: 18-րդ դարի 80-ական թվականների կեսերին Ղզլարին շրջակա այգիներում նրանք աճեցնում էին հիմնականում խաղող, ինչպես նաև խնձորենի, ծիրանենի, սալորենի, տանձենի, բալենի, թթենի: Բանջարանոցներում և բոստաններում մշակում էին սեխ, ձմերուկ, զանազան կանաչիներ, լոբի, բադրիջան, վարունգ և այլն, որոնց մի մասը անծանոթ էր եկվոր ռուս երկրագործներին: Բանջարանոցներ ուներ ղզլարահայերի մեծ մասը: Տնամերձ հողակտորներից ստացված բանջարեղենը հիմնականում սպառվում էր տեղում: Մի մասն էլ առաքվում էր Աստրախան՝ վաճառքի: Մոզդոկում, դարի վերջերին, քաղաքամերձ 15 նորատունկ այգիներից բացի, զգալի թիվ էին կազմում տնամերձ այգիներն ու բանջարանոցները, որոնց արտադրանքը՝ միրգ, վարունգ, սեխ, բակլա և այլն, մեծ մասամբ սպառվում էր տեղում:

Յուրահատուկ նշանակություն ուներ խաղողագործությունը: Թերեքի ավազանում այդ նոր կուլտուրան մեծածավալ զարգացում ստացավ և շատ եկամտաբեր էր: Խաղողագործությամբ և գինեգործությամբ զբաղվում էին նաև նախակովկասում վաղուց բնակություն հաստատած կազակները: Սակայն տնտեսության այդ ճյուղերը երկրամասում լայն տարածում ստացան հատկապես 18-րդ դարի կեսերից՝ հայերի և վրացիների վերաբնակեցումից հետո[2]: Թերեքի ավազան գաղթած հայերն իրենց հետ Անդրկովկասից, Դերբենդից, Իրանի կովկասյան տիրույթներից բերեցին խաղողի նոր տեսակի վազեր և այդ

[1] "Кавказ", 1848, №21.

[2] ЦГВИА, ф. ВУА, д. 18570, л.85.

կուլտուրայի մշակության լավ ավանդույթներ: 18-րդ դարի երկրորդ կեսին, շնորհիվ հայ և վրացի վերաբնակիչների, խաղողագործությունը Թերեքի շրջանում և հատկապես Ղզլարում դարձել էր տնտեսության հիմնական ճյուղը: Շուտով, կառավարության հովանավորող քաղաքականության և հայ երկրագործների նախաձեռնության շնորհիվ Ղզլարի ճահճուտները վերածվեցին խաղողի և այլ մրգատու այգիների: Ղզլարահայերին չհագեցնելու նպատակով կառավարությունը մոտ մեկ հարյուրամյակ շարունակ այգետերերից յուրաքանչյուրին խաղողի մեկ տնկած վազի դիմաց 5-ական կոպեկ էր հատուցում, իսկ Մոսկվայում պետական հատուկ տեղ էր հատկացված Ղզլարից բերված գինիների պահեստավորման համար: Դարասկզբից Ղզլարում հիմնվեց պետական այգի, իսկ քիչ անց՝ նրան կից նաև գինեգործական ուսումնարան[1]: Ղզլարը ակնհայտորեն առանձնանում էր շրջապատի բնակավայրերից խաղողի ընդարձակածավալ այգիներով: 1785 թ. տվյալներով, Ղզլարի շրջակայքում հաշվվում էին 567 այգիներ, հիմնականում՝ խաղողի[2]:

Հյուսիսկովկասյան բնակավայրերի շարքում Ղզլարը աչքի էր ընկնում նաև թթենու լայնածավալ այգիներով: 18-րդ դարի սկզբներից ռուսական կառավարող շրջաններում մեծ ուշադրություն էր դարձվում հարավային երկրամասում, մասնավորապես Թերեքի ավազանում (ուր կլիմայական նպաստավոր պայմաններ կային թթենու աճեցման համար) շերամապահության և մետաքսամշակության զարգացմանը: Հայրենական մետաքսագործություն ստեղծելու նպատակով խրախուսվում էր նաև այդ կուլտուրայի մշակությունը լավ ծանոթ հայերի և վրացիների բնակեցումը Արևելյան Կովկասում: Դեռևս 1718 թ. Թերեքի ափին հողեր են տրամադրվում հայազգի Սաֆար Վասիլևին՝ թթենիների աճեցման և մետաքսի մշակության համար: Տարբեր արտոնություններ շնորհումը նպատակ ուներ չահագրգռել և նորանոր վարպետ-մետաքսագործներ հրավիրել Իրանի հայաշատ շրջաններից: Ղզլարին շրջակա թթենու առատ ծառատունկերը լայն հնարավորություններ ընձեռեցին երկրամասում մետաքսի մշակությունը արմատավորելու և զարգացնելու համար: Շերամապահությամբ զբաղվում էին Ղզլարի հայ բնակիչներից չատերը, որոնք, 18-րդ դարի կեսերից, խնդրագրով լրացուցիչ հողամասեր էին ձեռք բերել թթենիների աճեցման համար[3]:

19-րդ դարի 30-ական թվականների կեսերին միայն Ղզլարի շրջակայքում հայերն արդեն աճեցրել էին 500.000 թթենի և տարեկան մինչև 75 փութ

[1] Казбек Г. Военно-статистическое описание Терской области, ч. 1, Тифлис, 1848, с. 160.

[2] ЦГВИА, ф. ВУА, д. 18570, л.85.

[3] ЦГА Даг. АССР, ф. 379, оп.2, д.49, л.6,60,73.

մետաքս էին արտադրում: Թթենիների աճեցմամբ և հում մետաքսի մշակությամբ զբաղվում էին հատկապես հայաբնակ վայրերում: Թթենու առատ ծառատունկերով աչքի էին ընկնում Մոզդոկը (1825 թ.՝ 27.352 թթենի), Ղզլարի երեք հայկական գյուղերը (միասին՝ 74.480 թթենի), Փարփուչ հայաբնակ գյուղը (45.018 թթենի), Գեորգիևսկը (2.001 թթենի), Ստավրոպոլը (43.088 թթենի), Սարաֆիաննիկովո գյուղը (1.197 թթենի) և այլն[1]: Թթենիների մեծամասնությունը պատկանում էր նշված տեղերում բնակվող հայերին, որոնք երկրամասում հում մետաքսի հիմնական մշակողներն էին:

Արհեստագործությունը հյուսիսկովկասյան հայկական գաղթավայրերի տնտեսական կյանքի կարևոր ճյուղերից մեկն էր: Ղզլարը, Մոզդոկը և մյուս հայկական գաղթավայրերը համալրող հայ գաղթականների մեջ նկատելի թիվ էին կազմում արհեստավորները, որոնք նոր պայմաններում և տեղական պահանջարկին համապատասխան արմատավորել և զարգացնում էին արհեստագործության այս կամ այն մասնաճյուղը:

Արհեստների արմատավորման և զարգացման կարևոր նախապայման էին հումքի համապատասխան բազայի առկայությունը և բնակչության անմիջական պահանջարկը այս կամ այն արհեստագործական արտադրանքի նկատմամբ: Ղզլարի և Մոզդոկի հայ արհեստավորները աշխատում էին ներմուծված հումքի հիման վրա: Շուկաներում գնված անասունների կաշին և մորթին օգտագործվում էր կոշկակարության, գդակագործության, մուշտակագործության և մյուս արհեստների համար: Առևտրի միջոցով ձեռք բերված երկաթը, պղինձը, փայտը, ոսկին, արծաթը և այլն նպաստում էին հայերի համար ավանդական դարձած մի շարք այլ արհեստների՝ դարբնության, հյուսնության, ոսկերչության, արծաթագործության զարգացմանը:

Ղզլարում, Մոզդոկում և մյուս հայաբնակ վայրերում հայ արհեստավորները առևտրական շարքերին կից զբաղեցնում էին կրպակներ, որտեղ և պարապում էին նախընտրած արհեստով: Մի շարք բնակավայրերում լայն տարածում էին գտել արհեստագործության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք էին տակառագործությունը, հյուսնությունը, աղյուսագործությունը և այլն: Գրեթե բոլոր հայաբնակ վայրերում տարածված էր և բնակիչների նախասիրած զբաղմունքն էր գորգեր և կարպետներ գործելը: Կանայք զբաղվում էին արհեստագործության մի շարք այլ ճյուղերով ևս՝ բրդի վերամշակումով, ոչխարի, այծի և ուղտի բրդից թելի ստացմամբ և ներկմամբ: Ղզլարում տարածված էր նաև ջուլհակությունը, որով նույնպես միայն կանայք էին զբաղվում:

[1] Государственный архив Ставропольского края (ГАСК), ф.79, оп.1, д.342, л. 3 об.-4.

Հայկական գաղթավայրերում մեծ հեղինակություն էին վայելում նաև արծաթագործներն ու ոսկերիչները, որոնց արտադրանքը բարձր գնահատականի էր արժանացել:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերում զարգացում էին ապրում արդյունաբերության այն ճյուղերը, որոնց համար կար համապատասխան նյութական բազա: Արտադրության այս կամ այն ճյուղին քաջածանոթ հայերը՝ օգտվելով առանձնաշնորհումներից և կառավարության հովանավորող քաղաքականությունից, ձեռնարկում էին արտադրության այնպիսի ճյուղերի զարգացումը, որոնք նախ՝ համապատասխան նշանակություն ունեին և խրախուսվում էին կառավարության կողմից, և երկրորդ՝ առավել շահութաբեր էին թե ձեռնարկատիրոջը և թե տերությանը: 18-րդ դարի վերջերին արդեն Ղզլարում և Մոզդոկում գործում էին գինու և օղեթորման գործարաններ, մետաքսամշակման ֆաբրիկներ, կաշեգործարաններ և այլն, որոնք, թեև վավերագրերում հիշատակվում են որպես «ֆաբրիկա-գործարաններ», բայց ավելի շուտ տնայնագործական արհեստանոցներ էին, մի քանի, երբեմն տասնյակի չհասնող վարձու բանվորների առկայությամբ, ձեռքի աշխատանքի վրա հիմնված արտադրատեղանակով և ձեռնարկության տարեկան ոչ մեծ արտադրագումարով: Ընդհանուր առմամբ, այսպիսին էր պատկերը ընդհուպ մինչև 19-րդ դարի 70-80-ական թվականները, երբ պարզունակ այս արհեստավորական ձեռնարկություններին փոխարինեցին շոգու և մեխանիկական շարժիչներ ունեցող, մի քանի տասնյակ բանվորներ ընդգրկող և հազարավոր ռուբլիների արտադրագումար ապահովող ֆաբրիկա-գործարանները:

Գինեգործության և օղեգործության զարգացումը Կովկասյան մարզում անմիջականորեն կապվում էր հայ վերաբնակիչների գործունեության հետ: Խաղողագործության զարգացման ուղղությամբ հայերի ջանքերը զուգակցվում էին ռուսական կայսրության նպատակներին, այն է՝ նոր երկրամասում խաղողագործության, գինեգործության և օղեգործության զարգացմամբ ստեղծել և հետագայում էլ ապահովել հայրենական արտադրությունը: Տնտեսության այս ճյուղին քաջածանոթ հայերի նախաձեռնությունը, բնակլիմայական նպաստավոր պայմանները, կառավարության խրախուսող քաղաքականությունը զգալի չափով կանխորոշեցին նրա արմատավորման և ծավալման հեռանկարները: Ղզլարահայերի եկամտի հիմնական աղբյուրը խաղողի սեփական այգիներից ստացվող էժան, մեծ քանակությամբ արտադրվող կարմիր գինին էր (չխիր), որը մասամբ սպառվում էր տեղում, իսկ հիմնականում փոխադրվում էր Աստրախան՝ վաճառքի:

18-րդ դարի վերջերից ղզլարահայերի մի մասը սկսում է խաղողի գինուց օղի թորել: Դարի 90-ական թվականներին Ղզլարում հիմնվում են հայ այգեպետերին և վաճառականներին պատկանող օղեթորման մասնավոր գոր-

ծարաններ, որոնք 2–3 պղնձե կաթսաներով, տնայնագործական տիպի ոչ մեծ ձեռնարկություններ էին: Նման գործարանում, որպես կանոն, աշխատում էին 1–2 վարպետ և 5–6 բանվոր: Օղու արտադրությունը ծավալելու և ղզլարցիներին խրախուսելու նպատակով 1803 թ. հուլիսի 19-ին հետևում է բարձրագույն հրամանը, որի համաձայն թույլատրվում էր խաղողի օղին Մոսկվա փոխադրել առանց մաքս վճարելու:

*
**

18–19-րդ դդ. հարավային Ռուսաստանում և Հյուսիսային Կովկասում հաստատված հայկական գաղթավայրերը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային կյանքի կարևոր կենտրոններ էին: Նրանցից յուրաքանչյուրը կարողացավ ստեղծել բավական ուրույն մշակույթ, որը, լինելով բնույթով ազգային, կրում էր նաև ռուսական միջավայրի ազդեցությունը, միաժամանակ, խաչաձևվում տեղական ժողովուրդների մշակութային կյանքի հետ:

Դպրոցը, աճող սերնդի կրթության և լուսավորության գործը հայ համայնքների առաջնահերթ և հրատապ խնդիրներից էին, և այդ էր պատճառը, որ գաղթավայրերի ղեկավար և հոգևոր գործիչները իրենց ուշադրությունը բևեռում էին հատկապես այդ խնդրի վրա, ձգտելով չուտափույթ լուծում տալ հարցին:

Հյուսիսային Կովկասում հայ կուլտուր-կրթական կյանքի աչքի ընկնող կենտրոնը Ղզլարն էր: Հայաշատ այս գաղթավայրում դպրոցական գործի կազմակերպումը խոչընդոտներով լեցուն ուղի է անցել, որը պայմանավորված էր, մի կողմից, երկրամասի ռազմաքաղաքական անապահով իրավիճակով, մյուս կողմից՝ համընդհանուր հետամնացությամբ, դպրոցները անհրաժեշտ նյութական միջոցներով և ուսյալ կադրերով մշտապես ապահովելու անհնարինությամբ: 18-րդ դարի վավերագրերում Ղզլարում հայկական դպրոցի գոյության մասին հիշատակության չենք հանդիպում: Այստեղ հայ մանուկների կրթության և դաստիարակության գործով այդ ժամանակ զբաղվել են տեղի հայ քահանաները՝ եկեղեցական իշխանություններին ենթակա մասնավոր դպրոցներում, որտեղ դասավանդվել են կրոն, հայերեն ընթերցանություն, թվաբանություն և այլն: 1805 թ. Աստրախանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու սարկավագ Գ. Սուքիասովի հորը՝ Արտեմ Սուքիասովին, թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսը նշանակում է Ղզլարում ուսուցիչ: Այդ ժամանակ քաղաքում ոչ մի ուսումնական հաստատություն գոյություն չի ունեցել: Ղզլարահայերը փորձել են դպրոց բանալ (իրենց իսկ արտահայտությամբ՝ ավելի քան 400 աշակերտ կհավաքվեր, իսկ բացվելիք ուսումնարանի համար մշտապես նախատեսվել է 50–60 աշակերտ), սակայն դժվարությունների են

հանդիպել, քանի որ Ա. Սուքիասովը, լինելով տարեց և վատառողջ, չէր կարող միայնակ ապահովել մայրենի լեզվով դասընթացը՝ կրոն, քերականություն, ընթերցանություն, գիր, թվաբանություն և եկեղեցական երգեցողություն: Եթե անգամ դպրոցը բացվել է, ապա այն շատ կարճատև կյանք է ունեցել: Ղզլարում հայկական առաջին վարժարանը բացվել է 1817–1818 թթ. ժամանակի աչքի ընկնող գործիչներից մեկի՝ Գևորգ Խուբովի (1762–1829) օգնությամբ և մասնակցությամբ[1]:

Ղզլարի հայկական վարժարանը (աղբյուրներում երբեմն հիշատակվում է որպես ծխական ուսումնարան), որը բացվել էր դպրոցական իշխանությունների և Աստրախանի հայոց հոգևոր կոնսիստորիայի թույլտվությամբ, գտնվում էր նրանց հսկողության ներքո, կոչված էր հոգևոր ու աշխարհիկ կադրեր պատրաստելու: Ղզլարի վարժարանը բացման տարում ունեցել է հարյուրից ավելի աշակերտներ: Դպրոցը պահվել է մի քանի ղզլարահայերի, մասնավորապես Խոջյան եղբայրների և Գևորգ Խուբովի միջոցներով: Դասավանդվող առարկաների թվում էին՝ Հին և Նոր կտակարան, եկեղեցական արարողություն, ռուսերեն և հայերեն քերականություն, հռետորություն, թվաբանություն, առևտրական հաշվապահություն: Դպրոցներն ուսումնական ձեռնարկներով ապահովելը դպրոցական գործի կազմակերպման դժվարին խնդիրներից էր ոչ միայն Ղզլարում, այլև ռուսահայ մյուս գաղթավայրերում, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է 19-րդ դարի առաջին տասնամյակներին: Այս շրջանում էր, որ Գ. Խուբովի հեղինակությամբ ասպարեզ են եկել մի շարք ձեռագիր աշխատություններ, որոնց տպագրության և դրանք որպես ուսումնական ձեռնարկ ծառայեցնելու խնդրում չահագրգռված էին թե հոգևոր առաջնորդը և թե Ղզլարի հասարակությունը:

19-րդ դարի սկզբներին դպրոցական-կրթական գործի հետ կապված դժվարությունները հայ հոգևոր և աշխարհիկ գործիչներին ստիպում են դիմել դպրոցական իշխանություններին՝ վերջիններիս իրավասության տակ ուսումնարաններ հիմնելու նպատակով, որոնք գոնե նյութական ապահովության տեսակետից մշտապես կարող էին բավարարված լինել: Ղզլարի հայ պատանիների համար ուսումնարան հիմնելու առաջարկով Եփրեմ կաթողիկոսը 1829 թ. դիմում է Կազանի համալսարանի պրոֆեսորի ընթերակա Մանասևիչին: Վերջինս այդ մասին հայտնում է Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձու Մ. Մագնիցկուն, որը և չուտով Կազանի համալսարանի խորհրդից ձեռք է բերում ուսումնարանի բացման թույլտվությունը: Մանասևը 1820 թ. ապրիլի 17-ի նամակով Եփրեմ կաթողիկոսին տեղեկացնում է, որ ուսումնական հաստա-

[1] **Լ.Մելիքսեթ-Բեկ**, Գևորգ Մելիքսեթյան Խուրով (նյութեր և նոթեր), ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1950, N°1-2:

տությունների կանոնադրության համաձայն, իրեն արդեն հաղողվել է ներկա տարվա մարտի 14-ին բացել Ղզլարի գավառական ուսումնարանը: «Ուսումնարանի հիմնադրման տարուց, - հայտնում էր Մանասևը, - չատերն արդեն հասու են դասավանդվող առարկաններին, իսկ ներկայումս ուսումնարանն ունի 90 աշակերտ, որոնց մեծամասնությունը հայեր են»: Նույն այս նամակից հայտնի է դառնում, որ Մանասևը մտադիր էր նույնատիպ ուսումնարան հիմնել նաև Մոզդոկում:

Տասնամյակներ շարունակ Ղզլարի գավառական (քաղաքային) ուսումնարանը հայ համայնքի կրթական կարևոր օջախներից մեկն էր, որտեղ հարյուրավոր հայ պատանիներ նախնական կրթություն են ստացել: Ղզլարի գավառական դպրոցի վերատեսուչ Դ. Բոգդանովիչի՝ 1867 թ. կաթողիկոսին հղած զեկուցագրից տեղեկանում ենք, որ դպրոցը տեղավորված էր պետական շենքում, ուներ 138 աշակերտ, իսկ ուսուցիչների թվում էին հայոց կրոնուսույցի 1 ուսուցիչ և 1 հայոց լեզվի ուսուցիչ: Դպրոցն ունեցել է հարուստ գրադարան՝ բաղկացած 878 գրքից[1]:

Ղզլարահայ հասարակությունը բազմապիսի օգնություն էր ցույց տալիս ուսումնարանին: Ուսումնարանի հոգաբարձուի պաշտոնում բազմիցս ընտրվել են հայ համայնքի վերնաշերտին պատկանող ուսյալ և ունևոր անձինք, որոնք և նյութական զգալի միջոցներ են ներդրել աշակերտների և ուսուցիչների ապահովման, վարժարանի կառուցման և վերանորոգման, գրականության , գրենական պիտույքների հայթայթման և այլ գործերում:

Ղզլարահայոց դպրոցակրթական կյանքում նշանակալի երևույթ էր ճեմարանավարտ Հ. և Դ. Արզանյան եղբայրների կողմից մասնավոր պանսիոնի հիմնադրումը: Մասնավոր ուսումնարանի բացման նախաձեռնողները ղզլարահայերն էին, որոնք, զգալով լեզուների և գիտության իմացության անհրաժեշտությունը և ցանկանալով տեղում ունենալ ուսումնական հաստատություն, այս խնդրով դիմում են Լազարյան ճեմարանի շրջանավարտ Հակոբ և Դավիթ Արզանյան եղբայրներին և ստանում նրանց համաձայնությունը: 1829 թ. աշնանը բացվում է Ղզլարի մասնավոր արական պանսիոնը: Արզանով եղբայրները եռանդ և միջոց չեն խնայում հայրենակիցներին օգտակար լինելու համար, և նրանց պանսիոնը քանիցս արժանանում է մարզի պետի, կովկասյան ուսումնարանների դիրեկտորի և Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտի գովասանքներին: Ցավոք, պանսիոնի գոյությունը կարճատև եղավ: Չորսամյա դասընթացը դեռ չավարտված, երրորդ տարում՝ 1831 թ. աշնանը, ուսումնարանը փակվեց:

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 206, վավ. 1961:

1836 թ. մարտի 11-ի «Կանոնադրության» համաձայն, Էջմիածնի Սինոդը 1837 թ. հունիսի 2-ի նիստում ռուսահայոց թեմակալին կարգադրում է Ղզլարում բացել ծխական դպրոց՝ Ղզլարի և շրջակա վայրերի հայ երեխաների համար: 1840 թ. ծխական ուսումնարանը բացվում է, «յորում կարգեցեալ վարժապետք երկու լեզուաց հայոց և ռուսաց և վերակացու նորին...»: Մինչև 1871 թ. մայիսի 30-ին, հանդիսավոր պայմաններում բացվում է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում կառուցված հայոց քարաշեն ուսումնարանը, որի հիմքը, դեռևս 1867 թ., օրհնել էր Ղզլար այցելած Գեորգ Դ. Կաթողիկոսը: Ղզլարի հայ հասարակությունը զանազան առիթներով և տարբեր ժամանակներում դպրոցի կառուցմանը նվիրել էր նշանակալի գումար՝ շուրջ 9.000 ռուբլի: Ուսումնարանն ուներ 3 դասարան և մի նախակրթական բաժին, որոնց սպասարկում էին 5 ուսուցիչներ և մի վերակացու: Տարիներ շարունակ դպրոցի պահպանության աղբյուրներն էին քաղաքի 3 եկեղեցիների դրամագլխի տոկոսները, աշակերտների մի մասի մուծած վարձը և հայ համայնքի նվիրատվությունները:

Դարի 50-ական թվականների կեսերից ղզլարահայերի շրջանում հետզհետե իմաստավորվում և կյանքի է կոչում հայ օրիորդների ուսման կազմակերպման գործը: 1856 թ. ուսումնավարտ մի ռուս կին Ղզլարում մասնավոր պանսիոն է բացում, որտեղ մեծ մասամբ հայ օրիորդներ էին ուսանում: 1872 թ. Ղզլարում բացվում է նաև «Մարիամյան» ուսումնարանը:

Ղզլարի «Մարիամյան» օրիորդաց ուսումնարանը տարիներ շարունակ չուներ սեփական դպրոցական շենք: 1883 թ. ղզլարցի Գ. Մամաջանյանը, որն ընտրվել էր օրիորդաց դպրատան շինության հոգաբարձու, իգական ուսումնարանին է ընծայում մի շքեղ, երկհարկանի տուն: 80-ական թվականների վերջերին ուսումնարանն ի վերջո փոխադրվում է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակը, ուր և գտնվում էր արական հոգևոր ուսումնարանը: Դարի 80-ական թվականների կեսերին Ղզլարում բացվում է նաև մասնավոր իգական ուսումնարան, որի նախաձեռնողը Թիֆլիսի Գայանե իգական դպրոցի շրջանավարտ Նինա Անանովան (Շերմազանյանց) էր: Դարի 80-ական թվականների կեսերին Ղզլարի արական և իգական ուսումնարաններից յուրաքանչյուրը

բաղկացած էր 4 բաժանմունքից (դասարանից), որոնցում ուսանում էին 109 աշակերտ և 70 աշակերտուհիներ:

Ղզլարի նման գրեթե նույնպիսի դժվարին պայմաններում ընթացավ դպրոցական գործի կազմակերպումը Հյուսիսային Կովկասի երկրորդ հայաշատ կենտրոնում՝ Մոզդոկում: 1820 թ. արքունի դպրոցական իշխանությունների ենթակայությամբ բացվում է Մոզդոկի գավառական ուսումնարանը, որը հայ պատանեկության կրթության կարևոր օջախներից մեկն էր: Գավառական ուսումնարանում հայոց լեզու և կրոն էին դասավանդում հայ համայնքի և հոգևոր իշխանությունների առաջարկությամբ, կովկասյան ուսումնարանների դիրեկցիայի թույլտվությունը ստացած հայ հոգևորականները, որոնց ծախսը հոգում էր հայ համայնքը՝ հասարակական եկամուտներից: Ստավրոպոլի նահանգի վիճակագրական կոմիտեի տվյալներով, Մոզդոկի ուսումնարանը 1862 թ. ուներ 128 աշակերտ, որից ռուսներ՝ 13, վրացիներ՝ 17, հայեր՝ 53, օսեր՝ 40 և լեռնցի՝ 5[1]: Դարավերջին Մոզդոկի քաղաքային երկսեռ ուսումնարանում սովորում էին քաղաքի հայ հասարակության 90 երկսեռ հայ երեխաներ:

Մոզդոկի հայկական ծխական դպրոցի մասին տեղեկությունները վերաբերում են 19-րդ դարի 40-ական թվականների վերջերին: Դեռևս 1847 թ. Մոզդոկի հայ հասարակությունը խնդրագրով դիմում է թեմի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսին և նշում, որ 1838 թվականից սկսած տեղի հայկական եկեղեցիները որոշակի գումար են հատկացնում հօգուտ Աստրախանի սեմինարիայի, այն դեպքում, երբ իրենց որդիները զուրկ են մնում ուսումից: Մոզդոկահայերի խնդրանքը բավարարվում է, և 1849 թ. փետրվարի 16-ին, հանդիսավոր պայմաններում կատարվում է Մոզդոկի ծխական ուսումնարանի բացումը: Մխական ուսումնարանը, սակայն, կարճատև կյանք ունեցավ:

Ռուսահայ դպրոցական կյանքը աշխուժացում է ապրում դարի 60-ական թվականների վերջերին՝ դպրոցական ռեֆորմների ազդեցությամբ: Ռուսահայերի կյանքում տեղ գտած սոցիալ-տնտեսական և հասարակական-մշակութային տեղաշարժերը նոր լիմաստ էին հաղորդում դարակեսին ծավալված լուսավորական շարժմանը, ռեալ հնարավորություններ ստեղծում ընդլայնելու ազգային դպրոցների ցանցը: Իր ողջ կյանքը կրթական գործին նվիրած նորընտիր Գևորգ կաթողիկոսը 1867 թ. Պետրոգրադ ուղևորվելիս ճանապարհին շրջագայում է ռուսահայ թեմում և, ծանոթանալով կրթական գործի անմխիթար վիճակին, հրամայողական պահանջ է դնում հայկական եկեղեցիներին կից բանալու ծխական դպրոցներ: Լուսավորական-կրթական շարժման ընդհանուր վերելքի պայմաններում գործի լծվեցին հայ աշխարհիկ և

[1] ГАСК, ф.68, оп.1, д.5459, л. 4.

հոգևոր գործիչներից շատերը, որոնք ժողովրդի եռանդուն աջակցությամբ եկեղեցական ծխական դպրոցները զարգացման նոր աստիճանի հասցրին:

1867 թ. Մոզդոկ այցելած Գևորգ կաթողիկոսը, քաղաքի նշանավոր անձանց ներկայությամբ, հայտնում է իր մտադրությունը եկեղեցական գումարով 400 ձրիավարժ աղքատ մանկանց համար 2 ուսումնարան բացելու մասին: Կաթողիկոսի հորդորներից ոգևորված Մոզդոկի Տիրամոր եկեղեցու երեցփոխ և պատվավոր քաղաքացի, վաճառական Գրիգոր Թուչմալյանը հրապարակավ խոստանում է սեփական ծախսով կառուցել ուսումնարանի քարաշեն շենքը՝ դպրոցի 200 աղքատ մանկանց համար: Այդ վարժարանի բացման հանդիսը կատարվեց 1868 թ. ապրիլի 14-ին, իսկ ծխական դպրոցի հանդիսավոր բացումը՝ նույն թվականի նոյեմբերի 26-ին:

1869 թ. հունիսի 5-ին մոզդոկցի Գրիգոր և Քերովբե Թուչմալյանները Աստրախանի հայոց կոնսիստորիա են առաքում վկաների ներկայությամբ ստորագրված պարտավորագիր, խոստանալով 7 տարի ժամկետով սեփական ծախսով ապահովել հայկական ուսումնարանը, անհրաժեշտության դեպքում վերանորոգել այն, իսկ 7-ամյա ժամկետը լրանալուց հետո՝ այն մշտապես հանձնել Սբ. Աստվածածին եկեղեցուն:

Դպրոցի համար նյութական ապահով աղբյուր ստեղծելու նպատակով Մոզդոկի ծխական դպրոցի հոգաբարձուներ Մ. Ուլուխանյանցը, Հովհ. Թուչմալյանը, Հ. Գյանջումյանցը և Պ. Շլթյանը 1872 թ. կեսերին, յուրաքանչյուրը 500 ռ. ներդնելով, մոմի գործարան են հիմնում[1]: Մոզդոկի ծխական դպրոցը բացման օրվանից 100-ից ավելի ձրիավարժ աշակերտներ է ունեցել: Դպրոցն ուներ 2 դասատուն, յուրաքանչյուրում՝ 2 բաժանմունք: Դարի 70-ական թվականների կեսերին ծխական վարժարանում դասավանդում էին 3 ուսուցիչներ, որոնցից մեկը նաև երգեցողություն էր ավանդում: Ժամանակի առումով, հյուսիսկովկասյան հայ գաղթավայրերի մյուս դպրոցների համեմատ, Մոզդոկի և Ղզլարի ծխական ուսումնարանները առաջավոր էին թե ուսուցողական ձեռնարկների և թե ուսուցանելու եղանակի հարցերում: Դարի երկրորդ կեսին հյուսիսկովկասյան հայկական ծխական դպրոցները իրոք վազուց հրաժարվել էին նախկինում դպրոցներում տիրող կրոնական միօրինակությունից և զգալի տեղ էին հատկացնում աշխարհիկ առարկաներին: Նորություն էր, օրինակ, ֆիզիկական դաստիարակության դասավանդումը Մոզդոկի ուսումնարանում: Մոզդոկի ծխական դպրոցում մեծ ուշադրություն էր դարձվում նաև լրացուցիչ գործնական առարկաների՝ արհեստների ուսուցմանը:

[1] «Արարատ», 1873, էջ 465, «Մշակ», 1875, հ. 14, էջ 2:

1875 թ. բացվում է Մոզդոկի իգական ուսումնարանը, որի համար ուսուցչուհի է հրավիրվում Թիֆլիսից: Ուսումնարանի առաջին վարժուհիներից մեկը տիկին Ս. Տեր-Ղևոնդյանն էր, որը ռուսաց լեզու և թվաբանություն էր դասավանդում հայ օրիորդներին և միաժամանակ ուսուցանում էր ձեռագործ աշխատանք: 80-ական թվականների սկզբին սկսվում է և 1885 թվականին ավարտվում իգական ուսումնարանի համար նոր, բավական մեծ և հարմարավետ շինության կառուցումը: Այդ շենքը այլ հարմարությունների հետ մեկտեղ իր սենյակներից մեկում ուներ թատերական բեմ. այդ սենյակում մոզդոկահայ թատերասերները հայ օրիորդների մասնակցությամբ ներկայացումներ էին տալիս:

1849 թ. Ստավրոպոլում ևս բացվում է հայկական վարժարան, որը սկզբում ուներ 23 աշակերտ: Դպրոցի հիմնադրումից երկու տարի անց Նորնախիջևանցի վաճառական Ալաջալով եղբայրներն ուսումնարանի համար նոր շենք են կառուցում եկեղեցու զավթում, որտեղ արդեն ուսում էին ստանում 30-ից ավելի մանուկներ: Սակայն նյութական միջոցների սղության պատճառով Ստավրոպոլի ծխական ուսումարանը շուտով դադարում է գործելուց և կրկին վերաբացվում է միայն 1861 թ.:

19-րդ դարի 70-ական թվականներից Ստավրոպոլի հայկական ծխական ուսումնարանները ստանում են մշտապես գործելու և նյութապես ապահով վիճակում գտնվելու երաշխիք. երկսեռ մեկդասյան այդ դպրոցները պահվում էին եկեղեցու նպաստով, աշակերտների մի աննշան մասի ուսման վարձով և անհատների նվիրատվություններով: Դպրոցներում դասավանդվում էին հայոց և ռուսաց լեզու, կրոն, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն: Դասընթացն ավարտողները կարող էին ընդունվել գիմնազիա:

Հայ պատանիների և աղջիկների կրթական օջախներից էին նաև Ստավրոպոլի արական և իգական գիմնազիաները: Մինչև դարի 80-ական թվականները Ստավրոպոլի արական գիմնազիայում հայոց լեզվի դասավանդումը պարտադիր էր հայ և ռուս աշակերտների համար:

Եկատերինոդարում, Կուբանի մարզի հայաշատ այս կենտրոնում, դպրոցական կյանքը զգալի աշխուժացում ապրեց դարի 60-ական թվականների սկզբից: Հայոց վարժարանի սկզբնավորման գործում մեծ ծառայություն մատուցեց դեռևս 1856 թ. քաղաքի հայ երիտասարդների կամավոր նվիրատվություններով և բարեգործական նպատակով հիմնված ընկերությունը: Դպրոցի բացմանը և հետագա ապահովմանը օգտակար եղան Նորնախիջևանցիները՝ օգնության ձեռք մեկնելով Եկատերինոդարի իրենց ազգակիցներին: Եկատերինոդարի Մեսրոպյան հայոց ծխական դպրոցի՝ 1867 թ. կյանքի կոչված կանոնադրությունը (այն բաղկացած էր 47 կետից) արտացոլում էր դպրոցի թե նպատակը և թե հետագա գոյատևման հնարավոր մի-

ջոցները: Նախ, դպրոցը նպատակ էր դնում ուսում տալ Եկատերինոդարում և շրջակա գյուղերում բնակվող հայ տղաներին և աղջիկներին: Զքավոր ընտանիքի զավակները ձրի կրթություն պետք է ստանային: Առաջադիմությամբ աչքի ընկած աշակերտ-աշակերտուհիները շարունակելու էին ուսումը ազգային և օտար բարձրագույն ուսումնարաններում կամ էլ աշխատելու էին արվեստանոցներում և գործարաններում՝ «ըստ բնածին ընդունակության յուրաքանչյուրին»: Դպրոցի հիմնադրումից մեկ տարի անց տեղի մի քանի հայ երիտասարդների ջանքերով վարժարանին կից բացվում է ընթերցանության թանգարան (գրադարան), որտեղ գրքերից զատ հայկական և ռուսական օրագրեր ու լրագրեր էին ստանում: Ուշագրավ է հիշատակությունը աղբյուրներում այն մասին, որ վարժարանի բացումը մեծ խանդավառություն է առաջացրել նաև Եկատերինոդարի ռուս ազգաբնակչության շրջանում, որոնք բազմաթիվ գրքեր են նվիրել նորաբաց ընթերցարանին:

Եկատերինոդարի հայկական դպրոցը երեքդասյան էր: 1870 թ. քաղաքում հիմնվում է նաև իգական հայկական դպրոցը, որը պահվում էր համայնքի միջոցներով: Այն սկզբում մեկդասյան էր և հիմնադրման հաջորդ տարում ուներ 20 աշակերտուհի և մեկ ուսուցչուհի:

Եկատերինոդարի հայոց վարժարանը նկատելիորեն առաջադիմել է հայոց լեզվի ուսուցիչ, Կ. Պոլսում կրթություն ստացած Տիրան Գալֆայանցի օրոք: Նրա ջանքերով 80-ական թվականներին սկզբներին վերակազմվել և վերաբացվել է ժողովրդական մատենադարանը (գրադարան-ընթերցարան), որտեղ պահվում էին 600-700 անուն գրքեր, ստացվում էին զանազան լրագրեր ու ամսագրեր:

1895 թ. հայկական դպրոցները փակվելուց և դարավերջին կրկին բացվելուց հետո Եկատերինոդարի երկսեռ հայկական վարժարանները այլևս չունեին նախկին հնարավորություններն ու դասավանդման շրջանակները: 20-րդ դարի սկզբներին քաղաքի 3 դպրոցներում (արական ու իգական գիմնազիաներում և նորաբաց ծխական հայկական դպրոցում) ուսանում էին մոտ 200 հայ աշակերտներ:

Հյուսիսկովկասյան մյուս հայկական գաղթավայրերում դպրոցակրթական գործի կազմակերպումը սկսվեց ավելի ուշ՝ 19-րդ դարի 70-80-ական թվականներին: Կրթական հիմնական օջախները եկեղեցական ծխական դպրոցներն էին, որոնց բացումը և գոյատևումը անմիջականորեն կապվում էր հայ համայնքների նյութական հնարավորությունների հետ:

Վլադիկավկազում ծխական արական դպրոցը բացվեց 1874 թ., իսկ իգական ուսումնարանը՝ 1883 թ.: Այստեղ առավել առաջադիմից օրիորդաց դպրոցը, որը հիմնադրումից մեկ տարի անց ուներ արդեն 46 աշակերտ, իսկ

1891 թվից՝ գրադարան-մատենադարան՝ 200-ից ավելի գրքերով ու պարբերականներով:

Թերեքի շրջանի հայերի համար կարևոր կրթական օջախ էր 1868 թ. հիմնադրված Վլադիկավկազի արհեստավորական ուսումնարանը: Նրա հիմնադիրը Թերեքի մարզի կուսակալ, հայազգի Միքայել Լորիս-Մելիքովն էր[1]: Մեկ տարի անց, ուսումնարանին կից հիմնադրվում է պանսիոն՝ գիշերօթիկ դպրոց, որում ամենամյա կրթություն էին ստանում տարբեր ազգության և ծագման պատանիներ, առավելապես որբ կամ չունևոր ընտանիքների զավակներ: Պանսիոնի բացման նախագծում նշվում էր, որ տեղացիներից բացի, հայազգի աշակերտներ են ընդունվում նաև Ղզլարից և Մոզդոկից[2]: Վլադիկավկազի արհեստավորական ուսումնարանը նկատելի ծառայություններ է մատուցել հայ համայնքին, որի զավակներից շատերը կրթվել և արհեստներ են սովորել պետական ուսումնարանների դերատեսչությանը պատկանող այդ ուսումնարանում:

1872 թ. մեկդասյան արական ծխական դպրոց է բացվում Սուրբ Խաչում, քսան տարի անց այնտեղ հիմնվում է նաև իգական մեկդասյան դպրոց: Այս երկու դպրոցներում դարավերջին արդեն ուսանում էին 85 հայ պատանիներ ու աղջիկներ: Պյատիգորսկում ևս թեմակալի առաջարկությամբ և մի քանի հայ երիտասարդների նախաձեռնությամբ 1888 թ. հիմնվում է ծխական մեկդասյան արական դպրոց: 1896 թ. տվյալներով դպրոցում սովորում էին 35 աշակերտ: Դպրոցին, հատկապես չքավոր աշակերտ-աշակերտուհիներին, մեծապես օգնում էին 90-ական թվականների սկզբներին Պյատիգորսկում հիմնված «Աղքատաց հոգաբարձությունը» և «Կանանց հոգաբարձությունը»:

Դարավերջին Գրոզնու փոքրիկ հայ համայնքը նույնպես արձագանքեց մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործին: 1894 թ. Ղզլարի երկսեռ դպրոցների ուսուցիչ Յ. Աստվածատրյանցի նախաձեռնությամբ Գրոզնիում գումարվում է հասարակական ժողով՝ օրակարգում ունենալով ուսումնարան բացելու հարցը: Մեկ տարի անց, թեմակալի աջակցությամբ, Գրոզնիում հիմնվում է ծխական դպրոց և «Աղքատախնամ հոգաբարձություն», որը հոգում էր չքավոր աշակերտների կարիքները: Ժողովրդի առաջարկությամբ նորակառույց ուսումնարանը ի պատիվ թեմի առաջնորդի կոչվելու էր «Խորենյան»:

---

[1] «Մշակ», 1873, հ. 38, էջ 9:

[2] Центральный государственный архив Северо-Осетинской АССР (ЦГАСО АССР), ф. 12, оп.1, д.462, л.14-17.

Դաղստանի երկրամասի Դերբենդ հայաշատ քաղաքում ազգային ուսումնարան ունենալու հարցը շարունակ արծարծվում էր հայ հասարակական շրջաններում: Դերբենդում հայկական դպրոց ունենալը օգտակար էր ոչ միայն դերբերդցիներին, այլ Թեմիր խան Շուրայի և Պորտ Պետրովսկի հայությանը, որոնք նույնպես զուրկ էին ուսումնարանից: Դերբենդում առաջինը բացվում է ծխական իգական ուսումնարանը՝ 1878 թ. դեկտեմբերին, որը կոչվում էր «Մարիամյան»: Դպրոցն ուներ 3 ուսուցիչ և ձեռագործի վարժուհի: 80-ական թվականների սկզբներից նույն դպրոցն են հաճախել նաև տղաները: Մինչև 1895 թ. դպրոցների փակումը Դերբենդի ծխական երկսեռ ուսումնարանը հաճախում էին 40-55 աշակերտ-աշակերտուհիներ: 19-րդ դարի 70-ական թվականների կեսերին մեկդասյան ծխական դպրոց է բացվում նաև Դաղստանի կուսակալի նստավայր Թեմիր խան Շուրայում: Դպրոցի հիմնադրմանը առավել նպաստում են ղզլարահայերը, դպրոցին նվիրելով նշանակալի մի գումար: 70-ական թվականներին հայկական ծխական դպրոց է հիմնվում նաև Պորտ Պետրովսկում:

Այսպիսով, Ռուսաստանի հարավային ծայրամասում ձևավորված հայկական գաղթավայրերը, կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը համաքայլ, ապրում են ազգային զարթոնք, որը դրսևորվեց նաև ազգային լուսավորության և մշակույթի, առավելապես դպրոցական կյանքի զարգացման մեջ: Միայն Աստրախանի թեմում, որի մեջ մտնում էին հյուսիսկովկասյան գրեթե բոլոր հայկական գաղթավայրերը, բացվեցին 14 ազգային դպրոցներ, որոնք ընդհուպ մինչև 80-ական թվականների կեսերը ազգային լուսավորության տարածման հիմնական կրթօջախներն էին: Ռուսաստանում ապրող ազգային փոքրամասնությունների, այդ թվում և հայերի ազգային զարթոնքին 80-ական թվականների կեսերից հակադրվեց պաշտոնական Ռուսաստանը, դրանում տեսնելով ազգային շարժումների դրսևորման հիմնական նախապայմանը: Առաջին հերթին հարվածի սլաքն ուղղվեց հայկական դպրոցների դեմ, քանի որ վերջիններս էին կրոնի, մայրենի լեզվի ու պատմության դասավանդման հիմնական կենտրոնները և կարող էին ազգային ինքնավարության հոգեբանություն ու տրամաբանություններ սերմանել ռուսահայերի շրջանում: Ցարական չինովնիկների ուշադրությունն էին գրավել նաև ռուսահայերի շրջանում հիմնված բարեգործական ընկերությունները, որոնք իրենց գործունեության հիմնական նպատակն էին դարձրել ժողովրդական դպրոցների նյութական ապահովումը:

1884 թ. փետրվարի 16-ի կայսերահաստատ «Կովկասի հայ լուսավորական եկեղեցական ուսումնարանի մասին կանոնները» առաջին լուրջ հարվածը հասցրին հայ ազգային դպրոցներին: Իշխանություններին վերջապես հաջողվելու էր ձեռք բերել հայ դպրոցի գործերին անարգել միջամտելու երկար

սպասված իրավունքը: Էջմիածնի կաթողիկոսը զրկվում էր հայկական դպրոցները տնօրինելու իրավունքից: Հայ հոգևորականությունը փաստորեն մնում էր որպես սոսկ նյութական միջոցներ հայթայթող, քանի որ բոլոր առարկաների դասավանդման վրա, բացի կրոնից, հսկողություն էր սահմանվում:

1885 թ. մարտի 5-ին Թերեքի մարզի ժողովրդական ուսումնարանների դիրեկտորը, կովկասյան ուսումնական օկրուգի հոգաբարձուի առաջարկությամբ, հրահանգավորում է Թերեքի մարզի պետին՝ փակելու մարզի տարածքում գործող Վլադիկավկազի երկու մեկդասյան, Մոզդոկի երկու երկդասյան և Ղզլարի արական երեքդասյան և իգական երկդասյան եկեղեցական-ծխական հայկական դպրոցները: Նույն թվականին փակվում են նաև Կուբանի և Դաղստանի երկրամասի եկեղեցական-ծխական հայկական դպրոցները:

Հայկական դպրոցների դեմ սկսված հալածանքների պայմաններում հյուսիսկովկասյան հայկական դպրոցների մի մասին հաջողվեց պահպանել գոյությունը՝ դրվելով լուսավորության մինիստրության տնօրինության տակ: Գոյատևման նույնպիսի ելք են գտնում նաև Արմավիրի և մի շարք հայկական գաղութների տարրական դպրոցները, վերաբացվելով որպես նոր սկզբունքով գործող դպրոցներ:

***

Թատերական արվեստի սկզբնավորումը և զարգացումը Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում նույնպես ընթացավ 19-րդ դարի կեսերին տեղի ունեցած հասարակական-քաղաքական տեղաշարժերի անմիջական ազդեցության տակ: Մոսկվայի, Պետերբուրգի և այլ քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած և հայրենի շրջաններ վերադարձած հայ երիտասարդությանը հուզող հարցերից մեկը ազգի կուլտուրական ու մտավոր զարգացմանը նպաստելու ձգտումն էր, և արևմտահայերի թատերական կյանքում սկսված աշխուժությանը չուտով արձագանքում են նաև ռուսահայերը: Ազգային լեզվով թատրոն ունենալուն նախանձախնդիր ղզլարահայերը այդ մարզում առաջին և հաջողակ փորձն են անում: 1859 թ. դեկտեմբերի 18-ին, 300 քաղաքացիների ներկայությամբ, Հովհ. Քոչաբեկյանի և Մ. Խահակյանի մասնավոր դպրոցների առաջավոր աշակերտների ուժերով, ներկայացվում է Ս. Մանդինյանցի աշխատասիրած «Հայոց լեզուն կամ հարսնախոսություն Սոփիոյի կամ Պետրոս և Բարբարե» բեմադրությունը: Աշակերտական ներկայացումների հիման վրա հետագայում, ինչպես Ղզլարում, այնպես էլ հյուսիսկովկասյան մյուս հայաբնակ վայրերում ստեղծվում են սիրողական թատրոններ:

Հյուսիսկովկասյան հայերի թատերական կյանքում կարևոր դեր են կատարել Կ. Պոլսից, իսկ հետագայում նաև Այսրկովկասից հյուրախաղերի եկած նշանավոր դերասաններն ու դերասանական խմբերը: Այսպես, օրինակ՝ Կ. Պոլսից ժամանած Թովմաս Ջասուլյաճյանը թատերախումբ է կազմակերպում սկզբում Մոզդոկում, իսկ ապա՝ Ղզլարում: Մոզդոկահայերի համար սա անսպասելի և հույժ կարևոր նորություն էր: Մոզդոկում, ուր մինչ այդ գաղափար չունեին թատրոնի մասին, բեմադրվում են ութ ներկայացում՝ բավական մեծ խաղացանկով:

Դեռևս Մոզդոկում եղած ժամանակ Ջասուլյաճյանը նամակով դիմել էր Ղզլարում ապրող բժիշկ Հովհաննեսյանին՝ այնտեղ նույնպես ներկայացումներ կազմակերպելու մտադրությամբ: Ջասուլյաճյան ամուսինները 1867 թ. նոյեմբերի սկզբներին ժամանում են Ղզլար: Նրանց խմբի կազմում էին նաև Մոզդոկից հրավիրված Հ. Կուսիկյան և Վ. Ցարալյան երիտասարդները և երկու ռուս դեկորատորներ: Շուտով Ջասուլյաճյանի շուրջն են համախմբվում Ղզլարի առաջադեմ և ուսյալ հայ երիտասարդները, ինչպես նաև քաղաքի հայ մեծահարուստներից՝ Մարգար Մամաջանյանը և Եսայի Իզմիրյանը: Վերջիններիս ջանքերով և դրամական նվիրատվությամբ էլ գլուխ է բերվում քաղաքի կենտրոնում գտնվող շենքերից մեկում թատերաբեմի կառուցումը և թատերական անհրաժեշտ պիտույքների ապահովումը:

Ղզլարի նորակառույց 600 տեղանոց թատերասրահում 1867 թ. նոյեմբերին սկսվել են Ջասուլյաճյանների դերասանախմբի ներկայացումները: 1867 թ. նոյեմբերի կեսերից մինչև 1868 թ. մայիսի կեսերը բեմադրվել են 25 թատերական ներկայացում, որոնց մասնակցել են նաև ղզլարահայ երիտասարդներ և օրիորդներ: Ջասուլյաճյաններին հաջողվել է գործին մասնակից դարձնել նաև ղզլարահայ օրիորդներից Թամար Ալանյանին, Աննա Աղաբալյանին և ուրիշներին, որոնց բեմ բարձրանալը, հիրավի, նոր և հաճելի անակնկալ էր ղզլարահայ թատերասերների կյանքում: Հետագայում էլ, ղզլարահայ տիկիններից և օրիորդներից Թ. Կաճկաճյանը, Մ. Ալանյանը, Ա. Գոլդյանը և ուրիշներ մասնակցել են ներկայացումներին, իրենց փայլուն խաղով արժանացել ղզլարահայ երկրպագուների գովասանքին[1]: Հիշատակելի են նաև Դերբենդի հայ թատերասերները: Դաղստանի մահմեդական այս կենտրոնում հայ օրիորդներն ու տիկինները 1873 թ. առաջին անգամ բեմ են բարձրանում և տեղի հասարակությանը հիացնում իրենց գրավիչ խաղով:

Ղզլարահայ թատրոնը, մինչև Ջասուլյաճյանների հյուրախաղերը, ժամանակի առաջավոր և գործունյա հայ երիտասարդ մտավորականության շնորհիվ (բժիշկ Անանիա Սուլթան-Շահ, բանաստեղծ Հովհ. Քուչուբեկյան և

[1] «Մշակ», 1873, հ.10, էջ 3:

ուրիշներ) սկսել էր իր առաջին քայլերը այս բնագավառում: Անշուշտ, Ֆասուլյաճյանների այցելությունը Ղզլար մեծ թափ հաղորդեց գործին: Ղզլարահայ երիտասարդների ջանացողությամբ 1867 թ. վերջապես հաջողվեց Ղզլարում ունենալ առանձին թատերասրահ, որը թեև շատ ընդարձակ չէր, բայց հարմար և բավական էր քաղաքի հայ հասարակության համար:

Այսպիսով, դպրոցի և գրականության միջոցով լուսավորության ծիլերը հայ իրականության մեջ սերմանող երիտասարդ մտավորականությունը ձեռք մեկնեց նաև թատերական արվեստին, որը ժողովրդին հոգևոր սնունդ մատակարարող, նրա մտավոր ու կուլտուրական զարգացմանը նպաստող նոր ուժ էր: Սիրողական թատրոնը միաժամանակ դարձավ հայոց լեզվի ամրապնդման յուրօրինակ դպրոց:

Հյուսիսկովկասյան, մասնավորապես ղզլարահայ թատրոնի բնորոշ գծերից մեկը նրա հիմնադրման օրից բարեգործական նպատակամղվածությունն էր: Հատկանշական է, որ ղզլարահայ թատերասերների բարեգործությունը չուներ զուտ ազգային կողմնորոշում: Թատերախմբի ներկայացումներին հաճախում և բարեգործություններից օգտվում էր քաղաքի բազմազգ բնակչությունը:

19-րդ դարի 80-ական թվականներից հյուսիսկովկասյան հայ թատերասերները ձեռնամուխ են լինում մի շարք կազմակերպչական խնդիրների լուծմանը, որոնք իրենց հերթին ապահովելու էին թատերախմբերի կայուն և մշտական աշխատանքը: 1892 թ. ղզլարահայ թատերասերներին ի վերջո հաջողվում է գնել սեփական շենք, ուր և հարմարեցվում է բեմը՝ անհրաժեշտ պարագաներով: Փորձեր են արվում նաև թատերասերների ընկերություններ ստեղծելու ուղղությամբ: Մոզդոկի թատերասերները դեռևս 1884 թ. մշակում են ապագա ընկերության կանոնադրությունը և դիմում կառավարությանը՝ նոր Նախիջևանի օրինակով հաստատելու թատերասերների խումբը, որոշակի իրավունքներով: 1889 թ. Հ. Հարությունյանի ջանքերով կազմվում է Եկատերինոդարի թատերասերների ընկերությունը, իսկ ավելի ուշ՝ Ղզլարի, Արմավիրի և ուրիշ դրամատիկական ընկերությունները:

Ներկայացումներ կազմակերպելու հնարավորությունները և թատերասեր հասարակության ջերմ վերաբերմունքը նպաստում էին դրսի թատերախմբերի և անհատ դերասանների մշտական այցելություններին: Իրենց թատերախմբերով Ղզլար են եկել նաև դերասաններ Ս. Աթոյանը, Հովհ. Կարինյանցը, Ա. Վրույրը, Զարիֆյան ամուսինները, Կ. Ստեփանյանը և ուրիշներ: Պ. Ադամյանի, Հ. Աբելյանի, Սիրանույշի, Փառանձեմի թատերախմբերը հյուրախաղերով հանդես են եկել նաև Հյուսիսային Կովկասի մյուս հայաշատ կենտրոններում՝ Մոզդոկում, Եկատերինոդարում, Ստավրոպոլում, Վլադիկավկազում, Դերբենդում և այլուր:

Բացի դրսեկ դերասաններից, ամառային արձակուրդների օրերին հայրենի վայրերը վերադարձող Ռուսաստանի և Անդրկովկասի ուսումնական հաստատությունների հայ ուսանողները ձրի ներկայացումներ, գրական-եբաժշտական երեկոներ, հոգեբյանական հանդեսներ էին կազմակերպում, նկատելիորեն թարմացնելով ու աշխուժացնելով հայ համայնքի մշակութային կյանքը: 1900 թ. հուլիսին Նոր Նախիջևանի թեմական դպրոցի աշակերտներ, ղզլարցի Ռոմանոս Մելիքյանը, Դավիթ Սողոմոնյանը, Գ. Ալեքսանյանը և Ս. Կարապետյանը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի աշակերտ Խ. Մխիթարյանը, Կազանի համալսարանի ուսանող, ղզլարցի Ա. Աստվածատրյանի աջակցությամբ Ղզլարում բեմադրում են «Սուտ ճգնավորը» վոդևիլը, որն ուներ նաև համերգային մաս: Ռոմանոս Մելիքյանի կազմակերպած փոքրիկ, բայց շնորհալի քառաձայն երգչախումբը երգում է հայերեն և ռուսերեն երգեր: Նվագակցում էր ջութակահար Դավիթ Սողոմոնյանը: Հայրենի քաղաքում էլ փաստորեն կայացավ Ռ. Մելիքյանի անդրանիկ և ինքնուրույն հրապարակային համերգը երգչախմբի հետ, որ 17-ամյա պատանին կազմակերպել էր տեղի հայերի ուժերով:

Հյուսիսկովկասյան հայ սիրողական թատերախմբերը հետագայում ևս շարունակեցին իրենց ազգօգուտ գործունեությունը, հոգևոր սնունդ մատակարարելով երկրամասի հայ ազգաբնակչությանը:

Դարավերջին Հյուսիսային Կովկասի հայ համայնքների կուլտուր-մշակութային կյանքում հաճելի ավանդություն էր դարձել տեղի ուժերով «Գրական առավոտներ» երաժշտադրամատիկական երեկոների կազմակերպումը: Երեկոներին մասնակցում էին ուսանողական խմբերը, աշակերտները, թատերասերները, երգչախմբերը և այլն:

Հյուսիսկովկասյան հայերի մշակութային կյանքում նկատելի երևույթ էր քառաձայն երկսեռ երգչախմբերի ձևավորումը: Շուտով եկեղեցական երգչախմբերն իրենց մասնակցությունն են բերում նաև՝ թատերական ներկայացումներին: 1896 թ. Ղզլար է հրավիրվում Քրիստափոր Կարա-Մուրզան, որը կազմում է 100 հոգուց բաղկացած երգչախումբը: Կարա-Մուրզան դարավերջին երգչախումբ է կազմակերպում նաև Արմավիրում, Եկատերինոդարում, համերգներով հանդես է գալիս Վլադիկավկազում, Պյատիգորսկում և հայաբնակ այլ քաղաքներում:

Հյուսիսկովկասյան հայկական գաղթավայրերի կուլտուր-մշակութային կյանքի խթանողն ու ուղղություն տվողը տեղի հայ երիտասարդ ուսանողությունն էր: Գրեթե մեկ դար շարունակ Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը եղել են այն հիմնական կրթօջախները, որտեղ կադրեր էին պատրաստվում ռուսահայ գաղթավայրերում ևս կրթություն ու լուսավորություն տարածելու նպատակով:

Գաղութահայ մտավորականությունը Հյուսիսային Կովկասում կենդանի և մշտական կապերի շնորհիվ լավատեղյակ էր Ռուսաստանի հայաբնակ կենտրոններում և Անդրկովկասում տեղի ունեցող հասարակական ու մշակութային կյանքի իրադարձություններին: Անձնական կապերի շնորհիվ մտավորականները հայ համայնքները ապահովում էին Ռուսաստանում և Անդրկովկասում լույս տեսնող հայերեն պարբերականներով, մշտապես ավելացնում էին դրանց բաժանորդների թիվը:

Հյուսիսային Կովկասի հայ համայնքները կուլտուր-մշակութային լայն կապեր էին հաստատել մայր հայրենիքի, ռուսահայ գաղթավայրերի, ինչպես նաև արտասահմանի հայ մշակութային օջախների հետ, այդ կապերի շնորհիվ գաղութահայ գանգվածները մշտապես իրազեկվում էին հայ իրականության մեջ տեղի ունեցած հասարակական-քաղաքական և մշակութային անցքերին:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթօջախներն իրենց ավելի քան 250-ամյա գոյության ընթացքում նշանակալի դեր խաղացին երկրամասի տնտեսական և հասարակական կյանքում, և նրանց պատմական անցյալը գաղութահայ պատմության ուշագրավ դրսևորումներից էր:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ

Նոր պատմության շեմին, Կովկասի նախագռներում հիմնադրված Դոնի հայկական գաղութը նշանակալից դեր է կատարել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում, հարավային Ռուսաստանի տնտեսական զարգացման մեջ:

Տասնութերորդ դարի երկրորդ կեսին Եկատերինա 2-րդի թագավորության շրջանում (1762-1796) որդեգրվեցին կայսրության հարավային սահմաններն ընդարձակելու և ծով դուրս գալու՝ դեռևս դարասկզբին Պյոտր Մեծի կողմից կյանքի կոչված քաղաքականության սկզբունքները: Այդ ապարեզում էական նշանակություն ունեցավ 1768-1774 թթ. ռուս-թուրքական առաջին պատերազմը: Դրա հաղթական ավարտի շնորհիվ Ռուսաստանին հաջողվեց Ղրիմի թաթարական խանությունը Թուրքիայից ազատել և անկախ հայտարարել, ամրապնդել իր դիրքերը Սև ծովի առափնյա շրջաններում:

Ռուսական կառավարությունը քաջ գիտակցում էր, որ առանց հարթավային տափաստանների բնակեցման և տնտեսապես յուրացման անհնար է ամրապնդել ձեռք բերած ռազմաքաղաքական հաջողությունները: Ահա թե ինչու կառավարությունը հարավային սահմաններն ընդարձակելուն զուգահեռ մեծ ջանքեր էր գործադրում երկրամասի բնակեցման ուղղությամբ:

Տակավին 1763 թ. և 1764 թ. կառավարությունը հրամանագրեր էր արձակել, որոնցով մեծ արտոնություններ էին տրվում հարավում բնակվող օտարերկրացիներին: Ռուսական պետության ընձեռած լայն հնարավորությունների շնորհիվ 1770-1780-ական թթ. գաղթեցին ու հարավում բնակվեցին հրեաներ, բուլղարներ, գերմանացիներ, լեհեր, հույներ, հայեր և այլ ազգությունների ներկայացուցիչներ:

Հարավի գրեթե անմարդաբնակ տափաստանները բնակեցնելու, ինչպես նաև Տավրիկյան թերակղզին կայսրությանը միացնելու նպատակով կազմակերպվում է Ղրիմի հայ և հույն բնակչության գաղթը: Դա հարավում տարվող ընդհանուր քաղաքականության դրսևորումներից մեկն էր:

Ցարական զինվորական հրամանատարությունը և իշխանության տեղական ներկայացուցիչները լավ գիտակցում էին գաղթը կազմակերպելու հարցում ստեղծված բարդ իրավիճակը: Նրանք գործադրում էին բոլոր հնարավոր միջոցները առանց բարդությունների կազմակերպելու գաղթագնացությունը: Ղրիմաբնակ քրիստոնյաների գաղթը կազմակերպվում է մեծամեծ արտո-

նուիրյուններ տալու հորդորներով, համոզելու, կաշառելու, առանձին դեպքերում հարկադրելու, թաթարական վրեժխնդրության վտանգով նրանց ահաբեկելու միջոցով: 1778 թ. ամռանը գեներալ Ա. Սուվորովի գլխավորությամբ կազմակերպվում է Ղրիմի հայաբնակ վայրերից 12600 հայերի գաղթը[1]:

Հայերը թեպետև ի վերջո հաշտվել էին գաղթելու գաղափարի հետ, սակայն հեշտ չէր թողնել հարազատ բնակավայրերը, եկեղեցիներն ու վանքերը, ծաղկուն պարտեզները, հարազատների շիրիմները: Տխուր հոգով, իրենց հետ առնելով ինչքը, մագաղաթյա ճեռագրերը, եկեղեցիների անոթները, նշանավոր խաչքարերը՝ հույների հետ միասին, ռուսական զորքի հսկողությամբ նրանք առաջանում էին դեպի հյուսիսային տափաստանները:

Հատկանշական է, որ թուրքական տիրապետության ծանր հետևանքներն իրենց պատմական ճակատագրի վրա կրող հույն և հայ ժողովուրդների ղրիմաբնակ հատվածներն ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ այստեղ նույն բախտն էին կիսում: Ռազմաքաղաքական նույն պայմանների բերումով նրանք վերցրել էին գաղթականի ցուպը՝ նոր երկրում նոր կյանք սկսելու միևնույն հեռանկարով:

Գաղթողները ռուսական սահմանն անցնելուն պես ընկնում են դժվարին կացության մեջ: Չէին բավարարում տրանսպորտի միջոցները, պարենի, հագուստի, վառելիքի խիստ կարիք էր զգացվում: Մեղմ կլիմայի վարժված ղրիմցիները չէին դիմանում տափաստանային ձմռան սառնամանիքներին: Նրանցից շատերը, հատկապես ծերերն ու մանուկները զոհ էին դառնում ցրտերին ու համաճարակային հիվանդություններին:

Ի վերջո, հաջորդ տարում ղրիմահայերը հասնում են իրենց հատկացված տարածքը և Դմիտրի Ռոստովսկու ամրոցի մոտ Դոն գետի ալ ափին հիմնում են Նոր Նախիջևան քաղաքը, իսկ նրա շրջակայքում՝ Զալդը, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա և Նեռվիտա հայկական գյուղերը: Նոր բնակավայրի հիմնադրումը կատարվում է հանդիսավոր արարողությամբ: Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի հրավերով քաղաքի հիմնադրման հանդեսին մասնակցում էին Դմիտրի Ռոստովսկու ամրոցի կայազորի պետ Ս. Գուրևը, Դոնի հեծալազորը և նվագախումբը: Հրազենի որոտալից համազարկերով Դոնի անաղմուկ տափաստաններում ազդարարվում է հայկական նոր քաղաքի հիմնադրումը:

[1] Տե՛ս Присоеденение Крыма к России, сост.Дубровин Н., т.II, СПБ., 1885, с. 652,
Շահազիզ Ե., Նոր Նախիջևանը և Նոր Նախիջևանցիք, Թիֆլիս, 1903:
Միքայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Եր., 1964:

Եկատերինա Բ կայսրուհու՝ 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով* ղրիմահայերը ստացան մեծ առանձնաշնորհումներ: Կայսերական հրովարտակը օրենսդրական կարևորության մի փաստաթուղթ էր, որով սահմանվում էր նորահաստատ գաղութի իրավասությունը և մեծապես կանխորոշվում նրա զարգացման հեռանկարները:

Հրովարտակի համաձայն, հայ հասարակությունը տասը տարով ազատվում էր բոլոր հարկերից և պետական ծառայություններից: Տասը տարուց հետո վաճառականները պարտավոր էին վճարել իրենց դրամագլխի մեկ տոկոսի չափով, քաղաքացիները և արհեստավորները՝ յուրաքանչյուր տնից երկուական ռուբլի: Գյուղացիները, որոնցից ամեն մի հարկատու շնչի հատկացվում էր 30 դեսյատին հող, ոչ թե գլխահարկ էին վճարելու, այլ հողահարկ՝ տարին հինգական կոպեկ՝ յուրաքանչյուր դեսյատին հողի դիմաց: Նորաբնակներին ամրողջությամբ վերցված հատկացվում էր 87000 դեսյատին հողատարածություն: Նորաբնակները ազատվում էին զորքին օթևան ու պարեն հատկացնելու (պոստոյ) պարտավորությունից և զինակոչությունից (ռեկրուտ):

Յուրաքանչյուր վերաբնակվող ղրիմահայ, մտնելով պետական բնակիչների կարգը, կարող էր տերության ներսում ու նրա սահմաններից դուրս ազատ առևտուր անել, սեփական միջոցներով առևտրական նավեր կառուցել: Իրավունք էր վերապահվում անհրաժեշտ ֆաբրիկաներ, գործարաններ հիմնել, մրգատու այգիներ գցել, որից ստացված խաղողի գինին վաճառել ինչպես տեղի բնակչությանը, այնպես էլ Ռուսաստանի գավառներում: Թույլատրվում էր նաև խաղողի օղի պատրաստել, սակայն արգելվում էր այն վաճառքի հանել Ռուսաստանում: Այլ խոսքով՝ խրախուսվում էր առևտրի, երկրագործության, արհեստների ու արդյունաբերության զարգացումը՝ նորաբնակների ցանկություններին և ունակություններին համապատասխան:

Շնորհագրի չորրորդ կետը վերաբերում էր դավանանքի հարցին: Թույլատրվում էր կառուցել եկեղեցիներ, զանգակատներ, ազատորեն կատարել հայոց եկեղեցական ծիսակատարություններ՝ ենթարկվելով Էջմիածնի Մայր Աթոռի հոգևոր գերիշխանությանը:

Նախիջևան անունով հատուկ քաղաք հիմնելու և քաղաքին 12000 դեսյատին հողամաս տալու հետ միասին հրովարտակում պահանջվում էր քաղաքում հաստատել մագիստրատ և այնտեղ ազգային սովորությունների և իրավական նորմերի հիման վրա դատ ու դատաստան վարել ընտրված դատավորների միջոցով:

* Ռուսերեն և հայերեն լեզուներով գրված, շրեղ կազմի մեջ ամփոփված և կայսերական կնիքով հաստատված հրովարտակն այժմ պահվում է ՀՀ Մշակույթի նախարարության ադրնթեր պատմության պետական թանգարանում:

Կայսերական չնորհագրի ընձեռած հնարավորությունների շրջանակներում և դրա հիման վրա ձևավորվում է նորահաստատ գաղութի ինքնավարությունը: Ամենից առաջ կազմակերպվում է հայկական մագիստրատը: Այն իրականացնում էր քաղաքի և գյուղերի դատական, ոստիկանական և գործադիր իշխանության ֆունկցիաները: Հայ հասարակության բոլոր խավերի կողմից երեք տարի ժամանակով մագիստրատում ընտրվում էին հինգ դատավորներ: Դատավարությունը և գործավարությունը կատարվում էր հայերեն լեզվով, Աստրախանի կամ «Հայկական դատաստանագրքի» հիման վրա[1]: Այդ դատաստանագիրքը, որը կազմվել էր Մխիթար Գոշի դատաստանագրքի, ազգային սովորութային նորմերի և ռուսական օրենքների հիման վրա, ճանաչվել էր պետության կողմից: Այն, Նոր Նախիջևանից բացի, կիրառվել է նաև Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի գաղութներում:

Հայկական գյուղերը, մագիստրատին ենթակա լինելով հանդերձ, ունեցել են նաև կառավարման իրենց տեղական մարմինները՝ հանճինս «ավագի» և «ծերերի խորհրդի»: Դրանք ընտրվում էին տվյալ գյուղի հասարակության կողմից: Մագիստրատը բաղկացած էր նախագահից և չորսատենակալներից: Դրանցից երկուսը զբաղվում էին մագիստրատի դատարանական, իսկ մյուս երկուսը՝ ոստիկանության խնդիրներով: Վերջիններից մեկը կատարել է ոստիկանի պաշտոնը քաղաքում, իսկ մյուսը՝ հայկական գյուղերում: Առաջին շրջանում երկու ոստիկանները կարողանում էին կատարել ոստիկանական ծառայության ամբողջ պարտականությունները: Հետագայում այդ ծառայությունն ընդարձակելու պահանջ է առաջանում: 1861 թ. արդեն Նախիջևանի և հայկական գյուղերի ոստիկանական խումբը բաղկացած էր 20 հոգուց:

Հայկական գյուղերում մշտապես պահպանվել են կառավարման տեղական օրգանները՝ հանճին ավագի և չորս ծերերի խորհրդի: Առաջանը կամ ավագը և ծերերը հետևում էին մագիստրատի հրամանների և հանձնարարությունների կատարմանը, որոնք վերաբերում էին օրինականության պահպանմանը, հարկերի գանձմանը, հանգանակության անցկացմանը և այլ հարցերի:

Հ. Արղությանը մշակում է հոգևոր իշխանության իրավունքներն ու պարտականությունները սահմանող հատուկ կանոններ: Դրանով ռուսահայ թեմի առաջնորդը փորձում էր կարգավորել եկեղեցու և աշխարհիկ իշխանության փոխհարաբերությունները, եկեղեցին զերծ պահել աշխարհիկ կառավարչության միջամտությունից: •

[1] Տես Պողոսյան Ֆ., Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, Եր., 1967:

1811 թ. հաստատվում է Դոնի հայկական գաղութի զինանշանը, ուր պատկերված էին հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեղուներ ու փեթակներ:

Քաղաքը հիմնադրվում է պլանաչափ կարգով, նախապես մշակված նախագծի համաձայն: Դրա կենտրոնական մասում առանձնացվում է ընդարձակ քառակուսի հրապարակ, որի երկու կողմերում հիմնվում են խանութներ և գործատներ: Փողոցները կառուցվում են ուղղաձիգ դիրքով և, իրար խաչաձևելով, ստեղծում են հավասար մեծության քառակուսի թաղամասեր: Այսպիսով, Դոնի հայ համայնքը, օգտվելով չնորհագրով իրեն վերապահված արտոնություններից, ստեղծեց ազգային լեզվով ու իրավական նորմերով առաջնորդվող իր ներքին կառավարչությունը:

18-րդ դարի վերջին քառորդում ազատագրական չարժումների աչխուժացման, Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու ակնկալությունների շրջանում Դոնի ափերին զուտ հայկական քաղաքի և հինգ հայկական գյուղերի հիմնադրումը, հայ զանգվածին տրված լայն ինքնավարությունը մեծ տպավորություն են գործում ժամանակի հայության վրա: Նոր Նախիջևանում հայկական ինքնուրույն կյանքը վերականգնելու, հայկական մշակույթը զարգացնելու հույսեր էին ծնվում: Այդ առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայ ազատագրական չարժման ավանգարդում ընթացող հնդկահայերի կողմից Նախիջևանում հայկական դպրոց հիմնելու նպատակով մեծագումար նվիրաբերություններ կատարելը, Լազարյան ճեմարանը Մոսկվայի փոխարեն Նոր Նախիջևանում հիմնելու մտահղացումը, Խալդարյանի հայկական տպարանը Պետերբուրգից Նոր Նախիջևան տեղափոխելու իրողությունը և այլ փաստեր:

Մյուս կողմից, ռուսական արքունիքը ղրիմահայերին ազգային սովորույթների և ավանդությունների վրա խարսխվող ինքնավարություն ապահովելով՝ յուրովի արձագանքում էր հայ ժողովրդի ազատագրական բաղձանքներին: Հուսադրելով հայերին՝ ցարական կառավարությունը աչքի առաջ ուներ Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու իր նպատակները, որի համար հետամուտ էր նաև համակիրներ չահելու երկրամասի ժողովուրդների մեջ:

Ռուսական կյանքի ազդեցությամբ գաղութի կառավարչությունում վելանում են այնպիսի նոր մարմիններ, որոնք թեպետև չէին հակասում, բայց չէին էլ նախատեսված կայսերական հրովարտակով: Դա վերաբերում է առաջին հերթին քաղաքագլխի պաշտոնին: Գաղութի հիմնադրման հենց առաջին տարիներից հայ զանգվածի կյանքում էական դեր էր կատարում քաղաքագլուխը: Վերջինիս գործունեության շրջանակները հետզհետե ընդարձակվում էին: 19-րդ դարի առաջին տասնամյակներից սկսած՝ քաղաքագլուխն արդեն բավականաչափ լայն իրավունքներ ու պարտականություններ ուներ:

Նոր Նախիջևանի քաղաքագլուխը տնօրինում էր հասարակական եկամուտներն ու ծախսերը, փնտրում եկամտի նորանոր աղբյուրներ, զբաղվում գաղութի ընդհանուր գործերով: Նա ոչ միայն դուրս էր եկել ու ենթակա չէր մագիստրատի իրավասությանը, այլև ուղղություն էր տալիս դրան: Այլ խոսքով՝ ինքնավար գաղութի կառավարումը աստիճանաբար կենտրոնանում է քաղաքագլխի ձեռքին: Նա, փաստորեն, ինքնիշխան տնօրինում էր բոլոր գործերը՝ միայն հարկ եղած պարագայում դիմելով հայ հասարակության ընդհանուր ժողովի օգնությանը: Քաղաքագլուխն ընտրվում էր երեք տարի ժամկետով և իր գործունեության մասին հաշվետու էր միայն հայ հասարակությանը:

Նոր Նախիջևանի գաղութի կազմավորման ժամանակ հատկանշականն այն էր, որ ինչպես երկրագործությունը, այնպես էլ արդյունաբերությունը խարսխվում էին ազատ, վարձու աշխատանքի վրա: Ճորտատիրական արգելակումներից զերծ մնալը կարևոր մի հանգամանք էր, որը մեծապես ուղեննչեց հայ ինքնավար համայնքի տնտեսական ազատ զարգացման հետագա ամբողջ ընթացքը:



Նոր Նախիջևան. Սուրբ Խաչ վանքը (XVIII դ.)

Դոնի հայ զանգվածի հասարակական բնույթի բազմապիսի պետքերը հոգալու համար անհրաժեշտ էին նյութական միջոցներ: Բացի գաղութի շինությունների ու կառավարչության ծախսերից, Նախիջևանի և Մարիուպոլի (Հունական համայնքի) հասարակությունները պարտավոր էին պահպանել իրենց տարածքի փոստային կայանները, վերանորոգել ճանապարհներն ու կամուրջները: Դա ևս նկատելի ծախսեր էր պահանջում:

Գաղութն ուներ համապատասխան եկամուտներ, որոնք քաղաքագլխի իրավասության տակ էին գտնվում: Եռամյակի վերջում, երբ լրանում էր քաղաքագլխի լիազորությունների ժամկետը, նա հասարակությանը հաշվետու էր լինում իր պաշտոնավարության շրջանում ստացված եկամուտների ու կատարած ծախսերի մասին:

Հասարակական միջոցները առաջանում էին երկու հիմնական աղբյուրներից՝ ա) քաղաքի եկամուտներից և բ) գյուղերի ու քաղաքի բնակչության վրա դրվող լրացուցիչ, կամավոր կոչվող ամենամյա հարկերից: Քաղաքի եկամուտները գոյանում էին գլխավորապես քաղաքապատկան ունեցվածքից՝ քաղաքապատկան հողերի վարձակալությունից, խոտհարքներից, շուկայից, խանութներից, հյուրանոցներից, արդյունաբերական ձեռնարկություններից, աճուրդային վաճառքից: Եկամուտներ էին ստացվում վաճառականներից ու դրսեկ արհեստավորներից, անժառանգ մահացածների ունեցվածքը տնօրինելուց, գանձվող տուգանքներից և այլ աղբյուրներից: Ստացված եկամուտները ծախսվում էին մագիստրատի, դումայի, ուսումնարանների, ոստիկանության և հասարակական այլ կազմակերպությունների պահպանության, շենքերի ու կամուրջների, ճանապարհների կառուցման ու վերանորոգման վրա:

Աստիճանաբար աճում էին ինչպես քաղաքի եկամուտները, այնպես էլ ծախսերը: Այսպես, օրինակ, եթե մինչև 1840-ական թվականները եկամուտները չէին անցնում 10 հազար ռուբլուց, ապա 1859 թ. դրանք կազմում էին շուրջ 21 հազար ռուբլի, 1872 թ.՝ 34.000, 1884 թ.՝ 131.000, 1896 թ.՝ 244 հազար, իսկ 1910 թ.՝ 597.000 ռուբլու: Համանման ձևով աճում էին նաև ծախսերը: Այսպես, եթե 1862թ. ծախսերը կազմում էին 30.000 ռ., ապա 1884 թ. դրանք հասնում են 34.000-ի, իսկ 1910 թ.՝ 568.000 ռ.[1]:

Քաղաքի եկամուտների ու ծախսերի փոխհարաբերությանը հետևելու պարագայում ի հայտ է գալիս մի յուրահատկություն: Նոր Նախիջևանի բյուջեում եկամուտները մշտապես գերազանցում էին ծախսերը: Եկատերինոսլավի նահանգի մյուս քաղաքներից Նախիջևանը տարբերվում էր եկամուտները տնտեսելու և հաջորդ տարվա բյուջեին որոշ գումար փոխանցելու

[1] Տե՛ս Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, եր., 1985, էջ 46, 47:

յուրահատկությամբ: Եկամուտները ծախսերից մշտապես բարձր պահելը ուներ իր հիմքերը: Նոր Նախիջևանում կուլտուր-լուսավորական ու հասարակական բնույթի այնպիսի միջոցառումներ էին կատարվում, որոնք լրացուցիչ դումար էին պահանջում: Քաղաքային բյուջեի՝ նման ձևով տնօրինումը հնարավորություն էր ընձեռում ծախսերի մեջ չնախատեսված նման ձեռնարկումներ իրականացնել: Այսպես, օրինակ, 1870 թ. անհրաժեշտություն է առաջանում 822 ռ. ծախսել քաղաքի չատրվանը և 702 ռ.՝ գավառային ուսումնարանը վերանորոգելու համար[1]: Այդ գումարները չէին նախատեսված քաղաքի ծախսերի նախահաշիվներում:

***

Նոր բնակավայրում հաստատվելուց անմիջապես հետո սկսվում է քաղաքի, ինչպես նաև գյուղերի շինարարությունը: Նոր Նախիջևանի կառուցապատման աշխատանքներին բնորոշ էր էական մի հանգամանք: Նախիջևանը տարբերվում էր նահանգի մյուս քաղաքներից նրանով, որ այդ քաղաքները, սկզբնավորվելով որպես փոքր բնակավայրեր, ժամանակի ընթացքում վերափոխվել են քաղաքի: Առանց որևէ պլանի հիմնադրված լինելու հանգամանքը հետագայում նման քաղաքների վերափոխման համար խոչընդոտներ էր հարուցում: Նոր Նախիջևանը ի սկզբանե հատուկ նախագծված պլանով հիմնադրվեց որպես քաղաք: Տեղանքի պայմանները նկատի առնող, պետերբուրգում նախագծված քաղաքի հատակագիծը ոչ միայն չէր կաշկանդում, այլև լայն հնարավորություն էր ընձեռում քաղաքի հետագա ընդարձակման ու բարեկարգման համար:

Նախագծի համաձայն, քաղաքի կենտրոնում առանձնացվում է ընդարձակ քառակուսի հրապարակ, ուր կառուցվում է կենտրոնական Ս. Լուսավորչի եկեղեցին: Նրա երկու կողմերում հիմնվում են առևտրական կրպակներ ու արհեստանոցներ: Համեմատաբար կարճ ժամանակում ավարտվում է նաև քաղաքի մյուս հինգ եկեղեցիների կառուցումը: Դրանցից միայն Ս. Կարապետի եկեղեցին և Թոփտի գյուղի Ս. Փրկիչն է, որ կառուցվել են հայ ճարտարապետության ոճով, մյուսները հիմնվել են ռուսական-բյուզանդական ոճով:

Հոգևոր շինություններից առանձին ուշադրության է արժանի քաղաքից դուրս, յոթ կմ հեռավորության վրա գտնվող Սուրբ Խաչ վանքը: Հիմնադրման շրջանից (1792 թ.) վանքը դառնում է նաև կուլտուր-կրթական նշանավոր օջախ:

---

[1] Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՀԿՊՊԱ), ֆոնդ 139, գ. 1039, թ. 19:

1811 թ. հաստատվում է Նախիջևան քաղաքի նոր հատակագիծը, որը պահպանում էր փողոցների ուղղանկյուն ցանցը, քառանկյուն թաղամասերը և նախկին հատակագծի մյուս հատկանիշները: «Նախիջևանն ունի, – գրել է Ռափայել Պատկանյանը սույն հատակագծի մասին, – բարձրագույն հաստատված հատակագիծ (План), որով նորա թե փողոցները և թե կողմնափողոցները ձգված են ուղիղ գծերով արևելքեն դեպի արևմուտք ընդ երկայնության Դոն գետին, քաղաքը բաժանված է հավասար մեծության թաղերու: Շուկայի և ժամերու համար թողված են բավականին ընդարձակ քառակուսի հրապարակներ: Թերևս այդ իսկ է պատճառը, որ օդը և քամին կանոնավոր խաղալով նորա ուղղաձիգ փողոցների մեջ, քաղաքին կուտա առողջ պայման»[1]:

Հաստատված հատակագծի համաձայն, փողոցների երկու կողմերում աստիճանաբար բնակելի տներ են կառուցվում: Փայտյա կառուցումները փոխարինվում են քարե և աղյուսե շենքերով: Հետզհետե ավելանում են արհեստավորական գործատները և առևտրական խանութաշարքերը, կառուցվում են հյուրանոցներ, հիվանդանոցներ: Բարեկարգվում են ճանապարհները, սալահատակվում են կենտրոնական փողոցները: Քաղաքում անցկացվում է ջրմուղի ցանց, սկսում է գործել ձիաքարշ տրամվայ, հետագայում անց է կացվում նաև էլեկտրական լուսավորություն:

Նոր Նախիջևանը համապատասխան հատակագծով կառուցվելու և ժամանակի ընթացքում բարեկարգվելու շնորհիվ քաղաքաշինական ինքնուրույն նկարագիր է ունեցել և չարունակ գտնվել բարվոք վիճակում: Պատահական չէ, որ այն գրավել է Նովոռոսիայի երկրամասը ժամանած ճանապարհորդների և նշանավոր գործիչների ուշադրությունը: Նրանք գովեստով են խոսել քաղաքի, նրա տնտեսության ու արտադրության մասին: Կոմս Ի. Բեզբորոդկոն, օրինակ, Կովկասում ճամփորդելու ժամանակ, 1812 թ. սեպտեմբերին հասնում է Նոր Նախիջևան և իր օրագրում գրանցում հետևյալը. «Եկա Նախիջևան առավոտյան ժամը 10-ին, դիտեցի քաղաքը: Եղա քարավանատունը, քաղաքը բազմամարդ էր, կանոնավոր փողոցներով: Շինությունները կառուցված էին հայկական ճաշակով: Կային և լավ քարե տներ, բավական մեծ մի քանի քարաշեն եկեղեցիներ, շատ այգիներ: Քաղաքի դիրքը հիանալի է՝ Դոնի ափին, բարձունքի վրա»[2]:

Հայրենական պատերազմի հերոս Ն. Ն. Ռևասկին Ա. Ս. Պուշկինի հետ դեպի Կովկաս կատարած ճանապարհորդության ընթացքում (1820 թ.) այցե-

---

[1] Սյուլյուկ, Նոր Նախիջևանի հիմնարկության պատմությունը, Թիֆլիս, 1879, էջ 52-53:

[2] Бумаги, относящиеся до Отечественной войны 1812 года. Часть десятая. М.,1908, с.8.

լում է մերձազովյան քաղաքները: Իր թողած նամակներում երկրամասի նշանավոր քաղաքներից Տագանրոգի մասին գրել է. «Քաղաքը լավ տեղում է, կառուցումներով աղքատ է, ունի ծղոտով ծածկված շատ տներ, սակայն առևտրով հարուստ է և սովորաբար կառավարությանը Օդեսայի համեմատությամբ կրկնակի (եկամուտ – Վ. Բ.) է բերում»: Ապա լռությամբ անցնելով Ռոստովի մոտով, շարունակում է. «Ամրոցի մյուս կողմը կա ուրիշ արվարձան կամ Նախիջևան անվանվող հայկական քաղաք՝ ընդարձակ, բազմամարդ և առևտրով խիստ հարուստ: Կենցաղով, կառուցումներով, դեմքերով, հագուստով, ամեն ինչով ինքնատիպ է»[1]: Միքայել Նալբանդյանը 1850-ական թվականների վերջերին գրել է. «... քաղաքը բավական գեղեցկաշեն է, տները եվրոպական ճարտարապետությամբ, մանավանդ որ գտնվում էին քաղաքի կենտրոնում, համարյա թե բոլորը քարից ու աղյուսից չինած: Եկեղեցիքը, որ վեց հատ են թվով, հոյակապ և ամենևին նոր ճարտարապետության կանոններով, որոնցից ավագը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, գտնվում է քաղաքի մեջտեղը մի մեծ հրապարակի վրա: Մոտ տեղերը Նախիջևանի շրջակայքում չկան այդպիսի հոյակապ տաճարներ»[2]: Համանման բարձր տպավորություն են ստացել Դոնի հայկական քաղաքից ճանաչված ակադեմիկոս Ս. Պալլասը, Պետերբուրգի և արտասահմանյան մի քանի ակադեմիաների անդամ Անատոլի Դեմիտովը, ֆրանսիացի հայտնի երկրաբան Հոմեր դը Հելը և ուրիշներ:

Նոր Նախիջևանի ու ամբողջ գաղութի բարվոք վիճակը, շրջակա բնակավայրերից դրականորեն առանձնանալու հանգամանքը շեշտվել են անգամ ցարական արքունիք ներկայացվող, գովեստների մեջ խիստ ժլատ ամենամյա պաշտոնական զեկուցագրերում: Տագանրոգի քաղաքապետարանի, որի վարչական ենթակայության ներքո էր Նոր Նախիջևանը, 1850 թ. հաշվետվության մեջ կարդում ենք. «Դոնի Նախիջևանը Նովոռոսիայի երկրամասի լավագույն քաղաքներից մեկն է. վարում է նշանակալից ներքին առևտուր, ունի մի քանի, մասնավորապես, կաշվի չհումքաթաքեր ֆաբրիկաններ ու գործարաններ: Նախիջևանի օկրուգի գյուղացիներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, քաղաքապետության գյուղական մյուս բնակչության նկատմամբ հատկանշվում են ոչ միայն հարստությամբ, այլև առանձնահատուկ բարեկեցությամբ»[3]:

---

[1] Архив Раевских. т. I, С.Петербург, 1908, с.519-520.

[2] **Նալբանդյան Մ.**, երկերի լիակատար ժողովածու, հ. 1, եր., 1940, էջ 347:

[3] Центральный государственный исторический архив России (ЦГИАР), ф. 1281, оп.5, д.60, л.70-71.

***

Նոր Նախիջևանն այն սակավաթիվ հայկական գաղութներից է եղել, ուր երկրագործությունը և անասնապահությունը մշտապես նշանակալի դեր են կատարել: Այդ հանգամանքը իր դրոշմն է դրել գաղութի տնտեսական և հասարակական բովանդակ կյանքի վրա:

Ռուսական կայսրությունն առևտուրն ու արդյունագործությունն աշխուժացնելու հետ մեկտեղ հետամուտ էր Նովոռոսիայում նաև երկրագործությունն արմատավորելու և զարգացնելու գործին:

Նովոռոսիայի դարերով խոպանը՝ «վայրի տափաստանը», ինչպես կոչվում էր այն, հերկելու, երկրագործությունը արմատավորելու նպատակով ռուսական կառավարությունը նպաստում էր գյուղական բնակչության վերաբնակեցմանը: Նման պարագաներում Ղրիմից հայ և հույն բնակչության արտագաղթը կազմակերպվում է ոչ միայն քաղաքային ազգաբնակչությունից, այլև մեծ չափերով նաև գյուղերից:

Դոնի հարթավայրում բնակություն հիմնած հինգ հայկական գյուղերը 50.000 դեսյատինից ավելի հողատարածք ստացան: Սակայն նրանց հողային տարածությունների մեծագույն մասն ընկած էր Դոնի ձախ ափին և սահմանակից էր կազակային զորքերի խուտորներին: Դոն գետի վրայով երթևեկելու դժվարությունները դրեթե անօգտագործելի էին դարձնում առանց այն էլ ճահճոտ այդ տարածությունները: Այդ պատճառով հայ հասարակության դիմումի հիման վրա պետական սենատը լուծում է հայկական գաղութի և Դոնի կազակային զորքերի հողային սահմանների հարցը: Դոնի ձախ ափի հայերին պատկանող 52.000 դես. տարածությունն անցնում է կազակային զորքերին, իսկ վերջիններիս պատկանող գետի աջ ափի Սամբեկի տափաստանը տրվում է հայ հասարակությանը: Այդ փոխանակությամբ՝ Սամբեկի 50.000 դես. արգավանդ հարթավայրը Դոնի աջափնյա մասի հայերին պատկանող 30.000 դես. հողատարածքին միացնելը լավագույն պայմաններ է ստեղծում երկրագործության զարգացման համար:

Գյուղատնտեսության ճյուղերի մեջ առաջատար տեղ ուներ դաշտավարությունը՝ հացահատիկային կուլտուրաների մշակումը: Հայկական գյուղերում մշակվում էին ցորեն, ինչպես նաև վարսակ, գարի, կորեկ: Վարելահողերը չէին պարարտացվում, և բերքատվությունը կախված էր տվյալ տարվա տեղումների քանակից: Դաշտավարության այն ժամանակվա պայմաններում հաջող տարիներին ցանված հացահատիկից մինչ ութ անգամ ավելի բերք էր հավաքվում: Տագանրոգի քաղաքապետարանի 1858 թ. տարեկան հաշվետվության համաձայն, հայ երկրագործները 11276 չետ. գարնանացան ցորենից ստացել են 90208 չետ. բերք: Բերքատվությունը, այսինքն, ցանված և ստաց-

ված ցորենի հարաբերությունը հասել է ութի: Այն պարագայում, երբ Մարիուպոլի և Տագանրոգի օկրուգների երկրագործների մոտ բերքատվության այդ հարաբերությունը տատանվում էր 4–6-ի միջև:

Հայկական գյուղերը արտադրած ցորենի քանակով գտնվում էին Դոնի ավազանի երկրագործների առաջին չարքերում: Տագանրոգի քաղաքապետը արքունիք ներկայացրած հաշվետվության մեջ գրում էր. «Նախիջևանի օկրուգի գյուղացիները աչքի են ընկնում աշխատասիրությամբ, հաջողությամբ մշակում են իրենց դաշտերը և խելացիորեն օգտվում բերքից, մթերքի պակասություն չեն քաշում... Այստեղի տնտեսության գլխավոր մթերքը ցորենն է, որը քաղաքապետության արտաքին առևտրի մեջ առաջին տեղն է բռնում և իր լավորակությամբ արտասահմանում գերազանցվում է սևծովյան նավահանգիստներից արտահանվող նույն ցորենի ուրիշ տեսակներից»[1]:

Գյուղատնտեսական արտադրանքի՝ ապրանքային բնույթ ստանալուն զուգընթաց հատկապես 19-րդ դ. 30–40-ական թվականներից ի վեր ընդարձակվում են ցանքատարածությունները: Դրա հետ մեկտեղ ուղիներ էին որոնում բերքատվությունը բարձրացնելու համար: Բարձրագույն իշխանությունների հավանությամբ հիմնվել էին բազմաթիվ «ընկերություններ», որոնց նպատակն էր բարձրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը:

Երկրագործությունը, սակայն, միայն գյուղական բնակչության մենաշնորհը չէր: Քաղաքի բնակչությունը ևս զգալի չափով պարապում էր տնտեսության այդ ճյուղով: Նոր Նախիջևանում երկրագործությամբ, առավելապես անասնապահությամբ զբաղվելու նպատակահարմարությունը նախատեսված էր արդեն պաշտոնապես՝ կայսերական հրովարտակի հինգերորդ հոդվածով քաղաքին հատկացվել էր 12000 դեսյատին արոտավայր:

Գյուղատնտեսական զբաղմունքների մեջ ուրույն տեղ ուներ այգեգործությունը: Այն տարածված էր թե՛ հայկական օկրուգի գյուղերում և թե՛ Նոր Նախիջևանում: Այգեգործության մեջ առանձնահատուկ նշանակություն ուներ խաղողագործությունը: Դոնի տափաստանում խաղողագործության լայն տարածումը հայերի անվան հետ է կապվում: Ղրիմի հայերը և հույները, տակավին 14-րդ դարից սկսած արդյունավետ կերպով զբաղվում էին խաղողի և պտղատու այգիների մշակումով[2]: Նրանք այդ զբաղմունքը իրենց հետ նոր բնակավայր տեղափոխեցին և սկսեցին լայնորեն զբաղվել խաղողագործությամբ: Խաղողից մեծ չափերով գինի էր պատրաստվում:

[1] Там же, ф. 1281, оп.5, д.60, л.л. 96, 56, 57.

[2] **Միքայելյան Վ.**, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, եր., 1964, էջ 200–202:

Հայկական գաղութը առանձնանում էր իր շրջապատի բնակավայրերից մեծաքա ստանալու նպատակով թթենու ընդարձակածավալ այգիների մշակմամբ: Այգեգործության այս ճյուղը հետագայում զարգացում չապրեց, ընդհակառակը, աստիճանաբար մարեց:

Դոնի հայերը իրենց այգիներում աճեցնում էին նաև զգալի քանակությամբ խնձորի, սալորի, տանձի, կեռասի, ծիրանի, բալի, դեղձի ծառեր: Բանջարաբոստանային կուլտուրաներից մշակվում էր ձմերուկ, սեխ, վարունգ, կաղամբ, սիսեռ, լոբի, կանաչեղեն:

Նոր Նախիջևանի բնակչությունը ևս շարունակ զբաղվում էր այգեգործությամբ և անասնապահությամբ: Անգամ 20-րդ դարի սկզբներին, երբ արդյունաբերական ձեռնարկությունները, երկաթուղային ու խճուղային ճանապարհները, փողոցներն ու հրապարակները, տնտեսական օժանդակ շինությունները նշանակալի տարածք էին զբաղեցնում, քաղաքի օգտագործելի հողատարածությունների հիմնական մասը՝ 73 տոկոսը, հատկացվում էր գյուղատնտեսությանը:

Անասնապահությունը. – Անասնապահությունը նախիջևանցիների տնտեսական կյանքում կարևոր դեր ուներ: Անասնապահության առանձին ճյուղերը ծառայում էին կյանքի տարբեր պահանջները բավարարելուն: Եթե խոշոր եղջերավոր անասուններն ու ձիերը անհրաժեշտ էին նաև դաշտավարության համար՝ որպես քաշող ուժ և տրանսպորտի միջոց, ապա մանր եղջերավոր անասունները պահում էին գերազանցապես ճարպի ու բրդի համար: Լայն սպառում ունեին թե՛ մեկի և թե՛ մյուսի կաշին, միսը, կաթնամթերքը:

Նովոռոսիայի անծայրածիր տափաստանները հնուց ի վեր նպաստավոր պայմաններ են ստեղծել անասնապահության համար: Աչխարհագրական այդ հարմար պայմանները և անասնապահության բազմակողմանի նշանակությունը խթանում էին նրա զարգացումը՝ հենց գաղութի սկզբնավորման շրջանից:

Դոնի հայկական գաղութում զբաղվում էին անասնապահության գրեթե բոլոր ճյուղերով: Երկրագործության նման անասնապահությունը ևս միայն հայկական գյուղերի տնտեսության շրջանակներով չէր սահմանափակվում: Քաղաքի բնակչությունը, թերևս երկրագործությունից ավելի մեծ չափերով, զբաղվում էր անասնապահության տարբեր ճյուղերով և երբեմն ունեցած անասունների գլխաքանակով գերազանցում անգամ գյուղերին:

Խոշոր եղջերավոր անասուններից պահում էին գլխավորապես «չերքեզական» ցեղատեսակի կովեր: Դրանք ավելի փարթամ և ուժեղ էին այնտեղ տարածված «տափաստանային» ցեղի համեմատությամբ: Ջիաբուծությունից տարածված էր «Դոնի» և «չերքեզական» ցեղատեսակը: Հայկական գյուղերում ավանդաբար պահում էին նաև գոմեշներ, որոնց քանակը նախաեռֆորմ-

յան շրջանում հասնում էր վեց-յոթ հարյուրի: Հավանաբար թաթարական միջավայրից ժառանգած ազդեցությամբ՝ հայերը և հույները խոզաբուծությամբ չէին զբաղվում: Նրանք միայն 1840-ական թվականներից սկսեցին հետզհետե անցնել նաև անասնապահության այդ ճյուղին:



Նոր Նախիջևան. Քաղաքային թատրոնը

Նոր Նախիջևանն իր հայկական գյուղերով համարվում էր երկրամասի անասնապահական հարուստ շրջաններից մեկը: Մոտավոր պատկերացում կազմելու համար հիշատակենք, որ 1810 թ. Նոր Նախիջևանն ուներ 5690 խոշոր եղջյուրավոր անասուն և 3595 ձի, իսկ հինգ հայկական գյուղերը՝ համապատասխանաբար 5198 և 880:

1865 թվականին, ավելի քան կես դար անց, հարաբերությունը հետևյալն էր՝ Նոր Նախիջևանում կար 1280 խոշոր եղջյուրավոր անասուն և 1550 ձի, իսկ հայկական գյուղերում՝ 9255 անասուն և 1411 ձի: Ինչպես դժվար չէ նկատել, գյուղերում անասունների գլխաքանակը ավելացել է, իսկ քաղաքում պակասել: Սակայն չորս տասնամյակ անց՝ 1905 թ. քաղաքն ուներ 1309 խոշոր եղջերավոր անասուն և 2800 ձի[1]: Հատկանշական է, որ Նոր Նախիջևանում ձիաբուծությունը արագորեն առաջադիմում էր: Նշանակում է, քաղաքային բնակչությունը ձին՝ որպես տրանսպորտի միջոց և քաշող ուժ ավելի շատ էր օգտագործում, քան գյուղերում:

Ոչխարաբուծությունը հատկապես մեծ տարածում ուներ: Հարավի լայնարձակ մարգագետինները նպաստավոր պայմաններ էին ստեղծում անասնապահության այս ճյուղի զարգացման համար: Դրանցից զատ, պետությունը մահուդի արտադրությունը հումքով ապահովելու նպատակով տարբեր միջոցների էր դիմում՝ ոչխարաբուծությունը ծավալելու համար: Կառավարությունը նախանձախնդիր էր հատկապես Երբագեղմ, նոր ցեղատեսակի ոչխարաբուծության արմատավորման հարցում: Ռուսաստանի հարավում Երբագեղմ ոչխարաբուծությունը տարածելու նպատակով կառավարությունը 1804 թ. հատուկ հրամանագիր ընդունեց: Դրա համաձայն, ոչխարաբուծությանն այդ ճյուղով զբաղվել ցանկացողներին արտոնյալ պայմաններով հողատարածություն էր տրամադրվում: Օրենքը մեծապես նպաստեց նշված ճյուղի զարգացմանը, և 19-րդ դարի առաջին տասնամյակներում Նովոռոսիայում հսկայական քայլերով ծավալվեց Երբագեղմ ոչխարաբուծության տարածումը: Ստացվող բուրդը արտադրական նպատակներով օգտագործելու համար հիմնվեցին նաև բրդի նախնական մշակման, տեսակավորման ու լվացման ձեռնարկություններ:

Նախիջևանի հողատերերը 1814 թ. Սամբեկի հարթավայրի հողատարածքում սկսեցին զբաղվել իսպանական բարձրորակ ցեղի ոչխարաբուծությամբ: Կարճ ժամանակում ցեղական ոչխարաբուծության արմատավորումը այնքան առաջ գնաց, որ 1830 թվականին արդեն քաղաքի ֆերմաների 50 տոկոսը ցեղայնացված էր: Մեկ տասնամյակ անց հայկական գաղութի մանր եղջերավոր անասունների 40 տոկոսը, իսկ 1850 թվականին՝ 50 տոկոսից ավելին կազմում էին իսպանական և այլ բարձրացեղ ոչխարների տեսակները: Դոնի հայերը շրջապատի ոչխարաբուծական տնտեսություններից համեմատ ոչխարի ամեն մի գլխաքանակից 2-3 անգամ ավելի բուրդ էին ստանում: Դա կատարվում էր ոչխարի ցեղայնությունը բարձրացնելու, նոր տեսակներ բուծելու շնորհիվ:

Նոր Նախիջևան քաղաքի բնակչությունը սկզբնապես լայնորեն զբաղվում էր նաև անասնապահության այս ճյուղով: 1810 թ., օրինակ, քաղաքը պահում էր 51 հազար, 1824 թ.՝ 27 հազար ոչխար, իսկ դարի կեսերից, փաստորեն, դադարում է անասնապահության այս ճյուղով զբաղվել: Բուծվում էր որոշ քանակությամբ ոչխար և այն էլ ագարակատեր աղաների կողմից:

[1] Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, էջ 80-81:

նուի ագարակների երկրագործական ու անասնապահական տնտեսությունները վարչական մարմինների վերահսկողությունից դուրս, հաճախ ապօրինի եղանակներով են ծավալվել : Ագարակներում ժամանակի ընթացքում կառուցվել էին տներ, քամաղացներ, պահեստներ և տնտեսության համար անհրաժեշտ այլ օժանդակ շինություններ: Այդ ագարակների տնտեսությունների մշակումը կատարվում էր առավելապես դրսեկ, ժամանակավոր վարձու աշխատողների միջոցով: Ագարակատերերն այդ հողերը սեփականացրել էին: Հայ հասարակությունը բողոքում էր դրա դեմ, պնդելով, որ հողը կարող է մասնավոր սեփականություն դառնալ, եթե նրա ձեռքբերումը կատարվում է գնման միջոցով և հաստատվում պետական օրգանների կողմից:

Արդարադատության նախարարը, ծանոթանալով հայկական գաղութի հողային հարցի պատմությանը, մերժում է եղած առաջարկները: Նա գտնում է, որ հարկ է վերականգնել հինգ հայկական գյուղերի հողային իրավունքները՝ ըստ կայսերական հրովարտակի: 1848 թ. հունիսի 14-ին պետական խորհուրդը, քննարկելով Նախիջևան քաղաքի և հինգ հայկական գյուղերի վիճելի հողերի հարցը, որոշում է հաստատել արդարադատության նախարարի կարծիքին համերաշխող սենատորների մեծամասնության եզրակացությունը[1]:

Սենատի հավանության արժանացած պետական խորհրդի որոշմամբ 1851 թվականից ագարակների հողատարածություններն անցնում են հայկական գյուղերին: Սակայն ագարակատերերին թույլատրվում էր ազատորեն օգտվել այդ հողերից, միայն թե նրանք պարտավոր էին հայկական գյուղերին դեսյատինի դիմաց վճարել 25 կոպեկ թղթադրամ: Այսպիսով, գաղութի կալվածատիրական-վաճառականական շերտերի դեմ երկարատև ու համառ պայքարում հայ երկրագործները կարողացան պաշտպանել իրենց իրավունքները:

Հողային հարցի շուրջը ծավալված երկարատև պայքարը լինքնին վկայում է հայկական գաղութի տնտեսական կյանքի յուրահատկության, դրա զարգացման առանձնահատկությունների մասին: Դրանից միաժամանակ հետևում է, որ հողը եկամտի լավագույն աղբյուր էր: Գաղութի վաճառականական-կալվածատիրական խավի՝ առավել մեծ քանակի հողամասեր ձեռք բերելու ձգտումը պայմանավորված էր գյուղատնտեսական մթերքների՝ շրջանառության ոլորտ մտնելով ապրանքային բնույթ ընդունելու և դրանից խոշոր շահույթ ստանալու հետ: Երկրագործ բնակչության և կալվածատիրական դասի միջև հակասությունները սրվեցին հատկապես 1830-ական թվականներից, երբ սկսվեց ապրանքափոխանակային հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանը:

[1] ЦГИАР, ф. 1152, оп.3, д.66, л.30-42.

***

Գաղութի հիմնադրման սկզբից ի վեր արհեստները երևան եկան բավականաչափ կատարելագործված տեսքով: Նոր պայմաններում արհեստները հետագա զարգացում ապրեցին: Դոնի ավազանում հաստատվելուց հետո բնակչության անմիջական պահանջարկը և համապատասխան հումքի առկայությունը կանխորոշում ու առաջին պլան էին մղում արհեստագործական որոշակի ճյուղեր: Առատորեն ստացվող անասունների կաշին ու մորթին լավագույնս խթանում էին կաշեգործական արհեստների՝ կոշկակարության, մուշտակագործության, թամբագործության զարգացումը: Ռոստովի և Տագանրոգի նավահանգիստներով արտահանվող մեծաղը հումք էր դարբնության, պայտագործության, պղնձագործության, փականագործության և մյուս արհեստների համար: Միաժամանակ, զարգացում էին ապրում հայերի համար ավանդական այնպիսի արհեստներ, ինչպիսիք են ոսկերչությունն ու արծաթագործությունը:

Նշված արհեստներից զատ, գոյություն ունեին բազմաթիվ այլ արհեստներ, առանց որոնց բնակչությունը չէր կարող հոգալ կյանքի ու կենցաղի առօրյա պահանջները: Դրանցից էին դերձակությունը, գդակագործությունը, հյուսնությունը, ապակեգործությունը և շատ ուրիշ արհեստներ: Դոնի հայերը զբաղվում էին ոսկերչությամբ, արծաթագործությամբ, դարբնությամբ, պղնձագործությամբ, պայտարությամբ, կոշկակարությամբ, մուշտակագործությամբ, կաշեգործությամբ, թամբագործությամբ, դերձակությամբ, գդակագործությամբ, հյուսնությամբ, քարակոփությամբ, մոմագործությամբ և այլ արհեստներով:

Մինչև 19-րդ դարի կեսերը Նոր Նախիջևանը աչքի էր ընկնում որպես արհեստագործական և առևտրական նկարագիր ունեցող քաղաք: Քաղաքի բնակչության զգալի մասը զբաղված էր արհեստագործությամբ: Այսպես, 1793 թվականին արհեստավորական շերտը կազմում էր քաղաքի բնակչության 32, իսկ ամբողջ հայ համայնքի՝ 23 տոկոսը: Երեսուն-երեսունհինգ տարի հետո նրանք կազմում էին քաղաքի բնակչության 13 և ողջ գաղութի 10 տոկոսը: Դա նույնպես պատկառելի թիվ էր: Այդ նույն ժամանակ Անդրկովկասի քաղաքներում մանր արտադրողները անհամեմատ ավելի ցածր տոկոս էին կազմում: Երևան քաղաքում, օրինակ, արհեստավորները կազմում էին ամբողջ բնակչության 6 տոկոսը: 19-րդ դ. 60-ական թվականներին արհեստավորական շերտը կազմում էր քաղաքային բնակչության 5-6 տոկոսը[1]: Հասկանալի

[1] **Բարխուդարյան Վ.,** Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, եր., 1967, էջ 199-201:

է, որ անցյալ դարի կեսերից սկսած արդյունաբերության ճը տնտեսության մեջ, բնականաբար, սահմանափակում էր արհեստների տեսակարար կշիռը:

19-րդ դարի առաջին կեսին արհեստավորական շերտի տոկոսային նման բարձր կազմը վկայում է այն մասին, որ արհեստագործական արտադրանքը իր զգալի մասով սպառվում էր շուկայում: Իր հայրենի Նոր Նախիջևանի պատմությանը քաջատեղյակ, մեծանուն բանաստեղծ Ռափայել Պատկանյանը, քաղաքի հիմնադրման 100-ամյակի առթիվ փաստարկում էր. «Լուսավորիչ եկեղեցիի ահագին քառակուսի հրապարակը (մեյտան) շրջապատած էր մի ժամանակ բազմամարդ, իսկ այժմ դատարկված երկկարգ կրպակներով, ուր 40 տարի առաջ կաշխատեին հազարավոր արվեստավորներ, որոնց ձեռագործը ոչ միայն կլցներ քաղաքացոց պիտույքը, այլ Նախիջևանի շրջակա քաղաքներին ու գեղերին կհայթայթեր պիտանի ապրանք»[1]: Դրսի շուկայում առաջնահերթ տեղ էին բռնում Կովկասի լեռնաբնակների համար արտադրվող ձիասարքը՝ թամբ, սանձ և այլ անհրաժեշտ իրեր: Եկատերինոսլավի նահանգի վիճակագրական պատկերը ներկայացնող աշխատություններում ընդգծվում է այլ քաղաքների համեմատությամբ Նոր Նախիջևանում արհեստների որոշակի զարգացած լինելու հանգամանքը: Տագանրոգի քաղաքապետի 1850 թ. տարեկան հաշվետվության մեջ կառավարության ուշադրությունն էր հրավիրվում Նոր Նախիջևանի արհեստավորների թողարկած զենքերի, սանձերի, ձիասարքի և դրանք արծաթյա նուրբ զարդերով պատելու՝ կատարելության հասած վարպետության վրա: Ըստ քաղաքապետի, այդ իրերը աչքի էին ընկնում իրենց աշխատանքի հիանալի արվեստով: Նրանցից մի քանի նմուշ ուղարկված է «Հաբսբուրգյան հանճնաժողովին»՝ «Լոնդոնի համաշխարհային ցուցահանդես ուղարկելու»[2]:

Արհեստագործության զարգացման ու մասնագիտացման մասին է վկայում այն, որ հայ համայնքի արհեստավորները ստեղծել էին իրենց կազմակերպությունները՝ համքարությունները: Գաղութի տնտեսական հարաբերություններից բացի, արհեստները էական դեր են ունեցել նաև հասարակական կյանքում:

Համքարությունները միևնույն մասնագիտության արհեստավորների կազմակերպություններ էին, որոնք ղեկավարվում էին տվյալ միության անդամների կողմից ընտրված գլխավոր վարպետի (ուստաբաշու) կողմից: Համքարությունների անդամների միջև կապ ստեղծողը զբաղմունքի նույնությունն էր, տնտեսական համանման շահերը, կառավարման, պաշտամունքի

[1] Այուլյուկ, նշվ. աշխ., էջ 50:

[2] ЦГИАР, ф. 1281, д.60, л.24.

ընդհանրությունը: Այդ ամենը միությանը տալիս էր եղբայրության բնույթ: Հավասարության և փոխադարձ օգնության գաղափարը համքարության գլխավոր գծերից մեկն էր: Համքարությունն օգնում էր իր հիվանդ, աշխատանքի անընդունակ դարձած անդամներին: Նման օգնության համար համքարություններն ունեին իրենց դրամական միջոցները, որոնք գոյանում էին ընկերության անդամների մուծած անդամավճարներից, տուգանքներից և այլ աղբյուրներից:

Համքարության անդամների փոխհարաբերությունը հենվում էր դարերով ավանդված սովորութային սկզբունքների վրա: Այդ պատճառով էլ դրանք իրենց վարք ու բարքով խիստ պահպանողական էին: Համքարության ղեկավար կազմը ներկայացնում էին ուստաբաշին, նրա մեկ կամ երկու օգնականները (ախախկալ), գանձապահը (խազնադար) և սուրհանդակը (իգիթբաշի): Արհեստավորական այդ կազմակերպության բարձրագույն օրգանն ընդհանուր ժողովն էր, որին մասնակցում էին նրա բոլոր անդամները: Ընդհանուր ժողովն էր ընտրում համքարության պաշտոնյաներին, լսում նրանց հաշվետվությունը, կատարում հարկերի ու տուրքերի բաշխում և այլ գործեր:

Ղրիմի հայ զանգվածները, մայր հայրենիքից իրենց հետ տանելով արհեստներին տիրապետելու վարպետությունը, դարերի ընթացքում ավելի են կատարելագործում այն: Ղրիմում նույնպես արհեստագործությունն առաջադիմել էր այն աստիճան, որ արհեստավորները ստեղծել էին իրենց համքարությունները: Նոր Նախիջևանը Ղրիմից ժառանգեց բավականաչափ զարգացած, բազմաճյուղ արհեստագործություն՝ յուր համքարային կազմակերպություններով:

Նոր Նախիջևանի արհեստավորական կազմակերպությունները հար և նման են եղել Անդրկովկասի հայ համքարություններին: Սակայն ղրանք միաժամանակ կրել են ռուսական միջավայրի ազդեցությունը: Դա արտահայտվել է աշակերտների ուսուցման համար ավելի կարճ ժամկետ սահմանելու, համքարությունները ուղղակի մագիստրատին ենթարկելու մեջ և այլն: Ռուսաստանում համքարություններն ավելի ուշ առաջացան և լայն տարածում չստացան: 19-րդ դ. կեսերին Նոր Նախիջևանում գոյություն է ունեցել 35-40 համքարություն: Այդ նույն ժամանակ Ռոստով քաղաքում կար ընդամենը 15 համքարություն:

Հետեվաբար, հետևելով արդյունաբերության զարգացման հետևանքով մանր արտադրողների քայքայումն այնքան ակնբախ էր դարձել, որ Ռ. Պատկանյանը 1879 թ. ցավով ու ափսոսանքով էր խոսում արհեստավորության վաղեմի ծաղկուն վիճակի մասին: Արհեստավորական դպրոց բացելու նրա նախաձեռնությունն ու ջանքերը բխում էին հայ արհեստագործական կորսված աշխուժ կյանքը վերականգնելու նույն ձգտումից: Անվանի բանաստեղծը ար-

հեստները առաջին հերթին համարում էր որպես գաղութի բնակչության միջնախավին աղքատացումից ետ պահող կարևոր պայման: Սակայն հայ բնակչության վրա ռուսական ազդեցության ուժեղացման պայմաններում նա համքարությունները միաժամանակ դիտում էր որպես ավանդական սովորություններն ու հայերի ազգային նկարագիրը պահպանող, դրսեկ վարք ու բարքին դիմակայող մի կազմակերպություն:

Արհեստագործությունը, սակայն, այնքան մեծ ծավալ էր ընդունել, որ չէր կարող հեշտությամբ տեղի տալ և միանգամից դադարեցնել իր գոյությունը, մանավանդ, որ հայկական գաղութում արդյունաբերությունը առաջացավ ու զարգացավ հենց արհեստագործական հիմքի վրա: Բայց հետռեֆորմյան ժամանակաշրջանում Դոնի հայկական զանգվածի համքարային կազմակերպություններն արդեն այն աստիճան կորցրել էին իրենց նշանակությունը, որ դրանց մասին որևէ հիշատակություն չի պահպանվել: 20-րդ դ. սկզբներին, ժամանակի ոգուն համապատասխան, համքարությունների փոխարեն ստեղծվում է արհեստավորական վարչություն:

Հայկական գաղութում արհեստագործությունը, հետռեֆորմյան շրջանում թուլանալով և ժամանակի պահանջներին համապատասխան փոփոխություններ կրելով հանդերձ, ինչ-որ չափով, այնուամենայնիվ, պահպանում էր իր նշանակությունը: Արհեստագործությունը, արդյունաբերության կողքին և նկատելի չափով դրան լրացնելով, շարունակում էր բնակչության առօրյա պահանջները բավարարող տնտեսական որոշակի դեր կատարել:

Արդյունաբերություն. – Դեռևս 19-րդ դարի առաջին կեսին արհեստագործության կողքին որոշակի տեղ էին զբաղեցնում նաև արդյունաբերական ձեռնարկությունները:

Սակայն այն ժամանակ դրանք ավելի շուտ սովորական տնայնագործական արհեստանոցներ էին, քան թե «ֆաբրիկա-գործարաններ»: Ինչպես նահանգի մյուս քաղաքներում, այնպես էլ Նոր Նախիջևանում «գործարան» էին համարվում այնպիսի ձեռնարկությունները, որոնք աշխատող բանվորների փոքր անձնակազմով և արտադրության պարզունակ ու չնչին քանակով տիպիկ տնայնագործական արհեստանոցներ էին:

Արդյունաբերության զարգացումը գաղութում բնորոշվում էր հետևյալ ճյուղերով.

Ձկնորսություն: Այն Դոնի հայության տնտեսության կարևոր ճյուղերից էր: Ղրիմահայերը բնակության վայր էին ընտրել Դոնի գետափը՝ նկատի առնելով նաև ձկնորսության չահավետ հեռանկարները: Պատահական չէր, որ կայսերական շնորհագրում հատուկ սահմանվել էին Դոն գետում ձկնորսությամբ զբաղվելու նրանց իրավունքները:

Դոն գետը հարուստ էր տարատեսակ ձկներով, այդ թվում և կարմրաձկով: Առաջին շրջանում ձկան արդյունաբերական մշակումը կատարվում էր տնայնագործական խղճուկ ձևերով: 1830-40-ական թվականներին, արտահայմանից, մասնավորապես Հոլանդիայից մասնագետներ են հրավիրում, որոնք երկրամասի ձկնարդյունաբերողներին ծանոթացնում են ձկան մշակման տեխնոլոգիային: Ձկան մշակման նոր մեթոդներին տիրապետելը խթանում է ձկնորսության ծավալումը:

Ձկան արդյունաբերական դերը շատ որոշակի էր: Բացի թարմ ու աղ դրված վիճակում օգտագործելուց՝ ձկից ստացվում էր խավիար, ձկնայուղ և սոսինձ: Սկզբնական շրջանում գաղութում գործում էին ձկնարդյունաբերական երկու ձեռնարկություն, հետագայում դրանց թիվը հասնում է չորսի և ապա յոթ գործարանի: Ցուրաքանչյուր ձեռնարկության բանվորների թիվը հասնում էր 20-25 մարդու:

19-րդ դարի առաջին կեսին ձկնորսության արտադրանքի ծավալը շատ մեծ էր: 1810 թ. Նոր Նախիջևանի օկրուգում (հայկական գաղութում) ձկան որսը տարեկան հասել է 500 տոննայի: 1858 թ. միայն թառափի ընտանիքին պատկանող բարձրորակ ձկան որսը հասնում է 72 տոննայի:

Հայ և Ռոստովի ռուս ձկնորսները պայքարի մեջ էին կազակների հետ և հաճախ նեղվում էին նրանցից: Կազակները ձկնորսության իրավունքը իրենց մենաշնորհը համարելով՝ հարձակումներ էին կատարում հարևան ձկնորսների վրա: Կառավարական բարձրագույնատյաններում 1828 թ. քննության է առնվում այդ հարցը և օրինական ճանաչվում ձկնորսության խնդրում թե՛ մեկի և թե՛ մյուսի իրավունքները: Հետագայում ձկնորսությունը լայն զարգացում ունեցավ Ռոստով քաղաքում, իսկ Նոր Նախիջևանը դրեթե դադարեց զբաղվել արտադրության այս ճյուղով:

Ճարպահալ գործարաններ (սալղաններ): Դրանք քաղաքի հյուսիսային մասում տեղավորված փայտյա պարզունակ շինություններ էին: Դրանց թիվը մեծ չէր, տատանվում էր 6-10-ի միջև: Սալղաններում մսագործ վարպետները ոչխարը մորթում էին, ճարպը խոշոր կաթսաներում հալում, տակառների մեջ լցնում ու փակում, ճարպազուրկ միսն էլ հանձնում տիրոջը: Գործարաններում մորթված ոչխարի բոլոր մասերը՝ ճարպը, մորթին, բուրդը, միսը, անգամ փորոտիքը օգտագործում էին:

Քաղաքի, ինչպես նաև գյուղերի ոչխարաբույծների մի մասը զբաղվում էր ճարպատու ոչխարաբուծությամբ՝ միմիայն ճարպի համար ոչխարներ գիրացնելով: Գործարանատերերը սեփական հոտեր էին պահում, սակայն նրանք մեծ չափերով մորթում ու մշակում էին նաև այլ տնտեսությունների ոչխարը: Ուրիշ քաղաքներում սալղանների բացակայության պատճառով Հյուսիսային Կովկասից, Դոնի տափաստաններից և այլ վայրերից ճարպատու ոչխարի հո-

տերը քշում էին Նախիջևան և մորթում նրա գործարաններում: 1862 թ. Նախիջևանի տասը գործատերեր իրենց ձեռնարկություններում մորթել են ընդհանուր քանակով 80 հազար սեփական ոչխար[1]:

Կաշեգործություն: Ճարպահալ գործարաններում գոյացող մեծաքանակ մորթին այնտեղ միայն շատ նախնական մշակման էր ենթարկվում և կիսաֆաբրիկատ վիճակում վաճառվում կաշեգործական ձեռնարկություններին: Դրանից զատ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ էին մորթում մսի կամ հենց կաշվի համար: Մսեղծվում էր հումքի առատություն, որը և խթանում էր արտադրության այս ճյուղի ծավալումը:

Հայերը կաշեգործության տեխնիկային ծանոթ էին հնից: Հատկանշական է, որ 19-րդ դ. սկզբին նահանգի կաշեգործական վեց գործարաններից հինգը գտնվում էր Նախիջևանում: Այլ խոսքով՝ կաշեգործությամբ գերազանցապես զբաղվում էին հայերը: 1830 թ. Նոր Նախիջևանի երեք գործարաններում մշակվել էր 1150 տավարի կաշի, 4000 ոչխարի և այծի մորթի[2]: Հետագա շրջանում կաշեգործությունը վայրէջք է ապրում: 1861 թ. կար ընդամենը մեկ գործարան: Դա բացատրվում է նրանով, որ կաշեգործությունը հայկական գաղութում խարսխված էր մնացել արհեստագործական հիմքի վրա, այն ժամանակ, երբ Պետերբուրգում և Մոսկվայում գործում էին առաջնակարգ տեխնոլոգիայի հիման վրա կառուցված խոշոր ձեռնարկություններ: Վերջիններս կլանում էին կաշվի հումքը, բարձրորակ կաշի արտադրում և շուկայից դուրս մղում մանր ձեռնարկությունների ցածրորակ արտադրանքը:

Բրդալվաց ձեռնարկություններ: Սրանք ևս տնտեսական նշանակալի դեր ունեին: Այս ձեռնարկությունների հիմնումը կապված էր արտաքին առևտրի հետ: Արտասահման բուրդ առաքելու դժվարությունները թելադրում էին տեղում կազմակերպել դրա նախնական մշակումը: Դոնի և նրա վտակ Թեմերնիկի ափին հիմնադրված գործարաններում բուրդը մինչև որոշ աստիճան մաքրվում, լվացվում ու ճերմակացվում էր: Նովոռոսիայում ուշ է սկսել հիմնվել արտադրության այս ճյուղը:

Բրդալվաց ձեռնարկությունները, որոնց թիվը չէր անցնում հինգ-վեցից, տնտեսական կարևոր նշանակություն ունեին նաև հետռեֆորմյան շրջանում: Նախիջևանի գործարաններում մաքրվում և տեսակավորվում էր մեծ քանակի՝ տարեկան չուրջ 300 հազար փութ բուրդ: Արտադրության այս ճյուղում միայն Մելքոնով-Եզոկով արտադրական առևտրական հայտնի ֆիրման էր, որ անցել էր բրդի չոգեմեքենայական մշակմանը:

[1] ՀՀՊՊԿԱ, ֆ. 139, գ. 488, թ. 11:

[2] ЦГИАР, ф. 1281, оп, 11, д.139, л.80.

Օղու և գինու արտադրություն: Հայերը արտադրության այս ճյուղին ծանոթ էին տակավին հնուց: Նովոռոսիայում այս գործով զբաղվելու նպատակով խաղողագործությամբ և օղեթորմամբ զբաղվելու իրենց ցանկությանը նրանք առանձնաշնորհումների միջոցով օրենքի ուժ էին տվել:

Այդուհանդերձ եկատերինոսլավի նահանգում խաղողի օղու արտադրությունը մեծ ծավալ չի ստանում: Խաղողի օղու և գինու գործը բացառապես նախիջևանցիների և Մարիուպոլի հույների մենաշնորհն էր: 19-րդ դ. սկզբներին Դոնի հայերը արտադրում էին 2000-2500 դույլ գինի, իսկ արտադրված օղու վաճառքից ստացվում էր 30 հազարից ավելի դուռմար: Հետագայում օղու և գինու արտադրությունը, կորցնելով տնտեսական շահավետությունը, խիստ անկում է ապրում: Այն վերածվում է բնակչության զուտ կենցաղային կարիքները բավարարող աննշան ու աննկատ մի ճյուղի:

Աղյուսի և կղմինդրի արտադրություն: Այս ճյուղը պայմանավորված էր տեղում շինարարության պահանջներով և այդ պատճառով էլ տեսական բնույթ էր կրում: Դրա պատճառը նաև այն էր, որ Դոնի հարթավայրում քարի և փայտի բնական պակասի պայմաններում առաջին պլան էր մղվում կավանյութը: Աղյուսի և կղմինդրի գործարանները, բնակչության պահանջը բավարարելուց բացի, արտադրանքի մի մասը վաճառքի էին հանում Ռոստով, Նովոչերկասկ քաղաքներում: Հետագայում հայկական գյուղերը ուշնեցել են աղյուսի սեփական գործարաններ:

Աղյուսի արտադրությունը հետևողականորեն ընդարձակվել է: Կղմինդրի արտադրությունը հետռեֆորմյան շրջանում աստիճանաբար նվազել է շենքերի տանիքների կղմինդրը հաճախ թիթեղով փոխարինելու հետևանքով:

Մխախոտի արտադրություն: Սրանով Դոնի հայերը սկսել են զբաղվել 19-րդ դարի կեսերից: Ջորս-հինգ հայ վաճառական արդյունաբերողներ հիմնել էին իրենց ֆաբրիկաները, ուր արտադրվում էր թուրքական մխախոտի արտադրանքի քանակը փոքր չէր:

Հետագայում արտադրության այս ճյուղը զարգանում է Ռոստովում, և հայ խոշոր արդյունաբերողները իրենց ձեռնարկությունները հիմնում են այնտեղ: Դրանցից էր Ռուսաստանում և արտասահմանում ճանաչում գտած Հ. Քուշնարյանի ֆաբրիկան: «Քուշնարյան ընկերության» կապիտալը հասնում էր մեկուկես միլիոն ռուբլու: Ֆաբրիկան տալիս էր բազում մրցանակների արժանացած բարձրորակ արտադրանք: Նշված ձեռնարկություններից բացի՝ կային մետաքսի, բամբակեղենի, մակարոնի, սննդի ու կենցաղային իրերի արտադրության փոքր կարողության բազմաթիվ այլ ձեռնարկություններ:

Նոր Նախիջևանի արդյունաբերության զարգացումն ուներ իր առանձնահատկությունները: Հայկական գաղութն իր ներփակ կյանքով ու համեստ հնարավորություններով ի վիճակի չէր խթանելու խոշոր արդյունաբերության

զարգացումը: Այդ պատճառով էլ գաղութի խոշոր արդյունաբերողները իրենց կապիտալները ներդնում և ձեռնարկություններ էին հիմնում արդյունաբերական զարգացման համար անհամեմատ ավելի լայն պայմաններ ունեցող քաղաքներում, մասնավորապես Ռոստովում:

Նոր Նախիջևանում զարգանում էր գերազանցապես գյուղատնտեսական արտադրանքը մշակող մանր ու միջին արդյունաբերությունը, մինչդեռ Ռոստովը գնալով դառնում էր մետաղաձուլական, քիմիական, ծխախոտի և այլ ճյուղերի խոշոր արդյունաբերության կենտրոն: Նոր Նախիջևանի մանր արդյունաբերությունը գալիս էր համալրելու Ռոստովի խոշոր արդյունաբերության արտադրանքը: Արդյունաբերության և բովանդակ տնտեսական կյանքի աճն ու առաջընթացը բնականորեն նման համընդհանուր կարգավորման էր հանգեցնում, մանավանդ որ 19-րդ դարի վերջերից սկսած Ռոստովը Նոր Նախիջևանի հետ տնտեսական-արտադրական մի ամբողջական շրջան էր կազմում:

Երկու քաղաքների արդյունաբերության և առհասարակ տնտեսական կյանքի կոոպերացման ու միավորման գործում նշանակալից էր զանազան բանկերի ու ընկերությունների դերը: 19-րդ դ. վերջերից սկսեցին հիմնվել այդպիսի միավորումներ:

Առևտուր: Դոնի ավազանը առևտրի ծավալման վիթխարի հնարավորություններ ուներ: Այստեղ էին հանգուցավորվում ցամաքային ու ջրային խոշոր առևտրական ճանապարհները: Դոնի և Ազովի ավազանի վրայով էր անցնում Մոսկվայից Կովկաս տանող կարճ ճանապարհը: Այստեղ էին խաչաձևվում Ռուսաստանի կենտրոնական նահանգներից, Ղրիմից և Ուկրաինայից եկող ցամաքային ճանապարհները:

Դոն գետը երկրամասի հիմնական ջրային երակն էր: Գետն իր վտակներով մերձազովյան ու սևծովյան շրջանները կապում էր Վոլգայի, Ռուսաստանի կենտրոնական նահանգների, Մոսկվայի և հեռավոր Սիբիրի հետ: Դոն գետը Ազով և Սև ծովերի միջոցով կապվում էր Միջերկրականի հետ: Ասել է՝ թե Դոնի ավազանը ջրային ուղիներով կապվում էր եվրոպական երկրների հետ: Դոնի ավազանը, այսպիսով, գտնվում էր ցամաքային առևտրական ճանապարհների խաչաձևման և Ռուսաստանի ներքին նահանգները, մերձվոլգյան շրջանները, Կովկասը և Նովոռոսիան արտասահմանի հետ ջրային ուղիներով միացնելու հանգուցակետում: Հետևաբար, նրա աշխարհագրական դիրքը և բնական պայմանները նպաստում էին առևտրի զարգացմանը:

Առևտրի ծավալման խնդրում ղրիմահայերի ձգտումը լիովին համընկնում էր Նովոռոսիայում պետության վարած քաղաքականությանը: Նոր երկրամասը յուրացնելու, տնտեսական կյանքն աշխուժացնելու գործում առաջնակարգ նշանակություն էր ստանում առևտուրը, ուստի և պետությունը ամեն

կերպ խթանում էր նրա ծավալումը: Պատահական չէր, որ կայսերական շնորհագրով ղրիմահայերին գետային ու ծովային նավեր կառուցելու, ազատ առևտուր անելու ազատություն էր տրվում: Ի տարբերություն հայկական շատ գաղութների, Նոր Նախիջևանը ուներ նաև երկրագործական ամուր բազա: Դա ևս երկրորդական նշանակություն չուներ առևտրափոխանակային հարաբերությունների ծավալման համար:

Այսպիսով, Նոր Նախիջևանի գաղութի թե՛ աշխարհագրական դիրքն ու բնական պայմանները, և թե՛ արտադրության բնույթը, մի կողմից, պետության հովանավորող քաղաքականությունը, մյուս կողմից, բարենպաստ էին առևտրափոխանակային հարաբերությունների զարգացման համար: Եվ Դոնի հայերը ակտիվ մասնակցում էին առևտրափոխանակային հարաբերությունների երկու ձևերին՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին առևտրին:

Ի տարբերություն երկրամասի մյուս քաղաքների և առաջին հերթին հարևան Ռոստովի՝ Նոր Նախիջևանը ամենից առաջ հայտնի էր որպես ներքին առևտրի աչքի ընկնող կենտրոն: Նոր Նախիջևանի հայերի առևտրական գործունեության այդ յուրահատկությունը այնքան ակնբախ է եղել, որ իր արտահայտությունն է գտել երկրամասի տնտեսական կյանքը բնութագրող փաստաթղթերում: Տագանրոգի քաղաքապետարանի տարեկան հաշվետվություններում, վիճակագրական նյութերի հավաքածուներում հաճախ կարելի է հանդիպել գրեթե նույնությամբ կրկնվող հետևյալ արտահայտությանը. «Ներքին առևտրով զբաղվում են գերազանցապես Նախիջևան քաղաքի հայերը»:

Ռուսաստանում մինչև 19-րդ դ. կեսերը ներքին առևտրի կարևոր կենտրոններ էին տոնավաճառները: Դրանք կազմակերպվում էին տարվա մեջ երկու անգամ, գարնանը և աշնանը՝ մեկ կամ մի քանի շաբաթ տևողությամբ: Մեծ համարում ուներ արևելյան ժողովուրդների և ռուսների շփման ուղու վրա, Վոլգայի և Օկայի միացման տեղում Մակարևյան կամ Նիժեգորոդյան տոնավաճառը: Դա ներքին առևտրի խոշոր կենտրոն և նախիջևանցիների համար վաճառահանման կարևոր շուկա էր: Նախիջևանի վաճառականները մասնակցում էին նաև ուրիշ քաղաքների և հատկապես Ռոստովի տոնավաճառներին:

Տոնավաճառային առևտուրը առևտրի պարզունակ ձև էր և հատուկ էր միջնադարին: Հետևաբար, կորցնելով երբեմնի նշանակությունը, այն աստիճանաբար վերանում է:

Հայկական գաղութը ներքին առևտրի նշանավոր կենտրոն էր համարվում ոչ այնքան տոնավաճառներին մասնակցելու, որքան որպես մշտական առևտրի, գերազանցապես մանրավաճառ ապրանքների վաճառահանման վայր: Նախիջևանում, հարևան քաղաքներում, ինչպես և Հյուսիսային Կով-

կասի և մերձազովյան առևտրական հանգույցներում հայերը խանութներ էին բացել: Նրանք ամբողջ տարվա ընթացքում վաճառում էին բազմապիսի, մեծ մասամբ բնակչության անմիջական կարիքները բավարարող ապրանքներ: 1857 թ. եկատերինոսլավի նահանգի վիճակագրական պատկերը ներկայացնող նյութերի համաձայն երկրամասի մանր ու միջին քաղաքներն ունեին տասից մինչև քսան առևտրական կրպակ: Խոշոր քաղաքներում կային ավելի մեծ քանակի, Տագանրոգում՝ 279, եկատերինոսլավում՝ 216, Ռոստովում՝ 211, Բախմուտում՝ 148, իսկ Նոր Նախիջևանում՝ 368 կրպակ[1]: Եթե նկատի առնենք, որ հայերը վաճառահանման կետեր ունեին նաև երկրամասի մյուս քաղաքներում, ապա պարզ կդառնան հայկական գաղութի առաջատար դիրքերը ներքին մանրածախ առևտրում:

Սակայն ամբողջ ներքին առևտուրը չէր պայմանավորված սոսկ հայկական գաղութի արտադրանքի վաճառքով: Դոնի հայերը սեփական արտադրանքից ավելի մեծ չափերով առևտուր էին անում ուրիշ վայրերից գնված ապրանքներով: Առևտրի հիմնական ապրանքը՝ ցորենն, օրինակ, նախքան արտասահման առաքելը ներքին առուծախի առարկա էր դառնում տեղում: Հայ ցորենավաճառների առևտրի զգալի մասը կազմում էր դրսից, գլխավորապես Ռուսաստանի կենտրոնական նահանգներից գնված հացահատիկը: Քաղաքի հյուսիսային մասի ընդարձակ տարածքում կառուցվել էին մինչև 40-ի հասնող ընդարձակ չոբմարաններ՝ իրենց հարակից շինություններով: Դրանք պատկանում էին հայ վաճառականներին: Նրանք իրենց գործակալների միջոցով գյուղացիներից ցորեն էին գնում և ամբարում: Հացահատիկի ներքին առևտուրն այնքան լայն տարածում էր գտել, որ Նոր Նախիջևանի քաղաքային վարչությունը հատուկ լիազոր էր նշանակում դրա վաճառքը վերահսկելու համար: Շոբմարաններում կուտակված հացահատիկը արտասահման արտահանելու փոխարեն հայ առևտրականները այն հանձնում էին եվրոպական երկրների հետ առևտուր անող Ռոստովի՝ հիմնականում հույն և հրեա վաճառականներին: Վաճառքի հանվող ցորենի քանակի մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ 19-րդ դարի վերջերին, բերքառատ տարում, հայկական գաղութը արտահանում էր 600-700 հազար չետվերտ հացահատիկ[2]:

Օղու, մասամբ նաև գինու վաճառքի մեջ ևս նորնախիջևանցիները գաղութի հիմնադրման շրջանից մինչև 19-րդ դ. 20-ական թվականները, մեծ

[1] Материалы для географии и статистики России (Екатеринославская губерния). сост. В. Павлович. СПб., 1862, с. 216.

[2] Նոր դար, 1888, թիվ 110:

ճանաչում են ունեցել: Օղու վաճառքից ստացվում էր մեծ դրամագլուխ, մինչև կես միլիոն ռուբլի: Գինավաճառությունը ևս հանդիսանում էր ներքին առևտրի էական ճյուղերից մեկը: Որսած ձկան քանակը այնքան մեծ էր, որ դրա 90-95 տոկոսը չուկա էր հանվում: Աղ դրված ու չորացած ձուկը, տակառների մեջ դարսված, հարյուրավոր փթերով վաճառքի էր հանվում Վելիկոռուսիայի և Մալոռուսիայի նահանգներում, իսկ թարմ վիճակում վաճառվում էր մերձակա գավառներում: Առուծախի առարկա էին նաև տասնյակ փթերով վաճառքի հանվող ձկան յուղն ու սոսինձը: Հայերը նաև առնում էին անասունների, յուղի, կաշվի և մորթու, ծխախոտի, անտրացիտի և այլ ապրանքների առևտուր:

Նոր Նախիջևանի վաճառականների համար առանձնահատուկ նշանակություն ուներ Հյուսիսային Կովկասը: Նրանք իրենց խանութներն ու կրպակներն ունեին այդ երկրամասի առևտրական գլխավոր վայրերում, ուր հատկապես կտորեղենի ու արդուզարդի մշտական առևտուր էին անում:

«Նախիջևանի հայերը,- կարդում ենք Կովկասի առևտրին վերաբերող վավերագրերից մեկում,- հատկապես առևտուր էին անում Կովկասյան գծում, հանքաջրի վայրում՝ Բատտալ Բաշինսկում, Ուստլաբինսկում և այլ տեղերում, Գրոզնի ամրոցում, Նալչիկում և այլուր, առավելապես Գեորգիևսկ և Ստավրոպոլ քաղաքներում: Չերքեզներն այդ տեղերն են բերում իրենց ապրանքները և մթերքները՝ ոչխարի և այծի մորթի, կովի և ձիու կաշի, նապաստակի, աղվեսի և կզաքսի անմշակ մորթիներ, մեղրամոմ, մեղր, կովի չհալած յուղ և ճարպ: Այդ ամենը փոխանակում են Նախիջևանի հայերի քաթանի, յուխտի /մշակված փափուկ կաշվի տեսակ- Վ. Բ./ և այլնի հետ: Փոխանակման միջոցով չերքեզներից հայերի ստացած մթերքներից և ապրանքներից կովի յուղը և նապաստակի մորթիները վաճառվում են արտասահման ուղարկելու համար, իսկ մյուսները սպառվում են ռուսական կայսրության քաղաքներում և տոնավաճառներում: Չերքեզների հետ հայերի առևտրի տարեկան շրջանառությունը հասնում էր մինչև երկու միլիոն ռուբլի գումարի»[1]: Այսպիսով, Նոր Նախիջևանի հայկական գաղութը նկատելի մասնակցություն էր ունենում Նովոռոսիայի և Ռուսաստանի կենտրոնական նահանգների մեծածախ ու մանրածախ առևտրին:

Նոր Նախիջևանի արտաքին առևտրի հիմնական ուղին անցնում էր Ազովի ծովով, Տագանրոգի և Ռոստովի նավահանգիստներով:

Արտահանվող հիմնական ապրանքը, ինչպես նշվեց, առաջին հերթին հացահատիկն էր: Հատկապես 19-րդ դ. 30-40-ական թվականներից ցորենի արտահանումը մեծ ծավալ ընդունեց: Նոր Նախիջևանի օկրուգում հացահա-

[1] ՀՀՊՊԿԱ, ֆ. 139, գ. 1541, թ. 77:

տիկի մշակումն ավելի ապրանքային բնույթ ուներ, քան հարևան գավառներում: Այսպես, եթե մերձազովյան գավառների հացահատիկի բերքի 50 տոկոսն էր վաճառքի հանվում, ապա Դոնի հայերի բերքի 75–80 տոկոսը մշտապես շուկա էր հանվում: Այդուհանդերձ, նախիջևանցիների ցորենի առևտրի զգալի մասը շարունակ դրսից գնված հացահատիկն էր: Հայ վաճառականները ցորեն էին գնում Ռուսաստանի հացառատ նահանգներում՝ Սարատովում, Վորոնեժում, Օրյոլում, Տամբովում, Եկատերինոսլավում, Խարկովում, Ստավրոպոլում, Դոնի և Սևծովյան կազակային երկրամասերում: Գնած ցորենը ջրային ու ցամաքային ճանապարհներով բերում էին Տագանրոգ կամ Ռոստով՝ արտասահման մեկնող նավերը բարձելու կամ ցորենի արտահանութիւյամբ զբաղվողներին վաճառելու: Արտասահմանում լայն սպառում էր գտնում և բարձրորակ էր համարվում հայ երկրագործների մշակած արնաուտկա ու գարնովկա, ինչպես նաև աշնանացան կամ կարմրահատ կոչվող ցորենը: Նոր Նախիջևանի նավամատույցը վերակառուցելու նպատակով Եկատերինոսլավի նահանգապետը դիմում է ֆինանսների նախարարին և նշում, որ Նախիջևանի հացահատիկի տարեկան շրջանառությունը հասնում է ինը միլիոն փթի[1]: Ցորենավաճառները մշակել էին վաճառքի հատուկ կանոններ և ստեղծել իրենց համքարությունը:

Արտաքին առևտրի կարևոր ապրանքներից էին մանր ու խոշոր եղջերավոր անասունների ճարպը և կովի յուղը: Նախիջևանի ճարպահալ գործարաններում ստացվող ճարպը լցվում էր տակառները և գրեթե ամբողջությամբ արտասահման: Արտահանվող ճարպի քանակը հասնում էր տարեկան մինչև 40–50 հազար փթի: Եթե ձուկը վաճառվում էր երկրի ներսում, ապա ձկնկիթը արտահանվում էր: Նախիջևանի հայ վաճառականները 1844–1845 թթ. ընթացքում վաճառել էին 851 տակառ կամ անհավատալի չափերի հասնող՝ 27271 փութ ձկնկիթ[2]:

Մեծ ծավալ էր ընդունել բրդի արտաքին առևտուրը: Տարեկան արտահանվում էր 200–300 հազար փութ բուրդ: Վաճառքի էր հանվում երկու տեսակի՝ իսպանական ցեղատեսակի նուրբ ու երկարամազ բուրդը և տեղական ռուսականը: Բրդի առևտրով զբաղվող հաստատությունները գտնվում էին Ռոստովում: Ռոստովում հաստատված Մելքոնով-Եզոկով ձեռնարկության բարձրորակ արտադրանքը հայտնի էր Ամերիկայում. այնտեղ ֆիրմային պատվերներ էին տալիս ըստ համարանիշների, առանց ընդունված կարգով բրդի նմուշները պահանջելու: Արտասահման էին առաքվում նաև երկաթ, կաշի և այլ ապրանքներ:

[1] ՀՀՊՊԿԱ, ֆ. 1152, ց. 10, գ. 20, թ. 2:

[2] Նույն տեղում, ֆ. 139, գ. 1318, թ. 1, 17:

Արտասահմանյան երկրներից ներմուծվում էին բուսական յուղ, չոր մրգեր, շաքարավազ, նարինջ, կիտրոն, ձիթապտուղ, տարատեսակ համեմունքներ, ինչպես նաև գորգեր, կտորեղեն և այլ ապրանքներ: Դոնի հայկական գաղութի ներքին և արտաքին առևտրի տարեկան շրջանառությունը 1840 թ. հասնում էր չուրջ ութ միլիոն ռուբլու[1]:

Այդ ամենով հանդերձ հայկական գաղութը իր սահմանափակ հնարավորություններով միջոց չէր ընձեռում հայ վաճառականներին՝ սեփական կապիտալը տեղում լայն շրջանառության մեջ դնելու համար: Եվ քիչ թե շատ ինքնուրույնաբար հանդես եկող հայ առևտրական կապիտալը, գործունեության ասպարեզ չգտնելով Նոր Նախիջևանում, տարածվում էր մերձազովյան ավազանում և հատկապես Հյուսիսային Կովկասում: Այդ պատճառով էլ Նոր Նախիջևանը չէր կարող առևտրի ծավալման, դրա չափերի իրական պատկերը տալ: Գաղութի հայ վաճառականության առևտրական գործունեությունը ավելի մեծ էր, քան այդ երևում է Նախիջևանի օրինակով:

Նախիջևանում չկային կամ խիստ սակավ էին շատ մեծ կարողության տեր առևտրականներ: Դրա փոխարեն հայկական գաղութում մեծ էր միջին և փոքր կարողության տեր վաճառականների թիվը: Այդ առումով էլ գաղութին ձեռնտու էր իրեն վերապահված առևտրի ազատության պահպանումը: Նրանց Ռուսաստանի վաճառականության հետ միևնույն պայմաններում դնելը վնասաբեր էր՝ մրցակցությանը դիմանալու տեսանկյունից: Նոր Նախիջևանի և առհասարակ ռուսահայ վաճառականության՝ առանձնաշնորհումները պահպանելու ձգտումը դրսևորվեց վաճառականական կարգի՝ գիլդիաների մեջ մտնելուց խուսափելու երկարատև պայքարի ընթացքում:

Նոր Նախիջևանի, ինչպես նաև ռուսահայ մյուս գաղութների առևտրի մյուս առանձնահատկությունն այն էր, որ դրսում այն ծավալվում էր առավելապես ասիական ուղղությամբ: Ասիական ժողովուրդների լեզվին, սովորույթներին ու բարքերին ծանոթ լինելը, նրանց հետ ունեցած կապերը մեծ չափով նպաստում էին նրանց առևտրի ծավալմանը:

Առևտրի դերը, նրա նշանակությունը հայկական գաղութում շատ մեծ է եղել: Տնտեսական կյանքի հիմնական ճյուղերը գաղութում սերտորեն կապված և փոխներգործության մեջ են եղել միմյանց հետ: Փոխադարձաբար կապված լինելով արտադրության հետ՝ առևտուրը նկատելի չափով ներգործել է նրա վրա: Նոր Նախիջևանի արտադրության՝ արհեստագործության, արդյունաբերության և գյուղատնտեսության առաջընթացը մի հայտնի չափով պայմանավորված է եղել առևտրափոխանակային հարաբերությունների զարգացմամբ:

[1] Новароссийский календарь на 1840 г., с. 154.

***

Ռուսահայ մյուս գաղութների նման Նոր Նախիջևանը ևս ապրել է հասարակական-քաղաքական և մշակութային ուրույն կյանք, որը հայ համայնքի համեստ շրջանակներում լծորդել է երկու ժողովուրդների փոխհարաբերություններն ու կապերը: Ռուսահայ գաղութները արձագանքել ու մասնակցել են մի կողմից՝ ռուսական, մյուս կողմից՝ մայր հայրենիքի հասարակական կյանքի գլխավոր իրադարձություններին:

Դոնի հայ զանգվածը ակտիվ արձագանքել է ռուսական կյանքի խոշոր անցուդարձերին, մասնավորապես երկրին սպառնացող արտաքին վտանգների ժամանակ: Առաջին այդպիսի խոշոր իրադարձությունը 1812 թ. հայրենական պատերազմն էր: Դեռևս պատերազմից առաջ տեղական աշխարհազորներ կազմակերպելու համար հայ հասարակությունը նվիրաբերում է դրամական մեծ գումար և պարենամթերք: Այդ նվիրաբերությունները կատարվում են պարբերաբար: 1812 թ., երբ Նապոլեոնը գրավել էր Մոսկվան, Նոր Նախիջևանի մագիստրատի հատուկ հրամանով արգելվում է երաժշտություն հնչեցնել, զվարճություններ կատարել: Պատերազմի ավարտից հետո հայ հասարակությունը Նախիջևանի քաղաքագլուխ Վարդերես Հալաջովին որպես պատգամավոր ուղարկում է Ս. Պետերբուրգ՝ մասնակցելու հաղթանակի առթիվ մայրաքաղաքում կազմակերպվող հանդեսներին:

Դոնի հայ գաղութը առավել գործուն մասնակցություն է ունեցել Ղրիմի 1853–1856 թթ. պատերազմին: Հայ զանգվածը դրամական, պարենի, տրանսպորտի մեծ օգնություն է կազմակերպել ռուսական զորքին: Բավական է ասել, որ 1854–56 թթ. հայ համայնքն իր միջոցներից պատրաստում է 10500 փութ պաքսիմատ և նվիրում բանակին: Դրանից զատ, առանձին քաղաքացիներ, այդ թվում՝ վաճառականներ Կ. Հայրապետյանը և Ա. Խալիբյանը, իրենց սեփական միջոցներից պարենի մեծաքանակ նվիրաբերություն են կատարում: Կայսրը, իմանալով հայ հասարակության գովելի արարքը, պաշտոնապես շնորհակալություն է հայտնում:

Դոնի հայությունը սիրալիր ընդունում է զինվորական գումարտակներ, օթևան հատկացնում, կերակրում և տրանսպորտի իր միջոցներով տեղափոխում դեպի ռազմաճակատ: Նախիջևանի բնակիչները, օրինակ, 1854 թ. ընդունել և փետրվարի 27-ից մարտի 17-ը բնակարանով ու պարենով ապահովել են մոսկովյան հետիոտն գնդի չորս գումարտակ: Շոշափելի էր հայ համայքնի աջակցությունը նաև վիրավորներին ու սևծովյան առափնյա ռազմական գծի ամրությունները պայթեցնելու և թշնամուն հանձնելու հետևանքով անօթևան մնացած զինվորների ընտանիքներին բնակարանով ու սննդամթերքով ապահովելու, վիրավոր զինվորներին խնամելու գործում: Նիկոլայ 1-ին կայսրը շնորհակալություն է հայտնում Դոնի Նախիջևան քաղաքի բնակիչներին՝ իրենց հայրենանվեր և մարդասիրական զգացմունքի համար ու քաղաքը պարգևատրում «Ջանասիրության համար» ոսկե մեդալով և «Վլադիմիրյան ժապավենով»: Դոնի հայությունն իր հայրենասիրական վերաբերմունքն է դրսևորում նաև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և Առաջին աշխարհամարտի ժամանակ:

Նոր Նախիջևանի հայկական գաղութը համանման ձևով արձագանքում և սրտամոտ վերաբերմունք էր ունենում նաև երկրի մշակութային կյանքում կատարվող խոշոր իրադարձություններին: 1899 թ. բովանդակ Ռուսաստանում նշվում էր Ա. Պուշկինի ծննդյան 100-ամյակը: Գաղութի հասարակությունը կազմակերպում է մեծ ցերեկույթ և պոետի հիշատակը հավերժացնելու նպատակով նրա անունով կոչում քաղաքային գրադարանը: Հայ համայնքն արձագանքում և նշում է նաև Ն. Գոգոլի ու Վ. Ժուկովսկու մահվան 50-ամյակները, որոշում քաղաքում բացել նրանց անունը կրող դպրոցներ:

Հայ հասարակությունը մեծ նշանակություն է տալիս Լ. Տոլստոյի ծննդյան 80-ամյա հոբելյանին: Դումայի խոսնակ Ա. Սալտիկովի առաջարկով որոշվում է քաղաքի «Ոստիկանական» հրապարակը վերանվանել մեծ գրողի անունով և բացել նրա անունը կրող յոթնամյա ուսումնարան: 1914 թ. Մ. Լերմոնտովի ծննդյան 100-ամյակի առթիվ քաղաքային վարչությունը 4000 ռ. գումար է հատկացնում գրողի նկարը ձեռք բերելու և ժողովրդի մեջ տարածելու համար: Տեղական թերթերը տպագրում են նրա ստեղծագործություններից, հրապարակում նրա մասին բազմաթիվ հոդվածներ:

Ռուսաստանի կարևոր իրադարձություններին Դոնի հայության սիրաշոժար վերաբերմունքը դրսևորվել է նաև այլ ասպարեզներում: Այսպես, օրինակ, 1868 թ. հայկական գաղութն անմիջապես արձագանքում է կայսրության հյուսիսային երկրամասերում սովից նեղված բնակչությանն օգնելու կառավարության կոչին: Քաղաքի և գյուղերի բնակիչները այդ նպատակով նշանակալից գումար են հավաքում:

Դոնի հայությունը աշխույժ հարաբերությունների մեջ էր մայր հայրենիքի և հայկական գաղութների հետ: Մայր հայրենիքի հետ կապերն ու շփումներն իրականացնում էին բազում ձևերով ու եղանակներով: Այն կատարվում էր առաջին հերթին եկեղեցու միջոցով: Սեփական պետության բացակայության պայմաններում հայ եկեղեցու միավորիչ դերը, դրա գործունեության համահայկական ընդգրկումն ավելի նշանակալից էին դառնում: Թեպետև մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը էջմիածինը շարունակում էր մնալ Ռուսաստանի ախոյան Պարսկաստանի տիրապետության տակ, սակայն դա էական խոչընդոտներ չէր հարուցում: Ռուսական

կառավարությունը լավ էր ըմբռնում հայ եկեղեցու կարևոր դերը կայսրության հարավային սահմաններն ընդարձակելու գործում: Իր հերթին, հայ եկեղեցին, ժողովրդի դրությունը թեթևացնելու հեռանկարից ելնելով, նպաստում էր Անդրկովկասում ռուսական արտաքին քաղաքականության իրագործմանը:

Նախիջևանցիներն ունեին կրոնական սովորույթով պայմանավորված մայր հայրենիքի հետ կապվելու ավանդույթ: Դոնի հայության մեջ շատ տարածված էր Երուսաղեմ և Մշո Ս. Կարապետի վանք ուխտագնացություն կատարելը: Երուսաղեմ էին գնում մեծահասակները՝ իրենց «մեղքերը» քավելու համար: Երիտասարդ կտրիճները, հասակ առնելով, ուխտում էին գնալ Մուշ, այցելել Ս. Կարապետի գերեզմանը, վերադարձից հետո իրենց «մուրազին» հասնելու, ընտրած աղջկա հետ ամուսնանալու համար: Դոնի հայերը իրենց համարում էին անեցիների հետնորդներ: Ուստի և Ս. Կարապետ այցելելը զուգակցում էին Անի մեկնելու ուխտագնացությանը:

Ուխտագնացությունը տևում էր երկու-երեք ամիս: Նախիջևանի հեծյալներն անցնում էին Թիֆլիս-Երևան-Էջմիածին գծով: Այդ ընթացքում նրանք հնարավորություն էին ունենում ի մոտո ծանոթանալու Անդրկովկասի ու Հայաստանի հայության կյանքին: Գաղութի բնակիչները բազմամարդ խմբերով Էջմիածին էին մեկնում նաև ներկա գտնվելու մեռոն-օրհնեքի հանդեսներին: Կրոնական այդ ծիսակատարությունը ևս հայրենի երկրի հետ կենդանի կապեր հաստատելու լավագույն առիթ էր ընձեռում:

Կենդանի կապերի և ստացվող տեղեկությունների միջոցով բուն Հայաստանում իրազեկ էին դառնում ռուսահայ զանգվածների դրությանը: Ռուսահայերի բարվոք վիճակը ներազդող օրինակ էր թուրք-պարսկական ծանր լծի տակ հեծող հայ ժողովրդի համար: Այդ լուծը թոթափելու ձգտումը ուժեղանում էր ժողովրդի մեջ:

1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի գրավումով իրական տեսք էր ստանում Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական խանության դարավոր լծից: Այդ լուրը լայն արձագանք է գտնում գաղութահայության շրջանում: Հնդկահայերի, Թիֆլիսի, Աստրախանի հայության հետ իրենց գոհունակությունն արտահայտեցին նաև Նորնախիջևանցիները: Դոնի հայ հասարակության անունից քաղաքագլուխ Խ. Խամաճովը և ինը հեղինակավոր քաղաքացիներ Ներսես Աշտարակեցուն շնորհավորական ուղերձ հղեցին: Նրան ողջունում են հայրենիքի փրկության առթիվ և ափսոսանք հայտնում, որ չեն կարող լինել Արարատյան երկրում և անձամբ հայտնելու իրենց գոհունակությունը:

Դոնի հայությունը սերտ կապերի մեջ էր ռուսահայ համայնքների և այլ երկրների գաղթօջախների հետ: Ռուսաստանի հայկական զանգվածների հետ

այդ կապերը դրսևորվում էին համառուսական խոշոր իրագործություններին արձագանքելու, մայր հայրենիքի հետ այլևայլ խնդիրներով առնչվելու ժամանակ: Նոր Նախիջևանը, որպես առավել հայաշատ օջախ գտնվում էր այդ փոխհարաբերությունների կենտրոնում: Օրինակ, ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության համար Դոնի հայ գաղութից ընտրվում է մեկ պատգամավոր: Ակերմանի, Քիշնևի և այլ հայ համայնքները Նախիջևանի առաջադրած թեկնածուին համարում են նաև իրենց պատվիրակը: Ս. Պետերբուրգից հայտնում են, թե քանի որ գաղութներում ծվարած հայության ամենաստվար մասը կենտրոնացված է Նոր Նախիջևանում, մայրաքաղաքի հայ հասարակությունը հարգում է նրանց ընտրությունը և միանում է դրան:

Դոնի հայերը չվումների մեջ էին նաև այլ երկրների հայ զանգվածների և առաջին հերթին Կոստանդնուպոլսի հայության հետ: Աչխուժ կապեր Կ. Պոլսի հայերի հետ գոյություն ունեին տակավին ղրիմյան շրջանից: Նորնախիջևանցիները ոչ միայն մոռացության չտվեցին Բոսֆորի ափին հաստատված հայրենակիցների հետ վաղեմի կապերը, այլև դրանք դարձրին ավելի բանուկ: Նախիջևանի որոշ վաճառականներ Կ. Պոլսում ունեին մշտական խանութներ, գրասենյակներ: Տնտեսականից զատ կային նաև մշակութային կապեր: Եվ պատահական չէ, որ ջրային ուղիներով իրար հետ կապված երկու հայկական զանգվածների կյանքում շատ ընդհանրություններ կային: 19-րդ դ. 40-ական թվականներին Ֆրանսիացի երկրաբան Հոմեր դը Հելլը, շրջելով Նոր Նախիջևանում, այնպիսի տպավորություն է ստանում, որ իրեն թվում է, թե գտնվում է Կոստանդնուպոլսում:

Դոնի հայկական գաղութը հենց հիմնադրման ժամանակվանից չվումների մեջ էր հեռավոր հնդկահայ օջախների հետ:

Նոր Նախիջևանի հիմնադրման առաջին տարիներին ռուսահայ թեմի առաջնորդ Հ. Արղությանը դիմում է հայաշատ օջախներին՝ նյութապես օգնելու նորահաստատ գաղութին: Նոր Նախիջևանում դպրոց, տպարան, աղքատանոց բացելու նպատակով մեծագումար նվիրատվություններ են կատարվում Հնդկաստանի տարբեր վայրերից: Բոլոր այդ նվիրաբերությունների մեջ առավել նշանակալիցը Մասեհ Բարաջանյանի կտակն էր՝ 100 հազար ռուբլի: Այդ գումարը ստանալու և իր նպատակին ծառայեցնելու հարցը քանիցս բարձրացվում է, բայց միշտ էլ մնում է անհետևանք: 1859 թ. «Հյուսիսափայլ» թերթում Միքայել Նալբանդյանը կրկին հրապարակ է հանում այդ խնդիրը: Նոր Նախիջևանի հայ հասարակությունը ջերմորեն արձագանքում և Մ. Նալբանդյանին ընտրում է պատվիրակ՝ կտակված գումարը ստանալու: Նա ուղևորվում և 1861 թ. հունիսին հասնում է Կալկաթա: Բավականաչափ արգելքներ հաղթահարելուց հետո Նալբանդյանին հաջողվում է ստանալ կտակված գումարների կեսը և հաջորդ տարվա հուլիսին վերադառնալ հայրենի

քաղաք: Նա քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին խնդրում է հայ հասարակության ժողով գումարել կտակների մասին հաշվետու լինելու համար: Հաջորդ օրը ոստիկանությունը խուզարկում է Մ. Նալբանդյանի բնակարանը և բանտարկում նրան: Ճանաչված հրապարակախոսի և գործչի բանտարկությունը մեծ հուզմունք է առաջացնում Նոր Նախիջևանի հասարակության մեջ: Կոստանդնուպոլսի, Փարիզի առաջադեմ հայ մամուլը արձագանքում և ցավ է հայտնում այդ առթիվ: Այդուհանդերձ, Նալբանդյանին հաջողվեց ստանալ վեց տասնամյակ անշարժ մնացած Հնդկահայ ժառանգության մեծ մասը՝ 53 հազար արծաթե ռուբլի: Հետագայում, մնացած գումարը ստանալու համար հոգաբարձությունը լիազորում է կենսաբանության doktor Հ. Բեդելյանին գիտական գործունեությամբ Հնդկաստանում լինելու ընթացքում զբաղվել այդ կտակի հարցով: Նրան հաջողվում է բերել նաև մնացած գումարի մի մասը:

Հայաստանի հետ գաղութի հասարակական-մշակութային կապերն ու շփումները 19-րդ դարի վերջերին և 20-րդ դ. սկզբին ավելի աչխույժ ու սերտ են դառնում: Երկաթուղիների և առհասարակ հաղորդակցության միջոցների զարգացումը մեծապես նպաստեց նաև ուսանող երիտասարդության և մտավոր գործիչների փոխայցելություններին: Արդեն սովորություն էր դարձել Նոր Նախիջևանի ուսումնարանների բարձր դասարանների աշակերտների այցելությունները Հայաստան և Անդրկովկասի հայաշատ վայրերը: 1909 թ. թեմական դպրոցի տեսուչ Ե. Շահազիզը հոգաբարձությունից միջոցներ էր խնդրում աշակերտների ուղևորությունը դեպի Հայաստան կազմակերպելու համար: Նա հիմնավորում էր դրա անհարժեշտությունը: «Նկատված է, - գրում էր նա,- դպրանոցիս աշակերտները հայրենիքից հեռու, օտարության մեջ ծնված և սնված լինելով, վերացական մի բան են համարում իրենց սովորածները և լավ չեն կարողանում տպավորել իրենց սրտերում մայր հայրենիքին վերաբերող ամենաէական և իրական տեղեկությունները: Ամեն բան իրենց աչքով տեսնելու հնարավորություն տալու, ամեն բան նրանց համար շոշափելի դարձնելու նպատակով շատ ժամանակ դեռ առաջ միտք էր հղացել պարբերաբար կազմելու աշակերտների ճամփորդություններ դեպի հայրենիք, դեպի նրա նվիրական տեղերը»[1]:

Նոր Նախիջևանի նշանավոր դեմքերը այցելում էին Հայաստան ու Անդրկովկասի հայկական կենտրոնները, որը ևս ամրապնդում էր ազգակիցների հետ ունեցած կապերը: Այսպես, օրինակ, 1880 թ. դեպի հայրենիք ուղևորություն է կատարում Ռ. Պատկանյանը, լինում է Թիֆլիսում, Երևանում, Էջմիածնում: Վերադարձից հետո հրատարակում է իր ճանապարհորդական

[1] ՀՀՊՊԿԱ., ֆ.55, ց.1, թղթ. 1, գ.73:

տպավորությունները: «Մշակ» թերթի 40-ամյա հոբելյանի առթիվ 1912 թ. Թիֆլիս է այցելում Գր. Զալխուշյանը:

Տեղի էր ունենում նաև հակառակ երևույթը: Հայ նշանավոր գործիչները հաճախ այցելում էին Նոր Նախիջևան: Աչխարհագրական հարմար դիրքը և լիաթոք ազգային ոգով ապրող Դոնի հայության հասարակական հետաքրքիր կյանքը անհրաժեշտ էին դարձնում նման փոխայցելությունները: Դրանք էական նշանակություն էին ունենում գաղութի հասարակական մթնոլորտն ազգային ոգով արդյասավորելու տեսակետից: 1830 թ. Դորպատ մեկնելու ճանապարհին Խաչատուր Աբովյանը այցելում է Նոր Նախիջևան: Նա այնտեղ մնում է տաս-տասնհինգ օր, ծանոթանում Գաբրիել և Պետրոս Պատկանյանների հետ: Պատկանյան եղբայրներին Դորպատից ուղարկած նամակում Աբովյանը դրվատանքով է խոսում քաղաքի և քաղաքագլուխ Խաչիկ Խամճյանի մասին, խնդրում հաղորդել նրան նաև Պարրոտի ողջույնը[1]: 1866 թ. ամռանը Նոր Նախիջևան է այցելում Ս. Նազարյանը, որն այնտեղ մնում է մի քանի շաբաթ, ունենում ելույթներ ու հանդիպումներ:

1912 թ. Նոր Նախիջևանի քաղաքային թատրոնի շենքում հայ միջնադարյան արվեստի մասին դասախոսություն է կարդում հայոց պատմության ու մշակույթի քաջ գիտակ Գ. Հովսեփյանը: Մի քանի տարի անց նա նախիջևանցիների առաջ հանդես է գալիս հայ գրի և գրչության արվեստի զարգացմանը նվիրված զեկուցումով: Արևմտահայ նշանավոր գրող Զապել Եսայանը 1916 թ. Նոր Նախիջևանում զեկուցում է կարդում «Արևմտահայ գրականությունը» թեմայով:

Դոնի հայության հասարակական կյանքում կարևոր երևույթ էին ամենայն հայոց կաթողիկոսների այցելությունները: Նրանք, ուսումնասիրելով ռուսահայ թեմերն այցելելու ժամանակ, մանավանդ ռուսաց կայսեր կողմից ընդունվելուց հետո վերադարձի ճանապարհին, որպես կանոն, կանգ էին առնում Նոր Նախիջևանում: Հայ հոգևոր պետերի ժամանումը, իրավամբ, դիտվում էր որպես ամբողջ հայ ժողովուրդը ներկայացնող համազգային գործչի այցելություն և բնականաբար լայն արձագանք էր գտնում: 1867 թ. Աստրախանից Նախիջևան է գալիս կաթողիկոս Գևորգ 4-րդը և արժանանում բարձր ընդունելության: 1895 թ. Նոր Նախիջևան է այցելում հայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ կաթողիկոս Խրիմյան Հայրիկը: Ռոստովի երկաթուղային կայարանում նրան դիմավորում են երկու քաղաքների բարձրաստիճան պաշտոնյաները, հասարակական հաստատությունների ներկայացուցիչները և տարբեր ազգությունների՝ շուրջ 30 հազար բնակչություն: Կաթողիկոսը ողջունում է բոլոր ազ-

[1] Աբովյան Խ., եր.ժ, 10-րդ հատոր, եր., 1961, էջ 135:

գրքույնների ներկայացուցիչներին, այցելում հայկական եկեղեցիներ, ծանոթանում կրթական, լուսավորական հաստատությունների գործունեությանը:



Նոր Նախիջևան. Հայոց անկելանոցի շենքը

1909 թ. Նոր Նախիջևան է ժամանում կաթողիկոս Մատթեոս 2-րդ Իզմիրլյանը: Նա այցելում է եկեղեցիները, դպրոցները, անկելանոց-հիվանդանոցը և ապա Ս. Խաչ վանքը: Այդտեղ տեղի ունեցած հավաքում ելույթ է ունենում գրող Մինաս Զերազը, ընդգծելով, որ Նոր Նախիջևանի գաղութը նշանավոր է ոչ թե իր հարստությամբ, այլ շնորհիվ իր ճանաչված ազգային գործիչների և, առաջին հերթին, վանքի բակում հանգչող Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի:

1912 թ. Պետերբուրգից էջմիածին վերադառնալու ճանապարհին Գևորգ 5-րդ կաթողիկոսը կանգ է առնում Նոր Նախիջևանում: Քաղաքի առևտրական ակումբում իր պատվին տրված ճաշկերույթում նա գոհունակություն է հայտնում Դոնի հայությանը՝ բարվոք վիճակի, նրա ուսումնական, բարեգործական հաստատությունների, ազգային ոգին ու նկարագիրը պահպանելու համար:

1913 թ. նշվում է համազգային խոշոր իրադարձության՝ հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյա հոբելյանը: Նշանավոր այդ իրա-

դարձությանը անմիջապես արձագանքում է Դոնի հայությունը: Տեղական մամուլում հոդվածներ են տպագրվում, որոնցում բացահայտվում է գրերի համազգային նշանակությունը: Այդ առթիվ Նոր Նախիջևանում կազմակերպված տոնահանդեսին մասնակցում են հասարակության ներկայացուցիչները և քաղաքի 21 դպրոցների աշակերտները: Քաղաքի և հայկական գյուղերի բնակիչները պատկառելի գումար՝ 50 հազար ռուբլի, դրամագլուխ են հավաքում և ամբողջությամբ նվիրում դպրոցական գործին:

Երբեմն Նոր Նախիջևանում տեղի ունեցող հասարակական, մշակութային երևույթները դուրս էին գալիս գաղութի նեղ շրջաններից և ձեռք բերում համազգային նշանակություն: Այսպես, օրինակ, Դոնի հայությունը վճռում է հուշարձաններ կանգնեցնել վանքի բակում թաղված իրենց մեծ հայրենակիցներ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի շիրիմներին: Նվիրատվությունների միջոցով հավաքվում է գումար և քանդակագործ Ա. Տեր-Մարուքյանին պատվիրվում նրանց կիսանդրիները: Նախատեսվում է 1901 թ. սեպտեմբերին կատարել Ռ. Պատկանյանի, իսկ հաջորդ տարի Մ. Նալբանդյանի հուշարձանների բացումը: Հուշարձանների բացման հանդեսներին մասնակցում էին տարբեր տեղերից ժամանած պատվիրակներ: Հրապարակվում են հեռագրեր «Մշակ», «Լումա», «Մուրճ» թերթերի խմբագրություններից, ռուսահայ համայնքներից, Բաքվից, Ղարաբաղից, Կարսից, Էջմիածնի հոգևոր ճեմարանի, Ներսիսյան դպրոցի և այլ վայրերի ուսուցչական կոլեկտիվներից և աշակերտությունից: Ռ. Պատկանյանի վաստակը դրվատող ջերմ հեռագրեր են ստացվում նշանավոր գրողներ Գ. Սունդուկյանից, Պ. Պռոշյանից, Ս. Շահազիզից և շատ ուրիշներից: Ռ. Պատկանյանի հուշարձանի բացումն ընդունում է հայկական մշակույթի գնահատման համազգային բնույթ:

Դոնի հայկական գաղութի կապերը Մայր հայրենիքի հետ հաճախ գործնական աջակցության բնույթ էին ընդունում: Նոր Նախիջևանում իմանալով, որ միջոցների պակասի հետևանքով ձգձգվում է էջմիածնի ճեմարանի կառուցումը, 1500 ռ. գումար են նվիրաբերում շենքի շինարարությունն ավարտելու համար: Ապա հայկական գյուղերի հետ միասին ավելի քան 1400 ռ. գումարով ճեմարանի սառների համար գնում են մահճակալներ, անկողին և այլ անհրաժեշտ ապրանքներ: Առանձին քաղաքացիներից Խ. Բախչիսարայցևը ճեմարանին նվիրում է 1500 ռ., Ս. Քուշնարյանը՝ 200 ռուբլի, իսկ Մայր աթոռի տպարանի կարիքների համար ևս 200 ռ. գումար:

Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին հայ-թաթարական կոտորածների և սովի հետևանքով ծանր վիճակի մեջ են ընկնում Անդրկովկասի հայության զգալի զանգվածներ: Նրանց օգնություն կազմակերպելու նպատակով Ռուսաստանի հայկական գաղութներն է մեկնում հատուկ հանձնաժողով: Նոր Նախիջևանի բազմամարդ ժողովը պատրաստակամ լսում է

հանձնաժողովի հանգամանալի հաղորդումը: Շուտով ժողովվում է 4375 ռ. գումար, մեծ քանակությամբ հագուստեղեն և առաքվում Թիֆլիս՝ կենտրոնական հանձնաժողովին[1]:

Նոր Նախիջևանում հետևում էին Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձություններին և ամեն կերպ ջանում նպաստել հարազատ ժողովրդի ազատագրման կամ նրա հոգսերը թեթևացնելու գործին: Հասարակական այդ մթնոլորտը արգասավորվում էր Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի գործունեության շնորհիվ: Արևմտահայության մարտական ոգին կոփելուն կոչված՝ Ռ. Պատկանյանի ռազմաշունչ բանաստեղծությունները ձեռքից ձեռք էին անցնում: Իմանալով Բեռլինի վեհաժողովի և եվրոպական զորեղ պետությունների կողմից հայերի օրինական պահանջները անտեսելու մասին՝ Պատկանյանը գրում է «61-րդ հոդված», «Վեհաժողով» բանաստեղծությունները և զայրույթով դատապարտում է մեծ պետությունների վարքագիծը:

Թուրքիայում 1895-1896 թթ. տեղի ունեցած հայկական ջարդերի հետևանքով արևմտահայերի համար առաջացած ծանր պայմաններում Դոնի հայությունը մեծ գումարի՝ 45.000 ռ. նվիրատվություն է կատարում: Գաղութի նշանավոր գործիչ Մ. Բերբերյանը իր միջոցներով բացում է որբանոց: Առաջին համաշխարհային պատերազմը արևմտահայության բախտը օրինականության սահմաններում տնօրինելու հույսերի մեծ ալիք առաջացրեց: Դոնի հայությունը ևս արձագանքում է պատերազմին՝ ռուսական զենքի հաղթանակի մեջ տեսնելով ազգակիցների փրկության երաշխիքը: Նոր Նախիջևանում և Ռոստովում ստեղծված հայկական կոմիտեները կամավորական խմբեր են կազմակերպում, հանդերձավորում, վարժեցնում, ապա ճանապարհում դեպի Թիֆլիս: Նոր Նախիջևանը դարձել էր նաև հայկական տարբեր կենտրոններից կամավորների ընդունման և դեպի Անդրկովկաս ճանապարհելու հանգրվան:

Պատերազմի ժամանակ արևմտահայության կոտորածների հետևանքով գաղթականության մեծ հոսք սկսվեց դեպի Ռուսաստանի հայաբնակ վայրերը: Փախստականների օգնության կազմակերպված ընթացք տալու համար Նոր Նախիջևանը բաժանել էին 26 տեղամասերի, յուրաքանչյուր տեղամասում նշանակել պատասխանատու անձ: 1915 թ. հունվարին արդեն Նոր Նախիջևանը պատսպարում էր 500 գաղթականների: Այդ նույն ժամանակ Անդրկովկասում պատսպարված փախստականների օգտին ուղարկվում է 20.000 ռ. գումար և մեծ քանակությամբ հագուստ: Դոնի հայությունը որբանոց է բացում և 250 որբերի վերցնում իր խնամքի տակ:

[1] ՀՀՊՊԿԱ, ֆ.54, գ.1829, թ. 72, 91:

***

Դոնի հայության հասարակական կյանքն ալեկոծող հիմնական հարցերից մեկը գաղութի առանձնաշնորհումները պահպանելու խնդիրն էր: Այդ հարցը ամենայն սրությամբ դրվեց 1861 թ. գյուղացիական և դրան հաջորդած մյուս ռեֆորմների իրականացման ժամանակ: Առաջադիմական այդ ռեֆորմները ամբողջ երկիրը վերափոխելու, միևնույն պետական օրենսդրական համակարգում դնելու պահանջ էին առաջադրում: Բարձրացվում էր նաև գոյություն ունեցող գաղթավայրերի արտոնությունները վերացնելու և դրանք ռուսական բնակավայրերին համահավասար վիճակի մեջ դնելու խնդիրը: Հարցը սրվեց մանավանդ 1864 թ. զեմստվոների մասին հայտնի օրենքի գործադրման ժամանակ, երբ Դոնի Ռոստովի քաղաքագլուխ Ա. Բայկովի գլխավորությամբ տեղի զեմստվային ժողովը որոշում էր կայացրել միջնորդելու կառավարության առաջ՝ Նոր Նախիջևանի արտոնությունները վերացնելու առաջարկությամբ: Եկատերինոսլավի նահանգապետը և ներքին գործերի նախարարը տվել էին իրենց համաձայնությունը: Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետը գտնում էր, որ շուտ է այդ քայլին դիմելը, մանավանդ, որ հակասում է դեռևս գործող կայսերական հրովարտակին: Նա նպատակահարմար էր համարում այդ ձեռնարկումը կատարել, երբ Ռոստով և Նախիջևան քաղաքները բնական ճանապարհով կմիանան իրար, որը մոտ ապագայի հարց էր: Հայերը դիմումներ են ուղղում բարձրագույն մարմիններին, ջանում հիմնավորել կայսերական հրովարտակով վերապահված արտոնությունները պահպանելու անհրաժեշտությունը: Պետական ատյաններում բազմակողմանի քննարկումներից հետո ի վերջո 1870 թ. վերացվում է հայկական մագիստրատի գործունեությունը, հետևաբար նաև գաղութի ինքնավարությունը:

Նոր Նախիջևանը Ռոստովին միացնելու խնդրում հաղթում է Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ նահանգապետի տեսակետը. նա գտնում էր, որ երկու քաղաքների միացմանը Նախիջևանը դեմ է, և դա հակասում է 1779 թ. կայսերական հրովարտակին: Հետևաբար, նպատակահարմար էր համարում երկու քաղաքներում էլ մտցնել կառավարման միասնական եղանակ:

Նոր Նախիջևանի արտոնությունները վերացնելու շուրջը սկսված հակամարտությունը հաճախ սուր բնույթ էր ընդունում: Տեղի և նահանգային իշխանությունները, առևտրաարդյունաբերական գործիչները, բուրժուական նոր հարաբերությունների պայմաններում ազատ գործունեություն ծավալելու ձգտումով տարված՝ ջանում էին վերացնել Դոնի հայության առանձնաշնորհումները:

Մյուս կողմից, Դոնի հայերը չէին ուզում հաշվի նստել փոփոխված իրագրության, տնտեսական կյանքի զարգացման պահանջների, ինչպես նաև տեղում ուս բնակչության ստվարացման և շրջապատի բնակչության հետ հայերին համահավասար վիճակում դնելու անհրաժեշտության հետ: Նրանք ամեն կերպ ձգտում էին պահպանել հարյուր տարի առաջ ստացած առանձնաշնորհումները, պահել իրենց մեծաշնորհ վիճակը: Նոր Նախիջևանի առանձնաշնորհումները վերացնելու ընթացքում քննության նյութ դարձավ հայկական գյուղերի և նրանց պատկանող հողատարածությունների խնդիրը: Երկարատև քննարկումներից հետո կառավարիչ սենատը 1875 թ. մարտի 18-ին ընդունեց որոշում: Այդ որոշման համաձայն, եկատերինոսլավի նահանգի հունական և հայկական գյուղերի բնակչությունը դրվեց պետական գյուղացիության համահավասար դրության մեջ: Սակայն անփոփոխ թողնվեցին գյուղացիների ընդարձակ հողաբաժինները, որոնց նրանք տիրելու էին լիիրավ սեփականատիրական իրավունքներով:

Նոր Նախիջևանի ինքնավարությունը վերացնելուց հետո թվում էր, թե Դոնի հայ զանգվածը կարող է կորցնել իր ազգային նկարագիրը: Սակայն ստեղծվեցին ժամանակի ոգուն համահնչյուն և դրան արձագանքող այնպիսի նոր հաստատություններ, որոնք նոր պայմաններում գալիս էին փոխարինելու Դոնի հայության ինքնավար գոյությունը մարմնավորող նախկին հաստատություններին: Դրանցից առաջինը Նոր Նախիջևանի բարեգործական ընկերությունն էր: Ստեփանոս Նազարյանը Նախիջևանի քաղաքագլխի խնդրանքով գրում է (1865 թ.) տեղի բարեգործական ընկերության կանոնադրությունը: Շուտով՝ 1866 թ., կառավարությունը հաստատում է այն, և ընկերությունը համարվում է հիմնադրված: Ընկերության նպատակն էր օգնել գաղութի աղքատ ընտանիքներին՝ իրենց զավակներին կրթություն տալու գործում, նպաստել գաղութում լուսավորության տարածմանը: Ընկերությունն ուներ 22 հոգուց բաղկացած խորհուրդ, իսկ ընթացիկ գործավարության համար՝ վեց հոգուց կազմված վարչություն: Բարեգործական ընկերությունը կարճ ժամանակում դարձավ Դոնի հայության կենսունակ ու ճանաչված հաստատություններից մեկը և վարեց բավականաչափ արդյունավետ գործունեություն: Ընկերության գործերը տևականորեն վարել է նրա նախագահ, նշանավոր հասարակական գործիչ, իրավաբան Գրիգոր Զալխուշյանը:

Ավելի համեստ դեր ուներ «մարդասիրական ընկերությունը», որը հիմնվեց 1867 թվականին՝ եպիփան Պոպովի ջանքերով: Ընկերության միջոցները փոքր էին և ծախսվում էին գերազանցապես Ս. Խաչ վանքի ժառանգավորաց դպրոցի պահպանման վրա:

Մի խումբ առաջադեմ կանանց և օրիորդների նախաձեռնությամբ 1882 թվականին հիմնվում է «Հայուհյաց խնամատար ընկերությունը»: Մյուս բարեգործական կազմակերպությունների օրինակով այս ընկերությունը ևս ուներ իր վարչության խորհուրդը և կնիքը: Ընկերությունն իր վրա է վերցնում նյութական միջոցների մեծ կարոտություն ունեցող Ս. Հռիփսիմյանց օրիորդաց դպրոցի խնամատարությունը: «Հայուհյաց ընկերությունը» աստիճանաբար հեղինակություն է ձեռք բերում և ճանաչում գտնում որպես Դոնի հայկական գաղութի օգտավետ հաստատություններից մեկը:

Գաղութի ազգային հաստատությունների մեջ առավել նշանավոր էր եկեղեցական հոգաբարձության դերը, որի հիմնադրման պատճառը եղել է Նոր Նախիջևանին կտակված գումարները նպատակահարմար ձևով տնօրինելու անհրաժեշտությունը: Գաղութի ինքնավար մարմինները վերացնելուց և 1874 թ. քաղաքային ռեֆորմը կիրառելուց հետո Նոր Նախիջևանը դրվեց կայսրության մյուս քաղաքներին համահավասար իրավիճակում: Հետզհետե ավելանում էր քաղաքի այլազգի բնակչությունը: Նման պայմաններում կտակների տնօրինումը թողնել քաղաքագլխի իրավասության տակ կնշանակեր այդ եկամուտները գործադրել քաղաքի ամբողջ բնակչության օգտին: Դա նախ կհակասեր կտակների գործադրման նպատակներին և, բացի այդ, ձեռնտու չէր լինի հայ համայնքին: Կտակավանդ գումարները և այլ միջոցները միայն Դոնի հայության ծառայեցնելու ձգտումը ծնունդ տվեց կտակների խնդրով զբաղվող հատուկ հաստատություն հիմնելու մտայնությանը: 1889 թ. կառավարության հաստատումով հիմնվեց «Նոր Նախիջևանի հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությունը»: Այս հաստատության ձեռքում կենտրոնացվեց կտակների ամբողջ գործը: Բարեգործական մյուս հաստատությունների նման հոգաբարձությունը ևս իր նպատակն էր համարում հոգալ աղքատների կարիքները: Այդ խնդիրը իրականացնելիս նա ոչ միայն աղքատներին էր օգնություն հասցնելու, այլև միջոցներ էր հայթայթելու եկեղեցիներին կից դպրոցներ, անկելանոցներ և նմանօրինակ այլ հաստատություններ բացելու:

Եկեղեցական հոգաբարձությունը գաղութի ամենահարուստ և արդյունաշատ հաստատությունն էր: Նրա տարեկան եկամուտներն անցնում էին 50 հազարից, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հասնում էին շուրջ մեկ միլիոնի: Հոգաբարձության միայն անշարժ կայքը, որը գնահատվում էր 746 հազար ռուբլով, Նախիջևանից զատ, գտնվում էր նաև Ռոստովում, եկատերինոդարում, Տագանրոգում, Կամենսկայա ավանում և Հեռավոր Կալկաթայում: Հոգաբարձության հաստատություններն էին որբանոցը, անկելանոցը և ճերմակեղենի դպրոց-արհեստանոցը: Եկեղեցական հոգաբարձությունը, ի տարբերություն մյուս բարեգործական հաստատությունների, գտնվում էր ներքին գործերի նախարարության իրավասության տակ: Այդ նույն նախարարության տնօրինության ներքո էր նաև Նոր Նախիջևանի հոգևոր կառավարությունը: Վերջինս ոչ թե բարեգործական, այլ տեղի հոգևո-

բականության կազմակերպությունն էր և անմիջականորեն ենթարկվում էր Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայկական թեմին:

Բարեգործական ընկերություններն ազգօգուտ գործունեություն են ծավալում ուսման, լուսավորության, Դոնի հայության հասարակական կյանքի, նրա ազգային նկարագիրը պահպանելու գործում: Միայն Նոր Նախիջևանի բարեգործական ընկերության միջոցներով 1910 թ. ուսանում էին 114 սաներ: Ընկերությունը նախապատրաստեց և երեք հատորով հրատարակեց Ռ. Պատկանյանի և երկու հատորով՝ Մ. Նալբանդյանի երկերը: Հատկանշական է, որ ընկերության անդամներ էին նաև Մոսկվայի, Աստրախանի, Եկատերինոդարի և հայաշատ այլ վայրերի ներկայացուցիչներ:

***

Նոր Նախիջևանի գաղութի զարգացման առանձնահատկություններից մեկը բավական որոշակի դրսևորված սոցիալական պայքարի առկայությունն էր: Նախ, անհրաժեշտ է նշել, որ Դոնի հայկական գաղութում բնակչության աճը շատ դանդաղ էր ընթանում: Եվ դա ուներ իր պատճառները: Հարավային Ռուսաստանում, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, բնակչության աճն ընթանում էր նաև մեխանիկական եղանակով, դրսեկ բնակչության հաշվին: Դոնի հայությունն իր տնտեսական և իրավաքաղաքական արտոնությունները պահպանելու նպատակով ամեն կերպ խոչընդոտել է դրսի բնակչության ներթափանցմանը: Գաղութի այդ ներփակ, գոց կյանքը էական նշանակություն է ունեցել ժողովրդի բարքերը, ազգային սովորույնները ու դիմապատկերը պահպանելու գործում: Բնակչության աճի դանդաղ տեմպերի մասին պատկերացում է տալիս հետևյալ փաստը. Նոր Նախիջևան քաղաքի բնակչությունը 1793 թ. հասնում էր 7564, իսկ 1897 թվականին՝ 29277 մարդու[1]: Այսինքն, ավելի քան հարյուր տարվա ընթացքում բնակչության թիվը քառապատկվել էր: Այդ նույն ժամանակաշրջանում Հարևան Ռոստով քաղաքի բնակչությունը աճել էր ավելի քան իննսուն անգամ:

Գաղութի բնակչությունը տարբերակվում էր երեք հիմնական շերտերի մեջ: Սոցիալական շերտավորման վերին աստիճանում գտնվում էին առևտրաարդյունաբերող մեծահարուստները: Այս դասի մեջ մտնում էին խոշոր ձեռնարկատերերը, մեծ կապիտալներ ունեցող առևտրականները: Նրանք իշխող դիրք ունեին քաղաքային խորհրդարանում և առհասարակ տոն էին տալիս հայ համայնքի կյանքին: Ավելորդ չէ նշել, որ հայկական գաղութում մեծահարուստների կարողությունները համեստ, սահմանափակ էին:

Երկրորդ դասը միջին կարողությունների տեր առևտրականների, արհեստավոր արդյունաբերողների և հողատերերի, այդ թվում և գյուղական հարուստների շերտն էր: Միջին խավը բավական սուղար էր: 19-րդ դ. վերջին տասնամյակներից, խոշոր առևտրաարդյունաբերական կազմակերպությունների մրցակցության հետևանքով, նկատվում են այս դասի քայքայման, մասամբ էլ խոշոր բուրժուազիայի շարքերն անցնելու նշաններ:

Երրորդ՝ հիմնական շերտը քաղաքի և գյուղերի անմիջական արտադրող կամ տարբեր զբաղմունքի տեր ներքնախավերն էին: Քաղաքի արհեստավորության և գյուղական բնակչության շրջանում ունեզրկումը նկատելի էր և աստիճանաբար ավելի էր խորանում: Մի կողմից, վատթարանում էր բնակչության որոշ մասի դրությունը, մյուս կողմից, ավելի էին ուռճանում գաղութի մեծահարուստները: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ գաղութի տնտեսական ընդհանուր բարվոք վիճակի պայմաններում հանդիպում են նաև ժողովրդական զանգվածների ընչազուրկ դրությունը հավաստող փաստեր:

Հողային հարցին առընթեր Դոնի հայկական գաղութում ծառացել էր կալվածատիրական տնտեսություններն աշխատող ուժով ապահովելու խնդիրը: Դրսից աշխատող ձեռք հավաքագրելը արգելվում էր, քանի որ նրանց չէր կարելի հայ համայնքի մեջ ընդունել: Հայ գյուղացիները, ազատ լինելով ճորտական կախումից, թե տնտեսապես և թե իրավապես ազատ էին աղաների մոտ աշխատելու հարկադրանքից: Ստեղծված պայմաններում աղայական դասը դիմում է հայ գյուղացիներին ճորտացնելու մեթոդին և պարբերաբար քայլեր ձեռնարկում այդ ուղղությամբ: Սեփական ագարակներում գյուղացիներին աշխատեցնելու, այսպես կոչված վիճելի հողերը իրենց ձեռքում պահելու և գյուղացիներին հնազանդ պահելու ձգտումներում կալվածատիրական վերնաշերտերը բռնի միջոցների են դիմում: Նրանց հաջողվում է անգամ բանտարկել տալ անհնազանդ գյուղացիներին: Սակայն գյուղացիների համառ պայքարի շնորհիվ նրանք հաջողության չեն հասնում:

Գաղութի հայ հասարակության մեջ սուր հակասություններ դրսևորվեցին քաղաքագլուխ Ա. Խալիբյանի կողմից քաղաքի եկամուտների հետ ինքնակամ վարվելու հարցում: Պարզվել էր, որ անկանոն ու անստույգ վիճակ էր տիրում քաղաքագլխի տնտեսական գործունեության մեջ: Այդ հարցը հասունանալով ընդհանուր հետաքրքրություն է առաջացնում և ոչ միայն զբաղեցնում է պաշտոնական մարմիններին, այլև ստեղծում ներհակություններ հայ հասարակության մեջ:

Հայկական գաղութում ուժեղ կրքեր բորբոքվեցին եկեղեցական գումարների շուրջը՝ նույնպես կապված Խալիբյանի անձի հետ: Քաղաքագլուխ

[1] ՀՀՊՊԿԱ., ֆ.139, գ.248, թ.383, **Բարխուդարյան Վ.**, ՆշՎ. աշխ., գիրք առաջին, էջ 62:

Խալիբյանին 1845 թ. հանձնարարվում է հավաքել նաև եկեղեցիների տարեկան եկամուտները: Նշված գումարների չուրջը սկսվում է երկարատև ու համառ պայքար: 1855 թ. քաղաքի և գյուղերի 144 բնակիչներ դիմում են թեմական առաջնորդին և խնդրում Խալիբյանից գանձել 100 հազար ռ. եկեղեցական գումարը, գտնելով, որ այն պատկանում է հայ համայնքին:

Ի վերջո, Խալիբյանը այդ գումարները վերադարձնում է թեմի առաջնորդին: Այդ գումարների և Խալիբյանի անձնական մուծումների շնորհիվ բացվում է Թեոդոսիայի Խալիբյան ուսումնարանը:

Դոնի հայ զանգվածը, հատկապես երիտասարդությունը հետագա տասնամյակներում ակտիվ մասնակցություն է ունենում երկրի դեմոկրատական շարժումներին: 1870–80-ական թվականներին արևելահայ իրականության դեմոկրատական խմբավորումների մեջ առաջավոր մտավորականությունը նարոդնիկությունն էր, որի մեծագույն մասը սովորող երիտասարդությունն էր: Դոնի հայկական գաղութի երիտասարդության շատ ներկայացուցիչներ մասնակցում էին նարոդնիկական «Զեմլյա ի վոլյա» և «Նարոդնայա վոլյա» կազմակերպությունների տեղական խմբակների աշխատանքներին: Դրանցից էին Ս. և Պ. Փեչեքերովները, Հ. Շապովալովը, Ռ. Զերնիչևը, Մ. Պոպովը, Մ. Կայալովը և շատ ուրիշ հայեր: Նրանցից շատերը բանտարկվեցին և հալածանքների ենթարկվեցին: Ռոստով-Նախիջևանյան նարոդնիկական խմբակները կապված էին Մոսկվայի և Պետերբուրգի ուսանողության հետ:

Արևելահայ նարոդնիկական խմբակները սոցիալական խնդիրներին զուգընթաց գրեթե ամենուրեք առաջ էին քաշում նաև ազգային ազատագրության հարցեր: Նոր Նախիջևանում դրությունն այլ էր: Այստեղ նարոդնիկական կազմակերպությունները ազգային խնդիրներ չէին շոշափում և մնացել էին միայն սոցիալական պայքարի ոլորտում՝ թեպետ այդ շարժումը զուգադիպում էր հայկական հարցի առաջացման տարիներին, և Նախիջևանում ուժեղ էր Ռ. Պատկանյանի ազդեցությունը: Դրա պատճառն այն էր, որ Դոնի երիտասարդության վրա զորեղ էր համառուսաստանյան նարոդնիկական շարժման ղեկավարների գաղափարական ազդեցությունը:

19-րդ դ. վերջերից Ռոստով և Նախիջևան քաղաքները հատկապես սոցիալ-քաղաքական առումով մերձեցել, մի ամբողջություն էին կազմում: Ռոստովում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորմանն ու նրանց գործունեությանը մասնակցում էին նաև նախիջևանցիները: Բացի ընդհանուր դեմոկրատական շարժումից, նախիջևանահայերը ակտիվորեն հանդես եկան նաև հայ եկեղեցու գույքը բռնագրավելու՝ ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ի որոշման դեմ: Սուրբ Խաչ վանքում կառավարական այդ հրամանը, որն ուղղված էր հայկական դպրոցների դեմ (քանի որ նրանք պահվում էին եկեղեցիների միջոցներով), ուժեղ դիմադրության է հան-

դիպում: Իշխանությունները դպրոցից հեռացնում են որոշ ուսուցիչների, վանահայր Վահան Տեր-Գրիգորյանին և Նահապետ Նահատակյանին:

Ռուսաստանյան 1905–1907 թթ. բուրժուադեմոկրատական հեղափոխությունը բավականաչափ ուժեղ արտահայտվեց նաև Դոնում: Հեղափոխության տարիներին հայկական գաղութում տարածում գտավ ուսանող-երիտասարդական շարժումը, որի ակտիվ մասնակիցը հատկապես թեմական դպրոցի աշակերտությունն էր: Աշակերտական խլրտումները գրավեցին ինչպես հայկական լայն շրջանների, այնպես էլ Դոնի մարզի վարչակարգի ուշադրությունը: Ռուսական և հայկական մամուլը, հատկապես «Նոր կյանք» թերթը, լայնորեն լուսաբանում էին թեմական դպրոցի դեպքերը: Թեմական դպրոցի աշակերտները դասադուլ են հայտարարում և ներկայացնում խիստ պահանջներ: Ի վերջո, դրան պաշտոնապես միջամտում է գեներալ-նահանգապետը, որը քաղաքապետի և ոստիկանության միջոցով կարողանում է վերջ տալ աշակերտական շարժմանը:

Հայկական գաղութում աստիճանաբար ձևավորվում են հայ հեղափոխական դաշնակցության և սոցիալ-դեմոկրատական կուսակցության առանձին խմբեր: Դաշնակցական կուսակցության ներկայացուցիչները իրենց գործունեությունը ակտիվացնում են 1903 թվականին՝ եկեղեցական գույքի բռնագրավման ժամանակ: Նոր Նախիջևանը կուսակցական առումով նրանք կոչում էին «Նալբանդի» շրջան: Դաշնակցական կուսակցության տեղի ակտիվ գործիչներից էին «Նալբանդ» կազմակերպության ղեկավար, թեմականի ուսուցիչ Համբարձում Տերտերյանը և մասամբ Սիմոն Վրացյանը: Վերջինս Նոր Նախիջևանում լինելու ընթացքում մասնակցում էր տեղի կուսակցական գործերին:

Գաղութի երիտասարդության շրջանում սոցիալ-դեմոկրատական կազմակերպության եռանդուն գործիչներից էին թեմական դպրոցի նախկին սաներ Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին) և Ալեքսանդր Մյասնիկյանը: Նրանք հաճախ էին լինում իրենց ծննդավայրում և ակտիվ ներգրավվում տեղի հասարակական-քաղաքական կյանքի մեջ:

Ռուսաստանյան հեղափոխության առաջին տարում Դոնի հայությունը անհապաղ նյութական օգնություն է կազմակերպում հայ-թուրքական ընդհարումների հետևանքով տուժած բնակչությանը: Նոր Նախիջևանի գումարներից 1000 ռուբլի է հատկացվում Բաքվի տուժած ինչպես հայ, այնպես էլ թաթար բնակիչներին հավասարապես բաժանելու համար:

1917 թ. Փետրվարյան դեմոկրատական հեղափոխությունից մինչև 1920 թ. հունվարը՝ խորհրդային կարգերի հաստատումը Դոնում, ստեղծվել էր քաղաքական պայքարով հագեցած բարդ ու լարված դրություն: Այդ տարիներին Նոր Նախիջևանի ազգային մշակութային կյանքը տնօրինում էր համայնական

խորհուրդը: 1917 թ. վերջերին գաղութի բոլոր կուսակցությունների մասնակցությամբ ընտրվում է 60 հոգուց բաղկացած «Հայ համայնական խորհուրդը»: Խորհրդի նախագահ է ընտրվում Ռ. Բերբերյանը, իսկ գործադիր մարմինը՝ համայնական վարչությունը, գլխավորում էր Ե. Շահազիզը: Համայնական խորհուրդը դարձավ ոչ միայն Նոր Նախիջևանի, այլև հարավային Ռուսաստանի ցիրուցան հայության մշակութային կյանքի այն տնօրենը, որը ինչ-որ չափով ներկայացնում ու պաշտպանում էր հայության շահերը տեղական իշխանությունների առջև:

***

Նոր Նախիջևանի հայկական գաղութը, եթե տնտեսական զարգացմամբ լիովին կապված էր բովանդակ երկրի հետ և նրա մի մասնիկն էր կազմում, ապա հոգևոր կյանքի առումով հայկական ազգային մշակույթի կարևոր օջախներից էր: Դոնի հայությունը կարողացավ պահպանել ազգային մշակույթի ավանդները և նոր պայմաններին համապատասխան նշանակալից չափով զարգացնել այն: Գաղութի մշակույթի առանձին ճյուղերի զարգացումն ուներ հետևյալ պատկերը:

Կրթություն: Մատաղ սերնդին ուսուցանելու և դպրոց բացելու խնդիրը մտահոգել է ժամանակի գործիչներին դեռևս գաղութի հիմնադրման տարիներին: Գաղութի հիմնադրումից մի քանի տարի անց Նոր Նախիջևանում բացվում է առաջին վարժարանը: Այդ նույն ժամանակ հիմնվում է նաև Ս. Խաչ վանքի դպրոցը: Վերջինս գաղութում առաջին հայկական դիշերօթիկ դպրոցն էր: Աշակերտները բնակվում էին վանքում և սնվում ու սովորում վանքի հաշվին: Դպրոցը աշխույժ կյանք սկսեց այդ տարիներին վանքում տպարան հաստատելու (1790 թ.) շնորհիվ: Նշված և դրանց զուգահեռ հիմնված մյուս վարժարաններում ուսումնական գործը բարվոք վիճակում պահելու նպատակով նորնախիջևանցիները որակյալ ուսուցիչներ են հրավիրում: Աստրախանից հրավիրվում է Սերովբե Պատկանյանը, որը և նկատելիորեն բարելավում է ուսումնական գործը: Այդ ամենով հանդերձ Դոնի հայկական գաղութում ժամանակի պահանջներին համապատասխան դպրոց ունենալու հարցը մնում էր չլուծված: Սակայն գաղութի բնակչությունը չէր հաշտվում միայն ծխական դպրոցներ ունենալու իրողության հետ: Եվ երկարատև դիմումներից ու գրագրություններից հետո 1850 թ. բացվում է գավառային ուսումնարանը: Այն նկատելի չափով տարբերվում էր ժամանակի ծխական վարժարաններից: Գավառային ուսումնարանը Նոր Նախիջևանի երկարակյաց ուսումնական հաստատություններից էր: Եվ թեև 1857 թ. քաղաքում բացվել էր առաջին իգական դպրոցը, Դոնի հայկական գաղութը 19-րդ դարի երկրորդ

կես էր թևակոխում ուսումնական գործի ոչ այնքան բարվոք վիճակով: 1860-ական թվականների կեսերին քաղաքում կար ընդամենը չորս ուսումնարան:

Այդ պատճառով էլ բարձրորակ դպրոց ունենալու ցանկությունները և այդ ուղղությամբ գործադրվող ջանքերը ավելի ու ավելի ուժգին էին արտահայտվում: Ազգի լուսավորության մեջ նրա ապագան տեսնող Ստ. Նազարյանը Նախիջևանում ազգային լուրջ դպրոց հիմնելու անհրաժեշտության մասին գրում էր. «Այս պատճառով մտածում ենք, որ դպրոցի առավել պատշաճավոր տեղն է Նախիջևանը, Դոն գետի վրա, Ազովյան, ուրեմն և Սև ծովին շատ մոտ, իսկ ժողովուրդը բոլորովին հայ և մոտ 20.000 հոգի յուր չրջակա գյուղերով»[1]:

1860-ական թվականներին բացված ուսումնարանների մեջ նշանավոր էր Սուրբ Խաչ վանքում հիմնված ժառանգավորաց դպրոցը: Այդ դպրոցը հիմնադրվեց 1868 թ. մարդասիրական ընկերության կողմից: Կանոնադրության համաձայն, քանի որ դպրոցը կոչված էր հոգևոր գործիչներ պատրաստելու, լինելու էր հայոց կաթողիկոսի ընդհանուր և Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի առաջնորդի անմիջական հսկողության տակ: Դպրոցում, բացի կրոնին վերաբերող առարկաներից, ավանդվում էին նաև պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, բնագիտություն, երկրաչափություն և այլ առարկաներ: Թեպետև դպրոցի խնդիրը հոգևոր գործիչներ պատրաստելն էր, սակայն գործնականում այն աշխարհիկ բնույթ ուներ: Դպրոց էին ընդունվում մեծ մասամբ քաղաքի վաճառականական դասի զավակները, ինչպես նաև հայկական գյուղերի մանուկները: Ժառանգավորաց դպրոցը լավ անուն էր վաստակել և նշանակալի դեր կատարեց մանուկների կրթության գործում: Այսուհանդերձ, դպրոցական-ուսումնական գործում գաղութը որոշակի հաջողությունների հասավ միայն 1880-ական թվականների սկզբներից:

1880 թ. Նոր Նախիջևանում բացվեց արհեստավորական դպրոցը, որի հիմնադրման նախաձեռնողը, իրականացնողն ու երկարամյա տեսուչը եղել է Ռ. Պատկանյանը: Դեռևս գաղութի հիմնադրման 100-ամյակի օրերին նա անդրադարձել էր այդ հարցին, և որոշվել էր բացել արհեստավորական դպրոց: Նա գաղութի անցյալի ծաղկուն վիճակը բացատրում էր զարգացած արհեստագործությամբ, իսկ իր օրերում նկատվող աղքատությունը՝ արհեստներն արհամարհելով: Դպրոցի մուտքի վրա գրված էին «Բանուկ ձեռքը երբեք չի մուրալ» խորհրդավոր խոսքերը: Դպրոց էին ընդունվում 10-12 տարեկան տղաները: Ուսման տևողությունն էր չորս տարի: Աշակերտները ստանում էին հանրակրթական գիտելիքներ և մասնագիտանում երեք հիմնական արհեստների՝ փականագործության, ատաղձագործության և կոշկակարության մեջ: Որ-

[1] Հյուսիսափայլ, 1864, թիվ 4, էջ 234:

վա մեջ հանրակրթական առարկաներին տրամադրվում էր 3, իսկ արհեստանե-
րին՝ 4 ժամ: Հատուկ արհեստանոցներում լավագույն վարպետների մոտ աշա-
կերտները հմտանում էին արհեստների մեջ: Աշակերտների քանակը շատ մեծ
չէր, հազիվ հասնում է 50–60-ի: 1911 թ. փականագործի մասնագիտություն
էին սովորում 26, ատաղձագործի՝ 15 և կոշկակարի՝ 15 աշակերտ: Աշակերտ-
ների մեծագույն մասը Նախիջևանից և շրջակա հայկական գյուղերից էր, իսկ
նրանց շուրջ 10–15 տոկոսը՝ այլ բնակավայրերից:

Արհեստավորական դպրոցը իր գոյության երեքուկես տասնամյակում
միշտ նեղվել է միջոցների պակասից, քանի որ ծախսերը հաճախ գերազանցում
էին եկամուտները: Ավելին, դիտվում էր նաև այլ երևույթ՝ աշակերտների
ցածր առաջադիմությունը և դպրոցից հեռանալը: Այդ նույն՝ 1911 թ. 57 ա-
շակերտից 20-ը դպրոցը թողել-հեռացել էին:

Արհեստավորական դպրոցն այն դերը չկատարեց, որպիսի հույսեր ու-
ներ Ռ. Պատկանյանը: Դրա պատճառն այն էր, որ դպրոցի գործունեությունը
համընկնում էր արդյունաբերության զարգացման և դրա հետևանքով ար-
հեստների քայքայման դարաշրջանի հետ: Այն, փաստորեն, ժամանակավրեպ
ձեռնարկում էր:

Նոր Նախիջևանի ուսումնական հաստատությունների մեջ ամենից ավե-
լի նշանակալի դեր է կատարել հոգևոր սեմինարիան կամ թեմական դպրոցը,
որը բացվեց 1881 թ., թեև նախապատրաստական աշխատանքները սկսվել էին
վաղուց: Դպրոցն ուներ վեց դասարան և եռաստիճան նախակրթարան: Թեմա-
կանը ժամանակի միջնակարգ դպրոցների մակարդակով գուցե և ավելի գիտե-
լիքներ էր հաղորդում իր սաներին: Այնտեղ դասավանդվում էին կրոն, հայե-
րեն, ռուսերեն, լատիներեն, ֆրանսերեն լեզուներ, թվաբանություն, աշխար-
հագրություն, պատմություն, մանկավարժություն, հոգեբանություն, տրամա-
բանություն, բնագիտություն և այլ առարկաներ: Թեմական դպրոցը դարձել
էր բազմակողմանի կրթություն տվող մի հաստատություն: Նրա սաները
կյանքի լայն ասպարեզ էին դուրս գալիս, և շատ քչերն էին հոգևոր կոչում
ընդունում: Դպրոցի առաջին տեսուչն էր նշանավոր մանկավարժ Ա. Բահաթր-
յանը: Նրա մահից հետո այդ պաշտոնը վարում էր լեզվաբան Գ. Զարիխյանը,
իսկ 1903 թվականից՝ վաստակաշատ բանասեր ու մանկավարժ Ե. Շահազիզը:
Դպրոցն ուներ բավականաչափ հարուստ գրադարան, լավ կահավորված ֆի-
զիկայի լաբորատորիա և այլն:

Դպրոցը պահվում էր թեմի հայկական համայնքների եկեղեցիներից ու
վանքերից ստացվող գումարներով: Դրանց անբավարար լինելու պարագայում
ծախսերը հոգում էր քաղաքային խորհրդարանը: 1890-ական թվականներից
դպրոցի ծախսերը, հետևաբար, նաև եկամուտներն անցնում էին 30 հազար
ռուբլուց:

Դպրոցի շրջանավարտները տեղում, Ղզլարում, Մոզդոկում, Արմավի-
րում, Ղրիմի հայկական բնակավայրերում, Խարկովում և այլուր մանկավար-
ժական արդյունավետ աշխատանք էին կատարում: Նրա շրջանավարտների մի
մասը ուսումը շարունակում էր Պետերբուրգի, Մոսկվայի, Խարկովի և կենտ-
րոնական այլ քաղաքների կամ արտասահմանի բարձրագույն ուսումնական
հաստատություններում: Թեմական դպրոցը փաստորեն դարձել էր հարավա-
յին Ռուսաստանի հայկական համայքների կուլտուր-լուսավորական գործի
ջահակիրը: Այն միաժամանակ Նոր Նախիջևանի հասարակական-մշակութա-
յին կյանքի, ինչպես նաև դեմոկրատական գաղափարների կենտրոնն էր:

Թեմական դպրոցի հիմնադրման հաջորդ տարում, 1882 թ. բացվում է
«Գոգոյան օրիորդաց հայկական վարժարանը»: Այն բացվեց Նոր Նախիջևա-
նի նշանավոր վաճառական Մկրտիչ Գոգոյանի կտակի հիման վրա: Դպրոց
ընդունվում էին 7–11 տարեկան տարբեր խավերից ելած հայ աղջիկները: Ուս-
ման տևողությունը վեց տարի էր: Ռուսաստանի իգական դպրոցների համար
սահմանված ծրագրով այս ուսումնարանում ևս ավանդվում էին բազմաթիվ ա-
ռարկաներ, այդ թվում նաև ձեռագործ: Գոգոյան դպրոցը օգտվում էր պետա-
կան դիմնազիաների իրավունքներից: Դպրոցը Նոր Նախիջևանի արգասավոր
ուսումնական հաստատություններից էր: Նրա նշանակությունը անուրանալի
է գաղութի իգական սեռի կրթության ու դաստիարակության գործում:

Վերոհիշյալ կրթական օջախներից բացի, Նոր Նախիջևանում կային
ծխական ու մասնավոր 6–7 դպրոցներ: Հայկական գյուղերում գործում էին
մեկական, որոշ տեղերում՝ երկուական ծխական դպրոցներ: Գյուղերի այդ
դպրոցները պահվում էին գյուղի համայնքի, մասամբ էլ եկեղեցու միջոցնե-
րով:

Նոր Նախիջևանում տպարան հիմնելու միտքը հղացել էին դեռևս գա-
ղութի հիմնադրման շրջանում: Եվ այդ խնդիրը ի վերջո հնարավոր եղավ ի-
րականացնել: Գր. Խալդարյանի մահից հետո ռուսահայերի հոգևոր առաջ-
նորդ Հ. Արղությանին հաջողվում է մարել Պետերբուրգում գործող տպարանի
պարտքերը և 1790 թ. այն տեղափոխել ու հաստատել Նոր Նախիջևանի Ս.
Խաչ վանքում: Այն հարավային Ռուսաստանի առաջին տպարանն էր: Տպա-
րանը վեց տարի, մինչև 1795 թ. գործեց Ս. Խաչ վանքում և ապա մինչև դարի
վերջը՝ Աստրախանում: Խալդարյան տպարանը ռուսահայ գաղութներում
գործեց քսան տարի և հրատարակեց քառասունչորս գիրք: Տպարանի գոր-
ծունեության ամենաբեղուն շրջանը նախիջևանյան տարիներն էին: Խալդար-
յանի տպարանից դուրս եկած գրքերի բովանդակությունից և Հ. Արղությանի
գրագրություններից պարզ է դառնում, որ նա հետամուտ էր տպարանը ծա-
ռայեցնել հետևյալ հիմնական խնդիրներին: Դրանցից առաջինը արևմուտքից
եկող կաթոլիկական պրոպագանդային հակադրվելն էր: Այդ նպատակով

տպագրում էին «Ավետարան», քարոզգրքեր, առհասարակ հայ եկեղեցու ծեսերին ու նրա դավանանքի այլևայլ հարցերին վերաբերող գործեր: Հ. Արղությանը միժամանակ ջանում էր տպարանը ծառայեցնել ազատագրական շարժման նպատակներին: Հատուկ ընտրում և հրապարակում էր գրքեր, որոնցում դրվատվում էր Հայաստանի անցյալն ու սերմանվում հայրենի երկիրը ազատագրելու գաղափարը: Նա իր հայրենակիցների մեջ ռուսական կողմնորոշումն ամրապնդելու միտումով հրատարակում էր հյուսիսային կայսրության ներկա ու անցյալի պատմության փառահեղ դրվագներին նվիրված գրքեր: Այդ ամենից զատ, տպարանը ծառայում էր լուսավորության գործին, դպրոցները ապահովում դասագրքերով, բառարաններով:

Հրատարակված գրքերը իրացվում էին նաև Կովկասի, Մոլդովայի հայաշատ վայրերում, Կոստանդնուպոլսի, Հնդկաստանի հայկական շրջաններում: Հասկանալի է, որ տակավին 18-րդ դարի վերջերին Դոնի հայկական գաղութում հաջող գործող տպարան ունենալը կուլտուր-լուսավորական նշանակալից երևույթ էր:

Դժբախտաբար, այդ առաջին տպարանից հետո Դոնի հայությանը երկար ժամանակ վիճակված չէր տպարան ունենալ, թեպետև գաղութի առաջադեմ գործիչները մշտապես մտահոգված էին այդ հարցում: Հատկապես, 1860-70-ական թվականներին բազմաթիվ նախաձեռնություններ են լինում (Հ. Տեր-Գաբրիելյան, Հ. Տեր-Սիմոնյան, Ռ. Պատկանյան) տպարան հիմնելու ուղղությամբ, բայց դրանք հաջողությամբ չեն պսակվում: 19-րդ դարի վերջին տասնամյակներին եղել են որոշ տպարաններ, սակայն տեխնիկապես հագեցված, բարեկարգ տպարաններ հիմնվեցին միայն 20-րդ դ. սկզբին:

Գաղութում մտավոր կյանքի մակարդակը հասունացրել էր պարբերական մամուլ ունենալու անհրաժեշտությունը: Նոր Նախիջևանում պարբերական հիմնելու առաջին նախաձեռնողներից էր Ռ. Պատկանյանը: Թուլյտվությունն ստանալով, նա 1863-64 թթ. Պետերբուրգում հրատարակում է «Հյուսիս» շաբաթաթերթը: Այս թերթը, որը փաստորեն խմբագրում էր պոետի հայր Գաբրիել Պատկանյանը, 31 համար լույս տեսնելուց հետո փակվեց: 1878 թ. բանաստեղծը դիմում է մամուլի գլխավոր վարչություն՝ «Նոր Նախիջևան» անունով թերթ հրատարակելու խնդրանքով: Դա մերժվում է տեղի պաշտոնյաների մեջ հայերեն լեզուն տիրապետող չլինելու պատճառաբանությամբ:

Մինչև 20-րդ դ. սկզբները բազմաթիվ դիմումներ եղան Նախիջևանում թերթ հրատարակելու վերաբերյալ: Բոլոր այդ փորձերը, սակայն, հանդիպում էին պետական պաշտոնյաների բացասական վերաբերմունքին և մերժում ստանում: Մայրենի լեզվով թերթ հրատարակելու հնարավորությունից զրկված լինելով, գաղութի մտավորականներն իրենց հայացքն ուղղում էին դեպի Ռոստով: Նրանք սկսեցին խմբագրել ու հրատարակել «Պրիազովսկի

կրայ» (Ա. Հարությունյան), «Դոնսկայա ռեչ» (Մ. Բերբերյան), «Դոնսկայա պչելա» (Հ. Տեր-Աբրահամյան) և մամուլի այլ օրգաններ:

Միայն 1905-1907 թթ. ռուսաստանյան հեղափոխությունը վերացրեց ցարական բյուրակրատիայի հարուցած արգելքները, և հենց հեղափոխության տարիներից իրար հետևից սկսեցին հրատարակվել մամուլի տեղական օրգաններ: Հեղափոխության գաղափարներով ոգեշնչված Նոր Նախիջևանի մի խումբ երիտասարդներ 1906 թ. հրատարակում են «Նոր կյանք» խորագրով թերթ: Ուսանող Գ. Անոփյանի խմբագրությամբ այդ պարբերականը գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ էր, որը գոյություն ունեցավ մեկ տարի: Ժամանակագրական առումով «Նոր կյանքին» հաջորդում և նրա գործունեությունը շարունակում է 1907 թ. հիմնված «Մեր ձայնը» օրաթերթը, որի խմբագիր-հրատարակիչն էր Հ. Մալխասյանը: Թերթն իր հիմնական խնդիրն էր համարում հայ իրականության հասարակական-քաղաքական իրադարձությունների և առաջին հերթին գաղութահայ կյանքի լուսաբանումը: Թերթն այնպիսի համարում էր վաստակել, որ նրան թղթակցում էին նշանավոր շատ հայ գործիչներ, ինչպես՝ գրող Ա. Շիրվանզադեն, անվանի մանկավարժ Ս. Մանդինյանը և ուրիշներ: Նյութական միջոցների սղության պատճառով 1908 թ. վերջում թերթը փակվում է:

Նոր Նախիջևանի պարբերական մամուլի օրգաններից ամենից երկարակյացը «Լույս» շաբաթաթերթն էր (1910-1914 թթ.), որը գրական հասարակական ուղղություն ուներ: Այն խմբագրում էր գաղութի աչքի ընկնող դեմքերից բժիշկ Գ. Ռեիզյանը: Ի տարբերություն իր նախորդների՝ «Լույսը» չէր անդրադառնում քաղաքական հարցերի: Դրա փոխարեն այն ուներ ավելի շեշտված կուլտուր-լուսավորական և գրական-գեղարվեստական բովանդակություն: Թերթը լուսաբանում էր Հայաստանի ու հայ իրականության հետ առնչվող երևույթներն ու անցքերը: «Լույսը» դարձել էր Դոնի հայության առօրյա կյանքի երևույթներին արձագանքող, նախիջևանցու սրտին մոտ և ընդունելի պարբերական:

«Լույս» շաբաթաթերթին զուգահեռ, միայն ավելի կարճ ժամանակով, 1912-1914 թթ., հրատարակվում է «Գրիչ» պարբերականը: Ս. Պապայանի խմբագրած սույն շաբաթաթերթից լույս տեսավ ընդամենը 27 համար: Այս պարբերականը լուսաբանում էր Նոր Նախիջևանի, նկատելի չափով նաև Ռուսաստանի մյուս հայկական գաղթօջախների և մայր հայրենիքի ազգային, մշակութային և գրական-հասարակական կյանքը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914-1916 թթ. հրատարակվում էր «Գաղութ» շաբաթաթերթը՝ Ս. Մյասնիկյանի խմբագրությամբ: Թերթը, տեղական ու համահայկական որոշ խնդիրների անդրադառնալով հանդերձ, հագեցված էր պատերազմը և դրա հետ առնչվող անցքե-

րը լուսաբանող նյութերով: 1915–1916 թթ. հրատարակվում էր թեմական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտների «Դասընկեր» թերթը, որը գրական գեղարվեստական չաբաթաթերթ էր, և խմորատիպով լույս տեսավ 25 համար:

Նոր Նախիջևանի և Ռոստովի հայ հասարակության նախաձեռնությամբ 1918–1920 թթ. Ե. Շահազիզի և Ռ. Բերբերյանի խմբագրությամբ հրատարակվում է «Հայ համայնք» գրական-հասարակական շաբաթաթերթը: «Հայ համայնքը» կոչված էր լուսաբանելու հարավային Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայության կուլտուր-լուսավորական, բարեգործական, դաստիարակչական և կյանքի այլ կողմերին վերաբերող հարցեր:

Պարբերական մամուլը էական դեր կատարեց Դոնի հայության հասարակական ու մշակութային կյանքում: Դոնի հայ զանգվածը մամուլի միջոցով հասու էր դառնում հայ ժողովրդի կյանքում կատարվող անցքերին, նրա առօրյային և դրանով իսկ արգասավորվում ու ազգային լիցք ստանում:

Դոնի հայկական գաղութում զարգացում ապրեց հատկապես գրականությունը: Այս ասպարեզում մեծ էր Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի դերը: Նրանք աճել ու ձևավորվել էին հայկական գաղութի միջավայրում: Հեռանալով Նոր Նախիջևանից, Մ. Նալբանդյանը չէր կտրվել ու խորթացել հայրենի քաղաքից, նրա հասարակական, մշակութային կյանքից: Ռ. Պատկանյանը մշտապես ապրում ու գործում էր հայրենի քաղաքում: Նա 1860–80-ական թվականների գաղութի հասարակական մշակութային կյանքի ամենաեռանդուն գործիչներից էր: Նոր Նախիջևանում մեծ հետաքրքրություն կար նրանց ստեղծագործությունների նկատմամբ: Այդ ազդեցությունը այնքան վիթխարի էր, որ նրանց երկերը, անգամ ձեռագիր վիճակում, ձեռքից ձեռք էին անցնում, երգերի վերածված նրանց բանաստեղծությունները լայն տարածում էին գտնում:

19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին գրական-հրապարակախոսական աշխույժ գործունեություն էին ծավալել գաղութի մտավորականության հեղինակավոր գործիչ Մ. Բերբերյանը, մասամբ նաև Շ. Կուրղինյանը և շատ ուրիշներ:

Նոր Նախիջևանում գրական ժանրերից զարգացավ հատկապես դրամատուրգիան, քանի որ արվեստի առավել մեծ տարածում գտած և ժողովրդականություն վայելող ճյուղը թատրոնն էր: Թատերական արվեստի նկատմամբ հետաքրքրությունը սկսվել էր դեռևս շատ տասնամյակներ առաջ: Մի խումբ երիտասարդներ (Թ. Խադամյան, Ս. Տիգրանյան, Մ. Քուշնարյան) 1830-ական թվականներին աշակերտների մասնակցությամբ դպրոցի շենքում մի քանի տարի շարունակ ներկայացումներ են կազմակերպում: Հետագայում, 1860–80-ական թվականներին, Նոր Նախիջևանի թատերական կյանքում կարևոր դեր են խաղում Կոստանդնուպոլսից և Թիֆլիսից հյուրախաղերի եկած դերա-

սաններն ու դերասանական խմբերը: Նշանակալից էր Կ. Պոլսից ժամանած Թ. Ցասուլյաճյանի ու նրա խմբի գործունեությունը Դոնի ափերին: Մեծ էր հռչակավոր դերասան Պ. Ադամյանի դերը: 1880-ական թվականներին նա բազմիցս այցելում է Նախիջևան, մի քանի ամեռ մնում այնտեղ և մեծապես խթանում գաղութի թատերական կյանքը:

Գաղութում արվեստի այս ճյուղը առաջ մղելու խնդրում կարևոր էր 1880 թ. «Թատերական արվեստ սիրողների ընկերության» հիմնումը: Նրա հիմնադիր անդամներն էին Ի. Զարիխովը, Տ. Պոպովը և ուրիշներ: Շուտով ընկերության նախագահ է ընտրվում և երկար տարիներ եռանդուն գործունեություն ծավալում Գ. Զուբարը: Տեղական թատերական գործին են լծվում Հ. Խադամյանը, Ղ. Ալաջալյանը և շատ ուրիշներ: 1900 թ. չահագործման է հանձնվում թատրոնի նոր, հարմարավետ շենքը, որը ևս նպաստում է թատերական գործի ծավալմանը:

Դոնի հայկական գաղութի հասարակական կյանքի ու մշակույթի առաջադիմությունը պայմաններ էր ստեղծել զարգացնելու նաև արվեստի այլ ճյուղեր՝ կերպարվեստը, երաժշտությունը և այլն: Դոնի հայ հասարակության չնորհալի շատ երիտասարդներ դարձան գեղանկարչության ճանաչված դեմքեր: Նրանցից էր Հմայակ Արծաթպանյանը (1876–1919): Նա Մոսկվայում մասնագիտական կրթություն ստանալուց հետո վերադարձել էր հայրենիք և նկարչություն էր ավանդում դպրոցներում: Դեմոկրատական գաղափարներով տոգորված նկարիչը իր ստեղծագործություններում մեծ տեղ էր հատկացրել հայրենակիցների կյանքին ու կենցաղին: Անվանի նկարիչ Ս. Աղաջանյանը (1863–1940) 1904 թ. սկսած ուսուցչություն էր անում Նոր Նախիջևանի ուսումնարաններում:

Տեղի քաղաքային ուսումնարանն է ավարտել և մանկությունն ու պատանեկությունը հայրենի Նոր Նախիջևանում անցկացրել հռչակավոր նկարիչ Մարտիրոս Սարյանը (1880–1972): Մեծ անուն վաստակելով և լայն ճանաչում գտնելով՝ Մ. Սարյանը միշտ էլ կապված էր իր ծննդավայրի՝ Դոնի հայության հետ: «Իբրև մարդ և արվեստագետ ձևավորվելու պրոցեսում, – գրում էր նա,– հսկայական, ուղղակի որոշիչ դեր են կատարել մանկությանս տարիները»[1]:

Իր ծննդավայր Նոր Նախիջևանում դեռևս պատանեկության տարիներին գեղանկարչական աշխատանքներով աչքի է ընկել 20-րդ դ. ռեալիստական կերպարվեստի անվանի ներկայացուցիչ Գրիգոր Շլդյանը (1900–1991 թթ.): Նկարիչը, 1923 թ. հաստատվելով Իտալիայում, դառնում է «Անի» և «Հայ ազատ արվեստագետների միության» անդամ և մասնակցում դրանց կազմակերպած ցուցահանդեսներին:

---

[1] **Սարյան Մ.**, Գրառումներ իմ կյանքից, գիրք 1, եր., 1966, էջ 4:

Նոր Նախիջևանում զարգացում ապրեց նաև ժողովրդական երաժշտությունը, Դոնի հայկական գաղութում ստեղծվեցին հարսանեկան, աշխատանքային, կենցաղային բազմազան երգեր ու պարեղանակներ: Ժողովրդական երաժշտության կողքին աստիճանաբար իր ուրույն տեղն էր գրավում նաև պրոֆեսիոնալ երաժշտությունը:

Նոր Նախիջևանում թանգարան կազմակերպելու գաղափարը, որի ուղղությամբ գործնական քայլեր կատարվեցին, նմանապես վկայում է մշակութային կյանքի զարգացման մակարդակի մասին:

Նոր Նախիջևանը կարևոր դեր կատարեց հայկական մշակույթն ու մշակութային ավանդները պահպանելու և մանավանդ այն ռուսական միջավայրին ծանոթացնելու գործում:

Նոր Նախիջևանի՝ շուրջ երկու դար գոյատևած հայկական գաղութը բեղմնավոր ուղի անցավ և մնայուն հետք թողեց հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մեջ:

ԱՐՄԱՎԻՐ

Իր սոցիալ-տնտեսական կյանքով և ազգային-մշակութային դիմագծով Հյուսիսային Կովկասի հայ գաղթավայրերի մեջ առանձնանում է Արմավիրը: Նրա հիմնադիրները չերքեզահայերն էին, որոնք Չերքեզիա էին անցել Ղրիմից տակավին 15-16-րդ դարերում:

Արևմտյան Կովկասը Ռուսաստանին միացնելու տարիներին չերքեզահայերը, համակրանք տածելով դեպի ռուսները, ամեն կերպ աջակցում և օգնում էին նրանց՝ թե՛ տնտեսական և թե՛ ռազմական ձեռնարկումների ժամանակ: Ռուսների բացակայության պայմաններում նրանց օգնող հայերին սպառնում էր չերքեզների վրիժառուությունը: Ինչպես այդ հանգամանքը, այնպես էլ կրոնական հետապնդումներն ու բռնությունները չերքեզահայերին ստիպում են տեղափոխվել ռուսներով հաստատված վայրերը: Խնդիրն այն է, որ 1828 թ. Ադրիանապոլի պայմանագրով թեև ամբողջ Արևմտյան Կովկասը՝ Անապայից մինչև Սբ. Նիկոլայի (Փոթիի) ամրոցը անցել էր ռուսներին, բայց մինչև 1850-ական թվականների կեսերը առաջացել էր քաղաքական մի իրավիճակ, երբ հարկ էր պատերազմում նվաճված տարածաշրջանը կրկին վերանվաճել՝ հաճախ նաև զենքի ուժով: Արմավիրի հիմնադրումը սերտորեն աղերսվում էր Արևմտյան Կովկասում տիրող ռազմաքաղաքական իրավիճակին:

1830-ական թվականներից Կովկասի զինվորական հրամանատարությունը ձեռնամուխ է լինում անդրկուբանյան հայերի վերաբնակեցմանը Կուբանի ռուսական տարածքներ: 1833 թ. սկսած մինչև 1839 թ. Չերքեզիայից չորս խմբերով հեռացած հայերը Կուբան գետի ձախ ափին Պրոչնի օկոպ ամրության դիմաց հիմնադրեցին իրենց չորս նոր բնակավայրերը՝ Գյուր-Հաբլը, Հատուկայը, Եգերուհայը և Հակուբ-Հաբլը:

Նոր գաղթավայրի տեղը ճիշտ էր ընտրված և՛ տնտեսական, և՛ պաշտպանական առումով: Կարճ ժամանակում, ռուսական վարչակազմի օգնության և հայերի ձեռներեցության շնորհիվ Արմավիրը սկսեց աճել և բարգավաճել: Այն սկզբում կոչվում էր Հայկական առվ: 1847 թ. օգոստոսի 15-ի ցարական հրամանագիրը արտոնում էր Արմավիրում կառուցել հայկական եկեղեցի և հաստատել ամենամյա տոնավաճառներ, որոնք զգալի չափով նպաստեցին առևտրի և արդյունաբերության զարգացմանը:

Արմավիրը սկզբից ևեթ ինքնակառավարվող գաղութ էր, թեև վարչական առումով ենթարկվում էր Ուրուպի ռազմական օկրուգի ատամանին: Սկզբում արմավիրցիները պահպանել էին Չերքեզիայից իրենց հետ բերած կառավարման նահապետական ձևերը, և ըստ այդմ, ամեն մի տոհմ ուներ իր սեփական

ինքնակառավարումը: «Թամադայի» կառավարաձևը, որն ընտրվում էր պատվավոր ծերերի կողմից, իրականացնում էր գործադիր, դատական և հոգևոր գործերի կառավարումը: Դատական բոլոր գործերը վճռվում էին ժողովրդական սովորույթների՝ «ադաթի» հիման վրա, «Թամադայի» և վեց դատավորների կողմից, որոնք ընտրվում էին երեք տարի ժամանակով: Սակայն «Թամադան», որպես նահապետական կառավարաձև, աստիճանաբար իր տեղը զիջեց ավելի առաջավոր գյուղական կառավարման ձևին: «Թամադայի» փոխարեն հանդես եկավ տեղական իշխանության կողմից նշանակված մենիշխան ավագը: Շուտով արմավիրցիները իրավունք են ստանում ընտրելու գյուղական ավագին և նրա չորս օգնականներին:



Արմավիր. Հայկական իգական դպրոցը

1876 թ. Արմավիրի կառավարումը կենտրոնացվում էր վոլոստային վարչության ձեռքում, որի գլխին կանգնած էր վոլոստային ավագը: Վերջինիս ընտրում էր պատվավոր ծերերի ժողովը: Այս վերջինը կազմված էր 348 տնատերերից, որոնք ներկայացնում էին ավանի միայն հայ արմատական բնակչությանը: Բոլոր պաշտոնները վոլոստային վարչությունում զբաղեցնում էին բացառապես նրա ներկայացուցիչները: Այսպիսով, Արմավիրի հայկական գաղութը, հանձինս գյուղական և վոլոստային ժողովների և ժողովրդական դատարանի, յուրօրինակ վարչաիրավական միավոր էր:

Սկզբնական շրջանում Արմավիրում բնակվում էր 1900 մարդ՝ միայն չերքեզահայեր: Նրա բնակչությունը, սակայն, աստիճանաբար ավելանում էր գլխավորապես բնական աճի և նոր վերաբնակների հաշվին: Մի քանի տարի

չարունակ Արմավիրը ընդունում էր չերքեզահայերի նոր խմբեր: Նրա բնակչությունը մեծանում էր նաև այլ քաղաքներից եկող ռուսների շնորհիվ: 1900 թ. Արմավիր գյուղի բնակչության թիվը հասել էր արդեն 22.310 հոգու՝ գերազանցելով 13 նահանգային ու մարզային և 340 գավառային քաղաքների բնակչության թվաքանակը: 1912 թ. ըստ ազգային կազմի Արմավիրի բնակչությունն ուներ հետևյալ պատկերը՝ 32.983 ռուսներ, 7.850 հայեր և 3.637 այլ ազգերի ներկայացուցիչներ: Արմավիրում հաստատվել էին նաև ռուսահայ այլ գաղթօջախներից և Անդրկովկասից գաղթած հայեր, դառնալով այն կենդանի օղակը, որ Արմավիրը կապում էր Ռուսաստանի և Հայաստանի հետ:

Մինչև 19-րդ դարի 80-ական թվականները անդրկուբանյան հայերի նոր բնակավայրը պահպանել էր իր ինքնատիպ կենսաձևը, ազգային դեմքն ու նկարագիրը՝ միաժամանակ տարի առ տարի իր վրա կրելով ռուսաց լեզվի և մշակույթի հարաճուն ազդեցությունը:

Կուբանի ափին բնակություն հաստատած առաջին հայ վերաբնակներին իշխանությունները հատկացրել էին հողային տարածք, որից արմավիրցիները անվճար օգտվում էին համատեղ, առանց վերաբաժանման, միմյանց միջև հաստատված փոխադարձ համաձայնությամբ, վիճակահանությամբ: Արմավիրահայերը Ուրուպի օկրուգի մյուս աուլների բնակիչների համեմատությամբ ունեին մեկ ու կես չափով ավելի հողեր, և այդ պատճառով էլ ցարական հրամանագրի հիման վրա Կուբանի մարզի կառավարիչը 1865 թ. արմավիրցիներին հարկադրել էր 1,5 անգամ ավելի ծխահարկով:

Պաշտոնապես արմավիրցիներին հողի հատկացման ձևակերպումը ձգձգվեց մինչև 1895 թ., սակայն հողը ի սկզբանե գտնվում էր նրանց տրամադրության տակ: Արմավիրի բնակչությանը որպես սեփականություն շնորհվել էր 24.468 դեսյատին հողատարածք, որը հայերն օգտագործում էին գյուղատնտեսական զանազան կուլտուրաների մշակման համար:

Արմավիրի հայ համայնքը, չնայած ղեկավարվում էր ընդհանուր գյուղացիական օրենսդրությամբ, սակայն պետությանը վճարում էր միայն ծխահարկ՝ տարեկան 4,5 ռուբլու չափով՝ ի տարբերություն մյուս պետական գյուղացիների, որոնք վճարում էին գլխահարկ:

Արմավիրում ի սկզբանե լավ զարգացում գտան երկրագործությունը և անասնապահությունը: Չերքեզահայերը հնուց ի վեր զբաղվում էին գյուղատնտեսական կուլտուրաների մշակմամբ: Տակավին Չերքեզիայում նրանք մշակում էին եգիպտացորեն, չերքեզական սիսեռ, պահում էին խոշոր և մանր եղջերավոր անասուններ, զբաղվում մեղվապահությամբ, ձիաբուծությամբ և այլն: Արմավիրում նրանք առավել մեծ ուշադրություն դարձրին այդ զբաղմունքներին: Այստեղ հացահատիկի մշակմամբ զբաղվում էին բոլոր արմավիրցիները, այդ թվում նաև առևտրականները:

19-րդ դարի 70-ական թվականներին Հյուսիսային Կովկասում առևտրական երկարագործության բուռն աճը իր մեջ է ներքաշում նաև Արմավիրը, որը դառնում է հացահատիկի արտադրության և վաճառքի կարևոր կենտրոն: 90-ական թվականներից ինչպես ամբողջ երկրամասում, այնպես էլ Արմավիրում լայն զարգացում է ստանում արևածաղկի մշակումը: 19-րդ դարի վերջերից կազակային բնակչության կարիքների բավարարման և հացահատիկի արտադրության համար լծկան անասունների նկատմամբ աճող պահանջարկի կապակցությամբ զգալի զարգացում է ապրում ձիաբուծությունը: Անասունների գլխաքանակով եկատերինոդարից հետո Արմավիրը Կուբանի մարզում բռնում էր երկրորդ տեղը:

Արմավիրահայերի զբաղմունքների մեջ նկատելի տեղ էր գրավում արհեստագործությունը: Զարգացում էին ստացել մի շարք արհեստներ՝ փականագործությունը, հյուսնությունը, դարբնությունը, քարտաշությունը, կաշեմշակումը, կոշկակարությունը և այլն: 19-րդ դարի վերջին, ամբողջ Հյուսիսային Կովկասն ընդգրկած ապրանքադրամային հարաբերությունների ընդլայնման պայմաններում, տնայնագործ վարպետներին փոխարինում են մեկ-երկու տասնյակ բանվորներ ունեցող մեխանիզացված գործարար ձեռնարկությունները:

Արմավիր. Գյուղական վարչության շենքը

Ամբողջ Կուբանի մարզում և մասնավորապես Արմավիրում արդյունաբերության զարգացման առանձնահատուկ կողմն այն էր, որ այն հիմնականում կապված էր գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ: Հենց դրանով էլ բացատրվում էր ալրաղացային, օճառի, յուղի ու ձեթի արտադրության ֆաբրիկանների և գործարանների լայն զարգացումը: Արմավիրում ձիթհան ձեռնարկություններ ունեին Յակով (Հակոբ) Պոպովը, Հախվերդևը, Բաբաևը, Բարանովը և այլ հայեր: Արևածաղկի ձեթի արտադրությամբ Արմավիրը 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբներին դարձել էր ամբողջ Հյուսիսային Կովկասի հիմնական կենտրոններից մեկը:

Շինարարական աշխատանքների ծավալման և քաղաքի բարեկարգման աղերսով Արմավիրում հատուկ նշանակություն էր ստացել աղյուսի արտադրությունը: 1913 թ. քաղաքում գործում էին աղյուսի յոթ գործարաններ:

1875 թ. Հովհաննես Տարասովը* Արմավիրում և առհասարակ ամբողջ Կուբանի մարզում բացում է առաջին բամբակազտիչ գործարանը: 1913 թ. Արմավիրում արդեն գործում էին չորս նմանատիպ ձեռնարկություններ:

Արմավիրում բանվորների թվաքանակով ամենախոշոր ձեռնարկությունը տակառների արտադրության գործարանն էր: 19-րդ դարի վերջերից լայն զարգացում է ապրում ալրաղացային արդյունաբերությունը: 1913 թ. քաղաքում կային շոգիով գործող չորս ալրաղացներ և մեկ ջրաղաց: Խոշոր ալրաղացներ ունեին Գասպարովը, Դանգուլովը և այլք: Արմավիրում կային նաև ծխախոտի ֆաբրիկա, գարեջրի, օճառի, չուգունի ձուլման, հանքային ջրերի և այլ գործարաններ, որոնց զգալի մասի տերերը հայեր էին:

Արմավիրի աշխարհագրական հարմար դիրքը և տեղի հայ վաճառականության հանդեպ իշխանությունների վարած հովանավորական քաղաքականությունը (Արմավիրի հայ վաճառականները ազատված էին բոլոր տեսակի մաքսերից) ստեղծել էին բարենպաստ պայմաններ առևտրի և ապրանքափոխանակության անկաշկանդ զարգացման համար: Սկզբնական շրջանում արմավիրահայոց առևտուրը հիմնականում ապրանքների բնափոխանակման բնույթ էր կրում: 1841 թ. Արմավիրում բացվում են մի շարք խանութներ, որոնք վաճառում էին Ստավրոպոլից և Թիֆլիսից ներմուծված ապրանքներ: 1842 թ. սկսած Արմավիրում գործում էր ամենամյա տոնավաճառ: 19-րդ դարի երկրորդ կեսից կապիտալիզմի զարգացմանը համընթաց տոնավաճառային առևտուրն իր տեղը աստիճանաբար սկսում է զիջել մշտական առևտրին: Եվ ըստ այդմ՝ Արմավիրում ևս հանդես են գալիս ապրանքադրամական նոր հարաբերություններին հատուկ առևտրական հիմնարկներ՝ առևտրական կետեր, ապրանքային պահեստներ, մի փոքր ավելի ուշ՝ առևտրային ֆիրմաներ:

* Ֆրանսիայի աշխարհահռչակ հայազգի գրող Անրի Թրույայի (Տարասովի) նախնիներից:

1870-ական թվականներին նման ֆիրմաներ են բացում Գասպարյանները, Կուսիկյանները, Սեֆերյանները, Խաչերեցյանները և ուրիշներ: Տարասով եղբայրները, որոնք 1880 թ. Արմավիրում հիմնել էին «Տարասով եղբայրների առևտրական տունը», 1899 թ. հանդես են գալիս «Տարասով եղբայրների մանուֆակտուրային ընկերության» կազմակերպման նախագծով: 1890-ական թվականներին Արմավիրում միայն մանուֆակտուրային ապրանքների տարեկան շրջանառությունը կազմում էր 1 միլիոն ռուբլի:

1909 թ. Արմավիրում գրանցված էին 557 առևտրականներ, որոնց գրեթե կեսը՝ 252-ը, հայեր էին:

Արմավիրում արտաքին առևտրի զարգացումը պայմանավորված էր գլխավորապես ցորենի և արևածաղկի մշակմամբ:

20-րդ դարի սկզբներին Արմավիրը Հյուսիսային Կովկասի առևտրական կարևոր կենտրոններից մեկն էր և ապրանքաշրջանառությամբ չէր զիջում հարևան խոշոր քաղաքներ Ստավրոպոլին, Եկատերինոդարին, Վլադիկավկազին: 1917 թ. ապրանքաշրջանառությունը քաղաքում կազմեց 37 միլիոն ռուբլի: Քաղաքում գործում էին 38 առևտրական ընկերություններ, 25 առևտրատներ, պետբանկի բաժանմունք, 12 վարկատու հիմնարկներ, առևտրային բորսա և այլն: Ոչ միայն Արմավիրի, այլև ամբողջ երկրամասի առևտրի և արդյունաբերության զարգացման մեջ նկատելի դեր էին խաղում հայ վաճառական-արդյունաբերողների բաժնետիրական ընկերությունները: Արմավիրում տեղի էր ունենում հայկական կապիտալի համակենտրոնացում: Սակայն երկրամասի տնտեսական առաջընթաց զարգացումն անխուսափելիորեն հանգեցրեց այն բանին, որ ինքնուրույն գործող հայ առևտրաարդյունաբերական կապիտալը աստիճանաբար լուծվեց համառուսական առևտրական կապիտալի մեջ՝ դառնալով սոսկ նրա առանձին բաղադրիչը:

***

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցելուց հետո Ռուսաստանում և Կովկասում ապրող հայերի շփումները ստանում են հաճախակի և բազմակողմանի բնույթ, ստեղծվում է կենդանի կապ ռուսահայ գաղութների և մայր հայրենիքի միջև: Սկզբից ևեթ արմավիրահայերը նյութապես սատար են կանգնում նորերս Ռուսաստանին միացած իրենց հայրենակիցներին:

Արմավիրի հայ համայնքի կապերը հայրենիքի հետ առաջին հերթին իրականացվում էին եկեղեցու միջոցով: Արմավիրը շարունակ գտնվում էր Էջմիածնի ուշադրության կենտրոնում և մտնում էր Աստարախանի թեմի տնօրինության տակ: Թեմի առաջնորդարանին էր հանձնված կրոնական ծեսերի կատարման հսկողությունը, եկեղեցական գումարների հավաքումը, ուսման գործի կարգավորումը և այլն: Այդ բոլորի անմիջական վերահսկման գործը հանձնարարված էր Ստավրոպոլի հայկական եկեղեցու առաջնորդին: 1843 թ. Ստավրոպոլի հայոց քահանա Պետրոս Պատկանյանը նշանակվում է Արմավիրի հայկական եկեղեցու հոգևոր կառավարիչ: Հենվելով Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու աջակցության վրա և օգտվելով հայոց թեմի առաջնորդարանի անմիջական օգնությունից, նա մի շարք տարիների ընթացքում անխոնջ պայքար էր մղում արմավիրահայերի իրավական վիճակի կարգավորման և բարելավման համար՝ հանդես գալով համայնքի առաջին կազմակերպչի և ոգեշնչողի դերում:



Արմավիր. Նիկոլաևյան փողոցը

Տարաբնույթ էին հայրենիքի հետ գաղութի ունեցած կապերը՝ մշակութային, առևտրական, հովվական այցելություններ և այլն: Ամենակայունը առևտրական կապերն էին: Առևտրական նպատակներով Ռուսաստանի գաղութներն ու հայրենիք այցելած արմավիրահայերը դառնում էին կարևոր իրազարձությունների վկաներ, որոնք տեղի էին ունենում հայրենիքում և հայկական իրականության մեջ առհասարակ: Հայրենիքի հետ շփման ձևերից էր ուխտագնացությունը, որ հաճախ ձեռնարկում էին արմավիրահայերը դեպի Էջմիածին, Երուսաղեմ և այլ վայրեր:

19-րդ դարի կեսերից Արմավիրի հայ համայնքի կապերը հայրենիքի և հայաշատ վայրերի հետ դրսևորվում են նաև մշակութային առնչություններ-

րում, բարեգործական նպատակներով միջոցների հավաքման, փոխադարձ օգնության և այլ միջոցառումներում: Արմավիրի հարուստ հայ համայնքը ուներ նյութական լայն բազա հայրենակիցներին օգնելու համար, օգնություն, որն արտահայտություն էր գտնում կյանքի տարբեր բնագավառներում: Այսպես, օրինակ, 1910 թ. Արմավիրի հայ հասարակությունը էջմիածնի հոգևոր ճեմարանի կարիքների օգտին նվիրաբերում է 5600 ռուբլի, իսկ Ալեքսանդր և Միքայել Թորոսյան (Տարասով) եղբայրները տալիս են 40 հազար ռուբլի ճեմարանին կից ֆիզիկայի, քիմիայի և բնական գիտությունների կաբինետների ստեղծման, սպորտային դահլիճի և գրադարան-ընթերցարանի կառուցման համար:

Արմավիրի հայ համայնքը մեծ կարեկցանքով արձագանքեց 1890-ական թվականների հայկական ջարդերի և 1915 թ. մեծ եղեռնի ժամանակ փախստական դարձած հայերին օգնելու գործին: 1916 թ. Արմավիրում կար 128 փախստական հայ ընտանիք, որոնք օգնություն էին ստանում քաղաքում հիմնված փախստականների օգնության հայկական կոմիտեից: Արմավիրահայերը, բացի այդ, մշտական անդամավճարներ էին հավաքում հօգուտ փախստականների:

Արմավիրի հայկական գաղութի հասարակական կյանքի նշմարելի կողմերից էր 1889 թ. այնտեղ բացված Բարեգործական ընկերության բաժանմունքի գործունեությունը: Բաժանմունքը լուրջ ուշադրություն էր դարձնում լուսավորության գործին, Արմավիրում «Հայկական երեկոների» կազմակերպմանը: Այդ «երեկոները», որոնք դարձել էին ավանդական, մարդկանց գրավում էին իրենց հետաքրքիր կազմված ծրագրերով: Սովորաբար ամեն մի երեկո բերում էր մի քանի հազար ռուբլի եկամուտ, որոնք որպես կանոն ծախսվում էին տեղի հայկական դպրոցների կարիքների վրա: Բարեգործական ընկերության Արմավիրի բաժանմունքը մանավանդ ծաղկուն վիճակ ապրեց նրա նախագահ Դավիթ-բեկ Բալուղյանի օրոք: Արմավիրահայերը ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում քաղաքում հիմնադրված բարեգործական այլ ընկերությունների գործունեությանը, որոնք ինտերնացիոնալ բնույթի էին:

Արմավիրի կյանքում բավական կնճռոտ խնդիր էր բնակավայրին քաղաքի կարգավիճակ շնորհելու հարցը, որը անմիջականորեն առնչվում էր հայ հասարակության իրավունքների և առանձնաշնորհումների պահպանման հետ: Գյուղական վարչությունում իրենց իրավունքները պահպանելու և հողային տարածքները չկորցնելու համար Արմավիրի հայ բնակչությունը համառորեն դիմադրում էր գյուղը քաղաքի վերափոխելուն: Այդ հարցը քանիցս քննարկում էին տեղական իշխանությունները, բայց մի կողմից արմավիրահայերի համառ պայքարը, իսկ մյուս կողմից՝ այդ խնդրով ստեղծված հանձնաժողովներում տիրող հակասական կարծիքները հնարավորություն չէին տալիս վերջ-

նական լուծում գտնելու հարցին: Եվ միայն 1914 թ. ցարական հրամանագրով հաստատվում է Մինիստրների խորհրդի որոշումը Արմավիրը քաղաքի վերակազմելու մասին: Հարցը փաստորեն առանձնահատուկ նշանակություն էր ձեռք բերել տնտեսական և քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերի հետևանքով: Արմավիրը դարձել էր երկրամասի առևտրական և արդյունաբերական կենտրոններից մեկը, և թեև համարվում էր գյուղ, սակայն առևտրաարդյունաբերական գործունեության ծավալներով, իր տարեկան եկամուտներով և ծախսերով մի քանի անգամ գերազանցում էր շատ քաղաքների:

Դեռևս 1913 թ. վերջերին, երբ Արմավիրը քաղաքների շարքը վերագրելու հարցը դարձել էր խիստ արդիական, կառավարական շրջաններին խստիվ զգուշեցնում է այն հարցը, թե ինչպիսի իրավունքներ պետք է տալ քաղաքային վարչությանը և ուս բնակչությանը, նկատի առնելով արմատական բնակչության, այսինքն՝ չերքեզահայոց, գյուղական կառավարչության իրավունքների որոշակի պահպանման խնդիրը: Արմավիրի հայ հասարակությունը, գյուղական ավագ Պ. Ա. Մուրադյանի գլխավորությամբ, խնդրում է ճանաչել իր հողային իրավունքները: 1914 թ. մարտի 23-ին ցարական հրամանագրով հաստատված՝ Մինիստրների խորհրդի վերոհիշյալ որոշումը Արմավիրը քաղաքի էր վերածում հետևյալ հիմունքներով.

1. Արմավիր քաղաքի սահմանների մեջ մտնում է բնակավայրի գոյությունն ունեցող տարածքը,

2. Արմավիր քաղաքի սահմաններում հողատիրության իրավունքը ճանաչվում է բոլոր նրանց համար, ովքեր անցյալում այն ձեռք են բերել օրինական ճանապարհով,

3. Այն անձանց համար, որոնք պատկանում են գյուղական դասին և չեն ցանկանում անցնել քաղաքաբնակների դաս, պահպանվում են գույքային և հողային բոլոր այն իրավունքները, որոնցից նրանք օգտվել են մինչև Արմավիրի քաղաք դառնալը:

Այսպիսով, Արմավիրի հայ համայնքը, որը դիմադրում էր Արմավիրը քաղաքի վերածելուն, փաստորեն պայքարելով իր առանձնաշնորհումների պահպանման համար, ստիպված էր զիջել համապատասխան չափեր հետապնդող կառավարական որոշմանը: Սակայն սկսված համաշխարհային պատերազմը Արմավիրի նորընտիր քաղաքային դումային շեղեց խաղաղ շինարարությունից: Քաղաքային վարչության հետ միասին մինչև 1920 թվականը չարունակում էր գոյատևել նաև գյուղական վարչությունը, որը նախկինի նման իր ձեռքում էր պահում եկամտի հիմնական աղբյուրները: 1919 թ. ձայների մեծամասնությամբ և ժողովրդի ցանկությամբ գյուղական ավագ է ընտրվում Անդրեաս Հակոբջանյանը, որը 19-րդ դարի վերջերից ի վեր Արմավիրի նշանավոր գործիչներից մեկն էր: «Երկիչխանությունը», այսինքն՝ քաղաքա-

յին ինքնակառավարումը և հայկական գյուղական վարչությունը, շարունակվեց մինչև 1920 թ. մարտը, երբ քաղաքում հաստատված խորհրդային իշխանությունը սրբեց-տարավ կառավարման բոլոր նախկին հաստատությունները:

Արմավիրահայոց մի հատվածը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում 1905-1907 թթ. հեղափոխական իրադարձություններին, գործադուլային շարժմանը: Նրանցից ոմանք դառնում են տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամներ: 1914-1915 թթ. արմավիրահայերը նշանակալից դրամական օգնություն ցուցաբերեցին հայկական կամավորական ջոկատների ստեղծմանը:

Արմավիրի հայկական գաղութի պատմության ուշագրավ էջերից մեկը նրա մշակութային կյանքն էր: Դարերով ապրելով հետամնաց Չերքեզիայում՝ հայերը զրկված էին ազգային-մշակութային զարգացման որևէ հնարավորությունից: Տեղափոխվելով Արմավիր, չերքեզահայերը նախ եռանդուն կերպով ձեռնամուխ են լինում դպրոցական գործի կազմակերպմանը: Արմավիրում առաջին դպրոցի ստեղծման նախաձեռնողը Պետրոս Պատկանյանն էր: Նրա հորդորով, վաճառական Դավիթ Ուլուխանյանի միջոցներով 1846 թ. Արմավիրում Սբ. Աստվածածին եկեղեցուն կից բացվում է առաջին ծխական դպրոցը: 1859 թ. տվյալներով, դպրոցն ուներ երեք ուսուցիչ, որոնցից մեկը՝ ռուսաց լեզվի: Այդ թվականին դպրոցում սովորում էին 120 տղաներ: Սակայն ծխական դպրոցը չէր կարող լրիվ բավարարել Արմավիրի համայնքի պահանջները, և այդ պատճառով էլ հայ պատանիների մի մասը իր ուսումը շարունակում էր Կովկասի հայոց հոգևոր ուսումնարաններում: 1875 թ. Արմավիրի հայ համայնքը ծխական դպրոցների կարիքները հոգալու համար վարձակալության է տալիս 3000 հեկտար տարածքով հողամասը, որն այդ դպրոցների սեփականությունն էր: 1865 թ. արմավիրահայերը կառուցում են երկրորդ մեկդասյան դպրոցը, որը 1879 թ. դառնում է երկդասյան: Հիմնականում հասարակական միջոցներով պահվող այդ դպրոցում սովորում էին նաև ռուս երեխաներ: 1866 թ. դպրոցում սովորում էին 77 հայ երեխաներ:

1869 թ. բնակիչների նախաձեռնությամբ և նրանց միջոցներով Արմավիրում հիմնադրվում է իգական դպրոց: 1871 թ. Արմավիրի հայ համայնքի որոշմամբ իգական դպրոցը ծխականից վեր է ածվում հասարակական դպրոցի: Ի տարբերություն ծխական դպրոցների՝ վերոհիշյալ երկդասյան դպրոցը, որը 1882 թվականից սկսում է կոչվել Ալեքսանդրյան հայկական դպրոց, աչքի էր ընկնում իր նյութական բարվոք միջոցներով և աշակերտների քանակով: 1901 թ. Ալեքսանդրյան և մեկդասյան իգական դպրոցներում սովորում էին 661 աշակերտ: Արմավիրում դպրոցներ էր պահում նաև Հոգաբարձության ընկերությունը, որոնցում սովորում էին ռուս, հայ, վրացի և այլ ազգության երեխաներ:

Մշակութային զարգացման բնագավառում որոշակի նվաճում էին բնակչության մեջ հայերեն ձեռագիր գրքի տարածումը, գրադարանների կազմակերպումը և գրատպությունը: 19-րդ դարի վերջին Արմավիրում գործում էին երկու մեծ գրադարաններ: 1884 թ. հիմնվում է առաջին տպարանը, 1918 թ. քաղաքում տպարանների թիվը հասել էր 5-ի: Արմավիրի մշակութային կյանքում ուշագրավ երևույթ էր հայ պարբերական մամուլի՝ «Մշակ», «Նոր դար» և «Արձագանք» թերթերի տարածումը: 1917 թ. Ն. Երտևեցյանի խմբագրությամբ լույս է տեսնում Արմավիրի առաջին հայերեն հրատարակությունը՝ «Կարիք» վերնագրով հասարակական-գրական և քաղաքական շաբաթաթերթը, որը մանավանդ կարևոր տեղ էր տալիս փախստականների նյութական ապահովության, ուսումնական գործի կազմակերպման և այլ հարցերի:

Արմավիրի հայ գաղութի մշակութային զարգացման ցուցանիշներից էր դպրոցական թատրոնի կազմակերպումը. թատրոնը նպաստում էր արվեստի և երաժշտության մասսայականացման գործին: 1907 թ. քաղաքում սկսեց գործել «Դրամատիկական թատրոն սիրողների ընկերությունը»: Արմավիրում գործում էին քառաձայն երգչախմբեր: Դրանցից առաջինի կազմակերպողը (1896 թ.) Քրիստափոր Կարա-Մուրզան էր: 1898 թվականից երգարվեստի այդ բնագավառը առավել լայն տարածում ստացավ շնորհիվ Սիմոն Շագանյանի, որը հայկական եկեղեցիներում երգեցիկ խմբերի կազմակերպիչ էր: Տասներկու տարի շարունակ նրա երգչախումբը համերգներ էր տալիս Արմավիրում՝ կատարելով հայկական, ռուսական, վրացական ու չերքեզական երգեր:

ԳՐԻԳՈՐԻՈՊՈԼ

18-րդ դ. վերջին տասնամյակին Ռուսաստանի հարավային սահմաններում երևան եկավ ևս մի հայաքաղաք՝ Գրիգորիոպոլը: Այդ քաղաքի հիմնադրման նախադրյալները օրգանապես միախառնվում են այն ընդհանուր պրոցեսին, որը 18-րդ դ. համակել էր հայությանը: Այդ պրոցեսը կյանքի էր կոչվել հայերի՝ իրենց պետականությունը վերականգնելու ցանկությամբ: 18-րդ դ. երկրորդ կեսին հայ ազատագրական շարժման գործիչների շրջանում, մասնավորապես Հնդկաստանում, թուրքական շրջաններից հայերին Ռուսաստան վերաբնակեցնելու միտք հղացավ:

Հայերի ղեկավարության ծրագրերը բնականաբար համընկան ռուսական կայսրուհի Եկատերինա 2-րդի կառավարության արտաքին քաղաքականությանը, ըստ որի, Ռուսաստանի կողմից նորերս նվաճված տարածքներում վերաբնակիչների, մասնավորապես հայերի, հաստատումը պիտի նպաստեր Ռուսական կայսրության հարավային երկրամասի զարգացմանը:

Ռուս և հայ քաղաքական գործիչների համատեղ ծրագրերի գործնական իրականացումը պայմանավորված էր 18-րդ դ. երկրորդ կեսին Ռուսաստանի արևելյան քաղաքականության աշխուժացմամբ: Նրա էությունը թուրքերին այնպիսի մեծ տարածաշրջանից դուրս մղելն էր, որպիսին էր Սև ծովի հյուսիսային մերձակայքը: Եթե նշված քաղաքականության իրականացման առաջին քայլը եղավ 1778 թ. հայերին Ղրիմից Ռուսաստան վերաբնակեցնելը, ապա երկրորդ քայլը կապված էր 1787-1791 թթ. իրադարձությունների հետ, երբ Թուրքիայի դեմ մղված պատերազմի ժամանակ Իզմայիլից, Աքերմանից, Կիլիայից, Ցաուշանից և թուրքական կայսրության այլ վայրերից Դնեստրի ձախ ափ վերաբնակեցվեց դրանց հայ ազգաբնակչությունը: Ռուս-թուրքական պատերազմում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար իշխան Գրիգորի Պոտյոմկինը հայերի վերաբնակեցման հիմնական ծանրությունը դրեց Ռուսաստանի հայության հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի ուսերին: Այդ գործում Արղությանին օգնում էին նրա մերձավոր աշխատակիցները՝ Երևանի հայության պատվիրակ Ստեփան Դավթյանը և Գրիգոր վարդապետ Զաքարյանը: Վերաբնակեցման կազմակերպիչները, սակայն, հարկադրված էին մեծ ջանքեր գործադրել, որպեսզի համոզեն Բեսարաբիայի հայերին իրենց բնակության վայրերը լքելու և Դնեստրի ձախ ափը տեղափոխվելու համար, որտեղ նրանց խոստանում էին ամեն տեսակի բարիք:

Այսպիսով, նոր նվաճված տարածքներում հայերի վերաբնակեցմանը գործուն մասնակցում էին ինչպես ռուս զորահրամանատարները՝ իշխան Գ.

Ա. Պոտյոմկինի գլխավորությամբ, այնպես էլ հայ հասարակայնության ներկայացուցիչները: Ռուս-թուրքական պատերազմի ընթացքում հայ հասարակական գործիչները սիրահոժար օգնում էին ռուսական զորքերի հրամանատարությանը: Մասնավորապես, նրանք երաշխավորում էին տեղի հայ բնակիչներից ուղեկցողներ, որոնք օգնություն էին ցույց տալիս ռուս զորահրամանատար Կուտուզովի զորքերին: Ձակատագրի բերումով հենց Կուտուզովին էլ վիճակվեց գործնականում իրականացնել Իզմայիլի հայերի՝ Դնեստրի ձախ ափ, Դուբոսարի քաղաքի մոտ վերաբնակեցնելու խնդիրը: Հենց Իզմայիլի հայերն էին կազմում գաղթողների ամենաթվազանդամ խումբը: Բեսարաբիայից գաղթածների ընդհանուր քանակը 1791 թ. կազմեց չորս հազար մարդ: Հետագայում այդ թիվը մեծանում է:

Ըստ իշխան Գրիգորի Պոտյոմկինի մտահղացման, Դուբոսարի քաղաքը, որը գտնվում էր նորերս Ռուսաստանին միացված «Օչակովի» մարզում, պիտի դառնար հայ վերաբնակիչների ճանապարհի վերջին հանգրվանը: Հայաքաղաքը նախատեսվում էր հիմնադրել Դուբոսարիի մերձակայքում՝ նոր Նախիջևանին համանման, որ հիմնադրվել էր Սբ. Դմիտրի Ռոստովսկի ամրոցի մոտակայքում: Սակայն կյանքը շուտով էական շտկումներ մտցրեց իշխան Գ. Ա. Պոտյոմկինի ծրագրերում, որն այդ ժամանակ արդեն կնքել էր իր մահկանացուն: Տակավին նրա կենդանության օրոք որոշված էր նոր քաղաքին Գրիգորիոպոլ անվանումը տալ: Քաղաքի անվանման հարցում աղբյուրներում և գրականության մեջ տարակարծություն կա: Դրանք տարբեր բացատրություն են տալիս, թե ի պատիվ ում է քաղաքն անվանվել՝ համայն Հայաստանի Լուսավորիչ սուրբ Գրիգորի՞, թե՞ իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինի: Արժանահավատ պիտի համարել վավերագրերի վկայությունները, որոնք նշում են, որ քաղաքն անվանվել է ի պատիվ Գրիգոր Լուսավորչի և իշխան Գրիգորի Պոտյոմկինի:

Իշխանի մահանալուց հետո հայերի վերաբնակեցումը Դնեստրի ձախ ափ չդադարեցվեց: Այն շարունակվեց նաև եկատերինա 2-րդի նոր ազդեցիկ ֆավորիտի՝ կոմս Պլատոն Ալեքսանդրովիչ Զուբովի օրոք, որը Գ. Ա. Պոտյոմկինին փոխարինեց ռուսական զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնում: Ի դեմս կոմս Պ. Ա. Զուբովի, Հովսեփ Արղությանը տեսնում էր իշխան Գ. Ա. Պոտյոմկինի գործի շարունակողին և նրանից հայցում էր հետագա հովանավորություն հայերի համար: Զգձգված կազմակերպչական հոգսերն ակնհայտորեն նեղություն էին պատճառում հայ վերաբնակիչներին, որոնք հարկադրված էին նեղվածությամբ ապրել Դուբոսարիի բնակիչների՝ մոլդովացիների հետ կամ էլ գետնափոր տնակներում:

Հայաքաղաք ստեղծելու գործը էականորեն առաջընթաց ապրեց Դուբոսարիում 1792 թ. մարտի վերջին Հովսեփ Արղությանի այն հանդիպումից հե-

տո, որ նա ունեցավ Եկատերինոսլավի նահանգապետ Վ. Վ. Կոխովսկու հետ, որի իրավասությանն էին հանձնված կայսրուհու հրամանագրով նաև նորերս նվաճված տարածքները՝ «Օչակովյան» մարզը: Այդ հանդիպումից հետո հայերին հայտնի դարձավ, որ ռուսական կառավարությունը որոշել է վերաբնակիչներին հատուկ տարածք հատկացնել Դնեստրի ափին՝ Ջյորնայա և Ջերնիցա գետակների հովիտների միջև, Դուբոսարիից մոտ 12 կմ հեռավորության վրա:

Վերաբնակիչները, սակայն, պիտի համբերությամբ սպասեին, մինչև որ Գրիգորիոպոլի՝ տեղում կազմած գլխավոր հատակագիծը Պետերբուրգում կայսրուհու կողմից հաստատելուց հետո վերադարձվեր Դնեստրի ափերը: Այդ հատակագծին սպասելիս հայ արքեպիսկոպոսը ժամանակը զուր չէր վատնում: Հայաքաղաքի կառուցման վայրից ոչ հեռու 1792 թ. մայիս–հունիսին հիմնադրվեցին երկու հայկական գյուղ՝ Իոսիֆովկան և Վասիլևկան, որոնք պատկանում էին Հովսեփ Արղությանի գարմիկներին: Վասիլևկան բաժին ընկավ Բարսեղ Արղությանին: Այդ գյուղի բարեկարգման գործին մասնակցություն ունեցավ անձամբ հայ արքեպիսկոպոսը, որ 1792 թ. հունիսի 10-ին օծեց այն և կարգ սահմանեց, որի համաձայն, տեղի գյուղացիները (մոլդովական արքունապատական գյուղացիները) այնուհետև պիտի բնակվեին իրենց տեր Բարսեղ Արղությանի իշխանության ներքո:

Սառնալով, վերջապես, հուլիսի 17-ին երկար ժամանակ սպասված հատակագիծը, Եկատերինոսլավի նահանգապետը արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի հետ միասին սկսեցին նախապատրաստվել քաղաքի հիմնադրմանը: Քաղաքի հիմնադրման տեղը ուղարկված բանվորները հարթեցրին հրապարակը և հուլիսի 24-ին մեկ օրվա ընթացքում կանգնեցրին երկու երեսից գեղարվեստական փորագրությամբ զարդարված մեծ դարպասը: Դարպասի շրջանակների վերևից կախված էին ծաղիկներից և դափնու տերևներից հյուսված դրասանդներ: Հայ վերաբնակիչները և հյուրերը պիտի ժամանեին կիրակի օրը՝ 1792 թ. հուլիսի 25-ին՝ հանդիսություններին մասնակցելու համար, որ և սկսվեց նշված օրը, առավոտյան ժամը 10-ին, օրհնությամբ:

Հոգևորականությունն իշխանավորների հետ մեկտեղ գտնվում էին արքեպիսկոպոսի տան բակում, որ կառուցվել էր հրապարակի մերձակայքում: Օրհնությունն ավարտելուց հետո նահանգապետ Կոխովսկին Հովսեփ Արղությանին հանդիսավորությամբ հանձնեց կառավարության հրամանագիրը քաղաք հիմնադրելու մասին և Եկատերինա 2-րդի կողմից հաստատված Գրիգորիոպոլի հատակագիծը: Պատասխանելով Եկատերինոսլավի նահանգապետի ճառին՝ Արղությանը ճեռնամուխ եղավ այն վեց քարերի օրհնությանը, որոնք նախատեսված էին քաղաքը հիմնադրելու համար: Այնուհետև տեղի ունեցավ

հանդիսավոր երթ դեպի այն վայրը, որտեղ նախատեսվում էր կառուցել Մայր եկեղեցին:

Քաղաքի հիմնադրման առաջին քարը, որ նախատեսված էր Մայր եկեղեցու հիմքի համար, տանում էր անձամբ ինքը՝ Եկատերինոսլավի նահանգապետը: Մյուս քարերը կրում էին զինվորական և քաղաքացիական բարձրաստիճան անձինք: Հայ արքեպիսկոպոսը ընթանում էր շքեղ շքախմբով շրջապատված: Առջևից գնում էր հայ հոգևորականությունը և նրանց հետ միասին՝ հայ եկեղեցականների զգեստ հագած ռուս և մոլդովացի քահանաներ: Այս ամբողջ թափորն անցավ կանգնեցված դարպասի միջով և մոտեցավ Մայր եկեղեցու հիմնադրման տեղին, որտեղ առայժմ միայն վրան էր խփած: Մտնելով այնտեղ՝ հայ քահանաները սեղանին դրեցին մեռոնով լցված անոթը և օրհներգությամբ սկսեցին քարերը ցողել ջրով և գինով: Այնուհետև, շրջանցելով Մայր եկեղեցու կառուցման տեղը, նրանք քարերը ցողեցին մեռոնով: Դրանից հետո Նահանգապետ Կոխովսկին, վերցնելով առաջին քարը, տեղադրեց ապագա Մայր եկեղեցու կենտրոնում՝ այն ծածկելով հուշատախտակով, որի վրա դրոշմված էր. «Մեծ Եկատերինա երկրորդի թագավորության օրոք: 1792 թ. հունիսի 10-ին»: Դա այն օրն է, երբ ռուս կայսրուհին հաստատեց Գրիգորիոպոլի հատակագիծը: Երկրորդ քարը դրվեց վրանում գտնվող սեղանի տակ, իսկ մնացյալ չորս քարը դրվեցին ապագա հայաքաղաքի չորս կողմում:

Վերադառնալով Մայր եկեղեցու հիմնադրման տեղը՝ հանդիսությունների մասնակիցներն ունկնդրեցին հայ արքեպիսկոպոսի քարոզը, որից հետո սկսվեց օրհներգությունը: Օրհներգության ավարտից հետո թնդացին հրետանային համազարկեր, որից հետո պաշտոնատար անձինք, աստիճանավորները, հյուրերը և հայազգի վաճառականության ներկայացուցիչները հրավիրվեցին արքեպիսկոպոսի տուն՝ խրախճանքի:

Գրիգորիոպոլի հիմնադրման լուրը լայն արձագանք գտավ ինչպես Ռուսաստանի հայկական գաղթավայրերում, այնպես էլ բուն Հայաստանում: Կաթողիկոս Ղուկաս իր նամակներից մեկում էջմիածնից հայտնում էր, որ իմանալով Գրիգորիոպոլի հիմնադրման և կառավարության կողմից հայերին խոստացած արտոնությունների և առանձնաշնորհումների ծրագրի մասին, իրենք խորը բերկրանք են ապրել:

***

Գրիգորիոպոլում շինարարական աշխատանքներն սկսվել էին քաղաքի հիմնադրումից առաջ: Նահանգային իշխանությունը դրանք անվանեց «օրինակելի»: Հավանաբար, դրանց օրինակով կանխատեսվում էր կառուցել քա-

qաքի բոլոր բնակելի տները: Նկարագրվող ժամանակաշրջանում էր կառուցվել նաև արքեպիսկոպոսի տունը: Արդեն քաղաքն հիմնադրելուց հետո՝ 1792 թ. ամռանը Գրիգորիոպոլում կառուցվել էին 114 բնակելի տուն, մեկ սրճարան, մեկ գործարան, 16 առևտրական կրպակ և փորվել էին 43 ջրհոր:

Շինարարությունն սկզբնապես ընթանում էր Եկատերինոսլավի նահանգապետի անմիջական ղեկավարությամբ: Վ. Վ. Կոխովսկին չէր թույլատրում հրապարակի, հյուրանոցի և կենտրոնական պողոտայի մոտ բնակելի տներ կառուցել, քանի որ այդ տեղերում նախատեսվում էր կառուցել քարաշեն մեծ շենքեր: Յուրաքանչյուր կառուցվող տուն իրավունք ուներ իր բակի համար 700–800 քառակուսի սաժեն հողամաս ստանալ: Այն դեպքում, եթե որևէ հայ ցանկանար դեպի հրապարակը տանող մեծ փողոցներից մեկի վրա տուն կառուցել, ստանում էր 8 պատուհան ունեցող տան համար 1400 քառ. սաժեն հողամաս: Իսկ դեպի փողոց նայող պատուհաններով ավելի մեծ տներ կառուցել ցանկացողներին տրվում էր 2800 քառ. սաժեն հողամաս ստանալու իրավունք:

Երկու տարի անց, արդեն 1794 թ. , շինարարական աշխատանքները իրականացնում էր հատուկ այդ նպատակով ստեղծված «Շինարարության էքսպեդիցիա» գերատեսչությունը, որը գլխավորեց փորձառու մասնագետ Մոիսեյ Զվերևը: «Շինարարության էքսպեդիցիային» իրական օգնություն էր ցույց տալիս Օդեսայում անվանի զինվորական ինժեներ-շինարար գնդապետ Դեվոլանը: Հենց նա էր առաջնորդական տան, կոնսիստորիայի և սեմինարիայի նախագծերի հեղինակը: Սակայն Զվերևի շինարարական գործունեությունը երկարատև չեղավ: 1798 թ. քաղաքի կառուցապատման աշխատանքները դրվեցին Գրիգորիոպոլի մագիստրատի վերահսկողության տակ:

19-րդ դ. սկզբին Գրիգորիոպոլի կառուցապատումը հիմնականում ավարտված էր: 1817 թ. մոտերքին քաղաքում արդեն կար երկու քարակերտ եկեղեցի՝ Սբ. Աստվածածինը և Սբ. Գևորգը: Այդ ժամանակ Գրիգորիոպոլում բացվել էին սրճարաններ, գործում էին աղաց՝ներ, փռեր և երկու բաղնիք: Քաղաքի կենտրոնական փողոցում տեղակայվել էին լապտերներ: Հետագայում լապտերներ հայտնվեցին նաև այլ փողոցներում: Դրանից զատ, Տիրասպոլից Գրիգորիոպոլի վրայով Քիշնև գնացող փոստային փողոցի երկու կողմերում առուներ փորվեցին և ծառեր տնկվեցին, դրվեցին ուղեփակոցներ՝ քաղաքի ելքի ու մուտքի մոտ: Գրիգորիոպոլը Ռուսաստանի ծայրամասերում գտնվող հարավային քաղաքին բնորոշ տեսք ստացավ:

Վարչաիրավական հարաբերությունների հիմքերը Հայաքաղաքում դրվել էին կայսրուհու 1794 թ. հոկտեմբերի 12-ի հրամանագրով: Գրիգորիոպոլը համարվեց այն քաղաքների թվում, որոնք մտնում են Եկատերինոսլավի փոխարքայության մեջ: Նա ստացավ իր զինանշանը, կնիքը և մագիստրատի ոստիկանության հաստիքը: Պահպանվել է Գրիգորիոպոլի զինանշանի նկա-

բագրությունը. «Միագլուխ արծիվը, որը մագիլներով բռնել է գայխտոնը, խորհրդանշում է հայ կայսեր՝ Արտաշեսի գործերը... Առյուծները խորհրդանշում են հայազգի Ռուբինյան արքաների աշխատասիրությունն ու քաջությունը: Արարատ լեռան վրա գտնվող Նոյյան տապանը մատնանշում է, որ այն պատկանում է Մեծ Հայքին: Ռուսաստանի կայսերական զինանշանը գլխավերևում խորհրդանշում է Ռուսաստանի հովանավորությունը հայ ժողովրդին»:

Գրիգորիոպոլի մագիստրատին չնորհվեց դատական և գործադիր իշխանության իրավասություն: Առանձնահատուկ և մանր գործեր քննելու համար մագիստրատին կից հիմնադրվեցին որբական և բանավոր դատարաններ: Քաղաքային վարչության գերագույն մարմինը ենթական էր նահանգային վարչության տնօրինությանը և ուներ իր հաստիքը: Քաղաքապետի պաշտոնից զատ, ստեղծվեցին երկու կառավարչի (բուրգոմիստրի), չորս ոստիկանի (ռատմանի), քարտուղարի և թարգմանչի պաշտոններ:

Մագիստրատը իր աշխատանքները սկսեց 1794 թ. դեկտեմբերի 18-ին: Նոր Նախիջևանից մինչ այդ Գրիգորիոպոլ հրավիրված կապիտան Պավել Թումանովը , որը քաղաքապետն էր, մտավ նրա կազմի մեջ: Մագիստրատի անդամներ ընտրվեցին՝ կառավարիչներ (բուրգոմիստրներ) Սարգիս Բունիաթյանը և Աավատուր Ավանեսյանը և ռատմաններից բացի բանավոր դատավորներ՝ Հակոբ Կարապետյանը և Գասպար Հարությունյանը:

Գրիգորիոպոլի ոստիկանապետը միաժամանակ «առաջին դեմքն էր» մագիստրատում: Ոստիկանապետի, բուրգոմիստրի և ռատմանի պաշտոնները, ժամանակակից անվանումներով արտահայտած, նահանգային իշխանություններին ենթակա անվանակարգ էին: Վերջին հանգամանքը քաղաքի հայ հասարակայնության դժգոհությունն էր հարուցում, քանզի վերջինս այդ իրողությունը դիտում էր որպես իր շահերի ոտնահարում և նույնիսկ ինքնավարության իրավունքի սահմանափակում:

1792–1794 թթ. ռուսական կառավարությունը Հայաքաղաքում սահմանեց ոստիկանապետություն և ոստիկանապետի պաշտոն: Նշված հաստատությունները յուրատեսակ օտարածին մարմիններ էին հայկական ինքնավարության օրգանիզմում: Ուստի և հենց սկզբից մագիստրատի ղեկավարության և ոստիկանապետի միջև սուր փոխհարաբերություններ հաստատվեցին:

Գրիգորիոպոլի ոստիկանապետի հարցում ռուսական կառավարությունը հետագայում ստիպված էր զիջողություն անել հայ հասարակությանը, համաձայնելով այդ պաշտոնում նշանակել հայազգի անձանց: Այսպես, երկար ժամանակ այդ պաշտոնը զբաղեցնում էր արքունի խորհրդական Գ. Խուդաբաշյանը: 19-րդ դ. 20-ական թվականներին նահանգային իշխանությունները Գրիգորիոպոլում հաստատեցին ոստիկանական վարչություն, որը բաղկացած

էր ոստիկանապետից, քարտուղարից և մագիստրատից գործուղված մեկ ոատմանից: Ոստիկանապետի պաշտոնը զարձավ ընտրովի:

Ոստիկանապետի պաշտոն սահմանելու հետ կապված այդ ամբողջ պատմությունը վկայում է այն մասին, որ ռուսական իշխանությունները, քաղաքի հայ հասարակությանը նոր արտոնություններ և առանձնաշնորհումներ տրամադրելուն զուգընթաց (ինչպես, օրինակ, 1799 թ. հոկտեմբերին) ավելի վաղ, քան Ռուսաստանի այլ հայ գաղթավայրերում, ձեռնամուխ եղան Գրիգորիոպոլի վարչաիրավական կարգավիճակի աստիճանական փոփոխմանը:

19-րդ դ. կեսերին Գրիգորիոպոլը իրավական առումով փաստորեն դադարեց հայաքաղաք-գաղութ լինել. այն հիշեցնում էր Ռուսաստանի հարավի բազում այլ գավառական քաղաքները: Սակայն քաղաքում տակավին ուժեղ էին հայկական գաղութի ավանդույթները:

19-րդ դ. երկրորդ կեսին Գրիգորիոպոլը ենթարկվում է Տիրասպոլին (գավառի կենտրոնին) ոչ միայն վարչական, այլև դատական ու ոստիկանական առումով, որը վերջնականապես սահմանվեց 1864 թ. հայկական Մագիստրատը վերացնելուց հետո: 60-ական թվականներին Տիրասպոլի գավառը ոստիկանության գծով բաժանվեց երկու քննչական տեղամասի: Դրանցից երկրորդում, որն ընդգրկում էր նաև Գրիգորիոպոլը Դուբոսարիով հանդերձ, նշանակվեց աստիճանավոր, որի մշտապես գտնվելու վայրը վճռվեց հօգուտ Գրիգորիոպոլի: Այդ նույն ժամանակ հաշտարար դատավորը ևս իր գտնվելու վայրն ընտրեց ոչ թե Դուբոսարին, այլ Գրիգորիոպոլը: Ի վերջո, 19-րդ դ. 70-ական թվականների վերջին Գրիգորիոպոլի քաղաքային դուման փոխարինվում է քաղաքային վարչությամբ: Գրիգորիոպոլի հայ բնակչությունը 19-րդ դ. վերջին համախմբվեց համայնքում, որի կյանքը գոյատևեց նաև 20-րդ դարում:

Այսպիսին էր այն համառոտ էվոլյուցիոն պրոցեսը, որը վերապրեց հայկական գաղութի վարչաիրավական կարգավիճակը: Այդ պրոցեսի հիմքում ընկած էին ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառների շարքին հարկ է դասել այն ժողովրդագրական պրոցեսները, որոնց զարգացման սկիզբը Գրիգորիոպոլում նշմարվում է արդեն հայաքաղաքը հիմնադրելուց մի քանի տարի անց: 1790-ական թվականներին, Հովսեփ Արղությանի վկայությամբ, Գրիգորիոպոլում բնակվում էր 4.444 հայ: Բնակչության թվաքանակով Գրիգորիոպոլը գտնվում էր երրորդ տեղում Ռուսաստանի հայկական գաղութների շարքում: Սակայն տասը տարի էլ չէր անցել, երբ պատկերը ամբողջապես փոխվեց: 1796-1802 թթ. հայաքաղաքի չքավոր խավերի ծանր կացության պատճառով նրա բնակչության մի մասը փախավ արտասահման: Բնակչության մյուս մասը (հիմնականում առաջադիմող վաճառական-ձեռնարկատերերը) ժամանակի ընթացքում վերաբնակվեց Օդեսայում և Քիշնևում: Սակայն դրան զուգընթաց հանդես եկավ նաև վերաբնակիչների հանդիպակաց ներհոսքը: Գրիգորիոպոլ սկսեցին գալ թուրքական և ավստրիական հպատակություն ունեցող հայեր: Քաղաքը սկսեց համալրվել Լեհաստանից և Ռաշկովից եկող հայերով:

Այսպիսով, Գրիգորիոպոլում բնակվող հայերի տեղափոխությունները հանգեցրին այն իրողությանը, որ սկսած 19-րդ դ. 20-ական թվականներից մինչև 60-ական թվականները հայկական գաղութում հաստատվում է առավել կամ նվազ չափով բնակիչների մշտական թվաքանակ: 1819 թ. Գրիգորիոպոլում բնակվում էր ավելի քան 1800 հայ, 40-50-ական թվականներին՝ մոտ 2000, իսկ 1861 թ.՝ 2000-ից ավելի:

Գրիգորիոպոլում հայերի թվաքանակի նվազմանը զուգընթաց տեղի էր ունենում քաղաքի բնակչության ավելացում՝ այլ ազգությունների հաշվին: Հայաքաղաքի հիմնադրման օրվանից նրա հիմնական հայ բնակչության հետ մեկտեղ սկսեցին բնակվել ուկրաինական կազակները: Հետագայում նրանց թիվը աստիճանաբար մեծանում է: Գրիգորիոպոլի ոչ հայ բնակչության թիվը կտրուկ մեծացավ 1808 թ., երբ Գլիննայա գյուղի (որը որպես գերմանական գաղութ «Գլիկստալ» անցավ ավստրիացիների տիրապետության տակ) մոլդովացի բնակիչները տեղափոխվեցին հայաքաղաք: Ուկրաինացիների և մոլդովացիների հետ մեկտեղ Գրիգորիոպոլում բնակություն հաստատեցին ռուսներ, հույներ, հրեաներ և գնչուներ: 1819 թ. արդեն քաղաքում մոտ 1700 ոչ-հայազգի բնակիչ կար:

Վերը նշված ժողովրդագրական գործընթացներն իրենց դրոշմը դրեցին հայկական գաղութի ներքին կյանքի վրա, որի զարգացումն անցավ որոշակի փուլեր՝ պայմանավորված այն փոփոխություններով, որոնք տեղի ունեցան Գրիգորիոպոլի ինչպես սոցիալ-տնտեսական կյանքում, այնպես էլ նրա վարչաիրավական մարմինների կառուցվածքում և ֆունկցիաներում: 18-րդ դ. վերջին արդեն ձևավորվել էր գաղութի ներքին կենսաձևը, իսկ նրա լիարյուն կյանքը սկսվում է սոսկ 19-րդ դարի սկզբից և շարունակվում ընդհուպ մինչև դարի կեսեր, որից հետո սկսվում է Գրիգորիոպոլի հայ հասարակության զարգացման նոր փուլը:

19-րդ դ. առաջին կեսին, երբ Գրիգորիոպոլի ղեկավարությունը գտնվում էր հայերի ձեռքին, որոնց շահերին համապատասխանում էր գաղութի ներքին իրավիճակի կայունացումը, քաղաքի իշխանությունները և հայ հասարակությունը քայլեր ձեռնարկեցին քաղաքում հանրային չինարարության ծավալման, նրա ֆինանսների կայունացման, հարկային հստակ կարգ ստեղծելու և Գրիգորիոպոլի հայերի և այլ ազգությունների միջև հարաբերությունների կարգավորման համար:

Հայկական մագիստրատի և քաղաքաբնակների (դրանց թվին էին պատկանում ամենից առաջ մոլդովացիները, ուկրաինացիները և ռուսները), իսկ հետագայում նաև դյուղացի նորաբնակների միջև փոխհարաբերություններն իրենց արտացոլումն են գտել այն պայմանագրերում, որ պարբերաբար կնքվում էին Գրիգորիոպոլում: Պայմանագրեր կնքելու պրակտիկան տարածում ստացավ հայկական գաղութում այն պատճառով, որ Գրիգորիոպոլի հասարակության ոչ հայկական խավերը չունեին իրենց ներկայացուցիչները ոչ մագիստրատում, ոչ էլ քաղաքի դումայում: Պայմանագրերը կարգավորում էին հայերի և Գրիգորիոպոլի հասարակության այլ ազգերի ներկայացուցիչների միջև փոխհարաբերությունները՝ սահմանելով վարվեցողության որոշակի նորմեր, հատակեցնելով յուրաքանչյուր հասարակության իրավունքներն ու պարտականությունները:

Պայմանագրերը երկու տեսակի էին՝ ընդհանուր և մասնավոր: Ընդհանուր պայմանագրերը կնքվում էին հայերի և գաղութի մնացյալ բոլոր ազգերի բնակչության միջև: Մասնավոր պայմանագրերը կնքվում էին մի կողմից հայ հասարակության, մյուս կողմից գաղութում բնակվող ազգերից մեկի միջև՝ որևէ կոնկրետ հարցի շուրջ: Օրինակ, հայերի և մոլդովացիների միջև պայմանագիր կար, որի համաձայն, վերջիններս պարտավորվում էին կրել քաղաքային պարտությունները՝ պայմանով միայն, որ հայ հասարակությունը նրանց փոխարեն զորքին օթևան տալու պարտավորությունը ստանձներ:

Առաջին ընդհանուր պայմանագիրը Գրիգորիոպոլի հայերը կնքեցին 1793 թ. ուկրաինական կազակների, առայժմ միակ ազգության հետ, որ բնակվում էր հայերի հետ և ցանկացել էր հայ հասարակության կազմի մեջ մտնել: Երկրորդ անգամ ընդհանուր պայմանագիր կնքվեց 1819 թ. նոյեմբերին: Դրա հիման վրա սահմանում էին իրավական և տնտեսական հարաբերությունների նորմեր հայերի և այդ ժամանակ Գրիգորիոպոլում ապրող մնացյալ բոլոր ազգերի միջև:

Գրիգորիոպոլի Մագիստրատի և գաղութի ոչ հայկական բնակչության միջև հաճախակի ծագող վեճերի պատճառը քաղաքական հողատարածքն էր: Ուստի և 1819 թ. պայմանագիրը նախատեսում էր դրա բաժանումը մասերի՝ յուրաքանչյուր ազգին համապատասխան հողամաս տրամադրելով հանդերձ, որի չափը որոշվում էր տվյալ ազգի շնչերի քանակով: Պետական գյուղացիները (մոլդովացիները և ռուսները), որոնք բնակվում էին Գրիգորիոպոլում և նրա արվարձաններում, քաղաքապատկան հողերից օգտվելու համար պարտավոր էին մթերքներով ու դրամով հարկ վճարել ինչպես հայկական մագիստրատին, այնպես էլ հոգևորականությանը: Իսկ անտառն ամբողջապես պիտի գտնվեր քաղաքային դումայի իրավասության ներքո:

Պայմանագրով նախատեսվում էր այնպիսի բարդ հարցի կարգավորումը, որպիսին Գրիգորիոպոլում բնակվող ազգերի կողմից պարտությունների կատարումն էր: Ամենից առաջ սահմանվում էր հերթ, ընդ որում, յուրաքանչյուր ազգ նախապես գիտեր պարտություններ կատարելու իր ժամանակը: Այդ ժամանակը գալուն պես տվյալ ազգի հասարակությունը իր շրջանից առանձնացնում էր մի պատգամավոր, որի պարտականության մեջ էր մտնում իր հասարակության անդամների վրա պարտությունները բաշխելու արդարացիության պահպանումը, ընդ սմին, պատգամավորի գործողությունները պիտի համաձայնեցվեին քաղաքային դումայի անդամների հետ: Այսպիսով, քաղաքի հայ ղեկավարության առաջադրած իրավական նորմերը ապահովում էին հայկական գաղութի բնակիչների շրջանում խաղաղություն, կարգուկանոն և համերաշխություն:

Վերը նշվածը վերաբերում էր ամբողջապես այն իրավական փոխհարաբերություններին, որ հաստատվել էին Գրիգորիոպոլում բնակվող հայերի և մնացյալ ազգերի միջև: Իսկ ինչ վերաբերում է զուտ մարդկային փոխհարաբերություններին, ապա ուրվագծվում էր հետևյալ պատկերը: Սկզբնապես հայերի և մյուս ազգերի միջև անձնական շփումների զարգացումը և ամրապնդումը մասամբ խոչընդոտվում էին այն կենցաղավարության և սովորույթների հետևանքով, որ հայերը պահպանել էին թուրքական տիրապետության ժամանակվանից: Դեռ ավելին, նրանց ավագ սերունդը 19-րդ դ. առաջին կեսին իրար հետ տակավին թուրքերեն էր խոսում: Հայերը դեռևս մեկուսի կենցաղավարություն ունեին, չէին առնչվում քաղաքի մյուս բնակիչների հետ: Հայերի անվստահության և ներփակվածության պահերը, սակայն, աստիճանաբար վերանում էին: Հայերի, մոլդովացիների և Գրիգորիոպոլում բնակվող մյուս ազգերի միջև ժամանակի ընթացքում հաստատվում են նույնիսկ անձնական շփումների առումով սերտ բարեկամական հարաբերություններ: Արդեն 19-րդ դ. առաջին կեսին նկատվում էին դեպքեր, երբ հայ աղջիկներն ամուսնանում էին Գրիգորիոպոլում բնակվող այլ ազգերի ներկայացուցիչների հետ:

Քաղաքի հիմնական ազգի՝ հայերի աստիճանական մերձեցման պրոցեսը այլ ազգերին պատկանող իրենց համաքաղաքացիների հետ որոշակի իմաստով դառնում է այն բանի հիմքը, որ ժամանակի ընթացքում հավասարեցվում են կողմերի պարտականությունները նաև իրավական որոշ նորմերի առումով: Հայերը, մոլդովացիները, ռուսները և Գրիգորիոպոլում բնակվող մյուս ազգերը գտնվում էին հավասար պայմաններում, երբ խոսքը վերաբերում էր քաղաքային հարկերի վճարմանը: Այդ առումով քաղաքային դուման, որը տնօրինում էր քաղաքի տնտեսական և ֆինանսական գործերը, հայերի համար ոչ մի բացառություն չէր անում: Քաղաքային պարտությունները պարտավոր էին

վճարել միատեսակ չափով Գրիգորիոպոլի հասարակության բոլոր խավերը, այդ թվում նաև վաճառականները, որոնք համարվելով Գրիգորիոպոլի քաղաքացիներ, բնակվում էին Ռուսաստանի այլ քաղաքներում:

Քաղաքային պարտություններից բացի, գրիգորիոպոլցիները պիտի կրեին նաև եկեղեցական պարտություններ: Այս առումով Գրիգորիոպոլի և արվարձանների այլազգի բնակչությունը զգալիորեն չահում էր, քանզի եկեղեցին դրամ էր գանձում միայն հայերից: Եկեղեցական պարտությունները կրելուն առնչվող հարցերի կարգավորման խնդրում մեծ դեր էր խաղում թեմի այս կամ այն առաջնորդը կամ էլ Գրիգորիոպոլի հոգևոր վարչության պետը: Նրանցից յուրաքանչյուրի գործունեության հետ կապված էր հայկական գաղութի հոգևոր կյանքի որոշակի ժամանակաշրջան: Այսպես, առաջին ժամանակաշրջանը, որն ընդգրկում է 1792–1804 թթ., կապված է արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի անվան հետ: Չնայած այն իրողությանը, որ Արղությանը մահացել էր 1801 թ., իսկ 1796 թ. փաստորեն չէր գտնվում Գրիգորիոպոլում, հայկական գաղութի հոգևորականությունը այդ ժամանակահատվածի ամբողջ ընթացքում կենսագործում էր նրա սկզբունքները: Արքեպիսկոպոսը գործն այնպես էր դրել, որ եկեղեցական հասույթների հոդվածները քննարկվում էին Գրիգորիոպոլի մագիստրատում հոգևորականության ներկայացուցիչների հետ համատեղ, որի արդյունքը եղավ բնակչության վրա դրվող եկեղեցական պարտությունների քանակի չուրջ հստակ պայմանավորվածությունը: Հոգևորականության և հայկական գաղութի ղեկավարության միջև պայմանագիր կնքելու այդ սկզբունքը, որ ներդրել էր Արղությանը 18-րդ դ. վերջին, կիրառվում էր նաև Ռուսաստանի հայկական այլ գաղութներում:

Վարդապետ Մանվել Գյումուշխանցուն Գրիգորիոպոլի հոգևորականության առաջնորդ նշանակելու ժամանակվանից (1804–1820 թթ.) սկսվում է հայկական գաղութի հոգևոր կյանքի հաջորդ ժամանակաշրջանը: Հոգևորականության և Գրիգորիոպոլի հայկական հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների միջև 1806 թ. կնքված պայմանագրով Մանվելի օրոք գրիգորիոպոլցիները, Ռուսաստանի հայկական մյուս գաղութների բնակչության նման իրենց կարողության համապատասխան բաժանվեցին երեք կարգի:

Հայ եկեղեցու օգտին գանձվող տուրքերը ամենաբազմազան բնույթի էին: Օրինակ, ամեն տարի Գրիգորիոպոլի ամուսնացած քաղաքացիներից թեմի օգտին գանձվում էր «սուրբ տուրք» կամ «բերքից» կոչվող հարկը: Հարկահավաքություն էին կատարում Ջատկին և Ծննդյան տոներին: Հարկ էր դրվում նաև այն տղամարդկանց վրա, որոնք ամուսնանում էին առաջին անգամ մարդու գնացող օրիորդի հետ: Փողը ստանում էր թեմը, իսկ բուն տուրքը կոչվում էր «թեմականի իրավունք»: Հարսանիքի ժամանակ էլ էին դրամ

գանձում, սակայն այն տրվում էր հարսանեկան ծիսակատարությունը կատարող քահանայի կնոջը: Նա պարտավոր էր բաժին հանել նաև մյուս քահանաների կանանց համար:

Զափհաս դառնալով՝ Գրիգորիոպոլի քաղաքացիները ստանում էին անձնագրեր, սակայն այդ դեպքում ևս հարկ էր լինում եկեղեցու օգտին վճարում կատարել: Գոյություն ուներ կանոնների մի ամբողջ համակարգ, որ սահմանում էր մահացած գրիգորիոպոլցու կապիտալից գանձվող եկեղեցական հասույթի հոդվածները:

Արքեպիսկոպոս Եփրեմը, 1807 թ. գալով Գրիգորիոպոլ, սահմանեց հոգևորականության ամենամյա հաշվետվության կարգը քաղաքի ղեկավարության և հասարակայնության ներկայացուցիչների առջև: Հոգևորականության հաշվետվության կարգը վերացվեց այն բանից հետո , երբ Աստրախանի թեմի առաջնորդ Հովհաննեսը 1820 թ. եկավ Գրիգորիոպոլ և վարդապետ Մանվելին հեռացրեց Գրիգորիոպոլի հոգևորականության առաջնորդի պաշտոնից՝ նրա տեղը նշանակելով արքեպիսկոպոս Գրիգոր Զաքարյանին, որը միաժամանակ Բեսարաբիայի հայկական թեմի առաջնորդն էր: Գրիգորի առաջնորդության ժամանակահատվածը տևեց 1820–ից մինչև 1827 թվականը: Նրա օրոք հայկական գաղութի բոլոր եկեղեցապատկան գրամը տնօրինում էր ինքը՝ առաջնորդը:

1830 թ. եկեղեցական և ազգային ականավոր գործչի՝ Ներսես Աշտարակեցու՝ Քիշնևում նշանակում ստանալուց հետո (1830 թվականից նա գլխավորեց Բեսարաբիա–նախիջևանյան թեմը) սկսվում է Գրիգորիոպոլի հոգևոր կյանքի նոր ժամանակաշրջանը: Տաղանդավոր կազմակերպիչ Ներսես Աշտարակեցին ձեռնամուխ եղավ Քիշնևում և Գրիգորիոպոլում եկեղեցական գործերի կարգավորմանը: Ներսեսի անձնական ներկայացուցչի գլխավորությամբ Գրիգորիոպոլում գործում էր մշտական հանձնաժողով, որը վարում էր հայկական գաղութի հասարակական բոլոր գործերը: Ներսեսը ուշիուշով հետևում էր Գրիգորիոպոլի հանձնաժողովի գործունեությանը՝ դրա ղեկավարներին հրահանգելով, թե ինչպես ավելացնել եկեղեցու եկամուտները: Ներսես Աշտարակեցու ձեռնարկած միջոցառումները կայունացրին Գրիգորիոպոլի եկեղեցու ֆինանսական վիճակը՝ համայնքի անդամներին հարկադրելով կանոնավոր կերպով վճարել պարտությունները:

Ներսես Աշտարակեցու արմատավորած ավանդույթները պահպանվեցին Գրիգորիոպոլում ոչ միայն նրա՝ Քիշնևից մեկնելուց, այլև նույնիսկ Ներսեսի մահվանից հետո էլ: 19-րդ դ. վերջին Գրիգորիոպոլի հայկական համայնքի անդամները եկեղեցուն վճարում էին նույն հոդվածներով, ինչպես որ Ռուսաստանի հայկական մյուս գաղութների բնակիչները:

Գրիգորիոպոլցիները, քաղաքային և եկեղեցական պարտուքներից զատ, կրում էին նաև պետական պարտուքներ: Ընդ որում, քաղաքի հայ բնակչությունը, 1794 և 1799 թվականների ցարական հրամանագրերի համաձայն, պետությանը վճարում էր արտոնյալ սակացուցակով: Տուրքեր վճարելու համար սահմանված արտոնյալ ժամկետն ավարտվում էր 1809 թ.: Սակայն քաղաքի բնակիչները շարունակում էին պարտուքները վճարել նախկին սակացուցակով մինչև 1836 թ.: Այս խնդրում որոշակի դեր խաղաց այն հանգամանքը, որ ռուսական կառավարությունը 19-րդ դ. առաջին քառորդին շրջունակում էր կիրառել հովանավորիչ քաղաքականություն Նովոռոսիայի երկրամասի քաղաքների նկատմամբ:

1836 թ. մայիսի 21-ին ցարական հրամանագրով հայկական գաղութներին, այդ թվում նաև Գրիգորիոպոլի բնակիչները, մտցվեցին հարկային ընդհանուր համակարգի մեջ: Քաղաքի բոլոր բնակիչներից սկսեցին գանձել գլխահարկ: Մոտ ապագայում, բուրժուական բարեփոխությունների կիրառելու ժամանակվանից սկսած, Գրիգորիոպոլի հայերը վերջնականապես ենթարկվեցին Ռուսաստանի հարկային ընդհանուր համակարգին:

***

Նորաստեղծ հայաքաղաքը նախատեսվում էր դարձնել Թուրքիայից նվաճած «Օչակովյան» մարզի առևտրական կենտրոնը: Տակավին չյուրացված երկրամասի արտաքին ու ներքին առևտրի զարգացումը շահավետ էր ինչպես այդ մարզի տնտեսական վերելքի, այնպես էլ պետական ընդհանուր շահերի առումով: Ջպետք է մոռանալ, որ հայ վաճառականների արտասահմանյան առևտուրը միշտ բերում էր և այս անգամ էլ կարող էր բերել մեծ օգուտ ռուսական պետությանը, թեկուզ այն պատճառով, որ մաքսային տուրքերը Ռուսաստանում պետական եկամտի գլխավոր հոդվածներից էին:

Դրա հետ մեկտեղ գրիգորիոպոլցի վաճառականները, զարգացնելով հայերի համար ավանդական արևելյան առևտուրը, կարող էին դառնալ Արևելքի երկրները Ռուսաստանի հետ կապող կամրջակներ: Հետևաբար, հայ, մասնավորապես Գրիգորիոպոլի վաճառականների նկատմամբ կիրառվող ռուսական կառավարության հովանավորիչ քաղաքականությունը ձեռնտու էր առաջին հերթին հենց Ռուսաստանին: Ուստի և, բնականաբար, երկրի ղեկավարությունը չէր զլանում Ռուսաստանի հարավում գտնվող հայկական գաղութների բնակիչներին արտոնություններ և առանձնաշնորհումներ տալ: Գրիգորիոպոլցիները արտոնություններ և առանձնաշնորհումներ ստացան ինչպես եկատերինա 2-րդի, այնպես էլ Պավել 1-ինի կառավարությունից: Պետության ընձեռած ֆինանսական օգնությունը նախատեսվում էր քաղաքում առևտրի և ձեռնարկատիրության կարգավորման և զարգացման համար: Ռուսական կառավարությունը հուսով էր, որ հայ վաճառականները ի զորու կլինեն աշխուժացնելու Ռուսաստանի առևտուրը Միջերկրական ծովի երկրների հետ:

Կառավարության ակնկալությունները զուր չանցան: Արդեն 1796 թ. Գրիգորիոպոլում կազմակերպվեց առևտրական ընկերություն, որը Ռուսաստանի հարավում առաջինը սկսեց ծավալել արևելյան առևտուրը: Գրիգորիոպոլի առևտրական ընկերության գործողություններն սկզբնական շրջանում հիմնականում կապված էին Կոստանդնուպոլսի հետ, ուր հայ վաճառականները հասնում էին վարձակալված նավերով, նորաչեն Օդեսա նավահանգստի վրայով: Վաճառականների առևտրական ընկերության միջուկը բաղկացած էր 10 խոշոր վաճառականներից: Նրանց թվում էին Իվան Սաթովը, Մուրզա Աբրամովը, Գրիգոր Թևանովը և ուրիշներ: Որպես «տերեր», նրանք պատկանում էին վաճառականների առաջին կարգին և փաստորեն ընկերության ղեկավարներն էին: Հաջորդ երեսուն վաճառականները գրանցված էին երկրորդ կարգում: Այս 40 անձինք ըստ էության մարմնավորում էին Գրիգորիոպոլի խոշոր վաճառականության սերուցքը: Երրորդ կարգի մեջ ընդգրկված էին ավելի նվազ կարողություն ունեցող վաճառականներ՝ թվով 55 մարդ: Իսկ ընդհանուր առմամբ ընկերության անդամների թիվը հասնում էր 95 մարդու: Մոտավորապես այդ նույն ժամանակ քաղաքի բնակիչներից 54 ընտանիք զբաղվում էր հատավաճառ կամ կրպակային առևտրով, որոնք առևտրի և շրջանառության մեջ ամեն տարի ունենում էին 141.100 ռուբլի: Առանձին վաճառականների կապիտալը կազմում էր 80.000 ռուբլի:

Ռուսաստանի հարավային երկրամասում անասնապահական լայնարձակ բազայի առկայությունը կրկնակի օգուտ էր բերում Գրիգորիոպոլի վաճառականներին: Օգտվելով այն հանգամանքից, որ Եվրոպայում և եվրոպական կանոններին: Օգտվելով այն հանգամանքից, որ Եվրոպայում և եվրոպական Ռուսաստանում, մասնավորապես, անասնապահության զարգացումը հետ էր մնում ընդհանուր պահանջարկից, անասունների առք ու վաճառքը երկրամասում հայերը իրենց ձեռքը վերցրին: Վերջապես, անասունների այն մասը, որ վաճառքի չէր հանվում, մորթվում էր Գրիգորիոպոլում հատկապես այդ նպատակով կառուցված ճարպահալ գործարաններում, ընդ որում ճարպի ու մոմի վաճառքից մեծ շահույթ էր ստացվում: Տվյալ դեպքում Գրիգորիոպոլի վաճառականները հանդես էին գալիս և որպես վաճառականներ, և որպես ձեռնարկատերեր: Անասնավաճառքից ստացվող եկամուտները խթանեցին քաղաքում ինչպես կաշվի, այնպես էլ ճարպահալ ձեռնարկությունների հանդես գալուն: Ճարպահալ և մոմի գործարանների արտադրանքը իրացվում էր Արևմուտքի և Արևելքի շատ երկրներում:

Օդեսայի նավահանգստի զարգացման հետ մեկտեղ Գրիգորիոպոլում արտադրվող գրեթե ամբողջ ճարպը սկսեցին արտասահման ուղարկել Օդեսայի վրայով: Այսպես, հայ վարպետների արտադրած ճարպը ռուսական կայսրության հարավային երկրամասի ճարպահալ գործարանների արտադրանքի հետ մեկտեղ արտահանվում էր Անգլիա, որտեղ այն ռուսական ճարպ անվանումն էր կրում: 19-րդ դ. կեսերին Գրիգորիոպոլից Օդեսայի նավահանգստի վրայով արտասահման է տարվել 115. 889 փութ ճարպ՝ 464.100 ռուբլի ընդհանուր արժողությամբ:

Ճարպահալ և մոմի ձեռնարկություններից ավելի առաջ Գրիգորիոպոլում սկսեցին գործել կաշվի գործարանները: Արդեն 1792 թ. քաղաքում գործում էր սեկի գործարանը: 19-րդ դ. կեսերին կաշի արտադրող ձեռնարկությունների թիվը հասավ չորսի, իսկ 70-ական թվականներին Գրիգորիոպոլում արդեն կար վեց կաշեգործարան:

19-րդ դ. առաջին կեսին Ռուսաստանի բոլոր կաշեգործարանները, բացառությամբ Սկուբիևի գործարանի, կետներոնացված էին Խերսոնում, Ելիզավետգրադում, Գրիգորիոպոլում, Դուբոսարիում և Օդեսայում: Սակայն կաշվի մշակումը շատ քիչ տեղերում էր այնպես որակով կատարվում, ինչպես Գրիգորիոպոլում: Հայ կաշեգործ վարպետները կիրառում էին կաշի մշակելու միայն իրենց հայտնի տեխնոլոգիան: Նրանք իրենց գործարանների համար հումք ներմուծում էին նույնիսկ Երուսաղեմից: Իսկ գրիգորոպոլցի հայտնի վաճառական և ձեռնարկատեր Իվան Սաթովը սեկի իր գործարանում աշխատելու համար վարպետների 15 ընտանիք հրավիրեց արտասահմանից: Ժամանակակիցները, բնորոշելով Գրիգորիոպոլի կաշվի գործարանների արտադրանքը, ոչ առանց հիմքի նշում էին, որ հայ վարպետների ապրանքը պատկանում է այն արտադրանքների թվին, որոնց մշակումը պահանջում է լավ գիտելիքներ և գործը կատարելու մեծ հմտություն:

Համեմատաբար խոշոր ձեռնարկություններից զատ, Գրիգորիոպոլում գոյություն ունեին համքարային կազմակերպություններ, որոնք միավորում էին այնպիսի արհեստագործություններ, որպիսիք են հացագործությունը, մսագործությունը, դերձակությունը, կոշկակարությունը, ատաղձագործությունը, փականագործությունը և այլն: Արդեն զարգացման սկզբնական շրջանում հայկական գաղութում 118 գերդաստան միավորված էին համքարական կազմակերպություններում: Այդ նույն ժամանակ 403 գերդաստան բաղկացած էր այսպես կոչված գործավոր մարդկանցից:

Այսպիսով, կարճ ժամանակվա ընթացքում արդյունաբերական ձեռնարկություններում աշխատելը դառնում է Գրիգորիոպոլի բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը: Գրիգորիոպոլում առեղծվել էին արդյունաբերական արտադրության զարգացման համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները,

արտադրություն, որը, որպես իր կապիտալի կիրարկման ոլորտ, համապատասխանում էր հայ վաճառականության կենսական շահերին: Վերջին հանգամանքը այն իրողության վառ ապացույց է, որ առևտուրը, ինչպես այն կանխանշվում էր ռուսական կառավարության կողմից, դարձավ հայկական գաղութի բնակիչների գործունեության գերակշռող ոլորտը:

Եթե սկզբնապես գրիգորիոպոլցի առևտրականներին գրավում էին իրացման ծանոթ արևելյան շուկաները, իսկ առևտրի առարկաները արևելյան ապրանքներն էին, ապա հետագայում, հատկապես Օդեսայի նավահանգիստը բացելուց հետո, հայ վաճառականները սկսեցին զբաղվել նաև ռուսական ֆաբրիկաների արտադրանքի վաճառքով: Դա, մասնավորապես, վերաբերում էր Մոսկվայից և Խարկովից ստացվող մանուֆակտուրային: Մանուֆակտուրայի առևտուրը նպաստեց Գրիգորիոպոլի վաճառականների կապերի հաստատմանը Ռուսաստանի տնտեսական խոշորագույն կենտրոնների հետ և հայ վաճառականներին դուրս բերեց ազգային շրջանակներից՝ ընդլայնելով նրանց առևտրական գործունեության ասպարեզը:

Մանածագործական արտադրանքից զատ, Գրիգորիոպոլի խոշոր վաճառականությունը նաև հացահատիկի առևտուր էր անում: Հացահատիկի առևտուրը կենտրոնացված էր այն սակավաթիվ վաճառականների և կալվածատերերի ձեռքին, որոնք հող ունենալով կամ այն կապալով վերցնելով, անմիջականորեն իրենք էին զբաղվում հացահատիկի արտադրությամբ: Հացահատիկի առևտուրը սկսեց մեծ շահույթներ բերել հայերին: Սակայն, երբ նրանք հասկացան, որ հացահատիկի առևտուրը կարող է դառնալ իրենց առևտրական գործունեության եկամտավոր հոդվածը, Գրիգորիոպոլի գաղութը փաստորեն արդեն վարելահողեր չուներ: Ուստի և Գրիգորիոպոլի վաճառականները հարկադրված էին լինում կամ գյուղացիներով հանդերձ վարելահող գնել, կամ էլ այն կապալով վերցնել: Սակայն Գրիգորիոպոլում և արվարձաններում կային նաև հողատերեր, որոնք հողը որպես սեփականություն ստացել էին պետությունից: Դրանց թվին էին պատկանում վաճառական Իվան Սաթովը և ազնվականներ Պավել Թումանովն ու Արղությանները: Սաթովին էր պատկանում Եգորովկա գյուղը, որի շինականները կալվածատիրոջը հողատուրքը վճարում էին բնամթերքով, այսինքն՝ հացահատիկով: Զախարևկա գյուղը (իր ժամանակին այն կոչվում էր Վասիլևկա), ինչպես նշվեց, կալվածատեր Բարսեղ Արղության-Երկայնաբազուկի սեփականությունն էր: Այստեղ գործում էին տոնավաճառներ և կիրակնօրյա շուկաներ: Զախարևկան ուներ իր պանդոկը, առևտրական կրպակները և եկեղեցին, և 19-րդ դ. 20-ական թվականներին այդ շենը վերանվանվեց ավան: Առևտրական հողագործությունը Զախարևկայի տերերի տնտեսական գործունեության հիմնական ձևն էր: Հացահատիկի առևտրով, շրջանցելով վերավաճառողներին (կոմիսիոներներին) և

տոնավաճառները, զբաղվում էր անձամբ Արղությանը՝ Օդեսայի նավահանգստում: Արղությանների գերդաստանի բաժինն էր կազմում հարավային նավահանգիստներից կատարվող հացահատիկի ամբողջ արտահանության մոտ երկու երրորդը: Հայ խոշոր վաճառականության առևտրական գործողությունները, որ օգտվում էր գլխավորապես մեծածախ առևտրի ձևից, կապված էին Օդեսայի հետ:

Մեծածախ առևտուրը և ապառիկ առևտուրը մատչելի էին միայն կապիտալ ունեցող խոշոր վաճառականությանը: Մանր առևտրականներին, բնականաբար, մատչելի չէին առևտրի նման ձևերը, հետևաբար, նաև այն շուկաները, որտեղ Գրիգորիոպոլի խոշոր վաճառականությունը կատարում էր իր առևտուրը:

Եթե հաշվի առնենք, որ 19-րդ դ. սկզբին Ռուսաստանի հարավային երկրամասը տնտեսական առումով թույլ էր և չուներ կայուն ներքին շուկաներ, ապա կարելի է հասկանալ, թե ինչու մանր առևտրականները տակավին կողմնորոշվում էին դեպի իրենց ծանոթ հին շուկաները: Վերջին հանգամանքը այն իրողության պատճառն էր, որ հայ վաճառականության հենց այդ շերտն էր ամենից ավելի երկար ժամանակ կառչում առևտրի հին ձևերից՝ չփոխելով ոչ իր ավանդույթները, ոչ էլ ճաշակը:

Գրիգորիոպոլի մանր առևտրականների վաճառականական գործունեությունը, հետևաբար, հիմնականում կապված էր Մոլդավիայի և Ռումանիայի հետ: Նրանցից ոմանք հազվադեպ էին առնչվում Կոստանդնուպոլսի շուկայի հետ: Մոլդովական, բեսարաբական և ռումինական շուկաների հետ ունեցած նախկին կապը համառորեն գերիշխում էր նրանց վրա: Նրանք չփոխեցին նաև առևտրի իրենց սովորական ապրանքները: Տարբերությունը միայն այն էր, որ Գրիգորիոպոլի հայերի՝ այժմ արդեն որպես Ռուսաստանի բնակիչների համար այդ առևտուրը դառնում էր արտասահմանյան առևտուր:

Գրիգորիոպոլի վաճառականության արտասահմանյան առևտրի զարգացման հիմք էր քաղաքի մոտակայքում առևտրական ուղիների և գետանցների առկայությունը: Ինչպես հայտնի է, Գրիգորիոպոլը առևտրական ուղիների վրա չէր գտնվում: Այն վաճառականները, որոնք կապված էին թուրքական և մոլդովական շուկաների հետ, հարկադրված էին օգտվել Դնեստրի վրայի գետանցից, որը գտնվում էր Դուբոսարիի մոտ՝ ընդ ամին շրջանցելով Օվիդիոպոլում գտնվող գլխավոր գետանցը: Այդ գետանցներից էին սկսվում դեպի Մոլդավիա և Թուրքիա գնացող առևտրական ցամաքային ուղիները:

Դեպի արտասահմանյան նավահանգիստները գնացող ծովային ճանապարհը սկիզբ էր առնում Օդեսայից, թեև 19-րդ դ. սկզբին նավագնացություն մասամբ տեղի էր ունենում նաև Դնեստրի վրայով: Գրիգորիոպոլի խոշոր վաճառականները, որոնք իրենք էին իրենց առևտրական գործարքները կատա-

րում, ինչպես նաև այն հայերը, որոնք միջնորդական ապառիկ առևտուր էին կատարում օտարերկրյա վաճառականների հետ, սերտորեն կապված էին Օդեսայի հետ: Այդ կապը էլ ավելի ամրապնդվեց, երբ 1813 թ. Օդեսայի վաճառականության խնդրանքով վերականգնվեց Ավստրիայի հետ Օդեսայից Ռադզիվիլի և Դուբոսարիի վրայով կատարվող տարանցիկ առևտուրը: Այդ տարանցիկ ուղուց գրիգորիոպոլցիներից զատ օգտվում էին նաև Թիֆլիսի հայերը:

Գրիգորիոպոլի հայերի առևտրական գործունեությունը կապված էր ոչ միայն արտասահմանի հետ: Քաղաքում ծաղկում էր նաև ներքին առևտուրը: 1861 թ. Գրիգորիոպոլում կար քաղաքի ներսում առևտուր անող 238 վաճառական: Հայ վաճառականությունը Գրիգորիոպոլում զբաղվում էր ինչպես մշտական, այնպես էլ տոնավաճառային առևտրով: Դմիտրևյան տոնավաճառը Գրիգորիոպոլում բացվում էր ամեն տարի հոկտեմբերի 26-ին: Տոնավաճառից բացի, հայկական քաղաքում գոյություն ուներ նաև կիրակնօրյա շուկա:

Չնայած այն իրողությանը, որ 19-րդ դ. կեսերին և նրա երկրորդ կեսին հայ խոշոր վաճառականությունը հարկադրված եղավ Գրիգորիոպոլը լքել, քաղաքում, սակայն, դեռևս կային բավականին թվով հայ վաճառականներ և հրեա առևտրականներ: Նրանց առևտրական գործունեությունը շատ շահութաբեր էր, թեև վարկավորման կարիք էր զգում: 19-րդ դ. 70-ական թվականներին անհրաժեշտ եղավ Գրիգորիոպոլում հանրային բանկ հիմնել:

Այսպիսով, առևտրաարդյունաբերական շրջանների զարգացմանը Գրիգորիոպոլում նպաստեցին մի շարք գործոններ: Նախ, Ռուսաստանում հայ վաճառականության առջև բացվեց ձեռնարկուական գործունեության լայն ասպարեզ, երկրորդ՝ նվազ կարևոր դեր չխաղաց նաև կառավարական վարկավորումների քաղաքականությունը, որի պտուղներից օգտվեցին հայ բնակչության հիշատակված շրջանները: Վերջապես, նվազ էական չէր նաև այն, որ Գրիգորիոպոլի խոշոր վաճառականությանը հաջողվեց քաղաքի հիմնադրման հենց առաջին օրերից տիրանալ հայկական գաղութի բոլոր իշխող դիրքերին:

Գրիգորիոպոլի տնտեսական զարգացման հետագա ընթացքի, նրա ապագա հեռանկարի, ամբողջապես և հայաքաղաքի ճակատագրի վրա ազդում էր ցարիզմի տնտեսական նոր քաղաքականությունը, որը մշակել և իրականացնում էր Ռուսաստանի ֆինանսների մինիստր Ե. Ֆ. Կանկրինը: 1824 թ. նոյեմբերին ռուսական կառավարությունը հատուկ որոշմամբ պարտավորեցրեց Ռուսաստանում բնակվող բոլոր հայ վաճառականներին գրանցվել Ռուսաստանի ողջ տարածքում գործող միասնական վաճառականական գիլդիական միության կոչվող կազմակերպության մեջ: Գիլդիական հաստատությունը վաճառականների առևտրական գործունեության կանոնակարգման յուրատեսակ մի ձև էր:

Հայ վաճառականության համար, որը սովոր էր տարաբնույթ և հիմնականում ապառիկ առևտուր անելուն, գրեթե անհնարին էր գիլդիականության շրջանակներում ծավալել ձեռնարկուական լայն գործունեություն: Վերջապես, Գրիգորիոպոլի վաճառականներն, ունենալով սեփական վաճառականական կազմակերպություն, հոյակապ գործում էին առանց գիլդիական միության: Հատկապես կարելի է դա համարել Գրիգորիոպոլի հասարակայնության այն բազմաթիվ բողոքագրերի պատճառը, որ ուղարկվել էին կառավարությանը՝ հայ վաճառականներին գիլդիական միության մեջ գրանցելու դեմ: Ռուսաստանի տարածքում գտնվող բոլոր հայ գաղթավայրերի հասարակայնությունը վճռապես պահանջում էր հայ վաճառականներին ազատել գիլդիաներում գրանցվելու պարտավորությունից: Սակայն կառավարական շրջանները հաստատապես պնդում էին իրենցը, և, ի վերջո, հայ վաճառականությունը ստիպված եղավ ենթարկվել օրենքին: Ռուսաստանի հայ գաղութները (Գրիգորիոպոլը նույնպես) արդեն 19-րդ դ. երկրորդ քառորդին կորցրեցին իրենց որոշ արտոնությունները, այդ թվում նաև ազատ առևտուր անելու իրավունքը:

Կանկրինի գիլդիական բարեփոխումը ուժգնորեն հարվածեց Գրիգորիոպոլի ինչպես մանր, այնպես էլ խոշոր վաճառականության շահերին: Բարեփոխման մասին ցարի հրամանագրի հրապարակումից հետո խոշոր վաճառականությունը հետզհետե սկսեց լքել քաղաքը: Հայերը մեկնում էին Քիշնև, բայց գլխավորապես՝ Օդեսա, քանզի այնտեղ կար ազատ առևտրական ձեռնեբեցության ավելի մեծ հնարավորություն: Իրականում, Գրիգորիոպոլի հայերն էլ դրեցին Օդեսայի հայազգի բնակչության հիմքերը, և նրանց միջոցներով էլ կառուցվեց քաղաքի հայկական եկեղեցին: Գրիգորիոպոլի հասարակության առավել ազդեցիկ և ունևոր մասի մեկնելու հետևանքով քաղաքը զրկվեց այն անհրաժեշտ ներուժից, որը կարող էր նրան դասել այնպիսի ազդեցիկ և խոշոր հայկական գաղութի կողքին, որպիսին էր Նոր Նախիջևանը:

Օդեսայում և Ռուսաստանի այլ քաղաքներում Գրիգորիոպոլի վաճառականների առևտրական գործունեության ժամանակաշրջանում էլ նկատվում են ռուսաստանյան առևտրաարդյունաբերական շրջանների հետ հայ վաճառականության մերձեցման միտումները, որ բխում էին Ռուսաստանում հայ վաճառականական կապիտալի զարգացման տրամաբանությունից: Մոտակա ժամանակներում Գրիգորիոպոլի վաճառականությունը ներքաշվեց Ռուսաստանի հարավի տնտեսական զարգացման ընդհանուր հունի մեջ, որի հետևանքով, գրեթե ամբողջապես կորցնելով իր ազգային դեմքը, մտավ ռուսական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի կազմի մեջ՝ նրա հետ մեկտեղ դառնալով միասնական տնտեսական մի մարմին:

***

Քաղաքն հիմնադրելու ժամանակ ստանալով 30 հազար դեսյատին հող, գրիգորիոպոլցիների մի մասը սկսեց զբաղվել հողագործությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Գրիգորիոպոլի (հիմնականում նրա արվարձանների) և քաղաքին մերձակա հայկական գյուղերի գյուղատնտեսության կարևոր ճյուղերն էին պտղաբուծությունը, խաղողագործությունն ու երկրագործությունը:

Հայերի մրգատու այգիները և բանջարանոցները հիմնականում գտնվում էին Դնեստրի բազուկներում: 1792-ից մինչև 1850 թվականը հայկական գաղութում կար 124 մրգատու և 22 խաղողի այգի: 19-րդ դ. կեսերին դնեստրյան այգիների շարքում Գրիգորիոպոլի այգիներն երրորդ տեղն էին գրավում:

Գյուղատնտեսության մյուս ճյուղը, որով զբաղվում էին Գրիգորիոպոլի հայերը, երկրագործությունն էր: Ինչպես արդեն նշվեց, երկրագործությամբ հիմնականում զբաղվում էին հայ կալվածատերերը գյուղերում: Նրանք ձգտում էին ավելի շատ հացահատիկ արտադրել չուկայի համար և իրենց տնտեսությունները հարմարեցնել ապրանքային արտադրության պայմաններին, մի հանգամանք, որն իր դրսևորումն էր գտնում կալվածատիրոջը պատկանող վարելահողի ընդարձակման մեջ: Հայկական հողագործական բոլոր տնտեսություններից առավել բարեկարգ վիճակում էր իշխան Արղությաններին պատկանող տնտեսությունը: Արղությաններն իրենց տնտեսության արտադրողականության և եկամտաբերության բարձացման ուղիները փնտրում էին «ռացիոնալացման» մեջ: Նրանք տնտեսությունը վարում էին գյուղատնտեսական գիտության նվաճումների հաշվառմամբ: Արղությանների տնտեսությունները բոլոր ցուցանիշներով չէին զիջում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ գերազանցում էին գերմանացի գաղութաբնակների լավ կազմակերպված տնտեսությունների ցուցանիշները: Այդ հաջողությունները մասամբ կարելի է բացատրել այն իրողությամբ, որ նրանք Օդեսայում կոմս Վորոնցովի ստեղծած Հարավային Ռուսաստանի գյուղատնտեսական ընկերության անդամներ էին:

Հայ կալվածատերերի հաջողությունները ոչ մի կերպ չէր կարելի համեմատել Գրիգորիոպոլի մնացյալ երկրագործների գործերի հետ, չնայած այն բանին, որ վերջիններիս կողմն էր թվական գերակշռությունը. 19-րդ դ. սկզբին Գրիգորիոպոլում կար մոտ 30 երկրագործական տնտեսություն: Դրանց մեծ մասը գտնվում էր ագարակներում: Հայ երկրագործների աշխատանքի արտադրողականությունն ագարակներում (հատկապես 19-րդ դ. առաջին քառորդում) ցածր էր. դրանցից քչերն էին ապրանքային հացահատիկ արտադրում:

Նահանգային վարչությունը, որն ուշադրությամբ հետևում էր հայերի գյուղատնտեսական գործունեությանը, հիշյալ փաստերն օգտագործում էր որպես առիթ Գրիգորիոպոլի վարելահողերի մի մասը հետ վերցնելու և դրանք գերմանացի գաղութաբնակներին որպես սեփականություն տալու համար: Այսպես, 1805 թ. հունվարին նահանգային վարչության կարգադրությամբ Գրիգորիոպոլում բնակեցվեցին առաջին գերդաստանները (մոտ 405 շունչ)՝ գերմանացիներ–վերաբնակիչներ (մենոնիտականներ): Երեք տարի անց հետևեց ցարի հրամանագիրը, որի զորությամբ 1809 թ. գարնանը գերմանացի գաղութաբնակները բնակություն հաստատեցին հայաքաղաքի մերձակայքում գտնվող Գլիննայի չենում, իսկ դրա մոլդովացի բնակիչները բնակեցվեցին Գրիգորիոպոլում: Այսպիսով, Գրիգորիոպոլի արվարձանում հայտնվեց մենոնիտականների գերմանական գյուղատեսակ գաղութը, որտեղ ապրում էր երկու տեսակ ավելի քան 700 շունչ: Շուտով դրա մերձակայքում ձևավորվեցին երկու այլ գերմանական գաղութ՝ Նայդորֆը և Բերգտալը:

Գրիգորիոպոլում գերմանացիների բնակեցմամբ էլ ավելի խճճվեցին առանց այդ էլ արդեն նախկինում ձևավորված հողային բարդ հարաբերությունները հայկական գաղութում: Դրանք ծայր էին առել տակավին 1799 թ., երբ Պավել 1–ինի անվանական հայտնի հրամանագրի տեքստում սպրդած սխալի պատճառով տևական վեճ սկսվեց Գրիգորիոպոլի մագիստրատի և նահանգային վարչության միջև, որը չէր ցանկանում հայերին հատկացնել հրամանագրով նրանց հասանելիք լրացուցիչ հողատարածք Տաղլիկ գետակի ափին. Գրիգորիոպոլի բնակիչներին առաջարկվում էր զգալիորեն ավելի վատթարակ վարելահող Տամաշլիկ գետակի ափին՝ Դուբոսարիի մոտակայքում:

Պետական հողային ֆոնդերի սուր սղության պայմաններում նահանգային վարչությունը հակված էր հողօգտագործման ուղղությամբ ծագող այս կամ այն պրոբլեմը լուծել Գրիգորիոպոլի տիրույթների հաշվին: Այն հարուցում էր Գրիգորիոպոլի հայ հասարակության միանգամայն բնական դիմադրությունը: Սակայն այսպես թե այնպես հայկական կողմը հարկադրված զիջում էր նահանգային իշխանությունների ճնշմանը, որը հանգեցրեց Գրիգորիոպոլի հայերի հողային ֆոնդերի աստիճանական կրճատմանը: Դրա ապացույցն էր մերձակա Դելակեու գյուղի պետական գյուղացիների խնդրանքի պատմությունը, որոնք երկու անգամ՝ 1815 և 1819 թթ. դիմել էին նահանգային ղեկավարությանը իրենց գյուղը Գրիգորիոպոլին միակցելու խնդրանքով՝ իրենց ցանկությունը պատճառաբանելով Գրիգորիոպոլի վարելահողերի ֆոնդից լավագույն հողամասերը մշակելու միջոցով երկրագործությունը բարելավելու ձգտմամբ: Հայկական գաղութի հողերի հարցը վերստին դարձավ կառավարությունում և տեղում բանավեճի առարկա: Հարցի քննարկումը ձգձգվեց երկար տարիներ: Նահանգային իշխանությունների ակտիվ գործո-

ղությունների արդյունքը եղավ կառավարության 1822 թ. հունիսի 30–ի որոշումը, որի զորությամբ Դելակեու գյուղի մոլդովացիներին թույլատրվեց իրենց տնտեսությունը վարել Գրիգորիոպոլի հողերի վրա, իսկ իրենք էլ անձամբ քաղաքի բնակիչներ համարվեցին: Սակայն հարցը դրանով չսպառվեց: Հայերը շարունակում էին պաշտպանել իրենց իրավունքները բոլոր ատյաններում: Գրիգորիոպոլի բնակիչները ջանում էին համոզել կառավարական շրջաններին, որ քաղաքի բնակիչները այդ հողատարածքի վրա խաղողի և մրգատու այգիներ են գցել, այն օգտագործում են անասնապահության համար: Դեռ ավելին, հողը չի բավարարում, որն էլ ստիպում է երկրագործներին բարձր վարձով այն վարձակալել հարևան կալվածատերերից:

Հայերի փաստարկները և ապացույցները չազդեցին կառավարության որոշման վրա: Այնուամենայնիվ, վարելահողերի վերաբերյալ վեճը ձգձգվեց ընդհուպ մինչև 1858 թ.: Գրիգորիոպոլը հերթական անգամ զրկվեց իր հողերից, իսկ Դելակեուի նախկին շինականները դարձան քաղաքի բնակիչներ: Որպես հետևանք՝ Գրիգորիոպոլին մնաց 12 հազար դեսյատինից քիչ ավելի վարելահող:

Այդպիսին էր 19–րդ դ. առաջին կեսին հողային հարցի վիճակը հայկական գաղութում: Թեև քաղաքներում հողի հարցն այնպիսի սուր բնույթ չէր կրում, ինչպես գյուղում, այդուհանդերձ, հողահանդակների սղությունը քաղաքացիները տակավին խիստ էին զգում և ոչ միայն նրանք, ովքեր զբաղվում էին բանջարաբուծությամբ, այգեգործությամբ կամ երկրագործությամբ, այլև արդյունաբերողները, որոնք հաճախ չէին ունենում հարմար հողամասեր իրենց ձեռնարկությունները կառուցելու համար: Միաժամանակ հայկական գաղութի հողատարածքների կրճատման հետևանքով շատ էր տուժում նաև Գրիգորիոպոլի դանձարանը:

Արդեն 19–րդ դ. առաջին կեսին Գրիգորիոպոլը դարձել էր բարեկարգ և գեղատեսիլ քաղաք, որը գրավում էր ոչ միայն ռուսաստանցի և օտարերկրացի վաճառականների, այլև ճանապարհորդների ուշադրությունը: Դրանցից մեկը հիացմունքով նշում էր, որ քաղաքն ունի գեղեցիկ տեսք և լեռնային մաքուր օդ, մի հանգամանք, որին բավական նպաստել էր Գրիգորիոպոլի հարմար տեղադրությունը: Դնեստրի առափնյա տարածքը, մի ափը՝ այգիներով, մյուս ափը (բեսարաբական կողմը)՝ անտառակով պատած, լեռան լանջով մեկ ձգվող մանր ծառերով ու թփուտներով: Գարնանային եղանակին այգիների բուրմունքը գերազանց ներդաշնակվում էր այդ հոյակապ, գեղատեսիլ տեղանքի հետ:

Ականատեսների վկայությամբ, Գրիգորիոպոլի հայերը պահպանել էին իրենց ցեղի նկարագիրը և իրենց յուրահատուկ սովորույթները: Այն դրսևորվում էր ինչպես առտնին կենցաղում, տների հարդարանքում, նրանց տարա-

զում, այնպես էլ ավանդական սովորություններում: Տղամարդիկ իրենց գործերը կատարում էին շուկայում կամ էլ սրճարանում, արևելյան թունդ մի գավաթ սուրճի շուրջ: Կանայք, որպես կանոն, զբաղվում էին տնային տնտեսությամբ:

Ճանապարհորդների դիտող աչքից չի վրիպել հայ տղամարդու վարքագծի համար բնորոշ մի պարագա, այն է՝ պահպանել իրենց կանանց և հատկապես դուստրերին օտարների հայացքից: Բավականին վայելչակազմ և գեղեցիկ հայկական տոհմիկ դիմագծերով հայ աղջիկներին կարելի էր տեսնել միայն կիրակի և տոն օրերին եկեղեցում, պատարագի ժամանակ, որը տրվում էր հայերեն: Հայ աղջիկներին պատիվ է բերում, նկատում է ճանապարհորդը, նրանց անվերապահ հնազանդությունը ծնողների կամքին, պատկառանքը մեծերի նկատմամբ և ընդհանրապես բարձր բարոյականության պահպանումը:

Բարձր բարոյականությունն ամբողջապես բնորոշ էր քաղաքի հայազգի բնակչության համար: 19-րդ դ. առաջին կեսին Գրիգորիոպոլ այցելած ժամանակակիցներից մեկը գրել է. «Դատական վեճերը... առավել ևս քրեական հանցանքները հայերի շրջանում կատարյալ բացառություն են կազմում»:

Հայերը Դնեստրի ափերին պահպանել էին բնավորության ավանդական գծերը՝ բարձր բարոյականություն, ազգային ոգու միասնականություն, այլ ժողովուրդների նկատմամբ հարգանք և նրանց հետ համագործակցելու ունակություն: Սակայն նաև այդ, առաջին հայացքից չափած-ձևած կյանքում էլ եռում էին կրքերը: Եվ դրանք կյանքի էին կոչվում այն լարված իրադրությամբ, որի մեջ պարբերաբար հայտնվում էր Գրիգորիոպոլի հայ հասարակայնությունը՝ այս կամ այն պատճառով:

Արդեն առիթ ունացանք նշելու, որ Ռուսաստանի կառավարող շրջանները իրավական և տնտեսական հարցերում դանդաղ, բայց անշեղորեն կիրառում էին Գրիգորիոպոլի հայկական գաղութի բացառիկությունն ի չիք դարձնող քաղաքականություն: Գրիգորիոպոլի բնակիչները տևականորեն պաշտպանում էին իրենց իրավունքները և արտոնությունները:

Գրիգորիոպոլի հասարակությունն, ինչպես և մյուս հայկական գաղութներինը, սերտ կապերով կապված էր իր հայրենիքի՝ Հայաստանի հետ: Ուստի և, ամբողջ ազգին վերաբերող իրադարձություններն աչխույժ արձագանք էին գտնում այնտեղ:

19-րդ դ. սկզբին Գրիգորիոպոլը ևս ներքաշվեց իրադարձությունների այն հորձանուտը, որն առաջացել էր Էջմիածնի գահի երկու հավակնորդների՝ Դանիել և Դավիթ կաթողիկոսների պայքարի հետևանքով:

1799 թ. վախճանվեց կաթողիկոս Ղուկասը: Ավանդության համաձայն, Էջմիածնի գահին պիտի բազմեր Կոստանդնուպոլսի հայ պատրիարքը: Թուրքական սուլթանը նույնիսկ հրապարակեց հրովարտակ՝ հօգուտ Դանիելի: Սա-

կայն միջամուխ եղավ Հովսեփ Արղությանը և ռուսական կառավարության օգնությամբ 1800 թ. հասավ իրեն ամենայն հայոց կաթողիկոս նշանակելուն: Հովսեփի հանկարծամահ լինելուց հետո (1801 թ. մարտ) Կոստանդնուպոլսի հայ պատրիարքությունը վերստին առաջադրեց Դանիելի թեկնածությունը: Սակայն այս անգամ ևս նրան չէր վիճակված Էջմիածնի գահին բազմել: Գրիգորիոպոլի առաջնորդ Գրիգոր վարդապետը վրաց արքայազն Դավթի և Երևանի խանի օգնությամբ 1801 թ. ապրիլին հասավ արքեպիսկոպոս Դավթի գահակալությանը, որի թեկնածությունը արժանացավ Պետերբուրգի հավանությանը: Էջմիածնի գահի երկու հավակնորդներն էլ ձեռնտու էին ռուսական իշխանություններին՝ և Դանիելը, և Դավիթը ռուսական կողմնորոշում ունեին:

Գրիգորի արարքը պատակտում առաջացրեց ոչ միայն եկեղեցում: Ռուսաստանի բոլոր հայկական գաղութներում (և նույնիսկ Կոստանդնուպոլսում) առաջացան Դանիելի և Դավթի կուսակիցների երկու խմբավորում: Բայց քանի որ հայկական գաղութների առևտրական խոշոր բուրժուազիան (Լազարյանների գլխավորությամբ), որի հետևից գնում էր հայ հասարակության մեծ մասը, սատարում էր Դանիելին և եփրեմին, ստացվում էր այնպիսի տպավորություն, թե գաղութներն ամբողջապես հանդես են գալիս Գրիգոր-Դավթի դեմ: Գրիգորիոպոլի հասարակությունն ամբողջապես սատարում էր Գրիգորին:

Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այնպիսի բավական կարևոր հանգամանք, որ ինչ-որ առումով Գրիգորիոպոլը Հովսեփ Արղությանի և նրա մերձավորագույն աջակցի՝ վարդապետ Գրիգոր Զաքարյանի զավակն էր: Վերջապես, ի տարբերություն հայկական մյուս գաղութների, Գրիգորիոպոլում Էջմիածնի գահի համար մղվող պայքարը սերտորեն միահյուսվում էր մի այլ՝ 25 հազար ռուբլի գումարի ոչ այնքան պարզ պատմության հետ, գումար, որն իր ժամանակին տրամադրել էր ռուսական կառավարությունը հայկական գաղութում Մայր եկեղեցի կառուցելու համար:

Հիշյալ դրամական գումարի պատմությունը բավականին խճճված է: Դեռևս Հովսեփ Արղությանի կենդանության օրոք բարեգործական նպատակներով դրամ էր հանգանակվել Հնդկաստանում, որն հետագայում ապրանքի էր վերածվել: Հնդկական ապրանքի վաճառքը անմիջականորեն ինքը՝ Արղությանն էր գլխավորում, որը բոլոր հաշիվները Գրիգորի ձեռքն էր տվել: Հնդկական ապրանքով լցված մի քանի սնդուկ էլ Գրիգորիոպոլ էր ուղարկվել, որտեղ էլ գտնվում էր Գրիգորը՝ որպես Գրիգորիոպոլի հայերի հոգևոր առաջնորդ: Նա օգտվեց իր դիրքից և, պետությունից ստանալով 25 հազար ռուբլի, ձեռնամուխ եղավ այդ գումարով քաղաքում Մայր եկեղեցի կառուցելու գործին: Սակայն եկեղեցին չկառուցվեց, իսկ գումարը Գրիգորը տարավ Պետեր-

բուրգ, տվեց Հովսեփ Արղությանին, որը ստացած գումարի դիմաց Գրիգորիոպոլ ուղարկեց հնդկական ապրանքներ: Այդ ապրանքների իրացումից ստացված փողով պիտի մարեին 25 հազար ռուբլու գումարով Հովսեփ Արղությանի պարտքը:

Այդ ամբողջ պատմությունը հայկական գաղութի հասարակայնության առջև դրեց մի շարք հարցեր, թե ուր չքացան հնդկական ապրանքների մեծ մասի վաճառքից ստացած փողերը, և ում պիտի պատկանի դրանց մնացած մասը: Երկրորդ, թե ինչու առաջացավ 25 հազար ռուբլի գումարը Պետերբուրգ առաքելու անհրաժեշտությունը, և ինչպիսին է դրա հետագա ճակատագիրը: Բայց քանի որ Արղությանի մահից հետո այդ բոլոր հարցերին կարող էր պատասխանել միայն Գրիգոր վարդապետը, ապա բոլոր պահանջները հասցեագրվեցին նրան: Այսպիսով, Գրիգորից պահանջում էին, որ նա հաշվետու լինի ինչպես հնդկական ապրանքների, այնպես էլ 25 հազարանոց գումարի համար: Այդ հանգամանքից հմտորեն օգտվեցին Լազարյաններն ու ռուսահայ թեմի առաջնորդ եփրեմ արքեպիսկոպոսը, նրանց ձեռքին այն դարձավ հաղթաթուրթ Գրիգոր-Դավթի դեմ մղվող պայքարում:

1804 թ., այսինքն, այդ պայքարի թեժ պահին Գրիգոր վարդապետ Զաքարյանը գտնվում էր Պետերբուրգում, ջանալով կառավարական շրջանները իր կողմը հակել: Սակայն Լազարյաններին հաջողվեց հայ վարդապետին մայրաքաղաքից արտաքսել տալ, և նա ուղևորվեց Գրիգորիոպոլ:

Զաքարյանի Գրիգորիոպոլ ժամանելուց հետո նրա կողմն անցավ վաճառականության և բնակչության մեծ մասը, որի շնորհիվ Գրիգորի կուսակիցներին հաջողվեց հասնել մագիստրատի և քաղաքային դումայի ղեկավարության փոփոխմանը: Ի վերջո, նրան հաջողվեց ձեռք բերել գրավոր վկայություն այն մասին, որ ինչպես Հովսեփ Արղությանի ժառանգները, այնպես էլ Գրիգորիոպոլի մագիստրատը նրանից գույքային ոչ մի պահանջ չունեն:

Տեղեկանալով, որ Գրիգորը գտնվում է Գրիգորիոպոլում, Լազարյանները և եփրեմը նույն 1804 թ. այնտեղ ուղարկեցին, որպես Գրիգորիոպոլի հայերի հոգևոր առաջնորդ, իրենց կուսակցին՝ հայտնի եկեղեցական գործիչ Մանվել Գյումուշխանեցուն: Մանվելը իր առաջնահերթ խնդիրը համարեց գաղութում հոգևորականության դիրքերի ամրապնդումը և Գրիգորիոպոլի հասարակայնության աչքում Գրիգորի մերկացումը: Սակայն վերջինիս չբունակում էր սատարել մագիստրատը, ինչպես նաև նորից Ներսոնի գեներալ-նահանգապետ նշանակված դուքս Դյուք դը Ռիշելիեն, իսկ սա կարևոր հանգամանք էր:

Գրիգորի դիմադրությունը վերջնականապես խորտակելու և նրա ազդեցությունն այն շրջաններում, որոնք սատարում էին նրան որպես Դավթի պատվիրակի, վերացնելու համար, էջմիածնի եկեղեցական ժողովը (նրևի Լազարյանների թելադրանքով) 1806 թ. Գրիգոր Զաքարյանին բանադրանքի է ենթարկում: Նույն թվականի մայիսին ռուսական կառավարության որոշմամբ նա վտարվում է Գրիգորիոպոլից:

Այդ ժամանակ հայաքաղաքում բավականին մեծացել էր Գրիգորի հակառակորդների թիվը, որոնք էլ ռուսական իշխանությունների առջև Գրիգորին քաղաք վերադարձնելու և 25 հազարանոց գումարի և հնդկական ապրանքների մասին հաշվետու լինելու հարցը հարուցեցին: Իսկ Զաքարյանի կողմնակիցները, գրեթավորապես Գրիգորիոպոլի ղեկավարությունը, իրենցից կախված ամեն ինչ արեցին, որպեսզի Գրիգորի տնտեսական գործունեության հետաքննությունը չկայանա: Եվ դա մագիստրատին հաջողվեց, թեև, ոչ առանց դուքս Ռիշելիեի օգնության:

Տեղի իշխանությունների ներողամտությունը Գրիգորի նկատմամբ բացատրվում էր այն իրողությամբ, որ սկսված ռուս-թուրքական (1806-1812 թթ.) պատերազմում դուքս Ռիշելիեն (նրա դիրքորոշումը չուտով պաշտպանեցին նաև կենտրոնական իշխանությունները) որոշել էր օգտագործել բազմափորձ Զաքարյանին, որը վիթխարի ազդեցություն ուներ մոլդովական և բեսարաբական հայերի վրա: Հետևաբար, ռուսական կառավարության և Լազարյանների շահերը տարամիտվեցին: Եվ Լազարյաններին ուրիշ ոչինչ չէր մնում անել, քան գնալ անհնազանդ Գրիգորի հետ հաշտության: Հաշտությունը կայացավ 1810 թ. կաթողիկոս Դանիելի մահվանից հետո՝ Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնյա անձանց միջնորդությամբ: Էջմիածնի գահի նոր տիրակալ եփրեմը Սինոդի միջոցով ձևակերպեց արքեպիսկոպոս Գրիգորին շնորհվող ներումը: Այդ բոլոր իրադարձություններից հետո հնդկական ապրանքների և 25 հազարանոց գումարի հարցը դադարեց արդիական լինել ինչպես Լազարյանների, այնպես էլ հայ եկեղեցու ղեկավարության համար:

Սակայն Գրիգորիոպոլի հասարակայնությունը չէր կարող հաշտվել այդ փողերի կորուստի հետ և հետագայում առնվազն երեք անգամ հարուցեց կրկնակի գումարի հարցը: Վերջին անգամ 25 հազարանոց գումարի պատմությունն արժանացավ գրիգորիոպոլցիների ուշադրությանը 1845 թ.: Ներսես Աշտարակեցին, որն այդ ժամանակ դարձել էր Ամենայն հայոց կաթողիկոս, համառորեն խորհուրդ էր տալիս Գրիգորիոպոլի մագիստրատին չփորփրել անցյալը:

Ուշադրության է արժանի այն իրողությանը, որ 25 հազարի հարցը լուծելու նախաձեռնությունն անցել էր քաղաքի հայերի ձեռքը, որոնք մարմնավորում էին աշխարհիկ իշխանությունը: Այդ իրողությունը բացատրվում է ոչ այքան այն պարագայով, որ ժամանակի ընթացքում փոխվել էր մագիստրատի կազմը (չէ՞ որ հենց նա էր նախկինում սատարում Գրիգոր Զաքարյանին), որ-

քան այն նոր հարաբերություններով, որ սկսել էին ձևավորվել Գրիգորիոպոլսում քննարկվող ժամանակ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև:

Գրիգորիոպոլի հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները վկայում են, որ եկեղեցու և հայկական գաղութի վաճառականության միջև եղած հակասություններն աստիճանաբար փոխակերպվում էին աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հակասությունների: Դրանք հատկապես սրվեցին արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու կառավարման ժամանակաշրջանում, որը հոգևոր իշխանության գերակայության մոլի կողմնակիցն էր: Այդ հակասություններն էլ հենց այն նոր միտումներն էին, որոնք առաջացան 19-րդ դարի 30-ական թվականներին Գրիգորիոպոլի հասարակական հարաբերություններում: Սակայն աշխարհիկ և հոգևոր իշխանությունների դիմակայությունը Գրիգորիոպոլում իր զարգացումը չունեցավ: Փաստաթղթերը վկայում են այն մասին, որ եկեղեցու իշխանությունը Գրիգորիոպոլում 19-րդ դ. կեսերին տակավին ուժեղ էր:

Հայկական գաղութների իրավունքների վերացման և հայ բնակչության ուծացման վտանգը հանգեցրեց վերը նշված հակասությունների համահարթման, որը նպաստեց հայ հասարակության բոլոր խավերի համախմբմանը, դարձյալ եկեղեցու շուրջը:

Վերը նշված հանգամանքները դարձան գլխավոր, բայց ոչ միակ պատճառն այն իրողության, որ Գրիգորիոպոլում աշխարհիկ իշխանության և եկեղեցու միջև հակասությունները դիտարկվող ժամանակահատվածում հետագա զարգացում չունեցան:

Գրիգորիոպոլի հասարակայնությունը մեծ ոգևորությամբ արձագանքեց կաթողիկոս Եփրեմի կոչին՝ մասնակցելու հանգանակությունների անցկացմանը, որ ծավալվել էր հայ ազգաբնակչության լայն խավերի շրջանում, երբ 1812 թ. Ռուսաստանն ազատագրական պայքար էր մղում ֆրանսիական զորքերի դեմ: Գրիգորիոպոլի հայկական եկեղեցու առաջնորդ Մանվել վարդապետի կարգադրությամբ՝ եկեղեցու ծխական համայնքի անդամներն ամեն օր առավոտյան և երեկոյան պիտի աղոթեին հանուն Թշնամու դեմ ցարի հաղթանակի: Աչխուժորեն հետաքրքրվելով ռազմական գործողությունների ընթացքով՝ հայկական գաղութի բնակիչները հետևում էին Ռուսաստանի կենտրոնից ստացվող լուրերին: Իրազեկողներից մեկը արքեպիսկոպոս Գրիգորն էր, որի նամակները մանրամասն տեղեկություններ էին պարունակում 1812 թ. Հայրենական պատերազմի իրադարձությունների մասին:

Գրիգորիոպոլի և ռուսահայ մյուս գաղութների ազգաբնակչության համար առանձնահատուկ նշանակություն են ստանում ռուս-պարսկական (1826-1828 թթ.) և ռուս-թուրքական (1828-1829 թթ.) պատերազմները: Դրանցից առաջինը պիտի որոշեր Արևելյան Հայաստանի բախտը: Սակայն այդ առիթով

չահագրգռված կողմերից յուրաքանչյուրը (Ռուսաստանի իշխանությունները և հայ ազատագրական շարժման գործիչները) ունեին իրենց ծրագրերը:

Հայ ազատագրական շարժման գործիչները, օրինակ, արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին, Խաչատուր Լազարյանը, գրիգորիոպոլցի կալվածատեր իշխան Կոնստանտին Արղությանը և ուրիշներ, ցանկանում էին օգտվել Այսրկովկասում ստեղծված արտաքին քաղաքական իրադրությունից իրենց նախորդների՝ Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի չիրականացած ծրագրերը մարմնավորելու համար, այսինքն՝ ռուս-պարսկական պատերազմն օգտագործել Ռուսաստանի հովանու ներքո առանձին հայկական պետություն ստեղծելու համար:

Այդ կապակցությամբ դրսևորվում է գրիգորիոպոլցի Կոնստանդին Արղությանի դերը, որը դուրս էր եկել Գրիգորիոպոլի շրջանակներից: Խաչատուր Լազարյանին Գրիգորիոպոլից հասցեագրված նամակներում Կոնստանդինը պատմում էր, որ իր հորեղբոր (Հովսեփ Արղությանի) արխիվում նա գտել է հայերի և ռուսների միջև կնքվելիք պայմանագրի նախագիծը, գտնելով որ այժմ առիթ էր ներկայացել կյանքում այդ պայմանագիրը մարմնավորելու համար: Խիստ հատկանշական են նաև նամակի հեղինակի հետևյալ դատողությունները այն մասին, որ հայ պետականության ստեղծումը համապատասխանում էր նաև Ռուսաստանի շահերին, որը դրանով երկու կողմից պաշտպանված կլինի կայուն և հավատարիմ պատնեշով՝ հանկարծակի հարձակումներից:

Գրիգորիոպոլից գրված նամակները վկայում են այն մասին, որ հայկական այդ գաղութի հասարակայնությունը և նրա ներկայացուցիչները հայրենիքին ցույց էին տալիս իրենց ուժերի ներածի չափ օգնություն: Այսպես, նույն իշխան Արղությանը հարցնում էր Խաչատուր Լազարյանին, թե երբ կձևավորվի Հայկական հեծելավաշտը, ով կդառնա դրա հրամանատարը:

Պատերազմի ավարտից հետո Ներսեսը մեկուսացվեց ռուսական կառավարության կողմից, 1828 թ. ստանալով ցարական իշխանությունների կարգադրությունը՝ Հայաստանը չտապ լքելու և բեսարաբական հայկական թեմի առաջնորդությունն ստանձնելու համար Քիշնև մեկնելու մասին:

Ներսես Աշտարակեցուն Քիշնև ուղարկելով՝ ռուսական կառավարությունը միաժամանակ մտադրվում էր նրան, ինչպես և հայ մյուս գործիչներին օգտագործել 1828-1829 թթ. պատերազմի ընթացքում: Պետերբուրգը հասկանում էր, որ հայ ազատագրական շարժման գործիչները հոժարությամբ կհամաձայնեն համագործակցել Ռուսաստանի հետ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմում:

Իշխանությունները ծառայության են վերցնում Խաչատուր Լազարյանին: Ինչպես կարելի է եզրակացնել գրիգորիոպոլցիների հետ վարած նրա

նամակագրությունից, նրա հիմնական խնդիրն այն էր, որ թուրքական սահմաններում բնակվող հայերին հակեր Ռուսաստանի կողմը և ռուսական զորքերի հրամանատարության համար հետախուզական տեղեկություններ հավաքեր: Առաջադրված խնդիրը լուծելու գործում նրան մեծ օգնություն ցույց տվեցին Գրիգորիոպոլի բնակիչներն ու հասարակայնության ներկայացուցիչները: Գրիգորիոպոլցի կալվածատեր Կոնստանդին Արղությանի միջոցով ռուսական իշխանությունները մտադրվում էին կապեր հաստատել Կոստանդնուպոլսի հայերի հետ: Սակայն քանի որ ուղղակի առնչությունները Կոնստանդնուպոլսի հետ հայ պատրիարքի և այլ վստահելի անձանց միջոցով խիստ վտանգավոր էին, Կոնստանդին Արղությանին հանձնարարվում էր գտնել որևէ այլ ընդունելի ձև՝ Թուրքիա, արևմտահայերին հասցեագրված կոչեր և այլ փաստաթղթեր ուղարկելու համար: Նույն Լազարյանի հանձնարարությամբ Կոնստանդին Արղությանը զբաղվում էր հակառակորդի թիկունքում հետախուզման տեղեկություններ հավաքելու համար հուսալի մարդկանց ընտրությամբ: Դրանց մեջ կային նաև Գրիգորիոպոլի հայեր:

***

Գրիգորիոպոլում զարգանում էր նաև մշակութային կյանքը: Սակայն գավառային այդ փոքր քաղաքում այն չէր կարող նույնքան վառ լինել, որքան Ռուսաստանի խոշոր կենտրոնական քաղաքներում էր: Ստացվել էր այնպես, որ առանձին գրիգորիոպոլցիներ մասնակցում էին Գրիգորիոպոլին հարևան քաղաքների՝ Օդեսայի և Քիշնևի մշակութային կյանքին: Զարգանում էր Գրիգորիոպոլում նաև լուսավորությունը: Հայկական առաջին դպրոցը բացվեց 1806 թ.՝ վարդապետ Մանվել Գյումուշխանեցու ջանքերով: Հայկական եկեղեցու առաջնորդը նշել է, որ գաղութի տղամարդիկ, չնչին բացառությամբ, գիտեին մայրենի լեզուն, իսկ կանայք գրեթե չէին տիրապետում մայրենուն, այդ իսկ պատճառով նրանց երեխաներն էլ չգիտեին հայերեն:

Դպրոցական գործը Գրիգորիոպոլում առաջ էր ընթանում մեծ դժվարություններով: Դրանցից գլխավորն այն էր, որ բոլորովին չկային միջոցներ և կադրեր: Հարկ եղավ սպասել նվիրատվությունների: Եվ այդպիսիք ստացվեցին արքեպիսկոպոս Եփրեմից և վաճառական ու արդյունաբերող Իվան Սաթովից: Դասատուների և դպրոցի շենքի հարցում էլ սկզբնական շրջանում ելք գտնվեց: Մանվելը առաջնորդական տանը սենյակ առանձնացրեց և քահանա Գևորգի հետ միասին սկսեցին երեխաներին ուսուցանել, որոնց թիվը 80-ից անցավ: Աշակերտների մեծ մասը չքավոր ընտանիքներից էր սերում: Կարիքավոր դպրոցականների համար եկեղեցու միջոցներով հագուստ գնվեց:

Գրիգորիոպոլի հայկական առաջին դպրոցի սաները, առարկաների բարդության աստիճանին համապատասխան, տարաբաշխվում էին խմբերի: Առաջին խմբում սովորում էին միայն մայրենի լեզու՝ ընթերցանություն և դրավոր: Հաջորդ խումբը լեզվի հետ միասին սովորում էր նաև աստվածաբանություն: Կար նաև թվաբանություն սովորող խումբ: Առավել ընդունակ երեխաներին դասավանդում էր քերականություն:

Գրիգորիոպոլի դպրոցի առաջին հաջողությունների մասին Մանվելը բերկրանքով հայտնում էր, որ նրա սաները երկու տարվա ընթացքում սովորել են հայերեն լավ խոսել և նույնիսկ իրենց ծնողներին սովորեցրել են մայրենի լեզուն: Եվ այդուհանդերձ, դպրոցական գործն առաջ էր գնում մեծ դժվարությամբ: Մանվելի կարծիքով, դպրոցը պիտի գոյատևեր բարեգործական միջոցների հաշվին: Առանձնապես հույս էր դրվում Լազարյանների օգնության վրա: Մանվելը հույսեր էր կապում Հովհաննես Լազարյանի կտակով հայ հասարակությանը որպես նվեր Գրիգորիոպոլ փոխանցված փողերի հետ: Սակայն քաղաքապետ Հարություն Պոպովը նախընտրեց այդ փողերը ծախսել իրենց ուղղակի նշանակմամբ, այսինքն՝ տալ չքավորներին, որբերին և այրիներին: Վարդապետ Մանվելը գործադրում էր ամեն մի ջանք, որ շրջանառության մեջ դրված նվիրաբերած գումարից ստացվող տոկոսները ամբողջապես տրամադրվեն դպրոցին: Վարդապետի հակառակորդներն իրենց հերթին ձգտում էին խանգարել դրան և խնդրում էին Լազարյաններին դրամը բաժանել Գրիգորիոպոլի չքավոր խավերին: Ի վերջո, վեճն ավարտվեց երկու կողմերի յուրօրինակ փոխզիջմամբ: Լազարյանների կարգադրությամբ, կտակած գումարի տոկոսները բաժանվեցին երկու մասի, որոնք նախատեսվում էին ինչպես չքավորության, այնպես էլ դպրոցի համար: Սակայն, չնայած այդ նպաստին, Գրիգորիոպոլի դպրոցը երկար ժամանակ տակավին լավ դասատուների և ուսումնական լիարժեք ձեռնարկների կարիք էր զգում:

Այդ խնդիրն ամբողջապես չլուծվեց նույնիսկ 19-րդ դարի 60-ական թվականներին: 1863 թ. ապրիլին ժամանելով Գրիգորիոպոլ, Նախիջևան-բեսարաբական թեմի թեմակալ արքեպիսկոպոս Գաբրիել Այվազովսկին ստիպված էր հավաստել, որ հայկական դպրոցում «զգացվում է լավ ձեռնարկների և դասագրքերի շոշափելի պակասություն սկզբնական ուսուցման համար»: Ուստի նա կարգադրեց Բեսարաբիայի և Մոլդովիայի հայկական գաղութներ (այդ թվում նաև Գրիգորիոպոլ) ուղարկել Խալիբյան ուսումնարանի տպարանում տպագրված դասագրքեր: Դրա հետ մեկտեղ, Այվազովսկու ցուցումով, այնտեղ որպես ուսուցիչներ ուղարկվեցին նաև այդ ուսումնարանի շրջանավարտներից:

Գրիգորիոպոլում լուսավորության զարգացման ասպարեզում որոշակի դեր է ունեցել ևս մի հոգևոր գործիչ՝ Գրիգորիոպոլի եկեղեցու ավագերեց

Դավիթ Շահինյանցը: Տեր Դավթի ջանքերով 1868 թ. Գրիգորիոպոլում բացվեց առաջին ծխական դպրոցը հայ աղջիկների համար: Գրիգորիոպոլի իգական դպրոցի բացմանը նպաստեց ինքը՝ հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ն, որը ժողովրդական կրթության եռանդուն ջատագով էր: Գրիգորիոպոլի ավագերեցի ազնիվ նախաձեռնությանը սատար կանգնեց նաև թեմի առաջնորդ Գևորգը:

Երկու տարի անց դպրոցը բացելուց հետո, 1870 թ. հունիսի վերջին, հոգաբարձուների և ծխականների ներկայությամբ անցկացվեց աշակերտուհիների քննության արարողությունը. գրիգորիոպոլցի աղջիկները ցուցադրեցին մայրենի լեզուն ուսումնասիրելու ասպարեզում իրենց ձեռք բերած հաջողությունները: Դրա համար նրանք պարտական էին գրականության ուսուցիչներ՝ ամուսիններ Գևորգ Մանդակունուն և Լուցիա Գարամրցյանին:

19-րդ դ. կեսերին, բացի հայկական դպրոցներից, Գրիգորիոպոլում գործում էին ևս երկու այլ դպրոց՝ ռուսական ծխական ուսումնարան և հրեական կրոնական դպրոց (աղոթադպրոց):

Դպրոցական գործի և լուսավորության զարգացման հարցերին առնչվում էր այնպիսի կարևոր խնդիր, որպիսին տեղի առևտրական և արդյունաբերական շրջանների բարեգործությունն էր, որն, անտարակույս, Գրիգորիոպոլի հայերի հասարակական գործունեության կողմերից էր: Հայազգի մեծահարուստների նվիրատվությունները և, մասնավորապես, անվանական հիմնադրամի պարտադիր առկայությունը Գրիգորիոպոլի գաղութի ներքին կյանքի առանձնահատկություններից մեկն էր:

Հովհաննես Լազարյանը բարեգործական նպատակներով Գրիգորիոպոլին էր կտակել 10 հազ. ռուբլի: Մի քանի տարի անց այդ գումարը մեծացավ: Լազարյանների կամքով 1823 թ. նրանց դրամագլուխը մագիստրատից հանձնվեց Գրիգորիոպոլի քաղաքային դումայի տնօրինությանը: Հետագայում նոր նվիրատվությունների շնորհիվ այդ գումարը մեծանում է: Հեռավոր Կալկաթայում վախճանված Կատարինե Մինասյանի կտակի համաձայն, նրա եղբայր Էլիազ Մինասյանը Գրիգորիոպոլին հանձնեց խոշոր գումար: Հայկական գաղութի հանրային հիմնադրամին նվիրատվություն կատարեց նաև նրա բնակիչ՝ քաղաքի հայտնի վաճառական Ալեքսան Անդրեասյանը, որից հետո հիմնադրամը ստացավ «Լազարյան-Անդրեասյան» անվանումը:

19-րդ դ. երկրորդ կեսին Լազարյանների դրամագլուխը գտնվում էր քաղաքի իշխանությունների տնօրինության ներքո, իսկ հետագայում անցավ հայ հասարակայնության վերահսկողությանը: Երկու դեպքում էլ դրամագլուխը տնօրինելու գործին մասնակցում էին հայ հասարակության ներկայացուցիչները, որոնք պարտավոր էին հաշվետու լինել ժողովրդին բարեգործական գումարի եկամուտների և ծախսերի մասին: Գրիգորիոպոլի կառավարման մասին 1879 թ. փետրվարին նոր օրենսդրական որոշման հրապարակումից հետո Լազարյանների դրամագլուխն անցավ քաղաքային նորաստեղծ վարչության տնօրինությանը:

19-րդ դ. երկրորդ կեսին Գրիգորիոպոլի հանրային հիմնադրամը համալրվեց նոր նվիրատվություններով: Առանձին դրամագլուխ կազմեց Ալեքսան Անդրեասյանի ևս մեկ նվիրատվությունը, որի փողերը նրա մահից հետո տակավին երկար ժամանակ գտնվում էին նրա ժառանգների ձեռքին: Հետագայում այդ փողերն անցան հայկական եկեղեցու վերահսկողության տակ: Մյուս գրիգորիոպոլցին, որը հարազատ քաղաքին նվիրատվություն էր կատարել, Կարապետ Տրդատյանն էր: 1863 թ. նա սուրբ Պետրոսի և Պողոսի հայկական եկեղեցուն գգալի գումար տվեց: Դրամը հանձնվեց վաճառականներին՝ այն ավելի մեծ գումար դարձնելու նպատակով: Հետագայում Տրդատյանի փողերը նորից շրջանառության մեջ դրվեցին տարեկան 100 ռուբլուց 12% վճարելու պայմանով: Տրդատյանի դրամագլխից ստացվող եկամտի մի մասը հատկացվում էր եկեղեցուն, մյուս մասը՝ Գրիգորիոպոլի չքավորությանը:

Գրիգորիոպոլի գաղութի հանրային հիմնադրամին պատկանող դրամագլխի վրա տարածվեց ռուսական կառավարության 1903 թ. հունիսի 12-ի որոշումը, որի զորությամբ հայկական եկեղեցուն պատկանող գույքը հանձնվում էր պետական գանձարանին: Հունիսի 12-ի օրենքը զանգվածային հուզումներ առաջացրեց Ռուսաստանի հայերի շրջանում: Հայ հասարակայնության ճնշման ներքո ռուսական իշխանությունները հարկադրված եղան հայ եկեղեցիներին վերադարձնել բռնագրաված գույքի մի մասը: Ինչ վերաբերում է Գրիգորիոպոլի հայերին, ապա նրանք հասան հանրային հիմնադրամը վերադարձնելուն: Այդ գործում մեծ աջակցություն ցույց տվեցին Գրիգորիոպոլի եկեղեցական նորաստեղծ հոգաբարձության անդամները: Տեղական տնտեսության գործերի գլխավոր վարչությանն ուղարկված այդ կազմակերպության կարգավիճակի նախագիծը հաստատվեց 1905 թ. հունվարին, և եկեղեցական հոգաբարձությունը սկսեց գործել:

Հասարակական նոր կազմակերպությունը հիմնականում աշխարհիկ գործեր էր տնօրինում: Այն պայմաններում, երբ քաղաքի իշխանությունն այլևս հայերի ձեռքին չէր, հոգաբարձությունը պաշտպանում էր Գրիգորիոպոլի բնակչության հայկական մասի շահերը ոչ միայն քաղաքի, այլև նահանգային իշխանությունների առջև: Դրա հետ միասին հոգաբարձության անդամները ստանձնեցին հայկական եկեղեցիների, դպրոցների, հասարակական որոշ շենքերի, և որ գլխավորն է, հայ չքավորության խնամակալությունը:

Վերը թվարկած խնդիրները լուծելու համար անհրաժեշտ էր ունենալ նյութական կայուն հիմք: Ուստի և, հոգաբարձության անդամները 1905 թ.

հունիսին կայացած իրենց առաջին իսկ նիստին սկսեցին դրամական հանգանակություն կատարել: Սակայն միայն այդ նվիրատվությունները չէին կարող բավարարել հոգաբարձության կարիքները: Ուստի, երկրորդ ժողովին հոգաբարձության անդամները բարձրացնում են այն բոլոր փողերի և նվիրատվությունների՝ իրենց կազմակերպության տնօրինությանը հանձնելու հարցը, որոնցից կազմվում էր Գրիգորիոպոլի հայկական համայնքի հասարակական հիմնադրամը: Դանվեց այդ պահանջի նույնիսկ իրավական հիմնավորումը՝ ի դեմս հոգաբարձության կանոնադրության առաջին հոդվածի 7-րդ կետի: Գրիգորիոպոլի հայկական համայնքի ընդհանուր ժողովը 1905 թ. սեպտեմբերին հավանություն տվեց հոգաբարձության որոշմանը: Դրանից հետո, 1905 թ. հոկտեմբերին, հոգաբարձության անդամները դիմեցին Խերսոնի նահանգապետին «Լազարյան-Անդրեասյան» դրամագլուխը հոգաբարձության վերահսկողությանը հանձնելու խնդրանքով: Նահանգային իշխանությունները բավարարեցին Գրիգորիոպոլի հայկական համայնքի խնդրանքը: 1906 թ. նոյեմբերին հետևեց Խերսոնի նահանգային վարչության կարգադրությունը նշված դրամագլուխը (մոտ 31 և կես հազար ռուբլի) հայկական հոգաբարձությանը հանձնելու մասին:

Տրդատյանի և Անդրեասյանի դրամագլխի հարցը շատ ավելի դյուրին լուծվեց: 1906 թ. օգոստոսի վերջին հոգաբարձությունը որոշում կայացրեց՝ հայկական համայնքի ընդհանուր ժողովից խնդրել Տրդատյանի և Անդրեասյանի փողերը եկեղեցական գումարից առանձնացնելու և դրանք հոգաբարձության տնօրինությանը հանձնելու մասին: Գրիգորիոպոլի հայկական համայնքը իր ընդհանուր ժողովում 1906 թ. հոկտեմբերի 1-ին որոշեց եկեղեցական ամբողջ գումարից առանձնացնել 31 տոկոսից ավելին, որը Լազարյաններ դրամագլխի հետ միասին կազմում էր 35 հազար ռուբլի: Ստեղծելով, այդպիսով, նյութական հիմք, Գրիգորիոպոլի հոգաբարձությունը գործունեություն ծավալեց ի շահ քաղաքի հայազգի բնակիչների՝ շատ բանով իր վրա վերցնելով հայկական մագիստրատի իրավասությունները:

18-րդ դ. վերջին, երբ Ռուսաստանի և Թուրքիայի փոխհարաբերությունները սրվել էին, եկատերինա 2-րդի կառավարությունը, հիմնադրելով հայկական քաղաք-գաղութ, մտադիր էր այն դարձնել Ռուսաստանի հարավի հայկական թեմի կենտրոն: Սակայն արդեն 19-րդ հարյուրամյակի առաջին կեսին ռուս-թուրքական պատերազմներից հետո Գրիգորիոպոլի քաղաքական նշանակությունը նվազեց: Բանն այն է, այդ պատերազմները բարելավեցին Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիրքը իր հարավային սահմաններում, կայսրության պետական սահմանը որոշ չափով դեպի արևմուտք տեղաշարժելով, որը հնարավորություն ընձեռեց ռուսական կայսրությանը միակցել Քիշնևը: Այդ քաղաքին էր մասամբ վիճակված ստանձնել Գրիգորիո-

պոլի դերը: Այժմ բոլոր հայերի ուշադրությունը դամվել էր Քիշնևի վրա: Ստրատեգիական և աշխարհագրական այն շահեկան դիրքը, որ ուներ քաղաքը, ինչպես նաև հայկական բազմանդամ գաղութի առկայությունն այնտեղ, հանգեցրին այն բանին, որ հատկապես Քիշնևը, այլ ոչ թե Գրիգորիոպոլը, դառնում է 19-րդ դ. երկրորդ քառորդին հայկական թեմի կենտրոն:

Ռուսաստանի հարավային երկրամասի տնտեսական կյանքում 19-րդ հարյուրամյակի առաջին ողջ կեսի ընթացքում Գրիգորիոպոլը նկատելի դեր ուներ: Սակայն քաղաքը չարդարացրեց այն հույսերը, որ տածում էին նրա նկատմամբ ռուսական իշխանությունները: Երկրի հարավային ծայրամասում հայկական քաղաք-գաղութ հիմնադրելով, ռուսական կառավարությունն այն ընկալում էր ամենից առաջ որպես առևտրական քաղաք: Այդ այդպես էլ էր համենայն դեպս մինչև 19-րդ դարի առաջին երեսնամյակի վերջը: Սակայն արդեն դարի երկրորդ երեսնամյակին Գրիգորիոպոլը կորցրեց իր տնտեսական երբեմնի նշանակությունը: Հիմնական պատճառն այն է, որ հայաքաղաքն ուներ այնպիսի ուժեղ մրցակից, որպիսին էր բուռն զարգացող Օդեսան: Ռուսաստանի հարավի առևտրական նոր կենտրոնը դեպի իրեն ձգեց Գրիգորիոպոլի գրեթե ամբողջ խոշոր վաճառականությանը: Գրիգորիոպոլի հասարակության առևտրաարդյունաբերական շրջանները աստիճանաբար սկսեցին դուրս գալ ազգային շրջանակներից և վերաբնակվել Ռուսաստանի այն տնտեսական կենտրոններում, որտեղ ապահովվում էր նրանց առևտրական նախաձեռնության առավել լիակատար զարգացումը:

Գրիգորիոպոլի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած այդ խորը փոփոխությունները ի վերջո հանգեցրեցին Գրիգորիոպոլի վաճառականության և ձեռնարկատերերի առավել ազդեցիկ ներկայացուցիչների սերտաճմանը ռուս առևտրաարդյունաբերական բուժուազիայի հետ:

Սակայն չնայած Գրիգորիոպոլի հայերի՝ իրենց վարչաիրավական կարգավիճակը կորցնելուն և հայկական գաղութը հայ համայնքի վերափոխվելուն, նրանք շարունակում էին ապրել որպես մեկ միասնական ազգ՝ պահպանելով ազգային ոգին, մշակույթը և բարոյական հիմքերը:

Եվ միայն 1917 թ. հեղափոխական վայրիվերումները, իսկ փոքր-ինչ ուշ քաղաքացիական պատերազմի բոցերը կարողացան վերջ դնել Գրիգորիոպոլի հայության համախումբ գոյությանը: Խիստ հատկանշական է, որ հայերի վերաբնակեցման պատմությունը ճշտությամբ կրկնվեց, սակայն հակառակ ուղղությամբ: Գրիգորիոպոլի հայերը սկսեցին վերադառնալ Բեսարաբիա և այնուհետև Ռումինիա:

Քաղաքի հայ այն բնակիչների առաջին ալիքը, որոնք չցանկացան մնալ նոր իշխանության ներքո, լքեց հարազատ օջախը 1918-1919 թթ., վերաբնակվելով Քիշնևում և Բեսարաբիայի այլ վայրերում: Այդ արտագաղթի

վերջակետը դրվեց 1920 թ. փետրվարի 13–15-ին, երբ Կարմիր բանակը հետ մղեց գեներալ Դենիկինի զորքերին Դուբոսարի–Գրիգորիոպոլ շրջանից:

Հայ վերաբնակիչների երկրորդ, բայց առավել փոքր ալիքն ուղղվեց դեպի Ռումինիա ոչ միայն Գրիգորիոպոլից, այլև ամբողջ Բեսարաբիայից արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակշրջանում: Ուստիև հետպատերազմյան ժամանակ Գրիգորիոպոլում բնակվում էին միայն սակավաթիվ հայեր: Սակայն նույնիսկ ծերերը, այլևս չխոսելով երիտասարդների մասին, չգիտեին մայրենի լեզուն, բայց իրենց հայ էին զգում և ուրախանում հեռավոր հայրենիքից ստացած ամեն մի լուրի առթիվ: Նրանք չգիտեին նաև իրենց քաղաքի պատմությունը, սակայն հոգատարությամբ պահպանում էին ընտանեկան ավանդույթները և արևմտահայ խոհանոցի գաղտնիքները: Հայկական եկեղեցիներ արդեն չկային, բայց պահպանվում էր գերեզմանատունը, որը խնամվում էր Գրիգորիոպոլի մի բուռ հայերի առաջնորդ Արիստիդ Ավանեսովի կողմից:

Մոլդավիայի տարածքում շրջանային նշանակության քաղաք դարձած Գրիգորիոպոլի հայ համայնքի վերածնունդը սկսվեց 1990-ական թվականների սկզբին, այսինքն՝ քաղաքի 200-ամյակի նախօրեին: Գրիգորիոպոլի հայկական երիտասարդ համայնքը մեծ ջանքեր և եռանդ է գործադրում իրենց քաղաքի բարի ավանդույթները վերականգնելու, հայկական հուշարձանները բարեկարգելու և մայր Հայաստանի հետ ամուր կապերը վերականգնելու ուղղությամբ:

ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՌԱՓՆՅԱ ԾՐՋԱՆ

Հայ բնակչությունը Սև ծովի հյուսիս-արևելյան ծովափին երևան է գալիս համեմատաբար ավելի ուշ, քան Հյուսիսային Կովկասի այլ վայրերում: Եթե Կովկասյան գլխավոր լեռնաշղթայից դեպի հյուսիս հայերը բնակություն էին հաստատում և ապրում էին տեղացի ցեղերի շրջանում արդեն մի քանի դարերում, ապա Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան մասի և ծովափի միջև ընկած տարածքում հայերի բնակության համար պայմաններ ստեղծվեցին միայն տարածաշրջանը Ռուսաստանին միացնելուց հետո: Կովկասի սևծովյան ծովափն անցավ Ռուսաստանին 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի շնորհիվ, ընդամին Կովկասյան պատերազմի իրադարձությունների պատճառով ռազմական գործողություններն այստեղ շարունակվեցին մինչև 1864 թվականը:

Արդեն 1830-ական թվականների վերջին, ռուսական նավատորմի ծովակալ, հայազգի Լազար Սերեբրյակովի (Ղազար Արծաթագործյանի) նախաձեռնությամբ Անապա և Սուջուխ-կալե թուրքական ամրոցների տեղում սկսվեց Անապա և Նովոռոսիյսկ նավահանգստային քաղաքների շինարարությունը: Ռուս առաջին նորաբնակների, շինարարների և մասնագետների հետ միևտեղ այդ քաղաքներում բնակություն են հաստատում նաև հայերը: Նովոռոսիյսկի հայ համայնքի թվաքանակն, օրինակ, այնքան զգալի էր, որ արդեն քաղաքը հիմնադրելուց 11 տարի անց, 1849 թ., տեղի հայերն առաջ էին քաշում իրենց մոտ հայ քահանա ուղարկելու հարցը:

Սև ծովի Կովկասյան ծովափում հայերի և մյուս նորաբնակների համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծվեցին տարածաշրջանում խաղաղ իրադրության հաստատվելուց հետո: Իսկ հայերի արտագաղթի գլխավոր պատճառն օսմանյան Թուրքիայում հայ ազգաբնակչության նկատմամբ ազգային, սոցիալական և կրոնական կեղեքման հետագա սաստկացումն էր: Փախստական հայերի ներգաղթն այս տարածաշրջան առանձնապես ուժեղանում էր այն ժամանակաշրջաններում, երբ Թուրքիայում հայերի հետապնդումը ծայրաստիճան սուր ձևեր էր ստանում, վերաճելով ցեղասպանության, ինչպես այդ եղավ 1894–1896, 1909, 1915 թվականներին և հաջորդ մի քանի տարիներին: Կովկասի սևծովյան ափի հայ բնակչության հիմնական մասն էին կազմում և այժմ էլ կազմում են Փոքր Ասիա թերակղզու հյուսիս-արևելքում գտնվող հայկական պատմական Համշեն գավառից գաղթածները: Ցեղասպանության

կամ բռնի մահմեդականացման սպառնալիքից փրկվելով՝ տասնյակ հազարավոր համշենահայեր ուղղվեցին ծովափի երկայնքով կամ ուղղակի ծովով դեպի Ղրիմի և Կովկասի առափնյա շրջանները:

Ռուսական կառավարությունը իր հերթին շահագրգռված էր դեպի ծովամերձ շրջանները գործունյա բնակչության ներգրավմամբ, որը ծանոթ էր տեղի տնտեսական և աշխարհագրական պայմաններին: Բանն այն է, որ Կովկասյան պատերազմի հետևանքով արևմտյան Կովկասի լեռնաբնակ բնակչության՝ չերքեզների, ադիգեյցիների, աբխազների, աբազինցիների և այլոց մի նկատելի մասը լքել էր հարազատ վայրերը և վերաբնակվել Թուրքիայում: Հատկապես մարդաթափ էր եղել Սև ծովի հյուսիս-արևելյան ափը՝ Անապայից մինչև Ադլեր: Ցարական կառավարությունը ջանում էր այդ շրջանները բնակեցնել կազակներով կամ Ռուսաստանի միջին գոտուց գաղթած գյուղացիներով: 1862 թ. հրապարակվեց Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան նախալեռնային մասը Կուբանի կազակներով և այլ վերաբնակիչներով բնակեցնելու մասին կանոնադրությունը: Սակայն տնտեսավարության տեղական համակարգին, երկրամասին բնորոշ գյուղատնտեսական կուլտուրաներին և կլիմայական պայմաններին անծանոթ ռուս վերաբնակիչներն ի վիճակի չեղան յուրացնելու այդ շրջանները: Շատերը լքում էին այդ վայրերը: Այդ պայմաններում հայ և հույն բնակչության ներգաղթը Փոքր Ասիայից մեծապես նպաստեց խնդրի լուծմանը: Այն տարիներին, երբ վերաբնակեցումն ընթանում էր ոչ այնքան ուժգին, ռուսական իշխանությունները մարդիկ էին ուղարկում Արևմտյան Հայաստան, որոնք համոզում էին ծխախոտագործության, խաղողագործության, գինեգործության, եգիպտացորենի և այլ կուլտուրաների մշակման գիտակներին վերաբնակվել և նրանց հետ պայմանավորվում էին նախապես նշված վայրում վերաբնակվելու մասին: Արդեն 1860-ական թվականների վերջին այդ նպատակով Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության հանձնարարությամբ Թուրքիա էր մեկնել գյուղատնտես Խատիսովը:

Հայերի զանգվածային վերաբնակեցումը դեպի ծովամերձ վայրերը սկսվում է 1870-ական թվականների վերջերից, երբ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսական զորքերը թողեցին արևելյան Անատոլիայի իրենց գրաված շրջանները: Վերաբնակիչ հայերի հիմնական զանգվածը Համշենից և Սև ծովի առափնյակից գաղթածներն էին: Հայերը սկզբնապես վերաբնակվում էին փոքր խմբերով և լեռներում հիմնում էին ոչ մեծ (20-40 ծուխ) գյուղեր ու ագարակներ (Գոյթղ, Պերեվալնոյե, Գունայսկոյե և այլն): 40 ընտանիք բնակություն հաստատեց Ուչ-Դերեում՝ Սոչիի մերձակայքում: Հայերի կողմից յուրացվող վայրերը ոչ միայն անմարդաբնակ, այլև տնտեսական առումով լքված (անուշադրության մատնված) էին: Լքելով

երկրամասը, լեռնականները մորթում էին անասունները, ոչնչացնում ցանքերը, ավերում շինությունները:

Այսպիսով, վերաբնակիչները հայտնվում էին շատ ծանր պայմաններում: Սակայն մի քանի տարի անց երկրամասի տնտեսությունը սկսեց աստիճանաբար աշխուժանալ: Հայերը ցանում էին եգիպտացորեն, ցորեն, պահում (բուծում) էին կովեր, ոչխարներ, խոզեր, ձիեր: Նրանք Կովկասի սևծովյան առափնյա վայրերում ծխախոտ մշակելու բնագավառի առհվիրաններն էին: Այդ կուլտուրայի մշակման առանձին փորձեր հայերն արեցին տակավին 19-րդ դ. կեսերին: 1872 թ. Սոչիի օկրուգի հայերը հավաքեցին 1740 փութ, իսկ Վելյամինովսկի (Տուապսե) օկրուգում՝ չուրջ 2. 695 փութ ծխախոտ: Տեղի պայմանները նպաստավոր էին հայ վերաբնակիչների կողմից մշակվող («Տրապիզոն» և «Սամսոն») տեսակների (սորտերի) համար: Հիմնականում ստացվում էր բարձր որակի ծխախոտ, և շուտով այն դարձավ ծովամերձ վայրերի երկրագործական հիմնական կուլտուրան: 1903 թ. Սևծովյան նահանգում ծխախոտի մշակմամբ զբաղվում էին 68 գյուղերի բնակիչներ, ընդ որում, Սոչիի օկրուգում 925 պլանտացիաներից 675-ը (չուրջ 84 %-ը) մշակում էին հայերը[1]: Հայերը նաև հմուտ այգեգործներ էին:

Հայ և մյուս վերաբնակիչների ինտենսիվ գործունեության շնորհիվ ծովամերձ շրջանները թևակոխեցին բարգավաճման նոր շրջան: Այդ է վկայում, օրինակ, հողի գնի կտրուկ բարձրացումը: Եթե 1860 թ. այդ շրջանում մեկ դեսյատին հողի արժեքը մեկ ռուբլուց պակաս էր, ապա մի շարք տարիներ անց, այդ հողերի վրա հայերի տնտեսավարելուց հետո, այդ գինը բարձրացավ մինչև 180-200 ռուբլու: Ընդ որում, անճամբ հայերին հողաբաժին չէին տրամադրում, այլ թուլյատրում էին օգտվել դրանցից կապալավարձով, որը կազմում էր 50 կոպեկից մինչև 3 ռուբլի մեկ դեսյատինի համար: Բազում վարձակալ-հայեր կային, օրինակ, Սոչիի օկրուգում գտնվող կոմս Լորիս-Մելիքովի կալվածքում:

Հայ վերաբնակիչների ներգաղթի հետևանքով հայերի թվաքանակը Վելյամինովսկի օկրուգում հասավ մոտ 1000 մարդու, որոնցից 410-ը բնակվում էին Արմյանսկի չենում, 216-ը՝ Պոդխրեբտովյե, 107-ը՝ Պոլկովնիչյե գյուղերում: Մյուս չեներում հարյուրից պակաս հայ բնակիչներ կային:

Երկյուղ կրելով փախստականների էլ ավելի ուժգին ներգաղթից դեպի Կովկասի մերձսևծովյան ափը և երկրամասի ընդհանուր բնակչության թվակազմում նրանց տոկոսի բարձրացումից՝ ցարական վարչակարգը սկսեց նրանց դեմ այլևայլ խոչընդոտներ հարուցել: Այսպես, ռուսաստանյան հպատակություն ընդունելու ընթացքում նրանց համար զանազան դժվարություններ

[1] Минасян М. Г. Армяне Причерноморья, Ер., 1990, с.133-137.

էին ստեղծում: Որպես հպատակություն չնորհելու պայման առաջարկվում էր Ռուսաստանի հեռավոր մարզերում վերաբնակվելը, սահմանափակումներ էին մտցվում տնտեսական և հասարակական գործունեության մեջ:

Կյանքի կոչված, դեռ ավելին, առողջարանի վերածվող երկրամասն արդեն հրապուրիչ էր դառնում ռուս բնակչության համար: 1889 թ. հայտարարվեց, որ Կուբանի մարզի առափնյա մասը ռազմական նպատակներով որպես սեփականություն տրվում է կազակական զորքին: 1891 թ. հետևեց Կովկասյան փոխարքայության քաղաքացիական մասի հրամանատարի հրամանագիրը «թուրքական վտարանդիներին» արտասահման վտարելու մասին:

1893 թ. հրապարակվեց հրամանագիր՝ «Կովկասյան երկրամասի որոշ վայրերում անշարժ գույքեր որպես սեփականություն ունենալու և որպես ժամանակավորապես սեփականատեր լինելու և օգտվելու օտարերկրացիների իրավունքների մասին», որի համաձայն հողերի վարձակալություն թույլատրվում էր միայն ֆաբրիկային և գործարանային գործունեության համար: Քանի որ հայ ազգաբնակչության մեծ մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ, ապա ռուսական իշխանությունները սկսեցին դիմել երկրամասից հայերի և հույների բռնի արտաքսման[1]:

Սահմանափակումներ էին մտցվում նույնիսկ այն վերաբնակիչների համար, որոնք ընդունել էին ռուսական հպատակություն: Նրանց արական սեռի մեկ շնչին 5 դեսյատին «մշակված հողամասերը» միայն երեք տարվա տևողությամբ էր օգտագործելու թույլատրություն տրվում: Ընդ որում հատկացվում էին անհարմար տեղանքներ, և վարձակալների համար շատ դժվար էր այդ հողերը գյուղատնտեսական շրջանառության մեջ դնել: Շատերը հարկադրված էին լինում լքել իրենց օջախը:

Կառավարական այդ միջոցառումները նկատելի ազդեցություն չունեցան գաղութաբնակների ներգաղթի վրա, բայց բացասաբար անդրադարձան երկրամասի տնտեսական կյանքի վրա: Իշխանությունները հարկադրված էին լինում անտեսել այն իրողությունը, որ բազում վերաբնակիչներ հրաժարվում էին լքել տարածքները կամ էլ կարճ ժամանակ անց վերադառնում էին այնտեղ: Տարածաշրջանի հայ բնակչությունը չարունակում էր ավելանալ:

1896 թ. Կուբանի մարզի Սևծովյան օկրուգը վերակազմվեց Սևծովյան նահանգի (Նովոռոսիյսկ կենտրոնով), իսկ Սոչին և Տուապսեն ստացան քաղաքների և օկրուգային կենտրոնների կարգավիճակ: Սոչիի օկրուգի հայկական խոշորագույն գյուղերն էին՝ Վարդանեն, Ուչ-Դերեն և Վերին Լոռը, որտեղ բնակվում էին 300 հայ գերդաստան: Վելյամինովյան օկրուգում (բացի ժամանակում) հայերը բնակվում էին 24 շեներում և ունեին 678 ծուխ՝ 3748 շնչով: Այստեղ հայկական խոշորագույն գյուղերն էին Տենգինկան, Քերուկդերեն, Հոյտան, Դիմիտրինսկը, Յայլանը: Ընդամենը Սևծովյան նահանգում, 1897 թ. մարդահամարի տվյալներով, բնակվում էր 6285 հայ: Ընդ որում 3857 մարդ կամ 60 %-ից ավելին բնակվում էր Սոչիի օկրուգում:

Հայերի 1894-1895 թթ. նոր կոտորածները Թուրքիայում առաջացրին նրանց զանգվածային նոր փախուստ դեպի Կովկասյան սևծովյան ափը, որին չէր կարող դիմակայել ռուսական իշխանությունների ոչ մի չրջաբերական: Միայն Սոչիի օկրուգում երևան եկավ 22 հայկական նոր շեն, իսկ 1901 թ. օկրուգի հայ ազգաբնակչությունը կազմեց 5140 մարդ[1]: Հայ վերաբնակիչների հիմնական զանգվածը գալիս էր Սև ծովի հարավ-արևելյան ափից՝ Տրապիզոնից, Սամսոնից, Զորչամբից և այլ վայրերից:

Երկրամասում հայ բնակչության աճը (առանձին ժամանակավոր տատանումներով հանդերձ) շարունակվում էր նաև հաջորդ տարիներին: Ռուսաստանում 1905-1907 թթ. հեղափոխական իրադարձությունները հարկադրեցին վերացնել ազգային դպրոցներ և հասարակական կազմակերպություններ ստեղծելու մարզում եղած սահմանափակումները, որը նույնպես խթանեց փախստականների ներգաղթը: Այդ աղերսով (և հիմնվելով մի շարք այլ տեղեկությունների վրա) չափազանց նվազեցված պիտի համարել մոսկվացի հետազոտող Ն. Գ. Վոլկովայի տվյալները, որոնց համաձայն, 1886-1890 թթ. Սևծովյան օկրուգի հայ բնակչության թիվը չէր գերազանցում 2 հազար մարդուց, իսկ 1911 թ. նույնիսկ իջել է մինչև 1400 մարդու: Ընդ որում, քաղաքային հայ բնակչությունը (Սոչի, Տուապսե, Նովոռոսիյսկ) կազմել էր իբրև թե ընդամենը 328 մարդ: Այդ թվերը ստացվել էին տեղի պաշտոնյաների ամփոփագրերից վերցված տվյալները հաշվելու հիման վրա, որոնք հաշվառման էին վերցնում միայն ռուսահպատակներին և գրանցված վերաբնակիչներին: Մինչդեռ հայերի փաստական թվաքանակը մի քանի անգամ ավելի էր: 1908 թ. Սևծովյան նահանգում բնակվում էր 8.222, իսկ 1913 թ.՝ արդեն 15.427 հայ[2]: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Անապայի հայ բնակչությունը կազմում էր 2100, իսկ Նովոռոսիյսկինը՝ 1600 մարդ:

Վերաբնակված հայ բնակչությունը մշտապես առաջ էր քաշում գաղափարը հայ բնակչություն ունեցող վայրերում ազգային դպրոցներ բացելու հարցը, սակայն հանդիպում էր իշխանությունների նկատելի դիմադրության:

---

[1] Адобашьян В. Л. Из истории армянского населения на территории Краснадарского края.- „Вестник обш. наук„, 1968, N° 7, с. 52-53.

[1] Ա. Ստոնյան Ա.Գ., Համշենահայության պատմությունից, - Բանբեր Հայաստանի արխիվների, 1979, N° 3, էջ 118:

[2] Адобашьян В.Л. Նշվ. աշխ., էջ 53:

Միայն այն գյուղերում, որտեղ հաջողվում էր կառուցել հայկական մատուռներ, և կազմավորվում էին եկեղեցական համայնքներ, կային ծխական եկեղեցական դպրոցներ: Ընդ որում դրանց ծրագրերը խստորեն վերահսկվում էին պաշտոնական գերատեսչությունների կողմից, որոնք ձգտում էին հայոց լեզու ուսուցանելու ժամերը կրճատել: Հօգուտ ազգային ծրագրերի և դպրոցների թվաքանակի մեծացման, մեղմացում արվեց 1905 թ. հեղափոխությունից հետո: 1908 թ. Սոչիում ստեղծվեց օկրուգի հայկական դպրոցների ընտրովի խորհուրդ, որը մշակում էր ծրագրեր, հոգ էր տանում դասագրքեր ձեռք բերելու մասին, հրավիրում էր դասատուներ: 1908–1909 ուսումնական տարում Սոչիի օկրուգում կար տասը, իսկ 1916թ.՝ 12 հայկական դպրոց: 1913 թ. ծխական դպրոցներից զատ, բացվեց նաև ուսումնարան:

1905 թ. հասարակական վերելքի շնորհիվ հայ ազգաբնակչություն ունեցող քաղաքներում ստեղծվեցին Հայկական ազգային խորհուրդներ: Սոչիում Ազգային խորհրդի նախագահ դարձավ սոցիալ-դեմոկրատ Հ. Հակոբյանը: Հայկական խորհուրդներ ստեղծվեցին նաև Տուապսեում և Ադլերում: Բազում հայեր՝ քաղաքական տարբեր կուսակցությունների անդամներ (դաշնակցականներ, մենշևիկներ, բոլշևիկներ և այլն) մասնակցեցին ինչպես 1905–1907 թթ., այնպես էլ 1917 և հաջորդ տարիներին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխական իրադարձություններին: Փետրվարյան հեղափոխությունից հետո Սոչիում դեպուտատների սովետի նախագահ դարձավ Ս. Տեր-Գրիգորյանը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում հայերի ցեղասպանությունն առաջ բերեց փախստական հայերի նոր ալիք դեպի Ռուսաստան: Չնայած հայերի փախուստի ճանապարհները փակելու թուրքական իշխանությունների ջանքերին, տասնյակ հազարավոր փախստականներ կարողացան կտրել ռազմաճակատի գիծը և անցնել ռուսական զորքերի կողմից գրաված տարածքները կամ էլ փրկվել ծովով, մի կերպ հասնելով մինչև կովկասյան ափ: Դրա հետևանքով Սևծովյան նահանգի հայ բնակչության թիվը ավելի մեծացավ, կազմելով 1916 թ. մոտ 18 հազ. մարդ: Հետագայում այստեղ բնակություն հաստատեց հայ բնակչության նաև այն մասը, որը լքել էր Թուրքիային անցած Կարսի մարզը և Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները:

Կովկասի մերձսևծովյան ափերը Ռուսաստանի սակավաթիվ տարածաշրջաններից մեկն է, որտեղ հայ ազգաբնակչությունը պահպանվել է և չի նվազել խորհրդային ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում: Հայ ստվար բնակչություն ունեցող բոլոր բնակավայրերում գոյություն ունեին հայկական դպրոցներ: 1926 թ. նախկին Մայկոպի օկրուգի լեռնային մասում ստեղծվեց Հայկական ազգային շրջան՝ կենտրոն դարձնելով Ելիզավետպոլսկայա

ստանիցան, որը հետագայում վերանվանվեց Շահումյան: Հայերը կազմում էին այդ շրջանի բնակչության երեք քառորդը: Հայկական դպրոցներից զատ, շրջանում գոյություն ունեին ազգային ինքնավարության այլ տարրեր՝ ռադիոհաղորդումներ հայերեն լեզվով, հայկական թերթ: Հայկական ազգային շրջանը գոյատևեց մինչև 1953 թվականը: Չնայած հաջորդ տարիներին հայկական ազգային կյանքի սահմանափակմանը, հայերի հոծ բնակությունը (առանձնապես գյուղական վայրերում) նպաստում էր նրանց ազգային-մշակութային առանձնահատկության պահպանմանը:

1980-ական թվականների վերջերից Կրասնոդարի երկրամասի սևծովյան ափերի հայ բնակչությունը վերստին նկատելիորեն չաուացավ ի հաշիվ Ադրբեջանից և Հայաստանի այն շրջաններից եկած մարդկանց, որոնք տուժել էին երկրաշարժից և Ադրբեջանում հայերի նկատմամբ կիրառված վայրագություններից: Այնտեղ նորից վերաբացվում են հայկական դպրոցներ, հրապարակվում են թերթեր, կյանքի են կոչվում հասարակական կազմակերպություններ:

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբամելիք (Աբամելեք) Ա. Դ.-316
Աբամելիք Ս. Դ. - 311, 317, 342
Աբամելիք-Լազարյան(ներ) 311, 317, 321, 342, 344
Աբամելիքներ (Աբամելիքովներ) 307, 311, 316
Աբաս - 298
Աբասյաններ - 22
Աբգարյան Գ. Վ. - 23
Աբդլա - 22
Աբդուլ-Համիդ - 123
Աբել, երեց - 33
Աբելյան Հ. - 290, 315
Աբելյան Ն. - 314
Աբխազիա - 204
Աբովյան Խ. - 291, 425
Աբրահամ, վաճառական - 165, 294
Աբրահամ Վաղարշապատցի - 311
Աբրահամյան Ա. Գ. - 7, 8
Աբրամով Մ. - 469
Ագապիտ - 46
Ագուպովիչ (Հակոբյան) Կ. - 152
Ադամ Հովհաննես - 146
Ադամյան Թամար - 344
Ադամյան Հովհաննես - 345
Ադամյան Պետրոս - 290, 315, 341
Ադեոդատ Կարաչոնյի - 147
Ադի-Ղայղաչ - 211
Ադլեր - 492, 496
Ադոբաշյան Վ. Լ. - 494, 495
Ադոնց Նիկողայոս - 338, 340
Ադրբեջան - 321, 497
Ադրիանապոլիս - 107, 111, 117, 138
Ազնավուր - 137
Ազովի ծով - 162, 294, 414, 417, 437
Ազովի փաշա - 169
Ալամդարյան Հ. - 278, 311
Ալաջաջյան Հովհ. - 116
Ալաջալյան Դ. - 443
Ալեքսանդր, Լեհաստանի թագավոր - 92
Ալեքսանդր, լիտվական մեծ իշխան - 53, 55
Ալեքսանդր 1-ին - 205
Ալեքսանդր 2-րդ - 224, 344
Ալեքսանդր 3-րդ - 342, 344
Ալեքսանդրիա - 46, 90, 163, 232
Ալեքսանյան Գ. - 387
Ալեքսեյ Միխայլովիչ - 169 - 171, 244, 299, 300
Ալթայ - 20
Ալթունյան - 151
Ալթունովիչներ - 77
Ալի-Հասան - 44
Ալիշան Ղևոնդ - 7, 115, 136
Ալպիար (Արփիար) - 135
Ալպոյաջյան Ա. - 7
Ալպրեխ, Յան - 67
Ալփ-Արսլան - 30
Ախթալա - 48
Ախշարումով - 291, 343, 344
Ախսարայ - 155
Ախց - 47
Ակաչ - 147
Աքերման - 50
Ակինյան - 6, 52, 78, 135
Աղաբաբյան, ուսումնարան - 287, 288
Աղաբաբյան Հովհ. - 278
Աղաբաբյան Ն. - 277, 278
Աղաբաբով Ա. - 292
Աղաբալյան Ա. - 385
Աղազար (Լազար) - 305
Աղազարով Մերկուլ - 302
Աղամալ Ա. - 150
Աղամալ Ռ. - 150
Աղամալ Օ. - 150
Աղամալներ - 150
Աղաջանյան Ս. - 443
Աղվանք (Առան), Աղվանից աշխարհ - 22, 43, 361
Ամասիա - 30
Ամատունի - 128
Ամբրոսիոս - 146
Ամերիկա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ) - 3, 18, 19, 39
Ամիրխանյան Ա. Ա. - 299
Ամիրյան Հ. - 320
Ամիրով Դավիթ - 274
Այդին - 169
Այսրկովկաս - տե՛ս Անդրկովկաս
Այվազյանց (Այվազովսկի) Գաբրիել - 82, 211, 215, 217-220, 223-227, 485
Այվազյան (Այվազովսկի) Հովհաննես - 200, 207, 210, 224, 228, 229, 338
Այտոս - 111, 113, 115
Անանյան Ժ. Հ. - 4, 16, 17, 249, 317
Անանյան Ի. - 317
Անանով Ի. - 318, 320
Անապա - 205, 445, 491, 492, 495
Անասյան Հ. - 11, 13
Անատոլ - 134
Անատոլիկոն, թեմ - 25
Անգլիա - 99, 470
Անդրանիկ Օզանյան - 123
Անդրեաս, Ֆրա - 180
Անդրեասյան Ալեքսան - 487, 488
Անդրեև Լ. - 341
Անդրեև Վ. - 166
Անդրեևո - 352
Անդրկովկաս - 29, 37, 43, 44, 49, 52, 231, 235, 236, 239, 241-243, 249, 258, 266, 269, 271, 312, 327, 337, 338, 341, 346, 348, 351, 356, 358-360, 370, 385, 387, 388, 409, 422, 424, 428, 447
Անդրկուբան - 359
Անհայտ հեղինակ - 60
Անի - 30, 32, 48, 49, 75, 110, 149, 155, 172
Անձևացի Տաճատ - 26
Աննա, արքայադուստր - 44
Աննա Իոաննովնա - 328
Աննա, Նովի Սադից - 146
Անոփյան Գ. - 441
Անտիոք - 44
Անտոնի, դ.-ր - 87, 104
Անտոնյան Ա. Գ. - 495
Աշերբերգ, Ֆոն - 361
Աշոտ Պատրիկ - 27
Աշոցք - 2
Ապարան - 47
Ապետ - 133
Ապոստոլ - 152
Ապրակսին Ֆ. Մ. - 172, 304
Ապրեսյան Աբել - 289
Աջիբոլ - 167, 170

Առաջավոր Ասիա - 27, 43, 44, 163
Առաքելով Մ. - 277
Առաքելովներ - 307
Առյուծի որդի Աղաբեկ - 232
Առուստամով - 292
Ասարբեկով Ի. - 318
Ասիա - 3, 19, 83, 163
Ասլան էրզրումցի - 187
Ասլանյան Ա. - 129
Ասլանյան Թ. - 385
Ասլանյան Մ. - 385
Ասողիկ, Ստեփանոս Տարոնեցի - 6, 28, 44
Ասորիք - 31, 32
Աստվածատրյան Ա. - 387
Աստվածատրյան Ռ. - 292
Աստվածատրյանց Յ. - 382
Աստվածատուր - 137
Աստվածատուր (Բոգդան) - 168
Աստրախան - passim
Աստրախանի թեմ - 383
Աստրախանի խանություն - 230
Աստրախանի նահանգ - 352
Ասրյան Ս. - 386
Ավագյան Ք. - 18
Ավան - 49
Ավանեսյան Ասվատուր - 461
Ավանեսով Արիստիդ - 490
Ավանեսով Սարգիս - 298
Ավանեսով Վառլամ - 321, 344
Ավգուստ Սեմյոն - 311
Ավեդիգ - 150
Ավեդիկովիչ - 86
Ավետիս (ծաղկող) - 189, 190, 193
Ավետիք, ղրիմահայ վաճառական - 169
Ավետիք, վաճառական - 137
Ավետով, քիշնևցի - 217
Ավետիսյան Հ. Ա. - 2
Ավետիքյաններ, Նովի Սադից - 150, 151
Ավճալով Մակար - 273
Ավստրիա - 58, 136-138, 143, 147
Ատեն - 48
Արաբական խալիֆաթ - 22, 43
Արադաց - 147
Արամյան Ճ. - 118
Արարատյան երկիր - 422
Արարատյան Հարություն - 336
Արգանա - 120
Արզանյան Հ. և Դ. եղբայրներ - 376
Արիստակես վարդապետ, խարբերդցի - 102
Արիստոտել - 197
Արխանգելսկ - 242, 243, 250, 297, 301, 325
Արծաթագործյան Ղ. Մ. - տես Սերեբրյակով Լ. Մ.
Արծաթպանյան Հմայակ - 443
Արծն - 30
Արծրունի Գ. - 119
Արծրունի Թ. - 6
Արղության Բարսեղ, Երկայնաբազուկ - 458, 471
Արղության Կոնստանդին - 483, 484
Արղության Հովսեփ, Երկայնաբազուկ, ռուսահայ թեմի առաջնորդ - 199, 265, 268, 279, 332, 335, 336, 355, 363, 365, 392, 439, 440, 456-458, 466, 479, 480
Արղության Մովսես - 360
Արղությաններ (գերդաստան) - 316, 472, 475
Արմավիր - 4, 15, 16, 357, 359, 384, 386, 387, 439, 445-455
Արմենիա, փոխարքայություն - 23
Արմենիտե - 109
Արմենիցա - 109
Արմենոխոր - 108

Արմենկիչ - 148
Արմենկո - 134
Արմենկովիչ - 134
Արմյանե Վելիկիե - 52
Արմյանսկ, Արմյանսկի բազար - 158, 160, 162, 167, 194, 209, 212, 220, 228
Արմյանսկի շեն - 493
Արշակ (Սաֆարով) - 344
Արշակունիներ - 47, 336
Արշարունի - 314
Արտազ - 17
Արտաշես - 461
Արտեմ - 257
Արցախ - 149, 172, 360, 361
Արուչ - 26
Արութին Ալեքսանդր - 141
Արքայական (Կոստանդնուպոլսյան) ճանապարհ - 134
Արևելյան Եվրոպա - 12, 50, 58, 64, 66-68, 157, 188, 296
Արևելյան Թրակիա - 120, 125
Արևելյան Կովկաս - 349, 370, 371
Արևելյան Հայաստան - 36-38, 40, 114, 337, 421, 482
Արևմտյան Բուգ - 50
Արևմտյան Եվրոպա - 83, 90, 188, 234
Արևմտյան իլխանություն - 35
Արևմտյան Կովկաս - 445
Արևմտյան Հայաստան, նաև Արևմտահայաստան - 36-38, 40, 120, 122, 123, 125, 127-129, 217, 286, 319, 321, 343, 358, 428, 496
Արևմտյան Սիբիր - 234
Արևմտյան Ուկրաինա - 4, 9, 11, 36, 58, 63, 66, 68-69, 74, 75, 106
Ափեմյան - 343
Աքիա - 120
Աքմեչեթ - տե՛ս Սիմֆերոպոլ
Աքսայ - 352
Աֆրիկա - 3, 19
Բաբա-Կադիր - 169
Բաբաջանյան Մասեհ - 423
Բաբաև - 449
Բաբեկ - 169
Բաբերդ - 187
Բագրատ 4-րդ - 45
Բագրատունի, Բագրատունիներ - 25, 27, 28, 43, 45, 49
Բագրատունիների, Բագրատունյաց թագավորություն - 28, 29
Բազիյանց - 312
Բաթաք - 123
Բաթիյ (Բաթու) խան - 235
Բաթում - 39, 40, 222
Բաթու-Սարայ - 231, 235, 236
Բալակլավա - 158, 161
Բալեյովիչներ - 77
Բալիև Նիկիտա - 316
Բալթիկ ծով - 50, 64, 325
Բալկան Թորես - 124
Բալկանյան երկրներ - 42, 112
Բալկանյան թերակղզի - 42, 44, 133, 134
Բալկաններ - 23, 26, 30, 35, 107, 113, 123, 133, 138
Բալչիկ - 117
Բալցեր Օսվալդ - 63
Բալու - 39
Բալուղյան - 452
Բախչելի - 161
Բախչիսարայ - 89, 156, 158, 159, 168, 174, 178

Բախչիսարայցև Խ. - 427
Բախրով Գ. - 279
Բակուրյան Աբաս - 109
Բակուրյան Գրիգոր - 109
Բահաթրյան Արմեն - 221
Բահաթրյան Ա., մանկավարժ - 438
Բաղդասարով, ղրիմահայ վաճառական - 167
Բաղդասարով Յագյա - 169
Բաղդատ - 28
Բաղեշ - 39
Բայա - 137
Բայբուրթյան Վ. - 17
Բայկով Ա. - 429
Բանատ - 147, 148
Բաշինջաղյան Գևորգ - 338
Բաչկա Պալանկա - 152
Բաչկո-Բողրոշյան գավառ - 148
Բաչկովո - 109, 110
Բասեն - 29
Բատորի Ստեֆան - 93-95
Բատտալ-Բաշինսկ - 417
Բարանով - 449
Բարանովսկի Բոգդան - 63, 89
Բարատինսկի - 317
Բարդա-Պարտավ - 43
Բարդուղիմեոս, առաքյալ - 284
Բարդուղիմեոս, ավագ քահանա - 172
Բարթիկյան Հրաչ - 26, 28, 107, 108, 133
Բարթոլոմեոս Գասպար - 140, 141
Բարթոլոմեոս Փիրի - 147
Բարխուդարյան Մկրտիչ - 314
Բարխուդարյան Վ. Բ. - 4, 11, 395, 403, 407, 432
Բարխուդարյանց Ս. - 361
Բարծր Դուռ - 88, 121, 138
Բարոնչ Սաղոկ - 7, 62, 87, 104
Բարտաշովիչներ - 77
Բարտոլդ Վ. Բ. - 239
Բաքու - 39, 172, 258, 283, 289, 347, 350, 427
Բեգլյարով Արտեմ - 274
Բեդելյան Հ. - 424
Բեզբորոդկո Ի. - 397
Բեզդեշ - 236
Բելբեկ, գետ - 161
Բելգրադ - 132, 134-145, 149, 150, 152, 153
Բելգրադ Դանուբյան (գերմանական), տես Բելգրադ
Բելզեցկի Ստանիսլավ - 99
Բելի, քաղաք - 242
Բելոգորսկ - 155
Բելսկիներ - 301
Բելսկի Լազար - 301
Բեհբութով Բարսեղ - 360
Բեժանով Ի. - 365
Բենկլիևներ - 210
Բեշտաու - 360
Բեոդրա - 147
Բեչերեկ - 148
Բեռլին - 428
Բեռնարդովիչ Բեռնարդ - 87
Բեսարաբիա - 37, 207, 211, 214, 215, 217, 310, 429, 432, 456, 457, 467, 485, 489
Բերամենց Ս. - 149
Բերբերյան Մ. - 428, 441, 442
Բերբերյան Ռ. - 436, 442
Բերբերով Ն. - 340
Բերգտալ - 476
Բերդավան - 368
Բերկե խան - 236
Բերկե-Սարայ - 231, 235, 236, 239
Բերնատովիչ Նիկոլայ - 91

Բերնատովիչ Քրիստոֆ - 91
Բերոյան Մկրտիչ - 337
Բեքթեթա, գետ - 354
Բժշկյանց Միհաս - 7, 45, 60, 62, 85, 103, 104, 113-115, 149, 229
Բիխարի գավառ - 150
Բիկաչ - 147
Բիլյար - 233
Բիշոֆ Ֆերդինանդ - 62, 63, 79
Բիտոլիա - 107
Բլագոյ Դմիտրի - 311
Բյուզանդական կայսրություն - 23, 42-44
Բյուզանդիա - 21-30, 32, 33, 42, 44, 46, 107, 108, 231
Բոգդան, վոյեվոդ - 80
Բոգդան Պետր - 114
Բոգդան Սեմովոյ - 55
Բոգդանով Բոգդան - 244
Բոգդանով Նիկիտա - 258
Բոգդանովիչ Դ. - 376
Բոգդանովներ - 301
Բոգորոդսկի գավառ - 304
Բուլղար, Բուլղարներ - 232
Բողոսով Եղուպ - 299
Բոյաջիևներ - 316
Բոյաջյան Ա. - 118
Բոսնիա - 134
Բոսֆոր - 423
Բրանիչևո - 133
Բրաուն Էդուարդ - 135
Բրեստ - 56, 100
Բրյուսով Վալերի - 319, 320
Բրուն Ֆ. - 170
Բրունս Գ. - 79
Բուդաղյան Գևորգ - 323
Բուդաղով Մովսես - 338
Բուդիմ - 144, 151
Բուզայան Հակոբ - 143
Բութանիա - 48
Բուլղարիա - 4, 8, 16, 26, 32, 44, 68, 107-112, 114-133, 153
Բուխարեստ - 154
Բուղդան - 36
Բունիաթյան Սարգիս - 461
Բունիաթով Գալուստ - 259
Բուրգազ - 111, 114, 115, 120, 127
Բուրջալով Գեորգի - 315
Բուրջալյան Մ. - 290
Բուրսա - 89, 102

Գաբրիել, արքեպիսկոպոս - 145
Գաբրիել, վարդապետ, նվիրակ - 187
Գագիկ, Կարսի թագավոր - 30
Գագիկ 2-րդ - 29
Գալանոս Կղեմես - 103
Գալեմճյան Տ. - 127
Գալիչ - 48, 104
Գալիցիա - 6, 45, 46, 50, 52, 66, 70, 74, 79, 83, 92, 164, 165
Գալիցյան իշխանություն - 52
Գալիցյան Ռուսիա - 58, 64 - 67, 70
Գալճայան Պ. - 130
Գալյուստով Ղ. - 298
Գալստյան Կարապետ - 285
Գալստյան Զ. Հ. - 4, 11, 12
Գալֆայան Ա. - 215
Գալֆայանց Տ. - 381
Գամեր Արշավիր - 130
Գայանե, կույս - 48
Գանձակեցի Կիրակոս - 6, 35
Գանձասար - 235, 267
Գասպարյան Ն. - 111

Գասպարյաններ - 450
Գասպարով, արմավիրցի - 449
Գասպարով, վաճառական - 318
Գավաճյան - 118
Գարամրզյան Լուցիա - 486
Գարջույլ - 26
Գդանսկ - 64, 100, 165
Գեբերշտայն - 239
Գելցեր Հ. - 27, 28, 31
Գեորգիևսկ - 354, 359, 372, 417
Գերասիմով Սիլվեստր - 260, 261
Գերլախ Ստեփան - 134
Գերմանիա - 135
Գերմանիկե - 26
Գերով Նայդեն - 117
Գիդիկով Արթին - 117, 118
Գիլան - 349
Գիլդենշտեդ - 352
Գիքո - 137
Գլինկա Սերգեյ - 327
Գլիննա, շեն - 476
Գլիննայա, գյուղ - 463
Գլյուկստալ - 476
Գյանջումցյան - 379
Գյուլիքևխյան Հայկ - 289
Գյուր Հաբլ - 445
Գնիլայա - 54
Գոգոլ Ն. - 421
Գոգոյան Մ. - 439
Գոթլանդ - 42
Գոլգյան Ա. - 385
Գոլդշմիտդ Ի. - 175
Գոլուբովիչ Դանիել - 80
Գողթն - 156
Գոյթղ - 492
Գոստինցև - 282
Գորգինյան - 290
Գորդլևսկի - 311
Գորկի Մ. - 341
Գորնո Պավլիկենի - 108
Գվադանյի, գեներալ - 147
Գրաբովեցկի Վ. - 11, 75
Գրանիլշչիկով - 282
Գրիգոր, արքեպիսկոպոս - 482
Գրիգոր, բելգրադցի - 137
Գրիգոր, եպիսկոպոս - 67, 68, 111
Գրիգոր, երեց - 190
Գրիգոր, ղրիմահայ վաճառական - 169
Գրիգոր, վարդապետ, կեսարացի - 101, 102
Գրիգոր Բ - 31
Գրիգոր Զաքարյան - 456, 467, 479-481
Գրիգորի - 249
Գրիգոր Լուսավորիչ - 45, 48, 457
Գրիգոր Մագիստրոս - 28
Գրիգոր Մանուկ - 152
Գրիգոր Նարեկացի - 192
Գրիգոր Տաթևացի - 192, 197
Գրիգոր Տղա - 49, 109
Գրիգորիոպոլ - 4, 16, 17, 37, 357, 362, 456-490
Գրիգորիս - 26
Գրիգորյան Գ. - 16, 344
Գրիգորյան Եղիազար - 261, 262
Գրիգորյան Վ. Ռ. - 11, 12, 59, 237
Գրիգուրով - 343
Գրիգորովիչ - 88
Գրիգորև Դավիթ - 250
Գրիգորև Եղուպ - 300
Գրիգորև Իվան - 298
Գրիգորև Մատվեյ - 300
Գրին Ա. - 341
Գրիցենկո - 346, 349

Գրյունվալդ - 52
Գրոզնի - 382, 417
Գրոզնու ամրոց - 359, 417
Գրոմնիցկի Տադեուշ - 63, 85
Գուդովիչ - 279
Գունայսկոյե - 492
Գուրջինյան Մովսես - 285
Գուրև Ս. - 390
Գևորգ, թեմակալ - 486
Գևորգ Դ, կաթողիկոս - 377-379, 425, 486
Գևորգ Ե, կաթողիկոս - 426
Գևորգ, քահանա - 484
Գևորկով Գ. - 212

Դադուրովիչ Հարություն - 99
Դաղստան - 351, 356, 361, 384, 385
Դաղստանի երկրամաս - 383
Դամասկոս - 44
Դանգուլով - 449
Դանիել, կաթողիկոս - 478, 479
Դանիել Աստվածաբան - 187
Դանիել Գալիցկի - 67
Դանիել Պետրոսով - 205
Դանուբ - 113, 115, 135, 144, 150, 151, 154
Դաշկևիչ Յա. - 11, 13, 63
Դաստակով - 344
Դավթյան Ստեփան - 456
Դավիդով Սաֆար - 300
Դավիդով Օսիպ - 327
Դավիթ, բելգրադցի - 137
Դավիթ, գրիչ - 193, 194
Դավիթ, կաթողիկոս- 478, 480
Դավիթ, սաղմոսագիր - 279
Դավիթ, վրաց արքայազն - 479
Դավիթ Անհաղթ - 180, 192, 197
Դավիթ-Բեկ - 172
Դավիթ երեց - 190
Դավիթ Զաքարյան - 146
Դավիթ Շինարար - 45
Դավրիժեցի Առաքել - 6, 36, 60, 101, 156
Դարանաղցի (Կամախեցի) Գրիգոր - 6, 36, 134, 187
Դարբինյան Ռուբեն - 128
Դաուդով - 298
Դելակեու - 476, 477
Դելյանով Արտեմ (Դիլանչյան) - 271, 277
Դելյանով, Դ. Ա. - 291
Դելյանով Իվան (Դիլանչենց) - 345
Դելյանովներ - 307
Դելվեթյան Դ. - 217
Դենիեր Հ. - 290
Դենիկին, գեներալ - 490
Դեշտի Ղիչաղ - 232
Դեսպոտովաց - 147
Դեվոյան (գնդապետ) - 460
Դերբենդ - 15, 33, 346-350, 354, 356, 360, 361, 366, 370, 383, 386
Դերբենդսկոյե - 356
Դերոնաենես (տեր Հովհաննես) - 182
Դիարբեքիր - 120, 123
Դիլանչյանց Մինաս - 255, 259
Դիլ Շառլ - 25-27
Դիլոյան Վ. Ա. - 15, 305
Դիմիտրինսկ - 495
Դիոգենես Ռոման - 31
Դմիտրի Դյադկո - 66
Դմիտրի Դոնսկոյ - 166
Դմիտրի Շեհն - 168
Դմիտրի Ռոստովսկու ամրոց - 390, 457
Դնեստր - 50, 456-458, 472, 475, 477, 478
Դոլնո Պավլիկենե - 108

Դոն - 10, 37, 42, 43, 53, 175, 231, 257, 294, 353, 362, 389, 390, 393, 395, 397-400, 404, 405, 407, 410, 411, 413, 414, 418, 420-423, 425-437, 440-442, 444
Դոնի շրջան - 198, 201, 269
Դոնի Ռոստով - 346, 429
Դոսպևսկի Ստանիսլավ - 117
Դորպատ - 376, 425
Դվին - 26, 42, 43
Դրասխանակերտցի Հովհաննես - 33
Դրշապետ, գյուղ - 24
Դուբոսարի - 457, 458, 462, 470, 472, 473, 476, 490
Դուբրովնիկ (Ռագուզա) - 135, 136
Դուկաս, կայսր - 30
Դունա, գետ - 149
Դևոլ - 107, 109

Եգերուհայ - 445
Եգիպտոս - 17-31, 90
Եդեսիա - 356, 369
Եզյան Կարապետ - 338, 343
Ելիզավետա Պետրովնա - 307, 329
Ելիզավետգրադ - 470
Ելիզավետոպոլ (Գերլա) - 145
Ելիզավետոպոլսկայա, ստանիցա - 496
Եկատերինա 2-րդ - 198, 257, 267, 332, 389, 391, 458, 459, 468, 488
Եկատերինոդար - 16, 358, 380, 381, 386, 387, 431, 432, 450
Եկատերինոսլավ - 198, 201, 405, 408, 416, 418, 429, 458-460
Եկատերինոսլավի նահանգ - 212, 413, 430
Եկատերինոսլավի փոխարքայություն - 460
Եկմալյան Մակար - 338
Եղիա, վարդապետ, Կոստանդնուպոլսեցի 142
Եղիշե, պատմիչ - 335
Եվպատորիա - 156, 158, 172, 206, 207, 209, 220, 222-223
Եվրոպա - 3, 19, 44, 57, 68, 83, 125, 161, 163, 235, 242, 253, 269, 297, 299, 345, 469
Երանոսյան Երանոս - 116, 117
Երզնկա - 39
Երեմյան Ս. - 127
Երմենկո - 134
Երտևցյան Ն. - 455
Երուսաղեմ - 6, 36, 103, 132, 134, 135, 141, 422, 451
Երևան - 6-8, 10, 11, 13-17, 19-20, 23, 29, 35, 53, 59, 63, 107-109, 113, 134, 136, 180, 190, 194, 245, 258, 266, 298, 301, 305, 314, 337, 358, 390, 392, 395, 398, 407, 422, 424, 425, 479, 493
Եփրեմ Ա., ռուսահայ թեմի առաջնորդ, 1809-ից՝ ամենայն հայոց կաթողիկոս - 374, 467, 479, 481, 482

Ջագրեբ - 147
Ջադիկեւիչ Ջախարիաշ - 87
Ջաեչար - 133
Ջախարիա, Թամանի իշխան - 168
Ջախարևկա, գյուղ - 471
Ջակշևսկա-Դուբասովա - 63
Ջամոյսկի Յան - 76
Ջամոյսկիներ - 99
Ջամոստիե - 68, 69, 76, 77
Ջանգեզուր - 39, 349
Ջարդարյան Ռ. - 130
Ջարիֆյան, ամուսիններ - 386
Ջաբար Շերիմանյան - 305
Ջաքարիա, գրիչ - 190
Ջաքարիասիևիչ - 66
Ջեմուն - 150, 152
Ջեյթուն - 116
Ջենազի - 149
Ջենազի Սիմոն - 149, 150
Ջենոբ Գլակ - 41
Ջիմորովիչ Բ. - 86, 89, 90
Ջինենց - 266
Ջինովև - 266
Ջմյուռնիա - 164
Ջոլոչև - 68, 85
Ջորյան Ռոստոմ - 128
Ջվարթնոց - 47
Ջվերև Մոիսեյ - 460
Ջուբով Պլատոն - 457

էլբեյ Օրմենին - 55
էլդարյան Մարիամ - 285
էլեմիր - 147
էլեշդ, կալվածք - 150
էմինեկ - 184, 185
էմին Մկրտիչ - 218, 315, 317
էյնաթով, խոջա - 345
էնդերի - 347
էչկա - 147
էջմիածին - 67, 73, 101, 103, 111, 121, 187, 203, 210, 214, 223, 267, 337, 367, 377, 384, 387, 391, 421, 422, 424, 426, 427, 451, 480, 481
էսկի Ղրիմ - տես Հին Ղրիմ
էրդուքսել - 148
էրզրում - 107, 120, 134, 172
էրմենսկո - 109
Թադեոս Ավրամեց - 190
Թադեոս եպիսկոպոս - 180
Թադեոս, առաքյալ - 284
Թադևոս վարդպ. Մարուկյան - 280
Թադևոսյան Եղիշե - 311
Թաթար Բազարջիք - 115
Թաթարստան - 141
Թաման - 43, 168, 205
Թամանյան Ալեքսանդր - 338, 345
Թամանյան Յու. - 10
Թամանցևներ - 316
Թավչյան Աննա - 216
Թավրիզ - 17
Թավրիզով - 282
Թեմերնիկ - 257, 412
Թեմիր Խան Շուրա - 360, 383
Թեոդիկ - 119, 154
Թեոդոսիա (տես նաև Կաֆա) - 155, 156, 161, 170, 172, 175, 198-202, 205-207, 209, 215, 218, 220, 223, 224, 227, 228, 434
Թեոդոսուպոլիս - 107
Թեոդորյան Ս. - 215
Թեոդորոս, կաթողիկոս - 68
Թեոդորոս Սետիշեցի - 145, 146
Թեոփանես - 26
Թերեք, գետ - 249, 300, 347, 349-351, 370, 371
Թերեքի ավազան - 354, 356, 361
Թերեքի մարզ - 359, 382, 384
Թերզյան Մ. - 130
Թըռնովո - 107, 110, 115
Թերքի, քաղաք- 346
Թիֆլիս - 6, 33, 289, 331, 337, 338, 358-361, 371, 377, 380, 387, 390, 422, 424, 428, 442, 449

Թյությունճյան Գ. - 129
Թյությունճյան Մ. - 121, 130
Թոխատ - 156
Թովմա Մեծոփեցի - 192
Թորոս - 108
Թորոսյան (Տարասով), մոսկվահայ վաճառական - 318
Թորոսյան (Տարասով) Ալեքսանդր և Միքայել - 452
Թորոսովիչ Ալմաստ - 86, 87
Թորոսովիչ Յան - 87
Թորոսովիչ Նիկոլ - 104
Թոփալյան (Թոփալով), Թոփալյաններ, ղրիմահայ մեծահարուստներ - 210, 221, 224, 229
Թոփլի - 196
Թոփչյան Գևորգ - 222
Թոփտի - 161, 390, 396
Թոփուզյան Հ. - 17, 18
Թոքատեցի Հակոբ - 105
Թոքատեցի Մինաս - 78, 105
Թրակիա - 23, 24, 26, 107, 115, 132
Թրուայա Անրի - 449
Թումանյան Արշակ - 319
Թումանյան Հովհ. - 340
Թումանով Պավել - 461
Թումանով Ս. - 210
Թումանով Վ. - 221
Թումանովիչ Քշ. - 80
Թուշմալյան Հովհ. - 379
Թուշմալյան Ք. - 379
Թուրքեստան - 33
Թուրքիա - passim
Թևանով Գր. - 469

Ժամհարյան Ի. - 317
Ժելեզնովոդսկ - 360
Ժիգմոնդֆալա, գյուղ - 148
Ժիտոմիր - 54
Ժնև - 128
Ժորապ-Վրացի - 298
Ժուկովսկի Վ. - 421
Ժուպանիա, գավառ Բանատում - 148

Իբար - 133
Իբն Միսքավայհի - 43
Իգնատիոս - 151
Իգնատոսյան Օհան - 272
Իզմայիլ - 457
Իզմայլով Իվան - 330
Իզմիրյան Եսայի - 385
Իթիլ - 231
Իլախաց երկիր - տես Լեհաստան
Իլյա Օրմենին - 55
Իլյին Լուկա - 304, 327
Ինկերման - 158, 161
Իոհան, մեծ մագիստրոս - 80
Իոհան 22, Հռոմի պապ - 180
Իոսիֆ 2-րդ, կայսր - 148
Իոսիֆովկա - 458
Իսախանով Արտեմ - 330
Իսախանով Բոգդան - 257, 330
Իսախանով Մանվել - 257, 330
Իսախանով Նիկիտա - 330
Իսախանովներ - 330
Իսահակ Կիշ - 148
Իսահակյան Ավետիք - 340
Իսահակյան Մ. - 384
Իսանիչ Յա. Դ. - 11
Իսեցուց (Իսեցուցյան) - 151
Իսմիյան Տ. - 129
Իսպանիա - 184

Իսրայել Օրի - 171, 265, 291, 302, 326
Իվան Ասեն - 108
Իվան Բունիաթով - 259
Իվան 3-րդ - 168
Իվան Խոջամալով - տես Խոջամալյան
Իվան Կարապետ - 328
Իվանես, ղրիմահայ վաճառական - 172
Իվանիս, հայ վաճառական Կիևում - 55
Իվանով Իվան - 300
Իվանով Պյոտր - 88
Իվանով Սեմյոն - 169
Իվանով Սեմյոն Սերգեևիչ - 258
Իվանով Սերգեյ - 258, 259, 262
Իվանով Ֆեոդոր - 167
Իվանո-Ֆրանկովսկ - 58
Իվաշկևիչ Ջախար - 91
Իտալիա - 35, 108, 443
Իտեբեյ - 147, 148
Իտյակ Թարխան - 166
Իրան passim
Իրիզժանով Իդիլ- 298

Լադո - 133
Լադոգա - 42
Լազար - 148
Լազարյան, Լազարյաններ - Լազարյան գերդաստան - 15, 217, 258, 265, 297, 305, 307-315, 317, 321-323, 330, 334, 335, 344, 376, 377, 393, 479-481, 485, 487, 488
Լազարյան (Եղիազարյան) Աղազար - 305, 330
Լազարյան Խաչատուր Հովհակիմի - 219, 311, 312, 342, 483
Լազարյան Հովակիմ - 311
Լազարյան Հովհաննես - 305, 307-309, 311, 312, 330-332, 334-336, 342, 483, 484, 486
Լազարևո - 148
Լազարևա Ելիզավետա - 317
Լազարֆելդ - 148
Լառիա - 30
Լաստիվերտցի - 6, 29, 30, 45
Լատինովիչ Գր. - 98
Լատո - 133
Լարինա Վ. - 365
Լաուրա - 221
Լեհաստան - 4, 6-9, 11, 12, 36, 50-54, 56, 58-60, 62-64, 66-69, 72, 75, 78, 80, 82-93, 95, 99-101, 103, 104, 106, 112, 136, 149, 151, 163, 165, 168, 170, 463
Լեհաց աշխարհ - 134
Լեմբերգ - տես Լվով
Լենինգրադ - տես Պետերբուրգ
Լենքորան - 370
Լեո - 314
Լեոպոլդ - 136
Լեռնային Ղարաբաղ - 2
Լերմոնտով Մ. Յու. - 267, 316, 317
Լիանոզով Գ. - 317, 318
Լիանոզով Ս. Մ. - 283
Լիանոզովներ - 283
Լիդին Վ. - 311
Լիեպայա - 39
Լինինիչենկո Ա. Ա. - 50, 51, 63, 65, 87, 88
Լիսանով - 55
Լիվոռնո - 140, 141
Լիտվա (Լիտվական մեծ իշխանություն) - 50, 52, 56, 92, 94
Լյուբլին - 68, 91, 93
Լյուբոմիրով Պ. Տ. - 256

Լյուբոմիրսկի - 85
Լոզինսկի Վ. - 85, 88, 96
Լոնդոն - 150, 335
Լորիս-Մելիքով - 316, 344, 382, 493
Լվով - 8, 9, 13, 50-61, 63-68, 70-80, 83, 85, 86, 89-92, 94, 96-105, 164, 165, 181, 187
Լուկա Շիրվանով - 259, 305
Լուկաչ Լազար - 101, 147, 148
Լուկաչֆալա - 148
Լուկինո - 148
Լուկիչևո - 148
Լուսեղենով - 221
Լուսիկով Գրիգոր - 241
Լուցկ - 50-52, 58, 64, 67-69, 100, 101
Լևաշով Վ. - 351, 361
Լևոն Հայկ - 25
Լևոն Միլան - 55

Խաղամյան Թ. - 442
Խաղամյան Հ. - 443
Խազարական թագավորություն (պետություն) - 43, 230
Խազարստան - 231
Խաժակ Գարեգին - 128
Խալաթյանց Գր. - 315
Խալդարյան Գր. - 279, 315, 336, 339, 393, 439
Խալիբյան Ա. - 215, 217, 218, 220, 224-227, 420, 433, 434
Խաղտյաց գավառ - 30
Խամշլի - 161
Խայալ - 161
Խանզադյան Ց. - 319
Խաչատրյան Ա. Ն - 265
Խաչատրյան Կարապետ - 289
Խաչատրյան Ս. - 322
Խաչատրյան Վ. Ա. - 4, 14, 249, 281
Խաչատուր, եպիսկոպոս - 82
Խաչատուր, վարդապետ - 187
Խաչատուր, քահանա - 139
Խաչատուր Կաֆայեցի - 193
Խաչերեցյաններ - 450
Խաչի - 137
Խաչիկյան Լ. Ս. - 6, 49, 53, 230, 236
Խաչիկյան Տ. - 130
Խասկովո - 115
Խասպեկ, երեց - 190, 191
Խաստատով - 291
Խաստատով Ակիմ - 267
Խաստատով Բոգդան - 267
Խաստատով Հովակիմ - 344
Խաստատովներ - 304, 325
Խաստատով Վասիլի - 257
Խատիսյան (Խատիսով) - 128, 492
Խարկով - 418, 439, 471
Խարցու փաշա - 172
Խարևիչովա - 63
Խեգեդիշ Ա. - 148
Խերսոն - 470, 480, 488
Խերսոնես - 154, 161
Խոզ, հայկական գյուղ Ղրիմում - 161
Խոթին - 13
Խոչենց Մակար - 337
Խոջա Արթին - 117
Խոջամալով Իվան - 258
Խոջյան եղբայրներ - 375
Խովանեց Չեսլավ - 75
Խոր (Խորեան) - 41
Խորասան - 34
Խորիվ - 41
Խորձայնի անտառ - 30
Խորվաթիա - 4, 132, 147, 151
Խռմաճյան Խաչիկ - 425
Խրամ - 24
Խրիմ - տես Ղրիմ, նաև Հին Ղրիմ
Խրիմյան Հայրիկ (Մկրտիչ), կաթողիկոս - 119, 121, 288, 425
Խուբով Գևորգ (Պռոշյան) - 279, 336, 375
Խուդաբաշյան - 312, 461
Խութուլ-բեյ - 182
Խումարյան Աշոտ - 289

Ծառուկևիչ Դանիել - 85
Ծատուրյան Ալ. - 314, 319
Ծերենց - 119
Ծմանդավ - 30
Ծովային Հայաստան - 159, 165, 188

Կաբելա - 182
Կազան - 230, 231, 234, 235, 237, 238, 240, 294, 296, 375, 387
Կազանի խանություն - 238
Կազանկա, գետ - 238
Կազարաք - 155, 158, 159, 162, 186, 190
Կազբեկ Գ. - 371
Կազիմիր 3-րդ, Մեծ - 67, 70-72, 84
Կազիմիր 4-րդ - 53
Կազիմիր Յագելոնչիկ - 70, 72, 77
Կազիմիր Յան - 87, 89, 95, 97
Կալինիկ - 108
Կալկաթա - 423, 431, 486
Կալոյա - 108
Կալոչա (Կլուժ) - 145
Կակոս - 168
Կահիրե - 7, 90
Կաղանկատվացի Մովսես - 43
Կաղիօղլու Հովհ. - 152
Կաճկաճյան Թ. - 385
Կամա - 232, 234
Կամենեցացի Հովհաննես - 13, 105
Կամենեց-Պոդոլսկ (Կամենեց, նաև Կամենից) - 9, 12, 50, 52, 53, 58, 59, 64, 67-69, 76, 80, 84, 87, 94, 95, 100, 101, 104, 105, 110, 112, 136, 187
Կամենսկայա - 431
Կամպանիայի մարզ - 182, 183
Կամպանյան (Կամպանով) Գրիգոր - 261, 266, 335
Կայալով - 434
Կայարես - 182, 183
Կայզերական Գերմանիա - 2
Կայծունի, Թումանյան Արշակ - 319
Կանկրին Ե. Ֆ. - 473
Կաչալով Վասիլի - 316
Կասանո-Յամա - 356, 369
Կասպից ծով - 42, 43, 166, 230, 236, 241, 254, 266, 269, 281, 304, 328, 360
Կասպար - 55
Կավառնա - 117
Կատարինե - 144
Կարագեորգի - 152
Կարագյոզ - 152
Կարա-Մուրզա Ք. - 229, 387, 455
Կարամուրզայաններ - 224, 316
Կարաչոնյի - 148
Կարապետ, նվիրակ - 188
Կարապետ, վաճառական - 167
Կարապետյան Ս. - 387
Կարապետյան Ռ. - 222
Կարապետյան Հակոբ - 461
Կարապետով (Կարատով) - 291
Կարգինսկի - 351
Կարին - 24, 26, 39, 107, 134, 135, 156
Կարինյան Ա. - 321

Կարինյանց Հովհ. - 386
Կարլ - 151
Կարս - 30, 172, 427
Կարսի մարզ - 39, 496
Կարստ Ի. - 79
Կաֆա (տես նաև Թեոդոսիա) - 36, 53, 90, 114, 134, 139, 140, 154-159, 162-165, 168, 170, 173-197, 295
Կեղծ Դմիտրի - 105, 106
Կենտրոնական Եվրոպա - 50
Կեոզլև, Կոզլևե, նաև Կոզլով, տե՛ս Եվպատորիա
Կեոքթեփե - 161
Կեպպեն Պ. - 159
Կեսարիա - 102
Կերբեր Մարիա - 151
Կերչ - 161, 207, 223
Կիդոշ Տիմոշկա - 170
Կիզել - 331
Կիզլար - 37
Կիլիկիա, Կիլիկյան հայկական պետություն (թագավորություն) - 22, 30, 32, 35, 68, 135, 157, 163, 164, 187, 188
Կիկլե - 135
Կիյ - 41, 42
Կիշ - 147, 148
Կիպրոս - 36, 120
Կիս Յ. Պ. - 11
Կիսլովոդսկ - 360
Կիրիլով Ս. - 170
Կիր-կոր - 154
Կիրկորովիչներ- 77
Կիրկոր Օդիրկովիչ - 55
Կիև - 8, 12, 13, 41-43, 46-49, 51-57, 59, 63, 66, 248, 296
Կիևյան Ռուսիա - 41-45
Կիևո-Պեչորյան վանք - 46
Կլեկ - 147
Կյոզալ - 142
Կյումուշլի Մարկոս - 172
Կնունյանց Բոգդան - 344
Կոժին - 170
Կոխովսկի Վ. Վ. - 458, 459, 460
Կոկինոս Պ. - 18
Կոհլեր Ի. - 79
Կոմնան- 30
Կոմնեն Աննա - 107
Կոնտարինի - 239
Կոսովո - 133, 134
Կոստանդին, կաթողիկոս - 67
Կոստանդին 5-րդ - 26, 107
Կոստանդին Կոպրոնիմոս - 24
Կոստանդինով Գասպար - 354
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս) - 23, 26, 27-30, 36, 39-41, 48, 56, 88, 90 ,91, 103, 111, 117-121, 123, 125, 127, 129, 134, 138, 143, 153, 154, 162-166, 172, 182, 184, 186-188, 217, 257, 278, 296, 381, 385, 423, 424, 440, 442, 469, 479, 484
Կովկաս - 2, 4, 31, 37, 39, 40, 42, 127, 163, 200, 204, 212, 217, 222, 230, 234, 248, 249, 263, 269, 295, 297, 309, 316, 334, 335, 352, 357-359, 363, 388, 389, 408, 414, 417, 440, 442, 450, 491-493
Կովկասյան լեռնաշղթա (լեռներ) - 350, 491
Կովկասյան ծովափ - 491
Կովկասյան մարզ - 373
Կովկասյան փոխարքայություն - 494
Կոտելնիկյանց Հարություն (Կոտելնիկով Ա. Ն.) - 291, 340, 341
Կոտորյան ծովածոց - 134
Կորխմազյան Է. - 10

Կորնելիուս դը Բրուին - 244
Կորշ Ֆ. Ե. - 311
Կորոլենկո Վ. Գ. - 292
Կրակով - 59, 68, 91-93, 100, 165
Կրասնոդար- 497
Կրետե - 135
Կրիլոս - 48
Կրիկոր - 55
Կրիմսկի Ա. Ե. - 311
Կրիպյակևիչ Ի. Պ. - 11, 63
Կրիվոնոս Ն. Կ. - 11, 13, 75
Կրում - 26, 108
Կուար - 41
Կուբաթով Հովսեփ - 273
Կուբան - 351, 369, 384, 445, 492, 494
Կուբանի մարզ - 380, 447, 449
Կուբանի շրջան - 269
Կուլիկովո - 166, 190
Կուլչիցկի Վ. Ս. - 11
Կուպրին - 341
Կուսիկյան - 385
Կուսիկյաններ - 450
Կուտի - 58
Կուտուզով - 457
Կուրեննկա - 54
Կուրղինյան Շ. - 442
Կուրց Վ. Գ. - 247

Հաբսբուրգների կայսրություն (միապետություն), Հաբսբուրգներ - 136-138, 147
Հալաբով - 271
Հալաջյան Կարապետ - 292
Հալաջով Վարդերես - 420
Հալեպ - 44
Հախվերդով Բոգդան - 329
Հախվերդև - 449
Հակոբ, էրզրումցի - 144-146
Հակոբ, վանական - 145
Հակոբ, ֆրա - 180, 192
Հակոբ Ղրիմեցի - 192
Հակոբյան Ա. - 129
Հակոբյան Վ. Ա. - 6, 11
Հակոբջան - 174
Հակոբջանյան Անդրեաս - 453
Հակուբ-Հաբլ - 445
Համբարձումյան Համազասպ - 315
Համբաածումյան Վիկտոր - 315
Համշեն - 491, 492
Հայաստան - passim
Հայաստանի Հանրապետություն - 1
Հայկական ազգային շրջան - 496
Հայկական զառիթափ - 235
Հայկական թումբ - 151
Հայկական Կիլիկիա - տես Կիլիկիա
Հայկական պարիսպ (Թեոդոսիայում) - 196
Հայկական փողոց (Լվովում) - 58
Հայ-Վենետ - 7
Հայրապետ Ավետիք - 147
Հայրապետ, Խաչուկի որդի - 150
Հայրապետյան Կ. - 420, 424
Հայրապետյան Հ. - 129
Հայրապետով Կ. - 217, 218
Հանս Դարնշվամ - 114
Հաշտարխան - տե՛ս Աստրախան
Հաշտենից գավառ - 30
Հաջի - Գիրեյ - 184, 193
Հաջի Թարխան - 239
Հաջի Ղազար դի Գրիգոր - 150
Հասան Ջալալյան - 236
Հատուկայ - 445
Հարավային Բուլղարիա - 120
Հարավային Եվրոպա - 50

Հարավային Ռուսիա - 51, 52, 64
Հարավային Ռուսաստան - 176, 432, 475
Հարավային Ֆրանսիա - 108
Հարավ-Արևմտյան Ռուսիա - տե՛ս Գալիցիա
Հարավսլավիա - 133
Հարություն, որդի Հովհաննես Լազարյանի - 309
Հարություն, քահանա - 139
Հարությունյան Ա. - 441
Հարությունյան Գասպար - 461
Հարությունյան Հ. - 386
Հարությունյան Վ. - 47
Հարությունյան Տիգրան - 340
Հարկ, կայսր - 25
Հեռավոր արևելք - 234, 269
Հերցոգովինա - 134
Հինոյյան Ստ. - 129
Հին Հայաստան - 48
Հին Ղրիմ - 7, 155, 158, 159, 161, 162, 173, 175-177, 189, 190, 193, 194, 199, 200, 201, 203, 205, 206, 209-213, 223, 228
Հին Մաջառ - 354, 355
Հին Ռուսիա - 4, 8, 41-43, 48
Հին Սարայ - 294
Հյուսիս-արևելյան Կովկաս - 346, 350
Հյուսիսային Բուլղարիա - 113, 120
Հյուսիսային Կովկաս - 1, 2, 4, 13-15, 19, 21, 36, 230, 249, 251, 341, 346, 347, 350, 354, 357-359, 367, 368, 373, 374, 378, 384, 386-388, 411, 415, 417, 419, 448, 450, 491
Հյուսիս-արևելյան Ռուսիա - 235
Հյուսիսային Հունաստան - 132
Հյուսիսային Պարսկաստան - 34
Հնդկաստան - 36, 90, 150, 330, 336, 346, 424, 440, 479
Հոլանդիա - 302, 411
Հոմեր դը Հել - 398
Հոյտա - 495
Հոնենց - 48
Հովակիմ - 190, 309
Հովակիմյան Ա. - 4
Հովասափ Ապարանցի - 180
Հովհաննես, գրիչ - 190
Հովհաննես, եպիսկոպոս - 187
Հովհաննես (Յանկո) - 137
Հովհաննես, Նատերի որդի - 190
Հովհաննես Ալեքսանդր - 146
Հովհաննես Ավագերեց - 105
Հովհաննես Գևորգ - 139, 140
Հովհաննես Լազյան - 146
Հովհաննես Մանուկ - 137
Հովհաննես Մարգար - 146, 147
Հովհաննես Մկրտիչ - 194
Հովհաննես Սմբատ - 28
Հովհաննիսյան, բժիշկ - 385
Հովհաննիսյան Աշոտ - 6, 321
Հովհաննիսյան Հովհաննես - 311, 314, 340
Հովհաննիսյան Հովսեփ - 311, 336, 337
Հովհաննիսյան Մ. Լ. - 4, 11, 12
Հովնան, առևտրական - 142
Հովնանյան Ս. Վ. - 16
Հովսեփ Էմին - 265, 266
Հովսեփ Իզբիլև - 259
Հովսեփ Ղազար - 141
Հովսեփ Մինաս - 146
Հովսեփյան Վարդան - 149
Հորդա - 294
Հռիփսիմե, կույս - 48, 146
Հռոմ - 51, 60, 83, 96, 100, 103, 135, 139, 143, 180, 215
Հուլիոս - 31

Հուլուպա - 112
Հունանյան Վարդան - 104
Հունաստան - 123, 124
Հունգարիա - 92, 108, 151, 163
Հուստինիանոս 1-ին, կայսր - 23, 42

Ղազան - 155
Ղազանչի - 2
Ղազար Դեմետրի - 139
Ղազար Փարպեցի - 33
Ղասաբյան (Ղասապյան) Զ. - 16, 129
Ղարաբաղ - 39, 349, 361, 427
Ղարադաղ - 17
Ղարաջալիլ - 356, 366
Ղարասու, տես Ղարասուբազար, այժմ՝ Բելոգորսկ - 155, 158, 159, 162, 175-177, 179, 187, 189, 190, 197, 199-203, 205-207, 209, 212, 213, 220, 223, 224
Ղափան - 113, 172
Ղզլար - 210, 257, 265, 269, 274, 276, 279, 328, 330, 344, 347, 350-354, 356-358, 360-366, 368-379, 382, 384-386, 392, 439
Ղզլարի շրջան - 439
Ղշլավ - 161
Ղրիմ - passim
Ղրիմ, քաղաք - տես Հին Ղրիմ
Ղրիմ-Գիրեյ - 178
Ղրիմի թերակղզի - 170
Ղրիմի խանություն - 158, 168, 170
Ղփչաղ - 232
Ղուկաս, կաթողիկոս - 363, 459, 478
Ղևոնդ, պատմիչ - 6, 22, 25

Ճալալատին - 193
Ճինգոզյան Կ. - 4

Մագդեբուրգ - 50
Մագնիցկի Մ. - 375
Մադաթով Վալերիան - 113
Մազիրով Վ. - 343
Մաթևոսյան Արտ. - 6
Մալխասյան Հ. - 441
Մալխասյանց Ստեփանոս - 338
Մալոռուսիա - 417
Մակարիև, գյուղ - 240
Մակարով Իվան - 299
Մակարով Սերգեյ - 278
Մակարով Վասիլի - 303, 304
Մակարովներ - 304-345
Մակեդոնիա - 28, 107, 115, 120, 124, 132, 133
Մակինցյան Պողոս - 319, 321, 322
Մահմեդ, մահմեդականության հիմնադիր - 180
Մահմեդ 2-րդ, սուլթան - 184, 193
Մահտեսյան Է. - 229
Մաղաքիա - 192
Մամա - 190, 193
Մամաջանյան Գ. - 377
Մամաջանյան Մարգար - 385
Մամիկոնյան, տոհմ - 25
Մամիկոնյան Արտավազդ - 25
Մամիկոնյան Ստեփան - 315, 319
Մամուրյան Մ. - 119
Մայկոպ - 358, 496
Մայսուրյան Օլգա - 291
Մանազկերտ - 31
Մանանդյան Հակոբ - 338
Մանասև - 375, 376
Մանդինյանց Ս. - 384, 441
Մանո - 167
Մանսուրով Ն. - 167, 169
Մանվել, նպարավաճառ - 141

Մանվել Գյումուշխանեցի, վարդապետ - 210, 214, 223, 466, 467, 480, 482, 484, 485
Մանվելյան Վահան - 128
Մանվելով Ե. - 370
Մանույլով - 329
Մանուչարյան Մակար - 335
Մանուչարով Մակար - 331
Մանուչարովներ - 329
Մանքերման - 52
Մառ Ն. - 32, 34, 41, 338
Մավյան Հակոբ - 121
Մատթեոս 1-ին, կաթողիկոս - 219
Մատթեոս 2-րդ Իզմիրլյան, կաթողիկոս - 426
Մատթեոս Մաղաքյան - 149
Մատյուշկին Մ. Ա. - 171
Մատվեյ Իսաև - 255
Մատվեև Արտամոն - 310
Մատվեև Կարապետ - 300
Մատվեևներ - 304
Մարաղա - 17
Մարանդ - 17
Մարաշ - 26, 156
Մարդերիսովիչ Բեդրոս - 99
Մարինա Մնիշեկ - 105
Մարիուպոլ - 395, 413
Մարիուպոլի օկրուգ - 400
Մարկոս Կյումուշլի - 172
Մարկոս, բելգրադցի - 137
Մարկովիչ Գեորգի - 152
Մարսել - 39
Մարտին Աղաբեկ - 138
Մարտիրոս եպիսկոպոս - 348
Մարտիրոս, քահանա - 187
Մարտիրոս Ղրիմեցի - 114, 191, 193, 194
Մարտիրոսյան Ա. Ա. - 114, 194
Մարտիրոսյան Կարապետ - 150
Մարտիրոսյան Հ. - 17
Մարտիրոսյան Վ. - 167
Մարտիրոսյան Տ. - 130
Մգլեն - 107
Մելիտենե - 23, 26, 107
Մելիքենցյան Ս. - 285
Մելիքենցև Ա. - 283
Մելիքենցև , ֆաբրիկատեր - 316
Մելիքյան Ռոմանոս - 387
Մելիք-Օհանջանյան Կարապետ - 311
Մելիքսեդեկ, կաթողիկոս - 101
Մելիքսեթ-Բեկ - 11, 49, 375
Մելխիոր - 148
Մելնիկով Գրիշկո - 55
Մելնիկով Պ. - 271
Մելնիչուկ Յ. Ս. - 11
Մելքոնյան Հ. - 129
Մելքոնով-Եզոկով - 412, 418
Մելտե - 41
Մեծ Բուլղար, Մեծ Բուլղարներ - 231, 232-235, 237
Մեծ Կաբարդա - 352, 353
Մեծ Հայաստան - 159, 188
Մեծ Հայք - 44, 48, 461
Մեծ Նովգորոդ - 240, 294
Մեծ Սալա - 390
Մեհմեդ-Գիրեյ - 89
Մենգլի-Գիրեյ - 168, 169, 179, 184, 185
Մենշիկով Ա. Դ. - 327
Մենսիհյան Գաբրիել - 152
Մեսեյան Գ. - 340
Մեսրոպ, արքեպիսկոպոս - 101
Մեսրոպ, կաթողիկոս - 67
Մեսրոպ Գ. - 111
Մեսրոպյան Հովսեփ - 151
Մերոդին - 120

Մերզին Կարապետ - 172
Մերկուրև Վասիլ - 167
Մերհամլի - 124
Մերծավոր արևելք - 6, 10, 17, 21, 40, 166, 167, 203, 234, 236, 239, 269
Մերծբալթիկա - 39
Մերծդանուբյան տարածքներ - 26
Մերծկասպիա - 294, 348-350
Մերծկասպյան շրջաններ - 249
Մերծկարպատներ - 9
Մեքքա - 238
Միացյալ Բուլղարիա - 120
Միզանդրոնցև - 282
Միլլեթ Գ. - 132
Միլլեր Վ. Ֆ. - 311
Միխայիլ, թագավոր - 61
Միխայիլ, միտրոպոլիտ - 133
Միխայլո Լվովիչ - 169
Մինասյան Էլիազ - 486
Մինասյան Կատարինե - 486
Մինասյան Հ. - 118
Մինասյան Մատթեոս - 151
Մինասյան Մ. Գ. - 493
Մինասյան Պետրոս - 151
Մինաս Չերազ - 426
Մինաս վարդապետ, Տիգրանյան - 265, 267, 302, 303, 326, 347
Մինաս, քահանա - 187
Միներալնիե Վոդի - 360
Մինինխ - 160
Մինորսկի Վ. Ֆ. - 311
Միշար - 152
Միշկո Արուսիենով - 55
Միշկո Դ. Ի. - 11, 54, 55
Միջերկրական ծով - 42, 414, 469
Միջին Ասիա - 20, 31-33, 231, 232, 239, 241, 249, 256, 269
Միջին արևելք - 6, 17, 239, 269
Միջին Պովոլժիե - 230, 232, 234
Միջին Վոլգա - 238
Միսիրյան - 221
Միսկինովներ - 316
Միրզախանյան - 130
Միրզախանովներ - 307
Միքայել, վարդապետ, նվիրակ - 187
Միքայելյան Վարդգես - 1-4, 10, 11, 19, 45, 158, 167, 390, 400
Միքայել Սեբաստացի, վարդապետ - 143
Միքայելով Թաթոս - 250
Մխիթար, վանահայր - 142
Մխիթար Գոշ - 59, 70, 72, 162, 187, 392
Մխիթար Գոսեցի - 236
Մխիթարյան Խ. - 387
Մխիթարյան միաբանություն, Մխիթարյաններ - 111, 150
Մխիթարյաններ, Վենետիկի - 141, 142, 149, 151
Մխիթարյաններ, Վիեննայի - 118, 142, 151, 152
Մխիթարով - 279
Մկրտիչ, բելգրադցի - 137
Մկրտիչ, գրիչ - 193
Մկրտիչ, քահանա - 187
Մկրտիչ էմին - 311, 315, 317
Մկրտիչ Նաղաշ - 187
Մկրտչյան Ս. - 279
Մկրտում Գալստյան - 255
Մյասնիկյան Ալեքսանդր (Մարտունի) - 319, 335
Մյասնիկյան Ս. - 441
Մոգիլյով - 42

Մոզդոկ - 15, 37, 274, 276, 352-354, 356, 358, 360, 362-366, 368-370, 372, 373, 378-380, 382, 384-386, 392, 439
Մոզդոկի գավառ - 356
Մոզդոկի շրջան - 356
Մոլախալիլ - 356, 366
Մոլդավիա (Մոլդովա) - 16, 35, 36, 50, 56, 64, 83, 110, 112, 200, 440, 472, 485, 490
Մոլնար-Գեորգ - 151
Մոլտո-Վալաքիա - 151
Մոմջյան Բ. - 212, 224
Մոսկով Արթին - 117
Մոսկովյան իշխանություն - 165, 235, 294, 295
Մոսկովյան պետություն - 170, 248
Մոսկովյան Ռուսիա - 248
Մոսկվա - 4, 13, 15, 16, 36, 37, 53, 54, 88, 92, 105, 165-171, 217, 230, 234, 238, 240, 243, 244, 249, 250, 253, 256-258, 267, 282, 294-324, 326, 327, 329-332, 342, 344, 371, 374, 384, 387, 393, 412, 414, 418, 420, 432, 434, 439, 443, 471
Մովսես - 33
Մովսես Բաղրամյան - 265
Մովսես Երևանցի - 136
Մովսես Խորենացի - 336
Մորավա - 133
Մորդվինով Ն. Ս. - 176
Մորիկ, կայսր - 23, 24
Մորոդին Օրմենին - 55
Մսերյանց Զարմայր - 313, 316
Մսերյանց Մսեր - 311, 313
Մսերյանցներ - 313
Մսկուր - 356, 360
Մսկուրի շրջան - 354
Մուղալենց (Մուղալյան) - կուսակալ հայ իշխան Կազարաթում - 159, 162
Մուշ - 116, 172, 422
Մուրադ, «դեսպանական անձ» - 169
Մուրադխան Ն. - 135
Մուրադյան վարժարան - 150, 215
Մուրադյան Ա. - 129
Մուրադյան Պ. Ա. - 453
Մուրատովիչ Սևերին - 88
Մուրատովիչ Սեֆեր - 88
Մուրզաևներ - 210
Մուրթազ, Խոջա - 241

Յաբլոնովսկի Ստանիսլավ - 99
Յագելլո Վլադիսլավ - 92
Յազլովեց - 68
Յալթա - 160, 161, 228
Յակոբսոն Ա. - 10
Յակովլև, ղրիմահայ վաճառական - 167
Յակովլև Յակուբ - 170
Յաղուբյան - 343
Յամբոլ - 115, 128
Յայլաև - 495
Յան Ավագ - 87
Յանկո - 137
Յանկով Մոստր - 147
Յասի - 353
Յավեր փաշա - 124
Յավորով Պերո - 122
Յարալյան Վ. - 385
Յարալով, նավապետ - 271, 272
Յարակ - 150
Յարոսլավ, քաղաք Գալիցիայում - 68
Յարոսլավ Իմաստուն - 47
Յարոսլավ Վլադիմիրովիչ - 49
Յարոսլավլ - 294

Յոանեսկու Անդրանիկ - 121
Յոզեֆ - 146
Յոհան Վիլդ - 114
Յուզբաշյան Կ. - 45
Յուխտ Ա. Ի. - 14, 251, 253, 255, 261
Յունան - 114
Յուսուպովներ - 304
Յուսուֆ - 205
Յուրի Գիչ - 88

Նազարբեկյան Ավետիս - 128
Նազարյանց Ստեփան - 217, 311, 313, 335, 425, 430, 437
Նազարով Միքայել - 266, 335
Նալբանդյան Հովհաննես - 229
Նալբանդյան Միքայել - 218, 291, 311, 313, 314, 344, 398, 423, 424, 426-428, 432, 442
Նալբանդովներ - 210
Նալչիկ - 417
Նախիջևան-Բեսարաբիայի հայկական թեմ - 215, 217, 225, 310, 437, 485
Նախճավան - 24
Նահատակյան Նահապետ - 435
Նայդորֆ - 476
Նատեր - 173, 187, 189, 190
Նեբոլսին Գ. - 256
Նեժին - 167
Նեմիրովիչ-Դանչենկո - 320
Նեոպլանտ - տե՛ս Նովի Սադ
Նեսվիտա - 390
Ներեդիցա - 48
Ներսես Աշտարակեցի - 203, 214, 215, 422, 467, 481, 483
Ներսես Կաֆայեցի - 186, 191
Ներսես Մոյզեսովիչ - 98
Ներսես Շնորհալի - 50, 335
Ներսեսովիչ Դեոդատ - 83
Ներսիսյան դպրոց - 377
Ներսիսյան Ն. - 317
Նժդեհ Գարեգին - 123, 128
Նիդերլանդներ - 99
Նիժնի Նովգորոդ - 238, 240, 253, 269, 271, 294, 370
Նիկեփորոս 2-րդ - 27
Նիկիա - 107
Նիկիտա Իսախանով - 257
Նիկիտա Կալուստով - 255
Նիկիտին Ս. (Մկրտչյան) - 279
Նիկոլ - 101-103
Նիկոլայ Առաջին - 275, 421
Նիկոլո Տորիլիո - 183
Նիկողայոս (Նիկոլայ) Ախշարումով - 292
Նիկողայոս Մելանավոր - 190
Նինա Անանովա (Շերմազանյանց) - 377
Նիշ - 137, 153
Նյուրնբերգ - 165
Նշանյան - 127
Նողայսկ - 223
Նովգորոդ (Մեծ) - 42, 48, 53, 240
Նովգորոդ (Նիժնի) - 240
Նովի Սադ - 142, 145-152
Նովոգլադովսկայա - 351
Նովոմոսկովսկ - 199
Նովոչերկասկ - 413
Նովոռոսիա - 36, 207, 224, 397, 399, 401, 412-414, 417, 429
Նովոռոսիյսկ - 491, 494, 495
Նովո Սելո - 147
Նևա - 325, 327
Նոր Նախիջևան (Նախիջևան) - 4, 10, 11, 37, 113, 114, 134, 137, 161, 198, 201,

203, 211, 215, 217, 279, 290, 305, 307, 310, 331, 336, 357-359, 362, 366, 370, 386, 387, 389, 390, 392-398, 400-412, 414-423, 425-432, 434-444, 461, 474
Նոր Ջուղա - 17, 36, 241, 243, 248, 250, 258, 298, 299, 300, 301, 304, 327, 330, 357, 358, 359
Նոր Սարայ (Սարայ-ալ-Ջադիդ) - 235, 236, 294

Շահ-Աբաս - 36, 110
Շահազիզ Ե. - 390, 424, 436, 438
Շահամիրյան Շահամիր - 336
Շահբազյան Ստ. - 129, 130
Շահին, Բելգրադից - 137
Շահին, Պետրովարադինից - 137
Շահինյանց Դավիթ - 486
Շահինշահ, գյուղ Ղրիմում - 161
Շահնազարյան Մ. - 317
Շահվերդյան Ն. - 212
Շահվերդով Կղեմես - 280
Շահվերդովա - 288
Շահումյան - 497
Շամախի - 247, 347, 360, 361
Շամբ - 17
Շայո - 137
Շապովալով Հ. - 434
Շապուհ Ամատունի - 25
Շաֆիրով, բարոն - 304
Շերիման Արտեմի - 329
Շերիմանյան (Սահրադյան) Ջաքար - 244, 299, 304, 305
Շերիմանյան Իգնատիոս - 304, 305
Շերիմանյաններ - 304, 305
Շերիստանյան Հովհաննես (Իվան) - 326-328, 335
Շերմազանյանց - 377
Շեքսպիր - 341
Շիմանսկի Գասպար - 88
Շիրակ - 39
Շիրակացի Անանիա - 230
Շիրվանենց (Շիրվանով) Լուկա (Ղուկաս) - 304, 305, 327-331, 334, 342, 344
Շիրվանզադե Ալ. - 291, 441
Շլղյան Գրիգոր - 443
Շլթյան Պ. - 379
Շոռոթ - 113, 134, 150
Շչեկ - 41
Շչեկավիցա - 54
Շչերբինա Ֆ. Ա. - 15, 16
Շպակովսկի Ա. Ն. - 248
Շուլգա - 11
Շումեն - 111, 113, 115, 116, 120
Շումլա - 113

Ոսկանյան Վ. Կ. - 11, 16, 43, 237, 248
Ոսկե Հորդա - 33, 35, 155, 157, 163, 180, 193, 197, 230, 234-237, 240

Չալդր - 390
Չալխուշյան Գր. - 425, 430
Չարիխյան Գ. - 438
Չարիխով Ի. - 443
Չարսանճաք - 116
Չարտորիյսկիներ - 59
Չելեպի (Աբրո, Ապրո, Աբրահամ) - 112, 114, 135
Չելեպի Էվլիա - 114
Չեխիա - 66
Չեկմենով Ս. Ա. - 369
Չեմբալո - 161
Չեռնիշևսկի Ն. Գ. - 293

Չերենկով Եգոր - 205
Չերնիգով - 47, 54, 198
Չերնիխովսկի Ֆրեդր - 99
Չերնիշև Ռ. - 434
Չերնիցա, գետակ - 458
Չերնոգորիա - 123, 134
Չերնոգորյան ծովափ - 134
Չերվլեննի - 351
Չերքեզիա - 16, 164, 204, 205, 445, 447, 454
Չերքեզյաններ - 152
Չիլինկիրով Ստիլյան - 122
Չինաստան - 31, 33
Չինարով Ռուբեն - 316
Չինգիզյաններ - 236
Չիչերին Ն. Ի. - 332
Չմշկիկ Հովհաննես - 25, 27, 28
Չյորնայա, գետակ - 458
Չոլովսկի Ալեքսանդր - 63
Չորշամբ - 495
Չոփուրյան էդ. - 130
Չուբար Գր. - 443
Չուրեքով Գրիգոր - 272
Չուֆութ-Կալե - 161

Պադուա - 150
Պազարջիկ - 118
Պալասանյան Ս. - 68
Պալլաս Ս. - 398
Պահարե - 290
Պաղեստին - 31, 32
Պանագյուրիշդե - 123
Պանչևո - 148
Պանտելեյմոն - 48
Պաշտրովիչի - 134
Պապայան Նադեժդա - 291
Պապայան Ս. - 441
Պապուկ - 133
Պասիդինա - 185
Պավել 1-ին - 261, 264, 274, 276, 355, 363, 476
Պավել Հոբուս (Իովիուս) - 239
Պավել Յուզեֆ Շաֆարիկ - 149
Պավլիկենի - 108
Պավլիկյաններ - 107
Պավլիկյանսկա մահալա - 108
Պավլովիչ Վ. - 416
Պատկանյան Գաբրիել - 278, 279, 425, 440
Պատկանյան Պետրոս - 425, 451, 454
Պատկանյան Ռափայել - 311, 313, 314, 338, 409, 424, 426, 428, 432, 434, 437, 438, 440, 442
Պատկանյան Սերովբե - 278, 436
Պատկանյան Քերովբե - 338, 343
Պատրիկյան Վարդ (Վարդո) - 128
Պարոն-Լույս - 180
Պարոնյան Հ. - 314
Պարոնքա, վարպետ - 174
Պարսից ծոց - 298
Պարսից պետություն - 34
Պարսկահայք - 17, 36
Պարսկաստան - 29-31, 33, 34, 36, 37, 88, 142, 163, 164, 166, 172, 247, 248, 257, 312, 327, 330
Պարտավ (Բարդա) - 43
Պարրոտ - 376, 425
Պելկրատ - տե՛ս Բելգրադ
Պելղրատ - տե՛ս Բելգրադ
Պենյան - 130
Պենկլյան Ս. - 127
Պետերբուրգ - 4, 6, 13, 15, 22, 28, 32, 36, 37, 60, 159, 168, 172, 229, 256, 257,

259, 267, 282, 291, 292, 300, 301, 303-307, 311, 316-318, 320, 325, 340, 341-343, 345, 384, 396, 398, 412, 420, 423, 426, 434, 439, 440, 458, 479, 480, 483
Պետրիցիոն - 109
Պետրոգրադ - 378
Պետրոս, Պետրովարդինյան Շանցից - 144
Պետրոս 1-ին, Մեծ - 233, 244, 245, 249, 265, 301, 325-327, 347, 348, 389
Պետրոս դի Սարգիս Գիլանեցի - 265
Պետրոսյան Քրիստափոր - 316
Պետրոս Շիրվանով - 329
Պետրոս Սկիլիացի - 108
Պետրոս Վարդանով - 255, 259
Պետրովարադին - տես Նովի Սադ
Պետրովարադինյան Շանց - 142, 144, 146
Պետրովցի - 55
Պետրովսկ, նավահանգիստ - 360, 383
Պերա - տես Կոստանդնուպոլիս
Պերեկոպ - 158, 160, 161, 172, 206, 211, 223
Պերեվալնոյե, գյուղ - 492
Պերկազի - 138
Պերուշտիցա - 110, 123
Պիգա Մարիա - 146
Պիդու Ալոիզ - 51, 60
Պինգիրյան Գ. Դ. - 11
Պինսկ - 91
Պիրոժենկո Պ. Խ. - 11
Պիրոտ - 153
Պլատո, ֆոն - 222
Պլիսկա - 26
Պլովդիվ - 107, 117, 120, 124, 126, 127, 129, 130
Պյատիգորսկ - 359, 360, 369, 382, 387
Պյատիգորսկի օկրուգ - 356
Պողխրեբտովոյե գյուղ - 493
Պողյաչև Իվան - 310
Պողոլե, Պողոլիա - 6, 9, 12, 52, 64, 66, 67, 80, 83, 92, 296
Պոզնան - 68, 91, 100
Պոժարևաց - 137
Պոլկովնիչե, գյուղ - 493
Պոլովցիների տափաստաններ - 163
Պողոս, ղարասուբազարցի - 207
Պողոս, ղրիմահայ մեծահարուստ - 168
Պողոս, քահանա - 138
Պողոս Սինցի - 260
Պողոս Ասատուր - 141
Պողոսյան Լ. Ա. - 4, 15
Պողոսյան Հ. - 130
Պողոսյան Ֆ. Գ. - 14, 262
Պոնտոս - 31, 36
Պոպով եղբայրներ - 282
Պոպով Եպիփան - 430
Պոպովիչ Դ. Ժ. - 138
Պոպով Հարություն - 485
Պոպով Մ. - 434
Պոպով Յակով (Հակոբ) - 449
Պոպով Տ. - 443
Պոպովիտ Դ. - 138
Պոպովներ - 316
Պովոլժիե - 4, 50, 230, 231, 236, 237, 240, 242, 292, 295, 296, 316
Պոտյոմկին Գ. Ա. - 175, 199, 266, 336, 363, 456, 457
Պոտյոմկին Պ. Ս., Կովկասի գեներալ-նահանգապետ - 263, 359
Պոտոցկի - 80
Պորտ Պետրովսկ - տես Պետրովսկ
Պորփյուր - 197
Պռոշյան Պ. - 291, 314, 427

Պսկով - 53
Պրեմռոու Մ. - 139, 140, 145
Պրեսլավա - 26
Պրեսնյա - 303
Պրոչնի օկոպ - 445
Պրոստակով Տիմոֆեյ - 310
Պրովադիա - 111, 115
Պրորվա, գետ - 354
Պրուսիա - 94
Պուլե Ա. - 135
Պուլկարիա - տես Բուլղարիա
Պուղտան - 112
Պուղտանաց աշխարհ - 134
Պուշկին Ա. Ա. - 316, 397, 421
Պուտիվիլ - 54

Ջալալիներ - 36
Ջանազիզ (Ճանազիզ) - 142
Ջանազիզյան Հովհաննես - 146, 149
Ջանազիզյաններ (Ջանազիզներ) - 149
Ջանազիզյան Սիմոն Մելիք - 152
Ջանշին - 318
Ջանումյան (Ջանումով) - 317, 318
Ջանումովներ - 318
Ջանփոլադյան Հ. Մ. - 234
Ջենովա - 182, 183
Ջենովայի հանրապետություն - 157, 162, 163, 174, 184
Ջիվելեգով Ալեքսեյ - 319, 320

Ռադզիվիլ - 473
Ռազգրադ - 111, 115
Ռակիչ Վիկենտի - 153
Ռակովսկի Գեորգի - 116
Ռաշկով, նաև Ռաշքով - 68, 69, 85, 463
Ռավնի Տոպոլովաց - 147
Ռաևսկի Ն. Ն. - 397
Ռաֆայելյան Գ. - 212
Ռեիզյան Գ. - 441
Ռեշտ - 258
Ռեչ Պոսպոլիտա - 56, 61, 68, 80, 83, 95, 98
Ռիբակով Բ. Ա. - 42
Ռիշելիե, Դյուք դը - 480, 481
Ռինձյունսկի Պ. Գ. - 268
Ռյազան - 356
Ռոման Լեկապին - 25
Ռոմանով Ալեքսեյ Միխայլովիչ - 37
Ռոմանովներ - 297
Ռոմաշկևիչ - 89
Ռոշքա Ստեփանոս - 105
Ռոստոմ - 113
Ռոստով - 398, 407, 409, 411, 413-417, 425, 428, 431, 432, 434, 442
Ռուբինյաններ - 461
Ռուգոդև - 326
Ռումինիա - 36, 136, 147, 489
Ռուսաստան - passim
Ռուսե - տես Ռուսչուկ
Ռուսիա (Կինյան) - 41, 43-45, 49-51, 64, 163
Ռուսչուկ - 111, 113, 115, 121, 126-130

Սագաստան - 33
Սադովոյ - 242
Սաքենիկ - 127
Սաթով Իվան - 469, 470, 471, 484
Սալա (Սուլթան Սալա) - 161, 390
Սալթանով Բոգդան - 300, 301
Սալլանթյան Միքայել - 311
Սալոնիկ - 153
Սալտիկով Ա. - 421
Սախսու Ե. - 79
Սահակ - 244

Սահրադյան Ջաքար - տես Շերիմանյան Ջաքար
Սամարղանդ - 239
Սամբեկ - 399, 403, 404
Սամսոն - 495
Սամվել Մուրադ - 150
Սամուել Անեցի - 6, 28, 30
Սամուել Կոմսածագ - 107, 108
Սայթաղ - 185
Սանասարյան Ն. - 343
Սանասարովներ - 345
Սանդոմիր - 92
Սանկտ-Պետերբուրգ - տես Պետերբուրգ
Սառաճյան Կլեոպատրա (Մարիամ) - 335
Սառաֆով Մովսես (Բունիաթյան) - տե՛ս Սառաֆյան Մովսես
Սասիրեթփա - Ճալա - 45
Սասուն - 123
Սավինսկի - 351
Սարայ-ալ-Մահրուսու - տե՛ս Հին Սարայ
Սարայ Աստվածապահ - 235
Սարատով - 418
Սարանո - 136
Սարաֆաննիկովո - 351, 353, 372
Սարաֆյան Մովսես - 266
Սարգիս, եպիսկոպոս - 187
Սարգիս, ղրիմահայ վաճառական - 169
Սարգիսկո - 298
Սարգիս (Սերգեյ) Մելիքով - 267
Սարգիս վարդապետ, կաթողիկոսական փոխանորդ Կաֆայում - 180, 181, 188, 197
Սարգիս Օհանյան - 258, 262
Սարգսյան Հովհաննես - 285
Սարդուր - 42
Սարկիզով Հովակիմ - 205
Սարյան Մարտիրոս - 443
Սաքսին - 231
Սաֆարովա Վարվառա - 344
Սաֆարովա Օլգա - 344
Սեբաստիա - 28
Սեբաստացի Մխիթար - 143
Սեբեոս - 6, 23
Սելիմ - 166
Սեմյոնով Ս. Կ. - 288, 289
Սենեքերիմ, թագավոր - 28, 30
Սենմիխալ - 147
Սենջուրաջ - 147
Սերբիա - 4, 123, 132-134, 138, 140, 142, 143, 147, 152, 153
Սերգեյ, հարկահավաք - 248
Սերգեև Դանիել - 278
Սերգեև Իլյա - 300
Սերգեև Սերգեյ - 300
Սերոդիկա - 114
Սերեբրյակյան, դերասան - 290
Սերեբրակյան Լ. Մ. (Սերեբրյակով), ծովակալ - 2, 172, 204, 210, 229, 491
Սերեբրյակով Կոստանդին - 280
Սեքուլյան Վ. - 142
Սեֆերյաններ - 450
Սեֆերովիչ Բոգդան - 87
Սեֆերովիչ Թորոս - 99
Սեֆերովներ - 210, 229
Սըվազ - 123
Սիամանթո - 340
Սիբիր - 414
Սիգիզմունդ, լիտվական մեծ իշխան - 55
Սիգիզմունդ 1-ին - 59, 63, 72, 79, 92, 93
Սիգիզմունդ Ավգուստ - 54, 72, 93
Սիգիզմունդ 3-րդ - 87, 88, 94
Սիզոնենկո - 11
Սիլեզիա - 92

Սիլիստրա - 111, 115, 126
Սիլվեստր (Սիխբեստրոս) Գերասիմով - 260
Սիմբիրսկ - 235
Սիմեոն, բուլղարական թագավոր - 108
Սիմեոն, գրիչ - 193
Սիմեոն Երևանցի - 267
Սիմեոն Լեհացի - 6, 51, 52, 60, 62, 104, 105, 112, 136
Սիմեոն Մելիք - 149
Սիմեոն Միհաս - 146
Սիմեոն Նետի-Անտոնյան - 151
Սիմոն Կաֆայեցի - 191
Սիմոն, որդի Պետրոսի - 144
Սիմոնով Ռուբեն - 311
Սիմֆերոպոլ - 158, 168, 201, 202, 206-209, 211, 212, 216, 221-224, 228
Սինոպ - 163, 164
Սիս - 155, 156, 188
Սիրանույշ - 127, 290, 315
Սիրեց - 54, 57
Սիրիա - 17, 18, 42, 44, 163, 164
Սիցիլիա - 44
Սլավեյկով Պետկո - 119
Սլավոնական աշխարհ - 1, 3, 19, 21
Սլավոնական երկրներ - 164
Սլավոնիա - 147
Սլիվեն - 111, 115, 120, 128
Սլովակիա - 66
Սկոպլե - 136
Սկուբիև - 470
Սկութարացի Առաքել - 136
Սմբատ - 33
Սմբատ Ապարանցի - 236
Սմբատ Շահազիզ - 311, 313, 427
Սմիրնով Ա. Պ. - 232
Սմոտրիչ - 52
Սյուլյուկ - 397
Սյունիք - 149, 172
Սյունիք - 222
Սյուքիասով Ա. - 375
Սնյատին - 68
Սոբեսկի Յան - 73, 80, 85-87, 98, 99, 106
Սոբեսկիներ - 85
Սոբոլյան Կարապետ - 286
Սոբոլև - 288
Սողոմոնյան Դավիթ - 272, 387
Սողոմոնով - 282
Սոչի - 492-496
Սովուք-Սու - 161
Սոֆիա - 47, 107, 111, 114, 116, 119, 120, 123, 127, 130, 134, 135, 139
Սպահան - 88, 298
Սպենդիարյան Ալ. - 210, 229, 338
Սպենդիարյան Յու. Ի. - 222
Սպենդիարյաններ - 208, 221, 224, 229
Սպենդիարովներ - 210
Սպենդիարով Լեոնիդ - 210
Սպեր - 30
Սպիրով Դիմիտր - 123
Սվաճյան Հովհաննես - 118, 119
Սվյատոսլավ - 231
Ստամբուլ - 117
Ստանիսլավ (Իվանո-Ֆրանկովսկ) - 58, 68, 69, 75
Ստանիսլավ Սարնիցկի - 53
Ստանիսլավսկի Կ. Ս. - 311, 322
Ստավրոպոլ - 356, 357, 359, 369, 372, 380, 386, 417, 418, 449-451
Ստավրոպոլի բերդ - 358
Ստավրոպոլի նահանգ - 356, 372, 378
Ստարի Նագորիչան - 132
Ստեփանե Խ. - 229

Ստեփանյան Կ. - 386
Ստեփանոս Աղեռդատո (Աստվածատուր) - 140
Ստեփանոս, Հայրապետի որդի - 150
Ստեփանոս, Նատերի որդի - 190, 193
Ստեփանոս Գագաթեցի - 267
Ստեփանոս Թոխատեցի - 193
Ստեփանոս Լեհացի - 105
Ստեփանոս Կաֆայեցի - 191
Ստեփանոս Սեբաստացի - 188
Ստեփանով Գրիգոր - 315
Ստեփանովներ - 210
Ստեփան Տիգրյանսկի - 259
Ստեֆան Բատորի - 56, 76, 93, 95
Ստշելկոսկի Գավրիիլ - 88
Ստոլպով - 305
Ստորին Պովոլժիե - 230, 237
Ստրոգոնովներ - 331
Ստրումիցա - 109
Սրապիոնյան Սարգիս (Լուկաշին) - 212, 435
Սրեդեց - 107, 109
Սրեդնա Գորա - 117
Սրեմ - 137, 147
Սրմաքեշխանլյան Ե. - 132
Սուգդեա - տես Սուդակ
Սուդակ - 154, 157-162, 164, 165-169, 175, 176, 194, 211, 222
Սուլեյման Կոստանդին կոմս դը Սիրին - 88
Սուլեյման փաշա - 118
Սուլթանիե - 17
Սուլթանյան Աստվածատուր - 300
Սուլթան-Շահ Անանիա - 385
Սուլթան-Շահ Գ., բժիշկ - 318
Սումբաթովներ - 307
Սունդուկյան Գաբ. - 291, 341, 427
Սուջուխ-Կալե - 491
Սուվորով Ա. Վ. - 266, 335, 390
Սուրաբեկյան Մկրտիչ - 285
Սուրբ Խաչ, վանք - 15, 37, 156, 158, 159, 175, 189, 190, 192, 194, 197, 199, 348-351, 355, 356, 361, 382
Սուրբ Ղազար (կղզի) - 7, 142
Սուրբ Նիկոլայ, ամրոց - 445
Սուրենյանց Վարդգես - 311
Սուրխաթ - տես Հին Ղրիմ
Սուրոժ - տես Սուդակ
Սուքիասանց Գրիգոր - 190
Սուքիասով Արտեմ - 374, 375
Սուքիասով Գ. - 374
Սևաստոպոլ - 39, 198, 207, 212
Սև ծով - 40, 42, 50, 64, 154, 162, 163, 166, 389, 414, 437, 491, 492
Սևծովյան նահանգ - 493-496
Սևումյան - 127

Վալախիա - 16, 51, 64, 68, 92, 151, 166
Վալաքիա - տես Վալախիա
Վախթանգ 6-րդ - 244, 303
Վախթանգով Եվգենի - 315, 322
Վահանով Վառլամ - 336
Վաղարշապատ - 6, 28, 29, 36, 60, 82, 156
Վայսքհոֆեն Իոզիֆ - 280-281
Վան - 39, 116, 155, 286
Վանա լիճ - 41
Վանական Վարդապետ - 49
Վանանդ - 24
Վանատիկ - 112
Վառնա - 53, 111, 114, 115, 120, 121, 126, 128-130
Վասիլ 1-ին, կայսր - 26, 108
Վասիլ 2-րդ, կայսր - 27, 28, 44
Վասիլի 2-րդ Տյոմնի - 235, 237
Վասիլի 3-րդ - 169, 240
Վասիլևկա - 458, 471
Վասիլևներ - 325
Վասիլև- Խաստատով- 344
Վասիլևներ-Մակարովներ-Խաստատովներ գերդաստան - 252, 300, 325
Վասիլև Սաֆար - 252, 257, 300, 304, 325, 327, 347
Վասպուրական - 28-30
Վարադին - 144, 145, 147
Վարազ Իվանեսով - 259
Վարազտիրոց - 26
Վարդ, թագավոր - 28
Վարդան, զինվորական - 26
Վարդան, վարդապետ - 30
Վարդանե - 494
Վարդան Կաֆայեցի - 192
Վարդան Կիլիկեցի - 191
Վարդանյան Օ. - 130
Վարդո (Վարդ Պատրիկյան) - 128, 130
Վարշավա - 59, 68, 100
Վելիկո-Թըռնովո - 109, 120
Վելիկոռուսիա - 417
Վելյամինովյան (Վելյամինովսկի) օկրուգ - 493, 495
Վենետիկ - 7, 30, 111, 136, 139, 140, 142-144, 149, 150, 152, 163, 164, 184
Վեսելովսկի Ալեքսեյ - 320
Վեսելովսկի Յուրի - 311, 320
Վեսելովսկի Ն. Ի. - 242
Վերին Լոռ - 494
Վիեննա - 6, 52, 62, 63, 78, 111, 134-138, 142, 151, 152
Վիշգորոդ - 55
Վիլնյուս - 91
Վիլովսկի Տ. - 138
Վիսլա - 50
Վիտովտ - 52
Վլադիկավկազ - 315, 357, 359, 381, 382, 384, 386, 387, 450
Վլադիմիր, քաղաք Վոլինում - 50, 67-70, 100, 104
Վլադիմիր Մոնոմախ - 46, 47, 49
Վլադիմիր Սվյատոսլավիչ - 44
Վլադիսլավ Լ. - 63
Վլադիսլավ 4-րդ - 46, 95, 103
Վյազեմսկի - 317
Վոլգա - 32, 35, 42, 53, 155, 230, 231, 234, 235, 239-242, 251, 256, 268, 271, 272, 281, 294, 297, 414, 415
Վոլգյան (Վոլգա-Կամայան) Բուլղարիա - 233, 234
Վոլին - 48, 51, 66, 68, 70, 74, 83, 92
Վոլկով, ազնվական - 302-303
Վոլկովա Ն. Գ. - 495
Վորոնեժ - 356, 418
Վորոնեժի նահանգ - 198
Վորոնցով, կոմս - 475
Վորոնցովա - 255
Վռամյան Ա. - 128
Վսեվոլոդ Յարոսլավիչ - 46
Վրադի Ն. Ֆ. - 11
Վրաստան - 21, 22, 29, 32, 48, 49, 258, 297, 350, 352
Վրացյան Սիմոն - 128, 435
Վրոցլավ - 59
Վրկանա մարզպետություն - 33
Վրույր Ա. - 290, 386

Տագանրոգ - 398, 405, 406-408, 415-418, 431

Տագանրոգի օկրուգ - 400
Տագլիկ, գետակ - 476
Տամաշլիկ - 476
Տամբով - 418
Տայյան Հ. - 142, 143, 146
Տայք - 30
Տանա - 162
Տավրիկիա - 201, 207, 221, 222
Տավրիկյան թերակղզի - 154, 389
Տավրիկյան նահանգ - 200-203, 224
Տարասով, վաճառական, բարեգործ - 318
Տարասով Հովհաննես, խոշոր ձեռնարկատեր - 449, 450
Տարասով Նիկոլայ, թատերասեր Մոսկվայում - 316
Տարոն - 27, 30, 41
Տեմերին - 150
Տենգինկա - 495
Տեոլվեթյան Գ. - 228
Տեպլյակով Վ. - 115
Տեր-Աբրահամյան Հ. - 229, 441
Տեր-Ակոպովա - 283
Տեր-Գաբրիելյան Հ. - 440, 441
Տեր-Գաբրիելյան Գ. - 316, 345
Տեր-Գրիգորյան Վ. - 435, 496
Տեր-Դավիդովներ - 345
Տեր Իսրայել - 49
Տեր Կարապետ - 187
Տեր-Ղազարյան - 228
Տեր-Ղևոնդյան Ս. - 380
Տեր Մարտիրոս - 187
Տեր-Մարուքյան - 427
Տեր-Միկելով (Միքայելյան) - 228
Տեր Սինաս - 187
Տեր Միքայել - 144
Տերյան Վահան - 291, 319, 321, 344
Տերնոպոլ - 7
Տեր Պողոս - 138
Տեր Սիմոն - 187
Տեր-Սիմոնյան Հ. - 440
Տերտեր Երևանցի - 187
Տերտերյան Համբարձում - 435
Տերտերյան Ստ. - 130
Տիգրանակերտ - 39
Տիգրանյան Ս. - 442
Տիխոմիրով Մ. Ն. - 295
Տիվիթճյան Թ. - 118, 119
Տիվրիկ - 108
Տիրասպոլ - 460, 462
Տյուչկով Անդրեյ - 170
Տոլստոյ Դ. - 342
Տոմանովիչ -.149
Տոպոլա - 147
Տոտոմյանց Վ. - 125, 320, 341
Տորակ - 147
Տվեր - 294
Տրանդաֆիլ - 151
Տրանսիլվանիա - 16, 139, 148, 151
Տրապիզոն - 44, 154, 163, 172, 495
Տրապիզոնցի Պարսամ - 105
Տրդատ - 26
Տրդատյան, հոգաբարձու - 488
Տրդատյան Կ. - 487
Տրեմբովլ - 86
Տուապսե - 493-496
Տուղրիլ - 30
Տուրգենև Ի. Ս. - 311
Տուրպայան Մելքում - 292
Տուրպայան Պետրոս - 292
Տուրպան Տիգրան - 292
Տևեճյան Հ. - 130

Րաֆֆի - 113, 291, 313

Ցարսկոյե Սելո - 331
Ցիգոևներ - 210
Ցիտրոխան - 239
Ցրիևիչ Մարտոլիցա - 135

Ուզլյան Մկրտիչ - 285
Ութման Հովհաննես - 109,111
Ութուճյան Կ. - 119
Ուժգորոդ - 9
Ուլուխանյան Դավիթ - 454
Ուլուխանյանց Մ. - 379
Ուկրաինա - 8, 9, 11, 16, 52, 58, 59, 414
Ունիս-Բուրժուա Օ. - 290
Ուչ-Դերե - 492, 494
Ուռհայեցի Մատթեոս - 6, 29, 30, 33
Ուռումել - 36, 112, 134
Ուստլաբինսկ - 417
Ուրալ - 232, 234, 331
Ուրուպի օկրուգ - 445, 447

Փանիյան Մ. - 318
Փանոսով Սահակ - 273
Փարաննեմ - 386
Փարիզ - 130, 132, 215, 226, 283, 291, 424
Փարսադանյան Հարություն - 272
Փափազյան Թագվոր - 121
Փափազյան Հ. - 118
Փափազյան Վ. - 127
Փափազյան Վրթանես - 340
Փեթրովարատինու Շանց, տես Պետրովարադինյան Շանց
Փեշեքերովներ Ս. և Պ. - 434
Փիլիպոս, կաթողիկոս - 103
Փոթի - 445
Փորքշեյան Խ. Ա. - 15, 16
Փոքշան - 151
Փոքր Ասիա - 20, 22, 29, 31, 35, 42, 44, 120, 154, 252, 491, 492
Փոքր Թաթարստան - 139
Փոքր Կաբարդա - 352, 353
Փոքր Հայք - 44, 132

Քալանթարյան Պետրոս - 307
Քալանթարով - 343
Քաղցածյան - 229
Քանանյան Գ. - 318
Քաշոտ - 178
Քասախ - 47
Քարաբերդ - 39
Քարմատանենց Հովհաննես - 105
Քեչեկյան Համբարձում - 340
Քերուկդերե - 495
Քեֆե - տես Կաֆա
Քիատոմա - 114
Քիշնև - 215, 217, 423, 463, 467, 474, 483, 484, 488, 489
Քղի - 39
Քյոթահիա - 120
Քյոլն - 165
Քյոմուրջյան Երեմիա - 135
Քյուրտյան Հ. - 112, 114
Քոլանջյան Ս. - 16, 17
Քոչաբեկյան Հովհաննես - 384
Քռինչիկա - 161
Քրիստափոր Միքայելյան - 128
Քրիստոս - 180
Քրիստոսատուր - 190
Քրիստոփոր - 137
Քրիստոֆ Դինո - 141
Քուշնարյան Մ. - 442

Քուշնարյան Ս. - 427
Քուշնարյաններ - 210
Քուշներյան Ք. - 7, 229
Քուչուբեկյան - 385
Քուրդով Ի. - 292

Օբերտո Սկվարչիաֆիկո - 182
Օբոլնյա (Օբոլոնյա) - 54, 57
Օբրենովիչ Միլոշ - 152
Օգսենտ, գրիչ - 190, 192
Օդեսա - 39, 163, 221, 225, 398, 462, 463, 469, 470-475, 484, 489
Օզրեն - 133, 134
Օլատեմիր - 50
Օլխին - 115
Օխրիդ - 109
Օկա - 294, 415
Օկուր - 289
Օհանով - 282
Օմուրթաք - 26
Օնուֆրիոս - 101
Օչակով - 457
Օչակովյան մարզ - 458
Օսիեկ - 137
Օսմանյան կայսրություն - 115, 138
Օստաֆև Մորչկա - 301
Օստեր - 54
Օվանեսով - 130
Օվանիսովիչներ - 77
Օվիդիոպոլ - 472
Օր, տե՛ս Պերեկոպ
Օրաբազար, տե՛ս Արմյանսկի բազար
Օրբելի Հովսեփ - 338
Օրեխովիչ Նազար (Օրուխենց) - 325
Օրեչկովիցա - 133
Օրթալանկ - 161
Օր Կապու, տե՛ս Պերեկոպ
Օրմիանիե - 67, 69
Օրմիանկի - 67, 69
Օրյոլ - 418
Օրուխենց Նազար - 325
Օքրոյան Դավիթ - 340
Ֆաբրիկանտով - 282
Ֆալդուն, Իբն - 232
Ֆասուլյածյան Թովմաս - 127, 290, 385, 443
Ֆասուլյածյաններ - 127, 386
Ֆասուլյածյան Պայծառ - 127
Ֆատինանտի Անդրեա - 185
Ֆարմանյանց Տ. - 292
Ֆելտեն Յու. Մ. - 332
Ֆեոտոսիա, տե՛ս Թեոդոսիա
Ֆիլիպ Հայ - 55
Ֆիլիպոպոլ, Ֆիլիպոպոլիս - 28, 107, 109, 111, 112
Ֆիտոնով Ստեփան - 329
Ֆլոր - 49
Ֆլորենցիա - 175, 181
Ֆյոդոր (Ֆեոդոր) Ալեքսեևիչ, ցար - 244, 300
Ֆյոդոր Դմիտրիևիչ, իշխան - 45, 66
Ֆյոդոր Իվանովիչ, ցար - 240
Ֆրանչեսկո Ֆիեսկո - 182
Ֆրանսիա - 99, 449
Ֆրանցև Իգնատիոս - 304
Ֆրենկհիսար, բաղամաս Կաֆայում - 195, 196
Ֆրյանովո - 304, 305

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5
Հայկական արտագաղթերը 20
Հին Ռուսիա 41
Արևմտյան Ուկրաինա, Լեհաստան 58
Բուլղարիա 107
Սերբիա, Խորվաթիա 132
Ղրիմ 154
Պովոլժիե 230
Աստրախան 241
Մոսկվա 294
Սանկտ Պետերբուրգ 325
Հյուսիսային Կովկաս 346
Նոր Նախիջևան 389
Արմավիր 445
Գրիգորիոպոլ 456
Կովկասի սևծովյան առափնյա շրջան 491
Անվանացանկ 498

تاريخ المهجر الأرمنى

(من القرون الوسطى حتى ١٩٢٠ م)

ثلاثة أجزاء

الجزء الأول

المهاجر الأرمنية فى العالم السلافى

وشمال القوقاز

ՀԱՅ ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Միջնադարից մինչև 1920 թ.)

Եռհատորյակ

Հատոր Առաջին

Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի
հայկական գաղութները

Հրատարակչական խմբագիր՝ Մելանյա Միքայելյան

Երևան 2003 թ.

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРИИ

(со средних веков до 1920 г.)

трёхтомник

Том первый

Армянские колонии Славянского мира
и Северного Кавказа

Том подготовил к изданию и редактировал академик НААРА, професор Вардгес Микаелян

Ереван 2003 г.